

Գիրքը յուսադատճեհահանվել է  
A-PDF DjVu TO PDF DEMO: Purchase from www.A-PDF.com to remove the watermark

"Նամահայկական էլ. Գրադարան"

կայքի՝ [www.freebooks.do.am](http://www.freebooks.do.am)

կողմից եւ ներկայացվում է իր

այցելուների ուշադրությանը:

The book created by "PanArmenian E. Library"



Գիրքը կարող է

օգտագործվել միայն ընթերցանության համար...

For more info: [www.freebooks.do.am](http://www.freebooks.do.am)

Library

ՄԱՅՔ ԵՆԻՑՆԻՑԻ ՎԱՐՈՂ ԵՔ ՁՅԲ ԵՐԿՐՈՒՄԸ ԱՐԿԵՍԱԸ ԼՅՅԱՅԱՍ  
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ ԵՎ ԻՆՏԵՐՆ  
ԼՈՒՄԻՆԱՏԻՎԱԿԱՆԱԿԵԼ ԳՐԵՐ:

Ք-ՈՒՅՆ ԳՐԵՐԻ ՄՏԵՐՈՄԱՆ ՄԱՆՈՍՄԱՆԱԿՈՎ ՎԱՐՈՂ ԵՔ  
ԻՄՈՒԱԿ "ՇԱՄԱԼՅԱՅԱԿԱՆ ԷԼԵԿՏՐՈՆԻԿԵՆ ԳՐԱԿՈՐՄԱՆ" ՎՈՅՔԻՑ

[www.freebooks.am](http://www.freebooks.am)

ԵՆԻՑՆԻՑԻ ԵՎՐ. ՈՐ ԾԳՆԱԼԻՄ ԵՔ ՄՏԵՐ ՎՈՅՔԻՑ  
ՏԱՐԱԿՈՒՄ ԵՎՐ ԶՈՒԵԼԻ ԸՆԹԵՐՏՈՒՆԻՑՈՒՄ:



ԳՐԵՐ ՄԻՔ՝ [freebooks@rambler.ru](mailto:freebooks@rambler.ru)

XX<sup>7</sup>. ԱՐՏԱՍԱՀԱՄԱՅԱՆ  
ԴՐԱՄԱՏՈՒԲԳԻԱ

ԵՐԱՅԻ ԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ



ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ

---

**ЗАРУБЕЖНАЯ  
ДРАМАТУРГИЯ  
XX ВЕКА**

**2  
ТОМ**

ИЗДАТЕЛЬСТВО ЕРЕВАНСКОГО УНИВЕРСИТЕТА

---

ЕРЕВАН—1986

**XX ԴԱՐԻ  
ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ  
ԴՐԱՄԱՏՈՒՐԳԻԱ**

**2**

**ՀԱՏՈՐ**

ԳՄԴ 84 7 (ԱՄՆ)

№ 911

Կազմեց և ծանոթագրեց՝ բանաս. գիտ. թեկն. ՍԱՐԳԻՍ ՓԱՆՈՍՅԱՆ

«Ուսանողի գրադարան» մատենաշարի  
խմբագրական հանձնաժողով

ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ Ս. Ա. (նախագահ), ԱՂԱՅԱՆ Է. Բ.,  
ԱՆԱՆՅԱՆ Գ. Գ., ԹԱՄՐԱԶՅԱՆ ՀՐ. Ս., ՄԿՐՏՉՅԱՆ Լ. Մ.

Ք911 XX դարի արտասահմանյան դրամատուրգիա: (Ժողովածու)  
/Երևանի պետ. համալս.: Կազմ. և ծանոթագր. Ս. Ս. Փանոսյան.—  
Եր.: Երևանի համալս. հրատ.:  
Հ. 2:— 1986. 592 էջ.

Ժողովածուն ընդգրկում է նմուշներ XX դարի արտասահմանյան դրամա-  
տուրգիայից: Սեկական ստեղծագործությամբ ներկայացված է Ժ. Ժիրուդուի, Ս  
Բեքեֆի, Ժ. Անույի, է. Իոնեսկոյի, Ա. Կամյուի, է. Օլբրիի և Զ. Օսթրոնի դրա-  
մատուրգիական ժառանգությունը:

4701000000—18

Ք — 42—85

ԳՄԴ 84 7(ԱՄՆ) + 84.7Ֆր + 84.4Մր

704(02)—86

## ԿԱԶՄՈՂԻ ԿՈՂՄԻՑ

«XX դարի արտասահմանյան դրամատորգիայի» երկրորդ հատորն (առաջինը լույս է տեսել 1988 թ.) ընդգրկում է նմուշներ ամերիկյան, ֆրանսիական և անգլիական դրամատորգիայից: Մեկական ստեղծագործությամբ ներկայացվում է Էդուարդ Օլբրի, Սեմյուել Բեքեթի, Էժեն Իոնեսկոյի, Ալբեր Կամյուի, Փան Փիրոդուի, Ջոն Օսթրոնի և Փան Անույի դրամատորգիական ժառանգությունը:

Բացի այն, որ ընտրված ստեղծագործությունները նշված հեղինակների գլուխգործոցներն են, դրանք միաժամանակ որոշակի պատկերացում են տալիս մեր դարի համաշխարհային դրամատորգիայի նշանակալից ուղղությունների մասին: Այսպես, Ա. Բեքեթի «Գողոթին սպասելիս» և Է. Իոնեսկոյի «Ռեգեդջյուր» պիեսները «աբսուրդ» դրամատորգիայի դասական նմուշներ են, Ա. Կամյուի «Կալիգուլան» և Փ. Փիրոդուի «Տրոյական պատերազմը չի լինի» ներկայացնում են, այսպես կոչված, «ինտելեկտուալ» դրաման: Ամերիկյան նորագույն

սոցիալ-հոգեբանական դրամատորգիայի որոշ հիմնարար առանձնահատկություններ կարելի է գտնել Է. Օրբիի «Ի՞նչ էր պատահել զազանանոցում» երկում: Ջ. Օսթրոնի «Ետ նայիր զայրացած» պիեսը 50-ականներին ձևավորված գրական այն սերնդի «ծրագրային» ստեղծագործություններից է, որին պայմանականորեն բնորոշում են որպես «զայրացած Լքիտասաբոություն»:

Հեղինակների մեծ մասը սուաջին անգամ է ներկայացվում հայ ընթերցողին: Բոլոր ստեղծագործությունները թարգմանված են բնագրերից:

Գիրքն ունի հանգամանալից մեկնություններ և ծանոթագրությունների բաժին:



# ԺԱՆ ԺԻՐՈՂՈՒ

## ՏՐՈՅԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԶԻ ԼԻՆԻ

(պիես երկու գործողությամբ)

### ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

ՍԱՐԳՍՅԱՆ

ԵՂՐՆԵ

ՆԱԻԲԱ

ԿՐՈՍՆԻՍ

ՆԱԳԱՂԱԹՅՈՒՆ

ԷՐՈՒ

ՄԱՍԻՍԻՆԻՆԻ ԵՎ

ՄԱՍԻՍԻՆԻ ԿԱՆԱՅՔ

ՓԵՂՐԻՆ ԳՈՂԻՐՍԵՆՆ

ՀՅԵՏՈՐ

ՈՒԻՍ

ԳԵՍՈՂՈՍ

ԳՐԻԱՄՈՍ

ԳԱՐԻՍ

ԱՅՍԱՔՍ

ՆԱԿԱՍԻ

ԵՐՐԱՋԱՓ

ԳՐԱՆԱՍ

ՏՐՈՅԱԿԱՆ

ՕԼՊԻԳԵՍ

ՇԵՐԵՐ

ԳՍՏԳԱՆՍՐԵՐՆԵՐ

## ԱՌԱՋԻՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

Պարսպի մի տերրաս՝ մեկ ուրիշ տերրասից և մյուս պարիսպներից բարձրադիր:

### ՏԵՍԱՐԱՆ ԱՌԱՋԻՆ

#### ԱՆԴՐՈՄԱՔԵ, ԿԱՍԱՆԴՐԱ

ԱՆԴՐՈՄԱՔԵ.— Տրոյական պատերազմը չի՛ լինի, Կասանդրա՛<sup>1</sup>:

ԿԱՍԱՆԴՐԱ.— Հետո՞ գրազ կգամ, Անդրոմաքե՛<sup>2</sup>:

ԱՆԴՐՈՄԱՔԵ.— Այդ հույների պատգամավորը իրավացի է: Նրան լավ կընդունեն: Նրա չքնաղ Հեղինեի՞ն<sup>3</sup> կծրարեն և կվերադարձնեն:

ԿԱՍԱՆԴՐԱ.— Նա շատ բիրտ ընդունելություն կգտնի: Հեղինեին չեն վերադարձնի և Տրոյական պատերազմը կլինի:

ԱՆԴՐՈՄԱՔԵ.— Այո, եթե Հեկտորն<sup>4</sup> այստեղ չլիներ... Բայց նա գալիս է, Կասանդրա՛, նա հասնում է: Դու լսում ես նրա շեփորները... Այս պահիս նա հաղթականորեն մտնում է քաղաք: Ես կարծում եմ, որ նա իր վճռական խոսքը կասի: Երբ նա գնաց, ահա երեք ամիս է, ինձ երդվեց, որ դա վերջին պատերազմն է լինելու:

ԿԱՍԱՆԴՐԱ.— Դա վերջինն էր: Բայց հաջորդն է սպասում նրան:

ԱՆԴՐՈՄԱՔԵ.— Դա քեզ չի հոգնեցնո՞ւմ, միայն սոսկալին տեսնել և կանխատեսել:

ԿԱՍԱՆԴՐԱ.— Ես ոչինչ չեմ տեսնում, Անդրոմաքե՛: Ես ոչինչ չեմ կանխատեսում: Ես միայն հաշվի եմ առնում երկու տխմարությունները՝ մարդկանց տխմարությունը և բնության տխմարությունը:

ԱՆԴՐՈՄԱՔԵ.— Իսկ ինչո՞ւ պետք է պատերազմ լինի: Պարիսը<sup>5</sup> ձանձրացել է Հեղինեից, Հեղինեն ձանձրացել է Պարիսից:

ԿԱՍԱՆԴՐԱ.— Խոսքը նրանց մասին չէ:

ԱՆԴՐՈՄԱՔԵ.— Իսկ ինչի՞ մասին է:

ԿԱՍԱՆԴՐԱ.— Պարիսը ձանձրացե՛լ է Հեղինեից, Հեղինեն ձանձրացե՛լ է Պարիսից: Դու երբևիցե տեսե՛լ ես, որ ճակատագիրը ժրխտող փաստերով հետաքրքրվի:

ԱՆԴՐՈՄԱՔԵ.— Ես չգիտեմ, թե ինչ բան է ճակատագիրը:

ԿԱՍԱՆԴՐԱ.— Հիմա քեզ կասեմ: Դա պարզապէս ժամանակի արագացված ձևն է: Դա զարհուրելի բան է:

ԱՆԴՐՈՄԱՔԵ.— Ես վերացական բաներ չեմ հասկանում:

ԿԱՍԱՆԴՐԱ.— Ծատ լավ: Դիմենք այլաբանությանը: Պատկերացրու մի վագր: Այդ մեկը հասկանո՞ւմ ես: Այդ մեկը աղջիկների համար է: Քնած վագր:

ԱՆԴՐՈՄԱՔԵ.— Թող քնի:

ԿԱՍԱՆԴՐԱ.— Սիրով կթողնեմ: Բայց հաստատումները նրան քնից կպոկեն: Որոշ ժամանակ հետո Տրոյան<sup>6</sup> դրանցով կլցվի:

ԱՆԴՐՈՄԱՔԵ.— Ինչո՞վ կլցվի:

ԿԱՍԱՆԴՐԱ.— Այն խոսքերով, որոնք հաստատում են, թե աշխարհը և աշխարհի կառավարումը մարդկանց ձեռքին է, և հատկապէս, Տրոյայի տղամարդկանց և կանանց ձեռքին...

ԱՆԴՐՈՄԱՔԵ.— Ես քեզ չեմ հասկանում:

ԿԱՍԱՆԴՐԱ.— Հեկտորն այս պահիս վերադարձա՞վ Տրոյա:

ԱՆԴՐՈՄԱՔԵ.— Այո: Հեկտորն այս պահիս վերադառնում է իր կնոջ մոտ:

ԿԱՍԱՆԴՐԱ.— Հեկտորի այդ կինը երեխա է ունենալու:

ԱՆԴՐՈՄԱՔԵ.— Այո, ես երեխա կունենամ:

ԿԱՍԱՆԴՐԱ.— Միթե՞ այս բոլորը հաստատումներ չեն:

ԱՆԴՐՈՄԱՔԵ.— Ինձ մի վախեցրու, Կասանդրա՛:

ԼԻԻ ԶԱՀԵԼ ՍՊԱՍՈՒՀԻ (անցնում է սպիտակեղէնը ձեռքին).— Ի՞նչ հրաշալի օր է, տիրուհի՛:

ԿԱՍԱՆԴՐԱ.— Օ՛, այո: Դու այդպե՞ս ես կարծում: -

ԶԱՀԵԼ ՍՊԱՍՈՒՀԻ (դուրս գալով).— Տրոյան այսօր գարնան իր ամենալավ օրն է ապրում:

ԿԱՍԱՆԴՐԱ.— Մինչև անգամ լվացարարուհին է հաստատում:

ԱՆԴՐՈՄԱՔԵ.— Օ՛, իսկապէս, Կասանդրա՛: Ինչպե՞ս կարող ես այսպիսի օրը պատերազմի մասին խոսել: Աշխարհի վրա երջանկություն է թափվում:

ԿԱՍԱՆԴՐԱ.— Մի իսկական ձյուն է թափվում:

ԱՆԴՐՈՄԱՔԵ.— Նաև գեղեցկություն է թափվում: Տե՛ս արևը: Արևը Տրոյայի փողոցներում ծովի խորքերից ավելի շատ է սառչափ լըցրել: Յուրաքանչյուր ձկնորսի տնից, յուրաքանչյուր ծառից խեցիների շրշում է լսվում: Եթե երբևէ մարդիկ առիթ են ունեցել խաղաղ ապրելու, ապա դա այսօր է... Քանզի այսօր նրանք համատ են... Քանզի այսօր նրանք անմահ են...

ԿԱՍԱՆԴՐԱ.— Այո, անդամալուծները, որոնց հանել են դռների մոտ տաքանալու, իրենց անմահ են զգում:

ԱՆԴՐՈՄԱՔԵ.— Քանզի այսօր նրանք բարի են... Նայիր առաջապահ գնդի այս հեծյալին, որը կոացել է, ասպանդակին հենված, որպեսզի պարսպի հրակնատում թաքնված կատվին շոյի... Գուցե այսօր գազանների և մարդկանց միջև հաստատված դաշինքի առաջին օրն ենք ապրում:

ԿԱՍԱՆԴՐԱ.— Դատարկ տեղը խոսում էս: Ծակատագիրը անհանգի՛ստ է, Անդրոմաքե:

ԱՆԴՐՈՄԱՔԵ.— Աղջիկներն են անհանգիստ, որոնք դեռ ամուսին չունեն: Ես քեզ չեմ հավատում:

ԿԱՍԱՆԴՐԱ.— Մխավում էս: Ա՛հ, Հեկտորը փառքի մեջ գալիս է իր պաշտելի կնոջ մոտ... Նա բացում է մի աչքը... Ա՛հ, անդամալուծները աստարանին աստած իրենց անմահ են կարծում... Նա ձգվում է... Ա՛հ, այսօր կարող է խաղաղություն հաստատվել երկրի վրա... Նա շրթունքներն է լպստում... Անդրոմաքեն զավակ է ունենալու: Հիմա հեծյալները, ասպանդակին հենված, կռանում են, որպեսզի պարիսպների հրակնատներում թաքնված որձ կատուներից շոյեն... Նա ճամփա է ընկնում՝ Ծակատագի՛րը:

ԱՆԴՐՈՄԱՔԵ.— Լոհ՛ր:

ԿԱՍԱՆԴՐԱ.— Եվ նա անաղմուկ բարձրանում է պալատի աստիճաններով: Նա մոռոթով հրում է դռները... Ահա՛ նա... Ահա՛ նա...

ՀԵԿՏՈՐԻ ՁԱՅՆԸ.— Անդրոմաքե՛:

ԱՆԴՐՈՄԱՔԵ.— Դու ստո՛ւմ էս... Դա Հեկտո՛րն է:

ԿԱՍԱՆԴՐԱ.— Իսկ ո՞վ ուրիշ բան ասաց:

### ՏԵՍԱՐԱՆ ԵՐԿՐՈՐԴ

ԱՆԴՐՈՄԱՔԵ, ԿԱՍԱՆԴՐԱ, ՀԵԿՏՈՐ

ԱՆԴՐՈՄԱՔԵ.— Հեկտո՛ր:

ՀԵԿՏՈՐ.— Անդրոմաքե՛... (Գրկախառնվում են): Քեզ էլ ողջուն, Կասանդրա՛: Խնդրում եմ Պարիսին կանչիր: Հնարավորին չափ շուտ:

(Կասանդրան հապաղում է): Բան ունե՞ս ինձ ասելու:

ԱՆԴՐՈՄԱՔԵ.— Մի՛ լսիր նրան... Նա մի որևէ սոսկալի բան կասի:

ՀԵԿՏՈՐ.— Խոսի՛ր:

ԿԱՍԱՆԴՐԱ.— Քո կինը հղի է:

## ՏԵՍԱՐԱՆ ԵՐՐՈՐԳ

### ԱՆԴՐՈՄԱՔԵ, ՀԵԿՏՈՐ

**Հեկտորը պահել է նրան իր գրկում, տանում է դեպի քարե նրատարանը, նստում է կողքին: Կարճատև լռություն:**

ՀԵԿՏՈՐ.— Աղջիկ կլինի՞, թե՞ տղա:

ԱՆԴՐՈՄԱՔԵ.— Իսկ ո՞ւմ էիր ուզում ստեղծել:

ՀԵԿՏՈՐ.— Հազար տղա... Հազար աղջիկ...

ԱՆԴՐՈՄԱՔԵ.— Ինչո՞ւ: Քեզ թվում է, թե հազար կի՞ն ես գրկել...

Պիտի հիասթափվես: Մի տղա կլինի, միայն մի տղա:

ՀԵԿՏՈՐ.— Բոլոր հիմքերը կան, որ մեկը լինի... Պատերազմներից հետո ավելի շատ տղաներ են ծնվում, քան աղջիկներ:

ԱՆԴՐՈՄԱՔԵ.— Իսկ պատերազմներից առա՞ջ:

ՀԵԿՏՈՐ.— Թողնենք պատերազմները, և թողնենք պատերազմը... Նա հենց նոր ավարտվեց: Նա քեզանից տարավ հորդ, եղբորդ, բայց վերադարձրեց ամուսնուդ:

ԱՆԴՐՈՄԱՔԵ.— Նա շատ բարի է՝ այդ պատերազմը: Բայց կհասցնի իրենը վերցնել:

ՀԵԿՏՈՐ.— Հանգստացիր: Այլևս առիթ չենք տա նրան: Հենց հիմա ես քեզ կթողնեմ, կգնամ հրապարակ, որպեսզի հսկողիսավոր կերպով պատերազմի դարպասները փակեմ: Նրանք այլևս չեն բացվի:

ԱՆԴՐՈՄԱՔԵ.— Փակիր դարպասները: Բայց նրանք կբացվեն:

ՀԵԿՏՈՐ.— Գուցե դու նույնիսկ օրն ասես:

ԱՆԴՐՈՄԱՔԵ.— Այն օրը, երբ ցորենը ոսկեգոծվի և ծանրանա, երբ խաղողի հատիկները ավիշով լցվեն, իսկ տները՝ ամուսիններով:

ՀԵԿՏՈՐ.— Եվ անկասկած, երբ կատարյալ խաղաղություն հաստատվի:

ԱՆԴՐՈՄԱՔԵ.— Այո: Եվ իմ որդին զորանա ու դառնա պայծառագեղ:  
**Հեկտորը գրկում է նրան:**

ՀԵԿՏՈՐ.— Քո որդին կարող է վախկոտ լինել: Դա կիրկի նրան:

ԱՆԴՐՈՄԱՔԵ.— Նա վախկոտ չի լինի: Բայց ես նրա աջ ձեռքի ցուցամատը կկտրեմ:

ՀԵԿՏՈՐ.— Եթե բոլոր մայրերն իրենց որդիների աջ ձեռքի ցուցամատը կտրեն, ամբողջ աշխարհի բանակները կպատերազմեն ատուց ցուցամատի... Եթե աջ ոտքը կտրեն, բանակները կլինեն միտամահ... Եթե աչքերը հանեն, բանակները կույր կլինեն, բայց

բանակներ կլինեն, և նրանք, խառնաշփոթի մեջ շոշափելով, իրար կոկորդ կփնտրեն...

ԱՆԴՐՈՄԱՔԵ.— Ավելի շուտ, ես նրան կսպանեմ:

ՀԵԿՏՈՐ.— Ահա պատերազմների մայրական ճիշտ լուծումը:

ԱՆԴՐՈՄԱՔԵ.— Մի՛ ծիծաղիր: Ես կարող եմ նրան հիմա սպանել, մինչև ծնունդը:

ՀԵԿՏՈՐ.— Չես ուզո՞ւմ նրան մեկ րոպե տեսնել, գոնե մեկ րոպե: Հետո կմտածես... Ուզո՞ւմ ես տեսնել քո որդուն:

ԱՆԴՐՈՄԱՔԵ.— Ինձ միայն քո որդին է հետաքրքրում: Որովհետև քոնն է, և քանի որ քոնն է, ես վախենում եմ: Դու չես կարող պատկերացնել, թե որքան է քեզ նման: Այս անգոյությունից, որտեղ հիմա նա է, արդեն տվել է այն ամենը, ինչ դու ես դրել մեր ընթացիկ կյանքում: Քո գործվանքը կա, քո լույությունը: Եթե դու սիրում ես պատերազմը, նա էլ կսիրի... Սիրո՞ւմ ես պատերազմը:

ՀԵԿՏՈՐ.— Ինչո՞ւ ես այդ հարցը տալիս:

ԱՆԴՐՈՄԱՔԵ.— Խոստովանիր, որ երբեմն սիրում ես:

ՀԵԿՏՈՐ.— Եթե կարելի է սիրել այն, ինչը քեզնից խլում է հույսը, երջանկությունը, ամենասիրելի էակներից...

ԱՆԴՐՈՄԱՔԵ.— Չես կարող պատկերացնել, թե որքան լավ ասացիր... Բայց պատերազմը սիրում ես:

ՀԵԿՏՈՐ.— Եթե քեզ հրապուրում է այն փոքրիկ առաքելությունը, որ աստված պարզևում է ճակատամարտի պահին...

ԱՆԴՐՈՄԱՔԵ.— Ծակատամարտի պահին քեզ աստված ես զգում:

ՀԵԿՏՈՐ.— Ծատ հաճախ ավելի փոքր, քան մարդը: Բայց երբեմն առավոտներ են լինում, որ զարթնում ես թեթևացած, զարմացած, առնական: Մարմինը, զենքերը թեթև են, կարծես ուրիշ բանից են ձուլված: Դու կարծես անխոցելի ես: Մի գործվանք է պատում քեզ, լցվում մեջդ, մի տեսակ նազմի գործվանք: Դու գործվալից ես, որովհետև անգույթ ես: Պետք է որ աստվածների գործվանքը այդպիսին լինի: Դանդաղ, համարյա ցրված, բայց գործվանքով մոտենում ես թշնամուն: Խուսափում ես միջատներից տրորել, մծեղին այնպես ես քշում, որ չսատկացնես: Մարդն իր ծնունդից մինչև մահ, երբեք այդպես բարձր չի գնահատում իր կյանքը...

ԱՆԴՐՈՄԱՔԵ.— Հետո ախույա՞նն է հայտնվում:

ՀԵԿՏՈՐ.— Հետո ախույանն է հայտնվում՝ կատաղած, սոսկալի: Խըղճում ես նրան, նրա մեջ, նրա կատաղության լորձուների և մոլեգնած աչքերի ետև, տեսնում ես խեղճ պաշտոնյայի անգորությունը և նվիրվածությունը, տեսնում ես թշվառ ամուսնուն և փեսային,

թշվառ զարմիկին, ուաքիի և ձիթապտղի թշվառ սիրահարին եւ տեսնում: Սիրում եւ նրան: Սիրում եւ այտի վրայի շիբանը, աչքի ճերմակ բիծը... Սիրում եւ... Բայց նա համառում է... Այդ ժամանակ սպանում եւ նրան:

ԱՆԴՐՈՄԱՔԵ.— Եվ աստծու նման խոնարհվում եւ այդ թշվառ մարմնի վրա, բայց մենք աստված չենք և չենք կարող նրա կյանքը վերադարձնել:

ՀԵԿՏՈՐ.— Ո՛չ, չենք խոնարհվում: Քեզ մյուսներն են սպասում: Մյուսները՝ իրենց կատաղության փրփուրով և աստվածային լի հայացքով: Մյուսները՝ ընտանիքով, ձիթապտղով և խաղաղությամբ լի:

ԱՆԴՐՈՄԱՔԵ.— Եվ նրանց սպանո՞ւմ են:

ՀԵԿՏՈՐ.— Նրանց սպանում են: Պատերազմ է:

ԱՆԴՐՈՄԱՔԵ.— Բոլորին սպանո՞ւմ են:

ՀԵԿՏՈՐ.— Այս անգամ բոլորին սպանեցին: Դիտմամբ: Որովհետև այդ ազգը շատ ուզում էր: Որովհետև նրանց պատճառով էր, որ պատերազմը Ասիայում մնում էր և տարածվում: Միայն մեկը ճողոպրեց:

ԱՆԴՐՈՄԱՔԵ.— Հազար տարի հետո, բոլոր մարդիկ նրա որդիները կլինեն: Իմիջիպայոց, փրկությունն ավելորդ է... Իմ որդին կսիրի պատերազմը, քանի որ դու սիրում ես...

ՀԵԿՏՈՐ.— Ինձ թվում է, որ ավելի շուտ եւ ասում եմ պատերազմը... Որովհետև այլևս չեմ սիրում:

ԱՆԴՐՈՄԱՔԵ.— Ինչպե՞ս են կարողանում այլևս չսիրել այն, ինչ պաշտում են: Պատմիր այդ մասին: Դա ինձ շատ է հետաքրքրում:

ՀԵԿՏՈՐ.— Գիտե՞ս, թե երբ է հայտնաբերվում ստախոս ընկերը: Երբ նրա ասած ամեն ինչը հնչում է որսխա կեղծիք, նույնիսկ ճշմարտությունը... Սա գուցե տարօրինակ հնչի, բայց պատերազմը ինձ համար բարության, վեհանձնության և ստոր բաների հանդեպ աստվածության խոստում էր: Ես կարծում էի, որ իմ սաստկության, խմ կենսասիրության և քեզ համար նրան եմ պարտական... Եվ մինչև այս վերջին պատերազմը չկար մի թշնամի, որին չսիրեի...

ԱՆԴՐՈՄԱՔԵ.— Այդ մասին հենց նոր ասացիր: Միայն սիրածդ բաներն են լավ սպանում:

ՀԵԿՏՈՐ.— Եվ դու չես կարող պատկերացնել, թե ուզմի երանգները ինչպիսի ներդաշնակությամբ էին ստիպում ինձ հավատալ պատերազմի վեհությանը: Ձիանց վարձը գիշերով, վրանիդ մոտով անցնում է ասվարագեն մարտիկների գունդը և կաթսաների ու սրերի սովմուկ տարածում, արծվի կանչը դիրքավորված և դարսն

մտած զորախմբերի վրա... մինչև այժմ այդ բոլորը հնչում էր հատակ, հրաշալիորեն հատակ...

**ԱՆԴՐՈՄԱՔԵ.—** Իսկ այս անգամ պատերազմը կե՞ղծ հնչեց:

**ՀԵԿՏՈՐ.—** Իսկ ինչո՞ւ: Գուցե ծերանո՞ւմ եմ: Գուցե սա այն հոգնածությունն է արհեստից, որ էբենագործին հանկարծակի բռնում է դազգահի մոտ: Մի առավոտ էլ, երբ կուացել էի հակառակորդիս վրա, որն իմ տարիքին էր, հոգնությունը ինձ ընկնեց: Առաջ, նրանց, ում պիտի սպանեի, իմ հակապատկերն էին թվում ինձ: Այս անգամ ես ծնրադրել էի հայելու առջև: Այն մահը, որ ես պետք է հասցնեի ուրիշին, մի փոքրիկ ինքնասպանություն էր: Ես չգիտեմ, թե նման պահին էբենագործը ինչ է անում, մի կողմ է նետում իր հետանը և ջրդեղը, թե շարունակում... Ես շարունակեցի: Բայց այդ պահից սկսած, պատերազմի անթերի հնչեղության մեջ այլևս ոչինչ չկար: Նիզակի հարվածը, որ սահեց անցավ վահանիս վրայով, հանկարծ կեղծ հնչեց, և սպանվածների անկումը գետնիվայր, և, ավելի ուշ, պալատների խորտակումը: Եվ պատերազմն էլ, իմիջիպայոց, տեսավ, որ ես արդեն ամեն ինչ հասկացել եմ և նա այլևս չէր քաշվում... Մեռնողների ճիշերը կեղծ էին հնչում... Ես այդպես եմ կարծում:

**ԱՆԴՐՈՄԱՔԵ.—** Իսկ մյուսների համար պատերազմը ճշմարիտ էր հնչում:

**ՀԵԿՏՈՐ.—** Մյուսներն էլ ինձ նման: Բանակը, որին ես առաջնորդեցի, ատում է պատերազմը:

**ԱՆԴՐՈՄԱՔԵ.—** Այդ բանակը վատ լսողություն ունի:

**ՀԵԿՏՈՐ.—** Ոչ: Դու չես կարող պատկերացնել, թե ինչպես, մեկ ժամ առաջ, Տրոյան տեսնելուց հետո, ամեն ինչ հանկարծակի ճշմարիտ հնչեց նրանց համար: Չկար մի գունդ, որ կանգ չառներ այդ թախծով միաբանված: Եվ այդ թախիծը այն աստիճան էր պատել մեզ, որ մենք չհամարձակվեցինք կուռ շարքերով բաղաբ մտնել, մենք պարիսպների շուրջ բաժանվեցինք խմբերի... Դա իսկական բանակի միակ արժանավայել գործն է՝ իր հայրենիքի բաց դարպասների խաղաղ պաշարումը:

**ԱՆԴՐՈՄԱՔԵ.—** Եվ դու չհասկացար, որ ամենավատ կեղծիքը հենց դա էր: Պատերազմը Տրոյայում է, Հեկտոր՝: Այդ նա է ձեզ դիմավորել դարպասների մոտ: Պատերազմն է, որ ինձ ստիպում է այսքան տազնապած տրվել քեզ և ոչ թե սերր:

**ՀԵԿՏՈՐ.—** Ինչե՞ր ես ասում:

**ԱՆԴՐՈՄԱՔԵ.—** Մի՞թե չգիտես, որ Պարիսը առևանգել է Հեղինեին:



ՀԵԿՏՈՐ.— Քիչ առաջ իմացա այդ մասին... Է, հետո՞:

ԱՆԴՐՈՄԱՔԵ.— Եվ, որ հույները պահանջում են վերադարձնել նրան: Եվ, որ նրանց պատգամավորը կժամանի այսօր: Եվ որ, եթե նրան չհանձնենք, պատերազմ կլինի:

ՀԵԿՏՈՐ.— Իսկ ինչո՞ւ պիտի չհանձնենք: Ես ինքս կհանձնեմ:

ԱՆԴՐՈՄԱՔԵ.— Պարիսը երբեք թույլ չի տա:

ՀԵԿՏՈՐ.— Պարիսին մի քանի վայրկյանում ես կհամոզեմ: Կասանդրան հիմա նրան կբերի այստեղ:

ԱՆԴՐՈՄԱՔԵ.— Դու նրան չես կարող համոզել: Նրա փառքը, ինչպես դուք եք ասում, պարտավորեցնում է նրան չհամոզվել: Գուցե նաև իր սերը՝ ինչպես ինքն է ասում:

ՀԵԿՏՈՐ.— Կտեսնենք: Վազիր Պրիամոսի<sup>7</sup> մոտ, հարցրու տես, չի՞ ուզում արդյոք այս պահիս ինձ լսել: Անհոգ եղիր: Բոլոր այն տրոյացիք, որ պատերազմել են և կարող են պատերազմել, պատերազմ չեն ուզում:

ԱՆԴՐՈՄԱՔԵ.— Մնում են շատ ու շատ ուրիշները:

ԿԱՍԱՆԴՐԱ.— Ահա Պարիսը:

**Անդրոմաքեն դուրս է գալիս:**

## ՏԵՍԱՐԱՆ ԶՈՐՐՈՐԴ

ԿԱՍԱՆԴՐԱ, ՀԵԿՏՈՐ, ՊԱՐԻՍ:

ՀԵԿՏՈՐ.— Ընդհանրապես եմ, Պարի՛ս: Մեր բացակայության ժամանակ դու լավ զվարճացել ես:

ՊԱՐԻՍ.— Ոչինչ: Ընդհանրապես եմ:

ՀԵԿՏՈՐ.— Հետո՞: Այդ ի՞նչ պատմություն է Հեղինեի հետ կապված:

ՊԱՐԻՍ.— Հեղինեն մի շատ դուրեկան անձնավորություն է: Այդպես չէ՞, Կասանդրա՛:

ԿԱՍԱՆԴՐԱ.— Բավականին դուրեկան է:

ՊԱՐԻՍ.— Այսօր ինչո՞ւ ես վերապահումով ասում: Դեռ երեկ դու ասում էիր, որ նա շատ գեղեցիկ է:

ԿԱՍԱՆԴՐԱ.— Նա շատ գեղեցիկ է, բայց և շատ դուրեկան:

ՊԱՐԻՍ.— Միթե՞ նա նման չէ փոքրիկ և սիրուն վիթի:

ԿԱՍԱՆԴՐԱ.— Ոչ:

ՊԱՐԻՍ.— Դու ինքդ էիր ինձ ասում, որ նա նման է գազելի:

ԿԱՍԱՆԴՐԱ.— Ես սխալվում էի: Ես հետո նորից նայեցի գազելին:

ՀԵԿՏՈՐ.— Զգվեցրիք ձեր գազելներով: Ի՞նչ է, նա այդքա՞ն քիչ է  
նմանվում այստեղի կանանց:

ՊԱՐԻՍ.— Օ՛հ, նա, անկասկած, այստեղի կանանց տիպը չէ:

ԿԱՍԱՆԴՐԱ.— Ո՞րն է այստեղի կանանց տիպը:

ՊԱՐԻՍ.— Օրինակ, քոնը, սիրելի՛ քույր: Սուկալիորեն կաշող, հեռա-  
վորություն չպահող տիպը:

ԿԱՍԱՆԴՐԱ.— Իսկ քո հույնը սիրո մեջ հեռավորություն պահո՞ւմ է:

ՊԱՐԻՍ.— Լսիր մեր աղջիկներին, նրանք կասեն... Դու հիանալի գի-  
տես, թե ես ինչ եմ ուզում ասել: Ես հոգնել եմ ասիացի կանան-  
ցից: Նրանց գրկախառնումը ձյութի պես կաշուն է, համբույրները  
կարծես մուրճի հարված լինեն և խոսում են բառերը կուլ տալով:  
Հանվելու հետ, կարծես հագնում են իրենց մերկության ավելի  
սեփեթ զգեստը, և իրենց շարքով կարծես ուզում են տալվել մեզ  
վրա: Եվ տալվում են: Մի խոսքով, սուկալի է նրանց հետ... Նույ-  
նիսկ իմ գրկում, Հեղինեն հեռու է ինձնից:

ՀԵԿՏՈՐ.— Ծառ հետաքրքիր է: Բայց ի՞նչ ես կարծում, Կասանդրա՛,  
արժե պատերազմել հանուն այն բանի, որ Պարիսը սիրի հեռա-  
վորության վրա:

ԿԱՍԱՆԴՐԱ.— Հեռվից... Նա սիրում է հեռավորությունն պահող կա-  
նանց, բայց մոտիկից:

ՊԱՐԻՍ.— Հեղինեի ամբողջ հմայքն էլ այն է, որ լինելով ներկա, բա-  
ցակա է:

ՀԵԿՏՈՐ.— Ինչպե՞ս ես նրան սոսկանգել: Իր համաձայնության՞մբ, թե՞  
բռնանալով:

ՊԱՐԻՍ.— Լսի՛ր, Հեկտոր՛ի, դու կանանց ինձնից վատ չգիտես: Նրանք  
համաձայնում են միայն բռնությանբ և այդպիսի դեպքերում հա-  
մաձայնում են մեծ ոգևորությամբ:

ՀԵԿՏՈՐ.— Դու ձիո՞վ էիր: Եվ նրա պատուհանի տակ թրիքի կույտ  
ես թողել, գայթակղիչների հետքը:

ՊԱՐԻՍ.— Հարցաբնություն՞ն է:

ՀԵԿՏՈՐ.— Այո, հարցաբնությունն է: Աշխատիր գոնե մեկ անգամ  
ճիշտ պատասխանել: Դու օջախը, հունական հողը չե՞ս անարգել:

ՊԱՐԻՍ.— Հունական ջուրը՝ մի քիչ: Հեղինեն լողանում էր:

ԿԱՍԱՆԴՐԱ.— Նա փրփուրից է ծնվել: Ինչպես Վեներան, նրա սառ-  
նությունը ծնվել է փրփուրից<sup>8</sup>:

ՀԵԿՏՈՐ.— Պալատի պատերին վիրավորական խոսքեր և անբարո  
նկարներ չե՞ս արել, ինչպես անում են սովորաբար: Մարդկանց

բերանը այն առաջին խոսքը չե՞ս գցել, որ հիմա բոլորը կրկնում են խաբված ամուսնու հասցեին:

ՊԱՐԻՍ.— Ոչ: Մեներլայոսը<sup>9</sup> մերկ կանգնած էր ծովափին և գբաղված էր ոտքի մատը խեցգետնի աքցանից ազատելով: Նա այնպես էր նայում իմ հեռացող նավի ետևից, կարծես քամին շորերը տարել էր:

ՀԵԿՏՈՐ.— Տեսքը զայրացածի՞ էր:

ՊԱՐԻՍ.— Մի թագավոր, որի ոտքը կամթում է խեչափառը, չի կարող երանելի տեսք ունենալ:

ՀԵԿՏՈՐ.— Վկաներ կայի՞ն:

ՊԱՐԻՍ.— Իմ նավազները:

ՀԵԿՏՈՐ.— Սքանչելի է:

ՊԱՐԻՍ.— Ինչո՞ւ է սքանչելի: Ի՞նչ ես ուզում ասել:

ՀԵԿՏՈՐ.— Ասում եմ սքանչելի է, որովհետև դու ոչ մի անուղղելի բան չես թույլ տվել: Ի վերջո, քանի որ հանված է եղել, Հեղինեի ոչ մեկ զգեստը, ոչ մեկ իրը չի անարգվել: Միայն մարմինն է պղծվել: Դա կարելի է զանց առնել: Ես հույներից լավ գիտեմ, նրանք ծով գնացող և սուզվելուց մի քանի ամիս հետո անմեղ տեսքով հանգիստ վերադարձող թագուհու մասին մի հրուշափառ պատմություն կսարքեն և պատիվներ կտան:

ԿԱՍԱՆԴՐԱ.— Անմեղ տեսքը մենք ապահովում ենք:

ՊԱՐԻՍ.— Չլինի թե կարծում ես, որ Հեղինեին պիտի տանեմ Մեներլայոսի մոտ:

ՀԵԿՏՈՐ.— Ոչ մենք ենք քեզանից այդքան շատ բան պահանջում, ոչ էլ նա... Հույների պատգամավորը դրանով կգբաղվի... Նա կվերցնի և այգեգործի պես, այդ տեղահանված բույսը նշված տեղում կունկի: Դու հենց այս երեկո Հեղինեին կհանձնես պատգամավորներից:

ՊԱՐԻՍ.— Ես չգիտեմ, դու մտածո՞ւմ ես, թե ինչպիսի հրեշավոր բան ես առաջարկում: Միթե՞ Հեղինեի հետ գիշեր անցկացնող տղամարդը կարող է հրաժարվել նրանից:

ԿԱՍԱՆԴՐԱ.— Մի ամբողջ կեսօր ունես Հեղինեի հետ: Այդպես ավելի հունական կլինի:

ՀԵԿՏՈՐ.— Մի՛ համառիր: Մենք քեզ լավ գիտենք: Առաջին անգամ , , որ պիտի բաժանվես կնոջից:

ՊԱՐԻՍ.— Ճիշտ է, սիրելի՛ Հեկտոր: Մինչև այժմ ես շատ թեթև սրբաբան էի ընդունում բաժանումները: Բաժանման մեջ, եթե դա նույնիսկ քո ամենասիրելի կինն է, մի համ կա, որն ամենից լավ

միայն ես կարող եմ զգալ: Վերջին գրկախառնումից հետո, առաջին անգամ մեն մենակ զբոսնում ես քաղաքի փողոցներում, առաջին հանդիպած դերձակուհու սիրունիկ դեմքը՝ դեռ անհոգ ու թարմ, կարմրած քթով, արցունքների մեջ կորած դեմքը՝ պաշտելի սիրահարի հեռանալուց հետո, մրգավաճառ աղջկա կամ լվացարարուհու առաջին ծիծաղը՝ անհույս ու կերկերուն ձայնով ասված հրաժեշտից հետո, այս ամենը ստեղծում են մի բերկրանք, որին ես զոհաբերվում եմ առավել կամովին, քան մյուսները... Քեզանից մի էակ է պակասում, բայց շուրջ բոլորը նորից լցվում է մարդկանցով... Բոլոր կանայք վերաստեղծվում են, բոլորը մեռն են և դու ազատ ես ու արժանապատվությամբ լի, իսկ խիղճդ հանգիստ է... Այո, դու ճշմարիտ ես, սերը վեհացնող պահեր ունի՝ խզումի պահերը... Ահա թե ինչու ես երբեք չեմ բաժանվի Հեղինեից, որովհետև ինձ թվում է, թե կապերս խզել եմ բոլոր կանանց հետ և մեկի փոխարեն ձեռք եմ բերել հազար ազատություն, հազար արժանիք:

**ՀԵԿՏՈՐ.**— Որովհետև նա քեզ չի սիրում: Ինչ որ ասացիր այդ է ապացուցում:

**ՊԱՐԻՍ.**— Ինչպես կուզես: Բայց մնացած բոլոր կրթերի փոխարեն, ես կգերադասեի Հեղինեի չսիրելը:

**ՀԵԿՏՈՐ.**— Ես խիստ վշտահար եմ: Բայց դու Հեղինեին կվերադարձնես:

**ՊԱՐԻՍ.**— Դու այստեղ տեր-տիրական չես:

**ՀԵԿՏՈՐ.**— Ես քեզնից մեծ եմ, ուստի քո ապագա տերն եմ:

**ՊԱՐԻՍ.**— Ուրեմն, հրամայիր ապագայում: Իսկ ներկայում ես ևնթարկվում եմ մեր հորը:

**ՀԵԿՏՈՐ.**— Ես ուրիշ բան չեմ ուզում: Դու համաձայն կլինե՞ս մեր որոշմանը:

**ՊԱՐԻՍ.**— Իհարկե, կհամաձայնեմ:

**ՀԵԿՏՈՐ.**— Երդվո՞ւմ ես: Երդվե՞նք:

**ԿԱՍԱՆԴՐԱ.**— Զգույշ, Հեկտոր: Հեղինեն խենթացրել է Պրիամոսին:

Նա ավելի շուտ իր դուստրերին կտա:

**ՀԵԿՏՈՐ:**— Ինչպե՞ս թե:

**ՊԱՐԻՍ.**— Քանի որ Կասանդրան ապագայի փոխարեն ներկայի մասին է խոսում, ուրեմն ճիշտ է:

**ԿԱՍԱՆԴՐԱ.**— Եվ մեր բոլոր եղբայրները, և մեր բոլոր հորեղբայրները, և մեր ամբողջ ազգ ու տակը... Հեղինեն մի պատվո պահակախումբ ունի՝ մեր ծերերից կազմված: Նայիր: Հիմա նրա զբո-

ասնքի ժամն է... Տեսնո՞ւմ ես ճերմակ մորուքները պարիսպների վրա, կարծես թխական արագիլներ լինեն պատնեշին թառած:  
ՀԵԿՏՈՐ.— Գեղեցիկ տեսարան է: Մորուքները սպիտակ են, իսկ դեմքերը կարմիր:

ԿԱՍԱՆԴՐԱ.— Այո, Հեղինեի պատճառով արյունը գլուխներն է խրփել: Նրանք պետք է որ Սքամանդրյան դարպասների<sup>10</sup> մոտ լինեին, որտեղից մեր հաղթական գնդերն են մտնում: Մինչդեռ նրանք հավաքվել են Սքեական դարպասների<sup>11</sup> մոտ, որտեղից Հեղինեն է դուրս գալու:

ՀԵԿՏՈՐ.— Ահա, նրանք կուսնում են միանգամից, ինչպես արագիլները առնետ տեսնելիս:

ԿԱՍԱՆԴՐԱ.— Հեղինեն է անցնում:

ՀԵԿՏՈՐ.— Այո՞:

ԿԱՍԱՆԴՐԱ.— Նա երկրորդ տերբաում է: Կանգնած սանդալն է կապում, աշխատելով հնարավորին չափ ոտքը բարձրացնել:

ՀԵԿՏՈՐ.— Անհավատալի է: Տրոյայի բոլոր ծերերը հավաքվել են այնտեղ, որպեսզի վերևից նրան նայեն:

ԿԱՍԱՆԴՐԱ.— Ոչ: Ավելի խորամանկները Շայում են ներքևից:

ՋԱՅՆ ԴՐՍԻՑ.— Կեցցե՛ Գեղեցկությունը:

ՀԵԿՏՈՐ.— Ադ ի՞նչ են գոռում:

ՊԱՐԻՍ.— Նրանք գոռում են. կեցցե՛ Գեղեցկությունը:

ԿԱՍԱՆԴՐԱ.— Ես էլ եմ նրանց կարծիքին: Նրանք հավերժական բաների մասին են գոռում, քանի որ շուտով մեռնելու են:

ՋԱՅՆ ԴՐՍԻՑ.— Կեցցե՛ Գեղեցկության Աստվածուհին:

ՀԵԿՏՈՐ.— Իսկ հիմա՞:

ԿԱՍԱՆԴՐԱ.— Կեցցե՛ Գեղեցկության Աստվածուհին... Նրանք այնպիսի բաներ են ասում, որտեղ Բ չլինի, որովհետև քերաններում ատամ չի մնացել... Կեցցե՛ Գեղեցկությունը... Կեցցե՛ Գեղեցկության Աստվածուհին... Կեցցե՛ Հեղինեն... Եվ նրանց թվում է, թե հզոր ճիչեր են արձակում: Բայց իրականում, նրանք ջանասիրաբար չփշիացնում են բերանով:

ՀԵԿՏՈՐ.— Իսկ գեղեցկության աստվածուհուն ինչո՞ւ են հիշում:

ԿԱՍԱՆԴՐԱ.— Նրանք կարծում են, թե Վեներան է Հեղինեին պարգևել մեզ, որպես փոխհատուցում Պարիսին, քանի որ Պարիսն առաջին հալացքից խնձորը շնորհեց գեղեցկության աստվածուհուն<sup>12</sup>:

ՀԵԿՏՈՐ.— Դու էլ լա՛վ գործ արիր այդ օրը:

ՊԱՐԻՍ.— Որովհետև Մեծ եղբայրս դու ես:

## ՏԵՍԱՐԱՆ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ՆՈՒՅՆՔ, ԵՐԿՈՒ ԾԵՐԵՐ

ԱՌԱՋԻՆ ԾԵՐ.— Այնտեղից նրան ավելի լավ կտեսնենք...

ԵՐԿՐՈՐԴ ԾԵՐ.— Մենք արդեն նրան լավ տեսանք:

ԱՌԱՋԻՆ ԾԵՐ.— Բայց այստեղից նա մեզ չավ կլսի: Դե՛, մե՛կ, երկո՛ւ, երե՛ք:

ԵՐԿՈՒ ԾԵՐԵՐԸ.— Կեցցե՛ Հեղինեն:

ԵՐԿՐՈՐԴ ԾԵՐԸ.— Մեր տարիքում բավականին հոգնեցուցիչ է՝ Հեղինեին ողջունելու կամ տեսնելու համար շարունակ իջնել ու բարձրանալ այս թեք աստիճաններով:

ԱՌԱՋԻՆ ԾԵՐ.— Ուզո՞ւմ ես փոխնիփոխ անենք: Մի օր նայենք, մի օր ողջունենք:

ԵՐԿՐՈՐԴ ԾԵՐ.— Խե՞նթ ես, ինչ է, ես չեմ կարող մի օր ապրել առանց Հեղինեին տեսնելու... Հիշիր, որ այսօր տեսանք նրան: Մեկ, երկու, երեք:

ԵՐԿՈՒ ԾԵՐԵՐԸ.— Կեցցե՛ Հեղինեն:

ԱՌԱՋԻՆ ԾԵՐ.— Իսկ հիմա, իջնենք ներքև...

Վազելով դուրս են գալիս:

ԿԱՍԱՆԴՐԱ.— Տեսնո՞ւմ ես, Հեկտո՛ր: Ես մտածում եմ, թե այդ խեղճ թոքերը ինչպես են դիմանում:

ՀԵԿՏՈՐ.— Մեր հայրը այս աստիճանի հասած չի լինի:

ՊԱՐԻՍ.— Լսիր, Հեկտո՛ր, մեր հոր հետ խոսելուց առաջ գուցե նայեիր Հեղինեին:

ՀԵԿՏՈՐ.— Հեղինեն ինձ պետք չէ... Օ՛հ, ողջո՛ւյն, հայրի՛կ:

Ներս է մտնում Պրիամոսը՝ Հեկուբայի<sup>13</sup>, Անդրոմաքեի, պոետ Գեմոկոսի և մեկ ուրիշ ծերունու ուղեկցությամբ: Հեկուբան բռնել է փոքրիկ Պոլիքսենեի ձեռքը:

## ՏԵՍԱՐԱՆ ՎԵՅԵՐՈՐԴ

ՀԵԿՈՒԲԱ, ԱՆԴՐՈՍՄԱՔԵ, ԿԱՍԱՆԴՐԱ, ՀԵԿՏՈՐ, ՊՐԻԱՄՈՍ, ՊԱՐԻՍ, ԴԵՄՈԿՈՍ,  
ԵՐԿՐԱԶԱՓ, ՓՈՔՐԻԿ ՊՈԼԻՔՍԵՆԵ

ՊՐԻԱՄՈՍ.— Ի՞նչ ասացիր:

ՀԵԿՏՈՐ.— Հա՛յր իմ, ես ասացի, որ պետք է շտապենք պատերազմի

- դարպասները փակել, ամուր կողպել, որպեսզի ճանճն անգամ չկարողանա անցնել:
- ՊՐԻԱՄՈՍ.— Քո ասածն ավելի կարճ էր:
- ԴԵՄՈԿՈՍ.— Ասում էր, թե Հեղինեն իրեն պետք չէ:
- ՊՐԻԱՄՈՍ.— Կուացի՛ր... (Հեկտորը ենթարկվում է): Տեսնո՞ւմ ես նրան:
- ՀԵԿՈՒԲԱ.— Իհարկե, տեսնում է: Ես մտածում եմ, արդյոք կա՞ մեկը, որ չի տեսել Հեղինեին: Նա ամբողջ օրը զբոսանում է:
- ԴԵՄՈԿՈՍ.— Դա գեղեցկության զբոսանքն է:
- ՊՐԻԱՄՈՍ.— Տեսնո՞ւմ ես նրան:
- ՀԵԿՏՈՐ.— Այո... Է հետո՞:
- ԴԵՄՈԿՈՍ.— Պրիամոսը հարցնում է, թե դու ինչ ես տեսնում:
- ՀԵԿՏՈՐ.— Ես տեսնում եմ մի երիտասարդ կնոջ, որը սանդալներն է կապում:
- ԿԱՍԱՆԴՐԱ.— Նա ահագին ժամանակ է հատկացնում սանդալները կապելուն:
- ՊԱՐԻՍ.— Երբ ես նրան առևանգեցի, մորից մերկ էր և հետը ոչ մի զգեստ չկար: Դրանք քո սանդալներն են, մի քիչ մեծ են ուռքին:
- ԿԱՍԱՆԴՐԱ.— Փոքրիկ կանանց համար ամեն ինչ մեծ է:
- ՀԵԿՏՈՐ.— Ես երկու հրաշալի սրունք եմ տեսնում:
- ՀԵԿՈՒԲԱ.— Նա տեսնում է աչն, ինչ դուք եք տեսնում:
- ՊՐԻԱՄՈՍ.— Իմ խեղճ երեխա:
- ՀԵԿՏՈՐ.— Ինչպե՞ս:
- ԴԵՄՈԿՈՍ.— Պրիամոսը քեզ ասում է՝ իմ խեղճ երեխա:
- ՊՐԻԱՄՈՍ.— Ես չգիտեի, որ Տրոյայի երիտասարդությունը հասել է դրան:
- ՀԵԿՏՈՐ.— Ինչի՞նչ է հասել:
- ՊՐԻԱՄՈՍ.— Գեղեցկությունը անտեսելուն:
- ԴԵՄՈԿՈՍ.— Հետևաբար և՛ սերը անտեսելուն: Մի խոսքով, դուք հասել եք ռեալիզմին: Մենք՝ պոետներս, դա անվանում ենք ռեալիզմ:
- ՀԵԿՏՈՐ.— Իսկ Տրոյայի ծերերը հասկանո՞ւմ են սերը և գեղեցկությունը:
- ՀԵԿՈՒԲԱ.— Դա շատ բնական է: Սիրողները և գեղեցիկները չեն, որ հասկանում են սերը:
- ՀԵԿՏՈՐ.— Սերը շատ սովորական երևույթ է, հա՛յր: Ես Հեղինեին չեմ ակնարկում, բայց գեղեցկությունը վազում է փողոցներով:
- ՊՐԻԱՄՈՍ.— Հեկտոր, մի՛ կեղծիր: Քեզ հետ էլ պատահած կլինի, նույնը ես մի կնոջ և զգում, որ դա միայն հասարակ մահկանա-

ցու չէ, այլ նաև մտքերի և զգացմունքների մի հեղեղ, որ գալիս է այդ կնոջից և փայլ տալիս նրան:

ԴԵՄՈՎՈՍ.— Այդպես սուտակն է մարմնավորում արյունը:

ՀԵԿՏՈՐ.— Ոչ նրանց համար, ովքեր արյուն են տեսել: Ես արդեն հոգնել եմ արյուն տեսնելուց:

ԴԵՄՈՎՈՍ.— Բայց դա խորհրդանիշ է: Դու, որ շնայած ուզումիս ես, դու անպայման լսած կլինես խորհրդանիշների մասին: Դու անպայման հանդիպած կլինես կանանց, որոնց որքան հեռվից նայես, քեզ թվում են ուշիմության, ներդաշնակության և հեզության մարմնավորում:

ՀԵԿՏՈՐ.— Տեսել եմ այդպիսիներից:

ԴԵՄՈՎՈՍ.— Ի՞նչ էիր անում այդ ժամանակ:

ՀԵԿՏՈՐ.— Ես մոտենում էի և տպավորությունը կորչում էր... Դա ի՞նչ է մարմնավորում:

ԴԵՄՈՎՈՍ.— Կրկնում ենք քեզ՝ գեղեցկություն:

ՀԵԿՈՒԲԱ.— Ուրեմն վերադարձրեք հույներից, եթե ուզում եք, որ նա ձեզ համար գեղեցկությունը ավելի երկար մարմնավորի: Նա շիկահեր է:

ԴԵՄՈՎՈՍ.— Անհնար է այս կանանց հետ խոսել:

ՀԵԿՈՒԲԱ.— Ուրեմն, մի՛ խոսեք կանացից: Բոլոր դեպքերում դուք բնավ նրբակիրթ չեք և հայրենասեր չեք: Ամեն մի ժողովուրդ, իր կնոջն է դարձնում խորհրդանիշ, եթե նույնիսկ այդ կինը մեծ քիթ ունի կամ հաստ շրթունք: Միայն դուք եք, որ գնում, այդ խորհրդանիշը ուրիշ տեղից եք բերում:

ՀԵԿՏՈՐ.— Հա՛յր, ես և իմ ընկերներս եկել ենք հոգնաբեկ: Մենք մեր երկրում խաղաղություն հաստատեցինք հավերժության համար: Մենք որոշել ենք այսուհետև երջանիկ ասլի, մենք ուզում ենք, որ մեր կանայք կարողանան մեզ սիրել առանց տազնապի և ունենան երեխաներ:

ԴԵՄՈՎՈՍ.— Իմաստուն սկզբունքներ են, բայց պատերազմը երբեք չի խանգարել ծննդաբերությանը:

ՀԵԿՏՈՐ.— Ասա՛ ինձ, ինչի՞ց էր, որ քաղաքը մենք տեսանք այսքան բարեփոխված, միայն Հեղինեի ներկայությունի՞ց: Ասա՛ ինձ, ի՞նչ է նա մեզ տվել, որի համար արժենար գժուվել հույների հետ:

ԵՐԿՐԱՉԱՓ.— Բոլորը քեզ կասեն այդ մասին: Ես էլ կարող եմ ասել:

ՀԵԿՈՒԲԱ.— Ահա՛ երկրաշափը:

ԵՐԿՐԱՉԱՓ.— Այո՛, ահա երկրաշափը: Եվ մի՛ կարծիր, թե երկրաշափները չեն կարող կանանցով զբաղվել: Նրանք չափում են ոչ



միայն երկիրը, նաև ձեր մարմինը: Ես ձեզ չեմ պատմի, թե երկրաչափները ինչպես են տառապում ձեր ազդրերի հաստ կաշվից և ձեր վզի ուռուցքներից... Երկրաչափները մինչև այսօր գոհ չէին այն տեղանքից, որ շրջապատում է Տրոյան: Հովիտները բլուրներից կապող գիծը թվում էր կակուղ, իսկ բլուրների և լեռների գիծը կարծես երկաթալար լիներ: Այն օրվանից, ինչ Հեղինեն այստեղ է, բնակարը ստացել է իմաստ և ամրություն: Եվ, որ ամենագլխավորն է իսկական երկրաչափի համար, այժմ ծավալի և տարածության համար ստեղծվել է մի ընդհանուր չափ՝ դա Հեղինեն է: Դա մարդկանց կողմից հորինված բոլոր այն գործիքների մահն է, որոնք փոքրացնում էին աշխարհը: Այլևս մետր, գրամ, մղոն չկա: Կա միայն Հեղինեի քայլը, Հեղինեի արմնկաչափը, Հեղինեի ձայնի կամ հայացքի ուժը, իսկ նրա շարժումից առաջացած օդի տատանումով չափում ենք Քամու ուժգնությունը: Նա մեր ծանրաչափն է, մեր հողմաչափը: Ահա թե ինչ է ասում քեզ երկրաչափը:

**ՀԵԿՈՒԲԱ.**— Նա լալիս է, ապուշը:

**ՊՐԻԱՄՈՍ.**— Իմ սիրելի՛ որդի, նայիր միայն այս ծերերի ամբոխին և դու կհասկանաս, թե ով է Հեղինեն: Նա մի տեսակ բացարձակն է: Նա ապացուցում է բոլոր այս ծերերին, որոնց ակնապիշ նայելը դու տեսնում ես, որոնք իրենց ճերմակ մազերով ծածկել են քաղաքի պարիսպը, որոնք ժամանակին գողացել են, որոնք կանանց առևտրով են զբաղվել, որոնց կյանքը չի ստացվել, նրանք իրենց հոգու խորքում գեղեցկության մի թաքուն պահանջ են ունեցել, նա ապացուցում է, որ եթե գեղեցկությունը նրանց սուշև լիներ, ինչպես այսօր Հեղինեն է, այդ մարդիկ չէին կողոպտի իրենց բարեկամներին, չէին ծախի իրենց աղջիկներին և իրենց ժառանգությունը չէին մսխի: Հեղինեն նրանց մեղքերի թողությունն է, նրանց վրեժն է դառը կյանքից և նրանց ապագան:

**ՀԵԿՏՈՐ.**— Ծերերի ապագան ինձ չի հետաքրքրում:

**ԴԵՄՈՎՈՍ.**— Հեկտոր՛ր, ես բանաստեղծ եմ և դատում եմ որպես բանաստեղծ: Ենթադրենք, թե մեր բառապաշարը գուրկ է «գեղեցկություն» բառից, ենթադրենք, թե «վայելք» բառը գոյություն չունի:

**ՀԵԿՏՈՐ.**— Առանց դրանց էլ կապրենք: Ես արդեն ապրում եմ այդպես: «Վայելք» բառը ես միայն ստիպված եմ արտասանում:

**ԴԵՄՈՎՈՍ.**— Դու, անկասկած, կապրեիր նաև առանց «հեշտանք» բառի:

ՀԵՎՏՈՐ.— Այո, եթե «հեշտանք» բառը պետք է ձեռք բերվի պատե-  
րազմի գնով, ես առանց դրա էլ կապրեմ:

ԴԵՄՈԿՈՍ.— Պատերազմի գնով է, որ ձեռք ես բերել ամենագեղեցիկ  
բառը՝ «քաջություն»:

ՀԵՎՏՈՐ.— Դրա համար շատ թանկ է վճարվել:

ՀԵՎՈՒԲԱ.— «Վախկոտություն» բառը պետք է որ միևնույն առիթով  
գտնված լինի:

ՊՐԻԱՄՈՍ.— Որդի՛ս, ինչո՞ւ ես ճգնում մեզ չհասկանալ:

ՀԵՎՏՈՐ.— Ես ձեզ շատ լավ եմ հասկանում: Մի բանը ուրիշ բանի  
տեղ դնելով մեզ ստիպում եք կովել գեղեցկության համար, մինչ-  
դեռ ուզում եք կովել կնոջ համար:

ՊՐԻԱՄՈՍ.— Եվ դու ոչ մի կնոջ համար չես կովի՞:

ՀԵՎՏՈՐ.— Ոչ մի դեպքում:

ՀԵՎՈՒԲԱ.— Եվ դա շատ ճիշտ կլինի:

ԿԱՍԱՆԴՐԱ.— Եթե միայն մեկը չլիներ: Բայց կին հասկացողությունը  
շատ լայն է:

ԴԵՄՈԿՈՍ.— Դու Անդրոմաքեին վերադարձնելու համար չէի՞ր պա-  
տերազմի:

ՀԵՎՏՈՐ.— Անդրոմաքեն և ես գաղտնաբար միջոցներ ենք մտածել՝  
ամեն տեսակի գերությունից փախչելու և միանալու:

ԴԵՄՈԿՈՍ.— Եթե նույնիսկ ոչ մի հույս չլինի, դարձյալ պիտի միա-  
նա՞ք:

ԱՆԴՐՈՄԱՔԵ.— Նույնիսկ այդ դեպքում:

ՀԵՎՈՒԲԱ.— Դու սրանց դիմակը լավ պատռեցիր, Հեկտոր՛ր: Նրանք  
ուզում են հանուն մի կնոջ կովել. դա անգորների սիրելու ձևն է:

ԴԵՄՈԿՈՍ.— Ձեր կարծիքով դա թա՞նկ է:

ՀԵՎՈՒԲԱ.— Իհարկե:

ԴԵՄՈԿՈՍ.— Թույլ տուր չհամաձայնել քո կարծիքին: Այն սեռը, որի  
համար պարտական եմ մորս, ես հարգում եմ նույնիսկ անարժան  
դրսևորումների մեջ:

ՀԵՎՈՒԲԱ.— Գիտե՞նք, դու կարգին հարգել ես...

**Վիճաբանության վրա հավաքված սպասուհիները հռհռում են:**

ՊՐԻԱՄՈՍ.— Հեկտորա՛: Դուստրե՛ր իմ: Ի՞նչ է նշանակում այս կա-  
նացի ըմբոստությունը: Խորհուրդը մտածում է՝ արդյոք քաղաքի  
բախտը ձեզանից մեկից չի՞ կախված: Եվ միթե՞ դրանից նվաս-  
տացած եք զգում:

ԱՆԴՐՈՄԱՔԵ.— Կնոջ համար միայն մեկ նվաստացում կա՝ անար-  
դարությունը:

ԴԵՄՈՎՈՍ.— Ինչ ծանր է հաստատել, որ ամենից քիչ կանայք գիտեն, թե ինչ է կինը:

ՋԱՀԵԼ ՍՊԱՍՈՒՀԻ (անցնելով).— Օ՛, լա՛, լա՛:

ՀԵԿՈՒԲԱ.— Նրանք հիանալի գիտեն: Ես ձեզ կասեմ, թե ինչ է կինը:

ԴԵՄՈՎՈՍ.— Նրան թույլ մի տուր խոսել, Պրիամո՛ւ: Աստված գիտե, թե ինչ կասի:

ՀԵԿՈՒԲԱ.— Նրանք ճշմարտությունը կասեն:

ՊՐԻԱՄՈՍ.— Բավական է ձեզանից որևէ մեկի մասին մտածեմ, որպեսզի իմանամ, թե ինչ է կինը:

ԴԵՄՈՎՈՍ.— Նախ և առաջ: Կինը մեր եռանդի աղբյուրն է: Դու այդ լավ գիտես, Հեկտո՛ր: Այն զինվորը, որն իր մոտ կնոջ նկար չի պահում, ոչինչ չարժե:

ԿԱՍԱՆԴՐԱ.— Ձեր գոռոզության աղբյուրը:

ՀԵԿՈՒԲԱ.— Ձեր մոլությունների աղբյուրը:

ԱՆԴՐՈՄԱՔԵ.— Կինը անհավատարմությամբ է լցված, նա վախի մարմնավորումն է, ատում է ամեն մի դժվար բան, պաշտում է գոեհիկը և դյուրինը:

ՀԵԿՏՈՐ.— Սիրելի՛ Անդրոմաքե:

ՀԵԿՈՒԲԱ.— Դա շատ պարզ է: Արդեն հիսուն տարի է ես կին եմ և երբեք չեմ կարողացել կարգին իմանալ, թե ով եմ ես:

ԴԵՄՈՎՈՍ.— Երկրորդ: Կուզենա այդ կինը, թե ոչ, նա քաջության միակ խրախույսն է... Հարցրեք ամենանվաստ զինվորին: Սպանել մարդուն, նշանակում է արժանանալ կնոջը:

ԱՆԴՐՈՄԱՔԵ.— Կինը սիրում է վախկոտներին, ստահակներին: Եթե Հեկտորը վախկոտ լիներ կամ ստահակ, ես նրան նույն չափով կսիրեի: Գուցե ավելին:

ՊՐԻԱՄՈՍ.— Ծատ հեռու մի գնա, Անդրոմաքե՛: Դու կարող ես քո ուզածի հակառակն ապացուցել:

ՓՈՔՐԻԿ ՊՈԼԻՔՍԵՆԵ.— Նա որկրամուլ է: Նա խաբում է:

ՀԵԿՈՒԲԱ.— Իսկ այն մասին չե՞նք խոսելու, որ նրանք մարդու կրանքում ներկայացնում են հավատարմությունը, մաքրությունը:

ՍՊԱՍՈՒՀԻ.— Օ՛, լա՛, լա՛:

ԴԵՄՈՎՈՍ.— Ի՞նչ ես ասում:

ՍՊԱՍՈՒՀԻ.— Ասում եմ, օ՛, լա՛, լա՛: Ասում եմ այն, ինչ մտածում եմ:

ՓՈՔՐԻԿ ՊՈԼԻՔՍԵՆԵ.— Նա կոտորում է իր խաղալիքները: Իր տիկնիկների գլուխները մտցնում է եռացող ջրի մեջ:

ՀԵԿՈՒԲԱ.— Մեր ծերանալու հետ, մենք՝ կանայք, համոզվում ենք, որ տղամարդիկ կեղծավոր են, պարծենկոտ են, անասուն են: Իսկ

տղամարդիկ իրենց ծերանալու հետ, մեզ զարդարում են կատարելությամբ: Եվ ուզածդ աման լվացողը, որին մի ժամանակ պատին եք սեղմել, ձեր հիշողության մեջ դառնում է սիրո կատարելություն:

**ՊՐԻԱՄՈՍ.**— Դու ինձ չե՞ս դավաճանել:

**ՀԵԿՈՒԲԱ.**— Միայն քեզ հետ, բայց հարյուր անգամ:

**ԴԵՄՈԿՈՍ.**— Իսկ Անդրոմաքեն դավաճանե՞լ է Հեկտորին:

**ՀԵԿՈՒԲԱ.**— Անդրոմաքեին հանգիստ թող, նա կանացի հաշիվների հետ գործ չունի:

**ԱՆԴՐՈՄԱՔԵ.**— Եթե Հեկտորն իմ ամուսինը չլիներ, ես նրան կդավաճանեի հենց իր հետ: Եթե նա մի բոկոտն և կաղ ձկնորս լիներ, ես կգնայի նրա խրճիթը, կպատկեի ոստրեներից և ջրիմուռներից պատրաստված նրա անկողնու վրա և մի շնական զափակ կծնեի նրա համար:

**ՓՈՔՐԻԿ ՊՈԼԻՔՍԵՆԵ.**— Նա գիշերները աչքերը չուած պատկում է և զվարճանում չքնելով:

**ՀԵԿՈՒԲԱ (Պոլիքսենեին).**— Բավակա՛ն է խոսես: Սոսկալի՛ է: Այլևս չլսե՛մ:

**ՍՊԱՍՈՒՀԻ.**— Տղամարդուց վատ բան չկա: Բայց այս մե՛կը...

**ԴԵՄՈԿՈՍ.**— Ավելի վատ, եթե կինն է մեզ դավաճանում: Ավելի վատ, եթե ինքն է արհամարհում իր պատիվը և իր արժանիքները: Քանի որ նա անկարող է հսկել այն կատարյալ վիճակը, որը պահպանում է նրա կարծրությունը և հոգու վարագույրները մի կողմ վանում, ապա դրանով մենք պիտի զբաղվենք...

**ՍՊԱՍՈՒՀԻ.**— Ա՛յ քեզ բան...

**ՊԱՐԻՍ.**— Կանայք մոռանում են ասել, որ իրենք խանդոտ չեն:

**ՊՐԻԱՄՈՍ.**— Սիրելի՛ դուստրեր, ձեր ըմբռստությունը հենց մեր արդարության ապացույցն է: Արդյոք կա՞ ավելի մեծ ազնվություն, որով դուք այս պահիս կոչվում եք խաղաղության համար. խաղաղությունը ձեզ կտա տկար, անգործ և ապիկար ամուսիններ, մինչդեռ պատերազմը նրանց կդարձնի ար...

**ԴԵՄՈԿՈՍ.**— Հերոս:

**ՀԵԿՈՒԲԱ.**— Ձեր այդ բառացանկը մենք լավ գիտենք: Տղամարդը պատերազմի ժամանակ կոչվում է հերոս: Նա կարող է բոլորովին խիզախ չլինել և նույնիսկ ոտքերը կայտատորեն շարժելով փախչել: Բայց նա առնվազն հերոս է, որն, իհարկե, արանքը ճղում է:

**ԱՆԴՐՈՄԱՔԵ.**— Հայր իմ, աղաչում եմ ձեզ: Եթե դուք նվազագույն

չափով հարգում եք կանանց, լսեք, թե աշխարհի բոլոր կանայք ինչ կասեն իմ բերանով: Թողեք մեր ամուսինները մեան մեզ, ինչպես որ կան: Նրանց կենսունակությունը և խիզախությունը արթուն պահելու համար աստվածները նրանց չորս բոլոր կենդանի ու անկենդան հազար ու մի բան են ստեղծել: Ի՞նչ պակաս է, օրինակ, ամպրոպը: Ի՞նչ պակաս են գազանները: Եվ որքան որ կլինեն գայլեր, փղեր, ընձառյուծներ, մեր ամուսինները ավելի լավ պիտոյաններ կունենան, քան մարդն է: Բոլոր այս մեծ թռչունները, որ թռչում են մեր գլխավերևում, այս նապաստակները, որոնց մենք՝ կանայք չենք կարողանում թփերից ջոկել, ավելի լավ գրավական են մեր ամուսինների աչքի զորության համար, քան մյուս թիրախը՝ թշնամու զրահապատ կուրծքը: Ամեն անգամ, երբ խոցված այծյամ կամ արծիվ են տեսնում, ես շնորհակալություն եմ հայտնում այդ կենդանիներին: Ես գիտեմ, որ Հեկտորի փոխարեն մեռնում են նրանք: Ինչո՞ւ եք ուզում, որ Հեկտորին մյուս տղամարդկանց մահվան գնով պահպանեն:

**ՊՐԻԱՄՈՍ.**— Ես այդ չեմ ուզում, սիրելի՛ս: Բայց գիտե՞ք, թե ինչու եք այստեղ, բոլորդ այսքան սքանչելի, այսքան կորովի: Որովհետև ձեր ամուսինները, ձեր հայրերը և ձեր պապերը զինվոր են եղել: Եթե նրանք ծույլ լինեին զենքի հանդեպ, եթե չիմանային, որ այս դժգույն և հիմար զբաղմունքը, որ կյանքն է, իմաստավորվում և լուսավորվում է հենց իր՝ կյանքի հանդեպ ունեցած տղամարդկանց արհամարհանքով, ապա դուք վախկոտ կլինեիք և պատերազմ կպահանջեիք: Այս կյանքում ընդամենը մեկ ձև կա անմահանալու՝ մոռանալ, որ մահկանացու ես:

**ԱՆԴՐՈՄԱՔԵ.**— Օ՛հ, ճի՛շտ է, հա՛յր, դուք այդ լավ գիտեք: Քաջերն են, որ մեռնում են պատերազմում: Որպեսզի չսպանվես, պետք է պատահականություն կամ ճարպկություն: Պետք է գլուխը կոտրեն և կամ առնվազն մեկ անգամ վտանգի սուղև ծնրադրել: Հաղթական կամարի տակով անցնում են այն զինվորները, որոնք դասալքել են մահը: Ինչպե՞ս կարող է մի երկիր ուժ և պատիվ շահել՝ կորցնելով թե մեկը, թե մյուսը:

**ՊՐԻԱՄՈՍ.**— Դո՛ւստր իմ, առաջին վախկոտությունը ժողովրդի ծերանալու առաջին խորշումն է:

**ԱՆԴՐՈՄԱՔԵ.**— Իսկ վախկոտության վատթարը ո՞րն է: Վախկոտ երևալ ուրիշի աչքին, բայց խաղաղություն փրկե՞լ, թե՞ վախկոտ լինես ինքդ քո աչքին և պատերազմ բորբոքես:

**ԴԵՄՈԿՈՍ.**— Վախկոտությունն այն է, երբ մահը հանուն հայրենիքի չես գերադասում մյուս մահերից:

**ՀԵԿՈՒԲԱ.**— Այս հաշվով ես սպասում էի պեղիաչին: Նա առիթը բաց չի թողնում:

**ԱՆԴՐՈՄԱՔԵ.**— Միշտ էլ մեռնում են հայրենիքի համար: Երբ հայրենիքում ապրում ես արժանապատվությամբ, խելքով, եռանդով, դարձյալ հայրենիքի համար ես մեռնում: Սպանվածները հանգիստ չունեն հողի տակ, Պրիամո՛ւ: Նրանք հողին չեն լուծվում հանգստի և երկնային գոյության համար: Նրանք չեն վերադառնում կյանք որպես ցորեն կամ մարմին: Երբ հողում մարդու կրմախք են գտնում, կողքին միշտ լինում է սուրբ: Դա հողի ոսկորն է, անպտուղ ոսկորը: Դա զինվորն է:

**ՀԵԿՈՒԲԱ.**— Այդ դեպքում, թող միայն ծերերը զինվոր դառնան: Ամբողջ երկիրը երիտասարդության երկիր է: Երկիրը մեռնում է, երբ մեռնում է երիտասարդությունը:

**ԴԵՄՈԿՈՍ.**— Զանձրացրիք ձեր երիտասարդությամբ: Երեսուն տարի հետո դրանք էլ պիտի ծերանան:

**ԿԱՍԱՆԴՐԱ.**— Սխալվում ես:

**ՀԵԿՈՒԲԱ.**— Սխալվում ես: Երբ հասուն տղամարդը դառնում է քանասուն տարեկան, նրան փոխարինում են ծերունիով: Ինքը անհետանում է: Այդ երկուսի միջև մնում է մի երկութեան անառություն: Նրանցից ոչ մեկը մյուսին չի շարունակում:

**ԴԵՄՈԿՈՍ.**— Իմ փառքը շարունակվում է, Հեկուբա՛:

**ՀԵԿՈՒԲԱ.**— Ծիշտ է: Ռևմատիզմդ նույնպես...

**Սպասուհիները նորից են հռհռում:**

**ՀԵԿՏՈՐ.**— Եվ դու այս բոլորը անխոս լսում ես, Պարիս: Եվ ներսումդ ցանկություն չի ծագո՞ւմ զոհաբերել քո սիրային արկածը՝ մեզ տարիների երկպառակությունից և կոտորածից փրկելու:

**ՊԱՐԻՍ.**— Ի՞նչ ես ուզում, որ ասես: Իմ պատահարը միջազգային է:

**ՀԵԿՏՈՐ.**— Դու իսկապես սիրո՞ւմ ես Հեղինեին:

**ԿԱՍԱՆԴՐԱ.**— Նրանք սիրո խորհրդանշան են: Նրանց նույնիսկ պետք չէ իրար սիրել:

**ՊԱՐԻՍ.**— Ես պաշտում եմ Հեղինեին:

**ԿԱՍԱՆԴՐԱ (պատենշի ծայրին).**— Ահա Հեղինեն:

**ՀԵԿՏՈՐ.**— Եթե ես նրան համոզեմ նավ նստել, դու կհամաձայնե՞ս:

**ՊԱՐԻՍ.**— Այո, ես համաձայն եմ:

**ՀԵԿՏՈՐ.**— Հա՛յր, եթե Հեղինեն համաձայնի մեկնել Հունաստան, դուք նրան ուժով կպահե՞ք:

ՊՐԻԱՄՈՍ.— Ինչո՞ւ ես անկարելիի մասին հարցնում:

ՀԵԿՈՒԲԱ.— Ինչո՞ւ է անկարելի: Եթե կանայք ձեր մտածածի քա-  
նորդն են, Հեղինեն կմեկնի:

ՊԱՐԻՍ.— Հա՛յր, այժմ ես եմ խնդրում ձեզ: Դուք դրանց տեսնում եք  
և լսում: Հենց որ խոսք է գնում Հեղինեի մասին, այս թագավո-  
րական տոհմը դառնում է բուրժուազիայի ընտրանիի զոքանչնե-  
րի, քենիների, աներների մի հավաքույթ: Եվ այսպիսի բազմա-  
շունչ ընտանիքում ես ավելի ստորացուցիչ բան չեմ տեսնում, քան  
գայթակողող որդու դերը: Ես հոգնել եմ նրանց ակնարկներից: Ես  
ընդունում եմ Հեկտորի առաջարկը:

ԴԵՄՈԿՈՍ.— Հեղինեն միայն քոնը չէ, Պարի՛ս: Նա քաղաքինն է:  
Նա ամբողջ երկրինն է:

ԵՐԿՐԱԶԱՓ.— Նա մեր բնանկարի մի մասն է:

ՀԵԿՈՒԲԱ.— Զայնդ կտրի՛ր, երկրաչա՛փ:

ԿԱՍԱՆԴՐԱ.— Ահա, Հեղինեն...

ՀԵԿՏՈՐ.— Հա՛յր, խնդրում եմ ձեզ, թողեք մնա այդ ապավենը: Լը-  
տո՞ւմ եք: Մեզ կանչում են զորահանդեսի: Թողեք մնա և ես հե-  
տո կմիանամ ձեզ:

ՊՐԻԱՄՈՍ.— Դու, իսկապես, համաձա՞յն ես, Պարի՛ս:

ՊԱՐԻՍ.— Երդվում եմ, այո:

ՊՐԻԱՄՈՍ.— Թող այդպես լինի: Եկեք, զավակնե՛րս, գնանք պատե-  
րազմի դարպասները պատրաստելու:

ԿԱՍԱՆԴՐԱ.— Խե՛ղճ դարպասներ: Փակելու վրա ավելի շատ է քա-  
յուղ գնում, քան բացելու:

**Պրիամոսը իր շքախմբով գնում է: Մնում է Դեմոկոսը:**

ՀԵԿՏՈՐ.— Ինչի՞ ես սպասում այստեղ:

ԴԵՄՈԿՈՍ.— Ոգեշնչմանը:

ՀԵԿՏՈՐ.— Ինչի՞ն:

ԴԵՄՈԿՈՍ.— Ամեն անգամ, երբ Հեղինեն հայտնվում է, ես լցվում եմ  
ներշնչումով: Ես գտնանում եմ, ես մոլեգնում եմ, հանպատրաս-  
տից հորիցնում: Օ՛, երկի՛նք, ահա՛ նա:

**Արտասանում է:**

Հեղինեն սպարտացի, չքնաղ Հեղինեն,  
Իր նրբին մարմնով թող մնա Պարիսին,  
Աստվածների կամքը տեղին է,  
Նա էլ չի տեսնի Մեգեղադուին:

ՀԵԿՏՈՐ.— Քո վերջնահանգերը կարծես մուրճի հարվածներ լինեն  
մեր գլխին:

ԴԵՄՈՎՈՍ.— Դա իմ գլուխն է: Ես հենց հիմա ավելի հիասքանչ բան հորհանեցի: Լսիր:

Անվարան դու կանգնիր Հեկտորի դիմաց,  
Սքամանդի սարսափն ու փառքը .  
Դու ճշմարիտ ես, ինչ ես սխալ է,  
Քաւճի Ըա ուժն է, ինչ դու քնքշանքք:

ՀԵԿՏՈՐ.— Կորի՛ր:

ԴԵՄՈՎՈՍ.— Ինչո՞ւ ես ինձ այդպես նայում: Տեսքդ այնպիսին է, կարծես պոեզիան էլ պատերազմի չափ ատում ես:

ՀԵԿՏՈՐ.— Հեռացի՛ր: Դրանք երկու քույրեր են:

**Բանաստեղծը գնում է:**

ԿԱՍԱՆԴՐԱ (ազդարարում է).— Հեղինե՛ն:

### ՏԵՍԱՐԱՆ ՅՈԹԵՐՈՐԴ

ՀԵՂԻՆԵՆ, ՊԱՐԻՍԸ, ՀԵԿՏՈՐԸ

ՊԱՐԻՍ.— Հեղինե՛, սիրելիս, ահա Հեկտորը: Ես ծրագրեր ունի քեզ հետ կապված, շատ պարզ ծրագրեր: Ուզում է քեզ հույներին վերադարձնել և ապացուցել քեզ, որ ինձ չես սիրում... Բայց որ կրկուսով մնաք, ասա, որ ինձ սիրում ես... Ասա ինձ քո մտածածը:

ՀԵՂԻՆԵ.— Ես քեզ պաշտում եմ, սիրելի՛ս:

ՊԱՐԻՍ.— Այլքը, որ քեզ բերեց Հունաստանից, ասա ինձ, որ գեղեցիկ էր:

ՀԵՂԻՆԵ.— Սքանչելի: Հոյակապ այլք էր: Բայց որտե՞ղ այլք տեսար, ծովը այնպես հանգիստ էր...

ՊԱՐԻՍ.— Ասա ինձ, որ ատում ես Մենելայոսին...

ՀԵՂԻՆԵ.— Մենելայոսի՞ն: Ես նրան ատում եմ:

ՊԱՐԻՍ.— Դու դեռ չես վերջացրել... Ես երբեք չեմ վերադառնա Հունաստան: Կրկնիր:

ՀԵՂԻՆԵ.— Դու երբեք չես վերադառնա Հունաստան:

ՊԱՐԻՍ.— Ոչ, խոսքը քո մասին է:

ՀԵՂԻՆԵ.— Իհարկե: Ի՞նչ հիմարն եմ... Երբե՛ք, ես Հունաստան չեմ վերադառնա:

ՊԱՐԻՍ.— Տեսնո՞ւմ ես, մարդն իր բերանով է ասում... Այժմ քո հերթն է:

**Գնում է:**



## ՏԵՍԱՐԱՆ ՈՒՓԵՐՈՐԴ

### ՀԵՂԻՆԵ, ՀԵԿՏՈՐ

ՀԵԿՏՈՐ.— Հունաստանը գեղեցի՞կ է:

ՀԵՂԻՆԵ.— Պարիսը գտավ, որ գեղեցիկ է:

ՀԵԿՏՈՐ.— Ես ձեզ հարցնում եմ, թե Հունաստանը ատանց Հեղինեի գեղեցի՞կ է:

ՀԵՂԻՆԵ.— Հեղինեի համար շնորհակալ եմ:

ՀԵԿՏՈՐ.— Քանի որ խոսք գնաց, իսկապես, ինչպիսի՞ն է Հունաստանը:

ՀԵՂԻՆԵ.— Այնտեղ բազմաթիվ թագավորներ և այծեր կան մարմարի վրա ցրված:

ՀԵԿՏՈՐ.— Եթե ենթադրենք, որ թագավորները ոսկեզօծ են, իսկ այծերն էլ անգորական ցեղի, ապա արևածագի պահին տեսարանը պիտի որ վատ չլինի:

ՀԵՂԻՆԵ.— Ես ուշ եմ վեր կենում:

ՀԵԿՏՈՐ.— Աստվածներն էլ լիքն են: Պարիսն ասում է, որ աստվածները երկնքում վիտում են, որ աստվածուհիների ոտքերը վերևից կախ են ընկած:

ՀԵՂԻՆԵ.— Պարիսը միշտ քիթը տնկած է քայլում: Հնարավոր է, որ տեսած լինի:

ՀԵԿՏՈՐ.— Դուք չե՞ք տեսել:

ՀԵՂԻՆԵ.— Ես ընդունակ չեմ: Ես երբեք չեմ կարողացել ծովի մեջ ձուկ տեսնել: Երբ որ վերադառնամ, լավ կնայեմ:

ՀԵԿՏՈՐ.— Դուք հենց նոր Պարիսին ասացիք, որ երբեք չեք վերադառնա:

ՀԵՂԻՆԵ.— Նա ինձ խնդրեց, որ այդպես ասեմ: Ես շատ եմ սիրում Պարիսին հնազանդվել:

ՀԵԿՏՈՐ.— Տեսնում եմ: Ինչպես նաև Մենելայոսին: Դուք նրան չեք ատո՞ւմ:

ՀԵՂԻՆԵ.— Ինչո՞ւ պիտի ատեմ նրան:

ՀԵԿՏՈՐ.— Այն միակ պատճառով, որն ստիպում է ստել. դուք նրան հաճախ էիք տեսնում:

ՀԵՂԻՆԵ.— Մենելայոսի՞ն: Օ՛հ, ոչ, այն, որ իսկապես տեսնել է կոչվում... Մենելայոսին ես երբեք չեմ տեսել: Ընդհակառակը:

ՀԵԿՏՈՐ.— Նա ձեր ամուսի՞նն էր:

ՀԵՂԻՆԵ.— Որոշ իրեր ինձ համար գունավորում ունեն: Հենց դրանք

Էլ տեսնում եմ: Դրանց էլ հավատում եմ: Ես երբեք չեմ կարողացել Մեներայուսին կարգին տեսնել:

ՀԵԿՏՈՐ.— Նա պետք է, որ մի քանի անգամ քեզ կիս մոտեցած լինի:

ՀԵՂԻՆԵ.— Այո, ես կարող էի նրան դիպչել: Բայց ես չեմ կարող ասել, թե նրան տեսել եմ:

ՀԵԿՏՈՐ.— Ասում եմ, որ նա ձեզանից ոչ մի քայլ չէր հեռանում:

ՀԵՂԻՆԵ.— Հավանաբար: Ես բազմաթիվ անգամ անցել եմ նրա կողքով՝ առանց զգալու:

ՀԵԿՏՈՐ.— Իսկ Պարիսին լավ տեսա՞ք:

ՀԵՂԻՆԵ.— Նա երկրի և երկնքի ֆոնին լավ ջոկվում էր, կարծես կտրած, դրված լիներ այնտեղ:

ՀԵԿՏՈՐ.— Եվ նա մինչև հիմա շարունակում է ջոկվե՞լ: Նայեք նրան այնտեղ՝ պարսպին հենված:

ՀԵՂԻՆԵ.— Դուք վստա՞հ եք, որ դա Պարիսն է:

ՀԵԿՏՈՐ.— Նա ձեզ սպասում է:

ՀԵՂԻՆԵ.— Տե՛ս է, նա առաջվա պես հստակ չի երևում:

ՀԵԿՏՈՐ.— Չնայած պատերը նոր են սպիտակեցրել: Նայեք, նա կիսադեմով է կանգնել:

ՀԵՂԻՆԵ.— Տարօրինակ է, քեզ սպասողը ավելի վատ է նշմարվում, քան նա, որին դու ես սպասում:

ՀԵԿՏՈՐ.— Դուք վստա՞հ եք, որ Պարիսը ձեզ սիրում է:

ՀԵՂԻՆԵ.— Ես շատ չեմ սիրում ուրիշների զգացմունքներն իմանալ:

Ոչ մի քան ձեռքերդ աչդպես չի կապում, դա նման է այն բանին. երբ հակառակորդիդ խաղը գուշակում ես: Այդպիսի դեպքերում անպայման կպարտվես:

ՀԵԿՏՈՐ.— Իսկ դուք նրան սիրո՞ւմ եք:

ՀԵՂԻՆԵ.— Ես առավել ևս չեմ սիրում սեփական զգացմունքներս իմանալ:

ՀԵԿՏՈՐ.— Լավ: Երբ դուք ելնում եք Պարիսի անկողնուց, որտեղ նա ձեր գրկումն էր, երբ դուք կաղապարված եք Պարիսով, համակված եք Պարիսով, ինչի՞ մասին եք մտածում այդ պահին:

ՀԵՂԻՆԵ.— Իմ դերն ավարտված է: Ես թողնում եմ, որ իմ փոխարեն աշխարհը մտածի: Ես ավելի լավ չեմ մտածի:

ՀԵԿՏՈՐ.— Բայց հաճույքը ձեզ որևէ մեկին է կապո՞ւմ, թե՞ ինքներդ ձեզ:

ՀԵՂԻՆԵ.— Ինձ հետաքրքրում է հատկապես ուրիշների հաճույքը...

Դա ինձ հետու է պահում...

ՀԵՎՏՈՐ.— Իսկ այդ ուրիշները Պարիսից առաջ շա՛տ են եղել:

ՀԵՂԻՆԵ.— Մի քանիսը:

ՀԵՎՏՈՐ.— Եվ նրանից հետո ուրիշներն էլ կլինեն, այնպես չէ՞, միայն թե նրանք լավ նշմարվեն հորիզոնի, պատի կամ սավանի ֆոնին: Հենց այդպես էլ կարծում էի: Դուք Պարիսին չեք սիրում, Հեղինե՛: Դուք տղամարդկանց եք սիրում:

ՀԵՂԻՆԵ.— Այո, ես նրանց չեմ ստում: Հոյակապ բան է քավել նրանց, կարծես հսկայական շնառներ լինեն: Միանգամից մաքրվում ես...

ՀԵՎՏՈՐ.— Կասանդրա՛, Կասանդրա՛:

### ՏԵՍԱՐԱՆ ԻՆՆԵՐՈՐԳ

ՀԵՂԻՆԵ, ԿԱՍԱՆ ԴՐԱ, ՀԵՎՏՈՐ

ԿԱՍԱՆԴՐԱ.— Ի՞նչ կա:

ՀԵՎՏՈՐ.— Ծիծաղս բերում ես: Դո՛ւք, գուշակողների շարունակ հարցեր եք տալիս:

ԿԱՍԱՆԴՐԱ.— Ինչո՞ւ ինձ կանչեցիր:

ՀԵՎՏՈՐ.— Կասանդրա՛, Հեղինեն այս երեկո հույների պատգամավորի հետ մեկնում է:

ՀԵՂԻՆԵ.— Ե՞ս: Ինչե՞ր եք ասում:

ՀԵՎՏՈՐ.— Հենց նոր ինձ չասացի՞ք, որ Պարիսին առանձնապես շատ չեք սիրում:

ՀԵՂԻՆԵ.— Դուք ձեր ցանկությամբ եք մեկնաբանում իմ ասածները: Այսինքն, եթե շատ եք ուզում...

ՀԵՎՏՈՐ.— Ես միայն հեղինակի խոսքերն եմ մեջբերում, որ դուք հատկապես սիրում եք քավել տղամարդկանց՝ ինչպես մեծ օճառների:

ՀԵՂԻՆԵ.— Այո, կամ եթե կուզեք, պեմզաքարի նման են: Դե, հետո՞:

ՀԵՎՏՈՐ.— Ուրեմն, դուք տատանվում եք բնորության մեջ. վերադարձ դեպի Հունաստան, որն այնքան էլ տհաճ չէ ձեզ համար, կամ այնպիսի մի սոսկալի աղետ, որպիսին պատերազմն է:

ՀԵՂԻՆԵ.— Դուք ինձ բնավ չեք հասկանում, Հեկտոր՛: Ես չեմ տատանվում: Ծատ հեշտ է ասել՝ ես անում եմ այս կամ անում եմ այն և ասածդ կլինի: Դուք պարզեցիք, որ ես թույլ եմ: Դուք դրանից շատ ուրախ եք: Կնոջ թուլությունը բացող տղամարդը նման

Է դաժան շոգի մեջ աղբյուր գտնող որսորդին: Նա խմում է այդ աղբյուրից: Բայց չկարծեք, թե հաղթահարելով ամենաթույլ կնոջը, դուք հաղթահարեցիք ասպագան: Երեխաներին դաստիարակողը չի կարող նրանց բախտը որոշել...

**ՀԵԿՏՈՐ.**— Այդ նրբախոսությունները և փուշ բառերը իմ գլուխը չեն մտնում:

**ՀԵՂԻՆԵ.**— Հարցը միայն նրբախոսությունները և փուշ բառերը չեն, այլ առնվազն հրեշները և բուրգերը:

**ՀԵԿՏՈՐ.**— Համաձայն եք մեկնել, թե՞ ոչ:

**ՀԵՂԻՆԵ.**— Ինձ մի շտապեցրեք այդպես կոպիտ... Ես իրադարձությունները տարբերում եմ մարդկանց և իրերի պես: Ես նշմարում եմ այն, ինչը ինձ համար սովեր չէ: Ես տարբերում եմ այն, ինչ տեսնում եմ:

**ՀԵԿՏՈՐ.**— Գիտեմ, արդեն ասել եք. դուք տարբերում եք այն, ինչ տեսնում եք վառ գույների մեջ: Իսկ դուք ձեզ չե՞ք տեսնում մի քանի օր հետո՝ Մենեյարոսի սլաշատը վերադառնալիս:

**ՀԵՂԻՆԵ.**— Ոչ, դժվարությամբ:

**ՀԵԿՏՈՐ.**— Հանուն ձեր վերադարձի կարող եմք ձեր ամուսնուն փայլուն զգեստներ հագցնել:

**ՀԵՂԻՆԵ.**— Եթե նրան աշխարհի ամբողջ ծիրանին հագցնեն, դարձյալ ինձ համար տեսանելի չի լինի:

**ՀԵԿՏՈՐ.**— Ահա քո մրցակցուհին, Կասանդրան: Նա էլ է ասպագան տեսնում:

**ՀԵՂԻՆԵ.**— Ես ասպագան չեմ կարող տեսնել: Բայց այս ասպագայում որոշ տեսարաններ տեսնում եմ վառվում գույներով, մյուսները աղոտ: Մինչև այժմ իրականացել են միայն գունավոր տեսարանները:

**ՀԵԿՏՈՐ.**— Մենք ձեզ հույներին կհանձնենք արևոտ կեսօրին, կուրացուցիչ ավազի վրա, դեղնավուն պատի և մանիշակուցույն ծովի միջև: Մենք բոլորս ոսկե զրահ կհագնենք և կարմիր զգեստներ: Ե իմ սպիտակ հովատակի ու Պրիամոսի սև զամբիկի միջով իմ բուրբերը կանաչ հագած, ձեզ մորից մերկ կհանձնեն հույների դեսպանին, որի արծաթե սաղավարտի մոշազուն փետուրը ես գուշակում եմ հիմա: Կարծում եմ, որ սա տեսնում ես:

**ՀԵՂԻՆԵ.**— Ոչ, բոլորովին: Այդ բոլորը խավար է:

**ՀԵԿՏՈՐ.**— Դուք ծեծադում եք վրաս, սեղսես չե՞:

**ՀԵՂԻՆԵ.**— Ձեր վրա ծիծաղե՞մ: Ի՞նչո՞ւ. Է՞ն, եթե շատ եք ուզում,

կմեկնեմ: Գնամ պատրաստվեմ, որպեսզի ինձ հանձնեն հույնե-  
րին:

ՀԵԿՏՈՐ.— Դուք չեք գիտակցո՞ւմ, որ վիրավորում եք ամբողջ մարդ-  
կությունը, թե դուք իսկապես միամիտ եք:

ՀԵՂԻՆԵ.— Ես ո՞ւմ եմ վիրավորում:

ՀԵԿՏՈՐ.— Միթե՞ դուք չգիտեք, որ ձեր խաչտարդետ պատկերների  
ալբոմը ծաղրուծանակ է աշխարհի հասցեին: Այն պահին, երբ  
մենք բոլորս այստեղ կոիվ ենք տալիս, նահատակվում, որպեսզի  
աշխարհից մի ժամ պոկենք մեզ համար, դուք այստեղ նստած,  
անհիշատակ ժամանակներից եկող ձեր դրվագներն եք թերթում...  
Ի՞նչ եք ուզում: Այդ դրվագներից որի՞ վրա եք հառում ձեր կույր  
աչքերը: Դուք հիմա, անկասկած նշմարում եք այն սլատկերը,  
որտեղ դուք կանգնել եք պարսպի վրա և ճակատամարտն եք դի-  
տում: Դուք տեսնո՞ւմ եք ճախատամարտը:

ՀԵՂԻՆԵ.— Այո:

ՀԵԿՏՈՐ.— Իսկ քաղաքը քառույթանդ է լինում կամ վստովում, ասկա  
չէ՞:

ԵՂԻՆԵ.— Այո, այդ պատկերը վառ կարմրավուն է:

ՀԵԿՏՈՐ.— Իսկ Պարի՞սը, դուք նրա դիակը տեսնո՞ւմ եք ռազմակառ-  
վի ետևից կապած:

ԵՂԻՆԵ.— Ահ, դուք կարծում եք դա Պարի՞սն է: Ես իրոք, արշալույ-  
սի պես շողշողուն մի բան եմ տեսնում փոշու մեջ: Դա մի ադա-  
ման է, որ փայլում է նրա մատին... Այո՛, այո՛... Ես, սովորա-  
բար, դեմքերը վառ եմ տեսնում, իսկ զարդերը լավ: Այո, դա  
նրա մատանին է:

ՀԵԿՏՈՐ — Հիանալի է... Ես չեմ համարձակվում Անդրոմաքեի և իմ  
տառին հարցնել... նրանց մասին, ովքեր Անդրոմաքե—Հեկտոր  
էր լավ մեջ են... Դուք նրանց տեսնում եք: Չորանաք: Ինչպիսի՞ն  
որ տեսնում նրանց: Երջանի՞կ, ծերացա՞ծ, լուսափա՞յլ:

ԵՂԻՆԵ.— Ես նրանց չեմ փորձում տեսնել:

ՀԵԿՏՈՐ.— Իսկ Անդրոմաքեի խումբը Հեկտորի դիակի վրա լացելիս  
մեք տեսնում: Այդ խումբը չի՞ փայլում:

ԵՂԻՆԵ.— Գիտեք, ես կարող եմ շատ լավ տեսնել փայլող, արտու-  
նալագործին փայլող բաները: Բայց ձեր սասածները տեղի չեն ու-  
նենում: Ոչ որ անսխալական չէ:

ՀԵԿՏՈՐ — Մի՞ համարեք. Ես հասկանում եմ... Գետնատատած հոր  
և լացող մոր միջև որո՞ի չկա՞:

ՀԵՂԻՆԵ.— Այո... Նա խաղում է իր հոր խառնիխուռն մագերի հետ...  
 Նա շատ դուրեկան է:  
 ՀԵԿՏՈՐ.— Եվ այդ տեսարանները ձեր աչքերի խորքերո՞ւմ են: Կարելի է այնտեղ տեսնել:  
 ՀԵՂԻՆԵ.— Չգիտեմ: Նայեք:  
 ՀԵԿՏՈՐ.— Ոչ մի բան, ոչ մի բան չկա այս հրդեհների մոխիրներից բացի, փոշի դարձած ադամանդ և ոսկի: Ի՞նչ մաքուր է աշխարհի աչքը, համեմայն դեպս, արցունքներից չի այդպես լվացվել... Հեղինե՛. եթե քեզ սպանելու լինեն, դու կլացե՞ս:  
 ՀԵՂԻՆԵ.— Չգիտեմ: Բայց կգոռամ: Եվ ես զգում եմ, որ եթե այդպես շարունակեք խոսել, ես կգոռամ, Հեկտո՛ր... Ես կգոռամ:  
 ՀԵԿՏՈՐ.— Հեղինե՛, դու այս երեկո կվերադառնաս Հունաստան կամ ես քեզ կսպանեմ:  
 ՀԵՂԻՆԵ.— Բայց ես շատ եմ ուզում գնալ: Ես պատրաստ եմ գնալ: Միայն թե կրկնում եմ ձեզ, չեմ կարողանում տեսնել այն նավը, որն ինձ պիտի տանի: Ոչ առաջակայմն եմ կարողանում ջոկել, ոչ նավապետի քթի օղակը, ոչ էլ նավի սպասավորի աչքերի սպիտակուցը:  
 ՀԵԿՏՈՐ.— Դու կվերադառնաս գորշ ծովով, գորշ արևի տակով, բայց մեզ խաղաղություն է պետք:  
 ՀԵՂԻՆԵ.— Ես խաղաղություն չեմ տեսնում:  
 ՀԵԿՏՈՐ.— Հարցրու Կասանդրային, նա քեզ ցույց կտա: Նա կախարհ է: Նա ոգիներ և կերպեր է արթնացնում:  
 ՊԱՏԳԱՄԱԲԵՐ.— Հեկտո՛ր, Պրիամոսը քեզ կանչում է: Քրմերը դեմ են պատերազմի դարպասները փակելուն: Նրանք ասում են, որ աստվածները դրա մեջ վիրավորանք կտեսնեն:  
 ՀԵԿՏՈՐ.— Չարմանալի է, որ բոլոր դժվար պահերին աստվածները հրաժարվում են իրենք խոսել իրենց անունից:  
 ՊԱՏԳԱՄԱԲԵՐ.— Նրանք խոսեցին իրենց անունից: Կայծակը խփեց տաճարին և զոհերի փորոտիքը դեմ էր Հեղինեի ետ ուղարկելուն:  
 ՀԵԿՏՈՐ.— Ես շատ թանկ կվճարեի, որպեսզի քրմերի փորոտիքը տեսնեի... Գալիս եմ:  
 Պատգամաբերը գնում է:  
 ՀԵԿՏՈՐ.— Ուրեմն, դուք համաձայն եք, Հեղինե՛:  
 ՀԵՂԻՆԵ.— Այո:  
 ՀԵԿՏՈՐ.— Այսուհետև դուք կատե՛ք այն, ինչ ես ձեզ կասեմ: Դուք կանե՛ք այն, ինչ ես կասեմ, որ անեք:  
 ՀԵՂԻՆԵ.— Այո:

ՀԵՎՏՈՐ.— Ուլիսի<sup>14</sup> առջև դուք ինձ չեք հակաճառի՞, համաձայն կլի-  
նե՞ք իմ ասածներին:

ՀԵՂԻՆԵ.— Այո:

ՀԵՎՏՈՐ.— Լսիր նրան, Կասանդրա՛: Լսիր այս ժխտումի կոճղին, որ  
ասում է այո: Բոլորը ինձ զիջեցին: Պարիսն ինձ զիջեց, Պրիա-  
մոսն ինձ զիջեց, Հեղինեն ինձ զիջեց: Ես զգում եմ, որ չնայած  
այս աներես հաղթանակներին ես պարտված եմ: Թվում է, թե  
կովում ես հսկաների դեմ, հաղթում ես նրանց, և պարզվում է,  
որ կովում ես ինչ-որ անդրդվելի բանի դեմ, ինչպես ասե՞նք կնոջ  
ակնաթաղանթի արտացոլումը: Հեղինե, դու ինձ ասացիր այո,  
բայց դու լի ես մի համառությամբ, որն ինձ բանի տեղ չի դնում:

ՀԵՂԻՆԵ.— Հնարավոր է: Բայց ոչինչ չեմ կարող անել: Դա ինձանից  
կախված չէ:

ՀԵՎՏՈՐ.— Ո՞ր մի խենթությամբ է աշխարհի հայելին դրվել այս բույժ  
գլխի մեջ:

ՀԵՂԻՆԵ.— Դա, հավանաբար, ցավալի է: Բայց հայելիների համա-  
ռությունը կոտրելու որևէ միջոց տեսնո՞ւմ եք:

ՀԵՎՏՈՐ.— Այո: Հենց այդ մասին եմ մտածում:

ՀԵՂԻՆԵ.— Եթե կոտրեք, արտացոլվող իրականությունը կարո՞ղ է  
չքանալ:

ՀԵՎՏՈՐ.— Հարցը հենց այդ է:

ԻՆՈՒՍ ՊԱՏԳԱՄԱԲԵՐ.— Հեկտոր՛ր, շտապի՛ր: Ժողովուրդը ծովափին  
խտովված է: Հունական նավերն արդեն երևում են: Նրանք բարձ-  
րացրել են իրենց դրոշները: Մեր նավատորմի պատիվը հարցա-  
կանի տակ է: Պրիամոսը վախենում է, որ հունական պատգա-  
մավորը ափ իջնելիս հանկարծ սպանվի:

ՀԵՎՏՈՐ.— Կասանդրա՛, Հեղինեին վստահում եմ քեզ: Սպասիր իմ  
կարգադրություններին:

## ՏԵՍԱԳԱՆ ՏԱՄՆԵՐՈՐԳ

ՀԵՂԻՆԵ, ԿԱՍԱՆԴՐԱ

ԿԱՍԱՆԴՐԱ.— Ես ոչինչ չեմ տեսնում, ո՛չ գունավոր, ո՛չ գունատ:  
Բայց յուրաքանչյուր մոտեցող արարածի ծանրությունը զգում եմ  
իմ վրա: Իմ երակների տազնապով զգում եմ նրա ճակատագիրը:  
ՀԵՂԻՆԵ. Իմ գունավոր դրվագներում որոշ բաներ ես ավելի պայ-

ծառ եմ տեսնում, քան մյուսները: Ես այդ մասին չասացի Հեկտորին: Բայց նրա որդու վիզը լուսավորված է, հատկապես այն տեղը, ուր զարկերակն է...

**ԿԱՍԱՆԴՐԱ.**— Ես նման եմ կույրին, որը գնում է շոշափելով: Բայց սուկա ճշմարտության մեջ եմ ես կույր: Մարդիկ ամեն ինչ տեսնում են, բայց տեսնում են սուտը: Ես շոշափում եմ ճշմարտությունը:

**ՀԵՂԻՆԵ.**— Մեր առավելությունը այն է, որ մեր տեսիլքները խառնվում են մեր հուշերին, ապագան՝ անցյալին: Դառնում ենք պակաս զգայուն... Ծի՞շտ է, որ դուք կախարդ եք, որ կարող եք խաղաղությունը կանչել:

**ԿԱՍԱՆԴՐԱ.**— Խաղաղությունը: Ծառ հեշտ է: Նա սղքասի պես դռան ետևը սպասում է մեր ձայնին... Ահա նա:

**Հայտնվում է Խաղաղությունը:**

**ՀԵՂԻՆԵ.**— Ի՞նչ գեղեցիկ է նա:

**ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ.**— Օգնի՛ր ինձ, Հեղինե՛, օգնի՛ր ինձ:

**ՀԵՂԻՆԵ.**— Բայց ի՞նչ գունատ է նա:

**ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ.**— Ես գունատ եմ: Ինչպե՞ս թե գունատ: Դու չես տեսնո՞ւմ իմ մազերի ոսկին:

**ՀԵՂԻՆԵ.**— Իսկ ի՞նչ է, ոսկին: Մոխրագո՞ւյն է: Դա ի՞նչ նորություն է...

**ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ.**— Մոխրագույն ոսկի՞: Իմ ոսկին մոխրագո՞ւյն է:  
**Խաղաղությունն անհետանում է:**

**ՀԵՂԻՆԵ.**— Նա անհետացա՞վ:

**ԿԱՍԱՆԴՐԱ.**— Իմ կարծիքով նա գնաց, որ իրեն կարգի բերի:

**Խաղաղությունը, սուկայիորեն սնգորված, նորից հայտնվում է:**

**ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ.**— Հիմա ինչպե՞ս է:

**ՀԵՂԻՆԵ.**— Ես նրան գնալով ավելի վատ եմ տեսնում:

**ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ.**— Իսկ հիմա ինչպե՞ս է:

**ԿԱՍԱՆԴՐԱ.**— Հեղինեն ասում է, որ քեզ այնու չի տեսնում:

**ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ.**— Բայց դու ինձ տեսնում ես, քանի որ խոսում ես հետս:

**ԿԱՍԱՆԴՐԱ.**— Դա իմ մասնագիտությունն է, խոսել անտեսանելի մասին:

**ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ.**— Ի՞նչ է կատարվում: Ի՞նչո՞ւ են մարդիկ քաղաքում և ծովափին աղաղակներ արձակում:

**ԿԱՍԱՆԴՐԱ.**— Ըստ երևույթին, նրանց աստվածները և նրանց պատիվը խաղի մեջ են մտնում:



ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ.— Նրանց աստվածները, նրանց սխառիվը:  
ԿԱՍԱՆԴՐԱ.— Այո... Դու հիվանդ ես:

### Վարագույր

## ԵՐԿՐՈՐԴ ԳՐԹՈՂՈՒԹՅՈՒՆ

Պալատի այգին: Յուրաքանչյուր անկյունից ճանապարհ է իջնում  
դեպի ծովը: Կենտրոնում հուշարձանն է՝ պատերազմի դարպասները:  
Նրանք կրկին բաց են:

### ՏԵՍԱՐԱՆ ԱՌԱՋԻՆ

ՀԵՂԻՆԵ, փոքրիկ ՏՐՈՒՈՒՍԸ

ՀԵՂԻՆԵ.— Հե՛ն, լսի՛ր, այո՛, քե՛զ եմ կանչում... Մոռնցի՛ր:

ՏՐՈՒՈՒՍ.— Ոչ:

ՀԵՂԻՆԵ.— Անունդ ի՞նչ է:

ՏՐՈՒՈՒՍ.— Տրոհլուս:

ՀԵՂԻՆԵ.— Արի՛ աչտեղ:

ՏՐՈՒՈՒՍ.— Ոչ:

ՀԵՂԻՆԵ.— Տրոհլո՛ւս, արի՛ աչտեղ... (Տրոհլուսը մոտենում է): Ահ,  
վերջապե՛ս: Երբ որ անունդ տալիս են, լսիր: Դու դեռ լակոտ ես:  
Դե՛ս, իմիջիպլոց, լավ է: Դու գիտե՛ս, որ քո պատճառով առաջին  
անգամն է, որ տղամարդու հետ խոսելիս գոռում եմ: Տղամարդիկ  
ամբողջ ժամանակ այնպես են կայչում ինձնից, որ մնում է միայն  
շրթունքներս շարժեն: Ես գոռալով կանչել եմ ճայերին, տատրակ-  
ներին, արձագանքը, բայց երբեք տղամարդուն: Դու ինձ չե՛ս  
վճարի դրա համար... Քեզ ի՞նչ պատահեց: Դու դողում ես:

ՏՐՈՒՈՒՍ.— Ես չեմ դողում:

ՀԵՂԻՆԵ.— Դու դողում ես, Տրոհլո՛ւս:

ՏՐՈՒՈՒՍ.— Այո, ես դողում եմ:

ՀԵՂԻՆԵ.— Ինչո՞ւ ես շարունակ հետևում ինձ: Երբ քայլում եմ մեջքս  
արևին արած, հենց կանգ եմ առնում, քո գլխի ստվերը խառնվում

Է իմ ոտքերին: Ծառ ճիշտ է անում այդ առվերը, որ իմ ոտքերից  
այն կողմ չի անցնում: Ասա ինձ, ի՞նչ ես ուզում:

ՏՐՈՒԼՈՒՄ.— Ես ոչինչ չեմ ուզում:

ՀԵՂԻՆԵ.— Ասա ինձ, թե ինչ ես ուզում, Տրոիլո՛ւս:

ՏՐՈՒԼՈՒՄ.— Ամբողջը, ես ուզում եմ ամբողջը:

ՀԵՂԻՆԵ.— Դու ուզում ես ամբողջը: Լուսի՛նը:

ՏՐՈՒԼՈՒՄ.— Ամբողջը: Ավելին, բա՛ր ամբողջը:

ՀԵՂԻՆԵ.— Դու արդեն խոսում ես իսկական տղամարդու պես: Դու  
ուզո՞ւմ ես ինձ համբուրել:

ՏՐՈՒԼՈՒՄ.— Ո՛չ:

ՀԵՂԻՆԵ.— Դու ուզում ես ինձ համբուրել, սպասե՛ս չէ՞, իմ փոքրի՛կ  
Տրոիլո՛ս:

ՏՐՈՒԼՈՒՄ.— Ձեզ համբուրելուց հետո ես տեղնուտեղը ինձ կսպանեմ:

ՀԵՂԻՆԵ.— Մոտեցիր... Քա՛նի՞ տարեկան ես:

ՏՐՈՒԼՈՒՄ.— Տասնհինգ... Ավա՛ղ:

ՀԵՂԻՆԵ.— Կեցցե՛ս, որ ասացիր «ավաղ»... Դու արդեն համբուրե՛լ  
ես աղջիկների:

ՏՐՈՒԼՈՒՄ.— Ես նրանց ասում եմ:

ՀԵՂԻՆԵ.— Դու նրանց արդեն համբուրե՛լ ես:

ՏՐՈՒԼՈՒՄ.— Բոլորը նրանց համբուրում եմ: Ես իմ կյանքը՝ կնկիրեմ  
այն բանին, որ նրանցից ոչ մեկին չհամբուրեմ:

ՀԵՂԻՆԵ.— Ինձ թվում էր, թե աղջիկների մի սովոր խումբ կունե-  
նաս: Ինչո՞ւ ինձ անկեղծորեն չես ասում. Հեղինե, ես ուզում եմ  
ձեզ համբուրել... Ես ոչ մի վատ բան չեմ տեսնում դրանում: Համ-  
բուրիր ինձ:

ՏՐՈՒԼՈՒՄ.— Երբեք:

ՀԵՂԻՆԵ.— Օրվա վերջում, երբ նստեմ պարսպին, որպեսզի արևի  
պառկելը տեսնեմ կղզիների վրա, դու կամաց կմոտենաս ինձ,  
գլուխս կբռնես ձեռքերովդ և կմոտեցնես քեզ... իմ ոսկեգույն գը-  
լուխը խավարի մեջ կլիճի, դու, հավանաբար, լավ չես տեսնի ինձ,  
բայց դու ինձ կհամբուրես և ես շատ գոհ կլիճեմ... Ես կասեմ,  
լսիր, փոքրի՛կ Տրոիլո՛ս, համբուրիր ինձ... Համբուրիր ինձ...

ՏՐՈՒԼՈՒՄ.— Երբեք:

ՀԵՂԻՆԵ.— Տեսնում եմ: Եթե ինձ համբուրեիր, դու ի՞նչ կասեի՞ր:

ՏՐՈՒԼՈՒՄ.— Ան: Երջանիկ եմ այն մարդիկ, ովքեր իրենց մտքին  
եկամը կարող են ասել:

ՀԵՂԻՆԵ.— Դու էլ շատ լավ ես ասում:

## ՏԵՍԱՐԱՆ ԵՐԿՐՈՐԳ

ՀԵՂԻՆԵ, ՊԱՐԻՍ, պատուով ՏՐՈՒՆԻՍԷ

ՊԱՐԻՍ.— Զգուշ, Հեղինե: Տրոհուար վտանգավոր անձնավորություն  
է:

ՀԵՂԻՆԵ.— Ընդհակառակը: Նա ուզում է ինձ համբուրել:

ՊԱՐԻՍ.— Տրոհլո'ւս, իմացիր, եթե դու համբուրես Հեղինեին, ես քեզ  
կսպանեմ:

ՀԵՂԻՆԵ.— Նրա համար միևնույն է, նա պատրաստ է մեռնել նույն-  
նիսկ մի քանի անգամ:

ՊԱՐԻՍ.— Ի՞նչ է կատարվում նրա հետ... Նա թափ է ստնում... Պատ-  
րաստվում է ցատկել քո վրա՞... Նա շատ դուրեկան է: Համբու-  
րիր Հեղինեին, Տրոհլո'ւս: Ես քեզ թույլ եմ տալիս:

ՀԵՂԻՆԵ.— Եթե նրան դրդես այդ բանը անելու, ուրեմն դու ինձանից  
ավելի խորամանկ ես:

**Տրոհլուար, որ պատրաստվում էր Հեղինեի վրա նետվել, անմի-  
ջապես մի կողմ է քաշվում:**

ՊԱՐԻՍ.— Լսիր, Տրոհլո'ւս: Ահա մեր պատկառելիները լիվ կազմով  
գալիս են, որ պատերազմի դարպասները փակեն... Համբուրիր  
Հեղինեին նրանց առջև, դու նշանավոր դառնաս: Դու ուզո՞ւմ  
ես քո հետագա կյանքում հոշակավոր դառնալ:

ՏՐՈՒՆԻՍԷ.— Ո՛չ, ուզում եմ լինել անհայտ:

ՊԱՐԻՍ.— Դու չե՞ս ուզում նշանավոր դառնալ: Դու չե՞ս ուզում լինել  
հարուստ, հզոր:

ՏՐՈՒՆԻՍԷ.— Ո՛չ: Ուզում եմ լինել աղքատ, տխուր:

ՊԱՐԻՍ.— Թող վերջացնեն... Որպեսզի բոլոր կանայք քոնը լինեն:

ՏՐՈՒՆԻՍԷ.— Ես նրանցից ո՛չ մեկին, ո՛չ մեկին չեմ ուզում:

ՊԱՐԻՍ.— Ահա մեր ծերակուտականները: Ընտրիր. կամ դու կհամ-  
բուրես Հեղինեին նրանց առջև կամ ես կհամբուրեմ նրան քո առ-  
ջև: Դու գերադասում ես, որ համբուրողը լինեմ ե՞ս: Ծատ լավ:  
Նայի՛ր... Օ՛հ, այս ի՞նչ անձանոթ համբուր էր, որ պարզեցիր  
ինձ, Հեղինե՛:

ՀԵՂԻՆԵ.— Այն համբուրողը, որը պիտի Տրոհլուսին տրվեր:

ՊԱՐԻՍ.— Դու չգիտես, թե ինչ կորցրիր, զավա՛կս: Օ՛, դու գնո՞ւմ ես:  
Բարի գիշեր:

ՀԵՂԻՆԵ.— Մենք դեռ կհամբուրվենք, Տրոհլո'ւս: Ես քեզ խուստանում  
եմ. **(Տրոհլուար գնում է):** Տրոհլո'ւս:

ՊԱՐԻՍ **(մի քիչ նյարդայնացած)**.— Դու ուժեղ գոռա, Հեղինե՛:

## ՏԵՍԱՐԱՆ ԵՐՐՈՐԳ

ՀԵՂԻՆԵ, ԴԵՄՐԿՈՍ, ՊԱՐԻՍ

ԴԵՄՈԿՈՍ.— Հեղինե՛, մի րոպե: Ուղիղ նայիր ինձ: Ես ձեռքումս մի հրաշք թռչուն ունեմ, որը հիմա պիտի ազատ արձակեմ... Ահա՛, տեսնո՞ւմ ես... Սա՛ է... Ուղիղ մազերդ և լավ ժպտա:

ՊԱՐԻՍ.— Ես չեմ հասկանում, ինչո՞ւ Հեղինեի ուռեցրած մազերից և չքնաղ ժպիտից թռչունը պիտի ավելի լավ թռչի:

ՀԵՂԻՆԵ.— Բոլոր դեպքերում դա ինձ չի վնասի:

ԴԵՄՈԿՈՍ.— Այլևս մի՛ շարժվիր... Մե՛կ, երկո՛ւ, երե՛ք... պատրաստ է, կարող ես գնալ:

ՀԵՂԻՆԵ.— Իսկ թռչո՞ւնը:

ԴԵՄՈԿՈՍ.— Դա մի թռչուն է, որը կարողանում է անտեսանելի դառնալ:

ՀԵՂԻՆԵ.— Հաջորդ անգամ հարցրու, թե ինչպես է հաջողացնում:  
**Հեղինեն գնում է:**

ՊԱՐԻՍ.— Սա ի՞նչ գավեշտ է:

ԴԵՄՈԿՈՍ.— Ես մի երգ եմ գրում Հեղինեի դեմքի մասին: Ինձ պետք է նրան լավ գնեի, նրա ժպիտը, նրա գանգուրները հիշողությանս մեջ դրոշմել: Արդեն պատրաստ է:

## ՏԵՍԱՐԱՆ ԶՈՐՐՈՐԳ

ԴԵՄՈԿՈՍ, ՊԱՐԻՍ, ՀԵԿՈՒԲԱ, փոքրիկ ՊՈՒԻՔՍԵՆԵ,  
ԱԲՆԵՆՍ, ԵՐԿՐԱԶԱՓ, մի քանի ձկներ

ՀԵԿՈՒԲԱ.— Վերջիվերջո, փակելո՞ւ եք այս դարպասները, թե՞ ոչ:

ԴԵՄՈԿՈՍ.— Իհարկե, ոչ: Չէ որ հենց այս երեկո ստիպված կլինենք նորից բացել:

ՀԵԿՈՒԲԱ.— Հեկտորն այդպես է ցանկանում: Նա կհամոզի Պրիամոսին:

ԴԵՄՈԿՈՍ.— Դա դեռ կտեսնենք: Իմիջիպացոց, Հեկտորի համար ես մի անակնկալ եմ պատրաստել:

ՓՈՔՐԻԿ ՊՈՒԻՔՍԵՆԵ.— Ո՞ր է տանում այս դարպասը, մայրի՛կ:

ԱԲՆԵՆՍ.— Դեպի պատերազմ, զավա՛կս: Երբ դարպասը բաց է, նշանակում է պատերազմ է գնում:

ԴԵՄՈԿՈՍ.— Բարեկամներ...  
—42—

ՀԵԿՈՒԲԱ.— Պատերազմը կա, թե՛ ոչ, ձեր խորհրդանիշը շատ տրիս-  
մար է: Հավերժորեն բաց այս քարուքանդ դռներից ոչ ոք չի հե-  
տևում: Բոլոր շները այստեղ են հավաքվում:

ԵՐԿՐԱԶԱՓ.— Խոսքը պատերազմի մաքրության մասին չէ, այլ պա-  
տերազմի և աստվածների:

ՀԵԿՈՒԲԱ.— Ես էլ հենց այդ եմ ասում, աստվածները իրենց դռները  
փակել չգիտեն:

ՓՈՔՐԻԿ ՊՈԼԻՔՍԵՆԵ.— Իսկ ես միշտ լավ եմ փակում, ճի՞շտ է,  
մայրի՛կ:

ՊԱՐԻՍ (փոքրիկ Պոլիքսենի ձեռքը համբուրելով).— Սիրելի՛ս, դու  
կարող ես դռները փակելիս մատների արանքում թողնել:

ԴԵՄՈՎՈՍ.— Կարո՞ղ եմ, վերջապես, մի քիչ լռություն պահանջել,  
Պարի՛ս... Աքնեո՛ս, և դու Երկրաշա՛փ, և դուք ի՛մ բարեկամներ,  
ես ձեզ ժամ առաջ հավաքել եմ այստեղ, որպեսզի մեր առաջին  
խորհուրդը անենք: Եվ լավ նշան է, որ պատերազմի այս առա-  
ջին խորհուրդը գեներալներից չի կազմված, այլ մտալիորական-  
ներից: Քանզի մեր զինվորներին պատերազմի ժամանակ բավա-  
կան չէ միայն զենքերը մաքրել: Անհրաժեշտ է նաև գազաթնա-  
կետին հասցնել նրանց ոգևորությունը: Ջորալարները գրոհից  
առաջ, զինվորներին գիճի են խմեցնում, բայց մարմնական ոգե-  
վորությամբ հույներին չես հաղթի, եթե եռանդը կրկնապատկված  
չլիճի բարոյական գինովությամբ, որը մենք՝ բանաստեղծներս  
պիտի տանք: Քանի որ տարիքը մեզ հեռացնում է ռազմի դաշ-  
տից, ապա ծառայենք այնքանով, որ պատերազմը դարձնենք  
կատաղի: Աքնեո՛ս, ես տեսնում եմ, որ այս հարցի շուրջ դու ասե-  
լիք ունես, ես քեզ խոսք եմ տալիս:

ԱԲՆԵՈՍ.— Այո, մեզ պատերազմի երգ է պետք:

ԴԵՄՈՎՈՍ.— Ծատ ճիշտ է: Պատերազմը պատերազմի երգ է պահան-  
ջում:

ՊԱՐԻՍ.— Մինչև այսօր ապրել ենք առանց նրա:

ՀԵԿՈՒԲԱ.— Ինքը՛ պատերազմը բավական ուժգին է երգում...

ԱԲՆԵՈՍ.— Մենք երգի կարիքը չենք ունեցել, որովհետև մինչև այսօր  
կովում էինք բարբարոսների դեմ: Դա որս էր: Միայն գալարա-  
փողը բավական էր մեզ: Հույների դեմ կովելիս, մենք կմտնենք  
պատերազմի մեկ ուրիշ, ավելի բարձր մակարդակի ասպարեզ:

ԴԵՄՈՎՈՍ.— Ծատ ճիշտ ես, Աքնեո՛ս: Նրանք ամենքի դեմ չեն կրո-  
վում:

ՊԱՐԻՍ.— Բայց մենք ազգային երգ ունենք:

ԱԲՆԵՈՍ.— Այո, բայց դա խաղաղության երգ է:

ՊԱՐԻՍ.— Բավական է, որ խաղաղության երգը երգեն ծամածոություններով և ձեռքերը շարժելով, և այն կդառնա պատերազմի երգ... Որո՞նք են մեր երգի խոսքերը:

ԱԲՆԵՈՍ.— Դու շատ լավ գիտես: Ծատ անմեղ խոսքեր են. «Մենք հունձ ենք անում և խաղողի արյունը քամում»:

ԴԵՄՈԿՈՍ.— Դա ավելի շուտ, մոլախոտերի դեմ կովելու երգ է: Դուք սպարտացիներին ձավարով չեք վախեցնի:

ՊԱՐԻՍ.— Փորձիր այդ երգը նիզակը ձեռքիդ, մի դիակ էլ ոտքերիդ տակ գցած երգել և դու կտեսնես, թե ինչպես կհնչի:

ՀԵԿՈՒԲԱ.— Արյուն բառը կա: Դա միշտ նույն հնչեղությունն ունի:

ՊԱՐԻՍ.— Հունձ բառն էլ: Պատերազմը շատ է սիրում այդ բառը:

ԱԲՆԵՈՍ.— Ինչ կարիք կա վիճելու, երբ Դեմոկոսը կարող է երկու ժամում մեզ նոր երգ պարզել:

ԴԵՄՈԿՈՍ.— Երկու ժամը քիչ է:

ՀԵԿՈՒԲԱ.— Մի՛ վախեցիր: Ավելին քեզ պետք չէ: Իսկ հետո երգը կդառնա հիմն, իսկ հիմնը կանտատա: Պատերազմը հայտարարելուց հետո բանաստեղծներին դժվար է գալել: Հանգը լավագույն թմբկահարն է:

ԴԵՄՈԿՈՍ.— Եվ ամենաօգտակարը, Հեկուբա՛, ավելի լավ չէիր կարող ասել: Պատերազմը, ես գիտեմ, թե ինչ բան է: Քանի պատերազմ չկա, քանի դարպասը փակ է, յուրաքանչյուր ոք ազատ է այն հայհույել և անարգել: Պատերազմը արհամարհում է խաղաղ ժամանակների անարգանքները: Բայց, երբ նա ներկա է, նրա հսպարտությունը շատ զգայուն է վիրավորանքների հանդեպ, և նրա հովանավորությունը կարելի է շահել միայն հաճոյախոսելով և շոյելով: Հենց այդտեղից էլ սկսվում է նրանց առաքելությունը, ովքեր գիտեն խոսել և գրել, դրվաստել պատերազմը, հաճոյախոսել ամեն օր, շողոքորթել նրան անդադար, այլապես կխեղագարվես: Նայեք սպաներին. թշնամու դեմ լինել խիզախ, պատերազմի հանդեպ վախկոտ, ահա իսկական զորավարների նշանաբանը:

ՊԱՐԻՍ.— Իսկ դու որևէ առաջարկ ունե՞ս նոր երգի համար:

ԴԵՄՈԿՈՍ.— Մի փայլուն առաջարկ, որը ոչ ոք քեզանից լավ չի հասկանա... Պատերազմը արդեն հոգնել է Գորգոնի<sup>16</sup> շրթունքներից և Մեդուզայի<sup>17</sup> մազերից: Ես որոշել եմ պատերազմի դեմքը Հեղինեի դեմքի հետ համեմատել: Կարծում եմ նա ուրախ

- Կլիճի այդ համեմատությունից:
- ՓՈՔՐԻԿ ԳՈՂԻՔՍԵՆԵ.— Մայրի՛կ, ասում է պատերազմը ո՛ւմ է նըման:
- ՀԵԿՈՒԲԱ.— Մորաքույր Հեղինե՛հ:
- ՓՈՔՐԻԿ ԳՈՂԻՔՍԵՆԵ.— Ուրեմն այդքան գեղեցի՞կ է պատերազմը:
- ՊԵՄՈԿՈՍ.— Ուրեմն վիճաբանությունները ավարտված են: Համաձայնության եկանք պատերազմի նոր երգի մասին: Ինչո՞ւ ես անհանգիստ, Երկրաչա՛փ:
- ԵՐԿՐԱԶԱՓ.— Որովհետև պատերազմի երգից ավելի կարևոր բան կա, շատ ավելի կարևոր:
- ՊԵՄՈԿՈՍ.— Դու նկատի ունես շքանշաններ՞ըր և կեղծ լուրե՞րը:
- ԵՐԿՐԱԶԱՓ.— Ես էպիտետները նկատի ունեմ:
- ՀԵԿՈՒԲԱ.— Էպիտետներ՞ըր:
- ԵՐԿՐԱԶԱՓ.— Հույն զինվորները իրենց նիզակները նետելուց առաջ, էպիտետներ են շարտում... «Դողողի եղբայր»— գոռում են նըրանք: «Եզան որդի»: Նրանք սաստիկ անարգում են և իրավունք ունեն: Նրանք գիտեն, որ երբ ինքնասիրությունը վիրավորված է, մարմինը առավել խոցելի է դառնում: Սառնասրտությամբ հայտնի զինվորներն անգամ, իրենց հասցեին վիրավորանքներ լսելիս, կորցնում են ինքնասիրապետումը: Մենք՝ տրոյացիներս, էպիտետների սուկայի կարիք ունենք:
- ՊԵՄՈԿՈՍ.— Երկրաչափը ճիշտ է ասում: Մենք, իսկապես, միակն ենք, որ թշնամուն սպանելուց առաջ չենք վիրավորում...
- ՊԱՐԻՍ.— Քեզ բավական չե՞նք քաղաքացիների հայհոյանքները:
- ԵՐԿՐԱԶԱՓ.— Բանակը պետք է բաժանի քաղաքացիների ատելությունը: Դու նրանց գիտես այդ կողմից, նրանց վրա հույս դնել չի լիճի: Երբ մեռակ ես թողնում, նրանք սկսում են ժամանակ անցկացնել իրար մեծարելով: Նրանց սիռված շարասյունը շուտով դառնում է ամբողջ աշխարհի իսկական եղբայրության միակ շարասյունը, և ուզմի դաշտից, ուր փոխադարձ հարգանք կա, ստերությունը նահանջել է դպրոցները, սալոնները, խանութները: Եթե մեր զինվորները ամենամվազ հավասարությունը չունենան էպիտետների կոչում, նրանք կմոռանան հայհոյանքի, զրպարտության համը, հետևապես, անխուսափելիորեն կկորցնեն պատերազմի հաճույքը:
- ՊԵՄՈԿՈՍ.— Ընդունում ենք: Հենց այս երեկո մի այդպիսի մրցույթ կազմակերպենք:

ՊԱՐԻՍ.— Կարծում եմ, որ նրանք բավականին հասուն են էպիտետների ընտրելու համար:

ԴԵՄՈԿՈՍ.— Ինչպիսի մոլորություն: Օրինակ՝ դու, որ քեզ ճարտար ես համարում այդ հարցում, կարո՞ղ ես էպիտետներ գտնել:

ՊԱՐԻՍ.— Ես դրանում վստահ եմ:

ԴԵՄՈԿՈՍ.— Դու շատ ես երևակայում: Կանգնիր Աքնետսի դիմաց և սկսիր:

ՊԱՐԻՍ.— Ինչո՞ւ Աքնետսի դիմաց:

ԴԵՄՈԿՈՍ.— Որովհետև էպիտետները նրան կապեն, ծուռ ոտքեր ունի և հաստ փոր:

ԱՐՆԵՈՍ.— Դե՛, խոսի՛ր, հոտա՛ծ միս:

ՊԱՐԻՍ.— Ո՛չ: Աքնետսը ինձ չի ոգեշնչում: Եթե ուզում ես քո դիմաց կանգնեմ:

ԴԵՄՈԿՈՍ.— Իմ դիմա՞ց: Հիանալի է: Դու հիմա կիմանաս, թե հանպատրաստի էպիտետը ինչ բան է: Տասը քայլ հաշվիր: Ես պատրաստ եմ: Սկսի՛ր...

ՀԵԿՈՒԲԱ.— Լավ անյիր նրան: Դու կոգեշնչվես:

ՊԱՐԻՍ.— Քալթառ հացկատակ: Կեղտոտ ոտքերով հանգաբազ:

ԴԵՄՈԿՈՍ.— Մի վայրկյան... Թշուրհիմացություններից խուսափելու համար, էպիտետներից առաջ անուն դիր...

ՊԱՐԻՍ.— Իսկապես, ճիշտ ես ասում... Դեմոկոս, հորթի աչք, քոսոտ կենդանի:

ԴԵՄՈԿՈՍ.— Դա քերականորեն ճիշտ է, բայց շատ պարզունակ է: Ինչո՞ւ ես կարծում, որ ինձ քոսոտ կենդանի անվանելով, քեզ սպանելու ցանկություն պիտի առաջացնես մեզս: Քոսոտ կենդանին ոչ մի ազդեցություն չի գործում:

ՀԵԿՈՒԲԱ.— Պարիսը քեզ անև հորթի աչք անվանեց:

ԴԵՄՈԿՈՍ.— Հորթի աչքը մի քիչ լավ է... Տեսնո՞ւմ ես, ինչպես ես շփոթվում, Պարի՛ս: Այնպիսի բան փնտրիր, որն ինձ խոցի: Քո կարծիքով, որո՞նք են իմ թերությունները:

ՊԱՐԻՍ.— Դու վախկոտ ես, քերանդ գարշահոտ է և ոչ մի տաղանդ չունես:

ԴԵՄՈԿՈՍ.— Ուզո՞ւմ ես ապտակ ուտել:

ՊԱՐԻՍ.— Ինչ որ ասացի, քեզ դուր գալու համար էր:

ՓՈՔՐԻԿ ՊՈՒԻՔՍԵՆՆԵ.— Մայրի՛կ, քեռի Դեմոկոսին ինչո՞ւ եմ հայհոյում:

ՀԵԿՈՒԲԱ.— Որովհետև նա սխարզամիտ դեղձանիկ է:

ԴԵՄՈԿՈՍ.— Ի՞նչ ասացիք, Հեկուբա՛:



ՀԵԿՈՒԲԱ.— Ասացի, որ դու դեղձանիկ ես, Դեմոկոն'ս: Ասում եմ, եթե Դեղձանիկը անգղի բթամտությունը, հավակնությունը, տխեղծությունը և գարշահոտությունը ունենար, դու դեղձանիկ կլինեիր:

ԴԵՄՈԿՈՍ.— Տե՛ս, Պարի՛ս: Մայրդ քեզանից ուժեղ է: Օրինակ վերցրու: Օրը մեկ ժամ, մի զինվորի հետ վարժություններ արա և քո էպիտետներով Հեկուբայից առաջ կանցնես: Ինչ վերաբերում է պատերազմի երգին, ես մտածում եմ, որ ավելի լավ չէ՞ր լինի, եթե Հեկուբային վստահեցնեիր այդ գործը...

ՀԵԿՈՒԲԱ.— Ինչպես կուզես: Բայց ես չեմ ասի, թե պատերազմը նման է Հեղինեին:

ԴԵՄՈԿՈՍ.— Իսկ քո կարծիքով, պատերազմը ո՞ւմ նման է:

ՀԵԿՈՒԲԱ.— Այդ մասին քեզ կասեմ դարպասները փակելուց հետո:

### ՏԵՍԱՐԱՆ ՀԻՆԳԵՐՈՐԳ

ՆՈՒՅՆՔ, ՊՐԻԱՄՈՍ, ՀԵԿՏՈՐ, հետո ԱՆԴՐՈՄԱՔԵՆ, հետո ՀԵՂԻՆԵՆ

Դարպասը փակելու պահին, Անդրոմաքեն փոքրիկ Պոլիքսենեին տանում է մի կողմ և ինչ-որ հանձնարարություն կամ գաղտնիք հայտնում:

ՀԵԿՏՈՐ.— Դարպասը փակվելու է:

ԴԵՄՈԿՈՍ.— Մի բույե, Հեկտոր'ր:

ՀԵԿՏՈՐ.— Դեռ պատրաստ չե՞ք արարողությանը:

ՀԵԿՈՒԲԱ.— Պատրաստ է: Ծխնիները ձիթապտղի յուղի մեջ լողում են:

ՀԵԿՏՈՐ.— Ուրեմն, ի՞նչ կա:

ՊՐԻԱՄՈՍ.— Այն կա, որ մեր բարեկամներն ասում են, թե որքան դարպասն է պատրաստ փակման արարողությանը, նույնքան էլ պատերազմն է պատրաստ սկսվելուն: Լավ մտածիր, Հեկտոր'ր: Նրանք չեն սխալվում: Եթե հիմա փակես այս դարպասը, շատ հնարավոր է, որ մեկ բույե հետո հարկ լինի նորից բացել:

ՀԵԿՈՒԲԱ.— Մեկ բույեի խաղաղությունն էլ պետք է խնայել:

ՀԵԿՏՈՐ.— Հայր իմ, գոնե դու պետք է իմանաս, թե ինչ է նշանակում խաղաղությունը նրանց համար, ովքեր արդեն քանի ամիս է կռվում են: Դա նշանակում է ջրում սուզվելիս, կամ ավազի մեջ խրվելիս նեցուկ գտնել կամ կանգնել հատակին: Թույլ տուր կանգ-

Անլ խաղաղության այդ փոքրիկ հողակտորի վրա, թեթևակի, մի պահ խաղաղություն զգանք, գոնե մատով դիպչենք:

**ՊՐԻԱՄՈՍ.**— Հեկտո՛ր, հասկացիր, խաղաղություն բառը քաղաքի վրա թույնի պես կազդի: Դու ուզում ես հանգիստ տալ պղնձին և երկաթին: «Խաղաղություն» բառով դու հուշերի, զգացմունքների և հույսերի շրջուն դրամը կկտրես: Զինվորները կնետվեն խաղաղության հացն առնելու, խաղաղության գինին խմելու, խաղաղության կնոջը սիրելու և մի ժամ հետո դու հրանց պատերազմին դեմ առ դեմ կհանես:

**ՀԵԿՏՈՐ.**— Պատերազմը չի՛ լինի:

**Նավահանգստի կողմից աղաղակներ են լսվում:**

**ԴԵՄՈԿՈՍ.**— Ասում ես չի լինի՞: Լսի՛ր:

**ՀԵԿՏՈՐ.**— Փակենք դարպասը: Մեկ ժամ հետո հույներին հե՛նց այստեղ ընդունենք: Առանց այն էլ խոսակցությունը կոշտ է լինելու, ուստի և ավելի հարմար կլինի նրանց ընդունել խաղաղության մեջ:

**ՊՐԻԱՄՈՍ.**— Որդի՛ս, մենք նույնիսկ չգիտենք, թե հույներին թույլ կտա՞նք ափ իջնել:

**ՀԵԿՏՈՐ.**— Նրանք ափ կիջնեն: Ուլիսի հետ կայանալիք խոսակցությունը խաղաղության մեր վերջին հույսն է:

**ԴԵՄՈԿՈՍ.**— Նրանք ափ չեն իջնի: Մեր պատիվը վտանգի տակ է: Մենք աշխարհով մեկ ծաղրուծանակի առարկա կդառնանք...

**ՀԵԿՏՈՐ.**— Դու հանձն առնո՞ւմ ես Սենատին համոզելու, որ պատերազմի առիթ տվող մի բան սահմանեն:

**ԴԵՄՈԿՈՍ.**— Ե՛ս: Սխալվում ես: Առաջ ե՛կ, Բուզիրի՛ս, քո առաքելությունը սկսվում է:

**ՀԵԿՏՈՐ.**— Ո՞վ է այս օտարականը:

**ԴԵՄՈԿՈՍ.**— Այս օտարականը միջազգային իրավունքի կենդանի մասնագետներից ամենախոշորն է: Մեր բախտը քերել է, որ այսօր անցնում է Տրոյայով: Դու չես կարող ասել, թե նա կողմնապահ վկա է: Նա չեզոք է: Մեր սենատը վաղը կընդունի նրա տեսակետը, որը կդառնա բոլոր ժողովուրդների տեսակետը:

**ՀԵԿՏՈՐ.**— Իսկ ինչպիսի՞ն է քո տեսակետը:

**ԲՈՒԶԻՐԻՍ.**— Վեհապետներ, տեսնելով և քննելով սմե՛ն ինչ, ես եկա այն եզրակացության, որ հույները Տրոյայի հանդեպ մեղավոր են միջազգային օրենքի երեք խախտումների մեջ: Թույլ տալ նրանց ցամաք իջնել, նշանակում է զրկվել պաշտպանվողի այն վիճակից, որով դուք ամբողջ աշխարհի համակրանքը կշահեք:

**ՀԵԿՏՈՐ.**— Բացատրիր:

**ԲՈՒԶԻՐԻՍ.**— Նախ և առաջ, նրանք դրոշը բարձրացրել են նավա-  
խելին և ոչ թե նավացողունին: Ռազմանավը, վեհապետներ և սի-  
րելի՛ կոլեգաներ, դրոշը նավախելին է բարձրացնում միայն այն  
դեպքում, երբ եզներով բեռնված նավի ողջույնին է սպառախա-  
նում: Բայց երբ սա արվում է քաղաքի և նրա բնակիչների դեմ,  
և, իսկական անարգանք է: Իմիջիպլոց, այդպիսի մի նախըն-  
թաց օրինակ ունենք: Հույները անցած տարի, Օրֆեա նավահան-  
գիստը մտնելիս իրենց դրոշը նավախելին բարձրացրին: Պատաս-  
խանը կտրուկ Լր: Օրֆեան պատերազմ հայտարարեց:

**ՀԵԿՏՈՐ.**— Եվ ի՞նչ եղավ:

**ԲՈՒԶԻՐԻՍ.**— Օրֆեան սպարտկեց: Հիմա երկրի երեսին ոչ Օրֆեա կա,  
ոչ էլ օրֆեացիք:

**ՀԵԿՈՒԲԱ.**— Հիանալի է:

**ԲՈՒԶԻՐԻՍ.**— Որևէ ազգի բնաջնջումը ոչնչով չի վնասում միջազ-  
գային ասպարեզում ունեցած նրա բարոյական առավելությանը:

**ՀԵԿՏՈՐ.**— Ծարունակիր:

**ԲՈՒԶԻՐԻՍ.**— Երկրորդ: Հունական նավատորմը ձեր տերիտորիալ  
ջրերը թափանցելով, շարվել է, այսպես ասած, դիմացից: Վերջին  
կոնգրեսում հարց բարձրացվեց, որ այդ դիրքավորումը ձևակերպ-  
վի, այսպես կոչված, պաշտպանողական-հարձակողական միջո-  
ցառումների պարագրաֆի տակ: Ես շատ ուրախ եմ, որ կարո-  
ղացա ստիպել այդ դիրքավորումը իր իսկական էությանը կոչելու՝  
պաշտպանողական-հարձակողական: Ուրեմն, դա ծովային ճա-  
կատի քողարկված տարածման լավագույն ձևն է, որը և ցամա-  
քային շրջապատման ձև է, այսինքն, ամենից առաջ, սահմանա-  
դրության խախտում: Իմիջիպլոց, այս հարցում էլ մի նախընթաց  
օրինակ ունենք: Հունական նավերը, հինգ տարի առաջ, Մազե-  
զիայի<sup>18</sup> առջև խարխալ գցելիս, դիմացից շարվեցին: Մազեզիան  
անմիջապես պատերազմ հայտարարեց:

**ՀԵԿՏՈՐ.**— Եվ նա հաղթե՞ց:

**ԲՈՒԶԻՐԻՍ.**— Նա սպարտկեց: Քարը քարի վրա չմնաց: Բայց իմ պա-  
րագրաֆը մնում է:

**ՀԵԿՈՒԲԱ.**— Ես քեզ ողջունում եմ: Թե չէ վախեցանք, հանկարծ պա-  
րագրաֆդ չկորչի:

**ՀԵԿՏՈՐ.**— Հետո՞:

**ԲՈՒԶԻՐԻՍ.**— Երրորդ խախտումը՝ պակաս կարևոր: Հունական եռա-  
կարգ նավերից մեկը, առանց թույլտվության և ճեղգությանը մո-  
տեցավ ափին: Նրա պետը՝ Աչաքսը<sup>19</sup>, Հունաստանի ամենաբոխի

և ամենավատթար զինակիցը, գայթակղություն և գրգռություն սերմանելով մտնում է քաղաք և գոռում, թե ուզում է սպանել Պարիսին: Բայց միջազգային օրենքի տեսանկյունից այս խախտումը զանցանելի է: Սա մի խախտում է, որը չի արվել ըստ հաստատված ձևերի:

ԴԵՄՈԿՈՍ.— Ահա, քեզ ամեն ինչ հայտնի է: Իրավիճակից միայն երկու ելք կա: Անարգանքը կույ տալ կամ պատասխանել: Ընտրի՛ր:

ՀԵԿՏՈՐ.— Օճեա՛, վազի՛ր Այաքսին ընդատաջ, աշխատիր բերել այստեղ:

ՊԱՐԻՍ.— Ես նրան այստեղ կսպասեմ:

ՀԵԿՏՈՐ.— Դու ինձ հաճույք կպատճառեիր, եթե մնայիր պալատում և սպասեիր մինչև որ քեզ կանչեն: Ինչ վերաբերում է քեզ, Բուզիրի՛ս, իմացիր, որ մեր քաղաքը ոչ մի կերպ չի ընդունում, թե հույները անարգել են մեզ:

ԲՈՒԶԻՐԻՍ.— Դուք ինձ չեք զարմացնում: Ձեր կզաքիսի հպարտությունը առասպելական է:

ՀԵԿՏՈՐ.— Իսկ դու գնա, Դեմոկո՛ս, և մի թեզ գտիր, որը հնարավորություն կտա սենատին ասելու, որ մեր երկիր ժամանաճները ոչ մի խախտում թույլ չեն տվել և որը մեզ հնարավորություն կտա ընդունել հյուրերին:

ԴԵՄՈԿՈՍ.— Այս ի՞նչ կատակներ են:

ԲՈՒԶԻՐԻՍ.— Դա հակասում է փաստերին, Հեկտո՛ր:

ՀԵԿՏՈՐ.— Սիրելի՛ Բուզիրիս, մենք բոլորս գիտենք, որ օրենքը երկվակայության ամենահզոր դպրոցն է: Աշխարհի ոչ մի բանատեղծ բնությունը այնքան անկաշկանդ չի մեկնաբանում, ինչպես իրավաբանն է իրականությունը բացատրում:

ԲՈՒԶԻՐԻՍ.— Սենատը ինձնից խորհուրդ հարցրեց, ես էլ տվեցի:

ՀԵԿՏՈՐ.— Իսկ ես խնդրում եմ, որ ուրիշ բացատրություն տաս: Դա իրավաբանին ավելի հատուկ է:

ԲՈՒԶԻՐԻՍ.— Դա իմ խղճին դեմ է:

ՀԵԿՏՈՐ.— Քո խիղճը տեսել է Օրֆեայի կործանումը, Մազնեզիայի կործանումը և դու հանգիստ խղճով պիտի նայես, թե ինչպես է կործանվում Տրոյա՞ն:

ՀԵԿՈՒԲԱ.— Այո: Նա Սիրակուզից<sup>20</sup> է:

ՀԵԿՏՈՐ.— Ես քեզ աղաչում եմ, Բուզիրի՛ս: Երկու ժողովուրդների բախտն է վճռվում: Օգնի՛ր ինձ:

ԲՈՒԶԻՐԻՍ.— Ես ձեզ միայն մեկ օգնություն կարող եմ տալ՝ ճշմարտությունը:

ՀԵԿՏՈՐ.— Իսկապես, գտիր մի ճշմարտություն, որը մեզ օգնի: Եթե օրենքը անմեղների զինագործը չէ, էլ ինչի՛ն պիտի ծառայի: Մի ճշմարտություն կոիր մեզ համար: Իմիջիպայոց, դա շատ պարզ է, եթե դու չգտնես այդ ճշմարտությունը, մենք քեզ կպահենք մինչև պատերազմի վերջը:

ԲՈՒԶԻՐԻՍ.— Ի՞նչ եք ասում:

ԴԵՄՈՎՈՍ.— Դու չարաշահում ես քո դիրքը, Հեկտոր:

ՀԵԿՈՒԲԱ.— Պատերազմի ժամանակ օրենքը բանտարկում են: Մի՞թե չենք կարող օրենսգետին բանտարկել:

ՀԵԿՏՈՐ.— Մտածիր ասածիս մասին, Բուզիրի՛ս: Իմ սպանակալիքները և խոստումները ես միշտ կատարել եմ: Կամ հիմա քեզ կտանեն և տարիներով կբանտարկվես կամ հենց այս երեկո ոսկով բեռնված կգնաս: Ուրեմն, դու ամեն ինչին տեղյակ ես, հարցը նորից դիր անկողմնակալ քննության:

ԲՈՒԶԻՐԻՍ.— Իհարկե, վճիռը բեկանելու միջոցներ կան:

ՀԵԿՏՈՐ.— Ես դրանում վատահ էի:

ԲՈՒԶԻՐԻՍ.— Օրինակ, առաջին խախտումը, արդյոք չե՞նք կարող բացատրել որպես արգավանդ հողերը ողողող որոշ ծովերում անասուններով բեռնված նավերին տրվող ողջույն, այսինքն՝ որպես ծովագնացների հարգանքի նշանը հողագործությանը:

ՀԵԿՏՈՐ.— Դա, իսկապես, տրամաբանական է: Ի վերջո, դա կլինի ծովի ողջույնը հողին:

ԲՈՒԶԻՐԻՍ.— Մանավանդ, որ այդ նավը կարող է բեռնված լինել ոչ թե ամեն տեսակի անասուններով, այլ ազնվացեղ ցուլերով: Նրման դեպքերում տրված պատիվը կարող է նույնիսկ արժանապատվությունը շոյել:

ՀԵԿՏՈՐ.— Ահա: Դու ինձ լավ հասկացար: Մենք իրար հետ լեզու կգտնենք:

ԲՈՒԶԻՐԻՍ.— Ինչ վերաբերում է դիմացից շարվելուն, ապա դա շատ բնական կլինի բացատրել որպես նախազուշական միջոց, բայց ոչ մեծամարտի հրավեր: Կանայք, որոնք ուզում են երեխա ունենալ, դիմացից են ներկայանում և ոչ թե կողքից:

ՀԵԿՏՈՐ.— Վճող փաստարկ է:

ԲՈՒԶԻՐԻՍ.— Մանավանդ, որ հույները իրենց նավառաջքին դնում են ջրահարսերի հսկայական արձաններ: Եվ քանի որ ջրահարսը բերրիության, սաղմնավորման խորհրդանիշն է, ապա մեզ թույլ

կորվի տրոյացիներին ասել, որ դա ոչ թե ծովային սպառնալիք է, այլ ծովային միություն, այսինքն, անարգանքի ճիշտ հակառակը: Մի կին, որը մերկ և գրկաբաց գալիս է դեպի ձեզ, սպառնալիք չէ, այլ անաջարկ: Բոլոր դեպքերում, գրուցելու առաջարկ...

**ՀԵԿՏՈՐ.**— Ահա և մեր պատիվը փրկված է, Գեմոկո՛ս: Բուզիրիսի մեկնաբանությունը թող քաղաքով մեկ հրապարակվի, իսկ դու, Մինո՛ս, վազիր և հրաման հասցրու նախահանգստի պետին, որ պետզի անմիջապես Ուլիսին հրավիրի այն իջնել:

**ԴԵՄՈԿՐՈՍ.**— Այս հին զինվորների հետ բոլորովին անհնար է պատվի հարցերից խոսել: Նրանք, իսկապես, չարաշահում են իրենց արածները և չես կարող դրանց վախկոտ անվանել:

**ԵՐԿՐԱԶԱՓ.**— Հեկտո՛ր, համեմայն դեպս, մի ճառ արտասանիր մեռածների պատվին: Դա քեզ առիթ կտա խորհելու...

**ՀԵԿՏՈՐ.**— Մեռածների պատվին ճառ չի լինի:

**ՊՐԻԱՄՈՍ.**— Ծիսակատարության մեջ նախատեսված է այդ ճառը: Պատերազմի դարպասները փակելիս, հաղթական զորավարը պետք է պատիվ տա մեռածներին:

**ՀԵԿՏՈՐ.**— Պատերազմի զոհերի պատվին ասված ճառը, դա ողջերի կեղծավոր պաշտպանությունն է, անմեղ ճանաչվելու խնդրանքը: Դա փաստաբանի մասնագիտություն է: Ես այնքան վստահ չեմ իմ անմեղության վրա...

**ԴԵՄՈԿՐՈՍ.**— Հրամանատարությունը պատասխանատու չէ:

**ՀԵԿՏՈՐ.**— Ավաղ, բոլորն են պատասխանատու, նույնիսկ աստվածները: Իմիջիայլոց, մեռյալներին ես արդեն ասել եմ իմ ճառը: Ես նրանց հոգևորքի պահին եմ ասել, երբ ուզմի դաշտում, ձիթե՛նու խորդուրդերին հեռված, նրանք հազիվ լսում էին և տեսնում: Եվ ես կարող եմ կրկնել այն, ինչ նրանց ասացի: Նրան, որի փորոտիքը թափված էր և աչքերը կուլ էին գնում, ես ասացի. «Էհ, բարեկամս, դա այնքան էլ վատ չէ» և նրան, որի գլուխը լախտով կիսված էր, ես ասացի. «Ինչ այլանդակն ես քո այդ տրորված քթով»: Իսկ իմ պատանի զինակցին, որի ձախ ձեռքը կախ էր ընկել և արյան վերջին կաթիլներն էին հոսում, ես ասացի. «Բախտդ բերել է, որ միան ձախ ձեռքդ ես կորցրել...»: Եվ ես երջանիկ եմ, որ նրանց հնարավորությունն տվի վերջին կաթիլը խմելու կյանքի շնից: Նրանց ամբողջ ուզածն այդ էր, և նրանք մեռան այդ վերջին կաթիլը շրթներին... Եվ այլևս ոչ մի բան չեմ ավելացնի: Դարպասները փակե՛ք:

**ՓՈՔՐԻԿ ՊՈՒԻՔՍԵՆԵ.**— Նա էլ մեռա՛վ, պատանի զինակիցը:

ՀԵԿՏՈՐ.— Այո, կատվի՛կս: Նա մեռավ: Նա բարձրացրեց աչ ձեռքը: Ինչ-որ մեկը, որին ես չտեսա, բռնել էր նրա առողջ ձեռքը: Եվ նա մեռավ:

ԳԵՄՈԿՈՍ.— Մեր գորավարը մեռնողներին ուղղված խոսքերը կարծես շփոթում է մեռածների պատվին ասվելիք ճառի հետ:

ՊՐԻԱՄՈՍ.— Մի՛ համառիր, Հեկտոր՛ր:

ՀԵԿՏՈՐ.— Ծատ լավ, շատ լավ, ես հիմա կասեմ... (Կանգնում է դարպասների մոտ): Օ՛հ, դո՛ւք, որ մեզ չեք լսում, որ մեզ չեք տեսնում, լսե՛ք այս բառերը, նայե՛ք այս հանդեսը: Մենք հաղթողներն ենք: Ձեզ համար միևնույն է, այդպես չէ՞: Դուք էլ եք հաղթողներ: Բայց մենք կենդանի հաղթողներն ենք: Ահա այստեղից է սկսվում տարբերությունը: Այստեղ է, որ ես սկսում եմ ամաչել: Ես չգիտեմ, մեռածների ամբոխի մեջ հաղթող-մեռածներից գլխանշաններով տարբերո՞ւմ եմ, թե՞ ոչ: Իսկ ասյրողները, հաղթանակող եմ, թե ոչ, իսկական գլխանշան ունեն, նույնիսկ կրկնակի գլխանշան: Դա նրանց աչքերն են: Մենք երկու աչք ունենք, իմ խեղճ բարեկամներ: Մենք տեսնում ենք արևը: Մենք աճում ենք այն ամենը, ինչ արվում է արևի տակ: Ուտում ենք, խմում ենք... Եվ լուսնի լույսի տակ... պառկում ենք մեր կանանց հետ... Նաև ձեր կանանց հետ...

ԳԵՄՈԿՈՍ.— Հիմա դու անարգում ես մեռածներին:

ՀԵԿՏՈՐ.— Իսկապե՞ս, այդպե՞ս ես կարծում:

ԳԵՄՈԿՈՍ.— Կամ մեռածներին, կամ ողջերին:

ՀԵԿՏՈՐ.— Տարբերություն կա...

ՊՐԻԱՄՈՍ.— Վերջացրու, Հեկտոր՛ր... Հույներն ասի են իջնում...

ՀԵԿՏՈՐ.— Ես վերջացնում եմ... Օ, դուք, որ չեք զգում, որ չեք շոշափում այս ընծաները: Քանզի, վերջիվերջո, մի անկեղծ գորավար է խոսում ձեզ հետ, իմացե՛ք, որ ձեր բոլորի հանդեպ իմ քնքշանքը և հարգանքը միևնույնը չէ: Ձեր, բոլոր մեռածներիդ մեջ, բաշտի և վախկոտների քանակը նույնն է, ինչ մեզ մոտ՝ ողջերիս, և նույնիսկ հանուն այս ծիսակատարության չստիպեք ինձ այն մեռածներին, որոնցով հիանում եմ, շփոթել այն մեռածների հետ, որոնք ինձ չեն հիացնում: Այսօր ես ձեզ ուզում եմ ասել, որ պատերազմը մարդկանց հավասարեցնելու ամենաքսու և ամենակեղծավոր միջոցն է, և ես չեմ կարող մահը ընդունել որպես պատիժ կամ բավություն վախկոտներին կամ որպես հատուցում ողջերին: Եվ ուլքեր էլ որ լինեք, դուք՝ բացականեք, դուք՝ գոյություն չունեցողներ, դուք՝ մոռացվածներ, դուք՝ զբաղմունք չունեցողներ, դուք՝

հանգիստ չունեցողներ, դուք՝ լինելություն չունեցողներ, ևս հասկանում եմ, որ այս դարպասները փակելիս, իսկապես, պետք է ձեր առջև արդարացնել ապրողներից, և անարդար մեծաշնորհ համարել այն երկու բարիքները՝ երկինքը և ջերմությունը, որոնք դուք այլևս ոչ պիտի զգաք, ոչ պիտի տեսնեք:

**ՓՈՔՐԻԿ ՊՈԼԻՔՍԵՆԵ.**— Մայրի՛կ, դարպասները փակվում են:

**ՀԵԿՈՒԲԱ.**— Այո, սիրելի՛ս:

**ՓՈՔՐԻԿ ՊՈԼԻՔՍԵՆԵ.**— Այդ մեռածներն են հրում դարպասները:

**ՀԵԿՈՒԲԱ.**— Նրանք մի քիչ օգնում են:

**ՓՈՔՐԻԿ ՊՈԼԻՔՍԵՆԵ.**— Նրանք լավ են օգնում, մանավանդ այց կողմից:

**ՀԵԿՏՈՐ.**— Վե՛րջ: Փակվե՛ց:

**ՊԱՀԱՊԱՆ.**— Սեյֆի պես:

**ՀԵԿՏՈՐ.**— Խաղաղության մեջ ենք, հա՛յր, խաղաղության մեջ:

**ՀԵԿՈՒԲԱ.**— Այո, խաղաղություն է:

**ՓՈՔՐԻԿ ՊՈԼԻՔՍԵՆԵ.**— Հիմա լավ ես զգում, չե՛, մայրի՛կ:

**ՀԵԿՈՒԲԱ.**— Իհարկե, սիրելի՛ս:

**ՓՈՔՐԻԿ ՊՈԼԻՔՍԵՆԵ.**— Ես ավելի լավ եմ զգում:

**Հնչում է հույների երաժշտությունը:**

**ՊԱՏԳԱՄԱԲԵՐ.**— Պրիամո՛ս, նրանք ափ իջան:

**ԴԵՄՈՎՈՍ.**— Ի՛նչ երաժշտություն է: Ի՛նչ սուկալի երաժշտություն է:

Սա ամենակատաղի հակատրոյակյան երաժշտությունն է: Գնանք նրանց դիմավորելու, ինչպես որ հարկ է:

**ՀԵԿՏՈՐ.**— Դիմավորեք նրանց արքայաբար, և որ առանց մի արգելքի հասնեն այստեղ: Դուք պատասխանատու եք:

**ԵՐԿՐԱԶԱՓ.**— Համենայն դեպս, նրանց դեմ հանենք տրոյական երաժշտությունը: Հեկտո՛ր, քանի որ չես թողնում մեր զայրույթը արտահայտել, գուցե թույլ տաս, որ երաժշտական կոնֆլիկտ ստեղծենք:

**ԱՄԲՈՒ.**— Հույներ՛րը, հույներ՛րը:

**ՊԱՏԳԱՄԱԲԵՐ.**— Պրիամո՛ս, Ուլիսը նավահանգստում է, դեպի ո՛ր առաջնորդենք նրանց:

**ՊՐԻԱՄՈՍ.**— Հենց այստեղ: Պալատում բոլորին զգուշացրեք... Դու էլ արի, Պարի՛ս: Հիմա թափառելու ժամանակը չէ:

**ՀԵԿՏՈՐ.**— Հա՛յր, գնանք հույներից ասվելիք մեր ճառը պատրաստենք:

**ԴԵՄՈՎՈՍ.**— Աշխատիր գոհվածների ճառից մի քիչ ավելի լավ պատրաստել, այլապես ընդդիմախոսներն ավելի շատ կլինեն:



**Պրիամոսը և նրա որդիք դուրս են գալիս:**

ԴԵՄՈԿՈՍ.— Դու էլ գնա, Հեկուբա՛: Բայց դու գնում ես, առանց մեզ  
ասելու թե ինչի է նման պատերազմը:

ՀԵԿՈՒԲԱ.— Շա՛տ ես ուզում իմանալ:

ԴԵՄՈԿՈՍ.— Եթե տեսել ես, ասա:

ՀԵԿՈՒԲԱ.— Կապիկի հետույքի նման է: Երբ կապիկը բարձրանում  
է ծառը և իր կեղտոտ փոշերով շրջապատված, թեփոտ ու ողորկ  
կարմիր հետույքն է ցույց տալիս, դա հենց պատերազմն է, որ  
տեսնում ես, նրա իսկական դեմքը:

ԴԵՄՈԿՈՍ.— Հեղինեի դեմքը երկրորդ նախանշանն է: (**Դուրս է գալիս**):

ԱՆԴՐՈՄԱՔԵ.— Ահա և Հեղինեն: Պոլիքսենե՛, դու լավ հիշո՛ւմ ես,  
թե ինչ պիտի ասես նրան:

ՓՈՔՐԻԿ ՊՈԼԻՔՍԵՆԵ.— Այո...

ԱՆԴՐՈՄԱՔԵ.— Դե՛ գնա...

**ՏԵՍԱՐԱՆ ՎԵՏԵՐՈՐԴ**

**ՀԵՂԻՆԵ, փոքրիկ ՊՈԼԻՔՍԵՆԵ**

ՀԵՂԻՆԵ.— Ուզում ես հետս խոսե՛լ, սիրելի՛ս:

ՓՈՔՐԻԿ ՊՈԼԻՔՍԵՆԵ.— Այո, մորաքո՛ւյր Հեղինե:

ՀԵՂԻՆԵ.— Շատ լարված ես, հավանաբար, կարևոր բան ես ասելու:

Դու քեզ շատ լարված ես զգում, ես գրազ կգամ:

ՓՈՔՐԻԿ ՊՈԼԻՔՍԵՆԵ.— Այո, մորաքո՛ւյր Հեղինե:

ՀԵՂԻՆԵ.— Դա այնպիսի բան է, որ առանց լարվելու չե՛ս կարող ա-  
սել:

ՓՈՔՐԻԿ ՊՈԼԻՔՍԵՆԵ.— Ոչ, մորաքո՛ւյր Հեղինե:

ՀԵՂԻՆԵ.— Ուրեմն, ասա ամեն ինչ: Քո լարվածությունից ես վատ  
եմ զգում:

ՓՈՔՐԻԿ ՊՈԼԻՔՍԵՆԵ.— Մորաքո՛ւյր Հեղինե, եթե մեզ սիրում եք,  
զնայեք:

ՀԵՂԻՆԵ.— Ինչո՞ւ, սիրելի՛ս:

ՓՈՔՐԻԿ ՊՈԼԻՔՍԵՆԵ.— Պատերազմի պատճառով:

ՀԵՂԻՆԵ.— Դու արդեն գիտե՛ս, թե ինչ բան է պատերազմը:

ՓՈՔՐԻԿ ՊՈԼԻՔՍԵՆԵ.— Ես լավ չգիտեմ, բայց դա երևի այն է, երբ  
մարդիկ մեռնում են:

ՀԵՂԻՆԵ.— Մահն էլ գիտե՞ս, թե ինչ բան է:

ՓՈՔՐԻԿ ՊՈԼԻՔՍԵՆԵ.— Դա էլ լավ չգիտեմ: Կարծում եմ, որ դա այն է, երբ մարդիկ ոչինչ չեն զգում:

ՀԵՂԻՆԵ.— Անդրոմաքեն ի՞նչ պատվիրեց խնդրել:

ՓՈՔՐԻԿ ՊՈԼԻՔՍԵՆԵ.— Որ, եթե մեզ սիրում եք, գնաք աչստեղից:

ՀԵՂԻՆԵ.— Դա այնքան էլ տրամաբանական չէ: Եթե մեկին սիրում ես, պիտի խնդրես, որ մնա:

ՓՈՔՐԻԿ ՊՈԼԻՔՍԵՆԵ.— Օ՛ր, ո՛չ, երբե՛ք:

ՀԵՂԻՆԵ.— Դու ո՞րը կգերադասեիր. Հեկուբային լքե՞լ, թե՞ ոչինչ չըզգայ:

ՓՈՔՐԻԿ ՊՈԼԻՔՍԵՆԵ.— Օ՛ր, ոչինչ չզգայ: Ես կգերադասեի մնալ և այլևս ոչինչ չզգալ:

ՀԵՂԻՆԵ.— Տեսնո՞ւմ ես՝ ինչ վատ ես արտահայտում մտքերդ: Ընդհակառակը, որպեսզի գնամ, պետք է չսիրեմ: Դու ուզում ես, որ քեզ չսիրե՞մ:

ՓՈՔՐԻԿ ՊՈԼԻՔՍԵՆԵ.— Օ՛ր, ո՛չ, ուզում եմ, որ ինձ սիրեք:

ՀԵՂԻՆԵ.— Մի խոսքով, դու չգիտես, թե ինչ ես ասում:

ՓՈՔՐԻԿ ՊՈԼԻՔՍԵՆԵ.— Ոչ...

ՀԵԿՈՒԲԱՅԻ ԶԱՅՆԸ.— Պոլիքսենե՛:

### ՏԵՄԱՌԱՆ ՅԲԹԻՐՈՐԴ

#### ՆՈՒՅՆՔ, ՀԵԿՈՒԲԱ, ՍԵՂՈՐՄԱՐԵՆ

ՀԵԿՈՒԲԱ.— Խլացե՞լ ես, ինչ է, Պոլիքսենե՛: Ինչո՞ւ ես ինձ տեսնելիս աչքերդ փակում: Արձան ես խաղո՞ւմ, ինչ է: Արի՛՛ հետս:

ՀԵՂԻՆԵ.— Նա փորձում է ոչինչ չզգալ: Բայց չի ստացվում:

ՀԵԿՈՒԲԱ.— Վերջիվերջո, դու ինձ լսո՞ւմ ես, թե՞ ոչ, Պոլիքսենե՛: Դու ինձ տեսնո՞ւմ ես:

ՓՈՔՐԻԿ ՊՈԼԻՔՍԵՆԵ.— Օ՛ր, այո: Ես քեզ լսում եմ, ես քեզ տեսնում եմ:

ՀԵԿՈՒԲԱ.— Ինչո՞ւ ես լալիս: Միթե՞ վատ է, որ դու ինձ տեսնում ես և լսում:

ՓՈՔՐԻԿ ՊՈԼԻՔՍԵՆԵ.— Այո... Դու կլքես ինձ...

ՀԵԿՈՒԲԱ.— Հեղինե՛, խնդրում եմ այսուհետև Պոլիքսենեին հանգիստ թողեք: Նա դեռ շատ զգայուն է, որպեսզի դիպչի անզգայությունը, թեկուզ ձեր գեղեցիկ շրջազգեստի և գեղեցիկ ձայնի միջով:

ՀԵՂԻՆԵ.— Ես էլ եմ այդ կարծիքին: Խորհուրդ կտամ Անդրումաքեին, որ այդ Բանձնարարությունները ինքն անի: Համբուրի ինձ, Պոլիքսենե՛: Այս երեկո ես մեկնում եմ, քանի որ դու այդպես ես ուզում:

ՓՈՔՐԻԿ ՊՈԼԻՔՍԵՆԵ.— Մի՛ գնացեք, մի՛ գնացեք:

ՀԵՂԻՆԵ.— Կեցցե՛ս: Ահա խելոքացար...

ՀԵԿՈՒԲԱ.— Ձե՛ս գալիս, Անդրումաքե՛:

ԱՆԴՐՈՄԱՔԵ.— Ոչ, ես մնում եմ:

## ՏԵՍԱՐԱՆ ՌԻՓԵՐՈՐԴ

### ՀԵՂԻՆԵ ԱՆԴՐՈՄԱՔԵ

ՀԵՂԻՆԵ.— Բացատրություն՞ն եք ուզում:

ԱՆԴՐՈՄԱՔԵ.— Կարծում եմ, որ պետք է:

ՀԵՂԻՆԵ.— Ձե՛ք լսում, ինչպես են այնտեղ բոլորը վիճում և գոռում: Այդքանը քի՛չ է: Ուզում եք, որ հարսնե՛րն էլ բացատրվեն: Ինչի՞ մասին կարող ենք խոսել, երբ ես գնում եմ:

ԱՆԴՐՈՄԱՔԵ.— Գնում եք դուք, թե՛ ոչ, հարցը դրանում չէ, Հեղինե՛:

ՀԵՂԻՆԵ.— Այդ մասին Հեկտորին ասեք: Նրա գործը կհեշտացնեք:

ԱՆԴՐՈՄԱՔԵ.— Այո, Հեկտորը կառչել է ձեր մեկնելու գաղափարից: Նա էլ մյուս տղամարդկանց պես է: Նրանք վազում են նապաստակի ետևից և բաց են թողնում թփի տակ թաքնված հովազին: Այսպես կարող են որս անել միայն տղամարդիկ, բայց ոչ աստվածները:

ՀԵՂԻՆԵ.— Եթե դուք գտել եք, թե ինչ են ուզում աստվածները այս ամբողջ պատմության մեջ, շնորհավորում եմ ձեզ:

ԱՆԴՐՈՄԱՔԵ.— Ես չգիտեմ աստվածները որևէ բան ուզում են, թե՛ ոչ: Բայց ամբողջ աշխարհը ինչ-որ բան է ուզում: Այս առավոտից սկսած, ինձ թվում է, թե բոլորը ինչ-որ բան են պահանջում, գոռում, խնդրում, մարդիկ, անասունները, բույսերը... Մի՞նչն անգամ երեխան, որն իմ մեջ է...

ՀԵՂԻՆԵ.— Իսկ ի՞նչ են պահանջում:

ԱՆԴՐՈՄԱՔԵ.— Որ դուք սիրեք Պարիսին:

ՀԵՂԻՆԵ.— Եթե նրանք գիտեն, որ ես չեմ սիրում Պարիսին, ուրեմն ինձնից ավելի քաջատեղյակ են այդ հարցում:

ԱՆԴՐՈՄԱՔԵ.— Դուք նրան չեք սիրում: Գուցե կարողա՞նք սիրել:

Բայց այս պահիս թյուրիմացությամբ է, որ միասին եք ապրում:

ՀԵՂԻՆԵ.— Մենք իրար հետ ապրում ենք հաշտ և ուրախ: Մեր համաձայնության մեջ առաջմ թյուրիմացություններ չեմ տեսնում:

ԱՆԴՐՈՄԱՔԵ.— Դուք նրան չեք սիրում: Մերը միայն համաձայնությունն չէ: Իրար սիրող ամուսինների կյանքը սառնասրտության անդադար կորուստ է: Իսկական և կեղծ ամուսինները միևնույն օժիտը ունեն՝ ամուսնության առաջին օրվանից եկող անհամաձայնությունը: Հեկտորը իմ հակադրությունն է: Իմ հակումներից ոչ մեկը չունի: Մեր օրը անցնում է փոխադարձ հաղթանակներով կամ փոխադարձ ճահատակումներով: Սիրող ամուսինների դեմքը ժպտուն չի լինում:

ՀԵՂԻՆԵ.— Եթե Պարիսին մոտենալիս ես կապարագույն լինեի, իսկ աչքերս սպիտակ, ձեռքերս խոնավ, ի՞նչ է, կարծում եք, որ Մենելայնուք պիտի հիանար, իսկ հույները հրճվեի՞ն:

ԱՆԴՐՈՄԱՔԵ.— Ծառ քիչ նշանակություն կունենար, թե ինչ կմտածեին հույները:

ՀԵՂԻՆԵ.— Եվ պատերազմը չէ՞ր լինի:

ԱՆԴՐՈՄԱՔԵ.— Իսկապես, հնարավոր է, որ չլիներ: Եթե իրար սիրելու լինեիք, հնարավոր է, որ սերը օգնության կանչեր իր համարժեք զգացումների՝ վեհանձնություն, խելք... Ոչ ոք, նույնիսկ բախտը, թեթև սրտով չի հարձակվում կրքի վրա... Եվ եթե նույնիսկ դա տեղի ունենա, ոչինչ չես կարող անել:

ՀԵՂԻՆԵ.— Դա, իհարկե, միևնույն պատերազմը չի լինի:

ԱՆԴՐՈՄԱՔԵ.— Օ՛, ո՛չ, Հեղինե՛: Դու շատ լավ զգում ես, թե ինչպիսին կլինի այդ պայքարը: Ծակատագիրը այնքան էլ հոգ չի տանի մի հասարակ կովի համար: Նա ուզում է պատերազմի վրա մեր ցեղերի, մեր ժողովուրդների, մեր տրամաբանության ապագան կառուցել: Եվ եթե մեր գաղափարները և մեր ապագան պիտի հիմնվեն իրար սիրող կնոջ և տղամարդու պատմության վրա, դա այնքան էլ վատ չէ: Բայց ճակատագիրը չի տեսնում, որ ձեր ամուսնությունը կեղծ է... Մտածե՛լ միայն, որ պիտի գնանք տառապելու, մեռնելու հանուն կեղծ սիրո, որ դարերի փայլը և պատուհասները, որ պատմությունը, սովորույթները և միտքը պիտի հիսնվեն իրար չսիրող երկու էակների արկածի վրա, ահա սա է սոսկալին:

ՀԵՂԻՆԵ.— Եթե բոլորը հավատում են, որ մենք իրար սիրում ենք, ուրեմն այդպես է:

ԱՆԴՐՈՄԱՔԵ.— Նրանք չեն հավատում: Բայց ոչ ոք չի խոստովանի, թե չի հավատում: Պատերազմի մոտենալուն հետ, մարդիկ նոր քրտինքով են ծածկվում, բոլոր երևույթներին նոր փայլ է պատում՝ կեղծիքը: Բոլորը ստում են: Մեր ծերերը գեղեցկությունը չեն պաշտում, նրանք իրենց անձն են պաշտում, նրանք այլանդակն են պաշտում: Եվ հույների ցասումն է կեղծ: Հույները թքած են ունեցել, թե դուք ինչով կզբաղվեք Պարիսի հետ: Եվ նրանց նավերը, որ եկել են, դրոշակ պարզել և հիմներ են երգում, դա էլ ծովի կեղծիքն է: Եվ իմ որդուս և Հեկտորի կյանքը դառնալու է կեղծիքի և խաբերայության խաղի ստարկա, դա զարհուրելի է:

ՀԵՂԻՆԵ.— Հետո՞:

ԱՆԴՐՈՄԱՔԵ.— Հետո այն, որ ես ձեզ աղաչում եմ, Հեղինե՛: Տեսնում եք, ես գրկել եմ ձեզ, կարծես սեր եմ հայցում: Սիրեցեք Պարիսին: Կամ էլ ասեք, որ ես սխալվում եմ: Ասեք, որ դուք ինքնասպան կլինեք, եթե նա մահանա: Որ դուք համաձայն եք այլանդակվել, միայն թե նա չսպանվի... Այդ ժամանակ պատերազմը թեպետ պատուհաս կմնա, բայց գոնե անարդար: Ես կաշխատեմ այն հանդուրժել:

ՀԵՂԻՆԵ.— Սիրելի Անդրոմաքե: Դա այդքան պարզ չէ: Խոստովանում եմ, որ անքուն գիշերներ չեմ անցկացնում մարդկության ճակատագրի մասին մտածելիս, բայց շարունակ ինձ թվացել է, թե մարդկությունը բաժանվում է երկու մասի: Մի մասը, եթե կուզեք, մարդկության միսն է ուտում, մյուս մասը մարդկության կարգուկանոնը և ընթացքն է որոշում: Առաջինները ծիծաղում են, լալիս և գեղձերի սեկրեցիա ունեն: Մյուսներն ապրում են շարժումով, կեցվածքով, հայացքով: Եթե փորձեք նրանց ստիպել դառնալ մի տեսակ, ոչինչ չի ստացվի: Մարդկությունը իր աստղերին նույնքան է պարտական, որքան նահատակներին:

ԱՆԴՐՈՄԱՔԵ.— Հեղինե՛:

ՀԵՂԻՆԵ.— Իմիջիպալոց, դուք շատ դժվարահաճ եք... Ես գտնում եմ, որ իմ սերը այնքան էլ վատը չէ: Նա ինձ դուր է գալիս: Իհարկե, իմ երիկամներին կամ փայծաղին չի ազդում, երբ Պարիսը ինձ լքում է, որպեսզի գնա գնդակ խաղալ կամ օձաձուկ որսալ: Ես դառուսալարտված եմ նրա կողմից, նրանից մազնիսված: Մազնիսացումը նույնպես սեր է, ավելին, քան հեգիների միաձուլումը: Դա ավելի հնազույց և բարեբեր կիրք է, քան այն մյուսը, որն արտահայտվում է արցունքից կարմրած աչքերով և ցուցադրվում ջերմ հայտններով: Այդ սիրո մեջ ես հիանալի եմ զգում, ինչպես

աստղը համաստեղության մեջ: Ես այնտեղ մագլցում եմ վեր, շող-  
շողում, դա իմ շունչ առնելու և ամրապնդվելու միջոցն է: Եվ ես  
շատ լավ տեսնում եմ որդիներին, որոնք պիտի ծնվեն այդ սի-  
րուց. բարձրահասակ, պայծառ էակներ, որոնք պիտի իսկույն  
տարբերվեն մյուսներից, որոնք պիտի ունենան երկար մատներ և  
կարճ քիթ: Ինչպիսի՞ն կլինեն նրանք, եթե այդ սիրո մեջ կաթօց-  
նեմ խանդ, քնքշանք և անհանգստություն: Հիմա աշխատիր այն-  
քան նյարդային է, ինքներդ եք տեսնում:

ԱՆԴՐՈՄԱՔԵ.— Խիղճ կաթեցրեք, Հեղինե՛: Հիմա դա միակ բանն  
է, որ շատ անհրաժեշտ է աշխարհին:

ՀԵՂԻՆԵ.— Ահա՛, պետք է սպասեիր այդ բառին, արդեն սավեց:

ԱՆԴՐՈՄԱՔԵ.— Ո՞ր բառը:

ՀԵՂԻՆԵ.— «Խիղճ» բառը: Ուրիշին ասեք այն: Ես շատ թույլ եմ խղ-  
ճահարության մեջ:

ԱՆԴՐՈՄԱՔԵ.— Որովհետև չգիտեք, թե ինչ է դժբախտությունը:

ՀԵՂԻՆԵ.— Ես շատ լավ գիտեմ: Ես դժբախտներին գիտեմ: Եվ մենք  
երկուսով՝ դժբախտությունն ու ես, շատ լավ մտերիմներ ենք: Դեռ  
երեխա ժամանակներից ես օրերս անց էի կացնում պալատին  
կաած խրճիթներում, ձկնորսների երեխաների հետ թռչունների  
բներ էինք քանդում և խնամում: Ես ծնվել եմ թռչունից, երևի  
դրանից է այդ կիրքը: Եվ մարդկային մարմնի բոլոր ցավերը, որ-  
քանով որ նրանք կապ ունեն թռչունների հետ, մանրամասնորեն  
ծանոթ են ինձ. առավոտ շուտ, տեղատվության պահին, ծովա-  
փին ընկած հորս մարմինը՝ սառնությունից ձգված, հսկա և սար-  
սըռայի գլխով, քանի որ ճայերը հավաքվել էին աչքերը կոցելու,  
և մորս մարմինը՝ հարբած, մեր ձեռնասուն սարչակին ողջ-ողջ  
փետելիս, և քրոջս մարմինը, ցանկապատի տակ, սոխակի բնի  
մոտ, ստրուկի հետ անսպասելի բռնված: Եվ իմ տձև ընկերուհին,  
դեղձանիկի հետ, և իմ թոքախտավոր ընկերուհին տատրակի հետ:  
Եվ չնայած այն թևերին, որ ես շնորհում էի մարդկային ցեղին,  
այնուամենայնիվ, ես նրանց տեսնում էի գետնաքարշ, անմաքուր  
և թշվառ: Բայց երբեք ինձ չի թվացել, թե մարդկությունը խղճա-  
հարություն է պահանջում:

ԱՆԴՐՈՄԱՔԵ.— Որովհետև դուք նրանց արժանի եք համարել միայն  
արհամարհանքի:

ՀԵՂԻՆԵ.— Դժվար է ասել: Դա գուցե զալիս է նրանից, որ այդ բոլոր  
դժբախտներին ինձ հավասար եմ համարում, նրանից, որ ես նր-  
բանց ընդունում եմ, նրանից, որ իմ առողջությունը, իմ գեղեցկու-

թյունը և իմ փառքը նրանց թշվառությունից բարձր չեմ դասում:  
Սա գուցե գալիս է եղբայրությունից:

ԱՆԴՐՈՄԱՔԵ.— Դուք հայհոյում եք, Հեղինե՛:

ՀԵՂԻՆԵ.— Մարդիկ խղճում են իրար այնպես, ինչպես իրենք իրենց կխղճային: Դժբախտությունը և այլանդակությունը հայելիներ են, որոնք մարդիկ տանել չեն կարող: Ես ինձ բոլորովին չեմ խղճում: Դուք կհամոզվեք դրանում, եթե պատերազմ պայթի: Սովը և ցավը առանց տառապելու կտանեն, ձեզանից լավ: Վիրավորանքը նույնպես: Մխալվում եք, եթե կարծում եք, թե փողոցով քայլելիս Տրոյայի կանանց ասածները չեմ լսում: Նրանք ինձ անվանում են բոզ: Նրանք ասում են, որ դեռ լույսը չբացված աչքերս արդեն խումար են: Չգիտեմ, ճիշտ է, թե ոչ, բայց ինձ համար միևնույն է, միևնույն:

ԱՆԴՐՈՄԱՔԵ.— Կանգ առ, Հեղինե՛:

ՀԵՂԻՆԵ.— Եվ սխալվում եք, եթե կարծում եք, թե իմ աչքը, գունավոր դրվագների իմ հավաքածոյում, ինչպես ձեր ամուսինը կասեր, երբեմն չի տեսնում ծերացած, լիկած, ատամնաթափ, խոհանոցում նստած քաղցրավենիք լպստող Հեղինեին: Եվ ինչպիսի վառ սպիտակով պիտի փայլի դեմքիս քսած ներկը: Միայն հաղարջը կարող է աչքբան կարմիր լինել: Եվ ինչքան գունագեղ է, հաստատուն և որոշակի... Ինձ համար բոլորովին միևնույն է:

ԱՆԴՐՈՄԱՔԵ.— Ես կորած եմ...

ՀԵՂԻՆԵ.— Ինչո՞ւ: Եթե պատերազմը արդարացնելու համար մեկ անբասիր զույգ է պետք, դուք և Հեկտորը միշտ կաք, Անդրոմաքե՛:

### ՏԵՍԱՊԱՆ ԻՆԵՆԲՈՐԴ

ՀԵՂԻՆԵ, ԱՆԴՐՈՄԱՔԵ ԱՅՍՏՅԱ, ՄԵՐ ՀԵԿՏՈՐ

Ա.ՅԱՔԱ.— Ո՞ր է նա: Որտե՞ղ է թաքնվում: Վախկո՞տ: Տրոյացի՞:

Հ.ԿՏՈՐ.— Ո՞ւմ եք փնտրում:

Ա.ՅԱՔԱ.— Ես փնտրում եմ Պարիսին...

Հ.ԿՏՈՐ.— Ես նրա եղբայրն եմ:

Ա.ՅԱՔԱ.— Հրաշալի՛ ընտանիք է: Ես Աչաքսն եմ: Դու ո՞վ ես:

Հ.ԿՏՈՐ.— Ինձ կոչում են Հեկտոր:

Ա.ՅԱՔԱ.— Իսկ ես քեզ կոչում եմ պոռնիկի աներձագ:

ՀԵԿՏՈՐ.— Ինչպես տեսնում եմ, հույները միջնորդներ են ուղարկել:

Ի՞նչ եք ուզում:

ԱՅԱՔԱ.— Պատերա՛զմ:

ՀԵԿՏՈՐ.— Անհույս է: Ինչո՞ւ եք պատերազմ ուզում:

ԱՅԱՔԱ.— Եղբայրդ առևանգել է Հեղինեն:

ՀԵԿՏՈՐ.— Որքան որ ինձ հայտնի է, Հեղինեն համաձայն է եղել:

ԱՅԱՔԱ.— Հույն կինը ինչ ուզում անում է: Նա քեզանից թույլտվու-  
թյուն չի խնդրելու: Դա պատերազմի առիթ է:

ՀԵԿՏՈՐ.— Մենք կարող ենք ներողություն խնդրել:

ԱՅԱՔԱ.— Տրոյացիք ներողություն չեն խնդրում: Մինչև պատերազմ  
չհայտարարեք, այստեղից չենք գնա:

ՀԵԿՏՈՐ.— Ինքների հայտարարեք:

ԱՅԱՔԱ.— Ծատ լավ, հենց այս երեկո կհայտարարենք:

ՀԵԿՏՈՐ.— Ստում եք: Դուք չեք հայտարարի: Եթե մենք մեղավոր  
չլինենք, արխիպելագի ոչ մի կղզի ձեզ չի հետևի... Իսկ մենք  
մեղավոր չենք լինի:

ԱՅԱՔԱ.— Դու ինքդ, անձամբ չես հայտարարի՞, եթե ես հայտարար-  
եմ, որ դու վախկոտ ես:

ՀԵԿՏՈՐ.— Դա մի տեսակ հայտարարություն է, որին ես համաձայն  
եմ:

ԱՅԱՔԱ.— Ես դեռ չեի տեսել, որ զինվորական բնագոր այս աստի-  
ճան բացակայի... Եթե քեզ ասեմ, թե ամբողջ Հունաստանը ինչ  
է մտածում Տրոյաի մասին, որ Տրոյան անառակների և տխար-  
ների երկիր է...

ՀԵԿՏՈՐ.— Տրոյան խամառների երկիր է: Դուք պատերազմ չեք ստա-  
նա:

ԱՅԱՔԱ.— Իսկ եթե թքե՞մ Տրոյաի վրա:

ՀԵԿՏՈՐ.— Թքեք:

ԱՅԱՔԱ.— Իսկ եթե քեզ՝ երկրի տիրակալին սպռակե՞մ...

ՀԵԿՏՈՐ.— Փորձեք:

ԱՅԱՔԱ.— Եթե ամբողջ դեմքովդ մեկ ճրա ունայնության և սուտ պատ-  
վի խորհրդանիշը խփե՞մ:

ՀԵԿՏՈՐ.— Խփեք...

ԱՅԱՔԱ (ապտակում է նրան).— Ահա՛... Եթե Տիկի՞նը ձեր կինն է,  
կարող է ձեզնով հպարտ լինել:

ՀԵԿՏՈՐ.— Ես ճանաչում եմ նրան... Նա հպարտ է:



## ՏԵՍԱՊԱՆ ՏԱՄՆԵՐՅՐԳ

ՆՈՒՅՆՔ, ԴԵՄՈՎՈՍ

ԴԵՄՈՎՈՍ.— Այս ի՞նչ ժխոր է: Ի՞նչ է ուզում այդ գինովը, Հեկտոր:

ՀԵԿՏՈՐ.— Նա ոչինչ չի ուզում: Ինչ որ ուզում էր, ստացավ:

ԴԵՄՈՎՈՍ.— Ի՞նչ է կատարվում, Անդրոմաքե՛:

ԱՆԴՐՈՄԱՔԵ.— Ոչինչ:

ԱՅԱՔԱ.— Երիցս ոչինչ: Մի հույն ապտակեց Հեկտորին և Հեկտորը կույ տվեց ապտակը:

ԴԵՄՈՎՈՍ.— Ծի՞շտ է, Հեկտոր:

ՀԵԿՏՈՐ.— Բացարձակ սուտ է, այդպես չէ՞, Հեղինե՛:

ՀԵՂԻՆԵ.— Հույները շատ սուտասան են: Հատկապես տղամարդիկ:

ԱՅԱՔԱ.— Իհարկե, դա բնականից է, որ նրա մի այտը մյուսից ավելի կարմիր է:

ՀԵԿՏՈՐ.— Այո, ես այս կողմից եմ լավ զգում:

ԴԵՄՈՎՈՍ.— Ասա՛ ճշմարտությունը, Հեկտոր: Նա համարձակվե՛լ է ձեռք բարձրացնել քեզ վրա:

ՀԵԿՏՈՐ.— Դա իմ գործն է:

ԴԵՄՈՎՈՍ.— Դա պատերազմի գործն է: Քանի որ դու Տրոյայի մարմնավորումն ես:

ԱՅԱՔԱ.— Ծի՞շտ է: Մարմնավորումներին չեն ապտակում:

ԴԵՄՈՎՈՍ.— Ո՞վ ես դու, վայրենի՛: Ես Դեմոկոսն եմ, Աքիլաոսի երկրորդ որդին:

ԱՅԱՔԱ.— Աքիլաոսի երկրորդ որդի՞ն: Հիանալի է: Ասա ինձ, Աքիլաոսի երկրորդ որդուն ապտակելը նույնքան կարևո՞ր է, որքան Հեկտորին ապտակելը:

ԴԵՄՈՎՈՍ.— Երկուսն էլ կարևոր են, հարբեցո՛ղ: Ես սևնատի նախագահն եմ: Եթե դու պատերազմ ես ուզում, պատերազմ մինչ ի մահ, մնում է, որ փորձես:

ԱՅԱՔԱ.— Ահա՛, փորձում եմ:

**Ապտակում է Դեմոկոսին:**

ԴԵՄՈՎՈՍ.— Տրոյացի՛ք: Զինվորներ: Օգնություն:

ՀԵԿՏՈՐ.— Լոհ՛ր, Դեմոկո՛ս:

ԴԵՄՈՎՈՍ.— Ի զե՛ն: Տրոյան անարգում են: Վրե՛ծ:

ՀԵԿՏՈՐ.— Ասում եմ, լոհ՛ր:

ԴԵՄՈՎՈՍ.— Ես կգոռա՛մ... ես ոտքի կհանեմ ամբողջ քաղաքը:

ՀԵԿՏՈՐ.— Լոհ՛ր... Կամ ես կապտակեմ:

ԴԵՄՈԿՈՍ.— Պրիամո՛ւ, Անքի՛ւ: Եկե՛ք Տրոյայի ամոթը տեսնելու՝  
հանձինս Հեկտորի:

ՀԵԿՏՈՐ.— Դե տե՛ս:

**Հեկտորը ապտակում է Դեմոկոսին, Այաքսը հռհռում է:**

### ՅԵՍԱՐԱՆ ՏԱՍՆՄԵԿԵՐՈՐԴ

#### ԿՈՒՅՆԲ

**Տեսարանի ընթացքում Պրիամոսը և քաղաքի մեծամեծները հավաքվում են մուտքի առջև, որտեղից պետք է մտնի Ուլիսը:**

ՊՐԻԱՄՈՍ.— Այս ի՞նչ աղաղակներ են, Դեմոկո՛ւ:

ԴԵՄՈԿՈՍ.— Ինձ ապտակեցին:

ԱՅԱՔՍ.— Գնա բողոքիր Աքիքասոսին:

ՊՐԻԱՄՈՍ.— Քեզ ո՞վ ապտակեց:

ԴԵՄՈԿՈՍ.— Հեկտորը, Այաքսը, Հեկտորը, Այաքսը:

ՊԱՐԻՍ.— Ինչե՛ր է խոսում, խենթացել է:

ՀԵԿՏՈՐ.— Ոչ ոք նրան չի ապտակել, այդպես չէ՞, Հեղինե՛:

ՀԵՂԻՆԵ.— Ես շատ ուշադիր նայում էի, բայց ոչինչ չտեսա:

ԱՅԱՔՍ.— Եվ հետո, նրա երկու այտերն էլ մի գույնի են:

ՊԱՐԻՍ.— Պոետները շատ հաճախ անիմաստ բաներ են անում և ասում: Նրանք դա անվանում են ոգևորություն: Նա այդ ոգևորությունից մեզ համար ազգային երգ է հորինելու:

ԴԵՄՈԿՈՍ.— Դու դրա Բամար կվճարես ինձ, Հեկտո՛ր:

ՉՈՒՅՆԵՐ.— Ուլի՛սը... Ահա Ուլիսը...

**Այաքսը բարեկամաբար մոտենում է Հեկտորին:**

ԱՅԱՔՍ.— Կեցցե՛ս: Խիզա՛խն ես: Ազնիվ արտյան: Հոյակապ ապտակ էր...

ՀԵԿՏՈՐ.— Ավելի՞ն չէի կարող անել:

ԱՅԱՔՍ.— Հիանալի ձև էր: Արմունկը աճշարժ, ավել թուլացրած, այդ բոլորին ավելացրած դաստակի զորությունը: Քո ապտակը պետք է որ ավելի զորեղ լինի, քան իմը:

ՀԵԿՏՈՐ.— Կասկածում եմ:

ԱՅԱՔՍ.— Դու պետք է որ հիանալի նիզակ նետես:

ՀԵԿՏՈՐ.— Հարյուր մետր:

ԱՅԱՔՍ.— Խոնարհվում եմ: Սիրելի՛ Հեկտոր, ների՛ր ինձ: Ես ետ եմ վերցնում իմ ապառնալիքները: Ես ետ եմ վերցնում իմ ապտակը:

Մենք ընդհանուր թշնամիներ ունենք՝ Աքիքաուսի որդիք: Ես չեմ կուլի նրանց դեմ, ովքեր ինձ պես թշնամի են Աքիքաուսի որդիներին: Այլևս չխոսենք պատերազմից: Ես չգիտեմ, թե Ուլիսն ինչ կասի, բայց հույս դիր ինձ վրա: Ես այս պատմությունն ան կկարգավորեմ:

**Նա գնում է Ուլիսին ընդառաջ, որի հետ քիչ հետո վերադառնում է:**

**ԱՆԴՐՈՄԱՔԵ.**— Ես քեզ սիրում եմ, Հեկտոր՛ր:

**ՀԵԿՏՈՐ (այտը ցույց տալով).**— Այո, բայց ինձ դեռ մի համբուրիր, այո՞:

**ԱՆԴՐՈՄԱՔԵ.**— Դու այս ճակատամարտն էլ շահեցիր, վատահ եղիր:

**ՀԵԿՏՈՐ.**— Ես շահում եմ մարտը, բայց ամեն մի հաղթանակի հետ նվազում է խաղադրամը:

### ՏԵՍԱՐԱՆ ՏԱՄՆԵՊԿՈՒԵՐՈՐԳ

ՊՐԻԱՄՈՍ, ՀԵԿՈՒԲԱ, ՏՐՈՅԱՑԻԲ ՈՒԻՍ, ԱՅԱՔՍ և Երանց շռախումբը:

**ՈՒԼԻՍ.**— Կարծում եմ, Պրիամոսը և Հեկտորն են:

**ՊՐԻԱՄՈՍ.**— Հենց նրանք են, որ կան: Իսկ նրանց ետև, Տրոյան է, Տրոյայի սրվարձանները, Տրոյայի դաշտերը, Հելեսպոնտեսը<sup>21</sup>, իսկ այն երկիրը՝ սեղմված բուռնցքի պես, Փոյուգիան<sup>22</sup>: Իսկ դուք Ուլի՛սն եք:

**ՈՒԼԻՍ.**— Ես Ուլիսն եմ:

**ՊՐԻԱՄՈՍ.**— Ահա և Անքիսը<sup>23</sup>: Իսկ նրա ետևը Թրակիան<sup>24</sup> է, Պոնտոսը<sup>25</sup>, իսկ այս բաց ձեռքը Տավրիդն<sup>26</sup> է:

**ՈՒԼԻՍ.**— Դիվանագիտական խոսակցության համար ահագին ժողովուրդ կա:

**ՊՐԻԱՄՈՍ.**— Ահա և Հեղինեն:

**ՈՒԼԻՍ.**— Բարև, թագուհի՛:

**ՀԵՂԻՆԵ.**— Ես այստեղ ջահելացել եմ: Ես հիմա ընդամենը արքայադուստր եմ:

**ՊՐԻԱՄՈՍ.**— Լսում ենք ձեզ:

**ԱՅԱՔՍ.**— Ուլի՛ս, դու Պրիամոսի հետ լռասիր, իսկ ես Հեկտորի հետ կխոսեմ:

**ՈՒԼԻՍ.**— Պրիամո՛ս, մենք եկել ենք Հեղինեին տանելու:

- ԱՅԱՔԱ.— Դու նրան հասկանում ես, չէ՞, Հեկտոր: Այդպես չի կարելի:
- ՈՒԼԻՍ.— Հույները և Մենելայոսը վրեժ են գոռում:
- ԱՅԱՔԱ.— Եթե խաբված ամուսինները վրեժ չգոռան, ուրիշ ի՞նչ կմընա նրանց:
- ՈՒԼԻՍ.— Հեղինեին հենց այս պահիս մեզ պետք է տաք: Այլապես պատերազմ կպահանջենք:
- ԱՅԱՔԱ.— Պետք է հրաժեշտ տալ:
- ՀԵԿՏՈՐ.— Ա՛յս է ամբողջը:
- ՈՒԼԻՍ.— Այս է ամբողջը:
- ԱՅԱՔԱ.— Տեսնո՞ւմ ես, Հեկտոր, երկար չտևեց:
- ՀԵԿՏՈՐ.— Ուրեմն, եթե Հեղինեին վերադարձնենք, դուք մեզ համար խաղաղություն կապահովե՞ք:
- ԱՅԱՔԱ.— Եվ հանգստություն:
- ՀԵԿՏՈՐ.— Եթե Հեղինեն մեկ ժամ հետո նալ նստի, գործը վերջացա՞ծ է:
- ԱՅԱՔԱ.— Եվ փակված:
- ՀԵԿՏՈՐ.— Ես կարծում եմ, որ մենք համաձայնության կգանք, այնպես չէ՞, Հեղինե՛:
- ՀԵՂԻՆԵ.— Այո, ես էլ եմ կարծում:
- ՈՒԼԻՍ.— Չլինի՞ ուզում եք ասել, թե Հեղինեին կվերադարձնեք:
- ՀԵԿՏՈՐ.— Ծիշտ այդպես: Հեղինեն պատրաստ է:
- ԱՅԱՔԱ.— Իհարկե, այստեղից մեկնելիս նա ավելի մեծ թեո կտանի, քան այստեղ գալուց էր:
- ՀԵԿՏՈՐ.— Հեղինեին վերադարձնում ենք և դուք երաշխավորում եք խաղաղությունը: Այլևս ոչ մի փոխհատուցում, ոչ մի վրեժխնդրություն:
- ԱՅԱՔԱ.— Մի կին կորցրինք և հենց նույն կնոջը գտանք: Հիանալի է, չէ՞, Ուլի՛ս:
- ՈՒԼԻՍ.— Ներողություն: Ես ոչինչ չեմ երաշխավորում: Որպեսզի մենք հրաժարվենք փոխհատուցումներից, պետք է որ փոխհատուցման պատրվակ չլինի: Պետք է որ Մենելայոսը Հեղինեին այնպիսի գտնի, որպիսին առևանգելիս էր:
- ՀԵԿՏՈՐ.— Իսկ ինչի՞ց պիտի իմանա փոփոխությունը:
- ՈՒԼԻՍ.— Համաշխարհային սկանդալի մեջ քաշված ամուսինը սուր աչք է ձեռք բերում: Պետք է որ Պարիսը հարգանք տաժեր Հեղինեի հանդեպ: Եվ սա այն դեպքը չէ...
- ԱՄԲՈՒՄ.— Օ՛, ո՛չ, սա այն դեպքը չէ:

ՄԻ ԶԱՅՆ.— Ոչ այնքան:

ՀԵԿՏՈՐ.— Իսկ եթե սա այն դեպքը չէ՞:

ՈՒԼԻՍ.— Ի՞նչ եք ուզում ասել, Հեկտոր:

ՀԵԿՏՈՐ.— Պարիսը Հեղինեին չի դիպել: Երկուսն էլ ինձ խոստովանեցին:

ՈՒԼԻՍ.— Հապա սա ի՞նչ պատմությունն էր:

ՀԵԿՏՈՐ.— Իսկական պատմություն, այնպես չէ՞, Հեղինե՛:

ՀԵՂԻՆԵ.— Իսկ ի՞նչ մի արտակարգ բան կա այդ պատմության մեջ:

ՄԻ ԶԱՅՆ.— Սոսկալի՛ է: Մենք անպատվա՛ծ ենք:

ՀԵԿՏՈՐ.— Ինչո՞ւ եք ծիծաղում, Ուլի՛ս: Դուք Հեղինեի վրա պարտքի թերացման որևէ հե՞տք եք գտնում:

ՈՒԼԻՍ.— Ես այդ հետքը չեմ որոնում: Զուրը բադի վրա ավելի շատ հետք է թողնում, քան կեղտը կնոջ վրա:

ՊԱՐԻՍ.— Դու խոսում ես թագուհու մասին:

ՈՒԼԻՍ.— Իհարկե, թագուհիները բացառություն են... Ուրեմն, Պարի՛ս, դուք առևանգել եք այս թագուհուն, դուք նրան առևանգել եք մերկ վիճակում, կարծում եմ, որ դուք զենք ու զրահով ջուրը չէիք մտել: Եվ նա ձեզ չհրապուրե՞ց, ոչ մի ցանկություն չունեցա՞ք նրան տիրելու:

ՊԱՐԻՍ.— Մերկ թագուհին ծածկված է արժանապատվությամբ:

ՀԵՂԻՆԵ.— Միայն թե այդ արժանապատվությունը չպետք է հագից հանի:

ՈՒԼԻՍ.— Որքա՞ն տևեց ճամփորդությունը: Իմ նավերով ես երեք օրում եկա, մինչդեռ նրանք ավելի արագընթաց են, քան ձերը:

ԶԱՅՆԵՐ.— Ինչպիսի՛ անհամարժեքի անարգանք տրոյական նավատորմի հասցեին:

ՄԻ ԶԱՅՆ.— Ձեր քամի՛ներն են արագընթաց, բայց ոչ նավերը:

ՈՒԼԻՍ.— Ենթադրե՛նք երեք օր է, եթե շատ եք ուզում: Այդ երեք օրվա ընթացքում թագուհին որտե՞ղ էր:

ՊԱՐԻՍ.— Պատկած էր տախտակամածին:

ՈՒԼԻՍ.— Իսկ Պարի՞սը, նստել էր կայմի վրա՞:

ՀԵՂԻՆԵ.— Պատկած էր կողքիս:

ՈՒԼԻՍ.— Նա ձեր կողքին պսակել կարդո՞ւմ էր, թե՞ ոսկի ձկնիկ էր բռնում:

ՀԵՂԻՆԵ.— Նա երբեմն ինձ զով էր անում:

ՈՒԼԻՍ.— Առանց ձեզ դիպչելո՞ւ...

ՀԵՂԻՆԵ.— Երկրորդ օրը նա ձեռքս համբուրեց:

ՈՒԼԻՍ.— Ձե՞տքը, հասկանալի է, կրքի պոռթկում:

ՀԵՂԻՆԵ.— Ես արժանի չհամարեցի նկատել այդ:

ՈՒԼԻՍ.— Նալի տատանումները ձեզ իրար մոտ չէի՞նք բերում... Կարծում եմ, որ տրոյական նավատորմը անարգած չէմ լինի, եթե ասեմ, որ նրանց նավերը ճոճվում են...

ՄԻ ԶԱՅՆ.— Նրանք ավելի քիչ են ճոճվում, քան հունական նավերը:

ԱՅԱԲՍ.— Հունական նավերը ճոճվո՞ւմ են: Եթե մեր նավերը ճոճվում են, ապա դա նրանից է, որ նրանց առաջքը բարձր է, իսկ ետևը իջած...

ՄԻ ԶԱՅՆ.— Օ՛, այո՛, տնկած քիթ և տափակ հետույք, դա, իսկապես, հույներին հատուկ է...

ՈՒԼԻՍ.— Իսկ երեք գիշերները: Ձեր վրա երեք անգամ աստղերը հայտնվեցին և անհետացան: Այդ երեք գիշերներից ոչինչ չմընա՞ց ձեր մեջ, Հեղինե՛:

ՀԵՂԻՆԵ.— Այո... այո... Մոռացել էի, մի հիանալի գիտություն աստղերի մասին:

ՈՒԼԻՍ.— Երբ դուք քնած էիք, գուցե... նա ձեզ վերցրեց...

ՀԵՂԻՆԵ.— Ես նույնիսկ ճանճի տզզոցից եմ զարթնում...

ՀԵԿՏՈՐ.— Նրանք երկուսով կարող են ձեր Աֆրոդիտեի<sup>27</sup> արձանի առջև երդվել:

ՈՒԼԻՍ.— Ես նրանցից չեմ պահանջում: Ես Աֆրոդիտեին լավ գիտեմ: Նա հովանավորում է երդմնազանցներին... Այս տարօրինակ պատմությունը Արխիպելագոս տրոյացիների մասին եղած պատկերացումները ցրեց...

ՊԱՐԻՍ.— Իսկ Արխիպելագոս ի՞նչ պատկերացում կար տրոյացիների մասին:

ՈՒԼԻՍ.— Առևտրի մեջ նրանց համարում էին ավելի քիչ օժտված, քան մեզ՝ հույներին, բայց գեղեցկադեմ և անդիմադրելի: Եարունակեք ձեր խոստովանությունը, Պարի՛ս: Այդ փաստերը հետաքրքիր են ֆիզիոլոգիայի համար: Ի՞նչը ձեզ մղեց այդպես հարգելու Հեղինեին, երբ նա ամբողջովին ձեր գթությանն էր հանձնելու:

ՊԱՐԻՍ.— Ես... Ես նրան սիրում էի:

ՀԵՂԻՆԵ.— Եթե դուք չգիտեք, թե ինչ է սերը, Ուլի՛ս, մի՛ դիպչեք այդ նյութին:

ՈՒԼԻՍ.— Խոստովանեք, Հեղինե՛, որ դուք չէիք հետևի Պարիսին, եթե իմանայիք, որ տրոյացիք անգոր են...

ՄԻ ԶԱՅՆ.— Սա խայտառակությունն է:

ՄԻ ԶԱՅՆ.— Բերանը փակե՛ք:

ՄԻ ԶԱՅՆ.— Կնոջդ բե՛ր և դու կտեսնես:

ՄԻ ԶԱՅՆ.— Նաև տատիկի՛դ:

ՌԻԼԻՍ.— Ես սխալ արժամայտովեցի: Պարիսը, գեղեցիկ Պարիսն է անգոր...

ՄԻ ԶԱՅՆ.— Խոսելո՞ւ ես, թե՞ ոչ, Պարի՛ս: Թե՞ աշխարհով մեկ խայտառակելու ես մեզ:

ՊԱՐԻՍ.— Հեկտո՛ր, տես թե ինչ հիմար վիճակի մեջ եմ ընկել:

ՀԵԿՏՈՐ.— Ոչինչ, դա մեկ րոպեից ավելի չի տևի... Մնաս բարով, Հեղինե՛: Եվ թող առաքինությամբ այնքան հայտնի դառնաս, որքան որ թեթևամտությամբ էիր հայտնի...

ՀԵՂԻՆԵ.— Ես չեմ մտահոգվում: Ժամանակը մեզ միշտ արժանին է հատուցում:

ՌԻԼԻՍ.— Անգո՛ր Պարիս, լավ մականունն է... Դուք կարող եք նրան համբուրել, Հեղինե՛:

ՊԱՐԻՍ.— Հեկտո՛ր:

ՆԱՎԱՍԽ.— Մի՞թե այս խայտառակությունը սյիտի հանդերձեք, հրամանատար՛ր:

ՀԵԿՏՈՐ.— Լոի՛ր: Այստեղ ես եմ հրամայում:

ՆԱՎԱՍԽ.— Դուք վատ եք հրամայում: Մենք Պարիսի նախաստիճաններն ենք և մեզ այդքանը բավական է: Հիմա ձեզ կատեմ, թե՛ նա ինչ արեց ձեր թագուհու հետ...

ԶԱՅՆԵՐ.— Կեցցե՛ս: Խոսի՛ր:

ՆԱՎԱՍԽ.— Նա հանուն եղբոր հրամանի նահատակում է իջեմ: Ես հերթապահությունն էի անում տախտակամածի վրա և ամեն ինչ տեսա:

ՀԵԿՏՈՐ.— Դու սխալվել ես:

ՆԱՎԱՍԽ.— Մի՞թե կարծում եք, թե տրոյական նախաստու աչքը կսխալվի: Ես երեսուն քայլի վրա միաչքանի ճայերին եմ ջոկում: Արի մոտս, Օլպիդե՛ս: Նա կայմի վրա էր, բարձրից ամեն ինչ տեսավ: Իսկ ես մստանի աստիճանների տակից էի նայում: Թագուհին հենց նույն բարձրության վրա էր, ինչպես կատուն մահճակալի սոջև... Պատմե՛մ, տրոյացիք:

ՀԵԿՏՈՐ.— Լոի՛ր:

ԶԱՅՆԵՐ.— Խոսի՛ր, թո՛ղ խոսի:

ՆԱՎԱՍԽ.— Երկու րոպե չկար, ինչ նրանք տախտակամածին էին, ցի՛շտ է, Օլպիդե՛ս:

ՕՐԿԻՂԵՍ.— Պարիսը սպունգով մաքրեց թագուհուն և մազերի գիծը

ուղղեց: Իհարկե, հասկանալի է, որ այդ գիծը վերևից ես լավ էի տեսնում՝ ճակատից մինչև ծոծրակը:

ՆԱՎԱՍՏԻ.— Մեր երկուսից բացի, մնացած բոլորին հրամայեց իջնել նավամբար... Ըստ մեզ չէր նկատել...

ՕԼՊԻԴԵՍ.— Եվ սուսանց դեկտայանի, մեր նավը գնում էր ուղիղ դեպի հյուսիս: Քամի չկար, բայց առագաստները ուռած էին...

ՆԱՎԱՍՏԻ.— Եվ եթե իմ թաքստոցից ամբողջ օրը պետք է միայն մեկ մարմնի հատվածը տեսնեի, ապա ամբողջ օրը երկու մարմինների հատվածներ էի տեսնում. կարծես հաճարի հացի պատտոր ցորենի հացի վրա դրված լինեք... Հացի բոքոններ, որ եփվում էին, ուռչում: Իսկական հացի փուռ էր:

ՕԼՊԻԴԵՍ.— Իսկ ես վերևից, մեկ մարմինը ավելի հաճախ էի տեսնում, քան երկուսը, մեկ սպիտակը, ինչպես նավաստին ասաց, մեկ ոսկեգույնը: Չորս ութով և չորս ձեռքով...

ՆԱՎԱՍՏԻ.— Ահա՛ քեզ անգորություն: Իսկ հոգեկան սիրո և զեղումների մասին պատմիր, Օլպիդե՛ս, թե ինչ լսեցիր քո տակառից: Կնոջ բառերը ելնում են վեր, տղամարդկանցը տարածվում են գետնին: Ես կասեմ այն, ինչ ասաց Պարիսը...

ՕԼՊԻԴԵՍ.— Հեղինեն նրան անվանեց «իմ թոթակ», «իմ կատու»:

ՆԱՎԱՍՏԻ.— Պարիսն ասաց. «իմ կատվայուն», «իմ յագուար»: Նըրանք իրար փառաբանելիս, սեռերը խառնում էին: Դա քնքշանքից է, բոլորիս հայտնի է:

ՕԼՊԻԴԵՍ.— Դու իմ հաճարի ծառն ես, ասում էր Հեղինեն: Ես քեզ գրկում եմ ինչպես ծառ, ասում էր նա... Ծովի վրա միշտ ծառերի մասին են մտածում:

ՆԱՎԱՍՏԻ.— Դու իմ կեչին ես, ասում էր Պարիսը, իմ դողահար կեչին: «Կեչի» բառը ես լավ եմ հիշում: Դա ուսական ծառ է:

ՕԼՊԻԴԵՍ.— Եվ մինչև գիշեր, ստիպված էի մնալ կայմի վրա: Ես արդեն ծարավել էի և սովածացել այդ բարձունքում: Եվ նման բաներ...

ՆԱՎԱՍՏԻ.— Իսկ երբ նրանք դադարեցին գրկախառնվելը, սկսեցին լեզվի ծայրով իրար լիզել, որովհետև նրանց մարմինը աղով էր ծածկվել:

ՕԼՊԻԴԵՍ.— Իսկ երբ, վերջապես, ոտքի կանգնեցին, որ գնան քնելու, ճոճվում էին:

ՆԱՎԱՍՏԻ.— Ահա թե նա ինչ կաներ քո Պեկեյուպեի<sup>28</sup> հետ, այդ անգորը:

ԶԱՅՆԵՐ.— Կեցցե՛ս: Կեցցե՛ս:



ԿԱՆԱՑԻ ԶԱՅՆ.— Փա՛ոք Պարիսին:

ՄԻ ՈՒՐԱԽ ՄԱՐԴ.— Արժանին հատուցենք Պարիսին:

ՀԵԿՏՈՐ.— Նրանք խաբում են, չէ՞, Հեղինե՛:

ՈՒԼԻՍ.— Հեղինեն հմայված լսում է:

ՀԵՂԻՆԵ.— Ես մոռացել էի, որ խոսքն իմ մասին է: Այս մարդիկ համոզիչ են խոսում:

ՈՒԼԻՍ.— Կհամարձակվե՛ս ասել, թե՞ ստում են, Պարի՛ս:

ՊԱՐԻՍ.— Մանրուքների մեջ, աչո:

ՆԱՎԱՍԻ.— Ո՛չ մանրուքների, ո՛չ ամբողջության: Այնպես չէ՞, Օլպիդե՛ս: Դուք ուրանո՞ւմ եք ձեր սիրո խոսքերը: Դուք ժխտո՞ւմ եք կատվառյուծ բառը:

ՊԱՐԻՍ.— Ոչ հատկապես կատվառյուծ բառը...

ՆԱՎԱՍԻ.— Ուրեմն, կեչի բառը: Ինչպես տեսնում եմ, «դողահար կեչին» ձեզ դուր չի գալիս: Իսկապես, դուք այդ ասացիք: Ես երկվում եմ, որ դուք ասացիք և, իմիջիայլոց, կեչի բառից կարիք չկա կարմրելու: Ես Կասայից ծովի ափին, ձմեռը, ձյան վրա դողահար կեչիներ եմ տեսել: Նրա կեղևի սև օղակները կարծես դատարկության վրա ցրված լինեին, և նայողը զարմանում է, թե ինչի վրա են հեկվում ճյուղերը: Եվ ես կեչիներ տեսա Աստրախանի մոտ, նրանց սպիտակ պտերը նման էին սպիտակ սնկերի, և ճիշտ ջրի ափին, նրանք նույնքան գեղեցիկ էին, որքան լացող ոտիները: Եվ երբ սևագորշ, մեծ ագռավներ նստեցին ճյուղերին, ծառը դողաց, ճյուղերը ծովեցին, քիչ էր մնում ջարդվեին, և ես քար շարտեցի, մինչև որ ագռավները թռան, և այդ ժամանակ բոլոր տերևները խոսեցին և շնորհակալություն հայտնեցին ինձ: Եվ վերից ոսկեզօծ, տակից արծաթազօծ տերևները տեսնելուց, սիրտդ լցվում է քնքշանքով: Ես քիչ մնաց լաց լինեի, այնպես չէ՞, Օլպիդե՛ս: Ահա թե ինչ է կեչին:

ՍՄԲՈՒԽ.— Կեցցե՛ս, կեցցե՛ս:

ԵՐԿՐՈՐԴ ՆԱՎԱՍԻ.— Միայն նավաստին և Օլպիդեսը չեն, որ տեսել են նրանց, Պրիամո՛ս: Բեռնակրից մինչև տասնապետը, բոլորս դուրս էինք եկել պատուհաններից և նախ իրանին ու բազրիքին փաթաթվել: Նավը դարձել էր մի ներկայացում:

ԵՐՐՈՐԴ ՆԱՎԱՍԻ.— Սիրո ներկայացում:

ՈՒԼԻՍ.— Ահա, Հեկտո՛ր:

ՀԵԿՏՈՐ.— Լռելո՞ւ եք, թե՞ ոչ:

ՆԱՎԱՍԻ.— Եթե կարող ես, ինքդ լռեցրու:

Երկնքու՛մ հայտնվում է Իրիսը<sup>29</sup>:

ԺՈՂՈՎՈՒՐԴ.— Իրիւն՛, Իրիւն՛:

ՊԱՐԻՍ.— Քեզ Աֆրոդիտե՞ն է ուղարկել:

ԻՐԻՍ.— Այո, Աֆրոդիտեն: Նա ինձ հանձնարարեց ձեզ հայտնել, որ սերը աշխարհի օրենքն է: Եվ այն, ինչ գորացնում է սերը, դառնում է սրբազան, լինի դա սուտը, ազահությունը կամ զեխությունը, որ նա բոլոր սիրահարներին վերցնում է իր հովանավորության տակ՝ լինի դա արքան կամ հովիվը, կամ էլ թե միջնորդը: Ես ասացի միջնորդը: Եթե այստեղ այդպիսի մեկը կա, ողջուն նրան: Եվ, որ նա, աստվածուհին, արգելում է ձեզ, երկուսիդ, Հեկտոր՛ն և Ուլիս՛ս, Պարիսին և Հեղինեին անջատել: Այլապես պատերազմ կլինի:

ՊԱՐԻՍ, ԾԵՐԵՐ.— Ընորհակալ եմք, Իրի՛ս:

ՀԵԿՏՈՐ.— Իսկ Աթենաս Պալլասից՞ լոր չկա՞:

ԻՐԻՍ.— Այո, Պալլասը ինձ հանձնարարեց ձեզ հայտնել, որ աշխարհի օրենքը բանականությունն է: Բոլոր սիրահարները կորցնում են բանականությունը, հրամայեց հայտնել նա: Նա պահանջեց, որ դուք անկեղծորեն ասեք, թե կա՞ արդյոք ավելի հիմար բան, քան արևորը հավի վրա կամ ճանճը ճանճի վրա: Եվ նա հրամայում է ձե՛զ, Հեկտոր՛ն և ձե՛զ, Ուլի՛ս, բաժանել Հեղինեին գանգրահեր Պարիսից: Այլապես պատերազմ կլինի...

ՀԵԿՏՈՐ, ԿԱՆԱՅՔ.— Ընորհակալ եմք, Իրի՛ս:

ՊՐԻԱՄՈՍ.— Օ՛հ, որդի՛ս, աշխարհի օրենքը ոչ Աֆրոդիտեի, ոչ էլ Պալլասի ձեռքին է: Թող այս անորոշությունը պարզի Ջևար՞:

ԻՐԻՍ.— Ջևար՝ աստվածների տիրակալը, հանձնարարեց ձեզ հայտնել, որ աշխարհում միայն սեր տեսնողը նույնքան ապուշ է, որքան չտեսնողը: Իմաստությունը, հրամայեց ասել աստվածների տիրակալ Ջևար, նրանումն է, որ սիրես այն ժամանակ, երբ պետք է և չսիրես այն ժամանակ, երբ պետք չէ: Ջնճաղիկներով և մանուշակներով պատած դաշտերը, նրա խոնարհ և իշխանասատ կարծիքով, քաղցր են և նրանց համար, ովքեր պառկում են իրար վրա, և նրանց համար, ովքեր պառկում են իրար կողքի, թեկուզ կարդալիս լինեն, թեկուզ պառկեն և խատուտիկ փչեն, թեկուզ մտածեն ընթրիքի կամ հանրապետության մասին: Արդ, Ե՛ս հրամայում է Հեկտորին և Ուլիսին, որպեսզի նրանք Հեղինեին Պարիսից բաժանեն, միաժամանակ աշխատելով չբաժանել: Մյուս բոլորին հրամայում է հեռանալ և բանազնացներին երես առ երես թողնել: Եվ թող հենց նրանք այնպես կարգավորեն, որ պատե-

րազմ շլիճի: Այլապես, նա երդվում է, իսկ նա երբեք իզուր չի  
սպառնացել, նա երդվում է, որ պատերազմ կլինի:

ՀԵԿՏՈՐ.— Լսում եմ ձեզ, Ուլի'ս:

ՌԻԼԻՍ.— Լսում եմ ձեզ, Հեկտոր'ը:

**Քոլորը հեռանում են: Երկնքում մի շարժ է երևում:**

ՀԵՂԻՆԵ.— Սա անպայման Իրիսի շարժը կլինի: Նա մոտացել է:

## ՏԵՍԱՊԱՆ ՏԱՍՆԵՐԵՉԵՆՆԵՐԸ

### ՌԻԼԻՍ, ՀԵԿՏՈՐ

ՀԵԿՏՈՐ.— Ահա և իսկական ճակատամարտը, Ուլի'ս:

ՌԻԼԻՍ.— Ծակատամարտ, որտեղ պատերազմի լինել-չլինելու հարցը  
պիտի որոշվի:

ՀԵԿՏՈՐ.— 'Իսկ նա կլինի':

ՌԻԼԻՍ.— Հինգ բուպեից հետո կիմանանք:

ՀԵԿՏՈՐ.— Եթե դա խոսքերի ճակատամարտ է, ապա իմ հնարալո-  
րությունները փոքր են:

ՌԻԼԻՍ.— Ես կարծում եմ, որ ավելի շուտ կշեռքը կորոշի: Մենք, իս-  
կապես, այնպիսի տեսք ունենք, կարծես մեզանից յուրաքանչյու-  
րը դրված է կշեռքի թաթին և մեր քաշը պիտի որոշվի...

ՀԵԿՏՈՐ.— Իմ քաշը: Իմ քաշն ի՞նչ է որ, Ուլի'ս: Իմ քաշը մի երի-  
տասարդ տղամարդ է, մի երիտասարդ կին և մի երեխա, որ  
պետք է ծնվի: Իմ քաշը ապրելու հրճվանքն է, հավատը դեպի  
կյանքը, ձգտումը դեպի ճշմարիտը և թնականը:

ՌԻԼԻՍ.— Իմ քաշը մի հասուն տղամարդ է, մի երեսուն տարեկան  
կին և մի տղա, որի հասակը պալատի դռան վրա ամեն ամիս  
չափում եմ գծիկներով... Իհարկե, աներս ինձ մեղադրում է, թե  
փչացնում եմ կահույքը... Իմ քաշը կյանքի բերկրանքն է և կա-  
կած դեպի կյանքը:

ՀԵԿՏՈՐ.— Իմ քաշը որսորդությունն է, քաջությունը, հավատարմու-  
թյունը, սերը:

ՌԻԼԻՍ.— Իմ քաշը շրջահայաց վերաբերմունքն է աստվածների, մարդ-  
կանց և իրերի հանդեպ:

ՀԵԿՏՈՐ.— Իմ քաշը փոյուզիական կաղնին է, բոլոր փոյուզիական

կաղնիները՝ սաղարթախիտ, լայնշի, որ ցրված են մեր բլուրների վրա, ինչպես մեր գանգրահեր ցուլերը:

ՌԻԼԻՍ.— Իմ քաշը ձիթեմիս է:

ՀԵԿՏՈՐ.— Իմ քաշը բազեն է, որ անթարթ արևին է նայում:

ՌԻԼԻՍ.— Իմ քաշը գիշերահավն է:

ՀԵԿՏՈՐ.— Իմ քաշը ամբողջ ժողովուրդն է: Հեզ ու բարի գյուղացիք, ժրաջան արհեստավորները, հազարավոր արորները, մանածագործական դազգահները, դարբնոցների զնդանն ու սալը... Օ՛հ, բոլոր այդ ծանր բաները ձեր առջև, չգիտեմ ինչու, ինձ այնքան թեթև են թվում:

ՌԻԼԻՍ.— Իմ քաշը այն մաքուր և սառը օդն է, որ շնչում են արշիպելագի ավերին ապրող մարդիկ:

ՀԵԿՏՈՐ.— Էլ ինչո՞ւ շարունակեմք: Կշեռքի թաթը իջնում է:

ՌԻԼԻՍ.— Իմ կո՞ղմը... Այո, ես էլ եմ կարծում:

ՀԵԿՏՈՐ.— Եվ դուք պատերա՞զմ եք ուզում:

ՌԻԼԻՍ.— Ես պատերազմ չեմ ուզում: Բայց ես վատահ չեմ, թե նա ինչ մտադրություններ ունի:

ՀԵԿՏՈՐ.— Մեր ժողովուրդները մեզ ողարկել են այստեղ միաբանելու համար: Միայն մեր այստեղ հանդիպելը նշանակում է, որ ամեն ինչ կորած չէ:

ՌԻԼԻՍ.— Դուք երիտասարդ եք, Հեկտոր... Բոլոր պատերազմների նախօրեին, ընդունված է, որ հակառակորդ ժողովուրդների ղեկավարները հանդիպեն մի չեզոք վայրում, լճափնյա մի տերրասի վրա, մի պարտեզի անկյունում: Եվ նրանք երկուսով համաձայնում են, որ պատերազմը աշխարհի ամենաստուկալի չարիքն է: Եվ երկուսն էլ, հայացքով հետևում են ջրի արտացոլումներին և այլակներին, ուսերի վրա զգում են մագնոլիայի տերևների հպումը, նրանք խաղաղասեր են, համեստ, անկեղծ: Նրանք ուսումնասիրում են միմյանց: Նայում են իրար: Եվ արևից թուլացած, գաղջացած, վարդագույն գինուց կակղած, նրանք միմյանց հայացքներում ատելությունը արդարացնող ոչ մի արտահայտություն չեն գտնում, ոչ մի դիմագիծ, որը մարդկային սիրուց չխուսի, ոչ մի հակասող բան չեն գտնում, ո՛չ իրենց լեզվում, ո՛չ քիթ քորելու, ո՛չ էլ խմելու մեջ: Եվ նրանք, իսկապես, յիքն են խաղաղությանը, խաղաղության ձգտումով: Եվ նրանք իրար հրաժեշտ են տալիս, ձեռքսեղմումով, եղբայրացած: Եվ իրենց կառքերում նրստած, շրջվում են, միմյանց ժպտում... Բայց և այնպես, հաջորդ օրը պայթում է պատերազմը... Հիմա մենք ենք այդ վիճակում...

Այդ գրույցի ժամանակ, մեր ժողովուրդները լուսւմ են և քաշվում մի կողմ: Բայց դա չի նշանակում, թե՛ նրանք մեզանից հաղթանակ են սպասում անխուսափելիի հանդէպ: Պարզապէս, նրանք մեզ բացարձակ իրավունքներ են տվել, մեզ մենակ են թողել, որպէսզի աղետից այն կողմ ավելի լավ ճաշակենք մեր՝ թշնամիներիս եղբայրությունը: Ծաշակե՛նք այն: Դա հարուստների կերակուրն է: Ըմբռնչխնե՛նք այն... Բայց դա է ամբողջը: Հզորների առավելությունը՝ պատուհասը տերրասից նայելն է:

ՀԵԿՏՈՐ.— Եվ սա թշնամիների գրո՞ւյց է:

ՈՒԼԻՍ.— Ես մի դուետ է նվագախմբի ելույթից առաջ: Մեներգիչների դուետն է պատերազմից առաջ: Որովհետև մենք ծնված ենք զգայուն, արդարամիտ և բարեկիրթ, մենք պատերազմից ժամ առաջ զրուցում ենք, քանի որ մենք՝ հին զինվորներս, երկար կզրուցենք նաև պատերազմից հետո: Մենք նույնիսկ կմիաբանենք ճակատամարտից առաջ, դա միշտ այդպէս է եղել: Գուցէ մենք սխալ ենք: Եթէ մի գեղեցիկ օր, մեզանից մեկնումեկը պիտի սպանի մյուսին և իր զոհին ճանաչելու համար սաղսվարտի դիմապահակը պիտի պոկի, գուցէ ավելի լավ կլինէր եղբոր տուրը չդնել նրան... Բայց ամբողջ աշխարհը գիտի, որ պիտի կռվենք:

ՀԵԿՏՈՐ.— Աշխարհը կարող է սխալվել: Սխալն էլ հենց նրանից են իմանում, որ համաշխարհային է:

ՈՒԼԻՍ.— Հուսանք: Բայց, երբ ճակատագիրը տարիներ շարունակ բարձրացրել է երկու ժողովուրդներին, երբ նրանց առջև բացել է հնարամտության և կարողության նույն սպագան, երբ յուրաքանչյուրիս համար, ինչպիսին որ կանք հիմա հավասարակշռության մեջ, ստեղծել է հաճույքը, գիտակցությունը և նույնիսկ բնությունը չափելու նուրբ և տարբեր կշիռ, երբ այդ ժողովուրդների ճարտարապետների, բանաստեղծների, նկարիչների միջոցով՝ յուրաքանչյուրին տվել է ծավալի, գույնի և հնչյունների մի առանձին արքայություն, երբ նրանց ստիպել է չստեղծել տրոյական փայտե տանիք և թեթեակաւ կամար, փոշուգիական կարմիր և հունական ինդիգո<sup>32</sup>, նշանակում է ճակատագիրը մարդկանց համար երկու ճանապարհ չի պատրաստել: Պարզապէս ճակատագիրը իր հանդեսն է վարում և ուզում է աշխարհն ազատել մարդկային գազանությունից և խելագարությունից, քանի որ միայն դա է հաճոսատվածների: Համաձայն եմ, որ սա մանր քաղաքականություն է, բայց մենք՝ պետության տերերս, կարող ենք մեր միջև հանգիստ ասել, որ ճակատագրի քաղաքականությունը այսպիսին է:

ՀԵԿՏՈՐ.— Եվ այս անգամ Տրոյան և Հունաստանն է ընտրե՞լ:

ՌԻԼԻՍ.— Այս առաջինն էս դեռ կասկածում էի: Բայց հենց ոտքս գետին դրեցի, վստահ եղա դրանում:

ՀԵԿՏՈՐ.— Ձեզ թշնամու հողո՞ւմ զգացիք:

ՌԻԼԻՍ.— Ինչո՞ւ եք անդադար այդ «թշնամի» բառը հիշում: Այդքան պե՞տք է ձեզ կրկնել: Բնածին թշնամիները իրար դեմ չեն կրկնում: Ժողովուրդներ կան, որոնք ծնված են իրար դեմ կոպելու. նրանց մաշկի գույնը տարբեր է, մարմիններից տարբեր բույրեր են գալիս, նրանք նախանձում են իրար, ստում են իրար, իրար տանել չեն կարող... Բայց արի ու տես, որ այդ ժողովուրդները իրար դեմ չեն կոպում: Կոպողները նրանք են, ովքեր շինած և սազացրած են իրար դեմ կոպելու համար: Ահա դրանք են իսկական ակոյանները:

ՀԵԿՏՈՐ.— Եվ մենք պատրաստ ենք կոպելու հույների դեմ:

ՌԻԼԻՍ.— Անհավատալիորեն, ծայրաստիճան պատրաստ: Ինչպես բրնույթունը, նախատեսելով գոյության պայքարը, միջատներին օժտել է միմյանց լրացնող թուլությամբ և զենքերով, այնպես էլ մենք, հեռավորության վրա, առանց իմանալու, առանց կասկածելու, աճել ենք մեր պատերազմի մակարդակին: Ատամնավոր անիվների պես, մեր զենքերը և սովորույթները համապատասխանում են իրար: Եվ մեր կանանց հայացքներն ու մեր դուստրերի շիկնանքը միակ բաներն են, որ մեր մեջ կոպտություն ու ցանկություն չեն հարուցում, բայց այս սրտի և երջանկության տազնապը մոտալուտ պատերազմի հորիզոնն է: Ծեհների ճակատները՝ իրենց լուսի և սովերի խաղերով, ձիերի վրճյունը, սյունաշարերի անկյուններում անհետացող կանայք, այս բոլորը ճակատագիրը ներկել է ամպրոպի գույնով, որն ինձ հնարավորություն է տալիս, առաջին անգամ ապագայի գծագիրը տեսնելու: Դուք հունական պատերազմի լույսով եք ողողված:

ՀԵԿՏՈՐ.— Եվ բոլոր հույները այդպե՞ս են:

ՌԻԼԻՍ.— Մյուս հույների մտածածը ավելի քաջալերող չէ: Մնացած հույները կարծում են, թե Տրոյան հարուստ է, մթերանոցները լիքը, իսկ դաշտերը բերրի: Նանք կարծում են, թե ժայռի վրա իրենց տեղը նեղ է: Ձեր տաճարների ոսկին, ձեր ոսկեզօծ ցորենը, ձեր կաղամբը, ձեր հրվանդանները մեր նավերի համար դարձել են անմոռանալի ուղենիշներ: Վտանգավոր է ոսկեզօծ աստվածներ և ոսկեզօծ բանջարեղեն ունենալը:

ՀԵԿՏՈՐ.— Ահա, վերջապես մի անկեղծ խոսք: Հունաստանը մեզ

ընտրել է որպէս թալանի առարկա: Ուրեմն, ի՞նչ կարիք կա պատերազմ հայտարարելու: Ավելի պարզ կլինէր, եթէ օգտվէիք իմ բացակայությունից և հարձակվէիք Տրոյայի վրա: Դուք առանց դիմադրության կնվաճէիք երկիրը:

ՈՒԼԻՍ.— Պատերազմի մի տեսակ համաձայնություն կա, որը ստեղծում է անհրաժեշտ մթնոլորտը, հնչեղությունը և տրամադրությունը: Կեղծ կհնչէր՝ առանց այդ տրամադրությունը ստեղծելու պատերազմ սկսել: Մենք այդ տրամադրությունը չունենինք:

ՀԵԿՏՈՐ.— Դուք հիմա ունե՞ք:

ՈՒԼԻՍ.— Կարծում եմ, որ ունենք:

ՀԵԿՏՈՐ.— Ո՞վ է ձեզ տվել այդ տրամադրությունը ընդդէմ մեզ: Տրոյան հայտնի է իր խաղաղասիրությամբ, աղոթասիրությամբ և արվեստներով.

ՈՒԼԻՍ.— Հանցանքների պատճառով չէ, որ որևէ ժողովուրդ դեմ է դուրս գալիս իր ճակատագրին, այլ սխալների պատճառով: Նրա բանակը գործել է, գանձարանը հարուստ, քերթողները ծաղկման մեջ են: Բայց մի օր, հայտնի չէ ինչու, նրանից, որ քաղաքացիք վաչրագությանբ ծառերը կտրեցին, որ նրա արքայազներ քսությանբ մի կին առևանգեց, կամ էլ նրանից, որ երեխաները վատ սովորություններ ձեռք բերեցին, այդ ժողովուրդը կորչում է: Ժողովուրդները, ինչպես մարդիկ, մեռնում են աննշմարելի անբաղաքավարությունից: Դատապարտված ժողովուրդները իրենց փոշտալուց և կրունկը տրորելուց են երևում... Դուք, անկասկած, այնքան էլ լավ չեք առևանգել Հեղինեին...

ՀԵԿՏՈՐ.— Ի՞նչ կապ կա կնոջ առևանգման և պատերազմի միջև, որտեղ անհատակվելու է մեր ժողովուրդներից մեկը...

ՈՒԼԻՍ.— Մենք խոսում ենք Հեղինեի մասին: Դուք սխալվել եք Հեղինեի հարցում: Պարիսը և դուք: Տասնհինգ տարի է ես նրան գիտեմ և հետևում եմ: Ոչ մի կասկած: Նա այն հազվագյուտ արարածներից է, որին ճակատագիրը շրջանառության մեջ է դրել հենց ի՛ր, անձնական օգտագործման համար: Դրանք տեսքից ոչինչ են: Դրանք երբեմն լինում են մի փոքրիկ ավան, գյուղ, մի փոքրիկ թագուհի՝ համարյա աղջնակ, բայց դրանց դիպչելիս զգույշ եղեք: Կյանքի դժվարությունն այն է, որ իրերի և մարդկանց մեջ դրժվար է տարբերել, թե որն է ճակատագրի գրավակալը: Դուք այն չտարբերեցիք: Դուք կարող էիք դիպչել մեր ծովակալներին, մեր թագավորներին և անպատիժ մնալ: Պարիսը կարող էր զվարճանալ Սպարտայի<sup>33</sup> կամ Թեբեի<sup>34</sup> անկողիններում: Նա ընտրեց ա-

ամնափոքր ուղեղը, ամենակարծր սիրտը, ամենաանկալուն կնոջը... Դուք կորած եք:

**ՀԵԿՏՈՐ.—** Մենք Հեղինեին կվերադարձնենք:

**ՌԻԼԻՍ.—** Ծակատագրի անարգանքը ոչնչով չես կարող շակել:

**ՀԵԿՏՈՐ.—** Ուրեմն, ինչո՞ւ վիճենք: Ձեր խոսքերի ետև, վերջապես, տեսնում եմ ճշմարտությունը: Խոստովանե՛ք: Դուք մեր հարբատությունն եք ուզում: Հեղինեի սուկանգումը կազմակերպեցիք, որպեսզի յուրջ պատրվակ ունենաք պատերազմի համար: Ես կարմրում եմ Հունաստանի փոխարեն: Նա հավերժորեն պիտի կրի այդ ամոթը և պատասխանատվությունը:

**ՌԻԼԻՍ.—** Պատասխանատվությունը և ամո՞թը: Հավատացե՛ք, սչդ բաները իրար չեն կապվում: Եթե՞ մենք, իսկապես, պատասխանատու զգայինք մեզ, բավական կլինեք, որ մեր ներկա սերունդը ուրանար և խաբեր, և մենք ապագա բոլոր սերունդների համար բարի կամք և մաքուր խիղճ կապահովե՞ինք: Մենք կխաբենք: Մենք մեզ կնահատակենք:

**ՀԵԿՏՈՐ.—** Ուրեմն, վիճակը զցված է, Ուլի՛ս: Թող լինի պատերազմը: Որքան որ աճում է իմ ատելությունը պատերազմի հանդեպ, մյուս կողմից ավելանում է սպանելու անկասելի ցանկությունը... Գնացե՛ք, քանի որ հրաժարվում եք ձեր օգնությունը ցուցաբերել...

**ՌԻԼԻՍ.—** Հասկացեք ինձ, Հեկտոր՛ր... Իմ օգնությունն ապահովված է: Բայց մի մեղադրեք ինձ ճակատագիրը մեկնաբանելու համար: Ես, պարզապես, փորձեցի աշխարհի վրայի մեծ գծերով, քարավանների ճանապարհներով, նավերի ուղիներով, կոռուկների թրոհչքով և ժողովուրդների պատմությամբ գուշակել: Տվեք ձեր ձեռքը: Նրա վրա էլ գծեր կան: Բայց հայտնի դատերով միևնույն գրծերը չփնտրենք: Ենթադրենք, թե Հեկտորի ստի երեք գծերը ճիշտ հակառակն են գետերի հոսանքի. թռչունների թռիչքի և նավի հետքերի ասածների: Ես ի բնե հետաքրքրասեր մարդ եմ և վախկոտ չեմ: Ես շատ եմ սիրում ճակատագրին դեմ գնալ: Ես կրնդունեմ Հեղինեին և կվերադարձնեմ Մենելայոսին: Ես շատ ու շատ ճարտարախոս եմ, որպեսզի որևէ ամուսնու համոզեմ իր կնոջ սուսքինության մեջ: Ես նույնիսկ Հեղինեին կհավատացնեմ այդ: Եվ ես հիմա գնում եմ, որպեսզի խուսափեմ անակնկալից: Եթե հասնեմ նավերին, գուցե կարողանամք պատերազմը խափանել:



ՀԵԿՏՈՐ.— Ի՞նչ է, սա Ուլիսի խորամանկությունն է, թե՞ նրա մեծությունը:

ՈՒԼԻՍ.— Այս պահի՛ ես խորամանկում եմ ճակատագրի դեմ, բայց ոչ ձեր: Սա իմ առաջին փորձն է և դրանում բավական արժանիքներ ունեմ: Ես անկեղծ եմ, Հեկտոր... Եթե ես պատերազմ ուզեի, Հեղինեին չէի պահանջի, այլ ավելի թանկ մի փրկագին... Ես մեկնում եմ... Բայց ես չեմ կարող ցրել այն տպավորությունը, թե ճամփան աչտեղից մինչև իմ նավը շատ երկար է:

ՀԵԿՏՈՐ.— Իմ պահապանները ձեզ կողեկցեն:

ՈՒԼԻՍ.— Դա նույնչափ երկար է, որքան այն թագավորի ճամփան, որը այցելել է մի երկիր, որտեղ մահափորձ է սպասվում նրան... Դավադիրները որտե՞ղ են թաքնվել: Բախտավոր կլինենք, եթե այդ դավադրությունը հենց երկնքում թաքնված չլինի... Եվ ճամփան աչտեղից՝ պալատի այս անկյունից, շատ երկար է... Եվ երկար է իմ առաջին քայլը... Ինչպիսի՞ն կլինի իմ առաջին քայլը այս վտանգների մեջ: Չե՞մ սահի արդյոք, չե՞մ մահանա տեղնուտեղը... Տանիքից մի բան չի՞ ընկնի գլխիս: Այս պատը նոր են շարել և կարող է մի քար սրկվել... Քա՛ջ եղիր... Գնացի՛նք:

**Անում է առաջին քայլը:**

ՀԵԿՏՈՐ.— Ընորհակալ եմ, Ուլի՛ս:

ՈՒԼԻՍ.— Առաջին քայլը եղավ... Որքա՞ն է մնում:

ՀԵԿՏՈՐ.— Չորս հարյուր վաթսուն:

ՈՒԼԻՍ.— Երկրորդն եմ անում: Իսկ գիտե՞ք, Հեկտոր, թե ինչք ինձ ստիպեց գնալ...

ՀԵԿՏՈՐ.— Գիտեմ: Ազնվությունը:

ՈՒԼԻՍ.— Ոչ այնքան... Անդրոմաքեն Պեղեյուպեի նման է թերթերունքները շարժում...

## ՏԵՍԱՐԱՆ ՏԱՍՆՉՈՐՍԵՐՈՐԳ

ԱՆԳՐՈՄԱՔԵ, ԿԱՍԱՆԴՐԱ, ՀԵԿՏՈՐ, ՏԵՍՈՒՔՍ, ՏԵՍՈՒ ԴԵՄՈԿՈՍ

ՀԵԿՏՈՐ.— Այստե՞ղ ես, Անդրոմաքե՛:

ԱՆԳՐՈՄԱՔԵ.— Պահիր ինձ: Այլևս չեմ կարող:

ՀԵԿՏՈՐ.— Դու մեզ լսո՞ւմ էիր:

ԱՆԳՐՈՄԱՔԵ.— Այո: Ես շարդված եմ:

ՀԵԿՏՈՐ.— Տեսնո՞ւմ ես, պետք չէ հույսը կորցնել...

ԱՆԴՐՈՄԱՔԵ.— Մեր հանդէպ՝ գուցէ: Բայց մյուսների հանդէպ՝ այո...

Այդ մարդը սուկալի է: Աշխարհի թշխառութեանը իմ վրա է:

ՀԵԿՏՈՐ.— Եվս մեկ բուպե, և Ուլիսը իր նավի վրա կլինի... Նա ա-  
րագ է քայլում: Այստեղից երևում է նրա շքախումբը: Ահա, նա  
շատրվանների մոտ է: Ի՞նչ ես անում:

ԱՆԴՐՈՄԱՔԵ.— Ես այլևս ուժ չունեմ լսելու: Ես փակում եմ ականջ-  
ներս: Մինչև մեր բախող չվճուճի, ես ձեռքերս չեմ հեռացնի...

ՀԵԿՏՈՐ.— Հեղինեին փնտրի՛ր, Կասանդրա՛:

**Ճյաքսը մտնում է բեմ: Նա սուկալի հարբած է: Անդրոմաքեին  
նա տեսնում է թիկունքով կանգնած:**

ԿԱՍԱՆԴՐԱ.— Ուլիսը սպասում է ձեզ նավահանգստում, Այա՛քս:  
Հեղինեն ձեզ կողեկցի այնտեղ:

ԱՅԱՔՍ.— Հեղինե՛ն: Ես թքե՛լ եմ Հեղինեի վրա: Ահա սրան եմ ու-  
զում գրկումս պահել:

ԿԱՍԱՆԴՐԱ.— Գնացե՛ք, Այաքս: Դա Հեկտորի կինն է:

ԱՅԱՔՍ.— Հեկտորի կի՛նը: Կեցցե՛ս: Ես միշտ սիրել եմ ի՞ բարե-  
կամների կանանց: Իմ իսկական բարեկամների:

ԿԱՍԱՆԴՐԱ.— Ուլիսն արդեն ճամփի կեսի՞ն է... Գնացե՛ք:

ԱՅԱՔՍ.— Մի՛ բարկացիր: Նա փակել է ականջները: Ուրեմն, ես կա-  
րող եմ նրան ամեն ինչ ասել, որովհետև նա չի լսում: Իսկ եթե ես  
դիպչե՛մ նրան, եթե ես համբուրե՛մ: Չէ որ խոսքերը, որոնք չես  
լսում, բնավ կարևոր չեն:

ԿԱՍԱՆԴՐԱ.— Երբեմն կարևոր են: Գնացե՛ք, Այա՛քս:

ԱՅԱՔՍ (Կասանդրան փորձում է Անդրոմաքեին հեռացնել Այաքսից,  
իսկ Հեկտորը կամաց-կամաց բարձրացնում է միզակը).— Այդ-  
պե՛ս ես կարծում: Ուրեմն, կարող եմ դիպչել: Համբուրել: Բայց  
եղբայրաբար: Միայն եղբայրաբար... Իսկական բարեկամներիդ  
կանանց միշտ եղբայրաբար համբուրիր: Հեկտո՛ր, կնոջդ ամե-  
նասուրբ տեղը ո՞րն է, վի՛զը: Ահա, համբուրիր վիզը... Ականջն  
էլ շատ սուրբ տեսք ունի: Ահա, համբուրիր ականջը... Ես քեզ  
կասեմ, թե իմ կարծիքով որն է կնոջ ամենասուրբ տեղը... Թո՛ղ  
ի՞նչ... Թո՛ղ ի՞նչ... Միևնույն է, նա համբուրը չի լսի... Ի՞նչ ուժեղ  
ես... Գնո՛ւմ եմ... Գնո՛ւմ եմ... Մնաս բարով... (Դուրս է գալիս):  
Հեկտորը կամաց-կամաց իջեցնում է միզակը: Այդ պահին Դե-

մոկոսը ներս է խուժում:

ԴԵՄՈԿՈՍ— Սա ի՞նչ վախկոտություն է: Դու վերադարձնո՞ւմ ես Հե-  
ղինեին: Տրոյացի՛ք, ի զե՛ն: Մեզ դավաճանո՞ւմ են... Ի մի եկե՛ք...  
Ձեր ուզմի երգը պատրաստ է: Լսե՛ք ձեր ուզմի երգը:

ՀԵՎՏՈՐ.— Ա՛ն քեզ ուզմի երգի համար:

**Նիզակով խփում է Դեմոկոսին:**

ԴԵՄՈՎՈՍ (ընկնելով).— Նա սպանե՛ց ինձ:

ՀԵՎՏՈՐ.— Պատերազմը չի՛ լինի, Անդրոմաքե՛:

**Նա փորձում է հեռացնել Անդրոմաքեի ձեռքերը, որն աչքերը Դեմոկոսին չուած դիմադրում է: Վարագույրը, որ սկսել էր իջնել, կամացկամաց բարձրանում է:**

ԱԲՆԵՈՍ.— Դեմոկոսին սպանեցին: Ո՛վ սպանեց Դեմոկոսին:

ԴԵՄՈՎՈՍ.— Ո՛վ սպանեց ինձ... Այա՛քսը... Այա՛քսը... Սպանեցե՛ք նրան...

ԱԲՆԵՈՍ.— Սպանեցե՛ք Այաքսին:

ՀԵՎՏՈՐ.— Նա ստում է: Ե՛ս եմ զարկել նրան:

ԴԵՄՈՎՈՍ.— Ո՛չ, Այաքսն էր...

ԱԲՆԵՈՍ.— Այաքսը սպանե՛ց Դեմոկոսին... Բռնեցե՛ք նրան... Պատժե՛ք նրան...

ՀԵՎՏՈՐ.— Ե՛ս էի, Դեմոկո՛ս, խոստովանի՛ր, խոստովանի՛ր, ապա թե ոչ կաստկացնեմ:

ԴԵՄՈՎՈՍ.— Ո՛չ, իմ սիրելի՛ Հեկտոր, իմ շա՛տ սիրելի Հեկտոր: Այաքսն էր, սպանեցե՛ք Այաքսին...

ԿԱՍԱՆԴՐԱ.— Ինչպե՛ս որ ապրեց, այնպե՛ս էլ մեռնում է՝ գորտի պես կոկոալով:

ԱԲՆԵՈՍ.— Ահա՛... Նրանք բռնեցին Այաքսին... Ահա՛, նրան սպանեցին:

ՀԵՎՏՈՐ (Անդրոմաքեի ձեռքերը հեռացնելով).— Պատերազմը կլիցի: **Պատերազմի դարպասները դանդաղ բացվում են: Նրանց բացվելու հետ, երևում է Տրոիլոսին համբուրող Հեղինեն:**

ԿԱՍԱՆԴՐԱ.— Տրոյական պոետը մեռած է... Խոսքը տրվում է հունական պոետին<sup>85</sup>:

**Վարագույրը վերջնականապես իջնում է**

ՍԱՄՅՈՒՆԵԼ ԲԵՔԵԹ

ԳՈԴՈՅԻՆ ՍՊԱՍԵԼԻՍ

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

ԷՍՏՐԱԳՈՆ  
ՎԼԱԳԻՄԻՐ  
ՓՈԶԶՈ  
ԼԱՔԻ  
ՏՂԱ

# ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՋԻՆ

Գլուղական ճանապարհ: Մի ծառ: Երեկո:

Էստրագոնը նստած ցածր թմբին, փորձում է հանել կոշիկը: Նա ձգում է այն երկու ձեռքով, ծանր շնչելով: Դադարում է, տանջված հանգստանում է, սկսում նորից: Ինչպես առաջ: Մտնում է Վլադիմիրը: ԷՍՏՐԱԳՈՆ (նորից դադարելով).— Ոչինչ հնարավոր չէ անել:

ՎԼԱԴԻՄԻՐ (առաջ գալով կարճ, ձգված քայլերով, ոտքերը լայն բացելով).— Ես սկսում եմ գալ այդ մտքին: Ողջ կյանքումս փորձել եմ վանել դա ինձնից, ասելով, Վլադիմիր, եղի՛ր խելամիտ, դու դեռ ամեն ինչ չես փորձել: Եվ ես վերսկսեցի պայքարը: (Նա խորհում է պայքարի մասին: Էստրագոնին): Ահա, դու նորից այստեղ ես:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Իրո՞ք:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Ես ուրախ եմ, որ դու վերադարձել ես: Կարծում էի դու ընդմիջտ գնացել ես:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Ես նույնպես:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Նորից միասին, վերջապե՛ս: Մենք պետք է նշենք դա: Բայց ինչպե՛ս: (Մտասուզվում է): Կանգնիր, որ ես քեզ գրկեմ:

ԷՍՏՐԱԳՈՆ (վրդովված).— Ո՛չ հիմա, ո՛չ հիմա:

ՎԼԱԴԻՄԻՐ (վիրավորված, սառը).— Կարելի՞ է հարցնել, որտեղ է ձերդ մեծությունն անցկացրել գիշերը:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Մի առվափոսում:

ՎԼԱԴԻՄԻՐ (զարմանքով).— Առվափո՞ս: Ո՞րտեղ:

ԷՍՏՐԱԳՈՆ (առանց ցույց տալու).— Այնտեղ:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Եվ նրանք քեզ չձեռնեցի՞ն:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Ծեծել ի՞նձ: Իհարկե, նրանք ինձ ձեռնեցին:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Նույն մարդիկ, ինչ որ սովորաբա՞ր:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Նո՞ւյն: Չգիտեմ:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Երբ ես մտածում եմ դրա մասին... բոլոր այս տարիները... բայց ինձ համար... ո՞րտեղ դու կլինեիր... (Որոշակիորեն): Դու կլինեիր ոչ այլ ինչ, քան ոսկորների մի փոքր կույտ այս բուստի, ոչ մի կասկած դրանում:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Հետո՞ ինչ:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Դա չափից դուրս է մի մարդու համար: (**Դադար, առույգորեն**): Մյուս կողմից, ի՞նչ իմաստ ունի հուսահատվել հիմա, ահա թե ինչ: Մենք պետք է մտածեինք դրա մասին, երբ աշխարհը երիտասարդ էր, իննսունականներին:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Էհ, վե՛րջ տուր դուրս տալուն և օգնիր ինձ հանել այս այլանդակ բանը:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Ձեռք-ձեռքի, Էյֆելյան աշտարակի ծայրից, առաջինների մեջ: Մենք հարգված էինք այդ օրերին: Այժմ շատ ուշ է: Մեզ նույնիսկ վերև չեն թողնի: (**Էստրագոնը քաշում է իր կոշիկը**): Ի՞նչ ես անում:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Հանում եմ կոշիկս: Քեզ հետ դա երբեք չի՞ պատահել:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Կոշիկները պետք է հանել ամեն օր, ես հոգնել եմ դա քեզ ասելուց: Ինչո՞ւ չես լսում ինձ:

ԷՍՏՐԱԳՈՆ (**թուլացած**).— Օգնի՛ր:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Ցավեցնո՞ւմ է:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Ցավեցնում է: Նա ուզում է իմանալ, ցավեցնո՞ւմ է, թե՞ ոչ:

ՎԼԱԴԻՄԻՐ (**զայրացած**).— Ոչ ոք չի տանջվել, բացի քեզնից: Ես հաշվի մեջ չեմ: Կուզեի լսել, թե դու ինչ կասեիր, երբ ապրեիր այն, ինչ ես եմ տարել:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Ցավեցնո՞ւմ էր:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Ցավեցնում էր: Նա ուզում է իմանալ, ցավեցնում էր, թե՞ ոչ: (**Կռանալով**): Երբեք մի արհամարհիր կյանքի մանրուքները:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Իսկ ի՞նչ էիր ուզում, դու միշտ սպասում ես մինչև վերջին րոպեն:

ՎԼԱԴԻՄԻՐ (**մտախոհ**).— Վերջին րոպեն... (**Նա խորհում է**): Ուշացած հույսը կհիվանդացնե՞, ո՞վ է ասել դա:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Ինչո՞ւ չես օգնում ինձ:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Երբեմն ես զգում եմ, որ միևնույնն է, դա գալիս է: Հետո ես դառնում եմ տարօրինակ: (**Նա հանում է գլխարկը, նայում է դրա ներսը, շոշափում է այն ներսից, ցնցում, նորից դնում գլխին**): Ինչպե՞ս ասեմ: Թեթևացած և միևնույն ժամանակ (**նա փնտրում է բառը**)... սարսափած: (**Արտահայտիչ**): Սար-սա-փած: (**Նա նորից հանում է գլխարկը, նայում դրա ներսը**): Չարմանալի է: (**Նա կտտացնում է գլխարկի եզրին, կարծես մի օտար մարմին**

հեռացնելու համար, նայում է նորից ներսը, դնում գլխին): Ոչինչ  
հնարավոր չէ անել:

Էստրագոնին ծայրահեղ ջանքերով հաջողվում է հանել կոշիկը:  
Նա նայում է դրա ներսը, ձեռքը մտցնում, շրջում է գլխիվայր, ցնցում  
է, նայում գետնին՝ ոչինչ չի՞ ընկել, ոչինչ չի գտնում, շոշափում է ներ-  
սը՝ նորից անթարթ նայելով իր առջև:

Հետո՞:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Ոչինչ:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Տույց տուր:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Տույց տալու բան չկա:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Փորձի՛ր և հագի՛ր նորից:

ԷՍՏՐԱԳՈՆ (զննած լինելով իր ոտքը).— Մի փոքր օդափոխեմ սրան:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Ահա այդպիսին է մարդը. իր ոտքի մեղքերի համար  
մեղադրում է կոշիկներին: (Նա նորից հանում է գլխաբկը, նայում  
է ներսը, շոշափում է, կտտացնում, փշում է ներս, նորից դնում  
գլխին): Սա դառնում է սպառնալից: (Լնուրջուն: Վլադիմիրը խորը  
մտածմունքի մեջ է, Էստրագոնը ձգում է ոտքի մատները): Ավա-  
զակներից մեկը փրկվեց: (Դադար): Դա լավ տոկոս է: (Դադար):  
Գոգո՛:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Ի՞նչ:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Իսկ եթե մենք մեղանչենք:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Մեղանչենք ինչո՞ւմ:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Օ՛... (Նա մտասուզվում է): Չարժե ընկնել մանրա-  
մասների մեջ:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Մեր ծնվելու համա՛ր:

Վլադիմիրը սրտանց ծիծաղում է և իսկույն դադարում՝ ձեռքը սեղ-  
մած փորին, դեմքն աղավաղված:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Մարդ այլևս չի համարձակվում նույնիսկ ծիծաղել:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Սարսափելի կարիք:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Պարզապես ժպտալ: (Նա ժպտում է անսպասելի, բե-  
րանը մինչև ականջները բացած, շարունակում է ժպտալ, դադա-  
րում է նույնպես անսպասելի): Դա նույն բանը չէ: Ոչինչ հնա-  
րավոր չէ անել: (Դադար): Գոգո՞:

ԷՍՏՐԱԳՈՆ (վրդովված).— Ի՞նչ է եղել:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Դու երբևէ կարդացե՞լ ես Աստվածաշունչը:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Աստվածաշո՛ւնչը... (Նա մտասուզվում է): Ես պետք  
է որ աչքի անցկացրած լինեմ դա:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Հիշո՞ւմ ես Ավետարանները:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Ես հիշում եմ Ավետյաց երկրի քարտեզները<sup>2</sup>: Դրանք գունավոր էին: Ծառ գեղեցիկ: Մեղյալ ծովը բաց կապույտ էր: Դրա միայն տեսքից էս ծարավում էի: Ահա թե ուր կգնանք մենք, ասում էի ես, ահա թե ուր կգնանք մեր մեղրամիսն անցկացնելու: Մենք կողայի՞նք: Մենք Լոջանիկ կլինե՞հինք:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Դու պետք է բանաստեղծ լինեիր:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Ես էի': (Ցույց է տալիս իր ցնցոսիները): Մի՞թե դա ակնհայտ չէ: (Լռություն):

ՎԼԱԴԻՄԻՐ.— Որտե՞ղ կանգնեցի... Ինչպե՞ս է ոտքդ:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Նկատելիորեն ուռչում է:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Թ', այդ երկու ավազակները: Հիշո՞ւմ ես այդ պատմությունը:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Ոչ:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Պատմե՛մ:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Ո՛չ:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Դա կապանի ժամանակը: (Դադար): Դրանք երկու ավազակ էին, որ խաչվեցին նույն ժամանակ, ինչ որ մեր Փըրկիչը<sup>3</sup>: Մեկը...

ԷՍՏՐԱԳՈՆ.— Մեր ի՞նչը:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Մեր Փրկիչը: Երկու ավազակ: Մեկը, ասում են, փրկվեց, իսկ մյուսը... (Նա փնտրում է փրկվել բառի հակառակը)... անհիծվեց:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Փրկվեց ինչի՞ց:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Դժոխքից:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Ես գնում եմ: (Նա չի շարժվում):

ՎԼԱԴԻՄԻՐ.— Եվ... (դադար)... ինչպե՞ս է, որ,— ես հուսով եմ, որ քեզ չեմ ձանձրացնում,— ինչպե՞ս է, որ չորս ավետարանիչներից միայն մեկն է խոսում փրկված ավազակի մասին<sup>4</sup>: Չորսն էլ եղել են այնտեղ, կամ մոտակայքում, և միայն մեկն է խոսում փրկված ավազակի մասին: (Դադար): Գոգո՛, կարո՞ղ ես կյանքում մի անգամ տոն տալ իմ ասածին:

ԷՍՏՐԱԳՈՆ (չափազանցված ոգևորությամբ).— Դա, իսկապես, ինձ թվում է սարսափելի հետաքրքիր:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Չորսից մեկը: Մնացած երեքից երկուսը ընդհանրապես ոչ մի ավազակ չեն հիշատակում, իսկ երրորդն ասում է, որ երկուսն էլ վիրավորեցին նրան:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Ո՞ւմ:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Ի՞նչ:



- ԷՍՏՐԱԳՈՆ.— Ինչի՞ մասին է այս բոլորը: (**Դադար**): Վիրավորեցին  
 ո՞ւմ:
- ՎԼԱԴԻՄԻՐ.— Մեր Փրկչին:
- ԷՍՏՐԱԳՈՆ.— Ինչո՞ւ:
- ՎԼԱԴԻՄԻՐ.— Որովհետև նա նրանց չփրկեց:
- ԷՍՏՐԱԳՈՆ.— Դժոխքի՞ց:
- ՎԼԱԴԻՄԻՐ.— Հիմա՞ր: Մահվանից:
- ԷՍՏՐԱԳՈՆ.— Ինձ թվաց, դու ասացիր դժոխքից:
- ՎԼԱԴԻՄԻՐ.— Մահվանից, մահվանից:
- ԷՍՏՐԱԳՈՆ.— Լավ, հետո՞ ինչ:
- ՎԼԱԴԻՄԻՐ.— Ուրեմն նրանք երկուսն էլ անիծված պետք է լինեին:
- ԷՍՏՐԱԳՈՆ.— Իսկ ինչո՞ւ ոչ:
- ՎԼԱԴԻՄԻՐ.— Բայց մյուս Առաքյալը ասում է, որ մեկը փրկվեց:
- ԷՍՏՐԱԳՈՆ.— Հետո՞: Նրանք իրար հետ համաձայն չեն, ահա և բո-  
 լորը:
- ՎԼԱԴԻՄԻՐ.— Բայց չորսն էլ եղել են այնտեղ: Եվ միայն մեկն է խո-  
 սում փրկված ավազակի մասին: Ինչո՞ւ հավատալ նրան ավելի,  
 քան մյուսների:
- ԷՍՏՐԱԳՈՆ.— Ո՞վ է հավատում նրան:
- ՎԼԱԴԻՄԻՐ.— Բոլորը: Դա միակ վարկածն է, որ մարդիկ գիտեն:
- ԷՍՏՐԱԳՈՆ.— Մարդիկ ապուշաչին կապիկներ են:
- Նա կանգնում է դժվարությամբ, կաղալով գնում է ձախ եզրը,  
 կանգնում է, նայում հեռուն՝ ձեռքով աչքերին շվաք անելով, շրջվում  
 է, գնում աջ եզրը, նայում հեռուն: Վլադիմիրը հետևում է նրան, հետո  
 գնում-բարձրացնում է նրա կոշիկը, նայում ներսը, արագորդեն գցում է:
- ՎԼԱԴԻՄԻՐ.— Թո՞ւ: (Նա թքում է):
- Էստրագոնը շարժվում է կենտրոն, կանգնում՝ մեջքը դահլիճին:
- ԷՍՏՐԱԳՈՆ.— Հիանալի տեղ: (Նա շրջվում է, գալիս առաջ, կանգ-  
 նում է՝ դեմքը դահլիճին): Ոգեշնչող հեռանկարներ: (Շրջվում է  
 դեպի Վլադիմիրը): Արի գնանք:
- ՎԼԱԴԻՄԻՐ.— Չենք կարող:
- ԷՍՏՐԱԳՈՆ.— Ինչո՞ւ:
- ՎԼԱԴԻՄԻՐ.— Մենք սպասում ենք Գողոթին:
- ԷՍՏՐԱԳՈՆ.— Աս՛: (**Դադար**): Դու վստահ ես, որ հենց այստեղ է:
- ՎԼԱԴԻՄԻՐ.— Ի՞նչը:
- ԷՍՏՐԱԳՈՆ.— Որ մենք պետք է սպասենք:
- ՎԼԱԴԻՄԻՐ.— Նա ասաց՝ ծառի մոտ: (**Նրանք նայում են ծառին**):  
 Դու ուրիշ ծառ տեսնո՞ւմ ես:

- ԷՍՏՐԱԳՈՆ.— Ի՞նչ է սա:
- ՎԼԱԴԻՄԻՐ.— Չգիտեմ: Ուռենի:
- ԷՍՏՐԱԳՈՆ.— Ո՞ր եմ տերևները:
- ՎԼԱԴԻՄԻՐ.— Պետք է որ չորացած լինեն:
- ԷՍՏՐԱԳՈՆ.— Էլ լաց չի լինում:
- ՎԼԱԴԻՄԻՐ.— Կամ գուցե հիմա ժամանակը չէ:
- ԷՍՏՐԱԳՈՆ.— Ինձ թվում է, ավելի նման է թփի:
- ՎԼԱԴԻՄԻՐ.— Թփուտի:
- ԷՍՏՐԱԳՈՆ.— Թփի:
- ՎԼԱԴԻՄԻՐ.— Թը... Ի՞նչ էս ուզում ինձ համոզել: Որ մենք սխալ տե՞ղ ենք եկել:
- ԷՍՏՐԱԳՈՆ.— Նա արդեն այստեղ պետք է լիներ:
- ՎԼԱԴԻՄԻՐ.— Նա հաստատ չասաց, որ կգա:
- ԷՍՏՐԱԳՈՆ.— Իսկ եթե նա չգա՞:
- ՎԼԱԴԻՄԻՐ.— Մենք կգանք վաղը:
- ԷՍՏՐԱԳՈՆ.— Եվ հետո մյուս օրը:
- ՎԼԱԴԻՄԻՐ.— Հնարավոր է:
- ԷՍՏՐԱԳՈՆ.— Եվ այդպես շարունակ:
- ՎԼԱԴԻՄԻՐ.— Բանն այն է...
- ԷՍՏՐԱԳՈՆ.— Մինչև որ նա գա:
- ՎԼԱԴԻՄԻՐ.— Դու անգույթ ես:
- ԷՍՏՐԱԳՈՆ.— Երեկ էլ մենք այստեղ էինք:
- ՎԼԱԴԻՄԻՐ.— Օ՛, ոչ, դու սխալվում ես:
- ԷՍՏՐԱԳՈՆ.— Ի՞նչ էինք անում մենք երեկ:
- ՎԼԱԴԻՄԻՐ.— Ինչ էինք անում մենք երե՞կ:
- ԷՍՏՐԱԳՈՆ.— Այո:
- ՎԼԱԴԻՄԻՐ.— Ինչ... **(Չայրացած)**: Ոչինչ հաստատ չէ, երբ քեզ մեռ են խոսում:
- ԷՍՏՐԱԳՈՆ.— Իմ կարծիքով մենք այստեղ էինք:
- ՎԼԱԴԻՄԻՐ **(շարժը նայելով)**.— Դու հիշո՞ւմ ես տեղը:
- ԷՍՏՐԱԳՈՆ.— Ես դա չասացի:
- ՎԼԱԴԻՄԻՐ.— Ուրե՞մն:
- ԷՍՏՐԱԳՈՆ.— Դա գործը չի փոխում:
- ՎԼԱԴԻՄԻՐ.— Մինևույնն է... այս ծառը... **(շրջվելով դեպի դահլիճը)**  
... այս նահիճը:
- ԷՍՏՐԱԳՈՆ.— Դու վստա՞հ ես, որ հենց այս երեկո է:
- ՎԼԱԴԻՄԻՐ.— Ի՞նչը:
- ԷՍՏՐԱԳՈՆ.— Որ մենք պետք է սպասենք:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Նա սասց՝ շաբաթ: (**Դադար**): Կարծեմ:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Կարծում ես:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Պետք է, որ նշած լինեմ դա:

Նա շոշափում է զբազանները, որոնք պայթում են զանազան մանր-մունր բաներից:

ԷՍՏՐԱԳՈՆ (**շատ նեղորեն**).— Բայց ո՞ր շաբաթը: Եվ շաբաթ է արդյոք այսօր: Իսկ գուցե կիրակի՞ է: (**Դադար**): Կամ երկուշաբթի՞: (**Դադար**): Կամ երեքշաբթի՞:

ՎԼԱԴԻՄԻՐ (**կատաղորեն նայելով շուրջը, կարծես ամսաթիվը գրված է շուրջը**).— Դա հնարավոր չէ:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Կամ հինգշաբթի՞:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Ի՞նչ պետք է անենք:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Եթե նա եկել է երեկ, և մենք այստեղ չենք եղել, ապա կարող ես վստահ լինել, որ էլ չի գա այսօր:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Բայց դու ասում ես, մենք երեկ այստեղ էինք:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Ես կարող էի սխալվել: (**Դադար**): Արի մի րոպե լռենք, չե՞ս առարկում:

ՎԼԱԴԻՄԻՐ (**թույլ**).— Լավ: (**Հատրագոնը նստում է թմբին: Վլադիմիրը անհանգիստ ետ ու առաջ է քայլում, կանգնելով ժամանակ առ ժամանակ՝ հեռուն նայելու համար: Հատրագոնը քնում է: Վլադիմիրը կանգնում է Հատրագոնի առջև**) Գոգո՞: Գոգո՞: Գոգո՞:  
Հատրագոնը կտրուկ արթնանում է:

ԷՍՏՐԱԳՈՆ (**վերադառնալով իր վիճակի սարսափին**).— Ես ռնա՞ծ էի: (**Մեղադրանքով**): Ինչո՞ւ երբեք ինձ չես թողնում քնել:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Ես մեռակություն գգացի:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Ես երազ տեսա:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Մի՞ պատմիր ինձ:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Ես տեսա, որ...

ՎԼԱԴԻՄԻՐ.— Մի՞ պատմիր:

ԷՍՏՐԱԳՈՆ (**ձեռքի շարժում դեպի երկիցքը**).— Այս մեկը հերի՞ր է քեզ: (**Լռություն**): Դա լավ չէ քո կողմից, Դիդի՞: Ո՞ւմ սխալ է պատմեմ ես իմ անձնական մղձավանջները, եթե քեզ չեմ կարող պատմել:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Թող դրանք մնան անձնական: Ո՞ւր գիտես, որ ես դա տանել չեմ կարող:

ԷՍՏՐԱԳՈՆ (**առաջ**).— Լինում են ժամանակներ, երբ ես մտածում եմ, ավելի լավ չէ՞ր լինի մեզ համար բաժանվելը:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Դու հեռու չէիր գնա:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Դա շատ վատ կլիներ, իսկապես, շատ վատ: (Դադար): Այնպես չէ՞, Դիդի՛, իսկապես, շատ վատ: (Դադար): Երբ մտածում ես ճանապարհի գեղեցկության մասին: (Դադար): Եվ ճամփորդների բարության: (Դադար: Քծնելով): Այնպես չէ՞, Դիդի՛:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Հանգստացիր:

ԷՍՏՐԱԳՈՆ (զգացմունքով).— Հանգիստ... հանգիստ... Կարգին մարդիկ ասում են հանգիստ: (Դադար): Դու գիտե՞ս անգլիացու պատմությունը հասարակաց տանը:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Այո:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Պատմիր:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Է՛, վերջ տուր:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Մի անգլիացի խմում է սովորականից մի փոքր ավելի և գնում է հասարակաց տուն: Տիրուհին հարցնում է նրան՝ ինչ է ուզում՝ շիկամա՞գ, սևամա՞գ, թե՞ կարմիր մազերով մեկին: Ծարունակիր:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Վե՛րջ տուր:

Վլադիմիրը դուրս է գալիս հապշտապ: Էստրագոնը կանգնում և հետևում է նրան մինչև բեմեզրը: Զեռքով, ինչպես բռնցքամարտիկին ոգեշնչող հանդիսատեսը, տարօրինակ շարժումներ է անում: Ներս է գալիս Վլադիմիրը. նա շրջանցում է Էստրագոնին, գլխահակ կտրում է բեմը: Էստրագոնը քայլ է անում նրա ուղղությամբ, կանգնում է:

ԷՍՏՐԱԳՈՆ (մեղմորեն).— Դու ուզում էիր ինձ հետ խոսե՛լ: (Լռություն: Էստրագոնը մի քայլ է անում առաջ): Դու ինձ ասելի՞ք ունես: (Լռություն: Եվս մի քայլ առաջ): Դիդի՛...

ՎԼԱԴԻՄԻՐ (առանց շրջվելու).— Ես քեզ ոչ մի ասելիք չունեմ:

ԷՍՏՐԱԳՈՆ (քայլ առաջ).— Դու զայրացա՞՞ծ ես: (Լռություն: Քայլ առաջ): Ներիր ինձ: (Լռություն: Քայլ առաջ: Էստրագոնը ձեռքը դնում է Վլադիմիրի ուսին): Դե՛, Դիդի՛: (Լռություն): Տո՛ւր ինձ ձեռքդ: (Վլադիմիրը շրջվում է): Գրկի՛ր ինձ: (Վլադիմիրը մեղմանում է: Նրանք գրկախառնվում են: Էստրագոնը ետ է ցատկում): Քեզ հից սխտորի հո՞տ է գալիս:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Դա լավ է երիկամների համար: (Լռություն: Էստրագոնը ուշադիր նայում է ծառին): Ի՞նչ անենք հիմա:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Մենք սպասում ենք:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Այո, բայց քանի դեռ սպասում ենք:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Ի՞նչ կասես մեզ կախելու մասին:

Վլադիմիրը շճնջում է Էստրագոնի ականջին: Էստրագոնը շատ

գարմացած է:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Իր բոլոր հետևանքներով: Որտեղ որ ընկնում են, թրմ-  
րախոտեր են աճում: Ահա թե ինչու են նրանք ճշում, և որ նրանց  
պոկում են: Չգիտեի՞ր դա:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Արի անմիջապես մեզ կախենք:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Ծյուղի՞ց: (Նրանք գնում են դեպի ծառ): Ես չեմ վա-  
տահում սրան:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Միշտ էլ կարելի է փորձել:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Գնա առաջ:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Քեզնից հետո:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Ո՛չ, ո՛չ, առաջ դու:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Ինչո՞ւ ես:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Դու ինձնից թեթև ես:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Հենց դա է, որ կա:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Չհասկացա:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Փորձիր, մտածիր:

**Վլադիմիրը փորձում է, մտածում:**

ՎԼԱԴԻՄԻՐ (վերջապես).— Ես մնում եմ խախարում:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Ահա թե ինչ: (Նա մտածում է): Ծյուղը... ճյուղը...

(Չաչրացած): Գլխիդ զոռ տուր, չե՞ս կարող:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Դու իմ միակ հույսն ես:

ԷՍՏՐԱԳՈՆ (ճիգով).— Գոգո թեթև— ճյուղը չջարդվել— ճյուղը—  
Գոգո մաքանալ: Դիդի ծանր— ճյուղը ջարդվել— Դիդի մեռակ:  
Հաշվի առնելով...

ՎԼԱԴԻՄԻՐ.— Ես դրա մասին չեի մտածել:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Եթե դա քեզ կախի, ապա կկախի և ինձ:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Բայց արդյո՞ք ես քեզնից ծանր եմ:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Դու այդպես ասացիր: Ես չգիտեմ: Մեկ երկրորդ հա-  
վանականություն կա: Կամ համարյա:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Լավ: Ի՞նչ անենք:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Արի ոչինչ չանենք: Դա ավելի ապահով է:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Արի ապաստենք և տեսնենք նա ինչ կասի:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Ո՞վ:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Գողոն:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Լավ միտք է:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Արի ապաստենք, մինչև ճշգրիտ իմանանք, ինչպիսին է  
մեր վիճակը:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Մյուս կողմից ավելի լավ է երկաթը տաք-տաք ծեծել:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Ինձ հետաքրքրում է, թե ինչ կառաջարկի նա մեզ:

Հետո մենք կարող ենք համաձայնվել կամ մերժել:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Իսկապես, ի՞նչ խնդրեցի՞նք նրան մեզ համար անել:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Դու այնտեղ չէի՞ր:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Ես չէի կարող լսել:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Օ՛... , որոշակի ոչինչ:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Մի տեսակ աղոթք:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Իսկապես:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Մի աղոտ խնդրանք:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Ծիշտ է:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Եվ ի՞նչ պատասխանեց նա:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Որ ինքը կնայի:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Որ չի կարող ոչինչ խոստանալ:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Որ պետք է դրա մասին մտածի:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Իր տան խաղաղության մեջ:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Խորհրդակցի իր ընտանիքի հետ:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Իր ընկերների:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Իր գործակալների:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Իր թղթակիցների:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Իր հաշվեգրքերի:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Իր բանկային հաշիվների:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Մինչև որոշում ընդունելը:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Դա նորմալ երևույթ է:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Այդպես չէ՞:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Կարծում եմ այդպես է:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Ես էլ եմ այդպես կարծում: (Լռություն):

ԷՍՏՐԱԳՈՆ (մտախոգ).— Իսկ մե՞նք:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Ինչպե՞ս:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Ես ասացի՝ «իսկ մե՞նք»:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Ձեմ հասկանում:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Որպես ի՞նչ մենք պետք է ներս գանք:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Ներս գա՞նք:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Սպասիր, մտածիր:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Ներս գա՞լ: Մեր ձեռքերի և ծնկների վրա:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Այդքան վա՛տ:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Ձերդ Բարձրությունն ուզում է հաստատել իր բացառիկ իրավունքները:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Մենք այլևս ոչ մի իրավունք չունե՞նք:

Վլադիմիրի ծիծաղը՝ առաջվա պես բռնագրոսիկ. թեթև ժպիտ:  
ՎԼԱԴԻՄԻՐ.— Դու ինձ ստիպեցիր ծիծաղել, եթե դա արգելված չի-  
ներ:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Մենք կորցրե՞լ ենք մեր իրավունքները:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Մենք դրանք ցրիվ ենք սվել:

Լուրջուն: Նրանք անշարժ են, թևերը կախած, գլխահակ, ծնկները  
ծալած:

ԷՍՏՐԱԳՈՆ (թույլ).— Մենք կապված չե՞նք: (Դադար): Մենք...

ՎԼԱԴԻՄԻՐ (բարձրացնելով ձեռքը).— Լսի՛ր:

Նրանք լսում են խիստ ձգված դիրքով:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Ես ոչինչ չեմ լսում:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Սը՛ս: (Նրանք լսում են: Էստրագոնը կորցնում է հա-  
վասարակչությունը, համարյա ընկնում: Նա բռնում է Վլադիմի-  
րի ձեռքը, որը ցնցվում է: Լսում են իրար վրա թեքված): Ոչ էլ ես:  
Հանգստության հոգոցներ: Նրանք հանգստանում են և բաժանվում:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Դու ինձ վախեցրիր:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Ես կարծեցի դա նա է:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Ո՞վ:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Գողոն:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Պա՛հ: Քամին եղեգների մեջ:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Կարող եմ երդվել, որ բղավոց լսեցի:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Իսկ ինչո՞ւ պետք է նա գոռար:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Իր ձիու վրա: (Լուրջուն):

ԷՍՏՐԱԳՈՆ.— Ես սոված եմ:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Գազար ուզո՞ւմ ես:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Ուրիշ բան չունե՞ս:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Պետք է որ շաղգամ էլ ունենամ:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Գազար տուր ինձ: (Վլադիմիրը բրբրում է գրպաննե-  
րը, հանում է շաղգամը և տալիս Էստրագոնին, որը կծում է աչն:  
Չայրացած): Սա շաղգամ է:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Օ՛, ներողություն: Ես կարծեցի գազար է: (Նա նորից  
բրբրում է գրպանները և շաղգամից բացի ոչինչ չի գտնում): Մի-  
այն շաղգամ կա: (Նա փնտրում է): Պետք է որ վերջինը կերած  
լինես: (Նա փնտրում է): Սպասիր, ունեմ: (Հանում է մի գազար  
և տալիս Էստրագոնին): Ահա, սիրելի՛ բարեկամ: (Էստրագոնը  
չորացնում է դա իր թևի վրա և սկսում ուտել): Դանդաղ կեր,  
վերջինն է:

ԷՍՏՐԱԳՈՆ (ծափելով).— Ես քեզ հարց սվեցի:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Այո՞:  
 ԷՍՏՐԱԳՈՆ.— Դու պատասխանեցի՞ր:  
 ՎԼԱԴԻՄԻՐ.— Ո՞նց է գազարը:  
 ԷՍՏՐԱԳՈՆ.— Գազար է:  
 ՎԼԱԴԻՄԻՐ.— Ծատ լավ, շատ լավ: (Դադար): Ի՞նչ էիր ուզում իմա-  
 նայ:  
 ԷՍՏՐԱԳՈՆ.— Մոռացա: (Ծամում է): Ահա թե ինչն է ինձ անհան-  
 գրատացնում: (Նա շնորհակալությամբ նայում է գազարին, կա-  
 խում է մատենի արանքից): Ես երբեք չեմ մոռանա այս գա-  
 զարը: (Նա մտազբաղ ծծում է գազարի ծայրը): Օ՛, այո, հիմա  
 հիշեցի:  
 ՎԼԱԴԻՄԻՐ.— Ի՞նչ:  
 ԷՍՏՐԱԳՈՆ (քերանը լիքը, անհասկանալի).— Մենք կապված չե՞նք:  
 ՎԼԱԴԻՄԻՐ.— Ես չեմ լսում քո ոչ մի բառը:  
 ԷՍՏՐԱԳՈՆ (ծամում է, կոչ տալիս).— Ես հարցնում եմ քեզ՝ արդյոք  
 մենք կապված չե՞նք:  
 ՎԼԱԴԻՄԻՐ.— Կապվա՞ծ:  
 ԷՍՏՐԱԳՈՆ.— Կապ-ված:  
 ՎԼԱԴԻՄԻՐ.— Ի՞նչ է նշանակում կապված:  
 ԷՍՏՐԱԳՈՆ.— Հետ:  
 ՎԼԱԴԻՄԻՐ.— Բայց ո՞ւմ: Ո՞ւմ հետ:  
 ԷՍՏՐԱԳՈՆ.— Քո այդ մարդու:  
 ՎԼԱԴԻՄԻՐ.— Գողոյի՞: Կապված Գողոյի՞ն: Ինչպիսի՞ գաղափար: Ոչ  
 մի դեպքում (Դադար): Առայժմ:  
 ԷՍՏՐԱԳՈՆ.— Նրա անունը Գողո՞ է:  
 ՎԼԱԴԻՄԻՐ.— Կարծեմ:  
 ԷՍՏՐԱԳՈՆ.— Պատկերացրու միայն: (Նա տերևից բռնած բարձրաց-  
 նում է գազարի մնացորդը, շարժում աչքի առջև): Զարմանալի է,  
 ինչքան շատ եմ ուտում, այնքան վատ է գնում:  
 ՎԼԱԴԻՄԻՐ.— Ինձ մոտ լրիվ հակառակն է:  
 ԷՍՏՐԱԳՈՆ.— Այլ խոսքո՞ւմ:  
 ՎԼԱԴԻՄԻՐ.— Ինչքան շատ եմ ուտում, այնքան ավելի լավ:  
 ԷՍՏՐԱԳՈՆ (երկար մտածելուց հետո).— Դա՞ է հակառակը:  
 ՎԼԱԴԻՄԻՐ.— Խառնվածքի հարց է:  
 ԷՍՏՐԱԳՈՆ.— Բնավորության:  
 ՎԼԱԴԻՄԻՐ.— Ոչինչ անել չի լինի դրա հետ:  
 ԷՍՏՐԱԳՈՆ.— Ոչ մի օգուտ պայքարելուց:  
 ՎԼԱԴԻՄԻՐ.— Մարդ այն է, ինչ որ կա:



ԷՍՏՐԱԳՈՆ.— Ոչ մի օգուտ կաշվից դուրս գալուց:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Էականը չի փոխվում:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Ոչի՞նչ հնարավոր չէ անել: (Նա գազարի մնացորդը առաջարկում է Վլադիմիրին): Ուզո՞ւմ ես վերջացնել սա:

Մի ուժեղ գոռոց, շատ մոտ: Էստրագոնը գցում է գազարը: Նրանք անշարժ են, հետո միասին անսպասելիորեն վազում են դեպի եզրը: Էստրագոնը կանգնում է ճանապարհի կեսին, վազում ետ, բարձրացնում գազարը, դնում գրպանը, վազում է դեպի Վլադիմիրը, որը սպասում է նրան, նորից կանգնում է, վազում է ետ, բարձրացնում կոշիկը, վազում Վլադիմիրին միանալու: Իրար կպած, ուտերը կռացրած, վրտանգից վախով թաքնվելով, նրանք սպասում են:

Մտնում են Փոզզոն և Լաքին: Փոզզոն վարում է Լաքին՝ պարանը կապած նրա վզին, այնպես որ Լաքին առաջինն է հայտնվում, այնուհետև պարանը, որն այնքան երկար է, որ թույլ է տալիս նրան հասնել բեմի մեջտեղը, նախքան Փոզզոյի հայտնվելը: Լաքին կրում է մի ծանր ճամպրուկ, մի ծալովի նստարան, ուտելիքների մի զամբյուղ և մի վերարկու: Փոզզոն՝ մի մտրակ:

ՓՈԶԶՈ (դրսից).— Առա՛ջ: (Մտրակի ճայթյուն: Փոզզոն հայտնվում է:

Նրանք կտրում են բեմը: Լաքին անցնում է Վլադիմիրի և Էստրագոնի մոտով և դուրս է գալիս: Փոզզոն, տեսնելով Վլադիմիրին և Էստրագոնին, կանգնում է: Պարանը ձգվում է: Փոզզոն այն կատաղորեն քաշում է): Ե՛տ:

Բեռնված Լաքին աղմուկով վայր է ընկնում: Վլադիմիրը և Էստրագոնը շրջվում են դեպի նա, երկմտելով՝ նրան օգնելու ցանկության և ուրիշի գործերին չխառնվելու մտայնության միջև: Վլադիմիրը մի քայլ է անում դեպի Լաքին, Էստրագոնը ետ է քաշում նրա թևքից:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Թող գնամ:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Մնա տեղումդ:

ՓՈԶԶՈ.— Զգույշ եղիր: Նա կատաղի է: (Վլադիմիրը և Էստրագոնը շրջվում են դեպի Փոզզոն): Օտարների հետ:

ԷՍՏՐԱԳՈՆ (ցածր ձայնով).— Սա նա՞ է:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Ո՞վ:

ԷՍՏՐԱԳՈՆ (փոքձեղով հիշել անունը).— Ըբբ...

ՎԼԱԴԻՄԻՐ.— Գողո՞ն:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Այո:

ՓՈԶԶՈ.— Ես ներկայանում եմ. Փոզզո:

ՎԼԱԴԻՄԻՐ (Էստրագոնին).— Բոլորովին ո՛չ:

ԷՍՏՐԱԳՈՆ (երկչու, Փոզզոյին).— Դուք պարոն Գողոն չե՛ք, սը՛ր:

**ՓՈԶԶՈ (ահարկու ձանով).**— Ես Փո՛զզոն եմ: (**Լոռթյուն**): Փոզզո՛:  
**(Լոռթյուն):** Մի՛թե այդ անունը ոչինչ չի ասում ձեզ: (**Լոռթյուն**):  
 Ես ասացի, մի՛թե այդ անունը ոչինչ չի ասում ձեզ:  
**Վլադիմիրը և Էստրազոնը հարցական հայացքով նայում են իրար:**  
**ԷՍՏՐԱԳՈՆ (ձևացնելով, թե փնտրում է)** — Պոզզո... Պոզզո...  
**ՎԼԱԴԻՄԻՐ (նույնը).**— Փոզզո՛... Փոզզո՛...  
**ՓՈԶԶՈ.**— Փփոզզոզո՛:  
**ԷՍՏՐԱԳՈՆ.**— Աա, Փոզզո... իրոք... Փոզզո...  
**ՎԼԱԴԻՄԻՐ.**— Փոզզո՞, թե՞ Պոզզո:  
**ԷՍՏՐԱԳՈՆ.**— Փոզզո... ոչ... վախենում եմ ես... ոչ... չեմ կարծում,  
 որ... (**Փոզզոն առաջ է գալիս սպառնալից**):  
**ՎԼԱԴԻՄԻՐ (հաշտվողաբար).**— Ես մի ժամանակ մի քնտանիք գի-  
 տեի Գոզզո անունով: Մայրը ելունդ ուներ դեմքին:  
**ԷՍՏՐԱԳՈՆ (շտապողաբար).**— Մենք այս վայրերից չենք, սը՛ր:  
**ՓՈԶԶՈ (կանգնելով).**— Դուք մարդ արարած եք համենայն դեպս:  
**(Նա դնում է ակնոցը):** Ինչքան ես տեսնում եմ: (**Հանում է ակ-**  
**նոցը**): Նույն տիպի, ինչ որ ես: (**Նա սկսում է քահ-քահ ծիծա-**  
**ղել**): Նույն տիպի, ինչ որ Փոզզոն: Ստեղծված աստծո սպառ-  
 կերով:  
**ՎԼԱԴԻՄԻՐ.**— Գիտեք ինչ...  
**ՓՈԶԶՈ (անստարկելի տոնով).**— Ո՛վ է Գոդոն:  
**ԷՍՏՐԱԳՈՆ.**— Գոդո՛ն:  
**ՓՈԶԶՈ.**— Դուք ինձ Գոդոյի տեղը դրեցիք:  
**ԷՍՏՐԱԳՈՆ.**— Թ՛, ոչ, սը՛ր, ոչ մի վարկչան, սը՛ր:  
**ՓՈԶԶՈ.**— Ո՛վ է նա:  
**ՎԼԱԴԻՄԻՐ.**— Թ՛, նա... Նա այնպես մի ծանոթ է:  
**ԷՍՏՐԱԳՈՆ.**— Բողոքովին ոչ, մենք բազիվ գիտենք Նրան:  
**ՎԼԱԴԻՄԻՐ.**— Ծիշտ է... մենք նրան շատ լավ չգիտենք... բայց մի-  
 նույնն է:  
**ԷՍՏՐԱԳՈՆ.**— Անձամբ ես նրան նույնիսկ չեմ ճանաչի, եթե տեսնեմ:  
**ՓՈԶԶՈ.**— Դուք ինձ նրա տեղը դրեցիք:  
**ԷՍՏՐԱԳՈՆ (ենդ ցատկելով Փոզզոյի առջևից).**— Գիտեք ինչ... դուք  
 հասկանում եք... փոշին... լարվածությունը... սպասումը... ես խոս-  
 տովանում եմ... ես կարծեցի... միայն մի վայրկյան...  
**ՓՈԶԶՈ.**— Սպասո՛ւմ: Ուրեմն դուք սպասո՛ւմ եք նրան:  
**ՎԼԱԴԻՄԻՐ.**— Գիտեք ինչ...  
**ՓՈԶԶՈ.**— Այստե՛ղ: Իմ հողի վրա՛:  
**ՎԼԱԴԻՄԻՐ.**— Մենք ոչ մի վնաս չենք տալիս:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Մենք մեզ լավ ենք պահում:

ՓՈԶԶՈ.— Ծանապարհը բաց է բոլորի համար:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Մենք նույնպես այդ կարծիքին ենք:

ՓՈԶԶՈ.— Դա խայտառակություն է: Բայց դա այդպես է:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Մենք ոչինչ չենք կարող անել:

ՓՈԶԶՈ (մեծահոգաբար).— Եկեք այլևս դրա մասին չխոսենք: (Քաշում է պարանը): Վե՛ր, խո՛գ: (Դադար): Ամեն անգամ, երբ նա ընկնում է, քնում է: (Քաշում է պարանը): Վե՛ր, խո՛գ: (Լաքիի շարժումների և բեռների աղմուկը: Փոզզոն քաշում է պարանը): Ե՛տ: (Մտնում է Լաքին՝ ետ-ետ քայլելով): Կանգնի՛ր: (Լաքին կանգնում է): Ծրջվի՛ր: (Լաքին շրջվում է: Վլադիմիրին և Էստրազոնին, բարեկամաբար): Պարոնա՛յք, ես երջանիկ եմ ձեզ հանդիպելու համար: (Տեսնելով նրանց անվստահությունը): Այո, այո, անկեղծորեն երջանիկ: (Նա քաշում է պարանը): Ավելի մո՛տ: (Լաքին մոտենում է): Կանգնի՛ր: (Լաքին կանգնում է: Վլադիմիրին և Էստրազոնին): Այո, ճանապարհը երկար է թվում, երբ մարդ ճանապարհորդում է մենակ ամբողջ... (Նա գնում է իր ժամացույցը)... այո... (հաշվում է) այո... վեց ժամ, ճիշտ է, ամբողջ վեց ժամ, և ոչ մի կենդանի շունչ: (Լաքիին): Վերարկո՛ւն: (Լաքին ցած է դնում ճամպրուկը, մոտենում է, տալիս վերարկուն, ետ է գնում իր տեղը, բարձրացնում ճամպրուկը): Պահի՛ր սա: (Փոզզոն պարզում է մտրակը: Լաքին հոտենում է՝ երկու ձեռքերն էլ գրագված, վերցնում է մտրակը առամներով, հետո վերադառնում է իր տեղը: Փոզզոն սկսում է հագնել վերարկուն: Դադարում է): Վերարկո՛ւն: (Լաքին ցած է դնում ճամպրուկը, զամբյուղը և նստաբանը, մոտենում է, օգնում Փոզզոյին վերարկուն հագնել, վերադառնում է իր տեղը, բարձրացնում ճամպրուկը, զամբյուղը և նստառանը): Այս երեկո աշնան շունչ կա օդում: (Փոզզոն կոճկում է վերարկուն, թեքվում, գնում է իրեն, ուղղվում է): Մըտրա՛կը: (Լաքին մոտենում է, թեքվում, Փոզզոն վերցնում է մտրակը նրա բերանից, Լաքին ետ է գնում դեպի իր նստաբանը): Այո, պարոնա՛յք, ես չեմ կարող երկար դիմանալ առանց իմ նմանների ընկերակցության: (Նա սկնոցը դնում է աչքին և նայում երկու իր նմանների): Նույնիսկ, երբ նմանությունը լիակատար չէ: (Նա հանում է սկնոցը): Նստաբա՛նը: (Լաքին ցած է դնում ճամպրուկն ու զամբյուղը, մոտենում է, բացում նստաբանը, դնում ցած, վերադառնում իր տեղը, բարձրացնում է ճամպրուկն ու զամբյուղը): Ավելի՛ մոտ: (Փոզզոն նստում է, դնում է մտրակի բռնակը

**Լաքիի կրծքին և հրում): Ե՛տ: (Լաքին մի քայլ է անում ետ): Ա-**  
**վելի՛: (Լաքին ևս մի քայլ է անում ետ): Կանգնի՛ր: (Լաքին կանգ-**  
**նում է: Վլադիմիրին և Էստրազոնին):** Ահա թե ինչու, ձեր թույլ-  
 տրվությանը, ես սուաշարկեցի մի պահ զվարճանալ, նախքան  
 կշարունակեմ իմ վտանգավոր ձեռնարկումը: **Չամբյո՛ղը: (Լաքին**  
**մոտենում է, տալիս է զամբյուղը, գնում իր տեղը):** Մաքուր օդը  
 կատաղի ախորժակ է բացում: **(Բացում է զամբյուղը, հանում մի**  
**կտոր հավ, հաց և մի շիշ գինի):** **Չամբյո՛ղը: (Լաքին մոտենում**  
**է, վերցնում զամբյուղը, վերադառնում իր տեղը):** **Հեռո՛ւ: (Լաքին**  
**քայլ է անում ետ):** Նրանից գարշահոտություն է փչում: Երջանիկ  
 օրե՛ր: **(Նա խմում է շիշ, դնում ցած, սկսում ուտել: Լուրջուն,**  
**Վլադիմիրը և Էստրազոնը, սկզբում զգուշորեն, հետո ավելի հա-**  
**մարձակ, սկսում են պտտվել Լաքիի շուրջը՝ զննել նրան ոտքից**  
**գլուխ: Փոզզոն ազահորեն ուտում է հավը՝ դեն զցելով ոսկորները**  
**դրանք ծծելուց հետո: Լաքին կռանում է, մինչև որ ճամպրուկն**  
**ու զամբյուղը քսվում են գետնին, հետո ողղվում է կտրուկ և սկը-**  
**տում է նորից կռանալ: Ոտքի վրա քնող մարդու ռիթմիկ շարժում):**

ԷՍՏՐԱԳՈՆ.— Ի՞նչն է անհանգստացնում նրան:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Նա հոգնած է թվում:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Ինչո՞ւ ճամպրուկները ցած չի դնում:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Ես ի՞նչ գիտեմ: **(Նրանք մոտ են Լաքիին):** Զգո՛ւյշ:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Մի բան սաա նրան:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Նայի՛ր:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Ի՞նչ:

ՎԼԱԴԻՄԻՐ **(ցույց տալով).**— Նրա վիզը:

ԷՍՏՐԱԳՈՆ **(նայելով նրա վզին).**— Ես ոչինչ չեմ տեսնում:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Այստեղ:

**Էստրազոնը մոտենում է Վլադիմիրին:**

ԷՍՏՐԱԳՈՆ.— Օ՛, տեսա:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Թարմ վերք է:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Պարանից է:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Ծփումից է:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Աներևակայելի է:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Դա հանգուցն է:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Դա կապն է:

Նրանք վերսկում են հետագա:տությունը՝ մանրամասն զննելով դեմ-  
 քը:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Նա վատ տեսք չունի:

ԷՍՏՐԱԳՈՆ (թոթվելով ուտերը, դեմքը ծամածռելով).— Այդ կարծի-  
քի՞ն ես:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Մի փոքր կանացի է:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Նայիր բերանի թուփին:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Անխուսափելի է:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Նայիր բերանի փախնքին:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Երևի նա տկարամիտ է:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Կրետին:

ՎԼԱԴԻՄԻՐ (նայելով ավելի մոտիկից).— Դա նման է խալիպի:

ԷՍՏՐԱԳՈՆ (նույնպես).— Դա ստույգ չէ:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Նա ծանր է շնչում:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Անխուսափելի է:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Իսկ նրա աչքե՛րը:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Ի՞նչ է եղել նրանց:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Դեմքից դուրս են պրծած:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Վերջին շնչում նայում է ինձ:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Դա ստույգ չէ: (Քաղաք): Մի հարց տուր նրան:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Ծիշտ կլինի՞ դա:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Իսկ ի՞նչ ոիսկ ենք անում մենք:

ԷՍՏՐԱԳՈՆ (երկչուտ).— Պարո՛ն...

ՎԼԱԴԻՄԻՐ.— Ավելի բարձր:

ԷՍՏՐԱԳՈՆ (ավելի բարձր).— Պարո՛ն...

ՓՈԶԶՈ — Հանգիստ թողեք նրան: (Նրանք շրջվում են դեպի Փոզզոն, որը, ուտելը վերջացրած, ձեռքով մաքրում է բերանը): Չե՛ք տեսնում, որ նա ուզում է հանգստանալ: Զամբյո՛ղը: (Նա մի լուցկի է վառում և սկսում կայցնել ծխամորճը: Լաքին տեսնում է հավի ոսկորները գետնին և ազահորեն նայում է նրանց: Քանի որ Լաքին չի շարժվում, Փոզզոն զայրացած նետում է լուցկին և ձգում պարանը): Զամբյո՛ղը, խո՛գ: (Լաքին համարյա ընկնում է, ուշքի օտ իս, առաջանում է, դնում շիշը զամբյուղի մեջ, վերադառնում իջ տեղը: Էստրագոնը նայում է ոսկորներին: Փոզզոն վառում է նա մի լուցկի և կայցնում ծխամորճը): Ի՞նչ էիք սպասում, դա նրա օտքն է: (Նա ձգվում է, ծխում է ծխամորճը, պարզում ոտքերը): Ան, լս՛վ է:

ԷՍՏՐԱԳՈՆ (երկչուտ).— Խնդրում եմ, սը՛ր...

ՓՈԶԶՈ — Ի՞նչ է, իմ բարի՛ մարդ:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Ըն... դուք վերջացրե՛լ եք... ըն... դուք պետք չունե՛ք... ըն... ոսկորները, սը՛ր:

ՎԼԱԴԻՄԻՐ (ցնցված).— Չէի՞ր կարող սպասել:

ՓՈԶԶՈ.— Ոչ, ոչ, նա լավ արեց, որ խնդրեց: Կարիք ունե՞մ եւ ոսկորների: (Նա շրջում է դրանք իր մտրակի ծայրով): Ոչ, անձամբ եւ դրանց կարիքը այլևս չունեմ: (Էստրագոնը մի քայլ է անում դեպի ոսկորները): Բայց... (Էստրագոնը կանգնում է խկույն)... քայց տեսականորեն ոսկորները հասնում են կրողին: Ուրեմն նրան պետք է հարցնել: (Էստրագոնը շրջվում է դեպի Լաքին, տատանվում է): Գնա, գնա, հարցրու: Մի վախենա, նա կասի քեզ:

**Էստրագոնը մոտենում է Լաքին, կանգնում նրա առջև:**

ԷՍՏՐԱԳՈՆ.— Պարո՛ն... ներեցեք... սարո՛ն...

ՓՈԶԶՈ.— Քեզ հետ են խոսում, խո՛զ: Պատասխանի՛ր: (Էստրագոնին): Նորից փորձիր:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Ներեցեք, պարո՛ն, ոսկորները, դուք ուզո՞ւմ եք ոսկորները:

**Լաքին երկար նայում է Էստրագոնին:**

ՓՈԶԶՈ (հիացմունքով).— Պարո՛ն: (Լաքին կախում է գլուխը): Պատասխանի՛ր: Ուզո՞ւմ ես, թե՞ ոչ: (Լաքին լռում է: Էստրագոնին): Դրանք քոնն են: (Էստրագոնը նետվում է դեպի ոսկորները, բարձրացնում և սկսում կրծել): Դա իմ դուրը չի գալիս: Ես չեմ հիշում, որ նա առաջ երբևէ հրաժարվեք ոսկորներից: (Անհանգիստ նայում է Լաքին): Ծատ հետաքրքիր կլինի, եթե նա հիվանդանա: (Ծխում է):

ՎԼԱԴԻՄԻՐ (պայթելով).— Խայտառակություն՝ն է:

Լռություն: Էստրագոնը ցնցված, դադարում է ծամել, հերթով նայում է Փոզզոյին և Վլադիմիրին: Փոզզոն արտաքուստ հանգիստ է, Վլադիմիրը՝ վրդովված:

ՓՈԶԶՈ (Վլադիմիրին).— Դուք որևէ կոնկրետ բա՛ն է նկատի ունեք:

ՎԼԱԴԻՄԻՐ (որոշակիորեն կակազելով).— Վարվել մարդու հետ...

(ձեռքի շարժում դեպի Լաքին)... այդպես... ես կարծում եմ, որ...

ոչ... մարդ սրարածը... ոչ... խայտառակություն է:

ԷՍՏՐԱԳՈՆ (չուզելով ետ մնալ).— Խայտառակություն: (Վերսկսում է ծամել):

ՓՈԶԶՈ.— Դուք դաժան եք: (Վլադիմիրին): Քանի՞ տարեկան եք դուք:

Եթե կարելի է հարցնել: (Լռություն): Վաթսո՞ւն: Յոթանասո՞ւն:

(Էստրագոնին): Ի՞նչ եք կարծում, քանի՞ տարեկան է նա:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Տասնմեկ:

ՓՈԶԶՈ.— Ես ձանձրացրի ձեզ: (Նա բռնի է տալիս ծխամորճը մըրտ-

րակի վրա, ուրի կանգնում): Ես պետք է շարժվեմ: Շնորհակալություն ինձ ընկերակցելու համար: **(Մտասուզվում է):** Թերևս, մի անգամ էլ ծխեմ մի՞շն գնալը: Ի՞նչ կարծիքի եք: **(Նրանք ոչինչ չեն ասում):** Օ՛, ես թույլ ծխող եմ, շատ թույլ, ես սովորություն չունեմ երկու անգամ իրար ետևից ծխելու, դա **(ձեռքը սրբտին, հոգոցով)** իմ սիրտը թփթփացնում է: **(Դադար):** Դա նիկոտինն է, մարդ ներժժում է այն՝ հակառակ նախազգուշությանը: **(Հոգոցներ):** Դուք դա գիտեք: **(Լուրջուն):** Բայց գուցե դուք չե՞ք ծխում: Այո՞: Ո՛չ: Դա բոլորովին կարևոր չէ: **(Լուրջուն):** Բայց ինչպե՞ս պետք է այժմ ես նստեմ, որ անբռնազբոս լինի, այժմ, երբ ես բարձրացել եմ: Առանց ցույց տալու, ոնց ասեմ, առանց ցույց տալու, որ դողում եմ: **(Վլադիմիրին):** Ինչպե՞ս: **(Լուրջուն):** Գուցե դու ոչինչ չասեցի՞ր: **(Լուրջուն):** Դա բոլորովին եստևոր չէ: Տեսնենք...

**Նա մտասուզվում է:**

**Ի ՍՏՐԱԳՈՆ.—** Օ՛, լավ էր:

**Նա ոսկորները դնում է գրպանը:**

**ՎԼԱԴԻՄԻՐ.—** Արի գնանք:

**Ի ՍՏՐԱԳՈՆ.—** Այսքան շո՞ւտ:

**ՓՈԶԶՈ.—** Մի րոպե: **(Նա ձգում է պարանը):** Նստարանը: **(Ցույց է տալիս մտրակով: Լաքին մոտեցնում է նստարանը):** Ավելի՛: Այնտե՛ղ: **(Նստում է: Լաքին գնում է իր տեղը):** Եղավ:

**Նա լցնում է ծխամորճը:**

**ՎԼԱԴԻՄԻՐ.—** Արի գնանք այստեղից:

**ՓՈԶԶՈ.—** Հուսով եմ, ես ձեզ չեմ բշտում այստեղից: Սպասեք մի քիչ էլ, դուք չեք փոշմանի:

**Ի ՍՏՐԱԳՈՆ (ակնկալիքով).—** Մենք առանձնապես չենք շտապում:

**ՓՈԶԶՈ (վառելով ծխամորճը).—** Երկրորդը երբեք նույնքան հաճելի չէ: **(Հանում է ծխամորճը բերանից, գնում այն):** Ինչպես առասիմը, ես նկատի ունեմ: **(Ծխամորճը նորից դնում է բերանը):** Բայց միևնույնն է, հաճելի է:

**ՎԼԱԴԻՄԻՐ.—** Ես գնում եմ:

**ՓՈԶԶՈ** Նա այլևս չի կարող տանել իմ ներկայությունը: Ես գուցե ստանձնապես մարդկային չեմ, բայց ում գործն է դա: **(Վլադիմիրին):** Մտածիր երկու անգամ, նախքան մի անմիտ քալ անելը: Իսկույն դուր գնացիք հիմա, երբ դեռ ցերեկ է, իսկ ոչ ոք չի կարող նկատել, որ հիմա ցերեկ է: **(Բոլորը նայում են երկնքին):** Լավ: **(Ն,ս նր դադարում են երկնքին նայել):** Ի՞նչ կպատահի այդ դեպ-

քում. (հանում է ծխամորճը բերանից, զննում այն) ես կապ չունեմ. (Աս նորից է վառում ծխամորճը) այդ դեպքում (փչում է) այդ դեպքում (փչում է) ի՞նչ կդառնա այդ դեպքում ձեր պայմանավորվածությունը այդ Գողկի... Գողոչի... Գողենի... ինչ որ է, դուք հասկանում եք, ում ես նկատի ունեմ, ով որ պահում է ձեր ապագան իր ձեռքում... (լուռություն)... գոնե ձեր մոտակա ապագան:

**ՎԼԱԴԻՄԻՐ.—** Ի՞նչ գիտեք:

**ՓՈԶԶՈ.—** Նա խոսեց ինձ հետ նորից: Եթե ապախա շարունակի, մենք շուտով լավ ընկերներ կդառնանք:

**ԷՍՏՐԱԳՈՆ.—** Ինչո՞ւ նա ցած չի դնում իր ճամպրուկները:

**ՓՈԶԶՈ —** Ես նույնպես ուրախ կլինեմ հանդիպել նրան: Ինչքան ավելի շատ մարդկանց եմ հանդիպում, այնքան ավելի երջանիկ եմ դառնում: Ամենապարզ արարածից ածգամ մարդ բաժանվում է իմաստնացած, ավելի հարուստ, ավելի գիտակցելով իր արժանիքները: Նույնիսկ դուք... (Աս հերթով նայում է նրանց ցուցադրաբար՝ հասկացնելու համար, որ նրանց երկուսին ի նկատի ունի)... նույնիսկ դուք, ով իմանա, ավելացրել եք իմ պաշարը:

**ԷՍՏՐԱԳՈՆ.—** Ինչո՞ւ նա ցած չի դնում իր ճամպրուկները:

**ՓՈԶԶՈ.—** Բայց դա ինձ կգարմացնի:

**ՎԼԱԴԻՄԻՐ.—** Զեզ հարց եմ տալիս:

**ՓՈԶԶՈ (զարմացած).—** Հա՛րց: Ո՞վ: Ի՞նչ: Մի բույե առաջ դուք ինձ արր էիք կոչում՝ վախով և դողալով: Հիմա դուք ինձ հարցեր եք տալիս: Սրանից լավ բան դուրս չի գա:

**ՎԼԱԴԻՄԻՐ (Էստրագոնին).—** Ես կարծում եմ նա լսում է:

**ԷՍՏՐԱԳՈՆ (պտտվելով Լաքիի շորջը).—** Ի՞նչ:

**ՎԼԱԴԻՄԻՐ.—** Դու կարող ես հիմա նրան հարցնել: Նա անհանգիստ է:

**ԷՍՏՐԱԳՈՆ.—** Ի՞նչ հարցնեմ նրան:

**ՎԼԱԴԻՄԻՐ.—** Ինչո՞ւ նա ցած չի դնում ճամպրուկները:

**ԷՍՏՐԱԳՈՆ.—** Ես ինքս զարմանում եմ:

**ՎԼԱԴԻՄԻՐ.—** Հարցրու, ի՞նչ կա որ:

**ՓՈԶԶՈ (որը անհանգիստ ուշադրությամբ հետևում էր այս հարցափոխանակությանը, որպեսզի հանկարձ հարց բաց չթողնի).—** Դուք ուզում եք իմանալ, թե ինչու նա ցած չի դնում ճամպրուկները, այդպե՞ս կոչեցիք դրանք:

**ՎԼԱԴԻՄԻՐ.—** Հենց այդպես:



ՎԱՐՁՆ (Հատրագոնին).— Դու վառա՞ն ես, որ համաձայն ես նրա  
հետ:

ԼՍՏՐԱԳՈՆ.— Նա փնջում է փոկի պես:

ՓՈԶՁՈ.— Պատասխանն այս է: (Հատրագոնին): Բայց հանգիստ մնա,  
յսնորում եմ, դու ինձ նյարդալնացնում ես:

ՎԱՐԻՄԻՐ.— Այստեղ:

ԼՍՏՐԱԳՈՆ.— Ի՞նչ է:

ՎԱՐԻՄԻՐ.— Նա հիմա կխոսի:

**Անշարժ, իրար կողքի նրանք սպասում են:**

ՓՈԶՁՈ.— Լավ, ամեն ինչ պարզեցի՞ք: Բոլորը պատրա՞ստ են: (Նա-  
յում է Լաքիին, ձգում պարանը: Լաքին բարձրացնում է գլուխը):  
Նայի՛ր ինձ, խո՛ղ: (Լաքին նայում է նրան): Լալ: (Նա ծխամոր-  
ճը դնում է գրպանը, հանում է փոքր հեղուկացիքը և փչում կո-  
կորդը, դնում է գրպանը, մաքրում է կոկորդը, թքում, նորից հա-  
նում է հեղուկացիքը, փչում կոկորդը, դնում գրպանը): Ես պատ-  
րաստ եմ: Բոլորը լսո՞ւմ են: Բոլորը պատրա՞ստ են: (Նայում է  
նրանց հերթով, վերջում՝ Լաքիին, ձգում է պարանը): Խո՛ղ: (Լա-  
քին բարձրացնում է գլուխը): Ես չեմ սիրում խոսել դատարկու-  
թյան մեջ: Լավ: Տեսնենք:

**Նա մտասուզվում է:**

ԼՍՏՐԱԳՈՆ.— Ես գնում եմ:

ՓՈԶՁՈ.— Ի՞նչ եք ուզում դուք կոնկրետ իմանալ:

ՎԱՐԻՄԻՐ.— Ինչո՞ւ նա...

ՓՈԶՁՈ (մոլեգնած).— Մի՛ ընդհատեք ինձ: (Դադար: Ավելի մեղմ):  
Եթե բոլորս միաժամանակ խոսենք, ապա ոչ մի բանի չենք հաս-  
նի: (Դադար): Ի՞նչ էի ես ասում: (Դադար: Բարձր): Ի՞նչ էի ես  
ասում:

**Վառի՞միքը ձևացնում է ծանր բեռ տանող մարդու: Փոզզոն նա-  
ում է նրա թ զարմացած:**

ԼՍՏՐԱԳՈՆ (դժվարությամբ).— Ծամպրուկները: (Նա ցույց է տալիս  
Լաքիին): Ինչո՞ւ: Միշտ պահած: (Նա ծովում է, ծանր շնչելով):  
Էլ բեր գած չի դնում: (Նա բացում է ձեռքերը՝ ուղղելով վեր, թե-  
րե սգած): Ինչո՞ւ:

ՓՈԶՁՈ.— Աա՛: Ինչո՞ւ ասաջ այդպես չէիք ասում: Ինչո՞ւ նա այն-  
պես չի անում, որ հանգիստ լինի: Եկեք փորձենք պարզել դա:  
Ոե՞նի ես լրա իրավունքը: Իհարկե: Հետևաբար նա չի ուզում:  
Սե՛տ ձե՛զ պատասխանը: Իսկ ինչո՞ւ նա չի ուզում: (Դադար):  
Երբեմն, պատճառը հետևյալն է:

ՎԼԱԴԻՄԻՐ (Էստրադոնիս)։— Նշում արա դրա մասին:

ՓՈԶԶՈ.— Նա ուզում է ինձ վրա տպավորություն գործել, որ իրեն սլահեմ:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Ի՞նչ:

ՓՈԶԶՈ.— Գուցե ես լռիվ միջոց չստացի: Նա ուզում է մեղմացնել ինձ, որ ես դեն գնեմ նրանից ազատվելու միտքը: Չէ՛, դա էլ այն չէ:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Դուք ուզում եք նրանից ազատվե՞լ:

ՓՈԶԶՈ.— Նա ուզում է խաբել ինձ, բայց չի կարող:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Դուք ուզում եք նրանից ազատվե՞լ:

ՓՈԶԶՈ.— Նա կարծում է, որ երբ ես տեսնեմ, թե ինչքան լավ է նա կրում, կգայթակղվեմ և կթողնեմ նրան այդ պաշտոնում:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Դուք նրանից ձանձրացե՞լ եք:

ՓՈԶԶՈ.— Իրականում նա կրում է խոզի պես: Դա նրա գործը չէ:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Դուք ուզում եք նրանից ազատվե՞լ:

ՓՈԶԶՈ.— Նա կարծում է, որ երբ ես տեսնեմ նրա անխնայությունը, կզղջամ իմ որոշման համար: Այս է նրա խղճուկ խորամանկությունը: Կարծես ես ուրիշ ստրուկներ չունեմ: **(Երեքն էլ նայում են Լաքին)**: Ատլա՛ս, Յուպիտերի որդի՞: **(Լռություն)**: Ահա իմ կարծիքը: Ուրիշ հարցեր կա՞ն: **(Հանում է հեղուկացիքը)**:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Դուք ուզում եք նրանից ազատվե՞լ:

ՓՈԶԶՈ.— Նկատեք, որ շատ հեշտությամբ ես կարող էի նրա տեղում լինել և նա՛ իմ: Եթե դիպվածը այլ կերպ չցանկանար: Ամեն մեկին այն, ինչի նա արժանի է:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Դուք ուզում եք:

ՓՈԶԶՈ.— Ի՞նչ:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Դուք ուզում եք նրանից ազատվե՞լ:

ՓՈԶԶՈ.— Այո: Բայց փոխանակ նրան թշվու, ինչը ես կարող էի անել, ես ուզում եմ ասել, փոխանակ նրա հետույքին հարվածելով թշվու, իմ բարեսրտության շնորհիվ, ես նրան տանում եմ տոնավաճառ, որտեղ հույս ունեմ նրա համար լավ գին ստանալ: Ծրշւարտություն՞՞ այն է, որ ասպիսի էակներին հնարավոր չէ թշել: Ամենից լավը նրանց սպանելն է:

**Լաքին լաց է լինում:**

ԷՍՏՐԱԳՈՆ.— Նա լաց է լինում:

ՓՈԶԶՈ.— Ծերացած շներն ավելի արժանատիություն ունեն: **(Նա առաջաքկում է իր թաշկինակը Էստրադոնին)**: Հանգստացրո՛ւ նրան, քանի որ խղճում ես: **(Էստրադոնը տատանվում է)**: Մոտեցի՛ր: **(Էստրադոնը վերցնում է թաշկինակը)**: Մաքրի՛ր նրա

արցունքները, նա պակաս լքված կզգա իրեն. **(Էստրագոնը տա-տանվում է):**

**ՎԱՆԻՄԻՐ.**— Լավ, տուր ինձ, ես կանեմ:

**Էստրագոնը մերժում է տալ թաշկինակը: Մանկական շարժումներ: ՓՈԶԶՈ.**— Շուտ արեք, նախքան նա կդադարի:

**Էստրագոնը մոտենում է Լաբին և ուզում է սրբել նրա արցունք-ները: Լաբին կատաղորեն հարվածում է նրա սրունքին: Էստրագոնը գցում է թաշկինակը, ետ ցատկում, ճոճվելով բեմի վրա, ոռնալով ցա-վից:**

**Թաշկինակը:**

**Լաբին ցած է դնում ճամպրուկն ու զամբյուղը, բարձրացնում թաշ-կինակը, տալիս Փոզզոյին, վերադառնում իր տեղը, բարձրացնում ճամպրուկն ու զամբյուղը:**

**ԼՍՏՐԱԳՈՆ.**— Օ՛հ, խո՛զ: **(Նա բարձրացնում է շապարի փեղքը):** Նա աղանդակեց ինձ:

**ՓՈԶԶՈ.**— Ես ասացի, որ նա չի սիրում օտարներին:

**ՎԱՆԻՄԻՐ (Էստրագոնին).**— Ցույց տուր: **(Էստրագոնը ցույց է տա-լիս ոտքը: Փոզզոյին, զայրացած):** Արյուն է գալիս:

**ՓՈԶԶՈ.**— Դա լավ նշան է:

**ԼՍՏՐԱԳՈՆ (կանգնելով մի ոտքի վրա).**— Ես էլ երբեք չեմ քայլի:

**ՎԱՆԻՄԻՐ (բնքշորեն).**— Ես քեզ կտանեմ մեջքիս վրա: **(Գաղար):** Եթե անհրաժեշտ լինի:

**ՓՈԶԶՈ.**— Նա դադարեց լաց լինելուց: **(Էստրագոնին):** Դու նրան վե-րադարձրի իր նախկին վիճակին: **(Բանաստեղծորեն):** Աշխար-հի արցունքները հաստատուն մեծություն են: Ամեն մեկի դիմաց, որը սկսում է լաց լինել, մի ուրիշ տեղ մեկը դադարում է: Նույնը նիշտ է ծիծաղի մասին: **(Նա ծիծաղում է):** Եկեք վատ չխոսենք սեր սերնդի մասին, այն ավելի դժբախտ չէ, քան իր նախորդ-ները: **(Լուրջուն):** Եկեք լավ էլ չխոսենք: **(Լուրջուն):** Եկեք դրա մասին ընդհանրապես չխոսենք: **(Լուրջուն):** Ծիշտ է, որ բնակ-չությունը անել է:

**ՎԱՆԻՄԻՐ.**— Փորձիր քայլել:

**Էստրագոնը կաղաչով մի քանի քայլ է անում, կանգնում Լաբիի դիմաց և թրում նրա վրա, հեռո գնում և նստում է թմբին:**

**ՓՈԶԶՈ.**— Գուշակեք, թե ով է սովորեցրել ինձ այս բոլոր հիանալի բաները: **(Գաղար: Ցույց տալով Լաբին):** Իմ Լաբին:

**ՎԱՆԻՄԻՐ (նաչելով երկնքին).**— Կգա՞ գիշերը վերջապես:

**ՓՈԶԶՈ.**— Ընաց նրանից առաջ իմ բոլոր մտքերը, իմ բոլոր զգաց-

մունքները դատարկ բաների մասին էին: (Դադար: Անսովոր կրքով): Մասնագիտական մտահոգություններ: (Ավելի մեղմ): Գեղեցկություն, նրբություն, առաջին ջրի ճշմարտություն: Ես գիտեի, որ դրանք ինձնից հեռու են: Այսպիսով էս վերցրեցի մի նուր:

**ՎԼԱԴԻՄԻՐ (սթափվելով).—** Նո՞ւր:

**ՓՈԶԶՈ.**— Դա մոտավորապես վաթսուն տարի առաջ էր... (Նա զրկում է իր ժամացույցը)... այո, մոտավորապես վաթսուն: (Հպարտորեն կանգնելով): Դուք չէիք մտածի՝ ինձ նայելով, այնպես չէ՞: (Վաղիմիրը նայում է Լաքին): Նրա համեմատ ես երիտասարդ եմ, չէ՞: (Դադար): Գլխա՛րկը: (Լաքին ցած է դնում զամբյուղը և հանում գլխարկը: Նրա երկար, սպիտակ մազերը թափվում են նրեւին: Նա գլխարկը դնում է թևի տակ և բարձրացնում զամբյուղը): Հիմա նայե՛ք: (Փոզզոն հանում է իր գլխարկը: Նա լրիվ նահատ է: Նորից դնում է գլխին): Տեսա՞ք:

**ՎԼԱԴԻՄԻՐ.**— Եվ հիմա դուք բշում եք նրան: Այսպիսի մի հին և հավատարիմ ծառայի:

**ԷՍՏՐԱԳՈՆ.**— Ծա՛ն որդի:

**Փոզզոն՝** ավելի ու ավելի անհանգիստ:

**ՎԼԱԴԻՄԻՐ.**— Ամեն լավ բան նրանից դուրս ծծելուց հետո դեն նետել նրան ինչպես... ինչպես բանաձի կեղև: Իրոք...

**ՓՈԶԶՈ (տնքալով, գլուխը բռնելով).**— Չեմ կարող տանել դա... այլևս... այնպես, ինչպես նա է իրեն պահում... դուք չգիտեք... դա սարսափելի է... նա պետք է գնա... (Նա թափահարում է ձեռքերը)... ես խելագարվում եմ... (Նա փլվում է, գլուխը ձեռքերի մեջ) ... չեմ կարող տանել դա... այլևս...

**Լուրջուն: Բոլորը նայում են Փոզզոյին: Լաքին դողում է:**

**ՎԼԱԴԻՄԻՐ.**— Նա չի կարող տանել:

**ԷՍՏՐԱԳՈՆ.**— Այլևս:

**ՎԼԱԴԻՄԻՐ.**— Նա խելագարվում է:

**ԷՍՏՐԱԳՈՆ.**— Զգվելի է:

**ՎԼԱԴԻՄԻՐ (Լաքին).**— Ինչպե՞ս ես համարձակվում: Դա զգվելի է: Այսպիսի լավ տե՛ր: Խաչել նրան այդպե՛ս: Այսքան տարի հեռու: Իրո՛ք:

**ՓՈԶԶՈ (հեկեկալով).**— Նա առաջ այնքան բարի էր... այնքան օգնող... և ուրախացնող... իմ լավ հրեշտակ... իսկ հիմա... նա սպանում է ինձ:

**ԷՍՏՐԱԳՈՆ (Վաղիմիրին).**— Նա ուզում է նրա փոխարե՛ն...

ՎԼԱԴԻՄԻՐ.— Ի՞նչ:

ԼՍՏՐԱԳՈՆ.— Ուզում է նրա փոխարեն մեկ ուրիշին գտնել, թե՛ ոչ:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Ձեմ կարծում:

ԼՍՏՐԱԳՈՆ.— Ի՞նչ:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Չգիտեմ:

ԼՍՏՐԱԳՈՆ.— Հարցրու նրան:

ՓՈԶԶՈ (հանգստացած).— Պարոններ: Ես չգիտեմ ի՞նչ սխառահեղ  
իճձ: Ներեցեք: Մոռացեք իմ բոլոր սասածները: (**Քոլորովին խա-  
ղաղված**): Ես չեմ հիշում ստույգ, թե ինչ էր, բայց կարող եք վըս-  
տահ լինել, որ ոչ մի ճիշտ բառ չկար այնտեղ: (**Քարձբանալով,  
խփելով կրծքին**): Նմա՞ն եմ ես այն մարդուն, որին հնարավոր  
է ցավ պատճառել: Անկեղծորե՞ն: (**Նա քրքրում է գրպանները**):  
Ի՞նչ արեցի ծխամորճա:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Սքանչելի երեկո եմք անցկացնում:

ԼՍՏՐԱԳՈՆ.— Անմոռանալի:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Եվ դա չի վերջացել:

ԼՍՏՐԱԳՈՆ.— Ակնհայտորեն ոչ:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Սա միայն սկիզբն է:

ԼՍՏՐԱԳՈՆ.— Ահավոր է:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Դա ավելի վատ է, քան թատրոնում լինելը:

ԼՍՏՐԱԳՈՆ.— Կրկեսում:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Մյուզիք-հոլլում:

ԼՍՏՐԱԳՈՆ.— Կրկեսում:

ՓՈԶԶՈ.— Ի՞նչ կարող եմ արած լինել ծխամորճա:

ԼՍՏՐԱԳՈՆ.— Այ հիմա՛ր: Նա կորցրել է իր յիբովսը:

**Քարձբաձայն ծիծաղում է:**

ՎԼԱԴԻՄԻՐ.— Ես կվերադառնամ:

**Գնում է դեպի բեմեզրը:**

ԼՍՏՐԱԳՈՆ.— Միջանցքի վերջում, ձախ կողմից:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Պահիր իմ աթոռը:

**Պուրս է գալիս:**

ՎԼԱԴԻՄԻՐ.— Ես կորցրել եմ իմ Kapp Patterson ծխամորճը:

ԼՍՏՐԱԳՈՆ (**զվարճացած ցնցվելով**).— Նա ինձ կսպանի:

ՓՈԶԶՈ (**վեր նայելով**).— Դուք պատահաբար չե՞ք տեսել... (**Նա նկա-  
սում է Վլադիմիրի բացակայությունը**): Օ՛, նա գնացել է: Առանց  
ստեղծարարն ստելո՛ւ: Ինչպես կարող էր: Նա պետք է սպասեր:

ԼՍՏՐԱԳՈՆ.— Նա կարող էր պայթել:

ՓՈԶԶՈ.— Օ՛: (**Գաղաթ**): Լավ, իհարկե, այդ դեպքում...

ԷՍՏՐԱԳՈՆ.— Եկէք այստեղ:

ՓՈԶԶՈ.— Ինչի՞ համար:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Կտեսնէք:

ՓՈԶԶՈ.— Ուզում եք, որ ես կանգնե՞մ:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Արե՛գ: (Փոզզոն բարձրանում է և մոտենում Էստրա-  
գոնին): Նայէք:

ՓՈԶԶՈ (դնելով ակնոցը).— Օ՛, տեսնում եմ:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Վերջացավ:

Մտնում է Վլադիմիրը, մոայլ: Նա հրում է Լաքիին իր ճանապար-  
հից, հարվածում է նստարանին, գրգռված էտ ու առաջ է քայլում:

ՓՈԶԶՈ.— Նա դժգոհ է:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Դու կորցրիր մի շատ հետաքրքիր բան: Ափսո՛ւ:

Վլադիմիրը կանգնում է, ուղղում նստարանը, էտ ու առաջ է քայ-  
լում, ավելի հանգիստ:

ՓՈԶԶՈ.— Նա հանդարտվել է: (Նայելով շուրջը): Ամեն ինչ հան-  
դարտվել է: Մի մեծ ջերմություն է իջել: Լսէք: (Նա բարձրացնում  
է ձեռքը): Պանը քնած է:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Կգա՞ գիշերը վերջապես:

Երէքն էլ նայում են երկինք:

ՓՈԶԶՈ.— Մինչ այդ դուք, կարծես, չէք պատրաստվում գնալ:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Այո, գիտեք...

ՓՈԶԶՈ.— Իհարկե՛ս, դա շատ բնական է, շատ բնական: Ես ինքս ձեր  
վիճակում, եթե պայմանավորված լինեի մի Գողեմի... Գողեի...  
Գողոյի... ինչ որ է, դուք հասկանում եք, ում ես նկատի ունեմ,  
ապա կսպասեի մինչև մութ գիշեր, հետո նոր վեր կկենայի: (Նա-  
յում է նստարանին): Ես շատ կուզեի նստել, բայց չգիտեմ, ինչ-  
պես դա անեմ:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Ես կարո՞ղ եմ օգտակար լինել:

ՓՈԶԶՈ.— Եթե խնդրեիք ինձ, գուցե:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Ի՞նչ:

ՓՈԶԶՈ.— Եթե խնդրեիք ինձ նստել:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Դա ձեզ կօգնի՞:

ՓՈԶԶՈ.— Կարծում եմ:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Դե՛լ խնդրեմ: Նստեք սը՛ր, խնդրում եմ:

ՓՈԶԶՈ.— Ոչ, ոչ, ես դա ի նկատի չունեի: (Դադար: Կողքի վրա):

Խնդրեք նորից:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Եկեք, եկեք նստեք, աղաչում եմ ձեզ, դուք թոքերի  
բորբոքում կատանաք:

ՓՈԶԶՈ.— Դուք իրոք այդպև՛ս եք կարծում:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Իհարկե, դա միանգամայն ստույգ է:

ՓՈԶԶՈ.— Գուցե դուք իրավացի եք: (Նստում է): Ծնորհակալություն, սիրելի՛ բարեկամ: (Նա գննում է իր ժամացույցը): Բայց ես իսկապես պետք է շարժվեմ, եթե ուզում եմ պահպանել իմ պլանը:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Փամանակը կանգ է առել:

ՓՈԶԶՈ (ժամացույցը սեղմելով ականջին).— Չհավատաք, պարո՛ն, չհավատաք: (Փամացույցը դնում է գրպանը): Ինչ ուզում եք, բայց ոչ դա:

ԷՍՏՐԱԳՈՆ (Փոզզոյին).— Ամեն ինչ խավար է թվում նրան այսօր:

ՓՈԶԶՈ.— Բացի երկնակամարից: (Նա ծիծաղում է՝ գոհ իր սրամտությունից): Բայց ես գիտեմ ինչից է դա, դուք այս կողմերից չեք, դուք դեռ չգիտեք, թե ինչ կարող եմ մեր մթնշաղներն անել: Պատմե՛մ ձեզ:

Լուրջուն: Էստրագոնը նորից խաղում է իր կոշիկի հետ, Վլադիմիրը՝ գլխարկի: Լաքիի գլխարկն աննկատ ընկնում է գետին:

ՓՈԶԶՈ.— Ես չեմ կարող ձեզ մերժել: (Հանում է հեղուկացիքը): Մի փոքր ուշադրություն, կթե ուզում եք: (Վլադիմիրը և Էստրագոնը շարունակում են իրենց զբաղմունքը, Լաքին կիսաքնած է: Փոզզոն թույլ ճոճում է մտքակը): Ի՞նչ պատահեց մտրակին: (Նա կանգնում է և ճոճում այն սվելի ուժեղ, վերջապես հաջողությամբ: Լաքին ցատկում է, Վլադիմիրի գլխարկը և Էստրագոնի կոշիկը ընկնում են ձեռքներից: Փոզզոն մի կողմ է նետում մտրակը): Անպետք մտրակ է: (Նայում է իր ունկնդիրներին): Ի՞նչ էի ես ասում:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Արի գնանք:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Բայց ձեզ համար ծանր է կանգնելը, նստեք, աղաչում եմ, դուք կարող եք մահանալ:

ՓՈԶԶՈ.— Ծիշտ է: (Նա նստում է: Էստրագոնին): Ի՞նչ է ձեր անունը:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Կատուլլոս<sup>6</sup>:

ՓՈԶԶՈ (որ չէր լսել).— Օ՛հ, այո: Գիշերը: (Նա բարձրացնում է գլուխը): Բայց մի փոքր սվելի ուշադիր եղեք, խնդրում եմ, այլապես սեներ ոչնչի չենք հասնի: (Նայում է երկինք): Նայեք: (Բոլորը նայում են երկինք, բացի Լաքիից, որը նորից ննջում է: Փոզզոն ձգում է պարանը): Նայի՛ր երկինք, խո՛զ: (Լաքին նայում է երկինք): Լավ, բավական է: (Նրանք դադարում են երկինք նայել): Ի՞նչ անսովոր բան կա այնտեղ: Այսինքն՝ երկնքում: Այն գունատ

Է և լուսավոր, ինչպես ամեն երկինք օրվա այս ժամին: (**Ֆադար**): Այս լայնությունում: (**Ֆադար**): Երբ եղանակը լավ է: (**Բանաստեղծորեն**): Մի ժամ առաջ (**Շայտն է ժամացույցին, պրոզաիկ**) մոտավորապես (**բանաստեղծորեն**) ճառագայթելով արդեն (**նա տասանվում է, պրոզաիկ**) ասե՛նք առավոտյան ժամը տասից, (**բանաստեղծորեն**), առանց հոգնելու սիտելով կարմիր և սպիտակ լույսը, այն սկսեց կորցնել իր պայծառությունը, դառնալով գունատ (**երկու ձեռքի շարժումներ, աստիճան առ աստիճան իջնող**), գունատ, մի փոքր ավելի գունատ, մի փոքր ավելի գունատ, մինչև (**դրամատիկ դադար, երկու ձեռքերը լայն բացելու շարժում**) փփփֆֆֆ, վերջացա՛վ, այն գալիս է հանգստանալու: (**Լռություն**): Բայց— (**ձեռքը պարզելով**)— բայց— մեղմության ու խաղաղության այս քողի ետևում (**նա բարձրացնում է աչքերը դեպի երկինք, մյուսները նմանակում են նրան, բացի Լաբիից**) գիշերն է թաքնվում (**տաստանվող ձայնով**) և կրկնի մեզ վրա (**նա կրտսացնում է մատները**) փո՛փ, այսպես, (**ոգևորությունը լքում է նրան**) հենց այն ժամանակ, երբ ամենից քիչ ենք սպասում: (**Լռություն: Մուսչ**): Ահա թե ինչպես է այս անհիճյալ երկրում:

**Երկար լռություն:**

- ԷՍՏՐԱԳՈՆ.— Այսքանը իմանալուց հետո:
- ՎԼԱԴԻՄԻՐ.— Կարելի է սպասել հարմար առիթի:
- ԷՍՏՐԱԳՈՆ.— Մարդ գիտե, թե ինչ է լինելու:
- ՎԼԱԴԻՄԻՐ.— Այլևս կարիք չկա անհանգստանալու:
- ԷՍՏՐԱԳՈՆ.— Պարզապես պետք է սպասել:
- ՎԼԱԴԻՄԻՐ.— Մենք սովոր ենք դրան: (**Հանում է գլխարկը, նայում ներսը, թափ տալիս, դնում գլխին**):
- ՓՈԶԶՈ.— Ի՞նչ կարծիք կազմեցիք իմ մասին: (**Վլադիմիրը և Էստրագոնը նայում են նրան զարմացած**): Լա՛վ: Հիանալի՞: Տանելի՞: Սովորակա՛ն: Որոշակիորեն վա՛տ:
- ՎԼԱԴԻՄԻՐ (**առաջինը գլխի ընկնելով**).— Օ՛, շատ լավ, շա՛տ, շա՛տ լավ:
- ՓՈԶԶՈ (**Էստրագոնին**).— Իսկ դո՛ւք, սր՛ր:
- ԷՍՏՐԱԳՈՆ.— Օ՛, շալալավ, շալալալավ:
- ՓՈԶԶՈ (**ջերմորեն**).— Օրհնյալ լինե՛ք, պարոնա՛լք, օրհնյալ լինե՛ք: (**Ֆադար**): Ես սյնքա՛ն կարիք ունեի խրախուսանքի: (**Ֆադար**): Ես վերջում մի փոքր թույլացա, չնկատեցի՞ք:
- ՎԼԱԴԻՄԻՐ.— Օ՛, գուցե մի չ՛հի՞ն չափով:
- ԷՍՏՐԱԳՈՆ.— Ես կարճեցի, դա մտածված էր:



ՓՈԶԶՈ.— Գիտեք, իմ հիշողությունը վատ է:

**Լռություն:**

ԷՍՏՐԱԳՈՆ.— Այս ընթացքում ոչինչ չսպասահեց:

ՓՈԶԶՈ.— Դուք ձանձրացա՞ք:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Մի փոքր:

ՓՈԶԶՈ (Էստրագոնին).— Իսկ դո՞ւք, սը՛ր:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Ես, եղել է, որ առավել հաճույք եմ ստացել:

**Լռություն: Փոզզոն ներքուստ պաչքարում է:**

ՓՈԶԶՈ.— Պարոնա՛յք, դուք... քաղաքավարի էիք ինձ հետ:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Չարժե:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Ինչպիսի՞ գաղափար:

ՓՈԶԶՈ.— Այո, այո, դուք կիրթ էիք: Այնպես որ ես հարցնում եմ ինքս ինձ, կա՞ մի բան, որ իմ հերթին կարող եմ անել ես այս ազնիվ մարդկանց համար, որոնք այսքան ձանձրալի ժամանակ են անցկացնում:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Նույնիսկ սեկ շիլինգը<sup>7</sup> ուրախությամբ կընդունվի:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Մենք մուրացկաններ չենք:

ՓՈԶԶՈ.— Կա՞ մի բան, որ ես կարող եմ անել, ահա թե ինչ եմ հարցնում ինքս ինձ, նրանց մխիթարելու համար: Ես նրանց ոսկորներ տվեցի, խոսեցի տարբեր բաների մասին, բացատրեցի նրանց մթնշաղները, իհարկե: Բայց բավակա՞ն է դա, ահա թե ինչն է ինձ տանջում, բավակա՞ն է դա:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Նույնիսկ կես շիլինգը:

ՎԼԱԴԻՄԻՐ (Էստրագոնին, վրդովված).— Բավակա՞ն է:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Ես պակաս չեմ վերցնի:

ՓՈԶԶՈ.— Բավակա՞ն է դա: Ոչ մի կասկած: Բայց ես լիբերալ եմ: Դա իմ բնույթն է: Այս երեկո: Ավելի վատ ինձ համար: (Նա քաշում է պարանը, Լաքին նայում է նրան): Քանի որ ես կտանջվեմ, ոչ մի կասկած: (Նա բարձրացնում է մորակը): Ի՞նչ եք դուք գերադասում: Պահանջե՛նք, որ նա պարի, կամ երգի, կամ արտասանի, կամ մտածի, կամ...

ԷՍՏՐԱԳՈՆ.— Ո՞վ:

ՓՈԶԶՈ. - Ո՞վ: Դուք մտածել գիտե՞ք, դո՞ւք՝ երկուսդ:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Նա մտածո՞ւմ է:

ՓՈԶԶՈ. — Իհարկե: Բարձրաձայն: Մի ժամանակ շատ լավ էր մտածում, ես կարող էի նրան լսել ժամերով: Հիմա... (Նա ցնցվում է): Ավելի վատ ինձ համար: Լավ, ուզո՞ւմ եք, որ նա մի բան մտածի մեզ համար:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Ես կգերադասեի, որ նա պարեր, դա սովելի հետա-  
 քրքիր կլիներ:  
 ՓՈԶԶՈ.— Պարտադիր չէ:  
 ԷՍՏՐԱԳՈՆ.— Սովելի հետաքրքիր չի՞ լինի, Դիդի՛:  
 ՎԼԱԴԻՄԻՐ.— Ես սովելի կուզեի լսել նրա մտածելը:  
 ԷՍՏՐԱԳՈՆ.— Գուցե նա կարող է առաջ պարել և մտածել հետո, եթե  
 դա շատ չի լինի նրա համար:  
 ՎԼԱԴԻՄԻՐ (Փոզզոյին).— Հնարավոր՞ է դա:  
 ՓՈԶԶՈ.— Սովելի պարզ բան չկա: Նա բնական հերթականություն է:  
 Կարճ ծիծաղ:  
 ՎԼԱԴԻՄԻՐ.— Ուրեմն թող պարի:  
 Լռություն:  
 ՓՈԶԶՈ.— Լսո՞ւմ ես, խո՛ղ:  
 ԷՍՏՐԱԳՈՆ.— Նա երբեք չի՞ մերժել:  
 ՓՈԶԶՈ.— Նա մերժեց մի անգամ: (Լռություն): Պարի՛ր, խղճո՛ւկ:  
 Լաքին ցած է դնում գլխարկն ու զամբյուղը, գալիս է բեմի մեջտե-  
 ողը, շրջվում դեպի Փոզզոն: Լաքին պարում է: Նա դադարում է:  
 ԷՍՏՐԱԳՈՆ.— Ամբողջը դա՞ էր:  
 ՓՈԶԶՈ.— Կրկնե՛լ:  
 Լաքին կրկնում է նույն շարժումները, դադարում:  
 ԷՍՏՐԱԳՈՆ.— Պա՛հ: Աչդպես ես էլ կանեի: (Նա կրկնօրինակում է  
 Լաքին, համարյա ընկճում է): Մի փոքր վարժվելու դեպքում:  
 ՓՈԶԶՈ.— Ժամանակին նա պարում էր ֆարսնորդա, ֆիկև, բրու,  
 օիգ. ֆանդանգո և նույնիսկ սարկապոնկ: Այժմ առ լավագույնն  
 է, որ նա անում է: Գիտե՞ք նա ինչպես է դա կոչում:  
 ԷՍՏՐԱԳՈՆ.— Քալուրթյան նոխազի հոգեվարքը:  
 ՎԼԱԴԻՄԻՐ.— Ծանր նստարանը:  
 ՓՈԶԶՈ.— Ցանցը: Նա կարծում է, որ ինքը մոտրված է զանցում:  
 ՎԼԱԴԻՄԻՐ (ծամածովելով ինչպես էսթետ).— Աստեղ մի բան...  
 Լաքին վերադառնում է դեպի իր բեռները:  
 ՓՈԶԶՈ (ինչպես ձիուն).— Հոո՛:  
 Լաքին մեխվում է տեղում:  
 ԷՍՏՐԱԳՈՆ.— Պատմեք մեզ այն մասին, երբ նա մերժեց ձեզ:  
 ՓՈԶԶՈ — Հաճույքով, հաճույքով: (Նա բրբբում է գրպանները): Սպա-  
 սեք: (Նա բրբբում է): Ի՞նչ եմ արել իմ լիչիչը: (Նա փնտրում է):  
 Հետո, ամբողջ... (Նա վեր է նայում հայացքը սևեռում: Թույ):  
 Չեմ կարողանում զարնել իմ հեղուկացիքը:  
 ԷՍՏՐԱԳՈՆ (թույ).— Իմ ծախս թոքը շատ թույլ է: (Նա կամաց հա-

**զում է: Զրնգուն ձայնով):** Բայց իմ աջ թոքը հնչում է զանգի պես: **ՓՈԶԶՈ (նորմալ ձայնով).**— Ոչինչ: Եթե հնարավոր չէ բուժել, պետք է դիմանալ: Ի՞նչ էի ես ասում: **(Նա կշռադատում է):** Սպասեք: **(Կշռադատում է):** Լավ, ես... **(Նա բարձրացնում է գլուխը):** Օգնե՛ք ինձ:

**ԼՍՏՐԱԳՈՆ.**— Սպասե՛ք:

**ՎԼԱԴԻՄԻՐ.**— Սպասե՛ք:

**ՓՈԶԶՈ.**— Սպասե՛ք:

**Երեքն էլ հանում են գլխարկները միսժամանակ, ձեռքերը սեղմում են ճակատներին, կենտրոնանում:**

**ԼՍՏՐԱԳՈՆ (հաղթականորեն).**— Աս՛:

**ՎԼԱԴԻՄԻՐ.**— Նա հիշեց:

**ՓՈԶԶՈ (անհամբեր).**— Ի՞նչ:

**ԼՍՏՐԱԳՈՆ.**— Ինչո՞ւ լա ցած չի դնում իր բեռները:

**ՎԼԱԴԻՄԻՐ.**— Հիմարություն:

**ՓՈԶԶՈ.**— Վստահ եք:

**ՎԼԱԴԻՄԻՐ.**— Գրողը տանի, դուք ինքների մեզ ասացիք:

**ՓՈԶԶՈ.**— Ես ձեզ արդեն ասե՛լ եմ:

**ԼՍՏՐԱԳՈՆ.**— Նա քեզ արդեն ասե՛լ է:

**ՎԼԱԴԻՄԻՐ.**— Ինչ որ է, նա արդեն դրանք ցած է դրել:

**ԼՍՏՐԱԳՈՆ (նայելով Լաքիին).**— Ծիշտ է: Հետո ի՞նչ:

**ՎԼԱԴԻՄԻՐ.**— Քանի որ նա ցած է դրել բեռները, ապա անհնար է, որ մենք հարցնեինք, թե ինչու նա դրանք ցած չի դնում:

**ՓՈԶԶՈ.**— Տրամաբանական է:

**ԼՍՏՐԱԳՈՆ.**— Իսկ ինչո՞ւ է նա դրանք ցած դրել:

**ՓՈԶԶՈ.**— Պատասխանի՛ր սուղ հարցին:

**ՎԼԱԴԻՄԻՐ.**— Պարելու համար:

**ԼՍՏՐԱԳՈՆ.**— Ծիշտ է:

**ՓՈԶԶՈ.**— Ծիշտ է:

### **Լռություն:**

**ԼՍՏՐԱԳՈՆ.**— Ոչինչ չի պատահում, ոչ ոք չի գալիս, ոչ ոք չի գրնում, անավոր է:

**ՎԼԱԴԻՄԻՐ (Փոզզոյին).**— Ասեք նրան, որ մտածի:

**ՓՈԶԶՈ.**— Տո՛ւր նրան իր գլխարկը:

**ՎԼԱԴԻՄԻՐ.**— Գլխա՛րկը:

**ՓՈԶԶՈ.**— Նա չի կարող մտածել առանց գլխարկի:

**ՎԼԱԴԻՄԻՐ (Էստրազոնին).**— Տո՛ւր նրան գլխարկը:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Ե՛ս: Այն բանից հետո, ինչ նա ինձ արե՛ց: Երբե՛ք:  
ՎԼԱԴԻՄԻՐ.— Ե՛ս կտամ:

Նա բարձրացնում է գլխարկը և հեռվից պարզում է այն Լաքին, որը չի շարժվում:

ՓՈԶԶՈ.— Պետք է նրա գլխին դնել:

ԷՍՏՐԱԳՈՆ (Փոզզոյին).— Ասե՛ք, որ վերցնի:

ՓՈԶԶՈ.— Ավելի լավ կլինի, որ դուք դնեք գլխին:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Ես կդնեմ:

Նա անձայն, զգուշորեն պտտվում է Լաքի թիկունքում, մոտենում է նրան ետևից, դնում է գլխարկը գլխին և արագ ետ ցատկում: Լաքին չի շարժվում: Լռություն:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Ինչի՞ է նա սպասում:

ՓՈԶԶՈ.— Ե՛տ կանգնեք: (Վլադիմիրը և Էստրագոնը ետ են քաշվում Լաքից: Փոզզոն ձգում է պարանը: Լաքին նայում է Փոզզոյին): Մտածի՛ր, խո՛գ: (Դադար: Լաքին սկսում է պարել): Կանգնի՛ր: (Լաքին դադարում է): Առա՛ջ: (Լաքին առաջ է գալիս): Կանգնի՛ր: (Լաքին կանգնում է): Մտածի՛ր: (Լռություն):

ԼԱՔԻ.— Մտա կողմից, հաշվի առնելով որ...

ՓՈԶԶՈ.— Կանգնի՛ր: (Լաքին դադարում է): Ե՛տ: (Լաքին ետ է գրնում): Կանգնի՛ր: (Լաքին կանգնում է): Ծրշվի՛ր: (Լաքին շրջվում է դեպի դահլիճը): Մտածի՛ր:

Լաքի տիրադի ընթացքում մյուսներն իրենց պահում են հետևյալ կերպ. 1) Վլադիմիրը և Էստրագոնը համակ ուշադրություն են, Փոզզոն՝ ընկճված և զգված: 2) Վլադիմիրն ու Էստրագոնը սկսում են բողոքել, Փոզզոյի տառապանքն անում է: 3) Վլադիմիրն ու Էստրագոնը նորից ուշադիր են: Փոզզոն ավելի ու ավելի անհանգիստ ու տնքայով: 4) Վլադիմիրը և Էստրագոնը բողոքում են կառադորեն: Փոզզոն վեր է ցատկում, ձգում է պարանը: Լաքին ետ է ձգում պարանը, ճոճվում է, գոռում իր ճառը: Բոլորը նետվում են դեպի Լաքին, որը դիմադրում է և գոռում իր ճառը:

ԼԱՔԻ.— Տրված է անձնական Աստծո գոյություն ինչպես առաջարկված է Փանչերի և Վաթմանի վերջին հասարակական աշխատանքներում որոշորոշապես սպիտակ սպիտակ մորուքով որոշորոշապես ժամանակից դուրս առանց ընդարձակման որը իր աստվածային ապատիայի աստվածային աթամբիայի աստվածային աֆազիայի բարձունքից սիրում է մեզ ջերմորեն որոշ բացառություններով անհայտ պատճառներով, բայց ժամանակը ցույց կրտա և տանջվում է աստվածային Միրանդայի<sup>8</sup> պես նրանց հետ

որ անհայտ պատճառներով բայց ժամանակը ցույց կտա ընկած են տանջանքի մեջ ընկած են կրակի մեջ այն կրակի և բոցերի մեջ որ եթե դա շարունակվի և ով կարող է կասկածել դրան այն կվառի երկնակառնարը այսինքն կպայթի դժոխքը և կվերածվի դրախոտի այնքան կապույտ հանգիստ և հանդարտ այնքան հալ-դարտ հանդարտությամբ որը նույնիսկ չնայած իր ընդհատվածությամբ ավելի լավ է բան ոչինչը բայց ոչ այնքան արագ և ավելին քննելով այն որ արդյունք է անավարտ մնացած աշխատանքներին պարզևատրված մրցանակներով Մարմարդադարա-նության Ակակակադեմիայի Փոսիի վրայի Էսսիի Թեստյուի և Կունարդի հաստատված է առանց կասկածի ամբողջ մյուս կասկածի քան այն որ կապված է աշխատանքին մարդկանց որ որպես արդյունք անավարտ մնացած աշխատանքների Թեստյուի և Կունարդի հաստատվեց ինչպես ստորև բայց ոչ այնքան արագ անհայտ պատճառներով որ որպես արդյունք հասարակական աշխատանքների Փանչերի և Վաթմանի հաստատված է առանց կասկածի որ հաշվի առնելով աշխատանքները Պոպովի և Բելչերի անավարտ մնացած անհայտ պատճառներով Թեստյուի և Կունարդի անավարտ մնացած հաստատված է ինչը շատերը հերքում են որ մարդ Փոսսիում Թեստյուի և Կունարդի որ մարդ Էսսիում որ կարճ ասած մարդ որ մի խոսքով մարդ չնայած հաջողություններին սնուցման և մաքրության գործում տանջվում է և կորցնում տանջվում է և կորցնում միասին և միաժամանակ ավելին անհայտ պատճառներով չնայած ֆիզիկական կուլտուրայի մեծ քայլերին և այնպիսի սպորտի ձևերի զարգացմանը ինչպես թենիսը ֆուտբոլը վազքը հեծանիվը լողը թոփչքայինը առագաստայինը ձիասպորտը քամոզին սահքը բոլոր տեսակի թենիսները մեռնող թոսող սպորտաձևերը բոլոր տեսակի հոկեյները բոլոր տիպերի պենիցիլին և սուքսետին մի խոսքով նորից միասին և միաժամանակ անհայտ պատճառներով կրճատել և և և քչացնել չնայած թևնիսի ես վերսկսեցի թոչել սահել գոլֆը ինը և տասնութ անցրկրով ամեն տիպի թենիս մի խոսքով անհայտ պատճառներով Ֆեբրևամ Փեքհամի Ֆուլհամ Բլաֆամի այսինքն միասին միաժամանակ ավելին անհայտ պատճառներով բայց ժամանակը ցույց կտա որպեսզի ոչացնե ես վերսկսեցի Ֆուլհամ Բլաֆամ մի խոսքով միասին կորուստը մի շնչին և նկնող Սեմյուել Ջոնսոնի<sup>9</sup> մատուցած կազմում է մեկ ինչ չորս ունցիա<sup>10</sup> մի շնչին ընկնող և տարբերակել ավելի ետև պակաս մինչև մոտակա տասնորդա-

կան կոտորակը լավ չափսի բացարձակապես մերկ մարմնի շուրջը ոտքին գուշարս Քանենմարայում մի խոսքով անհայտ պատճառներով կարևոր չէ ինչ պատճառով փաստերն այն են և քրննելով ինչն է ավելի շատ ավելի կարևոր որ պարզվում է որ դեռևս ավելի կարևոր է Շտայվեգի և Պետերմանի կորսված աշխատանքների լույսի լույսի լույսի լույսի ճեքքո որ դաշտերում լեռներում ծովերում գետերում հոսող կրակը օդը նույնն է և հետո երկիրը այսինքն օդը և հետո երկիրը մեծ սառնամանիքին և մեծ խավարին օդը և երկիրը բնակավայրը քարերի մեծ սառնամանիքին ավաղ ավաղ նրանց Աստծո ճննդից վեց հարյուր և մի քանի թվականին օդը երկիրը ծովը երկիրը բնակավայրը քարերի մեծ խորխորատներում մեծ սառնամանիքին ծովում հողի վրա և օդում ես վերսկսեցի անհայտ պատճառներով չնայած թեևսին փաստերն առկա են բայց ժամանակը ցույց կտա ես վերսկսեցի ավաղ ավաղ ավելին կարճ ասած ավելին բնակավայրը քարերի ով կարող է կասկածել դրանում ես վերսկսեցի բայց ոչ այնքան արագ գանգը կրճատել տանջվում կորցնում և միասին միաժամանակ ավելին անհայտ պատճառներով չնայած թեևսին ավելին մորուքը բոցերը թիմերը քարերը այնքան կապույտ այնքան տաք ավաղ ավաղ ավելին գանգը գանգը գանգը գանգը Քանենմարայում չնայած թեևսին աշխատանքները դեռն նետված անավարտ մնացած ավելի կարևոր դեռևս բնակավայրը քարերի մի խոսքով ևս վերսկսեցի ավաղ ավաղ դեռն նետված անավարտ մնացած գանգը գանգը Քանենմարայում չնայած թեևսին գանգը ավաղ քարերը Կունարդը (Խառնակություն: Վերջին ճիշերը) թեևս... քարերը... այնքան տաք... Կունարդ... անավարտ...

**ՓՈԶԶՈ.**— Նրա գլխա՛րկը:

**Վլադիմիրը խլում է Լաքիի գլխարկը: Լաքին լռում է: Նա ընկնում է: Լռություն: Հաղթողների ծանր շնչառությունը:**

**ԷՍՏՐԱԳՈՆ.**— Պատժվեցի՛:

**Վլադիմիրը գնում է գլխարկը, նայում ներսը:**

**ՓՈԶԶՈ.**— Տո՛ւր ինձ: (Նա խլում է գլխարկը Վլադիմիրից, գցում է գետնին, արորում է այն): Վերջացա՛վ նրա մտածելը:

**ՎԼԱԴԻՄԻՐ.**— Բայց նա կկարողանա՞ քայլել:

**ՓՈԶԶՈ.**— Չքայլի՛ կտողա: (Նա ոտքով խփում է Լաքիին): Վե՛ր, խո՛գ:

**ԷՍՏՐԱԳՈՆ.**— Գուցե նա մեռած է:

**ՎԼԱԴԻՄԻՐ.**— Դուք կսպանեք նրան:

ՓՈԶԶՈ.— Վե՛ր, բոթո՛ւկ: (Նա ձգում է պարանը: Վլադիմիրին և Էստրազոնին): Օգնե՛ք ինձ:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Ինչպե՛ս:

ՓՈԶԶՈ.— Նրան վեր բարձրացրեք:

Վլադիմիրը և Էստրազոնը ոտքի են հանում Լաքիին, պահում են մի պահ, հետո բաց թողնում: Նա ընկնում է:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Նա դիտմա՛մբ է դա անում:

ՓՈԶԶՈ.— Նրան պետք է պահել: (Դադար): Եկե՛ք, եկե՛ք, վե՛ր բարձրացրեք նրան:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Թող գրողի ծո՛ցը գնա:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Արի՛ մի անգամ էլ:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Նա ինչի՞ տեղ է մեզ դրել:

Նրանք բարձրացնում են Լաքիին, պահում են:

ՓՈԶԶՈ — Մի՛ թողեք նրան: (Վլադիմիրը և Էստրազոնը ճոճվում են):

Մի՛ շարժվեք: (Փոզզոն վերցնում է ճամպրուկը և զամբյուղը և բերում դեպի Լաքին): Պի՛նդ բռնեք նրան:

Նա ճամպրուկի բռնակը խոթում է Լաքիի ձեռքը: Լաքին անմիջապես բաց է թողնում:

ՓՈԶԶՈ.— Մի՛ թողեք նրան: (Նա նորից է փորձում: Աստիճանաբար ճամպրուկի ծանրության տակ Լաքին վերագտնում է իր զգացողությունը և նրա մատները բռնում են բռնակը): Պի՛նդ պահեք նրան: (Պարտադրում է բռնել նաև զամբյուղը): Հիմա դուք կարող եք բաց թողնել նրան: (Վլադիմիրը և Էստրազոնը հեռանում են Լաքիից, որը ճոճվում է, տատանվում, թեքվում է, բայց կարողանում է մնալ ոտքի վրա՝ ճամպրուկը և զամբյուղը բռնած: Փոզզոն ետ է քաշվում, ճայթեցնում է մտրակը): Առա՛ջ: (Լաքին մի քայլ է անում առաջ): Ե՛տ: (Լաքին մի քայլ է անում ետ): Երբե՛վի՛ր: (Լաքին շքջվում է): Եղա՛վ: Նա կարող է թաչել: (Երջվելով դեպի Վլադիմիրը և Էստրազոնը): Շնորհակալություն, պարոններ, և թույլ տվեք— (նա քրքրում է գրպանները)— թույլ տվեք ցանկանալ ձեզ— (փնտրում է)— ցանկանալ ձեզ— (փրկություն է)— ի՞նչ եմ արել ժամացույցս: (Փնտրում է): Մի հիանալի ժամացույց, պարոններ, կրկնակի հատակով: (Լաց լինելով)։ Դա իմ պապն էր նվիրել ինձ: (Փնտրում է, նայում գետին: Վլադիմիրը և Էստրազոնը՝ նույնպես: Փոզզոն ոտքով շուռ է տալիս Լաքիի գլխարկը): Լավ, հիմա...

ՎԼԱԴԻՄԻՐ.— Գուցե դա ձեր ժամացույցի գրպանո՞ւմ է:

ՓՈԶԶՈ — Սպասե՛ք: (Նա ծովում-կռահում է, փորձելով ականջը դը-

Անլ փորին, լսում է: Լռություն): Ես ոչինչ չեմ լսում: (Նա ձեռքով  
նշան է անում նրանց, որ մոտենան: Վլադիմիրը և Էստրադոնը  
մոտենում են, կռանում նրա վրա): Անպայման պետք է որ լսեք  
տկտկոցը:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Լռություն:

Քոլորը կռացած լսում են:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Ես մի բան լսում եմ:

ՓՈԶԶՈ.— Ո՞րտեղ:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Դա սիրտն է:

ՓՈԶԶՈ (հիասթափված).— Գրողը տանի՞:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Լռություն:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Գուցե ժամացույցը կանգնել է:

Նրանք ուղղվում են:

ՓՈԶԶՈ.— Ումի՞ց է գարշահոտություն գալիս:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Նրա բերանից է հոտ գալիս, իսկ իմ՝ ոտքից:

ՓՈԶԶՈ.— Ես պետք է գնամ:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Իսկ ձեր ժամացույցը:

ՓՈԶԶՈ.— Պետք է որ կալվածքումս թողած լինեմ:

Լռություն:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Այդ դեպքում՝ աղյո:

ՓՈԶԶՈ.— Աղյո:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Աղյո:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Աղյո:

Լռություն: Ոչ ոք չի շարժվում:

ՓՈԶԶՈ.— Աղյո:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Աղյո:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Աղյո:

Լռություն:

ՓՈԶԶՈ.— Եվ շնորհակալություն:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Ծնորհակալություն ձեզ:

ՓՈԶԶՈ.— Չարժե:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Այո, այո:

ՓՈԶԶՈ.— Ոչ, ոչ:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Այո, այո:

ՓՈԶԶՈ.— Ոչ, ոչ:

Լռություն:

ՓՈԶԶՈ.— Կարծես ես ի վիճակի չեմ... (Նա տատանվում է)... բա-  
ժանվելու:



ԷՍՏՐԱԳՈՆ.— Այդպիսին է կյանքը:

**Փոզզոն շրջվում է, հեռանում Լաքից դեպի բեմեզը, աստիճանաբար երկարացնելով պարանը:**

ՎԼԱԴԻՄԻՐ.— Դուք սխալ ուղղությամբ եք գնում:

ՓՈԶԶՈ.— Ես պետք է սկզբից վազեմ: (Հասնելով պարանի ծայրին, այսինքն՝ բեմից դուրս, նա կանգնում է, շրջվում և գոռում): Ե՛տ կանգնեք: (Վլադիմիրը և Էստրագոնը ետ են կանգնում, նայում **Փոզզոյին: Մտրակի ճայթյուն**): Առա՛ջ, առա՛ջ:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Առա՛ջ, առա՛ջ:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Առա՛ջ, առա՛ջ:

**Մտրակի ճայթյուն: Լաքին գնում է դուրս:**

ՓՈԶԶՈ.— Ավելի՛ արագ: (Նա հայտնվում է, կտրում է բեմը՝ հեռանալով Լաքից: Վլադիմիրը և Էստրագոնը հանում են գլխարկները, թափանաբում: Լաքին դուրս է գալիս: Փոզզոն թափանաբում է մտրակն ու պարանը): Առա՛ջ, առա՛ջ: (Դուրս գալու պահին նա իր հերթին կանգնում է և շրջվում: Պարանը ձգվում է: Լաքի ընկնելու աղմուկը դրսից): Նստարա՛նը: (Վլադիմիրը վերցնում է նստարանը և տալիս **Փոզզոյին**, որը նետում է այն Լաքիին): Ադյո՛ւ:

ՎԼԱԴԻՄԻՐ և ԷՍՏՐԱԳՈՆ.— Ադյո՛ւ:

ՓՈԶԶՈ.— Վե՛ր, խո՛գ: (Լաքիի վեր կենալու աղմուկը): Առա՛ջ: (Դուրս է գալիս **Փոզզոն: Մտրակի ճայթյուն**): Ավելի՛ արագ: Առա՛ջ: Ադյո՛ւ: Խո՛գ: Հոո՛ւ: Ադյո՛ւ:

**Երկար լռություն:**

ՎԼԱԴԻՄԻՐ.— Սա սպանեց ժամանակը:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Այն կանցներ ամեն դեպքում:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Այո, բայց ոչ այսքան արագ:

**Դադար:**

ԷՍՏՐԱԳՈՆ.— Ի՞նչ պետք է անենք հիմա:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Զգիտեմ:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Արի, գնանք:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Չենք կարող:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Ինչո՞ւ:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Մենք սպասում ենք Գողոյին:

**Դադար:**

ՎԼԱԴԻՄԻՐ.— Ինչպե՛ս էին նրանք փոխվել:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Ովքե՞ր:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Այո՛, երկուսը:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Ես գաղափար է, արի մի քիչ խոսենք:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Այնպես չէ՞:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Ի՞նչ:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Փոխվել էին:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Կարծես թե: Նրանք բոլորը փոխվում են: Միայն մենք չենք կարող:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Կարծե՞ս թե: Որոշակիորեն: Չտեսա՞ր դու նրանց:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Կարծում եմ տեսա: Բայց ես նրանց չգիտեմ:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Այո, դու նրանց գիտես:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Ոչ, ես նրանց չգիտեմ:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Մենք գիտենք նրանց, ես քեզ ասում եմ: Դու ամեն ինչ մոռացել ես: (**Դադար: Ինքն իրեն**): Եթե միայն նրանք նույնը չեն:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Աչդ դեպքում ինչո՞ւ նրանք մեզ չճանաչեցին:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Դա ոչինչ չի նշանակում: Ես նույնպես ձևացրի, որ չեմ ճանաչում նրանց: Եվ հետո, ոչ ոք երբևէ չի ճանաչել մեզ:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Մոռացիր: Մեզ պետք է... Օօ՛: (**Վլադիմիրը ուշադրություն չի դարձնում**): Օօ՛:

ՎԼԱԴԻՄԻՐ (**ինքն իրեն**).— Եթե միայն նրանք նույնը չեն:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Դիդի՛: Հիմա մյուս ոտքն է: (**Նա կաղալով գնում է դեպի թումբը**):

ՎԼԱԴԻՄԻՐ.— Եթե միայն նրանք նույնը չեն:

ՏՂԱ (**դրսից**).— Պարո՞ն:

Էստրագոնը կանգնում է: Երկուսն էլ նայում են ձայնի ուղղությամբ:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Դե, ահա, նորից:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Մոտեցի՛ր, աղա՛ս:

**Մտնում է տղան, երկչոտ: Նա կանգնում է:**

ՏՂԱ.— Պարոն Ալբե՛րտ...

ՎԼԱԴԻՄԻՐ.— Այո:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Ի՞նչ ես ուզում:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Մոտեցի՛ր:

**Տղան չի շարժվում:**

ԷՍՏՐԱԳՈՆ (**ստիպողաբար**).— Մոտեցի՛ր, երբ ասում եմ, չե՞ս յոսում:

**Տղան երկչոտ մոտենում է, կանգնում:**

ՎԼԱԴԻՄԻՐ.— Ի՞նչ է եղել:

ՏՂԱ.— Պր-ն Գողոն...

ՎԼԱԴԻՄԻՐ.— Իհարկէ: (**Դադար**): Մոտեցի՛ր:

**Տղան չի շարժվում:**

ԷՍՏՐԱԳՈՆ (**Կատաղորեն**).— Կմոտենա՛ն, թե՛ ոչ: (**Տղան մոտենում է երկչոտ, կանգնում**): Ինչո՞ւ այսքան ուշացար:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Դու պր-ն Գողոյից լո՞ւր ես քերել:

ՏՂԱ.— Այո, սը՛ր:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Լավ, ի՞նչ է եղել:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Ինչո՞ւ այսքան ուշացար:

**Տղան հեքթով նայում է նրանց, չի՞մանալով ում պետք է պատասխանի:**

ՎԼԱԴԻՄԻՐ (**Էստրագոնին**).— Նրան հանգիստ թո՛ղ:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Դո՛ւ ինձ հանգիստ թող: (**Մոտենալով տղային**): Գիտե՛ս ժամը քանիսն է:

ՏՂԱ (**ետ ցատկելով**).— Դա իմ մեղքը չէ, սը՛ր:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Իսկ ո՞ւմն է: Ի՞մը:

ՏՂԱ.— Ես վախեցա, սը՛ր:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Վախեցար ինչի՞ց: Մեզնի՞ց: (**Դադար**): Պատասխանի՛ր:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Ես գիտեմ ինչից, նա վախեցել է մյուսներից:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Ինչքա՞ն ծամանակ Լիբ դու աչատեղ:

ՏՂԱ.— Բավական ծամանակ, սը՛ր:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Դու վախեցել ես մտրակից:

ՏՂԱ.— Այո, սը՛ր:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Աղմուկից:

ՏՂԱ.— Այո, սը՛ր:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Երկու մեծ մարդկանցից:

ՏՂԱ.— Այո, սը՛ր:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Դու գիտե՛ս նրանց:

ՏՂԱ.— Ոչ, սը՛ր:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Դու այս կողմերո՞ւմ ես սպրում: (**Լռություն**): Դու այս կողմերի՞ց ես:

ՏՂԱ.— Այո, սը՛ր:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Դա ստերի մի կույտ է: (**Ցնցելով Տղայի ձեռքը**): Ասա մեզ ճիշտը:

ՏՂԱ (**դողալով**).— Բայց դա ճիշտ է, սը՛ր:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Հանգի՛ստ թող նրան: Ի՞նչ է պատահել քեզ: (**Էստրագոնը թողնում է տղային, հեռանում, ծածկելով դեմքը ձեռքե-**

րով: Վլադիմիրը և Տղան զննում են նրան: Էստրազոնը իջեցնում է ձեռքերը: Նրա դեմքը աչալաված է): Ի՞նչ է պատահել քեզ:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Ես դժբախտ եմ:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Չի՛ կարող պատահել: Երբ վանի՞ց:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Մոռացել եմ:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Չարմանալի կատակներ է անում հիշողությունը: (Էստրազոնը փորձում է խոսել, փոշմանում է, դանդաղ զննում է իր տեղը, նստում և սկսում է հանել կոշիկները: Տղային): Լավ, հետո՞:

ՏՂԱ.— Պր-ն Գողոն...

ՎԼԱԴԻՄԻՐ.— Ես քեզ առաջ տեսել եմ, չէ՞:

ՏՂԱ.— Չգիտեմ, սը՛ր:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Դու ինձ չե՞ս ճանաչում:

ՏՂԱ.— Ոչ, սը՛ր:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Երեկ դու չեի՛ր այստեղ:

ՏՂԱ.— Ոչ, սը՛ր:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Դու առաջին անգամ՝ ես գալիս:

ՏՂԱ.— Այո, սը՛ր:

Լռություն:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Բառեր, բառեր: (Դադար): Խոսի՛ր:

ՏՂԱ (արագ-արագ).— Պր-ն Գողոն ասաց ինձ, որ ձեզ ասեմ, որ նա չի գա այս երեկո, բայց վաղը՝ հաստատ:

Լռություն:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Դա՛ էր ամբողջը:

ՏՂԱ.— Այո, սը՛ր:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Դու աշխատում ես պր-ն Գողոնի մո՞տ:

ՏՂԱ.— Այո, սը՛ր:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Ի՞նչ ես անում:

ՏՂԱ.— Ես արածեցնում եմ այժերին, սը՛ր:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Նա քեզ հետ լա՞վ է վարվում:

ՏՂԱ.— Այո, սը՛ր:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Նա քեզ չի՞ ծեծում:

ՏՂԱ.— Ոչ, սը՛ր, ո՛չ ինձ:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Ո՞ւմ է նա ծեծում:

ՏՂԱ.— Նա ծեծում է եղբորս, սը՛ր:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Օ՛, դու եղբա՞յր ունես:

ՏՂԱ.— Այո, սը՛ր:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Ի՞նչ է անում նա:

ՏՂԱ.— Նա արածեցնում է ոչխարներին, սը՛ր:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Իսկ ինչո՞ւ նա քեզ չի ծեծում:

ՏՂԱ.— Չգիտեմ, սը՛ր:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Նա պետք է որ քեզ սիրի:

ՏՂԱ.— Չգիտեմ, սը՛ր:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Նա քեզ բավարար ուտելիք տալի՞ս է: (**Տղան տատանվում է**): Նա քեզ լա՛վ է կերակրում:

ՏՂԱ.— Ծատ լավ, սը՛ր:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Դու դժբախտ չե՞ս: (**Տղան տատանվում է**): Լսո՞ւմ ես:

ՏՂԱ.— Այո, սը՛ր:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Դե՞:

ՏՂԱ.— Չգիտեմ, սը՛ր:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Դու չգիտե՞ս, դժբախտ ես, թե ոչ:

ՏՂԱ.— Ոչ, սը՛ր:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Դու ինձ նման ես: (**Դադար**): Ո՛րտեղ ես դու քնում:

ՏՂԱ.— Ձեղնաբարկում, սը՛ր:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Քո եղբոր հե՞տ:

ՏՂԱ.— Այո, սը՛ր:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Խոտի մե՞ջ:

ՏՂԱ.— Այո, սը՛ր:

#### Լռություն:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Լավ, դու կարող ես գնալ:

ՏՂԱ.— Ի՞նչ ասեմ պր-ն Գողոյին, սը՛ր:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Ասա նույն... (**Տատանվում է**)... ասա նրան, որ տ' -  
ասար մեզ: (**Դադար**): Դու տեսար մեզ, սչնպես չե՞:

ՏՂԱ.— Այո, սը՛ր:

Նա ետ է քաշվում, տատանվում, շրջվում և վազելով դուրս է գը-  
նում: Հանկարծ լույսը մարում է: Միանգամից գիշեր է: Եսկից ծա-  
գում է լուսինը, բարձրանում երկնքում, կանգնում հանգիստ՝ աղոտ  
լույս սփռելով բեմի վրա:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Վերջապե՛ս: (**Էստրադոնը վեր է կենում և գնում է  
դեպի Վլադիմիրը, ամեն ձեռքին մի կոշիկ: Նա դրանք ցած է  
դնում բեմի եզրում, ուղղվում է և զննում լուսինը**): Ի՞նչ ես ա-  
նում:

ԻՍՏՐԱԳՈՆ.— Հոգնածությունից գունատ:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Հը՞:

ԻՍՏՐԱԳՈՆ.— Երկինքը մազլցելուց և մեզ նմաններին նայելուց:

ՎԼԱԴԻՄԻՐ — Կոշիկներդ: Ի՞նչ ես անում կոշիկներդ:

ԻՍՏՐԱԳՈՆ (**շրջվելով՝ կոշիկներին նայելու համար**).— Ես թողնում

եմ սրանք: (Դադար): Մի ուրիշը կգա, ինչպես... ինչպես... ինչպես ես, բայց ավելի փոքր ոտքերով և դրանք նրան կերջանկացնեն:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Բայց դու չե՞ս կարող բոբիկ քայլել:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Հիսուսը քայլում էր:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Հիսուսը: Ի՞նչ կապ ունի Հիսուսը քո հետ: Դու քեզ չպետք է համեմատես Հիսուսի հետ:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Ամողջ կյանքումս համեմատել եմ ինձ նրա հետ:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Բայց այնտեղ, որտեղ նա էր, տաք էր, չոր էր:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Այո: Եվ նրանք արագ խաչեցին:

**Լռություն:**

ՎԼԱԴԻՄԻՐ.— Մենք այստեղ այլևս անելիք չունենք:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Ոչ էլ ուրիշ մի տեղ:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Օ, Գոգո՛, մի խոսիր այդպես: Վաղը ամեն ինչ ավելի լավ կլինի:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Որտեղի՞ց դա հնարեցիր:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Լսեցի՞ր, ինչ ասաց երեխան:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Ո՛չ:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Նա ասաց, որ Գոդոն վաղը հաստատ կգա: (Դադար): Ի՞նչ կասես դրան:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Դե, ուրեմն մեզ մնում է սպասել այստեղ:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Խելագարվե՛լ ես, ինչ է: Մենք պետք է ծածկ գտնենք: (Նա բռնում է Էստրագոնի ձեռքը): Արի՛:

Նա քաշում է Էստրագոնին իր ետևից: Էստրագոնը զնում է, հետո ընդդիմանում: Նրանք կանգ են առնում:

ԷՍՏՐԱԳՈՆ (նայելով ծառին).— Ափսոս, մենք պարսան չունենք:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Արի՛: Ցրտում է:

Նա քաշում է նրան իր ետևից: Ինչպես առաջ:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Հիշեցրո՛ւ ինձ, որ վաղը մի կտոր պարսան բերեմ:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Հա հա, արի՛:

Նա քաշում է նրան իր ետևից: Ինչպես առաջ:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Ինչքա՞ն ժամանակ է, որ մենք միասին ենք:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Չգիտեմ: Հիսուն տարի գուցե:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Հիշո՞ւմ ես այն օրը, երբ ես ինձ նետեցի Ռոնան<sup>11</sup>:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Մենք խաղող էինք հավաքում:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Դուք ինձ դուրս հանեցիք:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Այդ ամենը մեռած և մոռացված է:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Ծորերս չորացրի արևի տակ:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Ոչ մի լավ բան չկա դրան վերադառնալու մեջ: Արի՛:  
**Նա քաշում է նրան իր ետևից: Ինչպես առաջ:**

ԷՍՏՐԱԳՈՆ.— Սպասիր:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Ես մրսում եմ:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Սպասի՛ր: (**Նա հեռանում է Վլադիմիրից**): Ես մտա-  
 ծում եմ, ավելի լավ չէ՞ր լինի մեզակ լինել՝ յուրաքանչյուրս իր  
 համար: (**Նա կտրում է բեմը և նստում թմբին**): Մենք միևնույն  
 ճանապարհի համար չենք ստեղծված:

ՎԼԱԴԻՄԻՐ (**առանց զայրանալու**).— Դա ստույգ չէ:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Ոչ, ոչինչ ստույգ չէ:  
**Վլադիմիրը դանդաղ կտրում է բեմը, նստում Էստրագոնի կողքին:**

ՎԼԱԴԻՄԻՐ.— Մենք դեռ կարող ենք բաժանվել, եթե կարծում ես,  
 որ այդպես ավելի լավ կլինի:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Հիմա արդեն շատ ուշ է:  
**Լռություն:**

ՎԼԱԴԻՄԻՐ.— Այո, հիմա արդեն շատ ուշ է:  
**Լռություն:**

ԷՍՏՐԱԳՈՆ.— Լավ, կգնա՞նք, թե՞ ոչ:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Այո, արի գնանք:  
**Նրանք չեն շարժվում:**

## Վ ա ր ա գ ու յ ր

### ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ ԵՐԿՐՈՐԴ

Հաջորդ օրը: Նույն ժամին: Նույն տեղում:

Էստրագոնի կոշիկները՝ դիմացը, մեջտեղում, կրունկները կպած,  
 ծալվե՛րք առանձին: Լաքիի գլխարկը նույն տեղում: Ծառի վրա չորս  
 կամ հինգ տերև: Մտնում է Վլադիմիրը, անհանգիստ: Նա կանգնում  
 է և Էրկար նայում ծառին, հետո հանկարծ սկսում է տենդագին շարժ-  
 վել բեմով՝ ետ ու առաջ, աջ ու ձախ: Կանգնում է կոշիկների մոտ,

բարձրացնում մեկը, գննում աչև, հոտ է քաշում, զգվանքից խոճողված, հետո հոգատարությամբ դնում է տեղը: Գնում-գալիս է: Կանգնում է աջ եզրում է նայում է հեռուն՝ ձեռքով աչքերին շվաք անելով: Գնում-գալիս է: Կանգնում է ձախ եզրում, առաջվա պես: Գնում-գալիս է: Կանգնում է հանկարժ և սկսում բարձրաձայն երգել:  
ՎԼԱԴԻՄԻՐ.— Մի շուն մտավ...

Շատ բարձր էր վերցրել, դադարում է, մաքրում կոկորդը, վերսկսում:

Մի շուն մտավ խոհանոց  
Եվ գողացավ մի կտոր հաց:՝  
Եկավ տիրուհին թավաչով  
Եվ ծեծեց նրան, մինչև որ սատկեց:

Հետո եկան շները բոլոր  
Եվ փորեցին շանը գերեզման...

**Նա դադարում է, խոբհում, վերսկսում:**

Հետո եկան շները բոլոր  
Եվ փորեցին շանը գերեզման  
Եվ գրեցին գերեզմանաքարին՝  
Մյուս շներից որպես դաս:

Մի շուն մտավ խոհանոց  
Եվ գողացավ մի կտոր հաց:  
Եկավ տիրուհին թավաչով  
Եվ ծեծեց նրան, մինչև որ սատկեց:

Հետո եկան շները բոլոր  
Եվ փորեցին շանը գերեզման...

**Դադարում է, ինչպես առաջ:**

Հետո եկան շները բոլոր  
Եվ փորեցին շանը գերեզման...

**Նա դադարում է: Ինչպես առաջ: Մեղմորեն:**

Եվ փորեցին շանը գերեզման...

Մի պահ մնում է լուռ ու պնշարժ, հետո սկսում է տենդագին շարժվել բեմում: Նորից կանգնում է ծառի մոտ, գնում-գալիս է, կոշիկների մոտ, գնում-գալիս է, կանգնում աջ եզրում, նայում հեռուն, ձախ եզրում, նայում հեռուն: Մտնում է Էստրադոնը աջից՝ ոտաբորիկ, գլու-



խը կախ: Նա դանդաղ կտրում է բեմը: Վլադիմիրը շքջվում է և տեսնում նրան:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Նորի՛ց դու: (Էստրադոնը կանգնում է, բայց չի բարձրացնում գլուխը: Վլադիմիրը գնում է դեպի նա): Արի՛ ետ քեզ գրկեմ:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Մի՛ կպիր ինձ:

Վլադիմիրը վիրավորված էտ է կանգնում:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Ուզում ես, որ ես գնա՞մ: (Դադար): Գոգո՛: (Դադար: Վլադիմիրը ուշադիր դիտում է նրան): Նրանք քեզ ծեծե՞լ են: (Դադար): Գոգո՛: (Էստրադոնը մնում է լուռ, գլխիկոր): Որտե՞ղ ես աճցկացրել գիշերը:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Մի՛ կպիր ինձ: Մի՛ հարցրու: Մի՛ խոսիր: Մնա՛ ինձ մետ:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Ես քեզ երբևէ լքե՞լ եմ:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Դու թողեցիր, որ ես գնամ:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Նայիր ինձ: (Էստրադոնը չի բարձրացնում գլուխը: Կատաղորեն): Կնայե՞ս ինձ, թե՞ ոչ:

Էստրադոնը բարձրացնում է գլուխը: Նրանք երկար նայում են իրար՝ ետ քաշվելով, առաջ գալով, գլուխները մի կողմ, կարծես արվեստի ստեղծագործության առաջ, իրար ավելի ու ավելի մոտենալով, հետո հանկարծ գրկախառնվում են՝ իրար մեջքի խփելով: Վերջ գրկախառնությանը: Էստրադոնը գրկվեց հեճարանից, համարյա ընկնում է:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Ինչպիսի՞ օր:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Ո՞վ քեզ ծեծեց, ասա՛:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Մի օր էլ անցավ:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Դեռ ոչ:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Ինձ համար այն վերջացած է և անցած, ինչ էլ որ լինի: (Լռություն): Ես լսեցի քո երգերը:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Ծիշտ է, հիշում եմ:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Դա ինձ սպանեց: Ես ասացի, նա մեճակ է, նա կարծում է, որ ես ընդմիշտ գնացել եմ և երգում է:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Մարդ իր տրամադրության տերը չէ: Ամբողջ օրը ես լուռ լավ էի գգում: (Դադար): Ես գիշերը շարժանցա ոչ մի անգամ:

ԷՍՏՐԱԳՈՆ (մոռյալ).— Տեսնում ես, քեզ համար ավելի լավ է, երբ ես չկամ:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Ես կորցրի քեզ... և սիննույն ժամանակ ես երջանիկ լի. Տարօրինակ է, չէ՞:

**ԷՍՏՐԱԳՈՆ (ցնցված).**— Երջանի՞կ:  
**ՎԼԱԴԻՄԻՐ.**— Գուցե դա հարմար բառը չէ:  
**ԷՍՏՐԱԳՈՆ.**— Իսկ հիմա՞:  
**ՎԼԱԴԻՄԻՐ.**— Հիմա՞... (**Հասնւթոյ**): Դու այստեղ ես նորից... (**Անտարբեր**): Մենք այստեղ ենք նորից... (**Տխուր**): Ես այստեղ եմ նորից:  
**ԷՍՏՐԱԳՈՆ.**— Տեսնում ես, դու ավելի վատ ես զգում, կրր ես քեզ հետ եմ: Ես մենակ նույնպես ավելի լավ եմ զգում:  
**ՎԼԱԴԻՄԻՐ (վիրավորված ինքնասիրությամբ).**— Այդ դեպքում ինչո՞ւ դու սողալով ետ վերադարձար:  
**ԷՍՏՐԱԳՈՆ.**— Չգիտեմ:  
**ՎԼԱԴԻՄԻՐ.**— Իսկ ես գիտեմ: Որովհետև դու չգիտես, ինչպես հոգ տանել քո մասին: Ես թույլ չէի տա, որ նրանք քեզ ծեծեին:  
**ԷՍՏՐԱԳՈՆ.**— Դու չէիր կարող նրանց կանխել:  
**ՎԼԱԴԻՄԻՐ.**— Ինչո՞ւ:  
**ԷՍՏՐԱԳՈՆ.**— Նրանք տաս հոգի էին:  
**ՎԼԱԴԻՄԻՐ.**— Ոչ, ես նկատի ունեմ ծեծելուց առաջ: Ես քեզ թույլ չէի տա անել այն, ինչ որ դու անում էիր:  
**ԷՍՏՐԱԳՈՆ.**— Ես ոչինչ չէի անում:  
**ՎԼԱԴԻՄԻՐ.**— Այդ դեպքում ինչո՞ւ նրանք քեզ ծեծեցին:  
**ԷՍՏՐԱԳՈՆ.**— Չգիտեմ:  
**ՎԼԱԴԻՄԻՐ.**— Օ, ոչ, Գոգո՛ւ, ճշմարտությունն այն է, որ դու չես հասկանում այն, ինչ ես եմ հասկանում: Դու պետք է ինքդ զգաս:  
**ԷՍՏՐԱԳՈՆ.**— Ես ստացի. որ ոչինչ չէի անում:  
**ՎԼԱԴԻՄԻՐ.**— Գուցե չէիր անում: Բայց պահելու ձևն է կարևոր, պահելու ձևը, եթե ուզում ես ապրել:  
**ԷՍՏՐԱԳՈՆ.**— Ես ոչինչ չէի անում:  
**ՎԼԱԴԻՄԻՐ.**— Դու նույնպես պետք է երջանիկ լինես, ստտի խոռոչում, երև միայն իմանաս:  
**ԷՍՏՐԱԳՈՆ.**— Երջանիկ՝ ինչի՞ համար:  
**ՎԼԱԴԻՄԻՐ.**— Ինչ հետ լինելու համար:  
**ԷՍՏՐԱԳՈՆ.**— Աղպե՛ս ես կարծում:  
**ՎԼԱԴԻՄԻՐ.**— Ասա, եթե նույնիսկ դա ճիշտ չէ:  
**ԷՍՏՐԱԳՈՆ.**— Ի՞նչ պետք է ասեմ:  
**ՎԼԱԴԻՄԻՐ.**— Ասա, ես երջանիկ եմ:  
**ԷՍՏՐԱԳՈՆ.**— Ես երջանիկ եմ:  
**ՎԼԱԴԻՄԻՐ.**— Ես էլ:  
**ԷՍՏՐԱԳՈՆ.**— Ես էլ:

ՎԱՂԻՄԻՐ.— Մենք երջանիկ ենք:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Մենք երջանիկ ենք: (Լռություն): Ի՞նչ պետք է անենք հիմա մենք, հիմա, երբ երջանիկ ենք:

ՎԱՂԻՄԻՐ.— Սպասենք Գողոյին: (Էստրագոնը գոռում է: Լռություն): Շրջապատը փոխվել է երեկվանից:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Իսկ եթե նա չգա՞:

ՎԱՂԻՄԻՐ (մի պահ չհասկանալով).— Կտեսնենք, երբ ժամանակը գա: (Դադար): Ես ասացի, որ շրջապատը փոխվել է այստեղ երեկվանից:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Ամեն ինչ դանդաղ հոսում է:

ՎԱՂԻՄԻՐ.— Նայիր ծառին:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Գրողի տարածն էլ ամեն վայրկյան փոխվում է:

ՎԱՂԻՄԻՐ.— Ծառը, նայիր ծառին:

**Էստրագոնը նայում է ծառին:**

ԷՍՏՐԱԳՈՆ.— Երեկ սա այստեղ չէ՞ր:

ՎԱՂԻՄԻՐ.— Այո, իհարկե այստեղ էր: Ձե՛ս հիշում: Մենք քիչ էր մնում մեզ կախեինք դրանից: Բայց դու չուզեցիր: Ձե՛ս հիշում:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Դու երազում ես դա տեսել:

ՎԱՂԻՄԻՐ.— Հնարավոր է, որ մոռացած լինես արդեն:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Ես այդպես եմ: Կամ անմիջապես մոռանում եմ, կամ կրթեք չեմ մոռանում:

ՎԱՂԻՄԻՐ.— Իսկ Փոզզոն և Լաքին, նրանց նույնպե՛ս մոռացել ես:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Փոզզո՞ և Լա՞քի:

ՎԱՂԻՄԻՐ.— Նա մոռացե՛լ է ամեն ինչ:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Ես հիշում եմ մի խելագարի, որը քացով խփեց իմ սրունքին: Հետո նա գծի դեր կատարեց:

ՎԱՂԻՄԻՐ.— Դա Լաքին էր:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Հիշում եմ, բայց ե՞րբ էր դա:

ՎԱՂԻՄԻՐ.— Իսկ նրա տե՛րը: Դու հիշո՞ւմ ես նրան:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Նա ինձ ոսկոր տվեց:

ՎԱՂԻՄԻՐ.— Դա Փոզզոն էր:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Եվ այդ բոլորը երե՞կ էր, ասում ես:

ՎԱՂԻՄԻՐ.— Այո, իհարկե, երեկ էր:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Եվ այստեղ, որտեղ հիմա մե՞նք ենք:

ՎԱՂԻՄԻՐ.— Ուրիշ որտե՞ղ էիր կարծում: Ձե՛ս ճանաչում այս վայրը:

ԷՍՏՐԱԳՈՆ (անսպասելի պոռթկումով).— Ծանաչե՛լ: Ի՞նչ կա ճանաչելու: Ամբողջ ոջլոտ կյանքումս ես սողացել եմ ցեխի մեջ: Եվ

դու խոսում ես ինձ հետ շրջապատի մասին: **(Մոլեգնած նայելով նրան):** Նայիր այս կեղտին: Ես երբեք դրանից չեմ հեռացել:

**ՎԼԱԴԻՄԻՐ.**— Հանգստացիր, հանգստացիր:

**ԷՍՏՐԱԳՈՆ.**— Դու և քո շրջապատը: Խոսիր ինձ հետ որդերի մասին:

**ՎԼԱԴԻՄԻՐ.**— Միևնույնն է, դու չես կարող ասել, որ սա **(ձեռքի շարժում)** որևէ նմանություն ունի... **(Նա տատանվում է)...** Մական երկրի հետ, օրինակ: Դու չես կարող հերքել, որ մեծ տարբերություն կա:

**ԷՍՏՐԱԳՈՆ.**— Մական երկիրը: Ո՞վ է ասել քեզ Մական երկրի մասին:

**ՎԼԱԴԻՄԻՐ.**— Բայց դու ինքդ այնտեղ եղել ես՝ Մական երկրում:

**ԷՍՏՐԱԳՈՆ.**— Ոչ, ես երբեք չեմ եղել Մական երկրում: Իմ ամբողջ այլանդակ կյանքը ես քարշ եմ տվել այստեղ, ասում եմ: Այստե՛ղ՝ Կական երկրում:

**ՎԼԱԴԻՄԻՐ.**— Բայց մենք միասին էինք այնտեղ, ես կարող եմ երգել: Խաղող էինք հավաքում մի մարդու համար, որի անունն էր... **(Ուս կտտացնում է մատներով)...** չեմ հիշում այդ մարդու անունը, որը ապրում էր... **(Ուս կտտացնում է մատներով)...** չեմ հիշում տեղի անունը: Դու չե՞ս հիշում:

**ԷՍՏՐԱԳՈՆ (ավելի հանգիստ).**— Հնարավոր է: Ես ոչինչ չեմ նկատել:

**ՎԼԱԴԻՄԻՐ.**— Բայց այնտեղ ամեն ինչ կարմիր էր:

**ԷՍՏՐԱԳՈՆ (ջղայնացած).**— Ես ոչինչ չե՛մ նկատել, ասացի:

**Լռություն: Վլադիմիրը խորը հոգոց է հանում:**

**ՎԼԱԴԻՄԻՐ.**— Դու դժվար մարդ ես, Գոգո՛:

**ԷՍՏՐԱԳՈՆ.**— Ավելի լավ կլինի, եթե մենք բաժանվե՞նք:

**ՎԼԱԴԻՄԻՐ.**— Դու միշտ դա ասում ես, բայց միշտ սողալով ետ ես վերադառնում:

**ԷՍՏՐԱԳՈՆ.**— Ամենից լավ կլինի սպանել ինձ, ինչպես մյուսին:

**ՎԼԱԴԻՄԻՐ.**— Ո՞ր մյուսին: **(Դադար):** Ո՞ր մյուսին:

**ԷՍՏՐԱԳՈՆ.**— Ինչպես միլիարդավոր ուրիշների:

**ՎԼԱԴԻՄԻՐ (բարոյախոսաբար).**— Ամեն մարդու՝ իր փոքր խաչը:

**(Նա հոգոց է հանում):** Մինչև որ մեռնի: **(Կարծես նոր գլխի ընկնելով):** Եվ մոռացվի:

**ԷՍՏՐԱԳՈՆ.**— Մինչ այդ արի փորձենք հանգիստ խոսել, քանի որ չենք կարող լուրջություն պահպանել:

**ՎԼԱԴԻՄԻՐ.**— Դու ճիշտ ես, մենք անսպառ ենք:

**ԷՍՏՐԱԳՈՆ.**— Չմտածելու համար:

ՎԼԱԳԻՄԻՐ.— Մենք ունենք այդ արդարացումը:

ԼՍՏՐԱԳՈՆ.— Չլսելու համար:

ՎԼԱԳԻՄԻՐ.— Մենք պատճառներ ունենք:

ԼՍՏՐԱԳՈՆ.— Բոլոր մեռած ձայները:

ՎԼԱԳԻՄԻՐ.— Նրանք թևերի աղմուկ են հանում:

ԼՍՏՐԱԳՈՆ.— Տերևների:

ՎԼԱԳԻՄԻՐ.— Ավազի:

ԼՍՏՐԱԳՈՆ.— Տերևների:

**Լռություն:**

ՎԼԱԳԻՄԻՐ.— Նրանք բոլորը միասին են խոսում:

ԼՍՏՐԱԳՈՆ.— Ամեն մեկն իր հետ:

**Լռություն:**

ՎԼԱԳԻՄԻՐ.— Ավելի շուտ նրանք շնչում են:

ԼՍՏՐԱԳՈՆ.— Սոսափում են:

ՎԼԱԳԻՄԻՐ.— Մոմոում են:

ԼՍՏՐԱԳՈՆ.— Սոսափում են:

**Լռություն:**

ՎԼԱԳԻՄԻՐ.— Ի՞նչ են նրանք ասում:

ԼՍՏՐԱԳՈՆ.— Նրանք խոսում են իրենց կյանքի մասին:

ՎԼԱԳԻՄԻՐ.— Ապրած լինելը բավական չէ նրանց համար:

ԼՍՏՐԱԳՈՆ.— Նրանք պետք է խոսեն դրա մասին:

ՎԼԱԳԻՄԻՐ.— Մեռած լինելը բավական չէ նրանց համար:

ԼՍՏՐԱԳՈՆ.— Դա հերիք չէ:

**Լռություն:**

ՎԼԱԳԻՄԻՐ.— Նրանք փետուրի աղմուկ են հանում:

ԼՍՏՐԱԳՈՆ.— Տերևների:

ՎԼԱԳԻՄԻՐ.— Մոխրի:

ԼՍՏՐԱԳՈՆ.— Տերևների:

**Երկար լռություն:**

ՎԼԱԳԻՄԻՐ.— Ասա՛ մի բան:

ԼՍՏՐԱԳՈՆ.— Փորձում եմ:

**Երկար լռություն:**

ՎԼԱԳԻՄԻՐ (բարկացած).— Ասա՛ մի բան, վերջապես:

ԼՍՏՐԱԳՈՆ.— Ի՞նչ պետք է անենք հիմա:

ՎԼԱԳԻՄԻՐ.— Սպասե՛ճք Գողոթին:

ԼՍՏՐԱԳՈՆ.— Ասա՛:

**Լռություն:**

ՎԼԱԳԻՄԻՐ.— Սա ահավոր է:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Երգի՛ր մի բան:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Ո՛չ, ո՛չ: (Նա կշռադատում է): Գուցե մենք կարող ենք սկսել ամեն ինչ նորից:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Դա հեշտ կլինի:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Հենց սկիզբն է դժվար:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Կարելի է սկսել ուզած տեղից:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Այո, բայց պետք է որոշել:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Ծիշտ է:

**Լռություն:**

ՎԼԱԴԻՄԻՐ.— Օգնիր ինձ:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Ես փորձում եմ:

**Լռություն:**

ՎԼԱԴԻՄԻՐ.— Երբ փորձում ես, լսում ես:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Ծիշտ է:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Դա խանգարում է գտնել:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Այո:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Դա խանգարում է մտածել:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Միևնույնն է, մտածում ես:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Ո՛չ, ո՛չ, դա անհնար է:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Լավ միտք է, արի հերքենք իրար:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Անհնար է:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Այդպե՛ս ես կարծում:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Մենք այլևս երբեք մտածելու սպառնալիքի տակ չենք:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Այդ դեպքում ինչի՞ց ենք մենք դժգոհում:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Մտածելը ամենավատ բանը չէ:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Գուցե ոչ: Բայց գոնե այդ կա:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Այդ ի՞նչը:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Լավ միտք է, արի իրար հարցեր տանք:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Ի՞նչ ի նկատի ունեիր՝ ասելով «գոնե այդ կա»:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Այդ շատ քիչ աղքատությունը:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Ծիշտ է:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Լավ: Իսկ եթե շնորհակալ լինենք մեր բախտի համար:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Ամենից սարսափելին մտածելն է:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Բայց դա մեզ հետ երբևէ պատահե՞լ է:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Որտեղի՞ց այս բոլոր դիակները:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Այս կմախքները:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Ասա ինձ:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Ծիշտ է:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Մենք պետք է մի փոքր մտածած լինենք:

ԼՍՏՐԱԳՈՆ.— Ամենասկզբում:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Դիակների կույտե՛ր, դիակների կույտե՛ր:

ԼՍՏՐԱԳՈՆ.— Կարիք չկա նայել:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Հնարավոր չէ չնայել:

ԼՍՏՐԱԳՈՆ.— Ծիշտ է:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Փորձիր, ինչքան կարող ես:

ԼՍՏՐԱԳՈՆ.— Ի՞նչ:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Փորձիր, ինչքան կարող ես:

ԼՍՏՐԱԳՈՆ.— Մենք պետք է որոշակիորեն շրջվենք դեպի բնությունը:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Մենք դա փորձել ենք:

ԼՍՏՐԱԳՈՆ.— Ծիշտ է:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Օ՛հ, դա ամենավատ բանը չէ, ես գիտեմ:

ԼՍՏՐԱԳՈՆ.— Ի՞նչը:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Մտածելը:

ԼՍՏՐԱԳՈՆ.— Ակնհայտորեն:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Բայց մենք կարող էինք յուր գնալ առանց դրա:

ԼՍՏՐԱԳՈՆ.— Que voulez-vous?\*

ՎԼԱԴԻՄԻՐ.— Ի՞նչ:

ԼՍՏՐԱԳՈՆ.— Que voulez-vous?

ՎԼԱԴԻՄԻՐ.— Աա՛հ, que voulez-vous. Իրոք:

**Լռություն:**

ԼՍՏՐԱԳՈՆ.— Այնքան էլ վատ անցում չէր:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Այո, բայց հիմա մենք պետք է ուրիշ զբաղմունք գրտնենք:

ԼՍՏՐԱԳՈՆ.— Տեսնենք:

**Նա հանում է գլխարկը, կենտրոնանում:**

ՎԼԱԴԻՄԻՐ.— Տեսնենք:

**Նա հանում է գլխարկը, կենտրոնանում:**

**Նրանք կենտրոնանում են:**

ՎԼԱԴԻՄԻՐ.— Աա՛հ:

**Նրանք դնում են գլխարկները, թուլանում:**

ԼՍՏՐԱԳՈՆ.— Հետո՞:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Ես ասում էի, որ կարող ենք գնալ այստեղից:

ԼՍՏՐԱԳՈՆ.— Ի՞նչ էիր ասում այն ժամանակ:

\* QUE VEULEZ-VOUS? (ՎՐ) — Ի՞նչ էք ուզում: (Ման. թարգմ.):

ՎԼԱԴԻՄԻՐ.— Ամենասկզբում:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Ինչի՞ սկզբում:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Այս երեկոյի... ես ասում էի... ես ասում էի...

ԷՍՏՐԱԳՈՆ.— Մի՛ հարցրու: Ես պատմաբան չեմ:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Սպասիր... մենք գրկախառնվեցինք... մենք երջանիկ էինք... երջանիկ... ինչ պետք է անենք մենք հիմա, երբ երջանիկ ենք... գնանք... սպասենք... սպասենք... թող մտածեմ... գալիս է... շարունակենք սպասել... այժմ, երբ մենք երջանիկ ենք... տեսնենք... ասա՛: Ծա՛որ:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Ծա՛որ:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Չե՛ս հիշում:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Ես հոգնած եմ:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Նայիր դրան:

**Էստրագոնը նայում է ծառին:**

ԷՍՏՐԱԳՈՆ.— Ես ոչինչ չեմ տեսնում:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Բայց երեկ երեկոյան այն լրիվ սև ու մերկ էր: Իսկ հիմա ծածկված է տերևներով:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Տերևներո՞վ:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Մի գիշերվա մեջ:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Պետք է որ գարուն լինի:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Բայց մի գիշերվա մե՛ջ:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Ես ասում եմ, որ երեկ մենք այստեղ չէինք: Քո հերթական մղձավանջն է:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Իսկ որտե՞ղ էինք մենք երեկ ըստ քեզ:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Ի՞նչ իմանամ: Մի ուրիշ տեղ: Դատարկ տեղերի պակաս չկա:

ՎԼԱԴԻՄԻՐ (ինքնազստահ).— Լավ: Մենք այստեղ չէինք երեկ երեկոյան: Ի՞նչ էինք անում մենք երեկ երեկոյան:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Անո՞ւմ:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Փորձիր հիշել:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Անում: Կարծում եմ զավգակություն էինք անում:

ՎԼԱԴԻՄԻՐ (իրեն զսպելով).— Ինչի՞ մասին:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Օ՛..., սրա-նրա, կարծեմ, ոչ մի կոնկրետ բանի: (Վշտաահեցնելով): Այո, հիմա ես հիշում եմ, որ երեկ երեկոն մենք անցկացրինք՝ չխոսելով ոչ մի կոնկրետ բանի մասին: Դա շարունակվում է արդեն կես դար:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Դու չե՛ս հիշում որևէ փաստ, որևէ հանգամանք:

ԷՍՏՐԱԳՈՆ (հոգնած).— Մի՛ տանջիր ինձ, Դիդի՛:



- ՎԱԳԻՄԻՐ.— Արևը: Լուսինը: Չե՞ս հիշում:
- ԼՍՏՐԱԳՈՆ.— Նրանք պետք է որ իրենց տեղում լինեին, ինչպես սովորաբար:
- ՎԱԳԻՄԻՐ.— Դու չե՞ս նկատել անսովոր ոչ մի բան:
- ԼՍՏՐԱԳՈՆ.— Ավա՛ղ:
- ՎԱԳԻՄԻՐ.— Փոզզո՞ն: Իսկ Լաքի՞ն:
- ԼՍՏՐԱԳՈՆ.— Փոզզո՞:
- ՎԱԳԻՄԻՐ.— Ոսկորները: \*
- ԼՍՏՐԱԳՈՆ.— Նրանք ձկան փշի նման էին: \*
- ՎԱԳԻՄԻՐ.— Այդ Փոզզոն էր, որ քեզ տվեց:
- ԼՍՏՐԱԳՈՆ.— Ես չգիտեմ:
- ՎԱԳԻՄԻՐ.— Իսկ քացի՞ն:
- ԼՍՏՐԱԳՈՆ.— Ճիշտ է, ինչ որ մեկը ինձ քացույ խփեց:
- ՎԱԳԻՄԻՐ.— Դա Լաքին էր:
- ԼՍՏՐԱԳՈՆ.— Եվ այդ բոլորը երե՞կ էր:
- ՎԱԳԻՄԻՐ.— Ցույց տուր ոտքդ:
- ԼՍՏՐԱԳՈՆ.— Ո՞րը:
- ՎԱԳԻՄԻՐ.— Երկուսն էլ: Բարձրացրու շալվարդ: (Էստրազոնը մի ոտքը մեկնում է Վլադիմիրին, ճոճվում է: Վլադիմիրը բռնում է ոտքը: Նրանք ճոճվում են): Բարձրացրո՛ւ շալվարդ:
- ԼՍՏՐԱԳՈՆ.— Չեմ կարող:
- Վլադիմիրը բարձրացնում է նրա շալվարը, նայում է ոտքին, բաց թողնում: Էստրազոնը համարյա ընկնում է:
- ՎԱԳԻՄԻՐ.— Մյուսը: (Էստրազոնը տալիս է նույն ոտքը): Մյո՛ւսը, խո՛գ: (Էստրազոնը տալիս է մյուս ոտքը: Հաղթական): Ահա՛ վերքը: Սկսել է լավանալ:
- ԼՍՏՐԱԳՈՆ.— Հետո՞ ինչ:
- ՎԱԳԻՄԻՐ (բաց թողնելով ոտքը).— Ո՞րտեղ եմ քո կոշիկները:
- ԼՍՏՐԱԳՈՆ.— Պետք է որ դեմ գցած լինեմ դրանք:
- ՎԱԳԻՄԻՐ.— Ե՞րբ:
- ԼՍՏՐԱԳՈՆ.— Չգիտեմ:
- ՎԱԳԻՄԻՐ.— Ինչո՞ւ:
- ԼՍՏՐԱԳՈՆ (ջղայնացած).— Չգիտեմ ինչու, չօխտե՛մ:
- ՎԱԳԻՄԻՐ.— Ոչ, ես ուզում էի ասել, ինչո՞ւ ես դեմ գցել:
- ԼՍՏՐԱԳՈՆ (ջղայնացած).— Որովհետև դրանք ցավեցնում էին:
- ՎԱԳԻՄԻՐ (հաղթականորեն ցույց տալով կոշիկները).— Դրանք այստե՛ղ են: (Էստրազոնը նայում է կոշիկներին): Ճիշտ նույն տեղում, ուր թողել ես երեկ:

Էստրագոնը գնում է դեպի կոշիկները, ուսումնասիրում դրանք մոտիկից:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Սրանք իմը չեն:

ՎԼԱԴԻՄԻՐ (շշմած).— Քոնը չե՛ն:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Իմը սև էին: Սրանք շագանակագույն են:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Դու վստա՞հ ես, որ նրանք սև էին:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Լավ, նրանք մի տեսակ մոխրագույն էին:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Իսկ դրանք շագանակագո՞ւյն են: Ցույց տուր:

ԷՍՏՐԱԳՈՆ (բարձրացնելով մի կոշիկը).— Լավ, սրանք մի տեսակ կանաչ են:

ՎԼԱԴԻՄԻՐ (մոտենալով).— Ցույց տուր: (Էստրագոնը տալիս է նրան կոշիկը: Վլադիմիրը գնում է դա, գայրացած ցած գցում):  
.Լավ, այս բոլորը...

ԷՍՏՐԱԳՈՆ.— Հասկանում ես, այս բոլորը անհիծյալ...

ՎԼԱԴԻՄԻՐ.— Օ՛հ, ես հասկանում եմ ինչ է: Այո, ես հասկանում եմ ինչ է պատահել:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Այս բոլորը անհիծյալ...

ՎԼԱԴԻՄԻՐ.— Պարզ է: Եկել է ինչ-որ մեկը, վերցրել քոնը և թողել իրենը:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Ինչո՞ւ:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Իրենը փոքր են եղել, դրա համար էլ նա վերցրել է քոնը:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Բայց իմը շատ փոքր էին:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Քեզ համար, ոչ՝ նրա:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Ես հոգնած եմ: (Դադար): Արի գնանք:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Չենք կարող:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Ինչո՞ւ:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Մենք սպասում ենք Գոդոյին:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Ա՛հ: (Դադար: Հուսահատվելով): Ի՛նչ պետք է անենք, ի՛նչ պետք է անենք:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Ոչինչ չենք կարող անել:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Բայց ես չեմ կարող այլևս այսպես:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Բողկ կուզե՞իր:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Դա՞ է քո ունեցածը:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Կա բողկ և շաղգամ:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Իսկ գազար չկա՞:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Ոչ: Դու համը հանեցիր քո գազարով:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Այդ դեպքում տուր ինձ մի բողկ:

Վլադիմիրը քրքրում է գրպանները, շաղգամից բացի ոչ մի բան չի գտնում. վերջապես հանում է մի բողկ և տալիս էստրազոնին, որը զննում է դա, հոտ քաշում:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Սա սև է:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Դա բողկ է:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Ես միայն կարմիրներն եմ սիրում, դու դա գիտես:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Ուրեմն դու դա չե՞ս ուզում:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Ես միայն կարմիրներն եմ սիրում:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Այդ դեպքում ետ տուր:

**Էստրազոնը ետ է վերադարձնում:**

ԷՍՏՐԱԳՈՆ.— Ես կգնամ և գազար կճարեմ:

**Նա չի շարժվում:**

ՎԼԱԴԻՄԻՐ.— Սա դառնում է իսկապես ձանձրալի:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Ոչ այնքան:

**Էռություն:**

ՎԼԱԴԻՄԻՐ.— Ի՞նչ կասես դրանք փորձելու մասին:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Ես ամեն ինչ փորձել եմ:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Ես ի նկատի ունեմ կոշիկները:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Դա լա՛վ բան կլինի:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Դա կապանի ժամանակը: **(Էստրազոնը տատանվում է):** Հավատացնում եմ քեզ, դա լավ զբաղմունք կլինի:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Հանգիստ:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Թարմացում:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Հանգիստ:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Փորձիր:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Դու ինձ կօգնե՞ս:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Այո, իհարկե:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Մենք այնքան էլ վատ չենք անցկացնում ժամանակը միասին, չե՞, Դիդի՛:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Այո, այո: Արի, մենք կփորձենք նախ ձախը:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Մենք միշտ գտնում ենք մի բան, չե՞, Դիդի՛, տպավորություն ստեղծելու համար, որ գոյություն ունենք:

ՎԼԱԴԻՄԻՐ **(անհամբեր)**.— Այո, այո, մենք կախարդներ ենք: Բայց սրի անենք մեր որոշածը, քանի չենք մոռացել: **(Նա բարձրացնում է մի կոշիկը):** Արի, տո՛ւր ոտքդ: **(Էստրազոնը բարձրացնում է ոտքը):** Մյո՛ւսը, խո՛զ: **(Էստրազոնը բարձրացնում է մյուս ոտքը):** Ավելի՛ բարձր: **(Վապաժ իրար, նրանք ճոճվում են բեմի վրա:**

Վերջապէս Վլադիմիրին հաջողվում է հագցնել կոշիկը): Փորձիր քայլել: (Էստրազոնը քայլում է): Լա՛վ է:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Հարմար է:

ՎԼԱԴԻՄԻՐ (գրպանից մի թել հանելով).— Մենք կփորձենք կապել դա:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Ո՛չ, ո՛չ, ո՛չ մի կապել, ո՛չ մի կապել:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Դու կփոշմանես: Արի փորձենք մյուսը: (Ինչպէս առաջ): Լա՛վ է:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Սա նույնպէս հարմար է:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Դրանք չե՞ն ցավեցնում:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Դեռ ոչ:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Այդ դեպքում կարող ես պահել դրանք:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Սրանք չափից դուրս մեծ են:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Գուցէ դու մի օր գուլպաներ կունենաս:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Ծիշտ է:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Ուրեմն դու կպահե՞ս դրանք:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Բավական է խոսենք այս կոշիկների մասին:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Այո, բայց...

ԷՍՏՐԱԳՈՆ (պողթկումով).— Բավակա՛ն է: (Լռություն): Կարծում եմ կարելի է նստել:

Նա իր շուրջը նստելու տեղ է փնտրում, հետո գնում և նստում է թմբին:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Դու այդտեղ էիր նստած երեկ երեկոյան:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Եթէ միայն կարողանայի քնել:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Երեկ դու քնեցիր:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Կփորձեմ:

Նա գլուխը դնում է ծնկների արանքը:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Սպասիր: (Նա գնում և նստում է Էստրազոնի կողքին ու սկսում է բարձր ձայնով երգել):

Բայ, բայ, բայ, բայ...

ԷՍՏՐԱԳՈՆ (վեր նայելով զայրացած).— Ո՛չ այդքան բարձր:

ՎԼԱԴԻՄԻՐ (մեղմորեն).—

Բայ, բայ, բայ, բայ,

Բայ, բայ, բայ, բայ,

Բայ, բայ...

Էստրազոնը քնում է: Վլադիմիրը զգուշորեն վեր է կենում, հանում վերարկուն և զգում է Էստրազոնի ուտերին, հետո սկսում է քայլել ետ ու առաջ, թափահարելով ձեռքերը՝ տաքանալու համար: Էստ-

րագոնը արթնանում է կտրուկ, կանգնում է, կատարորեն իրեն նետում դեռ ու դեռ: **Վլադիմիրը վազում է դեպի նա, գրկում նրան:**

Լավ... լավ... ես այստեղ եմ... մի վախեցիր:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Ա՛հ:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Լավ... լավ... վերջացավ:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Այն ընկնում էր...

ՎԼԱԴԻՄԻՐ.— Վերջացավ, վերջացավ:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Ես գտնվում էի մի լեռան...

ՎԼԱԴԻՄԻՐ.— Մի՛ պատմիր: Արի, մենք կքայլենք և կանցնի:

Նա բռնում է Էստրագոնի ձեռքը և քայլում է նրա հետ ետ ու առաջ այնքան, մինչև Էստրագոնը հրաժարվում է այլևս շարժվել:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Հերիք է: Ես հոգնած եմ:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Ավելի լավ կլիներ, որ այնտեղ առանց գործի ցցվեի՞ր:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Այո:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Խնդրեմ, գնա:

Նա բաց է թողնում Էստրագոնին, խլում է իր վերարկուն, հագնում:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Արի գնանք:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Չենք կարող:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Ինչո՞ւ:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Մենք սպասում ենք Գոդոյին:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Ա՛հ: (**Վլադիմիրը ետ ու առաջ է քայլում**): Չե՞ս կարող հանգիստ մնալ:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Ես մրսում եմ:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Մենք շատ շուտ ենք եկել:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Ինչպես միշտ՝ գիշերամուտին:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Բայց գիշերը չի իջել:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Այն իջնում է անսպասելի, ինչպես երեկ:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Հետո գիշեր կլինի:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Եվ մենք կարող ենք գնալ:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Հետո նորից ցերեկ կլինի: (**Դադար: Հուսահատվելով**):

Ի՞նչ պետք է անենք, ի՞նչ պետք է անենք:

ՎԼԱԴԻՄԻՐ (**կանգնելով, մոլեգնած**).— Վերջացրո՛ւ նվաճողդ: Ես զրգվել եմ քո բողոքներից:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Ես գնում եմ:

ՎԼԱԴԻՄԻՐ (**տեսնելով Լաքիի գլխարկը**).— Նայի՛ր:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Ցտեսություն:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Լաքիի գլխարկը: (**Նա գնում է դեպի գլխարկը**): Մի

ժամ է այստեղ եւս և չես տեսել: (Ծատ գոհ): Հիանալի՛ է:  
ԷՍՏՐԱԳՈՆ.— Դու էլ երբեք ինձ չես տեսնի:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Ես գիտեի, որ սա ճիշտ տեղն է: Հիմա վերջ մեր բո-  
լոր մտահոգություններից. (Նա բարձրացնում է գլխարկը, զննում  
այն, ուղղում): Պետք է որ շատ սիրուն գլխարկ եղած լինի: (Նա  
դնում է այն իր գլխարկի փոխարեն, որը պարզում է Էստրագո-  
նին): Վերցրու:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Ի՞նչ:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Պահիր սա:

Էստրագոնը վերցնում է Վլադիմիրի գլխարկը: Վլադիմիրը ուղ-  
ղում է Լաքիի գլխարկը իր գլխին: Էստրագոնը դնում է Վլադիմիրի  
գլխարկը իրենի փոխարեն, որը նա պարզում է Վլադիմիրին: Վլադի-  
միրը վերցնում է Էստրագոնի գլխարկը: Էստրագոնը ուղղում է Վլա-  
դիմիրի գլխարկը իր գլխին: Վլադիմիրը դնում է Էստրագոնի գլխար-  
կը Լաքիի գլխարկի փոխարեն, որը նա պարզում է Էստրագոնին: Էստ-  
րագոնը վերցնում է Լաքիի գլխարկը: Վլադիմիրը ուղղում է Էստրա-  
գոնի գլխարկը իր գլխին: Էստրագոնը դնում է Լաքիի գլխարկը Վլա-  
դիմիրի գլխարկի փոխարեն, որը նա պարզում է Վլադիմիրին: Վլա-  
դիմիրը վերցնում է իր գլխարկը: Էստրագոնը ուղղում է Լաքիի գրլ-  
խարկը իր գլխին: Վլադիմիրը դնում է իր գլխարկը Էստրագոնի գրլ-  
խարկի փոխարեն, որը պարզում է Էստրագոնին: Էստրագոնը վերց-  
նում է իր գլխարկը: Վլադիմիրը ուղղում է իր գլխարկը գլխին: Էստ-  
րագոնը դնում է իր գլխարկը Լաքիի գլխարկի փոխարեն, որը նա պար-  
զում է Վլադիմիրին: Վլադիմիրը վերցնում է Լաքիի գլխարկը: Էստրա-  
գոնը ուղղում է իր գլխարկը գլխին: Վլադիմիրը դնում է Լաքիի գլխար-  
կը իրենի փոխարեն, որը նա պարզում է Էստրագոնին: Էստրագոնը  
վերցնում է Վլադիմիրի գլխարկը: Վլադիմիրը ուղղում է Լաքիի գլխար-  
կը իր գլխին: Էստրագոնը պարզում է Վլադիմիրի գլխարկը ետ՝ Վլա-  
դիմիրին, որը վերցնում է այն և պարզում Էստրագոնին, որը վերցնում  
է այն և պարզում Վլադիմիրին, որը վերցնում է այն և ցած գցում:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Սազո՞ւմ է սա ինձ:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Ես ինչ գիտեմ:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Ոչ, բայց ի՞նչ տեսք ունեմ սրանով:

Նա շրջում է գլուխը կոկետորեն այս ու այն կողմ, կոտրատվում  
մանեկենի պես:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Սարսափելի:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Բայց ոչ ավելի, քան սովորաբար:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Ոչ ավելի, ոչ էլ պակաս:

ՎԼԱԳԻՄԻՐ.— Այդ դեպքում ես այն կպահեմ: Իմը ինձ ձանձրացրել է:

(Դադար): Ինչպե՞ս ասեմ: (Դադար): Այն ինձ քոր է տալիս:

Նա հանում է Լաքիի օլխարկը, նայում ներսը, ցնցում այն, կրտտացնում է եզրին, նորից դնում գլխին:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Ես գնում եմ:

Էռություն:

ՎԼԱԳԻՄԻՐ.— Դու չե՞ս խաղա:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Ի՞նչ խաղամ:

ՎԼԱԳԻՄԻՐ.— Մենք կարող ենք խաղալ Փոզզո և Լաքի:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Երբեք չեմ լսել դրա մասին:

ՎԼԱԳԻՄԻՐ.— Ես կխաղամ Լաքիի դերը, դու՝ Փոզզոյի: (Զևացնում է Լաքիին՝ ծանրոցների ծանրության տակ ճոճվող: Էստրագոնը շքշմած նայում է նրան): Ծարունակիր:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Ի՞նչ պետք է ես անեմ:

ՎԼԱԳԻՄԻՐ.— Հայհոյիր ինձ:

ԷՍՏՐԱԳՈՆ (մտածելուց հետո).— Անպե՛տք:

ՎԼԱԳԻՄԻՐ.— Ավելի կոպիտ:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Գոնկոկո՛կ: Սպիրոքե՛տ:

Վլադիմիրը տատանվում է ետ ու առաջ՝ ծալված երկու մասի:

ՎԼԱԳԻՄԻՐ.— Հրամայիր ինձ մտածել:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Ի՞նչ:

ՎԼԱԳԻՄԻՐ.— Ասա, մտածի՛ր, խոզ:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Մտածի՛ր, խո՛զ:

Էռություն:

ՎԼԱԳԻՄԻՐ.— Չեմ կարող:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Բավական է:

ՎԼԱԳԻՄԻՐ.— Հրամայիր ինձ պարել:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Ես գնում եմ:

ՎԼԱԳԻՄԻՐ.— Պարի՛ր, խո՛զ: (Նա կծկվում է կանգնած տեղում: Էստրագոնը դուրս է գալիս ձախից, սանալով): Չեմ կարող: (Նա նայում է վեր, չի գտնում Էստրագոնին): Գոգո՛: (Նա խելացնոր շարժվում է բեմով: Մտնում է Էստրագոնը ձախից, ծանր շնչելով: Նա շտապում է դեպի Վլադիմիրը, ընկնում է նրա ձեռքերի մեջ):

Դու վերջապես այստե՛ղ ես նորից:

ԷՍՏՐԱԳՈՆ (ծանր շնչելով).— Ես անիծվա՛ծ եմ:

ՎԼԱԳԻՄԻՐ.— Ո՛րտեղ էիր: Ես կարծեցի դու ընդմիշտ գնացել էս:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Նրանք գալի՛ս եմ:

ՎԼԱԳԻՄԻՐ.— Ուլքե՛ր:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Չգիտեմ:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Քանի՞ հոգի:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Չգիտեմ:

ՎԼԱԴԻՄԻՐ (հաղթականորեն).— Դա Գողո՞ն է: Վերջապե՛ս, Գողո՞ն: Դա Գողո՞ն է: Մենք փրկվա՞ծ ենք: Արի գնանք, նրան դիմավորենք: (Քաշում է Էստրազոնին դեպի եզրը: Էստրազոնը դիմադրում է, ազատվում նրանից, դուրս է գալիս աջից): Գողո՞ն: Ե՛տ արի: (Վլադիմիրը վազում է ձախ եզրը, ուշադիր նայում հորիզոնին: Մտնում է Էստրազոնը աջից: Նա շտապում է դեպի Վլադիմիրը, ընկնում նրա ձեռքերի մեջ): Դու այստե՛ղ ես նորից:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Ես դժոխքում եմ:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Որտե՞ղ էիր դու:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Նրանք այնտեղից էլ են գալիս:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Մենք շրջապատված ենք: (Էստրազոնը խելացնոր նետվում է ետ): Հիմար: Այնտեղ դուրս գալու ճամփա չկա: (Նա բռնում է Էստրազոնի ձեռքը և քաշում առաջ: Ձեռքի շարժում դեպի դահլիճը): Այնտեղ: Ոչ մի հոգի չի երևում: Հեռացի՛ր: Արա՛գ: (Նա հրում է Էստրազոնին դեպի դահլիճը: Էստրազոնը ետ է ցատկում սարսափով): Ձե՛ս ուզում: (Նա զննում է դահլիճը): Լավ, ես հասկանում եմ քեզ: Սպասիր տեսնեմ: (Նա խորհում է): Քո միակ հույսը անհետանալն է:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Որտե՞ղ:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Ծառի ետևում: (Էստրազոնը տատանվում է): Արագ: Ծառի ետևում: (Էստրազոնը զնում է և պատկում ծառի ետևում, հասկանում է, որ մնացել է տեսադաշտում, դուրս է գալիս այնտեղից): Այս ծառը որոշակիորեն ոչ մի օգուտ չի տա մեզ:

ԷՍՏՐԱԳՈՆ (ավելի հանգիստ).— Ես գլուխս կորցրի: (Վախում է գլուխը ամոթից): Ների՛ր ինձ: (Բարձրացնում է գլուխը ոգևորված): Դա այլևս երբեք չի կրկնվի: Ասա ի՛նչ անեմ:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Անելու բան չկա:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Գնա և կանգնիր այնտեղ: (Նա հրում է Վլադիմիրին աջ եզրը, կանգնեցնում է նրան մեջքով դեպի բեմը): Այնտեղ, մի շարժվիր և հետևիր: (Վլադիմիրը ուշադիր նայում է հորիզոնին, ձեռքով աչքերին շվաք անելով: Էստրազոնը վազում է և նույն դիրքն է ընդունում ձախ եզրում: Նրանք շրջում են գլուխները և նայում իրար): Մեջք-մեջքի, ինչպես հին, լավ օրերին: Նրանք շարունակում են նայել իրար մի պահ, հետո վերսկսում են իրենց զննումը: Երկար լռություն:



ԷՍՏՐԱԳՈՆ.— Ոչ մի մոտեցող բան չե՞ս տեսնում:

ՎԼԱԴԻՄԻՐ (շրջելով գլուխը).— Ի՞նչ:

ԷՍՏՐԱԳՈՆ (ավելի բարձր).— Ոչ մի մոտեցող բան չե՞ս տեսնում:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Ոչ:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Ոչ էլ ես:

**Նրանք շարունակում են իրենց դիտարկումը: Երկար լռություն:**

ՎԼԱԴԻՄԻՐ.— Պետք է որ պատրանք եղած լինի:

ԷՍՏՐԱԳՈՆ (շրջելով գլուխը).— Ի՞նչ:

ՎԼԱԴԻՄԻՐ (ավելի բարձր).— Պետք է որ պատրանք եղած լինի:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Գոռալու կարիք չկա:

**Նրանք շարունակում են իրենց դիտարկումը: Երկար լռություն:**

ՎԼԱԴԻՄԻՐ և ԷՍՏՐԱԳՈՆ (միաժամանակ շրջվելով).— Դու...

ՎԼԱԴԻՄԻՐ.— Օ՛, ներողություն:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Ծարունակիր:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Ոչ, ոչ, քեզնից հետո:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Ոչ, ոչ, առաջ դու:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Ես ընդհատեցի քեզ:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Հակառակը:

**Նրանք գայրացած նայում են իրար:**

ՎԼԱԴԻՄԻՐ.— Ձեանոյ կապի՛կ:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Պեղանո խո՛զ:

ՎԼԱԴԻՄԻՐ (կատաղորեն).— Վերջացրու խոսքդ, ասացի՛:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Վերջացրու քո՛նը:

**Լռություն: Նրանք մոտենում են, կանգնում:**

ՎԼԱԴԻՄԻՐ.— Տկարամի՛տ:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Լավ միտք է, արի անպատվենք իրար:

**Նրանք շրջվում են, մեծացնում իրենց մեջ եղած տարածությունը, շրջվում են նորից և նայում իրար:**

ՎԼԱԴԻՄԻՐ.— Տկարամի՛տ:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Պարագի՛տ:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Վիժվա՛ծք:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Կոյուղու առնե՛տ:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Կյուրե՛<sup>12</sup>:

ԷՍՏՐԱԳՈՆ (եզրափակող տոնով).— Ապպո՛ւշ:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Օօ՛:

**Նա խուլանում է, հանձնվում և շրջվում մի կողմ:**

ԷՍՏՐԱԳՈՆ.— Հիմա արի հաշտվենք:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Գոգո՛:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Դիդի՛:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Քո ձե՛ռքը:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Վերցրու:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Արի ձեռքերիս մեջ:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Քո ձեռքերի՞:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Իմ գիրկը:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Գալի՛ս եմք:

**Նրանք գրկախառնվում են: Բաժանվում են: Լուռլուռ:**

ՎԼԱԴԻՄԻՐ.— Ինչպե՛ս է ժամանակը թռչում, երբ մարդ գլխարձանում է:

**Լուռլուռ:**

ԷՍՏՐԱԳՈՆ.— Ի՞նչ պետք է անենք հիմա:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Քանի սպասո՛ւմ ենք:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Քանի սպասում ենք:

**Լուռլուռ:**

ՎԼԱԴԻՄԻՐ.— Մենք կարող ենք անել մեր վարժությունները:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Մեր շարժումները:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Մեր բարձրացումները:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Մեր հանգստացումները:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Մեր ձգումները:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Մեր հանգստացումները:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Տարանալու համար:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Հանգստանալու համար:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Սկսեցինք:

**Վլադիմիրը ցատկում է մի ոտքից մյուսը: Էստրագոնը ընդօրինակում է նրան:**

ԷՍՏՐԱԳՈՆ (դադարելով).— Հերիք է: Ես հոգնած եմ:

ՎԼԱԴԻՄԻՐ (դադարելով).— Մենք լավ մարզամիճակում չենք: Ի՞նչ կասես մի փոքր խորք շնչելու մասին:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Ես հոգնել եմ շնչելուց:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Ծիշո ես: (**Ռադար**): Արի պարզապես ծառ ձևացնենք, մեր հավասարակշռության համար:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Ծա՛ռ:

**Վլադիմիրը ծառ է ձևացնում, ճոճվելով մի ոտքի վրա:**

ՎԼԱԴԻՄԻՐ (դադարելով).— Քո հերթն է:

**Էստրագոնը ծառ է ձևացնում՝ ճոճվելով:**

ԷՍՏՐԱԳՈՆ.— Ի՞նչ ես կարծում, Աստված տեսնո՞ւմ է ինձ:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Դու պետք է աչքերդ փակես:

- Էստրագոնը փակում է աչքերը, ավելի է ճոճվում:
- ԼՍՏՐԱԳՈՆ (դադարելով, բռունցքները օդում թափահարելով, ամե-  
նաբարձր ձայնով).— Աստվա՛ծ, ողորմյա՛ ինձ:
- ՎԱԳԻՄԻՐ (զայրացած).— Իսկ ի՞նձ:
- ԼՍՏՐԱԳՈՆ (ինչպես առաջ).— Ի՛նձ, ի՛նձ: Ողորմյա՛ ինձ:
- Մտնում են Փոզզոն (այժմ կույր) և Լաքին: Լաքին ծանրաբեռնված  
է ինչպես առաջ: Պարանը՝ ինչպես առաջ, բայց շատ ավելի կարճ, այն-  
պես որ Փոզզոն կարողանա ավելի հեշտորեն հետևել նրան: Լաքիի  
գլխին ուրիշ գլխարկ է: Տեսնելով Վլադիմիրին և Էստրագոնին՝ նա  
կանգնում է: Փոզզոն, շարունակելով իր շարժումը, բախվում է նրան:
- ՎԱԳԻՄԻՐ.— Գոգո՛:
- ՓՈԶԶՈ (բռնած Լաքիից, որը անվստահ տատանվում է).— Ի՞նչ է:  
Ո՞վ է դա:
- Լաքին ընկնում է, գցում ամեն ինչ և քաշում Փոզզոյին իր հետ  
գած: Նրանք մնում են անշարժ փռված՝ ցրված բեռների մեջ:
- ԼՍՏՐԱԳՈՆ.— Սա Գոդո՞ն է:
- ՎԱԳԻՄԻՐ.— Վերջապե՛ս: (Նա գնում է դեպի կույտը): Վերջա-  
պե՛ս օգնություն:
- ՓՈԶԶՈ.— Օգնեցե՛ք:
- ԼՍՏՐԱԳՈՆ.— Սա Գոդո՞ն է:
- ՎԱԳԻՄԻՐ.— Մենք սկսել էինք թուլանալ: Հիմա մենք հաստատ  
կոտանենք երեկոյի ավարտը:
- ՓՈԶԶՈ.— Օգնեցե՛ք:
- ԼՍՏՐԱԳՈՆ.— Լսո՞ւմ ես նրան:
- ՎԱԳԻՄԻՐ.— Մենք այլևս մեճակ չենք, սպասելով գիշերվան, սպա-  
սելով Գոդոյին, սպասելով... սպասելուն: Ամբողջ երեկո մենք  
սլաքարել ենք, ստանց օգնության: Հիմա վերջացավ: Հիմա ար-  
դեն վաղն է:
- ՓՈԶԶՈ.— Օգնեցե՛ք:
- ՎԱԳԻՄԻՐ.— Ժամանակը հոսում է արդեն: Արևը մայր կմտնի, լու-  
սինը կծագի և մենք կգնանք հեռու... այստեղից:
- ՓՈԶԶՈ.— Խղճացե՛ք:
- ՎԱԳԻՄԻՐ.— Խե՛ղճ Փոզզո:
- ԼՍՏՐԱԳՈՆ.— Ես գիտեի, որ դա նա է:
- ՎԱԳԻՄԻՐ.— Ո՞վ:
- ԼՍՏՐԱԳՈՆ.— Գոդոն:
- ՎԱԳԻՄԻՐ.— Բայց սա Գոդոն չէ:
- ԼՍՏՐԱԳՈՆ.— Գոդոն չէ՞:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Գողոն չէ:  
 ԷՍՏՐԱԳՈՆ.— Այդ դեպքում ո՞վ է սա:  
 ՎԼԱԴԻՄԻՐ.— Փոզզոն է:  
 ՓՈԶԶՈ.— Այստե՛ղ, այստե՛ղ: Օգնեք ինձ բարձրանալ:  
 ՎԼԱԴԻՄԻՐ.— Նա չի կարող կանգնել:  
 ԷՍՏՐԱԳՈՆ.— Արի գնանք:  
 ՎԼԱԴԻՄԻՐ.— Չենք կարող:  
 ԷՍՏՐԱԳՈՆ.— Ինչո՞ւ:  
 ՎԼԱԴԻՄԻՐ.— Մենք սպասում ենք Գողոյին:  
 ԷՍՏՐԱԳՈՆ.— Ա՛հ:  
 ՎԼԱԴԻՄԻՐ.— Գուցե նա էլի ոսկոր կունենա քեզ համար:  
 ԷՍՏՐԱԳՈՆ.— Ոսկո՞ր:  
 ՎԼԱԴԻՄԻՐ.— Հավը: Չե՛ս հիշում:  
 ԷՍՏՐԱԳՈՆ.— Դա նա՞ էր:  
 ՎԼԱԴԻՄԻՐ.— Այո:  
 ԷՍՏՐԱԳՈՆ.— Հարցրու նրան:  
 ՎԼԱԴԻՄԻՐ.— Գուցե նախ պետք է օգնել նրան:  
 ԷՍՏՐԱԳՈՆ.— Ի՞նչ անելու:  
 ՎԼԱԴԻՄԻՐ.— Կանգնել:  
 ԷՍՏՐԱԳՈՆ.— Նա չի կարողանում կանգնե՛լ:  
 ՎԼԱԴԻՄԻՐ.— Նա ուզում է կանգնել:  
 ԷՍՏՐԱԳՈՆ.— Դե թող կանգնի:  
 ՎԼԱԴԻՄԻՐ.— Նա չի կարող:  
 ԷՍՏՐԱԳՈՆ.— Ինչո՞ւ:  
 ՎԼԱԴԻՄԻՐ.— Չգիտեմ:

**Փոզզոն կծկվում է, տնքում, խփում է գետնին բռունցքներով:**

ԷՍՏՐԱԳՈՆ.— Նախ նրանից ոսկոր ուզենք: Եթե նա մեզ մերժի,  
 կթողնենք նրան այնտեղ:  
 ՎԼԱԴԻՄԻՐ.— Դու ուզում ես ասել, որ նա մեր իշխանության տա՞կ է:  
 ԷՍՏՐԱԳՈՆ.— Այո:  
 ՎԼԱԴԻՄԻՐ.— Եվ որ մենք պետք է պայմանավորենք մեր օգնու-  
 թյունը որոշ պահանջներո՞վ:  
 ԷՍՏՐԱԳՈՆ.— Այո:  
 ՎԼԱԴԻՄԻՐ.— Դա խելոք միտք է թվում: Բայց մի բան կա, որից ես  
 վախենում եմ:  
 ՓՈԶԶՈ.— Օգնեցե՛ք:  
 ԷՍՏՐԱԳՈՆ.— Ի՞նչ:

- ՎԱՌԻՄԻՐ.— Որ Լաքին կարող է հանկարծակի կատաղել: Այդ դեպքում մեր վերջը կգա:
- ԼՍՏՐԱԳՈՆ.— Լաքի՞ն:
- ՎԱՌԻՄԻՐ.— Դա նա է, որ քեզ խփեց երեկ:
- ԼՍՏՐԱԳՈՆ.— Ես ասացի, որ նրանք տաս հոգի էին:
- ՎԱՌԻՄԻՐ.— Ոչ, դրանից առաջ, նա, որ քացով խփեց քեզ:
- ԼՍՏՐԱԳՈՆ.— Նա այնտե՞ղ է:
- ՎԱՌԻՄԻՐ.— Ահա, այն հսկան: (**Ձեռքը մեկնում է դեպի Լաքին**): Այս պահին նա հանգիստ է: Բայց նա կարող է ցերեպել ամեն րոպե:
- ՓՈԶԶՈ.— Օգնեցե՛ք:
- ԼՍՏՐԱԳՈՆ.— Իսկ եթե մենք մի լավ ծեծենք նրան, մենք՝ Երկուսով:
- ՎԱՌԻՄԻՐ.— Այսինքն հարձակվենք նրա վրա քնած ժամանակ:
- ԼՍՏՐԱԳՈՆ.— Այո:
- ՎԱՌԻՄԻՐ.— Դա լավ միտք է թվում: Բայց կարո՞ղ ենք դա անել: Նա իսկապես քնած է: (**Դադար**): Ոչ, ավելի լավ կլինի նախապատվությունը տալ Փոզզոյի օգնության կանչին:
- ՓՈԶԶՈ.— Օգնեցե՛ք:
- ՎԱՌԻՄԻՐ.— Օգնել նրան...
- ԼՍՏՐԱԳՈՆ.— Մենք օգնենք նրա՞ն:
- ՎԱՌԻՄԻՐ.— Նյութական բարիքների ակնկալությամբ:
- ԼՍՏՐԱԳՈՆ.— Իսկ եթե նա...
- ՎԱՌԻՄԻՐ.— Արի մեր ժամանակը չվատնենք դատարկ խոսակցությունների վրա: (**Դադար: Կրքով**): Արի մի բան անենք, բանի հնարավորություն ունենք: Ամեն օր չէ, որ մեր կարիքը զգացվում է: Իհարկե, անձամբ մեր կարիքը չէ, որ զգացվում է: Ուրիշները նույն բանը կարող էին անել նույն հաջողությամբ, եթե ոչ ավելի լավ: Ամբողջ մարդկությանն են ուղղված օգնության այս կանչերը, որ դեռ հնչում են մեր ականջներում: Բայց այս տեղում, այս ժամանակ, ամբողջ մարդկությունը մենք ենք, ուզում ենք մենք դա, թե ոչ: Արի անենք այն ամենը, ինչ կարող ենք, բանի դեռ շատ ուշ չէ: Արի արժանի կերպով ներկայացնենք միանգամից կեղտոտ ամբոխը, որին դաժան ճակատագիրը կապել է մեզ: Ի՞նչ ես ասում: (**Էստրագոնը ոչինչ չի ասում**): Ճիշտ է, որ երբ մենք ծալած ձեռքերով կշռում ենք թերև ու դեմք, ոչ մի վստահություն չի մնում մեր նմանների նկատմամբ: Վագրը Ռուսվոմ է օգնելու իր ազգակիցներին սուսնց մտածելու, կամ էլ օողեզող փախչում է անտառի խորքերը: Բայց դա չէ խնդիր: Ինչ

ենք անում մենք այստեղ, սա է խնդիրը: Եվ մենք օրհնված ենք, որ գիտենք պատասխանը: Այո, այս հսկայական խառնաշփոթում մի բան է միայն հասկանալի: Մենք սպասում ենք Գողոթի գալուն...

ԷՍՏՐԱԳՈՆ.— Ա՛հ:

ՓՈԶԶՈ.— Յոգնեցե՛ք:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Կամ գիշերվա իջնելուն: **(Դադար)**: Մենք կատարել ենք մեր խոստումը և վերջ: Մենք սրբեր չենք, բայց մենք կանխարեղ ենք մեր խոստումը: Քանի՞ մարդ կարող է պարծենալ դրանով:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Միլիարդ:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Աչդպե՛ս ես կարծում:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Չգիտեմ:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Գուցե դու ճիշտ ես:

ՓՈԶԶՈ.— Յոգնեցե՛ք:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Մի բան հաստատ է, որ ժամերը երկար են այս վիճակում և անիպում են մեզ դրանք լցնել արարքներով, որոնք, ինչպես ասեմ, որոնք կարող են առաջին հայացքից խելամիտ թվալ, մինչև չդառնան սովորույթ: Դու կարող ես ասել, որ դա մեր միտքը մթազնումից պահպանելու համար է: Ոչ մի կասկած: Բայց մի՞թե այն երկար ժամանակ մոլորված չէ խորը անդունդի հավերժական գիշերում: Ահա թե ինչն է ինձ երբեմն զարմացնում: Դու հետևո՛ւմ ես իմ մտքին:

ԷՍՏՐԱԳՈՆ **(հանդիսավոր)**.— Մենք բոլորս ծնվել ենք խելագար: Որոշ մարդիկ մնում են այդպիսին:

ՓՈԶԶՈ.— Յոգնեցե՛ք: Ես կվճարե՛մ:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Ինչքա՞ն:

ՓՈԶԶՈ.— Երկու շիլլինգ:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Դա բավական չէ:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Ես այդքան հեռու չեի գնա:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Դու կարծում ես դա բավական է:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Ոչ, ես ուզում եմ ասել՝ այնքան հեռու, որ պնդեմ, թե ես թույլ էի գլխից, երբ աշխարհ եկա: Բայց դա չէ խնդիրը:

ՓՈԶԶՈ.— Հի՛նգ շիլլինգ:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Մենք սպասում ենք: Մենք ձանձրացել ենք: **(Նա բարձրացնում է ձեռքը)**: Ոչ, մի վիճիր, մենք մահու չափ ձանձրացել ենք, ոչ մի կասկած դրանում: Լավ: Մի զբաղմունք է գտնվել և ի՞նչ ենք անում մենք: Թողնում ենք, որ այն կորչի: Արի, արի

անցնենք գործի: (Նա շարժվում է դեպի կույտը, կանգնում է կես բալխին): Մի ակօթարթ և ամեն ինչ կվերանա և մենք նորից մե-  
նակ կլինենք, դատարկության մեջ:

Նա Խխար խորհում է:

ՓՈԶԶՈ.— Հի՛նգ շիլինգ:

ՎԱԳԻՄԻՐ.— Գալի՛ս ենք:

Նա փորձում է Փոզզոյին բարձրացնել ոտքի, չի կարողանում, նո-  
ւյց է փորձում, սայթաքում է, ընկնում, փորձում է բարձրանալ, չի կա-  
րողանում:

ԼԱՏՐԱԳՈՆ.— Ի՛նչ է ձեզ բոլորիդ պատահել:

ՎԱԳԻՄԻՐ.— Օգնի՛ր:

ԼԱՏՐԱԳՈՆ.— Ես գնում եմ:

ՎԱԳԻՄԻՐ.— Մի լքիր ինձ: Նրանք ինձ կսպանեն:

ՓՈԶԶՈ.— Որտե՞ղ եմ ես:

ՎԱԳԻՄԻՐ.— Գոգո՛:

ՓՈԶԶՈ.— Օգնեցե՛ք:

ՎԱԳԻՄԻՐ.— Օգնի՛ր:

ԼԱՏՐԱԳՈՆ.— Ես գնում եմ:

ՎԱԳԻՄԻՐ.— Նախ օգնիր ինձ: Հետո մենք միասին կգնանք:

ԼԱՏՐԱԳՈՆ.— Դու խոստանո՞ւմ ես:

ՎԱԳԻՄԻՐ.— Երդվում եմ:

ԼԱՏՐԱԳՈՆ.— Եվ էլ երբեք չե՞նք վերադառնա:

ՎԱԳԻՄԻՐ.— Երբե՛ք:

ԼԱՏՐԱԳՈՆ.— Մենք կգնանք Պիրենեյներ<sup>13</sup>:

ՎԱԳԻՄԻՐ.— Ուր որ ուզես:

ՓՈԶԶՈ.— Տա՛ս շիլինգ— մի՛ ֆունտ:

ԼԱՏՐԱԳՈՆ.— Ես միշտ ուզել եմ թափառել Պիրենեյներում:

ՎԱԳԻՄԻՐ.— Դու կթափառես այնտեղ:

ԼԱՏՐԱԳՈՆ (եւ ցատկելով).— Ո՞վ հոտ հանեց:

ՎԱԳԻՄԻՐ.— Փոզզոն:

ՓՈԶԶՈ.— Աչստե՛ղ, աչստե՛ղ, խղճացե՛ք:

ԼԱՏՐԱԳՈՆ.— Դա զգվելի է:

ՎԱԳԻՄԻՐ.— Արա՛գ: Տո՛ւր ինձ ձեռքդ:

ԼԱՏՐԱԳՈՆ.— Ես գնում եմ: (Դադար: Ավելի բարձր): Ես գնում եմ:

ՎԱԳԻՄԻՐ.— Լավ, երևի ես իմ սեփական ուժերով վեր կկենամ:

(Նա փորձում է չի կարողանում): Վաղ, թե ուշ:

ԼԱՏՐԱԳՈՆ.— Ի՛նչ է պատահել քեզ:

ՎԱԳԻՄԻՐ.— Կորի՛ր գրողի ծոցը:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Դու մնում ես այդտե՞ղ:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Որոշ ժամանակ:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Դե՛, վե՛ր կաց, կմքես:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Ինձ համար մի՛ անհանգստացիր:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Լսիր, Դիդի՛, համառություն մի արա:

Նա պարզում է ձեռքը, որը Վլադիմիրը շտապում է բռնել:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Քաշի՛ր:

Էստրագոնը քաշում է, սայթաքում է, ընկնում: Երկար լռություն:

ՓՈԶԶՈ.— Օգնեցե՛ք:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Մենք եկել ենք:

ՓՈԶԶՈ.— Ո՞վ եք դուք:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Մարդիկ ենք:

Լռություն:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Սո՛ւրբ Մայր Աստվածածին:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Կարո՞ղ ես բարձրանալ:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Չգիտեմ:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Փորձիր:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Ոչ հիմա, ոչ հիմա:

Լռություն:

ՓՈԶԶՈ.— Ի՞նչ է պատահել:

ՎԼԱԴԻՄԻՐ (կատաղորեն).— Վե՛րջ տուր, սրիկա՛: Նա իրենից բացի ոչ մի բանի մասին չի մտածում:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Ի՞նչ կասես մի փոքր քնելու մասին:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Լսո՞ւմ ես: Նա ուզում է իմանալ ինչ է պատահել:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Նրան բանի տեղ մի դիր, քնիր:

Լռություն:

ՓՈԶԶՈ.— Խղճացե՛ք, խղճացե՛ք:

ԷՍՏՐԱԳՈՆ (կտրուկ).— Ի՞նչ է:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Դու քնա՞ծ էիր:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Երևի:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Դա նորից այս սրիկա Փոզզոն է:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Ասա թող վերջացնի: Խփիր նրա փորիկ:

ՎԼԱԴԻՄԻՐ (խփելով Փոզզոյին).— Վերջ կտաս, թե ոչ, անասո՛ւն:

Փոզզոն պաշտպանվում է ցավից գոռալով և սողում է հեռու:

Մերթընդմերթ նա կանգնում է, կուրորեն նայում երկնքին՝ օգնու-

թյուն կանչելով: Վլադիմիրը, հենված արմունկին, հետևում է նրա

անհանջին): Նա փախա՛լ: (Փոզզոն փլվում է): Նա ընկա՛լ:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Ի՞նչ պետք է անենք հիմա:



- ՎԱՍԴԻՄԻՐ.— Գուցե ես սողամ նրա մոտ:
- ԼՍՏՐԱԳՈՆ.— Մի թողնիր ինձ:
- ՎԱՍԴԻՄԻՐ.— Կամ կանչեմ նրան:
- ԼՍՏՐԱԳՈՆ.— Այո, կանչիր նրան:
- ՎԱՍԴԻՄԻՐ.— Փոզզո՛: (**Լռություն**): Փոզզո՛: (**Լռություն**): Ոչ մի պատասխան:
- ԼՍՏՐԱԳՈՆ.— Միասին:
- ԼՍՏՐԱԳՈՆ և ՎԱՍԴԻՄԻՐ.— Փոզզո՛, Փոզզո՛:
- ՎԱՍԴԻՄԻՐ.— Նա շարժվեց:
- ԼՍՏՐԱԳՈՆ.— Դու վստա՞հ ես, որ նրա անունը Փոզզո է:
- ՎԱՍԴԻՄԻՐ (**շփոթված**).— Պր-ն Փոզզո՛: Ե՛տ եկեք: Մենք ձեզ ձեռք չենք տա:
- Լռություն:**
- ԼՍՏՐԱԳՈՆ.— Փորձենք կանչել նրան ուրիշ անուններով:
- ՎԱՍԴԻՄԻՐ.— Ես վախենում եմ, որ նա մեռած է:
- ԼՍՏՐԱԳՈՆ.— Դա զվարճալի կլինի:
- ՎԱՍԴԻՄԻՐ.— Ի՞նչը զվարճալի կլինի:
- ԼՍՏՐԱԳՈՆ.— Փորձել նրան ուրիշ անուններով կանչել, մեկը մյուսի ետևից: Դա ժամանակը կսպանի: Մենք ճիշտը կգտնենք, վաղ թե ուշ:
- ՎԱՍԴԻՄԻՐ.— Ես քեզ ասում եմ, որ նրա անունը Փոզզո է:
- ԼՍՏՐԱԳՈՆ.— Մենք հիմա կտեսնենք: (**Նա խորհում է**): Աքե՛լ, Աքե՛լ: ՓՈԶԶՈ.— Օգնեցե՛ք:
- ԼՍՏՐԱԳՈՆ.— Գտա միանգամից:
- ՎԱՍԴԻՄԻՐ.— Ես սկսում եմ հոգնել սրանից:
- ԼՍՏՐԱԳՈՆ.— Երևի մյուսի անունը Կայեն է: (**Նա կանչում է**): Կայե՛ն, Կայե՛ն:
- ՓՈԶԶՈ.— Օգնեցե՛ք:
- ԼՍՏՐԱԳՈՆ.— Նա ամբողջ մարդկությունն է: (**Լռություն**): Նաչիր փոքր ամպին:
- ՎԱՍԴԻՄԻՐ (**բարձրացնելով գլուխը**).— Որտե՞ղ:
- ԼՍՏՐԱԳՈՆ.— Այնտեղ: Չենիթում:
- ՎԱՍԴԻՄԻՐ.— Հետո՞: (**Դադար**): Ի՞նչ անսովոր բան կա այնտեղ:
- Լռություն:**
- ԼՍՏՐԱԳՈՆ.— Արի անցնենք մի ուրիշ բանի, չե՞ս առարկում:
- ՎԱՍԴԻՄԻՐ.— Ես ինքս հենց ուզում էի դա առաջարկել:
- ԼՍՏՐԱԳՈՆ.— Բայց ինչի՞:
- ՎԱՍԴԻՄԻՐ.— Ա՛հ:

**Լռություն:**

ԷՍՏՐԱԳՈՆ.— Իսկ եթե մենք սկզբում բարձրանա՞նք:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Փորձելուց վտանգ չկա:

**Նրանք կանգնում են:**

ԷՍՏՐԱԳՈՆ.— Մանկական խաղ:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Պարզապես կամքի ուժի հարց է:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Իսկ հիմա՞:

ՓՈԶԶՈ.— Օգնեցե՛ք:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Արի գնանք:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Չենք կարող:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Ինչո՞ւ:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Մենք սպասում ենք Գոգոյին:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Ա՛հ: (Դադար: Հուսահատվելով): Ի՞նչ պետք է ա-  
նենք, ի՞նչ պետք է անենք:

ՓՈԶԶՈ.— Օգնեցե՛ք:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Ի՞նչ կասես նրան օգնելու մասին:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Ի՞նչ է նա ուզում:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Ուզում է բարձրանալ:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Իսկ ինչո՞ւ նա չի բարձրանում:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Նա ուզում է, որ մենք օգնենք իրեն:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Իսկ ինչո՞ւ մենք չենք անում: Ինչի՞ ենք մենք սպա-  
սում:

**Նրանք օգնում են Փոզզոյին ոտքի կանգնել, թողնում են, որ գնա:  
Նա ընկնում է:**

ՎԼԱԴԻՄԻՐ.— Մենք պետք է նրան պահենք: (Նրանք նորից են նը-  
րան բարձրացնում: Փոզզոն կախվում է նրանցից, ձեռքերը նրանց  
վզին փաթաթած): Նա պետք է վարժվի ուղիղ կանգնելուն: (Փոզ-  
զոյին): Ավելի լա՛վ եք զգում:

ՓՈԶԶՈ.— Ովքե՛ր եք դուք:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Դուք մեզ չե՛ք ճանաչում:

ՓՈԶԶՈ.— Ես կույր եմ:

**Լռություն:**

ԷՍՏՐԱԳՈՆ.— Գուցե նա կարող է տեսնել ապագան:

ՎԼԱԴԻՄԻՐ (Փոզզոյին).— Երբվանի՞ց:

ՓՈԶԶՈ.— Ես ժամանակին շատ լավ տեսողություն ունեի... բայց դուք  
բարեկա՛մ եք:

ԷՍՏՐԱԳՈՆ (բարձրաձայն ծիծաղելով).— Նա ուզում է իմանալ, բա-  
րեկամնե՛ր ենք մենք, թե՞ ոչ:

- ՄԱՐԻՄԻՐ.— Ոչ, նա նկատի ունի իրե՛ն բարեկամ:
- ԼՍՏՐԱԳՈՆ.— Հետո՞:
- ՄԱՐԻՄԻՐ.— Մենք ապացուցեցինք դա՛ օգնելով նրան:
- ԼՍՏՐԱԳՈՆ.— Իրոք: Կօզնեհի՞նք մենք նրան, եթե՛ նրան բարեկամ չլինեի՞նք:
- ՎԱԳԻՄԻՐ.— Հնարավոր է:
- ԼՍՏՐԱԳՈՆ.— Ծիշտ է:
- ՄԱՐԻՄԻՐ.— Արի այդ առթիվ հիմա չզավզականանք:
- ՓՈԶԶՈ.— Դուք ավագակներ չե՞ք:
- ԼՍՏՐԱԳՈՆ.— Ավագակներ: Մենք ավագակի նմա՞ն ենք:
- ՎԱԳԻՄԻՐ.— Գրողը տանի, չե՞ս տեսնում, որ մարդը կույր է:
- ԼՍՏՐԱԳՈՆ.— Գրողը տանի, այդպես է: **(Դադար)**: Կամ այդպես է նա ասում:
- ՓՈԶԶՈ.— Մի՛ թողեք ինձ:
- ՎԱԳԻՄԻՐ.— Ոչ մի խոսք դրանում:
- ԼՍՏՐԱԳՈՆ.— Առայժմ:
- ՓՈԶԶՈ.— Ժամը քանի՞սն է:
- ՎԱԳԻՄԻՐ **(զննելով երկինքը)**.— Յոթը... ութը...
- ԼՍՏՐԱԳՈՆ.— Դա կախված է այն բանից, թե տարվա որ եղանակն է:
- ՓՈԶԶՈ.— Երեկո՞ է հիմա:

**Լռություն: Վլադիմիրը և Էստրագոնը ուշադիր զննում են արևամուտը:**

- ԼՍՏՐԱԳՈՆ.— Թվում է, թե արևը ծագում է դեպի ետ:
- ՎԱԳԻՄԻՐ.— Անհնար է:
- ԼՍՏՐԱԳՈՆ.— Գուցե հիմա արևածագ է:
- ՎԱԳԻՄԻՐ.— Հիմարություն մի՛ ասա: Այնտեղ արևմուտքն է:
- ԼՍՏՐԱԳՈՆ.— Ինչի՞ց իմացար:
- ՓՈԶԶՈ **(տառապած)**.— Երեկո՞ է հիմա:
- ՎԱԳԻՄԻՐ.— Ինչ որ է, այն չի շարժվել:
- ԼՍՏՐԱԳՈՆ.— Ես ասում եմ քեզ, արևը ծագում է:
- ՓՈԶԶՈ.— Ինչո՞ւ դուք չեք պատասխանում:
- ԼՍՏՐԱԳՈՆ.— Թողեք պարզենք:
- ՎԱԳԻՄԻՐ **(վատահեցնելով)**.— Երեկո է, ար՛ր, երեկո, գիշերը մոտենում է: Իմ ընկերն այստեղ ստիպեց ինձ կասկածել, և պետք է խոստովանեմ, որ նա ինձ մի պահ շփոթեցրեց: Բայց ես իզուր չեմ սպրել այս երկար օրը և կարող եմ վատահեցնել ձեզ, որ դրա խաղացանկը շատ մոտ է իր ավարտին: **(Դադար)**: Ինչպե՛ս եք հիմա զգում ձեզ:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Դեռ ինչքա՞ն պետք է մենք նրան գրկած պահենք:  
(Նրանք մի պահ բաց են թողնում նրան, նորից բռնում, քանի  
որ նա ընկնում է): Մենք հենասյուն չենք:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Դուք ասում էիք, որ ձեր տեսողությունը ժամանակին  
լավ էր, եթե ես ճիշտ լսեցի:

ՓՈԶԶՈ.— Հիանալի՛, հիանալի՛: Հիանալի՛ տեսողություն:

**Լռություն:**

ԷՍՏՐԱԳՈՆ (բորբոքված).— Ծարժվի՛ր, շարժվի՛ր:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Հանգի՛ստ թող նրան: Չե՞ս տեսնում, որ նա մտածում  
է այն օրերի մասին, երբ երջանիկ էր: (Դադար): Memoria prae-  
teritorum bonorum\*. Պետք է որ ծանր լինի դա:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Մենք չենք իմանա:

ՎԼԱԴԻՄԻՐ (Փոզզոյին).— Եվ դա պատահեց ձեզ հետ հանկարծա-  
կի՞:

ՓՈԶԶՈ.— Ծա՛տ հիանալի:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Ես հարցնում եմ, դա ձեզ հետ հանկարծակի՞ պա-  
տահեց:

ՓՈԶԶՈ.— Ես մի օր արթնացա կույր, ինչպես ճակատագիրը: (Դա-  
դար): Երբեմն ես մտածում եմ՝ գուցե դեռ քնա՞ծ եմ:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Ե՞րբ էր դա:

ՓՈԶԶՈ.— Չգիտեմ:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Բայց ոչ ավելի շուտ, քան երեկ...

ՓՈԶԶՈ.— Մի հարցրեք ինձ: Կույրը ժամանակի ոչ մի պատկերացում  
չունի: Ժամանակի էությունը նույնպես թաքնված է նրանից:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Օ՛, միայն լսեք: Ես կարծում էի, որ ճիշտ հակառակն  
է:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Ես գնում եմ:

ՓՈԶԶՈ.— Որտե՞ղ ենք մենք:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Չեմ կարող ասել:

ՓՈԶԶՈ.— Պատահաբար սա այն տեղը չէ՞, որ կոչվում է Բորդ:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Երբեք չեմ լսել դրա մասին:

ՓՈԶԶՈ.— Ի՞նչ տեսք ունի այն:

ՎԼԱԴԻՄԻՐ (նայելով շուրջը).— Հնարավոր չէ նկարագրել այս տեղը:  
Այն նման է ոչնչի: Այստեղ ոչինչ չկա: Այստեղ մի ծառ կա:

ՓՈԶԶՈ.— Այդ դեպքում սա Բորդը չէ:

---

\* Memoria praeteritorum bonorum (լատ.) — անցած և երջանկության հիշողությունը  
(ծան. բարգմ.):

ԼՍՏՐԱԳՈՆ (Կռանալով).— Մի քիչ շարժվեք:

ՓՈԶԶՈ.— Ո՞ր է իմ ծառան:

ՎԱՏԻՄԻՐ.— Նա այստեղ ինչ-որ տեղ է:

ՓՈԶԶՈ.— Ինչո՞ւ չի պատասխանում իմ կանչին:

ՎԱՏԻՄԻՐ.— Չգիտեմ: Թվում է, թե քնած է: Գուցե մտնել է:

ՓՈԶԶՈ.— Իսկապես, ի՞նչ պատահեց:

ԼՍՏՐԱԳՈՆ.— Իսկապե՞ս:

ՎԱՏԻՄԻՐ.— Դուք երկուսդ սայթաքեցիք: (Պարտաբար): Եվ ընկաք:

ՓՈԶԶՈ.— Գնացեք տեսեք, նա վնասվա՞ծ է:

ՎԱՏԻՄԻՐ.— Բայց մենք չենք կարող թողնել ձեզ:

ՓՈԶԶՈ.— Կարիք չկա, որ երկուսդ էլ գնաք:

ՎԱՏԻՄԻՐ (Էստրագոնին).— Դու գնա:

ԼՍՏՐԱԳՈՆ.— Այն բանից հետո ինչ նա ինձ արե՞ց: Երբե՛ք:

ՓՈԶԶՈ.— Այո, այո, թող ձեր ընկերը գնա, նրանից այնպիսի գարշահոտություն է գալիս: (Լռություն): Ինչի՞ է սպասում նա:

ՎԱՏԻՄԻՐ.— Ինչի՞ է սպասում դու:

ԼՍՏՐԱԳՈՆ.— Ես սպասում եմ Գողոշին:

**Լռություն:**

ՎԱՏԻՄԻՐ.— Ի՞նչ պետք է անի նա:

ՓՈԶԶՈ.— Դե, սկզբի համար նա պետք է ծօր պարանը այնքան ուժեղ, ինչքան ուզում է, այնքան ժամանակ, մինչև նա սկսի խեղդվել: Նա սովորաբար պատասխանում է դրան: Եթե ոչ, ապա պետք է հարվածի ոտքով դեմքին և փորին, այնքան, ինչքան հնարավոր է:

ՎԱՏԻՄԻՐ (Էստրագոնին).— Տեսնո՞ւմ ես, դու վսիսե՞նալու բան չունես: Դա նույնիսկ լավ առիթ է նրանից վրեժ լուծելու:

ԼՍՏՐԱԳՈՆ.— Իսկ եթե նա պաշտպանվի՞:

ՓՈԶԶՈ.— Ո՛չ, ո՛չ, նա երբեք չի պաշտպանվում:

ՎԱՏԻՄԻՐ.— Ես կնետվեմ քեզ փրկելու:

ԼՍՏՐԱԳՈՆ.— Աչքդ ինձնից մի կտրիիր:

**Նա գնում է դեպի Լաքին:**

ՎԱՏԻՄԻՐ.— Նախքան սկսելը համոզվիր, որ նա կենդանի է: Չարշարվելու կարիք չկա, եթե նա մեռած է:

ԼՍՏՐԱԳՈՆ (թեքվելով Լաքիի վրա).— Նա շնչում է:

ՎԱՏԻՄԻՐ.— Այդ դեպքում՝ սկսիր:

Անապատելի կատաղությանը Էստրագոնը սկսում է ոտքով հարվածել Լաքիին՝ հայհույանքներ տեղալով: Բայց նա ցավեցնում է ոտքը և հեռանում է՝ կաղալով և տնքալով: Լաքին շարժվում է:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Թ՛, վայրենի՛:

Նա նստում է թմբին և փորձում է հանել կոշիկները: Բայց շուտով փոշմանում է և ընդունում է քնելու դիրք՝ ձեռքերը ծնկներին, գլուխը՝ ձեռքերին:

ՓՈԶԶՈ.— Ի՞նչ պատահեց հիմա:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Իմ ընկերը ցավեցրեց ոտքը:

ՓՈԶԶՈ.— Իսկ Լաքի՞ն:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Ուրեմն դա նա՞ է:

ՓՈԶԶՈ.— Ի՞նչ:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Դա Լաքի՞ն է:

ՓՈԶԶՈ.— Չհասկացա:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Եվ դուք Փոզզո՞ն եք:

ՓՈԶԶՈ.— Իհարկե, ես Փոզզոն եմ:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Նույնը, ինչ որ երե՞կ:

ՓՈԶԶՈ.— Երե՞կ:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Մենք հանդիպել ենք երեկ: (Լռություն): Չե՞ք հիշում:

ՓՈԶԶՈ.— Ես չեմ հիշում, որ երեկ որևէ մեկին հանդիպած լինեմ:

Բայց վաղը ես չեմ հիշի, որ հանդիպել եմ որևէ մեկին այսօր:

Այնպես որ, ձեր հարցերը պարզաբանելու համար ինձ վրա հույս մի դրեք:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Բայց...

ՓՈԶԶՈ.— Հերիք է: Վե՛ր, խո՛զ:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Դուք տանում էիք նրան տոնավաճառ՝ ծախելու: Դուք խոսեցիք մեզ հետ: Նա պարեց: Նա մտածեց: Դուք տեսնում էիք:

ՓՈԶԶՈ.— Ինչպես կուզեք: Թողեք գնամ: (Վլադիմիրը մի կողմ է քաշվում): Վե՛ր:

Լաքին բարձրանում է՝ հավաքելով իր բեռները:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Ո՛ր պետք է գնաք այստեղից:

ՓՈԶԶՈ.— Ես այդպիսի հարցերով ինձ չեմ ծանրաբեռնում: Առաջ: (Լաքին, ծանրաբեռնված, զբաղեցնում է իր տեղը Փոզզոյի դիմաց): Մտրակը: (Լաքին իրերը դնում է ցած, փնտրում է մրտրակը, գտնում և դնում է այն Փոզզոյի ձեռքը): Պարա՛նը: (Լաքին ամեն ինչ ցած է դնում, պարանի ծայրը դնում է Փոզզոյի ձեռքը, ամեն ինչ նորից բարձրացնում):

ՎԼԱԴԻՄԻՐ.— Ի՞նչ կա ճամպրուկում:

ՓՈԶԶՈ.— Ավագ: (Նա ձգում է պարանը): Մա՛րշ:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Դեռ մի գնացեք:

ՓՈԶԶՈ.— Ես գնում եմ:

- ՎԱՐԴՄԻՐ.— Ի՞նչ եք անում, կրք անօգնական ընկնում եք ամայի, հեռու տեղում:
- ՓՈԶԶՈ.— Սպասում եմք, մինչև կկարողանանք բարձրանալ: Հետո գնում: Առա՛ջ:
- ՎԱՐԴՄԻՐ.— Նախքան գնալը ասեք նրան, որ երգի:
- ՓՈԶԶՈ.— Ո՞վ:
- ՎԱՐԴՄԻՐ.— Լաբին:
- ՓՈԶԶՈ.— Երգի՞:
- ՎԱՐԴՄԻՐ.— Այո: Կամ մտածի: Կամ արտասանի:
- ՓՈԶԶՈ.— Բայց նա համր է:
- ՎԱՐԴՄԻՐ.— Հա՛մր:
- ՓՈԶԶՈ.— Համր: Նա չի կարող նույնիսկ տնքալ:
- ՎԱՐԴՄԻՐ.— Հա՛մր: Երբվանի՞ց:
- ՓՈԶԶՈ. (անսպասելի մոլեգնած).— Դուք ինձ տանջեցիք ձեր անիծյալ ժամանակով: Զգվելի է: Ե՛րբ, ե՛րբ: Մի օր, բավական չե՞ դա ձեզ, մյուս օրերի նման մի օր, մի օր նա հասր դարձավ, մի օր էս կուրացա, մի օր մենք կիլանանք, մի օր մենք ծնվել ենք, մի օր կմեռնենք, նույն օրը, նույն վայրկյանին, բավական չե՞ դա ձեզ: (Ավելի հանգիստ): Այդպես են ծնվում, գերեզմանի վրա, լույսը թաքթում է մի ակնթարթ, հետո գիշեր է նորից: (Նա ձրգում է պարանը): Առա՛ջ:
- Լաբին և Փոզզոն դուրս են գալիս: Վլադիմիրը հեռևում է նրանց մինչև բեմի եզրը, նայում է նրանց ետևից: Լսվում է ընկնելու աղմուկ, որը արտացոլվում է Վլադիմիրի ծամածռության մեջ: Վլադիմիրը գրնում է դեպի Էստրադոնը, որը քնած է: Լռություն: Զննում է նրան մի պահ, հետո ցնցում է, որ արթնանա:
- ԼՍՐԱԳՈՆ (կատաղի շարժումներ, անկապ խոսքեր: Վերջապես).—
- Ինչո՞ւ դու ինձ երբեք չես թողնում քնել:
- ՎԱՐԴՄԻՐ.— Ես մեռնակություն զգացի:
- ԼՍՐԱԳՈՆ.— Ես երազ էի տեսնում, որ երջանիկ եմ:
- ՎԱՐԴՄԻՐ.— Դա սպանեց ժամանակը:
- ԼՍՐԱԳՈՆ.— Ես երազում տեսա, որ...
- ՎԱՐԴՄԻՐ.— Մի՛ պատմիր: (Լռություն): Ես կասկածում եմ, նա, իսկապես, կո՞ւյր էր:
- ԼՍՐԱԳՈՆ.— Կո՞ւյր: Ո՞վ:
- ՎԱՐԴՄԻՐ.— Փոզզոն:
- ԼՍՐԱԳՈՆ.— Կո՞ւյր:
- ՎԱՐԴՄԻՐ.— Նա ասաց, որ ինքը կույր է:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Հետո, ի՞նչ կա դրանում:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Ինձ թվաց, որ նա տեսնում էր մեզ:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Դու երագում ես տեսել դա: **(Դադար)**: Արի գնանք:

Ձեռք կարող: Ա՛հ: **(Դադար)**: Դու վստա՞հ ես, որ դա նա չէր:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Ո՛վ:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Գողոն:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Բայց ո՞վ:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Փոզոն:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Ամենևի՛ն, ամենևի՛ն: **(Դադար)**: Ամենևի՛ն:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Կարծում եմ, կարելի է վեր կենալ: **(Նա ցավով բարձրանում է)**: Օ՛, Դիդի՛:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Ես չգիտեմ այլևս ինչ մտածել:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Ո՛տքս: **(Նա նստում է, փորձում է հանել կոշիկները)**: Օգնի՛ր:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Քնա՞ծ էի ես, երբ մյուսները տատապում էին: Քնա՞ծ եմ ես հիմա: Վաղը, երբ ես արթնանամ, կամ կարծեմ, որ արթնացած եմ, ի՞նչ կասեմ այսօրվա մասին: Որ Էստրագոնի, իմ ընկերոջ հետ այս տեղում մինչև գիշերվա գալը, ես սպասել եմ Գողոնի՛ն: Որ Փոզոն անցավ իր բեռնակրի հետ և խոսեց մեզ հե՛տ: Երևի: Բայց այդ բոլորում ի՞նչ ճշմարտություն կլինի: **(Էստրագոնը, ապարդյուն պայքարելով իր կոշիկների հետ, ննջում է նորից: Վաղիմիրը նայում է նրան)**: Նա ոչինչ չի իմանա: Նա կպատմի ինձ իր ստացած հարվածների մասին և ես նրան մի գազար կտամ: **(Դադար)**: Գերեզմանի վրա մի դժվար ծնունդ: Իսկ այնտեղ՝ փոսում գերեզմանափորը դանդաղ շարժում է իր բահը: Փամանակը մեր ծերանալու համար է: Օղը լի է մեր ճիշերով: **(Նա լսում է)**: Բայց սովորույթը մեծ մարդասպան է: **(Նա նորից նայում է Էստրագոնին)**: Ինձ նույնպես մեկը նայում է, իմ մասին նույնպես մեկն ասում է. «Նա քնած է, նա ոչինչ չգիտի, թող շարունակի քնել»: **(Դադար)**: Ես չեմ կարող այլևս: **(Դադար)**: Ի՞նչ ասացի ես:

Նա տենդագին շարժվում է ետ ու սուաջ, վերջապես կանգնում է ձախ եզրում, խորհում է: Մտնում է Տղան աջից: Նա կանգնում է: Լռություն:

ՏՂԱ.— Ներեցեք, պարո՛ն... **(Վաղիմիրը շրջվում է)**: Պր-ն Ալբե՛րտ...

ՎԼԱԴԻՄԻՐ.— Դե, ահա՛, նորից: **(Դադար)**: Ձե՛ս ճանաչում ինձ:

ՏՂԱ.— Ոչ, սը՛ր:



ՎԱՐԻՄԻՐ.— Երեկ դո՞ւ չէիր այստեղ:

ՏՂԱ.— Ոչ, սը՛ր:

ՎԱՐԻՄԻՐ.— Դու առաջին անգամ ե՞ս գալիս:

ՏՂԱ.— Այո, սը՛ր:

**Լռություն:**

ՎԱՐԻՄԻՐ.— Դու հաղորդելու բան ունես պր-ն Գողոյից:

ՏՂԱ.— Այո, սը՛ր:

ՎԱՐԻՄԻՐ.— Նա այս երեկո չի գա:

ՏՂԱ.— Ոչ, սը՛ր:

ՎԱՐԻՄԻՐ.— Բայց նա կգա վաղը:

ՏՂԱ.— Այո, սը՛ր:

ՎԱՐԻՄԻՐ.— Առանց խաբելու:

ՏՂԱ.— Այո, սը՛ր:

**Լռություն:**

ՎԱՐԻՄԻՐ.— Դու որևէ մեկին հանդիպեցի՞ր:

ՏՂԱ.— Ոչ, սը՛ր:

ՎԱՐԻՄԻՐ.— Երկու ուրիշ... (նա տատանվում է)... մարդու:

ՏՂԱ.— Ես ոչ մեկին չտեսա, սը՛ր:

**Լռություն:**

ՎԱՐԻՄԻՐ.— Ի՞նչ է անում նա, պր-ն Գողոն: (Լռություն): Լսո՞ւմ ես:

ՏՂԱ.— Այո, սը՛ր:

ՎԱՐԻՄԻՐ.— Դե՞:

ՏՂԱ.— Նա ոչինչ չի անում, սը՛ր:

**Լռություն:**

ՎԱՐԻՄԻՐ.— Ինչպե՞ս է քո եղբայրը:

ՏՂԱ.— Նա հիվանդ է, սը՛ր:

ՎԱՐԻՄԻՐ.— Երևի երեկ նա էր եկել:

ՏՂԱ.— Չգիտեմ, սը՛ր:

**Լռություն:**

ՎԱՐԻՄԻՐ (մեղմորեն).— Նա մորուք ունի՞, պր-ն Գողոն:

ՏՂԱ.— Այո, սը՛ր:

ՎԱՐԻՄԻՐ.— Բա՞ց, թե՞... (նա տատանվում է)... թե՞ սև:

ՏՂԱ.— Կարծում եմ, այն սպիտակ է, սը՛ր:

**Լռություն:**

ՎԱՐԻՄԻՐ.— Աստված ողորմյա՛ մեզ:

**Լռություն:**

ՏՂԱ.— Ի՞նչ ասեմ պր-ն Գողոյին, սը՛ր:

**ՎԼԱԴԻՄԻՐ.**— Ասա նրան... (նա տատանվում է)... ասա նրան, որ դու տեսար մեզ և որ... (նա տատանվում է)... որ դու տեսար մեզ: (**Դադար:** **Վլադիմիրը առաջ է գնում, Տղան ետ է ցատկում, Վլադիմիրը կանգնում է, Տղան նույնպես կանգնում է**): Դու վըստա՞հ ես, որ տեսար ինձ, հա՛, դու չե՞ս գա և ասի ինձ վաղը, որ առաջ երբեք ինձ չես տեսել:

**Լոռություն:** Վլադիմիրը անսպասելիորեն ցատկում է առաջ, Տղան խուսափում է նրանից և դուրս գալիս վազելով: **Լոռություն:** Արևը մայր է մտնում, լուսինը ծագում է: Ինչպես առաջ: Վլադիմիրը կանգնում է անշարժ և կռանում է: Էստրագոնը արթնանում է, հանում է կոշիկները, կանգնում է՝ դրանք ձեռքերին, գնում և դնում է դրանք ցած՝ բեմի կենտրոնում, դիմացը, գնում է դեպի Վլադիմիրը, նայում նրան:

**ԷՍՏՐԱԳՈՆ.**— Ի՞նչ է եղել քեզ:

**ՎԼԱԴԻՄԻՐ.**— Ոչինչ:

**ԷՍՏՐԱԳՈՆ.**— Ես գնում եմ:

**ՎԼԱԴԻՄԻՐ.**— Ես էլ:

**ԷՍՏՐԱԳՈՆ.**— Ես երկա՞ր էի քնել:

**ՎԼԱԴԻՄԻՐ.**— Չգիտեմ:

**Լոռություն:**

**ԷՍՏՐԱԳՈՆ.**— Ո՞ր պետք է գնանք:

**ՎԼԱԴԻՄԻՐ.**— Ոչ հեռու:

**ԷՍՏՐԱԳՈՆ.**— Օ՛, այո, արի հեռու գնանք այստեղից:

**ՎԼԱԴԻՄԻՐ.**— Չեմք կարող:

**ԷՍՏՐԱԳՈՆ.**— Ինչո՞ւ:

**ՎԼԱԴԻՄԻՐ.**— Մենք պետք է վաղը ետ գանք:

**ԷՍՏՐԱԳՈՆ.**— Ինչի՞ համար:

**ՎԼԱԴԻՄԻՐ.**— Գողոշին սպասելու:

**ԷՍՏՐԱԳՈՆ.**— Ա՛հ: (**Դադար**): Նա չեկա՞վ:

**ՎԼԱԴԻՄԻՐ.**— Ոչ:

**ԷՍՏՐԱԳՈՆ.**— Իսկ հիմա շատ ուշ է:

**ՎԼԱԴԻՄԻՐ.**— Այո, հիմա գիշեր է:

**ԷՍՏՐԱԳՈՆ.**— Իսկ երե թողնե՞նք ու գնանք: (**Դադար**): Թողնենք ու գնանք:

**ՎԼԱԴԻՄԻՐ.**— Նա մեզ կպատժի: (**Լոռություն:** Նա նայում է ծառին):

Ամեն ինչ մեռած է, բացի ծառից:

**ԷՍՏՐԱԳՈՆ (նայելով ծառին).**— Ի՞նչ է սա:

**ՎԼԱԴԻՄԻՐ.**— Ծառ է:

**ԷՍՏՐԱԳՈՆ.**— Այո, բայց ի՞նչ ծառ է:

ՎԱՍԴԻՄԻՐ.— Զգիտեմ: Ուռենի:

**Էստրագոնը Վլադիմիրին քաշում է դեպի ծառը: Նրանք կանգնում են անշարժ դրա դիմաց: Լռություն:**

ԼՍՏՐԱԳՈՆ.— Իսկ եթե կախվե՞նք սրանից:

ՎԱՍԴԻՄԻՐ.— Ինչո՞վ:

ԼՍՏՐԱԳՈՆ.— Դու պարանի կտոր չունե՞ս:

ՎԱՍԴԻՄԻՐ.— Ոչ:

ԼՍՏՐԱԳՈՆ.— Այդ դեպքում չենք կարող:

ՎԱՍԴԻՄԻՐ.— Արի գնանք:

ԼՍՏՐԱԳՈՆ.— Սպասիր, ես գոտի ունեմ:

ՎԱՍԴԻՄԻՐ.— Դա շատ կարճ է:

ԼՍՏՐԱԳՈՆ.— Դու կհրես իմ ոտքերից:

ՎԱՍԴԻՄԻՐ.— Իսկ ո՞վ կհրի իմից:

ԼՍՏՐԱԳՈՆ.— Ծիշտ է:

ՎԱՍԴԻՄԻՐ.— Միևնույնն է, ցույց տուր: **(Էստրագոնը թուլացնում է իր շավարը պահող պարանը: Ծավարը իջնում է մինչև ծընկերը: Նրանք նայում են պարանին):** Ծայրահեղ դեպքում դա էլ լուր կտանի: Բայց դա բավական ամո՞ր է:

ԼՍՏՐԱԳՈՆ.— Ծուտով կտեսնենք: Արի:

**Ամեն մեկը վերցնում է պարանի մի ծայրը և ձգում: Այն կտրվում է: Նրանք համարյա ընկնում են:**

ՎԱՍԴԻՄԻՐ.— Բանի պետք չէ:

**Լռություն:**

ԼՍՏՐԱԳՈՆ.— Դու ասացիր, որ վաղը ե՞տ պիտի գանք:

ՎԱՍԴԻՄԻՐ.— Այո:

ԼՍՏՐԱԳՈՆ.— Այդ դեպքում կարող ենք մի լավ պարան բերել:

ՎԱՍԴԻՄԻՐ.— Այո:

**Լռություն:**

ԼՍՏՐԱԳՈՆ.— Դիդի՞:

ՎԱՍԴԻՄԻՐ.— Այո:

ԼՍՏՐԱԳՈՆ.— Ես այսպես շարունակել չեմ կարող:

ՎԱՍԴԻՄԻՐ.— Ահա թե ինչ ես դու մտածում:

ԼՍՏՐԱԳՈՆ.— Եթե բաժանվե՞նք: Դա կարող է մեզ համար ավելի լավ լինել:

ՎԱՍԴԻՄԻՐ.— Մենք կկախվենք վաղը: **(Դադար):** Եթե Գողոն չգա:

ԼՍՏՐԱԳՈՆ.— Իսկ եթե նա գա՞:

ՎԱՍԴԻՄԻՐ.— Մենք փրկված կլինենք:

Վլադիմիրը հանում է գլխարկը (Լաքիինը), նայում է ներսը, շո-  
շափում է ներսը, ցնցում է, կտտացնում եզրին, նորից դնում գլխին:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Լավ: Կգնա՞նք, թե՞ ոչ:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Հագի՛ր շալվարդ:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Ի՞նչ:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Հագի՛ր շալվարդ:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Դու ուզում ես, որ ես շալվարս հանե՞մ:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Հագի՛ր շալվարդ:

ԷՍՏՐԱԳՈՆ (գլխի ընկնելով, որ շալվարը ցած է սահել).— Իրոք:

Նա բարձրացնում է շալվարը: Լռություն:

ՎԼԱԴԻՄԻՐ.— Լավ: Կգնա՞նք, թե՞ ոչ:

ԷՍՏՐԱԳՈՆ.— Այո, արի գնանք:

Նրանք չեն շարժվում:

Վ ա ղ ա գ ո լ յ ը

ԺԱՆ ԱՆՈՒՅ

ԱՐՏՈՒՅՏԸ

Գ Ո Ր Ծ Ո Ղ Ա Ն Ձ Ի Ն Ք

ԼԱՆՆՍ  
ԿՈՒՇԵ  
ԵՆԳԼԻՉԻՏՈՐԸ  
ԱՆՍՎԱՐ ՎԵՐԱԿԱՑՈՒՆ  
ՆԱՐԱՅՐ ԼԱԳՎԵՆՅՈՒ  
ԿՈՄՍ ԳԸ ՎԱՐՎԻՔ  
ՈՐԸ

ՅՈՒԱՆԴԱ ԹԱԳՈՒՀԻՆ  
ՓՈՔՐԻԿ ԹԱԳՈՒՀԻՆ  
ԱԳՆԵՍ  
ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԸ  
ԼԱ ՏՐԵՄՈՒԱՅ  
ԲՈԴՐԻԿՈՒՐ  
ԼԱ ՀԻՐ

ՀԱՅՐԸ  
ՄԱՅՐԸ  
ԵՂԲԱՅՐԸ  
ԴԱՀԻՃԸ  
ՊԱՀԱԿ ԲՈՒԴՈՒՍԸ  
ԱՆԳԼԻԱՅԻ ՋԻՆՎՈՐԸ  
ԵՐԿՐՈՐԻ ԱՆԳԼԻԱՅԻ ՋԻՆՎՈՐԸ  
ԱՐՔԱՅԻ ՄԱՆԿԼԱՎԻԿԸ

Զեզոք դեկորացիա, անտարաններ դատարանի դահլիճի համար, այթոռակ ժաննայի համար, մի գահ, չորացած ճյուղերի խորձեր:

Սկզբում բեմը թափուր է, այնուհետև գործող անձինք ներս են մտնում փոքրաթիվ խմբերով:

Հանդերձանքը տարտամորեն միջնադարյան է, բայց չկա գույնի կամ ձևի ոչ մի առանձնահատուկ ճշգրտություն: Ներկայացման սկզբից մինչև ավարտը ժաննան իր հագին ունի տղամարդու զգեստ՝ մարմնամարզիկի համար բնորոշ ինչ-որ տարագ:

Ներս մտնելիս՝ գործող անձինք կախարանների վրայից հանում են սաղավարտները կամ իրենց պատկանող մի շարք բուտաֆորական առարկաներ, որոնք մնացել էին բեմի վրա, նախորդ ներկայացման ավարտից հետո: Նրանք սեղ են զբաղեցնում անտարաններին՝ հետամուտ լինելով, որ պահպանվի կդերաֆեոդալական կանոնադրությունը: Բեմի մի անկյունում Մաչրն սկսում է հյուսել: Նա հյուսելու է ամբողջ ներկայացման ընթացքում, բացի այն պահերից, երբ մասնակցելիս կլինի երկխոսությանը: Վերջին ներս մտնողներն են Կոշոնը և Վարվիքը:

**ՎԱՐՎԻՔ** (շատ երիտասարդ է, շատ հմայիչ, շատ նրբագեղ, անգլոսաքսոնական ցեղին շատ բնորոշ տիպար).— Բոլորս այստե՞ղ ենք: Լա՛վ: Ուրեմն, այսօրվա նիստն սկսեք անմիջապես: Ինչքան արագ դատեք ու այրեք նրան խարույկի վրա, այնքան լավ կլինի: Բոլորի համար:

**ԿՈՇՈՆ**.— Բայց, Ձերդ Վեհանձնություն, ամբողջ պատմության դատաքնությունը պետք է կատարվի որպես ներկայացում: Դոմրեմին, Ջայները, Վոկույորը<sup>1</sup>, Ծիճոնը<sup>2</sup>, թաճադրությունը...

**ՎԱՐՎԻՔ**.— Դիմակահանդեսների շարա՞ն: Դասավանդվելիք պատմություն է երեխաների համար: Գեղատեսիլ, ձուռնասափուակ զենք ու զրահը, ծածանված դրոշակը, քնքու՞ ու խստադեմ ուզմատենչ կույսը. այդպես են կանգնեցնելու նրա հուշարձանները, հեռավոր ապագայում, որի՞ քաղաքական հոսանքի անհրաժեշտությունից դրդված: Նույնիսկ բացառված չէ. որ Լոնդոնում էլ մի արձան կանգնեցնենք նրա համար: Դուք կարծում եք, թե ես կատակում եմ, Ձերդ Վեհանձնություն, բաց Նորին Պաճառափայլության Կառավարության արմատական շահերը կարող են լինել ադպիսին, մի քանի դար հետո... Առ աժմ ես Բոշանն եմ, Վարվիքի կոմսը. և Ռուան<sup>3</sup> քաղաքում, իմ գնդանի խորքում, տակը մի ծղոտե անկողին՝ իմ կալանավորն է քնձրտ. փոքրիկ վհուկը, իմ ուրախությունը սղտորող այդ չնչին էակը, իմ ճղճիմ ժան-

տախտը... Բախակասին թանկ աստեց նա ինձ վրա... Եթե կարողանայի գնել նրան անմիջականորեն այդ ժամ դը Լինչիից, որի ճանկերի մեջ ընկել էր նա, ապա վճարելիքս պիտի լինէր խելքի մտտ մի գումար: Այդ մարդը դրամի կարիք ուներ: Սակայն հարկ եղավ, որ հաշվի նստեմ Բորգոնի դքսի հետ: Նա գործը գլուխ բերեց մեզնից առաջ և գիտեր, որ մենք նախանձախնդիր ենք, ու բանն այն է, որ նա դրամի կարիք չուներ ամենևին: Եվ մեզ նա այդ զգացնել տվեց հաստատապես: Սակայն Նորին Պաշտօնապալարության Կառավարությունը միշտ էլ կարողացել է չխնայել անհրաժեշտ գումարը մայրցամաքի վրա ինչ-որ բան ձեռք բերելու համար: Ֆրանսիան մեզ վրա թանկ է աստուս... Վերջիվերջո, իմ կույսը գտնվում է տնօրինությանս տակ... **(Իր ձողամտրակի ծայրով դիպչում է մի անկյունում կծկված ժանհալին):** Այս եղած-չեղածի համար խելքից-մտքից դուրս գումար վճարեցի, բայց ահա նա իմն է: Ես դատելու եմ նրան և այրելու եմ խարույկի վրա:

**ԿՈՇՈՆ.—** Ոչ անմիջապես: Նախքան այդ, նա պետք է խաղա իր ամբողջ կյանքի ներկայացումը: Իր կարճատև կյանքը: Անդիմադրելի փայլ արձակող այդ բարակ բոցը, որը պիտի հանգչի վաղաժամ: Ներկայացումը երկար չի տևելու, Ջերդ Վեհանձնություն:

**ՎԱՐՎԻՔ (համակերպված՝ գնում աստուս է մի անկյունում).—** Թող ձեր ուզածը լինի: Անգլիացին միշտ էլ կարողանում է սպասել: **(Տագնապած հարցնում է):** Համենայն դեպս, հո չե՞ք խաղարկելու բոլոր ճակատամարտերը. Օրլեան, Պատեյ, Բոժանսի<sup>4</sup>... Ինձ համար ծայրահեղ տհաճ պիտի լինէր այդ ամենը:

**ԿՈՇՈՆ (ժպտում է).—** Մի՛ անհանգստացեք, Ջերդ Վեհանձնություն, մենք այնքան շատ չենք, որ կարողանանք ներկայացնել ճակատամարտերը...

**ՎԱՐՎԻՔ.—** Լա՛վ:

**ԿՈՇՈՆ (շրջվում է դեպի ժանհան).—** Ժանհա՛: **(Ժանհան աչքերը բարձրացնում է դեպի նա):** Կարող ես սկսել:

**ՎԱՆՆԱ.—** Որտեղից ուզեմ, այնտեղից սկսե՛մ:

**ԿՈՇՈՆ.—** Այո՛:

**ՎԱՆՆԱ.—** Որեմն, հենց սկզբից կսկսեմ: Միշտ էլ ամենագեղեցիկը լինում են սկիզբները: Հորս տանը, երբ դեռ փոքրիկ եմ: Բաց դաշտում, որտեղ հոտն է արածում, առաջին անգամ ես լսում եմ Ջայները: **(Մնացել է նույն տեղում՝ կծկված: Այն գործող անձինք, որոնք առնչություն չունեն այս տեսարանի հետ, քաշվում**

են ստվերի մեջ: Գալիս եմ առաջ միայն Հայրը, Մայրը, Ժաննայի Եղբայրը, որոնք մասնակցելու են երկխոսությանը: Մայրը շարունակում է հյուսել): Այդ պատահում է իրիկնային աղոթածամից հետո: Ես շատ փոքրիկ եմ: Դեռ հյուսքեր ունեմ: Ոչնչի մասին չեմ մտածում: Բարի է Աստված, որն ինձ մասմաքուր ու երջանիկ է պահում մորս կողքին, հորս ու եղբայրներիս կողքին, Դոմրեմիի մոտակայքում գտնվող այդ նեղ հողատարածության վրա, որը մնացել է անեղծ պատերազմի արհավիրքներից, մինչ գլխա գողոնները<sup>5</sup> երկրով մեկ հրդեհում են, թալանում, բռնաբարում: Խոշոր շունս եկել քիթն է բսում իմ շրջագգեստին... Բոլոր մարդիկ՝ գորեղ ու բարի, իմ շրջապատում ինձ պատուպարում են: Ինչքան հասարակ բան է լինել երջանիկ աղջնակ... Հետո հանկարծ ինձ այնպես թվաց, որ մեկը ետևից դիպավ իմ ուսին, և տակայն ես հաստատ շիտեմ. որ ինձ ոչ ոք չի դիպել, և ձայնն ասում է...

**ՄԵԿԸ (խորքից հանկարծակի հարցնում է).—** Ո՞վ է խաղալու ձայները:

**ԺԱՆՆԱ (կարծես ինքնին պարզ է).—** Ես, իհարկե: (Եարունակում է): Շրջվեցի. հզոր, շլացուցիչ լույս էր ճառագայթում խավարի միջից, իմ թիկունքում: Ձայնը մեղմ էր, թավ ու հանդիսավոր և ինձ բոլորովին անծանոթ: Այդ օրը՝ նա միայն ասաց. «Ժաննա՛, եղիբ խելոք ու բարի երեխա: Հաճախ գնա եկեղեցի»: Ես խելոք էի, բարի և հաճախ էի գնում եկեղեցի: Չհասկացա, շատ վախեցա ու վազելով փախա: Առաջին անգամ դա ամեն ինչ է: Ես տանը ոչ մեկին ոչինչ չասացի: (Լռություն: Նա փոքր-ինչ դառնում է երազկոտ: Եարունակում է): Քիչ անց, եղբորս հետ եկա տեղ կանգնելու հոտին, որ թողել էի: Արևը մայր էր մտել, և լույս չըկար ամենևին: Այնուհետև, եղավ երկրորդ անգամ: Միջօրեի աղոթածամն էր: Նորից փայլատակեց մի լույս, բայց շողարձակ արևի տակ և ավելի հզոր, քան արևը: Ես այդ անգամ տեսա նրան:

**ԿՈՇՈՆ.—** Ո՞ւմ:

**ԺԱՆՆԱ.—** Մի ազնվագույն մարդու՝ հագին լավ արդուկված, գեղեցիկ տարազ և ունեք ճեփճեքմակ երկու մեծ թռչնաթևեր: Այդ օրը նա ինձ չասաց իր անունը, բայց հետագայում ես իմացա, որ դա Նորին Վեհաանձնությունն սուրբ Միքայելն էր:

**ՎԱՐՎԻՔ (ջղագրգռված, Կոշոնին).—** Արդյոք բացարձակապես ան-



հրաժեշտ է թույլ տալ, որ նա ևս մի անգամ պատմի այդ հիմա-  
րությունները:

**ԿԱՆՈՒՆ (հաստատակամ).—** Բացարձակապես անհրաժեշտ է, Ձերդ  
վեհանձնություն:

**Վարվիքը լուռ վերադառնում է իր անկյունը: Ձեռքին պահած վարդ  
տնի, որից նա հոտ է քաշում:**

**ԺԱՆՆԱ (հրեշտակապետի թավ ու հանդիսավոր ձայնով).—** «Ժաննա՛,  
շտապիր օգնել քո արքային, դու նրան ետ կտաս իր թագավորու-  
թյունը»: **(Ինքը պատասխանում է):** «Տյա՛ր, բայց չէ՞ որ ես ընդա-  
մենը մի խեղճ աղջիկ եմ. ոչ ձի հեծնել գիտեմ, ոչ էլ կկարողա-  
նամ առաջնորդել զինվորականներին...»: «Կգնաս կգտնես պարոն  
Բողրիկուրին՝ Վոկույրի կապիտանին... **(Բողրիկուրը ցցվում է  
համախմբվածների միջից և գաղտագողի գալիս է առաջին շարք՝  
մյուսներին նշան անելով, որ երկխոսությանը մասնակցելու իր  
հերթն է հիմա: Մեկը նրան ետ է պահում, որովհետև դեռ շուտ  
է)...** նա քեզ կտա տղամարդու հագուստ և կառաջնորդի Արքա-  
յազնի մոտ: Սուրբ Կատրինը և սուրբ Մարգրետը քեզ կլինեն ա-  
պավեն»: **(Նա փլվում է՝ հանկարծակի հեծկտալով, ահաբեկված):**  
«Գթացե՛ք ինձ, գթացեք, տյա՛ր: Ես մի փոքրիկ աղջիկ եմ, եր-  
ջանիկ եմ: Ոչինչ չկա, որի համար ես պատասխանատու լինեմ,  
իմ ոչխարներից բացի... Ֆրանսիայի թագավորությունը չափա-  
զանց շատ է ինձ համար: Պետք է նկատի ունենաք, որ ես փոք-  
րիկ եմ, անգրագետ ու բոլորովին էլ ուժեղ չեմ: Ֆրանսիա՛ն,  
տյա՛ր, ծանր է դա չափազանց: Արքայի շուրջը կան մեծ գորա-  
վարներ, որոնք ուժեղ են և հմուտ... Հետո՛՛ նրանք իրենց բունը  
չեն կորցնում, երբ մարտը տանուլ են տալիս: Պատճառաբանում  
են, որ հրետանային նախապատրաստությունն անբավարար էր,  
որ օգնական ուժերը չմասնակցեցին ռազմական գործողություն-  
ների, որ ձյունը կամ քամին անբարենպաստ էին, և բոլոր մե-  
ռած մարդկանց պարզապես ջնջում են իրենց ցուցակներից: Մինչ  
ևս ամբողջ ժամանակ պիտի մտմտամ, եթե մարդկանց սպան-  
վելու պատճառը դառնամ... Գթացե՛ք, տյա՛ր: **(Նա ուղղվում է:  
Ուրիշ ձայնով):** Ա՛հ, ուրի՛շ: Ոչ մի գթություն: Նա արդեն հեռա-  
ցել էր, իսկ ես Ֆրանսիան ունեի իմ շալակին: **(Պարզորեն շա-  
րունակում է):** Չհաշված Ֆերմայի աշխատանքը և հալոս, որ չէր  
սիրում կատակել»:

**Հայրը, որ պտտվում էր Մոր շուրջը, հանկարծակի պոռթկում է:**

**ԺԱՆՈՒՆ.—** Որտե՞ղ է թրև գալիս:

**ՄԱՅՐԸ (դեռևս հյուսելիս).—** Գնացել է դաշտ:

**ՀԱՅՐԸ.—** Ես էլ էի դաշտում և տուն եմ եկել: Ժամը վեցն է: Որտե՞ղ է թրև գալիս:

**ԵՂԲԱՅՐԸ (մի պահ ընդհատում է քիթը քորելու գործողությունը).—** Ժաննա՛ն: Նա երազում է Հավերժահարսերի Ծառի մոտ: Նրան տեսա, երբ ցուլին բերում էի ախորը:

**ԳԼԽԱՎՈՐ ՎԵՐԱԿԱՑՈՒՆ (մյուսներին, խորքում).—** Հավերժահարսերի Ծառը: Ես խնդրում եմ, որ դուք այդ նկատի ունենաք, պարոններ: Նախապաշարմունք: Արդեն ծիլ արձակած կախարհա՛նք: Հավերժահարսերի Ծառը:

**ԿՈՇՈՆ.—** Դրանցից ամենորեք էլ կա Ֆրանսիայում, տյա՛ր Գլխավոր Վերակացու, այդ Հավերժահարսերի Ծառերը: Ելնելով մեր սեփական շահից՝ պետք է, որ մի քանի հավերժահարսեր թողնենք մեր աղջնակների համար:

**ԳԼԽԱՎՈՐ ՎԵՐԱԿԱՑՈՒՆ (գոռոզ հանդիսավորությամբ).—** Բա մեր սուրբ կանայք ինչի՞ համար են: Պետք է, որ դրանցով բավարարվեին:

**ԿՈՇՈՆ (հաշտարար).—** Հետագայում, անշուշտ: Բայց երբ այդ աղջիկները շատ փոքրիկ են... Ժաննան դեռ տասնհինգ տարեկան էլ չկար:

**ԳԼԽԱՎՈՐ ՎԵՐԱԿԱՑՈՒՆ.—** Տասնհինգ տարեկանում աղջիկը աղջիկ է: Այդ կապը կտրածներն արդեն ամեն ինչ գիտեն:

**ԿՈՇՈՆ.—** Ժաննան շատ մաքուր էր ու շատ պարզունակ այն ժամանակներում: Դուք գիտեք, որ դատաքննության ընթացքում ես մինչև վերջ անխնա եմ լինելու նրա Զայների վերաբերյալ, բայց հարկ եմ համարում զիջողամիտ լինել այդ աղջնակային հավերժահարսերի կապակցությամբ... (Շարունակում է հաստատակա՛նորեն): Ես եմ տնօրինում դատական նիստը:

**Գլխավոր Վերակացուն ատելությամբ խոնարհվում ու լռում է:**

**ՀԱՅՐԸ (նորից պոռթկալով).—** Իսկ ի՞նչ է անում նա Հավերժահարսերի Ծառի մոտ:

**ԵՂԲԱՅՐԸ.—** Գնացեք տեսեք, իմացեք: Ուղիղ առաջն է նայում: Երազում է, կարծես սպասելիս լինի ինչ-որ բանի: Առաջին անգամը չէ, որ նրան տեսնում եմ այդ վիճակի մեջ:

**ՀԱՅՐԸ (ցնցում է նրան).—** Ինչո՞ւ ինձ շուտ չասացիր այդ մասին, անբա՛ն լսկոտ: Դու դեռ հավատում ես աղջիկներին, որոնք երազներո՞վ են տարված, այն էլ քո տարիքին, լողլող դանդալո՛ւ: Նա մեկին է սպասում, այո՛, բայց ոչ ինչ-որ բանի՛: Ես ձեզ

ասում եմ, որ սիրած է պահում այդ ժաննան. Տվեք ինձ իմ դա-  
գանա՛կը:

**ՍԱՅՐԸ (մեղմ, շարունակելով հյուսել).**— Բայց հայրի՛կ, դու հո գի-  
տես, որ ժաննան մաքուր է երեխայի նման:

**ՀԱՅՐԸ.**— Աղջիկները մաքուր են երեխայի նման. ճակատն էն դեմ  
տալիս երեկոյան, որ համբուրես, և նրանց ջինջ աչքերի մեջ կա-  
րելի է կարդալ մինչև խորքը մի վերջին անգամ, մի երեկո: Հետո՝  
շրը՛խկ: Հաջորդ օրը ստավոտյան, թեև դրանց վրա կողպել ես  
դուռը,— չես իմանում, ինչ է պատահել. այլևս ոչինչ չես կարո-  
ղանում կարդալ նրանց այդ աչքերի մեջ. խաբս են տալիս և սը-  
տո՛ւմ են քեզ: Դարձել են սատանա:

**ԳՆՍԱՎՈՐ ՎԵՐԱԿԱՑՈՒՆ (մի մատը բարձրացնելով).**— Բառը հըն-  
չեց, տղա՛ր, և հոր քերանհից:

**ՍԱՅՐԸ.**— Դու այդ որտեղի՞ց գիտես: Ժաննան դեռ մաքուր էր այս  
ստավոտ, երբ գնաց դաշտերը, և խոսքը մեր մեջ մնա, երբ ինձ  
սիրեցիր հորս տանը, ես մաքուր էի... Ինչպիսի՞ն էի՞ սրդոք  
իմ աչքերը հաջորդ օրը:

**ՀԱՅՐԸ (քրթմնջում է).**— Նույնն էին: Այստեղ հարցն ուրիշ է:

**ՍԱՅՐԸ.**— Բանն այն է, ուրեմն, որ դու ուրիշ աղջիկների հե՛տ էլ ես  
եղել, ա՛յ մարդ: Դու ինձ այդ մասին երբեք չէի՛ր ասել:

**ՀԱՅՐԸ (գոռոռում է շփոթունքը քողարկելու համար).**— Ես քեզ  
ասում եմ, որ հարցը ոչ քեզ, ոչ էլ ուրիշ աղջիկներին է վերաբե-  
րում, այլ միմիայն ժաննայի՛ն: Տուր ինձ իմ դագանակը: Գնամ  
փնտրեմ նրան: Եվ եթե ժամադրված չի՞նի, երկուսին էլ սատ-  
կացնելու եմ:

**ԳՆՍԱՎՈՐ (մեղմորեն ժպտում է).**— Այո՛, ես ժամադրված էի, բայց իմ  
սիրահարը ճեփներմակ երկու մեծ թռչնաթևեր ուներ, լավ ար-  
դուկված մի տարազ և իր թավ, հանդիսավոր ձայնով կրկնում էր.  
«Ժաննա՛, ժաննա՛, էլ ի՞նչ ես սպասում: Սուգ ու շիվան է իջել  
Ֆրանսիայի թագավորության վրա»: «Վախենում եմ, տղա՛ր, ես  
բնդամենը խեղճ ու կրակ աղջիկ եմ: Դուք հաստապ սխալվել եք»:  
«Մի՞թե Աստված սխալվում է. ժաննա՛»: **(Շրջվում է դեպի դա-  
տավորները):** Ես, համենայն դեպս, չէի կարող այդ չասել նրան:

**ԳՆՍԱՎՈՐ ՎԵՐԱԿԱՑՈՒՆ (բարձրացնում է ուտերը).**— Դու պետք է  
խաչակնքեիր:

**ԳՆՍԱՎՈՐ.**— Ես այդ արեցի, Հրեշտակապետը նույնպես խաչակնքեց՝  
խորը նայելով աչքերիս մեջ, մինչև հնչում էր եկեղեցու զանգը:

**ԳԼԽԱՎՈՐ ՎԵՐԱԿԱՑՈՒՆ.**— Երեսին պետք է գոռայիր. «Vade retro, Satana!»:

**ԺԱՆՆԱ.**— Ես լատիներեն չգիտեմ, տյար:

**ԳԼԽԱՎՈՐ ՎԵՐԱԿԱՑՈՒՆ.**— Հիմար մի՛ ձևացիր: Սատանան ֆրանսերեն հասկանում է: Երեսին պետք է գոռայիր. «Հեռացիր, կեղտոտ գարշահոտ սատանա. ինձ այլևս գայթակղության չենթարկե՛ս»:

**ԺԱՆՆԱ (ճշում է).**— Բայց դա ինքը սուրբ Միքայելն էր, տյար:

**ԳԼԽԱՎՈՐ ՎԵՐԱԿԱՑՈՒՆ (հռհռում է).**— Նա սասց, դու էլ հավատացիր, հնդկահավի ճո՛ւտ:

**ԺԱՆՆԱ.**— Իհարկե: Բացի այդ, չի կարող պատահել, որ դա լիներ սատանան, այնքան գեղեցիկ էր նա:

**ԳԼԽԱՎՈՐ ՎԵՐԱԿԱՑՈՒՆ (ճարտասանաբար, հասակով մեկ ցցված, ինքնատիրապետումը կորցրած).**— Հենց այդ է, որ կա՛: Սատանան գեղեցիկ է:

**ԺԱՆՆԱ (վրդովված).**— Օ՛հ, տյար:

**ԿՈՇՈՆ (ձեռքի շարժումով հանգստացնում է Գլխավոր Վերակացուին).**— Տյա՛ր Գլխավոր Վերակացու, վախենամ, թե այս աստվածաբանական նրբությունները, որոնք բանավեճի նյութ կարող են դառնալ կղերականների միջև, վեր են այս խեղճ աղջկա հասկացողությունից: Դուք անտեղի վրդովում եք նրան:

**ԺԱՆՆԱ (նույնպես ցցվել է հասակով մեկ, ճշում է Գլխավոր Վերակացուի երեսին).**— Դու ստեցիր, կանոնիկո՛ս: Ես քո չափ գիտուն չեմ, բայց հաստատ գիտեմ, որ սատանան տգեղ է, և ամենայն ինչ, որ գեղեցիկ է, Աստծո արարչագործությունն է:

**ԳԼԽԱՎՈՐ ՎԵՐԱԿԱՑՈՒՆ (հռհռում է).**— Ծա՛տ կուզենայիր, որ այդքան հասարակ լիներ ճշմարտությունը: **(Ծարունակում է):** Եվ այդքան հիմա՛ր: Կարծո՞ւմ ես արդյոք, որ սատանան հիմար է: Նա հազար անգամ ավելի խելացի է, քան ես ու դու միասին վերցրած: Երբ ուզում է գայթակղության ենթարկել մեկի հոգին, կարծո՞ւմ ես, թե ինքը ներկայանում է նրան որպես բամակը գարշահոտություն արձակող կատու, թե՛ արաքական ուղտի տեսքով կամ էլ թե չէ ահարկու հրեշի նմա՛ն: Գուցե այդպես է մանկական հեքիաթների՞ մեջ... Իրականում սատանան ընտրում է տարվա ամենասանուշ գիշերը, ամենալուսավորը, ամենաբուրումնալից, ամենախաբուսիկը... Նա հանդես է գալիս գեղեցիկ աղջկա կերպարանքով, բոլորովին մերկ աղջիկ՝ ստինքները ցից, անդիմադրելիորեն գեղեցիկ...

**ԿՈՇՈՆ (ընդհատում է նրան, խիստ).**— Կանոնիկո՞ւ, ընկել եք մոլորության մեջ: Այս պահին դուք շատ եք հեռացել Ժամանայի սատանայից, եթե նա իրոք տեսել է այդպիսին: Խնդրում եմ, եկեք չշփոթենք մեկի և մյուսի սատանաները:

**ԳԼԽԱՎՈՐ ՎԵՐԱԿԱՑՈՒՆ (տիրապետում է ինքն իրեն, շփոթված, հարուցելով մյուսների ժպիտները).**— Ներեցեք, Ձերո՞վ Վեհանձնություն, բայց գոյություն ունի միայն մեկ սատանա:

**ԿՈՇՈՆ.**— Ի դեպ, դատական նիստը դեռ չի շոշափել խնդրի էությունը: Քիչ հետո մենք նրան կհարցաքննենք: Ծարունակիր, Ժամանա:

**ՄԱՆՆԱ (մնացել է ապշահար, շարունակում է ասել).**— Ուրեմն, եթե սատանան գեղեցիկ է, ինչի՞ց իմանանք, որ դա սատանան է:

**ԳԼԽԱՎՈՐ ՎԵՐԱԿԱՑՈՒՆ.**— Հարցնելով քո քահանային:

**ՄԱՆՆԱ.**— Հնարավոր չէ՞ ճիշտն իմանալ, առանց ուրիշին դիմելու:

**ԳԼԽԱՎՈՐ ՎԵՐԱԿԱՑՈՒՆ.**— Ո՛չ: Այդ իսկ պատճառով չկա՞ փրկություն առանց Ե՛կեղեցու:

**ՄԱՆՆԱ.**— Քահանան շարունակ չի լինում մարդու կողքին, իհարկե, եթե վերջինս հարուստների թվին չի պատկանում: Դժվար է աղքատների համար:

**ԳԼԽԱՎՈՐ ՎԵՐԱԿԱՑՈՒՆ.**— Բոլորի համար էլ դժվար է հոգին փրկել կորստյան մատնվելուց:

**ԿՈՇՈՆ.**— Թողեք նրան, տյա՛ր Գլխավոր Վերակացու. թողեք, որ հանգիստ խոսի իր Ձայների հետ: Սա պատմության սկիզբն է: Ոչ ոք դեռևս չի կարող հանդիմանել նրան այդ Ձայների համար:

**ՄԱՆՆԱ (շարունակում է).**— Հետո մի ուրիշ անգամ սուրբ Մարգրետն ու սուրբ Կատրինն էին, Եկան... (Շրջվում է դեպի Գլխավոր Վերակացուն և մի քիչ չարաճճի հանդգնությամբ շարտում նրա երեսին): Նրանք նույնպես գեղեցի՞կ էին:

**ԳԼԽԱՎՈՐ ՎԵՐԱԿԱՑՈՒՆ (չի կարողանում իրեն զսպել, որ չբացականչի, հանկարծակի շտապում).**— Նրանք բոլորովին մե՞րկ էին:

**ՄԱՆՆԱ (ժպտում է).**— Օհ, տյա՛ր, կարծում եք՝ մեր Տեր Հիսուս Քրիստոսը միջոցներ չունի՞ շրջագետտներ գնելու իր սուրբ կատանց համար:

Այդ պատասխանի վրա լավում են քրքջոցներ, և Գլխավոր Վերակացուն շփոթված տեղն է նստում:

**ԿՈՇՈՆ.**— Տեսնո՞ւմ եք, տյա՛ր Գլխավոր Վերակացու, որ բոլորի ժպիտն էր հարուցում ձեր հարցերով: Այսուհետև, ձեռնպահ մնա-

ցեք ընդհատելուց, քանի դեռ չենք շոշափել խնդրի էությունը: Եվ մի՛ մոռացեք, որ այս պատմության մեջ, նույնիսկ նրան դատապարտելիս,— մանավանդ նրան դատապարտելիս,— մենք պարտավորված ենք կործանումից փրկել հոգին, որը ծվարել է այս փոքրիկ, փխրուն, ամբարտապան մարմնի մեջ... Դուք ինչպիսի՞ ուսուցիչ եք դիմում շփոթության մեջ գցելով այս պատանի ուղեղը, երբ նրան ներշնչում եք, որ բարությունը և չարիքը լոկ հագուստի հարց է: Մեր սրբերը, ընդհանրապես, հագնված են լինում սովորական հայտնությունների ժամանակ: Սակայն...

**ԺԱՆՆԱ. (շարտում է Գլխավոր Վերակացուի դեմքին).**— Մեր սուրբ Տերը հո մե՛րկ է խաչի վրա:

**ԿՈԾՈՆ (չրջվում է դեպի նա).**— Դու ասացիր այն, ինչ որ ես պիտի ասեի, Ժաննա՛, ի դեպ, խոսքս կտրելով: Սակայն հարգարժան կանոնիկոսին նկատողություն անելը քեզ չի վերաբերում: Դու մոռանում ես, թե ով ես դու և ովքեր ենք մենք: Բո հոգևոր հովիվները, քո ուսուցիչները և քո դատավորները: Զգուշացի՛ր սեփական գոռոզությունից, Ժաննա. եթե մի օր դեր կարողանա քեզ իր ճանկը գցել, ապա հենց դրանից պիտի օգտվի:

**ԺԱՆՆԱ. (մեղմ).**— Ես գիտեմ, որ գոռոզ եմ... Բայց ես Աստծո դուստրն եմ: Եթե նա չէր ուզում, որ ես գոռոզ լինեմ, ինչո՞ւ ինձ մոտ ուղարկեց իր շողշողուն Հրեշտակապետին և լուսազգեստ Սուրբ Կանանց: Ինչո՞ւ ինձ խոստացավ, որ կկարողանամ համոզել բոլոր այն տղամարդկանց, որոնց ես համոզեցի,— և նույնքան գիտուն ու նույնքան իմաստուն տղամարդկանց, ինչպիսին որ դուք եք, և հենց այն, որ ես արժանի եմ կրելու ձյունասպիտակ, գեղեցիկ գենք ու գրահ՝ իմ արքայի ընծան, և տոհմական մի թուր և այն, որ ես կառաջնորդեմ բոլոր այդ քաջագուն տղաներին գրեթե անկոծությունների տարափի տակ՝ ինքս ուղղաձիգ հեծած իմ նրժույզին: Թող ինձ թողներ, որ խնամեմ ոչխարներս և հյուսեմ մորս կողքին. այդ դեպքում ես երբեք չէի գոռոզանա...

**ԿՈԾՈՆ.**— Կշոիր խոսքերդ, Ժաննա՛, կշոի՛ր մտքերդ: Դու հիմա քո սուրբ Տիրոջն ևս ամբաստանում:

**ԺԱՆՆԱ. (խաչակնքում է).**— Աստված մի արասցե՛: Ես ասում եմ, որ թող կատարվի Նրա Կամքը նույնիսկ եթե ցանկացել է, որ ես գոռոզանամ և մատնվեմ կորստյան: Դա նույնպես Նրա իրավունքն է:

**ԳԼԽԱՎՈՐ ՎԵՐԱԿԱՑՈՒՆ (չի կարողանում իրեն զսպել).**— Զարհուրելի՛ է: Այն, ինչ նա ասում է, զարհուրելի՛ է: Մի՞թե Աստված

կարող է ցանկանալ կորստյան մատնել մարդու հոգին: Եվ դուք նրան ունկնդրում եք, տյա՛րք, առանց սարսելո՞ւ: Ես հանձին նրա խոսքերի տեսնում եմ ծիլը մի ահռելի աղանդավորության, որ մի օր երկպառակելու է Եկեղեցին...

**Ինկվիզիտորը ելել է ոտի: Դա խելացի տեսքով մարդ է՝ նիհարալույն և պնդակազմ: Խոսում է չափազանց մեղմորեն:**

**ԻՆԿՎԻԶԻՏՈՐԸ.**— Լավ լսիր՝ քեզ ինչ եմ հարցնելու, Ժաննա՛: Դու հավատացա՞՞ծ ես, որ այս պահին աստվածաշնորհ վիճակի մեջ ես:

**ԺԱՆՆԱ (պայծառացած հարցնում է).**— Ո՞ր պահին, տյա՛ր: Էլ չենք կողմնորոշվում, թե ինչը երբ է ու որտեղ: Ամեն ինչ խառնվում է: Սկզբի պահի՞ն, երբ լսում եմ իմ Զայնները, թե՞ դատական նիստի ավարտին, երբ հասկացա, որ իմ արքան և ընկերներս նույնպես ինձ լքել են, թե՞ երբ կասկածեցի, երբ դրժեցի իմ երդումը և նետո ինքս ինձ գտա կրկին:

**ԻՆԿՎԻԶԻՏՈՐԸ.**— Հարցից մի՛ խուսափիր: Դու հավատացա՞՞ծ ես, որ աստվածաշնորհ վիճակի մեջ ես:

**Լռել են բոլոր քահանաները, որոնք հափշտակված նայում են Ժաննային. այդ հարցը պիտի որ վտանգավոր լինի:**

**ԻՍԻԿԵՆՅՈՒ (վեր է կենում).**— Տյա՛ր Ինկվիզիտոր, դա ահավոր հարց է մի պարզունակ աղջկա համար, որն անկեղծորեն հավատում է, որ Աստված դարձրել է նրան իր ընտրյալը: Ես հայցում եմ, որ Ժաննայի պատասխանը չօգտագործվի ի վնաս նրան, այնքան մեծ է նրա համարձակությունը ինքն իրեն վարկաբեկելու...

**ԻՆԿՎԻԶԻՏՈՐ.**— Լռությո՛ւն, եղբա՛յր Լադվենյու: Ես հարցնում եմ այն, ինչ հարկ եմ համարում հարցնել: Թող հարցին պատասխանի: Դու հավատացա՞՞ծ ես, որ աստվածաշնորհ վիճակի մեջ ես, Ժաննա՛:

**ԺԱՆՆԱ.**— Եթե այդ վիճակի մեջ չկամ, թող Աստծուն հաճո լինի՝ ինձ շնորհի: Եթե կամ, թող Աստծուն հաճո լինի՝ ինձ պահի այդ շրտորհյալ վիճակի մեջ:

**Քահանաների մրմունջը: Ինկվիզիտորը տեղն է նստում անհողորդ դեմքի արտահայտությամբ: Լադվենյուն բարեհամբույր արձագանքում է:**

**ԻՍԻԿԵՆՅՈՒ.**— Լավ պատասխանեցիր, Ժաննա՛:

**ԿԵԼԵՎՈՐ ՎԵՐԱԿԱՑՈՒՆ (գոմռում է՝ սրտնեղած Ժաննայի հաջողությունից).**— Հետո ի՞նչ: Սատանան ճարպիկ է, այլապես սա-

տանա չէր լինի: Եվ կարծում եք, որ նրան այդ հարցն արդեն չե՞ն տվել: Ես սատանային ճանաչում եմ. նա պատրաստի պատասխաններ ունի:

**ՎԱՐՎԻՔ (որը ձանձրանում է: Հանկարծակի Կոշոնին).**— Ձերդ Վեհանձնություն, այս ամենն անկասկած շատ հետաքրքիր է, չնայած որ ինքս էլ նույնպես մի քիչ ապակողմնորոշվում եմ, ինչպես այս երիտասարդ աղջիկը: Բայց եթե այս դանդաղկոտությամբ ընթանանք, մենք երբեք չենք հասնի դատական նիստի բուն խնդրին: Մենք նրան խարույկ բարձրացնել երբեք չենք կարողանա: Թող նա իր խաղով ներկայացնի այս գողտրիկ պատմությունը, քանի որ դա կարծես թե անհրաժեշտ է, բայց թող արագացնի: Եվ շուտ հասնենք խնդրի էությանը: Նորին Պաշտօնափայլության Կառավարությունը խիստ պահանջ է զգում արժեգրկել այդ ոջլոտ թագավորիկ Ծարլին<sup>6</sup> և ի լուր քրիստոնեական աշխարհին հոչակել, որ նրա թագադրությունը լոկ դիմականհանդես էր՝ սարքված աղանդավոր, արկածախնդիր, վհուկ, զինվորների հետ քարշեկող մի պոռնիկի կողմից...

**ԿՈՇՈՆ.**— Ձերդ Վեհանձնություն, մենք նրան դատում ենք որպես աղանդավորի...

**ՎԱՐՎԻՔ.**— Ես այդ գիտեմ, բայց հարկադրված եմ մտահոգվել իմ գորքերի տրամադրության մասին: Վախենամ, թե ձեր դատավճռի փաստական հիմնավորումները մի քիչ շատ նշանակություն ձեռք բերեն իմ զինվորների աչքում: Պրոպագանդան համատուտ մի բան է, տեր Եպիսկոպոս, իմացե՛ք: Էականն այն է, որ ասվի մի շատ խոշոր բան, և այդ կրկնվի հաճախակի. այդպես է, որ սարքում են ճշմարտություն: Ես հիմա ձեզ նոր տեսակետ եմ ներկայացնում, բայց համոզված եմ, որ այդ տեսակետը երկար ճանապարհ կունենա անցնելու... Ինձ անհապաղ անհրաժեշտ է, որ այդ աղջկան վերածեմ առ ոչինչ հասարակության աչքում... ով էլ, որ նա ինքը լինի: Եվ այն, որ ինչ նա կա իրականում ոչ մի տեսակի նշանակություն չունի Նորին Պաշտօնափայլության Կառավարության աչքում: Ես ձեզնից չեմ թաքցնի, որ նա նույնիսկ ինձ անձնապես ավելի շուտ համակրելի է՝ ձեր բոլորիդ բերանները փակելու իր հմտությամբ, և գտնում եմ, որ նա լավ հեծյալ է՝ մի բան, որ հազվադեպ է կանանց շարքերում... Դա մի աղջիկ է, որն ուրիշ հանգամանքներում, և եթե լիներ իմ դասակարգից, մեծ հաճույքով հետս կտանեի աղվեսաորսի: Դժբախտաբար, տեղի ունեցավ այդ ամբարտավան թագադրությունը, որի մտահղացումն



ինքն ունեցալ առաջինը... Վերջապես, Ձերդ Վեհանձնություն, սա ի՞նչ անամոթություն է: Մեր քթին ծիծաղելով՝ գնա օծվի Ֆրանսիայի թագավոր, այդ վալուացին: Գա այդ անի մեզ մոտ՝ Ռեյմսում<sup>7</sup>: Հանդգնի մեր բերանից դուրս քաշելու Ֆրանսիան, անպատիժ թալանի անգլիական տոհմական սեփականությունը: Մեծ բարեբախտություն է, որ Աստված անգլիական իրավունքի հետ է: Նա այդ ապացուցեց Ազենկուրում<sup>8</sup>: Աստված և մեր իրավունքը: Դրանք երկու հասկացություններ են, որոնք հիմա համարյա փոխներթափանցված են: Ի դեպ, դա գրված է մեր գրահների վրա: Ուստի շտապեցրեք նրան, որ պատմի իր մանրիկ գործի վերաբերյալ, բարձրացրեք նրան խարույկի վրա, և էլ չխուսվի այդ մասին: Քիչ առաջ ես կատակում էի. տասը տարի անց, բոլորը մոռացած կլինեն այս պատմությունը:

**ԿՈՇՈՆ (հառաչում է).**— Տա Աստված, Ձերդ Վեհանձնություն՝ն:

**ՎԱՐՎԻՔ.**— Ո՞ր էինք հասել:

**ՀԱՅՐԸ (գալիս է առաջ՝ ձեռքին դազանակը).**— Հասել էինք այն պահին, երբ ես նրան գտնում եմ, Աստված գիտի, թե ում մասին երազելիս, իր Հավերժահարսերի Ծառի տակ, այդ անտակը: Քթիցը բերելու եմ, երդվում եմ ձեզ: (**Նետվում է Ժաննայի վրա, և դաստակից բռնած, կոպտորեն կանգնեցնում է նրան**): Այստեղ ի՞նչ ես անում: Ասա՛: Դու պատասխանելո՞ւ ես, թե այստեղ ինչ ես անում, երբ ապուրը մատուցված է, և մայրդ անհանգստանում է:

**ՌԱՆՆԱ (կակազում է, ամոթահար, որ իրեն հանկարծակիի են բերել, ձեռքը բարձրացրած դեմքը ծածկելու համար, ինչպես փոքրիկ մի աղջիկ).**— Ես չգիտեի, որ այդքան ուշ է: Կորցրել էի ժամանակի զգացողությունը:

**ՀԱՅՐԸ (ցնցում է նրան, ոռնալով).**— Ա՛հ, չգիտեիր, որ այդքան ուշ է, փոքրիկ ջադո՛ւ: Ա՛հ, հիմա էլ կորցնում ես ժամանակի զգացողությունը: Տա Աստված, որ ուրիշ բան կորցրած չլինես, որ չե՛ս համարձակվում ասել... (**Գարշելիորեն ցնցում է նրան**): Ո՞վ թե՛ կորցնել տվեց, ասա՛, ո՞վ թե՛ կորցնել տվեց ժամանակի զգացողությունը, դուրս ընկածի մե՛կը: Երբ ես մոտենում էի, դու խոսում էիր, ճշալով ցոտություն էիր ասում մեկին: Մեկին, որին սուս անգամ ձեռքիցս բաց թողեցի: Չգիտեմ, ուր փախալ այդ գլխովան, բայց կգա օրը, կբռնացնեմ ես նրան՝ այդ ստահակին: Ո՞ւմ հետ էիր խոսում: Պատասխանիր: Թե չե՛ թե՛ շան սատակ կամենամ...

**ԺԱՆՆԱ.**— Սուրբ Միքայելի հետ:

**ՀԱՅՐԸ (շննդուն ապուսկ է հասցնում նրա երեսին).**— Առ քեզ: Թող դաս լինի, որ մեկ էլ հորդ ձեռ չառնես: Ա՛հ, դու սուրբ Միքայելի հետ ես ժամադրված, անտա՛կ աղջիկ: Ա՛հ, երեկոներն անցկացնում ես ծառերի տակ՝ նրա հետ գրայցելով, երբ ամբողջ ընտանիքը մտահոգվում և սպասում է քեզ, փիս աղջի՛կ: Ա՛հ, ուզում ես արդեն, ուրիշների նման, թփերի տակ հաճույքդ վայելես, փոխանակ օգնելու քո հորն ու մորը և ամուսնանալու այն լուրջ տղայի հետ, որ ընտրած կլինեն քեզ համար: Դե որ այդպե՛ս է, ես իմ եղանը կխրեմ քո այդ ինքնակոչ սուրբ Միքայելի փորը, քեզ էլ իմ սեփական ձեռքերով կխեղդեմ ջրում, ինչպես ղզղնած կեղտոտ մի կատվի, որպիսին դու ես:

**ԺԱՆՆԱ (հանգիստ պատասխանելով հայհոյանքների տարափին).**— Ես ոչ մի վատ բան չեմ արել, հա՛յր իմ, և իրոք Նորին Վեհանձնությունն սուրբ Միքայելն էր, որ հետս խոսում էր:

**ՀԱՅՐԸ.**— Իսկ երբ մեզ մոտ վերադառնաս՝ փորդ ուռած, հորդ անունը խայտառակած, և մայրդ մեռնի վշտից, և եղբայրների, համագյուղացիների ամոթանքից խուսափելու համար, զեան լանակ,— գուցե Սուրբ Հոգին է, որ պիտի հաջողացրած լինի այդ օյնբազությունը: Ես քահանային ասելու եմ, որ հերիք չէ ման ես գալիս, դեռ մի բան էլ՝ սրբապղծում ես: Քեզ հաց ու ջրի պիտի դատապարտեն և դու փտելու ես մի կուսանոցի նկուղո՛ւմ:

**ԺԱՆՆԱ (ծնկի է գալիս նրա առաջ).**— Հա՛յր իմ, դադարեցրեք գոռոռոցը: Դուք չեք կարողանում ինձ լսել: Երդվում եմ մեր սուրբ Տիրոջ անունով, որ ես ձեզ ճշմարիտն եմ ասում: Ահա վաղուց է, որ գալիս եմ ինձ տեսության և ինձ եմ ուզում: Դա միշտ պատահում է միջօրեի աղոթածամին կամ իրիկնային աղոթածամին. դա միշտ պատահում է, երբ ես աղոթելիս եմ լինում, երբ ամենամաքուրն եմ, ամենամոտիկն Աստծուն: Եվ դա չի կարող ճշմարիտ չլինել: Սուրբ Միքայելը հայտնվում է ինձ. և՛ սուրբ Մարգրիտը, և՛ սուրբ Կատրինը: Նրանք հետս խոսում են, ինձ պատասխանում են, երբ նրանց հարց եմ տալիս, և երեքը նույն բանն են ասում:

**ՀԱՅՐԸ (նրան քաշքշելով).**— Քեզ հետ ինչե՞ր պիտի խոսի սուրբ Միքայելը, հիմա՛ր ապուշ: Նա ինձ հետ խոսո՞ւմ է, ե՛ս, որ քո ճայրն եմ: Եթե նա բան ունեք մեզ ասելու, խ՛նքի մոտ բան է, որ ինձ դիմեք, բանի որ ես եմ ընտանիքի գլուխը: Նա խոսո՞ւմ է մեր քահանայի հետ:

ԺԱՆՆԱ.— Հա՛յր, հա՛յր, խփելու և գոռալու փոխարեն մի անգամ փորձիր ինձ հասկանալ: Ես այնքան միայնակ եմ, այնքան փոքրիկ, և այնքան է ծանր: Ահա երեք տարի է, որ դիմադրում եմ. երեք տարի է, որ ինձ միշտ նույնն են ասում: Ես էլ ի վիճակի չեմ միայնակ պայքարելու այդ Ջայների հետ, որ լսում եմ: Հարկ պիտի լինի, որ հիմա իրենց ուզածն անեն:

ՀԱՅՐԸ (պոռթկում է).— Հիմա էլ ձայնե՛ր ես լսում: Արդեն չափն անցա՛վ: Իմ աղջիկը ձայնե՛ր է լսում: Ես պիտի աշխատած լինեմ քառասուն տարի, ես ինձ պիտի կոտորած լինեմ զավակներիս քրիստոնեաբար մեծացելու վրա, որպեսզի մի աղջիկ ունենամ, որ ձայնե՛ր է լսում:

ԺԱՆՆԱ.— Հիմա հարկ պիտի լինի, որ ես նրանց ասեմ՝ այդ սուրբ կիներն ասում են, որ ձգձգելն արդեն հնարավոր չէ:

ՀԱՅՐԸ.— Ի՞նչը ձգձգելը հնարավոր չէ, ապո՛ւշ: Այդ քո Ջայները ի՞նչ են ուզում, որ դու անես: Վերջիվերջո, խուլ մնալու փոխարեն, լավ է լսեմ, թե ի՞նչ են ասում:

ԺԱՆՆԱ.— Ինձ ասում են, որ գնամ փրկեմ Ֆրանսիայի թագավորությունը, որը կորչելու մեծ վտանգի տակ է: Ծի՞շտ է:

ՀԱՅՐԸ.— Մեղա քեզ, Տեր Աստվա՛ծ: Իհարկե, որ կորչելու մեծ վրտանգի տակ է Ֆրանսիայի թագավորությունը: Մենք այդ մասին լավատեղյակ ենք, արևելքի բնակիչներս, մանավանդ այս քամբախում, որտեղ լիքն են գյաղա գողոնները: Բայց ոչ առաջին անգամն է, ոչ էլ վերջինը, որ կորչելու վտանգի տակ է Ֆրանսիայի թագավորությունը, և միշտ էլ տակից դուրս է գալիս: Դու մեր թագավորությունը ապավինիր Աստծուն: Ի՞նչ կարող ես անել դու, խեղճ աղջիկ: Նույնիսկ տղամարդը, եթե կովելը նրա մասնագիտությունը չէ, ոչինչ չի կարող անել:

ԺԱՆՆԱ.— Ես կարող եմ: Իմ Ջայներն ինձ այդ ասում են:

ՀԱՅՐԸ (հռհռում է).— Դո՛ւ, դու կարո՞ղ ես: Դու գուցե ավելի խորամանկ ես, քան մեր մեծամեծ զորավարները, որոնք կարողանում են ընդամենը մեջքները ծռել բոլոր հարվածների տակ մեր սրտ օրերին:

ԺԱՆՆԱ.— Այո՛, հայր իմ:

ՀԱՅՐԸ (կապկելով նրան).— Այո՛, հայր իմ: Թերևս դու ման եկող չես դու վատթարն ես: Խելագար ես: Եվ դու ի՞նչ կարող ես անել, հիմա՛՛ր ասուշ:

ԺԱՆՆԱ.— Այն, ինչ ինձ ասում են իմ Ջայները: Ջինված ուղեկցորդների մի շրախումբ պետք է խնդրեմ սիր դը Բոդրիկուրից... (Իր

անունը լսելով՝ Բողոքիկուրը բավականությամբ մի «ահ» է արձակում և ուզում է շարժվել առաջ... Եշուկով հայտնում են նրան. «Օ՛հ, ո՛չ, օ՛հ, ո՛չ. քիչ հետո»... և նրան ետ են բերում իրենց շարքերը)... և երբ ունենամ ուղեկցորդների իմ շքախումբը, գնամ Արքայազնի մոտ, Ծիճոն և նրան ասեմ, որ ինքն է նշմարիտ թագավորը և իր զինվորների գլուխն անցկացնելով նրան՝ ազատագրեմ Օրլեանը, Արքազան Յուդերով օձել տամ ու թագադրեմ նրան Ռեյմսում Նորին Վեհաձեռնություն Արքեպիսկոպոսի կողմից և ծովը թափեմ անգլիացիներին...

**ՀԱՅՐԸ (որն ամեն ինչ հասկացել է).**— Ա՛հ, վերջապես, բացատրվեցիր, կեղտո՛տ աղջիկ, դու ուզում ես գնաս զինվորների հե՛տ, ինչպես վերջիններից վերջինը:

**ԺԱՆՆԱ (ժպտում է խորհրդավոր).**— Ո՛չ, հայր: Ինչպես առաջինը, առջևում նետերի տարափի տակ և առանց երբեք ետ նայելու. իմ Ջայներն ինձ այդ ասել են և այդպես, մինչև որ Ֆրանսիան ազատագրեմ: (Եսրունակում է հանկարծակի տխուր): Հետո կլինի այն, ինչ Աստված կամենա:

**ՀԱՅՐԸ (այդ հեռանկարից ինքն իրեն կորցրած).**— Փրկել Ֆրանսիա՛ն: Փրկել Ֆրանսիա՛ն: Իսկ իմ կովերն ո՛վ է պահելու այդ ժամանակամիջոցում: Կարծում ես, որ ես քեզ մեծացրել եմ, արել եմ բոլոր այն գոհաբերությունները, որ արել եմ քեզ համար, որպեսզի դու գնաս քե՛ֆ անե՛ս զինվորների հետ Ֆրանսիան ազատագրելու պատրվակի տակ, այն էլ հիմա, երբ վերջապես հասել ես այն տարիքին, որ կարող ես ֆերմային օգտակար լինել: Առ հա՛: Հիմա քեզ կտվորեցնեմ Ֆրանսիան ազատագրե՛լը: (Ուտնում է վրան ու վայրենաբար ծեծում՝ ասյտակելով և ոտնահարելով):

**ԺԱՆՆԱ (նշում է, ոտնահարված).**— Դադարեցրե՛ք, հա՛յր. դադարեցրե՛ք: Դադարեցրե՛ք:

**Հայրը գոտին քանդել է և սկսում է նրան հսրվածել՝ թափած ջանքից հեալով:**

**ԼԱԴՎԵՆՅՈՒ (վեր է կացել, բոլորովին գունատ).**— Կասեցրե՛ք նրան: Սա ի՛նչ խայտառակություն է: Յա՛վ է պատճառում նրան:

**ԿՈՇՈՆ (կամացուկ).**— Մենք աս դեպքում ոչինչ չենք կարող անել, եղբա՛յր Լադվենյու: Ժաննարին կնարողանաք ճանաչել միմիայն դատական նիստի ընթացքում: Մեզ տրված է միայն մեր դերերը խաղալու իրավունքը, ամեն մեկն իրենը՝ բարի կամ չար, ինչպես որ գրված է, ըստ հերթի: (Եսրունակում է): Եվ քիչ հետո մենք

նրան ավելի մեծ ցավ ենք պատճառելու. դուք այդ գիտեք: **(Շըրշ-վում է դեպի Վարվիքը):** Տիան է, այնպես չէ՞, ընտանեկան այս փոքրիկ տեսարանը:

**ՎԱՐՎԻՔ (ինչ-որ շարժում է անում).**— Ինչո՞ւ որ: Անգլիայում նույնպես մենք հաստատ կողմնակից ենք մարմնական պատիժներին երեխաների նկատմամբ: Դրա շնորհիվ բնավորություն է կոփվում: Ես ինքս մահամերձ լինելու աստիճան ծեծ եմ կերել, և դրանով իսկ ինձ հիմա շատ լավ եմ զգում:

**ՀԱՅՐԸ (որը վերջապես դադարեցրել է ծեծը, ուժասպառ, ճակատի քրտինքը սրբելով, գոռոռում է ժանճայի վրա, որը ուշագնաց ընկել է նրա ոտքերի առաջ).**— Այդպե՛ս, քնձրո՛տ: Դու դեռ ցանկանո՞ւմ ես ազատագրել Ֆրանսիա՛ն: **(Մի քիչ շփոթված՝ շրջվում է դեպի մյուսները):** Դուք իմ տեղը ի՞նչ կանեիք, պարոններ՛ր, եթե ձեր աղջիկը ձեզ այդպիսի բան ասած լիներ:

**ՎԱՐՎԻՔ (նայվածքը շեղում է այդ բռի գյուղացուց և սառնարյուն շարունակում է).**— Լոկ մի բան ցավ է պատճառում ինձ ու զարմացնում: Մեր հետախուզական գործակալության անտեղյակությունը այս գործում: Հենց սկզբից մենք այս մարդու հետ պետք է լեզու գտնեինք:

**ԿՈՇՈՆ (ժպտում է).**— Այո՛, բայց այդ հնարավոր չէր կանխատեսել:

**ՎԱՐՎԻՔ.**— Հետախուզական հմուտ գործակալությունը միշտ պարտավոր է կանխատեսել: Ոգեշնչյալ մի աղջնակ ինչ-որ տեղ, մի գյուղում խոսում է Ֆրանսիան ազատագրելու մասին: Պետք է այդ իմանալ անմիջապես, հոր հետ լեզու գտնել, որ փակի նրա բերանը և գործը խեղդել հենց ձվի մեջ: Պետք չէ սպասել, որ նա այդ անի... Երբ թողնում ենք հետո-չին, չափազանց թանկ է ճատում... **(Նորից սկսում է հոտոտել ձեռքի վարդը):**

**ՄԱՅՐԸ (եկել է առաջ).**— Հո չսպանեցի՞ր նրան:

**ՀԱՅՐԸ.**— Այս անգամ՝ ոչ: Բայց հաջորդ անգամ, եթե խոսք բացի զինվորների հետ գնալու մասին, ես խեղդելու եմ նրան՝ այդ քո աղջկան: Սևա գետում, լսո՞ւմ ես: Իմ սեփական ձեռքերով: Եվ եթե դա ինձ չհաջողվի, թույլ եմ տալիս նրա եղբայրներին նույնը անել իմ տեղակ... **(Մեծ քայլերով հեռանում է):**

**Մայրը թեքվել է ժանճայի վրա, սրբում է նրա ճակատի քրտինքը:**

**ՄԱՅՐԸ.**— Ժանճա՛, իմ փոքրիկ ժանճա՛... Ժանե՛տ... Նա քեզ ցա՛մ պատճառեց:

**ՄԱՅՐԸ (նախ՝ վախեցած, հետո ճանաչում է մորը, խեղճ-խեղճ ժըպտում է).**— Այո՛: Նա դաժանորեն ծեծեց:

ՄԱՅՐԸ.— Պիտի համբերությամբ դիմանաւ. քո հայրն է:

ԺԱՆՆԱ (մանկական ձայնով).— Դիմանում եմ, մայրի՛կ: Եվ ամբողջ ժամանակ, երբ ինձ ծեծում էր, եւ աղոթում էի նրա համար: Որ մեր սուրբ Տերը ների նրան:

ՄԱՅՐԸ (այնուամենայնիվ, ընդվզած).— Մեր սուրբ Տերը հարկ չունի ներելու հայրերին, որոնք ծեծում են իրենց աղջկան, Ժամնա՛: Դա նրանց իրավունքն է:

ԺԱՆՆԱ (շարունակում է).— Ու որպեսզի նա հասկանա...

ՄԱՅՐԸ (շոշում է նրան).— Որպեսզի ի՞նչ հասկանա, իմ այծի՛կ: Դու ինչո՞ւ նրան պատմեցիր այդ բոլոր հիմարությունները:

ԺԱՆՆԱ (ճշում է տազնապած).— Պետք է, որ մեկը հասնա՛ւ, մա՛յր, թե չէ՛ եւ մեկնեմակ չեմ կարողանա:

ՄԱՅՐԸ (օրորում է նրան).— Դե, լա՛վ, լա՛վ. քեզ մի՛ տանջիր: Մեղմըվիր ինձ. ինչպես երբ փոքրիկ էիր... Ինչքա՛ն մեծացել է... Չեմ էլ կարողանո՞ւմ նրան պահել իմ թևերի մեջ... Դու, այնուամենայնիվ. իմ փոքրիկն ես, գիտե՛ս, ինձ նման, դու, որ իմ փեշին կպած՝ ինձնից արկ չէիր գալիս, երբ այս ու այն կողմը գործ էի անում խոհանոցում: Ես քեզ միշտ էլ մի ստեպղի՛ն էի տալիս, որ դու կրճես կամ էլ մի փոքրիկ սփսե, որ սրբես, որպեսզի ամեն ինչ անես ինձ նման... Քո եղբայրները, դա նույնը չէր, տղամարդիկ էին, հորդ պես... Չպետք է փորձես խոսք հասկացնել նրանց՝ այդ տղամարդկանց... Պետք է ասել՝ այո, հետո, բանի որ միշտ դաշտում են լինում, հետո երբ զնացած են լինում, ոո՛ւ ես տիրուհին: Ես քեզ այդ ամենը չպետք է ասեի, բայց հիմա դու կին ես, մեծ ես... Քո հայրը բարի է, արդար, բազ էթե ես մի քիչ չխարդախեի,— հենց նրա օգտի համար,— դու կարծում ես՝ ես կկարողանայի՞ օրծերս գույս բերել: (Ասում է սկանջիկ): Մի փոքրիկ խնայողություն ունեմ, որ արեզ եմ տան ծախսերի հաշվին: Մի սու՞ աչստեղից, մի սու՞ սանտեղից: Եթե կուգես, հաջորդ տոնավաճառին, ես քեզ համար մի սիրուն սանդղագործված թաշկինակ կստնեմ: Դու կլինես գեղեցիկ:

ԺԱՆՆԱ.— Գեղեցիկ լինելը չէ, որ ես ուզում եմ, մայրի՛կ:

ՄԱՅՐԸ.— Ես է՛լ մի քիչ խելքից թեթե եմ կդել: Ես էլ նույնպես սիրել եմ մի տղայի, նախքան քո հորը: Նա գեղեցիկ էր, բայց հրճար չկար. գնաց բանակ, և տեսնո՞ւմ ես, ես այնուամենայնիվ, երջանկացա: Ո՞վ է նա: Գաղտնիք մի՛ պահիր քո մորից: Նա այնպիսի մարդ է, որ անո՛ւնն անգամ չես կարող տալ: Նա հո գոնե մեր գյուղի՞ց է: Թերևս քո հայրը համաձայնվի. նա դեմ չէ,

որ մի սիրուն հարսանիք անենք: Կկարողանանք հավատացնել, որ այդ ինքն է ընտրել քո փեսացուին, հիմարի՛կ... Գիտես տղամարդկանց. գոռոռում են, հրամայում են, ծեծում են, բայց մենք նրանց քթից բռնած ման ենք ածում:

ԺԱՆՆԱ.— Ես չեմ ուզում ամուսնանալ, մա՛յր: Նորին Վեհանձնություն սուրբ Միքայելն ինձ ասաց, որ ես պետք է մեկնեմ. հազնեմ տղամարդու հագուստ և գնամ գտնեմ մեր սիրելի Արքայազնին, որպեսզի փրկեմ Ֆրանսիայի թագավորությունը:

ՄԱՅՐԸ (խիստ).— Ժաննա, ես հետո անուշ խոսում եմ, բայց արգելում եմ քեզ ինձ հիմարություններ ասել: Նախ՝ որ քեզ երբեք թույլ չեմ տա՝ դու հազնես տղամարդու զգեստ: Իմ աղջիկը՝ տղամարդու հագուստով: Ես կուզենայի դա սլատկերացնել, օրինակի համա՛ր:

ԺԱՆՆԱ.— Բայց մա՛յր, հարկ պիտի լինի, որ ես այդպես հագնվեմ զինվորների հետ ձիարշավելու համա՛ր: Նորին Վեհանձնություն սուրբ Միքայելն է, որ հրամայում է:

ՄԱՅՐԸ.— Նորին Վեհանձնություն սուրբ Միքայելը քեզ հրամայի թե ոչ՝ դու երբեք ձի չես հեծնելու: Ժաննա դ՛ Արևը՝ ձիու վրա՛: Է՛հ, ի՞նչ ասել կուզի. ծամո՛ւն պիտի դառնանք մեր գյուղացիների բերանում:

ԺԱՆՆԱ.— Բայց Վոկուլտրի օրիորդը հո ձի հեծնում է՝ բաժնի որսի գնալիս:

ՄԱՅՐԸ.— Դու ձի երբեք չե՛ս հեծնելու: Դա քո հասարակական դիրքին սազական չէ: Այ քեզ մեծամոլություն՛ն:

ԺԱՆՆԱ.— Բայց եթե ձի չհեծնեմ, ես ինչպե՛ս աուսջնորդեմ զինվորներին:

ՄԱՅՐԸ.— Եվ դու զինվորների մոտ էլ չպիտի գնաս, փի՛ս աղջիկ: Որ բանն այդտեղ է հասել, ես պիտի նախընտրեմ քեզ մեռած տեսնել: Տեսնո՞ւմ ես, հորդ նման եմ խոսում: Այսպես թե այնպես, կետեր կան, որոնց վերաբերյալ ես և նա իրար համակարծիք ենք: Աղջիկը մանելու, հյուսելու, լվացք անելու և տանը մնալու համար է: Քո տատիկը երբևիցե դուրս չի եկել մեր գյուղից. ես՝ հուշնայես: Դու նույն կերպ պիտի վարվես, և երբ հետագայում սուղիկ ունենաս, նրան էլ նույնն ես սովորեցնելու: **(Հանկարծակի պտթվում է՝ աղմկալի հեծկլտալով)**: Դու գնաս զինվորների՛ հետ: Այս ես Երկնքին ի՞նչ եմ արել, որ ինձ այսպիսի աղջկա արժանագրեց: Ի՞նչ է, դու ուզում ես ինձ ողջ-ողջ գերեզմա՞ն իջեցնես:

ԺԱՆՆԱ (նկատում է նրա թևերի մեջ՝ նույնպես հեծկլտալով ու ճչա-

լով)։— Ո՛չ, մայրիկ։ (Ուղղվում է ու դեռևս արցունքախառն հանդիսավոր խոսում է, մինչ Մայրը հեռանում է)։ «Տեսնո՞ւմ եք, Ձերդ Վեհաձեռնություն սուրբ Միքայել, հնարավոր չէ. նրանք երբեք չեն հասկանա։ Ոչ ոք երբեք չի հասկանա։ Ավելի լավ է՝ ես անմիջապես հրաժարվեմ։ Մեր սուրբ Տերն ասել է, որ պետք է հնազանդվել հորն ու մորը»։ (Պատասխանում է Հրեշտակապետի ձայնով)։ «Նախ՝ պետք է Աստծուն ճակատհարվել, ժանճա՛»։ (Ժանճան հարցնում է)։ «Իսկ եթե Աստված հրամայում է անկարելի՞ն»։ Այնժամ, անկարելի՞ն պետք է փորձել խորին հանդարտությամբ։ Սկսի՛ր, ժանճա։ Աստված քեզնից այլ բան չի պահանջում, հետո Նա տեր է կանգնելու ամեն ինչին։ Եվ եթե դու կարծես, որ Նա քեզ լքում է, եթե անհատթափարելի արգելք Նա թողնի քո ճամփին, դա կլինի դարձյալ քեզ օգնելու համար, դա կլինի Նրա վստահության նշանը քո նկատմամբ։ Որովհետև Նա մտածում է այսպես. «Փոքրիկ ժանճաչի հույսին կարող եմ թողնել այս լեռը,— ես այնքան եմ զբաղված,— արճառելու աստիճան նա քերծելու է ձեռներն ու ծնկները, բայց ես նրան գիտեմ. նա կանցնի։ Ամեն անգամ որ Նա մի լեռ թողնի քո ճամփին, դու պետք է շատ հպարտանաս, ժանճա՛։ Բանն այն է, որ Աստված իր բեռը դնում է քո ուսերին... (Կարճատև դադար։ Ժանճան նորից հարցնում է)։ «Տյա՛ր, կարծո՞ւմ եք, որ մեր սուրբ Տերը կարողանա կամենալ, որ մենք լացացնենք մեր հորն ու մորը, որ մենք, մեկնելով, թերևս սպանենք նրանց՝ վշտի բեռան տակ։ Դա դժվար է հասկանալ»։ «Նա ասել է. «Ոչ եկի արկանել խաղաղութիւն, այլ սուր... քանզի եկի քակել զայր ի հօրէ իրմէ. և զեղբայր ի եղբորէ իրմէ»... Աստված եկել է պատերազմ բերելու, ժանճա՛։ Աստված չի եկել իրերը կարգավորելու. նա եկել է, որ պետքի ամեն ինչ դառնա էլ ավելի դժվարին։ Նա անկարելին չի պահանջում բոլորից, բայց քեզնից պահանջում է։ Նա չի կարծում, որ քեզ համար որևէ բան լինի չափազանց դժվարին։ Ահա և ամենը։ (Ժանճան ուղղվում է և պարզ պատասխանում է)։ «Լա՛վ, ես կգնամ»։

ՄԻ ՁԱՅՆ (հայտնի չէ որտեղից, խորքի սավերում գոռում է)։— Գոռո՛գ։

ԺԱՆՆԱ (տազնապաճ ուղղվել է, հարցնում է)։— Ո՞վ ասաց՝ գոռոգ։ (Դադար։ Ժանճան պատասխանում է Հրեշտակապետի ձայնով)։ «Այդ դու ասացիր, ժանճա՛։ Եվ հենց որ սկսես այն, ինչ Աստված պահանջում է քեզնից, աշխարհն է քեզ այդ ասելու։ Հարկ պիտի



լինի, որ դու բավականաչափ խոնարհ լինես Աստծո ձեռքում՝ ընդունելու համար գոռոգության այդ թիկնոցը»: «Ծանր է լինելու, տյա՛ր»: «Այո՛, ծանր է լինելու: Աստված գիտե, որ դու ուժեղ ես»: **(Լռություն: Նա ուղիղ նայում է իր առաջ և հանկարծ նորից դառնում է փոքրիկ աղջիկ և բացականչում է զվարթ ու վճռական՝ խփելով իր ազդրին):** Լա՛վ, վճռված է: Եղած պրծած է: Կգրեամ իմ հորեղբայր Դյուրանի մոտ: Այդ մեկը իմ նվագի տակ պարում է: Ես նրա հոգու հետ կարողանում եմ խաղալ: Կհամբուրեմ նրա երկու աչտերը, կնստեմ ծնկներիս. ինձ համար նուրբ գգեստ է գնելու և ուղեկցելու է մինչև Վոկուպոր:

**ԵՂԲԱՅՐԸ (Հարունակելով քորել քիթը՝ մտաեցել է նրան).—** Հիմա՛ր ... խղճուկ հիմա՛ր... Քեզ պե՛տք էր, որ այդ ամենը գնայիր պատմեիր ծնողներին: **(Էլ ավելի է մտաեկում):** Եթե ինձ մի սու տաս, որ ծամովի ծխախոտ առնեմ ինձ համար, հաջորդ անգամ նրանց չեմ ասի, որ քեզ տեսել եմ քո սիրահարի հետ:

**ԺԱՆՆԱ (զվարթորեն ուստնում է նրա կողմը).—** Ա՛հ, այդ դո՛ւ ես, որ ասել ես նրանց, ճիճո՛ւ: Ա՛հ, այդ դո՛ւ ես, որ ասել ես նրանց, խոզի՛ գոճի: Ա՛ն, ահա քո սուն, տավարի գլո՛ւխ: Ահա քո ծամովի ծխախոտը, կեղտոտ անասուն: Ես քեզ կսովորեցնեմ խաբարբզիկություն՝ն... **(Կատաղորեն իրար հետ կովորում են: Ժաննան վազում է նրա ետևից մյուսների միջով: Հետապնդումը նրան հասցրնում է մինչև Բողրիկուրի փորը, որը վերջապես, զբաղեցրել է բեմի կենտրոնը, ուր հրել են նրան մյուսները, որովհետև ինքը մոռացել էր, որ ելույթ ունենալու իր հերթը հասել է: Ժաննան, վազելիս, նրա խոշոր փորն է խրում իր կախ զցած գլուխը):**

**ԻՄԳՐԻԿՈՒՐ (գոռում է, ներս մտնելիս).—** Ի՞նչ: Ի՞նչ է ուզում այս աղջիկը: Ի՞նչ է ուզում արև աղջիկը: Սա ի՞նչ գժվելու պատմություն է: **(Նրա փորը թիրախ է դառնում Ժաննայի հարվածին: Նա ցավից գոռում է, Ժաննայի թևից բռնելով, նրան բարձրացնում, մտաեցնում է իր քթին՝ կատաղությունից ջղաձգված):** Իսկական ուզածդ ի՞նչ է, փայտոջիլի՛ ձագ, որ ահա երեք օր է, ինչ երեսար ես ձևանում և դղչակի դուսեր իմ պահակներին զվարճացնում ես՝ ոտի վրա քնելու հեքիաթներ պատմելով:

**ԴԻՄԻՆԷ (վազելուց հևասալառ, ցցված ոտերի ծայրերին, հսկայի թևից կախ).—** Ես կուզեմայի, տյա՛ր, մի ձի, տղամարդու հագուստ և սի ջբախտմբ մինչև Ծիհոն գնալու համար, որպեսզի տեսնեմ նորին Վեհանձնություն Արքայազնին:

**ԲՈՒՐԻԿՈՒՐ (Լեքնատիրապետունը կորցրած).**— Իսկ իմ ոտքը քո փափուկ տնդին՝ դու այդ չե՞ս ուզում:

**ԺԱՆՆԱ (Ժպտում է).**— Ուզում եմ, տյա՛ր ու նաև շոնդուն ապտակներ,— հայրս ինձ ընտելացրել է ծեծ ու ջարդին,— միայն թե ես իմ ձին ձեռք բերեմ:

**ԲՈՒՐԻԿՈՒՐ (դեռևս նրան բռնած պահելով).**— Դու գիտե՞ս, ով եմ ես և ինչ եմ ուզում: Ձեր գյուղի աղջիկները քեզ տեղյակ պահե՞լ են այդ մասին: Երբ դրանցից մեկը գալիս է ինձնից մի բան խնդրելու, ընդհանրապես, փոքր եղբոր կամ բավթառ արիկա հոր կյանքի համար, որին բռնել եմ իմ հողերի վրա գողավարի նապաստակ որսալիս,— ապա եթե աղջիկը սիրուն է, ես միշտ արձակում եմ կախաղանի պարանը,— ես բարեսիրտ եմ,— իսկ եթե տգեղ է, կախաղան եմ բարձրացնում: այդ գյաղային... որ օրինակ ծառայի: Բայց միշտ սիրուններն են, որ գալիս են. ձեռ ու ոտ եմ ընկնում մինը գտնելու համար իրենց ընտանիքում,— և այդ պատճառով է, որ ի վերջո, բարի մարդու համբավ ձեռք բերեցի շրջակայքում: Ուրեմն դու գիտես սակագինը, բարիշեցի՞նք:

**ԺԱՆՆԱ (պարզորեն).**— Ես չգիտեմ, ինչ եք ուզում ասել, տյա՛ր: Ինձ Նորին Վեհանձնություն սուրբ Միքայելն է ողարկել...

**ԲՈՒՐԻԿՈՒՐ (վախվորած խաչակներում է իր ազատ մնացած ձեռքով).**— Դրախտի սրբերը մի՛ խառնիր այս պատմություններին, կապը կտրած աղջի՛կ... Սուրբ Միքայելի օջինը հարմար է պահակներին, որ քեզ թույլ տան՝ հասնես ինձ մոտ: Դու այստեղ ես, իմ առջև: Եվ չեմ ասում, թե դու քո ձին չես ստանա: Մի բավթառ յաբու թափթարմ մի գեղեցիկ աղջկա փոխարեն: Խելքի մոտ գործարք է: Դու կո՞ւյս ես:

**ԺԱՆՆԱ.**— Այո՛, տյա՛ր:

**ԲՈՒՐԻԿՈՒՐ (որը շարունակում է նայել նրան).**— Ձիու հաշվով համաձայն եմ: Գեղեցիկ աչքեր ունես:

**ԺԱՆՆԱ (կամացուկ).**— Բանն այն է, որ իմ ուզածը միայն ձին չէ, տյա՛ր:

**ԲՈՒՐԻԿՈՒՐ (Ժպտում է՝ հետաքրքրությունից զվարթացած).**— Ազահն ես, հա՛: Ծարունակիր. դու ինձ ծիծաղեցնում ես... Միայն հիմարներն են կարծում, թե կողոպտված են, երբ շատ բան են տալիս մի աղջկա համար: Ինձ դուր է գալիս, որ իմ հաճույքը թանկ է նստում վրաս: Դա ինձ թույլ է տալիս պատկերացնել, որ ես իրոք շատ եմ ուզում այդ աղջկան: Դու հասկանո՞ւմ ես, ես ինչ եմ ասում:

ԺԱՆՆԱ. (պայծառ տեսքով).— Ո՛չ, տյա՛ր:

ԲՈՂՐԻԿՈՒՐ.— Ավելի լավ: Ես չեմ սիրում անկողնում դառողություններ անող կանանց: Ի՞նչ ես ուզում, ձիուց բացի: Ծառահատուսի հաջող է այս աշնանը: Ես տրամադրված եմ ծախսելու:

ԺԱՆՆԱ.— Զինյալների շքախումբ, տյա՛ր, որն ինձ ուղեկցի Շիևոն:

ԲՈՂՐԻԿՈՒՐ (բաց է թողնում նրան: Փոխելով խոսելակերպը).— Լավ լսիր, ինչ եմ ասում: Ես բարեհամբույր մարդ եմ: Բայց չեմ սիրում, երբ ինձ ձեռ եմ առնում: Այստեղ ես եմ տերը: Դու ինձ համբերությունից հանելու վրա ես: Ես կարող եմ նույնպես քեզ մտրակել տալ՝ ինձ մոտ գոռով խցկվելուդ համար և քեզ ետ ուղարկեմ ձերոնց մոտ ձեռնունայն, բայց անշուշտ կարմիր հետքեր թողնելով հետույքիդ վրա: Ես քեզ ասացի, որ ինձ դուր է գալիս, որ վրաս թանկ է նստում, որպեսզի ցանկությունս բորբոքվի, բայց եթե ինձ վրա անչափ թանկ է նստելու, ապա տեղի է ունենում հակառակ երևույթը. ցանկությունս հանկարծ իսպառ չքանում է: Շիևոնում ի՞նչ գործ ունես անելու:

ԺԱՆՆԱ.— Ուզում եմ այցելել Նորին Վեհաճնությունն Արքայազնին:

ԲՈՂՐԻԿՈՒՐ.— Դե, ի՞նչ ասել կուզի. գեղջկուհի կույսը, որ դու ես, Աստված քեզ փառասիրություն է տվել, չի՞ խնայել: Բա Բուրգոնյի դուքսի՞ն, ինչո՞ւ նրան չայցելես, բանի որ վիզ ես դրել, բանի որ այդքան բանիմաց ես: Գոնե այդ կողմից, տեսակչունքն, կունենաս հաջողության հասնելու հնարավորություն. կրքոտ կնամոյի մեկն է դուքսը... Որովհետև, գիտե՛ս, Արքայազնը պատերազմի և կանանց հարցերում... Ի՞նչ ես ակնկալում նրանից:

ԺԱՆՆԱ.— Մի բանակ, տյա՛ր, որի գլուխը կանցնեմ Օրլեանն ազատագրելու համար:

ԲՈՂՐԻԿՈՒՐ (հանկարծակի բաց է թողնում նրան, կասկածամիտ).— Եթե դու խելագար ես, դա ուրիշ հարց է: Ես չեմ ուզում խրվել մի գարշելի պատմության մեջ... (Զայն է տալիս դեպի խորքը): Հե՛յ, Բուդո՛ւս: (Մի Պահակ գալիս է առաջ):

ԲՈՂՐԻԿՈՒՐ.— Տար սրան ցնցուղի տակ մի քիչ լողացրու, հետո իսկիւր բանտախուցը: Վաղը երեկոյան կտանես կհանձնես հորը: Բայց ոչ մի ծեծ. ես անախորժությունների մեջ ընկնել չեմ ուզում, խելագարի մեկն է:

ԺԱՆՆԱ. (հանգիստ, Պահակի կողմից կաշկանդված).— Ես սիրով կզնայ բանտախուցը, տյա՛ր, բայց կվերադառնամ վաղը երեկո-

յան, երբ ինձ բաց թողնեն: Այնպես որ ավելի լավ կանեք, եթե ինձ հենց հիմա ունկնդրեք:

**ԲՈՒՐԻԿՈՒՐ (նետվում է վրան, ոռնալով ու կուրծքը ծեծելով մարդակապկի նման).**— Բայց վերջապես, հազար միլիոն ցավ ու կրակ, դու ինձնից չե՞ս վախենում:

**ԺԱՆՆԱ (հաչացքը սևեռած նրա աչքերի խորքը, իր հանգիստ կիսաժպիտով).**— Ո՛չ, տյա՛ր, ամենևին:

**ԲՈՒՐԻԿՈՒՐ (կանգ է առնում շփոթված, ապա գոռոռում է Պահակի վրա).**— Ռադդ քաշի՛ր այստեղից: Այս ամենը լսելու կարիքը չունե՛ս: (Պահակն անհետանում է: Նրա դուրս գալուց հետո Բուրիկուրը, մի քիչ անհանգստացած, հարցնում է): Իսկ ինձնից ինչո՞ւ չես վախենում: Բոլորն ինձնից վախենում են:

**ԺԱՆՆԱ (մեղմ).**— Որովհետև դուք շատ բարի եք, տյա՛ր:

**ԲՈՒՐԻԿՈՒՐ (գոմոռում է).**— Բարի՛, բարի՛: Նայած թե երբ: Ես քեզ ասացի սակագինը:

**ԺԱՆՆԱ (ավարտում է).**— Եվ մանավանդ շատ խելացի: (Շարունակում է): Ես դեռ շատ մարդկանց պետք է համոզեմ, որպեսզի անեմ այն, ինչ Ջայներն ինձնից պահանջել են. և բախտս բերել է, որ առաջինը, որի մոտ քննություն պիտի բռնեմ,— և որից, վերջին հաշվով, կախում ունի ամեն ինչ,— լինի փաստորեն ամենախելացին:

**ԲՈՒՐԻԿՈՒՐ (նախ՝ մի քիչ շփոթված, հարցնում է անփույթ ձայնով ինքն իր համար լցնելով մի գավաթ գինի).**— Դու իրոք որ տարօրինակ աղջիկ ես: Ինչո՞ւ ես կարծում, որ ես շատ խելացի եմ:

**ԺԱՆՆԱ.**— Որովհետև դուք շատ գեղեցիկ եք:

**ԲՈՒՐԻԿՈՒՐ (խաբուսիկ նայվածք նետելով մետաղյա հայելուն, որ մոտերքում է).**— Պա՛հ, մի քսան տարի առաջ չէի առարկի. կանանց ես դուր էի գալիս... Չանացի, որ շատ չծերանամ, ընդամենը այդքան: Բայց այնուամենայնիվ, տարօրինակ է այս կարգի խոսակցություն ունենալ մի չնչին հովվուհու հետ, որը մի գեղեցիկ առավոտ երկնքից իջնում է քեզ մոտ: (Հառաչում է): Ծիշոն ասած, ես այստեղ փտում եմ: Իմ լեյտենանտները բոի մարդիկ են, մեկը չկա, հետք խոսեմ... Իվերջո, քանի որ խոսք բացվեց այդ մասին, ինձ հետաքրքիր է քեզնից իմանալ, թե ինչ հարաբերություն ես տեսնում դու խելքի և գեղեցկության միջև: Սովորաբար հակառակն են ասում, որ գեղեցիկ մարդիկ միշտ հիմար են լինում:

**ԺԱՆՆԱ.**— Կուզիկներն են կամ շատ երկար քիթ ունեցողներն են,

որոնք այդպէս են ստում: Մի՞թէ նրանք կարծում են, թէ Տեր Աստված, եթէ կամենա, միջոցներ չունի հաջողեցնելու ինչ-որ մի կատարյալ բան:

**ԸՌՂՐԻԿՈՒՐ (չոյված ծիծաղում է).—** Անշուշտ, եթէ հարցին մտաւնանք այդ տեսանկյունից... Բայց, տեսնո՞ւմ ես, ես. օրինակ, որ տղեղ չեմ... Երբեմն ինքս ինձ հարցնում եմ, թէ արդո՞ք ևս շա՛տ խելացի եմ, թե՛ ոչ: Չէ՛, չէ՛, մի՛ առարկիր: Պատահում է, որ ինչս ինձ այդ հարցն եմ տալիս... Ես քեզ այդ վստահում եմ, որովհետև դու ոչ մի տեսակի նշանակություն չունես... բայց իմ լեյտենանտների համար, պարզ է՝ ես իրենցից անհամեմատ ավելի շատ եմ խելացի: Ուզեն-չուզեն՝ ես եմ կապիտանը: Եթէ այդ սկզբունքը ընդունված չլիներ, բանակը, որպէս այդպիսին, հնարավոր չէր լինի: Եվ սակայն... — ես զիջողաբար տրամադրված եմ քեզ հետ այդ մասին խոսելու. մեր դրության անհեթեթայությունը, մեզ իրարից բաժանող սոցիալական վիթխարի տարբերությունը մի տեսակ անվնաս են դարձնում մեր այս վարիվերո խոսք ու գրույցը,— ... Եվ սակայն խնդիրներ կան, որոնցից խելքս բան չի կտրում: Ինձնից խնդրում են, որ մի բան որոշեմ տակտիկական կամ վարչական տեսակետից, և տեղնուտեղը, չգիտեմ ինչու, ուղեղումս ճեղքվածք է առաջանում: Մշուշ է: Ոչինչ չեմ հասկացնում: Նկատի ունեցիր, որ ես ցույց չեմ տալիս: Գոռգոռոցով մի կերպ դուրս եմ պրծնում: Եվ այնուամենայնիվ, մի որոշում ընդունում եմ: Էանանք, էրբ հրամանատար ես, որոշում ընդունելն է, հնչալիսին էլ որ դա լինի: Սկզբում վախենում ես, հետո փորձառություն ձեռք բերելուց, նկատում ես, որ դա համարյա նույն արդյունքին է հանգեցնում... ինչ էլ, որ որոշած լինես: Եվ սակայն ես կուզեցայի ավելի լավին հասնել: Գիտես, Վոկուլյորը փոքր տեղանք է: Կուզեցայի, մի օր, կարևոր որոշում ընդունել, ևս որոշումներից մեկը, որոնք երկրի մասշտաբով են լինում... ոչ թէ ծառուհատման հետ կապված մի հարց, որ չի ստացվում կամ մի վեցյակ դասալիքներ, որոնց սլետք է որսալ. այնպիսի բան՝ մի քիչ բացառիկ, մի բան, որ ինձ նկատել տա վերևներում: **(Պարտաբար է երազել, նայում է նրան):** Ինքս ինձ հարց եմ տալիս, թէ ինչու եմ քեզ պատմում այս ամենը, քանի որ դու ոչինչ ես կարող անել և գուցե կիսախելագար ես...

**ԸՌՆՆՆՆ (մեղմ ծայրում է).—** Ես գիտեմ՝ ինչու: Ինձ զգուշացրել էին արդ մասին: Լսի՛ր, Ռոբերտ...

**ԸՌՐՐՐՐՐՐՐՐ (ցնցվում է).—** Ինչո՞ւ ես ինձ անունով կոչում:

**ԺԱՆՆԱ.**— Որովհետև դա այն անունն է, որ քեզ տվել է մեր սուրբ Տերը: Որովհետև դա քոնն է: Մյուսը՝ ազգանունդ, նաև քո եղբորն է, քո հորը: Լսի՛ր, սիրելի՛ Ռոբեր, և այսուհետև մի՛ գոգոտա. անօգուտ է: Հենց այդ ես եմ քո ընդունելիք որոշումը, այն որոշումը, որ քեզ նկատել պիտի տա...

**ԲՈՒՐԻԿՈՒՐ.**— Ի՞նչ ես դուրս տալիս:

**ԺԱՆՆԱ (մտտեցում է նրան).**— Լսի՛ր, Ռոբե՛ր: Նախ՝ դադարիր մտածել, որ ես աղջիկ եմ: Դա կխառնի քո մտքերը... Իհարկե, մեր սուրբ Տերն ինձ տգեղ չի ստեղծել, բայց դու մյուս տղամարդկանց նման ես. առիթն է, որ չես ուզում բաց թողնել քո ձեռքից... Պիտի վախենայիր ինքդ քո աչքին հիմար երևալուց... Դու ուրիշներին կճարես, անպայման, ուրիշ աղջիկներ, զգվելի՛ խոզի գոճի, եթե շատ ես ուզում մեղքի տակ ընկնել... Աղջիկներ, որոնք քեզ ավելի շատ հաճույք կպատճառեն և քեզնից ավելի քիչ բան կուզեն... Ես քեզ այնքան էլ դուր չեմ գալիս: **(Բողոքիկուրը փոքրինչ տատանվում է, վախենում է, թե գիջելուց խաբված կլինի: Ժաննան հանկարծակի բարկանում է):** Ռոբե՛ր, եթե ուզում ես, որ քեզ օգնեմ, դու էլ ինձ օգնիր: Ամեն անգամ, որ քեզ ճիշտ բան ասելիս կլինեմ, հավանություն տուր և ասա՝ այո, թե չէ շարունակ խճճվելու ենք:

**ԲՈՒՐԻԿՈՒՐ (քրթմնջում է, նայվածքը փախցնելով, մի քիչ ամոթահար).**— Դե ի՞նչ, ո՛չ:

**ԺԱՆՆԱ (խիստ).**— Ինչպե՞ս թե: Ո՞չ:

**ԲՈՒՐԻԿՈՒՐ.**— Ուզում եմ ասել՝ այո՛... Ծիշտ է: Ես քեզ այնքան էլ չեմ ցանկանում... **(Քաղաքավարի շարունակում է):** Նկատի ունեցիր, որ դու, այնուամենայնիվ, սիրուն պատահեցիս:

**ԺԱՆՆԱ (բարեհամբույր).**— Լավ է, լավ: Քեզ մի՛ քրթիր, իմ չաղիկ Ռոբե՛ր: Ես դրանից չեմ սրտնեղում, ընդհակառակը: Այդ մի խնդիրը պարզեցինք: Պատկերացրու, որ դու արդեն ինձ տվել ես տղամարդու իմ հագուստը, և մենք՝ երկուս, ծանր ու թեթև ենք անում, ինչպես երկու լավ տղաներ, բանհմաց ու հանգիստ:

**ԲՈՒՐԻԿՈՒՐ (դեռևս կասկածամիտ).**— Ծարունակիր, տեսնենք...

**ԺԱՆՆԱ (նստում է սեղանի մոտ, դատարկում է գինու գավաթը).**— Իմ չաղիկ Ռոբե՛ր, քո որոշումը հենց քո ձեռքում է: Քո փայլատակող մեծագործությունը քեզ նկատել պիտի տա վերևներում, և հենց միանգամից... Նկատի առ, թե ինչ օրի ենք ընկել Բորժում<sup>10</sup>: Չգիտեմ՝ ո՛ր մի սրբին ապավինեն: Որ կողմը շրջվես, դեմ ես առնում անգլիացիներին: Բրետանը<sup>11</sup> և Անժում<sup>12</sup> սպասում

են, տեսնեն, թե իրենցից ո՛ր մեկն է ավել վճարելու: Բուրգոնյի դուքսը,— որը քաջագուն ասպետի դեր է խաղում իր նոյն-նոր Ոսկե Գեղմով,— այնուամենայնիվ, նրանց գլխացավանք է պատճառում և կամացուկ շոշափում է պայմանագրերի բոլոր կաշկանդող պարագրաֆները: Կարծում էին, թե կարող են հույս դնել գոնե նրա չեզոքության վրա... դա մեզ վրա բավականին թանկ նստեց: Ըստ վերջին լուրերի, նա խոսում է իր որդուն մի անգլիացի իշխանուհու հետ ամուսնացնելու մասին: Գլխի ընկնո՞ւմ էս, թե ինչն ինչոց է: Ֆրանսիական բանակը հո գիտես, ինչ օրի է: Լավ տղաներ են, որոնք ընդունակ են դմբուզով հասցնել ու թրատել, բայց, ի՞նչ արած. հուսահատված են: Գլուխները մտցրել են, որ այլևս անելիք չկա, որ անգլիացին միշտ էլ ավելի ուժեղ է լինելու: Դյունուա<sup>13</sup> բիշոփ լավ գորավար է, խելացի. մի բան, որ հազվադեպ է բանակում, բայց նրան այլևս չեն լսում, և ադամենն սկսում է ձանձրացնել նրան: Իր ճամբարում քեֆ է անում հոմանունիների հետ,— բայց ես այդտեղ ևս ամեն ինչ կարգի կբերեմ. նրա հերթն էլ կգա,— և հետո, նա իրեն շատ մեծ իշխան է պատկերացնում, ինչպես բոլոր բիշոփերը... Ֆրանսիայի գործերը, իվերջո, նրա պետքը չեն. թող այդ դանդաղ Շարլը ինքը գլուխ հանի իր տոհմական ժառանգությունից... Լա Հիրը, Քսենորայը ընտիր կատաղի ցուլեր են. շարունակ ուզում են գրոհել, թրի փառավոր հարվածներ հասցնել, որոնց մասին խոսեն քրոնիկներում. նրանք անհատական քաջագործությունների չեմսլիոններ են, բայց հրանոթների հետ վարվելու կերպը չգիտեն, և միշտ էլ վասն ոչընչի, իրենց կոտորել են տալիս, ինչպես Ազենկուրում: Ա՛հ, իրենք իրենց կոտորել տալու համար մոմ են. բոլորը՝ կամավոր... Բայց ինչի՞ է պետք, որ քեզ կոտորել տաս: Հասկանո՞ւմ էս, իմ փոքրիկ Ռոբե՛ր, պատերազմը ոտնագնդակի խաղ չէ, ոչ էլ մըրցամարտ. բավական չէ, որ լավ խաղաս՝ բոլոր ուժերդ ի մի բերած, հարգելով պատվի օրենքները... Հաղթել է պետք: Պետք է խորամանկ լինել: **(Դիպչում է նրա ճակատին):** Պետք է, որ սա սրա ներսում աշխատի: Դու, որ խելացի էս, այդ ի՞նչնից լավ գիտես:

**ՐՐՐՐԻՎՈՒԹ.—** Ես միշտ էլ ադ ասել եմ: Մեր օրերում չեն մտածում, ինչքան որ պետք է: Մի տես՝ իմ լեյտենանտներին. բոի գյադաւեթ. միշտ պատրաստ են դմբուզով հասցնելու, ընդամենը այդլավեր. Բայց ովքեր մտածել գիտեն, ոչ ոք չի խորհում նրանց օգտակործելու մասին:

**ԺԱՆՆԱ.**— Ոչ որ: Դրա համար էլ պետք է, որ հենց իրենք մտածեն երկու մտքի արանքում: Ուստի, փաստորեն, դու, որ մտածում ես, մի գեղեցիկ օր հղանում ես մի գաղափար: Մի հանճարեղ գաղափար, որը և կարող է ամեն ինչ փոխել:

**ՔՈՒՐԻԿՈՒՐ (տազնապած).**— Ես մի գաղափար եմ հղանում:

**ԺԱՆՆԱ.**— Թող որ գա: Դու այն հղանալու ընթացքի մեջ ես: Քո գրվածքում, որտեղ ամեն ինչ արագ է ընթանում, և որտեղ ամեն ինչ տեղնուտեղը կարգի է գալիս, դու այս պահին ճշտում ես ինչն ինչոց է: Դու հստակ տեսնելու ընթացքի մեջ ես: Ամոթ է ասելը, բայց Ֆրանսիայում այս պահին միայն դու ես, որ հստակ ես տեսնում գործի էությունը:

**ՔՈՒՐԻԿՈՒՐ.**— Այդպե՛ս ես կարծում:

**ԺԱՆՆԱ.**— Ասում եմ քեզ:

**ՔՈՒՐԻԿՈՒՐ.**— Եվ ի՞նչ եմ տեսնում:

**ԺԱՆՆԱ.**— Դու տեսնում ես, որ հարկավոր է շունչ ու հոգի տալ այդ մարդկանց, մի հավատ, ինչ-որ մի պարզ բան: Քո կապիտանական իշխանության տակ հենց կա մի փոքրիկ աղջիկ, որին հաշտնրվել է սուրբ Միքայելը ու նաև սուրբ Կատրինը և սուրբ Մարգրիտը, իր ասելով, իհարկե: Քեզ ընդհատում եմ: Գիտեմ, ինչ ես առարկելու. դու դրան չես հավատում: Բայց անցնում ես դրա վրայից, ժամանակավորապես: Հենց այդտեղ է, որ դու իրոք արտասովոր ես: Ինքդ քեզ ասում ես. «Դա մի չնչին փոքրիկ հովվուհի է, լա՛վ»: Բայց ենթադրենք, որ Աստված նրա հետ է. ոչինչ այլևս չի կարող կասեցնել նրան: Իսկ այն՝ Աստված նրա հետ է թե՛ ոչ, դա գիր ու դուռ է: Այդ ապացուցել մենք չենք կարող, բայց չենք կարող ապացուցել նաև հակառակը... Ահա նա եկել է, հասել է ինձ մոտ, անկախ իմ կամքից, և արդեն կես ժամ է, ինչ ես նրան ունկնդրում եմ,— վիճարկելու հարց չէ, դա փաստ է: Դու այդ հատատում ես: Այնժամ, տեղնուտեղը հղանում ես քո գաղափարը, քո գաղափարը, որն սկսում է ծագել քո գլխում: Ինքդ քեզ ասում ես. «Քանի որ նա ինձ համոզեց, ինձ, ինչո՞ւ չկարողանա համոզել Արքայազնին և Դյուհուային, և Արքեպիսկոպոսին: Դուանք, վերջիվերջո, ինձ նման մարդ եմ,— և մեր մեջ մնա, ավելի շուտ՝ նրվազ խելոք եմ, քան թե ես եմ: Ինչո՞ւ չկարողանա համոզել մեր զինվորների, որոնք եթե ճիշտը դատենք, չեն տարբերվում անգլիացիներից՝ կիսով չափ քաջարի, կիսով չափ տրամադիր սեփական կաշին փրկելու: Եվ բավական է, որ ճիշտ պահին մի լավ հասցնես անգլիացիներին, նրանք իրենց փասափուսեն կբա-



շեն Օրլեանից: «Իվերջո, ինչի՞ կարիք ունեն մեր տւերքը»,— այս պահին ինքն քեզ ասում էս քո գլխում, որն ավելի հստակ է գործում, քան մյուսներինը,— ունեն կարիքը մի դրոշի, մի անձի, որը սիւնուի նրանց ուժն ու եռանդը և ապացուցի, որ Աստված իրենց հետ է: Այնժամ, այստեղ է, որ դու սքանչելի էս դառնում միանգամից:

ԲՈՒՐԻԿՈՒՐ (խեղճ).— Կարծո՞ւմ էս:

ՄԱՆՆԱ.— Սքանչելի՞: Այդ էս և՛ քեզ ասում, Ռոբերտ, և շուտով չեմ լինելու միակ ասողը: Տեսնելու էս, որ քիչ ժամանակ անց, բոլորը լինելու են այդ կարծիքին: Եվ իրապաշտ էս դու, ինչպէս բոլոր մեծ դիվանագետները: Ինքն քեզ ասում էս. «Ես՝ Բողրիկուրս, այնքան էլ վստահ չեմ, որ նրան Աստված է առաքել: Սակայն ձևացնում եմ, որ այդպէս է՝ հավատում եմ: Ես այդ աղջկան ուղարկելու եմ նրանց մոտ՝ ինքն լինի Աստծո կողմից առաքված թե ոչ. եթե **նրանք** հավատացին, ուրեմն դա նույն արդյունքին է հանգեցնում: Հենց իմ տրամադրության տակ գտնվում է նամակատարը, որը վաղն առավոտյան պետք է մեկնի Բուրժ...

ԲՈՒՐԻԿՈՒՐ (ապշահար).— Քեզ այդ ո՞վ ասաց: Գաղտնիք է:

ՄԱՆՆԱ.— Տեղեկացել եմ: (**Շարունակում է**): Վեց ամրապինդ տղաներ եմ ջոկում շքախմբի համար, այդ աղջկան տալիս եմ մի ձի և նամակատարի հետ ճամփու եմ դնում նրան: Շինոնում,— էս, որ լավ գիտեմ նրան,— իր գլխի ճարը կտեսնի: (**Հիացմունքով նայում է նրան**): Էհ, գիտե՞ս, Ռոբերտ:

ԲՈՒՐԻԿՈՒՐ.— Ի՞նչ:

ՄԱՆՆԱ.— Դու բացառիկ խելքի տեր էս, որ այդ ամենը կարողացար մտածել:

ԲՈՒՐԻԿՈՒՐ (սրբում է ճակատի քրտինքը, ուժասպառ).— Այո՛:

ՄԱՆՆԱ (սիրալիք շարունակում է).— Միայն թե ձին, տուր ինձ մի նր, որ բավական խելոք լինի, որովհետև դեռևս հեծնել չգիտեմ:

ԲՈՒՐԻԿՈՒՐ (քրքջալով).— Քիթ ու մոտիդ պիտի ջարդես, աղջիկս...

ՄԱՆՆԱ.— Հազիվ թե: Սուրբ Միքայելն ինձ կպահի թամբի վրա: Լա՛վ, քեզ հետ գրագ էմ գալիս, Ռոբերտ: Գրագ էմ գալիս հագուստը, տղամարդու հագուստը, որը դեռևս ինձ չես խոստացել՝ քթիս հասցվելիք մի թունդ հարվածի դիմաց: Երկու ձի էս բերել տալիս բավր: Մի փոքր ժամանակ արշավելու ենք, և եթե էս ընկնեմ, դու կորցնում էս քո հավատը իմ նկատմամբ: Կարգի՞ն բան եմ տուսչարկում: (**Պարզում է ձեռքը**): Թխի գա՛: Ով խոսքի տերը լեզուս, խոզ է:

**ԲՈՂՈՒԿՈՒՐ (վեր է կենում).—** Թխի գա՛: Մի քիչ շարժվելու պահանջ եմ զգում: Հավատալու բան չէ, բայց մտածելը հոգնեցնում է: (Կանչում է): Բուդո՛ւս: (Պահակը հայտնվում է):

**ՊԱՀԱԿԸ (Ժաննային մատնացույց անելով).—** Նրան բանտախո՛ւց տանեմ:

**ԲՈՂՈՒԿՈՒՐ.—** Ո՛չ, ապո՛ւշ: Նրան՝ մի շավար, իսկ սեզ երկու ձի կբերես: Երկուսով մի քիչ արշավելու ենք:

**ՊԱՀԱԿԸ.—** Բայց... իսկ Խորհո՛ւրդը: Ժամը չորսն է:

**ԲՈՂՈՒԿՈՒՐ (հոյակապ).—** Վա՛ղը: Այսօր ես բավականաչափ շատ եմ մտածել: (Դուրս է գնում: Ժաննան անցնում է ապշահար Պահակի առջևով և լեզու է ցույց տալիս նրան: Երեքով անհետանում են մյուս գործող անձանց ետևում, բեմի ստվերի մեջ):

**ՎԱՐՎԻՔ (որ հետևել է ամբողջ տեսարանին, զվարթացած, Կոշոնին).—** Անշուշտ, այդ աղջիկը ինչ-որ բան ունեւ: Ես շատ եմ գնահատել այն վարվելաձևը, ըստ որում այդ ապուշին խաբում է՝ հավատացնելով, որ նա է մտածողը:

**ԿՈՇՈՆ.—** Ըստ իմ ճաշակի ես այս տեսարանը համարում եմ մի քիչ կուպիտ: Այսպես թե այնպես, նա Ծարլի հետ ավելի նուրբ միջոցներ պետք է կիրառի...

**ՎԱՐՎԻՔ.—** Տե՛ր Եպիսկոպոս, ձեր և իմ արհեստների մեջ տիկնիկներին գործի դնող մեր թելերը համարժեք են նրա վարվելաձևին: Ի՞նչ բան է աշխարհը դեկավարելը, լինի դազանակով, թե սրբազան գավազանով, եթե ոչ ապուշներին հավատացնել տալ, որ այդ իրենք են մտածում այն, ինչ որ իրենց մտածել ենք տալիս: Այստեղ Աստծո միջամտության կարիքը չկա: Հենց դրանով է, որ այս տեսարանն ինձ զվարճացնում է: (Քաղաքավարի խոնարհվում է Եպիսկոպոսի կողմը): Եթե իհարկե չի բացակայում պրոֆեսիոնալ կապվածությունը, ինչպես ձեր պարագայում, հասկանալի է (Հանկարծակի հարցնում է): Ո՛րք հավատացյա՛լ եք, Տե՛ր Եպիսկոպոս: Ներեցե՞ք իմ կոպտությունը, բայց մենք ու մենք ենք:

**ԿՈՇՈՆ (պարզորեն).—** Փոքրիկ երեխայի հավատ է դա, Ձերդ Վեհանձնություն: Ահա թե ինչու, ձեզ համար, շարունակ խոչընդոտներ եմ հարուցելու դատական նիստի ընթացքում: Ահա թե ինչու իմ ատենակալները և ինքս մինչև վերջը պիտի ջանանք փրկել Ժաննային: Չնայած որ եղել ենք անկեղծ համագործակցողները անգլիական ռեժիմի, որը մեզ թվում էր միակ բանական լուծումը գոյություն ունեցող քառսի մեջ: Մեր սխառիվը, մեր խեղճ պատի-

վը պիտի պահանջեր, սակայն, որ մենք անկարելի անեինք ընդդէմ ձեզ՝ ապրելով ձեր տված դրամի շնորհիվ և անկարելի ունենալով ձեր ութ հարյուր զինվորներին, որոնք հսկում են դատական դահլիճի դռանը... Բուրժուազները անց քեֆին քեֆ չէր պակասում, երբ ֆրանսիական բանակի պաշտպանության տակ մեզ ծախվածներ էին համարում: Ո՛չ, մենք գտնվում էինք օկուպացված Ռուսների ներքո:

**ՎԱՐՎԻՔ (ջղագրգոված).**— Ես չեմ սիրում «օկուպացված» բառը: Դուք մոռանում եք Տրոյայի պայմանագիրը: Դուք պարզապես գտնվում էիք Նորին Պաշտպանության հողերի վրա:

**ԿՈԾՈՆ.**— Ծրջապատված Նորին Պաշտպանության զինվորներով, Նորին Պաշտպանության պատանդների մահապատիժներով: Հնազանդ՝ զինադադարին և Նորին Պաշտպանության մատակարարման քմահաճույքներին: Մենք մարդ էինք, ունեինք ապրելու ցանկության թուլությունը և Ժաննային փրկելու ջանադրությունը միաժամանակ: Այս կամ այն կերպ, մեզ ողբալի դեր էր վիճակված:

**ՎԱՐՎԻՔ (ժպտում է).**— Ձեզնից էր կախված, որ այն դարձնեիք ավելի փայլուն և անհատակներ դառնայիք, սիրելի՛ս: Իմ ութ հարյուր զինվորները պատրաստ էին:

**ԿՈԾՈՆ.**— Մենք այդ միշտ իմացել ենք: Թեև նրանք ջանք չէին խնայում, որ մեզ հայհոյեն և հրացանի կոթի ծանր հարվածներով բախեն մեր դռները՝ մեզ հիշեցնելու համար իրենց ներկայությունը, — մենք ինը ամիս ձեզ հետ սակարկեցինք, նախքան Ժաննային հանձնելը: Ինն ամիս, որպեսզի «այդ» ասելու հնարավորություն տանք մի աղջնակի, որին լքել էին բոլորը: Հետագայում, ինչքան էլ մեզ բարբարոս համարեն, ես համոզված եմ, որ իրենց բոլոր մեծ սկզբունքներով նրանք պիտի հաշտվեն այն մտքի հետ, որ հարկ է լինել ավելի նախաձեռնող, քան թե մենք էինք: Բոլոր ճամբարներում:

**ՎԱՐՎԻՔ.**— Ինն ամիս, ճիշտ է: Ինչպիսի՞ ծննդաբերության արդյունք է այս դատական նիստը: Այ թե ժամանակ է վատնում մեր Սուրբ Մարտիկներին, երբ նրանից խնդրում ենք, որ մի փոքրիկ քաղաքական ակտ ծննդաբերի: Վերջապես, մղձավանջն անցյալին է սրտովանում: Մայրը և երեխան իրենց լավ են զգում:

**ԿՈԾՈՆ.**— Ես այդ ամենի մասին շատ եմ մտածել, Ձերդ Վեհանձնություն: Մոր առողջությունը, ինչպես որ դուք արտահայտվեցիք, մեզ միան այդ էր մտահոգում, և մենք հանգիստ խղճով գոհա-

բերեցինք երեխային, երբ մեզ թվաց, որ բանիմաց լինելու դեպքում՝ մեզ ուրիշ ոչինչ չի մնում անելու: Աստված լուր էր ժաննայի ձերբակալությունից հետո: Ոչ ինքը, անկախ՝ թե ինչ էր պնդում, ոչ էլ մենք, իհարկե, չէինք լսում նրա ձայնը: Մենք, մենք շարունակեցինք ըստ մեր հին սովորության. նախ՝ հարկավոր էր պաշտպանել հին տունը՝ այդ մեծ ու բանական մարդկային շինությունը, որը վերջին հաշվով, այն ամենն է, որ մեզ մընում է անապատում այն օրերին, երբ Աստված բացակայում է... Մինչև մեր տասնհինգ տարին լրանալը, մեր սեմինարիաներում մեզ սովորեցրել էին, թե այն ինչպես պաշտպանենք: Ժաննան, որ չունեք մեր ամրակուռ ձևավորումը և ընկել էր կասկածների մեջ, — ես վստահ եմ դրանում, — մարդկանցից և Աստծուց լքված, նույնպես շարունակեց, միակ թուլությունից հետո անմիջապես ինքն իրեն տիրապետելով, խոնարհության և ամբարտավանության վեհության և բանիմացության այդ զարմանալի խառնուրդով, մինչև խարույկը ներսույալ: Մենք այն ժամանակ չկարողացանք այդ հասկանալ. սեղմվել էինք մեր մոր փեշերին՝ ծածկելով մեր աչքերը, ծերունի փոքրիկ տղաների նման. բայց այդ մեղության մեջ է, անհետացած մի Աստծու լուռության մեջ է, այդ մերկացման և անասնական թշվառության մեջ է, որ իրոք մեծ է այն մարդը, որը շարունակում է գլուխը բարձրացնել: Մեծ է՝ բոլորովին միայնակ, և միայն նա է մեծ:

**ՎԱՐՎԻՔ.**— Այո՛, անկասկած: Սակայն մենք՝ քաղաքական գործիչներս, հարկադրված ենք ջանք թափել չմտածելու համար միայնակ մարդու մեծության մասին: Կարծես դիտավորյալ մենք միշտ այդ մեծությանը հանդիպում ենք ընդհանրապես հանձին այն անձանց, որոնց գնդակահարել ենք տալիս:

**ԿՈԾՈՆ (դադարից հետո, խուլ ձայնով շարունակում է).**— Երբեմն միխթարվելու համար ինքս ինձ ասում եմ. ինչ գեղեցիկ է ամբողջությունն այս քահանաների, որոնց շփոթեցնում էր նրա ամբարտավան պատասխաններից յուրաքանչյուրը, և որոնք այնուամենայնիվ փորձեցին, ինն ամսվա ընթացքում, թուրը գոտկատեղից կախ, չգործել անուղղելին...

**ՎԱՐՎԻՔ.**— Առանց ամպագոռոգոռ բառերի՞... Ոչինչ անուղղելի չէ քաղաքականության մեջ: Ես ձեզ ասացի, որ նրան մի գեղեցիկ հուշարձան ենք կանգնեցնելու Լոնդոնում, երբ գա ժամանակը... (Շրջվում է դեպի Շինոնի բնակիչները, որոնք զբաղեցրել են բեմահարթակը և իրենց տրամադրության տակ գտնվող միջոց-

ներով պալատի մի փոքր միզանցեան են սարքել, մինչ իրենք շատախոսում էին): Բայց ավելի լավ է՝ լսենք շինոնցիներին, Ձերրդ Վեհանձնություն: Ես խորապես քամահրում եմ այդ ստոր վախկոտիկ Ծարլին, որը սակայն մի գործող անձ է, որն ինձ միշտ էլ զվարճացրել է:

**Ծարլին շրջապատել են երկու թագուհիները և Ազնես Սորելը: Միջնադարյան երեք գլխանոցներ անհանգիստ պտտվում են արքայի շուրջը:**

**Ա.Գ.ՆԵՍ.—** Բայց, Ծա՛րլ, դա անընդունելի՛ է: Դու հո չե՛ս թույլ տա, որ ես պարահանդեսին ներկայանամ այսպես անճաշակ հագնը-ված... Բո սիրուհին՝ անցյալ սեզոնի գլխանոցով: Դու հո գիտես, որ դա սկանդալի առի՛թ է:

**ԹԱԳՈՒՀԻՆ (Ծարլին շրջում է իր կողմը)—** Իսկ քո թագուհին: Ծա՛րլ: Ֆրանսիայի թագուհի՛ն: Ի՞նչ կասեն:

**ՇԱՐԼ (խաղում է իր բիլոկեով՝ փլված իր գահին).—** Կասեն, թե Ֆրանսիայի թագավորը բոլորովին դրամ չունի: Մի բան, որ ճիշտ է:

**ԹԱԳՈՒՀԻՆ.—** Այստեղից լսում եմ, թե ինչ խոսելիս կլինեն մեր մասին Անգլիայի արքունիքո՛ւմ... դքսուհի Բեդֆորդը, դքսուհի Գլուկեստերը, չհաշված կարդինալ Վինչեստերի սիրուհի՛ն: Ահա մեկը, որ լա՛վ է հագնվում:

**Ա.Գ.ՆԵՍ.—** Եվ պատկերացնո՞ւմ ես, Ծա՛րլ, որ նրանք մեր նորաձև-յին գլխանոցները ձեռք են բերել մեզնից առաջ: Ամենալավը հագնվում են Բուրժում, դա հայտնի բան է: Այ տեսնելու բան էր, թե ինչքան անճաշակ պիտի հագնված լինեին այնտեղ, եթե իրենց պատվիրակները չուղարկեին մեզ մոտ, որպեսզի ընդօրինակելու համար գնեն մեր վերջին մոդելները: Վերջապես, դու Ֆրանսիայի թագավո՛րն ես. դու այդ ինչպե՛ս կարող ես հանդուրժել:

**ՇԱՐԼ —** Նախ՝ ես Ֆրանսիայի թագավորը չեմ: Դա սուտ լուր է, որ լինքս տարածել եմ. այստեղ կա մի նրբերանգ... Հետո՛ մեր նորաձևության արտադրանքները միակ բանն են, որ ինձ հաջողվում է վաճառել նրանց՝ անգլիացիներից: Բուրժի նորաձևությունը և մեր խոհարարությունը. դրանցով է, որ մենք ինչ-ինչ հեղինակություն ունենք արտասահմանում:

**ՄԱՍՆՆՆԱՆ ԹԱԳՈՒՀԻՆ<sup>14</sup>.—** Այդ հեղինակությունը՝ միակ բարիքը, որ մեզ մնացել է. այս փոքրիկները բոլորովին էլ անիրավացի չեն, Ծա՛րլ, հարկավոր է պաշտպանել մեր հեղինակությունը: Անհրաժեշտ է, որ այս տոնախմբությանը հարկադրված լինեն ընդունե-

լու, որ Ֆրանսիայի արքունիքի տիկնայք աշխարհում ամենալավ հագնված կանայք են: Հիշեցե՛ք, որ ոչ ոք երբեք չի կարողացել ասել, թե ճշգրտորեն որտեղ է սկսում աննշան մանրուքը... Մի նոր գլխանոց, որից նրանք չեն ունենա այնտեղ,— Ազնեսը լիովին անհրավացի չէ,— դա կարող է համարժեք լինել հաղթանակի...

**ԾԱՌԼ (հոհոռում է).**— Հաղթանակ, որը նրանց չի խանգարի, որպեսզի մեզնից Օրլեանը վերցնեն, կոխեն իրենց գրպանը, զոքանչմամա՛... Նկատի ունեցեք, որ Օրլեանն ինձ չի պատկանում. իմ զարմիկի կալվածքի մի մասն է: Ես, անձնապես, հանգիստ եմ: Ինձնից ոչինչ չեն կարող վերցնել, Բուրժից բացի, որը ոչ ոքի չի հետաքրքրում. ես այլևս ոչինչ չունեմ: Բայց այնուամենայնիվ, ա՛յդ է թագավորությունը... Եվ ահա ըստ վերջին լուրերի, Օրլեանի հերն անհիծված է... Եվ ինչքան էլ ես հակահարձակման անցնեմ գլխանոցներ թափահարելով, միևնույն է, անօգուտ է...

**ԱԳՆԵՍ.**— Դու չես անդրադառնում, Ծա՛րյ, ինչքան կարող է վտանգավոր լինել թափահարված գլխանոցի պատճառած ցավը կնոջ աչքում... Ես քեզ ասում եմ, որ դքսուհի Բեդֆորդը և դքսուհի Գլուկեստերը,— և մանավանդ կարդինալի սիրուհին, որն իր դիրքից էլնելով ամենանրբագեղը պետք է լինի,— այդ գլխանոցի կարոտից ընկնելու են անկողի՛հ: Նկատի առ, որ տասներկու մատնաչափ գլխանոցն ենք դարձրել նորաձևություն... կոտոշներով հանդերձ. այսինքն՝ այժմեական գլխանոցի ընդունված տեսակի ճիշտ հակառակը... Դու քեզ հաշիվ չես տալիս, իմ փոքրի՛կ Ծարյ, թե ինչպիսի աղմուկ կարող են բարձրացնել այդ երկու կոտոշները Եվրոպայի բոլոր արքունիքներում... Դա լինելու է իսկական հեղափոխություն՝:

**ԹԱԳՈՒՀԻՆ.**— Բա փոքրիկ ծալքը՝ քամակի՛հ:

**ԱԳՆԵՍ.**— Փոքրիկ ծալքը գլուխգործո՛ց է... Ծատ սլարզ է. քունը նրանց աչքից պիտի փախչի, սիրելի՛ս... Իսկ կարդինալը, դուքս Բեդֆորդը և դուքս Գլուկեստերը, որպես հետևանք, հավաստիացնում եմ քեզ, ընկնելու են այնպիսի վիճակի մեջ, որ իրենց տրամադրության տակ մի րոպե անգամ չեն ունենալու, որ մտածեն Օրլեանի՛ մասին: **(Ծարունակում է հանդիսավոր և իմաստնությամբ լի):** Եթե քեզ հաղթանակ է պետք, Ծա՛րյ, ահա մինը քո կարողության սահմաններում, այն էլ ձրի:

**ԾԱՌԼ (քրթմնջում է).**— Զրի, ձրի... դու իմ ծիծաղն ես շարժում: Ինձ ասել ես, ինչքա՛ն արժեն այդ գլխանոցները:

ԱԳՆԵՍ.— Հատը վեց հազար ֆրանկ, սիրելի՛ս: Դա ձրի է, եթե նկատի ունենանք, որ ամբողջապես հյուսված են մարգարիտներով... Իսկ մարգարիտները դրամագլուխ ներդնելու միջոց են... Երբ գլխանոցը դուրս ընկնի նորաձևությունից, դու, երբ ուզես, կարող ես դրանք ծախել մի հրեայի և քչից-մչից փող ունենալ զորքերիդ համար:

ՇԱՐԼ (վեր է ցատկում).— Վեց հազար ֆրանկ: Բայց ես որտեղի՞ց ճարեմ վեց հազար ֆրանկ, խեղճ հիմարիկ...

ԹԱԳՈՒՀԻՆ (մեղմ).— Տասներկու հազար ֆրանկ, Շա՛րլ, որովհետև մենք երկուսս ենք. այդ մի՛ մոռացեք: Դուք հո չէիք ցանկանա, այնուամենայնիվ, որ ձեր կինը նվազ լավ հագնված լինի, քան ձեր սիրուհին:

ՇԱՐԼ (թևերը բարձրացնում է երկինք).— Տասներկու հազար ֆրանկ: Սրանք բոլորովին խելագարվե՛լ են:

ԱԳՆԵՍ.— Նկատի առ, որ մի նմուշ կա, որն ավելի պարզունակ է, բայց ես քեզ այդ մեկը խորհուրդ չեմ տալիս: Դու բաց կթողնես քո հոգեբանական էֆեկտը այդ հիմար անգլուհիների վրա: Վերջին հաշվով, դու դրա՞ն էս ձգտում:

ՇԱՐԼ.— Տասներկու հազար ֆրանկ: Դուք երազում եք, փիսիկներս: Դյունուայի գինվորներին վճարելիք գումարի կեսը՝ նրանց վեց ամսվա ոռճիկը, որ պարտք է մնացել իմ վզին: Ես ձեզ չեմ հասկանում, երբ դուք սրանց քաջալերում եք, զոքանչ-մայրիկ, դո՛ւք, որ խորապես բանիմաց կին եք:

ՄՈՒԱՆԴԱ ԹԱԳՈՒՀԻՆ.— Հենց խորապես բանիմաց կին եմ, որ սրբանց քաջալերում եմ, Շա՛րլ: Մի՞թե ձեզ երբևիցե ընդդիմադրել եմ, երբ խնդիրը վերաբերվել է ձեր բարիքին ու մեծությանը: Արդյոք երբևէ ցուցաբերել եմ նեղմտություն: Ես ձեր թագուհու մայրն եմ և ինքս եմ ձեզ ծանոթացրել Ազնեսի հետ, երբ հասկացել եմ, որ նա կկարողանա ձեզ բարիք բերել:

ԹՈՒԳՈՒՀԻՆ (փոքր-ինչ վշտացած).— Ես ձեզ խնդրում եմ, մա՛յր, դրանով մի՛ հպարտացեք:

ՄՈՒԱՆԴԱ ԹԱԳՈՒՀԻՆ.— Ազնեսը հմայիչ աղջիկ է, աղջի՛կս, և նա բացարձակապես մնում է իրեն սահմանված տեղում: Եվ մենք՝ կրկուսս, խիստ անհետաձգելի կարիք էինք զգում, որ Շարլը վճռի տղամարդ դառնալ: Եվ թագավորությունը մեզանից ավելի էր զգում դրա կարիքը: Մի քիչ վեհություն, աղջի՛կս, դուք այս պահին խորհում եք մի փոքրիկ քաղբենուհու նման... Որպեսզի Շարլը տղամարդ դառնար, նրան կին էր հարկավոր...

**ԹԱԳՈՒՀԻՆ (թունոտ).**— Ես կին էի, ինձ թվում է, դեռ մի բան էլ  
ալելի՛ նրա օրինականն ու սեփականը:

**ՅՈՒԱՆԴԱ ԹԱԳՈՒՀԻՆ.**— Ես չեմ ուզում ձեզ վիրավորել, այժի՛կ...  
բայց դուք այնքան քիչ եք: Ասում եմ այդ մասին, որովհետև ես  
ձեզ նման եմ եղել: Ծիտակ կեցվածք, արտահայտիչ գլուխ, — ա-  
վելին, քան դուք ունեք, — բայց ընդամենը այդքանը: Դրա համար  
էլ ես միշտ հանդուրժել եմ, որ արքան՝ ձեր հայրը, սիրուհիներ  
ունենա: Եղեք Ծարլի թագուհին, պահպանեցեք նրա տունը, ար-  
քայորդի ծնեք նրա համար, իսկ ինչ վերաբերում է մնացյալին,  
ինքնեդ ձեզ բեռնաթափեք անկողնային մարզանքներից: Հո  
հնարավոր չէ ամեն ինչ անել: Հետո՛ սերը, դա պարկեշտ կնոջ  
գբադմունք չէ ամենևին: Մենք այն վատ ենք անում... Իդեպ, դուք  
ինձնից շնորհակալ պիտի լինեք հետագայում. այնպես հանգիստ  
է քնել միայնակ... Նայեք, թե Ծարլն ինչքան է առնականացել  
Ազնեսի հետ ծանոթանալուց հետո: Այնպես չէ՞, Ծա՛րլ. դուք շատ  
ալելի եք առնականացել, քան կայիք:

**ԾԱՐԼ.**— Ես երեկ Արքեպիսկոպոսին ասացի՝ ո՛չ: Նա փորձեց ինձ  
ահաբեկել, մոտս ուղարկեց Լա Տրեմուային, որ սա վրաս մի լավ  
գողոցու. ինձ սպառնաց, որ կբանադրի: Խոշոր խաղի մեջ է  
մտել... Ես լավ դիմացա:

**ԱԳՆԵՍ.**— Եվ ո՞ւմ շնորհիվ:

**ԾԱՐԼ (մի քիչ շոյելով նրա ազդրը).**— Ազնեսի շնորհիվ. անկողնում  
նախապատրաստել էինք ամբողջ տեսարանը:

**ՅՈՒԱՆԴԱ ԹԱԳՈՒՀԻՆ (մոտենում է նրան).**— Ի՞նչ էր ուզում Արք-  
եպիսկոպոսը: Դուք ինձ այդ մասին չե՞ք հաղորդել:

**ԾԱՐԼ (որը ցրված շարունակում է շոյել կողքին կանգնած Ազնեսի  
ազդրը).**— Արդեն չեմ հիշում: Փարիզը տալ Բուրգոնյի դուքսին,  
կամ էլ դրա նման մի բան, մեկ տարով զինադադար ստանալու  
համար: Նկատի ունեցեք, որ դա գործնականորեն նշանակու-  
թյուն չունի: Նա արդեն Փարիզում է, դուքսը: Սակայն հարկավոր  
է սկզբունքներ ունենալ: Փարիզը Ֆրանսիան է, իսկ Ֆրանսիան  
ինձ է պատկանում: Ի վերջո, ես ջանում եմ հավատալ, որ այդ-  
պես է: Ես ասացի՝ ո՛չ: Արքեպիսկոպոսը փրփրել էր. հավանա-  
բար դուքսը նրան շատ բան է խոստացել:

**ԱԳՆԵՍ.**— Ի՞նչ պիտի պատահած լիներ, եթե, հակառակ իմ խոր-  
հուրդին, դու «այդ» ասած լինեիր, գողտրի՛կ Ծարլ:

**ԾԱՐԼ.**— Դու պիտի ունենայիր գլխացավ կամ փորացավ, ութ օր շա-



րունակ, կեղտո՛տ աղջիկ: Իսկ ես, ծայրահեղ դեպքում, Փարիզից կարող եմ հրաժարվել, բայց ոչ քեզնից...

**ԱԳՆԵՍ.—** Ուրեմն, սիրելի՛ս, քանի որ ես քեզ օգնել եմ Փարիզը փրկելու, դու հո կարող ես ինձ համար գնել այդ գլխանոցը և մի հատ էլ, նույնպես, փոքրիկ թագուհու համար, որին քիչ առաջ, առանց նկատելու, շատ տհաճ բաներ ասացիր, ինչպես միշտ, զգվելի՛ տղա... Դու հո չե՛ս ուզում, որ ես հիվանդանամ ութ օր շարունակ: Այդ ժամանակ, այնքան սիտի ձանձրանաս, որ ասելու չի...

**ԾԱՐԼ (պարտված).—** Լա՛վ: Պատվիրեցեք ձեր գլխանոցները... Եթե Արքեպիսկոպոսին «այո» չեմ ասում, ուրեմն, ձեզ պետք է ասեմ: Ծարունակ նույն կատակերգությունն է... Բայց ձեզ զգուշացնում եմ, որ բացարձակապես չգիտեմ, թե ինչպես եմ վճարելու:

**ԱԳՆԵՍ.—** Մի արժեթուղթ կստորագրես, գանձարանից կվճարեն, փոքրի՛կ Ծարլ, իսկ հետագայում մի բան կլինի: Եկեք, իմ գողտրի՛կ Պայծառափայլություն, եկեք միասին փորձենք: Վարդագո՛ւյնն եք նախընտրում, թե՞ կանաչը: Ես կարծում եմ, որ ձեր դեմքի գույնին ավելի կազդի վարդագույնը...

**ԾԱՐԼ (ցնցվում է).—** Ինչպե՛ս: Արդեն այստե՛ղ եմ:

**ԱԳՆԵՍ.—** Դու այդ գործից բան չես հասկանում, սիրելի՛ս: Բա ի՞նչ ես կարծում. որպեսզի տոնախմբությանը պատրաստ լինեին, հարկ եղավ, որ դրանք պատվիրենք մի ամիս առաջ: Բայց մենք վրստահ էինք, որ դու ասելու ես՝ այո, այնպես չէ՞, Զերդ Պայծառափայլություն: Դու կտեսնես՝ քթները կախելու ե՞ն Լոնդոնում: Դա Ֆրանսիայի համար մեծ հաղթանակ է, գիտե՛ս, Ծա՛րլ:

**Նրան աջ ու ձախից համբուրելով՝ Թագուհին և Ազնեար դուրս են վազում:**

**ԾԱՐԼ (վերադառնում է իր գահին, սուլելով).—** Իմ ծիծաղն եմ պատճառում իրենց հաղթանակներո՛վ: Լա Տրեմուայը, Դյունուան նույն բա՛նն եմ: Այնուամենայնիվ դա լինելու է մեծ հաղթանակ: Բայց և այնպես ամեն ինչ գնվում է մեր օրերում, մեծ հաղթանակները, ինչպես մնացյալը: Իսկ եթե ես բավականաչափ դրամ չունե՛մ ինքս ինձ մի մեծ հաղթանակ նվիրելու համար: Իսկ եթե Ֆրանսիան իմ դրամական միջոցներից բա՛րձր է: (**Քրթմնջալով վերցնում է իր գրապիտույքը**): Վերջը մի բան կլինի: Այնուամենայնիվ, ևս մի արժեթուղթ կստորագրեմ արքայական գանձարանի հաշվեգրամարից: Հուսով լինենք, որ առևտրականը դրանով կբավարարվի: Գանձարանը դատարկ է, բայց դա թղթի վրա չի երևում:

(Շրջվում է դեպի Յուլանդա թագուհին): Դուք էլ չե՞ք ուզում մի գլխանոց: Օգտվեք, քանի դեռ լավ եմ տրամադրված: Մի՛ քաշվեք: Այսպես թե այնպես, ստորագրությունն ոչինչ չարժե:

**ՅՈՒԼԱՆԴԱ ԹԱԳՈՒՀԻՆ (մոտենում է նրան).**— Իմ տարիքում, Շա՛րլ, ես հրաժարվել եմ գլխանոցներից: Այլ բան եմ ուզում:

**ՇԱՐԼ (հոգնած).**— Ինձնից սարքել մի մեծ արքա, գիտեմ: Ի վերջո, հոգնեցուցիչ են բոլոր այդ մարդիկ, որոնք ուզում են ինձնից սարքել մեծ արքա: Նույնիսկ Ազնետը, նույնիսկ անկողնում. պատկերացնո՞ւմ եք, թե ինչքա՞ն ծիծաղելի է... Ա՛հ, դուք նրան լա՛վ եք վարժեցրել: Ե՛րբ եք հասկանալու, որ ես ընդամենը չնչին ու խեղճ մի Վալուա<sup>15</sup> եմ, և հրաշք է հարկավոր, որ ձեր ուզածը լինի: Հասկանալի է, իմ պապիկը՝ Շարլը, մեծ թագավոր է եղել, բայց նա պատերազմից առաջ էր ապրում, երբ ամեն ինչ անհամեմատ նվազ թանկ էր քան հիմա: Եվ ի դեպ, նա հարուստ էր... Հայրս ու մայրս եղած-չեղածը կերան... Չգիտեմ՝ արժեզրկման քանի ալիք անցավ Ֆրանսիայի վրայով, և ես այլևս միջոցներ չունեմ մեծ թագավոր դառնալու. անա այդպե՛ս: Ինչ կարողանում եմ, այն էլ անում եմ դուր գալու համար այդ գողտրիկ պոռնիկին՝ Ազնետին, որից չեմ կարողանում հրաժարվել: Բայց մեր մեջ մնա, միայն դրամական միջոցները չեն, որ ինձ պակասում են. քաջությունն էլ է պակասում: Չափազանց հոգնեցուցիչ է քաջությունը և չափազանց վտանգավոր բո՛ի մարդկանցով լեցուն այս աշխարհում, որի մեջ ապրում ենք մենք: Դուք գիտե՞ք, որ այդ չաղիկ խոզը՝ Լա Տրեմուայը, անցյալ օրը գազազած թուրը դուրս քաշեց պատյանից: Մենք միայնակ էինք. ոչ ոք չկար, որ ինձ պաշտպաներ... Ախր նա կարող էր նաև ինձ մի լավ հասցրնել այդ հո՛ի կոպալը: Ես հազիվ ակնթարթը որսացի գահի ետևը ցատկելու համար: Պատկերացնո՞ւմ եք, թե ինչ օրի ենք հասել. թուր են քաշում թագավորի վրա: Ես Գլխավոր Հրամանատարին պետք է կանչած լինեի նրան ձերբակալելու համար: Դժբախտաբար, ինքն էր Գլխավոր Հրամանատարը, իսկ ես էլ այնքան վստահ չեմ, որ թագավոր եմ... Այդ է պատճառը, որ բոլորն ինձ հետ այդպես են վարվում. գուցե նրանք իմանում են, որ ես ընդամենը բիջ եմ:

**ՅՈՒԼԱՆԴԱ ԹԱԳՈՒՀԻՆ (մեղմ).**— Այդ դուք եք և միայն դուք եք, որ այդ կրկնում եք շարունակ, Շա՛րլ...

**ՇԱՐԼ.**— Երբ տեսնում եմ նրանց՝ այդ բոլորին, օրինական որդու իրենց մոռոթներով, ճշմարիտ եմ ասում, ես ինձ բի՛ջ եմ զգում:

Սա ի՞նչ ժամանակներ են, որ պետք է մարմնամարզության առաջին մրցանակը շահել, որ քեզ կարևոր մարդու տեղ դնեն: Կամ պետք է թափահարելիս լինես ութ լիվրանոց<sup>16</sup> մի թուր ու թրև գաս, Աստված գիտի, թե ինչպիսի քաշ ունեցող զրահը մեջքի՞դ... Երբ ինձ հազցնում են իմ զրահը, տեղիցս շարժվել չեմ կարողանում ամենևին: Այ թե ինչ օրի՞ եմ ընկել: Եվ հարվածներ ընդհանրապես չեմ սիրում: Ոչ հասցնել, ոչ ստանալ: **(Հանկարծ խրփում է ոտին, երեխայի նման):** Եվ հետո ես վախենում եմ, է՛հ: **(Շրջվում է դեպի նա, չարացած):** Էլ ի՞նչ եք ուզում խնդրել ինձնից, որ վեր լինի իմ ուժերից:

**ՅՈՒԱՆԴԱ ԹԱԳՈՒՀԻՆ.**— Որ դուք, Ծա՛րլ, տեսակցության արժանացնեք այդ կույսին, որը մեզ մոտ է եկել Վոկուլյորից: Ասում է, թե ինքն առաքված է Աստծո կողմից: Ասում է, որ եկել է Օրլեանն ազատագրելու: Արդեն ժողովրդի մեջ միայն նրա մասին են խոսում, անասհման հույսով սպասում են, որ դուք տեսակցությունն նշանակեք նրան:

**ՇԱՐԼ.**— Ուրեմն, դուք գտնում եք, որ ես բավականաչափ ծիծաղելի չե՞մ իմ այս ներկա դրությամբ: Տեսակցությունն նշանակել մի ոգեշնչյալ փոքրիկ գեղջկուհու՞: Իրոք, զոքանչ-մայրիկ, խորապես բանիմաց կին լինելով հանդերձ, դուք ինձ հիասթափեցնում եք...

**ՅՈՒԱՆԴԱ ԹԱԳՈՒՀԻՆ.**— Ես արդեն Ազնեսին ձեզ եմ նվիրաբերել, Ծա՛րլ, հակառակ իմ մայրական շահերին, ձեր օգտի համար: Հիմա ես ձեզ խնդրում եմ, որ վերցնեք այդ կույսին... Այդ աղջիկն ինչ-որ արտասովոր բան ունի կամ առնվազն բոլորն այդ կարծիքին են, և դա է կարևորը:

**ՇԱՐԼ (սրտնեղած).**— Ես չեմ սիրում կույսերին... Դուք էլի ասելու եք, որ ես բավականաչափ առնական չեմ, բայց կուսությունն ինձ ահաբեկում է... Եվ հետո Ազնեսը դեռ իմն է ու դեռևս ինձ դուր է գալիս... Ես ինձ թույլ չեմ տալիս հանդիմանել, զոքանչ-մայրիկ, բայց թագուհի լինելով հանդերձ, դուք ձեզ համար տարօրինակ կոչում եք ընտրել...

**ՅՈՒԱՆԴԱ ԹԱԳՈՒՀԻՆ (ժպտում է).**— Դուք ինձ չհասկացաք, Ծա՛րլ: Կամ ձևացնում եք, որ չեք հասկանում: Ես խնդրում եմ այդ գեղջկուհուն բնդունեք ձեր թագավորական խորհրդում: Ոչ ձեր ակոյնում:

**ՇԱՐԼ** Ուրեմն, հակառակ այն խորը հարգանքին, որ տածում եմ ձեր նկատմամբ, զոքանչ-մայրիկ, պիտի ասեմ, որ դուք բոլորովին խելագարվե՛լ եք: Իմ թագավորական խորհրդում, Արքեպիս-

կոպոսի և Լա Տրեմուայի հետ, որն իրեն այնպես է զգում, կարծես դուրս եկած լինի Յուպիտերի ազդրից<sup>17</sup>, ես պիտի ընդունեմ այդ շնչին, փոքրիկ գեղջկուհու՞ն: Ի՞նչ է, դուք ուզում եք, որ նրանք իմ աչքե՞րը հանեն:

**ՅՈՒԼԱՆԴԱ ԹԱԳՈՒՀԻՆ (մեղմ).**— Ես այն կարծիքին եմ, որ դուք բոլորդ հատկապես մի գեղջկուհու կարիքն ունեք՝ ձեր խորհրդի նիստերում: Մեծերն են, որոնք ղեկավարում են թագավորությունը, և դա է արդարը. Աստված նրանց է տվել այդ իշխանությունը... Սակայն չուզեմալով խառնվել Նախախնամության որոշումները քննելու գործին, երբեմն զարմացած եմ մնում, որ Նա միաժամանակ այդ մեծերին չի տվել պարզության և խորը բանիմացության ավելի լավ չափազանցողություն, ինչպես որ նա այդ արել է՝ շուայրերն բաշխելով իր ամենախոնարհ արարածներին:

**ԾԱՐԼ (հեզմուն է).**— Չի տվել և քաջություն՞ն...

**ՅՈՒԼԱՆԴԱ ԹԱԳՈՒՀԻՆ (մեղմ).**— Եվ քաջություն, Ծա՛րլ:

**ԾԱՐԼ.**— Վերջին հաշվով, զորքանչ-մայրիկ, ինչքան որ հասկացա, դուք այն տեսակետին եք, որ կառավարությունը հարկավոր է տրամադրել ժողովուրդների՞ն: Այդ բարի ժողովուրդների՞ն, որոնք մարմնավորում են բոլոր առաքինությունները: Դուք գիտե՞ք, թե ինչ է անում այդ բարի ժողովուրդը, երբ հանգամանքները նրան տալիս են իշխանությունը: Դուք կարդացե՞լ եք բռնակալների պատմությունը:

**ՅՈՒԼԱՆԴԱ ԹԱԳՈՒՀԻՆ.**— Ես Պատմությունից բոլորովին անտեղյակ եմ, Ծա՛րլ: Իմ ժամանակներում թագավորի աղջիկները միայն մանել էին սովորում, ինչպես մյուսները:

**ԾԱՐԼ.**— Դե, ես գիտեմ Պատմությունը՝ սարսափների և բամբասանքների այդ շարանը, և երբեմն ժամանակս անցկացնում եմ պատկերացնելով ապագա իրադարձությունների ընթացքը, մինչ դուք կարծում եք, որ ես զբաղված եմ բիլբոկե խաղալով... Փորձելու եմ այն, ինչ դուք առաջարկում եք: Ամեն ինչ փորձելու եմ: Ժողովրդի ծոցից դուրս եկած մարդիկ դառնալու են թագավորությունների տերերը, մի քանի դար,— գիսաստղի անցնելու ժամանակամիջոցը երկնքի վրա,— և լինելու է կոտորածների և ամենաճիվաղային սխալների ժամանակաշրջանը: Եվ վերջին դատաստանի օրը, երբ հաշվեկշիռ են անելու, պարզվելու է, որ նրա իշխաններից ամենաալյասերվածը, ամենաքմահաճը նվազ թանկ է նստել աշխարհի համար, քան վերջին հաշվով, այդ առաքինի մարդկանցից որևէ մեկը: Ժողովրդի գլխին ղեկավար դարձրեք

դմբուզով մի խիզախ տղայի, հե՛նց իրե՛նց ծոցից դուրս եկած, և որն ուզե՛նա ինչ գնով էլ որ լինի, երջանկացնել նրանց՝ իմ ֆրանսիացիներին, և դուք կտեսնեք, որ նրանք ի վերջո աստուայու են իրե՛նց փոքրիկ Շարլին իր ծուլությամբ ու բիլբոկեով հանդերձ ... Ես, գո՛նե, ընդհանուր գաղափարներ չունեմ երջանկությունը կազմակերպելու վերաբերյալ: Նրանք դեռևս չեն կուսհում, թե դա ինչպիսի անգնահատելի հատկությունն է:

**ՅՈՒԼՆԴԱ ԹԱԳՈՒՀԻՆ.**— Դուք պետք է դադարեցնեք ձեր այդ բիլբոկեի խաղը, Շա՛րլ, և գահին թարս նստելու այդ սովորություն՝նը. դա թագավորական չէ՛:

**ՇԱՐԼ.**— Ինձ հանգիստ թողեք, վերջապես: Երբ ես վրիպում եմ, գո՛նե մատիս կամ քթիս է ընկնում գնդակը: Դա ոչ ոքի ցավ չի պատճառում, միայն ինձ... Թող որ ես մի ձեռքով գունդը վերցնեմ, մյուս ձեռքով գավազանը և ուղիղ նստեմ իմ գահին, և ինքս ինձ լուրջ բանի տեղ դնեմ, ապա ամեն անգամ, երբ անեմ որևէ հիմարություն, ձեր բոլորիդ քթին է ընկնելու գունդ-գնդակը: **(Ներս են մտնում Արքեպիսկոպոսը և Լա Տրեմուայը: Չայն է տալիս նրանց գահի վրա իրեն պահելով արժանավայել, ինչպես որ արտահայտվեց այդ մասին քիչ առաջ):** Արքեպիսկոպո՛ս, Գլխավոր Հրամանատար՛ր, ճիշտ ժամանակին եք գալի՛ս: Ես դեկավարելու գործի վրա եմ: Տեսնո՞ւմ եք ձեռք եմ բերել գունդը և Արդարության գավազանը:

**ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԸ (լռոնետը տանելով աչքին).**— Բայց դա բիլբոկե է:

**ՇԱՐԼ.**— Նշանակություն չունի, Չերդ Վեհանձնություն. ամեն ինչ խորհրդանիշ է. Եկեղեցու բարձրաստիճան պաշտոնյային չէ, որ ես այդ բանը պիտի սովորեցնեմ: Տեսակցություն՛ն եք խնդրել, Չերդ Վեհանձնություն՛ն, որ այսպես հանկարծակի հայտնվեցիք իմ առաջ:

**ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԸ.**— Չկատակենք, պարո՛ն: Ինձ հայտնի է, որ հաարակական կարծիքի մի հատվածը, որը շարունակ գրգռվում ու խարդախում է, հիմա փորձում է ձեզ պարտադրել, որ տեսակցությունն նշանակեք այդ կույսին, որի մասին բոլորը խոսում են վերջերս: Չերդ Վեհանձնություն՛ն, Գլխավոր Հրամանատարը և ես ինքս եկել ենք ձեզ ասելու, որ այդ մի բանը մեզ համար երբև՛ր չի կարող լինել ընդունելի:

**ՈՒՄՄ (Յուլանդա Թագուհուն).**— Ձեզ ի՞նչ էի ասում: Պարոններ՛ր, ես մաշի կնատեմ ձեր խորհուրդների հետ, որոնց համար և շնորհակալ եմ: Ես միջոցներ ձեռք կտանեմ, որ հետագայում մի նա-

խաձեռնությունն լինի այդ գործի կապակցությամբ: Դուք ազատ եք: Տեսակցությունն ավարտված է:

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԸ.— Մեկ անգամ ևս, Ձերդ Վեհանձնություն'ն. մենք խաղ չենք անում:

ԾԱՐԼ.— Տեսնո՞ւմ եք, այս մեկ անգամը, որ խոսում եմ որպես թագավոր, բոլորը կարծում են, թե ես խաղ եմ անում: **(Նորից պատկում է գահին իր բիլբոկեով հանդերձ):** Ուրեմն, թողեք, որ հանգիստ խաղ անեմ...

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԸ.— Այդ աղջկա հրաշագործ համբավը արդեն այստեղ էր հասել իրենից առաջ, Ձերդ Վեհանձնություն'ն: Մի անբացատրելի մտամոլություն: Երևի՛ նրա մասին արդեն խոսում և սպասում են շրջապատման մեջ գտնվող Օրլեանում: Աստծո ձեռքը նրան առաջնորդում է... Աստված որոշել է նրա ձեռքով ազատագրել Ֆրանսիայի թագավորությունը և հարկադրել անգլիացիներին ու մյուս թափթփուկներին, որ ետ անցնեն ծովից այն կողմը: Աստված պիտի ուզենա, որ նրան արժանացնենք ձեր արքայական տեսակցությանը... Ես չգիտեմ, թե ինչու բոլորն ուզում են, որ Աստված խառնվի իրենց գործերին... Եվ բնականաբար, հրաշքներ է գործում փոքրիկ քաճը. հակառակն էր, որ ինձ պիտի զարմացներ: Մի զինվոր չգիտեմ ինչ հորջորջեց այդ աղջկան, երբ նա Ծիկոն էր հասնում: Եվ այդ աղջիկը նրան ասաց. «Դու իզուր հայհոյում ես, դու, որ շուտով պիտի հայտնվես մեր սուրբ Տիրոջ առաջ...»: Մի ժամ անց, այդ ապուշն անզգուշությունից ընկնում է հասարակական զուգարանի ջրհորի մեջ և խեղդվում է: Մի հարբեցողի սայթաքումն ավելի շատ բան արեց այդ աղջկա համբավի համար, քան Դյունուայի մի փառավոր հաղթանակը նրա համար: Բոլորը միաձայն են՝ սկսած վերջին շնապահից մինչև ձեր արքունիքի ամենաստուգնակարգ տիկիճները, ինչպես տեսնում եմ. միայն նա՛ այդ աղջիկը կարող է մեզ փրկել: Անհեթեթություն: **(Շարլը դեմքով դեպի գահի թիկնակը նստած՝ զբաղված է իր բիլբոկեի խաղով):** Ձերդ Վեհանձնություն'ն, ես ձեզ հետ քննում եմ մեր թագավորության ամենալուրջ խնդիրներից մեկը, իսկ դուք բիլբոկե եք խաղում:

ԾԱՐԼ.— Ձերդ Վեհանձնություն'ն, եկեք պայմանավորվենք: Կամ ուզում եք, որ ես բիլբոկե խաղամ, կամ ուզում եք, որ ես կառավարեմ: **(Ուղղվում է):** Ուզո՞ւմ եք՝ ես կառավարեմ:

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԸ **(վախեցած)**.— Ձեզնից այդքանը չի պահանջվում: Ուզում ենք միայն, որ գնահատեք մեր ջանքերը...

**ՇԱՐԼ.**— Ես դրանք գնահատում եմ, ես արժեքավորում եմ և գտնում եմ, որ բոլորովին ավելորդ են: Բոլորն ուզում են, որ ես տեսակցությունն նշանակեմ այդ աղջկան, այնպես չէ՞:

**ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԸ.**— Ես այդ չասացի, Ջերդ Վեհանձնություն'ն:

**ՇԱՐԼ.**— Անձամբ ես հետաքրքրությամբ չեմ տառապում, դուք այդ գիտեք: Նոր դեմքերն ինձ ձանձրացնում են, և առհասարակ միշտ էլ անչափ շատ են լինում ծանոթները... Եվ հետո Աստծո կողմից առաքվածները, հազվադեպ է, որ զվարճալի են լինում: Բայց ես ուզում եմ լինել բարի թագավոր և բավարարություն տամ իմ ժողովուրդներին: Ես տեսնելու եմ այդ ոգեշնչյալին հենց նրան շիրթության մեջ զգելու համար: Դուք նրա հետ խոսե՛լ եք, Արքեպիսկոպոս:

**ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԸ (բարձրացնում է ուսերը).**— Ես ուրիշ բան ունեմ անելու, Ջերդ Վեհանձնություն'ն. թագավորության գործերի բեռն իմ ուսերին է:

**ՇԱՐԼ.**— Լա՛վ: Ես ուրիշ ոչինչ չունեմ անելու, բիլբոկե խաղալուց բացի: Ես նրան, ուրեմն, տեսնելու եմ ձեզ բեռնաթափելու համար այդ հոգսից, և խոստանում եմ ձեզ անկեղծորեն հայտնել իմ տրպավորությունը: Դուք կարող եք ինձ վստահել, Ջերդ Վեհանձնություն'ն: Դուք ինձ սրտանց քամահրում եք, ոչ մի տեսակի հարգանք չունեք իմ նկատմամբ. բայց զոհե գիտեք, որ ես թեթևամիտ մարդ եմ: Եվ այդ թերությունը այս պարագայում պետք է, որ ձեր կողմից մեկնաբանվի որպես անգնահատելի հատկություն: Այն ամենը, ինչ մի քիչ լուրջ բնույթ է կրում, ինձ շատ արագ ձանձրացնում է: Ես այդ աղջկան տեսակցությունն եմ նշանակելու, և եթե թագավորության փրկության մասին խոսելիս, նա մեջս ցանկություն արթնացնի իրեն ունկնդրելու,— մի բան, որ դեռևս ոչ ոքի չի հասցողվել. առանց ինձ հորանջել տալու,— ապա դա կնշանակի, որ նա իրոք կարողանում է հրաշքեր գործել...

**ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԸ (քրթմնջում է).**— Մի գեղջուկի աղջիկ՝ արքայի՛ մոտ...

**ՇԱՐԼ (պարզորեն).**— Օ՛հ, դուք լավ գիտեք, որ ես տեսակցությունն եմ նշանակում ամեն տեսակի մարդու հետ... Ես ատը չեմ ասում պարոն Լա Տրեմուայի մասին, որն ուղղակի դուրս է եկել Յուպիտերի սողորից... Բայց ինքներդ, Ջերդ Վեհանձնություն'ն, լսել եմ, որ գիներլաճառի թոռ եք դուք... Քավ լիցի, ես այդ ասում եմ ոչ որպես սարսավանք: Դրանից էլ բնական բա՛ն: Վերջին հաշվով, դուք բահանայությանն եկաք գինու շշերի արանքով: Եվ ինձ դուք

այդ մասին հաճախ կրկնել եք. բոլորովին հաստատ չի կարելի ասել, որ ես արքայի որդի եմ: Ուրեմն, եկեք շխաղանք կաստաների մանր խաղը. բոլորս մեզ կզցենք ծիծաղելի վիճակի մեջ... Եկեք, գոքանչ-մայրիկ, ես ցանկություն ունեմ մի լավ օյին խաղալու այդ փոքրիկ կույսի գլխի՛ն... Իմ մանկավիճկներից մեկին կհագցնենք արքայական ծիրանի տարազներից մեկը՝ նվազ ծակծրկվածը. նրան կնստեցնենք գահին, որտեղ նա հաստատ, ավելի պատկատելի կլինի, քան թե ես եմ հիմա: Ինչ վերաբերում է ինձ, ապա ես կխառնվեմ հավաքվածներին... Աստծո կողմից առաքված աղջնակի փոքրիկ ճառը՝ մի մանկավիճկի՛... Ծայրահեղ գալեշտական պիտի լինի:

**Նրանք դուրս են եկել:**

**ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԸ (Լա Տրեմուային).**— Թողնե՛նք, որ գործի: Նա այդ խաղի տեղ է անցկացնում, ինչպես մնացյալը: Հազիվ թե շատ վտանգավոր լինի: Եվ հետո՝ այն փաստը, որ թագավորը նրան արժանացրել է տեսակցության, գուցե և հանգստացնի բորբոքված ուղեղները: Տասնհինգ օրից սիրահարվելու ենք Աստուծո կողմից առաքված մի ուրիշ աղջկա և մոռացած կլինենք այս մեկին:

**ԼԱ ՏՐԵՄՈՒԱՅ.**— Արքեպիսկոպո՛ս, ես բանակն եմ դեկավարում: Եվ այն ամենը, ինչ կարող եմ ասել այն է, որ պաշտոնական բժրշկությունն այժմ ասել է իր վերջին խոսքը: Հասել է այն ժամանակաշրջանը, երբ վխտում են հեքիմները, բուժակները, շառլատանները... վերջապես նրանք, որոնց անվանում են Աստուծոց առաքվածներ: Մենք ի՞նչն ենք վտանգում, որ...

**ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԸ (մտահոգ).**— Գլխավոր Հրամանատա՛ր, երբ գործի մեջ Աստուծո մատը խառն է, միշտ էլ վտանգելու հավանականություն կա: Եթե Նա իրոք առաքել է այդ աղջկան, եթե Նա սկսել է մեզնով զբաղվել, մեր գլխացավանքների վերջը չի գա: Դուրս կարծենք մեր մանր առօրեականից, մի չորս-հինգ ճակատամարտ կշահենք, և հետո կսկսվեն սկանդալներն ու բարդությունները: Կառավարության և Եկեղեցու գործչի իմ հին փորձառությունն ինձ սովորեցրել է, որ երբեք չպետք է գրավել Աստուծո ուշադրությունը: Պետք է շատ փոքրանալ, Գլխավոր Հրամանատա՛ր, պետք է շատ փոքրանալ: **(Պալատականներն իրենց տեղերն գրավում են թագուհիների հետ միասին: Մի Մանկավիճկ զբաղեցնում է գահը, մինչ Ծարը խառնվել է հավաքվածներին: Արքեպիսկոպոսը խոսքը վերջացնում է ցածրաձայն):** Առավել ևս,



որ Աստուծո հետ գործ ունենալիս, ամենասարսափելին այն է, որ երբեք չես իմանա՝ գուցե դա սատանայի մի խաղն է... Վերջապես, մեկի միջոցով է, թե մյուսի՝ զառերը գցված են: Ահա՛ նա:

**Բոլորը հավաքվել են գահի շուրջը, որտեղ նստած է փոքրիկ Մանկլավիկը: Ծարը հավաքվածների մեջ է: Ժաննան մտնում է բոլորովին միայնակ, փոքրիկ-մոքրիկ, բոլորովին գորշ-աննշան, իր հասարակ զգեստի մեջ, զրահների և բարձրադիր գլխանոցների արանքում... Մի կողմ են քաշվում՝ ճանապարհ տալով նրան, որ գահին մոտենա: Նա գալիս է առաջ՝ օնրադրելու, տատանվում է, կասկարմիր կտրած, նայելով Մանկլավիկին...**

**ՅՈՒԱՆԴԱ ԹԱԳՈՒՀԻՆ (շնչում է նրա ականջին).— Պետք է ծնրարել, աղջի՛կս, արքայի առաջ:**

Ժաննան շրջվում է դեպի Յոլանդա թագուհին, ցնորված նայում է նրան՝ համարյա ցավագին արտահայտություն իր դեմքին, հետո հանկարծ նայում է բոլոր այդ լուռ մարդկանց, որոնք աչքերով հետևում են նրան: Ժաննան լուռ գալիս է առաջ դեպի հավաքվածները, որոնք մի կողմ են քաշվում: Նա մոտենում է Ծարլին, որը փորձում է խույս տալ: Երբ Ծարը տեսնում է, որ Ժաննան ընդհուպ մոտեցել է, ինքը սկսում է համարյա վազել մյուսների ետևում անհետանալու համար: Սակայն Ժաննան, նույնպես համարյա վազելով, հետևում է նրան, դեմ է տալիս մի անկյունի և ծնկի է ընկնում նրա առաջ:

**ՕԱՐԼ (լուռությամբ կաշկանդված).— Ի՞նչ եք ուզում ինձնից, օրիո՛րդ: ԺԱՆՆԱ.— Սիրելի Արքայազն, իմ անունն է Ժաննա Կույս: Երկնային թագավորը իմ բերանով ձեզ ասում է, որ դուք պետք է օծվեք թագադրվեք Ռեյմս քաղաքում, և լինելու եք Երկնային թագավորի տեղապահը, որը և է Ֆրանսիայի արքան:**

**ՕԱՐԼ (կաշկանդված).— Հը՛... Ծատ լավ է, օրիո՛րդ, բայց Ռեյմս քաղաքը, ինչքան գիտեմ, անգլիացիների ձեռքին է: Ինչպե՞ս գրանանք այնտեղ:**

**ՄԱՆՆԱ (դեռևս ծնկաշոք).— Նրանց պարտության մատնելով, սիրելի՛ Արքայազն, բռնի ուժով, իհարկե: Մենք կսկսենք Օրլեանից և նետո կգնանք Ռեյմս:**

**ԻՍՏՐԵՄՈՒԱՅ (մոտենում է).— Սակայն, ցնդա՛ծ աղջիկ, մի՞թե հենց այդ չէ, որ փորձում են անել մեր մեծ զորավարները ամիսներ արումակ: Ես նրանց առաջնորդն եմ, այդ գործից հասկանում եմ: Եվ մերոնք, այնուամենայնիվ, չեն հասնում հաջողության:**

**ՄԱՆՆԱ (վեր է կացել).— Ես կհասնեմ հաջողության:**

**ԻՍՏՐԵՄՈՒԱՅ.— Կուզենայի իմանալ, թե ինչպե՛ս:**

ԺԱՆՆԱ.— Օգնությամբ մեր Տեր Աստծո, որն ինձ առաքեց:

ԼԱ ՏՐԵՄՈՒԱՅ.— Որովհետև Աստված, ըստ վերջին լուրերի, որոշել է մեզ հաջողություն տալ, որ մենք ետ գրավենք Օրլեանը:

ԺԱՆՆԱ.— Այո՛, տյա՛ր, և անգլիացիներին դուրս շարտենք Ֆրանսիայից:

ԼԱ ՏՐԵՄՈՒԱՅ (հռհռում է).— Այ քեզ լավ մտադրություն՛ն: Բայց Ինքն անձամբ չի՞ կարող իրականացնել իր ցանկությունը: Նա քո կարի՞քն էր զգում:

ԺԱՆՆԱ.— Այո՛, տյա՛ր:

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԸ (մոտենում է նրան).— Չափե՛լ աղջիկ... (Ժաննան նրան տեսնում է, ծնրադրում ու համբուրում է քղանցքի ծայրը: Արքեպիսկոպոսը դեմ է տալիս նրան իր ադամանդակոտ մատանին, որ նա այդ էլ համբուրի և մի շարժումով նրան նորից կանգնեցնում է ոտի): Դուք ասում եք, որ Աստված ուզում է ազատագրել Ֆրանսիայի թագավորությունը: Եթե այդ է Նրա կամքը, ապա զինվորականների կարիքը չունի ամենևին...

ԺԱՆՆԱ (ուղիղ երեսին).— Օ՛, Ձերդ Վեհանձնություն՛ն, Աստված ծուլերին չի սիրում: Անհրաժեշտ է, որ զինվորականները սլատերազմելով հասցնեն մի թունդ հարված, և նա կտա հաղթանակը:

ԾԱՐԼ (որն այլալված նայում է նրան, հանկարծակի հարցնում է).— Դուք ինձ ինչպե՞ս ճանաչեցիք: Իմ գլխին թագ չկար...

ԺԱՆՆԱ.— Սիրելի Արքայա՛զն, այդ չնչին էակը, որ ձեր գահին է, ձեր թագով ու ծիրանագույն տարազով, ինքնին սիրուն կատակ է, բայց հո պարզ երևում է, որ նա ոչնչություն է...

ԾԱՐԼ.— Դուք սխալվում եք, օրհո՛րդ, նա մի շատ մեծ իշխանի որդին է...

ԺԱՆՆԱ.— Ես չգիտեմ, ովքեր են մեծ իշխանները... Նա, այնուամենայնիվ, ոչնչություն է ձեր համեմատությամբ, դուք, որ մեր թագավորն եք:

ԾԱՐԼ (այլալված).— Քեզ ո՞վ ասաց, որ ես էի քո թագավորը:

ԺԱՆՆԱ.— Աստված, սիրելի՛ արքայազն, որը ձեզ նշանակել է ի սկզբանե անդի, ձեր հոր և պապի միջով, արքաների ամբողջ շարանի միջով, որպեսզի լինեք Նրա թագավորության տեղապահը:

**Արքեպիսկոպոսը և Լա Տրեմուայը ջղային նայվածքներ են փոխանակում: Արքեպիսկոպոսը գալիս է առաջ:**

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԸ.— Ձերդ Վեհանձնություն՛ն, այս աղջկա պատասխաններն իրոք հետաքրքիր են և հիրավի որոշակիորեն բանիմաց: Բայց այսպիսի նրբագույն ասպարեզում հարկ է լինել շըր-

շահալաց, ինքն իրեն ապահովել խստագույն զգուշությամբ: Իմաստուն դոկտորների մի հանձնախումբ պետք է նրան երկար հարցապնդի և քննի... Այնժամ, Արքայական խորհուրդում մենք կփաստագրենք նրանց հաշվետվությունը և կորոշենք, թե արդյոք պատշա՞ճ է ավելի երկարատև տեսակցության արժանացնել այս աղջնակին: Անհրաժեշտություն չկա, որ նա այսօր ձեզ ավելի շատ անհանգստացնի: Ես ինքս առաջինը նրան կենթարկեմ հարցաքննության: Եկե՛ք, աղջի՛կս:

ԾԱՐԼ.— Ա՛հ, ո՛չ, սա ի՞նչ բան է: **(Կանգնեցնում է Փաննային):** Դուք ձեր տեղից չշարժվեք: **(Շրջվում է դեպի Արքեպիսկոպոսը, բռնելով Փաննայի ձեռքը, քաջությամբ ներշնչվելու համար):** Նա այդ ի՞նչ ճանաչեց: Նա այդ ի՞նչ դիմեց: Ես ուզում եմ, որ դուք ինձ մենակ թողնեք նրա հետ, բոլորդ:

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԸ.— Սակայն Ձերդ Պայծառափայլություն, անհարիր է, որ մի բռպեից մյուսը... Ձեր իսկ ապահովության հոգսը...

ԾԱՐԼ **(այդ բառի վրա մի քիչ վախենում է, բայց նայում է Փաննային և նորից տիրապետում է ինքն իրեն)**.— Ես եմ միակ պատասխանատուն: **(Արտասանում է):** Իմ հոր և պապի միջով և արքաների ամբողջ շարանի միջով... **(Փաննային աչքով է անում):** Այդպես է, որ կա՞... **(Շրջվում է դեպի մշուսները, անհողորդ):** Դո՛ւրս եկեք, պարոններ՛ր. արքան հրամայում է: **(Բոլորը խոնարհվում են և դուրս են գնում: Ծարլը մի ակնթարթ պահպանում է իր ազնրվատոհմիկ կեցվածքը, հետո հանկարծ ծիծաղից պոռթկում է):** Դո՛ւրս եկան: Դու շմելու աղջի՛կ ես: Սա հենց առաջին անգամն է, որ ինձ հաջողվում է նրանց հնազանդեցնել... **(Նայում է նրան, հանկարծակի տազնապած):** Այնուամենայնիվ, սխալ է, չէ՞, այն ինչ որ նա փորձեց ինձ հուշել: Դու հո չե՞ս եկել ինձ սպանելու: Դանակ չունե՞ս քո փեշի տակին: **(Նայում է նրան ժպտալով, ապա դառնում է ծանրակշիռ):** Ո՛չ: Դու ազնիվ տեսք ունես: Այս խաբեբաների մեջ, իմ արքունիքում, ես, իվերջո, մոռացա, թե ինչպիսին էր լինում ազնիվ տեսքը... Իմ թագավորության մեջ շա՛տ են նրանք, ովքեր քեզ նման հաճելի դեմք ունեն:

ԴԱՆՆԱ **(շարունակում է ժպտալ, ապա ծանրակշիռ)**.— Ծատ, շատ են, սը՛ր:

ԾԱՐԼ.— Միայն թե ես ձեզ երբեք չեմ տեսնում... Բո՛ի գյաղաներ, քահանաներ կամ պոռնիկներ,— ահա թե ովքեր են ինձ շրջապատում .. **(Տիրապետում է ինքն իրեն):** Ես ունեմ իմ փոքրիկ թագուհին. շատ հաճելի աղջիկ է, բայց հիմար է... **(Բարձրանում**

է գահի վրա, ոտերն՝ արմնկակալին, հառաչում է): Լա՛վ: Հիմա պիտի սկսես ինձ ձանձրացնել: Պիտի սկսես ինձ ասել, որ ես պետք է դառնամ մեծ թագավոր, դու ևս...

**ԺԱՆՆԱ (մեղմ).**— Այո՛, Ծա՛րլ:

**ԾԱՐԼ (ուղղվում է, ունեցավ մտահղացում).**— Լսի՛ր, անհրաժեշտ է, որ գոնե մի ժամ միասին մնանք, որպեսզի տպավորություն թողնենք նրանց վրա... Եթե մի ժամ շարունակ դու խոսես Աստուծո և Ֆրանսիայի թագավորության մասին, ես հաստատ չեմ դիմանա... Քեզ առաջարկություն ունեմ անելու: Բոլորովին ուրիշ բանի մասին պիտի խոսենք այս ժամանակամիջոցում: **(Հանկարծակի հարցնում է):** Թղթախաղից գաղափար ունե՞ս:

**ԺԱՆՆԱ (լայն բացելով աչքերը).**— Ես չգիտեմ դա ինչ բան է:

**ԾԱՐԼ.**— Ծատ գվարճալի խաղ է, որ հորինել են հայրիկի համար, որպեսզի նրան զբաղեցնեին՝ հիվանդ ժամանակ: Կտեսնես, հիմա քեզ կսովորեցնեմ: Պատահել է, որ դրանից էլ ձանձրանամ, ինչպես ամեն ինչից, քանի որ ահագին ժամանակ է, որ ես դրանով զբաղվում եմ, բայց դու, որ սովոր չես դեռևս, հաստատ քեզ շատ կգվարճացնի: **(Գնում, քրքրում է մի գանձատուփ):** Հույս ունեմ, որ խաղաթղթերը չեն գողացել ինձնից: Եվ գիտե՛ս, թանկ արժեն, շատ: Միայն բացառապես մեծ իշխաններն են, որ ունեն: Իմը հայրիկից է մնացել: Ես երբեք այնքան դրամ չեմ ունեցու մի ուրիշը գնելու... Եթե այդ խոզերը գողացած լինե՞ն... Ո՛չ, ահա գտա: **(Վերադառնում է խաղաթղթերով):** Դու գիտե՛ս, որ հայրիկը խելագար էր: Օրեր կան, երբ կուզե՞նայի լինել նրա որդին վատահայություն ձեռք բերելու համար, որ ես իսկական թագավորն եմ... Օրեր էլ կան, որ կնախընտրեի քիչ լինել, որպեսզի նրա նման չխելագարվեմ երեսուն տարեկանի սահմաններում:

**ԺԱՆՆԱ (մեղմ).**— Իսկ երկուսի արանքում ի՞նչ պիտի նախընտրեիր, Ծա՛րլ:

**ԾԱՐԼ (շրջվում է դեպի նա՝ անակնկալի եկամ).**— Վա՛հ, ինձ հետ դո՛ւ-ով ես խոսում: Այսօր այնքա՛ն շատ զարմանալի-ծիճաղելի բաներ տեղի ունեցան: Ծատ գվարճալի օր է: Ինձ թվում է, որ ես այսօր չեմ ձանձրանալու. հիանալի՛ է:

**ԺԱՆՆԱ.**— Հիմա դու այլևս երբեք չես ձանձրանալու, Ծա՛րլ:

**ԾԱՐԼ.**— Կարծո՞ւմ ես: Թե ի՞նչ պիտի նախընտրեի, ասում ես: Էհ, այն օրերին, երբ քաջությունս բռնում է, նախընտրում եմ խելագարվելու դիսկին ենթարկվել և լինել ճշմարիտ թագավորը: Իսկ

այն օրերին, երբ քաջությունն ինձ լքում է, նախընտրում եմ ամեն ինչ գրողի ծոցն ուղարկել և իմ հարստության վերջին մնացորդներով ապաստանել ինչ-որ տեղ, արտասահմանում, հանգիստ կյանք վարելու համար: Դու Ազնեսին ճանաչո՞ւմ ես:

ԺԱՆՆԱ.— Ո՛չ:

ԸԱՐԼ (զցում-վերցնում է խաղաթղթերը).— Սիրուն աղջիկ է. ես նրա հետ նույնպես շատ չեմ ձանձրանում: Բայց շարունակ ուզում է, որ գնումներ անեմ նրա համար:

ԺԱՆՆԱ (հարցնում է՝ հանկարծակի, լրջորեն).— Իսկ այսօր, Ծա՛րլ, դու քեզ քա՞ջ ես զգում:

ԸԱՐԼ.— Այսօր... (Մտմտում է): Այո՛, ինձ թվում է, որ այսօր ես ինձ մի քիչ քաջ եմ զգում: Ծատ չէ, բայց մի քիչ: Ի դեպ, դու տեսար, թե ինչպես Արքեպիսկոպոսին ուղարկեցի գրողի ծոցը...

ԺԱՆՆԱ.— Դե, որ այդպես է, Ծա՛րլ, սկսած այսօրվանից դու բոլոր օրերը քաջ ես լինելու:

ԸԱՐԼ (թեքվում է դեպի նա, հետաքրքրված).— Դու հնա՞ր ունես:

ԺԱՆՆԱ.— Այո՛:

ԸԱՐԼ.— Մի քիչ վհո՞ւկ ես դու: Ինձ դու այդ կարող ես ասել. ինձ համար միևնույն է: Եվ երդվում եմ, որ ուրիշին չեմ ասելու: Տանջանքները՝ ես զգվում եմ դրանցից: Մի անգամ ինձ տարան նայելու, թե ինչպես մի աղանդավորուհու բարձրացնում են խարույկի վրա: Ամբողջ գիշերը որձկում էի:

ԺԱՆՆԱ (ժպտում է).— Ո՛չ, Ծա՛րլ, ես վհուկ չեմ, բայց այնուամենայնիվ, մի հնար ունեմ:

ԸԱՐԼ.— Դու ինձ այն չե՞ս ծախի, առանց ուրիշներին ասելու: Ես շատ հարուստ չեմ, բայց քեզ համար արժեթուղթ կատրագրեմ, որ դրանով փող ստանաս արքայական Գանձարանից:

ԺԱՆՆԱ.— Ես քեզ այն ձրի կտամ, Ծա՛րլ:

ԸԱՐԼ (կասկածամիտ).— Զրի՞:

ԺԱՆՆԱ.— Այո՛:

ԸԱՐԼ (հանկարծակի ինքնամիտի է դառնում).— Ուրեմն, ես քեզ կասկածում եմ: Կամ դա արդյունավետ հնար չէ կամ էլ ինձ վրա շատ թանկ է նստելու: Անշահախնդիր մարդիկ միշտ էլ գնից բարձր են վերցնում... (Գցում-վերցնում է խաղաթղթերը): Գիտե՞ս, ես սովորություն եմ դարձրել հիմար ձևանալու, որպեսզի ինձ հանգիստ թողնեն, բայց չափազանց շատ բան գիտեմ: Ինձ հեշտ չէ խաբելը:

ԺԱՆՆԱ (մեղմ).— Դու չափազանց շատ բան գիտես, Ծա՛րլ:

Դու գիտե՞ս, որ իմ ոտքերի պատճառով է, որ Ազնեսն ինձ երբեք չի սիրելու: Եթե գոնե աչքաչափ ունենար և տձև, խոշոր ծնկներ չտար միաժամանակ...

**ԺԱՆՆԱ.**— Ես քեզ հետ համաձայն եմ: Նա շատ ջանք չի թափել քո ծնկների համար: Միայն թե՛ նա քեզ այլ բան տվել՝ դրել է քո այդ գանգի մեջ, փի՛ս տղա: Այն փոքրիկ կաջձր, որ ամենաշատ անան է՝ Նրան: Դու, Ծա՛րլ, կարող ես այն օգտագործել դեպի լավը կամ դեպի վատը. այ հենց այդ մի բանի համար է, որ քեզ ազատ է թողնում Աստված: Դու այն կարող ես օգտագործել թըղթախաղով ժամանակդ վատնելու և օրըստօրե Արքեպիսկոպոսին հախաբելու համար... կամ տունդ կտուցելու և վերակազմելու համար թագավորությունդ, որ բոլորը խլխլեն քեզնից: Դու որդի ունես, Ծա՛րլ, քո գողտրիկ թագուհուց: Այդ տղային ի՞նչ պիտի թողնես, երբ որ մեռնես: Ֆրանսիայի այս շատ փոքրիկ կտո՛րը, որ կրծոտել են անգլիացիները: Բա չե՞ս ամաչում: Նա էլ, որ մեծանա, կասի՝ Աստված ինձնով չի՞ զբաղվել: Բայց հենց դու պիտի եղած լինես, Ծա՛րլ, նրանով զբաղված չլինելու պատասխանատուն: Դու ես Աստված քո որդու համար: Այդ քո խնամքի տակ է, որ գտնվում է նա: Աստված քեզ արքա է դարձրել: Նա քեզ շատ ծանր բան է տվել շալակելու: Մի՛ գանգատվիր. այդ է մարդու մասին խնամք տանելու նրա լավագույն ձևը:

**ԾԱՐԼ (տնքում է).**— Բայց ձեզ ասացի, որ ես ամեն ինչից վախենում եմ...

**ԺԱՆՆԱ (մոտենում է նրան).**— Ես քեզ կսովորեցնեմ, Ծա՛րլ, կսովորեցնեմ իմ հնարը: Նախ,— մանավանդ ոչ որքի չասես այդ մասին,— իմացիր, որ ես նույնպես վախենում եմ ամեն ինչից: Դու գիտե՞ս, ինչու պարոն դը Լա Տրեմուայը ոչնչից չի վախենում:

**ԾԱՐԼ.**— Որովհետև ուժեղ է:

**ԺԱՆՆԱ.**— Ո՛չ: Որովհետև ապուշ է: Որովհետև նրա երևակայությունը չի գործում: Վայրի խոզերը նույնպես երբեք չեն վախենում, ցուլերը՝ նույնպես: Ինձ համար այստեղ հասնելը դեռևս շատ ավելի բարդ էր, քան քեզ համար թագավորությունը վերակազմելու խնդիրը: Հարկ եղավ, որ բացատրեմ հորս, որն ինձ ծեծեց, և որը կարծում էր, որ ուզում եմ քարշ գալ զինվորների հետ, և եթե նկատի ունենանք մասշտաբների տարբերությունը, ապա նա ավելի ուժեղ է հարվածում, քան անգլիացիները, գիտե՞ս, այդպիսին է իմ հայրը: Հարկ եղավ, որ մորս լացացնեմ, և դա նույնպես թվում էր անհաղթահարելի, որ կկարողանամ համոզել չաղ-

լիկ Բողոքիկոսիին, որը գոռգոռում էր ուժերը ներածին շափ և լի էր կեղտոտ մտքերով... Դու կարծում ես՝ ես չե՞մ վախեցել: Ծարունակ վախեցել եմ:

ԾԱՐԼ.— Եվ ինչպե՞ս արեցիր:

ԺԱՆՆԱ.— Այնպես, կարծես թե չեմ վախենում: Քո պարագան, Ծա՛րլ, ավելի դժվարին չէ, քան իմը: Դու հո մի անգամ կարող ես փորձել: Ասում ես. «Լա՛վ, ես վախենում եմ: Բայց դա իմ գործն է, և ոչ ոքի չի վերաբերում: Ծարունակենք»: Եվ շարունակում ես: Եվ եթե ինչ-որ քան ես տեսնում քո առաջ, որ քեզ թվում է անհաղթահարելի...

ԾԱՐԼ.— Լա Տրեմուայը գոռգոռալու պահին...

ԺԱՆՆԱ.— Ոնց կուզես: Կամ թե անգլիացիները Օրլեանի շուրջը լավ դիրքավորված ամրակուռ բերդերի մեջ: Դու ասում ես. «Եղա՛վ: Նրանք ավելի քազմամարդ են, պատսպարված հաստ սրատերի ետևում, ունեն թնդանոթներ, նետերի մեծ պաշարներ. նրանք միշտ էլ ավելի ուժեղ են լինում: Թող լինի՛: Ես վախենում եմ: Մի ուժգին հարված: Այդտեղ: Ահա: Հիմա որ մի կուշտ վախեցա, ճանաք առա՛ջ»: Եվ մյուսներն այնքան զարմացած են, որ դու չես վախենում, որ միանգամից հենց իրենք են սկսում վախենալ, և դու անցնում ես առաջ: Դու անցնում ես առաջ, որովհետև, լինելով ավելի խելացի, ունենալով ավելի զարգացած երևակայություն, դու վախեցել ես առաջուց: Ահա ամբողջ գաղտնիքը:

ԾԱՐԼ.— Իսկ եթե այնուամենայնիվ, նրանք ավելի ուժեղ են:

ԺԱՆՆԱ.— Ավելի ուժեղ լինելը շատ մեծ բանի պետք չի գալիս: Ես մի անգամ տեսա մեր գյուղի տղաներից մեկին՝ մի փոքրիկ որսագող, որին հետապնդում էին երկու գամփո շներ հենց կալվածատիրոջ հողերի վրա: Նա կանգ առավ, սպասեց և դրանց խեղդեց մեկը մյուսի ետևից:

ԾԱՐԼ.— Եվ նրան չկծեցի՞ն:

ԺԱՆՆԱ.— Ինչ խոսք, կծեցին: Հրաշք չկա: Բայց այսպես թե այնպես, ինքը դրանց խեղդեց: Եվ Աստված, սակայն, այդ երկու գամփոներին ստեղծել էր շատ ավելի ուժեղ, քան իմ փոքրիկ որսագողին: Միայն թե մարդուն տվել է նաև այլ բան, որ նրան ավելի զորեղ է դարձնում, քան բոլի ուժի տեր անասուններին: Հենց այդ պատճառով է, որ իմ փոքրիկ որսագողը դադարեցրեց փախուստը, տեղնուտեղը դուրս թափեց իր ամբողջ վախը և ինքն իրեն ասաց. «Եղա՛վ: Հիմա ես բավականին վախեցա: Կանգնում եմ ու դրանց խեղդում եմ»:

ԹԱՐԼ.— Ընդամենը այդքա՞ն:

ԺԱՆՆԱ.— Ընդամենը այդքան:

ԹԱՐԼ (մի քիչ հիասթափված).— Կախարդական չէ:

ԺԱՆՆԱ (ժպտում է).— Ո՛չ: Կախարդական չէ: Բայց բավարար է: Աստված մարդկանցից ոչ մի արտակարգ բան չի ուզում: Միայն թե հավատ ընծայեն այն իրենց իսկ փոքրիկ մասնիկին, որ Ինքն է: Միայն թե մի քիչ վեհությունն ձեռք բերեն: Հետո Նա Ինքն է տեր կանգնում մնացյալին:

ԹԱՐԼ (երազկոտ).— Եվ դու այն կարծիքին ես, որ դա մի հնար է, որ միշտ էլ հաջողությա՞ն է հանգեցնում:

ԺԱՆՆԱ.— Միշտ: Իհարկե, հարկավոր է նաև լավատեղյակ լինել, բայց այդ մի հարցում դու կաս ու կաս: Իմ փոքրիկ որսագողը ջոկեց այն պահը, երբ երկու գամփոնները մեկը մյուսի բաժանվեցին մի նապաստակի պատճառով, և ինքը ի վիճակի եղավ դրանց մեկ-մեկ ուղարկել այն աշխարհը: Բայց մանավանդ բանն այն է, որ այդ թույլին դու դուրս թափեցիր քո ամբողջ վախը, այնուամենայնիվ կանգ առար և դիմադարձեցիր, և այդ իսկ պատճառով Աստված քեզ հետ է լինում: (Ծարունակում է): Միայն թե գիտես, թե ինչպիսին է Նրա բնավորությունը. ուզում է, որ դու անես առաջին քայլը:

ԹԱՐԼ (լռությունից հետո).— Կարծում ես՝ կարո՞ղ եմք փորձել քո հնարը:

ԺԱՆՆԱ.— Իհարկե, կարող եմք: Միշտ պետք է փորձել:

ԹԱՐԼ (սեփական հանդգնությունից հանկարծ վախեցած).— Վաղը, որպեսզի ժամանակ ունենամ նախապատրաստվելու...

ԺԱՆՆԱ.— Ո՛չ, հեևց հիմա, անմիջապես: Դու լիովին պատրաստ ես:

ԹԱՐԼ.— Կանչենք Արքեպիսկոպոսին և Լա Տրեմուային և նրանց ա-սե՞նք, որ քեզ եմ հանձնում բանակի հրամանատարությունը՝ տեսնելու համար, թե ինչպես պիտի կախեն իրենց քիթ ու մոտիճերք:

ԺԱՆՆԱ.— Կանչենք:

ԹԱՐԼ.— Ես վախենում եմ: Հենց այս պահին վախից սատկում եմ ես:

ԺԱՆՆԱ.— Ուրեմն, դժվարն անցած է: Եթե մի բան պետք չէ, ապա դա այն է, որ քո վախից որևէ մասնիկ մնա ներսումդ, երբ նրանք այստեղ լինեն: Ինչքան ուժդ պատում է, այդքանը վախենո՞ւմ ես:

ԹԱՐԼ (որ փորն է բռնել).— Կարծեմ:

ԺԱՆՆԱ.— Ուրեմն, գործը լավ է ընթանում: Դու մի հսկայական առավելություն ունես նրանց նկատմամբ: Երբ նրանք սկսեն վախենալ, դու արդեն վերջացրած պիտի լինես: Ամբողջ հնարը



հենց այն է, որ առաջինը վախենաս և ճակատամարտից առաջ:  
Հիմա կտեսնես: Կանչում եմ նրանց: (**Գնում է դեպի խորքը, ձայն  
է տալիս**): Ձերդ Վեհանձնությունն Արքեպիսկոպոս, պարոն դը  
Լա Տրեմուա՛յ, Նորին Վեհանձնությունն Արքայազնը ուզում է ձեզ  
հետ խոսել:

**ԾԱՐԼ (գոռում է, տեղում դոփելով, խուճապահար).**— Ա՛հ, ինչքա՛ն  
եմ վախենում: Ա՛հ, ինչքա՛ն եմ վախենում:

**ԺԱՆՆԱ.**— Քեզ տեսնեմ, Ծա՛րլ: Ինչքան ուժ ունես, վախեցիր:

**ԾԱՐԼ (որը կրճտացնում է աստամները).**— Ավելի ուժեղ է՛լ չեմ կարո-  
ղանում:

**ԺԱՆՆԱ.**— Ուրեմն, շահեցինք: Աստված նայում է քեզ, Նա ժպտում  
է և ինքն իրեն ասում է. «Այսպես թե այնպես, այս փոքրիկ Ծար-  
լը, չնայած վախենում է, բայց և նրանց կանչում է»: Ութ օրից  
հետո Օրլեանը մերն է, պրծավ գնա՛ց:

**Ներսեան մտնում Արքեպիսկոպոսը և Լա Տրեմուայը:**

**ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԸ.**— Դուք մեզ կանչել եք տվե՛լ, Ձերդ Պայծառա-  
փայլություն:

**ԾԱՐԼ (ժանճալի վրա մի վերջին նայվածք նետելուց հետո, հանկար-  
ծակի).**— Այո՛: Ես որոշում ընդունեցի, Ձերդ Վեհանձնությունն:  
Մի որոշում, որը նաև ձեզ է վերաբերում, պարո՛ն դը Լա Տրե-  
մուայ: Իմ թագավորական բանակի հրամանատարությունը տա-  
լիս եմ Կույսին, որ ներկա է այստեղ: (**Հանկարծ սկսում է գոռալ**):  
Եթե դուք համաձայն չեք, պարո՛ն դը Լա Տրեմուայ, խնդրում եմ  
հանձնեք ձեր թուրը: Դուք ձերբակալված եք:

**Լա Տրեմուայը և Արքեպիսկոպոսը կանգ են առնում՝ ոչնչացված:**

**ԺԱՆՆԱ (ծափ տալով).**— Բրավո՛, սիրելի՛ Ծա՛րլ: Տեսնո՞ւմ ես, ինչ-  
քան պարզ ու հասարակ բա՛ն է: Մի լա՛վ նաչիր դրանց քիթ ու  
մոտոթին... չէ՛, ախր լավ նաչիր դրանց քիթ ու մոտոթին... Վախից  
մեռնո՞ւմ եմ: (**Պոռթկում է ծիծաղից: Ծարլը նույնպես քրքշում է:  
Երկուսն էլ խփում են իրենց ազդրերին՝ չկարողանալով դադա-  
րեցնել ծիծաղը՝ կարծես աղե արձան դարձած Արքեպիսկոպոսի  
և Լա Տրեմուայի ներկայությամբ**):

**ԺԱՆՆԱ (հանկարծ ծնրադրում է՝ ճչալով).**— Ծնորհակալությունն,  
Տե՛ր Աստված:

**ԾԱՐԼ (գոռում է նրանց երեսին՝ նույնպես ծնրադրելով).**— Ծնկի՛ ե-  
կեր, պարո՛ն դը Լա Տրեմուայ, ծնկի՛: Եվ դո՛ւք, Արքեպիսկոպո՛ս,  
ավեր մեզ ձեր օրհնությունը, և արագացրեք, շո՛ւտ: Մենք մի բոպե  
սեղան չունենք կորցնելո՛ւ... Այժմ որ բոլորս մի կուշտ վախե-

ցանք, պետք է հույ տալով հասնենք Օրլեան:

**Լա Տրեմուաչը ծնրադրել է հանկարծակիությունից բթացած: Ահա-  
բեկված Արքեպիսկոպոսը մեքենաբար իր օրհնությունն է տալիս:**

**ՎԱՐՎԻՔ (խորքում ծիծաղից պոռթկում է և գալիս է առաջ դեպի Կո-  
շոնը).**— Անշուշտ, իրականում տեղի չի ունեցել ճիշտ այդպես: Խորհրդի նիստ գումարվեց, երկար վիճեցին թեք ու դեմ կողմերը ու վերջապես, որոշեցին ժամանայից օգտվել՝ նրան դարձնելով մի տեսակ դրոշակակիր, ժողովրդի ցանկությանն ընդառաջելու հա- մար: Վերջին հաշվով, դա մի փոքրիկ թալիսման էր՝ լավ սարք- ված, պարզունակ մարդկանց հրապուրելու նպատակով ու որպես- զի նախատրամադրվեն գնալ մարտի զոհաբերվելու: Մենք մեր զինվորներին, թեև եռակի բաժին չին<sup>18</sup> էինք տալիս գրոհից ա- ռաջ, բայց նույն արդյունքին չէինք հասնում: Եվ այդ օրվանից սկսեցինք պարտություններ կրել՝ հակառակ ստրատեգիայի բո- լոր կանոններին: Ասացին, որ ժամանայի հրաշքը գոյություն չունի, որ Օրլեանի շուրջը մեր մեկուսացած ամրոցների ցանցը անհե- թեթություն էր, և որ բավական էր գրոհել, ինչպես որ դա պար- զապես վճռել էր Արմանյակի<sup>19</sup> ռազմական շտաբը: Դա սխալ է: Սըր Ջոն Տալբոտը<sup>20</sup> հիմար չէր և լավ էր տիրապետում իր մաս- նագիտությունը: Նա այդ ապացուցել է վերոհիշյալ տարաբախտ դեպքից և առաջ, և հետո: Նրա ամրոցների ցանցը տեսականո- րեն անխորտակելի էր: Ո՛չ: Այն, ինչ որ տեղի ունեցավ որպես տրամաբանականից ավելին,— մեծահոգությունն ունենանք այդ ընդունելու,— դա անորսալին էր: Աստուծո մատը, եթե կպնդեք, այդպես անվանենք, տեք Եպիսկոպոս,— այն, որ ռազմական շտաբները երբեք չեն նախատեսում: ... Դա այս փոքրիկ ար- տույտն էր՝ հետևակների գլխավերևին, Ֆրանսիայի երկնքի տակ ... Ես, անձնապես, Ջերդ Վեհանձնություն՝ն, Ֆրանսիան շատ եմ սիրում: Դրա համար երբեք չէի մխիթարվի, եթե այն կորցնեիք: Այդ երկու հստակ ձայնանիշերը, զվարթ ու անհեթեթ երգն այդ փոքրիկ արտույտի, որն անշարժ էր արևի տակ, մինչ կրակում են նրա վրա,— դա ինքն է, որ կա ամբողջովին: **(Շարունակում է):** Վերջապես, դա լավագույնն էր, որ գոյություն ունի այս երկրում... բանգի Ֆրանսիան ևս ունի իր ապուշների, անգորների, սրիկա- ների զգալի բանակը: Սակայն, ժամանակ առ ժամանակ, մի ար- տույտ է ունենում իր երկնքում, որ սրբում-ջնջում է նրանց: Ես իրոք սիրում եմ Ֆրանսիան:

**ԿՈՇՈՆ (կամացուկ).**— Եվ սակայն կրակում եք նրա վրա...

**ՎԱՐՎԻՔ.**— Մարդը հակասություններից է բաղկացած, տեր Եպի-  
կոսոս: Ծատ հաճախ սպանում էս այն, ինչ սիրում էս: Ես գա-  
զաններին նույնպես պաշտում եմ, բայց և միաժամանակ որսորդ  
եմ: (Հանկարծ վեր է կենում՝ դաժանացած: Չողամտրակով հար-  
վածում է իր երկարաճիտ կոշիկներին, որով նշան է անում եր-  
կու զինվորների, որոնք գալիս են առաջ): Հայդե՛, փոքրիկ ար-  
տույտը բռնված է: Կոմպիենի<sup>21</sup> թակարդը փակվել է նրա վրա:  
Պատմության փայլուն դրվագը խաղացված է: Ծարլը և նրա ար-  
քունիքը, առանց մի հաշացք իսկ ետ շրջելու, պիտի լքեն փոքրիկ  
թալիամանը, որը ըստ իրենց, այլևս բախտավորություն չի բե-  
րում,— և պիտի վերադառնան հին փորձված քաղաքականությա-  
նը... Իրոք Ծարլը, Լա Տրեմուայը և Արքեպիսկոպոսը գաղտա-  
գողի վեր են կացել և հեռացել են Փաննայից, որը շարունակում  
է ծնկաչոք աղոթել: Նա վեր է կենում՝ զարմացած, որ մեռակ է  
մնացել, և որ Ծարլը հեռանում է խարդախած մարդու նման: Պա-  
հակը Փաննային քարշ է տալիս:

**ՎՈՇՈՆ (գոռալով դիմում է նրան՝ ընդգծելով բեմական խաղը).**— Քո  
արքան քեզ լքում է, Փաննա՛: Էլ ինչո՞ւ համառորեն պաշտպանես  
նրան: Երեկ քեզ համար կարդացել են այն նամակը, որ նա ու-  
ղարկել է իր հպատակ բոլոր քաղաքներին, որով դրժում է քեզ:

**ՎԱՆՆԱ (լռությունից հետո, մեղմ).**— Նա իմ թագավորն է:

**ՇԱՐԼ (ցածրաձայն, Արքեպիսկոպոսին).**— Ծարունակ մեր երեսո՞վ  
պիտի տան այդ նամա՞կը:

**ՄՐԲԵՊԻՍԿՈՊՈՍԸ (ցածրաձայն).**— Անհրաժեշտ էր, սը՛ր, այդ նա-  
մակն անհրաժեշտ էր: Ներկա պարագայում Ֆրանսիայի բախտը  
ոչ մի կերպ չէր կարող կապված մնալ Փաննաի ճակատագրին:

**ՎՈՇՈՆ.**— Փաննա՛, լսիր ինձ և փորձիր հասկանալ: Քո թագավորն  
ամենևին քո թագավորը չէ: Փաստացի և օրինական մի պայմա-  
նագիր սը՛ր Հենրի VI դը Լանկաստրի<sup>22</sup> դարձնում է Ֆրանսիայի  
և Անգլիայի թագավոր: Այս դատական գիտը տեղի չի ունենում  
քաղաքական առումով... Մենք պարզապես այս պահին, մեր բո-  
լոր ուժերը ներդնելով, ամենայն ազնվությամբ փորձում ենք մի  
մոլորված ոչխարի վերադարձնել Սուրբ Մայր Եկեղեցու գիրկը:  
Բայց այնուամենայնիվ, մենք մարդ ենք, Փաննա՛, մեզ համարում  
ենք Նորին Պաշտոնափայլության Հենրիի հպատակները, և մեր  
սիր դեպի Ֆրանսիան,— որը նույնքան մեծ է և անկեղծ, ինչքան  
բունը,— մեզ մղում է, որ նրան ճանաչենք որպես մեր տիրակալը,  
սրբազան մեր երկիրը վեր բարձրանա իր ավերակներից, բուժի

իր վերքերը և վերջապես, դուրս գա այն ահռելի, անվերջանալի պատերազմից, որը նրան արնաքամ է արել... Արմանյակների խմբավորման անօգուտ դիմադրությունը, ծիծաղելի փառամոլությունները նրա, որին դու անվանում ես քո թագավորը, որը հավակնում է մի գահի, որն իրեն չի պատկանում,— մեր գնահատմամբ ըմբոստության և ահաբեկչության գործողություն են ուղղված ընդդեմ մի խաղաղության, որ համարյա ապահովված է: Տիկնիկը, որին դու ծառայել ես, մեր տերը չէ, հասկացի՛ր:

**ԺԱՆՆԱ.**— Ինչքան ուզում եք, կրկնեցեք. անօգուտ է: Նա այն թագավորն է, որ Աստված տվել է ձեզ: Ինչքան էլ նիհարիկ լինի խեղճը իր երկար ոտներով ու զգվելի խոշոր ծնկներով:

**ՇԱՐԼ (ցածրաձայն, Արքեպիսկոպոսին).**— Վերջին հաշվով, այս ամենն ինձ համար շատ տհաճ է...

**ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԸ (քարշ տալով նրան, նույնպես ցածրաձայն).**— Համբերություն, սր՛ր, կավարտեն դատական նիստը, նրան կայրեն խարույկի վրա, որից հետո մենք հանգիստ կլինենք: Ի դեպ, համաձայնվեք, որ անգլիացիները ավելի շուտ մեզ են ծառայություն մատուցել՝ նրան ձերբակալելու և մահապատժի ենթարկելու գործն իրենց վրա վերցնելով: Եթե նրանք այդ չանեին, օրերից մի օր մենք ստիպված պիտի անեինք ինքներս: Նա անտանելի էր դառնում: (Նրանք դուրս են եկել: Ավելի ուշ ետ են գալու՝ անկատելի խառնվեն հավաքվածներին):

**ԿՈԾՈՆ (նորից է սկսում).**— Դու, սակայն, հիմար չես, Ժաննա՛: Քո ամբարտապան պատասխանները դա բազմիցս ասացուցել են: Մի պահ դու քեզ դիր մեր տեղը: Ինչպե՞ս կարող ես ակնկալել, որ իբրև մարդ, խորին մարդկային համոզմամբ ընդունենք, որ Աստված է քեզ ուղարկել ընդդեմ այն կենսական սկզբունքի, որի պաշտպանն ենք մենք: Ինչպե՞ս կարող ես ակնկալել, որ ընդունենք, որ Աստված մեր դեմ է՝ լոկ այն հիման վրա, որ դու մեզ հավաստիացնում ես, որ ձայներ ես լսել:

**ԺԱՆՆԱ.**— Դուք այդ կտեսնեք, երբ ձեզ հաղթած կլինենք վերջնականապես:

**ԿՈԾՈՆ (քարձրացնում է ուտերը).**— Դու դիտավորյալ մեզ պատասխանում ես համառ աղջնակի նման: Եթե հիմա հարցին մոտենանք որպես քահանաներ, որպես մեր սուրբ Մայր Եկեղեցու պաշտպաններ, ապա ի՞նչ հիմնավոր պատճառներ ունենանք հավատ ընծայելու քո ասածին: Դու կարծում ես, որ առաջի՞նն ես, որ ձայներ է լսել:

**ԺԱՆՆԱ (մեղմ).**— Ո՛չ, անկասկած:

**ԿՈՇՈՆ.**— Ոչ առաջինն ես, ոչ էլ վերջինը, Ժաննա՛: Հիմա կարծո՞ւմ ես արդյոք, որ եթե ամեն անգամ մի գեղջկուհի աղջնակ գա իր քահանային ասի. «Ես տեսել եմ այս-այն սուրբ կնոջը կամ Կույս Մարիամին, լսել եմ ձայներ, որ ինձ կարգադրել են այս ու այն բանը անեմ»,— նրա քահանան հավատա և թույլ տա, որ նա գործի, Եկեղեցին դեռևս կանգո՞ւն լիներ:

**ԺԱՆՆԱ.**— Չգիտեմ:

**ԿՈՇՈՆ.**— Չգիտես, բայց դու խորապես բանիմաց ես. դրա համար է, որ ջանում եմ քեզ տրամադրել, որ տրամաբանես իմ դատողությունների միջոցով: Դու ռազմադաշտում զորավար ես եղել, չէ՞, Ժաննա՛:

**ԺԱՆՆԱ (ուղղվում է հպարտ).**— Այո՛, ես հրամայել եմ հարյուրավոր լավ տղաների, որոնք ինձ հետևել են ու հավատացե՛լ:

**ԿՈՇՈՆ.**— Դու եղել ես հրամանատար: Եթե նախքան գրոհը, մի առավոտ քո զինվորներից մեկը ձայներ լսած լիներ, որոնք նրան համոզում էին հարձակվել մի ուրիշ դռնով, քան որ դու ընտրել էիր կամ առհասարակ չհարձակվել,— դու ի՞նչ պիտի անեիր:

**ԺԱՆՆԱ (մի պահ մնում է շշմած, հետո հանկարծ ծիծաղից պոռկոկում է).**— Տե՛ր Եպիսկոպոս, իսկույն երևում է, որ դուք քահանա եք: Որ երբեք մոտիկից չեք տեսել մեր հետևակների՞ն: Թունդ են հարվածում, լավ են խմում, այո, բայց ինչ վերաբերում է ձայներ լսելուն...

**ԿՈՇՈՆ.**— Կատակը երբևիցե չի եղել պատասխան, Ժաննա՛... Բայց իմ հարցի պատասխանը դու տվիր նախքան խոսելը, այն վայրկյանին, երբ լռեցիր շվարած: Դե, իմացի՛ր, որ մարտական Եկեղեցին մի բանակ է այս երկրի վրա, որտեղ դեռևս վխտում են անհավատները և չարիքի ուժերը: Պարտավոր է նա հնազանդվել մեր Սուրբ Հորը՝ Պապին և նրա Եպիսկոպոսներին, ինչպես որ սրարտավոր էին հնազանդվել քեզ և քո լեյտենանտներին: Եվ աշխարհի բոլոր բանակներում, քոնը ներառյալ, լռեցնում են այն զինվորին, որը նախքան գրոհը, առավոտյան գալիս ասում է, որ ձայներ է լսել, որոնք նրան խորհուրդ են տալիս չհարձակվել: Եվ սող անում են ավելի կոպտորեն, քան մենք, որ ջանում ենք քեզ խկրի բերել:

**ԺԱՆՆԱ (ինքնատիրապետումով, պաշտպանողաբար).**— Կոպտորե՛ն լավեք: Դա ձեր իրավունքն է: Իսկ իմ իրավունքն է, որ շարունակեմ համախառն և ձեզ ասեմ՝ ոչ:

**ՎՈՇՈՆ.**— Մի՛ ներփակվիր քո գոռոզության մեջ, ժանճա՛: Դու լավ հասկանում ես, որ ոչ որպես տղամարդ, ոչ որպես քահանա մենք ոչ մի հիմնավոր պատճառ չունենք հավատալու քո առաքելության աստվածային ակունքին: Միայն դու պատճառ ունես հավատալու դրան՝ անկասկած գայթակղված սատանայի կողմից, որն ուզում է քեզ կորստյան մատնել,— և հասկանալի է այն չափով, որչափ դա նպաստավոր եղավ նրանց, ովքեր քեզ օգտագործեցին: Դեռևս նրանց միջից ամենախելացիները,— որոնց դիրքորոշումը քո ձերբակալությունից հետո և ձևական դրժումը այդ ապացուցում է,— երբեք չեն հավատացել քո աստվածային առաքելությանը: Ոչ ոք քեզ այլևս չի հավատում, ժանճա՛, չհաշված ժողովրդի մանր-մունր խավերը, որոնք ամեն ինչին հավատում են ու վաղը հավատալու են մի ուրիշ աղջկա: Դու բոլորովին միայնակ ես: (Ժանճան չի պատասխանում՝ կծկված նստած է նրանց բռնորի արանքում): Ինքդ էլ ևս մի՛ հավատա, որ մեզ դիմադրելու քո համատությունը, քո բնավորության ուժը նշան են, որ Աստված քեզ նեցուկ է: Սատանան նույնպես պնդածակատ է և խելք էլ ունի: Նախքան ապստամբելը, նա եղել է ամենախելացի հրեշտակներից մեկը:

**ԺԱՆՆԱ (լռությունից հետո).**— Ես խելացի չեմ, տյա՛ր: Ես խեղճ գեղջկուհի եմ, նման մյուսներին: Բայց երբ մի բան սև է, չեմ կարող ասել, որ սպիտակ է. ընդամենը այդքան:

**Դարձյալ լռություն:**

**ԳԼԽԱՎՈՐ ՎԵՐԱԿԱՑՈՒՆ** (ցցվում է նրա ետևում, հանկարծակի).—

Դու ի՞նչ նշանով քեզ ճանաչել տվիր նրան, ում անվանում ես քո թագավորը, որպեսզի նա քեզ վատահի իր բանակը:

**ԺԱՆՆԱ.**— Ես ձեզ ասել եմ, որ նշան չի եղել:

**ԳԼԽԱՎՈՐ ՎԵՐԱԿԱՑՈՒՆ.**— Քո մարդախոտի մի մա՛սը տվիր նրան, որ վերցնես քո հովանավորության տակ:

**ԺԱՆՆԱ.**— Ես չգիտեմ, թե ինչ բան է:

**ԳԼԽԱՎՈՐ ՎԵՐԱԿԱՑՈՒՆ.**— Կախարդական խմիչք կամ բանաձև. քո գաղտնիքը անուն ունի, և մենք ուզում ենք այն իմանալ: Քո իշխանին Թիմոնում դու այդ ի՞նչ տվիր, որ նա միանգամից իրեն բա՞զ զգաց: Դա իր անունն ունի՞ երբայերեն: Սատանան բոլոր լեզուներով է խոսում, բայց սիրում է երբայերենը:

**ԺԱՆՆԱ (ժպտում է).**— Ո՛չ, տյա՛ր, դա իր անունն ունի ֆրանսերեն և քիչ առաջ ինքներդ այն ասացիք: Ես նրան բաջություն տվի ընդամենը այդքան:

- ԿՈՇՈՆ.— Եվ Աստված կամ այն գործությունը, որ քեզ թվում է իբրև Աստված, քո կարծիքով ոչնչով չմիջամտե՞ց:
- ՎԱՆՆԱ (լուսավորված).— Իմ կարծիքով Աստված անընդհատ միջամտում է, տեր Եպիսկոպոս: Երբ մի աղջիկ խելքը գլխին երկու բառ է ասում, և նրան ունկնդրում են, պատճառն այն է, որ Աստված առկա է: Աստված տնտես է. եթե երկու սու խելացիությունը հեռիքում է, նա հո իրեն ծախսի տակ չի գցելու, որ հրաշք անի:
- ԻԱԴՎԵՆՅՈՒ (կամացուկ).— Ահավասիկ բարի և խոնարհ մի պատասխան, Ձերդ Վեհանձնություն՝ն, և որը չի կարող մեկնաբանվել ի վնաս նրան:
- ՎԼԽԱՎՈՐ ՎԵՐԱԿԱՅՈՒՆ (ցցվում է, թունոտ).— Նայա՛ծ: Դու, ուրեմն, չե՞ս հավատում հրաշքներին, ինչպիսիք որ մեզ տեղեկացվում է Սուրբ Գրքի կողմից: Դու ժխտո՞ւմ ես այն, ինչ արեց մեր Տեր Հիսուսը Կանայի հարսանիքին: Դու ժխտո՞ւմ ես, որ նա հարություն տվեց Ղազարոսին<sup>23</sup>:
- ՎԱՆՆԱ.— Ո՛չ, տյար: Մեր սուրբ Տերը հաստատապես արել է այդ ամենը, քանի որ այդ է գրված Սուրբ Գրքում: Նա ջուրը փոխեց գինու, ինչպես որ ստեղծել էր ջուրը և գինին: Նա կապեց Ղազարոսի կյանքի կտրված թելը: Բայց նրա համար կյանքի և մահվան Տերը լինելը ամենևին արտասովոր բան պիտի չլիներ, քան ինձ համար թել մանելը:
- ՎԼԽԱՎՈՐ ՎԵՐԱԿԱՅՈՒՆ (կաղկանձում է).— Լսե՛ք, ինչ է ասում, լսե՛ք, լսե՛ք: Ասում է, որ հրաշքներ գոյություն չունեն՞ն:
- ՎԱՆՆԱ.— Գոյություն ունեն, տյա՛ր: Միայն թե ինձ թվում է, որ ճշմարիտ հրաշքները պիտի չլինեն այդ պահմտոցի օլիները կամ գվարճալի ֆիզիկալի արտադասարանական պարապմունքները: Մեր գյուղի հրապարակում ձեռնածուները նույնպիսի բան անում լին... Ծջմարիտ հրաշքները, որոնք Աստուծո ուրախության ժըպիտն են հարուցում Երկնքում, պիտի որ լինեն այն հրաշքները, որ մարդիկ անում են բոլորովին միայնակ՝ քաջության ու խելքի գործությամբ, որ Նա տվել է իրենց:
- ԿՈՇՈՆ.— Դու չափո՞ւմ ես քո խոսքերի ծանրությունը, Փաննա՛: Դու մեզ հիմա շատ հանգիստ ասում ես, որ Աստուծո միակ հրաշքը սու երկրի վրա պիտի որ լինի մարդ արարածը, ուրիշ ոչինչ: Իսկ մարդը լոկ մեղքն է, մոլորություն, անճարակություն, անգործություն...
- ՎԱՆՆԱ.— Այո՛, բայց նաև ուժ և քաջություն և լուսալայծառություն:

այն պահին, երբ ինքն ամենասարգահատելին է: Ես նրանց տեսել եմ պատերազմի դաշտում...

**ՂԱԴՎԵՆՅՈՒ.**— Ձերդ Վեհանձնություն, ժաննան անճարակ լեզվով մեզ ասաց իր սրտի բնազդագագոդությունների մասին, որոնք թերևս սխալ են, բայց և հաստատապես միամիտ... Նրա մտածելակերպը, համեմայն դեպս, չի կարող այնքան ամրակուռ լինել, որ կաղապարվի մեր դիպլեկտիկայի մեջ: Գուցե հարցապնդելիս՝ մենք նրան վտանգի ենք ենթարկում՝ ասել տալով ավելին կամ այլ բան, որ նա կուզենար ասել...

**ՎՈՇՈՆ.**— Եղբա՛յր Լադվենյու, մենք կջանանք գնահատել նրա պատասխանների անճարակության բաժինը այնքան բարեխղճորեն, ինչքան որ հնարավոր է: Սակայն մեր պարտքն է, որ նրան հարցաքննենք մինչև վերջը: Մենք այնքան վստահ չենք, որ գործունենք միայն ժաննայի հետ, մի՛ մոռացեք: Ուրեմն այսպես, ժաննա՛, դու մարդուն արդարացնո՞ւմ ես: Դու այն կարծիքի՞ն ես, որ նա Աստծո մեծագույն հրաշքներից մեկն է, և նույնիսկ միակը:

**ԺԱՆՆԱ.**— Այո՛, տյա՛ր:

**ԳԼԽԱՎՈՐ ՎԵՐԱԿԱՑՈՒՆ (կաղկանձում է, ինքն իրեն կորցրած).**— Դու սրբապղծո՞ւմ ես: Մարդը անմաքրություն է, այլասերվածություն, վավաշոտ տեսիլներին գերեվարված: Մարդն իր անկողնում գիշերը գալարվում է անասնական բոլոր մտամոլություններից հալածված...

**ԺԱՆՆԱ.**— Այո՛, տյա՛ր, և նա մեղսագործում է, նա զազրելի է: Եվ հետո հանկարծ, չես իմանում ինչու, — ախր շատ էր սիրում ապրել այդ խոզի գոճին, — հասարակաց տնից դուրս գալուց հետո, Բետվում է գազազած ձիու վզին փրկելու համար մի փոքրիկ անձանոթ երեխայի, և ջարդոտված ոսկորներով մեռնում է հանգիստ, նա, որն իրեն այնքան նեղություն էր տվել իր հանույթի գիշերը գլուխ բերելու համար:

**ԳԼԽԱՎՈՐ ՎԵՐԱԿԱՑՈՒՆ.**— Մեռնում է, ինչպես անասուն՝ մեղքի մեջ, կորստյան մատնված, առանց քահանայի՛:

**ԺԱՆՆԱ.**— Ո՛չ, տյա՛ր, նա մեռնում է կատարելապես շողշողուն, կատարելապես մաքուր, և Աստված. ժպտալով, սպասում է նրան: Քանզի նա գործեց երկու անգամ. ինչպես մարդ, որ գործում է չարիք և ինչպես մարդ, որ գործում է բարիք: Եվ Աստված հենց այդ հակադրության համար էր ստեղծել նրան:

Բոլոր քահանաները վրդովված աղմկում են, երբ նա այդ ասում



**Լ: Ինկվիզիտորը ձեռքի շարժումով նրանց հանգստացնում է և հանկարծակի վեր է կենում:**

**ԻՆԿՎԻԶԻՏՈՐԸ (հանգիստ ձայնով).—** Ժաննա', ես թույլ տվի, որ դու խոսես այս դատական նիստի ողջ ընթացքում և համարյա որևէ հարց տալով քեզ չընդհատեցի: Ես ուզում էի, որ քո խոսքերով ինքդ հանգես ինչին որ դու կաս... Դա երկար տևեց... Գլխավոր Վերակացուն ամենուրեք տեսնում էր սատանային, Եպիսկոպոսն ամենուրեք տեսնում էր գոռոզություն մի աղջնակի, որ արբել է իր հաջողությունից. քո հանդարտ դիմադարձության ետևից, քո փոքրիկ համառ ճակատի ետևից ես ակնկալում էի, որ կհայտնվի այլ բան... Եվ ահա դու այժմ հանգեցիր քո էությանը... Ես այստեղ ներկայացնում եմ Սուրբ Ինկվիզիցիան, որի առաջնորդն էմ Ֆրանսիայի համար: Նորին Վեհանձնությունն Եպիսկոպոսը, քիչ առաջ, քեզ շատ մարդկայնորեն ասաց մահկանացուին վայել իր զգացումների մասին,— որոնցով ինքը ծառայում անգլիական դատին, որ համարում է ճշմարտացի,— որոնք միախառնվում են, սակայն, քահանայի և Եպիսկոպոսին վայել իր զգացումների հետ, որոնցով նա պարտավորված է պաշտպանել մեր Մայր Եկեղեցու շահերը: Ես ինքս գալիս եմ Իսպանիայի խորքից. առաջին անգամ է, որ ինձ այստեղ են ուղարկում: Ես նույն կերպ անգիտանում եմ և՛ մերձանգլիական խմբակցությունը, և՛ Արմանյակների խմբակցությունը: Ինձ համար միևնույն է՝ Ֆրանսիայի վրա կթագավորի քո՞ իշխանը, թե՞ Հենրի դը Լանկաստրը... Կարգապահությունը մեր Մայր Եկեղեցու գրկում, որը հակահարված է տալիս իր ազատամիտներին,— որոնք նույնիսկ բարի մտադրություններ ունեցած լինեն,— և որը խստասրտորեն ամեն մեկին նստեցնում է իր տեղը,— չէի ասի, թե ինձ թողնում է անտարբեր,— բայց վերջիվերջո դա երկրորդական զբաղմունք է՝ ոստիկանական աշխատանք, որ Ինկվիզիցիան թողնում է Եպիսկոպոսների և քահանաների տնօրինությանը: Սուրբ Ինկվիզիցիան ավելի վեհ և առավել գաղտնի այլ բան ունի պաշտպանելու, քան թե Եկեղեցու ժամանակավոր ամբողջականությունը: Նա պայքարում է անտեսանելի ու գաղտնաբար, մի թշնամու դեմ, որին միայն ինքը գիտի հայտնաբերել, և որի վտանգավորությունը միայն ինքը գիտի գնահատել: Նա երբեմն զինվում է մինչև իսկ մի կատարի դեմ. ուրիշ անգամներ նա նույն սպարառը, նույն զգոնությամբ, նույն խստությամբ ծավալում է արտաքուստ ունվմաս ծեր գիտնականի դեմ, լեռնային գյուղի խորքում կորած

փոքրիկ գառնարածի դեմ, ընդդեմ մի երիտասարդ աղջկա: Երկրային իշխանները ծիծաղից պոռթկում են՝ տեսնելով, որ Սուրբ Ինկվիզիցիան իրեն այդքան նեղություն է տալիս, երբ նրանց համար լիուլի բավական է պարանի մի կտոր և ինչ-որ սերժանտի ստորագրություն մահապատժի որոշման տակ: Ինկվիզիցիան թողնում է, որ ծիծաղեն... Նա կարողանում է ճանաչել և չթերագնահատել իր թշնամուն, որտեղ էլ որ նա գտնվելիս լինի: Եվ նրա թշնամին սատանան չէ, երեխաներին վախեցնելու համար նախատեսված պոչով-կոտոշով սատանան, որ տյար Գլխավոր Վերակացուն տեսնում է ամենուրեք: Նրա թշնամին, նրա միակ թըշնամին, քիչ առաջ, ինքդ քեզ քողագրկելով, դու ասացիր նրա անունը. դա մարդն է: Ոտքի՛ կանգնիր, Ժաննա՛, և պատասխանիր: Հիմա ես եմ քեզ հարցաքննում: **(Ժաննան վեր է կացել, շրջվել է դեպի նա: Ինկվիզիտորը չեզոք ձայնով հարցնում է):** Դու քրիստոնյա՞ ես:

ԺԱՆՆԱ.— Այո՛, տյա՛ր:

ԻՆԿՎԻԶԻՏՈՐԸ.— Դու մկրտվել ես և փոքրուց ապրել ես եկեղեցու ստվերում, որ կպած էր ձեր տանը: Եկեղեցու զանգերը կարգավորում էին քո աղոթապահերն ու աշխատածամերը: Այն պատվիրակները, որոնց ուղարկել ենք ձեր գյուղը, բոլորը միաբերան նույն տեղեկությունն են բերել. դու խորապես աստվածապաշտ աղջնակ էիր: Երբեմն մյուսների հետ խաղալու և վազվզելու փոխարեն,— և սակայն մելամաղձոտ աղջնակ չէիր, սիրում էիր խաղալ, վազվզել,— դու գաղտագողի մտնում էիր եկեղեցի և երկար ժամանակ մնում էիր բոլորովին միայնակ ու ծնկաչոք. առանց անգամ աղոթելու, նայելով քո առջևի ապակե պատկերներին:

ԺԱՆՆԱ.— Այո՛, տյա՛ր, ես ինձ լավ էի զգում:

ԻՆԿՎԻԶԻՏՈՐԸ.— Ունեցել ես մի փոքրիկ ընկերուհի, որին սիրում էիր քնքշորեն, քեզ նման մի աղջնակ, որի անունը Հոմետ է:

ԺԱՆՆԱ.— Այո՛, տյա՛ր:

ԻՆԿՎԻԶԻՏՈՐԸ.— Դու պիտի որ նրան չափազանց շատ սիրելիս լինեիր: Քանզի երբ որոշեցիր Վոկուլյոր մեկնել, արդեն իմանալով, որ այլևս երբեք չես վերադառնալու, դու գնացիր հրաժեշտ տվիր քո բոլոր ընկերուհիներին, բայց նրա մոտ չգնացիր:

ԺԱՆՆԱ.— Զգնացի: Ես վախենում էի, թե շատ կվշտանամ:

ԻՆԿՎԻԶԻՏՈՐԸ.— Մարդ արարածի նկատմամբ քո ունեցած քնքշությանը դու չարժանացրիր Նրան, ում նախընտրում էիր ուրիշներից: Դու խնամում էիր փոքրիկ աղքատ երեխաներին, հիվանդ-

Անրին, առանց որևէ մեկին ասելու. երբեմն անցնում էիր մի քանի մղոն մասջրի ապուր տանելու համար անտառի հյուղակում լքված թշվառ պտուղի: Հետագայում, առաջին հանդիպմանը, որին մասնակցեցիր, դու սկսեցիր հեծկլտալ վիրավորների շրջապատում:

**ԺԱՆՆԱ.**— Չէի կարողանում նայել, թե ինչպես է հոսում ֆրանսիական արյունը:

**ԻՆԿՎԻԶԻՏՈՐԸ.**— Ոչ միայն ֆրանսիական արյունը: Մի բոհ գինվոր, որն Օրլեանի մոտ, մարտական գործողության ժամանակ գերեվարել էր երկու անգլիացու, սպանեց դրանցից մեկին, որովհետև վերջինս բավականաչափ արագ չէր քայլում: Դու ցած թընար քո ձիուց և լացակումած՝ մարդու գլուխը դրիր քո ծնկներին, մխիթարեցիր և գորավիզ եղար, որ քիչ տատապի մահանալիս, ու սրբում էիր նրա բերանի արյունը՝ կրկնելով «Իմ փոքրիկ երեխա» ու նրան խոստանում էիր Երկնային արքայություն:

**ԺԱՆՆԱ.**— Դուք ա՛յդ էլ գիտեք, տյա՛ր:

**ԻՆԿՎԻԶԻՏՈՐԸ (մեղմ).**— Սուրբ Ինկվիզիցիան ամեն ինչ գիտե, Ժաննա՛: Նա ճշտել է քո մարդկային քնքշության մասշտաբը, նախքան ինձ կուղարկեր այստեղ քեզ դատելու:

**ԼԱԴՎԵՆՅՈՒ (վեր է կենում).**— Տյար Ինկվիզիտո՛ր, ես ուրախ եմ, որ դուք հիշատակում եք բոլոր այդ մանրամասները, որոնք մինչ այժմ լուրջության էին մատնված: Այո՛, այն ամենը, ինչ գիտենք Ժաննայի մասին, սկսած վաղ մանկությունից լոկ խոնարհությունն է, բարեհամբույր վարքագիծ, քրիստոնեական ողորմածություն:

**ԻՆԿՎԻԶԻՏՈՐԸ (շրջվում է դեպի նա, հանկարծակի խիստ).**— Լռեցեք, եղբա՛յր Լադվենյո՛ւ: Հիշեցնում եմ ևս մեկ անգամ: Հիմա ես եմ հարցաքննում: Խնդրում եմ չմոռանաք, որ ես այստեղ ներկայացնում եմ Սուրբ Ինկվիզիցիան՝ միակը, որ կոչված է տարբերելու ողորմածությունը՝ աստվածաբանական առաքիճությունը, մարդկային քնքշության ստոր, զագրելի, պղտոր կաթնաջրից... **(Նայում է բոլորին):** Ա՛հ, հարգարժան աստվածաբաններ... Ինչքա՛ն արագորեն հակամետ եք փափկելու: Թող որ մեղադրյալը լինի մի աղջնակ՝ ձեր վրա հառած ջինջ խոշոր աչքերով,— երկու սուր բարեսրտությունն ու պարզամտությունն, և ահա դուք, տակնուվրա եղած, պատրաստ եք քափություն տալու նրան: Ա՛յ թե հավատի լավ պաշտպաններ եք դուք: Ես տեսնում եմ, որ Սուրբ Ինկվիզիցիան դեռ ահագին գործեր ունի անելու, որ հարկ պիտի լինի կտրել, կտրել, շարունակ կտրել,— և ուրիշները ևս պիտի

որ կտրեն, երբ մենք այլևս չենք լինի,— անգթորեն կոտորելով, անսրացնելով շարքերը, որպեսզի անտառը առողջ մնա...

**Տիրում է կարճատև լուռություն, և Լադվենյուն պատասխանում է:**

**ԼԱԴՎԵՆՅՈՒ.**— Մեր սուրբ Տերը այն սիրով է սիրել, տյա՛ր: Նա ասել է. «Թող տուք մանկատյո՞ք գալ առ իս»: Նա ձեռքը դրեց ամուսնագանց կնոջ ուսին և նրան ասաց. «Երթ, յայսմ հետե մի մեղանչեր»:

**ԻՆԿՎԻԶԻՏՈՐԸ (գոռոռում է).**— Լռեցե՛ք, եղբա՛յր Լադվենյու, ասո՛ւմ եմ ձեզ: Կամ էլ թե հարկ պիտի լինի, որ զբաղվեմ նաև ձեր պարագայով: Մենք Ավետարանից հատվածներ ենք կարդում քարոզի ժամանակ. մեր քահանաներին խնդրում ենք, որ բացատրեն: Մի՞թե մենք այն թարգմանել ենք առօրյական լեզվի: Մի՞թե այն հանձնել ենք ամեն մի սլառաճածի ձեռքը: Արդուք ոճրագործություն չի՞ լինի, որ թույլ տանք՝ պարզամիտ հոգիները անըջեն ու բանահյուսեն այդ բնագրերի վրա, որ միայն մենք պետք է մեկնաբանենք: (**Հանդարտվում է**): Երիտասարդ եք, եղբա՛յր Լադվենյու, և հակված եմ հավատալու, որ այդ իսկ պատճառով ներողամիտ եք: Բայց մի՛ պատկերացրեք, որ երիտասարդությունն ու ներողամտությունն արժանանում են հավատի պաշտպանների հավանությանը: Դրանք թեթև հիվանդություններ են, որոնցից դուք կբուժվեք փորձառություն ձեռք բերելիս: Պարզապես ձեր տարիքը պիտի նկատի ունենային, ձեր գիտելիքի փոխարեն,— որը սակայն ըստ երևույթին շատ մեծ է,— նախքան ձեզ կընդունեին մեր շարքերը: Փորձառությունը ձեզ շուտով կսովորեցնի, որ երիտասարդությունը, ներողամտությունը, մարդկային քնքշությունը թշնամիների անուններ են: Իմացեք, որ այն բնագրերում, որոնցից մեջբերում եք կատարում, եթե մենք անխոհեմություն թույլ տանք դրանք վստահել որիշներին, ապա պարզամիտներն այդտեղից կքաղեն սերը դեպի մարդը: Իսկ ով սիրում է մարդուն, Աստծուն չի սիրում:

**ԼԱԴՎԵՆՅՈՒ (մեղմ).**— Նա ուզեց մարմնավորվել որպես մարդ, սակայն...

**ԻՆԿՎԻԶԻՏՈՐԸ (հանկարծ շրջվում է դեպի Կոշոնը, կտրուկ).**— Տե՛ր Եպիսկոպոս, խնդրում եմ, որ օգտվելով այս դատաքննության անվերապահ լիազոր նախագահի ձեր իրավունքներից, դուք այսօր հրաժարվեք ձեր երիտասարդ ատենակալի համագործակցությունից: Ներկա նիստից հետո, եթե հարկ լինի, ես մեղա-

դրանքներ կհարուցեն նրա դեմ: **(Հանկարծակի գոռում է):** Նրա դեմ կամ ում դեմ, որ լինի: Մեզ համար գոյություն չունեն շատ բարձր կանգնած գլուխներ, դուք այդ գիտեք: Ես ինքս իմ դեմ մեղադրանք կհարուցեմ, եթե Աստված թույլ տա, որ ես մոլորվեմ: **(Հանդիսավոր լրջությամբ խաչակնքում է):** Աստված մի արասցե՛:

**Վախի շունչ է փչել դատարանի վրա: Կոշոնը, ձեռքի վշտացած մի շարժումով, Լադվենյուին ասում է:**

**ԿՈՇՈՆ.—** Դուրս եկեք, եղբա՛յր Լադվենյու:

**ԼԱԴՎԵՆՅՈՒ** (հեռանալուց առաջ).— Տյա՛ր Ինկվիզիտոր, ես պարտավոր եմ ձեզ հնազանդվել, ինչպես և իմ Պատվելի Տեր Եպիսկոպոսին: Դուրս եմ գալիս: Լոում եմ: Միայն թե ես աղոթելու եմ մեր սուրբ Տիրոջը՝ Հիսուսին, որ երբ միայնակ մնաք Նրա դիմաց, նկատի ունենաք փխրունությունը մարդ կոչեցյալ ձեր փոքրիկ թշնամու...

**ԻՆԿՎԻԶԻՏՈՐԸ** (չի պատասխանում, թույլ է տալիս, որ նա դուրս գա, և երբ արդեն դուրս է եկել, մեղմորեն).— Ինչքան մեր թշնամին փոքրիկ է և փխրուն, ինչքան ավելի քնքուշ է, մաքուր, անմեղ, այնքան ավելի ահավոր է... **(Երջվում է դեպի Ժաննան, շարունակում է իր չեզոք ձայնով):** Առաջին անգամ, երբ լսեցիր թո Ջայները, դու դեռ տասնհինգ տարեկան չկայիր: Սկզբում քեզ միայն ասացին. «Եղի՛ր բարի, խելոք և հաճախ գնա եկեղեցի...»:

**ԺԱՆՆԱ.—** Այո՛, տյա՛ր:

**ԻՆԿՎԻԶԻՏՈՐԸ** (ժպտում է երկիմաստ).— Մինչև այդ պահը,— ես քեզ խրտնեցնելու եմ,— ոչ մի բացառիկ բան չկա թո պարագայի մեջ: Տյար Կոշոնը քեզ այդ մասին ասել է. «Մեր արխիվները լիքն են մեր քահանաների զեկույցներով, ըստ որոնց իրենց գյուղում աղջնակ է լինում, որ ձայներ է լսում: Մենք չենք միջամտում. Աղջնակը հանգիստ անցկացնում է իր միստիցիզմի ճգնաժամը, մանկական հիվանդությունների հետ միասին: Եթե ճգնաժամը նարատևում է սեռական հասունացումից էլ հետո, աղջիկը սովորաբար դառնում է կրոնավորուհի, և մենք պարզապես վանքի ակալարությանը իրազեկ ենք պահում, որ չափավորեն խորհե՛րս և աղոթելու նրա ժամերը և ծանրաբեռնեն կոպիտ աշխատանքներով. հոգնածությունը լավ դեղամիջոց է: Եվ այդ ամենն, ի վերջո, հանգչում ու անաղմուկ սուզվում է ամանների լվացքա՛յրի մեջ: Որոշ դեպքերում ճգնաժամը կրճատվում է, աղջիկն ամուսնանում է, և նրա փեշերից կախընկած երկրորդ ոռնացող

մանուկն ունենալու դեպքում մենք հանգիստ ենք այն ձայների վերաբերյալ, որ Նա պիտի լսի այդուհետև... Դու, դու շարունակեցիր: Եվ մի գեղեցիկ օր քո Ձայները քեզ ուրիշ բան ասացին: Ինչ-որ բան, որ ճշգրիտ է, անհարիր երկնային Ձայներին:

ԺԱՆՆԱ.— Որ ազատագրեմ Ֆրանսիայի թագավորությունը ու վտարեմ անգլիացիներին:

ԻՆԿՎԻԶԻՏՈՐԸ.— Դու տուժե՞լ էիր Դոմբեմիի պատերազմից:

ԺԱՆՆԱ.— Ո՛չ: Մեզ մոտ ոչինչ երբեք չդարձավ հրի ճարակ: Մի անգամ գյաղա գողոնները ընդհուպ մոտեցան. մենք բոլորս լքեցինք գյուղը: Երբ ետ դարձանք հաջորդ օրը, ամեն ինչ մնացել էր, ինչպես թողել էինք: Նրանք շրջանցել էին գյուղը և գնացել էին հեռու:

ԻՆԿՎԻԶԻՏՈՐԸ.— Քո հայրը հարուստ էր: Դաշտային աշխատանքները քեզ չէին վանում...

ԺԱՆՆԱ.— Ես սիրում էի արածացնել իմ ոչխարներին: Բայց ես հովվուհի չէի, ինչպես որ ասում եք բոլորդ: **(Ուղղվում է՝ միամտորեն գոռոզ):** Ես տան աղջիկ էի, կարելու և մանելու համար: Ռուսնում կին չկա, որ կարողանա ինձ գերազանցել:

ԻՆԿՎԻԶԻՏՈՐԸ **(ժպտում է այդ մանկական սնափառության կապակցությամբ)**.— Դու, ուրեմն, բարեկեցիկ ու երջանիկ աղջնակ էիր: Եվ Ֆրանսիայի ցավերը լոկ իրիկնային գրույցի նյութ էին քեզ համար: Մի օր, սակայն, դու զգացիր, որ պետք է մեկնես:

ԺԱՆՆԱ.— Ինձ այդ էին ասում իմ Ձայները:

ԻՆԿՎԻԶԻՏՈՐԸ.— Մի օր դու զգացիր, որ պետք է հոգաս քո շուրջը գտնվող մարդկանց ցավերը: Եվ դու արդեն ամեն ինչ գիտեիր. որ քո արշավանքը լինելու է փառավոր ու կարճատև, և որ քո արքայի թագադրությունից հետո, քեզ գտնելու ես այնտեղ, որտեղ գտնվում ես այս պահին, մեր կողմից հալածված, այն խարույկի ստորոտին, որ պատրաստ է վառվելու Շուկայի Հրապարակում: Մի՛ ստիր, Ժաննա՛, դու այդ գիտեիր:

ԺԱՆՆԱ.— Իմ Ձայներն ինձ ասացին, որ ինձ ձերբակալելու են, և հետո ես ազատվելու եմ:

ԻՆԿՎԻԶԻՏՈՐԸ **(ժպտում է)**.— Ազատվելո՞ւ ես: Դա տերմին է երկնային Ձայների համար: Դու տարակուսել ես այդ մասին, այնպես չէ՞, որ «ազատվել»-ը կարող էր նրանց համար ունենալ շատ աղոտ ու եթերային իմաստ: Մահը, անշուշտ, ազատում է: Եվ այնուամենայնիվ, դու սկսեցիր, չնայած քո հայրն ու մայրը դեմ էին և հակառակ քո առաջ բարձրացած բոլոր արգելքներին:

**ԺԱՆՆԱ.**— Այո՛, տյա՛ր. դա հարկավոր էր: Թեկուզ ունենայի հարյուր հայր ու մայր ու թեկուզ ոտերս մաշեի մինչև ծնկածալերը, ես պետք է մեկնեի:

**ԻՆԿՎԻԶԻՏՈՐԸ.**— Օգնելու համար քո եղբայրներին՝ մարդկանց, իրենց խատորեն մարդկային արարմունքի մեջ, որ է տիրացումն այն հողի, որի վրա ծնվել են և պատկերացնում են, թե իրենց է պատկանում:

**ԺԱՆՆԱ.**— Մեր սուրբ Տերը չէր կարող ցանկանալ, որ անգլիացիները թալանեն, սպանեն ու տնօրինեն մեզ մոտ: Երբ ծովով ետ գնան իրենց երկիրը, այնտեղ, նրանք էլ կդառնան Աստուծո գավակները: Եվ ես չեմ գնա կոիվ փնտրելու նրանց մոտ:

**ԳԼԽԱՎՈՐ ՎԵՐԱԿԱՑՈՒՆ.**— Ինքնահավանություն՝ն, գոռոզություն՝ն: Կարծում ես՝ ավելի լավ չէի՞ր անի, որ մնայիր մորդ մոտ և շարունակեիր մանել ու կարել:

**ԺԱՆՆԱ.**— Ես այլ բան ունեի անելու, տյա՛ր: Ինչ վերաբերում է կանացի գործերին, միշտ էլ ուրիշ կանայք կգտնվեն անելու համար:

**ԻՆԿՎԻԶԻՏՈՐԸ.**— Քանի որ դու ուղղակի հարաբերությունների մեջ էիր երկնքի հետ, ու վերջին հաշվով այն պատկերացմանն էիր, որ քո աղոթքները հատկապես լսվում են վերևում,— այդ հոգեվիճակից դու պիտի դրդված լինեիր անել ընդամենը մի քայլ: Մի՞թե քո սեռին ու տարիքին ավելի սազական այն պարզ ու հասարակ միտքը չեկավ քո գլուխը, որ նվիրաբերվես աղոթքներին և ինքնալկման ապրելակերպին, որպեսզի ձեռք բերես Երկնքի կամեցողությունը՝ վտարելու անգլիացիներին:

**ԺԱՆՆԱ.**— Աստված կամենում է, որ նախ և առաջ՝ հարվածենք, տյա՛ր: Աղոթքը դա լրացուցիչ միջոց է: Ես նախընտրեցի Ծարլին բացատրել, թե ինչպես պետք է հարձակվել. դա ավելի պարզ էր, և նա ինձ հավատաց, և սիրուն Դյունուան ինձ հավատաց: Եվ Լա Հիրը, և Քսենտրայը՝ իմ կատաղի ընտիր ցուլե՛րը... Ա՛հ, մենք մի քանի գվարթ ճակատամարտ շահեցինք բոլորս միասին... Մենք մեզ լավ էինք զգում վաղ ստավոտյան, կողք կողքի ..

**ԳԼԽԱՎՈՐ ՎԵՐԱԿԱՑՈՒՆ (թունոտ).**— Սպանելո՛ւ համար, Ժաննա՛ .. Մեր սուրբ Տերն ասե՛լ է՝ սպանիր:

**Ժաննան չի պատասխանում:**

**ԿՈՐՈՆ (մեղմ).**— Դու սիրել ես պատերազմը, Ժաննա՛...

**ԺԱՆՆԱ (պարզորեն).**— Այո՛: Դա անշուշտ իմ մեղքերից մեկն է, որին Աստված պիտի որ թողություն տա: Երեկոյան ես ուզում եմ դառնալ լաց էի լինում, որ իմ վաղորդյան տոնական տրամա-

դրությունը այդքան շատ խեղճ ու կրակ մարդկանց մահվան պատճառն է դարձել:

**ԳԼԽԱՎՈՐ ՎԵՐԱԿԱՑՈՒՆ.**— Եվ հաջորդ օրը դու վերսկսո՞ւմ էիր:  
**ԺԱՆՆԱ.**— Աստված այդ էր ցանկանում: Քանի դեռ մի անգլիացի զինվոր կմնա Ֆրանսիայում: Եվ սակայն դա դժվար չէ հասկանալ: Ամենից առաջ պետք է գործի անցնել, ընդամենը այդքան: Դուք գիտնականներ եք. անչափ շատ եք խորհում: Ի վիճակի չեք հասկանալու ամենապարզ բաները, իսկ իմ զինվորներից ամենահիմարը՝ նա հասկանում էր: Այդպես չէ՞, Լա Հի՛ր:

**Լա Հիրը հանկարծ դուրս է պրծնում հավաքվածների միջից՝ վիթխարի, երկաթածածկ, գվարթ, ահռելի:**

**ԼԱ ՀԻՐ.**— Այդպես է, տիկի՛ն ժաննա՛:

Բոլորը սուզված են խավարի մեջ: Միայն նա է լուսավորված: Հեռվից լսելի է սրնգի տարտամ երաժշտություն: Ժաննան կամացուկ մոտենում է նրան, թերահավատ: Մատով դիպչում է Լա Հիրին և մըրմընջում:

**ԺԱՆՆԱ.**— Լա Հի՛ր...

**ԼԱ ՀԻՐ (ամեն առավոտվա կատակը վերսկսելով).**— Դե, տիկի՛ն ժաննա, մեր փոքրիկ աղոթքն արդեն արել ենք, ինչպես ընդունված է. մի քիչ հույս տալո՞ւ ենք նրանց այս առավոտ:

**ԺԱՆՆԱ (նետվում է նրա թևերի մեջ).**— Բարի՛ Լա Հի՛ր: Իմ խոշո՛ր Լա Հի՛ր: Այդ դո՞ւ ես: Ա՛հ, ինչքա՛ն լավ հոտ է գալիս քեզնից:

**ԼԱ ՀԻՐ (կաշկանդված).**— Մի սյուտ կարմիր գինի և մի սոխ: Իմ առավոտյան նախաճաշն է: Ներեցեք, տիկի՛ն ժաննա, ես գիտեմ, որ դուք այդ չեք սիրում, բայց նախքան այդ, ես առավոտյան աղոթքս արել եմ, որպեսզի Տեր Աստված հոտը չառնի հետը խոսելու ժամանակ... Շատ մի՛ մոտեցեք. պիտի որ գարշահոտություն արձակելիս լինեմ:

**ԺԱՆՆԱ (սեղմված նրան).**— Ոչ, դու հաճելի հո՛տ ես արձակում:

**ԼԱ ՀԻՐ.**— Ինձ մի՛ շփոթեցրեք, տիկի՛ն ժաննա: Սովորաբար դուք ասում եք, որ ես գարշահոտություն եմ արձակում, և որ դա ամոթ է քրիստոնյայի համար: Սովորաբար ասում եք, որ եթե քամին այս կողմից փչի, գյադա գողոնները մեզ պիտի հայտնաբերեն, այնքան եմ գարշահոտություն արձակում, և որ իմ պատճառով մեր հանկարծակի գրոհը պիտի ձախողվի... Սոխի մի փոքրիկ գլուխ և երկու մատ կարմիր գինի, ոչ ավելի: Ինչ որ ճիշտ է՝ ճիշտ է. գինու վրա ջուր չեմ ավելացրել:

**ԺԱՆՆԱ (սեղմված նրան).**— Բարի՛ Լա Հիր, ես հիմար էի, չգիտեի:



Գիտես, աղջիկներին: Դրանց դեռ բան չի պատահել, պատրաստի հասկացողություններ ունեն, թե ով, ինչ, ինչպես պետք է լինի, ամեն ինչից շաղակրատում են ու բան էլ չգիտեն: Հիմա ես գիտեմ: Քեզնից լավ հոտ է գալիս, Լա Հի'ր, քեզնից գազանի հոտ է գալիս. քեզնից տղամարդու հոտ է գալիս:

ԼԱ ՀԻՐ (համեստություն արտահայտող շարժում է անում).— Պատերազմ է: Կապիտան ասածդ ոչ նման է քահանայի, ոչ էլ արքունիքի փոքրիկ փախքոտի. քրտնում է... Իսկ ինչ վերաբերում է ուսումնասիրության լվացվելուն... Ովքեր լվացվում են, տղամարդ չեն ... Սոխը, բան չունեն ասելու... Դա մի բան էլ ավելին է, քան պետք է: Ինձ կարող է բավարարել սխտորով մի կտոր նրբերջիկն առավոտյան, ինչպես բոլորին: Դա ավելի հարգի է: Վերջիվերջո, կարո՞ղ է մեղք եմ գործում սոխ ուտելով:

ՎԱՆՆԱ (ժպտում է).— Ո՛չ, Լա Հի'ր:

ԼԱ ՀԻՐ.— Ձեզ հետ մարդ չգիտի, իրեն ինչպես պահի...

ՎԱՆՆԱ.— Ոչինչ մեղք չի, Լա Հի'ր, եթե կուզես ճիշտն իմանալ: Ես հիմար էի. քեզ անչափ շատ եմ չարչարել, չգիտեի: Իմ խոշո՞ր արջ, դու լավ հոտ ես արձակում. տաք քրտինքի, հում սոխի, կարմիր գինու հոտերը, տղամարդկանց բոլոր լավ, անմեղ հոտերը: Իմ խոշո՞ր արջ, դու սպանում ես, հայհոյում, միայն աղջիկների մասին ես մտածում:

ԼԱ ՀԻՐ (անսահման զարմացած).— Ե՛ս:

ՎԱՆՆԱ.— Դու, այո: Ձևացրու, որ զարմացած ես, խոզի գոճի՛: Եվ համենայն դեպս, դու փոքրիկ նոր սուի նման ես Աստուծո ձեռքում:

ԼԱ ՀԻՐ.— Ծի՞շտ է, տիկի՛ն Ժաննա: Կարծո՞ւմ եք, որ իմ վարած շան կյանքով ես այնուամենայնիվ, դրախտ ընկնելու մի փոքրիկ հավանականություն ունեմ, եթե լավ անեմ իմ աղոթքը ամեն առավոտ, ինչպես ընդունված է:

ՎԱՆՆԱ.— Քեզ դրախտում սպասո՞ւմ են, Լա Հի'ր: Աստուծո դրախտը, ես հիմա գիտեմ, որ լիքն է քեզ նման բոի մարդկանցով:

ԼԱ ՀԻՐ.— Ծի՞շտ Եթե գցենք՝ բռնենք, կուզենայի, որ մի քանի ընկերներ էլ լինեն այնտեղ... Ես միշտ էլ վախեցել եմ, որ սկզբներում կաշկանդված կլինեմ սրբերի և եպիսկոպոսների հետ... Խոսել է պետք...

ՎԱՆՆԱ (նետվում է վրան ու զվարթորեն բռնցքահարում).— Դանդաղորդի մե՛կը, խելքի տոպրա՛կ, ապուշ գյադա՛: Ախր հիմարներով լիքն է դրախտը: Մեր սուրբ Տերն այդ մասին ասել է: Գուցե

հենց միայն դրանց են ընդունում այնտեղ: Մյուսները՝ նրանք այնքան առիթներ են ունեցել մեղքեր գործելու իրենց կեղտոտ ուղեղներով, որ բոլորն էլ ստիպված են լինելու սպասել դռանը: Դրախտում միայն տղերքն են, որ կա՛ն:

ԼԱ ՀԻՐ (տազնապած).— Համենայն դեպս, որ մենք ու մերոնք ենք լինելու, կարո՞ղ է՝ ձանձրանալու ենք, քանի որ այնտեղ պարտավոր ենք լինել քաղաքավարի: Համենայն դեպս, թույլ կտա՞ն մի քիչ կոպոտենք:

ԺԱՆՆԱ.— Ամբողջ օրը, ինչքան կուզե՛ս...

ԼԱ ՀԻՐ (հարգալիք).— Մի բուպե՛: Այն դեպքում երբ Տեր Աստված մեզ տեսնելիս չի լինի:

ԺԱՆՆԱ.— Ախր ամբողջ ժամանակ նա մեզ տեսնելու է, դանդալո՞շ: Նա ամեն ինչ տեսնում է: Եվ քրքջալու է՝ ձեր կոփվը նայելիս: Նա գոռալու է: «Քեզ տեսնեմ, Լա Հի՛ր: Հո՛ւպ տուր Քսենտրային: Մի լավ դնքստի՛ր: Տույց տուր նրան, որ դու տղամա՛րդ ես...»:

ԼԱ ՀԻՐ.— Այդպե՛ս:

ԺԱՆՆԱ.— Մի քիչ ավելի քաղաքավարի, իհարկե:

ԼԱ ՀԻՐ (ոգևորության գագաթնակետին).— Ա՛հ, Աստված իմ, գրո՞ղը տանի:

ԺԱՆՆԱ (նշում է խիստ, հանկարծակի).— Լա Հի՛ր:

ԼԱ ՀԻՐ (խոնարհում է գլուխը).— Ներողություն:

ԺԱՆՆԱ (անխնա).— Եթե հայհոյես, նա քեզ դուրս կշարտի:

ԼԱ ՀԻՐ (կակազում է).— Դա հաճույքից էր: Նրան շնորհակալությունն ասելու մի ձև էր դա:

ԺԱՆՆԱ (ժպտում է).— Նա հազիվ թե այդպես հասկանա: Բայց նրից չսկսես, թե չէ՝ ինձ հե՛տ գործ կունենաս: Դե, բավական է, ինչքան խոսեցինք այս առավոտ: Ձի հեծնենք հիմա, տղա՛ս, ձի՛ հեծնենք:

Նրանք հեծնում են երևակայական ձիերը: Արշավում են կողք-կողքի՝ իրենց երիվարների շարժումներից օրոպելով:

ԺԱՆՆԱ.— Լավ է, չէ՞, արշավելը վաղ առավոտյան: Լա Հի՛րը իր մի ընկերոջ հետ... Դու զգո՞ւմ ես թաց խոտի հոտը: Հենց այդ է պատերազմը: Հենց այդ պատճառով է, որ մարդիկ պատերազմում են: Որպեսզի զգան վաղ առավոտյան թաց խոտի հոտը, ընկերոջ հետ կողք-կողքի արշավելիս:

ԼԱ ՀԻՐ.— Նկատի ունեցեք, որ մի փոքրիկ զբոսանքով բավարարվողներ կան...

ՎԱՆՆԱ.— Այո՛, բայց նրանք չեն գգում այգաբացի իսկական հոտը, իրենց ազդրին կպած ընկերոջ իսկական ջերմությունը... Պետք է, որ մահը բթիդ տակին լինի, պճիկ հայրի՛կ, որպեսզի Տեր Աստված ձեզ այդ ամենը տա...

**Լռություն:** **Գնում են առաջ, դաշտավայրի միջով, և նրանց օրոքում են արշավող ձիերը:**

I Ա. ՀԻՐ (հարցնում է).— Իսկ եթե հանդիպենք գողոնների, կրտոն գողոնների, որոնք նույնպես սիրելիս լինեն հաճելի հոտերը...

ՎԱՆՆԱ (զվարթ).— Վրա՛ ենք տալիս: Բայց բանն այն է, որ դու վախենալու ես, տղա՛ս:

II Ա. ՀԻՐ.— Ե՛ս:

ՎԱՆՆԱ.— Վրա ենք տալիս, փոքրի՛կ բարեկամս և մի լավ դնքատում ենք: Մենք հենց դրա համար էլ այստե՛ղ ենք:

**Կարճատև լռություն, որից հետո Լա Հիրը նորից հարցնում է:**

III Ա. ՀԻՐ.— Սակայն, տիկի՛ն ժամնա, եթե ճիշտ է, ինչ որ ասացիք, որ ում ուղարկում ենք այն աշխարհը, ուղղակի դրախտ են գընում, ուրեմն այդ անգլիացիներից ավելի դող գլուխը չկա...

ՎԱՆՆԱ.— Հաստատ է, որ նրանք դրա՛խտ են գնում: Բա ի՛նչ կարծեցիր: (Հանկարծակի ճշում է): Կա՛նգ առ: (Կանգ են առնում): Ահա այնտեղ՝ երեք կրտոն գողոններ: Մեզ տեսան: Փախչո՛ւմ են: Ո՛չ: Ետ շրջվեցին: Նկատել են, որ մենք ընդամենը երկուսն ենք: Հարձակվում են: Դու վախենո՛ւմ ես, Լա Հի՛ր: Ես հաշվի մեջ չկամ. ընդամենը աղջիկ եմ, և նույնիսկ թուր էլ չունեմ: Գրոնո՛ւմ ես, այնուամենայնիվ:

III Ա. ՀԻՐ (թափահարում է թուրը: **Զվարթ ոռնոցով**).— Իհարկե, այո՛, գրո՛ղը տանի... (Գրոհելիս՝ գոռում է դեպի երկինք): Ես բան չասացի, Տե՛ր Աստված, ես բան չասացի: Այդ նկատի ունեցեք... (Նետվում է դատական դահլիճի կենտրոնը, պտտվում, հարձակվում է, թրի լայն հարվածներով նրանց ցրում է: Նա խորքում անհետանում է՝ կռիվը շարունակելով...):

ՎԱՆՆԱ (ծնրադրում է).— Նա բան չասաց, Տեր Աստված, բան չասա՛ց: Նա հացի պես բարի է: Քսենտրայի պես բարի է: Բարի է, ինչպես զինվորներից յուրաքանչյուրը, որն սպանում է, բռնարարում, թալանում, հայհոյում... Բարի է, ինչպես Ձեր գայլերը, Տե՛ր Աստված, որոնց ստեղծել եք անմեղ... Ես պատասխանատու՛ եմ նրանց բոլորի փոխարեն: (Ուժասպառ սուզվում է աղոթքի մեջ: Դատական կազմը նորից համախմբվել է նրա շուրջը: Բեմը դարձյալ լուսավորված է: Ժամնան բարձրացնում է գլուխը,

տեսնում է նրանց, և կարծես երազից արթնանալով՝ բացականչում է): Իմ Լա Հի՛ր, իմ Քսենտրա՛յ: Օ՛հ, վերջին խոսքը դեռ չի ասված: Դեռ կտեսնեք, թե ինչպես նրանք կգան ինձ ազատելու՝ երեք կամ չորս հարյուր նիզակավորների գլուխն անցած...

**ԿՈԾՈՆ (մեղմ).**— Նրանք եկան, Ժաննա՛, մինչև Ռուանի դռները, իմանալու համար, թե քանի անգլիացի կա քաղաքում, և հետո ետ դարձան...

**ԺԱՆՆԱ (թևաբախ).**— Ա՛հ, ե՛տ դարձան... առանց կովելո՛ւ: (**Լռություն: Տիրապետում է ինքն իրեն**): Իհա՛րկե, ետ դարձան օգնական ուժեր բերելու: Այդ ես եմ նրանց սովորեցրել, որ չի կարելի հենց այնպես հարձակվել, ինչպես Ազենկուրում:

**ԿՈԾՈՆ.**— Նրանք ետ դարձան դեպի հարավ, Լուարայից<sup>24</sup> ներքև, որտեղ Շարլը, պատերազմից հոգնած, ցրում է իր բանակները և ջանում է պայմանագիր կնքել գոնե մի փոքրիկ կտոր Ֆրանսիա պահպանելու համար: Նրանք երբեք չեն վերադառնա, Ժաննա՛:

**ԺԱՆՆԱ.**— Դա ճիշտ չէ՛: Լա Հիրը կվերադառնա նույնիսկ հաղթանակի հավանականություն չունենալով՝ դեպքում:

**ԿՈԾՈՆ.**— Լա Հիրն ընդամենը խմբապետ է, որն իր տղերքի հետ վարձվել է մի ուրիշ իշխանի, երբ իմացել է, որ քոնը խաղաղության պայմանագիր պիտի կնքի: Նա այս պահին արշավում է դեպի Գերմանիա, որը պարզապես, թալանելու ենթակա մի երկիր է նրա համար:

**ԺԱՆՆԱ.**— Դա ճիշտ չէ՛:

**ԿՈԾՈՆ (վեր է կենում).**— Ես քեզ երբևէ ստե՛ղ եմ, Ժաննա՛: Դա ճիշտ է: Ուստի ինքդ քեզ ինչո՞ւ զոհաբերես պաշտպանելու համար նրանց, ովքեր քեզ լքում են: Աշխարհում միակ մարդիկ, որոնք դեռևս փորձում են քեզ ազատել, — ինչքան էլ դա պարադոքսալ թվա, — էլի մենք ենք՝ քո նախկին թշնամիները և քո դատավորները: Դրժի՛ր, Ժաննա՛, դու դիմադրում ես լուրջ նրանց համար, ովքեր հենց վերջերս քեզ դավաճանեցին: Մտի՛ր Մայր Եկեղեցու գիրկը: Խոնարհվի՛ր. նա քեզ կրկին կբարձրացնի՝ ձեռքիցդ բռնած: Ես համոզված եմ, որ քո սրտի խորքում դու մնացել ես նրա դուստրերից մեկը:

**ԺԱՆՆԱ.**— Այո՛, ես Եկեղեցու մի դուստրն եմ:

**ԿՈԾՈՆ.**— Անձնատուր եղիր քո մորը, Ժաննա, առանց վերապահության՝: Նա ինքը կորոշի քո մոլորության բաժինը, դրանով իսկ քեզ կազատի ինքդ քեզ դատապարտելու տագնապից: Դու հար-

կադրված չես լինելու մտածել որևէ բանի մասին. կրելու ես քո պատիժը,— ծանր լինի, թե թեթև,— և կերթաս խաղաղությամբ: Դու պիտի որ խաղաղության անագին պահանջ զգալիս լինես:

**ԺԱՆՆԱ (լռությունից հետո).**— Ինչ հավատին է վերաբերում, ես ապավինում եմ Եկեղեցուն: Ինչ իմ արածին է վերաբերում, ես այն երբեք չեմ դրժի:

**Քահանաների մեջ իրարանցում: Ինկվիզիտորը պոռթկում է:**

**ԻՆԿՎԻԶԻՏՈՐԸ.**— Տեսնում եք, հարգարժա՛ն աստվածաբաններ, մարդը գլո՛խ է բարձրացնում: Դուք հիմա հասկանո՞ւմ եք, թե ում եք դատում: Այդ երկնային Չայները ձե՞զ էլ էին խլացրել, Աստվա՛ծ իմ: Դուք համատորեն աստանա էիք փնտրում, որ դարանակալած լիներ այդ Չայների ետևում: ... Երանի թե գործ ունենայինք միայն սատանայի՛ հետ: Նրա դատը շատ արագ պիտի վերջանար: Սատանան մեր դաշնակիցն է: Ի վերջո, դա նախկին հրեշտակ է, մեր կողմերից է: Իր սրբապղծություններով, հայհոյանքներով, նույնիսկ ատելությամբ առ Աստված՝ նա դեռևս հավատի հավաստիացում է: Մարդը, թափանցիկ ու հանդարտ մարդը, ինձ հազար անգամ ավելի է անաբեկում: Նայեցեք նրան՝ շղթայված, անզեն, յուրայիններից լքված և շատ ավելի հավաստի, այնպես չէ՞, Ժաննա՛,— բան այն Չայները, որոնք վաղուց ի վեր լռել են, եթե նույնիսկ երբևէ հետը իրոք խոսած լինեն: Արդյոք նա փլվո՞ւմ է՝ պաղատելով Աստուծուն, որ նրան կրկին իր ձեռքը վերցնի: Արդյոք գոնե աղաչո՞ւմ է, որ Չայները վերադառնան՝ նրա ուղին լուսավորելու: Ո՛չ: Նա թիկունքով է շրջվում առ Աստված, դիմադարձում է չարչարանքների, ստորացումների և հարվածների տարափի տակ, իր անասնական թշվառությամբ լիացած, զնդանի խոնավ մահճի վրա: Նա աչքերն է բարձրացնում դեպի իր իսկ ինքնության անպարտելի պատկերը... **(Գոռգոռում է)**... որը և է նրա միակ ճշմարիտ Աստվա՛ծը: Ահա թե ևս ինչի՛ց եմ երկնչում: Եվ նա պատախասնում է, կրկնում է,— ուշքդ գնում է այդ նորից ասելու ցանկությունից, Ժաննա՛,— «Ինչ իմ արածին է վերաբերում...»:

**ՎԼԵՆԻԱ (մեղմ).**— Ես այն երբեք չեմ դրժի:

**ԻՆԿՎԻԶԻՏՈՐԸ (կրկնում է՝ ատելությունից գալարվելով).**— «Ինչ վերաբերում է իմ արածին, ես այն երբեք չեմ դրժի...»: Լսե՛լ եք սուր բառերը, որ ասել են բոլորը խարույկների վրա, կախաղաններին, չարչարանաց նկուղների խորքերում, ամեն անգամ երբ մեզ հասցողվել է դրանց բռնացնել: Այն բառերը, որ նույն լկտիու-

թյամբ կրկնելու են նրանք՝ գալիք դարերում, քանզի մարդորսությունը երբեք չի դադարելու... Ինչքան էլ մենք հզորանանք մի օր, այս կամ այն կերպարանքով, ինչքան էլ Գաղափարը ծանրանա աշխարհի երեսին, ինչքան էլ դաժան, ճշգրիտ ու նրբանեղ լինեն կազմակերպությունն ու ուստիկանությունը,— միշտ լինելու է մի մարդ, ինչ-որ տեղ, որը պիտի խաբս տված լինի, որին պիտի հետապնդեն, որին ի վերջո պիտի բռնեն, պիտի սպանեն, բայց որը, սակայն, ևս մի անգամ ոտնատակ է տալու իր հզորության գագաթին կանգնած գաղափարը, պարզասլես, որովհետև նա ասելու է՝ ո՛չ, առանց աչքերը խոնարհելու: **(Ֆրեշացնում է ատամների արանքից, ատելությամբ նայելով ժանճալին):** Ցեղն այս ամբարտալան: **(Շրջվում է դեպի դատական կազմը):** Դեռ կարի՞ք ունեք նրան հարցաքննելու: Դեռևս հա՛րկ եք համարում հարցնել նրան, թե ինչու նետվեց բարձրությունից այն ամբողի, որտեղ բանտարկված էր. փախչելո՞ւ թե՞ ինքնասպանություն կատարելու համար՝ հակառակ Աստուծո սլատվիրանների: Եվ այն թե ինչո՞ւ հեռացավ հորից ու մորից, կրեց տղամարդու հագուստ, որից չի ուզում հրաժարվել՝ հակառակ Եկեղեցու պատվիրանների: Դուք կլսեք մարդու նույն պատասխանը. «Ինչ արել եմ, ես այն արել եմ: Դա ինձ է պատկանում: Ոչ ոք չի կարող այն ինձնից վերցնել, և ես այն չեմ դրժում: Այն ամենը, ինչ կարող եք դուք, ընդամենն այդքանն եք կարող. սպանել, հարկադրել, որ ինչ ասես գոռամ չարչարանքներին չդիմանալուց, բայց որ ձեր կամոք ես «այո» ասեմ, դուք այդ չեք կարող»: **(Գոռում է նրանց երեսին):** Էհ, հարգարժա՛ն աստվածաբաններ, անհրաժեշտ պիտի լինի, որ մենք սովորենք, այս կամ այն կերպ, և ինչքան էլ, որ դա թանկ նստի մարդկությանն իրա, որ մարդը մեր կամո՞ք ասի՝ այո: Այնքան ժամանակ, քանի դեռ գոյություն կունենա մեկ մարդ, որ մնացած լինի անկոտրուն, Գաղափարը, եթե նույնիսկ տիրի, ճգմի մնացյալ ամբողջ աշխարհը, Գաղափարը պիտի լինի կործանվելու ենթակա: Այդ իսկ պատճառով ես պահանջում եմ ժանճալի բանադրանքը, վտարել նրան Եկեղեցու ծոցից և հանձնել աշխարհիկ դատարանին, որ հարվածի նրան: **(Շարունակում է չեզոք ձայնով, բանաձև արտասանելու նման)...** ու խնդրում ենք, այնուամենայնիվ, որ իր վճիռն արձակի՝ մահն ու անդամահատությունը ներառյալ: **(Շրջվել է դեպի ժանճան):** Դա պիտի լինի ողորմելի հաղթանակ քո նրկատմամբ, ժանճա՛, բայց վերջասլես, դրանով իսկ լռելու ես:

Իսկ մինչ այժմ ավելի լավ որոշում չկարողացանք գտնել: **(Նորից նստում է տեղը համատարած լռության մեջ):**

**ԿՈԾՈՆ (մեղմ).**— Տյար Ինկվիզիտորը առաջինը եղավ, որ պահանջեց քո բանադրանքն ու տանջասպանությունը, ժաննա՛: Մի պահ անց, վախենամ, թե տյար Գլխավոր Վերակացուն նույնը պահանջի: Մեզնից յուրաքանչյուրն արտահայտելու է իր վերաբերմունքը, և հարկ պիտի լինի, որ ես ևս որոշում ընդունեմ: Կտրելուց և իրենից հեռու դեմ գցելուց առաջ այն փտած անդամը, որ դու ես, քո Մայր Եկեղեցին, որի համար մոլորյալ ոչխարն ավելի թանկ է, քան մնացյալները, չի մոռանում, քեզ պիտի կոչ անի վերջին անգամ: **(Նշան է անում: Մի մարդ գալիս է առաջ):** Դու ճանաչո՞ւմ ես այս մարդուն, ժաննա՛: **(Ժաննան շրջվում ու վախից մի թեթև ցնցվում է):** Ռուսն քաղաքի դահճապետն է: Ծուտով դու նրան ես պատկանելու, եթե չուզենաս մեզ ապավինել քո հոգին, որպեսզի մենք այն փրկենք: Քո խարույկը պատրա՛ստ է, վարպե՛տ:

**ԴԱՀԻԾԸ.**— Պատրաստ է, Ձերդ Վեհանձնություն՛ն: Ավելի բարձր, քան կանոնադրությամբ նախատեսված խարույկը. ես այդպիսի հրամաններ եմ ստացել, որպեսզի աղջիկը լավ երևա բոլոր կողմերից: Նրա համար ցավալին այն է լինելու, որ չպիտի կարողանամ ցուցաբերել իմ օգնությունը: Նա լինելու է չափազանց բարձր դիրքի վրա:

**ԿՈԾՈՆ.**— Այդ ի՞նչն էս օգնություն համարում, վարպե՛տ:

**ԴԱՀԻԾԸ.**— Մեր արհեստի մի օյինը, Ձերդ Վեհանձնություն՛ն, որը ընդունված է, եթե հատուկ ցուցմունքներ չեն լինում: Թողնում ենք, որ առաջին բոցերը բարձրանան, հետո ծխով քողարկված՝ ետևից մագլցում են՝ իբրև թե խորձերը կարգի բերելու և խեղդում են նրան: Այնպես որ, միայն դիակն է, որ խորովվում է. դա նվազ դաժան է: Բայց քանի որ հատուկ ցուցմունքներ եմ ստացել, դիրքը չափազանց բարձր է լինելու. մագլցել չպիտի կարողանամ: **(Պարզորեն շարունակում է):** Ուստի, հարկադրաբար, ավելի երկար է տևելու:

**ԿՈԾՈՆ.** — Լսեցի՞ր, ժաննա՛:

**ԺԱՆՆԱՆ (կամացուկ).**— Այո՛:

**ԿՈԾՈՆ.** Մի վերջին անգամ ես քեզ ձեռք պիտի մեկնեմ, օգնաշուայլ մեծ ձեռքը քո Մոր, որն ուզում է քեզ ետ առնել իր գիրկը և փրկել կորստից: Սակայն դու հետո այլևս չես ունենալու հետաձգման ապավինի թողտվություն: Ակա՛նջ դիր այս որոտին. ամբոխն է,

որն արդեն քեզ սպասում է արևածագից... Նրանք շուտ են եկել լավ տեղերն զբաղեցնելու համար: Այս պահին նրանք ուտում են իրենց հետ բերած պաշարները, հանդիմանում են իրենց երեխաներին, իրար գլխի օյիներ են բանացնում, զինվորներին հարցապնդում են, թե արդյոք շո՛ւտ է սկսվելու: Նրանք չար չեն: Նույն մարդիկ են, որոնք պիտի գալին՝ քեզ բարձրակոչ ողջունելու քո հանդիսավոր մուտքի ժամանակ, եթե գրաված լինեիր այս Ռուսն քաղաքը: Իրադարձություններն այլ կերպ ընթացան. միայն այդքանը, ուստի հիմա եկել են նայելու, թե ինչպես պիտի այրվես խարույկի վրա: Այս աշխարհի հզորների փառքը կամ մահը լոկ ներկայացում է նրանց համար, որոնց երբեք ոչինչ չի պատահում: Պետք է նրանց ներել, ժանձա՛: Իրենց ամբողջ կյանքի ընթացքում նրանք թանկ են վճարում, որ կարողանան վայելել այդ մանր զվարճությունները:

**ԺԱՆՆԱ (մեղմ).**— Ես նրանց ներում եմ, և ձեզ, նույնպես, տյա՛ր:

**ԳԼԽԱՎՈՐ ՎԵՐԱԿԱՑՈՒՆ (ցցվում է, ոռնալով).**— Գոռո՛գ, զազրելի գոռո՛գ: Նորին Վեհանձնությունը քեզ հետ հոր նման է խոսում փրկելու համար քո թշվառական կորուսյալ հոգին և դու հանդրգնություն ունես ասելու, որ ներո՞ւմ ես նրան:

**ԺԱՆՆԱ.**— Նորին Վեհանձնությունն ինձ հետ մեղմ է խոսում, բայց չգիտես փրկելո՞ւ, թե՞ հաղթելու համար: Եվ քանի որ քիչ հետո հարկադրված պիտի լինի ինձ այրել տալ խարույկի վրա, ուստի ես նրան ներում եմ:

**ԿՈԾՈՆ.**— Ժանձա՛, փորձիր հասկանալ, որ ինչ-որ անհեթեթ բան կա քո մերժման մեջ: Հո դու անհավատ չե՞ս: Այն Աստվածը, որին դու վկայակոչում ես, նաև մերն է: Նա հենց մեզ է նշանակել, որ քեզ ուղղություն տանք Նրա առաքյալ սուրբ Պետրոսի միջնորդությամբ, որ հիմնել է Նրա Եկեղեցին: Աստված չի ասել իր արարածին. «Ուղղակի ինձ ես դիմելու»: Նա ասել է. «Դու ես վե՛մ, ես ի վերայ այդր վիմի շինեցից զեկեղեցի իմ... Ես քահանայք Նորա եղիցին հովիվս ձեր...»: Դու հո մեզ անարժան քահանաներ չե՞ս համարում, ժանձա՛:

**ԺԱՆՆԱ.**— Ո՛չ, չեմ համարում:

**ԿՈԾՈՆ.**— Այնժամ, ինչո՞ւ չես ուզում անել այն, ինչ ասել է Աստված: Ինչո՞ւ չես ուզում քո սխալի քավությունն ապավինել Նրա Եկեղեցուն այնպես, ինչպես այդ անում էիր երեխա ճամանակ, ձեր գյուղում: Հո դու չե՞ս փոխել քո հավատը:

**ԺԱՆՆԱ (նշում է հանկարծակի տազնապած).**— Ես ուզում եմ ապա-



վիճել Եկեղեցուն: Ես ուզում եմ սուրբ հաղորդությունը: Այն ինձ  
սերժում են:

**ԿՈՇՈՆ.—** Մենք քեզ այն կտանք՝ քո խոստովանությունից հետո, և  
հենց որ սկսվի քո պատիժը, պետք է, որ դու միայն մեզ ասես՝  
այո: Դու քաջ ես, մենք բոլորս այդ գիտենք, բայց քո մարմինը  
դեռևս փխրուն է. դու պիտի որ մահից վախենալիս լինես, այն-  
պես չէ՞:

**ԺԱՆՆԱ (կամացուկ).—** Այո՛, ես վախենում եմ, բայց դա ի՞նչ է փո-  
խում:

**ԿՈՇՈՆ.—** Ես քեզ բավականաչափ հարգում եմ, Ժաննա՛, որ կարծես,  
թե այդքանը հերիք է, որպեսզի ինքդ քեզ դրժես: Դու մի ուրիշ  
վախ էլ պիտի որ ունենաս, դեռևս ավելի մեծ մի վախ. այն, որ  
սխալվել ես և գոռոգությունից ու համատությունից դրոժած՝ քեզ  
ենթարկում ես հավիտենական անեծքին: Ուստի ի՞նչ ես վտան-  
գում, նույնիսկ եթե քո Զայները Աստծուց են, որ դու խոնարհու-  
թյան արարմունքը կատարես Նրա Եկեղեցու քահանաների հան-  
դես: Եթե մենք չենք հավատում քո Զայներին և նրանց պատ-  
վիրաններին և քեզ ենթարկենք այն պատժին, որ համարենք խե-  
լացի,— ընդունելով, որ Աստված քեզ հետ իրոք խոսած լինի իր  
Հրեշտակապետի և սուրբ կանանց միջնորդությամբ,— ապա այդ  
մենք ենք, որ գործելու ենք անգիտության, ինքնահավանության  
ու գոռոգության մի ճիվաղային մեղք, որի համար հատուցելու ենք  
մեր հավերժական ողջ կյանքի ընթացքում: Մենք մեզ վտանգի ենք  
ենթարկում քեզ համար, Ժաննա՛, դու քեզ ոչնչով վտանգի չես  
ենթարկում: Մեզ ասա. «Ես ձեզ ապավինում եմ», մեզ պարզա-  
պես ասա՝ այո, և դու ձեռք կրե՞րես անդորր, դու հաստատ միան-  
գամից կդառնաս ճեփճերմակ, դու այլևս ոչինչ չես վտանգի:

**ԺԱՆՆԱ (ուժասպառ, հանկարծակի).—** Ինչո՞ւ ինձ այդքան մեղմորեն  
չարչարում եք, տյա՛ր: Ես պիտի նախընտրեի, որ ինձ ծեծեիք:

**ԿՈՇՈՆ (ժպտում է).—** Եթե քեզ ծեծեի, դրանով իսկ լիակատար ար-  
դարացում պիտի տայի քո գոռոգությանը, որը հենց միայն այն  
և ուզում, որ քեզ մահապատժի ենթարկենք: Ես քեզ խելքի եմ  
բերում, որովհետև Աստված քեզ ստեղծել է խորապես բանիմաց  
ու խելացի: Ես քեզ նույնիսկ պաղատում եմ, որովհետև գիտեմ,  
որ բնքուշ սիրտ ունես: Ես ծերունի եմ, Ժաննա՛, աշխարհից շատ  
մեծ բան չեմ սպասում, և ես, ինչպես մեզանից յուրաքանչյուրն  
ապուղ, շատ եմ սպանել Եկեղեցին պաշտպանելու համար: Բա-

վական է: Ես հոգնած եմ: Չէի ուզենա մեռնելուց առաջ սպանած լինեի ևս մի աղջնակի: Դու ևս օգնիր ինձ:

**ԺԱՆՆԱ (նայում է նրան, թևաթափ: Լռություներից հետո).—** Ես ի՞նչ պետք է պատասխանեմ:

**ԿՈԾՈՆ (մոտենում է նրան).—** Նախ՝ պետք է հասկանաս, որ հայտարարել այն, թե վստահ ես, որ Աստված է քեզ ուղարկել, այլևս օգտակար չէ ոչնչի և ոչ ոքի: Դրանով հենց ջուր ես լցնում դահճի և անգլիացիների ջրաղացին: Քո թագավորն իսկ, որպես բանհմաց դիվանագետ, նամակների միջոցով, որ քեզ համար կարդացինք, ազդարարել է, որ ոչ մի կերպ նա իր թագը պարտական չէ աստվածային միջնորդությանը, որի գործիքը դու եղած լինես: **Ժաննան տագնապած շրջվում է դեպի Ծարլը: Վերջինս պարզապես սսում է:**

**ԾԱՐԼ.—** Քեզ պատկերացրու իմ տեղը, Ժաննա՛: Եթե հրաշք էր պետք, որ ես օծվեմ Ֆրանսիայի թագավոր, ուրեմն դա նշանակում է, որ ինքնին բնական չէր, որ ես այն լինեի: Դա պիտի նշանակեր, որ ես իրոք իմ հոր որդին չեմ, այլապես իմ թագադրությունը ինքն իրեն լինելու բան էր: Բոլոր թագավորները միշտ էլ օծվել են իմ գերդաստանում, առանց հրաշքի կարիքի: Աստվածային օգնությունը լավ է, բայց կասկած է հարուցում. մեկի համար, որի լոկ հզորությունն արդեն իսկ ապահովում է նրա լիակատար իրավունքը: Եվ առավել ևս կասկած է հարուցում, երբ աստվածային օգնությունը դադարում է... Փարիզի դժբախտ պատահարից հետո մենք իրար ետևից պարտություններ ենք կրում. դու թույլ ևս տալիս, որ քեզ Կոնպիենում ձերբակալեն: Հիմա էլ քեզ համար ինչ-որ դատավճիռ են տգմզում, որ քեզ որակեն իբրև վհուկ, աղանդավոր, հաստատապես սատանայի կողմից ուղարկված: Ես նախընտրում եմ այն մեկնաբանությունն, ըստ որում դու ոչնչի կողմից էլ ուղարկված չես: Այդպիսով, Աստված ինձ ո՛չ օգնել է, ո՛չ լքել է: Ես հաղթեցի, որովհետև տվյալ պահին ամենաուժեղն էի: Հիմա թույլ եմ տալիս, որ ինձ տրորեն, որովհետև այս պահին նվազ ուժեղ եմ: Սա քաղաքականությունն է, նյարդախտային չէ: Հասկանո՞ւմ ես:

**ԺԱՆՆԱ (մեղմ).—** Այո՛, հասկանում եմ:

**ԿՈԾՈՆ.—** Ուրախ եմ, որ վերջապես խելքի ես գալիս: Քեզ տվել են շատ հարցեր, որոնց մեջ դու մոլորվել ես: Ես քեզ տալու եմ երեք էական հարց: Երեք անգամ ինձ պատասխանիր՝ այո, և այստեղ

բոլորս փրկվում ենք՝ դու, որ պիտի մեռնես և մենք, որ քեզ մահապատժի պիտի ենթարկենք:

**ՎԱՆՆԱ (մեղմորեն, լռություներից հետո).**— Տվեք ձեր հարցերը: Տեսնեմ, գուցե կարողանամ քեզ պատասխանել:

**ԿՈՇՈՆ.**— Առաջին հարցն է ամենակարևորը: Եթե պատասխանես՝ այո, մնացյալ պատասխանները իրենք իրենց կստացվեն: Ուշադի՛ր լսիր և կշռիր ամեն մի բառը. «Դուք արդյոք խոնարհությամբ սպասվինո՞ւմ եք առաքելական ու հոռմեական Սուրբ Եկեղեցուն, մեր Սուրբ Հայր Պապին ու նրա եպիսկոպոսներին ձեր գործողությունները քննելու և ձեզ դատելու հոգսը: Դուք արդյոք կատարո՞ւմ եք ամբողջական ու լիակատար հնազանդության արարմունք, և խնդրո՞ւմ եք արդյոք, որ ձեզ ընդունեն Եկեղեցու գիրկը»: Բավական է, որ դու պատասխանես՝ այո:

**Ժամանակ լռություներից հետո փշրված ճայում է իր շուրջը: Վերջապես ասում է:**

**ՎԱՆՆԱ.**— Այո՛, բայց...

**ԻՆԿՎԻԶԻՏՈՐԸ (խուլ ձայնով, իր տեղից).**— Առանց «բայց»-ի, ժամանա՛:

**ՎԱՆՆԱ (ինքն իր մեջ ներփակվելով).**— Ես չեմ ուզում հարկադրված ասել հակառակն այն բանի, ինչ ինձ ասել են իմ Չայները: Ես չեմ ուզում, որ որևէ բան ունենամ վկայակոչելու իմ թագավորի դեմ, ոչինչ, որ ի վիճակի լինի խուցացնելու փառքը նրա թագադրության, որ ձեռք է բերել նա հիմա, մեկ անգամ ընդմիշտ...

**Ինկվիզիտորը բարձրացնում է ուտերը:**

**ԻՆԿՎԻԶԻՏՈՐԸ.**— Լսեցեք՝ մարդն է խոսում: Մեկ միջոց կա միայն նրան լռեցնելու...

**ԿՈՇՈՆ (ինքն էլ է սկսում զայրանալ).**— Վերջապես, ժամանա՛, դու ցնորվա՞ծ ես: Չե՞ս տեսնում արդյոք կարմրագգեստ այս մարդուն, որը քեզ սպասում է: Դու պիտի հասկանաս, սակայն, որ սա իմ վերջին նախաձեռնությունն է քեզ փրկելու, որ ուրիշն այլևս չեմ կարողանա: Եկեղեցին դեռ ուզում է հավատալ, որ դու նրա դուստրերից մեկն ես: Նա խնամքով կշռադատել է իր հարցի ձևը՝ հեշտացնելու համար քո ուղին, իսկ դու մանրախնդրություն ես անում, սակարկում ես: Դու Մորդ հետ սակարկելու իրավունք չունես, անամո՞թ աղջիկ: Դու ծնկաչոք պիտի պաղատես, որ նա քեզ փաթաթի իր շրջագգեստի մեջ և զորավիզ դառնա: Պատիժը, որին նա քեզ ենթարկելու է, դու կնվիրաբերես Աստծուն, անարդարությունն էլ հետը, եթե դու դրանում անարդարություն ես տես-

նում: Մեր սուրբ Տերը տառապել է քեզնից ավելի, քեզ համար՝  
իր Խաչը կրելով անարդարության և ստորացվածության մեջ: Նա  
արդյոք սակարկե՞ց: Նա արդյոք մանրախնդրությո՞ւն արեց, երբ  
հարցը վերաբերում էր քեզ համար մեռնելուն: Դու ուշացնում ես  
Նրա համեմատությամբ. ապտակների երեսին, թուք ու մուր, փշե  
պսակ և անվերջանալի հոգեվարքը երկու ավազակների միջև,—  
դու երբեք չես կարողանա հասնել նրան: Այն ամենը, ինչ Նա  
մեր ձայնով պահանջում է քեզնից, հնազանդվելն է Նրա Եկեղե-  
ցու դատաստանին, և դու դեռ տատանվո՞ւմ ես:

**ՓԱՆՆԱ (լռությունից հետո, արցունքն աչքերին).**— Ներողություն,  
տյա՛ր, ես չէի մտածել, որ մեր սուրբ Տերը կարող էր այդ ցան-  
կանալ: Ծիշտ է, որ նա ինձնից ավելի շատ է տառապել: **(Եվ  
մի կարճատև լռություն, և նա ասում է):** Ես հնազանդվում եմ:

**ԿՈԾՈՆ.**— Աղաչո՞ւմ ես արդյոք խոնարհաբար և առանց որևիցե վե-  
րապահության, որ Կաթոլիկ Սուրբ Եկեղեցին քեզ ետ վերցնի իր  
գիրկը և ապավինո՞ւմ ես արդյոք նրա դատաստանին:

**ՓԱՆՆԱ.**— Ես խոնարհաբար աղաչում եմ իմ Մայր Եկեղեցուն, որ  
ինձ ետ վերցնի իր գիրկը և ապավինում եմ նրա դատաստանին...

**ԿՈԾՈՆ (թեթևացած հառաչում է).**— Լա՛վ, ժամանա՛: Մնացյալը հիմա  
շատ պարզ է լինելու: Խոստանո՞ւմ ես ընդմիշտ հրաժարվել զենք  
վերցնելուց:

**ՓԱՆՆԱ.**— Ախր դեռ գործ կա անելու...

**ԿՈԾՈՆ.**— Գործը, ինչպես որ ասում ես, լինելու է ուրիշների համար:  
Հիմար մի՛ եղիր, ժամանա՛: Դու շղթայված ես, բանտարկյալ և  
խարույկի վրա այրվելու մեծ վտանգի տակ: Ամեն կերպ, հո չե՞ս  
տարակուսում, որ «այո» ասես, թե «ոչ», միևնույն է՝ այդ գործն  
այլևս քեզ համար չի լինելու: Դու քո դերը խաղացել ես: Անգլիա-  
ցիները, որոնց ձեռքում ես դու, թույլ չեն տա, որ այլևս պատե-  
րազմես: Քիչ առաջ ասացիր, որ եթե մի աղջիկ երկու սուի բանի-  
մացություն է ունեցել, ուրեմն, դա հրաշք է եղել Աստծո կողմից:  
Արդ, ժամանակն է, որ եթե ապավեն է Աստված, ապա քեզ հա-  
մար ուղարկի այդ երկու սուի բանիմացությունը: Խոստանո՞ւմ ես  
արդյոք ընդմիշտ հրաժարվել զենք վերցնելուց:

**ՓԱՆՆԱ (տնքում է).**— Իսկ եթե թագավորս դեռ իմ կարիքն ունի՞:

**ԾԱՐԼ (հապշտապ).**— Օ՛հ, լա՛, լա՛... Եթե ինձ համար եք անհաս-  
գրստանում, կարող եք անմիջապես ասել՝ այո: Ես այլևս ձեր  
կարիքը չունեմ:

**ՓԱՆՆԱ (խլացած ձայնով).**— Ուրեմն, այո՛:

**ԿՈՇՈՆ.**— Խոստանում ես արդյոք, որ ընդմիջտ հրաժարվում ես կրել քրիստոնեական համեստության ու պատշաճության բոլոր կանոններին անհարիր տղամարդու այդ անամոթ հագուստը, որի մեջ զգեստավորվել ես դու:

**ԺԱՆՆԱ (այդ հարցից հոգնած).**— Դուք այդ ինձ հարցրել եք տասն անգամ: Հագուստը ոչինչ է: Իմ Ձայներն ինձ ասել են, որ այն հագնեմ:

**ԳԼԽԱՎՈՐ ՎԵՐԱԿԱՑՈՒՆ (կաղկանձում է).**— Դա սատանա՞ն է: Ով, սատանայից բացի, կարող էր դրդել աղջկան, որ այդպես ոտնահարի ամոթխածությունը:

**ԺԱՆՆԱ (մեղմ).**— Բայց հենց բանիմացությունը, տյա՛ր:

**ԳԼԽԱՎՈՐ ՎԵՐԱԿԱՑՈՒՆ (հռհռում է).**— Բանիմացությո՞ւնը: Քեզ հետ խոսքը մեկ է արել այդ բանիմացությունը: Աղջկա հագին՝ շարվար, և դա բանիմացությունն է:

**ԺԱՆՆԱ.**— Իհարկե, տյա՛ր: Ես պետք է ձիու վրա արշավեի զինվորների հետ. որպեսզի չմտածեին, որ ես աղջիկ եմ. որպեսզի հանձին ինձ տեսնեին լոկ մի զինվորի, ինչպիսին որ իրենք են, հարկ էր, որ հագնված լինեի, ինչպես որ իրենք են:

**ԳԼԽԱՎՈՐ ՎԵՐԱԿԱՑՈՒՆ.**— Վա՛տ պատասխան է: Մի աղջիկ, որ նախօրոք անիծյալ չէ, գործ չունի վազվզելու զինվորների հետ:

**ԿՈՇՈՆ.**— Ընդունենք, որ այդ հագուստը նույնիսկ քեզ օգտակար է եղել պատերազմի ժամանակ. այն պահից, ինչ դու մեր ձեռքն ես ընկել. այն պահից, ինչ դադարել ես պատերազմել, ինչո՞ւ միջտ հրաժարվել ես քո սեռի հագուստը կրելուց:

**ԺԱՆՆԱ.**— Ձեի կարող:

**ԿՈՇՈՆ.**— Ինչո՞ւ:

**ԺԱՆՆԱ (մի քիչ տատանվում է, հետո բոլորովին շիկնած).**— Եթե եկեղեցու բանտում գտնվելիս լինեի, ես շրջազգեստ կհագնեի:

**ԳԼԽԱՎՈՐ ՎԵՐԱԿԱՑՈՒՆ.**— Դուք լավ եք տեսնում, Ձերդ Վեհանձնությունն, որ այս աղջիկը մանրուքների ետևից է ընկել,— որ նա մեզ ձեռ է առնում: Ինչո՞ւ շրջազգեստ պիտի հագնեիր եկեղեցու բանտում, իսկ այն բանտում, որի մեջ գտնվում ես հիմա դու, հրաժարվում ես: Ես այդ չեմ հասկանում և ուզում եմ հասկանալ...

**ԺԱՆՆԱ (տխուր ժպտում է).**— Դա, սակայն, հեշտ է հասկանալ, տյա՛ր: Դրա համար կարիք չկա լինելու բարձրաստիճան կղերական:

**ԳԼԽԱՎՈՐ ՎԵՐԱԿԱՑՈՒՆ (ինքնատիրապետումը կորցրած).**— Դա ուշտ է հասկանալ, և ես չեմ հասկանում, որովհետև անասուն

եմ անկասկած: Նկատի ունեցե՛ք, տյա՛րք, որ նա ինձ անարգում է իմ հասարակական պաշտոնավարության ընթացքո՛ւմ: Թող իր անամոթությամբ փառքի տիտղոսի արժանանա, թող դրանով պարծենա, թող դրա մեջ իր համար գտնի չգիտեմ ի՞նչ հեշտամոլ վայելք... Եթե նա ըստ էության հնազանդվում է Եկեղեցուն, ինչը որ նա կարծես ցանկանում է, Նորին Վեհանձնության վերջին ճիգերից հետո, գուցե հարկ լինի, որ այս դատական նիստի շարունակության ընթացքում ես հրաժարվեմ մեղադրապետի իմ գործունեությունից, սակայն քանի դեռ նա չի ուզում հրաժարվել այդ սատանայական հագուստից,— ինչպիսիք էլ լինեն ինձ վրա գործվելիք ճնշումները՝ նրան իր ճակատագրից փրկելու միտումով, մի բան, որ զգում եմ դատաքննությունը նախագահելու ոճից,— և ինչքան ժամանակ նա կրելիս կլինի անամոթության և արատի այս տարազը, ես չեմ հրաժարվելու կախարդանքի դեմ մեղադրապետի իմ այսօրվա գործունեությունից: Եթե հարկ լինի, ես կդիմեմ Բալի՛ Եկեղեցական ատյանին: Սատանան այստեղ է, տյա՛րք, սատանան այստե՛ղ է: Ես զգում եմ նրա ահարկու ներկայությունը: Այդ նա է, որ թելադրում է նրան չհրաժարվել տղամարդու հագուստից. այդ հարցում կասկած չկա:

**ԺԱՆՆԱ.**— Ինձ տեղավորե՛ք եկեղեցու բանտում, և ես կհրաժարվեմ այս հագուստից:

**ԳԼԽԱՎՈՐ ՎԵՐԱԿԱՑՈՒՆ.**— Դու Եկեղեցու հետ սակարկելու իրավունք չունես, ժաննա՛: Նորին Վեհանձնությունը քեզ արդեն ասաց: Դու այս կամ այն կերպ թողնելու ես այդ հագուստը, կամ պաշտոնապես հայտարարելու եմք, որ դու վիուկ ես, և քեզ այրելու են խարույկի վրա:

**ԿՈԾՈՆ.**— Ինչո՞ւ, եթե սկզբունքն ընդունում, չես ուզում հրաժարվել այս հագուստից այն բանտում, որի մեջ գտնվում ես ներկայումս:

**ԺԱՆՆԱ (շիկնած մրմնջում է).**— Ես այնտեղ մեռնակ չեմ:

**ԳԼԽԱՎՈՐ ՎԵՐԱԿԱՑՈՒՆ (կաղկանձում է).**— Էհ, հետո՞:

**ԺԱՆՆԱ.**— Երկու անգլիացի զինվորներ գիշեր-ցերեկ հետս լուսացնում են բանտախցում:

**ԳԼԽԱՎՈՐ ՎԵՐԱԿԱՑՈՒՆ.**— Է՛հ, հետո՞: (**Լուռություն: Ժաննան դեռևս շիկնում է և չի պատասխանում**): Պատասխանելո՞ւ ես: Բան չես գտնում հորինելու, այնպես չէ՞: Ես կարծում էի, որ սատանան ավելի հնարամի՛տ է: Նրան չեմ հաղորդի իմ շնորհավորական հաճոյախոսությունները: Ես տեսնում եմ, որ ծուղակն ես ընկել, չէ՞, աղջի՛կս, քանի որ հիմա բոլորովին շիկնել ես:

**ԿՈՇՈՆ (մեղմ).**— Պետք է, որ դու այժմ պատասխանես, ժաննա՛: Ես քեզ, կարծես, հասկանում եմ, բայց պետք է, որ ինքդ այդ ասես:

**ԺԱՆՆԱ (մի պահ վարանելուց հետո).**— Գիշերները երկար են: Ես շղթայված եմ: Ջանում եմ չքնել, բայց երբեմն հոգնածությունս ավելի ուժեղ է լինում... **(Վանգ է առնում՝ էլ ավելի կարմրելով):**

**ԳԼԽԱՎՈՐ ՎԵՐԱԿԱՑՈՒՆ (ավելի ու ավելի բթացած).**— Էհ, հետո՞: Գիշերները երկար են, դու շղթայված ես, քնելու ցանկություն ունես... Էհ, հետո՞:

**ԺԱՆՆԱ (կամացուկ).**— Այս հագուստով ես ավելի հեշտ կկարողանամ պաշտպանվել:

**ԿՈՇՈՆ (հարցնում է հանկարծակի խլացած ձայնով).**— Եվ դու այդ կերպ պաշտպանվում ես այն օրվանի՞ց, ինչ սկսվել է դատական նիստը:

**ԺԱՆՆԱ.**— Այն պահից, ինչ ինձ ձերբակալել են, տյա՛ր, բոլոր գիշերները, հենց որ ինձ ետ եք ուղարկում այնտեղ, երեկոյան, դա վերսկսում է: Ես սովորել եմ չքնելուն. դրա համար էլ, երբեմն, հաջորդ օրը, երբ ինձ կրկին ետ են բերում ձեզ մոտ, ես մի քիչ թարս ու շիտակ եմ պատասխանում: Բայց երկար են բոլոր գիշերները, և նրանք ուժեղ են ու խորամանկ: Հարկ է լինում, որ ես թունդ կռվեմ: Իսկ եթե շրջագոյեստ եղավ հագիս... **(Վանգ է առնում):**

**ԿՈՇՈՆ.**— Ինչո՞ւ սպային չես կանչում, որ քեզ պաշտպանի:

**ԺԱՆՆԱ (դադարից հետո, խլացած ձայնով).**— Նրանք ինձ ասացին, որ իրենց կկախեն, եթե կանչեմ...

**ՎԱՐՎԻՔ (Կոշոնին).**— Ջզվելի է՛: Դա զզվելի է՛: Ֆրանսիական բանակում՝ խելքի մոտ բան է... սակայն անգլիական բանակում՝ ոչ: Ես ստուգելու եմ:

**ԿՈՇՈՆ (մեղմ).**— Վերադարձի՛ր Մայր Եկեղեցու գիրկը, ժաննա՛, ընդունի՛ր, որ նորից հագնելու ես կնոջ զգեստ, և հենց Եկեղեցին այսուհետև կլինի քո պաշտպանը: Դու հարկադրված չես լինելու կռվով պաշտպանվել: Ես քեզ այդ խոստանում եմ:

**ԺԱՆՆԱ.**— Այնժամ, ես ընդունում եմ:

**ԿՈՇՈՆ (խորը հառաչանք է արձակում).**— Լա՛վ: Ծնորհակալություն, ժաննա՛, որ ինձ օգնեցիր: Ես մի պահ վախեցա, որ չեմ կարողանա քեզ փրկել: Քիչ հետո քեզ համար կկարդան արձանագրությունը քո դրժման մասին. կազմ ու պատրաստ է. քեզ մնում է միայն ստորագրել:

**ԺԱՆՆԱ.**— Ես գրել չգիտեմ:

**ԿՈԾՈՆ.**— Խաչ կքաշես: Տյա՛ր Ինկվիզիտոր, ինձ թույլ կտա՞ք ետ կանչել եղբայր Լադվենյուին, որպեսզի կարդա արձանագրությունը: Ես խնդրել էի, որ նա այն շարադրի: Մենք, ի դեպ, պետք է ամբողջական կազմով վճիռ արձակենք, քանի որ Ժաննան վերադառնում է մեր շարքերը: **(Թեքվում է դեպի Ինկվիզիտորը):** Դուք պիտի որ գոհ լինեք. մարդն ասաց՝ այո:

**ԻՆԿՎԻԶԻՏՈՐԸ (անորոշ շարժում է անում).**— Ես սպասում եմ ավարտին:

**Կոշոնը գնում է դեպի խորքը, ձայն է տալիս մի Պահակի:**

**ԿՈԾՈՆ.**— Ետ կանչեք եղբայր Լադվենյուին:

**ԳԼԽԱՎՈՐ ՎԵՐԱԿԱՑՈՒՆ (մոտենում է Ինկվիզիտորին և հետը խոսում է ցածրաձայն).**— Տյա՛ր Ինկվիզիտոր՛, հո դուք թույլ չե՞ք տալու, որ այդպիսի բան անեն:

**ԻՆԿՎԻԶԻՏՈՐԸ (անորոշ շարժում է անում).**— Եթե աղջիկն ասաց՝ այո:

**ԳԼԽԱՎՈՐ ՎԵՐԱԿԱՑՈՒՆ.**— Նորին Վեհանձնությունն Եպիսկոպոսը հարցաքննությունը տարավ այնպիսի ներողամտությամբ այդ աղջկա նկատմամբ, որ չեմ կարողանում հասկանալ: Ես հաստատաբար աղբյուրից գիտեմ, սակայն, որ նա օգտվում է անգլիական քսակից: Գուցե ավելի շատ է օգտվում ֆրանսիական քսակից: Ահա այն հարցը, որ բարձրանում է իմ առաջ:

**ԻՆԿՎԻԶԻՏՈՐԸ (ժպտում է).**— Այդ հարցն իմ առաջ չի բարձրանում, տյա՛ր Գլխավոր Վերակացու: Հարցը քսակի մեջ չէ. ավելի ծանր է: **(Հանկարծակի ծնրադրում է մոռանալով Գլխավոր Վերակացուին):** Օ՛, սուրբ Տեր: Դուք թույլ տվիք, որ տասնմեկերորդ ժամին մարդը խոնարհվի և նվաստանա այդ աղջկա մեջ: Դուք թույլ տվիք, որ այդ անգամ նա ասի՝ այո: Ինչո՞ւ Դուք միաժամանակ թույլ տվիք, որ հաշտվողականությունների մեջ իր կյանքը մաշած այդ ծերունու սրտում, որ դատում է նրան, ծագի մի անկարելի քնքշություն: Դուք, ուրեմն, երբևիցե թույլ չե՞ք տալու, Տե՛ր, որ այս աշխարհից վերանա մարդասիրության ամենայն հետք, որպեսզի կարողանանք խաղաղ սրտով այն նվիրաբերել ի փառս Ձեզ:

**Եղբայր Լադվենյուն եկել է առաջ:**

**ԿՈԾՈՆ.**— Եղբա՛յր Լադվենյու, Ժաննան փրկված է: Նա համաձայն է վերադառնալ մեր Մայր Եկեղեցու գիրկը: Կարդացեք նրա համար դրժման արձանագրությունը: Նա պիտի ստորագրի տակին:

**ԼԱԴՎԵՆՅՈՒ.**— Ծնորհակալություն՛ն, Ժաննա՛: Այս ամբողջ ժամա-



նակամիջոցին եւ աղոթում էի քեզ համար: **(Կարդում է):** «Ես՝ Փաննաս, որ նույնպէս կոչվում եմ Կույս, խոստովանում եմ, որ մեղք եմ գործել՝ դրդված գոռոզությունից, համառությունից ու նենգությունից, հավակնելով, որ հայտնություններ եմ ստացել մեր սուրբ Տէր Աստուծոց, Նրա հրեշտակների և երանելի սուրբ կանանց միջնորդությամբ: Խոստովանում եմ, որ սրբապղծել եմ, կրելով անհամեստ հագուստ՝ հակառակ իմ սեռի վայելչությանը և մեր սուրբ Մայր Եկեղեցու կանոններին,— և իմ նենգություններով մարդկանց մղել եմ, որ իրար սպանեն: Ես դատապարտում ու դրժում եմ այդ բոլոր մեղքերը, երդվում եմ Սուրբ Գրքով, որ հրաժարվելու եմ երբևիցէ կրել աղանդավորական այդ հագուստը և այլևս երբեք ձեռքս զենք չեմ վերցնելու: Հայտարարում եմ, որ սույնով խոնարհաբար ապավինում եմ մեր սուրբ Մայր Եկեղեցուն և մեր սուրբ Հայր Հոռմի Պապին ու նրա Եպիսկոպոսներին, որպէսզի գնահատեն մեղքերս ու մոլորություններս: Ես պաղատում եմ, որ Նա ինձ ընդունի իր գիրկը և հայտարարում եմ, որ պատրաստ եմ կրելու այն պատիժը, որին նա հարկ կհամարի ինձ արժանացնել: Ի հաստատումն վերոհիշյալի եւ իմ անունով ստորագրեցի դրժման այս արձանագրությունը, որի մասին և հայտարարում եմ, որ ծանոթ եմ դրա բովանդակությանը»:

**ԻՒՆՆԱ (որն ընդամենը մի այլայլված աղջնակ է).**— Կլո՞ր գծեմ, թե՞ խաչ: Ես չգիտեմ գրել իմ անունը:

**ԻՒԿՎԵՆՅՈՒ.**— Ես կրնեմ քո ձեռքը **(Օգնում է, որ նա ստորագրի):**

**ԻՍԾՈՆ.**— Ահա՛ Փաննա: Քո Մայրը տոնական հրճվանքի մեջ է, որ դու վերադարձել ես նրա գիրկը: Եվ դու գիտես, որ նա հրճվում է մոլորյալ ոչխարի համար ավելի, քան մնացյալ իննսունհինգի համար... Հոգիդ փրկված է, և մարմինդ չափտի հանձնվի դահլիճին: Մենք քեզ դատապարտում ենք, լոկ ողորմածությունից ու չափավորությունից դրդված, որ քո կյանքի մնացյալ օրերն անցկացնես բանտում, որպէս պատիժ քո մոլորությունների համար՝ նաշակելով տառապալի հացը և տագնապալի ջուրը, որպէսզի ներհայեցողությամբ կարողանաս զղջալ մեղության մեջ,— և նրկատառումովն այդ ամենի՝ հայտարարում ենք, որ փրկվեցիր բանտարանքի վտանգից, որի մեջ ընկել էիր դու: Կարող ես գնալ իսպաղողությամբ: **(Խաչակնքում է նրան՝ օրհնելով):** Տարեք նրան: **Զինվորները տանում են Փաննային: Բոլորը վեր են կենում և**

**խումբ խումբ սկսում են շողակրատել. նիստի ավարտի մթնոլորտ:**

**ԻՒԿՎԻԲ (մտանում է՝ հոտոտելով իր ձեռքի վարդը).**— Լա՛վ է, ջե-

րըդ Վեհանձնություն'ն, լա՛վ է: Մի պահ ինքս ինձ հարց տվի, թե այդ ինչ տարօրինակ հակում է, որ ձեզ մղում է ամեն գնով փրկելու այդ աղջնակին... Եվ թե արդյոք միտում չունե՞ք դավաճանելու ձեր թագավորին:

**ԿՈՇՈՆ.**— Ո՞ր թագավորին, Ձերդ Վեհանձնություն'ն:

**ՎԱՐՎԻՔ (մի թեթև չորելով).**— Ես ասացի՛ ձեր թագավորին: Դուք մեկն ունեք, չէ՞, ըստ իս: Այո, ես վախեցա, որ Նորին Պաշտօնափայլությունը այդ աղջկա վրա ծախսած գումարի դիմաց, չստանա իր հասանելիքը, ձեր պատճառով: Հետո խորհեցի՞: Դրժումը մեզ լիովի բավական է այդ փոքրիկ Ծարլին պատվազրկելու համար: Դա նույնիսկ ունի առավելություն խուսափելու նահատակության հետևանքներից, որոնք միշտ էլ աննախատեսելի են, եթե նկատի ունենանք ժողովուրդների հոգու մեջ առկա զգացմունքայնությունը: Խարուկը, այդ անհողողող աղջիկը բոցերի մեջ՝ դա թերևս մի թեթև հաղթանակի շուք ունեք ֆրանսիական դատի համար: Դրժումը ինչ-որ խղճալի բան ունի իր մեջ: Հիանալի է:

**Բոլոր գործող անձինք հեռացել են: Լուսավորությունը փոխվում է:**

**Խորքում երևում է Ժաննան, որին մի Պահակ տանում է բանտախոց: Ծինոնի գործող անձինք գաղտագողի սողոսկել են՝ սպասելով նրա անցնելուն:**

**ԱԳՆԵՍ (գալիս է առաջ).**— Ժաննա՛, Ժաննա՛, սիրելի՛ս, չգիտեք, թե մենք ինչքան ուրախ ենք այս հաջողությունի՛ց: Ծնորհավորանքներս:

**ՅՈՒԱՆԴԱ ԹԱԳՈՒՀԻՆ.**— Բացարձակապես ավելորդ էր մեռնելը, իմ փոքրիկ Ժաննա՛, սյն ամենը, ինչ կյանքում անում ես, պետք է արդյունավետ լինի... Ինձ, իմ դիրքորոշումը զանազան ձևերով են դատելու, իհարկե, բայց գոնե երբեք չեմ արել ոչինչ, որ արդյունավետ չլինի:

**ԱԳՆԵՍ.**— Ախր անչափ շա՛տ էր հիմար քո վիճակը: Ես շատ եմ սիրում քաղաքական դատավարությունները և Ծարլին միշտ խընդրում եմ, որ տեղ ապահովի ինձ համար. մարդ, որն ուզում է փրկել իր գլուխը՝ դա սրտաճմլիկ տեսարան է... Բայց այս դեպքում ես ուրախ չեի ամենևին... Ամբողջ ժամանակամիջոցում ինքս ինձ ասում էի՝ անչափ շա՛տ է հիմար նրա վիճակը: Այս խեղճ ու կրակ գառը, որն իրեն մահվան դուռը սիտի հասցնի վասն ոչնչի: **(Կառչել է Ծարլի թևից):** Այնքան լավ է, գիտե՞ք, Ժաննա՛, ապրելը...

**ՇԱՐԼ.**— Այո՛, իրոք, երբ քիչ էր մնացել, որ ամեն ինչը զոհաբերեիք

իմ պատճառով,— ես զգացված էի, իհարկե, բայց չգիտեի ձեզ ինչպես հասկացնել, որ սխալ ճամփով եք գնում... Նախ և առաջ, բնականաբար, ես իմ նախազգուշություններով ինձ ապահովեցի՝ հետևելով այդ ծեր աղվես Արքեպիսկոպոսի խորհուրդներին, և նամակով դիմեցի ինձ հպատակ քաղաքներին՝ ձեզ դրժելով, մանավանդ որ չեմ սիրում, երբ ինձ համար զոհաբերվում են: Ես չեմ սիրում, երբ ինձ դարձնում են սիրո առարկա: Դա պարտավորեցնող է: Իսկ ես շատ եմ վախենում պարտավորություններից:

**Ժաննան նրանց կողմը չի նայում, ունկնդրում է շաղակրատանքը կարծես նույնիսկ շտեմելով: Նա հանկարծ մեղմորեն ասում է:**

**ԺԱՆՆԱ.**— Խնամեցեք Ծարլին. թող միշտ լինի քաջարի:

**ԱԳՆԵՍ.**— Իհարկե, իհարկե, հիմա՛ր աղջիկ: Ես նույն ուղղությամբ եմ աշխատում, ինչ որ դուք: Կարծում եք, որ ես շա՛տ ցանկություն ունեմ լինելու միշտ պարտված մի թագավորիկի սիրուհին: Դուք կտեսնեք, որ ես մեծ թագավոր եմ սարքելու մեր փոքրիկ Ծարլից, և այն էլ առանց խարույկ բարձրանալու վտանգի... **(Ցածրաձայն շարունակում է):** Դա մի քիչ տխուր է խոստովանելը, Ժաննի՛կս,— բայց վերջիվերջո Աստված արարեց տղամարդկանց և կանանց,— և իմ անկողնային փոքրիկ տեսարաններով ես նրանից ձեռք բերեցի նույնքան, ինչքան որ դուք:

**ԺԱՆՆԱ (մրմնջում է).**— Խե՛ղճ Ծարլ...

**ԱԳՆԵՍ.**— Ինչո՞ւ խեղճ: Նա շատ երջանիկ է, ինչպես բոլոր եսասերները և այնուամենայնիվ, շատ մեծ թագավոր է դառնալու:

**ՅՈՒԱՆԴԱ ԹԱԳՈՒՀԻՆ.**— Մենք այդ մասին հոգ կտանենք, Ժաննա՛, այլ միջոցներով, քան ձերն էին, բայց նաև շատ ավելի արդյունավետ:

**ԱԳՆԵՍ (մի շարժում անելով Փոքրիկ Թագուհու կողմը).**— Նորին գողտրիկ Պայծառափայլությունը՝ նմանապես, այնպես չէ՞, որը նրա համար մի երկրորդ տղա բերեց: Դա այն ամենն է, ինչ նա կարողանում է անել, բայց շատ լավ է անում: Եվ այդպիսով, առաջինը կարող է մեռնել, մենք հանգիստ ենք: Ժառանգորդը, համենայն դեպս, ապահովված է... Տեսնո՞ւմ եք, ամեն ինչ կարգին վիճակում եք թողնում Ֆրանսիայի արքունիքում:

**ՕՍՐԻ (որը փռշտացել է).**— Գալի՛ս եք, սիրելի՛ս: Ես զգվում եմ բանտային մթնոլորտից. շա՛տ է խոնավ: Տոնություն, Ժաննա՛: Ժամանակ առ ժամանակ մենք ձեզ կայցելենք:

**ԺԱՆՆԱ.**— Տոնություն, Ծա՛րլ:

**ԾԱՌ (ջնագրգռված).**— Տոնություն, ցոնություն... Համենայն դեպքս, եթե արքունիք վերադառնաք, հարկ է, որ ինձ ար՛ր անվանեք, հիմա, ինչպես բոլորը: Այն օրվանից, ինչ թագավորական օծումն եմ ստացել, ես հոգ եմ տանում այդ մասին: Լա Տրեմուալը, նույնիսկ, ինձ այդպես է դիմում: Դա մե՛ծ հաղթանակ է:

**Նրանք դուրս են եկել մանրաքայլ, շրջագգեստների շրջուններով:**  
**ԺԱՆՆԱ (մրմնջում է).**— Գնաք բարով, ար՛ր: Ես գոհ եմ, որ գոնե այդքանը ձեռք եմ բերել ձեզ համար:

**Նա շարունակում է քայլել:** Պահակը նրան հասցնում է մինչև աթոռակը: Լուսավորությունը նորից փոխվում է: Նա հիմա միայնակ է իր բանտախցում:

**ԺԱՆՆԱ (միայնակ).**— Ձերդ Վեհանձնություն սուրբ Միքայել՛, տիկիներ Կատրի՛ն և Մարգրե՛տ, ինձ հետ այլևս չե՛ք խոսում: Ինչո՞ւ եք ինձ միայնակ թողել այն պահից, ինչ ինձ բռնել են անգլիացիները: Դուք միշտ ներկա էիք, ինձ տանելու համար դեպի հաղթանակը, բայց հատկապես դժբախտության մեջ է, որ ես ձեր կարիքն եմ զգում: Ես լավ գիտեմ, որ շատ հեշտ պիտի լինեք մեր բանը, եթե Աստված մեզ միշտ ձեռքից բռնած առաջնորդեր. Էլ ո՞ր պիտի մնար արժանիքը: Սկզբում նա ձեռքիցս բռնեց, երբ դեռ շատ փոքր էի, և հետո մտածեց, որ ես բավականաչափ մեծացել եմ: Ես այնքան էլ մեծ չեմ, Տե՛ր Աստված, և դժվար էր պարզ կողմնորոշվելը այն ամենի մեջ, ինչ ասում էր Եպիսկոպոսը ... Ստոր կանոնիկոսի հետ դա հեշտ էր. ես ցանկություն էի ունենում վատ պատասխանելու, հենց միայն նրան կատաղեցնելու համար: Բայց Եպիսկոպոսն այնպես մեղմ էր խոսում, և մի քանի անգամ ինձ թվաց, որ նա է իրավացի: Անկասկած, Դուք այդ ցանկացել էք, Տե՛ր Աստված. հետո այն, որ ես այնքան վախեցա տառապելուց, երբ այդ մարդն ասաց, որ նույնիսկ չի կարողանա ինձ խեղդել: Անկասկած, դուք ցանկացել էք, չէ՞, որ ես ապրեմ: **(Լռություն: Կարծես պատասխանի է սպասում՝ աչքերը երկնքին հառած):** Լա՛վ: Հարկ է, որ այդ հարցին ևս ես միայնակ պատասխանեմ: **(Դադար, Ծարունակում է):** Վերջիվերջո, գուցե ես ընդամենը գոռոզ էի... Վերջիվերջո, գուցե այդ ես եմ ամեն ինչը հորիմել: Պիտի որ նույնքան լավ լինի խաղաղ ապրելը, երբ ամենայն պարտականություն ուրիշի կողմից հանձնարարվի, և մնում է միայն, որ օր-օրի ետևից համեստորեն քարշ տանք այս խեղճ ու կրակ գանգը... **(Նորից լռություն: Նա մրմնջում է):** Պիտի որ իմ

ուծերից վեր եղած լինի այս ամբողջ պատմությունը... (Հանկարծակի հեծկտալով ընկնում է աթոռակին):

**Վարվիքը** ներս է մտնում արագ, մի Պահակի առաջնորդությամբ, որը նրանց անմիջապես մենակ է թողնում: Նա կանգ է առնում, նայում է ժաննային՝ զարմացած:

**ՎԱՐՎԻՔ.**— Դուք լա՞ց եք լինում:

**ԺԱՆՆԱ (ուղղվում ).**— Ո՛չ, Ձերդ Վեհանձնություն'ն:

**ՎԱՐՎԻՔ.**— Ես էլ եկել էի ձեզ շնորհավորելու: Երջանիկ ավարտ էր այդ դատական գիտի վերջահաշիվը: Ես այդ ասում էի Կոշոնին: Շատ ուրախ եմ, որ կարողացաք խույս տալ խարույկից: Իմ անձնական համակրանքը դեպի ձեզ՝ մի կողմ դրած, սարսափելի տատապում եմ, գիտե՞ք, և միշտ էլ անօգուտ է տառապանքը և անընթացեղ,— ես կարծում եմ, որ բոլորս շահագրգռված ենք, որ դուք խուսափեք նահատակությունից: Ձեզ անկեղծորեն շնորհավորում եմ: Չնայած որ ծագումով դուք ներքնախավից եք, բայց ունեցաք բարձր դասին բնորոշ վարվելակերպ: Ձեռքըմենը միշտ պատրաստ է մեռնելու իր պատվի կամ թագավորի համար. միայն ժողովրդի ցածր խավերի ներկայացուցիչներն են, որոնք կորցնում են իրենց կյանքը վասն ոչնչի: Եվ հետո ինձ զվարճացնում էր այն, որ դուք տեղն էիք նստեցնում այդ ինկվիզիտորին: Մոայլ անհատականություն է: Այդ մտավորականներն այն են, ինչ ամենաշատն են ատում այս աշխարհում: Այդ անմարմին մարդիկ՝ ինչպիսի՞ գարշելի անասուններ: Դուք իրոք կո՞չս եք:

**ԺԱՆՆԱ.**— Այո՛:

**ՎԱՐՎԻՔ.**— Այո, իհարկե: Կինը չէր խոսի ձեզ նման: Իմ նշանածը, Անգլիայում, որ շատ մաքուր աղջիկ է, նույնպես տրամաբանում է ճիշտ ու ճիշտ տղայի նման: Նա անասնձ է, ինչպես դուք: Գիտե՞ք, որ ըստ մի հնդկական առածի, աղջիկը կարող է քայլել ջրի վրաով: (**Մի քիչ ծիծաղում է**): Երբ նա դառնա լեդի Վարվիք, կտեսնենք, թե ինչպես է շարունակելու: Հրաշք բան է կույս լինելը: Մենք դա պաշտում ենք, և դժբախտաբար, հենց որ հանդիպում ենք այդպիսի մեկին, շտապում ենք կին դարձնել նրան,— և կուգենայինք, որ հրաշքը շարունակվի... Մենք խելագարներ՝ ենք: Այս ուսմանական գործողությունները ավարտելուց հետո,— հուսով եմ, որ դա շուտով կլինի, քանի որ, գիտե՞ք, ձեր փոքրիկ Շարլը բոլորովին ուշագնաց է հիմա,— ես վերադառնում եմ Անգլիա և իրագործում եմ այդ խելագարությունը: Վարվիք-դոյակը շատ գեղեցիկ բնակավայր է, մի քիչ ընդարձակ, մի քիչ խստա-

շունչ, բայց շատ գեղեցիկ: Ես այնտեղ հոշակապ անուզներ եմ բուծում: Իմ անանաձր շատ լավ արշավում է ձիու վրա, ձեզնից անվազ, բայց շատ լավ: Նա այնտեղ շատ երջանիկ է լինելու: Մենք աղվես կորսանք, մի քանի սիրուն ընդունելություններ կկազմակերպենք... Ես ցավում եմ, որ այսքան անհարիր հանգամանքներ թույլ չեն տա, որ ձեզ հրավիրեն: **(Կաշկանդող դադար: Նա եզրահանգում է):** Ահա այդքանը: Ես անհրաժեշտ համարեցի ձեզ այցելել հավուր պատշաճի, ինչպես որ իրար ձեռք են սեղմում մրցումից հետո: Հուսով եմ, որ ձեզ չձանձրացրի: Իմ զինվորներն իրենց լա՛վ են պահում հիմա:

**ԺԱՆՆԱ.**— Այո՛:

**ՎԱՐՎԻՔ.**— Ձեզ անկասկած տեղափոխելու են եկեղեցու բանտախուցը: Համենայն դեպս, ձեր այստեղ գտնվելու ժամանակամիջոցում, առաջին իսկ անկարգության դեպքում, ինձ անվարան իմաց տվեք: Մենք չենք կարողանում ջենթլմենների բանակ ունենալ, բայց դրան անպայման պետք է ձգտենք: **(Խոնարհվում է):** Տիկի՛ն: **(Ուզում է դուրս գնալ: Ժաննան նրան ետ է կանչում):**

**ԺԱՆՆԱ.**— Ձերդ Վեհանձնություն՛ն:

**ՎԱՐՎԻՔ (շրջվել է).**— Այո՛:

**ԺԱՆՆԱ (հարցնում է հանկարծակի առանց երեսին նայելու).**— Ավելի լավ պիտի լիներ, այնպես չէ՞, որ ինձ այրած լինեիր խարույկի վրա:

**ՎԱՐՎԻՔ.**— Ես ձեզ ասացի, որ Նորին Պաշտօնափայլության Կառավարության համար ձեր դրժումը ճիշտ նույն բանն է:

**ԺԱՆՆԱ.**— Ո՛չ: Իսկ ի՞նչ համար:

**ՎԱՐՎԻՔ.**— Անօգուտ տատապանք: Ինչ-որ տգեղ մի բան: Ո՛չ, իսկապես դա ավելի լավ չէր լինելու: Դա կարող էր նույնիսկ լինել, ես ձեզ այդ ասել եմ, մի քիչ գոեհիկ, մի քիչ ժողովրդավարի, մի քիչ հիմարություն՝ կամենալ մեռնել, ինչ գնով էլ լինի, բոլորին ձեռնոց նետելու և խարույկի վրայից հայհոյանքներ տեղալու համար:

**ԺԱՆՆԱ (կամացուկ կարծես ինքն իր համար).**— Բայց ես ժողովրդից եմ, ես հիմար եմ... Եվ հետո իմ կյանքը, Ձերդ Վեհանձնություն՛ն, զարդարված չէ, ինչպես ձերը՝ բոլորովին սահուն, բոլորովին ուղղագիծ, պատերազմի, որսի, հաճույքների և ձեր գեղեցիկ անանաձի միջև... Ինձնից ի՞նչ պիտի մնա, երբ ես այլևս չեմ լինի ժաննան:

**ՎԱՐՎԻՔ.**— Ձեզ համար մի շատ զվարճալի կյանք չի նախատեսված,

իմարկե: Համեմայն դեպս, սկզբում: Բայց գիտե՞ք, գործերը ժամանակի հետ միշտ էլ կարգավորվում են:

ԺԱՆՆԱ (մրմնջում է).— Բայց ես չեմ ուզում, որ գործերը կարգավորվեն... Ես չեմ ուզում ապրել ձեր այդ ժամանակը... (Ուղղվում է լուսնոտի նման, որը նայում է հեռուն, ինչ-որ բանի): Դուք արդյոք տեսնո՞ւմ եք Ժաննային, որն ապրում է, մինչ կարգավորված են գործերը... Ժաննային՝ թերևս ազատ արձակված, որը Ֆրանսիայի արքունիքի շնորհած աղքատիկ թոշակն է արածում:

ՎԱՐՎԻՔ (զղագրգոված).— Բայց ձեզ ասում եմ, որ վեց ամիս չանցած, այլևս գոյություն չի ունենալու Ֆրանսիայի արքունիքը:

ԺԱՆՆԱ (որը համարյա ծիծաղում է ցավագին).— Տեսնո՞ւմ եք արդյոք Ժաննային, որն ամեն ինչ ընդունում է, Ժաննային՝ փորը ուռած, Ժաննային, որը դարձել է որկրամուլ... Դուք Ժաննային պատկերացնո՞ւմ եք շարված, գլխանոցը հագին, իր շրջագետնների մեջ խճողված, իր շնիկով կամ փեշին կպած մի տղամարդու հետ զբաղվելիս, և ո՞վ գիտե, թերևս Ժաննային՝ ամուսնացած:

ՎԱՐՎԻՔ.— Ինչո՞ւ չէ: Միշտ էլ պետք է, որ մի ավարտ լինի: Ես ինքս ձեզ կամուսնացնեմ:

ԺԱՆՆԱ (հանկարծակի ճշում է մի ուրիշ ձայնով).— Բայց ես չեմ ուզում, որ մի ավարտ լինի: Համեմայն դեպս, ոչ այս մեկը: Ոչ՝ երջանիկ ավարտը, ոչ այն ավարտը, որից պրծում չկա... (Ուղղվում է և կանչում է): Տյար սուրբ Միքայել՛, սուրբ Մարգրե՛տ, սուրբ Վատրի՛ն, հիմա որքան ուզում եք, լռեցեք: Ես ծնվել եմ լոկ այն օրը, որ ինձ հետ խոսեցիք: Ես ապրել եմ լոկ այն օրվանից, որ արեցի այն, ինչ ասացիք, որ անեմ՝ ձիու վրա, թուրը ձեռքիս: Այդ նա է Ժաննան, միայն նա է Ժաննա՛ն: Ոչ այն մյուսը, որ պիտի խժո՞ի, դժգունի և շողակրատի իր վանքում,— կամ պիտի գտնի իր մանրիկ հարմարավետությունը,— ազատ արձակվելուց հետո... Ոչ այն մյուսը, որ պիտի ընտելանա ապրելուն... Դուք լոռն էիք, Աստվա՛ծ իմ, երբ այդ բոլոր քահանաները խոսում էին միաժամանակ և ամեն ինչ խառնում էին իրենց բառերով: Բայց երբ դուք լոռն եք,— և այդ մասին ինձ իմաց եք տվել սկզբում Նորին Վեհաճանությունն սուրբ Միքայելի միջոցով,— դա լինում է այն պահին, երբ մեզ ամենաշատն էք վստահում: Դա այն պահն է, երբ թույլ եք տալիս, որ մենք ավարտն իրացնենք բոլորովին միայնակ: (Ուղղվում է՝ հանկարծակի մեծացած): Որ այդպես է, ես իրացնում եմ ավարտը, Աստվա՛ծ իմ: Ես ինձ վրա՛

եմ վերցնում պատասխանատվությունը: Ես ձեզ ե՛տ եմ տալիս ժամանային՝ նման ինքն իրեն և մեկ անգամ ընդմիջտ: Կանչի՛ր քո զինվորներին, Վարվի՛ք, քեզ եմ ասում շո՛ւտ: Ես հրաժարվում եմ դրժումից, հրաժարվում եմ կանացի հագուստից. պիտի որ կարողանան օգտագործել իրենց այդ խարույկը. վերջապես, պիտի վայելե՛ն իրենց տոնախմբությունը:

**ՎԱՐՎԻՔ (Անդարտած).**— Ոչ մի գծություն, խնդրում եմ: Ես այսպես շատ գոհ եմ, ինչպես որ ձեզ ասացի: Եվ հետո ես վախենում եմ լիկանքներից: Չեմ կարողանա նայել, թե ինչպես եք մեռնում:

**ԺԱՆՆԱ.**— Պետք է քաջություն ունենալ, ա՛յ տղա: Ես հո ունենալու եմ: (**Նայում է Վարվիքին, որը բոլորովին գունատվել է, բռնում է նրա ուսերից**): Դու լավն ես, համենայն դեպս, չնայած ջենթլմենական քո փոքրիկ մոռթին. բայց տեսնո՞ւմ ես, ճար չկա, նույն ցեղին չենք պատկանում մենք՝ երկուսս: (**Անսպասելիորեն մի թեթև շոյում է նրա այտը և դուրս է գնում՝ ճշարով**): Ջինվորներ՛ր, զինվորներ՛ր: Հե՛յ, կրտոն գողոններ՛ր: Եվ երբ շալվարս հագած կլինեմ, կանչեցեք բոլոր քահանաներին... (**Դուրս է գնում՝ ճշարով**):

**Վարվիքը մնացել է մենակ, սրբում է այտը և մրմնջում:**

**ՎԱՐՎԻՔ.**— Ինչքա՛ն անտեղի է այս ամենը: Եվ գոեհիկ: Անշուշտ, այս ֆրանսիացիները այն ժողովուրդը չեն, որոնց հետ արժե շրփվել...

**Հանկարծ հնչում են ահարկու գոռոռոցները:**

— Մա՛հ վհուկին:

— Այրեցե՛ք աղանդավորուհուն:

— Մա՛հ, մա՛հ, մա՛հ:

Բոլոր գործող անձինք արագորեն ետ են գալիս՝ ձեռքներին խրրձեր, ոռնալով մահ պահանջող գոռոռոցներ՝ Դահնի սուաջն ընկած, որը քարշ է տալիս ժամանային երկու անզրիացի զինվորների օգնությամբ: Լադվենյուն՝ բոլորովին գունատ, հետևում է նրանց:

Այդ ամենը արագընթաց է և կոպիտ, ինչպես դավադրական մարդասպանություն: Դահիճը, որին օգնում է որևէ մեկը, որ կարող է լինել և Գլխավոր Վերակացուն, խարույկ է նախապատրաստում բեմի վրա եղած նստարաններից: Ժամանային հարկադրում են վեր մագլցել, կապում են սյունին և գրոտված ամոթալի տախտակը մեխում են նրա գլխավերևին: Ամբոխը գոռում է:

— Վհուկը՝ սյունի՛ն:

— Խաչատուակության սյունի՛ն: Ճաղատացրե՛ք զինվորի բոզին:



- **Խայտառակության սյունի՛ն, սյունի՛ն: Այրեցե՛ք նրան:**  
**ՎԱՐՎԻՔ (սրտնեղած).**— Ապուշություն, ապուշություն է: Պե՞տք էր մեզ այս բեմադրությունը:
- ԺԱՆՆԱ (ճշում է խարույկի վրայից).**— Մի խաչ տվե՛ք, խա՛չ, հանուն գթության՛ն:
- ԳԼԽԱՎՈՐ ՎԵՐԱԿԱՑՈՒՆ.**— Ոչ մի խաչ՝ վհուկի՛ն:
- ԺԱՆՆԱ.**— Ես ձեզ պաղատում եմ, մի խաչ:
- ԿՈԾՈՆ (Լադվենյուհն).**— Լադվենյո՛ւ, դեպի թեմական եկեղեցին, շտապի՛ր:
- Լադվենյուն դուրս է գնում՝ վազելով:**
- ԳԼԽԱՎՈՐ ՎԵՐԱԿԱՑՈՒՆ (Ինկվիզիտորին).**— Դա կանոնի խախտում է: Դուք չե՞ք բողոքում, տյա՛ր Ինկվիզիտոր:
- ԻՆԿՎԻԶԻՏՈՐԸ (որը բոլորովին գունատ նայում է ժաննային).**— Խաչով թե առանց խաչի, միայն թե լռի, շո՛ւտ: Նայեցեք, թե ինչպես խարույկի բարձունքին մարդը մնում է նույն ամբարտավանը: Ուրեմն, մենք նրան երբեք չե՛նք հաղթելու:
- ԺԱՆՆԱ (շարունակում է ճշալ).**— Մի խա՛չ:
- Անգլիացի մի զինվոր երկու փայտի կտոր կապում է իրաբու և գոռում է դեպի ժաննան:**
- ԶԻՆՎՈՐԸ.**— Վերցրո՛ւ, աղջի՛կս: Ի վերջո, ինձ զգվանք են պատճառում բոլոր այս քահանաները: Մյուսների նման նա էլ ունի իրավունք խաչի ողորմածությանը, այդ աղջի՛կը:
- ԳԼԽԱՎՈՐ ՎԵՐԱԿԱՑՈՒՆ (հարձակվում է վրան).**— Նա աղանդավոր է, ես քեզ արգելում եմ, մա՛րդ:
- ԶԻՆՎՈՐԸ (մի կողմ է շարտում նրան).**— Գնա՛, քո... (Պարզում է իր սարքած խաչը ժաննային որն ազահորեն այն սեղմում է կրծքին ու համբուրում):
- ԳԼԽԱՎՈՐ ՎԵՐԱԿԱՑՈՒՆ (հարձակվում է Վարվիքի վրա).**— Ձերդ Վեհանձնություն՛ն, պետք է այս մարդուն ևս ձերբակալել և դատել որպես աղանդավորի: Ես պահանջում եմ, որ դուք նրան անմիջապես ձերբակալե՛լ տաք:
- ՎԱՐՎԻՔ.**— Ինձ ձանձրացնում եք, պարո՛ն: Ես այդպիսի ութը հարտերն ունեմ իմ բանակում, բոլորն էլ մեկը մյուսից ավելի աղանդավոր: Ես դրանցով եմ պատերազմում:
- ԻՆԿՎԻԶԻՏՈՐԸ (Դահնհին).**— Դե, կրակը կպցրո՛ւ, շո՛ւտ: Թող ծուխը թողարկի նրան. թող չերևա՛ իմ աչքին: (**Վարվիքին**): Պետք է արագացնե՛լ: Հինգ րոպեից հետո, Ձերդ Վեհանձնություն՛ն, բոլորը նրա կողմն են լինելու:



ԵՆԿՎԻԶԻՏՈՐԸ (ընկճված՝ խոնարհում է գլուխը, հաստատում է խլացած ձայնով)։— Ես երբեք չեմ հաղթելու մարդուն։

ՄԱԳՎԵՆՅՈՒԻ (մարդու նկատմամբ ունեցած հավատից և ուրախությունից ճառագայթելով)։— Ո՛չ, տյա՛ր։

ՄԱՆՆԱ (մրմնջում է, արդեն գալարվելով)։— Օ՛հ, Ռուա՛ն, Ռուա՛ն, ուրեմն դո՛ւ ես իմ վերջին կացարանը։ (Հանկարծ տնքում է)։ Օ՛հ, Հիստ՛ա։

ՄԳՆԵՍ (որը մի անկյունի վրա ծնրադրել է Ծարլի և թագուհիների հետ)։— Խեղճ փոքրիկ Ժաննա։ Ախր շա՛տ է հիմար նրա վիճակը... Ձեր կարծիքով նա արդեն ցա՛վ է գգում։

ԸԱՐԸ (որը սրբում է ճակատի քրտինքը և նայում է մի կողմի վրա)։— Մի անախորժ պահ է, որ պետք է անցկացնել։

Մտեղոցի աղոթքի մրմունջը խլացնում է ամեն ինչ։ Հանկարծ Բողոքիկուրը վազելով ներս է մտնում, շնչասպառ, բեմի խորքից սկսած կամ թերևս հենց թատրոնի դահլիճից՝ բոլորովին հրմշտելով։ Նա գոտում է։

ՌԴՐԻԿՈՒՐ.— Դադարեցրե՛ք, դադարեցրե՛ք, դադարեցրե՛ք։

Բոլորն ուղղվել են։ Անորոշության պահ է։

ՄԱՐՈՒՄԻ ՄԻԶԻՑ ԳՈՌԳՈՌՈՑՆԵՐ.— Ի՞նչ է։ Ի՞նչը դադարեցնենք։ Ի՞նչ է ուզում։ Ի՞նչ է ասում։ Խելագարի մե՛կն է։

ԲՈՒՐԻԿՈՒՐ.— Ո՛րֆ, ժամանակին հասա։ (Գոռում է դեպի Կոշոնը)։ Այսպես չի կարելի ավարտել, Ձերդ Վեհանձնություն՛ն։ Չխաղացվե՛ց թագադրությունը։ Ասացին, որ ամեն ի՛նչն են խաղալու։ Դա ճիշտ չէ՛։ Ժաննան իրավունք ունի խաղալու թագադրությունը. դա նրա պատմության մա՛սն է կազմում։

ԿՈՇՈՆ (սպաշած)։— Ծի՛շտ է։ Քիչ էր մնում՝ անարդարություն՛ն գործեինք։

ԸԱՐԸ.— Տեսնո՞ւմ եք։ Ես վստահ էի, որ պիտի մոռանան իմ թագադրություն՛նը։ Երբեք չէն մտածում իմ թագադրության մասին։ Դա ինձ վրա, սակայն, բավականին թանկ նստեց։

ՄԱՐՎԻԶ (այլաչված)։— Դե լա՛վ։ Թագադրումը հիմա՛։ Դա անճաշակություն՛ն կլինի։ Իմ ներկայությունն այդ արարողությանը անհարիր պիտի լինի, Ձերդ Վեհանձնություն՛ն, ես անհետանում եմ։ Այս կամ այն կերպ, ինձ համար ավարտված է. նրան այրել են։ Նորին Պաշտոատիպություն Վատավարությունը հասավ իր քաղաքական նպատակին։ (Դուրս է գնում)։

ԿՈՇՈՆ (գոռում է Դահճին)։— Քանդիր խարույկը, այ մա՛րդ։ Արձակի՛ր Ժաննային, և թող բերեն նրա թուրն ու դրո՛շը։

Բոլորը զվարթորեն գրոհում են խարույկի և խրձերի վրա: Ծարը, որին սկսել են հազցնել իր թագադրման համար, ժպտալով գալիս է առաջ, դեպի հասարակությունը:

**ԾԱՌԼ.**— Այդ մարդն իրավացի է: Ժաննայի պատմության ճշմարիտ ավարտը, ճշմարիտ ավարտը, որը երբեք չի վերջանալու, այն, որ միմյանց պատմելու են շարունակ, երբ մոռացած ու շփոթած լինեն մեր բոլորի անունները,— դա ոչ թե հալածված գազանի իր վիճակն է Ռուսնում, այլ արտույտն է ազատ երկնքում, դա ինքը ժաննան է Ռեյմսում, իր փառքի գագաթնակետին: Ժաննայի պատմության ճշմարիտ ավարտը զվարթ է: Ժաննա դ' Արկը պատմություն է, որ լա՛վ է վերջանում:

**ԲՈՂԻՐԻԿՈՒՐ (հրճվանքի մեջ, մյուսների հետ խրձերը հեռացնելով).**— Բարեբախտաբար, ես ժամանակին հասա... Ապուշները ժաննա դ' Արկի՛ն պիտի այրեին, պատկերացնո՞ւմ եք:

**ՀԱՅՐԸ (որը Եղբոր հետ նույնպես հեռացնում է խրձերը).**— Առաջ անցիր, դո՛ւ: Ու մատները հանի՛ր քթիցդ: Օրինա՛կ վերցրու քո քրոջից: Տես, նրան ինչ պատիվ են տալիս: Ինչքա՛ն եմ հպարտանում, որ ես եմ նրա հայրը... Միշտ էլ ասել եմ, որ այդ փոքրիկ աղջիկը ապագա ունի...

Արագորեն բեմի խորքում սարքել են մի խորան ձեռքի տակ եղած միջոցներով, խարույկի տեղում: Հանկարծակի զրնգում զանգեր: Երգեհոնի հնչյուններ: Մի շքախումբ է գույանում Ծարլի շուրջը: Ժաննան՝ փոքր-ինչ քաշված մի կողմի վրա, այնուհետև թագուհիներն են, Լա Տրեմուայը և մյուսները:

Շքախումբը շարժվում է դեպի խորանը: Բոլոր ներկաները ծնրադրում են: Միայն ժաննան է շփշիտակ կանգնած՝ հենված իր դրոշին, ժպիտն ուղղած երկնքին, ինչպես նկարների վրա: Արքեպիսկոպոսը թագը դնում է Ծարլի գլխին:

Երգեհոնի հաղթական հնչյուններ, զրնգացող զանգեր, թնդանոթների որոտ, աղավնիների թռիչք, լույսերի խաղ, որոնք թերևս պատկերավորում են տաճարի գունագեղ, նկարազարդ ապակիներ և փոխում են դեկորացիան: Վարագույրը դանդաղ իջնում է որպես մրցանակ տրվող գրքի կազմի նման գեղեցիկ այդ պատկերի վրա...

ԷԺԵՆ ԻՈՆԵՍԿՈ

ՌՆԳԵՂՋՅՈՒՐ

(պիես երեք գործողությամբ, չորս պատկերով)

.

Գ Ո Ր Ծ Ո Ղ Ա Ն Ձ Ի Ն Ք

ՄԻՆ ՏԵՏԵՍՈՒՇԻ  
ԲՈՒԳՈՂԱՍԹՈՒՇԻ

ՍԵՄԵՆ  
ՈՒՅՈՂՈՒՇԻ  
ԲՈՒԳՈՂԱՍԹ

ԾԵՐՈՒՆԻ ՊԱՐՈՆ  
ՏՐԱՄԱՐԱՆ  
ՍՐՃԱՐԱՆԱՏԵՐ  
ԳԵՋԻ  
ՊԱՐՈՆ ԹԻԹԵՌ  
ԳՅՈՒԳԱՐ

ԲՈՏԱՐ  
ՏԻԿԻՆ ՅՈՒԼ  
ՍԻ ՀՐՇԵՋ  
ՊԱՐՈՆ ԺԱՆ  
ՊԱՐՈՆ ԺԱՆԻ ԿԻՆԸ  
ԻՆԳԵՂՋՅՈՒՐՆԵՐԻ ԳՂՈՒԽՆԵՆ

## ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՋԻՆ

### Դեկորացիա

Հրապարակ գալառական փոքրիկ! թաղաքում: Խորքում՝ տուն, որի գեոմահարկի վրա կա ևս մի հարկաբաժին: Գեոմահարկում՝ նպարեղենի խանութի առաջամասը: Այդտեղ մտնում են ապակյա դռնից, որը գտնվում է երկու-երեք աստիճանների բարձրության վրա: Ճակատամասի վերևում պարզ ընթեռնելի տառերով գրված է՝ «ՆՊԱՐԵՂԵՆ»: Վերահարկում նպարավաճառների բնակարանի երկու լուսամուտները: Նպարախանութն, ուրեմն, գտնվում է բեմահարթակի խորքում, բայց զգալիորեն դեպի ձախ, կուլիսներից ոչ հեռու: Նպարավաճառների տան վերևից հեռվում երևում է եկեղեցու զանգակատունը: Նպարախանութի և աջակողմյան բեմահատվածի միջև՝ նեղ փողոցի հեռանկարը: Աջ կողմի վրա, փոքր թեքությամբ, սրճարանի ճակատամասը: Սրճարանի վերևում՝ մեկ լուսամուտով հարկաբաժին: Այդ սրճարանի բացօթյա տարածության վրա՝ մի քանի սեղաններ և աթոռներ, որոնք հասնում են մինչև բեմահարթակի կենտրոնը: Աթոռներին մոտիկ՝ փոշոտ մի ծառ: Երկինքը կապույտ է, լուսավորությունը՝ շագուցիչ, պատերը՝ շատ սպիտակ: Կիրակի օր է, կեսօրին մոտիկ, ամառ: Ժամը և Բերանժեն գալու են՝ նստելու սրճարանի բացօթյա մասի սեղաններից մեկի մոտ:

Վարագույրի բացվելուց առաջ լսվում է զանգերի դողանջ, որը դադարում է վարագույրի բացվելուց մի քանի վաչրկյան անց: Վարագույրի բացվելուց հետո մթերքի դատարկ կողովը մի թևի տակ, իսկ մյուս թևի տակ կատու, մի կին անցնում է բեմահարթակի վրայով՝ աջից դեպի ձախ: Կնոջ անցնելու ընթացքում՝ նպարավաճառուհին բացում է խանութի դուռը և նայում է նրան:

ՆՊԱՐԱՎԱՃԱՌՈՒՅԻ.— Ա՛հ, այս կինն էլ: (Ամուսնուն, որը գտնվում է խանութի ներսում): Ահ, այս կինն էլ գոռոզացել է: Էլ չի ուզում մեր մոտ գնումներ կատարել: (Նպարավաճառուհին անհետանում է: Բեմահարթակը մի քանի վաչրկյան մնում է թափուր):

Աջ կողմից հայտնվում է Փանը: Նույն պահին ձախից ներս է մտնում Բերանժեն: Փանը հագնված է շատ կոկիկ. շագանակագույն կոստյում, կարմիր փողկապ, օսլաչած, դնովի օձիք, շագանակագույն գլխարկ: Աչտերը փոքր-ինչ կարմրավուն են: Կոշիկները՝ դեղին, խրճամբով փայլեցրած: Բերանժեն ածիլված չէ: Գլխաբաց է, մազերը

վատ սանրված, զգեստը ճորթված: Ամեն ինչում արտահայտված է նրա թափթփվածությունը: Տեսքը հոգևած է, քնաթաթախ: Ժամանակ առ ժամանակ հորանջում է:

ԺԱՆ (Աերս մտնելով աջ կողմից).— Այնուամենայնիվ, դուք եկաք, Բերանժե:

ԲԵՐԱՆԺԵ (Աերս մտնելով ձախ կողմից).— Բարև, Ժան:

ԺԱՆ.— Միշտ ուշացումով, անտարակույս: (Նայում է իր ձեռքի ժամացույցին): Մենք պայմանավորվել էինք ժամը տասնմեկ անց երեսունին: Ծուտով տասներկուսն է:

ԲԵՐԱՆԺԵ.— Ներեցեք: Դուք ինձ վաղոր՛ց եք սպասում:

ԺԱՆ.— Ոչ: Ինչպես տեսնում եք, հենց նոր եմ գալիս: (Գնում, նրստում են սրճարանի բացօթյա մասի սեղաններից մեկի մոտ):

ԲԵՐԱՆԺԵ.— Ուրեմն, ես ինձ նվազ մեղավոր կզգամ, քանի որ... ինքներդ...

ԺԱՆ.— Ինքս, դա նույնը չէ. ես չեմ սիրում սպասել, ժամանակ չունեմ կորցնելու: Նկատի ունենալով, որ դուք երբեք ժամանակին չեք գալիս, ես դիտավորյալ ուշանում եմ այնքան, որ քստ իմ ենթադրության բախտ կունենամ ձեզ գտնելու:

ԲԵՐԱՆԺԵ.— Ծիշտ է... ճիշտ է, սակայն...

ԺԱՆ.— Հո չեք կարող հաստատել, որ դուք գալիս եք պայմանավորված ժամին:

ԲԵՐԱՆԺԵ.— Իհարկե, ոչ... ես չեմ կարողանա հաստատել: (Ժանը և Բերանժեն նստել են):

ԺԱՆ.— Այդպես է, որ կա:

ԲԵՐԱՆԺԵ.— Ի՞նչ եք խմելու:

ԺԱՆ.— Լույսը բացվելուն պես ծարավի՞ն եք:

ԲԵՐԱՆԺԵ.— Այնքան շոգ է, եղանակն այնքան չորային:

ԺԱՆ.— Ինչքան շատ են խմում, այնքան շատ են ծարավում, ասում է Խողովրդական իմաստությունը:

ԲԵՐԱՆԺԵ.— Այսքան չորային չէր լինի, այսքան չէինք ծարավի, եթե կարողանայինք մեր երկինքը ծածկել տալ արհեստական ամպերով:

ԺԱՆ (զննելով Բերանժեին).— Դրանից ի՞նչը կփոխվի ձեզ համար: Ջրով չէ, որ հագեցնում է ձեր ծարավը, սիրելի Բերանժե:

ԲԵՐԱՆԺԵ.— Ի՞նչ եք ուզում ասել դրանով, սիրելի՛ Ժան:

ԺԱՆ.— Ինձ շատ լավ էլ հասկանում եք: Ես նկատի ունեմ ձեր որկորի չորայնությունը: Անհագուրդ հողամաս է:

ԲԵՐԱՆԺԵ.— Ինձ թվում է, որ ձեր համեմատությունը...

- ԺԱՆ (նրան ընդհատելով).**— Ձեր վիճակը նախանձելի չէ, բարեկա՛մս: **ԲԵՐԱՆԺԵ.**— Իմ ի՞նչն է պակաս: Ի՞նչ է եղել, որ...
- ԺԱՆ.**— Ես հո կույր չեմ: Հոգնածությունից գլորվում եք. էլի փչացրել եք ձեր գիշերը, հորանջում եք շարունակ, քունը թափվում է ձեր աչքերից...
- ԲԵՐԱՆԺԵ.**— Մազարմատներս մի քիչ ցավում են...
- ԺԱՆ.**— Ձեզնից խմիչքի հոտ է փչում:
- ԲԵՐԱՆԺԵ.**— Կոկորդս մի քիչ չորացել է, բերանս անհամ է: Ծիշտ է:
- ԺԱՆ.**— Այդպիսին եք դուք բոլոր կիրակի առավոտները, շաբաթվա մյուս օրերը չհաշված:
- ԲԵՐԱՆԺԵ.**— Ա՛հ, ոչ: Ծաբաթվա մեջ այնքան էլ հաճախ չի պատահում, իմ գրասենյակային աշխատանքի պատճառով...
- ԺԱՆ.**— Իսկ որտե՛ղ է ձեր փողկապը: Կորցրել եք գետիները քարշ գալիս:
- ԲԵՐԱՆԺԵ (ձեռքը տանելով վիզը).**— Իսկապես, ճիշտ է: Հետաքրքիր է՝ ոնց եմ կորցրել:
- ԺԱՆ (մի փողկապ հանելով իր բաճկոնի գրպանից).**— Ահա այս մեկը կապեցեք:
- ԲԵՐԱՆԺԵ.**— Օ՛հ, շնորհակալություն. դուք ինձ պարտավորեցնում եք: **(Փողկապն անցկացնում է վիզը):**
- ԺԱՆ (մինչ Բերանժեն անփութորեն կապում է փողկապը).**— Ձեր մազերը բոլորովին զգզված են: **(Բերանժեն մատներով ուղղում է մազերը):** Ահա, սանր վերցրեք: **(Սանրը դուրս է բերում բաճկոնի մյուս գրպանից):**
- ԲԵՐԱՆԺԵ (սանրը վերցնելով).**— Ծնորհակալություն: **(Սանրվում է անփութորեն):**
- ԺԱՆ.**— Ձեք էլ ածիլվել: Մի ձեր տեսքին նայեցեք: **(Բաճկոնի ներսի գրպանից հանում է փոքրիկ հայելի, այն մեկնում է Բերանժեն: Վերջինս նայում է հայելու մեջ և հանում է լեզուն):**
- ԲԵՐԱՆԺԵ.**— Լեզուս կարգին փառակալած է:
- ԺԱՆ (հայելին ետ վերցնելով՝ դնում է գրպանը).**— Չարմանալի չէ... **(Ետ է վերցնում նաև սանրը, որ նրան պարզում է Բերանժեն և այն դնում է գրպանը):** Ձեր լյարդին ցիրոզ է սպառնում, բարեկա՛մս:
- ԲԵՐԱՆԺԵ (տազնապած).**— Այդպե՛ս եք կարծում...
- ԺԱՆ (որին Բերանժեն ուզում է փողկապը վերադարձնել).**— Փողկապը թող մնա: Տանը շատ ունեմ:
- ԲԵՐԱՆԺԵ (հիացական).**— Ինչ կոկիկն եք, է՛հ:



ԺԱՆ (շարունակելով զննել Բերանժեին).— Ձեր հագուստը բոլորովին  
անբոստված է. ողբալի է: Վերնաշապիկը նողկանք պատճառելու  
չափ կեղտոտ է: Կոշիկները... (Բերանժեն ոտքերը սեղանի տակ  
թաքցնելու փորձ է անում): Փայլեցրած չեն կոշիկները... Ինչպի-  
սի՞ թափափվածություն... Ձեր ուտերը...

ԲԵՐԱՆԺԵ.— Ի՞նչ ունեն իմ ուտերը...

ԺԱՆ.— Շրջվեցեք, շրջվեցեք, ասեմ: Քսվել եք պատին... (Բերանժեն  
ձեռքն անփութորեն պարզում է դեպի Ժանը): Ոչ, հետո խոզանակ  
չեմ վերցրել: Դա գրպանները կուռեցնի: (Բերանժեն դեռևս ան-  
փութորեն թփափացնում է նրա ուտերին՝ սպիտակ փոշին թափ  
տալու համար: Ժանը ետ է քաշում գլուխը): Օ՛հ, լա՛, լա՛... Այդ  
որտե՞ղ եք հաջողացրել:

ԲԵՐԱՆԺԵ.— Ձեմ հիշում:

ԺԱՆ.— Ողբալի է, ողբալի: Ես ամաչում եմ, որ ձեր բարեկամն եմ:

ԲԵՐԱՆԺԵ.— Դուք շատ եք խիստ...

ԺԱՆ.— Ընդհակառակը, դեռ մի բան էլ ներողամիտ եմ:

ԲԵՐԱՆԺԵ.— Լսեք, Ժա՛ն: Ժամանցի հնարավորություն չունեմ ամե-  
նին: Մարդ այս քաղաքում ձանձրանում է: Սրտովս չէ իմ արած  
աշխատանքը... գրասենյակում, ամեն օր, օրական ութ ժամ: Ամ-  
ռանն ընդամենը երեք շաբաթ արձակուրդ: Ծաբաթ իրիկուն ար-  
դեն հալից ընկած եմ լինում, ուստի, հասկանո՞ւմ եք, հոգնածու-  
թյունս թոթափելու համար...

ԺԱՆ.— Սիրելի՛ս, բոլորն աշխատում են, ես՝ նույնպես: Ես էլ, ինչ-  
պես մյուսները, ամեն օր իմ ութ ժամն անցկացնում եմ գրասեն-  
յակում: Ես նույնպես տարեկան ունեմ ընդամենը քսանմեկ օր  
արձակուրդ, և սակայն, սակայն դուք տեսնո՞ւմ եք ինչպիսին  
եմ... Կամքի ուժ է պետք, գրո՞ղը տանի...

ԲԵՐԱՆԺԵ.— Օ՛հ, կամքի ուժ բոլորը այնքան չունեն, ինչքան որ դուք:  
Ես ահա չեմ կարողանում հարմարվել: Ոչ, կյանքին չեմ կարո-  
ղանում հարմարվել:

ԺԱՆ.— Բոլորը պետք է հարմարվեն: Դուք վերի արտի ցորե՞նն եք:

ԲԵՐԱՆԺԵ.— Ես հավակնություն չունեմ...

ԺԱՆ (ընդհատելով).— Ես ձեզնից պակասը չեմ: Եվ նույնիսկ, առանց  
կեղծ համեստության, կասեմ, որ ձեզանից ավելի արժանախոր  
մարդ եմ ես: Իսկական մարդը նա է, ով իր պարտքն է կատա-  
րում:

ԲԵՐԱՆԺԵ.— Ի՞նչ պարտք:

ԺԱՆ.— Իր պարտքը... օրինակի համար, իր գրասենյակային աշխատանքի պարտքը:

ԲԵՐԱՆԺԵ.— Ահ, այո, իր գրասենյակային աշխատանքի պարտքը...

ԺԱՆ.— Այո որտե՞ղ եք կոնձել երեկ գիշեր: Եթե հիշում եք:

ԲԵՐԱՆԺԵ.— Օգյուստի ծննդյան տարեդարձն էինք նշում, մեր բարեկամ Օգյուստը...

ԺԱՆ.— Մեր բարեկամ Օգյո՞ւստը: Ինձ, որ չէին հրավիրել մեր բարեկամ Օգյուստի ծննդյան տարեդարձին... (Այո պահին լսվում է շատ հեռավոր, բայց և մեծ արագությամբ մոտեցող վայրի գազանի հնքն ու քառատրոփ դոփյունը, ինչպես և երկարաձվող մի մոնչոց):

ԲԵՐԱՆԺԵ.— Չկարողացա մերժել: Սիրուն չէր լինի...

ԺԱՆ.— Ես որ չեմ գնացել:

ԲԵՐԱՆԺԵ.— Պատճառը գուցե հենց այն է, որ ձեզ չեն հրավիրել...

ՄԱՏՈՒՑՈՂՈՒՆԻ (դուրս գալով սրճարանի շենքից).— Բարև, պարոններ: Ի՞նչ պիտի խմեք: (Աղմուկը շատ է ուժեղացել):

ԺԱՆ (Բերանժեհն, համարյա գոռում է, որպեսզի նա լսի՝ հաղթահարելով այն աղմուկը, որ չի ընկալում).— Հա՛, ճիշտ է, ինձ չէին հրավիրել: Ինձ այդ պատվին չէին արժանացրել... Այնուամենայնիվ, ձեզ հավաստիացնում եմ, որ եթե նույնիսկ հրավիրած լինեին, չպիտի գնայի, որովհետև... (Աղմուկը դարձել է խլացուցիչ): Ի՞նչ է կատարվում: (Հզոր ու ծանր կենդանու դոփյունը հնչում շատ մոտիկից և արագընթաց: Լսվում է նրա հնքը): Բայց այս ի՞նչ է:

ՄԱՏՈՒՑՈՂՈՒՆԻ.— Բայց այս ի՞նչ է: (Բերանժեհն, դեռևս հոգնաբեկ, կարծես չի էլ լսում որևէ բան, հանգիստ պատասխանում է Ժանին հրավերքի պարագայի մասին: Երթունքները շարժվում են, բայց չի լսվում այն, ինչ նա ասում է: Ժանը թափով վեր է թռչում և դրանով իսկ ցած է գցում իր աթոռը, նայում է ձախ կուլիսի կողմը, ինչ-որ բան մատնացույց անելով, մինչ Բերանժեհն, դեռևս մի քիչ ծուլացած, մնում է աթոռին):

ԺԱՆ.— Օ՛հ, ոնգեղջյուր: (Կենդանու բարձրացրած աղմուկը նույն արագությամբ հեռանում է, այնպես, որ արդեն հնարավոր է ընկալել հաջորդ բառերը: Այս ամբողջ տեսարանը պետք է խաղացվի շատ արագ): Օ՛հ, ոնգեղջյուր:

ՄԱՏՈՒՑՈՂՈՒՆԻ.— Օ՛հ, ոնգեղջյուր:

ՆՊԱՐԱՎԱԾԱՌՈՒՆԻ (գլուխը դուրս հանելով նպարախանութի բաց դռնից).— Օ՛հ, ոնգեղջյուր: (Ամուսնուն, որը մնացել է խանութի

**Անքում):** Շուտ արա, եկ նայիր. **ունգեղջյուր:** (Բարբը նայում են ձախ կողմը, վայրի գազանի վագրին):

**ՌԱՆ.—** Ողիղ քշում է առաջ, քսվում է վաճառասեղանների:

**ՆՊԱՐԱՎԱԾԱՌ (խանութի ներսից).—** Այդ որտե՞ղ:

**ՄԱՏՈՒՑՈՂՈՒՀԻ (ձեռքերը դնելով կոնքերին).—** Օ՛հ:

**ՆՊԱՐԱՎԱԾԱՌՈՒՀԻ (ամուսնուն, որը դեռևս գտնվում է խանութի ներսում).—** Եկ, նայիր: (Ծիշտ այդ պահին Նպարավաճառը դուրս է հանում գլուխը):

**ՆՊԱՐԱՎԱԾԱՌ (գլուխը դուրս հանելով).—** Օ՛հ, ունգեղջյուր:

**ՏՐԱՄԱԲԱՆ (որը ձախից արագ մտնում է բեմ).—** Ռնգեղջյուր, ամբողջ թափով, դիմացի մայթին: (Բոլոր ռեպլիկները, սկսած ժանի «՞ն, ունգեղջյուրից». հնչում են համարյա միաժամանակ: Լսվում է մի «ահ», որն արձակում է մի կին: Նա հայտնվում է: Վագում է մինչև բեմահարթակի կենտրոնը: Պա Տնային Տնտեսուհին է՝ կողովը թևատակին: Բեմահարթակի կենտրոնը հասնելուց հետո՝ նա ցած է գցում կողովը: Պարեմամթերքները սփռվում են բեմին. շիշը ջարդվում է, բայց կինը բաց չի թողնում կատվին, որին պահում է մյուս թևի տակ):

**ՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒՀԻ.—** Ա՛հ, օ՛հ: (Նրբագեղ Ծերունի պարոնը, որը Տնային տնտեսուհու հետքերով ներս է մտնում ձախից, նետվում է դեպի նպարավաճառների խանութը, նրանց հրմշտելով ներս է մտնում, մինչ Տրամաբանը զնալու է հենվի խորքի պատին, նրպարախանութի մուտքից դեպի ձախ: Ժանը և Մատուցողուհին կանգնած են և Բերանժեի հետ, որը դեռևս նստած է անտարբեր, կազմում են մի առանձին խումբ: Միաժամանակ ձախից լսելի են «ահ»-եր և «օհ»-եր. Ինչպես և փախչող Վարդկանց ռանսձայներ: Վայրի գազանի բարձրացրած փոշին տարածվում է բեմահարթակի վրա):

**ՍՐՃԱՐԱՆԱՏԵՐ (գլուխը դուրս հանելով սրճարանի վերևում գտնվող հարկաբաժնի լուսամուտից).—** Այս ի՞նչ է կատարվում:

**ՈՒՐՈՒՆԻ ՊԱՐՈՆ (անհետանալով նպարավաճառների թիկունքում).—** Նկրեցեք: (Նրբագեղ Ծերունի պարոնն ունի սպիտակ գետրեներ, լայնեզր գլխարկ, փղոսկրյա գլխով ձեռնափայտ: Պատին հենված Տրամաբանն ունի բարակ, սպիտակ բեղեր, ակնոց, գլխին՝ ձղրուտ գլխարկ):

**ՆՊԱՐԱՎԱԾԱՌՈՒՀԻ (հրմշտվելով և իր հերթին հրմշտելով ամուսնուն՝ Ծերունի պարոնին).—** Հեյ դուք, զգույշ ձեր ձեռնափայտով:

ՆՊԱՐԱՎԱԾԱՌ.— Հոգ չէ, բայց մեկ-մեկ՝ զգույշ եղեք: (Ծերունի պարոնի գլուխը հայտնվում է նպարավաճառների թիկունքում):

ՄԱՏՈՒՑՈՂՈՒՀԻ (Սրճարանատիրոջը).— Ռնգեղջյուր:

ՍՐԾԱՐԱՆԱՏԵՐ (լուսամուտից, Մատուցողուհուն).— Երազ եք տեսնում: (Ռնգեղջյուրին տեսնելով): Ա՛հ, սա ի՞նչ բան էր՝ եկավ մեր գլխին:

ՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒՀԻ.— Ա՛հ: («Ահ»-երն ու «օհ»-երը կոպիսներից հնչում են որպես ֆոն նրա «ահ»-ին: Տնային տնտեսուհին, որը զցել է նպարեղենի կողովն ու շիշը, ուրեմն, չի զցել իր կատվին, որին պահել է մյուս թևի տակ): Խեղճ փիսիկ, վախեցած է:

ՍՐԾԱՐԱՆԱՏԵՐ (դեռևս նայում է դեպի ձախ, աչքերով հետևում է կենդանու վազքին, մինչ վերջինիս բարձրացրած աղմուկը գնալով խլանում է դոփյուն, մոնչոց և այլն: Բերանժեն, պարզապես, փոքր-ինչ թեքում է գլուխը՝ փորձելով խուսափել բարձրացած փոշուց, մի քիչ քնկոտ, առանց որևէ բան ասելու: Նա պարզապես դեմքը ծամածոում է).— Սա ի՞նչ բան էր՝ եկավ մեր գլխին:

ԺԱՆ (նույնպես փոքր-ինչ թեքում է գլուխը: Աշխուժորեն).— Սա ի՞նչ բան էր՝ եկավ մեր գլխին: (Փռչում է):

ՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒՀԻ (բեմահարթակի կենտրոնից, բայց շրջված դեպի ձախ: Մթերքները նրա շուրջը թափված են հատակին).— Սա ի՞նչ բան էր՝ եկավ մեր գլխին: (Փռչում է):

ԾԵՐՈՒՆԻ ՊԱՐՈՆ, ՆՊԱՐԱՎԱԾԱՌՈՒՀԻ, ՆՊԱՐԱՎԱԾԱՌ (խորքից, նորից բացելով նպարախանութի ապակեպատ դուռը, որ Ծերունի պարոնը փակել էր իր ետևից).— Սա ի՞նչ բան էր՝ եկավ մեր գլխին:

ԺԱՆ.— Սա ի՞նչ բան էր՝ եկավ մեր գլխին: (Բերանժեն): Դուք տեսա՞ք: (Ռնգեղջյուրի բարձրացրած աղմուկը, նրա մոնչոցը հեռացել են: Հոտնկայս մարդիկ հայացքով հետևում են հեռվում անհետացող կենդանուն, մինչ Բերանժեն շարունակում է մնալ նստած ու անտարբեր):

ԲՈՂՈՐԸ (բացի Բերանժենից).— Սա ի՞նչ բան էր՝ եկավ մեր գլխին:

ԲԵՐԱՆԺԵ (Ժանին).— Ինձ թվում է՝ այո, դա ռնգեղջյուր էր: Փռչի է բարձրացնում: (Հանում է թաշկինակը, մաքրում է քիթը):

ՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒՀԻ.— Սա ի՞նչ բան էր՝ եկավ մեր գլխին: Հո չվախեցա՞...

ՆՊԱՐԱՎԱԾԱՌ (Տնային Տնտեսուհուն).— Ձեր կողովը... մթերքները...

ԾԵՐՈՒՆԻ ՊԱՐՈՆ (մոտենում է Տիկնոջը, կռանում է՝ հատակին սը-

փրոված մթերքները հավաքելու համար: Հանելով գլխարկը՝ կնամեծար ողջունում է նրան):

ՍՐՃԱՐԱՆԱՏԵՐ.— Այնուամենայնիվ, գաղափար չունենք...

ՄԱՏՈՒՑՈՂՈՒՀԻ.— Օրինակի համար...

ՕՏԵՐՈՒՆԻ ՊԱՐՈՆ (Տիկնոջը).— Թույլ տվեք ձեզ օգնել՝ մթերքները հավաքելու:

ՏԻԿԻՆ (Ծերունի պարոնին).— Ծնորհակալություն, պարո՛ն: Խնդրում եմ՝ դրեք ձեր գլխարկը: Օ՛հ, հո չվախեցա...

ՏՐԱՄԱԲԱՆ.— Վախը անբանական է: Բանականությունը պետք է դրան հաղթի:

ՄԱՏՈՒՑՈՂՈՒՀԻ.— Արդեն չի երևում:

ՕՏԵՐՈՒՆԻ ՊԱՐՈՆ (Տնային տնտեսուհուն, մատնացույց անելով Տրամաբանին).— Իմ բարեկամը տրամաբան է:

ԺԱՆ (Բերանձեղին).— Ի՞նչ է ձեր կարծիքը:

ՄԱՏՈՒՑՈՂՈՒՀԻ.— Արագ են գնում այդ կեեղանիները:

ՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒՀԻ (Տրամաբանին).— Որպես եմ ծանոթանալուս համար, պարո՛ն:

ՍՊԱՐԱՎԱՃԱՌՈՒՀԻ (Նպարավաճառին).— Լավ եղավ նրան: Այդ ինչն՝ գնումները չկատարեց մեր մոտից:

ԺԱՆ (Սրճարանատիրոջը և Մատուցողուհուն).— Ի՞նչ է ձեր կարծիքը:

ՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒՀԻ.— Ես, այնուամենայնիվ, իմ կատվին բաց չթողեցի:

ՍՐՃԱՐԱՆԱՏԵՐ (ուսերը բարձրացնելով: Լուսամուտից).— Հաճախակի չենք տեսնում այսպիսի բաներ:

ՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒՀԻՆ (Տրամաբանին, մինչ Ծերունի պարոնը հավաքում է թափված մթերքը).— Կատվին կպահե՞ք մի րոպե:

ՄԱՏՈՒՑՈՂՈՒՀԻ (Ժանին).— Ես կյանքումս չեի տեսել այսպիսի բան:

ՏՐԱՄԱԲԱՆ (Տնային տնտեսուհուն՝ կատվին վերցնելով իր թևերի մեջ).— Նա չար հո չէ:

ՍՐՃԱՐԱՆԱՏԵՐ (Ժանին).— Գիսաստղի նման է:

ՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒՀԻ (Տրամաբանին).— Խելոք է, ոնց որ Աստծո գառը: (Մյուսներին): Իմ գինու գլխին այս ինչ փորձանք եկավ.

այն էլ, եթե նկատի ունենանք հիմնկվա գները:

ՍՊԱՐԱՎԱՃԱՌ (Տնային տնտեսուհուն).— Ես գինի ունեմ: Ինչը չընարվի՝ չճարվի, բաց այդ մեկը կճարվի:

ԺԱՆ (Բերանձեղին).— Ասացեք՝ ի՞նչ է ձեր կարծիքը:

ՍՊԱՐԱՎԱՃԱՌ (Տնային տնտեսուհուն).— Իմ ունեցածը լավն է:

ՍՐՃԱՐԱՆԱՏԵՐ (Մատուցողուհուն).— Ժամանակ մի կորցրեք: Չբաղ-

վեցեք այդ պարոններով: (Մատնացույց է անում Բերանձեին և Ժանին: Գլուխը ետ է քաշում լուսամուտից):

ԲԵՐԱՆԺԵ (Ժանին).— Ինչի՞ մասին է խոսքը:

ՆՊԱՐԱՎԱՃԱՌՈՒՀԻ (Նպարավաճառին).— Դե, գնա ուրիշ շիշ բեր նրա համար:

ԺԱՆ (Բերանձեին).— Ռեզեդյուրի մասին, բարեկա՛մ, ռեզեդյուրի մասին:

ՆՊԱՐԱՎԱՃԱՌ (Տնային տնտեսուհուն).— Ես լավ գիցի ունեմ, չջարդվող շշերի մեջ: (Անհետանում է խանութի ներսում):

ՏՐԱՄԱԲԱՆ (փաղաքշելով թևերի մեջ պահած կատվին).— Փիսի՛կ, փիսի՛կ, փիսի՛կ:

ՄԱՏՈՒՑՈՂՈՒՀԻ (Բերանձեին և Ժանին).— Ի՞նչ պիտի խմեք:

ԲԵՐԱՆԺԵ (Մատուցողուհուն).— Անխտնով օղի՛ երկու բաժակ:

ՄԱՏՈՒՑՈՂՈՒՀԻ.— Լավ, պարո՛ն: (Ուղղվում է դեպի սրճարանի մուտքը):

ՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒՀԻ (մթերքները հավաքելով Ծերունի պարոնի օգնությամբ).— Դուք շատ բարեհաճ եք, պարո՛ն:

ՄԱՏՈՒՑՈՂՈՒՀԻ.— Ուրեմն, անխտնով օղի՛ երկու բաժակ: (Մտնում է սրճարան):

ԾԵՐՈՒՆԻ ՊԱՐՈՆ (Տնային տնտեսուհուն).— Իմ արածը մի բան չէ, սիրելի՛ տիկին: (Նպարավաճառուհին մտնում է խանութ):

ՏՐԱՄԱԲԱՆ (Ծերունի պարոնին և Տնային տնտեսուհուն, որոնք դեռևս շարունակում են հավաքել թափված մթերքները).— Կանոնավո՛ր դարսեցեք:

ԺԱՆ (Բերանձեին).— Դե, ի՞նչ է ձեր կարծիքը:

ԲԵՐԱՆԺԵ (Ժանին, չիմանալով, ինչ ասի).— Է՛հ... ոչինչ... Փոշի է բարձրացնում...

ՆՊԱՐԱՎԱՃԱՌ (խանութից դուրս գալով՝ հետը մի շիշ գիցի. Տնային տնտեսուհուն).— Սոխ էլ ունեմ:

ՏՐԱՄԱԲԱՆ (դեռևս փաղաքշելով թևերի մեջ պահած կատվին).— Փիսի՛կ, փիսի՛կ, փիսի՛կ:

ՆՊԱՐԱՎԱՃԱՌ (Տնային տնտեսուհուն).— Լիտրը հարյուր ֆրանկ՝ արժե:

ՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒՀԻ (վճարելով Նպարավաճառին, ապա դիմելով Ծերունի պարոնին, որին հաջողվել է թափված մթերքները զետեղել զամբյուղի մեջ).— Դուք շատ բարեհաճ եք: Ահ, ֆրանսիական քաղաքավարությունը: Այդպիսի բան՝ հիմիկվա երիտասարդների՞ց:

**ՆՊԱՐԱՎԱՃԱՌ (վերցնելով Տնային տնտեսուհու տված դրամը).—**

Ձեր գնումները պիտի որ մեր մտոյց կատարեք: Այդ դեպքում հարկ չի լինի անցնել փողոցը: Ձեզ չեն սպառնա անախորժ հանդիպումները: (Մտնում է խանութ):

**ԺԱՆ (որ նորից նստել է արթոնին և շարունակ մտածում է ռեգեղջյորի մասին).—** Այնուամենայնիվ, արտասովոր երևույթ է:

**ԾԵՐՈՒՆԻ ՊԱՐՈՆ (բարձրացնում է գլխարկը, համբուրում է Տնային տնտեսուհու ձեռքը).—** Ծատ ուրախ եմ ձեզ հետ ծանոթանալու համար:

**ՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒՀԻ (Տրամաբանին).—** Ծնորհակալություն, պարո՛ն, որ պահեցիք իմ կատվին: (Տրամաբանը կատուն էտ է տալիս Տնային տնտեսուհուն: Մատուցողուհին հայտնվում է՝ բերելով հաճախորդների պատվիրածը):

**ՄԱՏՈՒՑՈՂՈՒՀԻ.—** Ահա և ձեր անխտնով օղին, պարոններ:

**ԺԱՆ (Բերանժեհն).—** Անուղղելի:

**ԾԵՐՈՒՆԻ ՊԱՐՈՆ (Տնային տնտեսուհուն).—** Թույլ կտա՞ք ձեզ ուղեկցել:

**ԲԵՐԱՆԺԵ (Ժանին՝ մատնացույց անելով Մատուցողուհուն, որը նորից մտնում է խանութ).—** Ես հանքային ջուր խնդրեցի: Նա արխալվել է: (Ժանն ուները բարձրացնում է՝ թերահավատ ու արհամարհական):

**ՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒՀԻ (Ծերունի պարոնին).—** Ամուսինս տանն սպասում է, սիրելի՛ պարոն: Ծնորհակալություն: Մի ուրիշ անգամ՝ խնդրեմ:

**ԾԵՐՈՒՆԻ ՊԱՐՈՆ (Տնային տնտեսուհուն).—** Ի խորոց արտե հույս ունենամ, սիրելի տիկին:

**ՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒՀԻ (Ծերունի պարոնին).—** Ես՝ նույնպես: (Մեղրածոր հայացք, ապա դուրս է գալիս ձախ կողմից):

**ԲԵՐԱՆԺԵ.—** Էլ փոշի չկա... (Ժանը նորից բարձրացնում է ուները):

**ԾԵՐՈՒՆԻ ՊԱՐՈՆ (Տրամաբանին, մինչ հայացքով ուղեկցում է Տնային տնտեսուհուն).—** Անուշիկ է...

**ԺԱՆ (Բերանժեհն).—** Ռեգեղջյուր: Խելքս գլուխս չի գալիս: (Ծերունի պարոնը և Տրամաբանը շարժվում են դեպի աջ, դանդաղորեն, այն ուղղությամբ, որտեղից դուրս պիտի գան: Դատողություններ են անում հանդարտորեն):

**ԾԵՐՈՒՆԻ ՊԱՐՈՆ (Տրամաբանին, Տնային տնտեսուհու ուղղությամբ մի վերջին հայացք նետելուց հետո).—** Հմայիչ է, այնպես չէ՞:

**ՏՐԱՄԱԲԱՆ (Ծերունի պարոնին).—** Ես հիմա ձեզ բացատրեմ, թե  
 ինչ բան է սիլոգիզմը:  
**ԾԵՐՈՒՆԻ ՊԱՐՈՆ.—** Ահ, այո, սիլոգիզմը:  
**ԺԱՆ (Բերանժեհն).—** Խելքս գլուխս չի գալիս: Սա անընդունելի է:  
**(Բերանժեհն հորանջում է):**  
**ՏՐԱՄԱԲԱՆ (Ծերունի պարոնին).—** Սիլոգիզմը բաղկացած է գլխա-  
 վոր նախադրյալից, երկրորդականից և եզրակացությունից:  
**ԾԵՐՈՒՆԻ ՊԱՐՈՆ.—** Ի՞նչ եզրակացություն: **(Տրամաբանը և Ծերունի  
 պարոնը դուրս են գալիս):**  
**ԺԱՆ.—** Ոչ: Խելքս գլուխս չի գալիս:  
**ԲԵՐԱՆԺԵ (Ժանին).—** Ակնհայտ է, որ ձեր խելքը գլուխը չի գալիս:  
 Ռնգեղջյուր էր, հասկացանք, ռնգեղջյուր էր... հեռու է նա... հե-  
 ռու է նա...  
**ԺԱՆ.—** Բայց ո՞նց թե... ո՞նց կլինի... Սա չլաված-չտեսնված բան է:  
 Ռնգեղջյուր, որն ազատ շրջում է քաղաքում. սա ձեզ չի՞ զարմաց-  
 նում: Այս մի բանը չպետք է թույլ տալին: **(Բերանժեհն հորանջում  
 է):** Չեղավ, ձեռքը դրեք բերանին...  
**ԲԵՐԱՆԺԵ.—** Հա... հա... այս մի բանը չպետք է թույլ տալին: Վտան-  
 գավոր է: Ես այդ մասին չէի մտածել: Մի մտահոգվեք, ձեզ վը-  
 տանգ չի սպառնում:  
**ԺԱՆ.—** Մենք պիտի որ բողոքեինք քաղաքապետական իշխանություն-  
 ներին: Էլ ո՞ր օրվա համար են քաղաքապետական իշխանություն-  
 ները:  
**ԲԵՐԱՆԺԵ (հորանջում, ապա ձեռքով արագ ծածկում է բերանը).—**  
 Օ՛հ, ներեցեք... Գուցե ռնգեղջյուրը փախել է կենդանաբանական  
 այգուց:  
**ԺԱՆ.—** Դուք ոտի վրա երազում եք:  
**ԲԵՐԱՆԺԵ.—** Ես նստած եմ:  
**ԺԱՆ.—** Նստած թե ոտի վրա՝ դա նույն բանն է:  
**ԲԵՐԱՆԺԵ.—** Համենայն դեպս, կա ինչ-որ տարբերություն:  
**ԺԱՆ.—** Հարցը դրան չի վերաբերում:  
**ԲԵՐԱՆԺԵ.—** Հենց քիչ առաջ դուք ասացիք, որ նստած թե ոտի վրա՝  
 նույն բանն է...  
**ԺԱՆ.—** Դուք սխալ հասկացաք: Նստած թե ոտի վրա՝ նույն բանն է,  
 երբ երազում եմ...  
**ԲԵՐԱՆԺԵ.—** Ի՞նչ կա որ... ես երազում եմ... Կյանքը երազ է:  
**ԺԱՆ (շարունակելով).—** ... Դուք երազի մեջ եք, երբ ասում եք, որ  
 ռնգեղջյուրը փախել է կենդանաբանական այգուց...



ԲԵՐԱՆԺԵ.— Ես ասացի՝ գուցե...

ԺԱՆ (շարունակելով).— ... Որովհետև մեր քաղաքում կենդանաբանական այգի չկա այն ժամանակվանից, ինչ գազանները կոտորվեցին ժանտախտի պատճառով... Դա շատ վաղուց էր...

ԲԵՐԱՆԺԵ (նույն անտարբերությամբ).— Ուրեմն, գուցե կրկեսից է փախել:

ԺԱՆ.— Ի՞նչ կրկեսի մասին է խոսքը:

ԲԵՐԱՆԺԵ.— Չգիտեմ... ինչ-որ շրջիկ կրկեսի մասին:

ԺԱՆ.— Մի՞թե ձեզ հայտնի չէ, որ քաղաքապետարանը շրջիկ արտիստներին արգելել է տեղակայվել համայնքի տերիտորիայում... Դեռ մանկուց մեզ հայտնի է, որ էլ չեն անցնում այստեղից:

ԲԵՐԱՆԺԵ (անհաջող պայքարելով հորանջելու ցանկության դեմ).— Այդ դեպքում, գուցե դեռ այն ժամանակներից ոնգեղջյուրը թաքնըված է մնացել շրջակայքի ճահճոտ անտառներում:

ԺԱՆ (թևերը պարզելով դեպի երկինք).— Երջակայքի ճահճոտ անտառներում: Երջակայքի ճահճոտ անտառներում... Իմ խեղճ բարեկամ, դուք ամբողջովին գտնվում եք ալկոհոլի թանձր մշուշների մեջ:

ԲԵՐԱՆԺԵ (միամիտ).— Այդ ճիշտ է... իմ ստամոքսի հատակից բարձրանում եմ...

ԺԱՆ.— Եվ ողողում եմ ձեր ուղեղը: Երջակայքում այդ որտե՞ղ կան ճահճոտ անտառներ... Մեր գավառն այնքան է անապատային, որ դրան կպցրել եմ «Փոքր Կաստիլիա»<sup>2</sup> մականունը:

ԲԵՐԱՆԺԵ (չարչրկված ու բավականին հոգնած).— Այդ դեպքում ես ի՞նչ իմանամ: Գուցե ապաստանել է մի խճի տակ... Գուցե իր բունը սարքել է մի չորացած ճյուղի վրա...

ԺԱՆ — Եթե ինքներդ ձեզ սրամիտ եք համարում, սխալվում եք, իմացեք: Դուք ձանձրալի եք ձեր... ձեր պարադոքսներով հանդերձ: Ես գտնում եմ, որ դուք անկարող եք վարել լուրջ խոսակցություն:

ԲԵՐԱՆԺԵ.— Այսօր, միայն այսօր... Այն պատճառով, որ... որովհետև ես... (Անորոշ շարժումով ցույց է տալիս գլուխը):

ԺԱՆ. — Այսօր նույնքան, ինչքան առհասարակ:

ԲԵՐԱՆԺԵ.— Ոչ այնքան, համեմայն դեպս:

ԺԱՆ — Ձեր սրամիտ դարձվածքները ոչինչ չարժեն:

ԲԵՐԱՆԺԵ.— Ես ամենևին հավակնություն չունեմ...

ԺԱՆ (ընդհատելով նրան).— Ես տանել չեմ կարող, որ ինձ հիմարի տեղ եմ դնում:

**ԲԵՐԱՆԺԵ (ձեռքը դնելով սրտին).—** Ես ինձ երբեք թույլ չեմ տա, սիրելի՛ ժամ...

**ԺԱՆ (ընդհատելով նրան).—** Սիրելի՛ Բերանժե, դուք այդ ձեզ թույլ եք տալիս...

**ԲԵՐԱՆԺԵ.—** Ձէ, ոչ այդ մի բանը. ես այդ ինձ թույլ չեմ տալիս:

**ԺԱՆ.—** Հա, քիչ առաջ դուք այդ ձեզ թույլ տվիք:

**ԲԵՐԱՆԺԵ.—** Ինչպե՞ս կարող եք մտածել, որ...

**ԺԱՆ (ընդհատելով նրան).—** Մտածում եմ այն, ինչ որ կա:

**ԲԵՐԱՆԺԵ.—** Ես ձեզ հավաստիացնում եմ...

**ԺԱՆ (ընդհատելով նրան).—** ... Որ ինձ հիմարի տեղ եք դնում:

**ԲԵՐԱՆԺԵ.—** Իսկապէս, որ համառն եք, հա՛:

**ԺԱՆ.—** Ու որպէս վրադիր ինձ էշ եք անվանում: Տեսնո՞ւմ եք, որ դուք ինձ անարգում եք:

**ԲԵՐԱՆԺԵ.—** Այդպիսի բան մտքովս անգամ չի կարող անցնել:

**ԺԱՆ.—** Բաներ կան, որոնք անցնում են նույնիսկ նրանց մտքով, ովքեր զուրկ են մտքից:

**ԲԵՐԱՆԺԵ.—** Դա անկարելի է:

**ԺԱՆ.—** Այդ ինչո՞ւ է անկարելի:

**ԲԵՐԱՆԺԵ.—** Որովհետև անկարելի է:

**ԺԱՆ.—** Ինձ բացատրեք, թե ինչու այդ անկարելի է, քանի որ հավակնում եք ի վիճակի լինել բացատրելու ամեն, ամեն ինչ...

**ԲԵՐԱՆԺԵ.—** Ես երբեք նման հավակնություն չեմ ունեցել:

**ԺԱՆ.—** Այդ դեպքում ինչո՞ւ եք այդպէս ձևանում: Եվ ես մի անգամ ինչո՞ւ եք ինձ անարգում:

**ԲԵՐԱՆԺԵ.—** Ես ձեզ չեմ անարգում: Ընդհակառակը: Գիտե՛ք՝ ինչ աստիճանի ես ձեզ գնահատում եմ:

**ԺԱՆ.—** Եթե ինձ գնահատում եք, ապա ինչո՞ւ եք ինձ հակաճատում՝ գտնելով, որ վտանգավոր չէ թույլ տալ, որ մի ոնգեղջյուր վազի քաղաքով մեկ, մանավանդ կիրակի առավոտյան, երբ փողոցները լիքն են երեխաներով... ու նաև չափահասներով...

**ԲԵՐԱՆԺԵ.—** Ըստերը գնացել են պատարագի: Նրանց ոչ մի վտանգ չի սպառնում...

**ԺԱՆ (ընդհատելով նրան).—** Թույլ տվեք... սա նաև ժամն է շուկա գնալու:

**ԲԵՐԱՆԺԵ.—** Ես երբեք չեմ պնդել, որ վտանգավոր չէ թույլ տալ, որ ոնգեղջյուրը վազ տա քաղաքում: Ես պարզապէս ասացի, որ չեմ խորհել այդ վտանգի մասին: Ես իմ առաջ հարց չդրեցի:

**ԺԱՆ.—** Դուք երբեք ոչնչի մասին չեք մտածում:

ԲԵՐԱՆԺԵ.— Լավ: Համաձայն եմ: Ազատության մեջ գտնվող ոնգեղ-  
ջյուրը լավ բան չէ:

ԺԱՆ.— Դա չպետք է գոյություն ունենար:

ԲԵՐԱՆԺԵ.— Համաձայն եմ: Դա չպետք է գոյություն ունենար: Դա  
նույնիսկ խելագար բան է: Լավ: Սակայն դա դեռևս հիմք չէ, որ  
ի՞նձ հետ կովեք այդ վայրի գազանի պատճառով: Այս ի՞նչ պատ-  
մություն էք սարքում իմ գլխին ինչ-որ միասնականի անասունի  
պատճառով, որը քիչ առաջ, բոլորովին պատահաբար, եկավ ան-  
ցավ մեր առջևից: Մի տխմար չորքոտանի, որի մասին խոսել ան-  
գամ չարժե: Դեռ չհաշված, որ նա նաև դաժան է... և որը նույն-  
պես անհետացել է, գոյություն չունի այլևս: Հո չե՞նք զբաղվելու  
մի անասունով, որը գոյություն չունի: Ուրիշ բանից խոսենք, սի-  
րելի՛ ժան, ուրիշ բանից խոսենք: Խոսելու նյութ հո չի պակա-  
սում... (Հորանջում է, վերցնում է բաժակը): Ձեր կենացը: (Այդ  
պահին Տրամաբանը և Ծերունի պարոնը նորից ներս են մտնում  
աջ կողմից: Խոսելով՝ գնալու են տեղավորվեն սրճարանի բացօթ-  
յա տարածության սեղաններից մեկի մոտ: Բերանժեից ու ժանից  
բավականին հեռու, նրանց ետևում ու աջ):

ԺԱՆ.— Բաժակը թողե՛ք սեղանին: Մի՛ խմեք: (Ժանը լիքը կում է  
անում, խմում իր անխոնջան օղուց և կիսով չափ դատարկված  
բաժակը դնում սեղանին: Բերանժեն շարունակում է բաժակը պա-  
հել ձեռքում, ցած չդնելով ու նաև չհամարձակվելով այն դատար-  
կել):

ԲԵՐԱՆԺԵ.— Այսպես թե այնպես, հո սա չեմ թողնելու սրճարանա-  
տիրոջը: (Ձևացնում է, որ պիտի խմի):

ԺԱՆ.— Ասում եմ՝ թողե՛ք, էլի:

ԲԵՐԱՆԺԵ.— Լա՛վ: (Կրկին ուզում է բաժակը դնել սեղանին: Այդ  
պահին անցնում է Դեզին՝ երիտասարդ, խարտիշահեր մեքենա-  
գրուհին, որն աջից ձախ քալում է բեմահարթակի վրայով: Դե-  
զին տեսնելով, Բերանժեն հանկարծակի վեր է թռչում և դրանով  
իսկ անճարակ շարժում է անում. բաժակն ընկնում, ու թրջվում է  
ժանի տարատը): Օ՛հ, Դեզի՛:

ԺԱՆ -- Զգույշ: Ինչքա՛ն դանդալոշն էք:

ԲԵՐԱՆԺԵ.— Դեզին է... Ներեցեք ինձ... (Շարժում է անում թաքնը-  
վելու, որ Դեզին իրեն չտեսնի): Ձեմ ուզում՝ նա ինձ տեսնի... իմ  
ուրա վիճակում:

ԺԱՆ — Ձեզ ներել չի կարելի: Ոչ մի դեպքում ներել չի կարելի: (Նա-

յում է Դեզիի ետևից, որն անհետանում է): Այդ երիտասարդ աղ-  
ջիկը ձեզ վախեցնում է:

**ԲԵՐԱՆԺԵ.**— Լռեցե՛ք, լռեցե՛ք:

**ԺԱՆ.**— Եվ սակայն ոնց որ թե չար չլինի:

**ԲԵՐԱՆԺԵ (անդրադառնալով Ժանին, քանի որ Դեզին արդեն հեռա-  
ցել է).**— Ներեցեք, այս անգամ ևս, քանի որ...

**ԺԱՆ.**— Ահա և հարթելու հետևանքը. դուք այլևս ձեր շարժումների  
տերը չեք. ուժ չի մնացել ձեր ձեռքերի մեջ, ահաբեկված եք, հա-  
լից ընկած: Դուք ձեր սեփական գերեզմանն եք փորում, սիրելի՛  
բարեկամ: Դուք ձեզ կորստյան եք մատնում:

**ԲԵՐԱՆԺԵ.**— Ես այնքան էլ չեմ սիրում ոգելից խմիչքը: Եվ սակայն  
երբ չեմ խմում, ոչ մի բան կարգին չի գնում: Կարծես վախենա-  
լիս լինեմ: Ուստի խմում եմ, որ էլ չվախենամ:

**ԺԱՆ.**— Ինչի՞ց եք վախենում:

**ԲԵՐԱՆԺԵ.**— Ես շա՛տ գիտեմ: Տագնապներ են, որ դժվար է ճշտո-  
րոշել: Զգում եմ, որ կյանքում ես իմ տեղում չեմ գտնվում, ես  
չկամ մարդկանց մեջ. այն ժամանակ մի բաժակ եմ խմում: Ինձ  
հանգստացնում է, թոթափում է իմ լարվածությունը. ես մոռանում  
եմ:

**ԺԱՆ.**— Դուք ինքներդ ձեզ եք մոռանում:

**ԲԵՐԱՆԺԵ.**— Ես հոգնած եմ: Տարիներ շարունակ ես հոգնած եմ:  
Դժվարանում եմ կրել իմ սեփական մարմնի ծանրությունը...

**ԺԱՆ.**— Դա ալկոհոլային նյարդախտ է, գիներոլի տխրամածություն...

**ԲԵՐԱՆԺԵ (շարունակելով).**— Ամեն բոպե ես իմ մարմինն զգում եմ  
այնպես, կարծես կապարից լինի կամ եթե ինչպես ուրիշ մի մարդ  
ունենայի իմ շալակին: Ես ինքս իմ անձին չեմ ընտելացել: Զգի-  
տեմ՝ ես արդյոք ե՞ս եմ: Հենց որ մի քիչ խմում եմ, բեռս անհե-  
տանում է, և ինքս ինձ ճանաչում եմ: Ես՝ դառնում եմ ես:

**ԺԱՆ.**— Ցնդաբանություններ, Բերանժե՛, անյեցեք ինձ: Իմ քաշն ա-  
վելին է, քան ձերը, և սակայն ինձ թեթև եմ զգում, թեթև, թեթև:  
Ծերունի պարոնը և Տրամաբանը, որոնք նորից մտել են բեմ, մի  
քանի քայլ են արել դատողությունների ետևից ընկած: Ծիշտ այդ  
պահին, նրանք անցնում են Ժանի և Բերանժեի մոտից: Ժանի  
մի թևը ուժգնորեն կաշում է Ծերունի պարոնին, որը փլվում է  
Տրամաբանի թևերի վրա:

**ՏՐԱՄԱԲԱՆ (բանապեճը շարունակելով).**— Սիլոգիզմի մի օրինակ...  
(Հրմշտված է): Օ՛հ...

**ՕՆՐՈՒՆԻ ՊԱՐՈՆ (Փանին).**— Զգո՛ւյշ: (**Տրամաբանին**): Ներողու-  
թյուն:

**ԺԱՆ (Ծերունի պարոնին).**— Ներողություն:

**ՏՐԱՄԱԲԱՆ (Ծերունի պարոնին).**— Հոգ չէ:

**ՕՆՐՈՒՆԻ ՊԱՐՈՆ (Փանին).**— Հոգ չէ: (**Ծերունի պարոնը և Տրամա-  
բանը գնում են նստելու բացօթյա տարածության սեղաններից մե-  
կի մոտ, մի քիչ դեպի աջ, Փանի և Բերանժեի թիկունքում**):

**ԲԵՐԱՆԺԵ (Փանին).**— Ուժեղ եք, հա:

**ԺԱՆ.**— Այո, ուժեղ եմ. մի բանի պատճառ կա, որոնց շնորհիվ ես ու-  
ժեղ եմ: Նախ՝ ես ուժեղ եմ, որովհետև ուժեղ եմ: Հետո ուժեղ եմ,  
որովհետև բարոյապես ուժեղ եմ: Ես ուժեղ եմ նաև, որովհետև  
հարբեցող չեմ: Չեմ ուզում ձեզ կպնել, սիրելի՛ բարեկամս, բայց  
պետք է ասեմ, որ խմիչքն է մարմինը ծանրացնում իրականում:

**ՏՐԱՄԱԲԱՆ (Ծերունի պարոնին).**— Ահա ձեզ, ուրեմն, մի օրհնա-  
կելի սիրոգիզմ: Կատուն ունի չորս թաթ: Իսիդորը և Ֆրիկոն յու-  
րաքանչյուրն ունի չորս թաթ: Ուրեմն, Իսիդորն ու Ֆրիկոն կա-  
տուններ են:

**ՕՆՐՈՒՆԻ ՊԱՐՈՆ (Տրամաբանին).**— Իմ շունը նույնպես ունի չորս  
թաթ:

**ՏՐԱՄԱԲԱՆ (Ծերունի պարոնին).**— Ուրեմն, նա էլ կատու է:

**ԲԵՐԱՆԺԵ (Փանին).**— Մեջս հազիվ ուժ է մնացել ապրելու: Գուցե  
դրա ցանկությունն էլ չունեմ:

**ՕՆՐՈՒՆԻ ՊԱՐՈՆ (Տրամաբանին՝ երկար խորհելուց հետո).**— Ու-  
րեմն, տրամաբանորեն իմ շունը կատու է:

**ՏՐԱՄԱԲԱՆ (Ծերունի պարոնին).**— Տրամաբանորեն, այո: Բայց հա-  
կառակը նույնպես ճշմարիտ է:

**ՐԵՐԱՆԺԵ (Փանին).**— Միայնությունն ինձ ճնշում է: Հասարակությու-  
նը՝ նույնպես:

**ԺԱՆ (Բերանժեին).**— Դուք ձեզ հակասում եք: Միայնություն՞նն է, որ  
ճնշում է, թե՞ բազմությունը: Դուք ձեզ մտածողի տեղ եք դրել և  
չունեք ոչ մի տրամաբանություն:

**ՕՆՐՈՒՆԻ ՊԱՐՈՆ (Տրամաբանին).**— Ծատ գեղեցիկ է տրամաբա-  
նությունը:

**ՏՐԱՄԱԲԱՆ (Ծերունի պարոնին).**— Այն պայմանով, որ չչարաշահվի:

**ՐԵՐԱՆԺԵ (Փանին).**— Աննորմալ մի բան է ապրելը:

**ԺԱՆ.**— Ընդհակառակը: Դրանից էլ ավելի բնականոն բա՛ն: Ապա-  
ցույց՝ բոլորն ապրում են:

**ԲԵՐԱՆԺԵ.**— Մտեղներն ավելի շատ են, քան ողջերը: Նրանց քանակն ավելանում է: Ողջերը սակավաթիվ են:

**ԺԱՆ.**— Մտեղները՝ դա գոյություն չունի. տեղն է եկել ասելու... Ահ, ահ... (**Բուռն ծիծաղ**): Դրա՛նք ևս ձեզ ճնշում են: Ինչպե՛ս կարող են ճնշում գործադրել բաներ, որոնք գոյություն չունեն:

**ԲԵՐԱՆԺԵ.**— Ես ինքս ինձ հարց եմ տալիս, թե արդյոք ես գոյություն ունե՛մ:

**ԺԱՆ (Բերանժեից).**— Դուք գոյություն չունեք, սիրելի՛ս, որովհետև չեք մտածում: Մտածեցեք և կլինեք:

**ՏՐԱՄԱԲԱՆ (Ծերունի պարոնից).**— Մի ուրիշ սիրագիզմ. բոլոր կատուները մահկանացու են: Սոկրատը մահկանացու է: Ուրեմն, Սոկրատը կատու է:

**ԾԵՐՈՒՆԻ ՊԱՐՈՆ.**— Եվ նա չորս թաթ ունի: Դա ճիշտ է. ես մի կատու ունեմ, որի անունը Սոկրատ է:

**ՏՐԱՄԱԲԱՆ.**— Տեսնում եք...

**ԺԱՆ (Բերանժեից).**— Դուք ըստ էության օյինբազ եք: Սուտասա՛ն: Ասում եք, որ կյանքը ձեզ չի հետաքրքրում: Մեկը կա, սակայն, որը ձեզ հետաքրքրում է:

**ԲԵՐԱՆԺԵ.**— Ո՛վ:

**ԺԱՆ.**— Գրասենյակի ձեր գողտրիկ ընկերուհին, որ քիչ առաջ անցավ այստեղից: Դուք սիրահարված եք նրան:

**ԾԵՐՈՒՆԻ ՊԱՐՈՆ.**— Սոկրատն, ուրեմն, կատու էր:

**ՏՐԱՄԱԲԱՆ (Ծերունի պարոնից).**— Տրամաբանությունը հենց նոր, մեզ համար, այդ բացահայտեց:

**ԺԱՆ (Բերանժեից).**— Չէիք ուզում, որ նա ձեզ տեսնի այն ողբալի վիճակում, որի մեջ գտնվում էիք: (**Բերանժեի սրտնեղած շարժումը**): Դա ապացուցում է, որ ամեն ինչի նկատմամբ չէ, որ դուք անտարբեր եք: Բայց ինչպե՛ս եք ուզում, որ Դեզին հրապուրվի մի հարբեցողով:

**ՏՐԱՄԱԲԱՆ (Ծերունի պարոնից).**— Վերադառնանք մեր կատուներին:

**ԾԵՐՈՒՆԻ ՊԱՐՈՆ (Տրամաբանից).**— Լսում եմ ձեզ:

**ԲԵՐԱՆԺԵ (Ժանից).**— Այս կամ այն կերպ, ինձ թվում է, որ նա արդեն մեկին նկատի ունի:

**ԺԱՆ (Բերանժեից).**— Այդ ո՛ւմ:

**ԲԵՐԱՆԺԵ.**— Դյուդարին: Մեր գրասենյակի աշխատակիցներից մեկը. իրավաբանականի թեկնածու, իրավագետ, ձեռնարկության հու-

սալի ապագան, Դեզիի սրտում բուն դրած ապագայի հույսը: Ես  
 չեմ կարող մրցակցել նրա հետ:

**ՏՐԱՄԱԲԱՆ (Ծերունի պարոնի).**— Իսիդոր կատուն չորս թաթ ունի:  
 ԾԵՐՈՒՆԻ ՊԱՐՈՆ.— Այդ որտեղի՞ց գիտեք:

**ՏՐԱՄԱԲԱՆ.**— Դա առաջադրվում է որպես վարկած:

**ԲԵՐԱՆԺԵ (Ժանի).**— Նա շեֆի աչքի լույսն է: Ինքս, ես ապագա  
 չունեմ: Ուսումս չեմ շարունակել: Ոչ մի ակնկալություն չունեմ:

**ԾԵՐՈՒՆԻ ՊԱՐՈՆ (Տրամաբանի).**— Ահ, որպես վարկած:

**ԺԱՆ (Բերանժեի).**— Եվ դուք հենց այնպես հրաժարվո՞ւմ եք...

**ԲԵՐԱՆԺԵ (Ժանի).**— Ի՞նչ կարող եմ անել, որ...

**ՏՐԱՄԱԲԱՆ (Ծերունի պարոնի).**— Ֆրիկոն նույնպես չորս թաթ ու-  
 նի: Քանի՞ թաթ կունենան Ֆրիկոն և Իսիդորը:

**ԾԵՐՈՒՆԻ ՊԱՐՈՆ (Տրամաբանի).**— Միասի՞ն, թե՞ առանձին-ա-  
 ռանձին:

**ԺԱՆ (Բերանժեի).**— Կյանքը պայքար է. վախկոտություն է չպայ-  
 քարելը:

**ՏՐԱՄԱԲԱՆ (Ծերունի պարոնի).**— Միասին, թե առանձին-առան-  
 ձին՝ դա կախում ունի:

**ԲԵՐԱՆԺԵ (Ժանի).**— Ի՞նչ եք ուզում: Ջինաթափ եմ ես:

**ԺԱՆ.**— Ջինվեցեք, սիրելի՛ս, զինվեցեք:

**ԾԵՐՈՒՆԻ ՊԱՐՈՆ (Տրամաբանի, տառապագին խորհելուց հետո).**—  
 Ութ: Ութ թաթ:

**ՏՐԱՄԱԲԱՆ.**— Տրամաբանությունը տանում է դեպի մտային հաշվում-  
 ները:

**ԾԵՐՈՒՆԻ ՊԱՐՈՆ.**— Եվ շատ երեսներ ունի:

**ԲԵՐԱՆԺԵ (Ժանի).**— Ջենքեր՝ որտեղի՞ց:

**ՏՐԱՄԱԲԱՆ (Ծերունի պարոնի).**— Տրամաբանությունը սահմաններ  
 չունի:

**ԺԱՆ.**— Ջեր իսկ ներսում: Ջեր կամքի շնորհիվ:

**ԲԵՐԱՆԺԵ (Ժանի).**— Ի՞նչ զենքեր:

**ՏՐԱՄԱԲԱՆ (Ծերունի պարոնի).**— Հիմա կտեսնեք...

**ԺԱՆ (Բերանժեի).**— Համբերության, մշակույթի զենքերը, խելացիու-  
 թյան զենքերը: (Բերանժեն հորանջում է): Դարձեք աշխույժ ու  
 փազուն ոգի: Եղեք ժամանակի ոգուն համապատասխան:

**ԲԵՐԱՆԺԵ.**— Ինչպե՞ս լինեմ ժամանակի ոգուն համապատասխան:

**ՏՐԱՄԱԲԱՆ (Ծերունի պարոնի).**— Այդ կատուններից երկու թաթ եմ  
 կտրում: Քանի՞ հատ է մնում յուրաքանչյուրի:

**ԾԵՐՈՒՆԻ ՊԱՐՈՆ.**— Բարդ է:

**ԲԵՐԱՆԺԵ (Ժանին).**— Բարդ է:

**ՏՐԱՄԱԲԱՆ (Ծերունի պարոնին).**— Ընդհակառակը, պարզ է:

**ԾԵՐՈՒՆԻ ՊԱՐՈՆ (Տրամաբանին).**— Ձեզ համար գուցե հեշտ է, բայց ոչ՝ ինձ համար:

**ՏՐԱՄԱԲԱՆ (Ծերունի պարոնին).**— Մտածելու վրա ջանք թափեցեք, է՛հ, տրամադրվեցեք:

**ԺԱՆ (Բերանձեին).**— Մտածելու վրա ջանք թափեցեք, է՛հ, տրամադրվեցեք:

**ԾԵՐՈՒՆԻ ՊԱՐՈՆ (Տրամաբանին).**— Ձեմ ջոկում:

**ԲԵՐԱՆԺԵ (Ժանին).**— Ես իրոք չեմ ջոկում:

**ՏՐԱՄԱԲԱՆ (Ծերունի պարոնին).**— Ամեն ինչ ձեզ պատրաստի պետք է մատուցել:

**ԺԱՆ (Բերանձեին).**— Ամեն ինչ ձեզ պատրաստի պետք է մատուցել:

**ՏՐԱՄԱԲԱՆ (Ծերունի պարոնին).**— Վերցրեք մի մաքուր թուղթ և հաշվեցեք: Վեց թաթ ենք պոկում երկու կատուններից: Քանի՞ հատ թաթ է մնում յուրաքանչյուր կատվին:

**ԾԵՐՈՒՆԻ ՊԱՐՈՆ.**— Սպասեցեք... (**Գրպանից մի թուղթ է հանում ու հաշվում է**):

**ԺԱՆ.**— Ահա թե ինչ պետք է անել. հազում եք կոկիկ, կանոնավոր. ամեն օր ածիվում եք. մաքուր վերնաշապիկ եք կրում:

**ԲԵՐԱՆԺԵ (Ժանին).**— Լվացքատունը թանկ է վերցնում...

**ԺԱՆ (Բերանձեին).**— Խնայեցեք խմիչքի հաշվին: Այդքանը՝ արտաքին համար. գլխարկ, փողկապ՝ այս մեկի նման, նրբագեղ կոստյում, կոշիկները սիրուն փայլեցրած: (**Հագուստ-կապուստի մասին խոսելիս՝ ժանը ինքնահավան մատնացույց է անում իր սեփական գլխարկը, փողկապը, կոշիկները**):

**ԾԵՐՈՒՆԻ ՊԱՐՈՆ (Տրամաբանին).**— Մի քանի հավանական լուծումներ կան:

**ՏՐԱՄԱԲԱՆ (Ծերունի պարոնին).**— Ասացեք:

**ԲԵՐԱՆԺԵ (Ժանին).**— Հետո ի՞նչ անեմ: Ասացեք...

**ՏՐԱՄԱԲԱՆ (Ծերունի պարոնին).**— Ես ձեզ լսում եմ:

**ԲԵՐԱՆԺԵ (Ժանին).**— Ես ձեզ լսում եմ:

**ԺԱՆ (Բերանձեին).**— Դուք ամաչկոտ եք, բայց ընդունակություններ ունեք:

**ԲԵՐԱՆԺԵ (Ժանին).**— Ե՛ս, ընդունակություններ՞ր ունեմ:

**ԺԱՆ.**— Իրացրեք ձեր ընդունակությունները: Կյանքից չպետք է ետ մնալ: Իրագեղ եղեք մեր դարաշրջանի գրական ու մշակութային իրադարձություններից:



- ԾԵՐՈՒՆԻ ՊԱՐՈՆ (Տրամաբանիք).**— Առաջին հնարավորություն՝ մի կատուն կարող է չորս թաթ ունենալ, մյուսը՝ երկու:
- ԲԵՐԱՆԺԵ (Ժանիք).**— Ազատ ժամանակ՝ ես այնքան քիչ ունեմ:
- ՏՐԱՄԱԲԱՆ.**— Դուք ընդունակություններ ունեք: Մնում էր, որ դրանք իրացնեիք:
- ԺԱՆ.**— Օգտակար անցկացրեք, ուրեմն, այն քիչ ժամանակը, որ ունեք ձեր տրամադրության տակ: Ձեզ մի թողեք ինքնահոսի:
- ԾԵՐՈՒՆԻ ՊԱՐՈՆ.**— Ես ազատ ժամանակ չեմ ունեցել երբևիցե: Պաշտոնյա եմ եղել:
- ՏՐԱՄԱԲԱՆ (Ծերունի պարոնիք).**— Սովորելու համար միշտ էլ ժամանակ կգտնվի:
- ԺԱՆ (Բերանժեիք).**— Միշտ էլ ժամանակ կգտնվի:
- ԲԵՐԱՆԺԵ (Ժանիք).**— Ծատ ուշ է արդեն:
- ԾԵՐՈՒՆԻ ՊԱՐՈՆ (Տրամաբանիք).**— Մի քիչ շատ ուշ է ինձ համար:
- ԺԱՆ (Բերանժեիք).**— Երբեք ուշ չէ:
- ՏՐԱՄԱԲԱՆ (Ծերունի պարոնիք).**— Երբեք ուշ չէ:
- ԺԱՆ (Բերանժեիք).**— Դուք օրը ութ ժամ եք աշխատում, ինչպես ես, ինչպես բոլորը: Իսկ կիրակի օրը, իսկ երեկոնե՞րը, իսկ ամռան երեք շաբաթվա արձակո՞րդը: Դա բավական է, եթե սխտեմատիկորեն պարապեք:
- ՏՐԱՄԱԲԱՆ (Ծերունի պարոնիք).**— Բա մյո՞ւս լուծումները. սխտեմատիկորեն տրամաբանեցեք, սխտեմատիկորեն... **(Ծերունի պարոնը նորից սկսում է հաշվել):**
- ԺԱՆ (Բերանժեիք).**— Խնդրեմ, հարբելու և հիվանդանալու փոխարեն ավելի լավ չէ՞, որ թարմ ու տրամադրված լինեք, թեկուզ գրասենյակում աշխատելիս: Եվ ձեր ազատ ժամանակը կանցկացնեք խելացի ձևով:
- ԲԵՐԱՆԺԵ (Ժանիք).**— Այսի՞նք...
- ԺԱՆ (Բերանժեիք).**— Այցելեցեք թանգարանները, կարդացեք գրական ամսագրերը, հաճախեցեք դասախոսությունների: Դա ձեզանից կվանի տազնապալի ապրումները, կձևավորի ձեր մտածելակերպը: Չորս շաբաթից հետո կդառնաք կրթված մարդ:
- ԲԵՐԱՆԺԵ (Ժանիք).**— Դուք իրավացի եք:
- ԾԵՐՈՒՆԻ ՊԱՐՈՆ (Տրամաբանիք).**— Կարող է մի կատու լինել, որն ամենա հինգ թաթ...
- ԺԱՆ (Բերանժեիք).**— Ինքներդ եք ասում:
- ԾԵՐՈՒՆԻ ՊԱՐՈՆ (Տրամաբանիք).**— Եվ մի ուրիշ կատու, որն ու-

Անճա մի թաթ: Բայց այդ դեպքում նրանք չե՞ն դադարի կատուներ լինելուց:

**ՏՐԱՄԱԲԱՆ (Ծերունի պարոնիճ).**— Եվ ինչո՞ւ պիտի դադարեն:

**ԺԱՆ (Բերանժեիճ).**— Փոխանակ ձեր տրամադրության տակ եղած դրամը խմիչքի տալու, ավելի լավ չէ՞, որ թատրոնի տոմս գնեք՝ հետաքրքիր ներկայացում նայելու համար: Չեզ ծանո՞թ է ավանգարդային թատրոնը, որի մասին այնքան խոսում են: Դուք նախ՞ը եք Իոնեսկոյի պիեսները<sup>4</sup>:

**ԲԵՐԱՆԺԵ (Ժանիճ).**— Ոչ, ավաղ: Ես միայն լսել եմ այդ մասին:

**ԾԵՐՈՒՆԻ ՊԱՐՈՆ (Տրամաբանիճ).**— Եթե երկու կատուների ունեցած ութը թաթից երկուսը վերացնենք...

**ԺԱՆ (Բերանժեիճ).**— Այս օրերին ներկայացնում են նրա պիեսներից մեկը: Օգտվեցեք հանգամանքից:

**ԾԵՐՈՒՆԻ ՊԱՐՈՆ.**— Կարող եմ ունենալ վեց թաթանոց մի կատու...

**ԺԱՆ.**— Ահա ձեզ մեր ժամանակի արվեստի աշխարհին շփվելու հիանալի առիթ:

**ԾԵՐՈՒՆԻ ՊԱՐՈՆ (Տրամաբանիճ).**— Եվ մի կատու, որ բոլորովին թաթ չունենա:

**ԲԵՐԱՆԺԵ.**— Դուք իրավացի եք, իրավացի եք: Պետք է գործեն, ինչպես ասում եք, ժամանակի ոգուն համապատասխան:

**ՏՐԱՄԱԲԱՆ (Ծերունի պարոնիճ).**— Այդ դեպքում լինելու է մի առանձնաշնորհյալ կատու:

**ԲԵՐԱՆԺԵ (Ժանիճ).**— Ես ձեզ խոստանում եմ:

**ԺԱՆ.**— Եվ մանավանդ ինքների՞ ձեզ խոստացեք:

**ԾԵՐՈՒՆԻ ՊԱՐՈՆ.**— Եվ իր բոլոր թաթերից զրկված մի ապադասակարգայնացված կատու:

**ԲԵՐԱՆԺԵ.**— Հանդիսավոր կարգով ինքս ինձ խոստանում եմ: Ինքս ինձ տված իմ խոսքը գործի եմ վերածելու:

**ՏՐԱՄԱԲԱՆ.**— Դա արդար չէր լինի: Ուստի և չէր կարող լինել տրամաբանական:

**ԲԵՐԱՆԺԵ (Ժանիճ).**— Հարբեցողության տրվելու փոխարեն որոշում եմ ընդունում կրթել իմ հոգին: Ես ինձ արդեն ավելի լավ եմ զգում: Արդեն իմ ողեղն ավելի պայծառ է:

**ԺԱՆ.**— Տեսնո՞ւմ եք:

**ԾԵՐՈՒՆԻ ՊԱՐՈՆ (Տրամաբանիճ).**— Չե՞ր կարող լինել տրամաբանական:

**ԲԵՐԱՆԺԵ.**— Հենց այսօր, կեսօրից հետո գնալու եմ քաղաքապետա-

- րանի թանգարանը: Հենց այս երեկո առնում եմ թատրոնի երկու տոմս: Ինձ կուղեկցե՞ք:
- ՏՐԱՄԱԲԱՆ (Ծերունի պարոնին).**— Քանզի արդարությունը դա հենց տրամաբանությունն է:
- ԺԱՆ (Բերանժեին).**— Պետք է լինել հետևողական: Հարկավոր է, որ ձեր լավ մտադրությունները հարատևեն:
- ՕԵՐՈՒՆԻ ՊԱՐՈՆ (Տրամաբանին).**— Հասկացա: Արդարությունը...
- ԲԵՐԱՆԺԵ (Ժանին).**— Ես խոստանում եմ ձեզ, ես խոստանում եմ ինձ: Այսօր կեսօրից հետո ինձ կուղեկցե՞ք թանգարան:
- ԺԱՆ.**— Այսօր կեսօրից հետո իմ ցերեկաչին քնի ռեժիմն է: Դա մղտնում է իմ ծրագրի մեջ:
- ՕԵՐՈՒՆԻ ՊԱՐՈՆ (Տրամաբանին).**— Արդարությունը նույնպես տրամաբանության երեսներից մեկն է:
- ԲԵՐԱՆԺԵ.**— Այս երեկո ինձ հետ կգա՞ք թատրոն:
- ԺԱՆ.**— Ոչ: Ոչ այս երեկո:
- ՏՐԱՄԱԲԱՆ (Ծերունի պարոնին).**— Ձեր միտքը պայծառանում է:
- ԺԱՆ (Բերանժեին).**— Ես մաղթում եմ, որ դուք հետևողական լինեք ձեր լավ մտադրությունների մեջ: Բայց այս երեկո բարեկամների հետ հանդիպում ունեմ գարեջրատանը:
- ԲԵՐԱՆԺԵ.**— Գարեջրատա՞նը:
- ՕԵՐՈՒՆԻ ՊԱՐՈՆ (Տրամաբանին).**— Բացի այդ, թաթերից բոլորորովին զրկված կատուն...
- ԺԱՆ (Բերանժեին).**— Ես նրանց խոստացել եմ: Ես իրագործում եմ իմ խոստումները:
- ՕԵՐՈՒՆԻ ՊԱՐՈՆ (Տրամաբանին).**— ... Ձի կարողանա այնքան արագ վազել՝ մկներից բռնելու համար:
- ԲԵՐԱՆԺԵ (Ժանին).**— Ահ, սիրելիս, հիմա ձեր հերթն է վատ օրինակ ծառայելու: Դուք պիտի զբաղվեք հարբեցողությամբ:
- ՏՐԱՄԱԲԱՆ (Ծերունի պարոնին).**— Դուք արդեն առաջադիմում եք տրամաբանության մեջ: (Նորից լսելի է դառնում շատ արագ մոտեցող սրընթաց դոփդոփյուն, մոնչոց, ռնգեղջյուրի սմբակների բառատրոփ աղմուկը, նրա աղմկալի հևքը, բայց այս անգամ հակառակ ողողությամբ, բեմի խորքից դեպի առաջամասը, դարձյալ կուլիսների ձախ կողմից):
- ԺԱՆ (Բերանժեին, կատաղած).**— Իմ սիրելի՛ բարեկամ, մեկ անգամը դեռևս սովորությունն չէ: Ձեզ հետ՝ ոչ մի համեմատություն: Քանզի դուք... դուք... դա նույն բանը չէ...
- ՕԵՐՈՒՆԻ ՊԱՐՈՆ.** - Ինչո՞ւ դա նույն բանը չպիտի լինի, որ...

- ԺԱՆ (գոռալով, որպեսզի հաղթահարի խանութի կողմից եկող աղմուկը).— Ես հարբեցող չեմ, ես:
- ՏՐԱՄԱԲԱՆ (Ծերունի պարոնին).— Նույնիսկ առանց թաթերի կատուն պարտավոր է մուկ բռնել: Նրա բնույթն այդպիսին է:
- ԲԵՐԱՆԺԵ (շատ բարձր գոռալով).— Ես չեմ ուզում ասել, որ դուք հարբեցող եք: Բայց ես ինչո՞ւ պիտի համարվեմ այդպիսինը, ես ավելին քան դուք՝ նմանատիպ պարագայում:
- ԾԵՐՈՒՆԻ ՊԱՐՈՆ (գոռալով, Տրամաբանին).— Ինչպիսի՞ն է կատվի բնույթը
- ԺԱՆ (Բերանժեին, նույն կերպ).— Որովհետև խնդիրը չափի մեջ է: Ի տարբերություն ձեզ, ես չափս իմացող մարդ եմ:
- ՏՐԱՄԱԲԱՆ (Ծերունի պարոնին՝ նրա ականջն առնելով ավերի մեջ).— Ի՞նչ ասացիք: (Ռժգին աղմուկներ, որոնք խլացնում են չորս գործող անձանց խոսակցությունը):
- ԲԵՐԱՆԺԵ (Ժանին, նրա ականջն առնելով ավերի մեջ).— «Մինչդեռ ես...», ի՞նչ, ի՞նչ ասացիք:
- ԺԱՆ (ոռնալով).— Ես ասացի, որ...
- ԾԵՐՈՒՆԻ ՊԱՐՈՆ (ոռնալով).— Ես ասացի, որ...
- ԺԱՆ (անդրադառնալով աղմուկներին, որոնք շատ են մոտիկ).— Բայց այս ի՞նչ է տեղի ունենում:
- ՏՐԱՄԱԲԱՆ.— Բայց այս ի՞նչ է:
- ԺԱՆ (վեր է թռչում և դրանով իսկ ցած է գցում արձուր: Նայում է ձախ կույսի կողմը, որտեղից գալիս են հակառակ ուղղությամբ արշավող ռնգեղջյուրի աղմուկները).— Օ՛հ, ռնգեղջյուր:
- ՏՐԱՄԱԲԱՆ (վեր է թռչում, ցած է գցում իր արձուրը).— Օ՛հ, ռնգեղջյուր:
- ԾԵՐՈՒՆԻ ՊԱՐՈՆ (նույն կերպ).— Օ՛հ, ռնգեղջյուր:
- ԲԵՐԱՆԺԵ (դեռևս նստած, բայց այս անգամ ավելի զգոն).— Ռնգեղջյուր, հակառակ ուղղությամբ:
- ՄԱՏՈՒՑՈՂՈՒՀԻ (հայտնվում է մատուցարանով՝ վրան բաժակներ).— Սա ի՞նչ է: Օ՛հ, ռնգեղջյուր: (Զեռքից բաց է թողնում մատուցարանը: Բաժակները ջարդվում են):
- ՍՐՃԱՐԱՆԱՏԵՐ (դուրս գալով խանութից).— Սա ի՞նչ է:
- ՄԱՏՈՒՑՈՂՈՒՀԻ (Սրճարանատիրոջը).— Ռնգեղջյուր:
- ՏՐԱՄԱԲԱՆ.— Մի ռնգեղջյուր, որն ամբողջ թափով արշավում է դիմացի մայթին:
- ՆՊԱՐԱՎԱՃԱՌ (խանութից դուրս գալով).— Օ՛հ, ռնգեղջյուր:

ժԱՆ.— Օ՛հ, ոնգեղջյուր:

ՆՊԱՐԱՎԱՃԱՌՈՒՀԻ (ի ցույց դնելով գլուխը խանութի վերևում գտնու-  
վող լուսամուտից).— Օ՛հ, ոնգեղջյուր:

ԱՐՃԱՐԱՆԱՏԵՐ (Մատուցողուհուն).— Բայց դա արդարացում չէ  
բաժակներ ջարդելու համար:

ԺԱՆ.— Ողիղ քշում է առաջ: Քսվում է բացօթյա վաճառասեղաննե-  
րին:

ԳԵՋԻ (ներս մտնելով ձախ կողմից).— Օ՛հ, ոնգեղջյուր:

ԲԵՐԱՆԺԵ (Դեզիին տեսնելով).— Օ՛հ, Դեզի՛: (Լսելի են փախչող  
մարդկանց ոտնաձայները, «օհ»-եր և «ահ»-եր, ինչպես նախորդ  
անգամ):

ՄԱՏՈՒՑՈՂՈՒՀԻ.— Այս ի՞նչ փորձանք էր՝ եկավ մեր գլխին:

ԱՐՃԱՐԱՆԱՏԵՐ (Մատուցողուհուն).— Ձեր աշխատավարձից պահե-  
լու եմ ջարդված բաժակների արժեքը: (Բերանձեն փորձում է  
թաքնվել, որպեսզի Դեզին նրան չտեսնի: Ծերունի պարոնը, Տրա-  
մարանը, Նպարավաճառուհին, Նպարավաճառը շարժվում են դե-  
պի բեմահարթակի կենտրոնը և ասում են):

ՄԻԱՍԻՆ.— Այս ի՞նչ փորձանք էր՝ եկավ մեր գլխին:

ԺԱՆ և ԲԵՐԱՆԺԵ.— Այս ի՞նչ փորձանք էր՝ եկավ մեր գլխին: (Լքու-  
վում է աղեկաուր մլավոց, որից հետո կնոջ նույնքան աղեկաուր  
նիչը):

ԲՈՒՈՐԸ.— Օ՛հ: (Համարյա նույն պահին, և մինչ աղմուկներն արագո-  
րեն հեռանում են, հայտնվում է քիչ առաջվա Տնային տնտեսու-  
հին, առանց կողովի, բայց թևերի վրա սպանված և արնակոլոլ  
կատուն):

ՆԱՍԻՅԻՆ ՏՆՏԵՍՈՒՀԻ (ողբալով).— Նա տորրեց իմ կատվին: Նա  
տորրեց իմ կատվին:

ՄԱՏՈՒՑՈՂՈՒՀԻ.— Տրորեց նրա կատվին: (Նպարավաճառը, Ծե-  
րունի պարոնը, Դեզին, Տրամարանը շրջապատում են Տնային  
տնտեսուհուն: Նպարավաճառուհին՝ լուսամուտից: Նրանք ասում  
են):

ՄԻԱՍԻՆ.— Ինչ մեղք է խեղճ ձագուկը:

ՆԱՍԻՅԻՆ ԳԱՐՈՆ.— Խեղճ ձագուկը:

ԳԵՋԻ և ՄԱՏՈՒՑՈՂՈՒՀԻ.— Խեղճ ձագուկը:

ՆՊԱՐԱՎԱՃԱՌ, ՆՊԱՐԱՎԱՃԱՌՈՒՀԻ (վերջինս լուսամուտից), ԾԵ-  
ՐՈՒՆԻ ԳԱՐՈՆ, ՏՐԱՄԱԲԱՆ.— Խե՛ղճ ձագուկը:

ԱՐՃԱՐԱՆԱՏԵՐ (Մատուցողուհուն, մատնացույց անելով ջարդված  
բաժակներն ու շուռ եկած արոնները).— Ի՞նչ էք սպասում: Կար-

գի բերեք այս ամենը: (Ժանը և Բերանժեն իրենց հերթին նետվում, շրջապատում են Տնային տնտեսուհուն, որը շարունակում է ողբալ՝ մեռած կատուն թևերի վրա):

**ՄԱՏՈՒՑՈՂՈՒՀԻ** (շարժվելով դեպի սրճարանի բացօթյա տարածությունը՝ ջարդված բաժակների կտորտանքները հավաքելու և աթոռներն ուղղելու համար: Նա, միաժամանակ, գլուխը ետ շրջելով, նայում է Տնային տնտեսուհու կողմը).— Օ՛հ, խեղճ ձագուկ:

**ՍՐՃԱՐԱՆԱՏԵՐ** (մատնացույց անելով աթոռները և ջարդված բաժակները՝ Մատուցողուհուն).— Այստեղ, այստեղ:

**ԾԵՐՈՒՆԻ ՊԱՐՈՆ** (Նպարավաճառին).— Ի՞նչ է ձեր կարծիքը:

**ԲԵՐԱՆԺԵ** (Տնային տնտեսուհուն).— Լաց մի եղեք, տիկի՛ն. մեր սիրտը կտոր-կտոր է լինում:

**ԴԵՋԻ** (Բերանժեին).— Պարո՛ն Բերանժե... Դուք այստե՛ղ էիք: Տեսա՛ք:

**ԲԵՐԱՆԺԵ** (Դեզիին).— Բարև, օրիո՛րդ Դեզի. ես ժամանակ չունեցա անցնելու: Ինձ ներեցեք, որ...

**ՍՐՃԱՐԱՆԱՏԵՐ** (հետևելով, թե Մատուցողուհին ինչպես է հավաքում կտորտանքները, ապա մի հայացք նետելով Տնային տնտեսուհու կողմը).— Խեղճ ձագուկ:

**ՄԱՏՈՒՑՈՂՈՒՀԻ** (հավաքելով կտորտանքները՝ թիկունքը շրջած դեպի Տնային տնտեսուհին).— Խեղճ ձագուկ: (Անշուշտ, բոլոր այդ ռեպլիկաները պիտի ասվեն շատ արագ, համարյա միաժամանակ):

**ՆՊԱՐԱՎԱԾԱՌՈՒՀԻ** (լուսամուտից).— Սա արդեն շատ եղավ:

**ԺԱՆ**.— Սա արդեն շատ եղավ:

**ՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒՀԻ** (ողբալով ու մեռած կատվին թևերի վրա օրորելով).— Իմ խե՛ղճ փիսո, իմ խե՛ղճ փիսո:

**ԾԵՐՈՒՆԻ ՊԱՐՈՆ** (Տնային տնտեսուհուն).— Կուզենայի ձեզ նորից տեսնել ուրիշ հանգամանքներում:

**ՏՐԱՄԱԲԱՆ** (Տնային տնտեսուհուն).— Ի՞նչ արած, տիկի՛ն, բոլոր կատուները մահկանացու են: Հարկավոր է հաշտվել այդ փաստի հետ:

**ՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒՀԻ** (ողբալով).— Իմ կատուն, իմ կատուն, իմ կատուն:

**ՍՐՃԱՐԱՆԱՏԵՐ** (Մատուցողուհուն, որի գոգնոցը լիքն է ապակու կլտորտանքներով).— Այդ ամենը տարեք աղբանոց: (Ինքն ուղղել է աթոռները): Դուք ինձ պարտ եք հազար ֆրանկ:

**ՄԱՏՈՒՑՈՂՈՒՀԻ** (մտնելով խանութ, Սրճարանատիրոջը).— Դուք միայն ձեր գրոշների մասին եք մտածում:

- ԵՊԱՐԱՎԱԾԱՌՌԻՉԻ (Տնային տնտեսություն, լուսամուտից).—** Հանգրաւագեք, տիկի՛ն:
- ԵՐՐՈՒՆԻ ՊԱՐՈՆ (Տնային տնտեսություն).—** Հանգրաւագեք, սիրելի՛ տիկին:
- ԵՊԱՐԱՎԱԾԱՌՌԻՉԻ (լուսամուտից).—** Այնուամենայնիվ, ցավալի է: **ԵՍՅԻՆ ՏՆՏԵՍՈՒՉԻ.—** Իմ կատուն, իմ կատուն, իմ կատուն:
- ԵՐՐԻ.—** Ահ, այո. այնուամենայնիվ, ցավալի է:
- ԵՐՐՈՒՆԻ ՊԱՐՈՆ (մտնելով Տնային տնտեսում թըր, որպէսզի նա չընկնի և շարժելով դեպի սրճարանի բացօթյա տարածութեամբ սեղաններից մեկը: Նրան հետևում են մյուսները).—** Նստեցեք, տիկի՛ն:
- ԵՍՆ (Շերունի պարոնին).—** Ի՞նչ է ձեր կարծիքը:
- ԵՊԱՐԱՎԱԾԱՌ (Տրամարանին).—** Ի՞նչ է ձեր կարծիքը:
- ԵՊԱՐԱՎԱԾԱՌՌԻՉԻ (լուսամուտից, Դեզիին).—** Ի՞նչ է ձեր կարծիքը:
- ԵՐՐԱՐԱՆԱՏԵՐ (Մատուցողություն, որը նորից հայտնվում է, մինչ արոտին են նստեցնում արցունքակալով Տնային տնտեսություն, որը դեռևս օրորում է մեռած կատվին).—** Մի բաժակ ջուր՝ տիկնոջ համար:
- ԵՐՐՈՒՆԻ ՊԱՐՈՆ (Տիկնոջը).—** Նստեցեք, սիրելի՛ տիկին:
- ԵՍՆ.—** Խե՛ղճ կին:
- ԵՊԱՐԱՎԱԾԱՌՌԻՉԻ (լուսամուտից).—** Խե՛ղճ անասուն:
- ԵՐՐԱՆԺԵ (Մատուցողություն).—** Ջուրն ի՞նչ է: Կոնյակ բերեք նրան համար:
- ԵՐՐԱՐԱՆԱՏԵՐ (Մատուցողություն).—** Կոնյակ: (Մատնացույց անելով հերանժեին): Այս պարոնն է վճարում: (Մատուցողուհին մըտնում է խանութ, ասելով):
- ԵՍՆ — ԶԶԶՈՒՉԻ.—** Եղա՛վ: Մի կոնյակ:
- ԵՐՐՈՒՆ ՏՆՏԵՍՈՒՉԻ (հեծկտալով).—** Կոնյակ չեմ ուզում, չե՛մ ուզում:
- ԵՐՐՈՒՎԱԾԱՌ.—** Նա արդեն անցավ քիչ առաջ, խանութի առջևից:
- ԵՍՆ (Նպարավաճառին).—** Դա նույնը չէր:
- ԵՊԱՐԱՎԱԾԱՌ (Ժանին).—** Սակայն...
- ԵՊԱՐԱՎԱԾԱՌՌԻՉԻ.—** Օ՛հ, դա նույնն էր:
- ԵՐՐԻ —** Երկրորդ անգամն է, որ ռեգեղջուր է անցնում:
- ԵՐՐԱՐԱՆԱՏԵՐ.—** Ես կարծում եմ, որ նույնն էր:
- ԵՍՆ.—** Ո՛չ, նույն ռեգեղջուրը չէր: Նախորդը երկու կտտոշ ուներ քթի վերևում: Նա ասիացի ռեգեղջուր էր: Այս վերջինը մեկ հատ ու-

Անք. աֆրիկացի ռեգեդջուր էր: **(Մատուցողունին հայանվում է մի բաժակ կոնյակով և այն հրամցնում է Տիկնոջը):**

**ԾԵՐՈՒՆԻ ՊԱՐՈՆ.**— Ահա կոնյակ, որ սրտապնդվեք:

**ՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒՀԻ (լացակումած).**— Ո-ո՛չ...

**ԲԵՐԱՆԺԵ (հանկարծակի ջղագրգռված, Ժանին).**— Հիմարություններ եք ասում... Դուք այդ ինչպե՛ս կարողացաք տարբերել կոտոշները: Վայրի գազանն այնպիսի արագությամբ անցավ, որ հազիվ կարողացանք նկատել նրան...

**ԴԵԶԻ (Տնային տնտեսուհուն).**— Խմեցե՛ք: Դուք ձեզ լավ կզգաք:

**ԾԵՐՈՒՆԻ ՊԱՐՈՆ (Բերանժեին).**— Իրոք, նա արագ էր գնում:

**ՍՐՃԱՐԱՆԱՏԵՐ (Տնային տնտեսուհուն).**— Համտե՞սեք: Լավն է:

**ԲԵՐԱՆԺԵ (Ժանին).**— Դուք ժամանակ չունեցաք հաշվելու նրա կոտոշները...

**ՆՊԱՐԱՎԱԾԱՌՈՒՀԻ (Մատուցողունին, լուսամուտից).**— Խմեցրե՛ք նրան:

**ԲԵՐԱՆԺԵ (Ժանին).**— Առավել ևս, որ նա փոշու ամպով էր ծածկրված...

**ԴԵԶԻ (Տնային տնտեսուհուն).**— Խմեցեք, տիկի՛ն:

**ԾԵՐՈՒՆԻ ՊԱՐՈՆ (նույն գործող անձին).**— Մի փոքրիկ կում քաշեցեք, իմ սիրելի՛, գողտրիկ տիկին... Ձեզ տեսնեմ... **(Մատուցողունին Տնային տնտեսուհուն խմեցնում է՝ բաժակը տանելով նրա շուրթերին: Վերջինս ձևացնում է, թե հրաժարվում է, բայց և այնպես խմում է):**

**ՄԱՏՈՒՑՈՂՈՒՀԻ.**— Տեսա՞ք:

**ՆՊԱՐԱՎԱԾԱՌՈՒՀԻ (լուսամուտից) և ԴԵԶԻ.**— Տեսա՞ք:

**ԺԱՆ (Բերանժեին).**— Ինքս, իմ ուղեղը մշուշների մեջ չէ: Ես արագ եմ հաշվում: Միտքս պայծառ է:

**ԾԵՐՈՒՆԻ ՊԱՐՈՆ (Տնային տնտեսուհուն).**— Հիմա ձեզ ավելի լավ չե՞ք զգում:

**ԲԵՐԱՆԺԵ (Ժանին).**— Լավ, էլի, նա քշում էր՝ գլուխն առաջ գցած:

**ՍՐՃԱՐԱՆԱՏԵՐ (Տնային տնտեսուհուն).**— Լավն էր, այնպես չէ՛:

**ԺԱՆ (Բերանժեին).**— Հենց այդ պատճառով էլ ավելի լավ էր երևում:

**ՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒՀԻ (խմելուց հետո).**— Իմ կատուն:

**ԲԵՐԱՆԺԵ (Ժանին, զայրացած).**— Հիմարություններ, հիմարություններ:

**ՆՊԱՐԱՎԱԾԱՌՈՒՀԻ (լուսամուտից, Տնային տնտեսուհուն).**— Ես մի ավելորդ կատու էլ ունեմ. իմ կողմից՝ ձեզ համար:



ՈՒՆ (Բերանձեին).— Ե՞ս: Դուք հանդգնում եք պնդել, որ ես հիմարություններ եմ ասում:

ՆԱԿՆԻՆ ՏՆՏԵՍՈՒՀԻ (Նպարավաճառուհուն).— Ես ուրիշը չեմ ուզում: (Հեծկտում է՝ կատվին օրորելով):

ԸԼԲԱՆԺԵ (Ժանին).— Այո, իսկապես, հիմարություններ:

ՍԲԱՆԲԱՆԱՏԵՐ (Տնային տնտեսուհուն).— Արդարացում փնտրեք պատահածի համար:

ՈՒՆ (Բերանձեին).— Ինքս, ես երբեք հիմարություններ չեմ ասում:

ՕԼԲՈՒՆԻ ՊԱՐՈՆ (Տնային տնտեսուհուն).— Փիլիսոփայեցեք...

ԸԼԲԱՆԺԵ (Ժանին).— Դուք ընդամենը հավակնոտի մեկն եք: (Զայցուցք քարձրացնելով): Մանրախնդիր...

ՍԲԱՆԲԱՆԱՏԵՐ (Ժանին և Բերանձեին).— Պարոնա՛յք, պարոնա՛յք...

ԸԼԲԱՆԺԵ (Ժանին, շարունակելով).— Մանրախնդիր, որ վստահ չէիր գիտելիքների վրա, որովհետև նախ՝ ասիական ոնգեղջյուրն է, որ մեկ կոտոշ ունի քթի վերևում, մինչ աֆրիկյանն երկուսն ունի... (Մյուս գործող անձինք լքում են Տնային տնտեսուհուն և գալիս շրջապատում են Ժանին և Բերանձեին, որոնք թունդ վիճում են):

ՈՒՆ (Բերանձեին).— Դուք սխալվում եք, ճիշտ հակառակն է:

ՆԱԿՆԻՆ ՏՆՏԵՍՈՒՀԻ (միայնակ).— Նա այնքան քնքուշ էր:

ԸԼԲԱՆԺԵ.— Ուզում եք՝ գրագ գանք:

ՍԲԱՆԲԱՆԱՏԵՐ.— Ուզում են գրագ գալ:

ՈՒՆ (Բերանձեին).— Մի ջղայնացեք, պարո՛ն Բերանձե:

ՈՒՆ (Բերանձեին).— Ձեզ հետ գրագ չեմ գալիս: Երկու կոտոշը հենց այնպե՛ս ունեք, ասիացի գյաղա:

ՍԲԱՆԲԱՆԱՏԵՐ.— Օ՛հ:

ՆԱԿՆԻՆ ՏՆՏԵՍՈՒՀԻ (լուսամուտից, Նպարավաճառին).— Պիտի կովեն:

ՆԱԿՆԻՆ ՏՆՏԵՍՈՒՀԻ (Նպարավաճառուհուն).— Հազիվ թե. գրագ է, էլի:

ՍԲԱՆԲԱՆԱՏԵՐ (Ժանին և Բերանձեին).— Այստեղ՝ ոչ մի սկանդալ:

ՕԼԲՈՒՆԻ ՊԱՐՈՆ.— Ասեք, տեսնեմ... Այդ ո՞ր մի տեսակի ոնգեղջյուրն է, որ մեկ կոտոշ ունի քթի վերևում: (Նպարավաճառին):

ՆԱԿՆԻՆ ՏՆՏԵՍՈՒՀԻ.— Ես արդեն ասեցի, պիտի որ գիտեճաք:

ՆԱԿՆԻՆ ՏՆՏԵՍՈՒՀԻ (Լուսամուտից, Նպարավաճառին).— Դու պիտի որ գիտեճաս:

ԸԼԲԱՆԺԵ (Ժանին).— Ես կոտոշ չունեմ: Եվ երբեք էլ չեմ ունենալու:

ՆԱԿՆԻՆ ՏՆՏԵՍՈՒՀԻ (Ծերունի պարոնին).— Վաճառականներն ամեն ինչ կարող իմանալ:

ԺԱՆ (Բերանձեին).— Հա՛, ունես:

ԲԵՐԱՆԺԵ (Ժանին).— Ես նաև սախաղի չեմ: Բաղի այդ, սախաղի-  
ներն էլ մարդիկ են բոլորի նման...

ՄԱՏՈՒՑՈՂՈՒՀԻ.— Այո. սախաղիները մարդիկ են հմ ու ձեր նման...

ԾԵՐՈՒՆԻ ՊԱՐՈՆ (Սրճարանատիրոջը).— Ճիշտ է:

ՍՐՃԱՐԱՆԱՏԵՐ (Մատուցողուհուն).— Ձեր կարծիքը չեն հարցնում:

ԴԵԶԻ (Սրճարանատիրոջը).— Աղջիկն իրավաղի է: Նրանք մեզ նը-  
ման մարդիկ են: (Այդ ամբողջ բանավեճի ընթացքում Տնային  
տնտեսուհին շարունակում է ողբալ):

ՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒՀԻ.— Նա այնքան անուշիկն էր: Նա մեզ նման  
էր:

ԺԱՆ (չտիրապետելով ինքն իրեն).— Նրանք դեղնամորթ են: (Տրա-  
մաբանը, մի կողմ քաշված. գտնվում է Ժանի ու Բերանձեի շուր-  
ջը կազմված խմբի և Տնային տնտեսուհու միջև: Նա ուշադիր հե-  
տևում է վիճաբանությանը՝ առանց դրան մասնակցելու):

ԺԱՆ.— Մնաք բարով, պարոնա՛յք: (Բերանձեին): Ձեզ ես մարդու  
տեղ չեմ դնում:

ՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒՀԻ (նույն կերպ).— Նա մեզ այնքան էր սիրում:  
(Հեծկտում է):

ԴԵԶԻ.— Այդպես չեղավ, պարո՛ն Բերանձե: Այդպես չեղավ, պարո՛ն  
Ժան...

ԾԵՐՈՒՆԻ ՊԱՐՈՆ.— Ես ունեցել եմ սախաղի բարեկամներ: Թերևս,  
նրանք իսկական սախաղիներ չէին...

ՍՐՃԱՐԱՆԱՏԵՐ.— Ես ճանաչել եմ իսկականներին:

ՄԱՏՈՒՑՈՂՈՒՀԻ (Նայարավաճառուհուն).— Ես ունեցել եմ մի սախա-  
ղի ընկեր:

ՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒՀԻ (նույն կերպ).— Չազուկա այնքան փոքրիկ  
էր, երբ նրան բերին ինձ մոտ:

ԺԱՆ (դեռևս ինքնատիրապետումը կորցրած).— Նրանք դեղնամորթ  
են, դեղնամորթ. շատ են դեղին:

ԲԵՐԱՆԺԵ (Ժանին).— Համենայն դեպս, դո՛ւք, դո՛ւք կարմրաթուշ եք:  
ՆՊԱՐԱՎԱՃԱՌՈՒՀԻ (լուսամուտից) և ՄԱՏՈՒՑՈՂՈՒՀԻ.— Թ՛հ:

ՍՐՃԱՐԱՆԱՏԵՐ.— Համը դուրս է գալիս:

ՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒՀԻ.— Նա այնքան մաքրատեր էր: Անում էր մի-  
այն իրեն հատկացված տաշեղների վրա:

ԺԱՆ (Բերանձեին).— Քանի որ այդպես է, ես այլևս ձեր բարեկամ  
չեմ: Ժամանակս եմ կորցնում ձեզ նման հիմարի հետ:

**ՏԱՆՅԻՆ ՏՆՏԵՍՈՒՀԻ (նույն կերպ).**— Կարողանում էր հասկացնել, թե ինչ է ուզում:

**ՈՒՆ Հորս գալու համար նետվում է դեպի աջ, շատ արագ ու կատաղած...** Այնուամենայնիվ, շրջվում է, վերջնականապես դուրս գալուց առաջ):

**ՕՆՐՈՒՆԻ ՊԱՐՈՆ (Նպարավաճառին).**— Գոյություն ունենալու անսխալներ՝ սպիտակ, սև, կապույտ, մեզ նման ուրիշներ:

**ՈՒՆ (Բերանձեին).**— Հարբեցո՛ղ: (Բոլորը ապշահար նայում են նրան):

**ՈՆՐԱՆԺԵ (դեպի ժանր).**— Ես ձեզ թույլ չեմ տալիս:

**ՐՈՐՈՐԸ (դեպի ժանր).**— Օ՛հ:

**ՏԱՆՅԻՆ ՏՆՏԵՍՈՒՀԻ (նույն կերպ).**— Նրան միայն խոսելու կարողությունն էր պակասում: Նույնիսկ այդ էլ պետք չէր:

**ՊԵՉԻ (Բերանձեին).**— Դուք նրան չպիտի զայրացնեիք:

**ՈՆՐԱՆԺԵ (Դեզին).**— Մեղավորը ես չեի...

**ՍՐՈՒՐԱՆԱՏԵՐ (Մատուցողուհուն).**— Մի փոքրիկ դագաղ բերեք այս խեղճ կենդանու համար...

**ՕՆՐՈՒՆԻ ՊԱՐՈՆ (Բերանձեին).**— Իմ կարծիքով դուք իրավացի եք: Ասիական ոնգեղջյուրն ունի երկու կոտոշ, աֆրիկյանը՝ միայն մեկը...

**ՕՆՐԱՆԺԵ ԱԾԱՌ.**— Պարոնը հակառակն էր պնդում:

**ՊԵՉԻ (Բերանձեին).**— Երկուսդ էլ անիրավացի էիք:

**ՕՆՐՈՒՆԻ ՊԱՐՈՆ (Բերանձեին).**— Դուք, համենայն դեպս, իրավացի էիք:

**ՈՒՆ ՏՈՂՈՒՀԻ (Տնային տնտեսուհին).**— Եկեք, տիկի՛ն, դագաղը բերե՛ք ձեր զենքի դնենք նրան:

**ՕՆՐԱՆԺԵ ՏՆՏԵՍՈՒՀԻ (աղեկտուր հեծկտալով).**— Երբե՛ք, երբե՛ք:

**ՕՆՐԱՆԺԵ ԱԾԱՌ.**— Ներեցեք, ինքս՝ ես, կարծում եմ, որ պարոն ժանր էր իրավացի:

**ՊԵՉԻ (չըջվելով դեպի Տնային տնտեսուհին).**— Բանիմաց եղեք, տիկի՛ն: (Դեզին և Մատուցողուհին Տնային տնտեսուհուն, մեռած զենքով հանդերձ, տանում են դեպի սրճարանի մուտքը):

**ՕՆՐՈՒՆԻ ՊԱՐՈՆ (Դեզին և Մատուցողուհուն).**— Ուզո՞ւմ եք՝ ես օգնե՞մ:

**ՕՆՐԱՆԺԵ ԱԾԱՌ.** — Ասիական ոնգեղջյուրը մեկ կոտոշ ունի, աֆրիկյանը՝ երկուսը: Եվ ընդհակառակը:

**ՊԵՉԻ (ձեկտանի սյարունին).**— Կարիք չկա: (Դեզին և Մատուցողու-

հին մտնում են սրճարան՝ իրենց հետ տանելով Տնային տնտեսուհուն, որը դեռևս անմխիթար վիճակի մեջ է):

**ՆՊԱՐԱՎԱԾԱՌՈՒՀԻՆ (Նպարավաճառին, լուսամուտից).**— Ը՛հ, դու միշտ էլ այնպիսի մտքեր ունես, որոնցով ջոկվում ես ուրիշներից: **ԲԵՐԱՆԺԵ (մեկուսի, մինչ մյուսները շարունակում են բանավիճել ռեգեդջյուրի կոտոշների մասին).**— Դեզին իրավացի է. ես նրան չպիտի հակաճանեի:

**ՍՐԾԱՐԱՆԱՏԵՐ (Նպարավաճառուհուն).**— Ձեր սմուսինն իրավացի է: Ասիական ռեգեդջյուրն ունի երկու կոտոշ. աֆրիկյանը պիտի որ մեկն ունենա, և ընդհակառակը:

**ԲԵՐԱՆԺԵ (մեկուսի).**— Տանել չի կարողանում, երբ իրեն հակաճառում են: Նվազագույն ստարկության դեպքում նա փրփրում է:

**ԾԵՐՈՒՆԻ ՊԱՐՈՆ (Սրճարանատիրոջը).**— Դուք սխալվում եք, բարեկա՛մս:

**ՍՐԾԱՐԱՆԱՏԵՐ (Ծերունի պարոնին).**— Ես, ուրեմն, ձեզանից ներողություն եմ խնդրում...

**ԲԵՐԱՆԺԵ (մեկուսի).**— Չայրույթն է նրա միակ թերությունը:

**ՆՊԱՐԱՎԱԾԱՌՈՒՀԻ (լուսամուտից, Ծերունի պարոնին, Սրճարանատիրոջը և Նպարավաճառին).**— Գուցե երկուսն էլ նման են իրար:

**ԲԵՐԱՆԺԵ (մեկուսի).**— Խորքում նա ոսկե սիրտ ունի. ինձ բազմաթիվ ծառայություններ է մատուցել:

**ՍՐԾԱՐԱՆԱՏԵՐ (Նպարավաճառուհուն).**— Մյուսը կարող է միայն մեկ հատ ունենալ, եթե այն մեկը երկուսն ունի:

**ԾԵՐՈՒՆԻ ՊԱՐՈՆ.**— Գուցե այն մեկն է, որ մեկ հատ ունի, իսկ մյուսը՝ երկուսն է, որն ունի երկուսը:

**ԲԵՐԱՆԺԵ (մեկուսի).**— Ես գղջում եմ, որ ավելի հաշտվողական չեմ եղել: Բայց ինչո՞ւ էր հա՛ստում: Ես չէի ուզում նրան հասցնել ծարահեղության: **(Մյուսներին):** Միշտ առաջ է քաշում մասշտաբային չափանիշներ: Միշտ ուզում է բոլորին շքմեցնել իր գիտելիքներով: Երբեք հավանական չի համարում, որ կարող է սխալվել:

**ԾԵՐՈՒՆԻ ՊԱՐՈՆ (Բերանժեին).**— Դուք ապացույցներ ունե՞ք:

**ԲԵՐԱՆԺԵ.**— Ի՞նչ հարցի վերաբերյալ:

**ԾԵՐՈՒՆԻ ՊԱՐՈՆ.**— Քիչ առաջվա ձեր այն հավաստիացման վերաբերյալ, որով դուք անախորժ բանավեճի մեջ մտաք ձեր բարեկամի հետ:

**ՆՊԱՐԱՎԱԾԱՌ (Բերանժեին).**— Հա՛, դուք ունե՞ք ապացույցներ:

**ԾԵՐՈՒՆԻ ՊԱՐՈՆ (Բերանժեին).**— Այո՛, որտեղի՞ց գիտեք, որ ողնո՞ւ

- եղջյուրներից մեկն ունի երկու կոտոշ, իսկ մյուսը՝ մեկ հատ: Եվ որանից ո՞ր մեկը որն է:
- ՆՊԱՐԱՎԱԾԱՌՈՒՀԻ.— Նա մեզանից ավելին չգիտի:
- ՌԵՐԱՆՓԵ.— Նախ՝ հայտնի չէ, որ նրանք եղել են երկուսը: Ես նույնիսկ կարծում եմ, որ եղել է ընդամենը մեկը:
- ՍՐՈՒՐԱՆԱՏԵՐ.— Ենթադրենք, որ եղել են երկուսը: Ո՞րն է միակոտոշը, ասիական ոնգեղջյուրը:
- ՕՆՐՈՒՆԻ ՊԱՐՈՆ.— Ո՛չ: Աֆրիկյան ոնգեղջյուրն է, որ երկկոտոշանի է: Ես այդպես եմ կարծում:
- ՍՐՈՒՐԱՆԱՏԵՐ.— Ո՞վ է երկկոտոշանի:
- ՆՊԱՐԱՎԱԾԱՌ.— Ոչ աֆրիկյանը:
- ՆՊԱՐԱՎԱԾԱՌՈՒՀԻ.— Հեշտ բան չէ ընդհանուր համաձայնության գալը:
- ՕՆՐՈՒՆԻ ՊԱՐՈՆ.— Այնուամենայնիվ, խնդիրը պետք է լուսաբանել: ՆՐԱՄԱԲԱՆ (դուրս գալով իր ձեռնպահությունից).— Պարոնա՛յք, թույլ տվեք միջամտել: Այդ չէ խնդիրը: Թույլ տվեք ներկայանալ... ՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒՀԻ (լացակումած).— Նա տրամաբան է:
- ՍՐՈՒՐԱՆԱՏԵՐ.— Օ՛հ, նա տրամաբան է:
- ՕՆՐՈՒՆԻ ՊԱՐՈՆ (Տրամաբանին ծանոթացնելով Բերանժեի հետ).— Իմ բարեկամն է, տրամաբանը:
- ՌԵՐԱՆՓԵ.— Ուրախ եմ, պարո՛ն:
- ՆՐԱՄԱԲԱՆ (շարունակելով).— ... Պրոֆեսիոնալ տրամաբան. անհա իմ անձնագիրը: (Ցույց է տալիս իր անձնագիրը):
- ՌԵՐԱՆՓԵ.— Պատիվ ունենք ծանոթանալու, պարո՛ն:
- ՆՊԱՐԱՎԱԾԱՌ.— Մենք պատիվ ունենք ծանոթանալու:
- ՍՐՈՒՐԱՆԱՏԵՐ.— Բարի եղեք, ուրեմն, մեզ ասելու, պարո՛ն տրամաբան, թե արդյոք աֆրիկյան ոնգեղջյուրը միակոտոշ է...
- ՕՆՐՈՒՆԻ ՊԱՐՈՆ.— Թե՞ երկկոտոշանի...
- ՆՊԱՐԱՎԱԾԱՌՈՒՀԻ.— Եվ թե արդյոք ասիական ոնգեղջյուրն երկկոտոշանի՞ է...
- ՆՊԱՐԱՎԱԾԱՌ.— Թե՞ միակոտոշ:
- ՌԱՍԱԲԱՆ.— Բանն էլ այն է, որ այդ չէ խնդիրը: Ես հմ պարտքն եմ լամարում՝ դա ճշտելու:
- ՆՊԱՐԱՎԱԾԱՌ.— Բաց հեկնց ադ է, որ մենք կուգե՞նա՞ր իմանալ:
- ՌԱՍԱԲԱՆ.— Թողեք՝ խօսեմ, պարոնա՛յք:
- ՕՆՐՈՒՆԻ ՊԱՐՈՆ.— Թողեք՝ խոսի:
- ՆՊԱՐԱՎԱԾԱՌՈՒՀԻ (լուսամուտից, Նպարավաճառին).— Դե, թողե՛ք՝ խոսի:

**ՍՐՃԱՐԱՆԱՏԵՐ.**— Ձեզ լսում եմք, պարո՛ն:

**ՏՐԱՄԱԲԱՆ (Բերանժեիմ).**— Հատկապես ձեզ է, որ ուղղված է իմ խոսքը: Մյուս ներկա անձնավորություններին՝ նույնպես:

**ՆՊԱՐԱՎԱԾԱՌ.**— Մեզ՝ նույնպես...

**ՏՐԱՄԱԲԱՆ.**— Բանն այն է, որ դուք ականա շեղվել եք այն խնդրից, որի շուրջն սկզբում գնում էր բանավեճը: Սկզբում ինքներդ ձեզ հարց էիք տալիս, թե արդյոք վերջին անցնող ռեզոլյուցիոնը նո՛ւյնն է, ինչ քիչ առաջվանը, թե՛ նա մեկ ուրիշն է: Հենց այդ հարցին է, որ պետք է պատասխանել:

**ԲԵՐԱՆԺԵ.**— Բայց ի՞նչ ձևով:

**ՏՐԱՄԱԲԱՆ.**— Ահա ինչն է բանը. դուք կարող է երկու անգամ տեսած լինեք նույն միակոտոշ ռեզոլյուցիոնը...

**ՆՊԱՐԱՎԱԾԱՌ (կրկնում է, որ լավ հասկանա).**— Երկու անգամ՝ նույն ռեզոլյուցիոնը:

**ՍՐՃԱՐԱՆԱՏԵՐ (նույն կերպ).**— Միակոտոշ:

**ՏՐԱՄԱԲԱՆ (շարունակելով).**— ... Այնպես, ինչպես կարող է՝ երկու անգամ տեսած լինեք նույն երկկոտոշանի ռեզոլյուցիոնը:

**ԾԵՐՈՒՆԻ ՊԱՐՈՆ (կրկնելով).**— Երկկոտոշանի նույն ռեզոլյուցիոնը՝ երկու անգամ...

**ՏՐԱՄԱԲԱՆ.**— Հենց այդ է, որ կա: Դուք կարող է. նույնպես, տեսած լինեք նախ՝ միկոտոշանի մի ռեզոլյուցիոն, հետո մի ուրիշ՝ նույնպես միկոտոշանի ռեզոլյուցիոն:

**ՆՊԱՐԱՎԱԾԱՌՈՒՀԻ (լուսամուտից).**— Հա՛, հա՛...

**ՏՐԱՄԱԲԱՆ.**— Եվ նաև մի առաջին երկկոտոշանի ռեզոլյուցիոն, հետո մի երկրորդ երկկոտոշանի ռեզոլյուցիոն:

**ՍՐՃԱՐԱՆԱՏԵՐ.**— Ծիշտ է:

**ՏՐԱՄԱԲԱՆ.**— Հիմա. էթե դուք տեսել եք...

**ՆՊԱՐԱՎԱԾԱՌ.**— Եթե մենք տեսել ենք...

**ԾԵՐՈՒՆԻ ՊԱՐՈՆ.**— Այո՛, էթե մենք տեսել ենք...

**ՏՐԱՄԱԲԱՆ.**— Եթե դուք առաջին անգամ տեսել եք մի երկկոտոշանի ռեզոլյուցիոն...

**ՍՐՃԱՐԱՆԱՏԵՐ.**— Երկկոտոշանի...

**ՏՐԱՄԱԲԱՆ.**— ... Երկրորդ անգամ՝ միակոտոշ ռեզոլյուցիոն...

**ՆՊԱՐԱՎԱԾԱՌ.**— Միակոտոշ:

**ՏՐԱՄԱԲԱՆ.**— ... Դրանից նույնպես չի կարելի եզրակացություն հանել...

**ԾԵՐՈՒՆԻ ՊԱՐՈՆ.**— Այդ ամենից չի կարելի եզրակացություն հանել:

**ՍՐՃԱՐԱՆԱՏԵՐ.**— Ինչո՞ւ:

ՆՊԱՐԱՎԱԾԱՌ.— Ա՛հ, լա՛, լա՛... Ոչինչ չեմ հասկանում:

ՆՊԱՐԱՎԱԾԱՌ.— Հա՛, հա՛: (Նպարավաճառուհին, ուները բարձրացնելով, հեռանում է լուսամուտից):

ՏՐԱՄԱԲԱՆ.— Իրոք, հնարավոր է, որ քիչ առաջվա ռեգեդջյորը կորցրած լինի իր կոտոշներից մեկը, և վերջին անցնող ռեգեդջյորը նույնը լինի, ինչ քիչ առաջվանը:

ԲԵՐԱՆԺԵ.— Հասկանում եմ, բայց...

ՕԵՐՈՒՆԻ ՊԱՐՈՆ (Բերանժեին ընդհատելով).— Մի ընդհատեք նրան:

ՏՐԱՄԱԲԱՆ.— Նույնքան հավանական է, որ երկու երկկոտոշանի ռեգեդջյորներ՝ երկուսն էլ իրենց կոտոշներից մի մի հատը կորցրած լինեն:

ՕԵՐՈՒՆԻ ՊԱՐՈՆ.— Հավանական է:

ԱՐԾԱՐԱՆԱՏԵՐ.— Այո՛, հավանական է:

ՆՊԱՐԱՎԱԾԱՌ.— Ինչո՞ւ չէ:

ԲԵՐԱՆԺԵ.— Այո՛, բայց և այնպես...

ՕԵՐՈՒՆԻ ՊԱՐՈՆ (Բերանժեին).— Մի՛ ընդհատեք:

ՏՐԱՄԱԲԱՆ.— Եթե կարողանայիք ապացուցել, որ առաջին անգամ տեսել եք միակոտոշ ռեգեդջյոր՝ դա լինի ասիական, թե աֆրիկյան...

ՕԵՐՈՒՆԻ ՊԱՐՈՆ.— Ասիական, թե աֆրիկյան...

ՏՐԱՄԱԲԱՆ.— ... Իսկ երկրորդ անգամ երկկոտոշանի մի ռեգեդջյոր...

ՕԵՐՈՒՆԻ ՊԱՐՈՆ.— Երկկոտոշանի:

ՏՐԱՄԱԲԱՆ.— ... Կարևոր չէ՛ նա լինի աֆրիկյան, թե՛ ասիական...

ՆՊԱՐԱՎԱԾԱՌ.— Աֆրիկյան թե՛ ասիական...

ՏՐԱՄԱԲԱՆ (շարունակելով ապացուցել).— ... Այդ դեպքում մենք կարող ենք եզրակացնել, որ գործ ունենք երկու տարբեր ռեգեդջյորների մեա, քանզի քիչ է հավանական, որ երկրորդ կոտոշը մի քանի րոպեի ընթացքում, տեսանելիորեն աճած լինի ռեգեդջյորի քթի վերևում...

ՕԵՐՈՒՆԻ ՊԱՐՈՆ.— Դա քիչ է հավանական:

ՏՐԱՄԱԲԱՆ (վայելելով իր դատողության բերկրանքը).— ... Դա ասիական կամ աֆրիկյան մի ռեգեդջյորի...

ՕԵՐՈՒՆԻ ՊԱՐՈՆ.— Ասիական կամ աֆրիկյան:

ՏՐԱՄԱԲԱՆ.— ... Պիտի վերածեր աֆրիկյան կամ ասիական ռեգեդջյորի:

ԱՐԾԱՐԱՆԱՏԵՐ.— Աֆրիկյան կամ ասիական:

**ՆՊԱՐԱՎԱԾԱՌ.**— Հա՛, հա՛:

**ՏՐԱՄԱԲԱՆ.**— ... Սակայն դա իսկական տրամաբանության դեպքում անհնարին է, քանի որ նույն էակը միաժամանակ չի կարող ծրված լինել երկու տարբեր վայրերում...

**ԾԵՐՈՒՆԻ ՊԱՐՈՆ.**— Ոչ էլ հաջորդաբար:

**ՏՐԱՄԱԲԱՆ (Ծերունի պարունին).**— Դա դեռ պետք է ապացուցել:

**ԲԵՐԱՆԺԵ (Տրամաբանին).**— Ինձ թվում է՝ դա պարզ է: Բայց դրանով խնդիրը չի լուծվում:

**ՏՐԱՄԱԲԱՆ (Բերանժեին, ժպտալով որպես գիտակ).**— Անշուշտ, սիրելի՛ պարուն, միայն թե այդ դեպքում խնդիրը դրվում է ճշգրիտ ձևով:

**ԾԵՐՈՒՆԻ ՊԱՐՈՆ.**— Դա միանգամայն տրամաբանական է:

**ՏՐԱՄԱԲԱՆ (գլխարկը բարձրացնելով).**— Ցտեսությո՛ւն, պարունայք: (Նա շրջվում է և դուրս է գալու ձախ կողմից, ու նրան հետևելու է Ծերունի պարունը):

**ԾԵՐՈՒՆԻ ՊԱՐՈՆ.**— Ցտեսությո՛ւն, պարունա՛յք: (Բարձրացնում է գլխարկը և դուրս է գալիս Տրամաբանի ետևից):

**ՆՊԱՐԱՎԱԾԱՌ.**— Գուցե և տրամաբանական է... (Այդ պահին Տնային տնտեսուհին Մատուցողուհու և Դեզիի ուղեկցությամբ դուրս է գալիս սրճարանից՝ ձեռքին պահած մի տուփ, խորը սգի մեջ, ինչպես թաղման արարողության ժամանակ: Թափորն ուղղվում է դեպի աջ կողմի ելքը):

**ՆՊԱՐԱՎԱԾԱՌ (շարունակելով).**— ... Գուցե և տրամաբանական է, բայց կարո՞ղ ենք մենք արդյոք համակերպվել, որ մեր կատուները մեր աչքերի առաջ տրորվեն ռեզեպտուրների կողմից՝ դրանք լինեն միակտուռ թե երկկտուռանի, ասիական թե աֆրիկյան: (Թատերային շարժումով ցույց է տալիս դուրս եկող սգախումբը):

**ՍՐԾՍՐԱՆԱՏԵՐ.**— Ծիշտ է, նա իրավացի է: Մենք չենք կարող թույլ տալ, որ մեր կատուներին տրորեն ռեզեպտուրներ կամ ուրիշ այլ բաներ:

**ՆՊԱՐԱՎԱԾԱՌ.**— Մենք դա թույլ տալ չենք կարող:

**ՆՊԱՐԱՎԱԾԱՌՈՒՆԻ (գլուխն ի ցույց դնելով խանութի դռան արանքում, Նպարավաճառին).**— Դե, ներս մտիր: Հաճախորդներ են գալու:

**ՆՊԱՐԱՎԱԾԱՌ (ուղղվելով դեպի խանութը).**— Ո՛չ, մենք դա թույլ տալ չենք կարող:

**ԲԵՐԱՆԺԵ.**— Ես ժանի հետ չափտի կուլեի. (Սրճարանատիրոջը): Ինձ մի բաժակ կոնյակ բերեք: Մե՞ծ բաժակով:



ԱՐՈՒՐԱՆԱՏԵՐ.— Հիմա բերեմ: (Մտնում է սրճարան՝ մի բաժակ կոնյակ բերելու):

ԸՆԲԱՆԺԵ (միայնակ).— Ես այդպես չպիտի, չպիտի զայրանայի: (Սրճարանատերը հայտնվում է՝ ձեռքին մի մեծ բաժակ կոնյակով լի): Սիրտս շատ է կախ, որ կարողանամ գնալ թանգարան: Մի ուրիշ անգամ կմշակեմ իմ գիտելիքները: (Կոնյակի բաժակը վերցնում ու խմում է):

Վ ա թ ա գ ու յ թ

## ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ ԵՐԿՐՈՐԴ

ՊԱՏԿԵՐ ԱՌԱՋԻՆ

Պեկորացիա

Մի մասնավոր հիմնարկության կամ վարչության, օրինակի հասար՝ իրավաբանական գրականություն լույս ընծայող, խոշոր հրատարակչության գրասենյակը: Խորքում, կենտրոնում՝ երկփեղկանի մի մեծ գոտի, որի վերևում ցուցանակն ազդարարում է՝ «Ծառայության պետ»: Խորքում՝ ձախ կողմի վրա, պետի սենյակի դռան կողքին՝ Դեզիի փոքրիկ սեղանը, վրան՝ գրամեքենա: Զախ պատի տակ՝ մի ուրիշ սեղան, որի վրա դրված են աշխատանքի ներկայացած լինելու հաշվեթղթեր, որ պաշտոնյաներն ստորագրում են առավոտյան: Այդ սեղանը գտնվում է Դեզիի փոքր սեղանի և մի դռան միջև, որը հանգում է դեպի սանդուղքը: Երևում են ձախ կողմի այդ առաջամասում գտնվող սանդուղքի վերջին աստիճանները, բազրիքի վերնամասը, մի փոքրիկ սանդղանարթակ: Առաջամասում՝ մի սեղան և երկու աթոռ: Սեղանին՝ մի քանի գրքեր, թանաքաման, օրչափեր: Դա այն սեղանն է, որի տակ աշխատում են Բոտարը և Բերանժեն: Վերջինս նստելու է ձախ կողմի աթոռին, առաջինը՝ աջ կողմի աթոռին: Աջ պատի տակ՝ մի ուրիշ սեղան, ավելի լայն ու քառակյունի, որը նույնպես ծածկված է սպիտակ սարսափերով, թղթերով և այլն: Երկու աթոռ ևս այդ սեղանի մոտ, դրված են դեմ դիմաց: Այդ աթոռներն ավելի գեղեցիկ են, ավելի «կուրծր»: Դրանք Դյուդարի և Պարոն Ցուլի աթոռներն են: Դյուդարը նըս-

տելու է պատի տակին գտնվող աթոռի վրա՝ իր տեսադաշտում ունեցնելով մյուս աշխատակիցներին: Նա ենթապետի պաշտոն ունի: Խորքի դռան և աջ պատի միջև՝ լուսամուտ: Այն դեպքում, եթե թատրոնն ունի առաջափոս նվազախմբի համար, նախընտրելի է, որ դրվի լուսամուտի մի պարզ շրջանակ, որն առաջամասում ուղղված կլինի հանդիսատեսին: Աջ կողմի անկյունում, խորքում՝ կախարան, որի վրա դրված են գորշ շապիկներ ու հին պիջակներ: Անհրաժեշտության դեպքում կախարանը նույնպես կարող է դրվել առաջամասում, աջ կողմի պատին մոտ:

Պատերի երկայնքով՝ փոշոտ գրքերի ու մատյանների դարակներ: Խորքում, դեպի ձախ, շարանների վերևում կան ցուցանակներ՝ «Իրավաբանություն», «Կողերսներ»: Աջ կողմի պատին, որը կարող է փոքրիկն էլ թեք լինել, ցուցանակներն ազդարարում են՝ «Պաշտոնական մատյան», «Հարկահանման օրենքներ»: Ծառայության պետի դռան վերելում, պատի ժամացույցին ինն անց է երեք րոպե:

Վարագույրը բացելու պահին, Դյուդարը, հոտնկալս, իր գրասենյակի աթոռի կողքին, աջ կիսադեմքը շրջել է դեպի հանդիսատեսը: Գրասենյակի մյուս կողմին՝ Բոտարը ձախ կիսադեմքով է շրջված դեպի հանդիսատեսը: Նրանց միջև, դարձյալ գրասենյակի մոտ, ծառայության պետը՝ դեմքը դեպի դահլիճը: Դեզին փոքր-իկն էտ է քաշված, ծառայության պետի ձախ կողքին: Ջեռքին ունի մեքենագրված թղթեր: Երեք գործող անձանց կողմից շրջապատված սեղանին՝ տպագրաթերթերի վրա մոկված է բաց վիճակով մի մեծ օրաթերթ: Վարագույրի բացվելու պահին մի քանի վարկյան գործող անձինք մնում են անշարժ դիրքում, և այդ վիճակով ասվելիս կլինի առաջին ռեպլիկը: Դա պետք է ներկայացվի որպես կենդանի պատկեր: Առաջին գործողության սկզբում պիտի նույնը եղած լինի:

Ծառայության պետը՝ մոտ հիսուն տարեկան, կոկիկ հագնված: Մուգ կապույտ կոստյում, Պատվո լեգեոնի շքանշանի ժապավենը, օսլայած դնովի օձիք, սև փողկապ, դարչնագույն, հաստ բեղեր: Նա կոչվում է պարոն Թիթեռ:

Դյուդարը՝ երեսունհինգ տարեկան: Գորշագույն կոստյում: Հագին ունի սև լյուստրինից թևքեր՝ բանկոնը կեղտից պաշտպանելու համար: Թերևս սկնցավոր: Նա բավականին խոշորակազմ է, խոստումնալից սպազայով պաշտոնյա: Եթե պետը դառնա դիրեկտորի տեղակալ, ինքը կգրադեցնի նրա պաշտոնը: Բոտարը նրան չի սիրում:

Բոտար՝ թոշակի անցած ուսուցիչ: Տեսքը՝ հպարտ. բարակ, ներմակ բեղեր: Մոտ վաթսուն տարեկան է, բայց դեռևս առույգ: (Ամեն

ինչ գիտի, ամեն ինչ հասկանում է): Բասկյան բերետ ունի գլխին: Հագել է աշխատանքային երկար, գորշագույն շապիկ: Ակնոց է կրում բաժակաձևին խոշոր քթի վրա: Ականջի ետևը՝ մատիտ: Նույնպես լուստրինե թևեր:

**Դեզի՝ երիտասարդ, խարտիշահեր:**

Հետագայում՝ տիկին Յուլ, քառասունհինգ-քառասունհինգ տարեկան, խոշորակազմ, լացակումած, շնչակտուր:

Գործող անձինք, ուրեմն, վարագույրը բացելու պահին հոտնկալս են: Նրանք անշարժ են աջ կողմի սեղանի շուրջը: Պետը ձեռքն ու գուցամատը պարզել է թերթին: Դյուդարը ձեռքը պարզել է Բոտարի ուղեւորամբ, կարծես ասում է. «Տեսնում եք, վերջապես»: Բոտարը՝ ձեռքերը շապիկի գրպաններում, շրթունքներին թերահավատ ժպիտ, կարծես ասում է. «Ինձ չեն կարող խաբել»: Դեզին՝ մեքենագրված թղթ-թևքը ձեռքին, հայացքով կարծես հավանություն է տալիս Դյուդարին: Մի բանի կարճատև վայրկյաններից հետո Բոտարն անցնում է հարձակման:

**ԲՈՏԱՐ.**— Հեքիաթներ, ոտի վրա քցելու հեքիաթներ:

**ՊԵՋԻ.**— Ես տեսա նրան, ես տեսա ոնգեղջյուրին:

**ՎՅՈՒԴԱՐ.**— Թերթում է գրված: Պարզ է: Դուք ի վիճակի յեք դա խտելու:

**ԲՈՏԱՐ (ամենախորթին արհամարհանքով).**— Պֆֆֆ:

**ՎՅՈՒԴԱՐ.**— Գրված է, բանի որ գրված է: Ահա՛ տրորված կատուների ոտքրիկայի տակ: Դե, կարդացեք լուրը, պարոն պետ:

**ՊԵՋԻ. ԹԻԹԵՐ.**— «Երեկ, կիրակի օրը, մեր քաղաքում, Եկեղեցու հրատարակի վրա, երկրորդ նախաճաշի ժամին մի կատու տրորվեց հատակաշի մի անասունի կողմից»:

**ՊԵՋԻ.**— Դա տեղի չունեցավ հենց Եկեղեցու հրատարակում:

**ՊԵՋԻ. ԹԻԹԵՐ.**— Այսքանը: Որիչ մանրամասներ չեան:

**ԲՈՏԱՐ.**— Պֆֆֆ:

**ՎՅՈՒԴԱՐ.**— Այսքանը բաժակում է: Պարզ է:

**ՊԵՋԻ.**— Ես չեմ հավատում լրագրողներին: Բոլոր լրագրողներն էլ ստատաաններ են: Ես գիտեմ ինչը ինչպես, որտեղ և ինչու: Հատուրով եմ միայն իմ աչքի տեսածին: Որպես նախնին ուսուցիչ՝ վրում եմ որոշակի փաստը, որը լինի գիտականորեն ապացուցված: Ես մեթոդական, ճշգրիտ խելքի տեր մարդ եմ:

**ՎՅՈՒԴԱՐ.**— Այստեղ ի՞նչ գործ ունի մեթոդական խելքը:

**ՎՅՈՒԴԱՐ (Բոտարին).**— Ես գտնում եմ, պարո՛ն Բոտար, որ լուրը շատ որոշակի է:

**ԲՈՏԱՐ.**— Դուք սա որոշակիություն ենք անվանում: ՔԱՆԵՆՔ: Այդ ի՞նչ հաստակաշի անասունի մասին է խոսքը: Տրորված կատուների ոտքրիկայի խմբագիրը ի՞նչ Ակատի ունի հաստակաշի անասուն ասելով: Նա մեզ չի ասում այդ մասին: Եվ ի՞նչ Ակատի ունի կատու ասելով:

**ԴՅՈՒԴԱՐ.**— Արար աշխարհ գիտի, թե ինչ բան է կատուն:

**ԲՈՏԱՐ.**— Խոսքը է՞գ, թե՞ այու կատվի մասին է: Եվ ի՞նչ գույնի է նա: Ի՞նչ ցեղի, ի՞նչ ռասայի է պարկանում նա: Ես ռասիստ չեմ: Նույնիսկ հակառասիստ եմ:

**ՊԱՐՈՆ ԹԻԹԵՆ.**— Դե, պարո՛ն Բոտար, հարցը դրան չի վերաբերում: Ի՞նչ գործ ունի այստեղ ռասիզմը:

**ԲՈՏԱՐ.**— Պարո՛ն պետ, Աերողություն եմ խնդրում ձեզանից, բայց դուք չեք կարող ժխտել, որ ռասիզմը մեր դարաշրջանի խոշորագույն մոլորություններից մեկն է:

**ԴՅՈՒԴԱՐ.**— Իհարկե, մենք բոլորս համաձայն ենք, բայց հարցը չի վերաբերում այն բանին, որ...

**ԲՈՏԱՐ.**— Պարո՛ն Դյուդար, այդ մասին մակերեսորեն չի կարելի: Պատմական իրադարձությունները մեզ լիովին ապացուցել են, որ ռասիզմը...

**ԴՅՈՒԴԱՐ.**— Ես ձեզ ասում եմ, որ հարցը դրան չի վերաբերում:

**ԲՈՏԱՐ.**— Չէի ասի, որ այդպես է:

**ՊԱՐՈՆ ԹԻԹԵՆ.**— Հարցը ռասիզմին չի վերաբերում:

**ԲՈՏԱՐ.**— Առիթը չափտի բաց թողնել այն դատապարտելու համար:

**ԴԵԶԻ.**— Ախր ձեզ ասում են, որ մեզանից ոչ մեկը ռասիստ չէ ամենահին: Դուք մի հարցը ուրիշով եք փոխարինում: Այստեղ խոսքը վերաբերում է պարզապես մի կատվի, որին տրորել է հաստակաշի մի անասուն, տվյալ դեպքում՝ ռեգեղջյուր:

**ԲՈՏԱՐ.**— Ես Հարավից չեմ: Հարավցիներն իրենց երևակայությանը զոռ են տալիս: Դա, թերևս, մի փառոցի էր, որին տրորել էր մի մկնիկ: Լվից ուղտ են ստաքում:

**ՊԱՐՈՆ ԹԻԹԵՆ (Դյուդարին).**— Փորձենք, ուրեմն, ճշտել, թե ինչն ինչոց է: Ուրեմն, դուք, ձեր սեփական աչքերով, տեսել եք, թե ինչպես ռեգեղջյուրը թրև էր գալիս քաղաքի փողոցներում:

**ԴԵԶԻ.**— Թրև չէր գալիս, վազում էր:

**ԴՅՈՒԴԱՐ.**— Անձամբ ինքս, ես չեմ տեսել: Սակայն վստահության արժանի մարդիկ...

**ԲՈՏԱՐ (ընդհատելով նրան).**— Դուք հո տեսնում եք, որ դրանք ասելու են: Ապավինում եք լրագրողների, որոնք չգիտեն էլ ինչ

տորինեն, որպեսզի իրենց ողորմելի թերթերն առնող լինի, և որպեսզի հաճոյանան տնօրեններին, որոնց ծառաներն են իրենք: Ինք այս հորինվածքին հավատո՞ւմ եք, պարո՛ն Դյուդար, դուք իրավագետ, իրավաբանական գիտությունների թեկնածու: Թույլ տվեք ծիծաղել՝ հա՛, հա՛, հա՛:

ՎԵՂԻ.— Բայց ինքս, ես հո տեսել եմ նրան, ևս տեսել եմ ռեգեղջյուրին: Կրակի մեջ խորովվեմ, թե սուտ եմ ասում:

ԲՈՏԱՐ.— Վերջ տվեք: Ձեզ լուրջ աղջկա տեղ էի դնում:

ՎԵՂԻ.— Պարո՛ն Բոտար, ես տեսողության մթազնումներ չունեմ: Եվ ես հո մեռակ չէի. շուրջս մարդիկ կային, որոնք նայում էին:

ԲՈՏԱՐ.— Պֆֆֆ: Անկասկած, նայում էին ուրիշ բաների... Սլքտողներ, մարդիկ, որոնք անելիք չունեն. մարդիկ, որոնք չեն աշխատում, անբաններ:

ՎԵՂԻ.— Դա երեկ պատահեց: Օրը կիրակի էր:

ԲՈՏԱՐ.— Ինքս, ես աշխատում եմ նաև կիրակի օրը: Ես չեմ լսում բահանաներին, որոնք մարդուն մղում են դեպի կեղեցի և խանգարում են, որ նա գործ անի և իր հացը վատակի ճակատի քրտինքով:

ԳԼԻՍԻՆ ԹԻԹԵՆԻ (վրդովված).— Օ՛հ:

ԲՈՏԱՐ.— Ներեցեք, ես չէի ուզեցա ձեզ վրդովել: Եթե ասում եմ կրոնը, դա չի նշանակում, որ ես այն չեմ գնահատում: (Դեզիին): Նախ՝ ասացեք, տեսնեմ ի՞նչ բան է ռեգեղջյուրը:

ՎԵՂԻ.— Դա... դա մի շատ խոշոր, զգվելի կենդանի է:

ԲՈՏԱՐ.— Եվ դուք հավակնում եք ունենալ ճշգրիտ մտածելակե՛րպ: Ռեգեղջյուրը, օրհորդ...

ԳԼԻՍԻՆ ԹԻԹԵՆԻ.— Դուք հո մեզ այստեղ դասախոսություն չեք կարողաք ռեգեղջյուրի մասին: Մենք դպրոցում չենք գտնվում:

ԲՈՏԱՐ.— Ծատ ասիտս: (Սկսած վեշի՛ն ռեպլիկներից, հայտնվում է Բերանժեն, որը լարված-ուշադիր բարձրանում է սանդուղքի վերջին աստիճանները: Նա զգուշորեն հրում է գրասենյակի դուռը, որը բացվածքից երևում է ցուցանակը, վրան գրված՝ «Իրավաբանական գրականության հրատարակչություն»):

ԳԼԻՍԻՆ ԹԻԹԵՆԻ (Դեզիին).— Լավ: Ժամը ինն անց է արդեն, օրհորդ: Վերցրե՛ք հաշվետուդը: Ուշացողների հերն էլ անիծած: (Դեզին տարժվում է դեպի ձախ կողմը գտնվող փոքր սեղանը, որի վրա դրված է հաշվետուդը, հենց նույն այն պահին, երբ ներս է մտնում Բերանժեն):

- ԲԵՐԱՆԺԵ (Աերս մտնելով, մինչ մյուսները շարունակում են վիճարանել).**— Բարև, օրիորդ Դեզի: Ես չե՞մ ուշացել:
- ԲՈՏԱՐ (Դյուդարին և պարոն Թիթեռին).**— Ես պայքարում եմ տգիտության դեմ, որտեղ էլ նա հայտնվի:
- ԴԵԶԻ (Բերանժեին).**— Պարո՛ն Բերանժե, շտապեցեք:
- ԲՈՏԱՐ.**— ... Պալատներում, թե խրճիթներում:
- ԴԵԶԻ (Բերանժեին).**— Հաշվեթուղթը ստորագրեք, շուտ:
- ԲԵՐԱՆԺԵ.**— Օ՛հ, շնորհակալություն: Պետն արդեն եկե՛ղ է:
- ԴԵԶԻ (Բերանժեին, ժառը դնելով իր շուրթերին).**— Մուս, այո, նա այստեղ է: .
- ԲԵՐԱՆԺԵ.**— Արդե՛ն: Այսքան շո՛ւտ: (**Նետվում է առաջ՝ հաշվեթուղթն ստորագրելու համար**):
- ԲՈՏԱՐ (շարունակելով).**— Ամենուրեք: Նույնիսկ հրատարակչություններում:
- ՊԱՐՈՆ ԹԻԹԵՌԻ (Բոտարին).**— Պարո՛ն Բոտար, ես կարծում եմ, որ...
- ԲԵՐԱՆԺԵ (հաշվեթուղթն ստորագրելով, Դեզիին).**— Բայց և այնպես, դեռ ժամը ինն անց տասը չկա...
- ՊԱՐՈՆ ԹԻԹԵՌԻ (Բոտարին).**— Ես կարծում եմ, որ դուք անցնում եք քաղաքավարության սահմանները:
- ԴՅՈՒԴԱՐ (Պարոն Թիթեռին).**— Ես նույնպես այդ կարծիքին եմ, պարո՛ն:
- ՊԱՐՈՆ ԹԻԹԵՌԻ (Բոտարին).**— Հո չեք ասելու, որ իմ գործընկերն ու ձեր կոլեգան՝ պարոն Դյուդարը, որի իրավաբանական գիտությունների թեկնածու է և գեոագանց պաշտոնյա, տգետի մեկն է:
- ԲՈՏԱՐ.**— Ես չեմ ընկնի չափազանցության մեջ՝ նման մի բան սրնդելով, բայց և այնպես, բարձրագույն մասնագիտական հաստատությունները, Համալսարանը՝ դրանք լուրջ գիտելիքների օջախներ չեն, ինչպիսին է միջնակարգ դպրոցը:
- ՊԱՐՈՆ ԹԻԹԵՌԻ (Դեզիին).**— Տվեք, տեսնեմ, հաշվեթուղթը:
- ԴԵԶԻ (Պարոն Թիթեռին).**— Ահա խնդրեմ: (**Այն պարզում է նրան**):
- ՊԱՐՈՆ ԹԻԹԵՌԻ (Բերանժեին).**— Օ՛, ահա և պարոն Բերանժեին:
- ԲՈՏԱՐ (Դյուդարին).**— Այն, ինչ պակասում է համալսարանցիներին ասլու դա որոշակի մտքերն են, դիտողականությունը, գործնական ջիղը:
- ԴՅՈՒԴԱՐ (Բոտարին).**— Դե՛, լավ:
- ԲԵՐԱՆԺԵ (Պարոն Թիթեռին).**— Բարև ձեզ, պարո՛ն Թիթեռ: (**Բերանժեին հենց շարժվում էր պետի թիկունքում, շրջանցելով երեք գործող անձանց խումբը, կախարանին հասնելու համար**: Այն

տեղից նա պիտի վերցնի իր աշխատանքային վերնաշապիկը կամ  
ննացած պիջակը, տեղը կախելով իր բաճկոնը, որով քաղաք է  
դուրս գալիս: Այժմ, կախարանի մոտ, հագի բաճկոնը հանելուց և  
նշուար հագնելուց հետո, գնում-հասնում է իր աշխատասեղանին,  
որի դարակից հանելու է սև լյուտրինե թևերը և այլն.. Նա այդ  
ընթացքում ողջունում է): Բարև ձեզ, պարո՛ն Թիթեո: Ներեցեք.  
քիչ էր մնում ուշանալի: Բարև ձեզ, պարո՛ն Դյուդար: Բարև ձեզ,  
պարո՛ն Բոտար:

**ՊԱՐՈՆ ԹԻԹԵՌ.**— Ասացեք, տեսնեմ, Բերանժե, դո՞ւք էլ եք ոնգեղ-  
ջյուրներ տեսել:

**ԼԱՏԱՐ (Դյուդարին).**— Համալսարանավարտները վերացական մտա-  
նողներ են, որոնք կյանքը չեն ճանաչում:

**ՊՅՈՒԲԱՐ (Բոտարին).**— Հիմարություններ:

**ԼԼՄԱՆԺԵ (շարունակում է դասավորել իր աշխատանքային պարա-  
զաները, ծայրահեղ շտապողականությամբ, կարծես ներել տալու  
համար իր ուշացումը: Պարոն Թիթեոին, բնական ձևով).**— Այո,  
իհարկե, տեսել եմ նրան:

**ԼՈՏԱՐ (շրջվելով).**— Պֆֆֆ:

**ՊԱՐՈՆ.**— Ա՛հ, տեսնո՞ւմ եք. ես խելագար չեմ:

**ԼԼՄԱՐ (հեզմակա՛ն).**— Օ՛հ, պարոն Բերանժեն այդ հաստատում է  
կնամեծարությունից դրդված, քանզի նա կնամեծար է, թեև այդ  
ժի կարելի ասել՝ ելնելով նրա տեսքից:

**ՊԱՐՈՆ ԹԻԹԵՌ.**— Կնամեծարությունն է հառտատե, որ ինքը տեսել է մի  
ոնգեղջյուրի:

**ԼՈՏԱՐ.**— Իհարկե, երբ այդ ասվում է՝ հիմնավորելու համար օրիորդ  
Դեզիի երևակայական պնդումները: Բոլորը մեծարանքով են վե-  
րաբերվում օրիորդ Դեզիին. դա հասկանալի է:

**ՊԱՐՈՆ ԹԻԹԵՌ.**— Մի՛ խարդախեք, պարո՛ն Բոտար: Պարոն Բերան-  
ժեն չի մասնակցել վիճաբանությանը. նա հենց նոր եկավ:

**ԼԼՄԱՆԺԵ (Դեզիին).**— Ծի՛շտ չէ, որ դուք տեսել եք նրան: Մենք  
տեսել ենք:

**ԼՈՏԱՐ — Պֆֆֆ:** Հալանական է, որ պարոն Բերանժեին թվա, թե  
ոնգեղջյուր է տեսել: (Բերանժեի թիկունքից շարժում է անում,  
որով հասկացվում է, որ Բերանժեն խմում է): Նա այնպիսի զար-  
կուզած երևակայություն ունի: Նրա համար ամեն ինչ հնարավոր է:

**ԼԼՄԱՆԺԵ.**— Ես միայնակ չեի, երբ տեսա մի ոնգեղջյուր, գուցե և  
Էրկու ոնգեղջյուր:

**ԼԼՄԱՐ.**— Նա նույնիսկ չգիտի, թե քանիսին է տեսել:

ԲԵՐԱՆԺԵ.— Ես իմ բարեկամ ժանի կողքին էի... Ուրիշ մարդիկ էլ կային:

ԲՈՏԱՐ (Բերանժեիկ).— Կարկամում եք, ազնիվ խոսք:

ԴԵԶԻ.— Միակտորոշ ոնգեղջյուր էր:

ԲՈՏԱՐ.— Խոսքը մեկ են արել՝ մեզ ձեռ առնելու համար:

ԴՅՈՒԴԱՐ (Դեզիիկ).— Կարծում եմ, որ ավելի շուտ, նա երկկտորոշանի էր, ըստ իմ լսածների:

ԲՈՏԱՐ.— Սպասեք, եկեք իրար հասկանանք:

ՊԱՐՈՆ ԹԻԹԵՐԻ (Ժամը ստուգելով).— Վերջացրեք, պարոնա՛յք: Օրն անցնում է:

ԲՈՏԱՐ.— Դուք՝ պարո՛ն Բերանժե՛, մի՞ ոնգեղջյուր եք տեսել, թե՞ երկուսը:

ԲԵՐԱՆԺԵ.— Ը՛հ, այսինքն...

ԲՈՏԱՐ.— Դուք չգիտեք: Օրիորդ Դեզիկն տեսել է միակտորոշ ոնգեղջյուր: Ձեր ոնգեղջյուրը, պարո՛ն Բերանժե, էթե եղել է ոնգեղջյուր, միակտորոշ էր, թե՞ երկկտորոշանի:

ԲԵՐԱՆԺԵ.— Ի՞նչ ասեմ, այն հենց այդ է ամբողջ խնդիրը:

ԲՈՏԱՐ.— Այս ամենը խիստ պղտոր է:

ԴԵԶԻ.— Օ՛հ:

ԲՈՏԱՐ.— Ձեի ուզենա ձեզ վշտացնել: Բայց չեմ հավատում ձեր պատմությանը: Մեր երկրում՝ ոնգեղջյուրնե՞ր. այդպիսի բան չի եղել երբևիցե:

ԴՅՈՒԴԱՐ.— Բավական է, որ մեկ անգամ եղած լինի:

ԲՈՏԱՐ.— Այդպիսի բան չի եղել երբևիցե: Չհաշված նկարները դրարոցական դասագրքերում: Ձեր ոնգեղջյուրները բուսել են կնանց ուղեղների մեջ:

ԲԵՐԱՆԺԵ.— Ինձ թվում է, որ «բուսնել» արտահայտությունը տեղին չէ, երբ վերագրվում է ոնգեղջյուրներին:

ԴՅՈՒԴԱՐ.— Ծիշտ է:

ԲՈՏԱՐ (շարունակելով).— Ձեր ոնգեղջյուրն ստապել է:

ԴԵԶԻ.— Սոսապե՛ր:

ՊԱՐՈՆ ԹԻԹԵՐԻ.— Պարոնա՛յք, կարծում եմ՝ ժամն է աշխատանքի անցնելու:

ԲՈՏԱՐ (Դեզիիկ).— Սոսապել, միշտ ինչպես թոչող ասիսները:

ԴՅՈՒԴԱՐ.— Այնուամենայնիվ, եղել է մի տրորված կատու. դա անժխտելի է:

ԲԵՐԱՆԺԵ.— Ես վկայում եմ:

ԴՅՈՒԴԱՐ (մատնացույց անելով Բերանժեիկ).— Վկաներ էլ կան:



ԲՈՏԱՐ.— Այսպիսի վկա:

ՊԱՐՈՆ ԹԻԹԵՌ.— Պարոնա՛յք, պարոնա՛յք:

ԲՈՏԱՐ (Դյուդարին).— Խմբակային հոգեխանգարում, պարո՛ն Դյուդար, խմբակային հոգեխանգարում: Այդ նման է կրոնին, որ օսվում է ժողովուրդների համար<sup>4</sup>:

ԳԵԶԻ.— Է՛հ, ի՞նչ կա որ... Ես հավատում եմ թոչող ափսեներին:

ԲՈՏԱՐ.— Պֆֆֆ:

ՊԱՐՈՆ ԹԻԹԵՌ (հաստատակամորեն).— Բավական է, վերջապես: Չափն անց եք կացնում: Վերջացրեք դատարկաբանությունները: Ռեգեդջյոր թե ոչ, թոչող ափսե թե ոչ՝ աշխատանքը պետք է կատարվի: Հրատարակչությունը ձեզ չի վճարում, որ աշխատանքային ժամանակը վատնեք իրական կամ սոսապելական անասունների մասին գրուցելու համար:

ԲԵՐԱՆԺԵ (կարդալով և սրբագրելով, մինչ Բոտարը մատիտով հետևում է բնագրին).— Տեղական գիւնների կանոնավորումը, այսպես կոչված «Բեկումն... (Սրբագրում է): Բեկումը «կ» է, ոչ թե «գ»: (Սրբագրում է): Ստուգմամբ... Ստուգումը «գ» է, ոչ թե «կ»... Բորդոյի<sup>5</sup> շրջանի վերին սարալանջերի ներքին շրջանի բեկումն ստուգմամբ տիպի գիւնները...

ԲՈՏԱՐ (Բերանժեին).— Ես այդ չունեմ ինձ մոտ: Մի տող թոեւ եմ:

ԲԵՐԱՆԺԵ.— Վերսկսում եմ՝ բեկումն ստուգմամբ տիպի գիւնները...

ԳՆՈՒԴԱՐ (Բերանժեին և Բոտարին).— Տաճրաձայն կարդացեք: Հենց միայն ձեր ձայնն ենք լսում: Դուք ինձ խանգարում եք կենտրոնանալ աշխատանքի վրա:

ԲՈՏԱՐ (Դյուդարին, Բերանժեի գլխի վրայով, շարունակում է քիչ առաջվա վիճաբանությունը, մինչ Բերանժեն մի քանի րոպե, մենակ սրբագրում է: Նա անաղմուկ կարդալիս շարժում է շրթունքները).— Միստիֆիկացիա է:

ԳՆՈՒԴԱՐ.— Ի՞նչն է միստիֆիկացիա:

ԲՈՏԱՐ — Ռեգեդջյորի ձեր պատմությունը, գրո՛ղը տանի: Ձեր պրոպագանդան է այդ լուրերը տարածում:

ԳՆՈՒԴԱՐ (ընդհատելով իր աշխատանքը).— Ի՞նչ պրոպագանդա:

ԲՈՏԱՐ (միջամտելով).— Դա պրոպագանդան չէ...

ԳՆՈՒԴԱՐ (մեքենագրելը դադարեցնելով).— Քանի որ ձեզ կրկնում եմ, որ ես տեսել եմ... տեսել եմ... տեսել եմ:

ԳՆՈՒԴԱՐ (Բոտարին).— Դուք շարժում եք իմ ծիծաղը... Պրոպագանդա: Ի՞նչ նպատակով:

- ԲՈՏԱՐ (Դյուդարին).**— Պարզ չի՞... Դուք այդ ինձանից լավ գիտեք:  
Անմեղ մի ձևացեք:
- ԴՅՈՒԴԱՐ (բարկանալով).**— Համենայն դեպս, պարո՛ն Բոտար, ես  
ծախված չեմ Պոնտենեգրեններին:
- ԲՈՏԱՐ (զայրույթից կարմրատակած, բռունցքը խփելով սեղանին).**—  
Դու անարգանք է իմ հասցեին: Ես թույլ չեմ տա... (Պարոն Բո-  
տարը վեր է կենում):
- ԲԵՐԱՆՓԵ (թախանձանքով).**— Պարո՛ն Բոտար, չեղավ...
- ԲՈՏԱՐ.**— Առասպելական:
- ԴՅՈՒԴԱՐ.**— Իրական:
- ԴԵԶԻ.**— Խիստ իրական:
- ՊԱՐՈՆ ԹԻԹԵՒ.**— Պարոնա՛յք, ևս մի անգամ ձեր ուշադրությունն  
եմ հրավիրում այն բանի վրա, որ դուք աշխատանքի մեջ եք  
գտնվում: Բարի եղեք կարճ կապել այս ամուլ վիճաբանությունը...
- ԲՈՏԱՐ (վիրավորված, հեզմակամ).**— Համաձայն եմ, պարո՛ն Թիթեո:  
Դուք պետն եք: Քանի որ հրամայում եք, մենք էլ պիտի ենթարկ-  
վենք:
- ՊԱՐՈՆ ԹԻԹԵՒ.**— Պարոնա՛յք, շտապեցեք: Ինձ մի հարկադրեք  
ստանձնել ձեր աշխատավարձից պահումներ կատարելու տխուր  
պարտականությունը: Պարո՛ն Դյուդար, որտե՛ղ է ձեր մեկնաբա-  
նությունը հակաակոհողային խստությունների օրենքի վերաբեր-  
յալ:
- ԴՅՈՒԴԱՐ.**— Դեռ ստանձին ճշտումներ ունեմ անելու, պարո՛ն պետ:
- ՊԱՐՈՆ ԹԻԹԵՒ.**— Զանացեք շուտ վերջացնել: Ծտապ է: Դուք, պա-  
րո՛ն Բերանժե, և դուք, պարո՛ն Բոտար, ավարտե՛լ եք այսպես  
կոչված «Բեկումն ստուգամբ» գինիների կանոնավորմանը վերա-  
բերող տպագրաթերթերի սրբագրությունը:
- ԲԵՐԱՆՓԵ.**— Դեռևս ոչ, պարո՛ն Թիթեո: Բայց գործը գույս է զայիս:
- ՊԱՐՈՆ ԹԻԹԵՒ.**— Միասին վերջացրե՛ք սրբագրությունը: Տպագրանն  
սպասում է: Դուք, օրիո՛ղ, ստորագրելու գրությունները կբերեք  
իմ գրասենյակը: Ծտապեցեք մեքենագրել:
- ԴԵԶԻ.**— Հասկանալի է, պարո՛ն Թիթեո: (Դեզին գնու՞ է դեպի իր  
փոքր սեղանը և մեքենագրում է: Դյուդարը նստում է իր գրասե-  
ղանի առջև և սկսում է աշխատել: Բերանժեն և Բոտարը՝ իրենց  
փոքր սեղանների առաջ, երկուսն էլ իրենց կիսադեմքը դահլի-  
նին: Բոտարը թիկունքով շրջված է դեպի սանդուղքը: Բոտարն  
անարամադիր է: Բերանժեն ծուլ է և թուլացած: Բերանժեն տպա-  
գրաթերթերը շարում է սեղանին, բնագիրը տալիս է Բոտարին:

Քոտարը նստում է քրթմնջալով, մինչ պարոն Թիթեռը դուրս է գալիս՝ դուռը շրխկացնելով):

ՊԱՐՈՆ ԹԻԹԵՌ.— Քիչ հետո կտեսնվենք, պարոնա՛յք: (Դուրս է գալիս):

ԴԵԶԻ.— Պարո՛ն Դյուդար, չեղավ...

ԲՈՏԱՐ.— Ես սսում եմ, որ դա անարգանք է իմ հասցեին... (Պետի դուռը հանկարծակի բացվում է: Քոտարը և Դյուդարը շատ արագ նստում են իրենց տեղերը: Ծառայության պետը ձեռքին ունի հաշվեթուղթը: Նրա հայտնվելուն պես, հանկարծակի տիրել է լուրջուն):

ՊԱՐՈՆ ԹԻԹԵՌ.— Պարոն Ցուլն այսօր չի՞ եկել:

ԲԵՐԱՆԺԵ (շուրջը նայելով).— Իսկապես, նա բացակա է:

ՊԱՐՈՆ ԹԻԹԵՌ.— Բանն էլ այն է, որ ինձ պետք էր: (Դեզիին): Նա հայտնե՛լ է հիվանդանարու կամ ուրիշ հարգելի պատճառի մասին:

ԴԵԶԻ.— Ինձ ոչինչ չի սսել:

ՊԱՐՈՆ ԹԻԹԵՌ (դուռը լրիվ բացելով ու ներս մտնելով).— Եթե այսպես շարունակվի, նրան պիտի ազատեմ աշխատանքից: Առաջին անգամը չէ, որ այսպիսի օջին է բանեցնում: Մինչև հիմա աչք եմ փակել, բայց սրանից հետո այսպես չի շարունակվելու: Որևէ մեկն ունի՞ նրա գրասեղանի բանաթիւն: (Ճիշտ այդ պահին տիկին Ցուլը մուտք է գործում: Այս վերջին ռեպլիկի ժամանակ հավանական է, որ նրան տեսած լինեն՝ սանդուղքի վերջին աստիճանները, իր ուժերի ներածին չափ, ամենայն արագությամբ բարձրանալիս: Նա դուռը բացում է հանկարծակի: Շնչառապառ է և վախեցած):

ԲԵՐԱՆԺԵ.— Ահա և տիկին Ցուլը:

ԴԵԶԻ.— Բարև ձեզ, տիկին՛ն Ցուլ:

ՏԻԿԻՆ ՑՈՒԼ.— Բարև ձեզ, պարո՛ն Թիթեռ: Բարև ձեզ, պարոնա՛յք, տիկնա՛յք:

ՊԱՐՈՆ ԹԻԹԵՌ.— Հետո՞: Իսկ ձեր ամուսի՞նք: Նրան ի՞նչ է պատահել Ձե՞ր ուզում իրեն նշողություն սալ:

ՏԻԿԻՆ ՑՈՒԼ (հնալով).— Խնդրո՞ւ եմ՝ ներեցեք նրան: Ներեցեք իմ ամուսնուն... Ծաբայթ-կիրակին անցկացնելու: Կամար նա մեկնել էր ծնողների մոտ: Հարբուխ ունի:

ՊԱՐՈՆ ԹԻԹԵՌ.— Հարբուխ:

ՏԻԿԻՆ ՑՈՒԼ (Քի թուղթ պարզելով պետին).— Խնդրեմ, նա այդ է հայտնում իր ուղարկած հեռագրի մեջ: Հույս ունի, որ չորեքշաբթի

օրը կկարողանա գալ... (Համարյա ուշագնաց): Մի բաժակ ջուր տվեք... և մի աթոռ... (Բերանժեն նրա համար բեմահարթակի կենտրոն է բերում իր իսկ աթոռը, որի վրա տիկինը փլվում է):

ՊԱՐՈՆ ԹԻԹԵՆԻ (Դեզիին).— Մի բաժակ ջուր տվեք նրան:

ԴԵԶԻ.— Իսկույն: (Գնում մի բաժակ ջուր է բերում, այն խմեցնում է նրան հետևյալ ռեպիկների ընթացքում):

ԴՅՈՒԴԱՐ (պետին).— Երևի՛ սրտային հիվանդ է:

ՊԱՐՈՆ ԹԻԹԵՆԻ.— Ցավալի է, որ պարոն Ցուլը բացակա է: Բայց դա դեռևս պատճառ չէ, որ ինքներդ ձեզ կորցնեք:

ՏԻԿԻՆ ՑՈՒԼ (դժվարությամբ).— Բանն այն է... բանն այն է... որ տնից մինչև այստեղ ինձ հետապնդել է մի ոնգեղջյուր:

ԲԵՐԱՆԺԵ.— Միակտոտ՝ շ, թե՞ երկկտոտշանի:

ԲՈՏԱՐ (փոթկալով).— Ինձ ծիծաղ եք պատճառում:

ԴՅՈՒԿԱՐ (ընդվզելով).— Թողեք՝ խոսի:

ՏԻԿԻՆ ՑՈՒԼ (մեծ ջանք է թափում պարզաբանելու համար և մատը պարզում է սանդուղքի ուղղությամբ).— Նա այստեղ է, ներքևում, մուտքի մոտ: Կարծես ոգում է սանդուղքով բարձրանալ: (Նույն պահին լսվում է մի աղմուկ: Երևում է, թե ինչպես աստիճանները փլվում են՝ անկասկած մի ահռելի ծանրության տակ: Լսվում են ներքևից բարձրացող տազնապալի մոնչոցներ: Սանդուղքի փուզումից առաջացած փոշին ցրվում է, և երևում է օդի մեջ կախված սանդղահարթակը):

ԴԵԶԻ.— Աստված իմ...

ՏԻԿԻՆ ՑՈՒԼ (աթոռին նստած, ձեռքը սրտին).— Օ՛հ, ա՛հ: (Բերանժեն շտապում է օգնել տիկին Ցուլին, խփում է նրա այտերին, խըմելու ջուր է տալիս):

ԲԵՐԱՆԺԵ.— Հանգստացեք: (Այդ ընթացքում, իրար հրմշտելով, Պարոն Թիթեռը, Դյուդարը և Բոտարը նետվում են դեպի ձախ, բացում են դուռը և հայտնվում սանդղահարթակի վրա՝ փոշեթաթախ: Մոնչոցները շարունակվում են):

ԴԵԶԻ (տիկին Ցուլին).— Ձեզ ավելի լավ եք զգո՞ւմ, տիկին՝ն Ցուլ:

ՊԱՐՈՆ ԹԻԹԵՆԻ (սանդղահարթակի վրա).— Ահա նա: Ներքևում: Դրանցից մեկն է:

ԲՈՏԱՐ.— Ես ոչինչ չեմ տեսնում: Պատրանք է:

ԴՅՈՒԿԱՐ.— Իսկապես, ներքևում է: Կլոր-կլոր պտտվում է:

ՊԱՐՈՆ ԹԻԹԵՆԻ.— Պարոնա՛յք կասկած չկա: Կլոր-կլոր պտտվում է:

ԴՅՈՒԿԱՐ.— Նա չի կարողանա բարձրանալ: Սանդուղքը չկա:

ԲՈՏԱՐ.— Տարօրինակ է: Սա ի՞նչ է նշանակում:

- ԳՅՈՒԴԱՐ (շրջվելով Բերանձեի կողմը).—** Դե, եկեք տեսեք: Եկեք տեսեք ձեր ոնգեղջյուրին:
- ԲԵՐԱՆՑԺԵ.—** Գալիս եմ: (Բերանձեան նետվում է դեպի սանդղահարթակը: Նրան հետևում է Դեզիհն՝ մեհակ թողնելով տիկին Յուլիան):
- ԿԱՐՈՆ ԹԻԹԵՒԻ (Բերանձեին).—** Հե՛յ դուք, ոնգեղջյուրների մասնագետ, նայեցեք:
- ԲԵՐԱՆՑԺԵ.—** Ես ոնգեղջյուրի մասնագետ չեմ...
- ԴԵԶԻ.—** Օ՛հ... Նայեցեք... Ոնց էլ կլոր-կլոր պտտվում է: Կարծեք նա տառապում է... Ի՞նչ է ուզում:
- ԳՅՈՒԴԱՐ.—** Կարծեք նա մեկին է փնտրում: (Բոտարին): Հիմա տեսա՞ք:
- ԲՈՏԱՐ (սրտնեղած).—** Իրոք, ես տեսնում եմ նրան:
- ԴԵԶԻ (Պարոն Թիթեռին).—** Գուցե բոլորս էլ տեսողության մթազնում ունենք: Եվ դուք, նույնպես...
- ԲՈՏԱՐ.—** Ես երբեք տեսողության մթազնում չեմ ունենում: Բայց սրա տակին մի բան կա:
- ԳՅՈՒԴԱՐ (Բոտարին).—** Ի՞նչ, ի՞նչ բան կա:
- ԿԱՐՈՆ ԹԻԹԵՒԻ (Բերանձեին).—** Իրոք ոնգեղջյուր է, այնպես չէ՞: Դա հենց նա՞ է, որին արդեն տեսել եք. (Դեզիհին): Եվ դո՞ւք նույնպես:
- ԴԵԶԻ.—** Անտարակույս:
- ԲԵՐԱՆՑԺԵ.—** Նա երկու կոտոշ ունի: Դա աֆրիկյան, ավելի շուտ՝ ասիական ոնգեղջյուր է: Ա՛հ, էլ գլուխ չեմ հանում՝ աֆրիկյան ոնգեղջյուրը միակոտոշ է, թե երկկոտոշանի:
- ԿԱՐՈՆ ԹԻԹԵՒԻ.—** Նա մեր սանդղողքը քանդեց: Ավելի լավ. դա պիտի պատահեր: Դեռ այն ժամանակվանից, երբ ընդհանուր դեկավարությանը խնդրել եմ, որ ցեմենտբետոնից աստիճաններ տարքել տան մեզ համար, այս փտած սանդղողքի փոխարեն...
- ԳՅՈՒԴԱՐ.—** Արդեն մի շաբաթ է, ինչ ես զեկուցագիրն ուղարկել եմ, պարո՞ն պետ:
- ԿԱՐՈՆ ԹԻԹԵՒԻ.—** Դա պիտի պատահեր: Դա պիտի պատահեր: Այդ բոլոր հարկ էր նախատեսել: Ես իրավացի էի:
- ԴԵԶԻ (Պարոն Թիթեռին, հեզմակամ).—** Ինչպես միշտ:
- ԲԵՐԱՆՑԺԵ (Նյուդարին և Պարոն Թիթեռին).—** Ասեք, իմանամ, երկկոտոշանիությունը ասիական ոնգեղջյուրին է բնորոշ, թե՞ աֆրիկյան: Միակոտոշությունը աֆրիկյանի՞ն է բնորոշ, թե՞ ասիականին...
- ԴԵԶԻ.—** Խեղճ սնասուն, չի դադարում մոնչալուց ու կլոր-կլոր պտրտ-

վելուց: Ի՞նչ է ուզում: Օ՛հ, նա մեզ է նայում: **(Ռնգեղջյուրի ուղղությամբ):** Պըճո, պըճո, պըճո...

ԴՅՈՒԴԱՐ.— Դուք հո նրան չե՞ք փաղաքշելու: Նա անկասկած ընտելացրած չէ...

ՊԱՐՈՆ ԹԻԹԵՆ.— Այսպես թե այնպես, անհնարին է նրան մոտենալ: **(Ռնգեղջյուրը մոռնում է գարշելիորեն):**

ԴԵԶԻ.— Խե՛ղճ անասուն:

ԲԵՐԱՆԺԵ **(Բոտարին հետապնդելով)**.— Դուք, որ այդքան բան գիտեք, չե՞ք կարծում, որ երկկոտոշանիությունն է...

ՊԱՐՈՆ ԹԻԹԵՆ.— Դուք աշխատանքի մեջ գլուխ եք պահում, սիրելի՛ Բերանժե: Դեռևս ճորած եք: Պարոն Բոտարն իրավացի է:

ԲՈՏԱՐ.— Քաղաքակրթված երկրում ինչպե՞ս կարելի է...

ԴԵԶԻ **(Բոտարին)**.— Համաձայն ենք: Այնուամենայնիվ, նա գոյություն ունի՞, թե՞ ոչ:

ԲՈՏԱՐ.— Դա ստոր մեքենայություն է: **(Հռետորի շարժումով մատը տնկում է Դյուդարի վրա և հաչացքով կալծակնահար է անում նրան):** Դա մեր հանցանքով է:

ԴՅՈՒԴԱՐ.— Ինչո՞ւ իմ հանցանքով ու ոչ թե՛ ձեր:

ԲՈՏԱՐ **(կատաղած)**.— Ի՞նչ հանցանքով: Միշտ էլ փոքրերի վրա են գցում հանցանքը: Եթե միայն ինձանից կախում ունենար...

ՊԱՐՈՆ ԹԻԹԵՆ.— Լավ քաշվեցի՛նք: Մնացել ենք ստանց սանդուղքի:

ԴԵԶԻ **(Բոտարին և Դյուդարին)**.— Հանգստացեք: Ժամանակ եք գրտել, պարոնա՛յք:

ՊԱՐՈՆ ԹԻԹԵՆ.— Հանցանքն ընդհանուր ղեկավարությանն է:

ԴԵԶԻ.— Թերևս: Բայց ինչպե՞ս պիտի իջնենք:

ՊԱՐՈՆ ԹԻԹԵՆ **(մեքենագրուհու այտն է շոյում՝ սիրատոչոր կատակելով)**.— Ձեզ կվերցնեն իմ գիրկը և միասին կցատկենք ներքև:

ԴԵԶԻ **(ծառայության պետի ձեռքը վանելով)**.— Ձեր պալարավոր ձեռքով մի դիպչեք իմ երեսին, հաստամաշկ անասունի մեկը:

ՊԱՐՈՆ ԹԻԹԵՆ.— Ես կատակում էի: **(Այդ ժամանակամիջոցում, որ ռնգեղջյուրը չի դադարել մոռնալուց, տիկին Ցուլը Թեղից վեր է կացել և միացել է խմբին: Նա մի պահ ուշադիր նայում է ներքևում կոր-կոր ատուվող ռնգեղջյուրին: Հանկարծ նա սուկալի՛նիչ է արձակում):**

ՏԻԿԻՆ ՑՈՒԼ.— Տեղ Աստված, մի՞թե հնարավոր է:

ԲԵՐԱՆԺԵ **(տիկին Ցուլին)**.— Ձեզ ի՞նչ եղավ:

ՏԻԿԻՆ ՑՈՒԼ.— Իմ ամուսինն է, Ցուլը: Իմ խե՛ղճ Ցո՛ւլ, քեզ ի՞նչ պատահեց:

- ԳԵԶԻ (տիկին Յուլի).**— Դուք վարա՞ն եք:
- ՏԻԿԻՆ ՅՈՒԼ.**— Ես նրան ճանաչեցի, ճանաչեցի: (**Ռնգեղջյուրը պատասխանում է կատաղի, բայց և սիրասուն մոնչոցով**):
- ԳԱՐՈՆ ԹԻԹԵՆ.**— Այ քեզ քան: Այս անգամ ես իրոք նրան ազատում եմ աշխատանքից:
- ԳՅՈՒԳԱՐ.**— Նա ապահովագրվա՞ծ էր:
- ՐՈՏԱՐ (մեկուսի).**— Ես ամեն ինչ հասկացա...
- ԳԵԶԻ.**— Այսպիսի պարագայում ապահովագրման գումարը կվճարե՞ն:
- ՏԻԿԻՆ ՅՈՒԼ (ուշագնաց ինեղով Բերանժեի թևերի մեջ).**— Ա՛հ, Աստված իմ:
- ՐԵՐԱՆԺԵ.**— Օհ:
- ԳԵԶԻ.**— Տեղափոխենք նրան: (**Բերանժեն, Դյուդարի և Դեզիի օգնությամբ, տիկին Յուլին տեղափոխում են մինչև արոտը և տեղավորում են վրան**):
- ԳՅՈՒԳԱՐ (մինչ տեղափոխում է նրան).**— Մի անհանգստացեք, տիկին Յուլ:
- ՏԻԿԻՆ ՅՈՒԼ.**— Ա՛հ, օ՛հ:
- ԳԵԶԻ.**— Գուցե կարգավորվի...
- ԳԱՐՈՆ ԹԻԹԵՆ (Դյուդարին).**— Իրավաբանորեն ի՞նչ կարելի է անել:
- ԳՅՈՒԳԱՐ.**— Պետք է հարցում անել իրավաբանական բաժնին:
- ՐՈՏԱՐ (հետևելով թափորին՝ թևերը երկինք է բարձրացնում).**— Իսկական խելագարություն է: Սա ինչ հասարակություն է: (**Խոնդրվում են տիկին Յուլի շուրջը, թփթփացնում են աչտերին: Նա բացում է աչքերը, արձակում մի «ահ», նորից փակում է աչքերը: Կրկին թփթփացնում են աչտերին, մինչ Բոտարը խոսում է**): Համենայն դեպս, հաստատ համոզված եղեք, որ ամեն ինչ պիտի հայտնեն իմ գործունեության կոմիտեին: Ես իմ կոլեգային չեմ լքի կարիքի մեջ: Դա պիտի իմացվի:
- ՏԻԿԻՆ ՅՈՒԼ (ուշքի գալով).**— Իմ խեղճ սիրելի, ես հո չեմ կարող թողնել նրան այս վիճակում, իմ խեղճ սիրելի: (**Լսվում է մոնչոց**): Նա ինձ կանչում է: (**Ջնքշորեն**): Նա ինձ կանչում է:
- ԳԵԶԻ.**— Ձեզ ավելի լա՞վ եք զգում, տիկին Յուլ:
- ԳՅՈՒԳԱՐ.**— Խելքը գլուխն է գալիս:
- ՐՈՏԱՐ (տիկին Յուլին).**— Հավաստիացած եղեք, որ մեր պատվիրակությունը կկանգնի ձեր թիկունքին: Ձեի՞ք ուզենա մեր կոմիտեի անդամ դառնալ:

**ՊԱՐՈՆ ԹԻԹԵՌ.**— Աշխատանքը դարձյալ ուշացումով պիտի կատարվի: Օրին'րդ Դեզի, գրությունները...

**ԴԵԶԻ.**— Նախ՝ իմանանք, թե ինչպես ենք դուրս գալու այստեղից:

**ՊԱՐՈՆ ԹԻԹԵՌ.**— Դա խնդիր է: Լուսամուտից: **(Բոլորը շարժվում են դեպի լուսամուտը, բացի տիկին Յուլից, որն ընկած է աթոռին և Բոտարից, որը նրա հետ գտնվում է բեմահարթակի կենտրոնում):**

**ԲՈՏԱՐ.**— Ես գիտեմ, թե այդ որտեղի՞ց է գալիս:

**ԴԵԶԻ (լուսամուտի մոտ).**— Ծառ է բարձր:

**ԲԵՐԱՆԺԵ.**— Գուցե անհրաժեշտ է կանչել հրշեջներին: Թող գան իրենց սանդուղքներով:

**ՊԱՐՈՆ ԹԻԹԵՌ.**— Օրին'րդ Դեզի, մտեք իմ գրասենյակը և զանգահարեցեք հրշեջկայան: **(Պարոն Թիթեռը ձևացնում է, որ հետևելու է նրան):**

**ԴԵԶԻ (դուրս է գալիս դեպի խորքը: Լավելու է, թե ինչպես է վերցնում ընկալուչը և ասում).**— Այո, այո, հրշեջ կայա՞նն է: **(Եվ հեռախոսային խոսակցության տարտամ աղմուկ):**

**ՏԻԿԻՆ ՅՈՒԼ (հանկարծակի վեր թռչելով).**— Ես չեմ կարող այդպես թողնել նրան: Ես չեմ կարող այդպես թողնել նրան:

**ՊԱՐՈՆ ԹԻԹԵՌ.**— Եթե ուզում եք ապահարզան ստանալ... դուք հիմա ունեք հիմնավոր պատճառ:

**ԴՅՈՒԴԱՐ.**— Անպայման նա կհամարվի մեղավորը:

**ՏԻԿԻՆ ՅՈՒԼ.**— Ոչ: Իմ խեղճուկը: Դրա ժամանակը չէ: Ես չեմ կարող իմ ամուսնուն լքել այդ վիճակում:

**ԲՈՏԱՐ.**— Դուք ազնիվ կին եք:

**ԴՅՈՒԴԱՐ (տիկին Յուլին).**— Բայց դուք ի՞նչ պիտի անեք: **(Վազելով դեպի ձախ՝ տիկին Յուլն իրեն նետում է սանդղահարթակին):**

**ԲԵՐԱՆԺԵ.**— Զգույշ:

**ՏԻԿԻՆ ՅՈՒԼ.**— Ես չեմ կարող լքել նրան: Ես չեմ կարող լքել նրան:

**ԴՅՈՒԴԱՐ.** — Ետ պահեցեք նրան:

**ՏԻԿԻՆ ՅՈՒԼ.**— Ես նրան տուն եմ տանելու:

**ՊԱՐՈՆ ԹԻԹԵՌ.**— Այդ ի նչ է ուզում անել:

**ՏԻԿԻՆ ՅՈՒԼ (պատրաստվելով թռչել, սանդղահարթակի եզրին).**— Ես գալիս եմ, սիրելի՛ս, գալիս եմ:

**ԲԵՐԱՆԺԵ.**— Նա պիտի վար ցատկի:

**ԲՈՏԱՐ.**— Դա նրա պարտքն է:

**ԴՅՈՒԴԱՐ.**— Զի կարողանա: **(Բոլորը, Դեզիից բացի, որը զանգահարում է, գտնվում են տիկին Յուլի կողքին, սանդղահարթակի**



վրա: Տիկին Յուլը ցատկում է: Բերանժեն, որն այնուամենայնիվ,  
 փորձում է ետ պահել նրան, մնում է՝ քղանցքը ձեռքերի մեջ):  
 ԲԵՐԱՆՇԵ.— Չկարողացա ետ պահել նրան: (Ներքևից լսվում է  
 ռնգեղջյուրի քնքուշ մոնչոցը):  
 ՏԻԿԻՆ ՅՈՒԼ.— Ահա և եկա, սիրելի՛ս, ահա այդ ես եմ:  
 ԳՅՈՒԳԱՐ.— Իջավ ուղիղ նրա թիկունքին, հեծյալի նման:  
 ԲՈՏԱՐ — Նա ամազոնուհի<sup>6</sup> է:  
 ՏԻԿԻՆ ՅՈՒԼԻ ԶԱՅՆԸ.— Տուն գնանք, սիրելի՛ս, դեպի տուն:  
 ԳՅՈՒԳԱՐ.— Մեկնում են քստատրոփ: (Դյուդաքը, Բերանժեն, Բո-  
 տարը, պարոն Թիթեռը վերադառնում են բեմաճարթակ և կանգ  
 են առնում լուսամուտի մոտ):  
 ԲԵՐԱՆՇԵ.— Արագ են արշավում:  
 ԳՅՈՒԳԱՐ (պարոն Թիթեռին).— Դուք զբաղվե՛ր եք ձիարշավությամբ:  
 ՊԱՐՈՆ ԹԻԹԵՐ.— Մի ժամանակ... մի քիչ... (Շրջվելով դեպի խորքի  
 դուռը, Դյուդարին): Դեռ կառչել է հեռախոսից...  
 ԲԵՐԱՆՇԵ (Ռնգեղջյուրին հետևում է հայացքով).— Արդեն հեռու են:  
 Չեն երևում:  
 ԳԵԶԻ (դուրս գալով գրասենյակից).— Ես դժվարությամբ համոզեցի  
 հրշեջներին...  
 ԲՈՏԱՐ (որպես եզրակացություն ներքին մենախոսության).— Մաքուր  
 հաշիվ է:  
 ԳԵԶԻ.— ... Ես դժվարությամբ համոզեցի հրշեջներին:  
 ՊԱՐՈՆ ԹԻԹԵՐ.— Ամենուրեք հրդեհ է:  
 ԲԵՐԱՆՇԵ.— Ես համամիտ եմ պարոն Բոտարի հետ: Տիկին Յուլի  
 դիրքորոշումն իրոք հուզիչ է: Նա քնքուշ սիրտ ունի:  
 ՊԱՐՈՆ ԹԻԹԵՐ.— Մի աշխատակից պակասեց, որին պետք է ուրի-  
 շով փոխարինել:  
 ԲԵՐԱՆՇԵ.— Իրոք կարծո՞ւմ եք, որ նա մեզ գօտակար լինել չի կա-  
 րող:  
 ԳԵԶԻ — Ո՛չ, հրդեհ չկա: Հրշեջներին կանչել են ուրիշ ռնգեղջյուրների  
 կապակցությամբ:  
 ԲԵՐԱՆՇԵ.— Ուրի՞շ ռնգեղջյուրների կապակցությամբ:  
 ԳՅՈՒԳԱՐ.— Ինչպե՞ս թե ուրիշ ռնգեղջյուրների կապակցությամբ:  
 ԳԵԶԻ — Այո՛, ուրիշ ռնգեղջյուրների կապակցությամբ: Քաղաքում,  
 այս ու աստեղ ահագանգում են այդ մասին: Այս առավոտ յոթն  
 էին, հիմա տասնյոթն են:  
 ԲՈՏԱՐ — Չեզ ի՞նչ էի ասում:  
 ԳԵԶԻ (շարունակելով).— Նույնիսկ պիտի որ երեսուներկուսի մասին

ահազանգած լինեն: Տվյալները դեռ պաշտոնական չեն, բայց, անշուշտ, պիտի հաստատվեն:

**ԲՈՏԱՐ (թերահավատորեն).**— Պֆֆֆ: Չափազանցում են:

**ՊԱՐՈՆ ԹԻԹԵՆԻ.**— Արդյոք գալո՞ւ են, որ մեզ դուրս բերեն այստեղից: **ԲԵՐԱՆԺԵ.**— Ինքս, ես քաղցած եմ...

**ԴԵԶԻ.**— Այո՛, գալու են: Հրշեջները ճանապարհին են:

**ՊԱՐՈՆ ԹԻԹԵՆԻ.**— Իսկ աշխատա՞նքը:

**ԴՅՈՒԴԱՐ.**— Կարծում եմ, որ սա արտակարգ դեպք է:

**ՊԱՐՈՆ ԹԻԹԵՆԻ.**— Հարկ պիտի լրացնել կորած աշխատանքային ժամերը:

**ԴՅՈՒԴԱՐ.**— Դե, պարո՛ն Բոտար, դեռ ժխտո՞ւմ եք ոնգեղջյուրախտի հավանականությունը:

**ԲՈՏԱՐ.**— Մեր պատվիրակությունը հակադրվում է այն բանին, որ դուք պարոն Ցուլին ազատեք աշխատանքից՝ առանց նախնական զգուշացման:

**ՊԱՐՈՆ ԹԻԹԵՆԻ.**— Այդ ես չե, որ պիտի որոշեմ: Սպասենք քննարկման արդյունքներին:

**ԲՈՏԱՐ (Դյուդարին).**— Ո՛չ, պարո՛ն Դյուդար: Ես չեմ ժխտում ողնգեղջյուրախտի հավանականությունը: Ես այն երբեք էլ չեմ ժխտել:

**ԴՅՈՒԴԱՐ.**— Դուք խարդախի մեկն եք:

**ԴԵԶԻ.**— Ա՛հ, այո. դուք խարդախի մեկն եք:

**ԲՈՏԱՐ.**— Կրկնում եմ, որ ես այն երբեք չեմ ժխտել: Ես պարզապես մտադիր էի իմանալ, թե մինչև ո՞ր պիտի խորանա: Ինքս, սակայն, գիտեմ, թե ինչն ինչոց է: Ես չեմ բավարարվում երևույթը որպես ընդամենը փաստ ընդունելով: Ես այն հասկանում եմ և այն բացատրում եմ: Գոնե կկարողանամ բացատրել, էթե...

**ԴՅՈՒԴԱՐ.**— Դե՛, բացատրեցեք, տեսնենք:

**ԴԵԶԻ.**— Բացատրեցեք, պարո՛ն Բոտար:

**ՊԱՐՈՆ ԹԻԹԵՆԻ.**— Բացատրեցեք, բանի որ ձեք կոլեգաները ինդրում են:

**ԲՈՏԱՐ.**— Ես այն կբացատրեմ...

**ԴՅՈՒԴԱՐ.**— Լսում ենք ձեզ:

**ԴԵԶԻ.**— Ինձ շատ հետաքրքիր է:

**ԲՈՏԱՐ.**— Ես այն կբացատրեմ... մի օր...

**ԴՅՈՒԴԱՐ.**— Եվ ինչո՞ւ ոչ տեղնուտեղը:

**ԲՈՏԱՐ (պարոն Թիթեռին, սպառնալի).**— Ծուտով իրար հետ պիտի բացատրվենք: (Բողորին): Ես գիտեմ ինչերի ինչու-ն, պատմության ծակուծուկերը...

ՊԵՋԻ.— Ի՞նչ ծակուծուկեր:

ՊՅՈՒԴԱՐ.— Ես կուզեմայի դրանք իմանալ, այդ ծակուծուկերը...

ԲՈՏԱՐ (շարունակելով, սարսափազդու).— Եվ ես նույնպես գիտեմ բոլոր պատասխանատու անձանց անունները: Դավաճանների անունները: Ինձ չեն կարող խաբել: Ես ձեզ իմաց կտամ այս պրովոկացիայի նպատակն ու իմաստը: Ես դիմակազերծ պիտի անեմ խառնակիչներին:

ԲԵՐԱՆՓԵ.— Ո՞վ պիտի շահագրգռված լինի, որ...

ՊՅՈՒԴԱՐ (Բոտարին).— Դուք գառանցում ե՞ք, պարո՛ն Բոտար:

ՊԱՐՈՆ ԹԻԹԵՐ.— Եկեք չգառանցենք:

ԲՈՏԱՐ.— Ի՞նքս, ես գառանցո՞ւմ եմ, ես գառանցո՞ւմ եմ:

ՊԵՋԻ.— Քիչ առաջ դուք մեզ մեղադրում էիք, որ մենք ընկել ենք զգայապատրանքների մեջ:

ԲՈՏԱՐ.— Քիչ առաջ՝ այո: Իսկ հիմա՝ զգայապատրանքները դարձել են պրովոկացիա:

ՊՅՈՒԴԱՐ.— Ըստ ձեզ՝ այդ ինչպե՞ս տեղի ունեցավ անցումը:

ԲՈՏԱՐ.— Դա Պոլիշիների գաղտնիքն է, պարոնայք: Միայն երեխաներն են, որոնք ոչինչ չեն հասկանում: Միայն կեղծավորներն են, որոնք ձևացնում են, թե չեն հասկանում: (Լսելի է տեղ հասնող հրշեջ մեքենայի աղմուկն ու ազդաշշակը: Լսելի է մեքենայի արգելակի ձայնը լուսամուտի տակ):

ՊԵՋԻ.— Հրշեջներն եկան:

ԲՈՏԱՐ.— Պետք է, որ սա փոփոխվի. հո աչսպես չի մնալու:

ՊՅՈՒԴԱՐ.— Սա ոչ մի իմաստ չունի, պարո՛ն Բոտար: Ռեզեղչությունը գոյություն ունեն, ահա և ամենը: Դա ուրիշ ոչինչ չի նշանակում:

ՊԵՋԻ (լուսամուտի մոտ, ներքև նայելիս).— Այս կողմը, պարո՛ն հրշեջներ: (Ներքևից լսելի են իրադրանցում, վայրիվերումներ, ավստմեքենայի աղմուկ):

ՊԵՆՏԻ ՉԱՅՆԸ.— Տեղադրե՛ք սանդուղքը:

ԲՈՏԱՐ (Դյուդարին).— Ես ունեմ իրադարձությունների բանալին, անտեպ մեկնաբանությունների մի սխառեմ:

ՊԵՋԻ ԹԻԹԵՐ.— Այնուամենայնիվ, աշխատանքի պետք է ներկայանանք, կեսօրից հետո: (Լուսամուտի մոտ երևում է հրշեջների սանդուղքի ծայրը):

ԲՈՏԱՐ — Աշխատանքի հերն էլ անիծած, պարո՛ն Թիթեռ:

ՊԵՋԻ ԹԻԹԵՐ.— Ի՞նչ կասի ընդհանուր ղեկավարությունը:

ՊՅՈՒԴԱՐ — Սա բացառիկ դեպք է:

**ԲՈՏԱՐ (ցույց տալով լուսամուտը).**— Հո չեն կարող մեզ ստիպել, որ նույն ճանապարհով ետ վերադառնանք: Պետք է սպասել, մինչև որ սանդուղքը վերանորոգեն:

**ԴՅՈՒԴԱՐ.**— Եթե մեզանից մեկն ու մեկը ոտը ջարդի, դա անախորժություն կարող է լինել դեկավարության համար:

**ՊԱՐՈՆ ԹԻԹԵՆԻ.**— Ծիշո է: (Երևում է **Հրէջի սաղավարսը, ապա ինքը՝ Հրէջը**):

**ԲԵՐԱՆԺԵ (Դեզիին, ցույց տալով լուսամուտը).**— Ձեզանից հետո, օրիորդ Դեզի: (Հրէջը գրկում է օրիորդ **Դեզիին լուսամուտից, որի միջով վերջինս իր ոտն է անցկացնում: Նա օրիորդի հետ անհետանում է**):

**ԴԵԶԻ (անհետանալով).**— Տ'նոր հանդիպում, պարոնա՛յք:

**ՊԱՐՈՆ ԹԻԹԵՆԻ (լուսամուտից).**— Վաղը, սուսվոտյան ինձ գանգահարեցեք, օրիորդ: Կգաք իմ տունը՝ գրությունները մեքենագրելու: (**Բերանժեն**): Պարո՛ն Բերանժե, ձեր ուշադրությունը հրավիրում եմ այն բանի վրա, որ մենք արձակուրդի մեջ չենք գտնվում, և առաջին իսկ հնարավորության դեպքում վերսկսում ենք աշխատանքը: (**Մյուս երկուսին**): Լսեցի՞ք ինձ, պարոնա՛յք:

**ԴՅՈՒԴԱՐ.**— Համաձայն ենք, պարո՛ն Թիթեն:

**ԲՈՏԱՐ.**— Անշուշտ, մեզ մինչև ուղնուծուծը շահագործում են:

**ՀՐԾԵԶ (նորից հայտնվելով լուսամուտի շրջանակում).**— Ո՛ւմ հերթն է:

**ՊԱՐՈՆ ԹԻԹԵՆԻ (երեք գործող անձանց).**— Անցեք, խնդրեմ:

**ԴՅՈՒԴԱՐ.**— Ձեզանից հետո, պարո՛ն Թիթեն:

**ԲԵՐԱՆԺԵ.**— Ձեզանից հետո, պարո՛ն սխտ:

**ԲՈՏԱՐ.**— Իհարկե, ձեզանից հետո:

**ՊԱՐՈՆ ԹԻԹԵՆԻ (Բերանժեն).**— Ինձ տվեք օրիորդ Դեզիի գրությունները: Այնտեղ, սեղանի վրա են: (**Բերանժենն գնում, բերում է գրությունները և տալիս է պարոն Թիթենին**):

**ՀՐԾԵԶ.**— Դե, շտապեցեք: Ժամանակ չունեք: Ոտի՞ կանչեր էլ կան:

**ԲՈՏԱՐ.**— Բա որ ասում էի: (**Պարոն Թիթենը, գրությունները թևատակին, ոտքն անցկացնում է լուսամուտի միջով**):

**ՊԱՐՈՆ ԹԻԹԵՆԻ (հրէջներին).**— Զգույշ, մատչանները: (**Երջվելով դեպի Դյուդարը, Բոտարն ու Բերանժեն**): Տոնեսություն, պարոնա՛յք:

**ԴՅՈՒԴԱՐ.**— Տոնեսություն, պարո՛ն Թիթեն:

**ԲԵՐԱՆԺԵ.**— Տոնեսություն, պարո՛ն Թիթեն:

**ՊԱՐՈՆ ԹԻԹԵՆԻ (անհետացել է: Լսվում է նրա ձայնը).**— Զգույշ, մատչանները:

ՊԱՐՈՆ ԹԻԹԵՌԻ ԶԱՅՆԸ.— Դյուղա՛ր, բանալիով կրղպեցե՞ք գրասեղանները:

Դ: ՌԻԳԱՐ (գոռալով).— Մի անհանգստացե՞ք, պարո՛ն Թիթեռ: **(Բռտարի՛ն):** Ձեզանից հետո, պարո՛ն Բոտար:

ԲՈՏԱՐ.— Պարոնա՛յք, ես իջնում եմ: Եվ այս առաջին քայլով ես կապ պիտի հաստատեմ իրավասու իշխանությունների հետ: Ես բացահայտելու եմ այս կեղծ խորհրդավորությունը: **(Ուղղվում է դեպի լուսամուտը՝ ոտքը անցկացնելու համար):**

ԴՅՈՒԴԱՐ **(Բոտարի՛ն)**.— Ես կարծում էի, որ ձեզ համար արդեն պարզ է ամեն ինչ:

ԲՈՏԱՐ **(ոտքն անցկացնելով լուսամուտից)**.— Ձեր հեզմանքն ամենին վրաս չի ազդում: Իմ ցանկությունն այն է, որ ձեզ ցույց տամ ապացույցները, փաստաթղթերը, այո, ձեր ուխտադրծության ապացույցները:

ԴՅՈՒԴԱՐ.— Դա արսուրդ է:

ԲՈՏԱՐ.— Ձեր անարգանքը...

ԴՅՈՒԴԱՐ **(նրան ընդմիջելով)**.— Այդ դուք եք ինձ անարգում...:

ԲՈՏԱՐ **(անհետանալով)**.— Ես չեմ անարգում: Ապացուցում եմ:

ՀՐԾԵՋԻ ԶԱՅՆԸ.— Հայդե՛, հայդե՛...

ԴՅՈՒԴԱՐ **(Բերանժեի՛ն)**.— Ի՞նչ եք անում կեսօրից հետո: Մի քիչ կարելի էր կոնժել:

ԲԵՐԱՆԺԵ.— Ներեցե՞ք: Այդ ազատ ժամանակից պետք է օգտվեմ՝ իմ բարեկամ ժանի՛ն այցելելու համար: Այնուամենայնիվ, ես նրա հետ ուզում եմ հաշտվել: Ես սխալներ եմ գործել: **(Հրշեջի զլուխը նորից հայտնվում է լուսամուտի՛ն):**

ՀՐԾԵՋ.— Հայդե՛, հայդե՛...

ԲԵՐԱՆԺԵ **(լուսամուտը մատնացույց անելով)**.— Ձեզանից հետո:

ԴՅՈՒԴԱՐ **(Բերանժեի՛ն)**.— Ձեզանից հետո:

ԲԵՐԱՆԺԵ **(Դյուղարի՛ն)**.— Օ՛հ, ոչ, ձեզանից հետո:

ԴՅՈՒԴԱՐ **(Բերանժեի՛ն)**.— Ոչ, ամենին: Ձեզանից հետո:

ԲԵՐԱՆԺԵ **(Դյուղարի՛ն)**.— Խնդրում եմ. ձեզանից հետո, ձեզանից հետո:

ԲԵՋ.— Ծոապեցե՛ք, շտապեցե՛ք:

ԴՅՈՒԴԱՐ **(Բերանժեի՛ն)**.— Ձեզանից հետո, ձեզանից հետո:

ԲԵՐԱՆԺԵ **(Դյուղարի՛ն)**.— Ձեզանից հետո, ձեզանից հետո. **(Նրանք միաժամանակ ոտքերն անցկացնում են լուսամուտի միջուկ: Հրշեջն օգնում է, որ իջնեն, մինչ վարագույրը փակվում է):**

Պատկերի ավարտը

**Պեկորացիա**

**Ժանի տունը:** Պարագաների դրվածքը համարյա սլնպիսին է, ինչպես երկրորդ գործողության առաջին պատկերում: Այսինքն՝ բեմահարթակը բաժանված է երկու մասի: Աջ կողմում, նայած բեմահարթակի լայնությանը, դրա երեք քառորդի կամ չորս հինգերորդի չափով՝ Ժանի սենյակն է: Խորքում, պատի տակ Ժանի անկողինն է, որի մեջ նա պառկած է: Բեմահարթակի կենտրոնում՝ աթոռ կամ բազկաթոռ, որի վրա հերանժեն գալու է նստի: Աջ կողմը, մեջտեղը, մի դուռ, որ բացվում է դեպի լողասենյակ: Երբ Ժանը գնա հարդարվելու, լսելի պիտի դառնա ծորակից ու ցնցուղից հոսող ջրի աղմուկը: Սենյակի ձախ կողմում միջնապատը բեմահարթակը բաժանում է երկու մասի: Կենտրոնում՝ դուռ, որը բացվում է սանդուղքի վրա: Նվազ ռեալիստական, առավել ոճավորված դեկորացիայի դեպքում, կարելի է պարզապես դուռ դնել առանց միջնապատի: Բեմահարթակի ձախ մասում երևում է սանդուղքը, դրա վերջին աստիճանները, որոնք տանում են դեպի Ժանի բնակարանը, ինչպես և բազրիքն ու սանդղահարթակի վերնամասը: Խորքում՝ այդ սանդղահարթակի բարձրության վրա, հարևանների բնակարանի մի դուռը: Ավելի ներքև, խորքում՝ ապակեպատ մի դռան վերնամասը, որի վրա կարդացվում է «Բակապան»:

Վարագույրը բացելու պահին Ժանը պառկած է անկողնում, ծածկոցի տակ, թիկունքը՝ հանդիսատեսին: Լսվում է նրա հազը: Մի բանի րոպե անց երևում է հերանժեն, որը բարձրանում է սանդուղքի վերջին աստիճաններով: Նա բախում է դուռը: Ժանը չի պատասխանում: Բերանժեն նոթից է բախում:

**ԲԵՐԱՆԺԵՆ** — Ժան: (Նոթից է բախում): Ժան: (Սանդղահարթակի խորքի դուռը կիսաբաց է լինում, հայտնվում է սպիտակ կիսամորուսով մի փոքրիկ ձեռուկ):

**ՓՈՔՐՈՒԿ ԾԵՐՈՒԿ.**— Ի՞նչ ես:

**ԲԵՐԱՆԺԵՆ.**— Ուզում եմ Ժանին տեսնել: պարոն Ժանին՝ իմ բարեկամին:

**ՓՈՔՐՈՒԿ ԾԵՐՈՒԿ.**— Կարծում էի՝ ինձ են ուզում: Իմ անունն էլ Ժան է: Ուրեմն, մյուսին են ուզում:

**ԾԵՐՈՒԿԻ ԿՆՈՋ ՉԱՅՆԸ (սենյակի խորքից).**— Մե՛զ են ուզում:

- ԸՆԴՐԱՆԾԵՐՈՒԿ (շրջվելով դեպի կիճը, որը չի երևում հանդիսա-  
տեսին).— Մյուսին եմ ուզում:
- ԸՆԴՐԱՆԾԵ (բախելով).— Ժա՛ն:
- ՓՈՔՐՈՒԿ ԾԵՐՈՒԿ.— Ես չտեսա նրա տնից դուրս գալը: Տեսել եմ նը-  
րան երեկ երեկոյան: Ո՞նց որ թե տրամադրությունը վատ էր:
- ԸՆԴՐԱՆԾԵ.— Ես գիտեմ, թե ինչու: Իմ սխալի պատճառով:
- ՓՈՔՐՈՒԿ ԾԵՐՈՒԿ.— Գուցե չի ուզում դուրը բացել: Նորից փորձեցեք:
- ԾԵՐՈՒԿԻ ԿՆՈՋ ԶԱՅՆԸ.— Ժա՛ն, մի՛ շատախոսի՛ր, ժա՛ն:
- ԸՆԴՐԱՆԾԵ (բախելով).— Ժա՛ն:
- ՓՈՔՐՈՒԿ ԾԵՐՈՒԿ (կնոջը).— Մի վարկյան: Ա՛հ, լա՛, լա՛... (Կրկին  
փակում է դուռը և անհետանում):
- ԺԱՆ (դեռևս պառկած, թիկունքը հանդիսատեսին, խոպուտ ձայնով).—  
Ի՞նչ կա:
- ԸՆԴՐԱՆԾԵ.— Ձեզ տեսության եմ եկել, սիրելի՛ ժան:
- ԺԱՆ.— Այդ ո՞վ է:
- ԸՆԴՐԱՆԾԵ.— Ես՝ Բերանժեն: Ձեզ չե՞մ խանգարում:
- ԺԱՆ.— Ահ, դո՞ւք եք: Ներս մտեք:
- ԸՆԴՐԱՆԾԵ (փորձելով բացել).— Դուռը փակ է:
- ԺԱՆ.— Մի վարկյան: Ահ, լա՛, լա՛... (Ժանը վեր է կենում, իրոք, բա-  
վականին վատ տրամադրությամբ: Հագին կանաչ գիշերազգեստ  
է, մազերը խոնված են): Մի վարկյան: (Բանալին շրջում է փա-  
կանի մեջ): Մի վարկյան: (Գնում, նորից պառկում է, մտնում  
ծածկոցի տակ, ինչպես առաջ): Մտեք:
- ԸՆԴՐԱՆԾԵ (ներս մտնելով).— Բարև, ժա՛ն:
- ԺԱՆ (անկողնուց).— Ժամը քանի՞սն է: Ձե՞ք գնացել աշխատանքի:
- ԸՆԴՐԱՆԾԵ.— Դեռ պառկա՞ծ եք: Ձե՞ք գնացել աշխատանքի: Ներե-  
ցեք, գուցե ես ձեզ խանգարում եմ:
- ԺԱՆ (դեռևս թիկունքը շրջած).— Հետաքրքիր է. ձեր ձայնը չճանա-  
չեցի:
- ԸՆԴՐԱՆԾԵ.— Ես նույնպես ձեր ձայնը չճանաչեցի:
- ԺԱՆ (դեռևս թիկունքը շրջած).— Նստեցե՛ք:
- ԸՆԴՐԱՆԾԵ.— Դուք հիվա՞նդ եք: (Բերանժեն պատասխանում է զոմը-  
րոցով): Գիտե՞ք, ժա՛ն, իմ կողմից հիմարություն էր ձեզ հետ խո-  
վել այդպիսի պատմության համար:
- ԺԱՆ.— Ի՞նչ պատմություն:
- ԸՆԴՐԱՆԾԵ.— Երևի...
- ԺԱՆ.— Երեկ ե՞րբ: Որտե՞ր երեկ:
- ԸՆԴՐԱՆԾԵ.— Դուք մոռացե՞լ եք: Ախր այն ոնգեղջյուրի կապանջու-

թյամբ, այն տարաբախտ ռնգեղջյուրի:

ԺԱՆ.— Ի՞նչ ռնգեղջյուր:

ԲԵՐԱՆԺԵ.— Ռնգեղջյուրը կամ եթե կուզեք այն երկու տարաբախտ ռնգեղջյուրները, որոնց նկատեցինք:

ԺԱՆ.— Ա՛հ, այո, հիշում եմ... Ձեզ ո՞վ ասաց, որ այդ երկու ռնգեղջյուրները տարաբախտ էին:

ԲԵՐԱՆԺԵ.— Դե, դա արտահայտվելու ձև է:

ԺԱՆ.— Լավ: Էլ չխոսե՞ք այդ մասին:

ԲԵՐԱՆԺԵ.— Դուք բարեհաճ եք:

ԺԱՆ.— Է՛հ, հետո՞:

ԲԵՐԱՆԺԵ.— Այնուամենայնիվ, ես հարկ եմ համարում հայտնելու, որ գոչում եմ, որ պնդել եմ... կատաղորեն, համառորեն... գայրացկոտ... այո, կարճ ասած... ես հիմարություն եմ արել:

ԺԱՆ.— Ձեր կողմից դա ամենևին էլ զարմանալի չէ:

ԲԵՐԱՆԺԵ.— Ներեցե՛ք:

ԺԱՆ.— Ես ինձ լավ չեմ զգում: (**Հագում է**):

ԲԵՐԱՆԺԵ.— Անկասկած, ադ է պատճառը, որ դուք ընկել եք անկողին: (**Փոխելով խոսելակերպը**): Գիտե՛ք, ժա՛ն, մենք երկուսս էլ իրավացի էինք:

ԺԱՆ.— Ինչի՞ վերաբերյալ:

ԲԵՐԱՆԺԵ.— Նույն բանի... վերաբերյալ: Եվս մի անգամ ներեցեք ինձ, որ վերստանում եմ այդ խնդրին. ես երկար չեմ խոսելու այդ մասին: Հարկ եմ համարում ձեզ ասելու, սիրելի՛ ժան, որ մեզանից ամեն մեկը, յուրովի, երկուսս էլ իրավացի էինք: Հիմա դա ապացուցված է: Քաղաքում կան երկկոտոշանի ռնգեղջյուրներ ինչպես և միակոտոշ ռնգեղջյուրներ:

ԺԱՆ.— Ես էլ հենց այդ էի ասում: Դե լավ, հերճ էլ անիծած:

ԲԵՐԱՆԺԵ.— Այո, հերճ էլ անիծած:

ԺԱՆ.— Կամ էլ թե սովելի լավ. նայած թե ինչ տեսակետից:

ԲԵՐԱՆԺԵ (**շարունակելով**).— Որտեղի՞ց են գալիս առաջինները. որտեղի՞ց են գալիս մյուսները, կամ թե՛ որտեղի՞ց են գալիս մյուսները ու որտեղի՞ց են գալիս առաջինները՝ դա քիչ նշանակություն ունի ուտ էություն ունի, քանզի...  
Ինձ համար կարևորն այն է, որ ռնգեղջյուրն ինքնին գոյություն ունի, քանզի...

ԺԱՆ (**շրջվելով, նստում է խառնափնջոր անկողնում՝ դեմքը դարձրած դեպի Բերանժեն**).— Ես ինձ լավ չեմ զգում: Ես ինձ լավ չեմ զգում:

ԲԵՐԱՆԺԵ.— Ծառ ցավալի է: Բարց ի՞նչ է պատահել:



- ՈՒՆ.— Չեմ էլ կարողանում հասկանալ: Վատ զգացողություն, վատ զգացողություններ...
- ԼԵՐԱՆԺԵ.— Թուլություններ:
- ՈՒՆ.— Ամենևին: Ընդհակառակը, մեջս եռում է:
- ԼԵՐԱՆԺԵ.— Ես նկատի ունեմ... անցողիկ թուլություն: Դա բոլորի հետ էլ պատահում է:
- ՈՒՆ.— Ինձ հետ՝ երբեք:
- ԼԵՐԱՆԺԵ.— Այդ դեպքում գուցե առողջության գերշատություն: Անչափ շատ եռանդը երբեմն նույնպես վատ է: Խախտում է նյարդային համակարգի հավասարակշռությունը:
- ՈՒՆ.— Ես կատարելապես հավասարակշռված եմ: **(Փանի ձայնը աստիճանաբար խոպոտվում է):** Ես հոգով-մարմնով առողջ եմ: Իմ ծառանգականությունը...
- ԼԵՐԱՆԺԵ.— Իհարկե, իհարկե: Այնուամենայնիվ, գուցե մրսել եք. ջերմություն ունե՞ք:
- ՈՒՆ.— Չգիտեմ: Այո, անկասկած մի քիչ ջերմություն ունեմ: Գլուխս ցավում է:
- ԼԵՐԱՆԺԵ.— Մի փոքր գլխացավ: Եթե ուզում եք, ես հեռանամ:
- ՈՒՆ.— Մնացեք: Դուք ինձ չեք խանգարում:
- ԼԵՐԱՆԺԵ.— Դուք նաև խոպոտել եք:
- ՈՒՆ.— Խոպոտե՞լ եմ:
- ԼԵՐԱՆԺԵ.— Այո, մի քիչ խոպոտել եք: Հենց այդ պատճառով էր, որ ձեր ձայնը չէի ճանաչում:
- ՈՒՆ.— Ես ինչո՞ւ պիտի խոպոտած լինեմ: Չայնս չի փոխվել. ավելի շատ՝ այդ ձերն է փոխվել:
- ԼԵՐԱՆԺԵ.— Ի՞նչ:
- ՈՒՆ.— Ինչո՞ւ չէ:
- ԼԵՐԱՆԺԵ.— Հավանական է: Ես այդ չէի զգացել:
- ՈՒՆ.— Դուք այդ ի՞նչ եք կարողանում զգալ, որ... **(Չեռքը ճակատին դնելով):** Հենց ճակատս է, որ հատկապես ցավում է: Անկասկած, ես այն մի տեղ խփել եմ: **(Չայնը էլ ավելի շատ է խոպոտվում):**
- ԼԵՐԱՆԺԵ.— Այդ երբ եք խփել:
- ՈՒՆ.— Չգիտեմ: Չեմ հիշում:
- ԼԵՐԱՆԺԵ.— Պիտի որ ցաված լինի:
- ՈՒՆ.— Գուցե քնած ժամանակ եմ խփել:
- ԼԵՐԱՆԺԵ.— Այդ դեպքում հարվածը ձեզ պետք է արթնացրած լիներ: Դուք, անկասկած, երազում պարզապես տեսել եք, որ ձեր գլուխը սրտին էք տալիս:

ԺԱՆ.— Ես երբեք երազ չեմ տեսնում...

**ԲԵՐԱՆԺԵ (շարունակելով).**— Գլխացալը սկսվել է քնած ժամանակ. դուք մոռացել եք, որ երազ եք տեսել կամ ավելի շուտ՝ առ մասին հիշում եք անգիտակցաբար:

ԺԱՆ.— Ե՞ս, անգիտակցաբար: Ես տերն եմ իմ Վոքերի, ես ինձ ինքնահոսի չեմ մատնում: Ուղիղ եմ գնում: Ես միշտ ուղիղ եմ գնում:

**ԲԵՐԱՆԺԵ.**— Ես այդ գիտեմ: Խոսքս չկարողացա հասկանալի ձևակերպել:

ԺԱՆ.— Արտահայտվեցեք ավելի պարզ: Կարիք չկա ինձ տհաճ բանն ասելու:

**ԲԵՐԱՆԺԵ.**— Երբ գլխացալ ենք ունենում, մեզ հաճախ թվում է, որ մեր գլուխը պատհն ենք տվել: **(Ժանին մոտենալով):** Եթե մի տեղ խիստ լինեիք, հիմա պիտի որ ուռուցք ունենայիք: **(Ժանին նայելով):** Այո, ահա դուք մեկն ունեք. դուք, իրոք, մի ուռուցք ունեք:

ԺԱՆ.— Ուռուցք:

**ԲԵՐԱՆԺԵ.**— Ծառ փոքրիկ:

ԺԱՆ.— Որտե՞ղ:

**ԲԵՐԱՆԺԵ (Ժանի նակատը ցույց տալով).**— Ահավասիկ. ցցվում է ճիշտ ձեր քթի վերևում:

ԺԱՆ.— Ես ամենևին ուռուցք չունեմ: Իմ ընտանիքում երբեք չեն ունեցել:

**ԲԵՐԱՆԺԵ.**— Այստեղ հայելի ունե՞ք:

ԺԱՆ.— Ահ, այս ի՞նչ փորձանք էր՝ եկավ իմ գլխին: **(Ճակատը շփելով):** Եվ սակայն, իրոք, կա: Գնամ նայեմ լողասենյակում: **(Հանկարծակի վեր է թռչում և ուղղվում դեպի լողասենյակը: Բերանժեն հայացքով հետևում է նրան: Լողասենյակից):** Ծիշտ է, ես ուռուցք ունեմ: **(Վերադառնում է: Երեսի գույնը դարձել է ավելի կանաչավուն):** Տեսնում եք, որ ես իրոք ճակատս մի տեղ խփել եմ:

**ԲԵՐԱՆԺԵ.**— Ձեր տեսքը հիվանդագին է: Ձեր երեսի գույնը կանաչավուն է:

ԺԱՆ.— Ձեզ անչափ դուր է գալիս ինձ տհաճ բաներ ասելը: Իսկ դո՛ւք, դո՛ւք ձեզ նայե՞լ եք հայելու մեջ:

**ԲԵՐԱՆԺԵ.**— Ներեցեք, ես չեի ուզում ձեզ տհաճություն պատճառել:

ԺԱՆ **(շատ սրտնեղած).**— Ձեի ասի:

**ԲԵՐԱՆԺԵ.**— Ձեր շնչառությունը շատ է աղմկոտ: Ձեր կոկորդը ցավո՞ւմ է: **(Ժանը նորից գնում, նստում է անկողնում):** Ձեր կոկորդը ցավո՞ւմ է: Գուցե անգինա է:

ԺԱՆ.— Ես ինչո՞ւ պիտի անգինա ունենամ:

ԲԵՐԱՆԺԵՆ.— Դա ամոթալի չէ: Ես էլ մի քանի անգամ անգիմա եմ ունեցել: Թույլ տվեք ստուգել ձեր զարկերակը: (Բերանժեն տեղից վեր կենում, որ մոտենա, ստուգի ժանի զարկերակը):

ԺԱՆ (էլ —ավելի խոսքոտ ձայնով).— Օ՛հ, կանցնի:

ԲԵՐԱՆԺԵՆ.— Զարկերակը համարյա կանոնավոր է: Մի վախեցեք:

ԺԱՆ.— Ես ամենևին էլ վախեցած չեմ: Եվ ինչի՞ց պիտի վախենամ, որ...

ԲԵՐԱՆԺԵՆ.— Դուք իրավացի եք: Մի քանի օր կհանգստանաք, և ամեն բան ինչ կանցնի:

ԺԱՆ.— Ես ժամանակ չունեմ հանգստանալու: Սնունդս պետք է հայթայթեմ:

ԲԵՐԱՆԺԵՆ.— Ձեր հիվանդությունը ծանր չէ, քանի որ քաղցած եք: Սակայն, դուք, այնուամենայնիվ, մի քանի օր պետք է հանգրստանաք: Զգուշությունը լավ բան է: Բժիշկ հրավիրե՛լ եք:

ԺԱՆ.— Ես բժշկի կարիք չունեմ:

ԲԵՐԱՆԺԵՆ.— Ունեք: Պետք է բժիշկ հրավիրեք:

ԺԱՆ.— Դուք բժիշկ չպիտի հրավիրեք, քանի որ ես չեմ ուզում բժիշկ հրավիրել: Ես ինքս ինձ խնամում եմ:

ԲԵՐԱՆԺԵՆ.— Դուք իրավացի չեք, երբ չեք հավատում բժշկությանը:

ԺԱՆ.— Բժիշկները հորինում են հիվանդություններ, որոնք գոյություն չունեն:

ԲԵՐԱՆԺԵՆ.— Բարի նպատակով են առաջնորդվում: Այդ անում են մարդ կանց խնամելու ցանկությունից դրդված:

ԺԱՆ.— Երանք հիվանդությունները հորինում են: Հիվանդությունները հորինում են:

ԲԵՐԱՆԺԵՆ.— Գուցե և հորինում են: Բայց նրանք բուժում են իրենց հորինած հիվանդությունները:

ԺԱՆ.— Ես հավատում եմ միայն անասնաբույժներին:

ԲԵՐԱՆԺԵՆ (որը բաց էր թողել ժանի դաստակը, այն նորից բռնում է).— Ձեր երակները կարծես թե ուռչում են: Փքված են:

ԺԱՆ.— Դա ուժի նշան է:

ԲԵՐԱՆԺԵՆ.— Անշուշտ, դա առողջության և ուժի նշան է: Սակայն... (Ես —ավելի մոտիկից է զննում ժանի նախաթևը, չնայած որ վերջինիս հաջողվում է այն կատաղորեն ետ քաշել):

ԺԱՆ.— Ինձ ինչո՞ւ եք ուսումնասիրում, ինչպես հետաքրքիր անասունի:

ԲԵՐԱՆԺԵՆ.— Ձեր մաշկը...

ԺԱՆ.— Իմ մաշկը ձեզ ինչո՞ւ է անհանգստացնում: Ես ձեր մաշկով հետաքրքրվո՞ւմ եմ:

ԲԵՐԱՆԺԵ.— Կարծես թե... այո, կարծես թե ակնհայտորեն գույնը փոխում է: Կանաչում է: (Ռուզում է նորից բռնել ժանի ծեռքը): Նաև կոշտանում է:

ԺԱՆ (ձեռքը նորից ետ քաշելով).— Ինձ այդպես մի շոշափեք: Ի՞նչ եք մտցրել ձեր գլուխը: Դուք ինձ ձանձրացնում եք:

ԲԵՐԱՆԺԵ (ինքն իրեն).— Գուցե նրա վիճակն ավելի լուրջ է, քան թե կարծում էի քիչ առաջ: (Ժանին): Պետք է բժիշկ հրավիրել: (Մոտենում է հեռախոսին):

ԺԱՆ.— Հանգիստ թողեք ապարատը: (Հարձակվում է հերանժեի վրա և հրում է նրան: Բերանժեն սայթաքում է): Մի՛ խառնվեք ձեզ չվերաբերող գործերին:

ԲԵՐԱՆԺԵ.— Լավ, լավ: Ձեր օգուտի համար էր:

ԺԱՆ (հազարով ու աղմկալի շնչելով).— Ես իմ օգուտը ձեզանից լավ գիտեմ:

ԲԵՐԱՆԺԵ.— Դուք ծանր եք շնչում:

ԺԱՆ.— Ինչպես կարողանում եմ, այնպես էլ շնչում եմ: Դուք իմ շրնջելու ձևը չեք սիրում, ես էլ՝ ձերը: Դուք շատ թույլ եք շնչում: Չի էլ լավում: Կարծես ուր որ է մահանալու եք:

ԲԵՐԱՆԺԵ.— Անկասկած, ես ձեր ուժը չունեմ:

ԺԱՆ.— Արդյոք ես ձեզ ուղարկո՞ւմ եմ բժշկի մոտ, որ ուժ ներարկի: Ամեն մեկն իր ուզածն է անում:

ԲԵՐԱՆԺԵ.— Զայրույթով մի լցվեք իմ նկատմամբ: Դուք հո լավ գիտեք, որ ես ձեր բարեկամն եմ:

ԺԱՆ.— Բարեկամություն գոյություն չունի: Ես չեմ հավատում ձեր բարեկամությանը:

ԲԵՐԱՆԺԵ.— Դուք ինձ վշտացնում եք:

ԺԱՆ.— Վշտանալու կարիք չկա:

ԲԵՐԱՆԺԵ.— Սիրելի՛ ժան...

ԺԱՆ.— Ես ձեր սիրելի ժանը չեմ:

ԲԵՐԱՆԺԵ.— Այսօր դուք իրոք մարդատյաց եք:

ԺԱՆ.— Այո, ես մարդատյաց եմ, մարդատյաց, մարդատյաց: Ինձ դուր է գալիս մարդատյաց լինելը:

ԲԵՐԱՆԺԵ.— Դուք անկասկած, դեռևս քեզ ունեք իմ նկատմամբ մեր երեկվա վիճաբանության համար: Սխալն իմն էր, ես ա՛ն ընդունում եմ: Եվ հենց այդ պատճառով էր, որ եկա ներողություն խընդրելու...

ՈՒՆՆԵՐ — Այդ ի՞նչ վիճարանության մասին է խոսքը:

ԲԵՐԱՆԺԵ.— Քիչ առաջ ես ձեզ հիշեցրի այդ մասին: Գիտե՞ք, էլի, սնգեղջյուր:

ՈՒՆՆԵՐ (առանց Բերանժեին ունկնդրելու).— Ծիշուն ասած, ես մարդկանց չեմ ասում: Անտարբեր եմ նրանց նկատմամբ կամ ավելի քան նրանք ինձ գարշանք են պատճառում: Բայց թող չհայտնըվին իմ ճանապարհին: Կտրորեմ:

ԲԵՐԱՆԺԵ.— Դուք լավ գիտե՞ք, որ ես երբեք խոչընդոտ չեմ լինի...

ՈՒՆՆԵՐ — Ինքս, ես նպատակ ունեմ: Քշում եմ մարդու վրա:

ԲԵՐԱՆԺԵ — Դուք, անշուշտ, իրալացի եք: Սակայն, ըստ իս, ընկել էք բարոյական ճգնաժամի մեջ: (Որոշ ժամանակ է, ինչ ժանր վագում է սենչակում. ինչպես վանդակն ընկած գազանը: Բերանժեին պիտում է նրան, մերթընդմերթ, թեթևակի մի կողմ է քաշվում՝ բախումից խուսափելու համար: Ժանի ձայնը հետզհետե ավելի է խոպոտվում): Մի ջղայնացեք: Մի ջղայնացեք:

ՈՒՆՆԵՐ — Ես ինձ վատ էի զգում իմ շորերի մեջ, հիմա էլ նույնիսկ գիշերազգեստն է ինձ նեղում: (Բացում ու նորից կոճկում է գիշերազգեստի բաճկոնը):

ԲԵՐԱՆԺԵ.— Ահ, բայց այդ ի՞նչ է տեղի ունենում ձեր մաշկի հետ:

ՈՒՆՆԵՐ — Դարձյա՞լ իմ մաշկը: Այդ մաշկն իմն է. անշուշտ, այն չեմ փոխի ձեր մաշկի հետ:

ԲԵՐԱՆԺԵ.— Ասես կաշի լինի:

ՈՒՆՆԵՐ — Ավելի ամուր է: Ես կդիմանամ վատ եղանակների:

ԲԵՐԱՆԺԵ.— Գնալով ավելի եք կանաչում:

ՈՒՆՆԵՐ — Այսօր գունամոլությամբ եք տառապում: Տեսիլներ ունեք. դարձյալ խմել եք:

ԲԵՐԱՆԺԵ.— Երեկ խմել եմ, բայց ոչ այսօր:

ՈՒՆՆԵՐ — Գինարբուներին մի ամբողջ անցյալի արդյունքն է:

ԲԵՐԱՆԺԵ.— Ես ձեզ խոստացել էի վերադաստիարակվել, որովհետև, դուք հո լավ գիտե՞ք, որ լսում եմ ձեզ նման բարեկամների խորհուրդները: Ես ինձ նվաստացած չեմ զգում, ընդհակառակը:

ՈՒՆՆԵՐ — Թրա՛ճ, թե դուք ինչ կզգաք: Բը՛ռոռ...

ԲԵՐԱՆԺԵ.— Ի՞նչ եք ասում:

ՈՒՆՆԵՐ — Ես ոչինչ չեմ ասում: Բը՛ռոռ եմ անում... Դա ինձ զվարճացնում է:

ԲԵՐԱՆԺԵ (նայելով ժանի աչքերի մեջ).— Դուք գիտե՞ք, թե Յուլիան ի՞նչ է պատահել: Նա ոնգեղջյուր է դարձել:

ՈՒՆՆԵՐ — Ինչ է պատահել Յուլիան:

**ԲԵՐԱՆԺԵ.**— Նա ոնգեղջյուր է դարձել:

**ԺԱՆ (իրեն հով է անում գիշերազգեստի բանկոնի քղանցքով).**—  
Բը՛րոո...

**ԲԵՐԱՆԺԵ.**— Դե լա՛վ, բավական է կատակեք:

**ԺԱՆ.**— Թողեք՝ շունչ քաշեմ: Ունեմ դրա իրավունքը: Ես իմ տանն եմ:

**ԲԵՐԱՆԺԵ.**— Հակառակը չեմ պնդում:

**ԺԱՆ.**— Դուք լավ եք անում, որ ինձ չեք հակաճառում: Ես շոգում եմ, շոգում եմ: Բը՛րոո... Մի վայրկյան. ես հիմա գովանամ:

**ԲԵՐԱՆԺԵ (մինչ ժամն իրեն նետում է լողասենյակ).**— Ջերմություն ունի: (Ժամը լողասենյակում է գտնվում: Լսվում է նրա շնչառությունը, ինչպես և ջրի հոսքը ծորակից):

**ԺԱՆ (կողքից).**— Բը՛րոո...

**ԲԵՐԱՆԺԵ.**— Նա դողերոցք ունի: Հերն էլ անիծած, զանգահարեմ բժշկին: (Նորից մոտենում է հեռախոսին, ապա հանկարծակի ետ է քաշվում, երբ լսում է ժամի ձայնը):

**ԺԱՆ.**— Ուրեմն, այդ սքանչելի ծուրը ոնգեղջյուր է դարձել: Ա՛հ, ա՛հ, ա՛հ... Նա ձեզ ձեռ է անել. դիմակավորվել է: (Գլուխը դուրս է բերում լողասենյակի կիսաբաց դռնից: Նա շատ է կանաչ: Քթի վերևում ուռուցքն ավելի է խոշորացել): Դիմակավորվել է:

**ԲԵՐԱՆԺԵ (պտտվում է սենյակում, առանց ժամին նայելու).**— Ձեզ հավաստիացնում եմ, որ շատ լուրջ է այդ պարագան:

**ԺԱՆ.**— Որ այդպես է, ուրեմն, դա նրա գործն է:

**ԲԵՐԱՆԺԵ (չրջվելով դեպի ժամը, որն անհետանում է լողասենյակում).**— Նա, անկասկած, դիտավորություն չի ունեցել այդ անելու: Կերպարանափոխությունը տեղի է ունեցել նրա կամքին հակառակ:

**ԺԱՆ (կողքից).**— Դուք ի՞նչ գիտեք:

**ԲԵՐԱՆԺԵ.**— Համենայն դեպս, ամեն ինչ հանգեցնում է այդպես ենթադրելու:

**ԺԱՆ.**— Իսկ եթե նա դիտավորյալ է արե՞լ: Հը՞, իսկ եթե դիտավորյալ է արե՞լ:

**ԲԵՐԱՆԺԵ.**— Դա ինձ պիտի զարմացնեք: Համենայն դեպս, երևում էր, որ տիկին ծուրը բոլորովին անտեղյակ էր...

**ԺԱՆ (շատ խոպոտ ձայնով).**— Ա՛հ, ա՛հ, ա՛հ: Այդ շաղ տիկին ծուր: Ա՛հ, լա, լա, հիմարի մեկն է:

**ԲԵՐԱՆԺԵ.**— Հիմար թե ոչ...

**ԺԱՆ (մտնում է արագ, հանում է գիշերազգեստի բանկոնը, այն նետում է անկողնում, մինչ Բերանժեն շրջվում է պարկեշտորեն)**

- Ժամը, որի կործքն ու թիկունքը կանաչ են, նորից մտնում է լողասենյակ: Մտնելով ու դուրս գալով).— Ցուրը երբեք կնոջը տելալ չէր պահում իր ծրագրերի մասին...
- ԲԻՐԱՆԺԵ.— Մխալվում եք, ժա՛ն: Ընդհակառակը, շատ համերաշխ ընտանիք էր:
- ԲԻՆՆ.— Ծատ համերա՛շխ: Վատա՛հ եք: Հը՛մ, հը՛մ: Բը՛ոոո...
- ԲԻՐԱՆԺԵ (շաքժվելով դեպի լողասենյակը, որի դուռը ժամը շրջկաացնում է նրա քթին).— Ծատ համերաշխ: Ապացույցն այն է, որ...
- ԲԻՆՆ (մյուս կողմից).— Ցույն իր անձնական կյանքն ուներ: Նա պահել էր մի թաքուն անկյուն արտի խորքում:
- ԲԻՐԱՆԺԵ.— Ես ձեզ չպետք է խոսեցնեմ. կարծեմ, դուք դրանից վատ եք զգում:
- ԲԻՆՆ.— Ընդհակառակը, դա թուլացնում է իմ լարվածությունը:
- ԲԻՆՆԺԵ.— Թույլ տվեք բժիշկ հրավիրեմ, այնուամենայնիվ. խընդրում եմ:
- ԲԻՆՆ.— Ես ձեզ այդ բացարձակորեն արգելում եմ: Չեմ սիրում համատ մարդկանց: (Ժամը մտնում է սենյակ: Բերանձեն, փոքր-ինչ վախեցած, ընկրկում է, որովհետև ժամը էլ ավելի է կանաչել և խոսում է մեծ դժվարությամբ: Նրա ձայնն անճանաչելի է դարձել): Ուրեմն, եթե ոնգեղջյուր է դարձել, հոժարակամ թե՛ իր կամից հակառակ, թերևս դա ավելի լավ է նրա համար:
- ԲԻՐԱՆԺԵ.— Այդ ի՞նչ եք ասում, սիրելի՛ բարեկամ: Ինչպե՞ս կարող եք այդպես մտածել...
- ԲԻՆՆ.— Դուք ամենուրեք վատն եք տեսնում: Քանի որ նա հաճույք էր ցուցնում ոնգեղջյուր դառնալուց, քանի որ Շա դրանից էաճույք էր ցուցնում: Դրանում արտաոոոց ոչինչ չկա:
- ԲԻՐԱՆԺԵ.— Ինձարկե, դրանում արտաոոոց ոչինչ չկա: Եվ սակայն անպաճում եմ, որ դա նրան հաճույք պատճառելիս լինի:
- ԲԻՆՆ.— Եվ ինչո՞ւ, որ...
- ԲԻՐԱՆԺԵ.— Դժվարանում եմ ասել, թե ինչու: Դա ինքնին հասկանալի է:
- ԲԻՆՆ.— Ես ձեզ ասում եմ, որ դա այնքան էլ վատ չէ: Ի վերջո, որևէ կոստյումներ մեզ նման արարածներ են, որոնք ապրելու նույնքան խրախուճ են ունեն, որքան որ մենք:
- ԲԻՐԱՆԺԵ.— Այն պատմանով, որ նրանք մեր կյանքը չկործանեն: Դուք անպատասխանո՞ւմ եք մեր ու նրանց մտայնությունների տարբերությունը:

**ԺԱՆ** (այդ ընթացքում սենյակով մեկ գնում-գալիս է, մտնում ու դուրս է գալիս լողասենյակից).— Կարծո՞ւմ եք, թե մերը նախընտրելի է: **ԲԵՐԱՆԺԵ.**— Համենայն դեպս, մենք մեր բարոյականությունն ունենք, որն ըստ իս, անհամատեղելի է կենդանիների բարոյականության հետ:

**ԺԱՆ.**— Բարոյականությունը: Ծարունակ խոսում ենք բարոյականության մասին: Մինչև կոկորդս կշտացել եմ բարոյականությունից. գեղեցիկ է բարոյականությունը: Պետք է անցնել բարոյականությունից այն կողմ:

**ԲԵՐԱՆԺԵ.**— Ի՞նչ պիտի դնեք դրա տեղը:

**ԺԱՆ** (նույն կերպ).— Բնությունը:

**ԲԵՐԱՆԺԵ.**— Բնություն՞ընդ:

**ԺԱՆ** (նույն կերպ).— Բնությունն իր օրենքներն ունի: Բարոյականությունը հակաբնական է:

**ԲԵՐԱՆԺԵ.**— Եթե ձեզ ճիշտ եմ հասկանում, դուք բարոյական օրենքն ուզում եք փոխարինել ջունգլիի օրենքով:

**ԺԱՆ.**— Ես կապրեմ այդ օրենքին համապատասխան: Ես կապրեմ:

**ԲԵՐԱՆԺԵ.**— Դա հենց այդպես ասվում է: Բայց, ըստ էության, ոչ ոք...

**ԺԱՆ** (ընդհատելով նրան ու գնալ-գալով).— Հարկավոր է վերականգնել մեր ապրելակերպի հիմքերը: Պետք է վերադառնալ նախնական ամբողջականությանը:

**ԲԵՐԱՆԺԵ.**— Ես ձեզ հետ համաձայն չեմ ամենևին:

**ԺԱՆ** (աղմկոտ հևալով).— Ես ուզում եմ շնչել:

**ԲԵՐԱՆԺԵ.**— Խորհեցեք, վերջապես. հաշվի առեք, որ մենք ունենք փիլիսոփայություն, որ կենդանիները չունեն: Արժեքավորումների անփոխարինելի մի համակարգ: Մարդկային քաղաքակրթությունն այն կատուցել է դարերի ընթացքում:

**ԺԱՆ** (դեռևս լողասենյակում).— Կործանենք այդ ամենը: Այդպես մենք մեզ ավելի լավ կզգանք:

**ԲԵՐԱՆԺԵ.**— Ձեր ասածը ես լրջորեն չեմ ընդունում: Դուք կատուկում եք, դուք բատրում եք:

**ԺԱՆ.**— Բը՛րոռ... (Համարյա մոռնում է):

**ԲԵՐԱՆԺԵ.**— Ես չգիտեի, որ դուք ընդունակ եք բատրելու:

**ԺԱՆ** (դուրս է գալիս լողասենյակից).— Բը՛րոռ... (Նորից մոռնում է):

**ԲԵՐԱՆԺԵ.**— Ես ձեզ լավ եմ ճանաչում, այնպես, որ չեմ հավատա, որ այդ է ձեր խորին համոզմունքը: Որովհետև, ինձ նման, դուք էլ գիտեք, որ մարդը...

**ԺԱՆ** (ընդհատելով).— Մարդը... այդ բառն այլևս չկրկնեք:



Բ.ԲԱՆԺԵ.— Ես ուզում եմ ասել մարդկային արարածը, մարդկայնությունը...

ՍԼԵՆ.— Մարդկայնությունը ժամանակավրեպ է: Դուք ծիծաղելի, հնամուլ, սենտիմենտալի մեկն եք: **(Մտնում է լողասենյակ):**

Բ.ԲԱՆԺԵ.— Ի վերջո, համենայն դեպս, միտքը...

ՍԼԵՆ **(լողասենյակից)**.— Ծաբլոն դարձվածքներ: Հիմարություններ եք ասում:

Բ.ԲԱՆԺԵ.— Հիմարություններ:

ՍԼԵՆ **(լողասենյակից, շատ խոպոտ ձայնով, դժվարըմբռնելի)**.— Բացարձակապես:

Բ.ԲԱՆԺԵ.— Ես զարմանում եմ այդ լսելով ձեզանից, սիրելի՛ ժամ: Ի՞նչ է, կորցնո՞ւմ եք ձեր գլուխը: Վերջապես, դուք կուզենայի՞ք ոնգեղջյուր դառնալ:

ՍԼԵՆ.— Ինչո՞ւ չէ: Ես ձեզ նման նախապաշարված չեմ ամենևին:

Բ.ԲԱՆԺԵ.— Ավելի հստակ խոսեցեք: Ես չեմ հասկանում: Վաս եք արտասանում բառերը:

ՍԼԵՆ **(դեռևս լողասենյակից)**.— Բաց արեք ձեր ականջները:

Բ.ԲԱՆԺԵ.— Ինչպե՞ս:

ՍԼԵՆ. — Բաց արեք ձեր ականջները: Ես ասացի՝ ինչո՞ւ չդառնալ ոնգեղջյուր: Ես սիրում եմ փոփոխությունները:

Բ.ԲԱՆԺԵ.— Այդպիսի հավաստիացումներ՝ ձեր կողմից... **(Բերանձեի խոսքն ընդհատվում է, որովհետև ժամը հայտնվում է ահռելի տեսքով: Իրոք նա դարձել է բոլորովին կանաչ: Նրա ճակատի ուռուցքը համարյա դարձել է ոնգեղջյուրի կտտոջ):** Օ՛հ, դարձես թե, իրոք, դուք կորցնում եք ձեր գլուխը: **(Ժամը նետվում է դեպի իր անկողինը, գետին է շարժում ծածկոցները, քրթմընջում է կատաղած և անհասկանալի խոսքեր, արձակում է ահավոր ձայներ):** Բայց այդքան մի կատաղեք: Հանգստացեք: Դուք անհամաչելի եք դարձել:

ՍԼԵՆ **(հազիվ ըմբռնելի)**.— Ծոգ է... Ծատ է շոգ: Ոչնչացնել այդ ամենը, զգեստները. մարմինս քոր է գալիս: Զգեստներից տո՛ւ ել գալիս: **(Ցած է գցում իր գիշերազգեստի տաբատը):**

Բ.ԲԱՆԺԵ.— Այդ ի՞նչ եք անում: Անհամաչելի եք դարձել: Դուք, որ սովորաբար այնքան ամաչկոտ եք...

ՍԼԵՆ. — Ուսիճները, ճահիճները...

Բ.ԲԱՆԺԵ. — Նայեցեք իմ դեմքին: Ինձ թվում է, դուք ինձ չեք տեսնում: Ինձ թվում է, դուք ինձ չեք լսում:

ՍԼԵՆ. — Զ՛գ շատ լավ էլ լսում եմ: Զեզ շատ լավ եմ տեսնում: **(Մա-**

կատն առաջ թեքած՝ բշում է հերանժեի վրա: Վերջինս խույս է տալիս):

**ԲԵՐԱՆԺԵ.**— Զգույշ:

**ԺԱՆ** (աղմկոտ հնալով).— Ներողություն: (Հետո ամենայն արագությամբ նետվում է լողասենյակ):

**ԲԵՐԱՆԺԵ** (ձևացնում է, որ փախչում է դեպի ձախ կողմի դուռը, ապա շրջվում և ուղղվում է դեպի լողասենյակը, ժանի ետևից ստելով).

— Այնուամենայնիվ, ես հո չեմ կարող նրան թողնել այս վիճակում: Բարեկամ է, վերջապես: (**Լողասենյակից**): Ես բժիշկ պիտի հրավիրեմ: Դա անհրաժեշտ է. անհրաժեշտ է. հավատացե՛ք ինձ:

**ԺԱՆ** (**լողասենյակից**).— Ոչ:

**ԲԵՐԱՆԺԵ** (**լողասենյակից**).— Այո: Հանգստացե՛ք, ժա՛ն. Դուք ծիծաղելի եք: Օ՛հ, ձեր կոտորը բույե-բույե խոջոյ անում է... Դուք ոնգեղջյուր եք.

**ԺԱՆ.**— Ես քեզ ոտնահարելու եմ: Քեզ ոտնահարելու եմ: (**Լողասենյակում մեծ աղմուկ, մոնչոցներ, հայելու, ալկալ արարկանների գետին ընկնելու ու ջարդվելու ձայներ: Հետո հայտնվում է Բերանժեին, ահավոր վախեցած: Նա դժվարությամբ փակում է լողասենյակի դուռը, չնայած հակառակ ուղղությամբ գործող ճնշումին, որը հեշտությամբ կռահվում է**):

**ԲԵՐԱՆԺԵ** (**դուռը հրելով**).— Նա ոնգեղջյուր է, ոնգեղջյուր է: (**Բերանժեին հաջողվել է դուռը փակել: Նրա բանկոնը ծակված է ժանի կոտորով: Այն պահին, երբ Բերանժեին հաջողվել է դուռը փակել, ոնգեղջյուրի կոտորն այն ծակել է: Մինչ դուռը ցնցվում է անասունի հարասն հրումներից, մինչ լողասենյակից շարունակվում է ժխորը, և լսելի են մոնչոցներ, որոնց խառնվում են հագիվ ըմբռնելի բառեր, ինչպես՝ կատաղում են, կեղտոտ և աչլըն,— Բերանժեին նետվում է դեպի աջ կողմի դուռը**): Երբեք ես նրանից չեի սպասի: (**Բացում է դեպի սանդուղք տանող դուռը և գնում, բախում է սանդղահարթակի վրա գտնվող դուռը**): Ծե՛նքում ոնգեղջյուր կա: Ոստիկանություն կանչեցեք: (**Դուռը բացվում է**):

**ՓՈՔՐԻԿ ԾԵՐՈՒԿ** (**զուխը դուրս հանելով**).— Զեզ ի՞նչ է եղել:

**ԲԵՐԱՆԺԵ.**— Ոստիկանություն կանչեցեք: Ծե՛նքում ոնգեղջյուր կա...

**ՓՈՔՐԻԿ ԾԵՐՈՒԿԻ ԿՆՈՋ ՋԱՅՆԸ.** — Ի՞նչ կա, ժա՛ն: Ինչո՞ւ ես աղմրկում:

**ՓՈՔՐԻԿ ԾԵՐՈՒԿ** (**կնոջը**).— Զգիտեմ, ինչ է ասում: Ոնգեղջյուր է տեսել:

ԲԼԲԼԵՓԵ.— Այո, տան մեջ: Ոստիկանություն կանչեցեք:

ՓՈՐՐԻԿ ԾԵՐՈՒԿ.— Դուք էլ առիթ եք փնտրում մարդկանց անհաս-  
գրատացնելու: Այ քեզ շնորհք: (Դուռը փակում է նրա երեսին):

ԲԼԲԼԵՓԵ (իրեն նետելով դեպի սանդուղքը).— Բակապա՛ն, բակա-  
պա՛ն: Ծենքում ռնգեղջյուր կա: Ոստիկանություն կանչեցեք, բա-  
կապա՛ն: (Բացվում է բակապանի կացարանի վերևը գտնվող  
դուռը: Հայտնվում է մի ռնգեղջյուրի գլուխ): Եվս մեկը: (Բերան-  
ժեն ամբողջ թափով բարձրանում է սանդուղքի աստիճանները:  
Նա ուզում է մտնել ժանի սենյակը, տատանվում է, ապա նորից  
ուղղվում է դեպի Փոքրիկ ծերուկի դուռը: Այդ պահին բացվում է  
Փոքրիկ ծերուկի դուռը, և հայտնվում են ռնգեղջյուրների երկու  
փոքրիկ գլուխներ): Աստված իմ, երկինք: (Բերանժեն մտնում է  
ժանի սենյակը, մինչ լողասենյակի դուռը շարունակվում է ցրնց-  
վել: Բերանժեն ուղղվում է դեպի լուսամուտը, որը ի ցույց է դըր-  
ված որպես պարզ շրջանակ, բեմի առաջամասում, հանդիսատե-  
սին առերես: Նա ուժահատ է. քիչ է մնում փլվի, կարկանդակ է):  
Ա՛հ, Աստված իմ: Ա՛հ, Աստված իմ: (Նա մեծ ջանք է թափում,  
սկսում է ոտն անցկացնել լուսամուտից, համարյա անցնում է  
մուտ կողմը, այսինքն՝ դեպի դահլիճ, բայց թափով ընկրկում է,  
սրբվհետև նույն պահին այնտեղ, որտեղ տեղավորվում է նվա-  
զախումբը, ամենայն արագությամբ իրար ետևից անցնում են  
ռնգեղջյուրներ: Երևում է կոտոշների զանգվածը: Բերանժեն ա-  
բազորեն ետ է բարձրանում և մի պահ նայում է լուսամուտից):  
Հիմա մի ամբողջ հոտ կա փողոցում: Ռնգեղջյուրների մի բանակ  
ուռնատակ են տալիս պողոտան ի վար... (Նայում է բոլոր կող-  
մերի վրա): Ես որտեղի՛ց դուրս պրծնեմ: Որտեղի՛ց դուրս պրծ-  
նեմ... Եթե գոնե նրանց բավարարեք փողոցի կենտոտը: Հորդում  
են մաշթերի վրա: Որտեղի՛ց դուրս գամ: Որտեղո՛վ գնամ: (Խե-  
լագնար՝ նա ուղղվում է դեպի բոլոր դռները և դեպի լուսամուտը,  
մինչ լողասենյակի դուռը շարունակվում է ցրնցվել, և լսվում են  
ժանի մոնչոցը և անըմբռնելի հայհոյանքները: Խաղը մի առժա-  
մանակ շարունակվում է: Ամեն անգամ, երբ իր անկազմակերպ  
փախուստի հետևանքով Բերանժեն հայտնվում է ծերուկների դը-  
ռու.ն ստաջ կամ սանդուղքի աստիճաններին, նրան դիմավորում  
են մեռնչացող ռնգեղջյուրների գլուխներ, որոնք հարկադրում են  
նահանջել: Նա մի վերջին անգամ գնում է դեպի լուսամուտը և  
նստում է): Ռնգեղջյուրների մի ամբողջ հոտ: Ախր ասում էին, որ  
ես մեռնակյաց կենդանի է: Սխալ է: Պետք է վերանայել այդ տե-

սակետը: Նրանք ավերեցին պողոտայի բոլոր նստարանները: (Չեռքերն է ճմլում): Ինչպե՞ս անել: (Նորից ուղղվում է դեպի աջևալ ելքերը, բայց դարձյալ հայտնվում են ռնգեղջյուրներ, որոնց տեսքից նա նահանջում է: Երբ կրկին հայտնվում է լողասենյակի մոտ, քիչ է մնում դուռը ջարդվի: Բերանձեն իրեն նետում է դեպի խորքի պատը, որը փլվում է: Դրանից այն կողմ երևում է փողոցը: Նա փախչում է գոռալով): Ռնգեղջյուր, ռնգեղջյուր: (Աղմուկներ: Լողասենյակի դուռը ուր որ է ջարդվելու է):

## Վ ա թ ա գ ու յ թ

### ԳՈՐԾՈՂՆՈՒԹՅՈՒՆ ԵՐՐՈՐԴ

#### Դեկորացիա

Համարյա նույնը, ինչ նախորդ պատկերում: Բերանձեի սենյակն է, որը զարմանալի նման է Ժանի սենյակին: Միայն մի քանի մանրամասնություն, մեկ կամ երկու կահույք շեշտելու են, որ դա ուրիշ սենյակ է: Չախ կողմի վրա՝ սանդուղք և սանդղահարթակ: Սանդղահարթակի խորքում՝ դուռ: Չկա բակապանի կացարանը: Խորքում՝ բազմոց: Բերանձեն փռվել է բազմոցին, թիկունքը՝ դեպի հանդիսատեսը: Բազկաթոռ, փոքրիկ սեղան՝ հեռախոսով: Թերևս լրացուցիչ սեղան և աթոռ: Խորքում՝ բացված լուսամուտ: Բեմի առաջամասում՝ լուսամուտի շրջանակ: Բերանձեն պառկել է կոստյումը հագին: Գլուխը վիրակապած է: Նա պիտի որ վատ երազ տեսնելիս լինի, որովհետև քնի մեջ ցնցվում է:

ԲԵՐԱՆՁԵ.— Ոչ: (Դադար): Կոտոշները: Զգուշ կոտոշներից: (Դադար: Լսելի է աղմուկը բազմաթիվ ռնգեղջյուրների. որոնք անցնում են խորքի լուսամուտի տակից): Ոչ: (Ընկնում է հասակին՝ գալարվելով և աչքա արթնանում է: Վախեցած՝ ձեռքը դնում է ճակատին, հետո մոռեցնում է հայելուն, հանում գլխակապը, մինչ աղմուկները հեռանում են: Թերևսցած հառուչանք է արձակում, որովհետև պարզում է, որ կոտոշ չունի: Տատանվում է, գնում

դեպի բազմոցը, պառկում վրան, ապա միանգամից վեր է թռչում: Մոտենում է սեղանին, վերցնում կոնյակի մի շիշ ու բաժակ, ձևացնում է, թե լցնում է խմելու: Ապա կարճատև պաչքարից հետո, շիշն ու բաժակը նորից տեղն է դնում): Կամք է պետք: Կամք է պետք: (Նորից ուզում է գնալ դեպի բազմոցը, բայց նորից լսվում է ռնգեղջյուրների դոփյունը խորքի լուսամուտի կողմից: Բերանձեն ձեռքը դնում է սրտին): Օ՛հ: (Գնում է դեպի խորքի լուսամուտը, մի պահ նայում, ապա ջղայնությամբ փակում խորքի լուսամուտը: Աղմուկները դադարում են: Մոտենում է փոքրիկ սեղանին, մի պահ տատանվում, ապա մի շարժումով, որ նշանակում է «Հերն էլ անիծած», մի մեծ բաժակ կոնյակ է լցնում ու մի շնչով խմում: Եիշն ու բաժակը դնում է տեղը: Հազում է: Սեփական հազը կարծես տագնապ է պատճառում նրան: Նորից հազում է և ունկնդրում իր հազը: Մի վայրկյան նորից նայում է հայելուն և հազալով բացում է լուսամուտը: Վայրի գազանների հևքը ավելի ուժեղ է լսվում: Նա նորից հազում է): Ոչ, նման չէ: (Հանդարտվում է, փակում լուսամուտը, շոշափում ճակատը գլխակապից վերև, հասնում է բազմոցին, և թվում է, թե նորից քնելու է: Երևում է Դյուդարը, որը բարձրանում է սանդուղքի վերջին աստիճանները, հասնում սանդղահարթակին և բախում է Բերանձեի դուռը):

ԲԵՐԱՆԺԵ (վեր թռչելով).— Ի՞նչ կա:

ԳՅՈՒԳԱՐ.— Եկել եմ ձեզ տեսության, Բերանձե՛, եկել եմ ձեզ տեսության:

ԲԵՐԱՆԺԵ.— Այդ ո՞վ է:

ԳՅՈՒԳԱՐ.— Այդ ես եմ, ես եմ:

ԲԵՐԱՆԺԵ.— Ո՞վ է այդ ես-ը:

ԳՅՈՒԳԱՐ.— Ես՝ Դյուդարը:

ԲԵՐԱՆԺԵ.— Ահ, դուք եք: Ներս մտեք:

ԳՅՈՒԳԱՐ.— Ես ձեզ չե՞մ խանգարում: (Փորձում է բացել): Դուռը կողպված է:

ԲԵՐԱՆԺԵ.— Մի վայրկյան: Ահ, լա, լա: (Գնում է բացելու: Դյուդարը ներս է մտնում):

ԳՅՈՒԳԱՐ — Բարև, Բերանձե՛:

ԲԵՐԱՆԺԵ — Բարև, Դյուդա՛ր: Փամը քանի՞սն է:

ԳՅՈՒԳԱՐ.— Այդպես, շարունակ տանը, պատմե՜ր շափորված: Ձեզ արդեն լա՞վ եք զգում, սիրելի՛ս:

ԲԵՐԱՆԺԵ — Ներեցեք, ձեր ձայնը չճանաչեցի: (Բերանձեն բացելու

**Է նաև լուսամուտը):** Այո, այո, մի քիչ ավելի լավ է: Հուսով եմ:  
**ԴՅՈՒԴԱՐ.—** Իմ ձայնը չի փոխվել: Ես ձերը լավ ճանաչեցի:  
**ԲԵՐԱՆԺԵ.—** Ներեցեք. ինձ թվաց, որ... Իրոք ձեր ձայնը նույնն է:  
 Իմ ձայնը նույնպես չի փոխվել, այնպես չէ՞:  
**ԴՅՈՒԴԱՐ.—** Ինչո՞ւ պիտի փոխվի, որ...  
**ԲԵՐԱՆԺԵ.—** Իմ ձայնը մի քիչ... մի քիչ խոստոված չէ՞:  
**ԴՅՈՒԴԱՐ.—** Ես ամենևին այդ տպավորությունը չեմ ստանում:  
**ԲԵՐԱՆԺԵ.—** Ավելի լավ: Դուք ինձ հանգստացնում եք:  
**ԴՅՈՒԴԱՐ.—** Այդ ի՞նչ էք մտցրել ձեր գլուխը:  
**ԲԵՐԱՆԺԵ.—** Չգիտեմ: Երբեք չի իմացվի: Չայնը կարող է փոխվել:  
 Դա, ավաղ, պատահում է:  
**ԴՅՈՒԴԱՐ.—** Գուցե դուք նույնպես մրսել եք:  
**ԲԵՐԱՆԺԵ.—** Կարծում եմ, որ ոչ... Կարծում եմ, որ ոչ: Դե, նստեցեք,  
 Դյուդա՛ր, տեղավորվեցեք: Ավելի հարմար է՝ բազկաթոռին:  
**ԴՅՈՒԴԱՐ (բազկաթոռին բազմելով).—** Դուք դեռևս ձեզ լավ չե՞ք  
 զգում: Ձեր գլուխը դեռ ցավո՞ւմ է: (**Մատնացույց է անում Բե-  
 րանժեի գլխակապը**):  
**ԲԵՐԱՆԺԵ.—** Այո. գլուխս դեռ ցավում է: Բայց ուռուցք չունեմ: Ոչ մի  
 տեղ չեմ խփել... Այդպես չէ՞: (**Բարձրացնում է գլխակապը, ճա-  
 կատը ցույց է տալիս Դյուդարին**):  
**ԴՅՈՒԴԱՐ.—** Ոչ, ուռուցք չունեք: Ես, որ չեմ տեսնում:  
**ԲԵՐԱՆԺԵ.—** Ուռուցք ես երբեք չեմ ունենալու: Հույս ունեմ: Երբեք:  
**ԴՅՈՒԴԱՐ.—** Եթե ձեր ճակատը որևէ տեղ չխփեք, ինչպե՞ս պիտի  
 ունենաք, որ...  
**ԲԵՐԱՆԺԵ.—** Եթե մարդ, իրոք, գլուխը սլատին տալ չի ուզում, չի  
 տալիս:  
**ԴՅՈՒԴԱՐ.—** Անշուշտ, խնդիրն ուշադիր լինելու մեջ է: Ձեզ հետ ի՞նչ  
 է պատահում: Նյարդայնացած եք, գրգռված: Անշուշտ, ձեր գլ-  
 խացավն է պատճառը: Մի շարժվեք, և ցավը կպակասի:  
**ԲԵՐԱՆԺԵ.—** Գլխացա՛վ: Մի խոսեք գլխացավի մասի՞ն՝ Մ՛ խոսեք  
 այդ մասին:  
**ԴՅՈՒԴԱՐ.—** Հասկանալի է, որ գլխացավեր կունենաք ձեր հուզմուն-  
 քից հետո:  
**ԲԵՐԱՆԺԵ.—** Դժվարանում եմ ուշքի գալ:  
**ԴՅՈՒԴԱՐ.—** Ուրեմն, արտառոց ոչինչ չկա, որ գլխացավ ունենաք:  
**ԲԵՐԱՆԺԵ (նետվելով դեպի հայելին և բարձրացնելով գլխակապը).—**  
 Ոչ, ոչինչ... Գիտե՞ք. դա կարող է այդպես սկսվել:  
**ԴՅՈՒԴԱՐ.—** Ի՞նչը կարող է սկսվել:

- ՄԱՐՏԻՆՈՍ.— ... Ես վախենում եմ ուրիշ դառնալ:
- ՄԱՐՏԻՆՈՍ.— Հանգստացեք, վերջապես նստեցեք: Սենյակի մի ծայրից մյուսը վազելով՝ դուք ձեզ ավելի կնյարդայնացնեք:
- ՄԱՐՏԻՆՈՍ.— Այո, դուք իրավացի եք. հարկավոր է հանգիստ մնալ: (Գնում, նստում է): Դեռ ուշքի չեմ գալիս, գիտե՞ք:
- ՄԱՐՏԻՆՈՍ.— Ժանի պատճառով: Ես այդ գիտեմ:
- ՄԱՐՏԻՆՈՍ.— Այո, Ժանի պատճառով. իհարկե, նաև մյուսների հասցով:
- ՄԱՐՏԻՆՈՍ.— Ես հասկանում եմ, որ դա ձեզ ցնցել է:
- ՄԱՐՏԻՆՈՍ.— Ընդունեցեք, որ այդքանից պակասն էլ բավական էր չգլխելու հասար:
- ՄԱՐՏԻՆՈՍ.— Ի վերջո, այսպես թե այնպես, այնուամենայնիվ չափազանցներու կարիք չկա. դա դեռևս պատճառ չէ, որ դուք...
- ՄԱՐՏԻՆՈՍ.— Կուզե՞նայի ձեզ իմ տեղը տեսնել: Ժանը իմ լավագույն բարեկամն էր: Եվ այդ շեղումը, որ տեղի ունեցավ իմ աչքերի առաջ, նրա գայությունը:
- ՄԱՐՏԻՆՈՍ.— Համաձայն եմ: Հիասթափվեցիք, հասկանալի է: Էլ այդ ցավին մի մտածեք:
- ՄԱՐՏԻՆՈՍ.— Ինչպե՞ս չմտածեմ: Այդ տղան, որն այնքան մարդկային էր, մարդկայնության մեծ պաշտպան... Ո՞վ կսպասեր նրանից: Նա՛, նա՛: Հազար... հազար տարի է՝ իրար ճանաչում էինք: Երբևիցե մտքովս անգամ չէր անցնի, որ նա այդպես կարող էր ողբակերպվել: Ես նրան սպավիհում էի ավելի շատ, քան ինքս ինձ... Ի՞նչ պիտի գցեր այդ օրին, ի՞նչ:
- ՄԱՐՏԻՆՈՍ.— Դա, անկասկած, ձեր դեմ չէ, որ հատկապես ուղղված էր:
- ՄԱՐՏԻՆՈՍ.— Սակայն այդպես էր ստացվում: Մի տեսնեիք ինչ վիճակի մեջ էր ընկել... Նրա դեմքի արտահայտությունը...
- ՄԱՐՏԻՆՈՍ.— Բանն այն է, որ պատահաբար դուք էիք գտնվում նրա տանը: Ձեր տեղը, ով էլ որ լիներ, հետը նույն կերպ պիտի վարվեր:
- ՄԱՐՏԻՆՈՍ.— Իմ ներկայությամբ նա պիտի որ իրեն զսպեր՝ նկատի ունենալով մեր համատեղ անցյալի տարիները:
- ՄԱՐՏԻՆՈՍ.— Կարծում եք՝ դո՞ւք եք աշխարհի կենտրոնը: Կարծում եք՝ ամեն ինչ, որ պատահում է, անձնապես ձե՞զ է վերաբերում: Կարո՞հո տիեզերական թիրախը չեք:
- ՄԱՐՏԻՆՈՍ.— Թերևս դուք ճիշտ եք: Ես կաշխատեմ ինձ խելքի բերել: Սակայն երևույթն ինքնին տազնապալի է: Ինձ, ճիշտն ա-

սած, դա տակնուվրա է անում: Ի՞նչ բացատրություն տալ այս ամենին:

ԴՅՈՒԴԱՐ.— Առայժմ, ես դեռ չեմ գտնում բավարար բացատրություն: Միայն փաստերն են հաստատում, արձանագրում են: Դա գոյություն ունի, ուրեմն, պիտի որ բացատրելի լինի: Բնության հետաքրքիր դրսևորումներ, տարօրինակություններ, արտաոռոց դեպքեր՝ մի խաղ, ո՞վ իմանա:

ԲԵՐԱՆԺԵ.— Ժամը շատ էր գոռոզ: Ինքս՝ ես փառասիրություն չունեմ: Ես գոհանում եմ նրանով, ինչ որ կամ:

ԴՅՈՒԴԱՐ.— Գուցե նա սիրում էր մաքուր օդը, գյուղական միջավայրը, տարածությունը... Գուցե կարիք ուներ թուլացնելու իր սեփական լարվածությունը: Ես այդ չեմ ասում նրան արդարացնելու համար...

ԲԵՐԱՆԺԵ.— Ես ձեզ հասկանում եմ, վերջապես փորձում եմ հասկանալ: Սակայն եթե նույնիսկ ինձ մեղադրեին, որ գուրկ եմ սպորտային ոգուց կամ թե մանր քաղթենի եմ, որը մեկուսացել է իր նեղ ու փակ աշխարհում, ապա միևնույն է՝ ես կմնամ իմ դիրքերում:

ԴՅՈՒԴԱՐ.— Մենք բոլորս նույնն ենք մնալու, իհարկե: Ուրեմն, ինչո՞ւ եք անհանգստանում ոնգեղջյուրախտի մի քանի դեպքերի համար: Դա կարող է լինել նաև հիվանդության տեսակ:

ԲԵՐԱՆԺԵ.— Հենց բանն էլ այն է, որ ես վախենում եմ վարակվելուց:

ԴՅՈՒԴԱՐ.— Օ՛հ, մի մտածեք այդ մասին: Իրոք, դուք շատ կք նշանակություն տալիս իրողությանը: Ժանի օրինակը ախտորոշային չէ, օրինաչափ չէ: Դուք ինքներդ ասացիք, որ Ժամը գոռոզ էր: Ըստ իս, ներեցեք, որ վատաբանելու եմ ձեր բարեկամին, նա ջղագրգիռ էր, մի քիչ վայրենի, արտաոռոց. ինքնատիպ մարդկանց չէ, որ պետք է նկատի ունենալ: Միջինն է, որ պետք է հաշվի առնել:

ԲԵՐԱՆԺԵ.— Ուրեմն, պարզվում է, թե ինչը ինչոց է: Տեսնո՞ւմ եք, չէիք կարողանում բացատրել կրկույթը: Դե, խնդրեմ, դուք ինձ տալիս եք ընդունելի բացատրություն: Այո, նման վիճակի մեջ ընկնելուց առաջ նա, անշուշտ, եղել է ճգնաժամի մեջ՝ խելագարության մի նուպա... Եվ սակայն նա փաստարկներ ուներ: Երևում էր, որ նա խորհել է Ռարցի շուրջ, հասունացրել է իր որոշումը... Սակայն Տո՞ւլը, Տուլը, արդյոք նա՞ էլ խելագար էր... Բա մյուսները, մյուսները...



- ԳՆՈՒԳԱՐ.— Մնում է համաճարակի վարկածը: Դա նման է գրիպին: Եղել են, չէ՞, նախկինում համաճարակներ:
- ԲԵՐԱՆԺԵ.— Բայց դրանք երբեք նման չեն եղել այս մեկին: Եվ դա գաղութներից էր գալիս:
- ԳՆՈՒԳԱՐ.— Համենայն դեպս, դուք չեք կարող պնդել, որ Յուլը և մյուսները նույնպես արեցին, ինչ որ արեցին կամ դարձան, ինչ որ դարձան՝ հատկապես ձեզ անհանգստացնելու համար: Նրանք իրենք իրենց այդքան նեղություն չէին տա:
- ԲԵՐԱՆԺԵ.— Ծիշտ է. խելքի մոտ է այն, ինչ որ դուք ասում եք. սրբտիցս մի քար ընկավ... կամ գուցե ընդհակառակը, էլ ավելի ծանրացավ: (Լսելի են դառնում ոնգեղջյուրների աղմուկներ, որոնք արշավում են խորքի լուսամուտի տակով): Ահա, լսո՛ւմ եք: (Նետվում է դեպի լուսամուտը):
- ԳՆՈՒԳԱՐ.— Դե, նրանց հանգիստ թողեք: (Բերանժեն փակում է լուսամուտը): Ձեզ ինչո՞վ են խանգարում: Իսկապես, դուք նրանց կողմից հալածվելու մտամոլությամբ եք տառապում: Դա լավ չէ: Դուք քայքայում եք ձեր նյարդային համակարգը: Դուք մի ցնցում ունեցաք, հասկանալի է: Էլ մի փնտրեք ուրիշ ցնցումներ: Հիմա, սարգսպես մի քիչ ջանք թափեք կազդուրվելու համար:
- ԲԵՐԱՆԺԵ.— Ինձ մտահոգում է, թե արդյոք ախտարգելակում ձեռք բերե՞լ եմ, թե՞ ոչ:
- ԳՆՈՒԳԱՐ.— Այսպես թե այնպես, դա մահացու չէ: Հիվանդություններ կան, որոնք առողջարար են: Ես համոզված եմ, որ ցանկության դեպքում կարելի է բուժվել: Դա նրանց մոտ անցողիկ երեվույթ է...
- ԲԵՐԱՆԺԵ.— Անտարակույս, դա պետք է, որ հետքեր թողնի: Օրգանիզմի հավասարակշռության այդպիսի խախտումը չի կարող մտնայ անհետևանք...
- ԳՆՈՒԳԱՐ.— Անցողիկ է: Մի մտահոգվեք:
- ԲԵՐԱՆԺԵ.— Դուք համոզվա՞ծ եք դրանում:
- ԳՆՈՒԳԱՐ.— Ես դրան հավատում եմ, այո, ես այդ ենթադրում եմ:
- ԲԵՐԱՆԺԵ.— Բայց եթե մարդ, իրոք, չի ցանկանում, այնպես չէ՞, եթե մարդ, իրոք, չի ցանկանում տեր դառնալ այդ ցավին, որը նյարդային է, ուրեմն, ես չի վարակվում, չի վարակվում... Ուզո՞ւմ եք՝ սի բաժակ կոնյակ: (Ծարժվում է դեպի այն սեղանը, որի վրա գտնվում է շիշը):
- ԳՆՈՒԳԱՐ.— Մի անհանգստացեք: Ես չեմ խմում: Ծնորհակալություն: Թե բանը դրան է հասել և ուզում եք խմել, խմեցեք: Ինձ նկատի

մի ատէք, բայց զգույշ, հետո ավելի ուժեղ գլխացավ եք ունենալու:

**ՔԵՐԱՆՑԵ.**— Ալկոհոլը լավ է բոլոր համաճարակների դէմ: Ախտաբժելակում եք ձեռք բերում: Օրինակ, գրիպի մանրէներն սպանվում են:

**ԴՅՈՒԴԱՐ.**— Բայց չեն սպանվում բոլոր հիվանդությունների բոլոր մանրէները: Բնագեղջյուրախտի համար դա չի իմացվի:

**ՔԵՐԱՆՑԵ.**— Ժանը երբեք ալկոհոլային խմիչք չէր օգտագործում: Նա հավակնություն ուներ, որ օգտագործում է: Թերևս այդ պատճառով է, որ նա... Թերևս այդ է, որ բացատրում է նրա դիրքորոշումը: (Լիքը մի բաժակ պարզում է Դյուդարիէ): Իրոք չե՞ք ուզում:

**ԴՅՈՒԴԱՐ.**— Ոչ, ոչ. նախքան նախաճաշը՝ երբեք: Ծնորհակալություն: **ՔԵՐԱՆՑԵ** (դատարկում է բաժակը. շիշը նույնպես նա շարունակում է պահել իր ձեռքում: Հագում է):

**ԴՅՈՒԴԱՐ.**— Տեսնո՞ւմ եք, տեսնո՞ւմ եք. չեք դիմանում, ձեզ հազացնում է:

**ՔԵՐԱՆՑԵ** (տազնապաժ).— Այո, ինձ հազացնում է: Ինչպե՞ս եղավ, որ հազացի:

**ԴՅՈՒԴԱՐ.**— Ինչպես բոլորը, երբ խմում են ինչ-որ թունոյ ըմպելիք: **ՔԵՐԱՆՑԵ** (շիշն ու բաժակը տանելով դեպի սեղանը).— Այո, հազը տարօրինակ չէ՞ր: Մի՞թե իսկապես մարդկային հազ էր:

**ԴՅՈՒԴԱՐ.**— Ի՞նչ եք ձվի մեջ մազ որոնում: Իսկապես մարդկային հազ էր: Ուրիշ ի՞նչ հազ կարող էր լինել:

**ՔԵՐԱՆՑԵ.**— Չգիտեմ... Թերևս կենդանու հազ... Բնագեղջյուրն արդյոք հազո՞ւմ է:

**ԴՅՈՒԴԱՐ.**— Բավական է, Բերանժե՛, ծիծաղելի եք դառնում: Ինքներդ ձեզ համար պրոբլեմներ եք ստեղծում: Ինքներդ ձեզ անհեթեթ հարցեր եք տալիս... Ձեզ հիշեցնեմ, որ այդ դուք էիք նրկատում, որ երևույթից պաշտպանվելու լավագույն միջոցը ուժեղ կամք ունենալն է:

**ՔԵՐԱՆՑԵ.**— Այո, իհարկե:

**ԴՅՈՒԴԱՐ.**— Դե, ուրեմն, ապացուցեք, որ ուժեղ կամքի տեր մարդ եք:

**ՔԵՐԱՆՑԵ.**— Ես ձեզ հավաստիացնում եմ, որ այդպիսին եմ...

**ԴՅՈՒԴԱՐ.**— ... Ապացուցեք ինքներդ ձեզ, խնդրեմ, նախ՝ կոնյակ մի խմեք այսուհետև... Դրանով իսկ կդառնաք ավելի ինքնավստահ:

**ՔԵՐԱՆՑԵ.**— Դուք չեք ուզում ինձ հաւկանալ: Ես ձեզ կրկնում եմ,

որ դա ինձ փրկում է վատթարից. այդ է պատճառը, որ ես խմում եմ: Այո, նախօրոք հաշվված է: Երբ այլևս չի լինի համաճարակ, ես կդադարեմ խմելուց: Ես արդեն ընդունել էի այդ որոշումը դեռ նախքան իրադարձությունները: Ես այդ որոշման իրագործումը նետաձգում եմ ժամանակավորապես:

Վ.ՅՈՒԳԱՐ.— Ինքներդ ձեզ արդարացնելու միջոցներ եք գտնում:

Բ.ԲԱՆԺԵ.— Ահ, այո. այդպե՛ս եք կարծում... Համենայն դեպս, դա ոչ մի կապ չունի տեղի ունեցող իրադարձությունների հետ:

Վ.ՅՈՒԳԱՐ.— Ո՞վ իմանա:

Բ.ԲԱՆԺԵ (վախեցած).— Դուք, իրոք, այդպե՛ս եք կարծում: Հալա-տացած եք, որ դա հող է նախապատրաստում: Ես հարբեցող չեմ: (Մոտենում է հսպելուն, իրեն զննում է): Արդյոք պատահա-բար... (Ձեռքը դնում է դեմքին, շոշափում է ճակատը գլխակա-պից վերև): Ոչինչ չի փոխվել: Դա ինձ ցավ չի պատճառում, դրանով իսկ սպացուցվում է, որ լավ է ներագրում կամ առնը-վազն անվնաս է:

Վ.ՅՈՒԳԱՐ.— Դե լավ, ես կատակում էի, Բերանժե՛: Ձեր հոգու հետ լի խաղում: Ամեն ինչին նայում եք սև ակնոցով: Ներաստենիկ էր դառնալու, զգույշ: Երբ բոլորովին ազատված կլինեք ցնցումի նետանքներից, դեպրեսիայից, այն ժամանակ կկարողանաք տը-նից դուրս գալ՝ մաքուր օդի, և ամեն ինչ լավ կլինի: Կտեսնեք, որ այդպես էլ լինելու է: Ձեր մոայլ մտքերը խօսք են ցնդելու:

Բ.ԲԱՆԺԵ.— Դո՛ւրս գալ տնից: Պիտի որ անհրաժեշտ լինի: Ես վա-րձում եմ առջ առաջից: Ես, անցուշտ, պիտի հանդիպեմ...

Վ.ՅՈՒԳԱՐ.— Եվ այդ դեպքո՞ւմ: Խուսափեցեք նրանց ճանապարհին Եստոնիայում: Նրանք, ի դեպ, այնքան էլ շատ չեն:

Բ.ԲԱՆԺԵ.— Ես միայն նրանց է, որ տեսնում եմ: Պիտի ստեք, որ սա հիվանդագին է իմ կողմից:

Վ.ՅՈՒԳԱՐ.— Նրանք չեն հարձակվում ձեզ վրա: Եթե նրանց հան- լիստ թողնեք, ձեր գոյությունն անգամ չե՞ն նկատի: Ըստ էության սա էլ չեն: Դրանց մեջ կա նույնիսկ մի բնական անմեղություն, սա միամտություն: Ի դեպ, ես ինքս ամբողջ պողոտան ոտքով անցած ձեզ մոտ գալու համար: Տեսնո՞ւմ եք՝ ողջ առողջ եմ, և ես ձեռքս մի անախորժություն չի պատահել:

Բ.ԲԱՆԺԵ.— Նրանց տեսնելն իսկ բավական է, որ հոգիս տակնու- վրա լինի: Դա ինձ նյարդայնացնում է: Ինձ չի զայրացնում, ո՛չ, ի կարելի զայրանալ. դա կարող է հեռուն տանել: Չայրույթի ամոլիկայ ես ձեռնպահ եմ մնում: Բայց ես այստեղ բան եմ զգում:

**(Սիրտն է ցույց տալիս):** Սիրտս ճնշվում է:

**ԴՅՈՒԴԱՐ.**— Մինչև մի որոշ աստիճան՝ դուք իրավունք ունեք զգալուն լինելու: Սակայն դուք ձեզ շատ եք բարձիթող անում: Ձեզ հումորի զգացումն է պակասում. ահա ձեր թերությունը: Ձեզ հումորի զգացումն է պակասում: Երևույթներին թեթև պետք է մոտենաք, մի տեսակ անտարբեր:

**ՔԵՐԱՆՓԵ.**— Ես ինձ պարտավորված եմ զգում այն ամենի նկատմամբ, որ տեղի է ունենում: Ես մասնակից եմ դառնում. չեմ կարողանում անտարբեր մնալ:

**ԴՅՈՒԴԱՐ.**— Մի դատեք ուրիշներին, եթե չեք ուզում, որ ձեզ դատեն: Եվ հետո՝ եթե սրտի մոտ ընդունեինք այն ամենը, ինչ տեղի է ունենում, էլ չէինք կարողանա սպրել:

**ՔԵՐԱՆՓԵ.**— Եթե դա տեղի ունենար ուրիշ տեղ, ուրիշ երկրում, և այդ մասին թերթերից իմանայինք, ապա կարելի պիտի լիներ հանգիստ վիճել նյութի շուրջը, հարցը քննել բոլոր կողմերից, հանգել օբյեկտիվ եզրակացությունների: Կկազմակերպեինք ակադեմիական բանավեճեր, կհրավիրեինք գիտնականների, գրողների, իրավաբանների, գիտնական կանանց, արվեստագետներին: Փողոցի պատահական մարդկանց՝ նույնպես: Դա կլիներ հետաքրքիր, խոսվահույզ, ուսանելի: Բայց երբ ինքներդ եք իրադարձության բովերի մեջ, երբ միանգամից հայտնվում եք կոպիտ իրողության փաստերի առաջ, հնարավոր չէ չզգալ, որ դա ուղղակիորեն ձեզ է վերաբերում. անակնկալը շատ է դաժան, որ հնարավոր լինի պահպանել սառնասրտությունը: Ինձ համար անակնկալ է, անակնկալ, անակնկալ: Ուշքի չեմ գալիս:

**ԴՅՈՒԴԱՐ.**— Ինձ համար նույնպես եղավ անակնկալ, ինչպես ձեզ համար: Բայց եղավ անցավ: Ես արդեն սկսում եմ ընտելանալ:

**ՔԵՐԱՆՓԵ.**— Ձեր նյարդային համակարգն ավելի հավասարակշռված է, քան իմը: Ծնորհավորում եմ: Բայց դուք չե՞ք գտնում, որ զրգրահատություն է...

**ԴՅՈՒԴԱՐ (նրան ընդմիջելով).**— Ես հաստատապես չեմ ասում, որ դա բարիք է: Եվ չկարծեք, որ էս է սրտե ոնգեղջյուրների՞ կուսակից եմ... (Ռնգեղջյուրների նոր աղմուկներ, որոնք այս անգամ անցնում են նախաբեմի լուսամուտի տակով):

**ՔԵՐԱՆՓԵ (ցնցվելով).**— Ահա և նրանք՝ նորից: Ահա և նրանք՝ նորից: Ա՛հ, ոչ ճար չկա: Ինքս՝ ես չեմ կարողանում ընտելանալ: Քույրե՛ իրավացի չեմ: Նրանք, անկախ իմ կամքից, միտքս այնքան են զբաղեցնում, որ քունս խանգարվում է: Անքնությանմբ եմ

տառապում: Յերեկներն են քնում, երբ արդեն ուժասպառ են լինում:

ԳՅՈՒԳԱՐ.— Քնաքեր դեղեր ընդունեք:

ԲԵՐԱՆԺԵ.— Դա լուծում չէ: Երբ քնում են, ավելի վատ է լինում: Գիշերները երազիս են գալիս, մղձավանջներ են ունենում:

ԳՅՈՒԳԱՐ.— Այ թե ինչ է նշանակում սրտի մոտ ընդունել պատահարները: Դուք սիրում եք տանջել ինքներդ ձեզ: Խոստովանեցեք:

ԲԵՐԱՆԺԵ.— Երդվում եմ, որ ես մագոխիստ<sup>7</sup> չեմ:

ԳՅՈՒԳԱՐ.— Ուրեմն, Բարցը պարզեք ու գցեք մի կողմ: Եթե բանն այսպիսին է, ուրեմն, այլ կերպ լինել չէր կարող:

ԲԵՐԱՆԺԵ.— Դա նակատագրապաշտություն է:

ԳՅՈՒԳԱՐ.— Դա իմաստնություն է: Երբ տեղի է ունենում այսպիսի երևույթ, ուրեմն, անշուշտ, պատճառ կա, որ տեղի է ունենում: Ահա այդ պատճառն է, որ պետք է բացահայտել:

ԲԵՐԱՆԺԵ (վեր կենալով).— Դե ուրեմն, ինքս՝ ես չեմ ուզում ընդունել իրադրությունը:

ԳՅՈՒԳԱՐ.— Ի՞նչ կարող եք անել: Ի՞նչ եք մտադիր անելու:

ԲԵՐԱՆԺԵ.— Առայժմ չգիտեմ: Խորհելու եմ: Նամակներ եմ ուղարկելու թերթերին: Մանիֆեստներ եմ գրելու: Ընդունելություն եմ լսնդրելու քաղաքապետից կամ նրա տեղակալից, եթե քաղաքապետը շատ է զբաղված:

ԳՅՈՒԳԱՐ.— Թողեք իշխանություններն իրենք միջոցներ ձեռնարկեն: Վերջիվերջո, հարց է առաջանում, թե դուք բարոյապես իրավունք ունե՞ք այս գործին խառնվելու: Ի դեպ, ես շարունակում եմ մընալ այն տեսակետին, որ վտանգավոր ոչինչ չկա: Ըստ իս, անհնթեթ է գլուխը կորցնել մի քանի հոգու պատճառով, ինչ է, թե զանկացել են իրենց մաշկը փոխել: Իրենց մաշկի մեջ լավ չէին գտնում: Նրանք հո ազատ են, դա իրենց է վերաբերում:

ԲԵՐԱՆԺԵ.— Չարիքը պետք է արմատից պոկել:

ԳՅՈՒԳԱՐ.— Չարիքը, չարիքը: Դատարկ խոսք է: Արդյոք կարելի՞ է լինանալ՝ որտե՞ղ է չարիքը, որտե՞ղ է բարիքը: Մենք, անշուշտ, նախասիրություններ ունենք: Դուք հատկապես ձեզ համար եք վախենում: Այդ է ճշմարտությունը, բայց դուք երբեք չէք դատարար ունգեղջյուր, իսկապես... Դուք չունեք դրա կոչումը:

ԲԵՐԱՆԺԵ.— Ահա թե ինչ: Ահա թե ինչ: Եթե առաջնորդներն ու մեր համարադարձացիները՝ բոլորը, ձեզ նման մտածեն, ապա պիտի գրկվեն գործելու վճռականությունից:

ԴՅՈՒԴԱՐ.— Համենայն դեպս, դուք հո չեք դիմելու արտասահմանի օգնությանը: Սա ներքին գործ է: Վերաբերում է միայն մեր երկրին:

ԲԵՐԱՆԺԵ.— Ես հավատում եմ միջազգային համերաշխությանը...

ԴՅՈՒԴԱՐ.— Դուք Դոն Բիշոտ եք: Ահ, ես այդ չեմ ասում չար մըտքով. չեմ ուզում ձեզ անարգել: Ձեր լավի համար է, ինչպես՝ քանզի հաստատապես, դուք պետք է հանգստանաք:

ԲԵՐԱՆԺԵ.— Ես դրան չեմ կասկածում, ներեցեք: Ես շատ եմ տագնապահար: Ես ինձ կողդեմ: Ներեցեք նաև, որ խլում եմ ձեր ժամանակը, ձեզ ստիպում եմ լսել իմ զտանցանքները: Դուք, անկասկած, աշխատանք ունեք անելու: Դուք ստացե՛լ եք իմ արձակուրդի խնդրանքը՝ հիվանդանալուս կապակցությամբ:

ԴՅՈՒԴԱՐ.— Մի՛ անհանգստացեք: Ամեն ինչ կարգին է: Ի դեպ, գրասենյակը չի վերսկսել իր գործունեությունը:

ԲԵՐԱՆԺԵ.— Սանդուղքը դեռ չե՞ն վերանորոգել: Ինչպիսի անիություն: Այդ է պատճառը, որ ամեն ինչ վատ է գնում:

ԴՅՈՒԴԱՐ.— Վերանորոգումն ընթացքի մեջ է: Դա արագ չի լինում: Հեշտ բան չէ բանվոր ճարելը: Գալիս, ընդունվում են, մի-երկու օր աշխատում են, թողնում-գնում են: Այլևս չեն երևում: Հարկ է լինում գտնել ուրիշների:

ԲԵՐԱՆԺԵ.— Հետո էլ գործազրկությունից են գանգատվում: Հույս ունեմ, գոնե, որ սանդուղքը ցեմենտ-բետոնից է լինելու:

ԴՅՈՒԴԱՐ.— Ո՛չ, էլի փայտից են սարքում, բայց նոր փայտից:

ԲԵՐԱՆԺԵ.— Ա՛հ, դեկավարների քաշքշուկը: Փողը շաղ են տալիս, իսկ օգտակար ծախսի դեպքում հայտարարում են, որ բյուջեն չի բավականացնում: Պարոն Թիթեռը պիտի որ գոհ չլինի: Նա շատ էր կպած իր ցեմենտ-բետոնե սանդուղքին: Նա ի՞նչ է մտածում այդ մասին:

ԴՅՈՒԴԱՐ.— Մենք այլևս չե՞ք չունենք: Պարոն Թիթեռը հրաժարական է տվել:

ԲԵՐԱՆԺԵ.— Չի կարող պատահել:

ԴՅՈՒԴԱՐ.— Ես ձեզ ասում եմ:

ԲԵՐԱՆԺԵ.— Դա ինձ զարմացնում է... Այդ կատարվեց սանդուղքի պատմության՞ պատճառով:

ԴՅՈՒԴԱՐ.— Չեմ կարծում: Համենայն դեպս, այդ չէր նրա պատճառաբանությունը:

ԲԵՐԱՆԺԵ.— Էլ ինչի՞ համար: Նրան ի՞նչ է պատահել:

ԴՅՈՒԴԱՐ.— Ուզում է գյուղում առանձնանալ:

ԲԵՐԱՆԺԵ.— Թոշակի՞ է անցնում: Եվ սակայն նրա տարիքը դեռ չի  
անրում: Նա դեռ կարող էր տնօրեն դառնալ:

ԳՆՈՒԳԱՐ.— Հրաժարվել է: Պատճառաբանում էր, որ իրեն հանգիստ  
է հարկավոր:

ԲԵՐԱՆԺԵ.— Ընդհանուր ղեկավարությունն անախորժ վիճակի մեջ  
պիտի ընկած լինի՝ նրանից զրկվելով: Նրան փոխարինելու հարցն  
է առաջանում: Ձեզ համար լավ եղավ. ձեր ունեցած դիպլոմներով  
հնարավորություն ունեք առաջադիմելու:

ԳՆՈՒԳԱՐ.— Որ ձեզանից ոչինչ չթաքցնեմ... Ծիծաղելի է, բայց նա  
ունգեղջյուր է դարձել: **(Ռեգեղջյուրների հեռավոր աղմուկ):**

ԲԵՐԱՆԺԵ.— Ռեգեղջյուր: Պարոն Թիթեռը ռեգեղջյուր է դարձել:  
Ա՛հ, այ քեզ բան, այ քեզ բան... Ինքս՝ ես այդ ծիծաղելի չեմ հա-  
մարում: Ինչո՞ւ շուտ չասացիք:

ԳՆՈՒԳԱՐ.— Տեսնո՞ւմ եք, որ գուրկ եք հումորի գգացումից: Ես չէի  
ուզում ձեզ այդ ասել... Ձեր ուզում ձեզ այդ ասել, որովհետև, ինչ-  
քան որ ձեզ ճանաչում եմ, գիտեի, որ դուք այդ ծիծաղելի չեք  
համարելու, և դա ձեզ պիտի ցնցեր: Այնքան զգայուն եք դուք:

ԲԵՐԱՆԺԵ **(թևերը երկինք բարձրացնելով)**.— Ա՛հ, սա ի՞նչ էր: Ա՛հ,  
սա ի՞նչ էր... Պարոն Թիթեռը... Եվ ինչպիսի լավ դիրքի տեղ էր  
դարձել:

ԳՆՈՒԳԱՐ.— Դա, այնուամենայնիվ, ապացուցում է նրա այլակերպ-  
ման անկեղծությունը:

ԲԵՐԱՆԺԵ.— Նա այդ պիտի որ դիտավորյալ արած լինի: Ես հա-  
նգոված եմ, որ այս դեպքում տեղի է ունեցել ականա փոփոխու-  
թյուն:

ԳՆՈՒԳԱՐ.— Ի՞նչ իմանանք: Դժվար է իմանալ մարդկանց որոշում-  
ների թաքուն դրդապատճառները:

ԲԵՐԱՆԺԵ.— Դա գործողության վրիպում պիտի եղած լինի: Նա քո-  
ղզված բարդույթներ ուներ: Պիտի որ իրեն հոգեվերլուծության  
ենթարկած լինի:

ԳՆՈՒԳԱՐ.— Եթե դա նույնիսկ փոխակերպում է, ապա պիտի որ  
հատկանշական լինի: Յուրաքանչյուրն իր այլակերպումը գտնում  
է ըստ իր կարողության:

ԲԵՐԱՆԺԵ.— Նա ընկել է հոսանքի ազդեցության տակ: Վստահ եմ,  
որ այդպես է:

ԳՆՈՒԳԱՐ.— Դա կարող է պատահել յուրաքանչյուրի հետ:

ԲԵՐԱՆԺԵ **(վախեցած)**.— Յուրաքանչյուրի հետ: Ահ, ոչ: Ոչ՝ ձեզ,  
ազնպես չէ՞, ոչ ձեզ հետ: Ոչ էլ՝ ինձ:

ԴՅՈՒԴԱՐ.— Հույս ունենամ:

ԲԵՐԱՆԺԵ.— Քանի որ մենք այդ չենք ցանկանում... այնպես չէ՞...  
այնպես չէ՞... Ասացեք՝ այնպես չէ՞, այնպես չէ՞:

ԴՅՈՒԴԱՐ.— Այո՛, իհարկե: Այո՛, իհարկե...

ԲԵՐԱՆԺԵ (մի քիչ հանդարտվելով).— Ես, այնուամենայնիվ, մտա-  
ծում էի, որ պարոն Թիթեոն ուժ պիտի ունենար ավելի երկար  
դիմադրելու: Կարծում էի, որ նա ավելի ուժեղ բնավորության տեր  
պիտի լինի... Առավել ևս, որ չեմ տեսնում, թե այս դեպքում, որն  
է նրա շահը, նյութական շահը, բարոյական շահը...

ԴՅՈՒԴԱՐ.— Նրա վարմունքն անշահախնդիր է. դա ակնհայտ է:

ԲԵՐԱՆԺԵ.— Անտարակույս: Դա մեղմացուցիչ հանգամանք է... Կամ  
ծանրացուցիչ: Ավելի շուտ՝ ծանրացուցիչ, ըստ իս, որովհետև այդ  
արած պիտի լինի՝ ելնելով իր նախասիրությունից... Նկատի ու-  
նեցեք, որ Բոտարը նրա վարքագիծը դատապարտած պիտի լինի  
ամենայն խստությամբ: Ի՞նչ է մտածում նա: Ի՞նչ է մտածում իր  
շեֆի մասին:

ԴՅՈՒԴԱՐ.— Այդ խեղճ պարոն Բոտարը վրդովված էր, չարացած:  
Ես հազվադեպ եմ տեսել մեկը, որն այդքան իրեն կորցրած լինի:

ԲԵՐԱՆԺԵ.— Է՛հ, այս անգամ ես չեմ գտնում, որ նա սխալ է: Ա՛հ,  
Բոտարը, նա, այնուամենայնիվ, անհատականություն է: Խելա-  
հաս մարդ: Ես էլ իզուր վատ էի մտածում նրա մասին:

ԴՅՈՒԴԱՐ.— Նա նույնպես ձեր մասին վատ էր մտածում:

ԲԵՐԱՆԺԵ.— Դա ապացուցում է, որ տվյալ հարցում ես անկողմնա-  
կալ եմ: Ի դեպ, դուք ևս վատ կարծիք ունեիք նրա մասին:

ԴՅՈՒԴԱՐ.— Վատ կարծիք... դա այն բառը չէ: Ես պետք է ասեմ,  
որ հաճախ համակարծիք չէի նրան: Նրա սկեպտիցիզմը, բերա-  
հավատությունը, կասկածամտությունն ինձ դուր չէին գալիս. Այս  
անգամ ևս ես նրան չտվի իմ լիակատար հավանությունը:

ԲԵՐԱՆԺԵ.— Հիմա էլ՝ ելնելով հակամարտ պատճառներից:

ԴՅՈՒԴԱՐ.— Ո՛չ: Դա ճշգրտորեն այդպես չէ: Իմ մտածելակերպը,  
դատողությունը, այնուամենայնիվ, մի քիչ ավելի երանգավորված  
է, քան կարծում եք: Որովհետև բանն այն է, որ Բոտարն ամե-  
նևին չունեի ճշգրիտ ու անկողմնակալ փաստարկներ: Կրկնում  
եմ, որ ես նույնպես հավանություն չեմ տալիս ռեզեղջյուրներին.  
ոչ, ամենևին: Չմտածեք հակառակը: Միայն թե Բոտարի դիրքո-  
րոշումը, ինչպես միշտ, շատ էր կրքոտ, ուրեմն, պարզունակ:  
Նրա դիրքորոշումը, ինձ թվում է, ելնում է լոկ իր վերադասի հան-



դեպ ունեցած ատելությունից: Ուրեմն դա ինքնաթերսագնահատման բարդույթ է. քինախնդրություն: Եվ հետո՝ չափած-ձևած դարձվածքներով է խոսում: Ծեծված մտքերն ինձ չեն հետաքրքրում:

ԲՆՐԱՆԺԵ.— Էհ, այս անգամ ես լիովին համամիտ եմ Բոտարի հետ, չնայած որ դա ձեզ հաճելի լինել չի կարող: Նա լավ տղա է: Ահա թե ինչ:

ԳՅՈՒԴԱՐ.— Ես այդ չեմ ծխտում, բայց դա ոչինչ չի նշանակում:

ԲՆՐԱՆԺԵ.— Այո, լավ տղա է: Հաճախ չէ, որ պատահում են լավ տղաներ, և նա չի սավառնում ամպերի մեջ: Չորս ոտով ամուր զանգնած է հողին. ներեցեք, երկու ոտով պիտի ասեի: Ես երջանիկ եմ, որ լիակատար համամիտ եմ նրան: Երբ հանդիպեմ, շնորհավորելու եմ: Ես դատապարտում եմ պարոն Թիթեռին: Նրա պարտքն էր չմատնվել ինքնահոսի:

ԳՅՈՒԴԱՐ.— Ինչքան անհանդուրժող եք: Գուցե Թիթեռն ունեցել է լարվածության թուլացման պահանջ, այդքան տարվա նստակյաց ապրելակերպից հետո:

ԲՆՐԱՆԺԵ (հեզման).— Դուք շատ եք հանդուրժող, շատ լայն է ձեր մտածելակերպը:

ԳՅՈՒԴԱՐ.— Սիրելի՛ Բերանժե, միշտ պետք է փորձեք հասկանալ դիմացիներին: Եվ երբ ցանկանում եք հասկանալ մի երևույթ իր հետևանքներով հանդերձ, ապա ազնիվ մտավորական մղումով շրջվում եք դեպի դրա դրդապատճառները: Բայց պետք է ջանք թափել այդ անելու համար, քանի որ մենք մտածող էակներ ենք: Դա ինձ չհաջողվեց, կրկնում եմ. չգիտեմ՝ արդյոք կհաջողվի՞ հետազայում: Այսպես թե այնպես, սկզբում պետք է ունենալ բարենպաստ նախատրամադրություն կամ գոնե չեզոքություն, լայնախոհություն, որ բնորոշ է գիտական մտածելակերպին: Ամեն ինչ տրամաբանական է: Հասկանալ՝ նշանակում է արդարացնել:

ԲՆՐԱՆԺԵ.— Ծուտով՝ դուք դառնալու եք ռեզեղջյուրներին համակիր:

ԳՅՈՒԴԱՐ.— Օ՛հ, ո՛չ: Օ՛հ, ո՛չ: Ես պարզապես մի անձ եմ, որ փորձում է աներես նայել երևույթներին, սառնասրտորեն: Ես ուզում եմ իրապաշտ լինել: Ինքս ինձ ասում եմ նաև, որ ճշմարիտ մոլորություններ չկան այնտեղ, որտեղ բնականն է իշխում: Վայ երան, ով ամենուրեք մոլորություն է տեսնում: Դա հատուկ է ինկվիզիցիային:

ԲՆՐԱՆԺԵ.— Դուք գտնում եք, որ սա բնական է:

ԳՅՈՒԴԱՐ.— Ի՞նչն է ավելի բնական, քան ռեզեղջյուրը:

ԲԵՐԱՆԺԵ.— Այո, բայց երբ մարդն է դառնում ռնգեղջյուր, դա անվիճելիորեն աննորմալ երևույթ է:

ԴՅՈՒԴԱՐ.— Օ՛հ, անվիճելիորեն... Գիտեք...

ԲԵՐԱՆԺԵ.— Այո՛, անվիճելիորեն աննորմալ, բացարձակապես աննորմալ:

ԴՅՈՒԴԱՐ.— Երևում է՝ դուք շատ վատախ էք ինքներդ ձեր վրա: Կարելի՞ է արդյոք իմանալ, թե որտեղ է վերջանում նորմալը, որտեղ է սկսվում աննորմալը: Դուք կարո՞ղ եք բնորոշել նորմալ, աննորմալ հասկացությունները: Փիլիսոփայորեն ու բժշկորեն ոչ ոք չի կարողացել լուծել այդ խնդիրը: Դուք պիտի որ դրան տեղյակ լինեիք:

ԲԵՐԱՆԺԵ.— Գուցե այդ հարցը հնարավոր չէ լուծել փիլիսոփայորեն: Բայց գործնականորեն դա հեշտ է: Ապացուցում եմ, որ շարժումը գոյություն չունի... և դուք քայլում եք, քայլում եք, քայլում... (Սկսում է քայլել սենյակի մի ծայրից մյուսը)... Քայլում եք, կամ էլ, Գալիլեյի նման ինքներդ ձեզ ասում եք. «Еррur, si mоvе...»<sup>8</sup>:

ԴՅՈՒԴԱՐ.— Ձեր գլխում ամեն ինչ խառնում եք իրար: Մի բանը շրփոթում եք մյուսի հետ: Գալիլեյի դեպքում հակառակն էր՝ տեսական ու գիտական միտքն էր, որ իրավացի էր դոգմատիզմի և հասարակ մտածելակերպի դեմ:

ԲԵՐԱՆԺԵ (այլալվաճ).— Այդ ի՞նչ պատմություններ են: Հասարակ մտածելակերպ, դոգմատիզմ՝ բաներ, բաներ: Ես գուցե գլխումս ամեն ինչ խառնում եմ, բայց դուք ձեր գլուխն եք կորցնում: Էլ չգիտեք՝ ինչն է նորմալ, ինչը՝ ոչ: Սպանեցիք ձեր Գալիլեյով... Ես Գալիլեյին բանի տեղ դնո՞ղն եմ:

ԴՅՈՒԴԱՐ.— Այդ ինքներդ մեջբերեցիք նրան և հարց բարձրացրիք՝ պնդելով, որ միշտ էլ վերջին խոսքը պատկանում է պրակտիկային: Այդպես է թերևս, բայց այն պայմանով, որ դա լուսաբանված լինի տեսության կողմից: Մտքի և գիտության պատմությունը այդ մի բանը լավ են ապացուցում:

ԲԵՐԱՆԺԵ (ճեղքեցե՛ք ավելի ու ավելի կատաղած).— Դա ոչինչ չի ապացուցում: Ափեղցիտություն է, խելագարություն:

ԴՅՈՒԴԱՐ.— Նախ և առաջ՝ պետք է պարզել, թե ինչ է խելագարությունը...

ԲԵՐԱՆԺԵ.— Խելագարությունը խելագարություն է, կերա՞ք: Խելագարությունը պարզ ու հասարակ խելագարությունն է: Բոլորը գիտեն, թե ինչ է խելագարությունը: Իսկ ռնգեղջյուրները... դա տեսությունն է, թե՛ պրակտիկա:

ԳՅՈՒԳԱՐ.— Ե՛վ մեկը, և՛ մյուսը:

ԲԵՐԱՆԺԵ.— Ինչպե՛ս թե և՛ մեկը, և՛ մյուսը:

ԳՅՈՒԳԱՐ.— Ե՛վ մեկը, և՛ մյուսը կամ էլ թե մեկը կամ մյուսը: Դա բանավեճի խնդիր է:

ԲԵՐԱՆԺԵ.— Ուրեմն, այդտեղ ես... ես հրաժարվում եմ մտածելուց:

ԳՅՈՒԳԱՐ.— Դուք կորցնում եք ձեր ինքնատիրապետումը: Մեր տեսակետները լիովին չեն համընկնում իրար. մենք խաղաղ բանավիճում ենք: Պետք է բանավիճել:

ԲԵՐԱՆԺԵ (ցնորված).— Դուք կարծում եք, որ ես ինքնատիրապետումս կորցրե՛լ եմ: Ասես թե ես ժամը լինեմ: Ահ, ոչ, ոչ, ես չեմ ուզում դառնալ ժամի անամ: Ահ, ոչ, ես չեմ ուզում անսնվել նրան: **(Հանդարտվում է):** Ես փիլիսոփայությանը լավ չեմ տիրապետում: Ես ուսումս չեմ շարունակել: Դուք, դուք դիպլոմներ ունեք: Ահա թե ինչու դուք ձեզ ազատ եք զգում բանավիճելիս: Ինքս՝ ես չգիտեմ ձեզ ինչ պատասխանեմ. անճարակ եմ: **(Ռնգեղջյուրների ավելի ուժգին աղմուկներ, որոնք հնչում են նախ՝ խորքի լուսամուտի կողմից, ապա դիմացի լուսամուտի կողմից):** Բայց ես զգում եմ, որ դուք իրավացի չեք... ես այդ բնագոյաբար եմ զգում կամ ավելի շուտ՝ ոչ. ռնգեղջյուրն է, որ բնագոյով է առաջնորդվում: Ես այդ զգում եմ հոգեզգացողությամբ: Ահա ճիշտ բառը՝ հոգեզգացողությամբ:

ԳՅՈՒԳԱՐ.— Ի՞նչ եք հասկանում հոգեզգացողությունն ասելով:

ԲԵՐԱՆԺԵ.— Հոգեզգացողությունն, դա նշանակում է... սլոսպես, կերա՛ք: Ես զգում եմ, ռնց որ թե ձեր ծայրահեղ հանդուրժողականությունը, ձեր բարեհաճ ներողամտությունը... իրականում, հավատացեք ինձ, թուլություն է... կուրություն...

ԳՅՈՒԳԱՐ.— Այդ դուք եք պնդում, միամտաբար:

ԲԵՐԱՆԺԵ.— Ինձ հետ դուք հեշտությամբ միշտ էլ տակից դուրս եք օպիս: Բայց սպասեք, ես պիտի ջանամ գտնել տրամաբանին...

ԳՅՈՒԳԱՐ.— Ի՞նչ տրամաբան:

ԲԵՐԱՆԺԵ.— Տրամաբանը, փիլիսոփան, տրամաբանը, էի... Դուք ինձանից լավ գիտեք, թե ինչ է տրամաբանը: Մի տրամաբան, որին ճանաչել եմ և որն ինձ բացատրել է...

ԳՅՈՒԳԱՐ.— Նա ձեզ ի՞նչ է բացատրել:

ԲԵՐԱՆԺԵ.— Որն ինձ բացատրել է այն, որ սահական ռնգեղջյուրներն աֆրիկյան են, և աֆրիկյան ռնգեղջյուրներն՝ ասիական:

ԳՅՈՒԳԱՐ.— Դժվարանում եմ հասկանալ:

**ԲԵՐԱՆԺԵ.**— Ոչ... ոչ... Նա մեզ ճիշտ հսկասակն ապացուցեց, այսինքն՝ որ աֆրիկյաններն ասիական են, և ասիականները... Չի ստացվում: Դա այն չէ, որ ուզում էի ասել: Վերջիվերջո, դուք նրա հետ կպարզեք: Նա ձեր տեսակի մարդ է, կարգին մարդ է, նրբամիտ մտավորական, բազմագիտակ: **(Ռնգեղջյուրների ահագնացող աղմուկ: Երկու գործող անձանց խոսակցությունը խլանում է վայրի գազանների աղմուկներից, որոնք անցնում են երկու լուսամուտների տակով: Մի կարճ ժամանակ Դյուդարի և Բերանժեի շրթունքները շարժվում են անձայն):** Դարձյալ նրանք են: Ահ, վերջը չի երևում: **(Վազում է դեպի խորքի լուսամուտը):** Բավական է, բավական է, կեղտոտներ: **(Ռնգեղջյուրները հեռանում են: Բերանժեն բռունցք է թափ տալիս նրանց ետևից):**

**ԴՅՈՒԴԱՐ (նստած).**— Ես կուզեմայի ծանոթանալ ձեր այդ տրամաբանի հետ: Եթե նա կամենա ինձ համար լուսաբանել այդ նուրբ կետերը՝ նուրբ ու մթին... Էլ ուրիշ ի՞նչ եմ ուզում. դրանից լավ բա՛ն, ազնիվ խոսք:

**ԲԵՐԱՆԺԵ (վազելով դեպի լուսամուտը, որը գտնվում է հանդիսատեսի կողմը).**— Այո, ես նրան կբերեմ ձեզ մոտ. նա կխոսի: Կտեսնեք, դա երևելի անձնավորություն է: **(Ռնգեղջյուրների հասցեին, լուսամուտից):** Կեղտոտներ: **(Նույն կերպ, ինչ քիչ առաջ):**

**ԴՅՈՒԴԱՐ.**— Թողեք վազվզեն: Եվ եղեք ավելի քաղաքավարի: Այդպես չեն խոսում արարածների հետ, որոնք...

**ԲԵՐԱՆԺԵ (դեռևս լուսամուտի մոտից).**— Էլի երևացին: **(Նվազախմբի փոսից, լուսամուտի տակ շարժվում է ծղոտե մի գլխարկ, որի միջով անցկացված է ռնգեղջյուրի կոտոշ: Գլխարկը կոտոշով հանդերձ շատ արագ սլանում է ձախից դեպի աջ և անհետանում է):** Ծղոտե գլխարկ՝ ռնգեղջյուրի կոտոշի վրա: Ահ, տրամաբանի ծղոտե գլխարկն է: Տրամաբանի ծղոտե գլխարկը: Հազար անգամ թթեմ նրա երեսին. տրամաբանը ռնգեղջյուր է դարձել:

**ԴՅՈՒԴԱՐ.**— Դա դեռևս ձեզ հիմք չի տալիս կոպիտ լինելու:

**ԲԵՐԱՆԺԵ.**— Էլ ո՞ւմ ապավինեմք, Աստվա՛ծ իմ, էլ ո՞ւմ ապավինենք: Տրամաբանը ռնգեղջյուր է:

**ԴՅՈՒԴԱՐ (շարժվելով դեպի լուսամուտը).**— Որտե՞ղ է նա:

**ԲԵՐԱՆԺԵ (մատնացույց անելով).**— Ահա, այս մեկը, որին տեսնում եք:

**ԴՅՈՒԴԱՐ.**— Միակ ռնգեղջյուրն է, որ ծղոտե գլխարկ ունի: Ոնց որ թե մարդ երազ տեսնի: Դա իրոք ձեր տրամաբանն է...

ԸՐԱՄԻՓԵ.— Տրամաբանք... ռեգեղջյուր:

ԸՐԱՄԻՓԱՐ.— Համենայն դեպս, նա մի երանգ պահպանել է իր նախկին անհատականությունից:

ԸՐԱՄԻՓԵ (նորից բռունցք է թափ տալիս ծղոտե գլխարկ դրած ռեգեղջյուրի ետևից, որն անհետացել է).— Ես ձեզ չեմ հետևելու: Ձեմ հետևելու:

ԸՐԱՄԻՓԱՐ.— Եթե սառն էք, որ նա իսկական մտածող էր, ուրեմն, չի ընկել հոսանքի ազդեցության տակ: Նախքան ընտրելը, նա պիտի ծանր ու թեթև արած լինի թերև ու դեմը:

ԸՐԱՄԻՓԵ (դեռևս գոռայով լուսամուտից, նախկին Տրամաբանի և մյուս ռեգեղջյուրների ուղղությամբ, թեև դրանք հեռացել են).— Ես ձեզ չեմ հետևելու:

ԸՐԱՄԻՓԱՐ (տեղավորվելով բազկաթոռի մեջ).— Այո, դա մտածելու ստիթ է տալիս: (Բերանձեռն փակում է դիմացի լուսամուտը, շարժվում է դեպի խորքի լուսամուտը, որի տակից անցնում են ուրիշ ռեգեղջյուրներ, որոնք ամենայն հավանականությամբ տան շուրջն էն պտտվում: Նա բացում է լուսամուտը և գոռում):

ԸՐԱՄԻՓԵ.— Ո՛չ, ես ձեզ չեմ հետևելու:

ԸՐԱՄԻՓԱՐ (մեկուսի, բազկաթոռին նստած).— Նրանք պտտվում են տան շուրջը: Խաղ են անում: Մեծ երեխաներ են: (Արդեն մի բազկաթոռ է, ինչ Դեզին բարձրացել է սանդուղքի վերջին աստիճանները, ձախ կողմի վրա: Նա բախում է Բերանձեռնի դուռը: Կողով ունի թևի տակին): Դուռը բախում են, Բերանձեռն: Մեկը կա: (Քաշում է դեռևս լուսամուտի մոտ կանգնած Բերանձեռնի թևից):

ԸՐԱՄԻՓԵ (գոռայով ռեգեղջյուրների ուղղությամբ).— Ամոթ է: Ձեր դիմականհանդեսն ամոթալի է:

ԸՐԱՄԻՓԱՐ.— Ձեր դուռը բախում են, Բերանձեռն: Ձե՞ք լսում:

ԸՐԱՄԻՓԵ.— Բացեք, եթե ուզում եք: (Ծարունակում է անխոս նայել ռեգեղջյուրներին, որոնց աղմուկները հեռանում են: Դյուդարը գնում է դուռը բացելու):

ԸՐԱՄԻՓԵ (ներս մտնելով).— Բարև, պարո՛ն Դյուդար:

ԸՐԱՄԻՓԱՐ.— Այ քեզ բան, որ՛ւք, օրիորդ Դեզի:

ԸՐԱՄԻՓԵ.— Բերանձեռն արստե՞ղ է: Իրեն ավելի լա՛վ է զգում:

ԸՐԱՄԻՓԱՐ.— Բարև, սիրելի՛ օրիորդ. դուք հաճա՞խ եք գալիս Բերանձեռնի մոտ:

ԸՐԱՄԻՓԵ.— Իրստե՞ղ է նա:

ԸՐԱՄԻՓԱՐ (մատնացույց անելով).— Ահա:

ԴԵԶԻ.— Խեղճը ոչ ոք չունի: Նա այսօր մի քիչ էլ հիվանդ է: Պետք է, չէ՞, մի թեթև օգնել նրան:

ԴՅՈՒԴԱՐ.— Դուք շատ լավ ընկեր եք, օրինորդ Դեզի:

ԴԵԶԻ.— Այո, իհարկե. ես իրոք լավ ընկեր եմ:

ԴՅՈՒԴԱՐ.— Բարի սիրտ ունեք:

ԴԵԶԻ.— Ես ընդամենը լավ ընկեր եմ:

ԲԵՐԱՆԺԵ (լուսամուտը բաց թողնելով՝ շրջվում է).— Օ՛հ, սիրելի՛ օրինորդ Դեզի: Ձեր կողմից ինչսլիսի բարեհաճություն, որ ինձ աջակցիք: Ինչքան սիրալիր եք:

ԴՅՈՒԴԱՐ.— Դա հնարավոր չէ ժխտել:

ԲԵՐԱՆԺԵ.— Գիտե՞ք, օրինորդ Դեզի, տրամաբանը ռեգեղջյուր է:

ԴԵԶԻ.— Գիտեմ: Քիչ առաջ, արտեղ գալու ժամանակ, նրան տեսա փողոցում: Իր տարիքի համեմատ բավական արագ էր վազում: Ձեզ ավելի լա՛վ եք զգում, պարո՛ն Բերանժե:

ԲԵՐԱՆԺԵ (Դեզիին).— Գլուխս: Դարձյալ գլուխս: Գլխացալ: Սարսափելի է: Ի՞նչ է ձեր կարծիքը:

ԴԵԶԻ.— Կարծում եմ, որ պետք է հանգստանաք... Մի քանի օր ևս տանը հանգիստ մնացեք:

ԴՅՈՒԴԱՐ (Բերանժեին և Դեզիին).— Հուսով եմ, որ ձեզ չեմ խանգարում:

ԲԵՐԱՆԺԵ (Դեզիին).— Ես տրամաբանի մասին էի հարցնում:

ԴԵԶԻ (Դյուդարին).— Մեզ ինչո՞ւ պիտի խանգարեք, որ... (Բերանժեին): Ա՛հ, տրամաբա՞նը: Ես ոչինչ չեմ մտածում նրա մասին:

ԴՅՈՒԴԱՐ (Դեզիին).— Գուցե իմ ներկայությունն ավելորդ է:

ԴԵԶԻ (Բերանժեին).— Ի՞նչ եք ուզում, որ մտածեմ: (Բերանժեին և Դյուդարին): Ձեզ թարմ նորություն ունեմ հայտնելու: Բոտարը ռեգեղջյուր է դարձել:

ԴՅՈՒԴԱՐ.— Այ քեզ բա՛ն:

ԲԵՐԱՆԺԵ.— Չի կարող սատահել: Նա դեմ էր: Դուք պիտի որ շփոթելիս լինեք: Նա բողոքել էր: Դյուդարը քիչ առաջ ինձ ասաց այդ մասին: Այնպես չէ՞, Դյուդա՛ր:

ԴՅՈՒԴԱՐ — Ծիշտ է:

ԴԵԶԻ.— Ես գիտեմ, ոտ նա դեմ էր: Բայց նա, անուամենայնիվ, որևեղջյուր դարձավ՝ պարոն Թիթեռի փոխակերպումից քսանչորս ժամ հետո:

ԴՅՈՒԴԱՐ.— Ահա: Նա փոխեց իր տեսակետը: Բոլորն իրավունք ունեն փոփոխվելու:

ԲԵՐԱՆԺԵ.— Ուրեմն, ուրեմն, ամեն ինչ կարող է պատահել:

- ՄԱՐԿՈՍ (Ֆերանժեիւն).— Նա լալ մարդ է՝ դատելով ձեր քիչ առաջվա սասածից:
- ԼՈՐԱՆԺԵ (Դեզիիւն).— Դժվարանում եմ հավատալ: Ձեզ ստել են:
- ՄԱՐԿՈՍ.— Ես ինքս տեսա նրան գործելիս:
- ԼՈՐԱՆՅԵ.— Ուրեմն, այդ նա է ստել. ձևացրել է:
- ՄԱՐԿՈՍ.— Անկեղծ էր նրա տեսքը. մարմնավորված անկեղծություն:
- ԼՈՐԱՆՅԵ.— Որեւէ բան պատճառաբանե՞ց:
- ՄԱՐԿՈՍ.— Նա բառացիորեն սասաց. «Պետք է գնալ ժամանակի հետ համընթաց»: Դրանք նրա վերջին մարդկային բառերն էին:
- ՄԱՐԿՈՍ (Դեզիիւն).— Ես համարչա վստահ էի, որ ձեզ այստեղ եմ հանդիպելու, օրիորդ Դեզի:
- ԼՈՐԱՆՅԵ.— ... Ժամանակի հետ համընթաց: Ինչպիսի մտայնություն: (Ձեռքով լայն շարժում է անում):
- ՄԱՐԿՈՍ (Դեզիիւն).— Անկարելի էր ձեզ ուրիշ տեղ հանդիպել, գրասենյակի փակվելուց ի վեր:
- ԼՈՐԱՆՅԵ (շարունակելով, մեկուսի).— Ինչպիսի միամտություն: (Նույն շարժումը):
- ՄԱՐԿՈՍ (Կոդարիւն).— Եթե ուզում էիք ինձ տեսնել, կարող էիք զանգահարել:
- ՄԱՐԿՈՍ (Դեզիիւն).— ... Օ՛հ, համեստ եմ ես, համեստ, օրիորդ: Ես այդպիսին եմ:
- ԼՈՐԱՆՅԵ.— Էհ, եթե լալ մտածեմ, Բոտարի հանդուգն քայլը ինձ չպիտի զարմացնի: Նրա ամբողջունը լոկ երևութական էր: Դա, ինարկե, չի խանգարում, որ նա լալ մարդ լինի կամ եղած լինի այդպիսին: Լալ մարդիկ դառնում են լալ ռնգեղջյուրներ: Ավաղ. նրանք ազնիվ են, դրա համար էլ խաբվում են:
- ՄԱՐԿՈՍ.— Թույլ տվեք այս կողովը դնել սեղանին: (Կողովը դնում է սեղանին):
- ԼՈՐԱՆՅԵ.— Բայց նա լալ մարդ էր, որն ուներ քիճոտություններ...
- ՄԱՐԿՈՍ (Դեզիիւն՝ շտապելով օգնել, որ նա կողովը դնի սեղանին).— Ներքցեք ինձ, ներեցեք մեզ. մենք ավելի շուտ ձեզ ազատած պիտի լինեինք այս կողովից:
- ԼՈՐԱՆՅԵ (շարունակելով).— ... Նա փոխակերպվեց իր պետերի եսկոկայ ունեցած ատելությունից դրդված. ինքնաթերազնաբառովան բառույթ...
- ՄԱՐԿՈՍ (Ֆերանժեիւն).— Ձեր դատողությունը սխալ է, ասե՛քի որ ես նետուեց հենց իր պետի օրինակին. իր ինքնարտամաշտմամբ ես ձեռնարկատերերի ձեռքի գործիքն էր դառնում: Ընդհակա-

ուակը, ինձ թվում է, որ նա իր համայնավարի մտածելակերպով հաղթահարեց իր իսկ անարխիստական բռնկումները:

**ԲԵՐԱՆԺԵ.**— Ռնգեղջյուրներն են անարխիստները, քանի որ նրանք փոքրամասնությունն են:

**ԴՅՈՒԴԱՐ.**— Ներկա դրությամբ դա դեռևս ճիշտ է:

**ԴԵԶԻ.**— Դա արդեն մեծաքանակ փոքրամասնությունն է, որը գնալով բազմանում է: Իմ զարմիկը ռնգեղջյուր է դարձել, նրա կինը՝ նույնպես: Դեռ չհաշված, ակնառու անհատականությունները՝ Ռեցի կարդինալը...

**ԴՅՈՒԴԱՐ.**— Մի եկեղեցական:

**ԴԵԶԻ.**— Մազարիցի՞ն:

**ԴՅՈՒԴԱՐ.**— Կտեսներ՝ դա տարածվելու է նաև ուրիշ երկրներում:

**ԲԵՐԱՆԺԵ.**— Ամոթ, որ չարիքը մեզանից է գալիս:

**ԴԵԶԻ.**— ... Եվ արխատկրատներ՝ Սեն-Սիմոնի շուքար:

**ԲԵՐԱՆԺԵ (թևերը բարձրացնելով երկինք).**— Մեր դասականները:

**ԴԵԶԻ.**— Եվ էլի ուրիշներ: Ծառ ուրիշներ: Թերևս մեր քաղաքի բնակիչների մեկ քառորդը:

**ԲԵՐԱՆԺԵ.**— Մենք դեռևս նրանցից շատ ենք: Պետք է օգտվել դրանից: Ինչ-որ բան պետք է անել, քանի դեռ քանակական տեսակետից մեզ չեն գերազանցել:

**ԴՅՈՒԴԱՐ.**— Նրանք շատ գործունյա են, շատ են գործունյա:

**ԴԵԶԻ.**— Առայժմ եկեք նախաճաշենք: Ես ուտելիք եմ բերել:

**ԲԵՐԱՆԺԵ.**— Դուք շատ բարեխառն եք, օրինորդ Դեզի:

**ԴՅՈՒԴԱՐ (մեկուսի).**— Այո՛, շատ բարեխառն:

**ԲԵՐԱՆԺԵ (Դեզիին).**— Չգիտեմ, ինչպես ձեզ շնորհակալ լինեմ:

**ԴԵԶԻ (Դյուդարին).**— Մեզ հետ կուզենա՞ք մնալ:

**ԴՅՈՒԴԱՐ.**— Չէի ուզենա աներես համարվել:

**ԴԵԶԻ (Դյուդարին).**— Ի՞նչ եք ասում, պարո՛ն Դյուդար: Դուք լավ գիտեք, որ դրանով մեզ բավականություն պիտի պատճառեք:

**ԴՅՈՒԴԱՐ.**— Դուք լավ գիտեք, որ ես չեմ ուզում ձեզ խանձարել...

**ԲԵՐԱՆԺԵ (Դյուդարին).**— Իհարկե, Դյուդար՛ր, իհարկե: Ձեր ներկայությունը միշտ էլ բավականություն է պատճառում:

**ԴՅՈՒԴԱՐ.**— Բանն այն է, որ ես մի քիչ շտապում եմ: Ժամադրված եմ:

**ԲԵՐԱՆԺԵ.**— Քիչ առաջ ասում էիք, որ բոլորովին ազատ եք:

**ԴԵԶԻ (կողովի միջից պարեհամթերքը հանելով).**— Դուք գիտե՞ք, ես ուտելիքը ճարեցի մեծ դժվարությամբ: Թալանել են խանութները: Ամեն ինչ լափում են: Մի շարք խանութներ էլ փակ են: «Վերա-



- վախճան պատճառով» գրված է ցուցանակների վրա:
- ԸՆԹԱՆՔԵ.— Դրանց պետք է տեղավորել ընդարձակ արգելանցներով պարտադիր բնակություն, հսկողության տակ:
- ԸՆԹԱՆՔԵ.— Այդ նախաձեռնության իրականացումն ինձ թվում է անիրագործելի: Կենդանիների պաշտպանության ընկերությունն առաջինն ինքը կհակադրվի դրան:
- ԸՆԹ.— Բացի այդ, ամեն մարդ ոնգեղջյուրների թվում ունի մի մոտիկ օգգական, մի բարեկամ՝ հանգամանք, որն ավելի է բարդացնում վիճակը:
- ԸՆԹԱՆՔԵ.— Ուրեմն, բոլորն էլ խաղի մեջ են ընդգրկված:
- ԸՆԹԱՆՔԱՐ.— Բոլորը միասնական են:
- ԸՆԹԱՆՔԵ.— Բայց ինչպե՞ս կարելի է համաձայնվել ոնգեղջյուր լինելու մտքի հետ: Դա խելքի մոտ բան չէ: Խելքի մոտ բան չէ: **(Գեզիին):** Կուզե՞ք՝ ձեզ օգնեմ սեղանը պատրաստելու:
- ԸՆԹ **(Բերանժեին)**.— Մի անհանգստացե՛ք: Ես գիտեմ՝ որտեղ են ավիսները: **(Գնում, բացում է կախովի պահարանը, որի միջից հանելու է ամանեղենը):**
- ԸՆԹԱՆՔԱՐ **(մեկուսի)**.— Օհ, բայց նա լավ գիտի տան ծակուծուկը...
- ԸՆԹ **(Դյուդարին)**.— Ուրեմն, երեք սպասք, այնպես չէ՞. մեզ հե՞տ եր մնում:
- ԸՆԹԱՆՔԵ **(Դյուդարին)**.— Մնացեք, դե, մնացեք:
- ԸՆԹ **(Բերանժեին)**.— Մարդ ընտելանում է, գիտե՞ք: Արդեն ոչ ոք չի գարմանում ոնգեղջյուրների հոտերի վրա, որոնք մեծ թափով տարվում են փողոցներում: Մարդիկ մի կողմ են քաշվում՝ նրանց համապարհ տալու համար, հետո շարունակում են իրենց գրոհները, իրենց գործին են նայում, կարծես ոչինչ էլ չի եղել:
- ԸՆԹԱՆՔԱՐ.— Եվ խելոք են վարվում:
- ԸՆԹԱՆՔԵ.— Ահ, ոչ, ես չեմ կարող հարմարվել:
- ԸՆԹԱՆՔԱՐ **(խորհելով)**.— Ի՞նչ մոտ հարց է ստաշանում՝ գուցե ես վրա՞ձեմ:
- ԸՆԹԱՆՔԱՐ.— Առաժմ նախաճաշենք:
- ԸՆԹԱՆՔԱՐ.— Այդ ինչպե՞ս, դուք՝ իրավաբան, կարող եք մտադրվել... **(Դրսից լսվում է ոնգեղջյուրների հոտի մեծ աղմուկ, որը շատ արագ հաճախականությամբ դափում է: Լսելի են նաև փողհարություններ ու թմբուկների ձայն):** Այդ ի՞նչ է: **(Լսվում է փուլ եկող մի պատի աղմուկը: Փոշին տարածվում է բեմահարթակի մի մասի վրա, և եթե կարելի է, նաև գործող անձանց վրա, որոնք անհետանում են այդ փոշու մեջ: Լսվում է նրանց խոսակցությունը):**

ԲԵՐԱՆԺԵ.— Ոչինչ չի երևում: Ի՞նչ է տեղի ունենում:

ԴՅՈՒԴԱՐ.— Ոչինչ չի երևում, բայց լսվում է:

ԲԵՐԱՆԺԵ.— Դա բավական չէ:

ԴԵԶԻ.— Փոշին ասեսները պիտի կեղտոտի:

ԲԵՐԱՆԺԵ.— Ինչպիսի քակաստողջապահություն:

ԴԵԶԻ.— Շտապենք ուտել: Էլ չմտածենք այդ մասին: (Փոշին ցրվում է):

ԲԵՐԱՆԺԵ (մատնացույց անելով դահլիճը).— Կործանեցին հրշեջ կայանի պատերը:

ԴՅՈՒԴԱՐ.— Իրոք որ կործանվեցին:

ԴԵԶԻ (որը հեռացել էր լուսամտից և գտնվում է սեղանի մոտ՝ ասես սրբելիս, նետվում է մյուս երկու գործող անձանց մոտ).— Դուրս են գալիս:

ԲԵՐԱՆԺԵ.— Բոլոր հրշեջները, ռնգեղջյուրների մի ամբողջ գունդ՝ թմբուկներն առջևից:

ԴԵԶԻ.— Ողողում են պողոտաները:

ԲԵՐԱՆԺԵ.— Էլ դիմանալու չէ, էլ դիմանալու չէ:

ԴԵԶԻ.— Ուրիշ ռնգեղջյուրներ դուրս են գալիս բակերից:

ԲԵՐԱՆԺԵ.— Դուրս են գալիս և տներից...

ԴՅՈՒԴԱՐ.— Լուսամտներից՝ նույնպես:

ԴԵԶԻ.— Գնում են մյուսներին միանալու: (Սանդղահարթակի ձախ կողմի դռնից դուրս է գալիս մի մարդ, որը հախտուն թափով իջնում է աստիճանները: Հետո՝ մի ուրիշ մարդ, որը խոշոր կտտոջ ունի քթի վերևում: Հետո՝ մի կին, որը ռնգեղջյուրի ամբողջական գլուխ ունի):

ԴՅՈՒԴԱՐ.— Մենք արդեն առավելություն չունենք քանակական տեսակետից:

ԲԵՐԱՆԺԵ.— Նրանցից քանի՞սն է միակտտոջ, քանի՞սը՝ երկկտտոջանի:

ԴՅՈՒԴԱՐ.— Վիճակագիրներն, անշուշտ, հիմա պիտի որ գրադվելիս լինեն այդ հարցով: Ինչպիսի առիթ գիտավեճերի համար:

ԲԵՐԱՆԺԵ.— Այդ երկու տեսակների տոկոսային հարաբերությունը պիտի որ հաշվառված լինի խիստ մոտավոր, այնքան նրանք արագ են աճում: Ժամանակ չունեն: Ժամանակ չունեն հաշվելու:

ԴԵԶԻ.— Ամենատղջախոհ բանը կլինի, որ վիճակագիրներին թողնենք իրենց գործն անեն: Գնանք, սիրելի Բերանժե՛, եկեք ճախաճաշենք: Դա ձեզ կհանգստացնի: Կվերականգնեք ձեր ուժերը: (Դուրս գալիս): Դուք՝ նույնպես: (Նրանք հեռանում են լուսամտից):

Բերանժեն, որին թևանցուկ է արել Դեզին, հեշտությամբ ընդառաջում է նրա պնդումներին: Դյուդարը կես ճանապարհին կանգ է առնում):

ԳՅՈՒԴԱՐ.— Ես շատ քաղցած չեմ կամ ավելի ճիշտ՝ այնքան էլ չեմ սիրում պահածոները: Ես ցանկություն ունեմ ուտել՝ խոտերին նստած:

ԲԵՐԱՆԺԵ.— Այդպիսի բան չաներ: Գիտե՞ք՝ ձեզ ինչպիսի վտանգի էք ենթարկելու:

ԳՅՈՒԴԱՐ.— Ես իրոք չեմ ուզում ձեզ խանգարել:

ԲԵՐԱՆԺԵ.— Բայց մենք ձեզ ասում ենք, որ...

ԳՅՈՒԴԱՐ (Բերանժեին ընդմիջելով).— Ես ձևեր չեմ թափում:

ԳԼԶԻ (Դյուդարին).— Եթե ուզում եք անախայման հեռանալ, մենք հո չենք կարող ստիպել, որ...

ԳՅՈՒԴԱՐ.— Ձեզ վիրավորելու համար չէ, որ չեմ մնում:

ԲԵՐԱՆԺԵ (Դեզին).— Մի թողեք հեռանա: Մի թողեք հեռանա:

ԳԼԶԻ.— Ես իրոք ուզում եմ, որ նա մնա... սակայն յուրաքանչյուրն ազատ է:

ԲԵՐԱՆԺԵ (Դյուդարին).— Մարդն ավելի բարձր է, քան ոնգեղջյուրը:

ԳՅՈՒԴԱՐ.— Ես հակառակը չեմ պնդում: Բայց ձեզ նույնպես հավանություն չեմ տալիս: Չգիտեմ: Փորձը ցույց կտա:

ԲԵՐԱՆԺԵ (Դյուդարին).— Դուք նույնպես թույլ մարդ եք, Դյուդա՛ր: Դա անցողիկ հրապուրանք է, այնպես որ վերջը զղջալու եք:

ԳԼԶԻ — Եթե, իրոք, դա անցողիկ հրապուրանք է, ուրեմն լուրջ վրտանգ չկա:

ԳՅՈՒԴԱՐ.— Ես նկատառումներ ունեմ: Իմ պարտքն ինձ հարկադրում է հետևել իմ պետերին ու ընկերներին՝ դա լինի լավ, թե վատ սպազայի ակնկալությամբ:

ԲԵՐԱՆԺԵ.— Դուք հո նրանց հետ ամուսնացած չեք:

ԳՅՈՒԴԱՐ.— Ես հրաժարվեցի ամուսնությունից. նախընտրեցի համաշխարհային մեծ բնտանիքը փոքրի փոխարեն:

ԳԼԶԻ (Կիսաբերան).— Մենք ձեզ շատ հենք ափսոսալու, Դյուդա՛ր, բայց հնար չունենք:

ԳՅՈՒԴԱՐ.— Իմ պարտքը նրանց չլքելն է. ես կատարելու եմ իմ պարտքը:

ԲԵՐԱՆԺԵ — Ընդհակառակը, ձեր պարտքն այն է, որ... Դուք չգիտեք, որն է ձեր իսկական պարտքը... Ձեր պարտքը նրանց՝ հակադրվելն է՝ պայծառատեսություն, հաստատակամորեն:

ԳՅՈՒԴԱՐ.— Ես պահպանելու եմ իմ պայծառատեսությունը: (Սկսում

է պատվել բեմահարթակի վրա): Իմ լիակատար պայծառաստե-  
սությունը: Եթե քննադատելու հարկ լինի, ավելի լավ է ներսից  
քննադատել, քան թե դրսից: Ես նրանց չեմ լքելու: Նրան չեմ լք-  
քելու:

ԴԵԶԻ.— Նրա սիրտը բարի է:

ԲԵՐԱՆԺԵ.— Նրա սիրտը անչափ շատ է բարի: (Դյուդարին, ապա  
նետվելով դեպի դուռը): Ձեր սիրտը անչափ շատ է բարի, դուք  
մարդկային եք: (Դեզին): Ետ պահեք նրան: Նա սխալվում է:  
Նա մարդկային է:

ԴԵԶԻ.— Ի՞նչ կարող եմ անել: (Դյուդարը բացում է դուռն ու փախ-  
չում է: Երևում է, թե ինչպես արագորեն նա իջնում է աստիճան-  
ներով: Բերանժեհ Դյուդարին հետևում է մինչև սանդղահարթա-  
կը, ոչտեղ ինքը գոռում է նրա ետևից):

ԲԵՐԱՆԺԵ.— Վերադարձեք, Դյուդա՛ր: Մենք ձեզ, իրոք, սիրում ենք.  
մի գնացեք: Ուշ է արդեն: (Ետ է վերադառնում): Ծառ է ուշ:

ԴԵԶԻ.— Ոչինչ չէինք կարող անել: (Փակում է դուռը Բերանժեհի ետե-  
վից, որը նետվում է դեպի դիմացի լուսամուտը):

ԲԵՐԱՆԺԵ.— Հասավ նրանց: Որտե՞ղ է նա հիմա:

ԴԵԶԻ (զայլով լուսամուտի մոտ).— Նրանց հետ է:

ԲԵՐԱՆԺԵ.— Ո՞ր մեկն է:

ԴԵԶԻ.— Հնարավոր չէ իմանալ: Նրան արդեն հնարավոր չէ ճանա-  
չել:

ԲԵՐԱՆԺԵ.— Բոլորն իրար նման են: Բոլորն իրար նման: (Դեզին):  
Նա տեղի տվեց: Դուք ուժով պետք է ետ պահեիք նրան:

ԴԵԶԻ.— Չհամարձակվեցի:

ԲԵՐԱՆԺԵ.— Դուք ավելի հաստատակամ պետք է լինեիք, պետք է  
պնդեիք: Նա ձեզ սիրում էր, այնպես չէ՞:

ԴԵԶԻ.— Նա ինձ երբեիցե պաշտոնապես ոչինչ չի հայտնել:

ԲԵՐԱՆԺԵ.— Բոլորը գիտեին: Չսիրվելու զայրույթից է, որ նա այդ  
արեց: Նա ամաչկոտ էր: Ուզեց քաջագործություն անել ձեր վրա  
տպավորություն թողնելու համար: Դուք տրամադրված չե՞ք նրան  
հետևելու:

ԴԵԶԻ.— Ամենևին: Քանի որ այստեղ եմ ես:

ԲԵՐԱՆԺԵ (լուսամուտից դուրս նայելով).— Հենց միայն նրանք են  
փողոցներում: (Նետվում է դեպի խորքի լուսամուտը): Հենց մի-  
այն նրանք են: Դուք սխալվեցիք, Դեզի՛: (Կրկին նայում է դի-  
մացի լուսամուտից): Ինչքան աչքս կտրում է՝ ոչ մի մարդկային  
սրարած: Փողոցը նրանցն է: Միակոտոշներ, երկկոտոշանիներ,

հավասար քանակով. ոչ մի ուրիշ բնորոշ մանրամասն: (Ասելի է ռնգեղջյուրների վազքի բարձր աղմուկը: Այդ աղմուկները, սակայն, երաժշտականացած են: Խորքի պատին երևում-անհետանում են ռնգեղջյուրների ռնավորված գլուխներ, որոնք մինչև գործողության ավարտը շատանալու են: Վերջում արտացոլված են մնալու ավելի ու ավելի երկար ժամանակով, հետո՝ իվերջո, լըցնելով խորքի պատը, մնալու են վերջնականապես: Այդ գլուխները հետզհետե պետք է ավելի գեղեցկանան, չնայած իրենց ճիվադությանը): Դուք հիասթափված չե՞ք, Դեզի՛: Այդպես է, չէ՛: Դուք ոչինչ չե՞ք ախտսում:

ԳԵԶԻ.— Օ՛հ, ո՛չ, ո՛չ:

ԲԵՐԱՆՓԵ.— Ես այնքան եմ ուզում ձեզ մխիթարել: Ես ձեզ սիրում եմ, Դեզի՛: Էլ մի հեռացեք իմ տնից:

ԳԵԶԻ.— Լուսամուտը փակիր, սիրելի՛ս: Ծատ են աղմկում: Եվ փոշին մինչև այստեղ բարձրանում է: Ամեն ինչ պիտի կեղտոտվի:

ԲԵՐԱՆՓԵ.— Այո՛, այո՛: Դու իրավացի ես: (Նա փակում է դիմացի լուսամուտը, Դեզին՝ խորքինը: Իրար միանում են բեմահարթակի կենտրոնում): Քանի դեռ մենք միասին ենք, ինձ ոչինչ չի ահաբեկում. ամեն ինչ ինձ համար միևնույն է: Ահ, Դեզի՛, ինձ թվում էր, որ երբեք այլևս չեմ կարողանալու սիրահարվել որևէ կնոջ: (Սեղմում է նրա ձեռքերը, թևերը):

ԳԵԶԻ.— Տեսնում ես՝ ամեն ինչ հնարավոր է:

ԲԵՐԱՆՓԵ.— Ինչքան կուզենայի քեզ երջանկացնել: Դու կարո՞ղ ես ինձ հետ երջանկանալ:

ԳԵԶԻ.— Ինչո՞ւ չէ: Եթե դու երջանիկ ես, ուրեմն, ես էլ՝ քեզ հետ: Ասում ես, որ ոչինչ քեզ չի ահաբեկում, բայց ամեն ինչից վախենում ես: Մեզ ի՞նչ կարող է պատահել:

ԲԵՐԱՆՓԵ (կակազելով).— Իմ սեր, իմ ուրախություն, իմ ուրախություն, իմ սեր... Տուր ինձ քո շուրթերը. չէի կարծում, որ կարող եմ ցանկանալ այսքան կրքոտ:

ԳԵԶԻ.— Եղիր ավելի խաղաղ. այժմ ավելի ինքնավստահ եղիր:

ԲԵՐԱՆՓԵ.— Այդպիսին եմ. տուր ինձ քո շուրթերը:

ԳԵԶԻ.— Ծատ եմ հոգնած, սիրելի՛ս: Խաղաղվիր, հանգստացիր: Բազմիր բազկաթոռին: (Դեզիի ուղեկցությամբ հերանժեն գնում, բազմում է բազկաթոռին):

ԲԵՐԱՆՓԵ.— Այս պարագայում կարիք չկար, որ Դյուդարը վիճեր Բուտարի հետ:

**ԴԵԶԻ.**— Էլ մի մտածիր Դյուդարի մասին: Ես քո կողքին եմ: Մենք իրավունք չունենք խառնվելու մարդկանց կյանքին:

**ԲԵՐԱՆԺԵ.**— Դու լավ էլ խառնվում ես իմ կյանքին: Գիտեա՛ ինչպես հաստատական լինել ինձ հետ:

**ԴԵԶԻ.**— Դա նույնը չէ: Ես երբեք չեմ սիրել Դյուդարին:

**ԲԵՐԱՆԺԵ.**— Ես քեզ հասկանում եմ: Եթե այստեղ մնացած լինեիր, շարունակ արգելք պիտի դառնար իմ ու քո միջև: Է՛հ, այո, երջանկությունը եսասիրական է:

**ԴԵԶԻ.**— Հարկավոր է պաշտպանել սեփական երջանկությունը: Ես իրավացի չե՛մ:

**ԲԵՐԱՆԺԵ.**— Ես քեզ պաշտում եմ, Դեզի՛: Հիացած եմ քեզանով:

**ԴԵԶԻ.**— Երբ ինձ ավելի լավ ճանաչես, գուցե էլ չասես այդպիսի խոսքեր:

**ԲԵՐԱՆԺԵ.**— Դու շահում ես ճանաչվելուց, և այնքան գեղեցիկ ես, այնքան գեղեցիկ: (**Նորից լսելի է ոնգեղջյուրների աղմուկը**)... Մանավանդ երբ քեզ համեմատենք սրանց... (**Ձեռքով ցույց է տալիս լուսամտի ուղղությամբ**): Ինձ ասելու ես, որ դա հաճոյախոսություն չէ, բայց նրանք ավելի են շեշտում քո գեղեցկությունը...

**ԴԵԶԻ.**— Դու այսօր քեզ խելո՞ք ես պահել: Կոնյակ չե՛ս խմել:

**ԲԵՐԱՆԺԵ.**— Այո՛, այո՛, ինձ խելոք եմ պահել:

**ԴԵԶԻ.**— Ծի՛շտ ես ասում:

**ԲԵՐԱՆԺԵ.**— Ա՛հ, այո՛, հավաստիացնում եմ քեզ:

**ԴԵԶԻ.**— Ես քեզ հավատա՞մ:

**ԲԵՐԱՆԺԵ (փոքր-ինչ շփոթված).**— Օ՛հ, այո: Ինձ հավատա՛, այո:

**ԴԵԶԻ.**— Ուրեմն, մի փոքրիկ բաժակով կարելի է: Դա կբարձրացնի քո տրամադրությունը: (**Բերանձեռն ուզում է նետվել դեպի շիշը**):

Դու նստած մնա, սիրելի՛ս: Որտե՛ղ է շիշը:

**ԲԵՐԱՆԺԵ (տեղը ցույց տալով).**— Այդտեղ՝ փոքրիկ սեղանին:

**ԴԵԶԻ (շարժվելով դեպի փոքրիկ սեղանը, որի վրայից վերցնելու է բաժակն ու շիշը).**— Լավ ես թաքցրել:

**ԲԵՐԱՆԺԵ.**— Որպեսզի դրան ձեռք տալու գայթակղությունը չունենամ:

**ԴԵԶԻ (Բերանձեռն համար մի փոքր բաժակ լցնելուց հետո, այն պարզում է նրան).**— Դու իրոք խելոքացել ես: Առաջադիմում ես:

**ԲԵՐԱՆԺԵ.**— Քեզ հետ ես ավելին կանեմ:

**ԴԵԶԻ (բաժակը պարզելով).**— Վերցրու. սա պարզևատրում է քեզ համար:

Ի ԲՈՒՆԺԵ (մի թափով խմում է).— Ծնորհակալություն: (Բաժակը նորից պարզում է նրան):

ՊԵՉԻ.— Ա՛հ, ո՛չ, սիրելի՛ս: Այս առափոստյա համար՝ բախկան է: (Բերանձեփց վերցնում է բաժակը և շփ հետ տանում, դնում է փռքրիկ սեղանին): Չեմ ուզում, որ հետո վատ զգաս: (Նորից մոտենում է Բերանձեփին): Իսկ գլխացավդ անցա՞վ:

Ի ԲՈՒՆԺԵ.— Ծառ է պակասել, իմ սե՛ր:

ՊԵՉԻ.— Ուրեմն, հանենք այս գլխակապը. դա քեզ չի սազում:

Ի ԲՈՒՆԺԵ.— Ա՛հ, ո՛չ. ձեռք մի տուր դրան:

ՊԵՉԻ.— Ինչպես թե. պիտի հանենք:

Ի ԲՈՒՆԺԵ.— Վախենամ, թե մի բան լինի դրա տակ:

ՊԵՉԻ (հակառակ Բերանձեփի դիմադրությանը, գլխակապը հանելով).— Ծարունակ քո վախերը, քո մոռյլ մտքերը: Տեսա՞ր. ոչինչ չկա: Քո ճակատը հարթ է:

Ի ԲՈՒՆԺԵ (ճակատը շոշափելով).— Ծիշտ է: Դու ինձ ազատում ես իմ քաղցրեթևերից: (Գեզի՛ն համբուրում է Բերանձեփի ճակատը): Ես ի՞նչ պիտի լինեի առանց քեզ:

ՊԵՉԻ.— Ես քեզ երբեք մեռակ չեմ թողնելու:

Ի ԲՈՒՆԺԵ.— Քեզ հետ ես երբեք տազնապներ չեմ ունենա:

ՊԵՉԻ.— Ես կկարողանամ դրանք վանել:

Ի ԲՈՒՆԺԵ.— Միասին գրքեր կկարդանք. ես կդառնամ բազմագիտակ:

ՊԵՉԻ.— Եվ մանավանդ, այն ժամերին, երբ քիչ լինի երթևեկությունը, երկար կգրոսնենք միասին:

Ի ԲՈՒՆԺԵ.— Այո՛, Սենայի<sup>10</sup> ափին, Լյուքսեմբուրգում<sup>11</sup>...

ՊԵՉԻ.— Կենդանաբանական այգում:

Ի ԲՈՒՆԺԵ.— Ես լինելու եմ ուժեղ ու քաջ: Ես էլ քեզ պաշտպանելու եմ բոլոր չարագործներից:

ՊԵՉԻ.— Ինձ պաշտպանելու կարիքը չես ունենա: Մենք ոչ ոքի չարիք չենք ցանկանում: Ոչ ոք մեզ չարիք չի ցանկանում, սիրելի՛ս:

Ի ԲՈՒՆԺԵ.— Երբեմն չարիք են գործում առանց ցանկանալու: Կամ էլ թույլ են տալիս, որ այն տարածվի: Տեսնում ես, դու նույնիսկ էիր սիրում այդ խեղճ պարոն Թիթեոին: Բայց գուցե նրան այդքան կտրուկ պիտի չասեիր այն օրը, երբ Ցուլը հայտնվեց որնգեպոլորի տեսքով, թե նրա ձեռքի ափերը պալարավոր են:

ՊԵՉԻ.— Ծիշտ էր: Այդպիսին էին ափերը:

Ի ԲՈՒՆԺԵ.— Իհարկե, սիրելի՛ս: Սակայն դու այդ մասին կարող էիր տկճարիկ պակաս կոպտությամբ, ավելի շատ խնայելով նրան: Ես ազդվեց:

ԴԵԶԻ.— Կարծո՞ւմ ես:

ԲԵՐԱՆԺԵ.— Նա ցույց չտվեց, որովհետև ինքնասիրություն ունի: Նա, անշուշտ, արտի խորքում վիրավորվեց: Հենց այդ է, որ պիտի արագացրած լինի նրա որոշումը: Դու գուցե մեղքից փրկած լինեիր մի հոգու:

ԴԵԶԻ.— Ես չէի կարող նախատեսել այն, ինչ պիտի պատահեր նրան... Ան իրեն անկիրթ պահեց:

ԲԵՐԱՆԺԵ.— Իսկ ես, ես ինձ միշտ հանդիմանելու եմ, որ Ժամի հետ ավելի մեղմ չվերաբերվեցի: Ես երբեք չկարողացա լիարժեք ներկայացնել բարեկամության այն զգացումը, որ տածում էի նրա նկատմամբ: Եվ այնքան էլ չմտա նրա դրության մեջ:

ԴԵԶԻ.— Քեզ մի տանջիր: Դու, այնուամենայնիվ, արեցիր, ինչ կարող էիր: Հնարավոր չէ իրագործել անկարելին: Ինչի՞ եմ պետք զղջումները: Էլ մի մտածիր բոլոր այդ մարդկանց մասին: Մոռացիր նրանց: Մի կողմ թող վատ հիշողությունները:

ԲԵՐԱՆԺԵ.— Այդ հիշողություններն իրենք են դառնում լսելի, իրենք են դառնում տեսանելի: Դրանք իրական են:

ԴԵԶԻ.— Չէի կարծում, որ դու այդքան իրապաշտ ես: Կարծում էի, ավելի բանաստեղծական ես: Մի՞թե դու զուրկ ես երևակայությունից: Գոյություն ունեն իրականության մի քանի տարատեսակներ: Ընտրիր դրանցից այն մեկը, որը քեզ ձեռնտու է: Խուսափիր երևակայականի գիրկն ընկնելուց:

ԲԵՐԱՆԺԵ.— Հեշտ է ասել:

ԴԵԶԻ.— Մի՞թե ես բավական չեմ քեզ համար:

ԲԵՐԱՆԺԵ.— Օհ, այո, միանգամայն, միանգամայն:

ԴԵԶԻ.— Ամեն ինչ փչացնելու ես քո խղճի խայթերով: Բոլորս էլ թե՛լ ևս սխալներ ունենք: Սակայն դու և ես՝ ավելի քիչ, քան ուրիշները:

ԲԵՐԱՆԺԵ.— Դու, իրոք, այդպե՞ս ես կարծում:

ԴԵԶԻ.— Մենք համեմատաբար ավելի լավն ենք, քան մարդկանց մեծամասնությունը: Մենք երկուսս էլ, բարի ենք:

ԲԵՐԱՆԺԵ.— Ծիշտ է, դու բարի ես, և ես բարի եմ: Ծիշտ է:

ԴԵԶԻ.— Ուրեմն, մենք իրավունք ունենք ապրելու: Նույնիսկ, ինքներս մեր նկատմամբ պարտականություն ունենք լինել երջանիկ, անկախ ամեն ինչից: Մեղքի զգացումը վտանգավոր նախանշան է Դա մաքրության պակասի նշան է:

ԲԵՐԱՆԺԵ.— Ա՛հ, այո՛, կարող է դրան հասցնել... (Մատնացույց է անում լուսամուտները, որոնց տակից անցնում են ռնգեղջյուրներ, ինչպես և խորքի պատը, որի վրա հայտնվում է ռնգեղջյուրի զը-



**լուխ...):** Նրանցից շատերն այդպես են սկսել:

**ԴԵՋԻ.—** Փորձենք այլևս չգգայ, որ մենք մեղավոր ենք:

**ԲԵՐԱՆՓԵ.—** Ինչքան իրավացի ես, իմ ուրախությունն, իմ դիցունի՛, իմ արեգա՛կ... Ես քեզ հետ եմ, այնպես չէ՛: Ոչ ոք չի կարող մեզ բաժանել իրարից: Կա մեր սերը: Միայն այդ է, որ ճշմարիտ է: Ոչ ոք իրավունք չունի և ոչ ոք չի կարող խանգարել, որ մենք երջանիկ լինենք, այնպես չէ՛: **(Լսվում է հեռախոսի զանգը):** Ո՞վ կարող է լինել:

**ԴԵՋԻ (վախեցած).—** Ընկալուչը մի վերցրու...

**ԲԵՐԱՆՓԵ.—** Ինչո՞ւ որ:

**ԴԵՋԻ.—** Չգիտեմ: Գուցե ավելի լավ է՝ չվերցնել:

**ԲԵՐԱՆՓԵ.—** Թերևս պարոն Թիթեոն է կամ Բոտարը կամ Փանը կամ Դյուդարը, որոնք ուզում են մեզ հայտնել, որ հրաժարվել են իրենց նախկին որոշումից, քանի որ ասում էիր, որ դա նրանց կողմից ընդամենը անցողիկ հրապուրանք է:

**ԴԵՋԻ.—** Չեմ կարծում: Չի կարող պատահել, որ այդքան շուտ փոխած լինեն իրենց տեսակետը: Ժամանակ ունեցած չեն լինի մտածելու: Նրանք իրենց փորձը հասցնելու են ավարտին:

**ԲԵՐԱՆՓԵ.—** Գուցե իշխանություններն են, որոնք միջոցներ են ձեռք առնում և մեզանից օգնություն են խնդրելու, որ կարողանան իրագործել:

**ԴԵՋԻ.—** Ես, որ պիտի զարմանայի, եթե այդպես լիներ: **(Հեռախոսի նոր զանգ):**

**ԲԵՐԱՆՓԵ.—** Հա, այդպես է իշխանությունների զանգն է. ես այն տարբերում եմ: Երկար զանգ է: Ես պետք է արձագանքեմ նրանց կանչին: Դա ուրիշ ոչ ոք լինել չի կարող: **(Վերցնում է ընկալուչը):** Այո՛: **(Որպես պատասխան միայն մոնչոցներ են, որոնք հընչում են լսափողից):** Լսո՞ւմ ես՝ մոնչոցներ: Լսիր: **(Դեզին լսափողը դնում է ականջին, ընկրկում է և արագ կախում է ընկալուչը):**

**ԴԵՋԻ (անսրբեկված).—** Ի՞նչ կարող է պատահել:

**ԲԵՐԱՆՓԵ.—** Հիմա էլ մեր գլխին օյիներ են խաղում:

**ԴԵՋԻ —** Գոեհկանաշակ օյիներ:

**ԲԵՐԱՆՓԵ.—** Տեսա՞ր. ես քեզ ասում էի:

**ԴԵՋԻ —** Դու ինձ ոչինչ էլ չես ասել:

**ԲԵՐԱՆՓԵ.—** Ես դրան սպասում էի, ես այդ նախատեսել էի:

**ԴԵՋԻ —** Դու ոչինչ էլ չէիր նախատեսել: Դու երբեք ոչինչ չես նախատեսում: Դու իրադարձությունները նախատեսում ես միայն այն ժամանակ, երբ արդեն պատահել են:

**ԲԵՐԱՆԺԵ.**— Օ՛հ, հա՛, ես նախատեսում եմ, նախատեսում եմ:

**ԴԵԶԻ.**— Նրանք բարեհամբույր չեն ամենևին: Չարանեմզ են: Ես չեմ սիրում, որ ինձ ծաղրում են:

**ԲԵՐԱՆԺԵ.**— Նրանք չեն համարձակվի քեզ ծաղրել: Այդ ինձ են ծաղրում:

**ԴԵԶԻ.**— Եվ քանի որ ես քեզ հետ եմ, պարզ է, որ ինձ էլ բաժին է հասնում: Նրանք վերժ են լուծում: Բայց մենք նրանց ի՞նչ ենք արել: **(Հեռախոսի նոր զանգ):** Հեռացրու կապարները:

**ԲԵՐԱՆԺԵ.**— Հեռախոսակապանն այդ արգելում է:

**ԴԵԶԻ.**— Դու ոչինչ չես համարձակվում և դեռ ուզում ես ինձ վերցնել քո պաշտպանության տակ: **(Դեզին հեռացնում է կապարները: Զանգը դադարում է):**

**ԲԵՐԱՆԺԵ (նետվելով դեպի ուղիորդներին).**— Գործի դնենք ուղիորդներին՝ նորություններն իմասալու համար:

**ԴԵԶԻ.**— Այո, պետք է իմանանք, թե ինչ օրի ենք հասել: **(Ռադիոընդունիչից հնչում են մոնչոցներ: Բերանժեն եռանդով պատում է կոճակը: Ռադիոընդունիչը լռում է, սակայն դեռևս լսվում են մոնչոցների հեռավոր արձագանքներ):** Սա իրոք որ լրջանում է: Դա ինձ դուր չի գալիս: Ես այդ չեմ ընդունում: **(Նա դողում է):**

**ԲԵՐԱՆԺԵ (շատ գրգռված).**— Հանգիստ: Հանգիստ:

**ԴԵԶԻ.**— Գրավել են ուղիոկայանները:

**ԲԵՐԱՆԺԵ (դողալով ու գրգռված).**— Հանգիստ. հանգիստ, հանգիստ: **(Դեզին վազում է դեպի խորքի լուսամուտը, նայում է, ապա դեպի դիմացի լուսամուտը. նայում է: Բերանժեն նույնն է անում հակառակ ուղղությամբ, ապա երկուսը հայտնվում են բեմահարթակի կենտրոնում, իրար դիմաց):**

**ԴԵԶԻ.**— Սա ամենևին էլ կատակ չէ: Նրանք, իրոք, լրջորեն են կայել իրենց բռնած գործին:

**ԲԵՐԱՆԺԵ.**— Հենց միայն իրենք են, որ գոյություն ունեն: Հենց միայն իրենք են, որ գոյություն ունեն: Իշխանությունները դարձել են նրանց կողմնակիցը: **(Նորից այս ու այն կողմ են վազում, ինչպես քիչ առաջ, ապա կրկին իրար հանդիպում բեմահարթակի կենտրոնում):**

**ԴԵԶԻ.**— Էլ ոչ մի տեղ մարդ չկա:

**ԲԵՐԱՆԺԵ.**— Մենք մե՞նակ ենք: Մենք մե՞նակ ենք մնացել:

**ԴԵԶԻ.**— Դու հենց այդ էիր ուզում:

**ԲԵՐԱՆԺԵ.**— Այդ դու էիր ուզում:

**ԴԵԶԻ.**— Այդ դո՛ւ էիր:

ԲԵՐԱՆԺԵ.— Դո՛ւ: (Աղմուկները գալիս են բոլոր կողմերից: Ռընգեղջյուրների գլուխները լցնում են խորքի պատը: Տան մեջ աջից ու ձախից լսվում են վայրի գազանների դոփող ոտնաձայներն ու աղմկոտ հնքը: Այդ բոլոր աղմուկները, սակայն, ռիթմավորված են ու երածշտականացրած: Վերևից նույնպես լսելի են ուժգին աղմուկներ: Առաստաղից գաջ է թափվում: Տունը ցնցվում է):

ՊԵՋԻ.— Երկիրը շարժվում է: (Չգիտի, ուր փախչի):

ԲԵՐԱՆԺԵ.— Ոչ, մեր հարևաններն են, միասնականիները: (Բռունցքը թափ է տալիս աջ ու ձախ, բոլոր ուղղություններով): Կանգ առեք, վերջապես: Խանգարում եք մեր աշխատանքը: Աղմուկներն արգելված են: Աղմկելն արգելվում է:

ՊԵՋԻ.— Նրանք քեզ չեն էլ լսելու: (Աղմուկները, սակայն, նվազել են և դառնում են լոկ հնչուն ու երածշտական ինչ-որ ֆոն):

ԲԵՐԱՆԺԵ (նույնպես վախեցած).— Մի՛ վախեցիր, իմ սե՛ր: Մենք միասին ենք: Մի՞թե ինձ հետ դու քեզ լավ չես զգում: Մի՞թե ես քեզ համար բավական չեմ: Ես կվանեմ քո բոլոր տագնապները:

ՊԵՋԻ.— Գուցե այդ մենք ենք սխալը:

ԲԵՐԱՆԺԵ.— Էյ մի մտածիր այդ մասին: Մեղքի զգացումը վտանգավոր է: Ապրենք մեր կյանքը, երջանիկ լինենք: Մեզ վրա դրված է երջանիկ լինելու պարտականությունը: Նրանք չարանենգ չեն: Մենք նրանց չարիք չենք պատճառում: Մեզ հանգիստ են թողնելու: Խաղաղվիր, հանգստացիր: Տեղավորվիր բազկաթոռի մեջ: (Տառնում է նրան մինչև բազկաթոռը): Խաղաղվիր: (Դեզին տեղափոխվում է բազկաթոռի մեջ): Մի բաժակ կոնյակ կխմե՛ս՝ ուժեղ դերականագնելու համար:

ՊԵՋԻ.— Գլուխս ցավում է:

ԲԵՐԱՆԺԵ (վերցնելով քիչ առաջվա գլխակապը, դրանով փաթաթում է Դեզիի գլուխը).— Ես քեզ սիրում եմ, իմ սե՛ր: Մի մտահոգվիր: Կես նրանց մոտ անցողիկ երևույթ է: Անցողիկ հրապուրանք:

ՊԵՋԻ.— Կես նրանց մոտ անցողիկ երևույթ չէ: Վերջնական է:

ԲԵՐԱՆԺԵ.— Ես քեզ սիրում եմ, ցնորվելու չափ սիրում եմ քեզ:

ՊԵՋԻ (գլխակապը հանելով).— Ինչ ուզում է, թող լինի: Ի՞նչ կարող եմ քեզ անել, որ ..

ԲԵՐԱՆԺԵ.— Բոլորը խելագարվել են: Աշխարհը հիվանդ է: Բոլորը հիվանդ են:

ՊԵՋԻ.— Աղ մենք չէ, որ նրանց պիտի բուժենք:

ԲԵՐԱՆԺԵ.— Ինչպե՛ս նույն տան մեջ ապրել նրանց հետ, միասին:

- ԴԵԶԻ (հանդարտվելով).— Պետք է խոհեմ լինել: Պետք է գտնել մի modus vivendi<sup>12</sup>, պետք է ջանանք լեզու գտնել նրանց հետ:
- ԲԵՐԱՆԺԵ.— Նրանք մեզ չեն կարող հասկանալ:
- ԴԵԶԻ.— Այնուամենայնիվ, անհրաժեշտ է: Ուրիշ ելք չկա:
- ԲԵՐԱՆԺԵ.— Դու ինքդ նրանց հասկանո՞ւմ ես:
- ԴԵԶԻ.— Դեռևս ոչ: Բայց մենք պետք է փորձենք հասկանալ նրանց հոգեբանությունը, սովորենք նրանց լեզուն:
- ԲԵՐԱՆԺԵ.— Նրանք լեզու չունեն: Ականջ դիր... դու սա լեզո՞ւ ես համարում:
- ԴԵԶԻ.— Դու ի՞նչ գիտես: Հո դու բազմալեզվագետ չես:
- ԲԵՐԱՆԺԵ.— Մենք հետո կխոսենք այդ մասին: Նախ՝ պետք է նախաճաշել:
- ԴԵԶԻ.— Ես էլ քաղցած չեմ: Ծառ եղալ: Էլ չեմ կարող դիմադրել:
- ԲԵՐԱՆԺԵ.— Բայց դու ինձանից ուժեղ ես: Դու հո թույլ չես տալու, որ նրանք վրադ ազդեն: Ես քո քաջությամբ է, որ հիացած եմ:
- ԴԵԶԻ.— Դու այդ պրոբեմ ասել ես:
- ԲԵՐԱՆԺԵ.— Դու վատահ ես, չէ՞, իմ սիրո վրա:
- ԴԵԶԻ.— Իհարկե:
- ԲԵՐԱՆԺԵ.— Ես քեզ սիրում եմ:
- ԴԵԶԻ.— Դու քեզ կրկնում ես, հոգի՛ս:
- ԲԵՐԱՆԺԵ.— Լսիր, Դեզի՛, մենք կարող ենք մի բան անել: Մենք ունենալու ենք զավակներ: Մեր զավակներն էլ ունենալու են իրենց հերթին. դա ժամանակ պիտի խի, բայց մենք՝ երկուսով, կարող ենք վերասերել մարդկությունը:
- ԴԵԶԻ.— Վերասերել մարդկությունը:
- ԲԵՐԱՆԺԵ.— Մենք լինելու ենք Ադամն ու Եվան:
- ԴԵԶԻ.— Ժամանակին: Ադամն ու Եվան... նրանք շատ քաջ էին:
- ԲԵՐԱՆԺԵ.— Մենք նույնպես կարող ենք քաջ լինել: Ի դեպ, շատ քաջություն միանգամից պետք էլ չի: Այդ ինքն իրեն է ստացվում, ժամանակի ընթացքում, համբերության շնորհիվ:
- ԴԵԶԻ.— Բայց ինչի՞ համար:
- ԲԵՐԱՆԺԵ.— Այո, այո, մի քիչ քաջություն, թեկուզ շատ քիչ:
- ԴԵԶԻ.— Ես չեմ ուզում երեխաներ ունենալ: Գլխացավանք է:
- ԲԵՐԱՆԺԵ.— Բայց այդ դեպքում, ուրիշ ի՞նչ կերպ փրկենք աշխարհը:
- ԴԵԶԻ.— Եվ ինչո՞ւ փրկենք:
- ԲԵՐԱՆԺԵ.— Այդ ի՞նչ հարց է... Դու այդ արա ինձ համար, Դեզի՛:

◆րկենք աշխարհը:

ԳԵՋԻ.— Վերջիվերջո, թերևս այդ մենք ենք, որ կարիք ունենք փրկվելու: Թերևս այդ մենք ենք աննորմալները:

ԲԵՐԱՆՏԵ.— Զստանցում ես, Դեզի', ջերմություն ունես:

ԳԵՋԻ.— Տեսնո՞ւմ ես ուրիշների, որոնք մեր ցեղից լինեն:

ԲԵՐԱՆՏԵ.— Դեզի', չեմ ուզում լսել քո այդ ասածը: (Դեզին չորս կողմն է նայում՝ բոլոր ոնգեղջյուրներին, որոնց գլուխները հայտնվում են պատերի վրա, սանդղահարթակի դռանը, ինչպես նաև բազրիքի եզրին):

ԳԵՋԻ.— Ահա սրանք են մարդիկ: Նրանց տեսքն ուրախ ու զվարթ է: Իրենք իրենց լավ են զգում: Ամենևին նման չեն խելագարների: Ծառ բնական են: Հիմք են ունեցել այդպիսին դառնալու:

ԲԵՐԱՆՏԵ (ձեռքերն իրար միացնելով և հուսահատ նայելով Դեզիին).— Այդ մենք ենք իրավացի, Դեզի': Հավաստիացնում եմ քեզ:

ԳԵՋԻ.— Ինչպիսի հավակնոտություն...

ԲԵՐԱՆՏԵ.— Դու հո լավ գիտես, որ ես իրավացի եմ:

ԳԵՋԻ.— Բացարձակ իրավացիություն գոյություն չունի: Այդ աշխարհն է իրավացի: Ոչ՝ դու, ոչ՝ ես:

ԲԵՐԱՆՏԵ.— Հա, Դեզի', ես եմ իրավացի: Ապացույցն այն է, որ դու ինձ հասկանում ես, երբ ես խոսում եմ քեզ հետ:

ԳԵՋԻ.— Դա ոչինչ չի ապացուցում:

ԲԵՐԱՆՏԵ.— Ապացույցն այն է, որ ես քեզ սիրում եմ այնքան, ինչքան մի տղամարդ կարող է սիրել մի կնոջ:

ԳԵՋԻ.— Ծիծաղելի փաստարկ:

ԲԵՐԱՆՏԵ.— Ես քեզ այլևս չեմ հասկանում, Դեզի': Սիրելի՛ս, դու այլևս չգիտես, թե ինչ ես ասում: Սերը, սերը, դե ի՞նչ ասեմ, սերը...

ԳԵՋԻ.— Ես մի քիչ ամաչում եմ այդ սեր կոչեցյալից, այդ հիվանդագին զգացումը, տղամարդու այդ թուլությունը: Եվ կնոջը՝ նույնպես: Դա չի կարող համեմատվել կրակոտության հետ, այն արտասովոր եռանդի հետ, որոնցով ճառագայթո՞ւմ են մեզ շրջապատող բոլոր այս արարածները:

ԲԵՐԱՆՏԵ.— Եռա՞նդ: Դու եռա՞նդ ես ուզում: Ահավասիկ, ահա քեզ՝ Եռանդ: (Ապտակում է նրան):

ԳԵՋԻ.— Օհ, ես երբեք չեի կարծի... (Փլվում է բազկաթոռի մեջ):

ԲԵՐԱՆՏԵ.— Օհ, ներիր ինձ, սիրելի՛ս, ներիր ինձ: (Ուզում է համբուրել նրան: Նա խուչս է տալիս): Ներիր ինձ, սիրելի՛ս: Ես չեի

ուզում: Չգիտեմ ինձ հետ ինչ պատահեց, ես այդ ինչպե՛ս բռնըկ-  
վեցի:

ԴԵՁԻ.— Դա կատարվեց այն պատճառով, որ դու այլևս փաստարկ-  
ներ չունես: Պարզ է:

ԲԵՐԱՆԺԵ.— Ավաղ: Մի քանի րոպեի ընթացքում, մենք, ուրեմն, ապ-  
րեցինք քաանհինգ տարվա ամուսնական կյանք:

ԴԵՁԻ.— Ես քեզ էլ եմ խղճում, հասկանում եմ քեզ:

ԲԵՐԱՆԺԵ (մինչ Դեզին լաց է լինում).— Էհ, ճիշտ է, ես, անկաս-  
կած, այլևս չունեմ փաստարկներ: Դու հավատացած ես, որ նը-  
րանք ինձանից ուժեղ են, թերևս ուժեղ են մեզանից:

ԴԵՁԻ.— Անտարակույս:

ԲԵՐԱՆԺԵ.— Հակառակ ամեն ինչի, ես, հավատա, քեզ երդվում եմ.  
Ես չեմ հրաժարվելու, ես, ես չեմ հրաժարվելու:

ԴԵՁԻ (վեր է կենում, մոտենում Բերանժեին, թևերով գրկում է նրա  
վիզը).— Իմ խեղճ սիրելի, ես քեզ հետ մինչև վերջը դիմադրելու  
եմ:

ԲԵՐԱՆԺԵ.— Կկարողանա՞ս:

ԴԵՁԻ.— Ես իմ խոսքի տերը պիտի լինեմ: Վստահիր ինձ: (Ռընգ-  
եղջյուրների աղմուկ, որ դարձել է մեղեդային): Նրանք երգում  
են, լսո՛ւմ ես:

ԲԵՐԱՆԺԵ.— Չեն երգում: Մոնչում են:

ԴԵՁԻ.— Երգում են:

ԲԵՐԱՆԺԵ.— Մոնչում են՝ ասում եմ:

ԴԵՁԻ.— Դու խելագարվել ես. նրանք երգում են:

ԲԵՐԱՆԺԵ.— Ուրեմն, դու երաժշտական լսողություն չունես:

ԴԵՁԻ.— Դու երաժշտությունից ոչինչ չես հասկանում, իմ խեղճ բա-  
րեկամ, և հետո՛՛ նայիր. խաղում են, պարում են:

ԲԵՐԱՆԺԵ.— Դու այդ պա՛ր ես անվանում:

ԴԵՁԻ.— Այդ է նրանց պարելու ձևը. նրանք գեղեցիկ են:

ԲԵՐԱՆԺԵ.— Գարշելի են:

ԴԵՁԻ.— Ես չեմ ուզում, որ նրանց վատաբանեն: Դա ինձ վշտացնում  
է:

ԲԵՐԱՆԺԵ.— Ներիր ինձ, հո չենք կովելու նրանց պատճառով:

ԴԵՁԻ.— Նրանք աստվածներ են:

ԲԵՐԱՆԺԵ.— Դու չափազանցեցում ես, սիրելի՛ս: Լավ նայիր, թե ինչ-  
պիսին են:

ԴԵՁԻ.— Դու մի խանդիր, սիրելի՛ս: Դու էլ ինձ ներիր: (Նորից մոտե-

նում է հերանժեին, ուզում է նրան առնել իր թևերի մեջ: Այս անգամ հերանժեն է խույս տալիս):

ԲԼԲԱՆԺԵ.— Ես հիշեցնում եմ, որ մեր տեսակետները լիովին հաստատ են միմյանց: Ավելի լավ է՝ այլևս չվիճարանենք:

ՊԵՉԻ.— Դե, մի եղիք մանրախնդիր:

ԲԼԲԱՆԺԵ.— Մի եղիք հիմար:

ՊԵՉԻ (հերանժեին, որը մեջքով շրջվել է դեպի նա: հերանժեն նայում է հայելու մեջ, զննում է իր դեմքը).— Մեր միասնական կյանքն այսուհետև անհնարին է: (Մինչ հերանժեն շարունակում է իրեն նայել հայելու մեջ, Դեզին կամացուկ ուղղվում է դեպի դուռը՝ ասելով): Նա բարեհամբույր չէ: Իսկապես, որ նա բարեամբույր չէ ամենևին: (Դուրս է գալիս: Երևում է, թե նա ինչպես զանդադորեն իջնում է սանդուղքի վերևի աստիճաններով):

ԲԼԲԱՆԺԵ (դեռևս նայելով հայելու մեջ).— Ըստ իս, մարդ առածդ այնքան էլ զգվելի բան չէ: Եվ սակայն ամենևին էլ գեղեցիկների թվին չեմ պատկանում: Հավատա ինձ, Դեզի': (Շրջվում է): Դեզի', Դեզի': Ռրտե՛ղ ես, Դեզի': Դու ինձ չպետք է լքես: (Նետվում է դեպի դուռը): Դեզի': (Հասնելով սանդղահարթակին, խոնարհվում է բազրիքի վրա): Դեզի', ետ բարձրացիր: Վերադարձիր ինձ մոտ, իմ գողտրի՛կ Դեզի: Դու նույնիսկ չնստահաճեցիր: Դեզի', ինձ մի թող մեն-մենակ: Դու այդ ի՞նչ էիր խոստացել, Դեզի', Դեզի': (Հրաժարվում է նրան կանչելուց, հուսահատական շարժում է անում ու վերադառնում է սենյակ): Իհարկե: Այլևս իրարու էլ ինձ հասկանում: Անհամերաշխ ընտանիք: Ապրելու հնար չկար: Բայց նա չպետք է հեռանար ինձանից, առանց բացատրվելու: (Նստում է չորս կողմը): Մի երկտող անգամ չի թողել: Այդպես փ կարելի: Ես հիմա բոլորովին միայնակ եմ: (Գնում, բանալիով կոտորում է դուռը. խնամքով, բաց գալքացած): Ինձ, որ չեմ կարողանա կոտրել: (Խնամքով փակում է լուսամուտները): Ինձ, որ չեմ կարողանա կոտրել: (Դիմում է ռեզեդջուրների բոլոր գլուխներին): Ես ձեզ չեմ հետևելու: Չեզ ես չեմ հասկանում: Ես մրտադիր եմ այն, ինչ կամ: Ես մարդկային արարած եմ: Մարդկային արարած: (Գնում, նստում է բազկաթոռին): Դրոությունը բազարձակապես անտանելի է: Իմ սխալն էր, որ նա մեկնեց: Ես ամեն ինչ էի նուս համար: Տեսնես՝ ի՞նչ բախտի պիտի արժանանա: Եվս մեկը, որ ծանրաճավ իմ խղճին: Ես պատկերացնում եմ վատթարագույնը. վատթարագույնը հնարավոր է: Խեղճ երեխա՝ լքված ճիւղերի այս աշխարհում: Ոչ ոք չի կարող ինձ օգնել, որ նո-

րից գտնեմ նրան: Ոչ ոք, որովհետև ոչ ոք չկա: **(Նոր մոնչոցներ, խելացնոր վազք, փոշու ամպեր):** Նրանց չեմ ուզում լսել: Բամբակ պիտի խցկեմ ականջներս: **(Բամբակ է խցկում ականջների մեջ և ինքն իր հետ խոսում է՝ հայելուն նայելիս):** Ուրիշ ելք չկա՝ նրանց համոզելուց բացի: Նրանց համոզել, բայց ինչո՞ւմ: Կերպարանափոխումներն արդյոք ետադա՞րձ են արդյոք: Դա հերկուլեսյան աշխատանք պիտի լինի, իմ ուժերից վեր: Նախ, նրանց համոզելու համար, հետները պետք է խոսել: Հետները խոսելու համար՝ պետք է սովորել նրանց լեզուն: Կամ թե իրենք պիտի սովորեն իմ լեզուն: Բայց ես ի՞նչ լեզվով եմ խոսում: Ո՞րն է իմ լեզուն: Արդյոք դա ֆրանսերե՞ն է: Պիտի որ ֆրանսերեն լինի: Բայց ի՞նչ է ֆրանսերենը: Ցանկության դեպքում դա կարելի է ֆրանսերեն համարել. ոչ ոք չի կարող այդ հաստատել, ես միակն եմ, որ խոսում է այդ լեզվով: Այդ ի՞նչ եմ ասում: Արդյոք ես ինքս ինձ հասկանո՞ւմ եմ: Արդյոք ես ինքս ինձ հասկանո՞ւմ եմ: **(Գընում է դեպի սենյակի կենտրոնը):** Եվ եթե, ինչպես ասել էր Դեզի, նրանք են իրավացի: **(Վերադառնում է դեպի հայելին):** Մարդը տգեղ չէ, մարդը տգեղ չէ: **(Նայում է և ձեռքը սահեցնում է դեմքի վրայով):** Ի՞նչ տարօրինակ բան: Այդ դեպքում ես ինչի՞ եմ նման: Ինչի՞ եմ նման: **(Նետվում է դեպի կախովի պահարանը, լուսանկարներ է հանում ու նայում):** Լուսանկարներ: Ուլքե՞ր են բոլոր այս մարդիկ: Թիթե՞ն կամ ավելի շուտ՝ Դե՞զի: Եվ այս մեկը Բոտա՞րն է, Կյուդա՞րը, թե՞ Փանը: Կամ գուցե ես եմ՝ ինքս: **(Նորից նետվում է դեպի կախովի պահարանը, որտեղից հանում է երկու կամ երեք նկար):** Այո, ես ինձ ճանաչում եմ. այդ ես եմ, այդ ես եմ: **(Գնում նկարները կախում է խորքի պատին, ռնգեղջյուրների գլուխների կողքին):** Այդ ես եմ, այդ ես եմ: **(Երբ նա կախում է նկարները, պարզվում է, որ դրանք պատկերում են մի ծերունու, մի գիրուկ կնոջ և մի ուրիշ տղամարդու: Այդ դիմանկարների տգեղությունն աչքի է զարնում ռնգեղջյուրների անչափ գեղեցկացած գլուխների կողքին: Բերանժեն ընկրկում է նրկարները դիտելու համար):** Ես գեղեցիկ չեմ: Ես գեղեցիկ չեմ: **(Նկարներն իջեցնում է պատից ու կատաղած դրանք շարտում է հատակին: Մոտենում է հայելուն):** Այդ նրանք են գեղեցիկ: Ես սխալվեցի: Օ՛հ, ինչքան կուզենայի լինել նրանց նման: Ավա՛ղ, ես կոտոշ չունեմ: Ինչքա՞ն տգեղ է տափակ ճակատը: Ինձ հարկավոր է մեկ կամ երկու կոտոշ՝ կախ ընկած դիմագծերս արկելու համար: Գուցե աճի, և ես այլևս չամաչեմ, կկարողանամ գնալ,



գտնել բոլոր մյուսներին: Բայց չի աճում: **(Նայում է իր ափերին):** Չետքերս խոնավ են: Դառնալո՞ւ են արդյոք կոշտ ու կոպիտ: **(Հանում է բանկոնը, քանդում է վերնաշապիկը, կործքն է դիտում հայելու մեջ):** Մաշկս թույլ է: Ահ, այս անչափ ճերմակ ու մազոտ մարմինը: Ինչպես կուզենայի, որ մաշկս սևեղանար և գունավորվեր, դառնար սքանչելի մուգ կանաչ: Ունենայի պատշաճ մերկություն, անմազ, ինչպես իրեցնը: **(Ականջ է դնում մորմնչոցներին):** Նրանց երգերը հմայիչ են, մի քիչ խատաշունչ, բայց անտարակույս հմայիչ: Ախ, եթե կարողանայի նրանց նման: **(Փորձում է հետևել նրանց օրինակին):** Ահր՛հ, ահր՛հ, բը՛ռո: Ո՛չ, չի ստացվում: Նորից փորձենք, ավելի բարձր: Ահր՛հ, ահր՛հ, բը՛ռո: Ո՛չ, ո՛չ, չի ստացվում: Ինչքան թույլ է: Ինչքան պակասում են ուժն ու եռանդը: Չեմ կարողանում մոնչալ: Ես միայն ոռնում եմ: Ահր՛հ, ահր՛հ, բը՛ռո: Ունոցները մոնչոցներ չեն: Խիղճս ինչպես է ինձ տանջում: Ես ժամանակին պիտի գնայի նրանց հետքերով: Հիմա շատ ուշ է: Ափսոս, ես ճիվաղ եմ. ճիվաղ եմ ես: Ավաղ, ես երբեք չեմ դառնալու ոնգեղջյուր: Երբեք, երբեք: Էլ չեմ կարող փոխակերպվել: Ես այդ կուզենայի, այնքան կուզենայի, բայց չեմ կարող: Էլ ի վիճակի չեմ ինձ դիտելու հայելու մեջ: Անչափ շատ եմ ամաշում: **(Մեջքով շրջվում է դեպի հայելին):** Ինչքան տգեղ եմ: Վայ նրան, ով կուզենա պահպանել իր ինքնատիպությունը: **(Հանկարծակի ցնցվում է):** Է՛հ, հերն էլ անիծած: Ես ինքս ինձ սրաշտպանելու եմ ընդդեմ բոլորին: Հրացանս, հրացանս: **(Գոռալով շրջվում է դեպի խորքի պատը, որի վրա դաջված են ոնգեղջյուրների գլուխները):** Ընդդեմ բոլորին. ես սրաշտպանելու եմ ինքս ինձ՝ ընդդեմ բոլորին: Ես սրաշտպանելու եմ ինքս ինձ: Ես վերջին մարդն եմ: Ես մնալու եմ այդպիսին մինչև վերջ: Ես չեմ գիտելու իմ դիրքերը:

Վ ա ր ա գ ո յ թ

ԱԼԲԵՐ ԿԱՄՅՈՒ

ԿԱԼԻԳՈՒԼԱ

Գ Ո Ր Ծ Ո Ղ Ա Ն Ջ Ի Ն Ք

ԿԱԼԻԳՈՒԼԱ  
ԿԱՅԵՄՈՆԻԱ  
ՀԵԼԻԿՈՆ  
ՍԿԻՊԻՈՆ  
ՇԵՐԵԱ  
ՄԵՆԵԿՏԻՈՒՄ (ծեր պատրիկ)  
ՄԵՏԵԼԻՈՒՄ (պատրիկ)  
ԼԵՊԻԴՈՒՄ (պատրիկ)

ՍԿՏԱՎԻՈՒՄ (պատրիկ)  
ՊԵՏՐԻՍԻՈՒՄ  
ՄԵՐԵԱ  
ՄՈՒՍԻՈՒՄ  
ԱՌԱՋԻՆ ՊԱՀԱԿ  
ԵՐԿՐՈՐԴ ՊԱՀԱԿ  
ԱՌԱՋԻՆ ԾԱՌԱ  
ԵՐԿՐՈՐԴ ԾԱՌԱ

ԵՐՐՈՐԴ ԾԱՌԱ  
ՄՈՒՍԻՈՒՄԻ ԿԻՆՔ  
ԱՌԱՋԻՆ ՊՈՆՏ  
ԵՐԿՐՈՐԴ ՊՈՆՏ  
ԵՐՐՈՐԴ ՊՈՆՏ  
ՉՈՐՐՈՐԴ ՊՈՆՏ  
ՀԻՆԳԵՐՈՐԴ ՊՈՆՏ  
ՎԵՑԵՐՈՐԴ ՊՈՆՏ

# ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՋԻՆ

## ՏԵՍԱՐԱՆ ԱՌԱՋԻՆ

Պալատի դահլիճում խմբված են պատրիկներ, որոնցից մեկը ամենատարիքոտն է: Նրանց շարժումները նյարդային են:

ԱՌԱՋԻՆ ՊԱՏՐԻԿ.— Նորից ոչինչ:

ԾԵՐ ՊԱՏՐԻԿ.— Առավոտյան ոչինչ, երեկոյան ոչինչ:

ԵՐԿՐՈՐԴ ՊԱՏՐԻԿ.— Ահա երեք օր է, ոչինչ:

ԾԵՐ ՊԱՏՐԻԿ.— Սուրհանդակները գնում են, գալիս: Նրանք օրորում են գլուխները ու ասում «ոչինչ»:

ԵՐԿՐՈՐԴ ՊԱՏՐԻԿ.— Ամբողջ Հոռմը տակն ու վրա են արել: Էլ բան չմնաց անելու:

ԱՌԱՋԻՆ ՊԱՏՐԻԿ.— Ինչո՞ւ վաղաժամ անհանգստանալ: Սպասենք: Նա գուցե կվերադառնա այնպես աննկատ, ինչպես որ գնաց:

ԾԵՐ ՊԱՏՐԻԿ.— Նրան տեսա պալատից դուրս գալուց: Տարօրինակ էր նրա հայացքը:

ԱՌԱՋԻՆ ՊԱՏՐԻԿ.— Ես էլ ներկա էի, և նրան հարցրեցի, թե ինչ է պատահել:

ԵՐԿՐՈՐԴ ՊԱՏՐԻԿ.— Պատասխանե՞ց:

ԱՌԱՋԻՆ ՊԱՏՐԻԿ.— Միայն մի բան՝ «ոչինչ»: (Դադար: Ներս է մտնում Հելիկոնը՝ սոխ ուտելով):

ԵՐԿՐՈՐԴ ՊԱՏՐԻԿ (նյարդային).— Մտատանջ վիճակ է:

ԱՌԱՋԻՆ ՊԱՏՐԻԿ.— Դե, ինչ արած, բոլոր երիտասարդներն էլ այդպիսին են:

ԾԵՐ ՊԱՏՐԻԿ.— Բնական է: Տարիքն ամեն ինչ հարթում է:

ԵՐԿՐՈՐԴ ՊԱՏՐԻԿ.— Կարծո՞ւմ եք:

ԱՌԱՋԻՆ ՊԱՏՐԻԿ.— Մաղթենք, որ նա մոռանա:

ԾԵՐ ՊԱՏՐԻԿ.— Իհարկե, մեկը կորցնենք, տասը շահենք:

ՀԵԼԻԿՈՆ.— Ինչո՞ւ եք կարծում, որ այդ ամենը սերն է դրդել:

ԱՌԱՋԻՆ ՊԱՏՐԻԿ.— Ուրիշ էլ ի՞նչ:

ՀԵԼԻԿՈՆ.— Գուցե լյարդի ցավի՞ց է, կամ պարզապես ամեն օր մեզ տեսնելու զզվանքից: Թերևս, ավելի հանդուրժելի լինեին մեր ժամանակակիցները, եթե ժամանակ առ ժամանակ փոխեին իրենց մոտքները: Բայց ոչ, նույնն են, միշտ նույն ծամածուլվածները:

ԾԵՐ ՊԱՏՐԻԿ.— Ինձ թվում է, որ սիրուց է: Այսպես ավելի հուզիչ է:

ՀԵԼԻԿՈՆ.— Եվ ապահով, հատկապես ապահով: Սա մի տեսակ հի-  
վանդություն է, որ չի խնայում ո՛չ խելոքին, ո՛չ ապուշին:

ԱՌԱՋԻՆ ՊԱՏՐԻԿ.— Բարեբախտաբար սիրո վիշտը հավերժական  
չէ: Միթե մի տարուց ավելի կարող ես տանջվել:

ԵՐԿՐՈՐԴ ՊԱՏՐԻԿ.— Ես՝ ոչ:

ԱՌԱՋԻՆ ՊԱՏՐԻԿ.— Ոչ որ չի կարող:

ԾԵՐ ՊԱՏՐԻԿ.— Այլապես ապրելը կդառնար անհնարին մի բան:

ԱՌԱՋԻՆ ՊԱՏՐԻԿ.— Տեսնո՞ւմ եք: Անցած տարի կորցրեցի կնոջս:  
Շատ լաց եղա, և հետո մոռացա, ժամանակ առ ժամանակ ցավ  
եմ գգում, բայց ընդհանուր առմամբ էական չէ:

ԾԵՐ ՊԱՏՐԻԿ.— Բնությունն իրերը լավ է հարթում:

ՀԵԼԻԿՈՆ.— Սակայն նայելով ձեզ, ինձ թվում է, որ բնությունը մեկ-  
մեկ վրիպում է:

### Մտնում է Շերեան:

ԱՌԱՋԻՆ ՊԱՏՐԻԿ.— Ի՞նչ լուր:

ՇԵՐԵԱ.— Ինչպես միշտ, ոչինչ:

ՀԵԼԻԿՈՆ.— Հանդարտվեք, պարոնա՛յք, հանդարտվեք: Փրկենք մեր  
կերպարանքը: Հոռմեական կայսրությունը այդ մենք ենք: Եթե  
կորցնենք մեր կերպարանքը, կայսրությունը կկորցնի գլուխը: Օ՛,  
ոչ, դեռ պահը չէ: Այժմ, որպես սկիզբ, գնանք նախաճաշի և կայս-  
րությունը ավելի լավ կզգա իրեն:

ԾԵՐ ՊԱՏՐԻԿ.— Ծիշտ է, պետք չէ մի նապաստակ բաց թողնել, եր-  
կուսը բռնելու համար:

ՇԵՐԵԱ.— Այս լուրությունն ինձ դուր չի գալիս: Ամեն ինչ շատ լավ էր  
գնում: Այդ կայսրը կատարյալ էր:

ԵՐԿՐՈՐԴ ՊԱՏՐԻԿ.— Այո, նա այնպիսին էր, ինչպիսին որ հարկն  
էր, խղճահարվող և անփորձ:

ԱՌԱՋԻՆ ՊԱՏՐԻԿ.— Բայց ի վերջո ի՞նչ է պատահել ձեզ, ինչի՞ հա-  
մար է այս ողբը: Ոչինչ չի խանգարում, որ նա շարունակի այն-  
պես ինչպես որ եղել է մինչև օրս: Նա սիրում էր Դրուսիլիային,  
հասկանալի է, բայց նա ընդամենը նրա քույրն էր: Քնել նրա հետ,  
դա արդեն չափազանց է: Բայց տակնուվրա անել Հոռմը, որով-  
հետև նա մահացել է, դա արդեն չափից ավելի է:

ՇԵՐԵԱ.— Այդ ամենը մի կողմ, ինձ դուր չի գալիս, այս փախուստն  
ինձ լավ բան չի հուշում:

ԾԵՐ ՊԱՏՐԻԿ.— Այո, չկա կրակ առանց ծխի:

ԱՌԱՋԻՆ ՊԱՏՐԻԿ.— Ամեն դեպքում պետությունը բնականորեն չի

կարող ընդունել մի արյունապիղծի, որը գնալով դառնում է եղբերգակ: Արյունապիղծը՝ արյունապիղծ, քայց գոնե զուսպ:

**ՀԵԼԻԿՈՆ.**— Գիտեք, իհարկե, որ արյունապիղծությունը միշտ աղմուկ է հանում: Անկողինս ճոճում է, երբ փորձում եմ այսպես քացատրել: Ո՞վ ձեզ ասաց, որ այս ամենը Դրուսիլիայի պատճառով է:

**ԵՐԿՐՈՐԴ ՊԱՏՐԻԿ.**— Ուրիշ էլ ո՞ւմ:

**ՀԵԼԻԿՈՆ.**— Գուշակեցեք: Լավ գիտցեք, դժբախտությունը նման է ամուսնության: Կարծում ես, թե դու ես ընտրում, քայց քեզ եմ ընտրում: Այդպես է, ոչինչ անել չես կարող: Մեր Կալիգուլան դժբախտ է, քայց, գուցե, ինքն էլ չգիտե ինչու:

Հավանաբար իրեն փակուղու առաջ զգաց, ուստի և փախուստի դիմեց: Մեզանից յուրաքանչյուրը այդպես կվարվեր: Խնդրեմ, ես, որ ասում եմ այս ամենը, եթե ինքս ընտրած լինեի իմ հորը, ծընված չէի լինի:

**Մտնում է Սկիպիոնը:**

#### ՏԵՍԱՐԱՆ ԵՐԿՐՈՐԴ

**ՇԵՐԵԱ.**— Եվ ի՞նչ:

**ՍԿԻՊԻՈՆ.**— Նորից ոչինչ: Գյուղացիներին թվացել է, թե տեսել են նրան երեկ գիշեր, ամպրոպին, այս կողմերով վազելիս:

**Շերեան վերադառնում է դեպի սենատորները: Սկիպիոնը հետևում է նրան:**

**ՇԵՐԵԱ.**— Սկիպիո՛ն, արդեն երեք օ՞ր եղավ:

**ՍԿԻՊԻՈՆ.**— Այո: Ես ներկա էի, ըստ սովորության հետևում էի նրան: Նա մոտեցավ Դրուսիլիայի դիակին, երկու մատով շոշափեց նրան, հետո շրջվելով միայնակ սկսեց խորհել և դուրս եկավ հանդարտ, համաշափ քայլերով: Այդ օրվանից ի վեր փնտրում ենք նրան:

**ՇԵՐԵԱ (շարժելով գլուխը).**— Այդ երիտասարդը գրականություն շատ էր սիրում:

**ԵՐԿՐՈՐԴ ՊԱՏՐԻԿ.**— Բնորոշ է տարիքին:

**ՇԵՐԵԱ.**— Բայց ոչ դիրքին: Կայսր և արվեստագետ— անհամատեղելի են: Հասկանալի է, եղել են այդպիսի մեկ-երկուսը:

**ԱՌԱՋԻՆ ՊԱՏՐԻԿ.**— Դա ավելի մեղմացուցիչ էր:

**ՇԵՐ ՊԱՏՐԻԿ.**— Ամեն ոք իր արհեստն ունի:

ՍԿԻՊԻՈՆ.— Ի՞նչ կարող ես անել, Շերեա՛:

ՇԵՐԵԱ.— Ոչինչ:

ԵՐԿՐՈՐԴ ՊԱՏՐԻԿ.— Սպասե՛նք, եթե նա չվերադառնա, հարկ կլինի, որ մեկը նրան փոխարինի: Մեզանում կայսրեր չեն պակասում:

ԱՌԱՋԻՆ ՊԱՏՐԻԿ.— Չեն պակասում, միայն կամքն է պակասում:

ՇԵՐԵԱ.— Իսկ եթե վերադառնա վատ տրամադրությամբ:

ԱՌԱՋԻՆ ՊԱՏՐԻԿ.— Իսկապես, նա դեռ երեխա է: Մենք նրան կարգի կհրավիրենք:

ՇԵՐԵԱ.— Իսկ եթե բո՞ւթ է:

ԱՌԱՋԻՆ ՊԱՏՐԻԿ (ծիծաղելով).— Դե ինչ, մի՞թե ժամանակին չեմ գրել պատահական հեղաշրջման մասին:

ՇԵՐԵԱ.— Իհարկե, եթե հարկ եղավ: Բայց ես կնախընտրեի մենակ մնալ իմ գրքերի հետ:

ՍԿԻՊԻՈՆ.— Ներեցեք ինձ:

ՇԵՐԵԱ.— Նրա միտքը պղտորվել է:

ՇԵՐ ՊԱՏՐԻԿ.— Դեռ երեխա է: Երիտասարդները համերաշխ են:

ՀԵԼԻԿՈՆ.— Համերաշխ են, թե՛ ոչ, վաղ թե ուշ ծերանալու են:

Հայտնվում է մի պահակ. «Կալիգուլային տեսել եմ պալատի պարտեզում»:

Բոլորը դուրս են գալիս:

#### ՏԵՍԱՐԱՆ ԵՐՐՈՐԴ

Մի քանի վայրկյան բեմը մնում է դատարկ: Չախ կողմից գաղտագողի մտնում է Կալիգուլան: Նա մոլորված է ու կեղտոտ, մազերը թաց են, ոտքերը ցեխոտ: Անընդհատ ձեռքը տանում է բերանը: Գնում է դեպի հայելին ու անմիջապես կանգ է առնում, տեսնելով իր դեմքը:

Անհասկանալի բառեր է մրմնջում և նստում է աջ կողմում, ձեռքերը խաչած ոտքերի արանքում:

Հելիկոնը ներս է մտնում ձախ կողմից: Նկատելով Կալիգուլային՝ կանգ է առնում բեմի ծայրում և լռությամբ զննում է նրան: Կալիգուլան շրջվում է և տեսնում է Հելիկոնին:

#### ՏԵՍԱՐԱՆ ԶՈՐՐՈՐԴ

ՀԵԼԻԿՈՆ (զնայով բեմի մի ծայրից մյուսը).— Բարև՛, Գայո՛ւս:

ԿԱԼԻԳՈՒԼԱ (ոչ շինծու).— Բա՛րև, Հելիկո՛ն: (Լռություն):

ՀԵԼԻԿՈՆ.— Դու հոգնած ես երևում:

ԿԱԼԻԳՈՒԼԱ.— Ես երկար եմ քայլել:

ՀԵԼԻԿՈՆ.— Այո, քո բացակայությունը երկար տևեց: (**Լուրջուն**):

ԿԱԼԻԳՈՒԼԱ.— Դժվար էր գտնել:

ՀԵԼԻԿՈՆ.— Ի՞նչը:

ԿԱԼԻԳՈՒԼԱ.— Ինչ որ ես էի ցանկանում: (**Միշտ բնական**): Լուսինը:

ՀԵԼԻԿՈՆ.— Ի՞նչը:

ԿԱԼԻԳՈՒԼԱ.— Այո, ես լուսին էի ցանկանում:

ՀԵԼԻԿՈՆ (**լուրջուն: Հելիկոնը մոտենում է նրան**).— Ի՞նչ էիր անում լուսինը:

ԿԱԼԻԳՈՒԼԱ.— Այո... դա այն իրերից մեկն էր, որ ես չուներ:

ՀԵԼԻԿՈՆ.— Իհարկե, և հիմա ունեցա՞ր:

ԿԱԼԻԳՈՒԼԱ.— Ոչ, չկարողացա:

ՀԵԼԻԿՈՆ.— Ցավալի է:

ԿԱԼԻԳՈՒԼԱ.— Այո, դրա համար էլ հոգնել եմ: (**Դադար**): Հելիկո՞ն:

ՀԵԼԻԿՈՆ.— Այո, Կալիգուլա՛:

ԿԱԼԻԳՈՒԼԱ.— Դու կարծում ես, որ ես խե՞նթ եմ:

ՀԵԼԻԿՈՆ.— Դու լավ գիտես, որ ես երբեք կարծիք չեմ հայտնում: Բավականաչափ խելացի եմ անան սխալներից զերծ մնալու համար:

ԿԱԼԻԳՈՒԼԱ.— Այո, ի վերջո, ես խենթ չեմ, և նույնիսկ երբեք այսքան խելացի չեմ եղել: Պարզապես, միանգամայն հանկարծակի զգացի անհնարին անհրաժեշտությունը: (**Դադար**): Իրերն, ինչպես որ կան, ինձ բոլորովին չեն գոհացնում:

ՀԵԼԻԿՈՆ.— Ծառ տարածված կարծիք է:

ԿԱԼԻԳՈՒԼԱ.— Ծշմարիտ է: Նախկինում ես այդ չգիտեի: Այժմ գիտեմ: (**Միշտ բնական**): Այս աշխարհն ինչպես որ կա, անտանելի է: Հետևաբար լուսին եմ ուզում, կամ երջանկություն, կամ անմահություն, կամ ինչ-որ բան՝ անան խենթության, միայն թե ոչ այս աշխարհից:

ՀԵԼԻԿՈՆ.— Դատողությունը տրամաբանական է: Բայց ընդհանրապես մարդկանց չի հաջողվում մինչև վերջ դրան հետամուտ լինել:

ԿԱԼԻԳՈՒԼԱ (**վեր կենալով, նույն պարզությամբ**).— Չես կարող ասել, քանի որ մարդիկ երբեք դրան հետամուտ չեն լինում մինչև վերջ, հետևաբար ոչինչ ձեռք չեն բերում: Բայց գուցե բավական է, որ բնական մնան մինչև վերջ: (**Նայում է Հելիկոնին**): Գիտեմ, թե դու ինչ ես մտածում: Ինչ է, մի կնոջ մահվան պատճառով այսքան սղմո՞ւկ: Ոչ, բանը դրանում չէ: Կարծես հիշում եմ, ճիշտ է,

մի քանի օր է, որ մահացել է այն կինը, որին սիրում էի: Բայց ի՞նչ է սերը: Մի շնչին բան: Մահը ոչինչ է, երդվում եմ քեզ, դա միայն նշան է մի ճշմարտության, որով լուսինն ինձ համար այնքան անհրաժեշտ է դառնում: Դա մի ճշմարտություն է, շատ պարզ ու հստակ, փոքր-ինչ անհեթեթ, բայց դժվար բացահայտելի և անտանելի:

**ՀԵԼԻԿՈՆ.**— Ուրեմն, Գայո՛ւս, ո՞րն է այդ ճշմարտությունը:

**ԿԱԼԻԳՈՒԼԱ (շրջվելով մի կողմ, անտարբեր ձայնով).**— Մարդիկ մեռնում են՝ առանց ճաշակելու երջանկությունը:

**ՀԵԼԻԿՈՆ (դադար).**— Այո, Գայո՛ւս, դա մի ճշմարտություն է, որի հետ մարդիկ հաշտվում են հեշտությամբ: Նայիր շուրջդ: Այդ չէ, որ փակում է նրանց ախորժակը:

**ԿԱԼԻԳՈՒԼԱ (հանկարծ անգուսպ ծիծաղով).**— Ուրեմն իմ շուրջն ամեն ինչ խաբեություն է, բայց ես ուզում եմ, որ նրանք սալթեն և զգան ճշմարտությունը: Ես հնարավորություն ունեմ նրանց ցույց տալու ճշմարտությունը, քանզի ևս գիտեմ, թե նրանց ինչն է պակասում, Հելիկո՛ն: Նրանք տգետ են, և նրանց պետք է մի ուսուցիչ, որը խոսի ու գիտենա խոսելիքն իր:

**ՀԵԼԻԿՈՆ.**— Մի վիրավորվիր, Գայո՛ւս, նրանից ինչ պիտի քեզ ստեմ: Գուցե նախ հանգստանա՞ս:

**ԿԱԼԻԳՈՒԼԱ (նստելով, մեղմությամբ).**— Անհնար է, Գայո՛ւս, այլևս ընդմիջտ անհնար:

**ՀԵԼԻԿՈՆ.**— Բայց ինչո՞ւ:

**ԿԱԼԻԳՈՒԼԱ.**— Եթե ես քնեմ, ո՞վ է ինձ տալու լուսինը:

**ՀԵԼԻԿՈՆ (մի պահ լռությունից հետո).**— Այդ ճիշտ է:

**Կալիգուլան վեր է կենում անատելի դժվարությամբ:**

**ԿԱԼԻԳՈՒԼԱ.**— Լսիր, Հելիկո՛ն: Ես ինչ-որ ոտնաձայներ և աղմուկ եմ լսում, լռիր և մոռացիր, որ տեսել ես ինձ:

**ՀԵԼԻԿՈՆ.**— Հասկանալի է:

**Կալիգուլան ուղղվում է դեպի ելքը: Հելիկոնը շրջվում է:**

**ԿԱԼԻԳՈՒԼԱ.**— Այսուհետև բարեհաճիր օգնել ինձ:

**ՀԵԼԻԿՈՆ.**— Գայո՛ւս, ես պատճառ չունեմ չկատարելու քո կամքը: Ծառ գիտեմ, բայց ինձ շատ ավելի քիչ բան է հետաքրքրում: Ուրեմն ինչո՞վ կարող եմ քեզ օգնել:

**ԿԱԼԻԳՈՒԼԱ.**— Անելով անկարելին:

**ՀԵԼԻԿՈՆ.**— Կանեմ, որքան որ կարող եմ: (Կալիգուլան դուրս է գալիս: Սկիպիոնը և Կայետոնիան արագ ներս են մտնում):



## ՏԵՍԱՐԱՆ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ՍԿԻՊԻՈՆ.— Ոչ ոք չկա: Հելիկո՛ն, նրան չե՛ս տեսել:

ՀԵԻԿՈՆ.— Ոչ:

ԿՈՅՏՍՈՆԻԱ.— Հելիկո՛ն, իսկապես, նա քեզ փախուստից առաջ ոչինչ չի ասել:

ՆԵԻԿՈՆ.— Ես նրա հավատարմատարը չեմ, միայն հանդիսատեսն եմ: Այսպես ավելի խելացի է:

ԿՈՅՏՍՈՆԻԱ.— Խնդրում եմ քեզ:

ՆԵԻԿՈՆ.— Սիրելի՛ Կայետնիա, Գայուսը իդեալիստ է, և ամբողջ աշխարհն այդ գիտե: Կարելի է ասել, որ նա դեռևս դա չի հասկացել, իսկ ես հասկացել եմ, և այդ իսկ պատճառով ոչնչով չեմ զբաղվում: Բայց եթե Գայուսը փորձի հասկանալ, ի տարբերություն ինձ, նա ունակ է իր փոքրիկ, բարի սրտում տեղ հատկացնել ամենքին: Եվ միայն աստված գիտե, թե դա մեզ համար ինչ կարժեանա: Բայց հիմա թույլ տվեք նախաճաշել: **(Դուրս է գալիս):**

## ՏԵՍԱՐԱՆ ՎԵՑԵՐՈՐԴ

**Կայետնիան հոգևած նստում է:**

ԿՈՅՏՍՈՆԻԱ.— Մի պահնորդ տեսել է նրան անցնելիս: Ողջ Հոռմը օրեննոր նրան է տեսնում, իսկ Կալիգուլան՝ միայն և միայն իր իդեալին:

ՍԿԻՊԻՈՆ.— Ի՞նչ իդեալ:

ԿՈՅՏՍՈՆԻԱ.— Ես ի՞նչ իմանամ, Սկիպիո՛ն:

ՍԿԻՊԻՈՆ.— Դրուսիլիա՛ն:

ԿՈՅՏՍՈՆԻԱ.— Ո՛վ գիտե: Ստույգ էր, որ նա նրան սիրում էր: Ինչ խոսք, ծանր է տեսնել նրան մեռած, որին երեկ սեղմել ես գրքի մեջ:

ՍԿԻՊԻՈՆ **(երկշտությունք)**.— Իսկ դո՞ւ:

ԿՈՅՏՍՈՆԻԱ.— Ես ի՞նչ, ես նրա հին սիրուհին եմ:

ՍԿԻՊԻՈՆ.— Կայետնիա՛, նրան պետք է փրկել:

ԿՈՅՏՍՈՆԻԱ.— Ոչ եմն դու նրան սիրո՞ւմ ես:

ՍԿԻՊԻՈՆ.— Սիրում եմ, նա բարի էր իմ հանդեպ ու միշտ բաջալերում էր ինձ. Ես անգիր գիտեմ նրա թնավոր խոսքերի մեծ մասը: Ես ստում էր ինձ, որ կանքը հեջա է, բայց կրոնը, արվեստն ու արքայի սան դարձնում են տանելի. Նա հաճախ կրկնում էր, որ

որիշին տանջելը սխալվելու միակ ձևն է: Նա ցանկանում էր արդար ապրել:

**ԿԱՅԵՍՈՆԻԱ (վեր կենալով).**— Երեխա էր: (Նա գնում է դեպի հայելին ու մանրակրկիտ գնում իրեն): Չեմ ունեցել երբևէ մեկ այլ աստված, քան իմ մարմինը, և այսօր ուզում եմ աղոթել այդ աստծուն, որ վերադարձնի ինձ Գայուսին:

**Մտնում է Կալիգուլան:** Նկատելով Կայետնիային և Սկիպիոնին, նա երկմտելով ետ է քաշվում: Նույն վայրկյանին հակառակ կողմից ներս են մտնում պատրիկները և պալատի վերակացուն: Նրանք կանգ են առնում, Կայետնիան շրջվում է և Սկիպիոնի հետ միասին վազում են դեպի Կալիգուլան: Վերջինս մի շարժումով կասեցնում է նրանց:

### ՏԵՄԱՐԱՆ ՅՈԹԵՐՈՐԳ

**ՎԵՐԱԿԱՑՈՒ (վեհերոտ).**— Մենք... մենք ձեզ փնտրում էինք, Գայոս:

**ԿԱԼԻԳՈՒԼԱ (փոխված և կտրուկ ձայնով).**— Տեսնում եմ:

**ՎԵՐԱԿԱՑՈՒ.**— Մենք... այսինքն:

**ԿԱԼԻԳՈՒԼԱ (կոպտորեն).**— Ի՞նչ էք ուզում:

**ՎԵՐԱԿԱՑՈՒ.**— Մենք անհանգստացել էինք, Գայոս:

**ԿԱԼԻԳՈՒԼԱ (զնայով դեպի լույս).**— Ի՞նչ իրավունքով:

**ՎԵՐԱԿԱՑՈՒ.**— Ըր... ի դեպ... (Հանկարծ ոգեշնչված և շատ արագ):

Վերջապես գիտե՞ք, որ դուք պետք է կարգավորեք հանրային գանձարանին վերաբերող որոշ հարցեր:

**ԿԱԼԻԳՈՒԼԱ (բռնկվում է մի անվերջանալի ծիծաղով).**— Գանձարանը, շատ ճիշտ է, իհարկե, գանձարանը շատ կարևոր է:

**ՎԵՐԱԿԱՑՈՒ.**— Անկասկած, Գայոս:

**ԿԱԼԻԳՈՒԼԱ (շարունակ ծիծաղով դիմելով Կայետնիային).**— Ծիշտ չէ՞, սիրելի՛ս, գանձարանը շատ կարևոր է:

**ԿԱՅԵՍՈՆԻԱ.**— Ոչ, Կալիգուլա՛, երկրորդական է:

**ԿԱԼԻԳՈՒԼԱ.**— Դու ոչինչ չգիտես, գանձարանը հզոր գործոն է: Ամեն ինչ կարևոր է՝ ֆինանսը, հասարակական բարոյականությունը, արտաքին քաղաքականությունը, բանակի մատակարարումն ու հողային օրենքները: Ամեն ինչ հույժ կարևոր է, ես ասում եմ: Ամեն ինչ նույնչափ անհրաժեշտ է ու կարևոր: Հոռուի զորությունն, ինչպես և քո հողային նույաները:

Այո, այս ամենով պիտի զբաղվես:

Լսիր ինձ, վերակացո՛ւ:

**ՎԵՐԱԿԱՑՈՒ.**— Լսում եմք ձեզ:

**Պատրիկները առաջ են գալիս:**

**ԿԱԼԻԳՈՒԼԱ.**— Դու հավատարիմ ես ինձ, այո՞:

**ՎԵՐԱԿԱՑՈՒ (հանդիմանող ձայնով).**— Գայո՛ւս:

**ԿԱԼԻԳՈՒԼԱ.**— Այսպես ուրեմն, ես մի ծրագիր ունեմ քեզ ներկայացնելու: Մենք պետք է երկու անգամ տակնուվրա անենք քաղաքական տնտեսությունը: Քեզ այդ կբացատրեմ, վերակացո՛ւ... Երբ պատրիկները դուրս գան:

**Պատրիկները դուրս են գալիս:**

### ՏԵՍԱՐԱՆ ՈՒԹԵՐՈՐԴ

**Կալիգուլյան նստում է Կալեսոնիայի մոտ:**

**ԿԱԼԻԳՈՒԼԱ.**— Լավ լսիր: Սկզբնական շրջանում, բոլոր պատրիկները, կայսրության ողջ անձինք, որոնք իրենց տրամադրության տակ ունեն որոշ հարստություն՝ մեծ կամ փոքր, դա միանգամայն նույնն է, պետք է պարտադիր կերպով ժառանգազրկեն իրենց որդիներին և անմիջապես կտակեն այն ի նպաստ պետությանը:

**ՎԵՐԱԿԱՑՈՒ.**— Բայց, Գայո՛ւս...

**ԿԱԼԻԳՈՒԼԱ.**— Քեզ ձայնի իրավունք դեռ չի տրված: Մեր կարիքների համար մենք այս անձանց կստիպենք մեռնել, ինքնահաճաքար, համաձայն մեր կազմած ցուցակի: Պատեն առիթով մենք կամայականորեն կփոխենք ցուցակի կարգը և կժառանգենք այդ բոլորը:

**ԿԱՅԵՍՈՆՆԻԱ (հեռանալով նրա կողքից).**— Քեզ ի՞նչ է պատահել:

**ԿԱԼԻԳՈՒԼԱ (ստոր, առանց հուզվելու).**— Ի դեպ, մահապատժի կարգը ոչ մի նշանակություն չունի: Ավելի շուտ այս մահապատժներն ունեն հավասար կարևորություն, հետևաբար դրանք բոլորն էլ չունեն կարևորություն: Ի միջի այլոց, նրանք բոլորն էլ մեղավոր են, թե մեկը, թե մյուսը: Ի դեպ, նկատի ունեցեք, որ ավելի անբարոյական չէ ուղղակիորեն գողանալ քաղաքացիներից, քան թե անուղղակիորեն վարկեր դնել բոլոր այն մթերքների վրա, որոնք հույժ աճիրաժեշտ են նրանց: Կատավարել, նշանակում է գողանալ: Ողջ աշխարհն այդ գիտե: Բայց ձև գոյություն ունի: Ինձ համար, ես գողանալու եմ բացեփրաց, ազնվորեն: Ամեն ինչ կփոխվի և կարիք չենք ունենա մանր-մունր պորտաբույծների:

**(Կոպտորեն, վերակացոյին):** Անհապաղ ի կատար կածես այս հրամանները: Կտակները կհաստատովեն երեկոյան՝ Հոռնի ողջ բընակչոյթյան կողմից: Մեկ ամիս ոչ ուշ՝ բոլոր գավառացիների կողմից: Սուրհանդակներ ուղարկիր:

**ՎԵՐԱԿԱՑՈՒ.**— Կեսա՛ր, հաշիվ տուր քեզ:

**ԿԱԼԻԳՈՒԼԱ.**— Ինձ լավ լսիր, հիմա՛ր: Եթէ գանձարանը կարևորութուն ունի, ապա մարդկային կյանքը չունի: Պարզ բան է: Նրբանք, ուրբեր մտածում են քո պես, պետք է ընդունեն գաղափարն այս, և իրենց կյանքը համարեն ոչինչ, քանի որ դրանք նրանց համար ամեն ինչ է: Երբ այժմ որոշել եմ գործել տրսմաքանորեն, և քանի որ զորություն ունեմ, դուք կտեսնեք, թե ձեզ վրա ինչ կնստի տրամաքանությունը: Ես կբնաջնջեմ ընդդիմացողներին և ընդդիմախոսությունը: Եթէ պետք է, կսկսեմ քեզանից:

**ՎԵՐԱԿԱՑՈՒ.**— Կեսա՛ր, երդվում եմ, քեզ չեմ ընդդիմանում:

**ԿԱԼԻԳՈՒԼԱ.**— Ես քեզ՝ նույնպես, հավատա: Փաստն այն է, որ համաձայն եմ կառչել քո տեսակետին և հասարակական գանձարանը դիտել որպես մտորելու առարկա: Մի խոսքով, շնորհակալ եղիր, քանզի մտնում եմ քո խաղի մեջ և խաղում քո խաղաթղթերով: **(Մի պահ անց խաղաղ տոնով):** Ի դեպ, իմ ծրագիրը իր պարզությամբ հանճարեղ է: Հետևաբար, վե՛րջ վիճարանությանը: Երեք վայրկյան ունես անհետանալու համար: Հաշվում եմ, մեկ... **(Վերակացուն անհետանում է):**

#### ՏԵՍԱՐԱՆ ԻՆՆԵՐՈՐԴ

**ԿԱՅԵՍՈՆԻՍԱ.**— Քեզ լավ չհասկացա: Դա կատակ էր, այնպես չէ՛:

**ԿԱԼԻԳՈՒԼԱ.**— Մասամբ, Կայետնիա՛, մանկավարժություն էր:

**ՍԿԻՊԻՈՆ.**— Անհնարին է, Գալո՛ւս:

**ԿԱԼԻԳՈՒԼԱ.**— Հենց այդ է:

**ՍԿԻՊԻՈՆ.**— Ձեմ հասկանում քեզ:

**ԿԱԼԻԳՈՒԼԱ.**— Հենց այդ է, խոսքը վերաբերում է մի բանի, որն անհնար է, կամ ավելի ճիշտ. անհնար է հնարավոր դարձնել:

**ՍԿԻՊԻՈՆ.**— Սա մի խաղ է, որ վերջ չունի: Սա մի խեղճոմկի զվարճություն է:

**ԿԱԼԻԳՈՒԼԱ.**— Ո՛չ, Սկիպիո՛ն, դա մի կայսեր ստաքիությունն է: **(Նա շրջվում է՝ դեմքին խոնջանք):** Հիմա վերջապես հասկացա իշխանության շատավետությունը: Նա անհնարը դարձնում է հնարա-

վոր: Այսօր և առհասարակ բոլոր ժամանակներում ազատությունն  
այլևս սահման չունի:

**ԿԱՅԵՍՈՆԻԱ (տխրությամբ).**— Ես չգիտեմ, պե՞տք է արդյոք դրա-  
նով հրճվել, Գայր'ու:

**ԿԱԼԻԳՈՒԼԱ.**— Ես նույնպես չգիտեմ, բայց կարծում եմ, որ պետք է  
դրանով ապրել:

**Մտնում է Շերեան:**

#### ՏԵՍԱՐԱՆ ՏԱՍՆԵՐՐԴ

**ՇԵՐԵԱ.**— Ես տեղեկացա քո վերադարձի մասին, մաղթում եմ քեզ  
առողջություն:

**ԿԱԼԻԳՈՒԼԱ.**— Առողջությունն շնորհակալություն է քեզ հալտնում:  
**(Մի պահ, հանկարծակի):** Կորիք գրողի ծոցը, Շերե՛ա, չեմ ու-  
զում քեզ տեսնել:

**ՇԵՐԵԱ.**— Գայր'ու: Ապշում եմ, Գայր'ու:

**ԿԱԼԻԳՈՒԼԱ.**— Մի ապշիր, չեմ սիրում գրականագետներին և տանել  
չեմ կարող նրանց ստերը: Նրանք խոսում են, որպեսզի իրենք  
իրենց չլսեն: Իսկ եթե նրանք լսեն իրենց, կհասկանան, թե ինչ-  
պիսի ոչնչություն են և այլևս չեն կարողանա խոսել:

Գնացե՛ք, կորե՛ք: Գարշում եմ կեղծ վկաներից:

**ՇԵՐԵԱ.**— Եթե ստում ենք, ապա հաճախ անգիտակցաբար: Ես անմեղ  
եմ:

**ԿԱԼԻԳՈՒԼԱ.**— Սուտը երբեք անմեղ չէ: Իսկ ձեր սուտը կարևորու-  
թյուն է տալիս մարդկանց և առարկաներին: Ահա թե ինչը ձեզ  
մոտ ներել չեմ կարող:

**ՇԵՐԵԱ.**— Միևչդեռ պետք է ջատագովել աշխարհն այս, եթե ուզում  
ենք այնտեղ ապրել:

**ԿԱԼԻԳՈՒԼԱ.**— Մի՛ ջատագովիր, պատճառը պարզ է: Երկրորդաշին  
է այն աշխարհը, և ով հասկացել է այդ, նա նվաճում է իր ազա-  
տությունը: **(Վեր է կենում):** Եվ իսկապես, ես ձեզ ստում եմ, ո-  
րովհետև դուք ազատ չեք: Ամբողջ հոռմեական կայսրության մեջ  
միակ անձը, ոտ ազատ է, ես եմ: Հրճվեք, ահա, վերջապես եկավ  
մի կայսր՝ ձեզ ազատություն ուսուցանելու: Կորի՛ր, Շերե՛ա, դու  
նուզնայես, Սկիպիո՛ն: Բարեկամությունն ինձ ծիծաղելի է թվում:  
Հարտաբարեցեք համալն Հոռմին, որ վերջապես իր ազատությու-  
նը վերադարձրել ևն իրեն, որն իր հետ բերել է մի մեծ փորձու-  
թյուն: **(Նրանք դուրս են գալիս: Կալիգուլան շքջվում է):**

ԿԱՅԵՍՈՆԻԱ.— Դու լա՛ց ես լինում:

ԿԱԼԻԳՈՒԼԱ.— Այո, Կայետնիա՛:

ԿԱՅԵՍՈՆԻԱ.— Ի վերջո ի՛նչ է փոխվել: Թե սիրում էիր Դրուսիլիային, ապա միաժամանակ սիրում էիր և ինձ, և շատերին: Նրա մահը շատ անգոր էր, որ երեք օր ու գիշեր քեզ գյուղ քշեր և որ վերադառնալիս այսպիսի թշնամական դեմքով:

ԿԱԼԻԳՈՒԼԱ (նա նորից շրջվում է).— Խե՛նթ, ո՛վ է քեզ հետ խոսում Դրուսիլիայի մասին: Մի՞թե չես կարող պատկերացնել, որ մարդ, սիրուց բացի, կարող է լաց լինել մեկ այլ բանի համար:

ԿԱՅԵՍՈՆԻԱ.— Ներիր, Գայո՛ւս, ես ջանում եմ քեզ հասկանալ:

ԿԱԼԻԳՈՒԼԱ.— Մարդիկ լաց են լինում, որովհետև իրերը այն չեն, ինչ պետք է լինեին: (Կայետնիան գնում է դեպի նա): Թո՛ղ ինձ, Կայետնիա՛: (Կայետնիան ետ է քաշվում): Բայց մնա ինձ հետ:

ԿԱՅԵՍՈՆԻԱ.— Կանեմ ինչ որ ուզում ես: (Նստում է): Իմ տարիքին գիտակցում եմ, որ կյանքը լավը չէ: Բայց եթե չարիքն ինքը կա երկրի վրա, ինչո՞ւ ցանկանալ ավերացնել այն:

ԿԱԼԻԳՈՒԼԱ.— Չես կարող հասկանալ: Ի՛նչ արած: Գուցե կհաղթահարեմ այս ամենը: Բայց զգում եմ, որ իմ մեջ ծնունդ են առնում էակներ՝ անանուն: Ինչ եմ անելու նուանդ դեմ: (Շրջվում է դեպի Կայետնիան): Օ՛, Կայետնիա՛, գիտե՛ի, որ կարող եմ հուսալքվել, բայց անտեղյակ էի այդ բառի էությանը: Կարծում էի, ինչպես բոլորը, որ դա հոգու հիվանդություն է, բայց ոչ, մարմինն է տառապում: Մաշկս է ցավում, կուրծքս, թևերս, ծնկներս: Գլուխս դատարկ է, կուրծքս՝ փոթորկած: Եվ ամենասարսափելին այս տխրան համն է քերանումս: Ո՛չ արյուն, ո՛չ մահ, ո՛չ տենդ, բայց այս ամենը միանգամից, մեկ տեղ: Բավական է լեզուս շարժեմ, որ սմեմ ինչ սեանա, և արարածները դառնան աչքիս նողկալի: Ինչ ծանր է, ինչ դժեղակ մարդ դառնալը:

ԿԱՅԵՍՈՆԻԱ.— Պետք է քեզ, քնել երկար, թողնել և այլևս չմտորել: Ես արթուն կհսկեմ քունդ: Երբ արթնանաս, աշխարհը քեզ համար կվերագտնի իր բույրը: Եվ այնժամ օգուսագործի գործությունը, որպեսզի սիրվի ամ, որը թերևս արժանի է սիրո: Արժե՛ նպաստել, որ հնարավորը ի կատար ածվի:

ԿԱԼԻԳՈՒԼԱ.— Պետք է քուն, պետք է դադար, բայց անհնարին է այդ:

ԿԱՅԵՍՈՆԻԱ.— Աչքպես եմ կարծում խորին հոգնության պահին: Բայց

գալիս է մի ժամանակ, երբ վերագտնում են հաստատուն բռունցքը:

**ԿԱԼԻԳՈՒԼԱ.**— Բայց պետք է իմանալ, թե այն որտեղ օգտագործել: Եվ ինչ կտա ինձ հաստատուն բռունցքը: Ինչիս է պետք այնքան զարմանալի այս գործությունը, երբ չեմ կարող փոխել իրերի հաջորդականությունը, երբ չեմ կարող այնպես անել, որ արևը մայր մտնի արևելքում, և որ տանջանքը նվազի, և էակները շմեռեն այլևս: Ո՛չ, Կայետնիա՛, տարբերություն չկա՝ քնել, թե արթուն կենալ, երբ անգոր եմ գործել այս աշխարհի կարգ ու կանոնի մեջ:

**ԿԱՅԵՍՈՆԻԱ.**— Բայց դա աստվածներից հավասարվելու ցանկությունն է: Ավելի մեծ խեղություն դեռ չեմ տեսել:

**ԿԱԼԻԳՈՒԼԱ.**— Դու նո՛ւյնպես ինձ խեղո՞ւ ես համարում: Միևչդեռ ի՞նչ է աստված, որ ընձամ նրան հավասարվել: Այն, ինչ այսօր ցանկանում եմ ես իմ ողջ ուժով, վեր է աստվածներից: Բեռնավորել եմ ինձ մի թագավորությանը, որ անհնարինն է թագավոր:

**ԿԱՅԵՍՈՆԻԱ.**— Դու ոչինչ անել չես կարող, որ երկինքը շիհի երկինք, որ գեղեցիկ դեմքը դառնա տգեղ, մարդկային սիրտը՝ անզգա:

**ԿԱԼԻԳՈՒԼԱ (հետզհետե ոգևորվելով).**— Ուզում եմ խառնել երկինքը ծովին, խճնել տգեղությունը գեղեցկության հետ: Տանջանքից ծիծաղ բխեցնել:

**ԿԱՅԵՍՈՆԻԱ (կանգնած նրա դիմաց, աղաչելով).**— Կա չար և բարի, վեհ և նսեմ, արդար և անարդար: Երդվում եմ քեզ, այդ ամենը անխաթար է:

**ԿԱԼԻԳՈՒԼԱ (նույն ձևով).**— Իմ կամքն է փոխել այս ամենը: Այս դարին ես կպարզեմ հավասարության շնորհը: Եվ երբ ամեն ինչ կլինի հարթ ու դյուրին, ի վերջո, անհնարինը հնարավոր դարձած հողագնդում, և լուսինը իմ ձեռքում, այնժամ, հավանաբար, ես ինքս կփոխվեմ և աշխարհն էլ ինձ հետ, վերջապես մարդիկ չեն մահանա ու երջանիկ կլինեն:

**ԿԱՅԵՍՈՆԻԱ (նշալով).**— Դու չես կարող ժխտել սերը:

**ԿԱԼԻԳՈՒԼԱ (ցասումով, կատաղի ձայնով).**— Սերը, Կայետնիա՛ (բռնելով նրա ուսերից և ցնցելով նրան), ես հասկացա, որ սերը չնչին է: Մյուսն է իրավացի: Հանրային գանձը: Լավ լսեցիր, այդպես չէ՞: Ամեն ինչ սկսվում է դրանից: Օ՛, վերջապես հիմա սկսվում եմ ապրել: Ապրե՛լ, Կայետնիա՛, ապրելը սիրելու հակառակն է: Այդ ե՛ս եմ քեզ ասում և ե՛ս եմ հրավիրում քեզ խելակորույս տոնի, մի հուշակավոր դատաւարության, ամենագեղեցիկ

Անրկայացումներից մեկին: Ինձ պետք է ժողովորդ, հանդիսատես, զոհեր և մեղավորներ: (Նա ցատկում է թմբուկի վրա և սկսում է անդադար հարվածել ռիթմիկ, զույգ-զույգ հարվածներով, շարունակ խփելով): Նե՛րս բերեք մեղավորներին: Մեղավորներ են ինձ պետք: Նրանք բոլորն էլ մեղավորներ են (շարունակ հարվածելով): Ուզում եմ, որ ներս բերեն մահապարտներին: Ժողովորդ, ուզում եմ ունենալ իմ հանդիսատեսը, ռատապարտներ, մկաներ, մեղադրյալներ: Բոլորն էլ նախապես ռատապարտված են: Ա՛, Կայետնիա՛, ես նրանց ցույց կտամ այն, ինչ երբեք չեն տեսել՝ այս կայսրության միակ ազատ մարդուն: (Թմբուկի զարկերի տակ պալատը հետզհետե լցվում է աղմուկով, որը աստիճանաբար մոտենում է և դառնում է հստակ լսելի: Զայներ, զենքերի աղմուկ, ռոնաձայներ և դոփյուններ: Կալիգուլան ծիծաղում է և շարունակ հարվածում: Մտնում են պահնորդները, հետո դուրս են գալիս: Կալիգուլան անընդհատ հարվածում է): Իսկ դու, Կայետնիա՛, կհնազանդվես ինձ: Դու ինձ միշտ կօգնես: Հոյակապ կլինի: Երգվիր, որ ինձ կօգնես, Կայետնիա՛:

**ԿԱՅԵՍՈՆԻԱ** (մոլորված թմբուկի երկու հարվածների միջև).— Երգվե՞րու կարիք չեմ զգում, քանի որ սիրում եմ քեզ:

**ԿԱԼԻԳՈՒԼԱ** (նույն խաղը).— Կանես այն ամենը, ինչ որ քեզ կասեմ:

**ԿԱՅԵՍՈՐԻԱ** (նույն խաղը).— Ամեն ինչ, Կալիգուլա՛, միայն թե կանգ առ:

**ԿԱԼԻԳՈՒԼԱ** (շարունակելով հարվածել).— Կլինես դաժան:

**ԿԱՅԵՍՈՆԻԱ** (լաց լինելով).— Դաժան:

**ԿԱԼԻԳՈՒԼԱ** (նույն խաղը).— Սառը և անողորք:

**ԿԱՅԵՍՈՆԻԱ**.— Անողորք:

**ԿԱԼԻԳՈՒԼԱ** (նույն խաղը).— Դու նույնպես կտանջվես:

**ԿԱՅԵՍՈՆԻԱ**.— Ա՛ո, Կալիգուլա՛, բայց ես խելագարվում եմ:

Ներս են մտնում ապշած պատրիկները, նրանց հետ նաև պալատականները: Կալիգուլան խփում է վերջին հարվածը, բարձրացնում է ցուպը, շրջվում է նրանց կողմն ու կանչում:

**ԿԱԼԻԳՈՒԼԱ** (ցնորված).— Եկե՛ք բոլորդ: Մոտեցե՛ք: Հրամայում եմ ձեզ մոտենալ: (Ոտքերը հատակին դոփելով): Կայսրն է պահանջում, որ մոտենաք: (Բոլորը սարսափած առաջ են գալիս): Եկե՛ք, արսա՛գ, իսկ հիմա մոտեցիր, Կայետնիա՛: (Բռնում է Կայետնիայի ձեռքը, տանում է նրան դեպի հայելին և ձեռքի ցուպով խելահեղորեն ջնջում է պատկերը հայելու ողորկ մակերեսից: Ծիծաղում է): Այլևս ոչինչ, տեսնո՞ւմ ես: Այլևս ոչ մի հիշողություն:



Բոլոր դեմքերը անհետացան: Ոչինչ, այլև ոչինչ: Եվ գիտե՛ս, թե ինչ է մնում: Մոտեցիր նորից: Նայի՛ր: Մոտեցե՛ք, նայեցե՛ք: (Նա հաստատուն կանգնում է հայելու առաջ խելահեղ կեցվածքով):

**ԿԱՅԵՍՈՆԻԱ** (նայելով հայելուն, սարսափած ասում է).— Կալիգուլա՛: (Կալիգուլան փոխում է իր տոնը, մատը դնում է հայելուն և հանկարծ սևեռում հայացքով, հաղթական ձայնով ասում):

**ԿԱԼԻԳՈՒԼԱ**.— Կալիգուլա:

## Վ ա ր ա գ ու յ ր

# ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ ԵՐԿՐՈՐԴ

## ՏԵՍԱՐԱՆ ԱՌԱՋԻՆ

**Պատրիկները խմբված են Ծերեայի մոտ:**

**ԱՌԱՋԻՆ ՊԱՏՐԻԿ**.— Նա անարգում է մեր արժանապատվությունը: ՄՈՒՍԻՈՒՍ.— Արդեն երեք տարի:

**ԾԵՐ ՊԱՏՐԻԿ**.— Նա ինձ անվանում է փոքրիկ տիկին, նա ծաղրում է ինձ: Օ՛, մահ:

**ՄՈՒՍԻՈՒՍ**.— Արդեն երեք տարի:

**ԱՌԱՋԻՆ ՊԱՏՐԻԿ**.— Ամեն երեկո նա մեզ վազել է տալիս իր դեսպակի շուրջը, երբ գնում է գյուղ զբոսանքի:

**ԵՐԿՐՈՐԴ ՊԱՏՐԻԿ**.— Եվ մեզ ասում է, որ վազքը ատողջարար է:

**ՄՈՒՍԻՈՒՍ**.— Արդեն երեք տարի:

**ԾԵՐ ՊԱՏՐԻԿ**.— Չկա ներում այս ամենին:

**ԵՐԿՐՈՐԴ ՊԱՏՐԻԿ**.— Ո՛չ, այս ներել չենք կարող:

**ԱՌԱՋԻՆ ՊԱՏՐԻԿ**.— Պատրիցիո՛ւս, նա բռնագրավել է քո հարստությունը, Սկիպիո՛ն, նա սպանել է քո հորը, Օկտավիո՛ւս, նա տարել է քո կնոջը և այժմ բանեցնում է իր հասարակաց տանը: Լեպիդո՛ւս, նա սպանել է քո որդուն: Կարո՞ղ եք հանդուրժել այս ամենը: Ես իմ ընտրությունն արդեն արել եմ: Վտանգի ակնկալիքներով և այս սարսափով, անկարողությամբ լի անտանելի կյանքում ես չեմ տատանվում:

ՍԿԻՊԻՈՆ.— Սպանելով հորս, նա ինքը թելադրեց ինձ իմ ընտրու-  
թյունը:

ԱՌԱՋԻՆ ՊԱՏՐԻԿ.— Դեռ տատանվում եք:

ԵՐԿՐՈՐԳ ՊԱՏՐԻԿ.— Մենք քեզ հետ ենք: Կրկեսում մեր արտոնյալ  
տեղերը նա տվեց ժողովրդին և մեզ դրդեց, որ կովենք պեքեյ-  
ների հետ, որպեսզի հետո մեզ ավելի լավ պատժի:

ԾԵՐ ՊԱՏՐԻԿ.— Նա թուլամորթ է:

ԵՐԿՐՈՐԳ ՊԱՏՐԻԿ.— Տիմիկ է:

ԵՐՐՈՐԳ ՊԱՏՐԻԿ.— Խեղկատակ է:

ԾԵՐ ՊԱՏՐԻԿ.— Նա անկարող է...

ՉՈՐՐՈՐԳ ՊԱՏՐԻԿ.— Արդեն երեք տարի: (Իրարանցում է և խառ-  
նաշփոթ: Ջենքերը շաշում են: Վայր է ընկնում մի հրագ: Ետ  
են տալիս մի սեղան: Բոլորը շտապում են դեպի ելքը: Անվրդով  
տեսքով ներս է մտնում Շերեան, որը կասեցնում է եռուզեղը):

#### ՏԵՍԱՐԱՆ ԵՐԿՐՈՐԳ

ԾԵՐԵԱ.— Ո՞ր եք այդպես վազում:

ԵՐԿՐՈՐԳ ՊԱՏՐԻԿ.— Պալատ:

ԾԵՐԵԱ.— Հասկացա, բայց ինչ է, կարծում եք կթողնե՞ն ներս մտնել:

ԱՌԱՋԻՆ ՊԱՏՐԻԿ.— Հարցը թույլտվություն խնդրելը չէ:

ԾԵՐԵԱ.— Ահա, հանկարծակի լցվել եք եռանդով: Գոնե կարո՞ղ եմ  
տանս նստելու իրավունք ունենալ: (Թակում են դուրը: Շերեան  
քայլում է շուռ տված սեղանի շուրջը, և նստում նրա մի անկյու-  
նին: Բոլորը շրջվում են նրա կողմը):

ԾԵՐԵԱ.— Դա այնքան էլ հեշտ չէ, ինչպես դուք եք կարծում, բարե-  
կամեն՞րս: Վախը, որ դուք զգում եք, չի կարող տեղի տալ քաջու-  
թյան և ստունարյունության: Այդ բոլորի համար դեռ վաղ է:

ԵՐՐՈՐԳ ՊԱՏՐԻԿ.— Եթե դու մեզ կողմնակից չես, հեռացի՛ր այս-  
տեղից, բայց լեզուդ քեզ քաշիր:

ԾԵՐԵԱ.— Մինչդեռ կարծում եմ, որ կողմնակից եմ քեզ, բայց ոչ միև-  
նույն նպատակների համար:

ԵՐՐՈՐԳ ՊԱՏՐԻԿ.— Վե՛րջ շատախոսությանը:

ԾԵՐԵԱ (կանգնելով ուղիղ).— Այո, բավական է շատախոսել: Ես ու-  
զում եմ, որ իրերը պարզ լինեն: Չնայած ձեզ հետ եմ, բայց հա-  
մախոհ չեմ ձեզ: Այդ իսկ պատճառով ձեր մեթոդը ինձ անպտուղ  
է թվում: Դուք չեք ճանաչել ձեր իսկական թշնամուն, նրան վե-

րագրել էք փոքրիկ շարժանիթներ, մինչդեռ դրանք մեծ են և դուք վազում էք դեպի ձեր կործանումը: Նախ փորձեք տեսնել նրան, ինչպես որ նա գոյություն ունի, որպեսզի կարողանաք նրա դեմ պայքարել ուժգին:

**ԵՐՐՈՐԴ ՊԱՏՐԻԿ.**— Մենք նրան տեսնում ենք այնպիսին, ինչպիսին որ կա, ամենախեղճ բռնապետերից:

**ՇԵՐԵԱ.**— Ծիշտ չէ: Խենթ կայսրեր ճանաչում ենք: Բայց այս մեկը այնքան էլ խենթ չէ: Եվ այն, ինչից որ խորշում եմ, այն է, որ նա գիտե իմ ուզածը:

**ԱՌԱՋԻՆ ՊԱՏՐԻԿ.**— Նա մեր բոլորի մահն է ուզում:

**ՇԵՐԵԱ.**— Ոչ, թերևս դա երկրորդական է: Բայց նա ներդնում է իր ուժը հանուն ամենաբարձր, ամենամահաբեր կրքի: Նա մեզ սպառնում է այն բանի համար, որը մեր մեջ այնքան խորն է արմատացած: Անկասկած, մեզ մոտ առաջին անգամ չէ, որ մեկը անկաշկանդ տնօրինում է իր անսահմանափակ իշխանությունը, բայց առաջին անգամն է, որ այն գործի է դնում՝ մինչև վերջ ժխտելով մարդուն և աշխարհը: Ահա թե ինչն է ինձ սարսափեցնում, որի դեմ ուզում եմ պայքարել: Կյանքը կորցնելը մեծ բան չէ, և անհրաժեշտ պահին կունենամ այդ քաջությունը: Բայց տեսնել, որ ցիրուցան է լինում ողջամտությունը կյանքի, անհետանում է մեր գոյատևման իմաստը, ահա թե ինչն է անհամարժեքելի: Անհնարին է ապրել առանց նպատակի:

**ԱՌԱՋԻՆ ՊԱՏՐԻԿ.**— Վրիժառությունը նպատակ է:

**ՇԵՐԵԱ.**— Այո, և այդ ես կկիսեմ ձեզ հետ: Բայց գիտե՞ք, ոչ նրա համար, որ ձեր փոքրիկ անարգանքների նվաստ կուսակիցը լինեմ, այլ որ պայքարեմ մի մեծ գաղափարի դեմ, որի հաղթանակը կնշանակեր աշխարհի վերջը: Կարող եմ հանդուրժել, որ դուք ծաղրուծանակ դառնաք, բայց չեմ կարող հանդուրժել, որ Կալիգուլան անի ինչ երագում է, և ընդհանրապես ինչ երագում է անել: Նրա փիլիսոփայության իրագործումը անհամար դիակներ է բերում: Ի դժբախտություն մեզ, անառարկելի փիլիսոփայությունն է՝ պետք է զարկել, երբ չես կարող ժխտել:

**ԵՐՐՈՐԴ ՊԱՏՐԻԿ.**— Ուրեմն պետք է գործել:

**ՇԵՐԵԱ.**— Պետք է գործել: Բայց չենք կործանի այս անիրավ իշխանությունը՝ հարձակվելով ճակատից, երբ նա լի է ցասումով: Կարելի է պայքարել բռնության դեմ: Պետք է խորամանկել անշահախնդիր չարության դեմ: Պետք է նրան մղել դեպի իր նպատակակետը, սպասել, որ նա դառնա խելացնոր: Մեկ անգամ ևս ես

խոսել էմ միայն հանուն ազնվության, հասկացեք, որ ես ձեզ հետ էմ միայն ժամանակավորապես, որից հետո չեմ ծառայելու ձեր շահերին, տենչալով վերագտնել միայն խաղաղություն, նոր հարակից դարձած աշխարհում: Փառասիրությունից չէ, որ ես գործում էմ, այլ մի ողջամիտ վախից, անմարդկային լիրիզմի վախից, որի մոտ կյանքս ոչինչ է:

**ԱՌԱՋԻՆ ՊԱՏՐԻԿ (առաջ գալով).**— Կարծում էմ, որ հասկացա, կամ՝ մոտավորապես: Բայց հիմնականն այն է, որ դու էլ դատում ես մեզ պես, որ մեր հասարակության հիմքերը խարխուլ են: Մեզ համար, ինչպես բոլորիդ հարցը, նախ և առաջ վերաբերում է բարոյականությանը, այնպես չէ՞: Ընտանիքը ետևում է, կորչում է աշխատանքի հանդեպ եղած հարգանքը, հայրենիքն ամբողջությամբ մատնվել է լուտանքի: Առաքինությունը մեզ օգնության է կանչում, մերժե՞նք նրա կանչը: Երդվյալներ, կընդունե՞ք, որ պատրիկները ամեն երեկո հարկադրաբար վազեն Գայուսի դեսպակի շուրջը:

**ԾԵՐ ՊԱՏՐԻԿ.**— Կհանդուրժե՞ք, որ մեզ անվանեն «սիրուհի»:

**ԵՐՐՈՐԴ ՊԱՏՐԻԿ.**— Որ հաիշտակեն մեր կանանց:

**ԵՐԿՐՈՐԴ ՊԱՏՐԻԿ.**— Եվ մեր երեխաներին:

**ՄՈՒՍԻՈՒՍ.**— Եվ մեր ունեցվածքը:

**ՀԻՆԳԵՐՈՐԴ ՊԱՏՐԻԿ.**— Ո՛չ:

**ԱՌԱՋԻՆ ՊԱՏՐԻԿ.**— Ծերեա՛, դու լավ խոսեցիր: Եվ ճիշտ վարվեցիր, որ անդորրեցիր մեզ: Դեռ վաղ է գործել, այսօր դեռևս ժողովուրդը դեմ կլինի մեզ: Ուզո՞ւմ ես մեզ հետ սպասել անհրաժեշտ պահին:

**ԾԵՐԵԱ.**— Այո, թույլ տանք, որ Կալիգուլան շարունակի: Ընդհակառակը, նրան մղենք դեպի այդ ուղին: Խրախուսենք, ոգևորենք նրա խենթությունները: Կգա օրը, երբ նա մեն-մենակ կլինի կայսրության առաջ՝ լեցուն մեռյալներով ու նրանց հարազատներով: (Իբարանցում, աղաղակ: Դրսից փողերի աղմուկ է լսվում: Լռություն: Հետո տարածվում է «Կալիգուլա, Կալիգուլա»):

#### ՏԵՍԱԲԱՆ ԵՐՐՈՐԴ

Մտնում են Կալիգուլան և Կայետնիան, որոնց հետևում են Հելիկոնը և մի քանի զինվորներ: Բեմում մի համր տեսարան է: Կալիգուլան կանգ է առնում և դիտում երդվյալներին: Լռությամբ մոտենում է

մեկին, հետո մյուսին, ուղղում է մեկի խոսույրը, ետ է դառնում զրն-  
նելու երկրորդին, նորից նայում է նրանց, դնում է ձեռքը աչքերին և  
կուրս է գալիս առանց մի բառ ասելու:

### ՏԵՍԱՐԱՆ ՉՈՐՐՈՐԴ

**ԿԱՅԵՍՈՆԻԱ (ծաղրանքով մատնանշելով խառնաշփոթությունը).—**

Կովո՞ւմ էիք:

**ԾԵՐԵԱ.—** Կովում էինք:

**ԿԱՅԵՍՈՆԻԱ (նույն տոնով).—** Եվ ինչո՞ւ էիք կովում:

**ԾԵՐԵԱ.—** Հենց այնպես:

**ԿԱՅԵՍՈՆԻԱ.—** Ուրեմն ճիշտ չէ:

**ԾԵՐԵԱ.—** Ի՞նչը ճիշտ չէ:

**ԿԱՅԵՍՈՆԻԱ.—** Դուք չէիք կովում:

**ԾԵՐԵԱ.—** Ուրեմն չէինք կովում:

**ԿԱՅԵՍՈՆԻԱ (ժպտալով).—** Լավ կլինեք սենյակը կարգի բերեիք:

Կալիգուլան անկարգությունը տանել չի կարող:

**ՀԵԼԻԿՈՆ (ծեր պատրիկին).—** Ի վերջո դուք այդ մարդուն ստիպելու  
եք համբերությունից դուրս գալ:

**ԾԵՐ ՊԱՏՐԻԿ.—** Դե, վերջապես ի՞նչ ենք նրան արել:

**ՀԵԼԻԿՈՆ.—** Հենց ոչինչ: Չլաված բան է այդքան չնչին լինել: Ի վեր-  
ջո այդ դառնում է անտանելի: Պատկերացրեք ձեզ Կալիգուլայի  
փոխարեն: (**Փոքրիկ դադար**): Բնականաբար դավադրությանը էիք  
զբաղված, այդպես չէ՞:

**ԾԵՐ ՊԱՏՐԻԿ.—** Ի՞նչ ես ասում, ճիշտ չէ: Ինչեք է մտածում:

**ՀԵԼԻԿՈՆ.—** Նա չի մտածում, նա գիտե: Բայց ինձ թվում է իր սրտում  
նա մի փոքր կողմնակից է դրան: Ծո՛ւտ, շո՛ւտ կարգի բերեք սեն-  
յակը: (**Գործի են անցնում: Մտնում է Կալիգուլան և զննում**):

### ՏԵՍԱՐԱՆ ՀԻՆԳԵՐՈՐԴ

**ԿԱԼԻԳՈՒԼԱ (Ծեր պատրիկին).—** Բարև, սիրելի՛ տիկին: (**Մյուսնե-  
րին**): Ծերեա՛, որոշել եմ կազդուրվել ձեզ մոտ: Մուսիո՛ւս, ինձ  
թույլ եմ տվել քո կնոջը հրավիրել: (**Վերակացուն ծափ է տալիս,  
ներս է մտնում մի ստրուկ, բայց Կալիգուլան կանգնեցնում է նր-  
բան**): Մի վայրկյան, պարոնա՛յք, դուք գիտեք, որ պետության

բյուջեն գոյություն ունեւ համաձայն մեր սովորության: Երեկվանից սովորությունն այլևս չի արդարացնում իրեն: Կարիքի մեջ եմ, հետևաբար սկսում եմ կրճատել իմ պալատական անձնակազմը, քաջ գիտակցելով, որ դուք, անկասկած, կգնահատեք իմ զոհաբերության տենչը: Որոշել եմ կրճատել իմ տան ծախքերը, ազատել մի քանի ստրուկների և ձեզ վստահել նրանց ծառայությունը: Հաճեցեք սեղան գցել և սպասարկել: **(Սենատորները տարակուսանքով նայում են միմյանց և մտորում):**

**ՀԵԼԻԿՈՆ.—** Դե, պարոնա՛յք, մի քիչ բարեհաճորեն, ի դեպ կտեսնեք, որ շատ ավելի հեշտ է հասարակության սանդուղքով իջնելը, քան բարձրանալը: **(Սենատորները շարժվում են տարակուսանքով):**

**ԿԱԼԻԳՈՒԼԱ (Կայետնիային).—** Ո՞րն է ծուլ ստրուկների համար սահմանված պատիժը:

**ԷՄՅԵՍՏՈՆԻԱ.—** Մտրակը, կարծում եմ: **(Սենատորները շտապում են և շարունակում են անճարակորեն սեղան գցել):**

**ԿԱԼԻԳՈՒԼԱ.—** Դե՛, դե՛ մի քիչ եռանդուն, ջանացեք, մեթոդ ունեցեք, հատկապես մեթոդ: **(Հելիկոնին):** Ինձ այնպես է թվում, թե կորցրել եմ իրենց ձեռքերը:

**ՀԵԼԻԿՈՆ.—** Ծիշտն ասած, նրանք երբեք ձեռքեր չեն ունեցել, եթե ունեցել են, ապա միայն ծեծելու կամ հրամայելու համար: Հարկավոր է համբերել: Ահա բոլորը: Մեկ օրը բավ է մեկին սենատոր դարձնելու համար, իսկ աշխատող պատրաստելու համար 10 տարին հազիվ թե բավի:

**ԿԱԼԻԳՈՒԼԱ.—** Բայց վախճնում եմ քսան տարին էլ չբավի մի սենատորից աշխատող պատրաստելու համար:

**ՀԵԼԻԿՈՆ.—** Այնուամենայնիվ, ոչինչ, նրանց հաջողվում է: Իմ կարծիքով նրանք հակում ունեն, ծառայությունը նրանց կազգի: **(Մի սենատոր սրբում է քրտինքը):** Նայիր, սկսում են նույնիսկ քրտնանել: Դա առաջին փուլն է:

**ԿԱԼԻԳՈՒԼԱ.—** Դե լավ: Ծատ չպահանջե՛նք: Այնքան էլ վատ չէ: Հետո արդարության գոնե մի պահը վայելել արժե: Ի միջի այլոց, արդարության մասին խոսելիս հիշում եմ, որ պետք է շտապենք: Մահապատիժը պետք է ի կատար ածեն: Օ՛, Ռուֆիուսը բախտավոր է, որ ես այսքան արագ քաղց զգացի: **(Ծածուկ):** Ռուֆիուսը այն ասպետն է, որ պետք է մահանա: **(Դադար):** Իսկ չե՛ք հարցնում, ինչո՞ւ պիտի մահանա: **(Ընդհանուր լռություն: Այդ ընթացքում ստրուկները բարձր տրամադրությամբ բերում են**

**ուտեստները):** Այդպես: Տեսնում եմ, որ գնալով ավելի խելացի եք դառնում: **(Զիթապտուղ է ուտում):** Վերջապես հասկացաք, որ պարտադիր չէ մարդուն մահվան դատապարտել անպայմանորեն որևէ արարքի համար: Զինվորներ՛ր, գոհ եմ ձեզանից: Այդպես չէ՞, Հելիկո՛ն: **(Ծաղրանքով նայում է հրավիրվածներին):**

**ՀԵԼԻԿՈՆ.**— Իսկապես, ինչ բանակ է, եթե կարծիքս ես ուզում իմանալ, կասեի, որ այժմ նրանք չափազանց խելացի են և այլևս չեն ցանկանում կոպել: Եթե նորից առաջադիմեն, կաշարությունը կտապալվի:

**ԿԱԼԻԳՈՒԼԱ.**— Հոյակապ է: Կհանգստանանք: Դե տեսներք, ապավինենք պատահականությանը: Ոչ մի պաշտոնականություն: Այնուամենայնիվ, այս Ռուֆիուսը բախտ ունի: Եվ ես վստահ եմ, որ նա չի գնահատում այս փոքրիկ հապաղումը: Մինչդեռ մի բանն իմ ժամ շահել մահից առաջ անգնահատելի բան է:

**Նա ուտում է, մյուսները՝ նույնպես: Արդեն ստույգ է, որ Կալիգուլան իրեն անպարկեշտ է պահում սեղանի շուրջ: Ոչ մի բան նրան չի ստիպում, որ ձիթապտղի կորիզը գցի հարևանի ափսեի մեջ, մնացուկները իր ափսեի մեջ, ատամները մաքրի եղունգներով և մոլեգնորեն քորի գլուխը: Այս ամենը արդեն մեծ հանդգնություն է, որ նա անբռնազբոս թույլ է տալիս ինքն իրեն ճաշի ժամանակ: Բայց նա հանկարծ դադարում է ուտել ու սենձուն նայում է հրավիրվածներից մեկին՝ Լեպիդիուսին: (Կոպտորեն):**

Տեսքիցդ երևում է, որ տրամադրությունդ լավ չէ: Գուցե այն պատճառով, որ սպանե՞լ եմ տվել քո որդուն:

**ԼԵՊԻԴԻՈՒՍ (կոկորդը հուզմունքից սեղմված).**— Բոլորովին, Գայո՛ւս, ընդհակառակը:

**ԿԱԼԻԳՈՒԼԱ (զվարթ).**— Ընդհակառակը: Որքան եմ սիրում, երբ դեմքը կեղծում է սրտի հոգսը: Դեմքդ տխուր է, իսկ սիրտդ ընդհակառակը, Լեպիդիո՛ւս, այդպես չէ՞:

**ԼԵՊԻԴԻՈՒՍ (հաստատուն).**— Ընդհակառակը, Գայո՛ւս:

**ԿԱԼԻԳՈՒԼԱ (հետզհետե ավելի ուրախ).**— Ա՛հ, Լեպիդիո՛ւս, ոչ ոք ինձ համար այնքան թանկ չէ, որքան դու: Ծիծաղենք միասին, ուզո՞ւմ ես: Ինձ մի քանի հետաքրքիր պատմություններ պատմիր:

**ԼԵՊԻԴԻՈՒՍ (հանկարծակի ուժասպառված).**— Գայո՛ւս:

**ԿԱԼԻԳՈՒԼԱ.**— Դե լավ, լավ, ուրեմն ես կպատմեմ: Բայց դու կծիծաղես, Լեպիդիո՛ւս, այդպես չէ՞: **(Խոժոռ հայացքով):** Գոնե հանուն երկրորդ որդուդ: **(Նորից ծիծաղկոտ):** Բացի այդ տրամա-

դրությունը վատ չէ: **(Խմում է, հետո թելադրելով):** Ընդհակառակը, ընդ-հա-կա-ռա-կը: Դե', Լեպիդիոն'ու:

**ԼԵՊԻԴՈՒՍ (հոգնած).**— Ընդհակառակը, Գայոն'ու:

**ԿԱԼԻԳՈՒԼԱ.**— Վերջապես: **(Խմում է):** Հիմա լսիր: **(Երազկոտ):** Լի-նում է, չի լինում մի խեղճ կայսր, որին ոչ-ոք չէր սիրում: Նա, որ այնքան սիրում էր Լեպիդիոսին, սպանել տվեց նրա ամենա-երիտասարդ որդուն, որպեսզի նրա սրտից հաներ այդ սերը: **(Փո-խելով խոսակցության նյութը):** Բնականաբար, սա ճիշտ չէ: Տար-օրինակ է, չէ': Չես ծիծաղում: Ոչ-ոք չի ծիծաղում: Ուրեմն լսեք: **(Պոռթկուն գայրույթով):** Ուզում եմ, որ բոլորը ծիծաղեն: Դու, Լեպիդիոն'ու և բոլորդ: Դե վեր կացեք, ծիծաղեք: **(Խփում է սե-ղանին):** Ուզում եմ, լսո՞ւմ եք, ես ուզում եմ տեսնել, թե ինչպես եք ծիծաղում: **(Բոլորը վեր են կենում: Ամբողջ այս տեսարանի ընթացքում դերասանները, բացի Կալիգուլայից և Կայետոնիայից, կարող են խաղալ տիկնիկների պես: Կալիգուլան, ընկնելով իր անկողնու վրա, բռնկվում է անզուսպ ծիծաղով):** Մի դրանց նա-չիր, Կայետոնիա': Ամեն ինչ արդեն անիմաստ է: Պարկեշտություն, հարգանք, որ ասում են ժողովրդի իմաստնություն, արդեն անի-մաստ բաներ են: Ամեն ինչ անհետանում է վախի առկայությամբ: Կայետոնիա', վախը այն անշահախնդիր և հազվադեպ զգացմունք-ներից մեկն է, որի ազնվականությունը բխում է փորձից: **(Դնում է ձեռքը ճակատին և խմում: Բարեկամական տոնով):** Հիմա ուրիշ բանից խոսենք: Հապա տեսնենք, Ծերեա', դու շատ լուռ ես:

**ԾԵՐԵԱ.**— Պատրաստ եմ խոսել, Գայոն'ու, հենց որ թույլ տաս:

**ԿԱԼԻԳՈՒԼԱ.**— Հոյակապ է: Դե ուրեմն լսիր: Ծատ կուզենայի լսել մեր բարեկամ Մուսիուսին:

**ՄՈՒՍԻՈՒՍ (դժկամորեն).**— Հրամանդ, Գայոն'ու:

**ԿԱԼԻԳՈՒԼԱ.**— Դե պատմիր մեզ կնոջդ մասին: Եվ ողարկիր նրան ձախ կողմս: **(Մուսիուսի կինը գալիս է Կալիգուլայի մոտ):** Դե, Մուսիոն'ու, քեզ ենք սպասում:

**ՄՈՒՍԻՈՒՍ (մի քիչ իրեն կորցրած).**— Կինս է, բայց ես սիրում եմ նրան: **(Բոլորը ծիծաղում են):**

**ԿԱԼԻԳՈՒԼԱ.**— Իհարկե, բարեկամս, իհարկե: Հասկանալի է: **(Մու-սիուսի կինը արդեն Կալիգուլայի մոտ է, և վերջինս ցրված, լի-զում է նրա ձախ ուղի: Կալիգուլան հետզհետե իրեն ավելի ազատ է պահում):** Ի միջի այլոց, երբ ներս մտա, դուք դավադրում էիք, այդպես չէ': Փոքրիկ դավադրություն էիք նյութում, հը':

**ԾԵՐ ՊԱՏՐԻԿ.**— Գայոն'ու, ինչպե՞ս կարող ես:



**ԿԱԼԻԳՈՒԼԱ.**— Բնավ կարևոր չէ, սիրունի՛կա: Պետք է, որ ծերությունն անցնի: Իսկապես, բնավ կարևոր չէ: Դուք անընթացապես եք որևէ քաջ արարքի: Հիշում եմ միայն, որ պետք է մի քանի պետական խնդիրներ լուծեմ: Բայց նախ եկեք բախարաբենք անխուսափելի կրքերը, որ բնությունը ծնել է մեր մեջ: (**Նա վեր է կենում և իր հետ Մուսիուսի կնոջը քարշ է տալիս դեպի հարևան սենյակը**):

### ՏԵՍԱՐԱՆ ՎԵՅԵՐՈՐԴ

**Մուսիուսը կարծես թե վեր է կենում:**

**ԿԱՅԵՍՈՆԻՒԱ (սիրալիր).**— Օ՛հ, Մուսիո՛ւս, այս հոշակապ գինուց ես նորից կխմեի: (**Մուսիուսը սանձահարված լռությամբ սպասարկում է նրան: Անհարմար մի պահ սթոռները ճռռում են, դրանց հաջորդում է խիստ չափավոր մի զրույց**):

**ԿԱՅԵՍՈՆԻՒԱ.**— Դե լավ, Շերեա՛, հիմա ինձ կպատմե՛ս, թե ինչու էիք կովում քիչ առաջ:

**ՇԵՐԵԱ (սառնությամբ).**— Ամեն ինչ ծագեց այն բանից, սիրելի՛ Կայետնիա, երբ մենք ուզեցինք իմանալ՝ արդյոք բանաստեղծությունը պետք է լինի մահաբե՛ր, թե՞ ոչ:

**ԿԱՅԵՍՈՆԻՒԱ.**— Շատ հետաքրքիր է: Սակայն դա արդեն կանացի իմ դատողությունից վեր է: Բայց ես հիանում եմ ձեզնով, որ ձեր կիրքը արվեստի հանդեպ ձեզ մղում է նույնիսկ մեկդ մյուսին հրմշտելու:

**ՇԵՐԵԱ (նույն խաղը).**— Անշուշտ: Բայց Կալիգուլան ինձ ասում էր, որ չկա մեծ կիրք առանց որոշ անգթության:

**ՀԵԼԻԿՈՆ.**— Ոչ էլ սեր, առանց փոքրիկ բռնաբարության:

**ԿԱՅԵՍՈՆԻՒԱ (ուտելով).**— Ձեր ասածի մեջ որոշ ճշմարտություն կա: Դուք ի՞նչ եք կարծում:

**ԾԵՐ ՊԱՏՐԻԿ.**— Կալիգուլան բուն հոգեբան է:

**ԱՌԱԶԻՆ ՊԱՏՐԻԿ.**— Նա մեզ հետ ճարտար խոսել է քաջության մասին:

**ԵՐԿՐՈՐԴ ՊԱՏՐԻԿ.**— Նա պետք է ամփոփեր բոլոր իր մտքերը: Դա անգնահատելի բան կլիներ:

**ՇԵՐԵԱ.**— Առանց հաշիի առնելու, որ դա կգրադեցնի նրան, քանզի ակնհայտ է, որ նա զվարճանալու կարիք ունի:

**ԿԱՅԵՍՈՆԻՒԱ (շարունակ ուտելով).**— Դուք կուրախանաք իմանալով, որ նա մտածել է այդ մասին և այս բուպեին նա գրում է մի մեծ աշխատություն:

## ՏԵՍԱՐԱՆ ՅՈՒՆԵՐՈՐԳ

### Մտնում են Կալիգուլան և Մուսիուսի կինը:

**ԿԱԼԻԳՈՒԼԱ.**— Մուսիո՛ւս, կնոջդ քեզ եմ վերադարձնում: Նա կմիանա քեզ: Բայց ներեցե՛ք ինձ, ես պետք է մի քանի կարգադրություններ անեմ: (Նա արագ դուրս է գալիս: Մուսիուսը գունաթափ վեր է կենում):

## ՏԵՍԱՐԱՆ ՈՒԹԵՐՈՐԳ

**ԿԱՅԵՍՈՆԻՍ (Մուսիուսին, որ կանգնած է).**— Այդ մեծ աշխատությունը կդասվի ամենահայտնի աշխատությունների շարքում: Դրանում կասկած չունենք:

**ՄՈՒՍԻՈՒՍ (Մուսիուսը շարունակում է նայել դռանը, որտեղից Կալիգուլան էր դուրս եկել).**— Եվ ինչի՞ մասին է այնտեղ խոսվում:

**ԿԱՅԵՍՈՆԻՍ (անտարբեր).**— Օ՛հ, իմ խելքից վեր է դա:

**ՇԵՐԵԱ.**— Ուրեմն պետք է հասկանալ, որ այնտեղ խոսվում է պոեզիայի մահաբեր ուժի մասին:

**ԿԱՅԵՍՈՆԻՍ.**— Կարծում եմ, որ ճիշտ է:

**ԾԵՐ ՊԱՏՐԻԿ (կատակով).**— Դա կզբաղեցնի նրան, ինչպես ասում է Շերեան:

**ԿԱՅԵՍՈՆԻՍ.**— Այո, սիրունի՛կս, բայց այն, ինչը որ ձեզ դուր չի գա, դա, անկասկած, աշխատության վերնագիրն է:

**ՇԵՐԵԱ.**— Ի՞նչ է վերնագիրը:

**ԿԱՅԵՍՈՆԻՍ.**— «Սուրբ»:

## ՏԵՍԱՐԱՆ ԻՆՆԵՐՈՐԳ

### Արագ ներս է մտնում Կալիգուլան:

**ԿԱԼԻԳՈՒԼԱ.**— Ներեցե՛ք ինձ, բայց պետության գործերն էլ հապճեպ են: Վերակացու, դու փակել կտաս հասարակության մտանցները: Հենց նոր ստորագրել եմ հրովարտակը: Այն կգտնես իմ սենյակում:

**ՎԵՐԱԿԱՑՈՒ.**— Բայց...

**ԿԱԼԻԳՈՒԼԱ.**— Վաղը սով է լինելու:

**ՎԵՐԱԿԱՑՈՒ.**— Բայց ժողովուրդը կփնուվի:

**ԿԱԼԻԳՈՒԼԱ (պողթկուն, բայց հաստատակամ).**— Ասացի, որ վաղը սով է լինելու: Բոլորն էլ գիտեն, թե ինչ է սովը, դա աղետ է: Վաղը աղետ է լինելու... և ես կկասեցնեմ աղետը, երբ որ ինքս ցանկանամ: **(Բացատրում է մյուսներին):** Ի վերջո այլ միջոց չունեմ ապացուցելու, որ ես ազատ եմ: Միշտ ազատ եմ մեկ ուրիշի հաշվին: Դա տհաճ է, բայց և բնական: **(Մի հայացք նետելով Մուսիուսի կողմը):** Նախանձի պահին գործի դրեք այդ միտքը և դուք կհամոզվեք: **(Մտազբաղ):** Այնուամենայնիվ ինչ տգեղ է նախանձ լինելը: Տառապել սնապարծությանը և երկակայությանը: Տեսնել սեփական կնոջդ... **(Մուսիուսը սեղմում է բռունցքը և ցասումնալից բացում է բերանը խոսելու համար: Նրան կանխելով):** Անուշ արեք, պարոնայք: Տեղյա՞կ եք, որ մենք եռանդուն աշխատում ենք Հելիկոնի հետ: Մենք ճշտում ենք մի փոքրիկ պալմանագիր մահապատժի վերաբերյալ, որի մասին դուք կտեղեկացնեք մեզ:

**ՀԵԼԻԿՈՆ.**— Եթե, երբևէ հարցնենք ձեր կարծիքը:

**ԿԱԼԻԳՈՒԼԱ.**— Լինենք մեծահոգի, Հելիկոն: Բացահայտենք մեր փոքրիկ գաղտնիքները: Ուրեմն, երրորդ գլուխ, սարքերություն ՚ի սուաջին:

**ՀԵԼԻԿՈՆ (վեր է կենում և մեխանիկորեն արտասանում).**— Մահապատժի սփոփում է և ազատում: Նա համընդհանուր է, ամրապնդող և արդար է, որքան իր իրագործման, նույնքան իր նպատակների մեջ: Մեռնում են, որովհետև մեղավոր են: Մեղավոր են, որովհետև հպատակ են Կալիգուլային: Քանի որ բոլորն էլ հպատակ են Կալիգուլային, ուրեմն բոլորն էլ մեղավոր են: Եվ հետևանքն այն է, որ բոլորն էլ մեռնում են: Միայն ժամանակի և համբերության հարց է:

**ԿԱԼԻԳՈՒԼԱ (ծիծաղելով).**— Ի՞նչ կարծիքի եք: Համբերություն՞ն, հր՞, ահա քեզ հայտնություն: Ուզո՞ւմ եք ձեզ մի բան ասեմ: Հենց այդ է ձեր մեջ, որ ամենից շատ է հիացնում ինձ: Այժմ, պարոնայք, կարող եք գնալ: Ծերեան այնս ձեր կարիքը չունի: Սակայն Կայետնիան թող մնա, Լեպիդիուսը, Օկտավիուսը, Ծերեան նույնպես: Ես կուզենայի խորհրդակցել ձեզ հետ իմ հասարակաց տան կազմակերպման մասին: Դա ինձ մեծ հոգսեր է պատճառում: **(Մյուսները հանդարտ դուրս են գալիս: Կալիգուլան հայացքով հետևում է Մուսիուսին):**

ՇԵՐԵԱ.— Հրամանդ, Գայո՛ւս: Ի՞նչը կարգին չէ: Անձնակազմը վա՛րճ  
է:

ԿԱԼԻԳՈՒԼԱ.— Ոչ, հասույթները լավ չեն:

ՄԵՐԵԱ.— Պետք է բարձրացնել տարիֆները:

ԿԱԼԻԳՈՒԼԱ.— Մերեա, նորից կորցրեցիր լռելու առիթը: Հաշվի առ-  
նելով քո տարիքը, այս հարցերը չեն կարող քեզ հետաքրքրել,  
հետևաբար չեմ հարցնում կարծիքդ:

ՄԵՐԵԱ.— Այա ինչո՞ւ ինձ կարգադրեցիք մնալ:

ԿԱԼԻԳՈՒԼԱ.— Որովհետև շուտով կարիք կունենամ անկիրք կար-  
ծիքի: (Մերեան ետ է քաշվում):

ՇԵՐԵԱ.— Գայուս, էթե կարողանայի այդ մասին կրքոտ խոսել, ապա  
կասեի, որ պետք չէ դիպչել տարիֆներին:

ԿԱԼԻԳՈՒԼԱ.— Բնական է, իհարկե՛ն: Բայց մեզ պետք է բարձրացնել  
հաճախորդների թիվը: Ես արդեն Կալեառնիային բացատրել եմ  
իմ պլանը, նա այդ ձեզ ցույց կտա: Իսկ ես գինի շատ խմեցի և  
քունս գալիս է: (Նա պստկում է և փակում աչքերը):

ԿԱՅԵՍՈՆԻԱ.— Լիովին պարզ է: Կալիգուլան ստեղծում է պարզևա-  
տըրման նոր շքանշաններ:

ՇԵՐԵԱ.— Ես դրա հետ որևէ առնչություն չեմ տեսնում:

ԿԱՅԵՍՈՆԻԱ.— Սակայն կա: Այդ պարզևը քաղաքացիական հերոսի  
շքանշանն է, որ շնորհվում է քաղաքացիներից նրանց, ովքեր  
ամենից շատ կհաճախեն Կալիգուլայի հասարակաց տունը:

ՇԵՐԵԱ.— Պայծառ միտք է:

ԿԱՅԵՍՈՆԻԱ.— Ես էլ այդ կարծիքին եմ: Մոռացել եմ ասել, որ շքա-  
նշանը տրվում է յուրաքանչյուր ամիս՝ հաճախումների տոմսերի  
հաշվառումից հետո: Այն քաղաքացին, որը տասներկու ամսվա ըն-  
թացքում շքանշան ձեռք չի բերի, կաքսորվի, կամ կդատապարտ-  
վի մահվան:

ԵՐՐՈՐԳ ՊԱՏՐԻԿ.— Ինչո՞ւ «կամ կդատապարտվի մահվան»:

ԿԱՅԵՍՈՆԻԱ.— Որովհետև Կալիգուլան ասում է՝ տարբերություն չկա,  
կարևորն այն է, որ քաղաքացին ինքը ընտրի:

ՇԵՐԵԱ.— Կեցցես: Պետական գանձարանն այսօր հարստանում է:

ՀԵԼԻԿՈՆ.— Եվ միշտ խիստ բարոյական դիրքերից: Նկատի առեք:  
Ի վերջո նախընտրելի է ամբաստանել այլասերությունը, քան թե  
կեղեքել առաքինությունը, ինչպես վարվում են հանրապետական  
հասարակության մեջ: (Կալիգուլան կիսաբաց է անում աչքերը և

նայում է ծեր Մերեային, որը մեկուսի հանում է մի փոքրիկ սրբավակ և խմում մի ումպ):

ԿԱԼԻԳՈՒԼԱ (պառկած).— Մերեա, ի՞նչ ես խմում:

ՄԵՐԵԱ.— Ասթմայիս համար է, Գայո՛ւս:

ԿԱԼԻԳՈՒԼԱ (հեռացնելով մյուսներին՝ զնում է դեպի Մերեան և սկսում հոտոռել նրա բերանը).— Ո՛չ, դա հակաթույն է:

ՄԵՐԵԱ.— Ո՛չ, ո՛չ, Գայուս: Կատակո՞ւմ ես: Գիշերները խեղդվում եմ և վաղուց ի վեր բուժվում եմ:

ԿԱԼԻԳՈՒԼԱ.— Ուրեմն վախենում ես, որ կթունավորվե՞ս:

ՄԵՐԵԱ.— Իմ ապթման...

ԿԱԼԻԳՈՒԼԱ.— Ոչ, իրերն իրենց անուցներով անվանենք: Դու վախենում ես, որ ես քեզ կթունավորեմ: Կասկածում ես ինձ, լրտեսում:

ՄԵՐԵԱ.— Ո՛չ, ո՛չ, երդվում եմ բոլոր աստվածներով:

ԿԱԼԻԳՈՒԼԱ.— Դու ինձ կասկածում ես, մի տեսակ, դու ինձ չես վրատահում:

ՄԵՐԵԱ.— Գայո՛ւս:

ԿԱԼԻԳՈՒԼԱ (կոպտորեն).— Պատասխանի՛ր ինձ, (հաշվարկելով) էթե դու հակաթույն ես ընդունում, ուրեմն ինձ մղում ես քեզ թունավորելու դիտավորության:

ՄԵՐԵԱ.— Այո... ուզում եմ ասել... ոչ:

ԿԱԼԻԳՈՒԼԱ.— Եվ այն բոլորից, երբ մտածեցիր, որ ես որոշել եմ քեզ թունավորել, ամեն ինչ արեցիր, որպեսզի ընդդիմանաս իմ կամքին: (Լռությո՜ւն: Տեսարանի սկզբից Կայետնիան և Ծերեան զնացել էին բեմի ետնամասը: Միայն Լեպիդիոսն է անհանգիստ տեսքով հետևում երկխոսությանը): Հետզհետե ավելի ստույգ: Երկու ոճրագործություն: Եվ երկուսից էլ քեզ փրկություն չկա: Կամ չէի ուզում քեզ սպանել, և դու ինձ անարդարացիորեն կասկածում ես, ինձ՝ քո կայսրին, կամ ուզում էի, և՛ դու՝ միջատ, ընդդիմանում ես իմ որոշմանը: (Մի պահ Կալիգուլան գոհունակությամբ զննում է ծերունուն): Ապա, ասա, Մերեա՛, ի՞նչ կարծիքի ես այս տրամաբանության մասին:

ՄԵՐԵԱ.— Դա... շատ է խիստ, Գայո՛ւս, և չի համապատասխանում վերոհիշյալ դեպքին:

ԿԱԼԻԳՈՒԼԱ.— Եվ երրորդ ոճրագործությունը՝ դու կարծում ես, որ ես հիմար եմ: Լա՛վ լսիր ինձ: Այդ երեք ոճրագործություններից միայն մեկն է քեզ պատիվ բերում՝ երկրորդը, որովհետև այն պահին, երբ դու գուշակեցիր իմ որոշումը և ընդդիմացար, դա նշանակում է, որ դու ըմբոստ ես: Դու ապատամբ ես և ի վիճակի ես

քո ետևից տանելու մարդկանց: Դա լավ է: (**Տխրությամբ**): Մե-  
րեա՛, ես քեզ շատ եմ սիրում և դրա համար քեզ կդատապարտեմ  
քո երկրորդ հանցանքի համար և ոչ մյուսների: Դու կմեռնես քա-  
շաքար, որովհետև դու ամպատամբեցիր: (**Այս ամբողջ ճառի ըն-  
թացքում Մերեան ավելի ու ավելի է կծկվում աթոռին նստած**):  
Ինձ շնորհակալ մի եղիր, բնական է: Ահա, վերցրու: (**Նա Մե-  
րեային մի սրվակ է տալիս և ասում սիրալիր**): Խմիր այս թույնը:  
(**Մերեան դառնացած՝ գլխով մերժման նշան է անում: Կալիգուլան**  
**համբերությունից դուրս է գալիս**): Դե՛, դե՛, վերցրո՛ւ: (**Մերեան**  
**փորձում է փախչել, բայց Կալիգուլան, մոլեգնած, ցատկելով հաս-  
նում է նրան բեմի կենտրոնում, հրում, գցում մի ցածր աթոռի**  
**վրա և մի քանի վայրկյան պայքարելուց հետո սրվակը խոթում է**  
**նրա ատամների մեջ, այն ջարդում է բռունցքի հարվածներով:**  
**Մի քանի վայրկյան ցնցվելով, դեմքը ջրով և արյունով ողողված,**  
**Մերեան մեռնում է: Կալիգուլան վեր է կենում և մեխանիկորեն**  
**սրբում է ձեռքերը: Հետո շարունակում է՝ խոսքն ուղղելով Կայե-  
ստնիային և տալով նրան մի կտոր Մերեայի սրվակից): Սա ի՞նչ**  
**է, հակաթո՞ւյն:**

**ԿԱՅԵՍՈՆԻԱ (հանգիստ).**— Ո՛չ, Կալիգուլա՛, դա դեղորայք է ասթ-  
մայի դեմ:

**ԿԱԼԻԳՈՒԼԱ (նայելով Մերեային, մի պահ լռությունից հետո).**— Նշա-  
նակություն չունի: Նույն քանն է, մի քիչ շուտ, մի քիչ ուշ... (**Նա**  
**հանկարծ դուրս է գալիս մտազբաղ՝ շարունակելով սրբել ձեռ-  
քերը**):

#### ՏԵՍԱՐՍ.Ն ՏԱՍՆՄԵԿԵՐՈՐԳ

**ԼԵՊԻԴԻՈՒՍ (աքսափած).**— Հիմա ի՞նչ պետք է անել:

**ԿԱՅԵՍՈՆԻԱ (անվրդով).**— Նախ, կարծում եմ, պետք է դուրս բերել  
դիակը: Ծատ տգեղ է: (**Շերեան և Լեպիդիուսը դիակը քաշում են**  
**դեպի կուլիսները**):

**ԼԵՊԻԴԻՈՒՍ (Շերեային).**— Պետք է արագ գործնի:

**ՇԵՐԵԱ.**— 200 պետք է լինենք: (**Ներս է մտնում երիտասարդ Սկի-  
պիոնը: Նկատելով Կայեստնիային՝ նա մի շարժում է անում ետ**  
**քաշվելու համար**):

ԿԱՅԵՍՈՆԻՍ.— Արի այստեղ:

ԵՐԻՏԱՍԱՐԴ ՍԿԻՊԻՈՆ.— Ի՞նչ ևս ուզում:

ԿԱՅԵՍՈՆԻՍ.— Մոտ արի: (Կզակը բռնելով՝ բարձրացնում է երիտասարդ Սկիպիոնի գլուխն և նայում նրա աչքերի մեջ: Մի պահ, սառնորեն): Նա սպանե՛ց հորդ:

ԵՐԻՏԱՍԱՐԴ ՍԿԻՊԻՈՆ.— Այո:

ԿԱՅԵՍՈՆԻՍ.— Ատո՞ւմ ես նրան:

ԵՐԻՏԱՍԱՐԴ ՍԿԻՊԻՈՆ.— Այո:

ԿԱՅԵՍՈՆԻՍ.— Ուզո՞ւմ ես նրան սպանել:

ԵՐԻՏԱՍԱՐԴ ՍԿԻՊԻՈՆ.— Այո:

ԿԱՅԵՍՈՆԻՍ (թողնելով նրա կզակը).— Իսկ ինչո՞ւ ես այդ մասին ինձ ասում:

ԵՐԻՏԱՍԱՐԴ ՍԿԻՊԻՈՆ.— Որովհետև ոչ ոքից չեմ վախենում: Նրան սպանել, կամ սպանվել, երկուսն էլ միջոց են վերջացնելու: Բացի այդ, դու ինձ չես մատնի:

ԿԱՅԵՍՈՆԻՍ.— Ծիշտ ես, ես քեզ չեմ մատնի, բայց ես ուզում եմ քեզ մի բան ասել... ավելի ճիշտ, կուզեի խոսել այն լավագույնի հետ, որ կա քո մեջ:

ԵՐԻՏԱՍԱՐԴ ՍԿԻՊԻՈՆ.— Այդ լավագույնը, որ կա իմ մեջ, իմ ատելությունն է:

ԿԱՅԵՍՈՆԻՍ.— Լսիր ինձ: Այն, ինչ պիտի քեզ ասեմ, դժվար է, բայց և ակնհայտ: Դա մի բան է, որին եթե իսկապես հետևեին, այս աշխարհի միակ, վերջնական հեղափոխությունը կիրագործվեր:

ԵՐԻՏԱՍԱՐԴ ՍԿԻՊԻՈՆ.— Դե ասա:

ԿԱՅԵՍՈՆԻՍ.— Դեռևս ոչ: Նախ մտովի պատկերացրու քո հորը, այլակերպված դեմքը, որի լեզուն պոկեցին: Մտովի տես արյունով լցված այդ բերանը և այն տանջահար կենդանու ճիչը:

ԵՐԻՏԱՍԱՐԴ ՍԿԻՊԻՈՆ.— Այո:

ԿԱՅԵՍՈՆԻՍ.— Հիմա էլ մտովի տես Կալիգուլային:

ԵՐԻՏԱՍԱՐԴ ՍԿԻՊԻՈՆ (համակ ատելությամբ).— Այո:

ԿԱՅԵՍՈՆԻՍ.— Հիմա լսիր, փորձիր նրան հասկանալ: (Նա դուրս է գալիս՝ թողնելով երիտասարդ Սկիպիոնին շփոթության մեջ: Մրուցում է Հելիկոնը):

ՏԵՍԱՐԱՆ ՏՍՍՆԵՐՆՔԵՐՈՐԴ

ՀԵԼԻԿՈՆ.— Կալիգուլան վերադառնում է: Պոետ, չէի՞ր ցանկանա գնալ ուտելու:

ԵՐԻՏԱՍԱՐԴ ՍԿԻՊԻՈՆ.— Հելիկոն, օգնիր ինձ:

ՀԵԼԻԿՈՆ.— Վտանգավոր է աղավնյակս, հետո պոեզիայից ես ոչինչ չեմ հասկանում:

ԵՐԻՏԱՍԱՐԴ ՍԿԻՊԻՈՆ.— Դու կարող ես օգնել ինձ: Դու շատ բան գիտես:

ՀԵԼԻԿՈՆ.— Ես գիտեմ, որ օրերը անցնում են, և որ պետք է շտապել լավ ուտել: Գիտեմ նաև, որ դու կարող ես Կալիգուլային սպանել... և այդ արարքին նա վատ աչքով չի նայի: (Մտնում է Կալիգուլան, Հելիկոնը դուրս է գալիս):

ՏԵՍԱՐԱՆ ՏԱՍՆՉՈՐՍԵՐՈՐԴ

ԿԱԼԻԳՈՒԼԱ.— Հը, դո՞ւ ես: (Նա մի պահ կանգ է առնում, ասես մտածում է, թե ինչ դիրք ընդունել): Վաղուց քեզ չեմ ասել: (Դանդաղ գնալով դեպի նա): Ի՞նչ ես անում: Ծարունակո՞ւմ ես գրել: Կարո՞ղ ես ինձ ցույց տալ քո վերջին քառյակները:

ԵՐԻՏԱՍԱՐԴ ՍԿԻՊԻՈՆ (կաշկանդված, ատելությամբ մի այլ զգացմունքի միջև).— Ես գրել եմ պոեմներ, Կեսա՛ր:

ԿԱԼԻԳՈՒԼԱ.— Ինչի՞ մասին:

ԵՐԻՏԱՍԱՐԴ ՍԿԻՊԻՈՆ.— Չգիտեմ, Կեսա՛ր, բնության մասին, գուցե:

ԿԱԼԻԳՈՒԼԱ (ավելի հանգիստ).— Գեղեցիկ թեմա է և ընդարձակ: Իսկ բնությունը քեզ ի՞նչ է արել:

ԵՐԻՏԱՍԱՐԴ ՍԿԻՊԻՈՆ (զգաստանալով, հեզական և չար տոնով).— Նա ինձ սիրոփում է Կեսար չլինելու համար:

ԿԱԼԻԳՈՒԼԱ.— Աղպե՞ս ուրեմն, արդյոք նա կկարողանա՞ր ինձ սիրել, որ ես Կեսար եմ:

ԵՐԻՏԱՍԱՐԴ ՍԿԻՊԻՈՆ (նույն տոնով).— Արդարև նա ավելի խոր վերքեր է բուծել:

ԿԱԼԻԳՈՒԼԱ (անսովոր պարզությամբ).— Վե՛րք: Չարությամբ ես խոսում: Որովհետև սպանել եմ քո հո՞րը: Մինչդեռ եթե իմանայիր, թե որքան ճիշտ է այդ բառը, վե՛րք: (Փոխելով տոնը): Միայն ատելությունն է, որ մարդկանց խելացի է դարձնում:

ԵՐԻՏԱՍԱՐԴ ՍԿԻՊԻՈՆ (կոպտորեն).— Բնության մասին քո հար-



ցին եմ պատասխանել: (Կալիգուլան մտում, մայրն է Սկիպիոնին, հետո հանկարծ բռնում է նրա ձեռքերը և թափով նրան քաշում դեպի իր ծնկները, հետո երկու ձեռքով բռնում է նրա գլուխը):

ԿԱԼԻԳՈՒԼԱ.— Արտասանիր քո պոեմը:

ԵՐԻՏԱՍԱՐԳ ՍԿԻՊԻՈՆ.— Ոչ, խնդրում եմ, Կեսար:

ԿԱԼԻԳՈՒԼԱ.— Ինչո՞ւ:

ԵՐԻՏԱՍԱՐԳ ՍԿԻՊԻՈՆ.— Ինձ մոտ չէ պոեմը:

ԿԱԼԻԳՈՒԼԱ.— Իսկ չե՞ս հիշում:

ԵՐԻՏԱՍԱՐԳ ՍԿԻՊԻՈՆ.— Ոչ:

ԿԱԼԻԳՈՒԼԱ.— Գոնե բովանդակությունը ինձ ասա:

ԵՐԻՏԱՍԱՐԳ ՍԿԻՊԻՈՆ (միշտ բիրտ, կարծես թե ափսոսելով).—

Ես գրել եմ...

ԿԱԼԻԳՈՒԼԱ.— Այո՞:

ԵՐԻՏԱՍԱՐԳ ՍԿԻՊԻՈՆ.— Ոչ, չգիտեմ...

ԿԱԼԻԳՈՒԼԱ.— Փորձիր հիշել:

ԵՐԻՏԱՍԱՐԳ ՍԿԻՊԻՈՆ.— Ես գրել եմ որոշակի կապի մասին, հողի...

ԿԱԼԻԳՈՒԼԱ (ընդհատելով նրան, խորհրդավոր տոնով).— ... հողի և մեր միջև:

ԵՐԻՏԱՍԱՐԳ ՍԿԻՊԻՈՆ (զարմացած տատանվում է և շարունակում).— Առ, մոտավորապես...

ԿԱԼԻԳՈՒԼԱ.— Շարունակիր:

ԵՐԻՏԱՍԱՐԳ ՍԿԻՊԻՈՆ.— Եվ հոռմեական բլուրների, նրանց ուրվագծի, և վաղանցուկ, տապալող հանդարտության մասին, որ բերում է երեկոն իր հետ...

ԿԱԼԻԳՈՒԼԱ.— Դեղձանիկների ճիշի մասին կանաչ երկնքում:

ԵՐԻՏԱՍԱՐԳ ՍԿԻՊԻՈՆ (հետզհետե ներքուստ տեղի տալով).— Այո, դրա մասին նույնպես:

ԿԱԼԻԳՈՒԼԱ.— Հետո՞:

ԵՐԻՏԱՍԱՐԳ ՍԿԻՊԻՈՆ.— Եվ այդ զմայելի պահին, երբ երկինքը դեռևս լեցուն է արևի ոսկով, հանկարծ անապասելիորեն ճոճվում է՝ մի ակնթարթ մեզ ցույց տալով իր մյուս դեմքը՝ պսպղուն աստղերով լի:

ԿԱԼԻԳՈՒԼԱ.— Եվ ծխի հոտի, ծառերի, ջրերի մասին, որոնք հյուսվելով իրար, հողից ձգվում են դեպի գիշերը:

ԵՐԻՏԱՍԱՐԳ ՍԿԻՊԻՈՆ (ինքնամոռացմամբ).— Եվ ճպրոնների ճիշի

մասին, նվագող շոգի, շների, վերջին կառքերի անիվների աղմուկի և էրկրագործների կանչերի մասին...

**ԿԱԼԻԳՈՒԼԱ.**— Եվ հերձիների ու ձիթեհիների սովերում ընկղմված ճանապարհների...

**ԵՐԻՏԱՍԱՐԴ ՍԿԻՊԻՈՆ.**— Այո, այո, այո բոլորի, բայց դու ինչպե՞ս այդ իմացար:

**ԿԱԼԻԳՈՒԼԱ (երիտասարդ Սկիպիոնին սեղմելով իր կրծքին).**— Չգիտեմ, գուցե շնորհիվ նրա, որ մենք երկուսս էլ սիրում ենք միևնույն ճշմարտությունը:

**ԵՐԻՏԱՍԱՐԴ ՍԿԻՊԻՈՆ (գլուխը թաքցնելով Կալիգուլայի գրկում).**— Նշանակություն չունի, քանզի ամեն ինչ իմ մեջ փոխվում է սիրո:

**ԿԱԼԻԳՈՒԼԱ (շարունակելով շոյել).**— Դեռ մեծահոգի մարդկանց առաքինությունն է: Սկիպիո՛ն, եթե գոնե նվագագույնս կարողանալի ներթափանցել քո մաքրության մեջ: Ես շատ լավ եմ ճանաչում կյանքի հանդեպ ունեցած իմ կրթի ուժը: Այն երբեք չի հազեճա բնությամբ: Այդ դու չես կարող հսականալ, որովհետև դու մի այլ աշխարհից ես: Դու անբիժ ես բարության մեջ, ինչպես որ ես՝ շարության:

**ԵՐԻՏԱՍԱՐԴ ՍԿԻՊԻՈՆ.**— Ես կարող եմ հսականալ:

**ԿԱԼԻԳՈՒԼԱ.**— Ոչ, չես կարող, այդ բանը իմ մեջ, այդ լիճը լոռության, այդ խոտերը փտած... (**Հանկարծակի փոխելով տոնը**): Քո պոետը պետք է գեղեցիկ լինի: Բայց եթե հարցնում ես կարծիրս...

**ԵՐԻՏԱՍԱՐԴ ՍԿԻՊԻՈՆ (նույն տոնով).**— Այո:

**ԿԱԼԻԳՈՒԼԱ.**— Նրանք պետք է ցողվեն արչամբ, նրանց արյունն է պակասում... (**Սկիպիոնը ընկրկում է հանկարծակի և սարսափով նայում է Կալիգուլային: Ետ-ետ գնալով նա խոսում է խոլ ձայնով, լարված նայելով Կալիգուլային**):

**ԵՐԻՏԱՍԱՐԴ ՍԿԻՊԻՈՆ.**— Օ՛ հրե՛շ, գարշելի՛ հրեշ, նորից խաղացիր: Խաղում էիր, չէ՞: Եվ գոհ ես քեզանից:

**ԿԱԼԻԳՈՒԼԱ (մի քիչ տխուր).**— Ճշմարտություն կա քո ասածի մեջ: Խաղում էի:

**ԵՐԻՏԱՍԱՐԴ ՍԿԻՊԻՈՆ.**— Ինչ նենգ և արյունոտ սիրտ դու պետք է ունենաս: Որքան շարություն և ատելություն պետք է քեզ տանջեն:

**ԿԱԼԻԳՈՒԼԱ (մեղմորեն).**— Լռի՛ր, հիմա:

**ԵՐԻՏԱՍԱՐԴ ՍԿԻՊԻՈՆ.**— Որքան եմ խղճում քեզ և որքան ասում:

**ԿԱԼԻԳՈՒԼԱ (զայրույթով).**— Լռի՛ր:

ԵՐԻՏԱՍԱՐԴ ՍԿԻՊԻՈՆ.— Ինչ պիղծ միայնությունն է քոնը:

ԿԱԼԻԳՈՒԼԱ (պայթելով նետվում է նրա վրա, բռնում է նրա կոկորդից և սկսում ցնցել).— Միայնություն'ն: Դու գիտե՞ս ինչ բան է միայնությունը, բայց ո՞րը: Ա՛, դու չգիտես, որ միայնակ երբեք չենք լինում: Ամենուրեք անցյալի և ապագայի ծանրությունն է մեզ ուղեկցում: Մարդկանց, որոնց սպանել են, մեզ հետ են: Բայց դա դևո հեշտ է տանել: Իսկ նրանց, որ սիրել ենք և նրանց, որ չենք սիրել, որ մեզ են սիրել, ամիսասանքը, ցանկությունը, դառնությունը և մեղմությունը, անատակները և աստվածների պանթեոնը... (Նա ետ է քաշվում դեպի իր տեղը): Միանակ, այս եթե, գոնե այդ ուրվականներով թունավորված միայնության փոխարեն, որն իմն է, կարողանայի ճաշակել ճշմարիտը, լուսությունը և ծառի ստապիր: (Նստում է ուժասպառ): Միայնություն: Ո՛չ, Սկիպիո՛ն: Միայնություն, որը հագեցած է ատամների կրճտոցով, որը տակալին արձագանքն է աղմուկի և կորած կանչերի: Կանանց կողքին, որոնց շոյում են, երբ գիշերը ծածկում է մեզ, զգում են անջատված մարմինս, վերջապես հագեցած ու վերագտնում են ինքս ինձ կյանքի և մահվան անջրպետում: Միայնությունս ամբողջովին լցվում է իմ կողքին ընկղմված կնոջ թևատակի տարփալի դառրբույրով: (Կալիգուլայի տեսքը հոգնած է, ուժասպառ: Երկար լռություն: Երիտասարդ Սկիպիոնը անցնում է Կալիգուլայի ետևից և տատանվելով մոտենում է: Նա ձեռքը դնում է նրա ուսին, իսկ Կալիգուլան, առանց շրջվելու, ձեռքը դնում է Սկիպիոնի ձեռքին):

ԵՐԻՏԱՍԱՐԴ ՍԿԻՊԻՈՆ.— Բոլոր մարդիկ մի ուրույն մեղմություն ունեն կյանքում: Դա նրանց օգնում է շարունակել ապրել, և երբ իրենց զգում են ուժասպառ, միշտ ապավինում են դրան:

ԿԱԼԻԳՈՒԼԱ.— Ճշմարիտ է, Սկիպիո՛ն:

ԵՐԻՏԱՍԱՐԴ ՍԿԻՊԻՈՆ.— Մի՞թե քո մեջ չկա որևէ մի բան, նման արտասովոր ցանկությանը, լուռ աստատանի:

ԿԱԼԻԳՈՒԼԱ.— Կա, սակայն:

ԵՐԻՏԱՍԱՐԴ ՍԿԻՊԻՈՆ.— Եվ ո՞րն է դա:

ԿԱԼԻԳՈՒԼԱ (անշտապ).— Արհամարհանքը:

# ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ ԵՐՐՈՐԴ

## ՏԵՍԱՐԱՆ ԱՌԱՋԻՆ

Մինչ վարագույրի բարձրանալը լսվում է սիմբալների և թմբուկների ձայնը: Վարագույրը բացվում է և երևում է շքերթի տեսարան. կենտրոնում մի վրան, որի առջև գտնվում է մի փոքր բեմ, ուր կանգնած են Հելիկոնը և Կայեառնիան: Երկու կողմում կան սիմբալներ: Աթոռների վրա մեջքով դեպի հանդիսատեսը նստած են մի քանի պատրիկներ և երիտասարդ Սկիպիոնը:

**ՀԵԼԻԿՈՆ (արտասանելով շքերթային տոնով).**— Մոտեցե՛ք, մոտեցե՛ք: Մեկ անգամ ևս աստվածները երկիր են իջել: Գայուս, կեսար և աստված, որն անվանում են Կալիգուլա՛, ընդունեց մարդկային կերպարանք: Մոտեցեք, ողորմելի մահկանացուներ: Սուրբ հրաշքը կատարվում է մեր աչքի առաջ: Հատուկ մեկնաշնորհով օժտված Կալիգուլայի արքայության աստվածային գաղտնիքները տեսանելի են դառնում բոլորին: **(Սիմբալ):**

**ԿԱՅԵՍՈՆԻԱ.**— Մոտեցեք, պարոնայք, երկրպագեք և նվիրեք ձեր նշխարքը: Այսօր բոլորին հնարավորություն է տրվում օգտվել երկնային խորհրդից: **(Սիմբալներ):**

**ՀԵԼԻԿՈՆ.**— Օլիմպիան և իր կուլիսները, իր դավերը, իր հողաթափերը և իր արցունքները: Մոտեցեք, մոտեցեք: Ահավասիկ ամբողջ ճշմարտությունը ձեր աստվածների մասին: **(Սիմբալ):**

**ԿԱՅԵՍՈՆԻԱ.**— Երկրպագեք և տվեք ձեր նշխարքը: Մոտեցեք, պարոնայք: Ներկայացումը սկսվելու է: **(Սիմբալներ, ստրուկները վազվզում են՝ զանազան իրեր բերելով բեմ):**

**ՀԵԼԻԿՈՆ.**— Ծջմարտության տպավորիչ վերակազմության երբևէ չեղած իրարանցում: Աստվածային իշխանության փառավոր հանդերձանքը բերված է աշխարհ: Չափից դուրս սենսացիոն գվարճություն: Ծա՛նթ: **(Ստրուկները վառում են հունական հուրը):** Ուրո՛տ: **(Գլորում են քարերով լի տակառ):** Ծակատագիրը ինքն իր հաղթական երթի մեջ է: Մոտեցեք, հիացեք: **(Նա քաշում է վարագույրը և Կալիգուլան Վեներայի խեղկատակ տարագով հայտնվում է պատվանդանի վրա):**

**ԿԱԼԻԳՈՒԼԱ (սիրալիր).**— Այսօր ես Վեներա եմ:

**ԿԱՅԵՍՈՆԻԱ.**— Երկրպագությունը սկսվում է, խոնարհվեցեք **(բոլորը խոնարհվում են, բացի Սկիպիոնից)** և կրկնեք ինձանից հետո

սրբազան աղոթքը ուղղված Կաթգույա-Վեներային: «Աստվածուհի ցավերի և պարի...»:

**ՊԱՏՐԻԿՆԵՐ.**— «Աստվածուհի ցավերի և պարի...»:

**ԿԱՅԵՍՈՆԻԱ.**— «Ծնված աղի և փրփրադեզ ալիքներից ամբողջովին կաշուն և դառը, աղի և փրփուրի մեջ...»:

**ՊԱՏՐԻԿՆԵՐ.**— «Ծնված աղի և փրփրադեզ ալիքներից ամբողջովին կաշուն և դառը, աղի և փրփուրի մեջ...»:

**ԿԱՅԵՍՈՆԻԱ.**— «Դու, որ նման ես ծիծաղի և ափսոսանքի»:

**ՊԱՏՐԻԿՆԵՐ.**— «Դու, որ նման ես ծիծաղի և ափսոսանքի»:

**ԿԱՅԵՍՈՆԻԱ.**— «... Քեճի և խոյանքի...»:

**ՊԱՏՐԻԿՆԵՐ.**— «... Քեճի և խոյանքի...»:

**ԿԱՅԵՍՈՆԻԱ.**— «... Սովորեցրու մեզ անտարբերություն, որը ծնում է հեշտանքը...»:

**ՊԱՏՐԻԿՆԵՐ.**— «... Սովորեցրու մեզ անտարբերություն, որը ծնում է հեշտանքը...»:

**ԿԱՅԵՍՈՆԻԱ.**— «... Ուսուցանիր մեզ այս աշխարհի ճշմարտությունը՝ որի էությունը չունենալն է...»:

**ՊԱՏՐԻԿՆԵՐ.**— «... Ուսուցանիր մեզ այս աշխարհի ճշմարտությունը, որի էությունը չունենալն է...»:

**ԿԱՅԵՍՈՆԻԱ.**— «... Եվ շնորհիք մեզ ուժը ապրելու այս խրոխտ ու անզուգական ճշմարտության բարձրությամբ...»:

**ՊԱՏՐԻԿՆԵՐ.**— «... Եվ շնորհիք մեզ ուժը ապրելու այս խրոխտ ու անզուգական ճշմարտության բարձրությամբ...»:

**ԿԱՅԵՍՈՆԻԱ.**— Դադար:

**ՊԱՏՐԻԿՆԵՐ.**— Դադար:

**ԿԱՅԵՍՈՆԻԱ (նորից շարունակելով).**— «... Համակիր մեզ քո շնորհներով, սիոնի մեր դեմքին քո անաչառ անգթությունը, քո աստվածությունը լիովին անկողմնապահ: Պարզի մեր առջև քո ձեռքերը լի ծաղիկներով և սպանություններով»:

**ՊԱՏՐԻԿՆԵՐ.**— «... քո ձեռքերը լի ծաղիկներով և սպանություններով...»:

**ԿԱՅԵՍՈՆԻԱ.**— «Ժողովիր քո մոլորյալ զավակներին: Ընդունիր նրանց քո անտարբեր և ցավոտ սիրո ապաստանում: Տուր մեզ քո աննյութ կրքերը, քո ցավերը գերծ բանականությունից և քո զվարճությունները անապագա...»:

**ՊԱՏՐԻԿՆԵՐ.**— «... քո զվարճությունները անապագա...»:

**ԿԱՅԵՍՈՆԻԱ (շատ բարձր ձայնով).**— Դու, որ այնքան ունայն ես, և այնքան հրաբոց, տմարդի, և այնքան երկրային, արբեցրու մեզ

քո համագործության գինով և հագեցրու մեզ ընդմիջտ քո սև ու աղտոտված սրտում»:

**ՊԱՏՐԻԿՆԵՐ.**— «Արբեցրու մեզ քո համագործության գինով և հագեցրու մեզ ընդմիջտ քո սև ու աղտոտված սրտում»: **(Երբ պատրիկները արտասանում են վերջին նախադասությունը, Կալիգուլան, որ մինչ այդ անշարժ էր, փնչում է կորովաձայն):**

**ԿԱԼԻԳՈՒԼԱ.**— Ընդունելի է, զավակներս, ձեր բաղձանքները լսելի ելի՞նեն: **(Նա ծալապատիկ նստում է իր պատվանդանին: Մեկամեկ պատրիկները խոնարհվում են և իրենց նշխարքները գցում պնակի մեջ: Նախ շարվում են աջ կողմում և ապա անհետանում: Վերջին պատրիկը շփոթված մոռանում է գցել նշխարքը և ետ է քաշվում: Բայց Կալիգուլան մի ուսուցումով ոտքի է կանգնում):** Սպասի՛ր, զավա՛կս, արի այստեղ: Երկրպագելը լավ է, բայց հարըստացները ավելի լավ: Ծնորհակալություն: Ամեն ինչ կարգին է: Եթե աստվածները չունենային մեկ այլ հարստություն, քան մահկանացուների սերը, նրանք կլինեին այնքան աղքատ, որքան խեղճ Կալիգուլան ինքը: Եվ այժմ, պարոնայք, դուք կարող եք գնալ և քաղաքում տարածել զարմանալի հրաշքի լուրը, որին ձեզ շնորհ էր արված մասնակցել՝ դուք տեսաք Վեներային, մի բան, որ կոչվում է տեսնել սեփական աչքերով, և Վեներան ինքը խոսեց ձեզ հետ: Գնացեք, պարոնայք: **(Պատրիկների անցուդարձ):** Մի վայրկյան, դուրս գալուց անցեք ձախ միջանցքով: Աջում ես կարգել եմ պահակներ ձեզ սպանելու համար: **(Պատրիկները դուրս են գալիս հապճեպորեն և խռնվելով: Ստրուկներն ու երաժիշտներն անհետանում են):**

#### ՏԵՍԱՐԱՆ ԵՐԿՐՈՐԴ

**Հելիկոնը մատով սպառնում է Սկիպիոնին:**

**ՀԵԼԻԿՈՆ.**— Նորից որպես անարխիստ հանդես եկար, Սկիպիո՛ն:

**ՍԿԻՊԻՈՆ (Կալիգուլային).**— Դու անարգել ես աստվածներին, Գալլոս՛ա:

**ՀԵԼԻԿՈՆ.**— Դա ի՞նչ է նշանակում:

**ՍԿԻՊԻՈՆ.**— Հողը արյունոտելուց հետո, պղծում ես երկինքը:

**ՀԵԼԻԿՈՆ.**— Այս երիտասարդը պաշտում է վերամբարձ ոճը: **(Նա գնում է՝ պառկելու բազմոցին):**

**ԿԱՅԵՍՈՆԻԱ (խաղաղ).**— Ինչ համարձակ ես, տղա՛: Այս րոպեին

Հոռոմո՛ւ մպանում եմ մարդկանց շատ ավելի անմեղ ճառերի համար:

ՍԿԻՊԻՈՆ.— Որոշել եմ ճշմարտությունն ասել Գայուսին:

ԿԱՅԵՍՈՆԻՍ.— Ահա, Կալիգուլա, դա Լր պակասում քո թագավորությանը, մի գեղեցիկ բարոյական կերպար:

ԿԱԼԻԳՈՒԼԱ (հետաքրքրվելով).— Ուրեմն դու հավատո՞ւմ ես աստվածներին, Սկիպիոն:

ՍԿԻՊԻՈՆ.— Ոչ:

ԿԱԼԻԳՈՒԼԱ.— Չեմ հասկանում, ապա ինչո՞ւ այդքան դյուրագրգիռ ես աստծուն ուղղված անարգանքները հայտնաբերելիս:

ՍԿԻՊԻՈՆ.— Կարող եմ ժխտել մի բան, առանց հավաստիացնելու ինձ, որ պարտավոր եմ կեղտոտել այն, կամ զրկել ուրիշներին դրան հավատալու իրավունքից:

ԿԱԼԻԳՈՒԼԱ.— Համեստություն է սա, իսկական համեստություն: Թ՛, սիրելի Սկիպիոն, որքան գոհ եմ, որ այդպիսին ես դու: Եվ նախանձում եմ, գիտե՞ս... քանի որ սա միակ զբաղմունքն է, որ գուցե երբեք չեմ ճաշակի:

ՍԿԻՊԻՈՆ.— Այդ ինձ չես նախանձում, այլ իրենց՝ աստվածներին:

ԿԱԼԻԳՈՒԼԱ.— Եթե ճիշտն ուզում ես իմանալ, դա կմնա որպես իմ թագավորության մեծագույն գաղտնիք: Այն, ինչի համար կարող եմ ինձ հանդիմանել, դա թերևս այն է, որ մի փոքր առաջադիմել եմ իշխանության և ազատության բնագավառում: Նա, ով իշխանություն է սիրում, աստվածների մրցակցությունը անհրապույր է նրան: Ես ոչնչացրել եմ այդ: Ապացուցեցի այդ պատիր աստվածներին, որ մարդ, եթե կամք ունի, կարող է գործածել նրանց ծիծաղելի արհեստը՝ առանց աշակերտելու:

ՍԿԻՊԻՈՆ.— Հենց դա է անարգանքը, Գայո՛ւս:

ԿԱԼԻԳՈՒԼԱ.— Ո՛չ, Սկիպիո՛ն, դա պայծառ տեսություն է: Պարզապես ես հասկացա, որ կա աստվածներին հավասարվելու միայն մի ձև: Պետք է լինել այնքան անգութ, որքան նրանք են:

ՍԿԻՊԻՈՆ.— Բավական է դառնալ բռնակալ:

ԿԱԼԻԳՈՒԼԱ.— Բռնակալն ի՞նչ է:

ՍԿԻՊԻՈՆ.— Կույր հոգի:

ԿԱԼԻԳՈՒԼԱ.— Ոչ միշտ, Սկիպիոն. բռնակալը մարդ է, որ զոհաբերում է ժողովրդին հանուն իր գաղափարների կամ իր փառասիրության: Ես գաղափարներ չունեմ, և հետամուտ չեմ մեծապատվության ու իշխանության: Երբ բանեցնում եմ ուժը, դա լոկ միայն փոխհատուցում է:

ՍԿԻՊԻՈՆ.— Ինչի՞:

ԿԱԼԻԳՈՒԼԱ.— Աստվածների անմտության և նրանց ատելության:

ՍԿԻՊԻՈՆ.— Ատելությունը չի հատուցվում ատելությամբ: Բռնակալու-  
թյունը ելք չէ: Ես միայն մի ձև գիտեմ աշխարհի թշնամությանը  
փոխհատուցելու:

ԿԱԼԻԳՈՒԼԱ.— Եվ ո՞րն է այդ:

ՍԿԻՊԻՈՆ.— Աղքատությունը:

ԿԱԼԻԳՈՒԼԱ (մաքրելով եղունգները).— Պետք է, որ այդ էլ ճաշա-  
կեմ:

ՍԿԻՊԻՈՆ.— Մինչ այդ շատ մարդիկ են շուրջդ մեռնում:

ԿԱԼԻԳՈՒԼԱ.— Իրականում շատ քիչ, Սկիպիոն: Գիտե՞ս որքան պա-  
տերազմներ են մերժել:

ՍԿԻՊԻՈՆ.— Ո՛չ:

ԿԱԼԻԳՈՒԼԱ.— Երեք: Եվ գիտե՞ս ինչու են մերժել:

ՍԿԻՊԻՈՆ.— Որովհետև դու թքել ես Հոռմի մեծության վրա:

ԿԱԼԻԳՈՒԼԱ.— Ո՛չ, որովհետև ես հարգում եմ մարդկային կյանքը:

ՍԿԻՊԻՈՆ.— Ծաղրո՞ւմ ես, Գայո՛ւս:

ԿԱԼԻԳՈՒԼԱ.— Ավելի ճիշտ ես ավելի հարգում եմ կյանքը, քան թե  
նվաճելու իդեալը: Բայց ճշմարիտ է նաև, որ կյանքն ընդհանրա-  
պես չեն հարգում ավելի, քան իմ սեփականը: Եվ եթե սպանելը  
հեշտ է ինձ համար, ապա մեռնելն էլ դժվար չէ: Ո՛չ, որքան շատ  
են մտորում, ավելի են համոզվում, որ ես բռնակալ չեմ:

ՍԿԻՊԻՈՆ.— Ինչ կարևոր է, երբ դա մեզ թանկ է նստում, ինչպես  
եթե իրոք լինեիր:

ԿԱԼԻԳՈՒԼԱ (փոքր ինչ անհամբեր).— Եթե կարողանայիր հաշվել,  
կիմանայիր, որ ամենախելացի բռնակալի ամենափոքր պատե-  
րազմն անգամ հազար անգամ ավելի թանկ կնստեր, քան իմ երե-  
վակայության քմահաճույքները:

ՍԿԻՊԻՈՆ.— Բայց գոնե հասկանալի կլիներ, և հիմնականը հասկա-  
նալն է:

ԿԱԼԻԳՈՒԼԱ.— Ծակատագիրը անհնար է ընթեռնել: Եվ դրա համար  
է, որ դարձրեցի ինձ ճակատագիր և ընդունեցի աստվածների  
անմիտ ու անհասկանալի տեսքը: Հենց այդ է, որ ընկերների քիչ  
առաջ սովորեցին երկրպագել:

ՍԿԻՊԻՈՆ.— Եվ հենց այդ է անարգանքը, Գայո՛ւս:

ԿԱԼԻԳՈՒԼԱ.— Ո՛չ, Սկիպիո՛ն, դա դրամատիկական արվեստ է: Բո-  
լոր մարդկանց սխալը թերհավատությունն է թատրոնի հանդեպ:  
Եթե դա չլիներ, նրանք կիմանային, որ յուրաքանչյուրին թույ-



լատրվում է խաղալ երկնային ողբերգություններ և դառնալ աստ-  
ված: Բալական է, որ սիրտը քարացնեն:

ՍԿԻՊԻՈՆ.— Գուցե, իսկապես, Գայո՛ւս: Բայց եթե դա ճիշտ է, կար-  
ծում եմ, որ արել ես այն, ինչ անհրաժեշտ է, որ մի օր շուրջդ  
մարդկային աստվածների լեգեոններ բարձրանան՝ իրենց հերթին  
անգութ, դաժան և արյան մեջ խեղդեն քո վարկեհական աստ-  
վածությունը:

ԿԱՅԵՍՈՆԻԱ.— Սկիպիոն:

ԿԱԼԻԳՈՒԼԱ (աստող կոպիտ ձայնով).— Թո՛ղ, Կայետնիա՛: Դու չգի-  
տես, թե որքան ճիշտ ես ասում: Սկիպիո՛ն, այո, արել եմ այն,  
ինչ անհրաժեշտ էր: Դժվարությամբ եմ պատկերացնում այն օրը,  
որի մասին խոսում ես: Բայց ուրեմն երագում եմ այդ օրը: Եվ  
բոլոր դեմքերը, որոնք առաջանում են գիշերվա խավարում՝ ա-  
տելությունից և ահից այլակերպված դիմագծերով, ի դեպ սքան-  
չացած ճանաչում եմ միակ աստծուն, որին պաշտում եմ այս աշ-  
խարհում՝ թշվառական և թուլամիտ, ինչպես սիրտը մարդկային:  
**(Գրգռված):** Իսկ հիմա կորիր: Ծառ խոսեցիր: **(Փոխելով տոնը):**  
Դեռ պետք է ոտքերի մատները ներկեմ: Ծոռապ է: **(Բոլորը դուրս  
են գալիս, բացի Հելիկոնից, որը պտտվում է Կալիգուլայի շուրջը,  
իսկ վերջինս զբաղված է ոտքերի խնամքով):**

#### ՏԵՍԱՐԱՆ ԵՐՐՈՐԴ

ԿԱԼԻԳՈՒԼԱ.— Հելիկոն:

ՀԵԼԻԿՈՆ.— Այո՞:

ԿԱԼԻԳՈՒԼԱ.— Աշխատանքդ առաջ գնո՞ւմ է:

ՀԵԼԻԿՈՆ.— Ի՞նչ աշխատանք:

ԿԱԼԻԳՈՒԼԱ.— Ինչպե՞ս... լուսինը:

ՀԵԼԻԿՈՆ.— Առաջադիմում է: Համբերության հարց է: Բայց կցանկա-  
նայի խոսել քեզ հետ:

ԿԱԼԻԳՈՒԼԱ.— Գուցե համբերություն կունենամ, բայց ոչ մեծ: Պետք  
է արագ գործել, Հելիկո՛ն:

ՀԵԼԻԿՈՆ.— Ես քեզ ասել եմ՝ կանես ամեն ինչ: Բայց նախ լուրջ հար-  
ցեր կան, որոնց մասին քեզ տեղյակ պիտի պահես:

ԿԱԼԻԳՈՒԼԱ (կարծես թե չի լսել).— Նկատի ունեցիր, որ ես նրան  
արդեն տիրել եմ:

ՀԵԼԻԿՈՆ.— Ո՞ւմ:

ԿԱԼԻԳՈՒԼԱ.— Լուսնին:

**ՀԵԼԻԿՈՆ.**— Այո, իհարկէ: Բայց գիտե՛ս, կյանքիդ դեմ դավեր են  
նշուծում:

**ԿԱԼԻԳՈՒԼԱ.**— Նույնիսկ լրիվ տիրել են նրան, ճիշտ է, երկու կամ  
երեք անգամ միայն, բայց և այնպէս տիրել են նրան:

**ՀԵԼԻԿՈՆ.**— Վաղուց է, որ փորձում են քեզ հետ խոսել:

**ԿԱԼԻԳՈՒԼԱ.**— Անցած ամուսնն էր: Այն ժամանակից ի վեր, երբ այ-  
գու սյուների վրա նայում էի նրան ու շոյում, վերջապէս նա ինձ  
հասկացավ:

**ՀԵԼԻԿՈՆ.**— Վերջ տանք այդ խաղին, Գայո՛ւս: Եթէ չես ուզում ինձ  
լսել, միևնույնն է, իմ դերը խոսելն է: Ավելի վատ քեզ համար,  
եթէ չլսես:

**ԿԱԼԻԳՈՒԼԱ (շարունակ զբաղված ոտքի եղունգները կարմրացնելով).**

— Այս ներկը որակ չունի: Բայց նորից անցնենք լուսնին: Մի գե-  
ղեցիկ օգոստոսյան գիշեր էր: (**Հելիկոնը դժգոհ շրջվում է, մնալով  
լուռ ու անշարժ**): Լուսինը սկզբում չեմ ու չում արեց: Ես արդեն  
պառկել էի: Հորիզոնի վրա նա սկզբում երևում էր լրիվ արշու-  
նոտ: Հետո սկսեց բարձրանալ, հետզհետե ավելի սահուն, աճող  
արագությամբ: Որքան բարձրանում էր, այնքան ավելի պայծառ  
էր դառնում: Նա դարձավ կարծես մի կաթնաթոր լճակ, գիշերվա  
մեջ լեցուն կայծկլտացող աստղերով: Ապա նա հասավ ինձ իր  
ջերմությամբ, քնքուշ, թեթև ու մերկ: Անցավ սենյակի շեմը և  
վստահ դանդաղությամբ հասավ իմ անկողնուն, սահեց ներս ու  
ինձ հեղեղեց իր ժպիտներով, իր լույսով: Իրավ, այս ներկը անո-  
րակ է: Բայց տեսնո՛ւմ ես, Հելիկոն, կարող եմ ասել, առանց ինձ  
գովելու, որ ես նրան տիրել եմ:

**ՀԵԼԻԿՈՆ.**— Ուզո՞ւմ ես ինձ լսել և իմանալ, թե ինչ է քեզ սպառնում:

**ԿԱԼԻԳՈՒԼԱ (սևեռուն նայում է նրան).**— Ես միայն լուսինն եմ ու-  
զում, Հելիկոն: Նախապես գիտեմ, ինչն է ինձ սպանելու: Դեռևս  
չեմ սպասել այն ամենը, որ կարող է ինձ կյանքի կոչել: Ահա  
ինչու լուսինն եմ ուզում: Չերևաս այստեղ, մինչև որ չգտնես լու-  
սինն ինձ համար:

**ՀԵԼԻԿՈՆ.**— Ուրեմն ես կկատարեմ իմ պարտականությունը և կասեմ  
իմ ասելիքը: Քո դեմ դավադրություն են նշուծում: Ծերեան կազ-  
մակերպիչն է: Ես պատահաբար գտել եմ այս մոմատախտակը,  
որը քեզ կասի հիմնականը: Դնում եմ այստեղ: (**Հելիկոնը մոմա-  
տախտակը դնում է աթոռներից մեկին և դուրս գալիս**):

**ԿԱԼԻԳՈՒԼԱ.**— Ո՞ր ես գնում, Հելիկոն:

**ՀԵԼԻԿՈՆ (շեմքին կանգնած).**— Քեզ համար լուսին փնտրելու:

**Կամացուկ թակում են դիմացի դուռը, Կալիֆուլան հանկարծ շրջվում է և նկատում ծեր պատրիկին:**

**ԾԵՐ ՊԱՏՐԻԿ (տատանվելով).—** Թույլ կտաք, Գայո՛ւս:

**ԿԱԼԻԳՈՒԼԱ (կտրուկ).—** Այո, մտեք: **(Նայելով նրան):** Դե, սիրունիկս, նորից գալիս ես Վենետային տեսնելո՞ւ:

**ԾԵՐ ՊԱՏՐԻԿ.—** Ո՛չ, դրա համար չէ: Թո՛ւ, օ՛ ոչ, ներողություն, Գայո՛ւս... ուզում եմ ասել... Դու գիտես, որ քեզ շատ եմ սիրում... և հետո ես միայն ցանկանում եմ խաղաղ ավարտել իմ ծերության օրերը:

**ԿԱԼԻԳՈՒԼԱ.—** Ըտապենք, շտապենք:

**ԾԵՐ ՊԱՏՐԻԿ.—** Այո, լավ: Վերջապես... **(շատ արագ),** շատ լուրջ դրություն է, ահա ամենը:

**ԿԱԼԻԳՈՒԼԱ.—** Ո՛չ, ոչինչ էլ լուրջ չէ:

**ԾԵՐ ՊԱՏՐԻԿ.—** Հապա ի՞նչ է, Գայո՛ւս:

**ԿԱԼԻԳՈՒԼԱ.—** Ինչի՞ մասին ենք խոսում, սիրունի՛կս:

**ԾԵՐ ՊԱՏՐԻԿ (նայում է շուրջը).—** Այսինքն... **(նա երկմտում է և միանգամից, կարծես պայթելով, ասում):** Դավադրություն քո դեմ...

**ԿԱԼԻԳՈՒԼԱ.—** Տեսա՞ր, ես ասում էի, չէ՞, ամենևին էլ լուրջ բան չէ:

**ԾԵՐ ՊԱՏՐԻԿ.—** Գայո՛ւս, ուզում եմ քեզ սպանել:

**ԿԱԼԻԳՈՒԼԱ (մտաւեռմ է ծեր պատրիկին ու բռնում նրա ուսից).—** Գիտե՞ս ինչու չեմ կարող քեզ հավատալ:

**ԾԵՐ ՊԱՏՐԻԿ (այնպիսի շարժում անելով, կարծես պիտի երդվի).—** Երդվում եմ աստվածներով, Գայո՛ւս:

**ԿԱԼԻԳՈՒԼԱ (կամաց-կամաց հեղելով նրան դեպի դուռը).—** Մի երդվիր, հատկապես մի երդվիր: Ավելի շուտ լսիր: Այն, ինչ ասում ես, եթե ճիշտ է, ապա պիտի կարծեմ, որ դավաճանում ես քնկերներիդ, ճիշտ չէ՞:

**ԾԵՐ ՊԱՏՐԻԿ (փոքր-ինչ շփոթված).—** Այսինքն, Գայո՛ւս, իմ սերը քո հանդեպ...

**ԿԱԼԻԳՈՒԼԱ (նույն տոնով).—** Չեմ կարող դրան հավատալ: Այնքան եմ գարշել թույամոթությունից, որ երբեք չեմ կարող ինձ զսպել, չսպանել դավաճանին: Ես լավ գիտեմ գիճոյ: Անկասկած, դու չես ուզում ոչ դավաճանել, ոչ մեռնել:

**ԾԵՐ ՊԱՏՐԻԿ.—** Անկասկած, Գայո՛ւս, անկասկած:

**ԿԱԼԻԳՈՒԼԱ.—** Տեսնո՞ւմ ես, որ իրավունք ունեի քեզ չհավատալ: Դու թույամոթ չես, այդպես չէ՞:

ԾԵՐ ՊԱՏՐԻԿ.— Օ՛ր, ոչ...

ԿԱԼԻԳՈՒԼԱ.— Ոչ էլ դավաճան:

ԾԵՐ ՊԱՏՐԻԿ.— Անկասկած, Կեսա՛ր:

ԿԱԼԻԳՈՒԼԱ.— Հետևաբար չկա և դավադրություն: Աա՛, դա կատա՛կ էր միայն:

ԾԵՐ ՊԱՏՐԻԿ (ինքնատիրապետումը կորցրած).— Կատակ, մի պարզ կատակ...

ԿԱԼԻԳՈՒԼԱ.— Ոչ ոք չի ուզում ինձ սպանել, ճի՞շտ է:

ԾԵՐ ՊԱՏՐԻԿ.— Ոչ ոք, իհարկե, ոչ ոք:

ԿԱԼԻԳՈՒԼԱ (ծանր շնչելով, ապա հանդարտ).— Ուրեմն չքվիր, սիրունիկս: Ազնիվ, պատվավոր մարդն այս աշխարհում այնքան հազվագյուտ կենդանի է, որ չեմ կարող երկար տանել նրա ներկայությունը: Պետք է մենակ մնամ, որպեսզի ըմբռնեմ այդ նշանավոր ակնթարթը:

#### ՏԵՍԱՐԱՆ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Կալիգուլան մի պահ իր տեղից դիտում է մոմատախտակը: Վերցնում է ու կարդում: Ծանր հոգոց հանելով կանչում է պահակին:

ԿԱԼԻԳՈՒԼԱ.— Այստեղ բեր Ծերեային: (Պահակը դուրս է գալիս): Մի րոպե: (Պահակը կանգ է առնում): Կբերես պատվավոր ձևով: (Պահակը դուրս է գալիս): (Կալիգուլան անհանգիստ քայլում է, հետո ուղղվում դեպի հայելին): Դու որոշել էիր խոհեմ լինել, ապո՛ւշ: Բայց պետք է գիտենալ, մինչև որ աստիճան: (Հեզնանքով): Եթե քեզ մատուցեին լուսինը, ամեն ինչ կփոխվեր, այդպես չէ՞: Անհնարը կդառնար հնարին և միանգամից հանկարծ ամեն ինչ այլ կերպարանք կընդուներ: Ինչո՞ւ չէ, Կալիգուլա: Ո՛վ կարող է այդ իմանալ: (Նա նայում է իր շուրջը): Կամաց-կամաց շուրջս մարդիկ նվազում են: Հետաքրքիր է: (Ուղղում է խոսքը հայելուն, խուլ ձայնով): Մահ մահի ետևից և շուրջս դատարկվում է: Նույնիսկ եթե ինձ մատուցեին լուսինը, ես այլևս ետ կանգնել չէի կարող: Նույնիսկ եթե մեռածները հարություն առնեին, և վայելեին արևի շոյանքը, միևնույնն է, վերջ չէր տրվի սպանությունների: (Մոլեգնած): Տրամաբանություն, Կալիգուլա՛, պետք է հետևել տրամաբանությանը: Իշխանություն մինչև վերջ: Ծառայել նրան մինչև վերջ: Ետ կանգնել այնժամ անհնար է: Եվ

պետք է շարունակել ընդհուպ մինչև սպառում: (**Ներս է մտնում  
Շերեան**):

### ՏԵՍԱՐԱՆ ՎԵՅԵՐՈՐԴ

**Կալիգուլան փովել է իր բազմոցին, վերարկուի մեջ փաթաթված:  
ԹՎում է, նա ուժասպառ է:**

**ՇԵՐԵԱ.—** Դու ինձ կանչել ես, Գայո՛ւս:

**ԿԱԼԻԳՈՒԼԱ (թույլ ձայնով).—** Այո, Շերեա՛... Պահակներ՛, ջահեր  
բերե՛ք: (**Լռություն**):

**ՇԵՐԵԱ.—** Կարևոր բա՛ն ունես ինձ ասելու:

**ԿԱԼԻԳՈՒԼԱ.—** Ոչ, Շերեա՛: (**Լռություն**):

**ՇԵՐԵԱ (ձանձրացած).—** Վստա՛հ ես, որ իմ ներկայությունն անհրա-  
ժեշտ է:

**ԿԱԼԻԳՈՒԼԱ.—** Լիովին վստահ եմ, Շերեա՛: (**Մի պահ լռություն, ա-  
պա հանկարծակի**).— Ներող եղիր, ցրված եմ և քեզ շատ վատ  
ընդունեցի: Նստիր: Զրուցենք բարեկամաբար: Ինչ որ կարիք եմ  
զգում խելացի մեկի հետ զրուցելու: (**Շերեան նստում է: Առաջին  
անգամ նա հանդես է գալիս բացահայտ պարզությամբ**): Շերեա՛,  
ի՛նչ ես կարծում, երկու մարդ՝ համազոր հոգով և հստատությամբ,  
կարո՞ղ են գոնե մեկ անգամ իրենց կյանքում զրուցել անկեղծ,  
ի սրտե, ինչպես եթե լինեին դեմ առ դեմ, առանց նախապաշար-  
ման և հատուկ շահախնդրության, առանց ստերի, որոնցով սըն-  
վում են:

**ՇԵՐԵԱ.—** Հնարավոր է, Գայո՛ւս: Բայց կարծում եմ, որ նման բանի  
դու անընդունակ ես:

**ԿԱԼԻԳՈՒԼԱ.—** Իրավացի ես: Պարզապես ուզում էի իմանալ, թե դու  
էլ ինձ պե՞ս ես մտածում: Ուրեմն հագնենք դիմակներ: Գործի  
դնենք մեր ստերը: Խոսենք այնպես, ինչպես կուլում են՝ զգոն,  
պաշտպանվելով: Շերեա՛, ինչո՞ւ ինձ չես սիրում:

**ՇԵՐԵԱ.—** Որովհետև, քո մեջ սիրելու ոչինչ չկա, Գայո՛ւս: Որովհետև  
դա հրամանով չի լինում: Որովհետև ես քեզ չափազանց լավ եմ  
հասկանում, և հնարավոր չէ սիրել մարդկային այն դեմքը, որը  
ինքներս ջանում ենք սքողել մեր մեջ:

**ԿԱԼԻԳՈՒԼԱ.—** Ինչո՞ւ ինձ ասել:

**ՇԵՐԵԱ.—** Այստեղ դու սխալվում ես, Գայո՛ւս: Ես քեզ չեմ ասում: Ես  
քեզ համարում եմ վնասարար, անգութ, եսասեր և սնափառ: Բայց

քեզ ասել չեմ կարող, որովհետև դու երջանիկ չես: Եվ չեմ կարող քեզ արհամարհել, որովհետև գիտեմ, որ թուվամորթ չես:

**ԿԱԼԻԳՈՒԼԱ.**— Ուրեմն ինչո՞ւ ես ուզում ինձ սպանել:

**ԾԵՐԵԱ.**— Ասացի քեզ, ես քեզ համարում եմ վնասարար: Ես սիրում եմ և կարիք ունեմ ապահովության: Մարդկանց մեծ մասն իմ կարծիքին են: Նրանք անընդունակ են ապրել մի աշխարհում, ուր ամենաարտաոռոց միտքը մի վայրկյանում կարող է թափանցել իրականություն, որը հաճախ է պատահում, ինչպես դանակը՝ սիրտ: Ես նույնպես չեմ ցանկանում ապրել մի այդպիսի աշխարհում: Նախընտրում եմ ինքս լինել իմ տերը, իմ կյանքի տնօրենը:

**ԿԱԼԻԳՈՒԼԱ.**— Ապահովությունը և ողջամտությունը չեն համատեղվում:

**ԾԵՐԵԱ.**— Ծջմարիտ է: Դա ողջամի ո՞ չէ, բայց առողջ է:

**ԿԱԼԻԳՈՒԼԱ.**— Ծաբ ունակիր:

**ԾԵՐԵԱ.**— Այլևս ոչինչ չուզեմ ասելու: Ձեմ ուզում ընդունել քո ողջամտությունը: Մարդկային պարտականությունների մասին իմ գաղափարներն այլ են: Գիտեմ, որ քո հպատակների մեծ մասը իմ կարծիքին են: Դու խանգարում ես բոլորին: Բնականաբար, պետք է հեռանաս:

**ԿԱԼԻԳՈՒԼԱ.**— Այդ ամենը շատ հստակ է և արդար: Մարդկանց մեծ մասին դա նույնիսկ անհրաժեշտ կթվա: Սակայն ոչ քեզ: Դու ողջամիտ ես, և ողջամտության համար թանկ են վճարում, կամ ուրանում են: Ես վճարում եմ: Իսկ դու ինչո՞ւ ոչ ցանկանում ես ուրանալ, ոչ էլ վճարել:

**ԾԵՐԵԱ.**— Որովհետև ես ցանկանում եմ ապրել, և երջանիկ լինել: Ընդունելով արքայդը իր բոլոր հետևանքներով՝ կարծում եմ, որ չեմ կարող լինել ոչ մեկը, և ոչ մյուսը: Ես, ինչպես բոլորը, ինձ ազատ զգալու համար, երբեմն մահ եմ մտախոնքում նրանց, որոնց սիրում եմ, տենչում: Տենչում եմ կանանց, մինչդեռ ընտանեկան օրենքը, կամ բարեկամությունը արգելում է ինձ տենչալ: Ողջամիտ լինելու համար ես պետք է, ուրեմն, սպանեմ կամ տիրեմ: Բայց ես գտնում եմ, որ այս անորոշ մտքերն ինձ համար կարևորություն չունեն: Եթե բոլորս միջամտեինք դրանց իրականացմանը, չէինք կարողանալ ոչ ապրել, և ոչ էլ երջանիկ լինել: Նորից եմ ասում, դա է ինձ համար ամենակարևորը:

**ԿԱԼԻԳՈՒԼԱ.**— Ուրեմն պետք է, որ դուք հավատաք ինչ որ մի բարձր գաղափարի:

- ՇԵՐԵԱ.— Ես հավատում եմ, որ կան արարքներ, որոնք գեղեցիկ են ավելի, քան մյուսները:
- ԿԱԼԻԳՈՒԼԱ.— Իսկ ես կարծում եմ, որ բոլորն էլ համազոր են:
- ՇԵՐԵԱ.— Ես գիտեմ, Գայո՛ւս, և դրա համար քեզ չեմ ասում: Բայց դու խանգարում ես, հետևաբար դու պետք է հեռանաս:
- ԿԱԼԻԳՈՒԼԱ.— Շատ ճիշտ է: Բայց ինչո՞ւ ես ինձ այդ հայտնում և վտանգում քո կյանքը:
- ՇԵՐԵԱ.— Որովհետև ուրիշները կփոխարինեն ինձ, իսկ ես չեմ սիրում ստել: **(Լռություն):**
- ԿԱԼԻԳՈՒԼԱ.— Շերեա՛:
- ՇԵՐԵԱ.— Այո, Գայո՛ւս:
- ԿԱԼԻԳՈՒԼԱ.— Հավատո՞ւմ ես, որ երկու մարդ, որոնք հոգով և հրպարտությամբ համազոր են, կարող են գոնե մեկ սնգամ իրենց կյանքում գրուցել անկեղծ, ի սրտե:
- ՇԵՐԵԱ.— Իմ կարծիքով հենց նոր այդ էինք անում:
- ԿԱԼԻԳՈՒԼԱ.— Այո, Շերեա՛: Միևնչդեռ դու գտնում էիր, որ ես անընդունակ եմ դրան:
- ՇԵՐԵԱ.— Ես սխալվում էի, Գայո՛ւս, ընդունում եմ այդ և շնորհակալ եմ քեզանից: Այժմ սպասում եմ քո վճռին:
- ԿԱԼԻԳՈՒԼԱ. **(ցրված)**.— Իմ վճի՞ռը: Ա՛, ուզում ես ասել... **(վերաբերյալի տակից հանելով մոմատախտակը)**: Գիտե՛ս սա ինչ է, Շերեա՛:
- ՇԵՐԵԱ.— Ես գիտեի, որ դա քեզ մոտ է:
- ԿԱԼԻԳՈՒԼԱ. **(կրքոտ)**.— Այո, Շերեա, քո անկեղծությունն էլ ձևա- կան էր: Երկուսը չեն գրուցել անկեղծ, ի սրտե: Բայց դա կարե- վոր չէ: Հիմա մենք վերջ կտանք անկեղծության խաղին և կվերսկսենք սպրել՝ ինչպես անցյալում: Պետք է նաև փորձես հասկանալ, ինչ որ ասելու եմ քեզ, որ դու տանես իմ վիրավորանք- ները և իմ կամակորությունը: Լսիր, Շերեա, այս մոմատախտակը միակ փաստն է:
- ՇԵՐԵԱ.— Ես թողնում եմ քեզ, Գայո՛ւս, հոգնեցի այս բոլոր ծամա- ծոություններից: Այդ խաղը լավ գիտեմ, և այլևս չեմ ուզում դրան մասնակցել:
- ԿԱԼԻԳՈՒԼԱ. **(ուշադիր և նույն կրքոտ ձայնով)**.— Սպասիր: Սա ա- պացույց է, այնպես չէ՞:
- ՇԵՐԵԱ.— Ես չեմ կարծում, որ մեկին սպանելու համար ապացույցի կարիք ունենաս:
- ԿԱԼԻԳՈՒԼԱ.— Ճշմարիտ է: Բայց մի անգամ ուզում եմ ինձ հասկա-

նալ: Դա ոչ ոքի չի խանգարի: Եվ այնքան լավ է, ժամանակ առ ժամանակ հակասել ինքդ քեզ: Դա հանգստացնում է, ևս կարիք ունեն հանգստի, Շերեա՛:

**ՇԵՐԵԱ.**— Չեմ հասկանում և նման բարդությունների հակում չունեմ:

**ԿԱԼԻԳՈՒԼԱ.**— Իհարկե, Շերեա՛: Ողջամիտ մարդ ես դու: Ոչինչ արտառոց չես ցանկանում: **(Բարձրաձայն):** Դու ուզում ես ապրել և երջանիկ լինել: Միայն այդքանը:

**ՇԵՐԵԱ.**— Ավելի լավ է չշարունակենք:

**ԿԱԼԻԳՈՒԼԱ.**— Դեռ ոչ: Մի քիչ էլ համբերիր: Ես ունեմ այդ ապացույցը, այստեղ նայիր: Ես ուզում եմ հավատալ, որ քեզ մահվան դատապարտել չեմ կարող առանց դրա: Դա իմ կարծիքն է, որն ինձ հանգստացնում է: Այա տես, թե ինչեր են դառնում ապացույցները կայսրերի ձեռքին: **(Մոմատախտակը մոտեցնում է ջահին: Շերեան մոտենում է նրան, միայն ջահն է բաժանում նրանց միմյանցից: Մոմատախտակը հալվում է):** Տեսա՞ր, դավակից, մոմատախտակը հալվում է, և մինչ այդ ապացույցը հետզհետե անհետանում է, անմեղության լուսաբացը շողում է քո դեմքին: Ինչ հիանալի, մաքուր ճակատ ունես, Շերեա՛: Որքան գեղեցիկ է անմեղը, որքան գեղեցիկ: Հիացիր իմ հզորությամբ, նույնիսկ աստվածները չեն կարող անմեղություն շնորհել առանց նախապես պատժելու: Բայց քո կայսրը կրակի մի բոցով ներում է շնորհում քեզ և քաջալերում. շարունակիր, Շերեա՛, շարունակիր համառորեն մինչև վերջ այդ սքանչելի դատողությունը, որ դու ինձ ցույց տվեցիր: Կայսրդ սպասում է իր հանգստին: Սա ապրելու և երջանիկ լինելու նրա ընտրած ուղին է: **(Շերեան ապշած նայում է Կալիգուլային: Ծիգով զսպում է մի շարժում, թվում է, թե նա հասկանում է: Բացում է բերանը խոսելու, բայց հանկարծ քայլում է դեպի դուռը: Կալիգուլան շարունակում է պահել մոմատախտակը ջահի վրա և ժպտալով, հայացքով ուղեկցում է Շերեային):**



# ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ ՉՈՐՐՈՐԴ

## ՏԵՍԱՐԱՆ ԱՌԱՋԻՆ

**Բեռը կիսամութ է: Ներս եմ մտնում Շերեան և Սկիպիոնը: Շերեան քայլում է աջ, հետո՝ դեպի ձախ, ապա ուղղվում է դեպի Սկիպիոնը:**

**ՍԿԻՊԻՈՆ (քողարկված).—** Ի՞նչ ես ուզում ինձանից:

**ՇԵՐԵԱ.—** Ժամանակը սող է: Մենք պետք է հաստատուն լինենք մեր վճռի մեջ:

**ՍԿԻՊԻՈՆ.—** Ինչո՞ւ ես կարծում, թե ես հաստատուն չեմ:

**ՇԵՐԵԱ.—** Երեկ դու ներկա չէիր մեր հավաքույթին:

**ՍԿԻՊԻՈՆ (շրջելով երեսը).—** Ծիշտ է, Շերեա:

**ՇԵՐԵԱ.—** Սկիպիո՛ն, քեզանից հասակով եմ և սովորություն չունեմ օգնություն խնդրելու, սակայն ճշմարիտ է, որ այժմ քո կարիքն ունեմ: Այդ սպանությունը պահանջում է պատասխանողներ, որոնք պատվարժան լինեն: Այս վիրավորված փառասիրության և անարգ վախկոտների մեջ միայն իմ և քո նպատակն է անբիծ: Գիտեմ, եթե մեզ լքես, չես մատնի: Բայց խնդիրն այդ չէ: Իմ ցանկությունն այն է, որ դու մնաս մեզ հետ:

**ՍԿԻՊԻՈՆ.—** Ես հասկանում եմ քեզ, բայց երդվում եմ, չեմ կարող:

**ՇԵՐԵԱ.—** Ուրեմն նրա հե՞տ ես:

**ՍԿԻՊԻՈՆ.—** Ոչ, բայց նրա դեմ լինել չեմ կարող: **(Մի պահ անց, խուլ ձայնով):** Եթե նրան սպանեի, սիրտս մասամբ նրա հետ կլիներ:

**ՇԵՐԵԱ.—** Մինչդեռ նա սպանել է քո հորը:

**ՍԿԻՊԻՈՆ.—** Այո, հեճ այդտեղից է սկսվում ամեն ինչ և հեճ այդտեղ էլ վերջանում:

**ՇԵՐԵԱ.—** Նա ուրանում է, ինչ որ դու ընդունում ես: Նա ծաղրում է, ինչ որ դու պաշտում ես:

**ՍԿԻՊԻՈՆ.—** Ծշմարիտ է, Շերեա՛, բայց ինչ-որ մի բան իմ մեջ նմանվում է նրան: Նույն հուրն է այրում մեր սրտերը:

**ՇԵՐԵԱ.—** Պահեր կան, որ պետք է ընտրել: Ես լռեցրի իմ մեջ այն, ինչը կարող էր նրան նմանվել:

**ՍԿԻՊԻՈՆ.—** Ես չեմ կարող ընտրել, որովհետև իմ տանջանքից բացի, ես տանջվում եմ նաև նրա տանջանքով: Իմ դժբախտությունն ամեն ինչ հասկանալն է:

**ՇԵՐԵԱ.—** Ուրեմն դու նրան իրավացի ես համարում:

ՍԿԻՊԻՈՆ (ճշպոյ).— Օ՛, աղաչում եմ քեզ, Շերեա, ոչ ոք, այլևս ոչ ոք ինձ համար երբեք իրավացի չի լինի: **(Մի պահ նայում են միմյանց):**

ՇԵՐԵԱ (հուզված, մոտենալով Սկիպիոնին).— Գիտե՞ս, առավել ևս ատում եմ նրան, որ քեզ այդպիսին դարձրեց:

ՍԿԻՊԻՈՆ.— Այո՛, նա ինձ սովորեցրեց անմնացորդ պահանջել:

ՇԵՐԵԱ.— Ոչ, Սկիպիոն՛ն, նա քեզ հուսահատեցրեց: Եվ երիտասարդ հոգին հուսահատեցնելը առավելագույնն է հանցանքներից, որ նա գործել է մինչև օրս: Երդվում եմ քեզ, դա բավական է, որ համակ ցասումով նրան սպանեմ: **(Ուղղվում է դեպի ելքը: Մըտնում է Հելիկոնը):**

#### ՏԵՍԱՐԱՆ ԵՐԿՐՈՐԴ

ՀԵԼԻԿՈՆ.— Ես քեզ փնտրում էի, Շերեա՛: Կայիգուլան այստեղ կազմակերպում է մի փոքր բարեկամական հավաքույթ: Պետք է, որ դու սպասես նրան: **(Շրջվում է դեպի Սկիպիոնը):** Բայց ոչ ոք թո անհրաժեշտությունը չունի, աղավնյակս, կարող ես գնալ:

ՍԿԻՊԻՈՆ (զնալուց առաջ շրջվում է դեպի Շերեան).— Շերեա՛:

ՇԵՐԵԱ (խիստ մեղմորեն).— Այո, Սկիպիոն՛ն:

ՍԿԻՊԻՈՆ.— Փորձիր հասկանալ:

ՇԵՐԵԱ (խիստ մեղմորեն).— Ոչ, Սկիպիոն՛ն:

Սկիպիոնը և Հելիկոնը դուրս են գալիս:

#### ՏԵՍԱՐԱՆ ԵՐԿՐՈՐԴ

Կոլիսներում լսվում է զենքերի շաշյուն: Երկու պահակներ երեվում են աջ կողմում՝ ուղեկցելով ծեր պատրիկին և առաջին պատրիկին, որոնք ահաբեկված տեսք ունեն:

ԱՌԱՋԻՆ ՊԱՏՐԻԿ (շանալով թաքցնել տազնապը).— Վերջապես, ինչ են ուզում մեզանից գիշերվա այս ուշ ժամին:

ՊԱՀԱԿ.— Նստիր այստեղ: **(Տույց է տալիս աջ կողմի աթոռները):**

ԱՌԱՋԻՆ ՊԱՏՐԻԿ.— Եթե մեզ սպանելու համար է, ինչպես սպանեցին մյուսներին, այնքան նեղության կարիք չկա:

ՊԱՀԱԿ.— Նստիր այստեղ, ծե՛ր ջորի:

**ԾԵՐ ՊԱՏՐԻԿ.**— Նստենք, այս մարդը ոչնչից տեղյակ չէ: Պարզ երեւում է:

**ՊԱՀԱԿ.**— Այո, սիրունի՛կս, պարզ երևում է: (**Դուրս է գալիս**):

**ԱՌԱՋԻՆ ՊԱՏՐԻԿ.**— Պետք էր արագ գործել: Ես գիտեի: Հիմա մեզ տանջանքներ են սպասվում:

### ՏԵՍԱՐԱՆ ՉՈՐՐՈՐԴ

**ԾԵՐԵԱ (հանգիստ նստելով).**— Ի՞նչ է պատահել:

**ԱՌԱՋԻՆ ՊԱՏՐԻԿ, ԾԵՐ ՊԱՏՐԻԿ (միասին).**— Դավադրությունը հայտնաբերվեց:

**ԾԵՐԵԱ.**— Հեռո՞:

**ԾԵՐ ՊԱՏՐԻԿ (դողալով).**— Տանջանք է սպասվում մեզ:

**ԾԵՐԵԱ (սառնարյուն).**— Ես հիշում եմ, մի անգամ Կալիգուլան պարգևատրեց 81 հազար սեստերով մի գող ստրուկի, որը, չնայած տանջանքներին, չէր խոստովանել:

**ԱՌԱՋԻՆ ՊԱՏՐԻԿ.**— Մեզ ինչ:

**ԾԵՐԵԱ.**— Ոչ, դա ապացուցում է, որ նա սիրում է քաջություն: Եվ դուք պետք է այդ հաշվի առնեք: (**Ծեր պատրիկին**): Քեզ չի վնասի, եթե դադարեցնես ատամների իրար զարկել: Ատում եմ այդ ձայնը:

**ԾԵՐ ՊԱՏՐԻԿ.**— Բանն այն է...

**ԱՌԱՋԻՆ ՊԱՏՐԻԿ.**— Վերջ տվեք: Մեր բախտն է վճովում:

**ԾԵՐԵԱ (անշարժ).**— Ծանո՞թ եք Կալիգուլայի ամենասիրած խոսքին:

**ԾԵՐ ՊԱՏՐԻԿ (արտասովոր պատրաստ).**— Այո, ասում է դահճին.

«դանդաղ սպանիր, որպեսզի զգա մահը»:

**ԾԵՐԵԱ.**— Ոչ, դրանից լավը ունի: Մահապատիժն ի կատար ածելուց հետո հորանջում է և ասում ամենայն լրջությամբ. «Ամենաշատը ինձ հիացմունք է պատճառում իմ անկարեկցությունը»:

**ԱՌԱՋԻՆ ՊԱՏՐԻԿ.**— Լսո՞ւմ եք: (**Ջենքերի շայուն**):

**ԾԵՐԵԱ.**— Այդ խոսքը բացահայտում է Կալիգուլայի թույլ կողմը:

**ԾԵՐ ՊԱՏՐԻԿ.**— Ի՞նչ կլինի, եթե վերջ տաս փիլիսոփայությանդ, ես այդ ատում եմ: (**Բեմի խորքից ներս է մտնում մի ստրուկ, որը բերում է զենքեր և շարում աթոռի վրա, Ծերեան, որը չի տեսել ստրուկին**):

**ԾԵՐԵԱ.**— Գոնե ընդունենք, որ այդ մարդը անժխտելի ազդեցություն է գործում, ստիպում է մեզ խորհել: Բոլորին ստիպում է խորհել:

Շահապատուություն, ահա թե ինչն է ստիպում խորհել: Եվ ահա թե ինչու նա այդքան ատելություն է վաստակում:

ԾԵՐ ՊԱՏՐԻԿ (դողալով).— Նայիր:

ԾԵՐԵԱ. (նկատելով զԵՆՔԵՐԸ, մի փոքր փոխում է տոնը).— Գուցե դու իրավացի էիր:

ԱՌԱՋԻՆ ՊԱՏՐԻԿ.— Պետք էր շուտ գործել: Մենք շատ հապաղեցինք:

ԾԵՐԵԱ.— Այո, դա դաս է մեզ համար, մի փոքր ուշացումով:

ԾԵՐ ՊԱՏՐԻԿ.— Բայց դա հիմարությունն է, ես չեմ ուզում մեռնել:

(Նա վեր է կենում և ուզում է փախչել: Երկու պահակներ հայտնվում են և նրան ապտակ տալով՝ պահում են: Նա հուսալքված ընկնում է աթոռին: Ծերեան մի քանի բառ է արտասանում, որ ոչ ոք չի լսում: Հանկարծակի բեմի խորքում լսվում է սիմբալի և նվագարանի տարօրինակ և ռիթմիկ երաժշտություն: Պատրիկները լուռ նայում են: Կալիգուլան հագել է պարուհու կարճ զգեստ, գլխին ծաղիկներ, որի ստվերն է միայն հայտնվում վարագույրի վրա: Նա կատարում է պարային մի քանի ծիծաղելի շարժումներ և անմիջապես լանկետանում: Դրանից հետո մի պահակ հայտարարում է հանդիսավոր ձայնով. «Ներկայացումն ավարտվեց»: Այդ ընթացքում Կայետնիան հանդիսատեսների ետևից լուռ ներս է մտնում: Նա խոսում է սառը ձայնով, որը շփոթեցնում է ներկաներին):

### ՏԵՍԱՐԱՆ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ԿԱՅԵՍՈՆԻԱ.— Կալիգուլան ինձ հանձնարարել է ձեզ հաղորդել, որ մինչև օրս ձեզ կանչում էր պետական գործերի համար, բայց այսօր նա ձեզ հրավիրել է, որպեսզի դուք միմյանց հաղորդակցվեք գեղարվեստական հույզերով: (Մի պահ նույն ձևով): Ի դեպ նա ավելացրեց, որ նրանք, ովքեր չեն հաղորդակցվել, կգլխատվեն: (Բոլորը լուռ են): Ներեցեք, որ պնդում եմ, բայց ես պարտավոր եմ հարցնել, արդյոք ձեզ այդ պարը գեղեցիկ թվա՞ց:

ԱՌԱՋԻՆ ՊԱՏՐԻԿ (տատանվելուց հետո).— Գեղեցիկ էր, Կայետնիա:

ԾԵՐ ՊԱՏՐԻԿ (երախտագիտությամբ լի).— Օ՛հ, անշուշտ, Կայետնիա՛:

ԿԱՅԵՍՈՆԻԱ. — Իսկ քե՞զ, Ծերեա:

ԾԵՐԵԱ. (սառնությամբ).— Մեծ արվեստ է:

ԿԱՅԵՍՈՆԻԱ.— Հոյակապ է: Ուրեմն կարելի է այդ մասին հաղորդել  
Կալիգուլային:

### ՏԵՍԱՐԱՆ ՎԵՅԵՐՈՐԴ

**Ներս է մտնում Հելիկոնը:**

ՀԵԼԻԿՈՆ.— Ասա ինձ, Օերեա, դա իսկապե՞ս մեծ արվեստ է:

ՕԵՐԵԱ.— Որոշ տեսանկյունից՝ այո:

ՀԵԼԻԿՈՆ.— Հասկանում եմ: Դու շատ ուժեղ ես, Օերեա՛: Կեղծ, ինչ-  
պես ազնիվ մարդը, բայց ուժեղ, իսկապես: Ես ուժեղ չեմ: Բայց  
թույլ չեմ տա, որ դիպչեք Քայուսին: Նույնիսկ եթե դա նրա ցան-  
կությունն է:

ՕԵՐԵԱ.— Ոչինչ չեմ հասկանում քո խոսքերից, բայց ողջունում եմ քո  
նվիրվածությանը: Ինձ դուր են գալիս լավ ծառաները:

ՀԵԼԻԿՈՆ.— Ինչ հպարտ ես դարձել: Հը՞: Այո, ես ծառայում եմ մի  
խեղճի: Իսկ դու, ո՞ւմ ես ծառայում: Առաքիճության՞: Հիմա քեզ  
կասեմ, թե ինչ եմ մտածում դրա մասին: Ես ծնվել եմ ստրուկ,  
հետևաբար առաքիճության պարը ես պարել եմ մտրակի տակ,  
ազնիվ մարդ: Քայո՛ւսն ինձ մեծ խոսքեր չի շոսյել: Պարզապես  
ինձ ազատագրեց ստրկությունից և տարավ պալատ: Այդպիսով  
միայն ունեցա իրավունքը ձեզ դիտելու, ձեզ՝ առաքիճներիդ: Եվ  
տեսա, որ դուք ունեք կեղտոտ կեցվածք և ձեզանից փշում է մի  
խղճուկ հոտ, դժգույն հոտը նրանց, ովքեր երբեք ոչ տառապանք  
և ոչ էլ փորձություն չեն տեսել: Ես տեսել եմ ճոխ հագնված ազնու-  
վականներ, բայց հոգով վաշխառու, դեմքով՝ ժլատ, ձեռքը՝ խար-  
դախ: Դուք՝ դատավորներ՞: Դուք, որ գովաբանում եք առաքիճու-  
թյունը, դուք, որ երազում եք ապահովություն, ինչպես երիտա-  
սարդ աղջիկը սեր: Դուք այնուամենայնիվ մեռնելու եք սարսա-  
փի մեջ, նույնիսկ առանց գիտակցելու, որ ստել եք ամբողջ ձեր  
կյանքը: Դո՞ւք եք ժողովվելու դատելու նրան, ով անհաշիվ տան-  
ջանքներ է կրել, որի սրտում ամեն օր արյունում են հազարավոր  
նոր վերքեր: Դուք ինձ առաջինը կիսիեք, վստահ եղեք: Արհա-  
մարհիր ստրուկին, Օերեա: Նա բարձր է քո առաքիճությունից,  
քանզի նա կարող է դեռևս սիրել իր թշվառ տիրոջը, որին նա  
կապաշտպանի ձեր ազնվական ստերից և ձեր երդմնազանց շուր-  
թերից:

ՕԵՐԵԱ.— Միբեյի՛ Հելիկոն, դու արդեն անցար ճարտարախոսության:

Անկեղծորեն, անխկինում ավելի լավ ճաշակ ունեիր:

**ՀԵԼԻԿՈՆ.**— Իսկապես ցավում եմ: Ահա թե ինչի է հանգեցնում **ձեզ** մոտ շատ հաճախելը: Ասում են, որ ծեր ամուսինները այնքան են անանվում միմյանց, որ նույնիսկ նրանց ականջների մազերի թիվն էլ նույնն է լինում: Բայց ես սկսում եմ ապաքինվել: Մի վախեցիր, ապաքինվում եմ: Պարզապես այս... Նաչիր, տեսնո՞ւմ ես այդ դեմքը: Լավ, հիմա լավ նաչիր: Ծատ լավ: Հիմա քո թշնամուն դու տեսար: (**Դուրս է գալիս**):

### ՏԵՍԱՐԱՆ ՅՈՒԹԵՐՈՐԴ

**ԾԵՐԵԱ.**— Այժմ պետք է արագ գործել: Երկուսդ էլ մնացեք այստեղ:

Այս երեկո մենք կլինենք 100 հոգի: (**Դուրս է գալիս**):

**ԾԵՐ ՊԱՏՐԻԿ.**— Մնացեք այստեղ, մնացեք այստեղ: Ես շատ կուզեմ նայի հեռանալ: (**Նա հոտոտում է**): Մահվան հոտ է փչում այստեղից:

**ԱՌԱՋԻՆ ՊԱՏՐԻԿ.**— Կամ ստի: (**Տխրությամբ**): Չէ՞ որ ես ասացի՝ այդ պարը գեղեցիկ էր:

**ԾԵՐ ՊԱՏՐԻԿ (ներողամտությամբ).**— Ինչ որ մի ձևով գեղեցիկ էր: Այո գեղեցիկ: (**Քամու պես ներս են խուժում բազմաթիվ պատրիկներ և ասպետներ**):

### ՏԵՍԱՐԱՆ ՈՒԹԵՐՈՐԴ

**ԵՐԿՐՈՐԴ ՊԱՏՐԻԿ.**— Ի՞նչ է պատահել, տեղյա՞կ եք: Կայսրը մեզ կանչել է:

**ԾԵՐ ՊԱՏՐԻԿ (ցրված).**— Գուցե պարի համար:

**ԵՐԿՐՈՐԴ ՊԱՏՐԻԿ.**— Ի՞նչ պար:

**ԾԵՐ ՊԱՏՐԻԿ.**— Այո, այսպես ասած, գեղարվեստական հաճույքի համար:

**ԵՐՐՈՐԴ ՊԱՏՐԻԿ.**— Ինձ ասացին, որ Կալիգուլան շատ հիվանդ է:

**ԱՌԱՋԻՆ ՊԱՏՐԻԿ.**— Այո:

**ԵՐՐՈՐԴ ՊԱՏՐԻԿ.**— Նրան ի՞նչ է պատահել: (**Հափշտակված**): Օ՞, աստվածներ, կարող է մեռնե՞լ:

**ԱՌԱՋԻՆ ՊԱՏՐԻԿ.**— Չեմ կարծում: Նրա հիվանդությունը մահացու է միայն ուրիշների համար:

ԾԵՐ ՊԱՏՐԻԿ.— Եթե համարձակվենք այդպէս ասել:

ԵՐԿՐՈՐԴ ՊԱՏՐԻԿ.— Հասկանում եմ քեզ: Բայց արդյոք չունի՞ մի հիվանդություն՝ ոչ այնքան լուրջ, բայց ավելի շահավետ մեզ համար:

ԱՌԱՋԻՆ ՊԱՏՐԻԿ.— Ոչ: Նրա հիվանդությունը ուրիշ մրցակից չի ընդունում: Թույլ տվեք, ես պետք է տեսնեմ Շերեային: (Նա դուրս է գալիս. մտնում է Կայետանիան: Մի պահ լռություն):

#### ՏԵՍԱՐԱՆ ԻՆՆԵՐՈՐԴ.

ԿԱՅԵՍՈՆԻԱ (սառնարտորեն).— Կալիգուլան տառապում է ստամոքսի ցավով: Նա արյուն է փսխում: (Պատրիկները շրջապատում են նրան):

ԵՐԿՐՈՐԴ ՊԱՏՐԻԿ.— Օ՛, ամենագոր աստվածներ, ես խոստանում եմ, եթե նա ապաքինվի, երկու հարյուր հազար սեստեր կտամ պետական գանձարանին:

ԵՐՐՈՐԴ ՊԱՏՐԻԿ.— Օ՛, Յուպիտեր, իմ կյանքը առ նրա փոխարեն: (Այդ պահին ներս է մտնում Կալիգուլան: Նա մոտենում է երկրորդ պատրիկին):

ԿԱԼԻԳՈՒԼԱ.— Ընդունում եմ քո նվիրատվությունը, Լուսիո՛ւս, շնորհակալ եմ: Իմ գանձապահը վաղը կներկայանա քեզ մոտ: (Մոտենում է երրորդ պատրիկին և համբուրում նրան): Չես կարող պատկերացնել, թե որքան հուզված եմ ես: (Մի պահ լռություն: Քնքշորեն): Ուրեմն, սիրո՞ւմ ես ինձ:

ԵՐՐՈՐԴ ՊԱՏՐԻԿ.— Օ՛, Կեսա՛ր, չկա մի բան, որ առանց հապաղելու չնվիրեմ քեզ:

ԿԱԼԻԳՈՒԼԱ (նորից համբուրելով նրան).— Օ՛, դա շատ է, Կասիո՛ւս: Ես արժանի չեմ այդքան սիրո: (Կասիուսը բողոքի մի շարժում է անում): Ո՛չ, ո՛չ, ես անարժան եմ դրան: (Կալիգուլան կանչում է երկու պահակների): Տարեք նրան: (Կասիուսին՝ մեղմորեն): Գնա, բարեկամ, և հիշիր, որ Կալիգուլան քեզ նվիրեց իր սիրտը:

ԵՐՐՈՐԴ ՊԱՏՐԻԿ (անհանգիստ).— Բայց ո՞ւր եմ տանում ինձ:

ԿԱԼԻԳՈՒԼԱ.— Իհարկե մահվան, դու ինձ համար զոհաբերեցիր կյանքդ: Հիմա ես ինձ ավելի լավ եմ զգում: Նույնիսկ բերանումս արյան տհաճ համը չկա: Դու ինձ բուժեցիր: Ուրա՛խ ես, Կասիո՛ւս, որ կարող ես նվիրել կյանքդ մեկին, որի անունը Կալիգուլա՛ է: Հիմա ես պատրաստվում եմ բոլոր տոնակատարություն-

Անրին: (Քարշ են տալիս երրորդ պատրիկին, որը դիմադրում է  
և ոռնում):

ԵՐՐՈՐԴ ՊԱՏՐԻԿ.— Ես չեմ ուզում, ի՞նչ կատակ է դա:

ԿԱԼԻՓՈՒԼԱ (երազկոտ մտնում է Անրս, ուր ճիչ է և ոռնոց).— Ծու-  
տով ծովային ճանապարհները կծածկվեն միմոզաներով: Կանաչք  
կհագնեն թեթև կտորից զգեստներ: Երկինքը կդառնա լայնածա-  
վալ, նոր և ծածանվող, Կասիո'ւս: Կյանքի ժպիտները: (Կասիուսը  
պատրաստ է դուրս գալու: Կաշեանհիան կամացուկ հրում է նը-  
րան: Հանկարծ Կալիգուլան շրջվում է, լրջացած): Եթե այդքան  
սիրեիր կյանքը, բարեկամս, այդպես անխոհեմ չէիր խաղա նրա  
հետ: (Քարշ են տալիս Կասիուսին: Վերադառնալով դեպի սե-  
ղանը): Երբ պարտվում են, պետք է միշտ վճարեն: (Դադար):  
Արի, Կաշեանհիա՛: (Կալիգուլան շրջվում է մյուսների կողմը):  
Ի դեպ, մի գեղեցիկ միտք հղացավ, որն ուզում եմ կիսել ձեզ հետ:  
Իմ բազավորությունը մինչև օրս եղել է շատ երջանիկ: Ոչ հա-  
մատարած ժանտախտ, ոչ դաժան կրոն, նույնիսկ ոչ մի պետա-  
կան հեղաշրջում: Կարճ ասած, չկա ոչինչ, որ հիշատակվեր ձեր  
հետնորդների կողմից: Նաև դրա համար է, գիտե՛ք, որ փորձում  
եմ փոխհատուցել ճակատագրի խոհեմությանը: Ուզում եմ ասել...  
չգիտեմ, արդյոք ինձ հասկացա՞ք: (Հանդարտ ծիծաղելով): Վեր-  
ջապես ես եմ փոխարինում ժանտախտին: (Փոխելով տոնը): Բայց  
լռեցեք: Ահա Ծերեա՛ն: Կաշեանհիա՛, սա արդեն քո գործն է: (Նա  
դուրս է գալիս, մտնում են Ծերեան և առաջին պատրիկը):

### ՏԵՍԱՐԱՆ ՏԱՍՆԵՐՈՐԴ

Կաշեանհիան առույգ գնում է Ծերեային ընդառաջ:

ԿԱՅԵՍՈՆԻԱ.— Կալիգուլան մահացել է: (Կաշեանհիան շրջվում է,  
կարծես թե լաց է լինում և հայացքը ուղղում է մյուսներին, որոնք  
լռում են: Բոլորը ահաբեկվածի տեսք են ընդունում, բայց տար-  
բեր պատճառներով):

ԱՌԱՋԻՆ ՊԱՏՐԻԿ.— Ստո՞ւյգ է այդ դժբախտությունը: Հնարավոր  
չէ, քիչ առաջ նա պարում էր:

ԿԱՅԵՍՈՆԻԱ.— Այո, հենց այդպես: Այդ ճիգն էլ նրան վախճանեց:  
(Ծերեան արագ գնում է դեպի մեկը, ապա՝ մյուսը և հանկարծ  
շրջվում է դեպի Կաշեանհիան: Բոլորը լուռ են): (Հանդարտորեն):  
Դու ոչինչ չես ասում, Ծերեա՛ն:



**ՕՆՐԵԱ (նույնպէս հանդարտ).**— Սա մեծ դժբախտությունն է, Կայե-  
տոհիա: (**Մոլեգնած ներս է մտնում Կալիգուլան և գնում դեպի  
Ծերեան**):

**ԿԱԼԻԳՈՒԼԱ.**— Լավ ես խաղում, Ծերեա՛: (**Նա պատվում է ինքն իր  
շուրջը և նայում մյուսներին: Կատակով**): Դե, այս անգամ վրի-  
պեց: (**Կայետոնիային**): Մի մոռացիր, ինչ որ քեզ ասացի:

### ՏԵՍԱՐԱՆ ՅԱՍՆՄԵՆԵՐՈՐԳ

**Կայետոնիան նայում է նրան, որը լուռ դուրս է գալիս:**

**ՆԵՐ ՊԱՏՐԻԿ (սրտապնդված մի անխոնջ հույսով).**— Գուցէ նա հի-  
վա՛նդ է, Կայետոնիա:

**ԿԱՅԵՍՈՆԻԱ (ատելությամբ նայելով նրան).**— Ո՛չ, սիրունիկս, բայց  
դու տեղյակ չես, որ այս մարդը գիշերները քնում է միայն երկու  
ժամ և մնացած ժամանակը անհանգիստ թափառում է իր պա-  
լատի սրահներում: Մի բան, որ դու չես գիտակցում, և երբեք չես  
հարցրել ինքդ քեզ, թե ինչի մասին է մտածում այս էակը կես-  
գիշերից մինչև արևածագ: Հիվա՛նդ: Ոչ, հիվանդ չէ: Եթէ դու մի-  
այն չհնարես մի անուն, մի դեղորայք նրա խոցերի համար, որոն-  
ցով պատված է նրա հոգին:

**ՕՆՐԵԱ (կարծես հուզված).**— Իրավացի ես, Կայետոնիա: Մենք ան-  
տեղյակ չենք, որ Գայո՛ւսը...

**ԿԱՅԵՍՈՆԻԱ (կտրուկ).**— Ոչ, դուք անտեղյակ չեք, բայց ինչպէս  
բոլոր նրանք, ովքեր բոլորովին հոգի չունեն, դուք էլ նրանց պէս  
տանել չեք կարող մեծ հոգու տեր մարդկանց: Մեծ հոգի: Ահա  
ինչն է խանգարողը, այդպէս չէ՞: Հենց դա էլ կոչում են հիվան-  
դություն: Եվ այս սոփեստները զգում են իրենց գոհ և արդարա-  
ցի: (**Փոխելով տոնը**): Երբէէ դու կարողացե՛լ ես սիրել...

**ՕՆՐԵԱ (վերագտնելով իրեն).**— Ճշմարիտ է: (**Նստում է**): Քիչ մնաց  
մոռանալի Կալիգուլայի հանձնարարությունները: Գիտեք, որ այս  
օրը նվիրված է արվեստին:

**ՕՆՐ ՊԱՏՐԻԿ.**— Համաձայն օրացույցի՞:

**ԿԱՅԵՍՈՆԻԱ.**— Ոչ, համաձայն Կալիգուլայի: Նա հրավիրել է մի քա-  
նի պոետների, որոնց առաջարկելու է մի հորինվածք, հանպատ-  
րաստի, տրված թեմայի շուրջ: Նա ցանկանում է, որ ձեզանից  
նրանք, ովքեր պոետ են, անպայման մասնակցեն միջոցառմանը:  
Նա նշել է հատկապէս երիտասարդ Սկիպիոնին և Մետելիուսին:

ՄԵՏԵԼԻՈՒՍ.— Բայց մենք պատրաստ չենք:

ԿԱՅԵՍՈՆԻԱ (կարծես թե չի լսել ոչինչ, անտարբեր).— Բնականաբար, կլիներ պարզևատրումներ, պատիժ՝ նույնպես: (Մյուսները փոքր-ի՞նչ ընկրկում են): Կարող եմ ձեզ մտերմաբար ասել, որ պատիժը խիստ չի լինելու: (Ներս է մտնում Կալիգուլան, նա սվելի մռայլ է):

### ՏԵՍԱՐԱՆ ՏԱՍՆԵՐԿՈՒԵՐՈՐԳ

ԿԱԼԻԳՈՒԼԱ.— Ամեն ինչ պատրաստ է:

ԿԱՅԵՍՈՆԻԱ.— Ամեն ինչ: (Պահակին): Ներս թողեք պոետներին: (Զույգ-զույգ մտնում են տասներկու պոետներ, որոնք կանոնավոր քայլերով իջնում են դեպի աջ):

ԿԱԼԻԳՈՒԼԱ.— Իսկ մյուսները:

ԿԱՅԵՍՈՆԻԱ.— Սկիպիոն և Մետելիոս: (Երկուսն էլ միանում են պոետներին: Կալիգուլան նստում է բեմի խորքում՝ ձախ կողմում, Կայետնիայի և մնացած պատրիկների հետ: Փոքր դադար):

ԿԱԼԻԳՈՒԼԱ.— Թեման՝ «Մահ»: Ժամանակը՝ մի րոպե: (Պոետները արագ գրում են իրենց մոմատախտակներին):

ԾԵՐ ՊԱՏՐԻԿ.— Ո՞վ է լինելու ժյուրին:

ԿԱԼԻԳՈՒԼԱ.— Ես: Բավական չէ՞:

ԾԵՐ ՊԱՏՐԻԿ.— Օ՛, այո, լիովին բավական է:

ՇԵՐԵԱ.— Իսկ դու մասնակցո՞ւմ ես մրցույթին, Գայո՛ւս:

ԿԱԼԻԳՈՒԼԱ.— Անօգուտ է, վաղուց է, որ ես գրել եմ այդ թեմայով իմ հորինվածքը:

ԾԵՐ ՊԱՏՐԻԿ (շտապելով).— Ինչպե՞ս կարող եմք ձեր հորինվածքը ձեռք գցել:

ԿԱԼԻԳՈՒԼԱ.— Իմ ապրած կյանքով, ես դա արտասանում եմ ամեն օր: (Կայետնիան անհանգիստ նայում է նրան: Պոռթկումով): Իմ դեմքը տհա՞ն է քեզ համար:

ԿԱՅԵՍՈՆԻԱ (մեղմորեն).— Ներողություն եմ խնդրում:

ԿԱԼԻԳՈՒԼԱ.— Օ՛, խնդրում եմ առանց խոնարհության, հատկապես առանց խոնարհության: Դու արդեն անտանելի ես, իսկ քո խոնարհությունը: (Կայետնիան հանդարտ առաջ է գալիս: Շեքեային): Ես շարունակում եմ: Սա իմ միակ հորինվածքն է: Բայց դա արդեն ապացուցում է, որ ես միակ արվեստագետն եմ, որ երբևէ

ճանաչել է Հոռնը: Միակը, լսո՞ւմ ես, Շերեա՛, որի մտքերն ու գործերը համընկնում են:

ՇԵՐԵԱ.— Դա միայն կարողության հարց է:

ԿԱԼԻԳՈՒԼԱ.— Իսկապես, մյուսները ստեղծում են կարողության պակասի դրոմամբ: Ես կարիք չունեմ մեծ գործ ստեղծելու, որովհետև ես դա ապրում եմ: **(Մոլեգնած՝ մյուսներին):** Հասկանալի՞ է:

ՄԵՏԵԼԻՈՒՍ.— Կարծում եմ հասկանալի է:

ԲՈԼՈՐԸ.— Այո:

ԿԱԼԻԳՈՒԼԱ.— Դե ինձ լավ լսեք: Դուք կթողնեք ձեր շարքերը: Ես կսուլեմ: Առաջինը կսկսի իր ընթերցանությունը: Հենց որ սուլեմ, նա պետք է դադարեցնի, իսկ երկրորդը պետք է սկսի: Եվ այդպես շարունակ: Հաղթողը բնականաբար կլինի նա, որի հորինվածքը չի ընդհատվի սուլոցով: Պատրաստվեք: **(Շրջվում է դեպի Շերեան, մտերմաբար):** Ամեն ինչում անհրաժեշտ է աշխատանքի կազմակերպում, նույնիսկ արվեստում:

ԱՌԱՋԻՆ ՊՈՆԵՏ.— Մահ, երբ նրանից անդին սև արիերը... **(Սուլոց: Պոետը իջնում է դեպի աջ: Մյուսները կրկնելու են նույնը):**

ԵՐԿՐՈՐԴ ՊՈՆԵՏ.— Երեք այգիներ, իրենց քարայրում... **(Սուլոց):**

ԵՐՐՈՐԴ ՊՈՆԵՏ.— Կանչում եմ քեզ, օ՛, մահ... **(Նյարդային սուլոց: Չորրորդ պոետն է առաջ գալիս, ընդունելով արտասանողին հատուկ կեցվածք: Սուլիչը հնչում է մինչ նրա խոսելը):**

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՊՈՆԵՏ.— Երբ ես փոքրիկ երեխա էի...

ԿԱԼԻԳՈՒԼԱ **(ռոնալով)**.— Ոչ, ի՞նչ կապ կարող է ունենալ, ապուշ, մանկությունը այս թեմայի հետ: Կարո՞ղ ես ինձ ասել, ի՞նչ կապ:

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՊՈՆԵՏ.— Բայց, Գայո՛ւս, ես չեմ ավարտել... **(Սուր սուլոց):**

ՎԵՑԵՐՈՐԴ ՊՈՆԵՏ **(նա առաջ է գալիս կոկորդը մաքրելով)**.— Անողոք, նա ճամփա է ընկնում... **(Սուլոց):**

ՅՈԹԵՐՈՐԴ ՊՈՆԵՏ **(խորհրդավոր)**.— Անըմբռնելի ցիրուցան դամբանական: **(Ընդհատված սուլոց: Առաջ է գալիս Սկիպիոնը՝ առանց մոմատախտակի):**

ԿԱԼԻԳՈՒԼԱ.— Քո հերթն է, Սկիպիոն: Դու չունե՞ս մոմատախտակ:

ՍԿԻՊԻՈՆ.— Դրա կարիքը չունեմ:

ԿԱԼԻԳՈՒԼԱ.— Հապա տեսնենք: **(Ծամծմում է իր սուլիչը):**

ՍԿԻՊԻՈՆ **(Կալիգոլային շատ մոտ կանգնած, առանց նրան նայելու, մի տեսակ թուլությամբ)**.— «Որսա երջանկությունը, որ դարձնում

Է Էակներին անքիծ: Երկինք ուր արևն է փայլատակում: Անճման  
և վայրի տոնակատարություն, իմ ցնորք անհո՛ւյս...

**ԿԱԼԻԳՈՒԼԱ (մեղմորեն).**— Կանգ առ: (**Սկիպիոնին**): Դու շատ երի-  
տասարդ ես, որ ճանաչես մահվան իսկական դասերը:

**ՍԿԻՊԻՈՆ (սևեռուն նայելով Կալիգուլային).**— Շատ երիտասարդ էի,  
որ կորցրեցի հորս:

**ԿԱԼԻԳՈՒԼԱ (կտրուկ շրջվելով).**— Դե մյուսների շարվեք: Կեղծ պոե-  
տը մեծ պատիժ է իմ ճաշակին: Մինչև օրս ես մտորում էի ձեզ  
պահել որպես դաշնակիցներ և պատկերացնում էի երբեմն, որ  
դուք կկազմեք ինձ պաշտպանող շարքերի թիկունքը: Բայց գուր է  
դա: Եվ ես ձեզ կձգեմ իմ թշնամիների մեջ: Պոետները իմ դեմ են:  
Կարող եմ ասել, որ դա վերջն է ամեն ինչի: Դուրս եկեք կարգով:  
Դուք շարասյունով կանցնեք իմ առջևից՝ լիզելով ձեր մոմատախ-  
տակները, որպեսզի ջնջեք հետքերը ձեր ամոթալի մտքերի:  
Զգաստ: Առաջ: (**Ռիթմիկ սուրց: Պոետները դուրս են գալիս աջ  
կողմով, լիզելով իրենց անձան մոմատախտակները: Խիստ ցած-  
րաձայն**): Դուրս եկեք բոլորդ: (**Դռան մոտ Շերեան կանգնեցնում  
է առաջին պատրիկին՝ ձեռքը դնելով նրա ուսին**):

**ՇԵՐԵԱ.**— Եկել է պահը: (**Երիտասարդ Սկիպիոնը, դռան մոտ լսելով  
այդ, մտորում է մի պահ և գնում է դեպի Կալիգուլան**):

**ԿԱԼԻԳՈՒԼԱ (չարությամբ).**— Չե՞ս կարող ինձ հանգիստ թողնել,  
ինչպես որ հայրդ:

#### ՏԵՍԱՐԱՆ ՏԱՍՆԵՐԵՔԵՐՈՐԳ

**ՍԿԻՊԻՈՆ.**— Գայո՛ւս, այս ամենն անօգուտ է: Գիտեմ, թե ինչ ես ընտ-  
րել:

**ԿԱԼԻԳՈՒԼԱ.**— Թող ինձ:

**ՍԿԻՊԻՈՆ.**— Քեզ կթողնեմ իսկապես, որովհետև զգում եմ, որ հաս-  
կացել եմ քեզ: Ոչ քեզ համար, և ոչ էլ ինձ, որ այդքան նման եմ  
քեզ, այլևս ելք չկա: Ես կմեկնեմ շատ հեռու, որպեսզի փնտրեմ  
այս ամենի պատճառները: (**Մի պահ նայում է Կալիգուլային:  
Խոսելով շեշտակի**): Մնաս բարով, սիրելի Գայո՛ւս: Երբ վերջ  
տրվի այս ամենին, մի մոռացիր, որ ես սիրել եմ քեզ: (**Նա դուրս  
է գալիս, Կալիգուլան նայում է նրան, մի պահ հուզվում, անտար-  
բեր ցնցելով ուները, մոլեգնած շրջվում է դեպի Կայետոնիան**):

**ԿԱՅԵՍՈՆԻԱ.**— Ի՞նչ ասաց:

ԿԱԼԻՓՈՒԼԱ.— Դա վեր է քո խելքից:

ԿԱՅԵՍՈՆԻԱ.— Ինչի՞ մասին ես մտածում:

ԿԱԼԻՓՈՒԼԱ.— Նրա մասին, քո մասին նույնպես: Մինչդեռ երկուսն էլ նույնն է էությունը:

ԿԱՅԵՍՈՆԻԱ.— Ի՞նչ է պատահել:

ԿԱԼԻՓՈՒԼԱ (նայելով նրան).— Սկիպիոնը մեկնեց: Այլևս ոչ մի բարեկամություն: Բայց դու, ես զարմանում եմ, ինչո՞ւ ես դեռևս աչստեղ...

ԿԱՅԵՍՈՆԻԱ.— Որովհետև հաճելի եմ քեզ:

ԿԱԼԻՓՈՒԼԱ.— Ոչ: Եթե քեզ սպանել տամ, թերևս, այն ժամանակ հասկանամ թե ինչու:

ԿԱՅԵՍՈՆԻԱ.— Դա կլիներ լուծում: Գործիր, ուրեմն: Բայց գոնե մի պահ չե՞ս կարող թույլ տալ քեզ ապրել ազատ:

ԿԱԼԻՓՈՒԼԱ.— Արդե՞ն մի քանի տարի է, որ ջանում եմ ազատ սալրել:

ԿԱՅԵՍՈՆԻԱ.— Ես այդ չէի ուզում ասել: Ինձ լավ հասկացիր: Այնքան լավ է ամբողջ սրտի մաքրությամբ ապրելն ու սիրելը:

ԿԱԼԻՓՈՒԼԱ.— Յուրաքանչյուր ոք ձեռք է բերում իր մաքրությունը, ինչպես որ կարող է: Ես այդ գտա՝ հետևելով կյանքի ընթացքին: Ի դեպ այս ամենը չի խանգարի, որ քեզ սպանել տամ: (Նա ծիծաղում է): Դա կլինի իմ կարիերայի բարձրակետը: (Կալիֆոլյան վեր է կենում և հայելին շրջում է իր կողմը: Նա քայլում է շրջանագծով, թևերը կախ, մարմինը անշարժ, կենդանու պես): Տարօրինակ է, երբ չեմ սպանում, ինձ մե՞նակ եմ զգում: Ապրողները չեն բավում աշխարհը բազմամարդ դարձնելու և ձանձրույթը վանելու համար: Երբ բոլորդ աչստեղ եք, ինձ զգալ եք տալիս մի անհատակ դատարկություն, որին անգոր եմ նայել: Լավ շրջապատված եմ միայն իմ սպանած գոհերով: (Նա կանգնում է՝ մի փոքր խոնարհված առաջ, կարծես մոռացել է Կայեսոնիային): Նրանք իրավացի են: Նրանք ինձ պես են: Սպասում են ինձ և կանխագգում: (Թափ է տալիս գլուխը): Երկար խոսելիք ունեմ սրա կամ նրա հետ, որը արցունքով ներում է հայցում ինձանից, և որի լեզուն կտրել տվեցի:

ԿԱՅԵՍՈՆԻԱ.— Արի: Պատկիր իմ կողքին: Դիր գլուխդ ծնկներին: (Կալիֆոլյան հնազանդվում է): Դու լավն ես: Ամեն ինչ լուր է:

ԿԱԼԻՓՈՒԼԱ.— Ամեն ինչ լուր է: Չափազանցում ես: Չե՞ս լսում երկաթի ձայնը: (Լսվում է երկաթի կամացուկ աղմուկ): Չե՞ս լը-

սում այս հազարավոր մանր աղմուկները, որոնք հայտնում են դարանակալ ատելության մասին: **(Աղմուկ):**

**ԿԱՅԵՍՈՆԻԱ.**— Ոչ ոք չի համարձակվի...

**ԿԱԼԻԳՈՒԼԱ.**— Կհամարձակվի՝ տգիտությունը:

**ԿԱՅԵՍՈՆԻԱ.**— Դա չի սպանում, այլ մարդկանց խելոք է դարձնում:

**ԿԱԼԻԳՈՒԼԱ.**— Բայց նա մահաբեր է, Կայեսոնիա՛: Մահաբեր է, երբ նա վիրավորված է զգում իրեն: Ինձ չեն սպանի նրանք, որոնց որդիները կամ հայրերը իմ գոհերն են եղել: Նրանք արդեն հասկացել են, նրանք ինձ հետ են և նույնիսկ իրենց բերաններում ունեն նույն համը: Բայց նրանց, որոնց ծաղրել եմ, ծանակել, անպաշտպան եմ նրանց սնափառության առջև:

**ԿԱՅԵՍՈՆԻԱ.**— Մենք քեզ կպաշտպանենք, դեռևս շատ ենք, քեզ սիրողները:

**ԿԱԼԻԳՈՒԼԱ.**— Գնալով դուք նվազում եք: Ես ինքս նպաստել եմ դրան: Հետո, ճիշտ խոսենք: Ոչ միայն տգիտությունն է իմ դեմ, այլ նաև հավատարմությունն ու քաջությունը այն մարդկանց, ովքեր ուզում են երջանիկ լինել:

**ԿԱՅԵՍՈՆԻԱ (նույն ձևով).**— Ոչ, նրանք քեզ չեն սպանի, այլապես երկինքը կլափի նրանց, մինչ քեզ դիպչելը:

**ԿԱԼԻԳՈՒԼԱ.**— Երկի՞նքը: Խեղճ կին, երկինք չկա: **(Նստում է):** Բայց ինչո՞ւ հանկարծ այսքան սեր, չէ՞ որ դա տարօրինակ է մեր փոխհարաբերություններում:

**ԿԱՅԵՍՈՆԻԱ (վեր է կենում և քայլում).**— Բավական չէ՞ տեսնել, թե ինչպես ես սպանում այլոց, հիմա էլ տեսնեմ ինչպես են սպանում քե՞զ: Բավական չէ՞, որ ընդունել եմ քեզ, անգութ և արյունաբեր, զգալով մարդասպանի քո հոտը, երբ պատկում ես ինձ հետ: Ամեն օր տեսնում եմ աստիճանական մահը այն մարդկայինի, որ կա քո մեջ: **(Կայեսոնիան շրջվում է նրա կողմը):** Ես ծեր եմ՝ տգեղանալու աստիճան, գիտեմ: Բայց քո հոգսը հոգիս դարձրել է այնպիսին, որ արդեն հոգ չէ, երբ այլևս ինձ չես սիրում: Ուզում եմ միայն քեզ տեսնել ապաքինված: Դու, որ դեռևս երեխա ես: Ամբողջ մի կյանք է քո առջև: Եվ ի՞նչ ես պահանջում ամբողջ մի կյանքից ավելի:

**ԿԱԼԻԳՈՒԼԱ (վեր է կենում և նայում Կայեսոնիային).**— Վաղուց արդեն դու այստեղ ես:

**ԿԱՅԵՍՈՆԻԱ.**— Ծիշտ է: Բայց դու ինձ կպահես, այդպես չէ՞:

**ԿԱԼԻԳՈՒԼԱ.**— Չգիտեմ: Գիտեմ միայն, թե ինչու ես այստեղ, ամբողջ այն գիշերների համար, երբ հանույքը սուր էր, քայց անու-

րախ, և այն ամենի համար, որ գիտես իմ մասին: **(Կայետունիան առնում է իր թևերի մեջ և ձեռքով մի փոքր ետ է զգում նրա գլուխը):** Ես քսանհին տարեկան եմ: Քիչ է: Բայց այժմ, երբ կյանքս թվում է ինձ այնքան երկար, այնքան ծանրացած ավարով և այնքան ավարտուն, դու մնում ես վերջին վկան: Եվ չեմ կարող ինձ հետ պահել մի ամոթալի խանդաղատանքից՝ հանդես մի ծեր կնոջ, որպիսին դառնալու ես շուտով:

**ԿԱՅԵՍՈՆԻԱ.**— Ասա, որ ինձ պահելու ես:

**ԿԱԼԻԳՈՒԼԱ.**— Չգիտեմ: Ես միայն գիտակցում եմ, և դա ամենասարսափելին է, որ այս ամոթալի խանդաղատանքը միակ մաքուր զգացմունքն է, որ մինչ օրս տվել է ինձ իմ կյանքը: **(Կայետունիան դուրս է պրծնում նրա ձեռքերից: Կալիգուլան հետևում է նրան: Կայետունիան մեջքով ուժգին փարվում է Կալիգուլային, վերջինս թևերով գրկում է նրան):** Արդյոք լավ չէ՞ր լինի, եթե վերջին վրկան անհետանար:

**ԿԱՅԵՍՈՆԻԱ.**— Էական չէ: Ես երջանիկ եմ այն ամենի համար, որ սասցիր ինձ: Բայց ինչո՞ւ չեմ կարող բաժանել այս երջանկությունը քեզ հետ:

**ԿԱԼԻԳՈՒԼԱ.**— Ո՞վ է ասում, որ ես երջանիկ չեմ:

**ԿԱՅԵՍՈՆԻԱ.**— Երջանկությունը առատաձեռն է, նա չի սնվում ապականությամբ:

**ԿԱԼԻԳՈՒԼԱ.**— Ուրեմն երջանկության երկու տեսակ կա: Եվ ես ընտրել եմ այս մեկը՝ մարդասպանինը, որովհետև ինձ երջանիկ եմ զգում: Կար ժամանակ, որ ես կարծում էի, թե հասել եմ տանջանքի ծայրակետին, բայց ոչ, դեռևս կարելի է գնալ ավելի հեռուն: Այս ծայրակետում կա մի ամուլ, բայց հիասքանչ երջանկություն: Նայիր ինձ: **(Կայետունիան շրջվում է դեպի Կալիգուլան):** Ծիծաղելի է, Կայետունիա՛, երբ մտածում եմ, որ տարիներ շարունակ, ողջ Հռոմը խուսափել է արտասանել Դրուսիլիայի անունը: Որովհետև Հռոմը տարիներ շարունակ խաբված է եղել: Սերն ինձ բավական չէ: Այդ եմ հասկացել ժամանակին, այդ եմ հասկանում այսօր՝ նայելով քեզ: Սիրելի մեկին, նշանակում է համաձայնել ծերանալ նրա հետ: Ես անկարող եմ այդ սիրուն: Ծեր Դրուսիլիան շատ ավելի վատ է, քան մեռածը: Կարծում եմ, թե մարդը տառապում է, երբ նրա սիրած էակը հանկարծ մեռնում է: Բայց նրա իսկական տառապանքը ավելի է սին, երբ նկատում ես, որ վիշտն էլ է տևական: Նույնիսկ տառապանքը գերծ է իմաստից: Տեսնո՞ւմ ես, ես չունեի արդարացում, նույնիսկ սիրո նշույլ, և ոչ էլ

թախծի դառնություն: Ես արդարացման պատճառ չունեմ: Բայց այսօր, ահա ինձ ավելի ազատ եմ զգում, քան տարիներ առաջ, զերծ հուշերից և պատրանքներից: **(Կրթոս ծիծաղում է):** Ես գիտեմ, որ ոչինչ հավերժ չէ: Պետք է դա գիտենալ: Պատմության մեջ մենք երկուսը, թե երեքն ենք, որ իսկապես ապրել ենք այդ փորձությունը, հայթայթելով հրեշավոր երջանկությունն այս: Կայետնիա՛, դու մինչև վերջ հետևեցիր մի շատ հազվագյուտ ողբերգության, ժամանակն է, որ քո համար իջնեն վարագույրները: **(Նա նորից անցնում է Կայետնիայի թիկունքը, նախաքազուկը փաթաթում է նրա վզին):**

**ԿԱՅԵՍՈՆԻԱ (սարսափով).**— Մի՞թե սա է երջանկությունը, այս զարհուրելի ազատությունը:

**ԿԱԼԻԳՈՒԼԱ (աստիճանաբար սեղմելով Կայետնիայի կոկորդը).**— Դա է, համոզված եղիր: Առանց որի ես կարող էի լինել գոհացած մի մարդ: Դրա շնորհիվ ես նվաճեցի մեծակյացի աստվածային պայծառաստեությունը: **(Հետզհետե ընկնելով ինքնամոռացության մեջ, խեղդում է Կայետնիային, վերջինս ձեռքերը մի փոքր առաջ պարզած բնավ չի դիմադրում: Կալիգուլան, խոնարհված նրա վրա, ասում է ականջին):** Ապրում եմ, սպանում եմ: Ես գործի եմ դնում կործանողի ամենի ուժը, որի մոտ արարչինը թվում է կապկություն: Հենց դա է երջանիկ լինելը: Հենց դա է երջանկությունը, այդ անտանելի ազատագրումը, այդ համընդհանուր արհամարհանքը, արյունը, շուրջս սիռված ատելությունը, մեկուսացումը, որն անհարիր է մարդուն, որն ամբողջ իր կյանքը տեսնում է աչքի առաջ: Սաստիկ հաճույքը անպատիժ մարդասպանի, այս անողորք բանականությունը, որը ճգնում է մարդկային կյանքեր **(ծիծաղում է),** որը քեզ ճգնում է, Կայետնիա, որ վերջապես անթերի դարձնի հավերժական մեկությունը, որ ցանկանում եմ ես:

**ԿԱՅԵՍՈՆԻԱ (թույլ մաքառելով).**— Գայո՛ւս:

**ԿԱԼԻԳՈՒԼԱ (խոր ինքնամոռացմամբ).**— Ո՛չ, ո՛չ մի քնքշանք: Պետք է վերջ տալ դրան, քանի որ ժամանակը սուղ է, ժամանակը սուղ է, սիրելի Կայետնիա՛: **(Կայետնիան խոռացնում է: Կալիգուլան նրան քարշ է տալիս դեպի անկողիներ, նետում այնտեղ: Նայելով Կայետնիային, մոլորված, կոպիտ ձայնով):** Դու նույնպես մեղավոր էիր: Բայց սպանելը լուծում չէ:



**Կալիգուլան պատվելով, խոժոռ գնում է դեպի հայելին:**

**ԿԱԼԻԳՈՒԼԱ.**— Կալիգուլա՛: Դու նույնպես, դու նույնպես մեղավոր ես: Արդյոք նույնը չէ՞, մի փոքր քիչ, մի փոքր շատ: Բայց ով կհամարձակվի այս անդատավոր աշխարհում ինձ դատապարտել, երբ ոչ ոք անմեղ չէ: **(Խոր հուսահատությամբ գրկելով հայելին):** Տեսար, Հելիկոնը չեկավ: Ձեմ տիրելու լուսնին: Բայց ինչ դառն է իրավացի լինել և ստիպված գնալ դեպի վախճան, որովհետև ես վախենում եմ վախճանից: Ձեռքերի շաշյուն: Անմեղությունն է պատրաստում իր հաղթանակը: Երանի նրանց փոխարեն լինեի: Ես վախենում եմ: Ինչ նողկանք: Այլոց արհամարհելուց հետո, հոգունդ զգալ միևնույն թուլությունը: Բայց դա նշանակություն չունի: Վախն էլ անցողիկ է: Ծուտով կօտնեն ան անհատակ դատարկությունը, ուր հոգին հանդարտվում է: **(Նա մի փոքր ետ է գնում և վերադառնում է հայելու մոտ: Նա թվում է ավելի խաղաղ: Սկսում է նորից խոսել, բայց ավելի կենտրոնացված և ցածր ձայնով):** Ամեն ինչ այնքան բարդ է թվում: Մինչդեռ ամեն ինչ այնքան պարզունակ է: Եթե ես տիրեի լուսնին, եթե սերը բավական լիներ, ամեն ինչ կփոխվեր: Բայց որտե՞ղ հագեցնել ծարալն այս: Բայց ո՞ր սիրտը, ո՞ր աստվածը ինձ համար կարող է ունենալ լճի խորություն: **(Ծնկաչոք, լաց լինելով):** Չկա ոչինչ այս աշխարհում, և ոչ էլ մյուսում, որը հարմար լիներ ինձ: Մինչդեռ ես գիտեմ, դու նույնպես **(նա մեկնում է ձեռքերը դեպի հայելին, լաց լինելով),** որ դրա համար հարկավոր էր միայն, որ անհնարինը հնարին լիներ: Անհնա՛րը: Ես այս փնտրել եմ աշխարհի բոլոր ծայրերում, իմ մեջ, իմ սահմաններում: Ես պարզեցի ձեռքերս **(նշալով),** պարզում եմ ձեռքերս և քեզ եմ հանդիպում, միշտ քեզ, ճիշտ իմ դիմաց և քո հանդեպ լցված եմ ատելությամբ: Ձեմ ընտրել նանապարհն այն, որն անհրաժեշտ էր և ոչնչի չեմ հասնում: Իմ ընտրած ազատությունը լավը չէ: Հելիկո՛ն, Հելիկո՛ն, ոչինչ, նորից ոչինչ: Օ՛, ինչ ծանր է գիշերն այս: Հելիկոնը չի վերադառնում: Մենք հավերժ մեղավոր կլինենք: Ծանր է գիշերն այս, ինչպես վիշտը մարդկային: **(Կուլխներում բռնում են զենքերի շաշյուն և շշուկներ):**

**ՀԵԼԻԿՈՆ (Հելիկոնը բեմի խորքից թափով ներս է խուժում).**— Պաշտպանվիր, Գայո՛ւս, պաշտպանվիր: **(Մի անտեսանելի ձեռք դաշունահարում է Հելիկոնին: Կալիգուլան վեր է կենում, վերցնում է**

մի ցածր աթոռ և սուչելով մոտենում է հայելուն: Ջննում է իրեն հայելու մեջ, ասես թե մի քայլ է աւելում առաջ և հայելու մեջ արտացոլված իր պատկերի վրա նետում է աթոռը, ամբողջ ուժով ռոնալով:

ԿԱԼԻԳՈՒԼԱ.— Թողնում եմ պատմությանը, Կալիգուլա՛, պատմությանը: (Հայելին փշրվում է և այդ պահին բոլոր մուտքերից ներս են խուժում զինված հայատակները: Կալիգուլան կանգնում է նրանց դեմ հանդիման, խելագարի ծիծաղով: Ծեր պատրիկը հարվածում է նրան թիկունքից, իսկ Ծերեան դեմքին: Կալիգուլայի ծիծաղը փոխվում է հեծկլտոցի: Բոլորը հարվածում են: Մի վերջին հեծկլտոց: Կալիգուլան, ծիծաղելով և խոխուալով ռոնում է): Ես դեռ կենդանի՛ եմ:

Վ ա թ ա գ ո լ յ Ր

# ԷՒՈՒԱՐԴ ՕԼԲԻ

## ԻՆՉ ԷՐ ՊԱՏԱՀԵԼ ԳԱԶԱՆԱՆՈՑՈՒՄ

(պիես մեկ արարվածով)

Գ Ո Ր Ծ Ո Ղ Ա Ն Ձ Ի Ն Ք

Փ Ի Թ Ե Ր

Քառասունն անց է, ոչ գեր է, ոչ նիհար, ոչ գեղեցիկ է, ոչ էլ տղեղ: Թվիդե կոտորումով է և եզրաշրջանակ ակնոցով: Ծխամորճ է ծխում: Թեև միջին տարիքին մոտ մարդ է, բայց հագնվածքն ու շարժումնը ավելի շուտ պատանու են հիշեցնում:

Ջ Ե Ր Ի

Քառասունին մոտ է, հագնված է ավելի շատ անփույթ, քան թե սղքատիկ: Մի ժամանակ սլացիկ ու մկանուտ նրա մարմինը սկսել է ճարպակալել: Նրան գեղեցիկ չեն կոչի. բայց երբեմնի գրավության հետքերն ակնհայտ են: Նրա ծանր քայլվածքը, նրբագեղությունից զուրկ, հույ շարժումնը ցոփակեցության նշաններ չեն. ուշադիր նայելու դեպքում պարզ կդառնա, որ նա անսահմանորեն հոգնած մարդ է:

Գործողության ժամանակը՝ մեր օրերը:

Բեմում՝ Նյու Յորքի Սենթրալ պարկի՝ մի անկյունը: Ամառային մի կիրակի, կեսօրից հետո: Երկու նստարան, մեկը՝ բեմի աջ, մյուսը ձախ կողմում: Նստարանների ետևը սաղարթաառուցիկ էր, ծառեր, երկինքը: Վարագույրը բարձրացնելիս Փիթերը, աջակողմյան նստարանին նստած, գիրք է կարդում: Նա ընդհատում է ընթերցանությունը, սրբում ակնոցը, ապա վերստին սկսում կարդալ: Զախից մտնում է Ջերին:

ՋԵՐԻ.— Ես գազանանոց էի գնացել: (Փիթերն ուշադրություն չի դարձնում): Ասում եմ՝ ես գազանանոց էի գնացել: (Բարձրաձայն):

ՊԱՐՈ՛Ն, ԵՍ ԳԱԶԱՆԱՆՈՑ ԷԻ ԳՆԱՑԵԼ:

ՓԻԹԵՐ (հաչացքը գրքից կտրելով).— Հը՞: Ինչպե՞ս: Ներեցեք, դուք ի՞նչ եք դիմում:

ՋԵՐԻ.— Ես գազանանոց էի գնացել, հետո քայլելով հասա այստեղ: Դուք չե՞ք ասի, ես դեպի հյուսիս եմ եկել:

ՓԻԹԵՐ (տարակուսած).— Հյուսիս՞: Կարծես թե... այո: Սպասեք մըտածեմ...

ՋԵՐԻ (հանդիսարանը մառնացույց անելով).— Սա Հիևգերրոդ պողոտա՞ն է:

ՓԻԹԵՐ.— Սա՞: Այո... Իհարկե:

ՋԵՐԻ.— Իսկ սրան հատող փողոցը ո՞րն է. այ այն մեկը՝ աջ կողմինը:

ՓԻԹԵՐ.— Աջ կողմինը: Օ, դա Յոթանասունչորսերրորդ փողոցն է:

ՋԵՐԻ.— Իսկ գազանանոցը Վաթսունհինգերորդի մոտերքում է. ուրեմն ես դեպի հյուսիս եմ եկել:

ՓԻԹԵՐ (անհամբերությամբ սպասում է, թե երբ է անցնելու իր ընթերցանությանը).— Այո, պետք է որ այդպես լինի:

ՋԵՐԻ.— Հին-հին օրերի երանելի հյուսիս:

ՓԻԹԵՐ (գրեթե մեքենաբար).— Հա՛-հա՛:

ՋԵՐԻ (կարճ դադարից հետո).— Այսինքն՝ ես չեմ ասում, թե ճիշտ հյուսիս եմ եկել:

ՓԻԹԵՐ.— Ես... Դե իհարկե, ոչ թե ճիշտ հյուսիս եք եկել, այլ այսպես ասած... հյուսիսային ուղղությամբ:

Ջերին հետևում է, թե ինչպես է Փիթերը լցնում ծխամորճը՝ ջանալով գրուցակցից գլուխն ազատել:

ՋԵՐԻ.— Ի՞նչ է, բարեկամ, ոգում եք թոքերի քաղցկե՞ղ ստանալ:

Փիթերը սրտնեղությամբ հաչացքը նրան է հառում, բայց հետո ժպտում:

ՓԻԹԵՐ.— Ոչ, սը՛ր: Սրանից թոքերի քաղցկեղ չեմ ստանում:

ՋԼՐԻ.— Ծիշտ է, սը՛ր: Ավելի շուտ բերանի քաղցկեղ կատանաք և ստիպված կլինեք արհեստական բան դնել, ոնց որ Ֆրէյդի՛ն էին դրել ծնոտի կեսը հեռացնելուց հետո: Ինչպե՛ս է դա կոչվում:

ՓԻԹԵՐ (դժկամորեն).— Պրոթե՛զ: (Վառում է ծխամորճը):

ՋԵՐԻ.— Այ հենց դա՛: Պրոթեզ: Դուք կրթված մարդ եք, չէ՞: Բժի՛շկ եք:

ՓԻԹԵՐ.— Ոչ, ոչ, ինչ եք ասում: Ուղղակի ինչ-որ տեղ կարդացել եմ այդ մասին: Կարծեմ «Թայմ» հանդեսում<sup>2</sup>: (Վերառին սկսում է կարդալ):

ՋԵՐԻ.— Ինչ խոսք, «Թայմ» հանդեսը բթամիտների բանը չէ:

ՓԻԹԵՐ.— Այո, ինչ խոսք:

ՋԵՐԻ (դադարից հետո).— Լսեք, բարեկամ, լավ է, չէ՞, որ Հիմեերորդ պողոտան այնտեղ է:

ՓԻԹԵՐ (մտացրիվ).— Այո:

ՋԵՐԻ.— Տանել չեմ կարող զբոսայգու արևմտյան մասը:

ՓԻԹԵՐ.— Հա՛: (Փոքր-ինչ զգուշանալով, բայց հեռաքրքրասիրությամբ): Ինչո՞ւ:

ՋԵՐԻ (անփութորեն).— Ինքս էլ չգիտեմ:

ՓԻԹԵՐ.— Հա՛: (Շարունակում է կարդալ):

Մի բանի վայրկյան Ջերին լռելյայն Փիթերին է նայում, մինչև որ սա նեղվելով՝ բարձրացնում է հայացքը:

ՋԵՐԻ.— Դուք չե՞ք ուզում գրուցել:

ՓԻԹԵՐ (սկսհայտ դժկամությամբ).— Դե... ոչ... ինչո՞ւ չէ:

ՋԵՐԻ.— Ոչ, չեք ուզում, տեսնում եմ, որ չեք ուզում:

Փիթերը ժպտում է, գիրքը ցած դնում, հանգած ծխամորճը հանում է բերանից և դնում գրպանը:

ՓԻԹԵՐ.— Ձե, իսկապես. ի՞նչ կա որ, կարելի է:

ՋԵՐԻ.— Ոչ, դուք չեք ուզում:

ՓԻԹԵՐ (ի վերջո վճռաբար).— Դե ոչ: Ես բոլորովին էլ դեմ չեմ, ճիշտ եմ ասում:

ՋԵՐԻ.— Ըմմմ... Այսօր լավ եղանակ է:

Փիթերն առանց որևէ անհրաժեշտության աչքերը երկնքին է հանում:

ՓԻԹԵՐ.— Այո: Շատ լավ եղանակ է, հրաշալի:

ՋԵՐԻ.— Ես գազանանոց էի գնացել:

ՓԻԹԵՐ.— Այո, դուք կարծեմ ասացիք... չէ՞...

ՋԵՐԻ.— Վաղն այդ մասին կկարդաք լրագրերում, եթե երկկոյան հեռուստացույցով չտեսնեք: Դուք երևի հեռուստացույց ունեք, չէ՞:

ՓԻԹԵՐ.— Մնի՛, փոխարեն երկուսը. երեխաների համար՝ առանձին:  
 ՋԵՐԻ.— Դուք ամուսնացա՞՞ծ եք:  
 ՓԻԹԵՐ (գոհունակությամբ).— Դե իհա՛րկե:  
 ՋԵՐԻ.— Փառք աստծու, որ դա պարտադիր օրենք չէ:  
 ՓԻԹԵՐ.— Ոչ... իհարկե, պարտադիր չէ:  
 ՋԵՐԻ.— Ուրեմն կին ունեք:  
 ՓԻԹԵՐ (չիմանալով, թե ինչպես շարունակի խոսակցությունը).— Այո:  
 ՋԵՐԻ.— Պիտի որ երեխաներ էլ ունենաք:  
 ՓԻԹԵՐ.— Այո, երկուսը:  
 ՋԵՐԻ.— Տղանե՞ր են:  
 ՓԻԹԵՐ.— Ոչ, աղջիկներ... երկուսն էլ աղջիկ են:  
 ՋԵՐԻ.— Բայց դուք կուզենայիք տղաներ ունենալ:  
 ՓԻԹԵՐ.— Դե... բնականաբար, ամեն մարդ էլ ուզում է որդի ունե-  
 նալ, բայց...  
 ՋԵՐԻ (թեթև հեգնանքով).— Բայց պատրանքներն այդպե՛ս են փշուր-  
 փշուր լինում:  
 ՓԻԹԵՐ (սրտնեղելով).— Ես բոլորովին էլ այդ չէի ուզում ասել:  
 ՋԵՐԻ.— Դուք այլևս երեխաներ չեք ունենա, չէ՞:  
 ՓԻԹԵՐ (փոքր-ինչ մտախոհ).— Ոչ: Այլևս ոչ: (Սթափվելով, սրտող-  
 դած): Ինչո՞ւ եք այդպես ասում: Ինչի՞ց եզրակացրիք:  
 ՋԵՐԻ.— Թերևս, ձեր նստելու, ավելի շուտ ոտքը ոտքին գցելու ձևից:  
 Ձեր ձայնի մեջ էլ ինչ-որ երանգ կա: Կամ երևի պարզապես կոա-  
 հեցի: Ձեր կինը չի ուզում, հա՞:  
 ՓԻԹԵՐ (զայրագին).— Ձեր գո՛րծը չէ: (Դադար): Հասկացա՞ք: (Ձե-  
 րին գլխով է անում: Փիթերը խաղաղվում է): Ինչ արած, այդպես  
 է: Մենք այլևս երեխաներ չենք ունենա:  
 ՋԵՐԻ (մեղմորեն).— Պատրանքներն այդպես են փշուր-փշուր լինում:  
 ՓԻԹԵՐ (ներողամտորեն).— Այո... ճիշտ եք ասում:  
 ՋԵՐԻ.— Է՛, ուրիշ ի՞նչ կասեք:  
 ՓԻԹԵՐ.— Դուք այդ ի՞նչ էիք ասում զազանանոցի մասին... որ ես  
 կկարդամ այդ մասին կամ կտեսնեմ...  
 ՋԵՐԻ.— Քիչ հետո կպատմեմ: Դուք հո չե՞ք բարկանում, որ ես շա-  
 րունակ հարցեր եմ տալիս:  
 ՓԻԹԵՐ.— Ոչ, ինչ եք ասում:  
 ՋԵՐԻ.— Ուզո՞ւմ եք ասեմ, թե ինչու եմ ձեզ այսպես հարցուփորձ ա-  
 նում: Ես այնքան հազվադեպ եմ մարդկանց հետ խոսելու առիթ  
 ունենում: Եղած-չեղածն այն է, որ մեկ-մեկ ասում եմ՝ մի բաժակ  
 զարեջուր տվեք, կամ՝ որտե՞ղ է գուգարանը, կամ՝ քանիսի՞ն է

սեանսը սկսվում, կամ՝ ձեռքերդ քեզ քաշիր, ախպերս,— մի խոսքով, նման բաներ... ինքների եք հասկանում:

ՓԻԹԵՐ.— Ծիշուն ասած, ես չեմ...

ՋԵՐԻ.— Բայց երբեմն ուզում ես որևէ մեկի հետ խոսքի բռնվել, ի սրտե գրուցել, ուզում ես ճանաչել այդ մարդուն, ամեն ինչ իմանալ նրա մասին:

ՓԻԹԵՐ (անհամարձակ ծիծաղով, դեռևս փոքր-ինչ նեղվելով).— Ուրեմն այսօրվա ձեր փորձաճազարը ե՞ս եմ:

ՋԵՐԻ.— Այսպիսի արևաշող կիրակի օրը գրուցելուց հաճելի բան կա՞, այն էլ մի վայելուչ ընտանիքատիրոջ հետ, որը երկու աղջիկ ունի և... ըը... մի շուն: (Փիթերը տարուբերում է գլուխը): Մե՞կը չէ: Երկու՞սն են: (Փիթերը տարուբերում է գլուխը): Հը՞մ: Չլինի՞ ընդհանրապես չունեք: (Փիթերը տխուր տարուբերում է գլուխը): Է՛, դա արդեն բանի նման չէ: Բայց դուք կենդանիներ սիրող մարդու տպավորություն եք թողնում: Երևի կատունե՞ր եք պահում: (Փիթերը վհատորեն գլխով է անում): Ուրեմն կատուներ եք պահում: Բայց դա դժվար թե ձեր սրտով լինի: Չէ՞, սը՛ր: Ձեր կնոջ և աղջիկների՞ ուզածն է: (Փիթերը գլխով է անում): Հետաքրքիր է, ուրիշ է՞լ ինչ ունեք: (Փիթերը նեղվելով կոկորդն է մաքրում):

ՓԻԹԵՐ.— Երկու... երկու թութակ էլ: Ամեն... հըմ... ամեն աղջկաս՝ մեկը:

ՋԵՐԻ.— Ուրեմն թռչուններ էլ ունեք:

ՓԻԹԵՐ.— Աղջիկներս նրանց վանդակում են պահում, իրենց անշատեկյակում:

ՋԵՐԻ.— Նրանք չե՞ն հիվանդանում: Թռչուններն այսինքն:

ՓԻԹԵՐ.— Չեմ կարծում:

ՋԵՐԻ.— Ծատ ափսոս: Թե չէ կարող էիք թութակներին վանդակից բաց թողնել, կատուներն էլ նրանց կուտեին ու միգուցե սատկեին: (Փիթերը մի պահ շվարած նրան է նայում, ապա ծիծաղում): Հետո՞, է՞լ ինչ կասեք: Դուք ի՞նչ եք աշխատում, որ կարողանում եք ձեր այդ բազմանդամ գերդաստանը պահել:

ՓԻԹԵՐ.— Ես... ը-ը... վարչական աշխատող եմ մի... մի փոքրիկ հրատարակչությունում:

ՋԵՐԻ.— Ի՞նչ եք ասում: Լա՛վ է, շա՛տ լավ: Եվ ինչքա՞ն եք վաստակում:

ՓԻԹԵՐ (դեռևս զվարթորեն).— Բայց ավար լսեք...

ՋԵՐԻ.— Օ՛հ, եկեք չշեղվենք: Ծարունակեք, խնդրեմ:

ՓԻԹԵՐ.— Դե ինչ ասեմ, ես ամսական հազար հինգ հարյուր դոլլար

եմ վաստակում, բայց երբեք քառասուն դոլլարից ավելի հետս չեմ վերցնում... այնպես որ եթե դուք... եթե դուք գրպաններս սրբելու մտադրություն ունեք... հա՛-հա՛-հա՛...

**ՋԵՐԻ (Արա խոսքերը շլտելու տալով).—** Որտե՞ղ եք ապրում: **(Փիթերը տատանվում է ասել):** Լսեք, ես ոչ ձեզ թալանելու մտադրություն ունեմ, ոչ էլ որոշել եմ ձեր թույթակներին, կատուներին կամ աղջիկներին առևանգել:

**ՓԻԹԵՐ (շատ բարձր).—** Ես ապրում եմ Լեքսինգթոնի պողոտայի և Երբորդ պողոտայի միջև՝ Յոթանասունչորսերորդ փողոցում:

**ՋԵՐԻ.—** Այ տեսնո՞ւմ եք, այնքան էլ դժվար չէր ասել:

**ՓԻԹԵՐ.—** Չէ, ես ուղղակի... ը-ը... բանն այն է, որ դուք ոչ թե գրուցու եք ինձ հետ, այլ կարծես հարցաքննու՞մ: Իսկ ես... ես ընդհանրապես... ը-ը... քշախոս մարդ եմ: Դուք ինչո՞ւ եք ոտքի վրա մնացել:

**ՋԵՐԻ.—** Մի քիչ քայլեմ, հետո կնստեմ: **(Ինչ-որ բան մտաբերելով):**  
Եվ այդ պահին դու կտեսնես Արա դեմքի արտահայտությունը:

**ՓԻԹԵՐ.—** Ի՞նչ: Ո՞ւմ դեմքի: Լսեք, խոսքը էլի գազանանոցի մասի՞ն է:

**ՋԵՐԻ (մտազբաղ).—** Ինչի մասի՞ն:

**ՓԻԹԵՐ.—** Գազանանոցի, գազանանոցի: Դուք էլ գազանանոցի մասի՞ն եք խոսում:

**ՋԵՐԻ.—** Ի՞նչ գազանանոց:

**ՓԻԹԵՐ.—** Դուք արդեն որերորդ անգամ գազանանոցի մասին եք խոսում:

**ՋԵՐԻ (դեռևս մտազբաղ, բայց հանկարծ սթափվելով).—** Գազանանոցի՞: Այս, հա՛, գազանանոցի: Այստեղ գալուցս առաջ այնտեղ էի: Արդեն ասել եմ ձեզ: Ասացեք, ի՞նչ տարբերություն կա միջինից բարձր-միջին դասակարգի և միջինից ցածր-միջին դասակարգի միջև:

**ՓԻԹԵՐ.—** Այ սիրելի՛ս, ախր ես...

**ՋԵՐԻ.—** Առանց «այ սիրելիս»-ի հնարավոր չէ՞:

**ՓԻԹԵՐ (վշտացած).—** Տնավարի՞ ստացվեց: Ըստ երևույթին, ատ: Կներեք: Բայց հասկանո՞ւմ եք, դասակարգերի մասին ձեր հարցը ինձ շփոթության մատնեց:

**ՋԵՐԻ.—** Դուք ի՞նչ է, շփոթվելիս սկսում եք տնավարի՞ խոսել:

**ՓԻԹԵՐ.—** Ես... ես երբեմն չեմ կարողանում մտքերս ձևակերպել: **(Փորձում է հեզուկ ինքն իրեն):** Ես ախր հրատարակիչ եմ և ոչ թե գրող:



ՋԵՐԻ (քսմիծաղ է տալիս, բայց ոչ կատակի վրա).— Դե լավ, լավ:

Ծիշոն ասած, այդ ես եմ ձեզ հետ տնավարի վարվում:

ՓԻԹԵՐ.— Ոչ, ոչ, ինչ եք ասում:

Այս պահից սկսած՝ Ջերին գործում է իր ծածուկ մտադրությունն ի կատար ածելու հարանուն վճռականությամբ: Միայն թե Ջերիի դերակատարը պետք է այնպիսի խաղի տեմայ մշակի, որ հետագա երկարաշունչ մեղախոսությունը շան մասին դառնա կերպարի ներքին լարվածության բարձրակետը:

ՋԵՐԻ.— Դե լավ, անցած լինի: Ովքե՞ր են ձեր սիրած գրողները: Բողլերն<sup>3</sup> ու Մարքե՞նդ<sup>4</sup>:

ՓԻԹԵՐ (զգուշավոր եղանակով).— Դե ինչ ասեմ, ես շատ գրողներ եմ սիրում: Ես լայն... այսպես ասած, համապարփակ հետաքրքրություններ ունեմ: Այդ երկուսն էլ, իհարկե, հոյակապ գրողներ են, ամեն մեկը՝ յուրովի: (Ոգևորվելով): Բողլերը, ինչ խոսք... ը-ը ... շատ ավելի մեծ է, բայց մյուս կողմից՝ Մարքենդն էլ իր տեղն ունի... մեր... ը-ը... ազգային...

ՋԵՐԻ.— Դե լավ, հա՛, վերջացրե՛ք:

ՓԻԹԵՐ.— Ես... ներեցեք ինձ:

ՋԵՐԻ.— Գիտեք, ինչ եմ արել այսօր գազանանոց գնալուց առաջ: Ոտքով կտրել եմ ամբողջ Հինգերորդ պողոտան, Վաշինգթոնի հրապարակից<sup>5</sup> սկսած՝ ամբողջ ճանապարհը ոտքով եմ անցել:

ՓԻԹԵՐ (Ջերիի ասածը նրան օգնում է ինչ-որ բան կռահել).— Հա՛, դուք Գրինիչ Վիլիջո՞ւմ<sup>6</sup> եք ապրում:

ՋԵՐԻ.— Ձե, ինչ եք ասում: Ես մետրոյով իջա մինչև Վիլիջ, ոտպեսպի Հինգերորդ պողոտայով բարձրանամ գազանանոց: Մարդ երբեմն պիտի մի մեծ, շրջանցիկ պտույտ գործի ամենակարճ և ճիշտ ճանապարհով վերադառնալու համար: Դա ուղղակի անհրաժեշտ բան է:

ՓԻԹԵՐ (զրեթե նեղացած).— Է՛, ես էլ կարծեցի, թե Գրինիչ Վիլիջում եք ապրում:

ՋԵՐԻ.— Ձեր ուզածն ի՞նչ է: Ամեն ինչ աշխարհի երեսին հեշտ ու հասկանալի՞ դարձնել: Կարգուկանո՞ն մտցնել: Պարզել, թե ով իրենից ի՞նչ է ներկայացնում: Դե ինչ կա որ, կարող եմ պատմել: Ես ապրում եմ Ուեսթ Սայդի<sup>7</sup> ծայրամասում՝ Կոլումբուսի պողոտայի<sup>8</sup> և Սենթրալ պարկի արևմտյան հատվածի միջև, մի հին, չորսհարկանի շենքում, որտեղ վարձու սենյակներ են տրվում: Վերջին հարկում եմ ապրում, լուսամուտս հետնաբակի կողմից է, դեպի արևմուտք է բացվում: Իմ սենյակն այնքան պատիկ է՝ ծիծաղից

կթուլանաք, իսկ մի պատի փոխարեն տախտակե միջնորմ է: Այդ միջնորմը իմ խուցը բաժանում է մյուս մկան պուճախից. երևի ժամանակին այս երկուսի փոխարեն մի սենյակ է եղել՝ ոչ շատ մեծ, իհարկե, բայց քիչ թե շատ տանելի: Միջնորմի մյուս կողմում մի սևամորթ արվամոլ է ապրում, որը միշտ իր դուռը կրնկի վրա բաց է թողնում. դե, մի խոսքով, ոչ միշտ, բայց ԱՄԵՆ ԱՆԳԱՄ, հենց որ հոնքերը հանելիս է լինում, մի բան, որ նա բուրդայակահի խորասուզվածությամբ է անում: Նա նոսր ու փտած ատամներ ունի, նոսրավուն գործվածքի էլ կիմոնո է հագնում և այդ կիմոնոն հագին միջանցքով շուտ-շուտ գուգարան գնում-գալիս: Ուզում եմ ասել, որ մի գլուխ գուգարան է ներսուդուրս անում: Նա ինձ երբեք չի անհանգստացնում և երբեք ոչ մեկին իր սենյակ չի բերում: Երա արածն ընդամենն այն է, որ հոնքերն է հանում, կիմոնո հագնում և գուգարան մտնում-դուրս գալիս: Մեր հարկի մյուս երկու սենյակները, որոնց լուսամուտները փողոցի կողմից են, կարծես թե ավելի մեծ են, բայց երևի շատ քիչ: Մեկում պուրտոտիկացիների ընտանիք է ապրում՝ ամուսինը, կինը ու մի տուն լիքը երեխա. չգիտեմ էլ, թե քանիսն են: Այնտեղից անընդհատ աղմուկ-աղաղակ է լսվում: Մյուս սենյակում էլ է մարդ ապրում, բայց չգիտեմ ով: Երբեք աչքովս չի ընկել: Երբեք: Ոչ մի անգամ:

**ՓԻԹԵՐ (տարակուսանքով).—** Դուք ինչո՞ւ... ինչո՞ւ եք այնտեղ ապրում:

**ՋԵՐԻ (դարձյալ մտազբաղ).—** Չգիտեմ:

**ՓԻԹԵՐ.—** Որքան հասկացա, դա անդուր տեղ է... այդ տունը, որտեղ որ ապրում եք:

**ՋԵՐԻ.—** Դե իհարկե, դա Յոթանասունչորսերորդ փողոցի բնակարաններից չէ: Բայց մյուս կողմից էլ՝ ես կին, երկու աղջիկ, երկու կատու և երկու թուրակ չունեմ: Իմ ունեցած-չունեցածն ի՞նչ է. սափրվելու պարագաներ. մի-երկու ձեռք շոր. էլեկտրասալիկ, որը տանտիրուհին արգելում է օգտագործել. պահածոյի բացիչ՝ պրտտան ունեցողներից, տեսած կլիներ. դանակ. երկու պատառաքաղ. երկու գդալ, մեկը՝ ճաշի, մյուսը՝ թեյի. երեք ափսե. մի գուլաթ իր պնակով. ջրի բաժակ. երկու դատարկ շրջանակ. ութ-իկը գիրք. մի կապուկ պոռնոգրաֆիկ խաղաթղթեր. մի խարխուլ գրամեքենա, որը մեծատներից բացի ոչինչ չի տպում և առանց փակի մի զարդատուփ, որի մեջ ի՞նչ եք կարծում, ի՞նչ է... Քարե՛ր: Ծովաքարեր, որ դեռ երեխա ժամանակս եմ ափից հավաքել: Դրանց տակ... Ամակներ են... «Խնդրում եմ»-ներով լեցուն

ճամակներ... «Խնդրում եմ այսպես ու այնպես արա» կամ՝ «Խրնդրում եմ վերջապես այս արա ու այն»... «Երբ»-երով լեփլեցուն ճամակներ էլ կան. «Ե՞րբ ես ճամակ գրելու», «Ե՞րբ ես գալու, ե՞րբ»... Այս ճամակները ավելի ուշ են գրված: (**Դադար: Փիթերը խոժոռադեմ զննում է կոշիկները**):

ՓԻԹԵՐ.— Իսկ այդ երկու դատարկ շրջանա՞կը...

ՋԵՐԻ.— Ինձ թվում է առանց բացատրելու էլ ամեն ինչ պարզ է: Ես ոչ մեկը չունեմ, որ լուսանկարը շրջանակի մեջ դնեմ:

ՓԻԹԵՐ.— Բայց ձեր ծնողները... միգուցե ինչ-որ կին...

ՋԵՐԻ.— Դուք շատ սրտառույշ մարդ եք և իրոք որ նախանձելի միամըտությամբ եք օժտված: Իմ սիրելի մայրիկն ու թանկագին հայրիկը հոգոց հանգուցելոց են եղել... պա՞րզ է: Ազնիվ խոսք, սիրտս կտոր-կտոր է լինում նրանց հիշելիս... Իրենց վողկիլի եզրափակիչ մասը նրանք հիմա հանդերձյալ աշխարհում են խաղում, այնպես որ ոչ մի կերպ գլուխս չի մտնում, թե ես ինչու պիտի շրջանակի մեջ դրված նրանց կոկված-տղալված դեմքերին նայեմ: Իմ սիրելի մայրիկը լքեց թանկագին հայրիկիս, երբ ես տասը տարեկան էի: Այսպես ասած՝ ամուսնական առագաստը ոտնատակ տալով՝ նա պտույտի ելավ մեր հարավային նահանգներով մեկ... Այդ գրոսանքը կլոր տարի տևեց... Սիրելի մայրիկի ամենահաստատուն սերը ուրիշ, բազում ուրիշ սերերի կողքին, մաքուր վիսկին էր: Համենայն դեպս, թանկագին հայրիկն ինձ այդպես ասաց հարավ մեկնելուց և վերադառնալուց հետո... հետը բերելով նրա դիակը: Ծննդյան տոնից հետո, Նոր տարվա նախօրյակին, մենք լուր էինք ստացել, որ սիրելի մայրիկը հոգին ավանդել է Ալաբամայի<sup>9</sup> ինչ-որ աղբանոցում: Հենց որ հոգին աստծուն էր տվել... պարզվել էր, որ նա ոչ ոքի էլ բնավ պետք չէ: Իբր նրա եղածն ի՞նչ էր: Մի սովորական հարբեցող... հյուսիսի չգիտես որ ջհաննամից եկած շրջմուլիկ: Ինչևէ, թանկագին հայրիկը երկու շաբաթ շարունակ Նոր տարի էր տոնում, իսկ վերջում էլ լույ հարբածությունից իրեն կորցրած՝ քաղաքային ավտոբուսի տակ ընկավ, և մեր ընտանիքի իզույթոզն էլ չմնաց: Բայց բանը դրանով չվերջացավ: Որտեղից-որտեղ մայրիկի քույրը հայտնվեց: Նա ոչ ցուփության էր անձնատուր լինում, ոչ էլ խմիչքի մեջ սիտիանք փնտրում: Ես տեղափոխվեցի նրա մոտ ապրելու, բայց նրան մի տեսակ աղոտ եմ հիշում, միայն մի բան է հիշողությանս մեջ մեխվել, որ նա ամեն ինչում խստապահ էր. քնելիս լիներ, ուտելիս, աշխատելիս, թե աղոթելիս: Դպրոցն ավարտելու օրը նա հան-

կարծամահ եղալ իր, և կարելի է ասել, իմ բնակարանի սանդուղ-  
քին: Իսկական անեկդոտ է, չէ՞:

**ՓԻԹԵՐ.**— Բայց ի սե՛ր ասածո...

**ՋԵՐԻ.**— Ի սեր ասածո՝ ի՞նչ: Ախր այս ամենն այնքան վաղուց է ան-  
ցել-գնացել, որ էլ ոչ մի զգացում իմ մեջ չի արթնացնում: Հիմա  
հասկանալի՞ է, թե ինչու իմ սիրելի մայրիկին ու թանկագին հայ-  
րիկին շրջանակի մեջ չեմ դնում: Ինչպե՞ս է ձեր անունը:

**ՓԻԹԵՐ.**— Փիթեր:

**ՋԵՐԻ.**— Մոռացել էի հարցնել: Իսկ իմը Ջերի է:

**ՓԻԹԵՐ (ընդհատ, ջղային ծիծաղով).**— Շատ հաճելի է:

**Ջերին ի պատասխան գլխով է անում:**

**ՋԵՐԻ.**— Հիմա եկեք խելք-խելքի տանք. որտեղի՞ց ինձ, գրողը տանի,  
կնոջ լուսանկար, այն էլ միանգամից երկու շրջանակի մեջ. երևի  
չեք մոռացել, որ շրջանակները երկուսն են: Ես ոչ մի աղջկա հետ  
մեկ անգամից ավելի չեմ հանդիպել, և նրանցից ոչ մեկի մտքով  
էլ չի բացվել ինձ լուսանկար նվիրել: Տարօրինակ է: Է՛հ, սատա-  
նան գիտի, գուցե և տխուր բան է:

**ՓԻԹԵՐ.**— Ի՞նչը. որ ձեզ լուսանկար չե՞ն նվիրել:

**ՋԵՐԻ.**— Ձե. որ ես ոչ մի աղջկա հետ մեկ անգամից ավելի չեմ հան-  
դիպել: Ես երբեք չեմ կարողացել մեկ անգամից ավելի պատկել  
աղջկա հետ կամ ինչպես ասում են... հետը սեր անել: Միայն մեկ  
անգամ ու վերջ... Բայց չէ՛, սպասեք: Երբ տասնհինգ տարեկան  
էի... և ամոթից մեռնում էի, որ դեռ որպես տղամարդ չեմ հա-  
սունացել... ուղիղ մեկուկես շաբաթ... հասկանո՞ւմ եք, հոմոսեք-  
սուալիստ դարձա, այսինքն՝ արվամուլ... Չանգերը դողանցում էին,  
դրոշները՝ փողփողում... Այդ տասնմեկ օրը ես օրական երկու  
անգամ հանդիպում էի զբոսայգու պահակի տղայի հետ... Նա  
հույն էր, ինձ հետ նույն օրն էր ծնվել, միայն թե մի տարի շուտ:  
Նառ երևույթին, ես թունդ սիրահարված էի նրան... կամ գուցե  
պարզապես սեքսին: Բայց դրանք շատ յուրահատուկ զգացումներ  
էին: Հիմա ինձ դեռատի աղջիկներն են դուր գալիս: Ազնիվ խոսք,  
խելքս գնում է դեռատի, սիրունիկ աղջիկների համար: Բայց մի-  
այն մի ժամ, ոչ ավել:

**ՓԻԹԵՐ.**— Դե, ինձ թվում է բոլորովին էլ դժվար չէ...

**ՋԵՐԻ (չարույթամբ).**— Լսեք, չլինի՞ թե ուզում եք ասել, որ հարկա-  
վոր է ամուսնանալ ու թուրակներ պահել:

**ՓԻԹԵՐ (նույնպես բարկանալով).**— Ի՞նչ եք թուրակները մատի փա-  
թապան շինել... Ուզում եք՝ ամուսնացեք, ուզում եք այդպես չոր

գլուխ մնացեք: Իմ ինչ գործն է: Ես չեմ բացել այս խոսակցու-  
թյունը և...

ՋԵՐԻ.— Դե լավ, լավ: Ներեցեք ինձ: Հա՞: Դուք չե՞ք բարկանում:

ՓԻԹԵՐ (ծիծաղելով).— Դե ոչ, չեմ բարկանում:

ՋԵՐԻ (թեթևացած).— Այ դա լավ է: (Նախկին եղանակով): Հետա-  
քըրքիրն այն է, որ շրջանակների մասին հարցրիք: Ինձ թվում  
էր, թե դուք ավելի շատ պոռնոգրաֆիկ խաղաթղթերով կհետա-  
քըրքրվեք:

ՓԻԹԵՐ (բազմանշանակ ժպիտով).— Օ, ես տեսել եմ այդպիսի խա-  
ղաթղթեր:

ՋԵՐԻ.— Չեմ էլ կասկածում, տեսած կլինեք: (Ծիծաղում է): Երևի  
դպրոցում էլ տղերքով ձեռքից-ձեռք են խլել: Թե՞ դուք ձեր սե-  
փական կապուկն ունեիք:

ՓԻԹԵՐ.— Դե, ինչ ասեմ, երևի շատերն են ունեցել:

ՋԵՐԻ.— Իսկ ամուսնանալուց առաջ վերցրիք դեն նետեցիք:

ՓԻԹԵՐ.— Դե իհարկե, աստված իմ: Երբ մեծացա, դրանց կարիքն  
այլևս չունեի:

ՋԵՐԻ.— Իսկապե՞ս:

ՓԻԹԵՐ (նեղվելով).— Գիտեք, ավելի լավ է... Ես չեմ ուզում նման  
բաների մասին խոսել:

ՋԵՐԻ.— Չե՞ք ուզում: Դե լավ, պետք չէ: Մանավանդ որ ես միտք չու-  
նեմ փորփրել ձեր հասուն տարիների սեռական կյանքը և դրա  
հետ կապված դժվարությունները: Ես ուղղակի ուզում էի մատնա-  
նշել, թե ինչ տարբերություն կա պոռնոգրաֆիկ խաղաթղթերի մի-  
ջև պատանեկության տարիների և հասուն տարիքում: Տղայի  
համար այդ խաղաթղթերը փոխարինում են փորձառությանը, իսկ  
չափահաս մարդու համար փորձառությանը փոխարինում է երե-  
վակայությունը: Բայց երևի ձեզ ավելի շատ հետաքրքրում է, թե  
ինչ պատահեց գազանանոցում:

ՓԻԹԵՐ (ոգևորվելով).— Հա՛, իսկապե՛ս որ, ի՞նչ էր պատահել գա-  
զանանոցում: (Շփոթվելով): Այսինքն... եթե դուք...

ՋԵՐԻ.— Ես ձեզ կպատմեմ, թե ինչու էի գնացել... մի խոսքով... շատ  
բան կպատմեմ: Հա, ուրեմն: Ինչպես ասացի, ես չորրորդ հար-  
կում եմ ապրում: Ըստ երևույթին, այդ շենքում, ինչքան հարկը  
ցածր է, սենյակն այնքան լավն է: Ինձ այդպես է թվում, թեև  
հաստատ համոզված չեմ: Երրորդ և երկրորդ հարկերում ապրող-  
ներից ոչ մեկին ես չեմ ճանաչում: Բայց չէ՛, սպասեք: Գիտեմ,  
որ երրորդ հարկում մի կին է ապրում: Գիտեմ, որովհետև նա

անընդհատ լաց է լինում: Երբ էլ որ անցնելիս լինեմ նրա դռան մոտով, այդ կնոջ լացի ձայնը ականջիս է հասնում: Նա շատ կամացուկ է լալիս, բայց... պարզ լսվում է: Հա, իսկապես, շատ պարզ: Բայց այդ կինը մի կողմ, ես ուզում եմ շան պատմությունն անել և տանտիրուհու մասին էլ պատմել: Ես չեմ սիրում մարդկանց մասին կոպիտ արտահայտվել: Սովորություն չունեմ: Բայց մեր տանտիրուհին մի գարշելի, անխելք, չարսիրտ, անճոռնի ճարպագունդ է, գիշեր-ցերեկ հարբած մի անլվա խոզ: Դուք երևի նկատեցիք, որ ես խուսափում եմ կծու խոսքերից, այնպես որ չեմ կարող նրան նկարագրել ինչպես որ հարկն է:

**ՓԻԹԵՐ.**— Դուք նրան բավականին... վառ նկարագրեցիք:

**ՋԵՐԻ.**— Է՛, շնորհակալ եմ: Հա ուրեմն. նա մի շուն ունի,— ես շան մասին առանձին կպատմեմ,— և ադ աստծու ցուցանքը՝ շունն էլ վրադիր, իմ կացարանի արթուն պահակներն են: Ի՞նչ արթուն պահակ, ջադու է, ջադու, իմ հոգեատր: Օրը շքամուտքում ցցված է մաշում՝ բազրիքին կոթնած, աչքը չի ճարում, ինչ է թե հանկարծ հետս ոչ մի բան կամ ոչ մի մարդու վերև չտանեմ, իսկ իրիկնադեմին, երբ գլխին է քաշած լինում իր օրաբաժինը՝ կիտրոնով համեմված կես լիտր ջինը<sup>10</sup>, ինձ միշտ բռնացնում է շքամուտքում, առաջս կտրելով՝ ճանկում է թևքս, կառչում շորերիս, մի անկյուն է ինձ քաշում-մտցնում և իր պիղծ մարմնի ամբողջ ծանրությամբ ընկնում է վրաս, որ չի՞նի թե ձեռքից դուրս պրծնեմ ու իր ասելիքին մինչև վերջ ականջ չդնեմ: Նրա մարմնի, շնչի գարշահոտը... չե՛ք պատկերացնի... և ինչ-որ տեղ, նրա ծոփ ուղեղի ինչ-որ մի ծալքում, որն այնքան է զարգացած, ինչքան որ անհրաժեշտ է ուտելու, խմելու ու արտաթորելու համար, ոչ թե կիրք, այլ կրքի մի այլանդակ ծաղր է խլվում: Եվ ես, Փիթե՛ր, ես նրա քրտնահոտ տոփանքի առարկան եմ:

**ՓԻԹԵՐ.**— Դա նողկալի է: Սարսափելի բան է...

**ՋԵՐԻ.**— Բայց ես գտել եմ գլուխս նրանից պրծացնելու ձևը: Հենց որ ձթի պես կաչում է, ամբողջ մարմնով սեղմվում ինձ ու քրթմընջում, որ միասին իր սենյակ գնանք, ես ուղղակի վրա եմ բերում. «Բայց ախր, սեր իմ, մի՞թե երեկվանը կամ նախանցյալ օրվանը քեզ համար քիչ էր»: Նա իրար է գալիս, աչքունքը պոստում, խելքին գոռ տալով տքնում վերհիշել ու հանկարծ, Փիթե՛ր... ես միշտ մտածում եմ, որ այդ սրտակեղեք տանը գոնե մի հատիկ բարի գործ եմ անում... հանկարծ նրա անպատկերացելի քիթումուրթը ողողվում է երանավետ ժպիտով, նա խնդմնդում է, տնքում, փրկ-

չացնում՝ մտաբերելով երեկվանն ու նախանցյալ օրվանը, հավատում է չեղած բանին ու հանգստանում: Հետո կանչում է շանը՝ այդ սև ճիվաղին ու քաշվում իր սենյակը: Եվ ես փրկվում եմ մինչև հաջորդ հանդիպում:

**ՓԻԹԵՐ.**— Դա ուղղակի... աներևակայելի է: Պարզապես անհնար է հավատալ, որ այդպիսի մարդիկ էլ կան:

**ՏԵՐԻ (թեթև հեզմանքով).**— Ի՞նչ է, ձեզ թվում էր միայն գրքերո՞ւմ եմ լինում:

**ՓԻԹԵՐ (լուրջ).**— Այո:

**ՏԵՐԻ.**— Փաստը հերյուրանքի տեղ դնելուց հեշտ բան չկա: Դուք իրավացի եք, Փիթե՛ր: Հա՛, ես շան մասին պիտի պատմեի: Ա՛յ, պատմեմ, լսեք:

**ՓԻԹԵՐ (նյարդայնացած).**— Այս, հա՛, շան մասին:

**ՏԵՐԻ.**— Հանկարծ չգնաք: Դուք դեռ չեք գնում, չէ՞:

**ՓԻԹԵՐ.**— Դե... ոչ... դեռ ոչ:

**ՏԵՐԻ (ասես երեխայի հորդորելիս լինի).**— Որովհետև շան մասին պատմելուց հետո ես գիտե՛ք, թե ինչ եմ պատմելու: Հետո... հետո պատմելու եմ, թե ինչ պատահեց գազանանոցում:

**ՓԻԹԵՐ (երկշտ ծիծաղով).**— Դուք ինչ պատմություն ասես որ չգիտեք, ճիշտ չե՞մ ասում:

**ՏԵՐԻ.**— Չեք ուզում, մի՛ լսեք: Նկատի ունեցեք, ոչ ոք ձեզ այստեղ գոռով չի պահում: Ականջներիդ օղ արեք:

**ՓԻԹԵՐ (գրգռված).**— Առանց օղ անելու էլ գիտեմ:

**ՏԵՐԻ.**— Գիտե՛ք: Ավելի լավ, որ գիտեք: (Հետևյալ երկարաշունչ մեծախոսությունը, ըստ իս, պետք է զուգակցվի գրեթե անընդմեջ շարժումով՝ հիպնոսային տպավորություն թողնելով Փիթերի և հանդիսասարահի վրա: Ինչ-ինչ առանձնակի դիտողություններ վերցնարդեն նշվեցին, բայց ռեժիսորն ու Ջերիի դերակատարը իրենք պետք է գտնեն այս տեսարանի լավագույն լուծումը): Հա ուրեմն: (Ասես մի հսկայական ազդագիր կարդալիս լինի): ՋԵՐԻԻ ԵՎ ԾԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ: (Դարձյալ սովորական եղանակով): Երբեմն անհրաժեշտ է մի մեծ, շրջանցիկ պտույտ գործել ամենակարճ և ճիշտ ճանապարհով վերադառնալու համար: Պատմելիքս մասամբ սրան է վերաբերում կամ միգուցե ինձ ուղղակի այդպես է թվում: Ինչ որ է: Բայց հենց դրա համար էի ես այսօր գազանանոց գնացել և դրա համար ճանապարհ ընկա դեպի հյուսիս... ասիներն՝ հյուսիսային ուղղությամբ... մինչև որ հասա այստեղ: Մի խոսքով: Այդ շունը, կարծեմ արդեն ասացի, իսկը սև ճիվաղ

է. հսկայական գլխով, պատիկ ականջներով և... արնակալած, ըստ երևութին, հիվանդ աչքերով: Կաշի ու ոսկոր է, իսկական կմախք: Սև շուն է, ոտից-գլուխ սեփ-սև, միայն աչքերն են արնագույն ու մեկ էլ... հա՛... մեկ էլ առջևի աջ ոտնաթաթի վերքը. էլի արնագույն է: Խեղճ խրտվիլակը շատ է հալից ընկած, մաշված ու պառավ... երևի կյանքում լավ օր չի տեսել: Է՞լ ինչ ասեմ... հա՛. գոմալիս նա դեղնագորշ ժանիքներն է ցույց տալիս: Գիտեք, ինչպես է գոմոմ: Այ այսպես: **(Նմանակում է):** Գը՛-ո-ո-ո-ո-ո-ո: Այդ տանը հաստատվելու հենց ստաշին օրը նա ինձ նրկատելուն պես սկսեց գոմալ: Ես նրան տեսած-չտեսած՝ գլուխս կորցրի: Ախր կենդանիներն ինձ մոտ-մոտ չեն անում, ոնց որ սուրբ Ֆրանցիսկոսի<sup>11</sup> գլխին էին թռչունները կիտվում: Ուզում եմ ասել, որ կենդանիներն իմ նկատմամբ անտարբեր են... մարդկանց նման... **(Թեթևակի ժպտում է):** Գրեթե միշտ: Բայց այս շունը անտարբեր չէր: Հենց ամենասկզբից ինձ տեսավ թե չէ, սկսեց գոմալ, ընկավ ետևիցս, ուզում էր ոտքս բռնել: Հասկանո՞ւմ եք, նա ոչ թե կատաղածի պես վրա էր պրծնում, այլ քարշ էր գալիս ետևիցս՝ համատորեն հետապնդելով ինձ: Բայց ես միշտ էլ հաշողացնում էի գլուխս պրծացնել: Մի անգամ նա շավարիս փողկից մի ծվեն պոկեց. տեսեք, այ այստեղ կարկատան է: Արդեն երկրորդ օրն էր, ինչ այնտեղ էի ապրում: Ես նրան արագի տվի ու մի շնչում սանդուղքով վերև վազեցի: **(Տարակուսած):** Միևչև օրս էլ չեմ հասկանում, թե ինչպես են մյուս բնակիչները նրա հախից գալիս, բայց ասե՛մ, թե ինչ եմ մտածում. իմ կարծիքով, նա միայն ինձ վրա էր ատամ կրճտացնում: Հա, ուրեմն: Այսպես շարունակվեց մի ամբողջ շաբաթ. հենց որ ներս էի մտնում, ետևիցս էր ընկնում, բայց դուրս գալիս՝ վրաս ուշք չէր դարձնում: Ահա թե ինչն է ի՞նչ տարօրինակ թվում: Ավելի ճիշտ, տարօրինակ էր թվում: Կարծես շան ուզածն այն էր, որ հավաքեի ու նեցած-չունեցածս ու գնայի փողոցում ապրեի: Մի անգամ, երբ ինչպես միշտ, ինձ մի կերպ սենյակս գցեցի, մտածմունքի մեջ ընկա: Ես որոշեցի. նախ՝ կփորձեմ շանը բարությունս սպանել, իսկ եթե դրանից բան դուրս չգա... ողղակի կսպանեմ:

### **Փիթերը ցնցվում է:**

Դուք լսեք, լսեք, Փիթե՛ր, մի՛ հուզվեք: Հա ուրեմն: Հաջորդ օրը տնից դուրս գալով՝ մի ամբողջ փայտեթ կիսահում մտով, առանց քեթչուփի<sup>12</sup> ու սոխի բուտերբրոդներ առա: Տան ճանապարհին հացը դեն գցեցի, միայն միսը թողեցի:



### **Հետևյալ կտորը կարելի է գուգակցել խաղով:**

Երբ տեղ հասա, համոզված էի, որ նա ինձ է սպասում: Ծքամուտքի դուռը կիսաբաց արի, տեսնեմ՝ այնտեղ է: Սպասում է: Դարան է մտել ու գոմոում է: Փաթեթը ձեռքիս սուսուսիուս ներս սողոսկեցի, միսը հանեցի, դրի հատակին՝ նրանից երևի մի տասներկու քայլ այս կողմ: Հա ուրեմն: Նա գոմոոցը կտրեց, հոտվրտաց, ֆսֆսացրեց ու եկավ մսի կողմը՝ սկզբից թաթեթը դանդաղ փոխելով, հետո ավելի ու ավելի արագ: Մսին հասնելով՝ կանգ առավ, նայեց ինձ: Ես ժպտացի, այսպես, մի տեսակ հաճկատարությամբ, հասկանում եք, չէ՞: Նա մոույթը մսի կողմը շրջեց, հոտուտեց, էի ֆսֆսացրեց ու մեկ էլ հա՛փ՝ վրա ընկավ մսին: Ասես իր օրում հոտած կոճոճքներից բացի ոչինչ չէր կերել: Երևի հենց այդպես էր որ կար: Չեմ կարծում, թե տանտիրուհին ինքն էլ մըգլած անպետքությունից բացի ուրիշ բան է ուտում: Հա ուրեմն: Նա մի ակնթարթում ճլթճլթացնելով միսը խփշտեց: Հենց որ միսը խժոճեց-պրծավ, փորձեց թուղթն էլ ուտել, հետո պազեց ու ժրպտաց: Ազնիվ խոսք, ժպտաց. չէ որ կատուներն էլ են ժպտում, աչքովս եմ տեսել: Դա միակ հաճելի պահն էր, երբ որ նա ժրպտաց: Հետո հանկարծ որ չգոմոա՛ց ու հո՛ւպ՝ վրա պրծավ: Բայց ես այդ անգամ էլ նրա ճանկից ազատվեցի: Ներս ընկա սենյակ, նետվեցի անկողնու վրա և նորից սկսեցի մտածել շան մասին: Ծիշտն ասած, ես վիրավորված էի ու սարսափելի փրփրած: Գրողը տանի, ինչքան չի՛նի վեց հատ հիանալի բուտերբրոդ էի նրա բուկը լցրել, վեցն էլ անչուղ մտով, յուղոտներն այնպիսի տհաճ համ ունեն... Ինձ ասես անպատվություն հասցրած լինեի՛ն: Բայց երկար-բարակ մտածելուց հետո որոշեցի մի քանի օր անընդհատ նույն բանը փորձել: Եթե մի լավ ծանրութեթն անեք, կտեսնեք, որ այս շունն իմ նկատմամբ բացահայտ հակակրանք ուներ: Եվ ես ուզում էի պարզել, կարո՞ղ եմ այդ հակակրանքը հաղթահարել, թե չէ: Մի խոսքով: Ես մի քանի օր շարունակ նրա համար միս էի բերում, և ամեն անգամ կրկնվում էր նույնը. նա գոմոում էր, հոտվտում, ֆսֆսացնում, սկզբից դանդաղ, հետո ավելի ու ավելի արագ վրա գալիս մսին, նայում ինձ, հետո՝ հա՛փ՝ խփշտում միսը, սասա ժպտում, գոմոում ու հո՛ւպ՝ վրա պրծնում ինձ: Ծուտով մեր ամբողջ փողոցում հացի կտորներ էին ցիրուցան թափված: Ես ավելի շատ նողկանքով էի լցված, քան թե վիրավորված: Ու ես որոշեցի նրան սպանել:

**Փիթեթը բողոքող շարժումով ձեռքը բարձրացնում է:**

Դե մի՛ վախեցեք, Փիթե՛ր: Գործը գլուխ չեկալ: Այդ օրը, երբ որոշել էի շանը սպանել, միայն մի բուտերբրոդ ատա և ինչպես որ մտադրվել էի՝ մահացու քանակով մկնդեղ: Բուտերբրոդը գնելիս վաճառողին ասացի, որ հացը պետք չէ, միայն միսն եմ ուզում: Ես սպասում էի, որ նա կասի, թե բուտերբրոդն ատանց հացի չի վաճառվում կամ էլ՝ «դուք ի՞նչ է, միսը ձեռքո՞ւմ եք ունելու», մի խոսքով, սրա նման մի բան: Բայց չէ, նա սիրալիք ժրատաց, միսը մոմաթղթով փաթաթեց ու ասաց. «Ձեր փիսիկի՞ն եք կերակրելու»: Ուզում էի ասել՝ ինչ փիսիկ, ինչ բան, մի ծանոթ շուն կա, պիտի թունավորեմ: Բայց «ծանոթ շունն» առնվազն ծիծաղելի կհնչեր, դրա համար էլ ասացի. «Այո, այո, փիսիկին եմ կերակրելու», միայն թե կարծես շատ բարձրաձայն ու հանդիսավոր ստացվեց: Մարդիկ հայացքներն իմ կողմը շրջեցին: Միշտ այդպես է. հենց որ ուզում եմ բանս հեշտացնել, մարդիկ հայացքներն ինձ են դարձնում: Բայց փառք ասածո, ամեն ինչ վերջացավ ատանց ավելորդ խոսք ու գրույցի: Հա ուրեմն: Տան ճանապարհին միսն ու մկնդեղը բռերիս մեջ ճմլելով՝ իրար խառնեցի: Ես մի տեսակ և՛ տխուր էի, և՛ նողկանքի զգացումով լի: Երանության դուրը բացեցի, տեսնեմ՝ ճիվաղն այնտեղ է, սպասում է, որ իր փայն ստանա ու վրա պրծնի: Խեղճ ողորմելին այդպես էլ գլխի չընկավ, որ մինչ ինքը ժպտում է, ես միշտ էլ հաջողացնում եմ արանքը ճղել: Հա ուրեմն: Տեսնեմ՝ սպասում է: Թունավորված խյուսը դրի հատակին, բարձրացա սանդուղքին ու նայում եմ: Խեղճ անասունը սովորականի պես խիշտեց-պրծավ, ժպտաց, այնինչ մազ էր մնում, որ ես ործկայի, ու մեկ էլ հո՛ւպ՝ վրա պրծավ ինձ: Բայց ես, ինչպես միշտ, կայծակի արագությամբ կծիկս դրի, և նա, ինչպես միշտ, չհասավ ետևիցս: ԾԱՏ ՉԱՆՑԱԾ ԾՈՒՆԸ ԾԱՆՐ ՀԻՎԱՆԴԱՑԱՎ: Ես դա կուսեցի, որովհետև նա այլևս ինձ չէր դարանում, իսկ տանտիրուհին էլ մեկեն իրեն հավաքեց: Հենց նույն երեկոյան նա ինձ կանգնեցրեց շքամուտքում և հայտնեց, որ աստված շնիկին իր մոտ է կանչում: Նա նույնիսկ իր գարշելի տոփանքն էր մոռացության տվել և աչքերն առաջին անգամ լայն բաց էր արել: Այդ աչքերն այնպես նման էին շան աչքերին: Նա նվնվում էր ու աղերսում, որ ես աղոթեմ իր խեղճ քույրիկի համար: Ես ուզում էի ասել. տիկին, եթե աղոթելու լինեմ, կաղոթեմ սևամորթ արվամուղի համար, պուերտոռիկացիների ընտանիքի համար, դիմացի սենյակի այն մարդու համար, որը երբեք աչքովս չի ընկել, այն կնոջ համար, որը կամացուկ լաց է

լինում դուսն ետևում և արար աշխարհի այն բոլոր մարդկանց համար, ովքեր ապրում են այսպիսի տներում: Բայց ես, տիկին, աղոթել չգիտեմ... Գործս հեշտացնելու համար... ասացի, որ կաղոթեմ: Նա հայացքն ինձ հստեց ու հանկարծ ասաց, որ ես ստում եմ, երևի ուզում եմ, որ շունը սատկի: Ես ասացի, որ ամենևին էլ չեմ ուզում, որ շունը սատկի: Եվ դա զուտ ճշմարտություն էր: Ես չէի ուզում ոչ թե այն պատճառով, որ ես էի նրան թունավորել: Անկեղծորեն ասած, հոգուս խորքում ես ուզում էի, որ շունը կենդանի մնա, որպեսզի տեսնեմ, թե նա ինչպես պիտի ինձ վերաբերվի:

**Փիթերը հարաճուն սրտնեղության և հետզհետե հասունացող անբարյացակամության ճշաններ է ցուցաբերում:**

Խնդրում եմ հասկացեք ինձ, Փիթե՛ր, սա շատ կարևոր է: Հավատացեք, ՇԱՏ ԿԱՐԵՎՈՐ է: Մենք պետք է իմանանք մեր արարքների հետևանքները: **(Խոր հոգոց է հանում):** Է՛հ, մի խոսքով: Ծունը ոտքի կանգնեց: Թե ինչ հրաշքով, գլուխ չեմ հանում: Երևի նա այն շան սերունդն է, որը հսկում էր դժոխքի, թե դրա պես մի ուրիշ շհաննամի դուռը<sup>13</sup>: Ես թույլ եմ դիցաբանությունից: **(Դիցաբանություն է արտասանում):** Իսկ դո՞ւք:

**Փիթերը մտմտում է պատասխանը:**

Է՛հ, Փիթե՛ր, ձեզնից էլ Պողոս-Պետրոս դուրս չի գա... Ինչևէ, շունը ոտքի կանգնեց, իսկ տանտիրուհին էլ իր խեղճ քույրկի հրաշք փրկությունից թե առած՝ նորից սկսեց իր անհագուրդ ծարավը հագեցնել: Այդ օրը, երբ նա ինձ ասել էր, որ շնիկն իրեն արդեն լավ է զգում, ես երեկոյան կինոյից տուն էի վերադառնում: Տեսածս նկարը էի էի տեսել կամ դա ուղղակի ոչնչով չէր տարբերվում իմ տեսած բազմաթիվ ֆիլմերից... Ես այնպես հույս ունեի, թե շունն ինձ է սպասում... Մի տեսակ... ինչպես ասեմ... հափշտակված էի... կլանված... չէ, դա ուրիշ բան էր... Սիրտս թպրտում էր... ճիշտ որ. սիրտս թպրտում էր իմ բարեկամին կրկին տեսնելու անհամբերությունից:

**Փիթերը հեզնորեն նրան է նայում:**

Այո, Փիթե՛ր, բարեկամս: Սա միակ ճիշտ բանն է: Սիրտս թպրտում էր իմ բարեկամ շանը կրկին տեսնելու անհամբերությունից: Ես դոնից ներս մտա և առանց վախենալու առաջացա դեպի սանդուղքը: Ծունն այնտեղ էր... ինձ էր նայում: Եվ պատկերացրեք, մահից մազապուրծ՝ շատ ավելի լավ տեսք ուներ, քան առաջ: Ես կանգ առա: Նա ինձ էր նայում, ես՝ նրան: Կարծեմ... կարծեմ

մենք շատ երկար մնացինք այդպես... քար կտրած, արձանացած... մեկս մյուսին անթարթ նայելիս: Ես ավելի երկար նայեցի նրան, բան նա՛ ինձ... Ընդհանրապես, շունը երկար չի դիմանում մարդու հայացքին: Բայց այդ քսան վայրկյանի, թե երկու ժամվա ընթացքում, որ մենք նայում էինք միմյանց աչքերի, մենք հաղորդակցվեցինք: Իմ ուզածն էլ այդ էր: Ես սիրեցի շանը և ուզում էի, որ նա էլ ինձ սիրի: Ես փորձել էի սիրել և փորձել էի սպանել: Թե՛ մեկը, թե՛ մյուսը, իրարից անկախ, գլուխ չէին եկել: Ես հուսով էի, որ շունը կհասկանա... Միշտն ասած, չգիտեմ էլ, թե ինչու էի հույսեր փայփայում, որ շունը որևէ բան կհասկանա, առավել ևս իմ մղումները...

**Փիթերն ասես հիպնոսացած լինի:**

Բանն այն է... բանն այն է, որ... (Ջերին արտասովոր լարված է): Եթե անհնար է մարդկանց հետ հաղորդակցվել, ուրեմն հարկավոր է ինչ-որ ուրիշ բանից սկսել: ԿԵՆՆԻԱՆԻՆԵՐԻՑ: (Սկսում է շատ ավելի արագ ու դավադրի պես խոսել): Ախր հասկանո՞ւմ եք, մարդ անպայման պետք է ինչ-որ կերպ հաղորդակցվի որևէ մեկի հետ: Եթե ոչ մարդկանց... եթե ոչ մարդկանց... ապա գոնե ինչ-որ բանի: Մահճակալի, ուտիճի, հայելու... չէ՛, հայելին չեղավ, շատ ծանր բան է, դա ամենավերջում, երբ ճարահատույալ ես... Ուտիճի... կամ... կամ... գորգի, գուգարանի թղթի փայտույթի... չէ՛, էլի բանի նման չէ, ինչպես հայելին... Տեսնո՞ւմ եք, ինչ դժվար է հարմար բան գտնել: Գուցե փողոցի անկյո՞ւնը, թաց, փայլուն մայթերին արտացոլված գույնզգույն լույսե՞րը... ծխի քուլան... կամ... կամ պոռնոգրաֆիկ խաղաթղթերը, զարդատուփը... որը ՓԱԿ ՉՈՒՆԻ... Մարդ պիտի հասու լինի. թե ինչ է սերը, փրսխուքը, լացը, կատաղությունը, որ դեռատի, սիրունիկ աղջիկները ամենևին էլ ոչ դեռատի են, ոչ էլ սիրունիկ. մարմնի առուծախը, մարմնի, որ անոթն է սիրո, և ես կարող եմ դա ապացուցել. աղեկըտուր ոռնոցը, թե ինչու աստված հոգիդ չի առնում... աստված... Հը՞, ի՞նչ կատեք ասածու հետ հաղորդակցվելու մասին... Ախր նա սևամորթ արվամոլի մեջ է, որը կիմոնո է հագնում և հոնքերը հանում, այն կնոջ մեջ է, որն անընդհատ լաց է լինում դուրս ետեվում... Աստված, որն ասում են, վաղուց է երես թեքել ամեն-ամեն ինչից... Իսկ մարդի՞կ... Ախր գոնե երբեմն էլ հարկավոր է մարդկանց հետ շփվել: (Հաջորդ բառն արտասանում է խոր հառաչանքով): Մարդկանց: Մտքեր փոխանակել: Խոսել ինչ-որ բանի շուրջը: Իսկ որտե՞ղ, որտե՞ղ կարելի է այս բանտանման անողորմ

աշխարհում թեկուզ մեճ-մեճակ, ամենահասարակ միտք փոխանակել, եթե ոչ շքամուտքում՝ սանդուղքին կանգնած: Որտե՞ղ: Ախր պետք է, չէ՞, ինչ-որ մեկին գտնել՝ հետը հաղորդակից լինելու համար: Բայց ո՞ւմ: Ո՞ւմ գտնել... փորձել հասկանալ նրան և այնպես անել, որ քեզ էլ հասկանան... Ամենահարմարը...

**Ջերիի կերպարանքն այս պահին գրեթե գրոտեսկային հոգևորություն է արտահայտում:**

Ամենահարմարը շունն է: Հա՛, հա , հենց շունը:

**Ջերին լուռ է, ապա ուժասպառ շարունակում:**

Ծունը: Ինձ թվում էր, թե դա միանգամայն խելացի միտք է: Հայտնի բան է. մարդը շան լավագույն բարեկամն է: Հա ուրեմն: Ես ու այդ շունը նայում էինք մեկմեկու աչքերի: Ես նրան ավելի երկար նայեցի, քան նա՝ ինձ: Եվ դրանից հետո այդպես էլ շարունակվեց: Երբ էլ որ իրար տեսնելիս լինենք, ուր էլ որ լինենք, գետնին մեխվածի նման կանգնում-մնում ենք: Մենք տխրությամբ ու կասկածանքով աչք-աչքի ենք գցում, ապա անտարբեր ձևանում: Երկուսս էլ հանգիստ անցնում ենք մեկս մյուսի կողքով. մենք արդեն հասկանում ենք իրար: Սա շատ տխուր բան է, բայց համաձայնեք, որ փոխըմբռնում է: Մենք բազմիցս փորձել ենք շքիվել իրար հետ, բայց ամեն ինչ ապարդյուն է անցել: Ծունն առաջվա պես աղբն է քչփորում, իսկ ես անարգել անցնում-դառնում եմ: Ես հանգիստ ու անարգել անցուդարձի իրավունք եմ նրվաճել, եթե դա կարելի է նվաճում կոչել և ոչ թե կորուստ: Ես հասկացել եմ, որ ոչ բարությունը, ոչ էլ դաժանությունը՝ ինքնին, մեկը մյուսից անկախ, ոչնչի չեն հանգեցնում, բայց ես հասկացել եմ նաև, որ միաժամանակ, երկուսը միասին, սովորեցնում են զգալ: Բայց ինչ օգուտ դրանից, եթե հաղթանակը կորուստ է, եթե դրա հետևանքն այն է, որ ես շան հետ փոխզիջման եմ եկել կամ ավելի ճիշտ, գործարքի նման մի բան եմ կնքել: Մենք չենք սիրում իրար, բայց չենք էլ նեղացնում, որովհետև չենք փորձում հասու լինել իրար: Ի՞նչ էք կարծում, կարելի՞ է շանը կերակրելը սիրո նշան համարել: Իսկ միգուցե ինձ կծելու շան փորձերն է՞լ էին սիրո նշան: Բայց եթե մենք անգոր ենք մեկմեկու հասկանալ, էլ ինչո՞ւ ենք ընդհանրապես «սեր» բառը հնարել:

**Լուրջություն է տիրում: Ջերին մոտենում է Փիթերի նստարանին և նստում նրա կողքին: Ամբողջ գործողության ընթացքում առաջին անգամ նա նստում է:**

Ջերիի և շան պատմությունն ավարտվեց:

**Փիթերը լուռ է:**

Դե՛հ, ի՞նչ կասեք, Փիթե՛ր: (Ջերին անսպասելիորեն զվարթանում է): Հը՞, Փիթե՛ր: Խելքներդ ի՞նչ է կտրում, կարելի՞ է այս պատմությունը «Անմոռանալի հանդիպում» վերնագրով որևէ հանդեսում տպագրել և մի քանի հարյուր դոլլար վաստակել:

**Ջերին աշխուժացել է: Փիթերն այլայլված է:**

Դե, ձե՛զ տեսնեմ, Փիթե՛ր, ի՞նչ կարծիքի եք:

**Փիթեր (կարկամած).—** Ես... ես չեմ հասկանում, թե ինչ եք... Ես կարծես... (Գրեթե արտասովախառն ձայնով): Ինչո՞ւ եք այդ ամենն ինձ պատմում:

**Ջերի.—** Իսկ ի՞նչ կա որ:

**Փիթեր.—** ԵՍ ՈՉԻՆՉ ԶՀԱՍԿԱՑԱ:

**Ջերի (բարկությունից եռ գալով, բայց շշուկով).—** Ծիշտ չէ՛:

**Փիթեր.—** Ոչ, ճիշտ է: Ծի՛շտ է:

**Ջերի (հանգիստ).—** Ես ակն ապամեղիս աշխատում էի ամեն ինչ բացատրել, արագ չխոսել: Այս ամենը վերաբերում է...

**Փիթեր.—** ԱՅԼԵՎԱ ՈՉԻՆՉ ԶԵՄ ՈՒԶՈՒՄ ԼՍԵԼ: Ես չեմ հասկանում ո՛չ ձեզ, ո՛չ ձեր տանտիրուհուն, ո՛չ նրա շանը...

**Ջերի.—** Նրա շա՛նը... Ինձ թվում էր շունն իմն է... Ձե: Ձե, դուք իրավացի եք: Ծուրը նրանն է: (Սկեռուն հայացքով նայում է Փիթերի դեմքին և գլուխը թափահարում): Չգիտեմ ինչ փչեց խելքիս... Իհարկե, դուք չեք հասկանա: (Միապաղաղ, հոգնատանջ): Ես ձեր թաղամասում չեմ ապրում: Ամուսնացած չեմ երկու թուրակի կամ չգիտեմ թե ինչի հետ: Ես մշտական կենվոր եմ, իմ տունը մի գարշելի ծակուռ է Նյու Յորքում՝ աշխարհի ամենամեծ քաղաքում: Ամեն:

**Փիթեր.—** Ես... Ներեցեք ինձ, ես չեի ուզում...

**Ջերի.—** Ա՛հ, դատարկ բան է, անցած լինի: Դուք երևի չգիտեք, թե ձեր գլուխն ինչպես ինձնից ազատեք:

**Փիթեր (փորձում է կատակի տալ).—** Վնաս չունի, մենք՝ հրատարակիչներս, ընկած-ելած մարդիկ ենք: (Խնդմնդում է):

**Ջերի.—** Իսկական հանաքչի եք, հա՛: (Բռնազբոս ծիծաղում է): Գիտեք, դուք մեծ... հոյակապ հումորի զգացում ունեք:

**Փիթեր (համեստորեն, բայց շոյված).—** Ձե մի, ինչ եք ասում: (Խընդմընդում է):

**Ջերի.—** Փիթե՛ր, ես երևի փչացրի, հա՞, ձեր տրամադրությունը:

**Փիթեր (անհոգորեն).—** Է՛հ, մեղքս ինչ թաքցնեմ, ես մտադիր էի ժամանակս ուրիշ կերպ անցկացնել:

**ՋԵՐԻ.**— Ուզում եք ստել, որ ես այն մա՛րդը չեմ, որին կուզեցայիք տեսնել:

**ՓԻԹԵՐ.**— Ես ոչ մեկին էլ չէի ուզում տեսնել:

**ՋԵՐԻ.**— Գիտեմ, որ չէիք ուզում: Բայց ես այստեղ եմ և առայժմ գնալու մտադրություն չունեմ:

**ՓԻԹԵՐ (մի հաչացք զցելով ժամացույցին).**— Դե, դա արդեն ձեր գործն է, իսկ ես պետք է տուն գնամ:

**ՋԵՐԻ.**— Ինչ կլինի, Փիթե՛ր, մի քիչ էլ նստեք:

**ՓԻԹԵՐ.**— Ձե, իսկապես, ես պետք է գնամ: Գիտեք...

**Ջերին խուտուտ է տալիս Փիթերի թևատակերը:**

**ՋԵՐԻ.**— Դե վերջ տվեք: Մի քիչ էլ մնացեք:

**Փիթերը սարսափելի խուտուտկան է: Մինչ Ջերին շարունակում է խուտուտ անել, նա ֆայցետաձայն ճիչեր է արձակում:**

**ՓԻԹԵՐ.**— Ոչ, ես... Օ՛հո՛հո՛... Մի՛ արեք... Վե՛րջ տվեք... Վերջացրե՛ք... Օ՛հո՛հո՛... չէ՛, չէ՛...

**ՋԵՐԻ.**— Կմնա՛ք, թե չէ: **(Շարունակում է խուտուտ անել):**

**ՓԻԹԵՐ.**— Օ՛հ, հի՛-հի՛-հի՛... Ես պետք է գնամ... Ես... հի՛-հի՛-հի՛... Ախր... Վերջացրե՛ք... վե՛րջ տվեք... հի՛-հի՛-հի՛... Ախր թույթակները... հի՛-հի՛-հի՛... ինչ եմ ասում... կինս ճաշին ինձ է սպասում... հի՛-հի՛-հի՛... Կատուները... հի՛-հի՛-հի՛... հիմա սեղան են զցում... Վերջացրե՛ք... վե՛րջ տվեք... Եվ... և... **(Քիչ է մնում ու շարսափի):** Եվ մենք պիտի... հի՛-հի՛-հի՛... ը՛հ... հո՛-հո՛-հո՛...

**Ջերին դադարում է Փիթերին խուտուտ անել, բայց խողտանքից ու ներքին լարվածությունից Փիթերը գրեթե հիստերիկայի մեջ է ընկնում: Մինչ նրա անզուսպ քրքիշը կհանդարտվի, Ջերին զարմանախառն, քարացած ժպիտով նրան է նայում:**

**ՋԵՐԻ.**— Փիթե՛ր:

**ՓԻԹԵՐ.**— Օ՛հ... հա՛-հա՛-հա՛-հա՛-հա՛... Ի՞նչ... ի՞նչ...

**ՋԵՐԻ.**— Ինձ լսեք, Փիթե՛ր:

**ՓԻԹԵՐ.**— Օ՛հ... հո՛-հո՛-հո՛... Ի՞նչ է... Ի՞նչ կա, Ջերի՛... Օ՛հ... աստվա՛ծ իմ...

**ՋԵՐԻ (խորհրդավոր եղանակով).**— Փիթե՛ր, ուզո՞ւմ եք իմանալ թե ինչ պատահեց գազանանոցում:

**ՓԻԹԵՐ.**— Ա՛հ, հա՛-հա՛-հա՛... Որտե՛ղ... հա՛-հա՛-հա՛... Մի, գազանանոցում... Օ՛հո՛հո՛... Բայց ես տանն իմ սեփական գազանանոցն ունեմ... որը հիմա ինձ է սպասում... Թույթակները... հա՛-հա՛-հա՛... ճաշը եփել են... իսկ... հա՛-հա՛-հա՛... անտեղների անունն ի՞նչ էր... կատուները...

**ՋԵՐԻ (հանգիստ).**— Ծառ գվարճալի է, Փիթե՛ր: Մտքովս չէր անցնի, թե դուք այդքան կատակասեր մարդ եք: Բայց դուք չե՞ք ուզում իմանալ, թե ինչ պատահեց գազանանոցում:

**ՓԻԹԵՐ.**— Դե իհա՛րկե, ուզում եմ: Պատմեք, ի՞նչ էր պատահել գազանանոցում: Ա՛խ, աւտվա՛ծ իմ, շհասկացա, թե ի՞նչ ինչ պատահեց:

**ՋԵՐԻ.**— Հիմա կիմանաք, թե ինչ պատահեց գազանանոցում: Բայց նախ ասեմ, թե ինչու էի այնտեղ գնացել: Ես գնացի գազանանոց, որպեսզի տեսնեմ, թե ինչպես են մարդիկ վերաբերվում գազաններին, իսկ գազանները՝ միմյանց ու նաև մարդկանց: Իհարկե, դրա մասին միայն մոտավորապես կարելի է պատկերացում կազմել, չէ որ կենդանիները վանդակների մեջ են, մեծամասնությունը մեկուսացված է մեկը մյուսից, իսկ բոլորը միասին մեկուսացված են մարդկանցից: Հապա ինչպե՞ս, գազանանոց է: (**Բոթում է Փիթերի արմունկը**): Տեղ տվեք:

**ՓԻԹԵՐ (բարեհոգաբար).**— Ներեցեք, երևի ձեր տեղը չի բավականացնում: (**Մի փոքր տեղաշարժվում է**):

**ՋԵՐԻ (քմծիծաղ տալով).**— Հա ուրեմն. այնտեղ գազաններ էին ու մարդիկ, ասեղ գցեիր, գետնին չէր ընկնի, այնքան երեխա կար. չէ որ այսօր կիրակի է: (**Բոթում է Փիթերին**): Տեղ տվեք:

**ՓԻԹԵՐ (համբերատարությամբ և դեռևս բարեհոգաբար).**— Խնդրեմ: **Փիթերը մի փոքր էլ է տեղաշարժվում: Ջերիի համար բավականաչափ տեղ է բացվում:**

**ՋԵՐԻ.**— Այսօր շոգ է, այնտեղ այնպիսի զարշահոտություն էր բռնել, ով ասես չկար, էլ փուշիկ ծախողներ, պաղպաղակ վաճառողներ, փոկերը մոնչում էին, թռչունները՝ ճլվում... (**Ավելի ուժեղ է բոթում Փիթերին**): Տեղ տվեք:

**ՓԻԹԵՐ (սկսելով վրդովվել).**— Լսեք, դուք շատ ավելի տեղ ունեք, քան անհրաժեշտ է: (**Տեղաշարժվում է և հիմա նստած է ուղիղ նստարանի ծայրին**):

**ՋԵՐԻ.**— Երբ ես այնտեղ էի, առյուծներին կերակրելու ժամանակն էր, և պահակը մտավ առյուծներից մեկի վանդակը, որ նրան կեր տա: (**Կամթում է Փիթերի թևը**): ՏԵ՛Ղ ՏՎԵՔ:

**ՓԻԹԵՐ (խիստ բորբոքված).**— Ախր որտեղի՞ց, է՛: Չե՞ք տեսնում, շարժվելու տեղ չկա: Հերիք է բոթոթոթեք: Չեզ ի՞նչ պատահեց:

**ՋԵՐԻ.**— Ծարունակությունն ուզո՞ւմ եք լսել: (**Կամթում է Փիթերի թևը**):

**ՓԻԹԵՐ (ապշահար).**— Չէի ասի, թե ուզում եմ: Ես ուրիշ բան եմ ուզում. որ թև՛ս չկամթեք:



**ՋԵՐԻ (Կամթելով).**— Այսպե՛ս:

**ՓԻԹԵՐ.**— Վե՛րջ տվեք: Ձեզ ի՞նչ պատահեց:

**ՋԵՐԻ.**— Ես խելագար եմ, դդո՛ւմ:

**ՓԻԹԵՐ.**— Բողորովին սրամիտ չէ:

**ՋԵՐԻ.**— Լսեք, Փիթե՛ր: Այս աստարանն ինձ պետք է: Դուք տեղափոխվեք մյուս աստարանին: Ձեզ խելոք բալիկի պես պահեք, որ շարունակությունը պատմեմ:

**ՓԻԹԵՐ (հուզված).**— Բայց... ինչի՞ համար: Ձեզ ի՞նչ է պատահել: Անունն ի՞նչ դնենք, որ տեղափոխվեմ մյուս աստարանին: Համարյա ամեն կիրակի, եթե լավ օր է անում, ես աստու՞ճ եմ հենց այս աստարանին: Այստեղ մեկուսի անկյուն է, երբեք մարդ չի լինում, ինձնից բացի ոչ ոք չի աստում այս աստարանին, այնպես որ սա իմ աստարանն է դարձել:

**ՋԵՐԻ (մեղմորեն).**— Վեր կացեք այստեղից, Փիթե՛ր: Ես ուզում եմ աստարանին մեճակ աստել:

**ՓԻԹԵՐ (գրեթե աղիողորմ).**— Ոչ:

**ՋԵՐԻ.**— Ես ասացի, որ ուզում եմ մեճակ աստել: Պրծալ գնաց: Վեր կացեք աստեղից:

**ՓԻԹԵՐ.**— Մարդ չի կարող ստանալ այն ամենը, ինչ ցանկանում է: Դուք պետք է որ իմանալիք. սա ընդհանուր օրենք է: Մարդ կարող է ստանալ իր ցանկացածի միայն մի մասը, բաց ոչ ամեն ինչ:

**Ջերին ծիծաղում է:**

**ՋԵՐԻ.**— Ապո՛ւշ: Դանդալո՛ւշ:

**ՓԻԹԵՐ.**— Չհամարձակվե՛ք հայհոյել:

**ՋԵՐԻ.**— Դուք անուղեղ բույս եք, բո՛ւյս: Ավելի լավ է գնաք գետնին մեկնվեք:

**ՓԻԹԵՐ (լարված).**— Դե հերիք եղալ, գիտեք: Հիմա դո՛ւք ինձ լսեք: Ես ուղիղ օրվա կեսը ձեզ հետ... գլուխ դրեցի...

**ՋԵՐԻ.**— Ձե՛ մի, օրվա կե՛սը:

**ՓԻԹԵՐ.**— Համենայն դեպս, բալական երկար: Չափից դուրս երկար գլուխ դրեցի ձեզ նմանի հետ: Ես ականջս կախել էի, որովհետև ինձ թվաց, թե դուք... Մի խոսքով, կարծեցի, թե սրտնեղո դատարկելու կարիք ունեք:

**ՋԵՐԻ.**— Բերան չէ, ավետարան է, ինչ ասես արժե... Օ՛Ֆ, աստված վկա, զզվացրիք, էլի՛... Չքվե՛ք իմ աստարանից:

**ՓԻԹԵՐ.**— Սա ի՛մ աստարանն է:



**ՋԵՐԻ (Ճաղրաբար).**— Պա՛հ, պա՛հ, պա՛հ... Այ հիմա երևում է, թե մեզնից ով է խելքը թոցրել:

**ՓԻԹԵՐ.**— Չքվե՛ք:

**ՋԵՐԻ.**— Մտքովս էլ չի անցնում:

**ՓԻԹԵՐ.**— Ես ձեզ վերջին անգամ եմ նախազգուշացնում:

**ՋԵՐԻ.**— Ա՛խ, երանի իմանայիք, թե ինչ հիմար տեսք ունեք:

**ՓԻԹԵՐ (կատաղությունն ու շփոթմունքը վերջնականապես համակում են նրան).**— Դա կարևոր չէ՛: (**Գրեթե լացախառն**): Կորե՛ք իմ նստարանից:

**ՋԵՐԻ.**— Այդ ինչո՞ւ: Դուք աշխարհի երեսին ինչ ուզում եք ունեք. ինքներդ էիք պատմում ձեր տան, ընտանիքի, մինչև անգամ սեփական փոքրիկ գազանանոցի մասին: Հերիք չէ, որ ամեն ինչ ունեք, հիմա էլ նստարա՛նն եք ուզում: Մի՞թե նման բաների համար են մարդիկ պայքարում: Ասացեք, **Փիթե՛ր**, այս նստարանը՝ այս փայտն ու երկաթը, ձեզ համար պատվի խնդի՞ր է: Կենաց ու մահու հա՞րց է: Կարելի՞ է ավելի անհեթեթ բան մոզոնել:

**ՓԻԹԵՐ.**— Անհեթեթ՞թ: Լսե՛ք, ես միտք չունեմ պատվի մասին ձեզ հետ լեզու թաթախել, ոչ էլ կփորձեմ ձեզ բան հասկացնել: Բացի դրանից, այստեղ պատվի հարց չկա, իսկ եթե կա էլ, դա ձեր խելքի բանը չէ:

**ՋԵՐԻ (քամահրանքով).**— Ինքներդ էլ չգիտեք, ինչ եք դուրս տալիս: Երևում է կյանքում առաջին անգամ եք դեմ առնում ավելի դժվար բանի, բան ձեր կատունների պետքամանի ավազը փոխելն է: Հիմարի գո՛ւլիս: Դուք գոնե մազաշափ պատկերացում ունեք, թե ինչի կարիք ունեն մյուսները:

**ՓԻԹԵՐ.**— Օ՛Ֆ, զահլա տարաք, էլի՛: Ես միայն մի բան գիտեմ. դուք այս նստարանի կարիքը չունե՛ք:

**ՋԵՐԻ.**— Ոչ, ընդհակառակը՝ ունեմ:

**ՓԻԹԵՐ (զայրույթից դողալով).**— Ես արդեն երկար տարիներ է, այստեղ եմ գալիս: Ես այստեղ հսկայական հաճույքի, բավականության ժամեր եմ անցկացրել: Իսկ դա շատ կարևոր է մարդու համար: Ես խելքը գլխիս մարդ եմ և ոչ թե ինչ-որ փալնքոտի մեկը: Սա ի՛մ նստարանն է, և դուք այն զավթելու իրավունք չունե՛ք:

**ՋԵՐԻ.**— Դե ուրեմն կովեք: Պաշտպանեք ձեզ և ձեր նստարանը:

**ՓԻԹԵՐ.**— Դուք ինքներդ ինձ հրահրեցիք: Վե՛ր կացեք, թե որ կրովելն է, կովե՛նք:

**ՋԵՐԻ.**— Տղամարդու պե՛ս:

**ՓԻԹԵՐ (կատաղությունից իրեն կորցրած).**— Այո՛, տղամարդու պես,

եթե վերջ չտաք ինձ ձեռն առնելուն:

**ՋԵՐԻ.**— Ա՛յ, աչքիս մի գլուխ բարձրացաք: Ծիշտ է, դուք բույս եք, այն էլ անճարակ, խեղճուկրակ բույս...

**ՓԻԹԵՐ.**— Վե՛րջ տվեք, լսո՛ւմ եք:

**ՋԵՐԻ.**— ... բայց զուրկ չեք արժանապատվությունից, Փիթե՛ր: Դա նույնիսկ զարմացնում է ինձ:

**ՓԻԹԵՐ.**— Հերի՛ք է...

**ՋԵՐԻ (ծուլորեն վեր կենալով տեղից).**— Ծատ լավ, Փիթե՛ր, կովենք նստարանի համար, միայն թե մեր ուժերն անհավասար են: (Նա մի սարսափազդու տեսքով դանակ է հանում և չրխկոցով բացում):

**ՓԻԹԵՐ (հանկարծ գիտակցելով, թե ինչն ինչոց է).**— Դուք խելագա՛ր եք, իսկական կապովի գի՛ժ: Դուք ինձ կապանե՛ք:

**Մինչ Փիթերը կորոշի իր անելիքը, Ջերին դանակը նետում է նրա ոտքերի մոտ:**

**ՋԵՐԻ.**— Ահա: Վերցրեք: Թող դանակը ձեզ մոտ լինի, այդպես մեր ուժերը փոքր-ինչ կհավասարվեն:

**ՓԻԹԵՐ (սարսափահար).**— Ո՛Ձ...

**Ջերին ճանկում է Փիթերի օձիքը: Փիթերը տեղից վեր է թռչում:**

**Նրանց դեմքերը գրեթե միմյանց են հպվում:**

**ՋԵՐԻ.**— Հենց հիմա վերցրեք դանակը, կովենք: Դուք պետք է կովեք հանուն ինքնահարգանքի, դուք պետք է կովեք հանուն գրողի տարած այս նստարանի:

**ՓԻԹԵՐ (փորձելով դուրս պրծնել).**— Ո՛չ... Թողե՛ք... թողե՛ք ինձ... (Աղաղակում է): Օգ... Օգնությո՛ւն...

**ՋԵՐԻ.**— Դու պետք է կովե՛ս, թշվա՛ն շան որդի: (Ամեն «կովի» բառն արտասանելիս Փիթերին ծանր ապտակ է հասցնում): Կովի՛ր հանուն այս նստարանի, կովի՛ր հանուն քո թույթակների, կովի՛ր հանուն քո կատուների, կովի՛ր հանուն քո երկու աղջիկների, կովի՛ր հանուն քո կնոջ, կովի՛ր հանուն քո առնականության, կովի՛ր, ողորմելի բո՛ւյս: (Թքում է Փիթերի երեսին): Դու նույնիսկ չես կարողացել տղա ունենալ:

**ՓԻԹԵՐ (վերջապես դուրս պրծնելով, կրակ կտրած).**— Առնականությունն այստեղ կապ չունի, դա գեներտիկայի հարց է, հրե՛՛2... հրե՛՛2ի մե՛կը... (Թափով կռանում է, վերցնում դանակը և փոքր-ինչ ընկրկում՝ ծանր շնչելով): Վերջին անգամ եմ ասում. կորի՛ր գրողի ծոցը և ինձ հանգի՛ստ թող: (Ամուր սեղմում է դանակը, ձեռքն առաջ պարզում, բայց ոչ թե հարձակվելու, այլ պաշտպանվելու նպատակով):

ՏԵՐԻ (ծանր հառաչանքով).— Է՛հ, թող լինի, ինչ լինելու է: (Տեղից պոկվելով՝ թափով գետվում է Փիթերի ձեռքի դանակի վրա):

Մի պահ կատարյալ լռություն է տիրում: Ջերին խոցված է դանակով, որը Փիթերը դեռևս ամուր սեղմել է ձեռքում: Ապա Փիթերն ազդակում է, ձեռքը ետ քաշում՝ Ջերին դանակահար թողնելով: Ջերին մի պահ քարանում է, հետո մոլեգնահար ու մահացու վիրավոր գազանի մման ոռնոց արձակում: Դանակահար, երերալով վերադառնում է դեպի ազատված նստարանը: Փուլ է գալիս նստարանին՝ դեմքով դեպի Փիթերը: Օրհնասական ցավից նրա բիբերը լայնացել են, բերանը բաց է:

ՓԻԹԵՐ (զննչալով).— Օ՛, աստված իմ, աստված իմ, աստված իմ... (հագմիցս, վրա-վրա կրկնում է այս բառերը):

Ջերին մահամերձ է, նրա դեմքի արտահայտությունը հիմա փոխվել է, դարձել մեղմ ու հանգիստ: Մերթ ընդ մերթ ձայնը կերկերում է՝ աղավաղվելով ցավից, բայց նա ասես մահվան հետ կռիվ է տալիս:

ՕԵՐԻ (ժպտալով).— Ծնորհակալ եմ, Փիթե՛ր: Լուրջ եմ ասում: Այնպես եմ շնորհակալ քեզնից:

Փիթերի ծնոտը կախ է ընկնում: Նա տեղից շարժվելու ուժ չունի, բայց է կտրել:

Ախ, Փիթե՛ր, այնպես էի վախենում, որ քեզ ձեռքիցս կփախցնես: (Ճգնում է ծիծաղել): Չես պատկերացնի, թե ինչպես էի վախենում, որ դու կգնաս ու ինձ մենակ կթողնես: Հիմա արդեն կպատմեմ, թե ինչ պատահեց գազանանոցում: Ինձ թվում է... ինձ թվում է, ահա թե ինչ պատահեց գազանանոցում: Երբ այնտեղ էի, որոշեցի, որ կգնամ դեպի հյուսիս... այսինքն՝ հյուսիսային ուղղությամբ... մինչև որ հանդիպեմ քեզ... կամ որևէ մեկին... և ես որոշեցի, որ խոսքի կբռնվեմ քեզ հետ... հազար ու մի բան կպատմեմ... այնպիսի բաներ, որ դու... Եվ ահա թե ինչ դուրս եկավ դրանից: Տեսնո՞ւմ ես: Ահա թե ինչ դուրս եկավ: Միայն թե չգիտեմ... նախատեսել էի ես այս ամենը... Չէ... չէ՛, չէ՛, հազիվ թե: Թեև կարծես թե նախատեսել էի: Ահա այն ամենը, ինչ դու ուզում էիր իմանալ: Հիմա արդեն գիտես, չէ՞, թե ինչ էր պատահել գազանանոցում: Եվ գիտես, թե ինչ ես տեսնելու հեռուստացույցով... Այն դեմքը, որի մասին ասում էի... հիշո՞ւմ ես... ես դեմքի մասին էի խոսում... իմ դեմքն է, իմ դեմքը, որ հիմա աչքիդ առաջ է, Փիթե՛ր... Փիթե՛ր... Փիթե՛ր... շնորհակալ եմ: Ես պատահեցի քեզ... (Կամացուկ ծիծաղում է): Եվ դու սիրտեցիր ինձ... իմ լավ Փիթե՛ր...

**ՓԻԹԵՐ (գրեթե ուշակորույս).**— Օ՛ր, աստվա՛ծ իմ...

**ՋԵՐԻ.**— Դու լավ կանես գնաս: Կարող է մարդ գալ, դու հո չե՞ս ուզում, որ քեզ այստեղ տեսնեն:

**Փիթերը** տեղից չի շարժվում և սկսում է արտասպել:

**ՓԻԹԵՐ.**— Օ՛ր, աստված իմ, աստվա՛ծ իմ...

**ՋԵՐԻ (մարող ձայնով. նրա մահվան ժամը մոտ է).**— Այլևս այստեղ չգաս, Փիթե՛ր: Դու գրկվեցիր քո ունեցածից: Դու կորցրիր նստարանդ, բայց պատիվդ բարձր պահեցիր: Քեզ մի բան եմ ուզում ասել, Փիթե՛ր: Դու բոլորովին էլ բույս չես, ոչ, դու կենդանի ես: Դու էլ ես կենդանի: Իսկ հիմա փախիր, Փիթե՛ր: Փախիր, լսո՛ւմ ես... Նաչիր... (Հանում է թաշկինակը և մեծ ճիգերով հաղթահարելով ցավը՝ սրբում է դանակի բռնատեղի վրայի մատնահետքերը): Փախիր այստեղից, Փիթե՛ր...

**Փիթերը շրջվում է և օրորվելով մի քանի քայլ անում:**

Սպասիր... սպասիր, Փիթե՛ր...

**Փիթերը կանգ է առնում, շուռ գալիս:**

Գիրքդ վերցրու... գիրքդ... Այստեղ է... կողքիս... քո նստարանին... չէ, ավելի շուտ, իմ նստարանին... Արի... վերցրու գիրքդ...

**Փիթերը փորձում է մոտենալ նստարանին, բայց ընկրկում է:**

Դե, շուտ արա... շուտ... Փիթե՛ր...

**Փիթերը նետվում է դեպի նստարանը, ճանկում գիրքը և ետ քաշվում:**

Ապրես, Փիթե՛ր... ապրես... Իսկ հիմա... փախիր այստեղից...

**Փիթերը մի պահ վարանում է, ապա դուրս փախչում ձախից:**

Փախիր... (Փակում է աչքերը): Փախիր... թուրակները ճաշը եփել... քեզ են սպասում... կատուները... սեղան են գցում...

**ՓԻԹԵՐ (բեմի ետևից. սրտմաշուկ աղաղակով).**— Օ՛ր, ԱՍՏՎԱ՛Ծ ԻՄ...

**Ջերին** աչքերը փակ, գլուխն է տարուբերում:

**ՋԵՐԻ (արհամարհաբար նմանակելով և միաժամանակ պաղատագին).**— Օ՛ր... աստվա՛ծ... իմ... (Մեռնում է):

# ՋՈՆ ՕՍԲՈՐՆ

## ԵՏ ՆԱՅԻՐ ԶԱՅՐԱՑԱԾ

### Գ Ո Ր Ծ Ո Ղ Ա Ն Ջ Ի Ն Ք

ՎԻՄԻ ՓՈՐՔԵՐ  
ԲԼԻՑ ԼՈՒԻՍ  
ԼԻՍՍՈՆ ՓՈՐՔԵՐ  
ՀՆԻՆԱ ՉԱՐԼՁ  
ԳՆԴԱՊԵՏ ՌԵԴՅԵՐՆ

Գործողությունը տեղի է ունենում Փորթերների մեկ սենյականոց բնակարանում: Մի-  
օրին Անգլիա<sup>1</sup>: Մեր օրերը:

Արարված առաջին  
Ապրիլյան իրիկնամուտ:

Արարված երկրորդ  
Պատկեր առաջին. երկու շաբաթ անց:  
Պատկեր երկրորդ. հաջորդ օրվա երեկոյան:

Արարված երրորդ  
Պատկեր առաջին. մի քանի ամիս անց:  
Պատկեր երկրորդ. մի քանի թույլ անց:

## ԱՐԱՐԿԱԾ ԱՌԱՋԻՆ

Փորթերների մեկ սենյականոց բնակարանը Միջին Անգլիայի խոշոր քաղաքներից մեկում: Ապրիլյան իրիկնամուտ:

Բեմը պատկերում է վիկտորիական ոճով<sup>2</sup> կառուցված մի մեծ տան վերնահարկի բավականին ընդարձակ ձեղնասենյակը: Առաստաղը շեշտակիորեն իջնում է ձախից աջ: Աջ կողմում՝ երկու փոքր, ցածրիկ լուսամուտ: Սրանց առջև մոգ կաղնեփայտե զարդասեղան է: Կահկարասին հիմնականում հասարակ է ու հնամաշ: Աջից՝ խորքի պատի գրեթե ամբողջ երկարությամբ, երկտեղանի մահճակալ է դրված: Պատի մնացած մասը զբաղեցրել են գրադարակները: Աջ կողմում՝ մահճակալի առջև, մի ծանրանիստ կոմոդ է, որը բեռնված է գրքերով, փողկապներով և հազար ու մի տեսակ պատահական բաներով: Սրանց մեջ զգզված խաղաղիքներ էլ կան. մի մեծ, թաշվե արջ և մի խավոտ, փափկամազ սկյուռ: Չախից դուռն է: Դռան մոտ փոքրիկ հանդերձապահարան կա: Չախ պատի մեծ մասը զբաղել է բարձրահիթ, երկարավուն լուսամուտը: Վերջինս թեև սանդուղքին է նայում, բայց սանդղահարթակի ապակեպատ տանիքից լույսը նրա միջով թափանցում է սենյակ: Հանդերձապահարանի մոտ գազօջախն է, ապա՝ փայտե բուֆետը, որի վրա ձեռքի ռադիոընդունիչ է դրված: Կենտրոնում ամուր նաշասեղանն է և երեք աթոռ, իսկ նաշասեղանի առջև՝ աջից և ձախից, երկու խոր, կաշեպատ, երեսթափ բազկաթոռ:

Վարագույրը բարձրանալիս՝ Ջիմին և Քլիֆը նստած են համապատասխանաբար աջ և ձախ բազկաթոռներին: Երկուսն էլ թերթ են կարդում: Լրագրերի ետևից միայն երկու զույգ ռաբեր են դուրս ցցվել: Բազկաթոռների չորս կողմը լրագրերի կույտեր են խառնիխուռն թափված: Ծուտով մենք կտեսնենք մեր հերոսներին: Ջիմին բարձրահասակ, նիհար, քսանհինգին մոտ երիտասարդ է՝ թվիդե հնամաշ բաճկոնով և մարզական շալվարով: Ծխամորճ է ծխում, որի ծուխը բռնել է սենյակը: Ջիմիի բնավորությունը անկեղծության և հեզնոտ չարության, քրնջության և սանձարձակ դաժանության ապշեցուցիչ խառնուրդ է: Նա անհամբեր է, պնդերես, ինքնասեր. մի համակցություն, որը հավասարապես վանում է և՛ զգայուն, և՛ անզգա մարդկանց: Բժախնդիր, անզիջում ազնվությունը, որ հատուկ է նրան, քչերին կգրավի: Ոմանց նա սնկատաշանդության չափ զգայնոտ կթվա, մյուսներին՝ պարզապես դատարկարանի մեկը: Նման հախուռն խառնվածքը նրան գրեթե անխոցելի է դարձնում: Քլիֆը Ջիմիի տատեկիցն է, կարճահասակ է, թխա-



հեր, պնդակազմ, սվիտերով է և նոփ-նոր, մոխրագույն, բայց սաստիկ (մոթված շալվարով: Նա հուլուրջան աստիճանի հանգստակաց է ու դանդաղկոտ: Թախծոտ դեմքին դրոշմված է ինքնուսի բնածին խելքի կնիքը: Եթե Ջիմին մարդկանց վանում է իրենից, սպա Քլիֆը նույնիսկ զգուշավոր մարդկանց մեջ համակրանք կամ առնվազն արտաքին բարչացականություն է արթնացնում: Նա Ջիմիի իսկական հակոտնչան է:

Չախից՝ բուֆետի մոտ, կանգնած է Էլիսանը: Նա խոնարհվել է արդուկի կանգնակի վրա: Նրա կողքին շորերի կույտ կա: Էլիսանը աճեճաստակալի անհատականությունն է երեք հոգուց բաղադրված այս բարդ բազմաձայնության մեջ: Նրա կերպարի երաժշտական բանալին ուրիշ է. Էլիսանն ստես մի քնքուշ, թրթռուն մեղեդի լինի, որը ստեպ-ստեպ կորչում է տղամարդկանց կերպարների բնդհանուր դաշնավոր-ճան կոշտ ու առնակորով հնչյունների մեջ: Նրա հագին մաշված, բայց բանկարժեք կիսազգեստ է և Ջիմիի բալագույն-կարմիր վերնաշապիկը, որը նա բաց է թողել կիսազգեստի վրայից: Բայց որքան էլ որ տարօրինակ է, նույնիսկ այս հագուստով, նա միանգամայն նրբագեղ տեսք ունի: Էլիսանը մոտավորապես տղամարդկանց տարիքին է: Սրբանց արտառոց կերպարանքն ավելի է բնդգծում նրա գեղեցկությունը: Նա բարձրահասակ է, նրբիբան, թխավարս, ձվաձև դեմքով ու նուրբ դիմազծերով: Նրա խոբունկ, ծով աչքերում գարծաճալի ներքին զրսայ-վածություն կա, որի հետ անհնար է հաշվի չնստել:

Սենյակը թաղված է ծխամուծի մեջ: Անդորր է: Միայն Էլիսանի արդուկի թխլթխկոցն է մերթընդմերթ խախտում անդորրը: Գարնանա-վեճ այն զովասուն երեկոներից է, որոնք շուրջված են ամպերով ու սեղերներով: Հանկարծ Ջիմին իր լրագիրը շարտում է հատակին:

ՋԻՄԻ.— Մի հարցնող լինի, թե ինչու եմ ամեն կիրակի սրանով զբաղ-վում: Ախր նույնիսկ գրախոսականներն են նույնը, ինչ որ անցած շաբաթ: Գրքերը փոխվում են, գրախոսականները մնում նույնը: Դու վերջացրի՞ր քոնը:

ՔԼԻՖ.— Դեռ ոչ:

ՋԻՄԻ.— Հոգիս դուրս եկավ մինչև անգլիական վեպի մասին երեք սյունակ կարդացի: Կեսից շատը ֆրանսերեն բառեր են: Լսիր, թերթ կարդալիս մտքովի չի՞ անցնում, թե տգետի մեկն ես:

ՔԼԻՖ.— Չէ, չի անցնում:

ՋԻՄԻ.— Բայց դու ախր հենց տգետ ես, որ կաս: Իսկական ուսմի՞կ: (Էլիսանին): Դո՞ւ ինչ կասես: Դու էլ հո ազնվազարս ես, չէ՞:

ՔԼԻՍՈՆ (մտացիր).— Ի՞նչ, չլսեցի:

**ՋԻՄԻ.**— Ասում եմ՝ թերթ կարդալիս չե՞ս գգում, որ մտավոր ընդունակություններով առանձնապես չես փայլում:

**ԷԼԻՍՈՆ.**— Հա՛... Ես դեռ չեմ հասցրել թերթերը նայել:

**ՋԻՄԻ.**— Ինչ եմ հարցնում, ի՞նչ է պատասխանում: Ասում եմ...

**ՔԼԻՖ.**— Հանգիստ թող խեղճ աղջկան: Նա զբաղված է:

**ՋԻՄԻ.**— Պա՛հ, տեսա՞ր: Չի էլ կարող խոսել, ի՞նչ է: Ասա, դու չե՞ս կարող խոսել, հը՞: Կարծիք հայտնել: Թե՞ սպիտակամորթ կնոջ լուծը այնպես նեղն է գցել, որ մտածելը մոռացել ես:

**ԷԼԻՍՈՆ.**— Ներիր: Ես ականջիս ծայրով էի լսում:

**ՋԻՄԻ.**— Բա իհարկե՛, ականջիդ ծայրով կլսես: Ջիմին է, Էլի՛, ասիեղջրփեղ դուրս է տալիս, գլուխ չի մնացել, մարդու քուն է տանում: Հենց դրա համար էլ տիկին Փորթերն առաջինն ինքն է հորանջելով օրինակ ծառայում:

**ՔԼԻՖ.**— Քեզ ասացի՛ նրան հանգիստ թող:

**ՋԻՄԻ (բղավելով).**— Ծա՛տ լավ, սիրելի՛ս: Գնա քնի՛ր: Առանձնապես բան չկա, ես հենց այնպես խոսում եմ, Էլի: Պա՛րզ է: Խոսում եմ: Հիշեցի՛ր, որ այսպիսի բառ գոչություն ունի: Դե՛, կներես, հագա՛ր ներողություն:

**ՔԼԻՖ.**— Հերիք է ճղավես: Թող կարդամ:

**ՋԻՄԻ.**— Ի՞նչ կարիք կա: Մեկ է, ոչ մի բառ գլուխդ չի մտնում:

**ՔԼԻՖ.**— Ըհը:

**ՋԻՄԻ.**— Դու անավոր բույժ ես:

**ՔԼԻՖ.**— Այո, և անուս: Իսկ հիմա ձայնդ կտրիր, հա՞:

**ՋԻՄԻ.**— Ինչո՞ւ չես կնոջս խնդրում, որ կարդացածդ քեզ բացատրի: Նա ուսյալ տիկին է: (**Էլիսոնին**): Ծիշտ չէ՞:

**ՔԼԻՖ (շարունակելով կարդալ, արացի է տալիս Ջիմիին).**— Հանգիստ թող նրան, ասացի՛:

**ՋԻՄԻ.**— Եթե մի անգամ էլ համարձակվես խփել, ականջների կտրկես, ավազակի մե՛կը: (**Խլում է Քլիֆի լրագիրը**):

**ՔԼԻՖ (առաջ թեքվելով).**— Լսիր, ես ինքնակրթությամբ եմ զբաղված: Մի՛ խանգարիր ինձ, լողլո՛ղ սատանա Ետ տառ: (**Ձեռքը մեկնում է լրագիրը վերցնելու**):

**ԷԼԻՍՈՆ.**— Ասածու սիրուն, Ջիմի՛, ե՛տ տուր: Ես չեմ կարողանում մտքերս հավաքել:

**ՔԼԻՖ.**— Լսեցի՛ր, տուր թերթը: Նա չի կարողանում մտքերը հավաքել:

**ՋԻՄԻ.**— Մտքերը հավաքե՛լ: (**Լրագիրը Քլիֆի կողմն է շարտում**): Ախր նրա գլխում արդեն մի դար է, մտքի նշույլ չկա: Ի՞նչ է, ճիշտ չէ՞:

ԷԼԻՍՈՆ.— Ծիշտ է:

**ՋԻՄԻ (հատակից մի լրագիր վերցնելով).—** Ես քաղցած եմ:

ԷԼԻՍՈՆ.— Չի կարող պատահել, այսքան շո՞ւտ:

**ՔԼԻՖ.—** Անկշտում խոզ:

**ՋԻՄԻ.—** Ես խոզ չեմ: Ուղղակի սիրում եմ ուտել, այսքան մի բան:

**ՔԼԻՖ.—** Սիրո՞ւմ եմ ուտել: Դու իսկական տռփամոլ ես, միայն այն տարբերությամբ, որ ուտել-խմելու վրա ես կենտրոնացած: Սպասի՛ր, տղա՛ ջան, վերջիվերջո «Համաշխարհային նորույթներ» էլ կընկնես. Ջեյմս Փորթեր անունով քսանհինգամյա մի երիտասարդ անցյալ շաբաթ դատապարտվել է մի գլուխ կաղամբի և լոբու պահածոյի հետ հանցավոր կապի մեջ մտնելու համար: Մեղադրյալը խոստովանել է, որ երկար ժամանակ տկարություն է զգացել և քանիցս ուշաթափվել: Նա խնդրել է որպես մեղմացուցիչ դեպք հանցանաց նկատի ունենալ իր օրինակելի ծառայության փաստը հակաօդային պաշտպանության պետի պաշտոնում:

**ՋԻՄԻ (քմծիծաղ է տալիս).—** Այո՛, այո՛, այո՛: Ինչ արած, սիրում եմ ուտել: Կուզենայի սրտիս ուզածի չափ էլ ապրել: Ասելու բա՞ն ունես:

**ՔԼԻՖ.—** Քո շատ ուտելու օգուտն էլ չտեսանք: Ոչ վրա ես գալիս, ոչ բան:

**ՋԻՄԻ.—** Ինձ նման մարդիկ փորը չեն հաստացնում: Ես արդեն փորձել եմ գլուխդ մտցնել: Մեր ներսում ամեն ինչ այրվում-հալվում է: Իսկ հիմա բերանդ փակիր, ես պիտի կարդամ: Կարող ես ինձ համար թել դնել:

**ՔԼԻՖ.—** Տե՛ր աստված, նո՞ր չէր, որ մի ամբողջ թելնիկ գլխիդ քաշեցիր: Ինձ ընդամենը մի բաժակ հասավ:

**ՋԻՄԻ.—** Հետո ի՞նչ: Էլի դիր:

**ՔԼԻՖ (Էլիսոնին).—** Ծիշտ չէ՞: Դու ասա, ես ընդամենը մի բաժակ չխմեցի՞:

ԷԼԻՍՈՆ (տանց գլուխը բարձրացնելու).— Այո:

**ՔԼԻՖ.—** Լսեցի՞ր: Ինքն էլ է մի բաժակ խմել: Աչքովս տեսա: Լրիվ դու լակեցիր:

**ՋԻՄԻ (թերթ կարդալով).—** Թելնիկը վրան դիր:

**ՔԼԻՖ.—** Ինքդ դիր: Թերթս ճմրթեցիր, ուրեմն ինքդ էլ թելնիկը կորցնես:

**ՋԻՄԻ.—** Այս տանը միայն ես գիտեմ, թե ինչպես պետք է վարվել լրագրերի և մնացած մյուս բաների հետ: (**Մի ուրիշ լրագիր է վերցնում**): Մի աղջիկ ուզում է իմանալ, թե սիրածը չի՞ կորցնի

արդյոք իր նկատմամբ ունեցած ամբողջ հարգանքը, եթե ինքը տղային տա նրա աղաչած-պաղատածը: Տխմար անասո՛ւն:

**ՔԼԻՖ.**— Ձեռքս ընկներ, այնպե՛ս բացատրեի որ:

**ՋԻՄԻ.**— Մտոյ իմանա, թե ում է հարկավոր այս զտանցանքը: (**Ցած է նետում լրագիրը**): Կարդացիր արծա՛ր վստահելի թերթը:

**ՔԼԻՖ.**— Ո՞ր մեկը:

**ՋԻՄԻ.**— Կիրակի օրը ընդամենը երկու վստահելի թերթ է լույս տեսնում, մեկը ձեռքինդ, մյուսը՝ սա: Արի փոխանակենք:

**ՔԼԻՖ.**— Է՛հ, ինչո՞ւ չէ, խնդրեմ:

**Փոխանակում են լրագրերը:**

Ես Բրոմլիի<sup>3</sup> եպիսկոպոսի հոդվածն էի կարդում: (**Ձեռքն Էլիսոնի կողմը երկարելով**): Ինչպե՛ս ես, ջանա:

**ԷԼԻՍՈՆ.**— Լավ, սիրելի՛ս: Ծնորհակալ եմ:

**ՔԼԻՖ (ափի մեջ առնելով նրա ձեռքը).**— Ինչո՞ւ չես այդ ամենը թողնում ու մի քիչ հանգստանում: Դու հոգևած տեսք ունես:

**ԷԼԻՍՈՆ (ծպտադեմ).**— Քիչ է մնացել:

**ՔԼԻՖ (համբուրում է նրա ձեռքը և մատները բերանն առնում).**— Նա գեղեցիկ է, չէ՞:

**ՋԻՄԻ.**— Բոլորը մի գլուխ այդ են ասում: (**Աչքը գցում է Էլիսոնի աչքին**):

**ՔԼԻՖ.**— Ինչ սիրունիկ, քնքուշ թաթիկ է: Հա՛րի: Հիմա կկծեմ կուտեմ:

**ԷԼԻՍՈՆ.**— Վերջ տուր, նրա վերնաշապիկը կայրեմ:

**ՋԻՄԻ.**— Բաց թող նրա մատները, էլ չզզվացնես: Ի՞նչ է ասում Բրոմլիի եպիսկոպոսը:

**ՔԼԻՖ (Էլիսոնի ձեռքը բաց թողնելով).**— Հա՛, այստեղ ասվում է, որ նա մի շատ սրտառույ ռդերձ է հղել բոլոր քրիստոնյաներին՝ կոչ անելով ուժերի ներածին չափ օժանդակել ջրածնային ռումբի արտադրությանը:

**ՋԻՄԻ.**— Հա՛, իրոք որ շատ սրտառույ բան է, մարդ հուզվում է մինչև հոգու խորքը: (**Էլիսոնին**): Դու է՛լ հուզվեցիր, սիրելի՛ս:

**ԷԼԻՍՈՆ.**— Դե իհարկե:

**ՋԻՄԻ.**— Ահավասիկ նույնիսկ իմ կինը հուզվեց: Ես պարտավոր եմ եպիսկոպոսին նվիրատվություն ուղարկել: Տեսնենք ուրիշ էլ ինչ է ասում: Դամ-դի-դամ-դի-դամ-դի-դամ: Հա՛, պարզ է: Եպիսկոպոսը վիրավորվել է, որովհետև ինչ-որ մեկը հատարարել է, թե նա գորավիզ է լինում հարուստներին ընդդեմ աղքատների: Նա ընդգծել է, որ ինքը դասակարգային տարբերություններ չի ընդունում: «Այս գաղափարը համատորե՛ն ու չարամտորե՛ն մեր վը-

զին է փաթաթում բանվոր դասակարգը»: Լա՛վ է, խոսք չկա՛:

**Ջիմին բարձրացնում է աչքերը, որպեսզի տեսնի, թե ինչ տպավորություն է գործել նրանց վրա իր կարդացածը, բայց Քլիֆը լրագիր է կարդում, իսկ Էլիսանը՝ ջանասիրաբար արդուկ անում:**

(Քլիֆին): Դու այս մասը կարդացե՛լ ես:

ՔԼԻՖ.— Հը՛մ:

**Ջիմին հասկանում է, որ նրանք իր հետ գլուխ դնելու տրամադրություն չունեն, բայց չի ուզում հաշտվել այդ մտքի հետ:**

**ՋԻՄԻ (Էլիսանին).— Քեզ չի՞ թվում, որ սա կարող էր հայրդ գրած լինել:**

ԷԼԻՍՈՆ.— Ի՞նչը:

ՋԻՄԻ.— Այն, ինչ որ կարդացի:

ԷԼԻՍՈՆ.— Ինչո՞ւ պիտի հայրս գրած լիներ:

ՋԻՄԻ.— Որովհետև հենց նրա ոճով է:

ԷԼԻՍՈՆ.— Իսկապե՞ս:

ՋԻՄԻ.— Ի՞նչ ես կարծում, Բրոմլիի եպիսկոպոսը նրա ծածկանունը չէ՞:

ՔԼԻՖ.— Բանի տեղ մի դիր: Ուզում է մեկնումեկին անպայման խայթել: Իսկ դա նրա համար մեկ անգամ մեկ է:

**ՋԻՄԻ (առիթից օգտվելով, որ ունկնդիրներ կան, վրա է տալիս).—**

Դու կարդացի՞ր այն կնոջ մասին, որը գնացել է Էդլս Քորթ<sup>4</sup> ինչ-որ ամերիկացի ավետարանականի կազմակերպած միտինգին մասնակցելու: Խցկվել է առաջ, որ հայտարարի, թե ինքը սիրո կամ աստված գիտի նրա քարոզած ինչի կողմնակից է, բայց նորադարձների ամբոխի թոհուրոհի մեջ շարդել է կողոսկրերն ու արացիներ ստացել գլխին: Նա օրհասական տանջանքից ոռնալիս է եղել, բայց 50000 մարդու մեջ, որոնք կոկորդները պատռելով «Հանա՛ջ, Քրիստոսի գորք» են երգում, նրա վրա ո՛վ պիտի ուշադրություն դարձներ:

**Նա շեշտակիորեն բարձրացնում է գլուխը պատասխանի ակնկալիքով, բայց Քլիֆը և Էլիսանը լուռ են:**

Մեկ-մեկ ինձ թվում է, թե ես չորս կողմս ոչինչ չեմ հասկանում:

Թե՛ր գլուխ չեկա՛վ:

ՔԼԻՖ (լրագրի ետևից).— Ի՞նչ թե՛լ:

ՋԻՄԻ.— Թե՛յնիկը դիր:

**Էլիսանը հացացքը հառում է նրան:**

ԷԼԻՍՈՆ.— Թե՛՛յ ես ուզում:

ՋԻՄԻ.— Չգիտեմ: Այսինքն՝ չէ, չեմ ուզում:

ԷԼԻՍՈՆ.— Իսկ դո՛ւ, Քլիֆ:

ՋԻՄԻ.— Նա էլ չի ուզում: Դեռ շա՛տ ես դրանով զբաղվելու:

ԷԼԻՍՈՆ.— Երկար չի տևի:

ՋԻՄԻ.— Աստված իմ, ինչպե՛ս եմ ասում կիրակիները: Ամեն ինչ այնպես ձանձրալի՛ է, միապաղա՛ղ: Չգիտես գլուխդ ուր առնես փախչես: Միշտ նույն բաները. թերթեր, թեյ, արդուկի թխկթխկոց: Եվս մի քանի ժամ, ու մի շաբաթ էլ կանցնի՛-կգնա՛: Թռչո՛ւմ է, թռչո՛ւմ մեր ջահելությունը: Դուք սա հասկանո՛ւմ եք:

ՔԼԻՖ (լրագիրը ցած նետելով).— Լսի՛ր, ի՞նչ է պատահել:

ՋԻՄԻ (անփույթ եղանակով).— Ա՛հ, այնպես ոչինչ: Անիծվես դու, անիծվեք երկուսդ էլ, գրողը տանի ձեզ բոլորիդ:

ՔԼԻՖ.— Եկեք կինո գնանք: (Էլիսոնին): Ի՞նչ կասես, սիրելի՛ս:

ԷԼԻՍՈՆ.— Ես երևի չկարողանամ: Միգուցե Ջիմին գա: (Ջիմիին): Չե՛ս ուզում գնալ:

ՋԻՄԻ.— Որ առջևիս շարքերը լցված լակոտ-լուկուտը հանգստյան օրս գլխիս հարա՛մ անեն: Չէ, շնորհակալ եմ: (Դադար): Դու կարդացի՞ր Փրիսթլիի<sup>5</sup> վերջին հոդվածը: Ասենք, ինչու եմ գուր տեղը հարցնում: Մեկ է, գիտեմ, որ կարդացած չես լինի: Մի հարցնող լինի, թե ինչու եմ ամեն շաբաթ ինը փեճ<sup>6</sup> ծախսում այս անիծված թերթի վրա: Ինձնից բացի սա ոչ ոք չի կարդում: Ո՛ւմ պետքն է: Բոլորը քաղցր ծուլությունից արբած՝ մրափ են մտել: Դուք երկուսդ էլ շուտով ինձ խելագարության դուռը կհասցնեք: Հաստատ համոզված եմ, որ նպատակ եք դրել ինձ գծանոց գցել: Ա՛յս, աստված իմ, ինչպե՛ս եմ ուզում գոնե մի քիչ ոգևորվել: Մի քիչ ամենաստվորական, մարդկային ոգևորություն, ուրիշ ոչինչ: Ուզում եմ մի ջերմ, սրտահույզ ձայն լսել, մի ձայն, որ երկինքն ի վեր ալելուիա՛ է կանչում: (Թատերական շարժումով ձեծում է կուրծքը): Ալելուիա՛, ես ո՛ղջ եմ: Գլխումս միտք ծագեց: Ինչո՞ւ չենք մի քիչ խաղում: Եկեք ձևացնենք, թե մենք մարդ արարածներ ենք և իրոք ապրում ենք: Դե՛, հենց այնպես, կատակի համար: Ի՞նչ կասեք: Ձևացնենք, թե մարդիկ ենք: (Հայացքը դարձնում է մերթ-Քլիֆին, մերթ էլիսոնին): Չէ՛, երևում է, սրանց անհնար է տեղաշարժ անել. հոգիները քար են դառել:

ՔԼԻՖ.— Նա ի՞նչ է ասում:

ՋԻՄԻ (նեղսրտած, որ իրեն խանգարում են էլիսոնի հոգին ուտել).— Ո՛վ՛ նա:

ՔԼԻՖ.— Միսոր Փրիսթլին:

ՋԻՄԻ.— Այն է ասում, ինչ որ միշտ: Նա նման է հայրիկին, որն իր

հարմարավետ, աշխարհի անցուդարձից կտրված անապատում բազմած՝ հայացքը հատել է անցյալի աղջամուղջի մեջ կորած բարորությանը: Ի՞նչ էս արել, որ շավարդ այդ օրն է ընկել:

ՔԼԻՖ.— Ի՞նչ է որ:

ՋԻՄԻ.— Դա անցյալ շաբաթ առածդ շավարդն է: Մի տես, թե ինչ է արել նոր շավարդ:

ԷԼԻՍՈՆ.— Ինչ փնթիցն էս, Քլիֆ: Նայելն անգամ սարսափելի է:

ՋԻՄԻ.— Փող է ծախսել, նոր շավարդ անել ու վայրենու պես թավալ է տալիս: Ի՞նչ էիր անելու, եթե էս չհետևեի քեզ: Հը՞, ի՞նչ էիր անելու: Ասա տեսնենք:

ՔԼԻՖ (քթի տակ խնդմնդալով).— Չգիտեմ: (Էլիսոնին): Ի՞նչ էի անելու, սիրելի՛ս:

ԷԼԻՍՈՆ.— Ավելի լավ է հանես շավարդ:

ՋԻՄԻ.— Ծիշտ է ասում: Հանիր, հետևդ մի լավ դադեմ:

ԷԼԻՍՈՆ.— Տուր արդուկեմ, քանի դեռ արդուկը տաք է:

ՔԼԻՖ.— Դե լավ: (Սկսում է հանել շավարդը): Գրպաններս դատարկեմ, տամ: (Գրպաններից բանալիներ, մի տուփ լուցկի, թաշկիճակ է հանում):

ՋԻՄԻ.— Լուցկից տուր, հա՞:

ՔԼԻՖ.— Ի՛, չլինի՞ Էլի ուզում էս մոխն այստեղ կապել: Ամբողջ սենյակից գարշահոտ է փշում: (Էլիսոնին): Սարսափելի հոտ է, ճիշտ չե՞մ ասում:

Ջիմին լուցկին խլում է նրանից և ծխամորճը վառում:

ԷԼԻՍՈՆ.— Ինձ համար միևնույն է: Վարժվել եմ:

ՋԻՄԻ.— Նա աշխարհիս երեսին ինչի ասես կվարժվի: Եթե նույնիսկ մեռնի և ուշքի գա դրախտում, հինգ բոպե հետո իրեն կզգա ինչպես տանը:

ՔԼԻՖ (շավարդ էլիսոնին տալով).— Ծնորհակալ եմ, սիրելի՛ս: Ինձ մի սիգարետ կտա՞ս:

ՋԻՄԻ.— Չտա՛ս:

ՔԼԻՖ.— Էլ չեմ դիմանում այս գարշահոտին: Պետք է ծխեմ:

ՋԻՄԻ.— Կարծեմ բժիշկը քեզ արգելել է ծխել:

ՔԼԻՖ.— Բերանդ փակելո՞ւ էս, թե՞ չէ:

ՋԻՄԻ.— Դո՛ւ գիտես: Խոց ունեցողը դո՛ւ էս: Այնքան ծխիր, մինչև որ նոպա ունենաս, եթե այդ է ուզածդ: Ես էլ գործ չունեմ: Վե՛րջ, ձեռքերս լվանում եմ: Չահլաս գնացել է սրա-նրա հոգսը քաշելուց: Մի հարցնող լինի, թե ինչիս է պետք:

Էլիսոնը Քլիֆին սիգարեթ է տալիս: Երկուսն էլ վառու. ե՞ն ս' գա-  
րեթները, Էլիսոնը շարունակում է արդուկ անել:

Ոչ ոք ոչնչի մասին չի մտածում, բոլորի համար ամեն ինչ մեկ է:  
Ոչ հավատ կա, ոչ համոզմունքներ, ոչ էլ ոգևորություն: Այնպես,  
Էլի', սովորական կիրակնօրյա երեկո է:

**Քլիֆը վարտիքով և սվիտերով նորից նստում է:**

ՋԻՄԻ.— Գոնե մի համերգից բանից լինեք, լսե՛հնք: (Ռադիոընդունիչը  
վերցնում է հատակից): Է': (Ուտքով խթում է Քլիֆին): Թե՛յ դիր:  
Քլիֆն ի պատասխան քրթմնջում է: Նա նորից խորասուզվել է  
ընթերցանության մեջ:

Ըհը', այս է որ կա: Վոան-Ուիլյամս: Ինչքան չլինի, չեղածից լավ  
է. Պարզ է, ազդեցիկ, անգլիական: Առհասարակ ինձ նման մար-  
դիկ թունդ հայրենասեր չեն: Չգիտեմ ով է ասել... ինչպե՛ս էր  
ասել, Է'... «խոհարարությունը սովորել ենք Փարիզից»,— ծիծա-  
ղելի է, չէ՞,— «քաղաքականությունը՝ Մոսկվայից, իսկ բարոյա-  
կանությունը՝ Պորտ Սաիդից»?: Սրա նման մի բան: Չեմ կարողա-  
նում հիշել, թե ով է ասել: (Դադար): Ի՛հ, ասե՛նք, մեկ է, դու չես  
ճանաչի: Չզվում եմ խոստովանել, բայց ինձ թվում է, ես հասկա-  
նում եմ, թե ինչ պիտի զգացած լինի նրա հայրիկը՝ աղքատ եր-  
կար տարիների բացակայությունից հետո Հնդկաստանից վերա-  
դառնալով: Էդվարդյան հրամանատարությունն այնտեղ իր սե-  
փական աշխարհն էր ստեղծել, որն անկասկած դրախտանման մի  
բան է եղել: Տանու թխվածքներ, քրոքեթ, լուսաշող մտքեր, ճեր-  
մակ հագուստներ: Կլոր տարի՛ն՝ հուլիսը ձեզ օրինակ, օրն ի բուն՝  
արև, բանաստեղծությունների նրբագեղ հատորյակներ, ճոճուսն  
սպիտակեղեն, օսլայի բույր: Ինչպիսի՛ ռոմանտիկ տեսարան: Թեև  
իհարկե, շիճու: Ախր գոնե երբեմն էլ անձրև պիտի գա: Բայց և  
այնպես, ափսոս գալիս է, թեկուզ և ամեն ինչ շիճու է եղել:  
Եթե սեփական աշխարհդ չունես, ավելի լավ է ափսոսաւ ուրիշի  
կորցրածը: Ըստ երևույթին, ես սենտիմենտալության գիրկն եմ  
ընկնում: Բայց պետք է ասեմ, որ ամերիկյան դարաշրջանում  
ձանձրալի է ապրել, նամանավանդ եթե ամերիկացի չես: Երևի  
մեր երեխաները բոլորն ամերիկացի դառնան: Փայլուն միտք է,  
չէ՞: (Աքացի է տալիս Քլիֆին և բղավում): Ասում եմ՝ փայլուն  
միտք է, չէ՞:

**ՔԼԻՖ.— Հաստա՛տ:**

ՋԻՄԻ.— Ի՞նչ ես ուռած տկճորի պես վեր ընկել: Գոնե թե՛յ դնե՛իր:

**Քլիֆը խոր հոգոց է հանում:**



**(Շրջվում է Էլիսանի կողմը):** Քո այդ Ուերաթերը երեկոյան գալո՞ւ է:

**ԷԼԻՍՈՆ.**— Գուցէ հանդիպի: Ինքդ էլ գիտես, որ նրանից գլոյխ չես հանի:

**ՋԻՄԻ.**— Է՛հ, հույս ունեմ, որ չի հանդիպի: Միայն Ուերաթերն էր ինձ այսօր պակաս:

**ԷԼԻՍՈՆ.**— Հիշում եմ, ինքդ էիր ասում, թե նա միակ մարդն է, որի հետ լեզու ես գտնում:

**ՋԻՄԻ.**— Ճիշտ է: Բայց մենք խոսում ենք միևնույն լեզվի տարբեր բարբառներով: Նա ինձ դուր է գալիս: Կծում է, խայթում, ընդունակ է...

**ԷԼԻՍՈՆ.**— Ոգևորվելո՞ւ:

**ՋԻՄԻ.**— Այո, ոգևորվելու: Նրա հայտնվելուն պես՝ ես վերակենդանանում եմ: Նա ինձ չի սիրում, բայց ինչ-որ բան է տալիս, այնպիսի բան, որ ես ուրիշներից չեմ կարող ստանալ: Այն ժամանակից ի վեր, ինչ...

**ԷԼԻՍՈՆ.**— Հասկանալի է: Այն ժամանակից ի վեր, ինչ դու ապրում էիր Մադլենի հետ... **(Արդուկված շորերը գիրկն առնելով՝ գնում է մահճակալի կողմը):**

**ՔԼԻՖ (լրագրի ետևից).**— Մադլենն ո՞վ է:

**ԷԼԻՍՈՆ.**— Դե արթնացիր, սիրելի՛ս: Դու Մադլենի մասին շատ ես լսել: Նրա սիրուհին է եղել: Հիշեցի՞ր: Այն ժամանակ նա տասնչորս տարեկան է եղել: Թե՛ տասներեք...

**ՋԻՄԻ.**— Տասնութ:

**ԷԼԻՍՈՆ.**— Նա ամեն ինչով պարտական է Մադլենին:

**ՔԼԻՖ.**— Ես միշտ շփոթում եմ քո կանանց: Դա այն մե՞կն է, որ տարիքով քեզնից շատ մեծ է եղել:

**ՋԻՄԻ.**— Ընդամենը տասը տարով:

**ՔԼԻՖ.**— Մի սրա՛ն տես, Դոն Ժուա՛նն ես, թե՛ Մարչբենքսը գլխներին:

**ՋԻՄԻ.**— Համերգի ժամանակը չէ՞: **(Ստուգում է լրագրում):**

**ՔԼԻՖ (հորանջում է).**— Ա՛հ, այնպե՛ս է քունս տանում: Սիրտս սևանում է, հենց որ հիշում եմ, թե վաղը նորից պիտի տնկվեմ այդ անտեր կրպակում: Միգուցէ դո՞ւ առևտուր անես, իսկ ես գոնե մի կուշտ քնեմ:

**ՋԻՄԻ.**— Ես պետք է ֆարրիկա գնամ՝ ապրանք ստանալու, այնպես որ ստիպված կլինես դո՞ւ առևտուր անել: Հինգ րոպեից համերգը կսկսվի:

**Էլիսունը վերադարձել է արդուկի կանգնակի մոտ: Ձեռքերը կրթ-  
քին խաչած կանգնել է, մտասևեռ ծխում է:**

Նրա մեկ մի ճկույթի մեջ շատ ավելի կյանք կար, քան ձեր եր-  
կուսի մեջ՝ միասին վերցրած:

**ՔԼԻՖ.— Ո՞ւմ ճկույթի:**

**ԷԼԻՍՈՆ.— Մադլենի, էլ ո՞ւմ:**

**ՋԻՄԻ.—** Նրա հետաքրքրասիրությունն ապշեցուցիչ էր. նա հետա-  
քրքրվում էր ամեն ինչով՝ երևույթներով, մարդկանցով: Դա պար-  
զամիտ հարցասիրություն չէր: Նրա կողքին ինձ մի հրաշալի զգա-  
ցում էր համակում. ասես արթնացել եմ ու ամեն ինչ տեսնում եմ:

**Էլիսունն սկսում է արդուկել Քլիֆի շավարը:**

**ՔԼԻՖ (լրագրի ետևից).—** Երևում է իսկապես պիտի թել դնեմ:

**ՋԻՄԻ (անվրդով).—** Նրա հետ ամեն ինչ արկածի նման էր: Ավտո-  
բուսով ուղևորությունն անգամ մի ամբողջ ողիսական էր:

**ՔԼԻՖ.—** Ես չէի ասի, թե Ուեքսթերը Ոդիսևսի նման է: Ոնց որ ան-  
ճոռնի սատանա լինի:

**ՋԻՄԻ.—** Ես Ուեքսթերի մասին չեմ խոսում, հիմարի գլուխ: Թեև նա  
յուրովի հետաքրքիր է: Ընդի Բրոնթեի<sup>8</sup> տղամարդ տեսակն է:  
**(Էլիսունին):** Նա քո ընկերներից միակն է, որ արժանավոր մարդ  
է: Չարմանում եմ, որ նրա հետ նստում-վեր ես կենում:

**ԷԼԻՍՈՆ.—** Երևի ինքն էլ է զարմանում:

**ՋԻՄԻ (մոտենալով աջակողմյան լուսամուտին՝ դուրս է գալուս).—** Նա  
ոչ միայն կամքի ուժ ունի, այլև նրբագացություն: Հազվագյուտ  
համակցություն է իմ կարծիքով: Քո մյուս ընկերները չունեն ո՛չ  
մեկը, ո՛չ մյուսը:

**ԷԼԻՍՈՆ (հանգիստ ու լուրջ).—** Խնդրում եմ, Ջիմի՛, մի շարունակիր:

**Ջիմին շրջվում է, գալուս նրան: Էլիսունի ձայնի հոգնահար-աղեր-  
սական տոնը նրան միանգամից զինաթափ է անում: Բայց շատ չան-  
ցած, Ջիմին հավաքում է իրեն՝ նախապատրաստվելով նոր գրոհի: Նա  
քայլերն ուղղում է սենյակի կենտրոն, կանգնում Քլիֆի գլխավերևը և  
աչքերը հառում նրան:**

**ՋԻՄԻ.—** Քո ընկերները... եկեք նրանց կեղտերը ջրի երես հանենք:

**ՔԼԻՖ (քրթմնջալով).—** Լվացքդ հետո կանես: Թող շավարս արդուկի:

**ՋԻՄԻ (մտազբաղ).—** Չկարծես, թե ես կարող եմ նրան համբերու-  
թյունից հանել: Ինչ էլ որ անեմ, նա իրեն չի կորցնի: Թեկուզ հենց  
հիմա ընկնեմ ու մեռնեմ:

**ՔԼԻՖ.—** Դե ուրեմն ընկիր ու մեռիր:

**ՋԻՄԻ.—** Սրանց ազգուսակում մի մասը կովազան են, ոնց որ օրի-

ճակ՝ սրա մայրիկն ու հայրիկը: Ռազմաշունչ, ամբարտավան ու չարահոգի: Մյուսներն ուղղակի ոչնչություն են: Սա ոչ այս է, ոչ այն, երկուսի մեջտեղն է:

ՔԼԻՖ.— Ինչո՞ւ չես համերգդ լսում: Համ էլ հերիք է գլխավերևս ցըցվես: Քո այդ միալար դզգոցից մեջքս խուտուտ է գալիս:

**Ջիմին ոլորում է նրա ականջը, Քլիֆը ցավից աղաղակում է: Ջիմին նրա գլխավերևը կանգնած՝ քմծիծաղ է տալիս:**

Ախր ցավում է, չէ՞, սադիստի մե՛կը: (Էլիսոնին): Երանի մի լավ հասցնես դրա գլխին:

ՋԻՄԻ (կանգնելով նրանց միջև).— Դու երբևէ տեսե՞լ ես սրա եղբորը՝ Նայջելին: Սենդհերսթի<sup>9</sup> ռազմական ակադեմիայի զարդն է, կանգնում է զգաստ՝ փայտ կուլ տվածի պես, որ կողմից էլ նայես, կըզակի նշույլ չես տեսնի դեմքին: Ես ինքս նրան ընդամենը մի անգամ եմ տեսել: Նա ինձ առաջարկեց իր հետ դուրս ելնել, երբ ես նրա մորն ասացի, որ վհուկի մեկն է:

ՔԼԻՖ.— Եվ դու դո՞ւրս եկար:

ՋԻՄԻ.— Ո՛հնց չէ, խելքս հացի հե՛տ էի կերել: Նա հաղթանդամ տղա է: Մի լսեիր, թե ինչ անգիր արած տափակություններ էր դուրս տալիս: Մարմնացյալ անհամություն, այն էլ ամենաբարձր կարգի. ահա թե ինչ է եղբայր Նայջելը: Հիշիր իմ խոսքը. Օրերից մի օր նա մինիստր կդառնա: Թեև հոգու խորքում անորոշաբար զգում է, որ իրենց թայֆան գոփում ու մոլորեցնում է ում որ պատահի՝ արդեն քանի-քանի սերունդների: (Մոտենալով բեմեզրին և թիկունքը դարձնելով դեպի հանդիսասրահը): Նայջելը ոչնչություն է, բայց ոչ այն աստիճանի, որ անտեսանելի դառնա: Անտեսանելի քաղաքագետները ո՛չ մեկի հարկավոր չեն, նույնիսկ իրենց համախոհների՛ն: Նայջելն ավելի մեծ ոչնչություն է գիտելիքների հարցում: Նրա պատկերացումները կյանքի և սովորական մարդու մասին այնքան մշուշոտ են, որ նա արդարև խարժանի է առանձնահատուկ շքանշանների, օրհնակ, ասեճք, բթամտության համար շնորհվող մեդալի: Միայն թե նա երբեք չի տանջվի խղճի խայթերից, թեկուզ թեթևակի: (Շարժվելով դեպի բեմի խորքը): Բացի այդ, նա հայրենասեր է ու անգլիացի, և նրա մտքով իսկ չի անցնի, որ աջ ու ձախ մատնում է իր հայրենակիցներին: Ուրեմն ի՞նչ է մնում անել: Միակ բանը, որ նա ի վիճակի է անել, սեփական բթամտության մեջ ապաստան փնտրելն է: Իրերի սովորական կարգը պահպանելու ամենաստույգ ձևն այն է, որ ուղորմելի, չնչին ուղեղի փոփոխությունների մասին մտածելու ան-

ընդունակ համարես: Ծիշտ է, մեր օրերում դա այնքան էլ հեշտ չէ: Իսկապես որ հեշտ չէ: Բայց Նայջելի ուսուցիչները ամեն ինչ հասկանալիս են եղել, նրանք Նայջելին ըստ պատշաճին կրթել-դաստիարակել են, այնպես որ նա գլուխ կհանի: Անհանգստանալու կարիք չկա, գլուխ կհանի: Եվ դեռ ավելի՛ն. նա շատ ավելի լավ գլուխ կհանի, քան որևէ մեկը:

**Սենյակում լռություն է տիրում, միայն Էլիսնի արդուկի թխկթըխկոցն է լսվում: Նա աչքերը չի բարձրացնում արդուկի կանգնակից: Քլիֆը կախել է գլուխը:**

(Աշխուժությունը ժամանակավորապես լքել է Ջիմին: Նա կասկածելի հաղթանակ է տարել: Նա Էլիսնին և Քլիֆին նայելու ուժ չունի, որպեսզի ստուգի իր ճարտասանության ներգործությունը: Ուշքի գալու համար ժողովում է լուսամուտին, նայում դուրս): Անձրև է սկսվել: Միայն այս էր պակաս: Նստենք այս մարագում ու նայենք անձրևին: (Ջիմի ակնկալիքներն ի դերև են ելել, և նա ջանում է ինքն իրեն նորից բորբոքել: Ասես ինչ-որ մեկի հետ զրուցելիս լինի): Այո՛, այսպիսին է այս անուշիկ կնոջ ընտանիքը: Հայրիկի և մայրիկի հետ արդեն ծանոթացաք: Միայն թե նրանց բարձրաշխարհիկ նիստուկացով հանկարծ չխաբվեք: Սրանք անուկիդ աքացի կտան, մինչ դու գլխարկդ սպասուհուն ես հանձնում: Ինչ վերաբերում է Նայջելին և Էլիսնին... (Ռադիոհաղորդավարի ձայնի սիրաշահ հնչերանգը նմանակելով): Նայջել և Էլիսն: Նրանց ներքին և արտաքին հատկանիշները նույնն են. պորտաբուծություն, հույություն և արուլիս:

**ՔԼԻՖ.**— Որ որ է համերգը կսկսվի: Միացնե՛մ ռադիոընդունիչը:

**ՋԻՄԻ.**— Վերջերս այդ բառը նայեցի բառարանում: Դա այն բառերից է, որոնց իմաստը երբեք վստահ չեմ եղել, թե հասկանում եմ, չնայած միշտ համարել եմ, որ ընդհանուր առմամբ գիտեմ:

**ՔԼԻՖ.** — Ի՞նչ դառ:

**ՋԻՄԻ.**— Արդեն ասացի՝ արուլիս: Գիտե՛ս, թե ինչ է նշանակում:

**Քլիֆը տարուբերում է գլուխը:**

Ծիշտն ասած, ես էլ չգիտեի: Այն ամբողջ ժամանակաընթացքում, ինչ ամուսնացած եմ այս կնոջ՝ այս անորոշ էակի հետ, չեմ իմացել և հանկարծ հայտնաբերեցի մի բառ, որը սպառնիչ կերպով բնութագրում է նրան: Դա միայն նրան բնորոշող բառ չէ, ո՛չ, դա նրա իսկական անունն է: Արուլիս՝ Հոմերոսի պարարտամարմին տիկնոջ անվան պես է հնչում, չէ՞: Ահավասիկ, տիկին Արուլիսն իր ամուսնու՝ Սեքստուսի հետ, շտապում է կրկես՝ գլա-

դիատորների մարտը դիտելու:

**Քլիֆը տազնապալից տեսք ունի, նա մի անհանգիստ հայացք է անտում Էլիսնի վրա:**

Խեղճ Սեքստուս: Նա այնքան աննշան արարած է, որ եթե հայտնը վեր հողիվուդյան ֆիլմում, ապա նրա դերը կտալին որևէ խեղճուկրակ անգլիացի դերասանի: Նա նույնիսկ չգիտի, որ կինոնկարի ավարտից շատ առաջ տնաբույս քրիստոնյաներն իր քթին բուրվառ կտան՝ ստերեոֆոնիկ հարաչ-հրոցով կճողոպրեն իր կրնոջ հետ:

**Էլիսնը խոնարհվում է արդուկի կանգնակի վրա և փակում աչքերը:**

Տիկին Աբուլիային վառ ու թեթև կյանք էին խոստացել, մի բան, որ խեղճ Սեքստուսը չէր կարող երբևէ առաջարկած լինել: Է՛յ, դո՛ւ, Աբուլիա՛ ես, Բլբուլիա՛ ես, ի՛նչ ես, միգուցե մե՛նք էլ իջնենք մրցասպարեզ, գրողի ծո՛ցը, թե առյուծները սլատառ-սլատառ կանեն: Հը՞, ի՞նչ կասես:

ԷԼԻՍՈՆ.— Աստված իմ, եթե նա շարունակի, ես կխելագարվեմ:

ՋԻՄԻ.— Բա ինչո՞ւ չես խելագարվում: Գոնե մի բան արած կլինես:

(Մոտենում է կոմոդին): Հա՛, ես դեռ չեմ ասել քեզ, թե ինչ է նշանակում այդ բառը: (Բառարանը ձեռքն առնելով): Նրա համար չեմ կարդա. նա առանց այդ էլ գիտի: Եթե սխալ արտասանեմ, կինս ինձ ուղղելու համար կսպասի հարմար առիթի՝ մինչև որ բավականաչափ մարդ ներկա լինի: Ահա. կարդում եմ. «Աբուլիա: Գոյական: Հունական  $\alpha$  ժխտական մասնիկից և *bulē*— կամք բառից: Կամագրկություն, ձեռներեցության բացակայություն, փոքրոգություն, սահմանափակ մտավոր ընդունակություններ»: (Շրջկոցով փակում է գիրքը): Ահա՛ իմ կինը: Լավ է բնորոշված, չէ՞: Ձեր առջև տիկին Աբուլիան է: (Խոպոտ բղավոցով): Էհե՛յ, բըլբո՛ւ: Կինոյի երկրորդ մասը ե՞րբ եք ցույց տալու: (Հետևում է Էլիսնին, հույս ունենալով, թե նա կպոռթկա):

Միայն մի պահ Էլիսնի դեմքն աղավաղվում է, նա գլուխը ետ է գցում, թվում է ուր որ է կաղաղակի: Բայց իսկույն նեթ իրեն հավաքում է: Նա ընտելացել է այս փութաջանորեն նախապատրաստված գրոհներին. ըստ երևույթին, Ջիմին այսօր չի հաջողվի հաղթանակ տանել: Էլիսնը նորից սկսում է արդուկ անել: Ջիմին մոտենում է ուղիորդներինչին և միացնում: Վոան-Ուիլյամսի ստեղծագործությունների համերգն արդեն սկսվել է: Ջիմին վերադառնում է իր բազկաթոռի մոտ, նստում է, ետ ընկնում թիկնակին և փակում աչքերը:

**ԷԼԻՍՈՆ (շալվարը Քլիֆին տալով).—** Ահա, սիրելի՛ս: Լավ չարդուկ-  
վեց, բայց առայժմ յոյա կտանի:

**Քլիֆը վեր է կենում և հագնում շալվարը:**

**ՔԼԻՖ.**— Հիանալի է:

**ԷԼԻՍՈՆ.**— Լավ պահիր: Ես հետո ինչպես որ պետքն է կարդուկեմ:

**ՔԼԻՖ.**— Ծնորհակալ եմ, անուշի՛կս, իմ սիրո՛ւն աղջիկ: (**Գրկում է  
նրան և համբուրում**):

**Էլիսոնը ժպտում է և նրա քթին կտտացնում: Ջիմին հայացքով  
հետևում է նրանց:**

**ԷԼԻՍՈՆ (Քլիֆին).—** Մի-մի հատ չծխե՛նք:

**ՔԼԻՖ.**— Լավ միտք է: Սիգարեթները որտե՞ղ են:

**ԷԼԻՍՈՆ.**— Գազօջախի վրա: Դու չե՛ս ուզում, Ջիմի՛:

**ՋԻՄԻ.**— Ոչ, շնորհակալ եմ, ես փորձում եմ երաժշտություն լսել: Ձեզ  
չե՛մ խանգարում:

**ՔԼԻՖ.**— Ներեցեք, ձերդ պայծառափայլություն: (**Մի սիգարեթ է դը-  
նում Էլիսոնի բերանը, մի ուրիշը վերցնում իրեն և վառում սի-  
գարեթները: Նստում է, հատակից վերցնում կիսատ թողած լրա-  
գիրը**):

**Էլիսոնը վերադառնում է իր կանգնակի մոտ: Քլիֆը շարտում է  
լրագիրը, վերցնում մեկ ուրիշը և սկսում թերթել:**

**ՋԻՄԻ.**— Առանց աղմուկ հանելու հնարավոր չե՞:

**ՔԼԻՖ.**— Օ՛հ, կներես:

**ՋԻՄԻ.**— Էջ շրջելն ի՞նչ է, այդ էլ չգիտես: Համ էլ դա իմ լրագիրն է:  
(**Խլում է լրագիրը**):

**ՔԼԻՖ.**— Լսիր, ի՞նչ ես կծծիություն անում:

**ՋԻՄԻ.**— Եղած-չեղածը ինը փենս է, վաճառվում է ուզածդ կրպակում:  
Գլուխդ չունեմ, թող երաժշտություն լսեմ: (**Դադար: Էլիսոնին**):

Դու դեռ երկա՞ր ես թխլթխկացնելու:

**ԷԼԻՍՈՆ.**— Իսկ ի՞նչ է որ:

**ՋԻՄԻ.**— Քո մտքով, իհարկե, չի անցնում, որ դու խանգարում ես ինձ  
երաժշտություն լսել:

**ԷԼԻՍՈՆ.**— Ներիր: Ծուտով կվերջացնեմ:

**Դադար: Արդուկի թխլթխկոցն ասես արձագանքելիս լինի երա-  
ժրշտությանը: Քլիֆն անհանգիստ շուռումուռ է գալիս տեղում: Ջիմին  
հետևում է Էլիսոնին, նրա ոտքն սկսում է սպառնալից դողալ: Նա վեր  
է ցատկում տեղից, Էլիսոնի առջևից անցնելով մոտենում է ռադիո-  
ընդունիչին և անջատում:**

Ինչո՞ւ անջատեցիր:

ՋԻՄԻ.— Որովհետև ուզում էի երաժշտություն լսել:

ԷԼԻՍՈՆ.— Է՛հ, լսեիր, քեզ ո՛վ էր խանգարում:

ՋԻՄԻ.— Հետաքրքիր է ինչպես լսեի, երբ ամեն մեկդ ձեր հերթին աղմկում եք:

ԷԼԻՍՈՆ.— Ներիր, խնդրում եմ, բայց ես չեմ կարող բոլոր գործերս թողնել, ինչ է՛ դու ուզում ես երաժշտություն լսել:

ՋԻՄԻ.— Այդ ինչո՞ւ:

ԷԼԻՍՈՆ.— Ազնիվ խոսք, Ջիմի՛, կարծես երեխա լինես:

ՋԻՄԻ.— Չհամարձակվե՛ս գլխիս խրատներ կարդալ: (**Քլիֆի կողմը դառնալով**): Նա այնքան անշնորհք է: Ես ամեն երեկո ականատես եմ լինում նույն տեսարանին: Նա այնպես է զրիկում մահճակալին, ասես հակառակորդին գետնող ըմբշամարտիկ լինի, այնպիսի ճարճատյունով է քաշում վարագույրները, որ թվում է, թե տունը գլխիդ փուլ կածի: Հո կին չէ. իսկական թնդանոթաձի՛գ: Դու նկատե՛լ ես, թե կանայք ինչքան աղմկարար են: (**Քայլում է դեպի ձախակողմյան բազկաթոռը**): Չե՛ս նկատել: Ինչպես են քայլելիս կտկտացնում հատակին: Կամ չե՛ս տեսել, թե ինչպես են զուգվում զարդասեղանի առաջ. տուփերը թրմիոցով բացուխուփ անում, խոզանակները, շրթներկերը, ունելիները՝ իրենց զարմանազան զենքերը շրիկթրիկացնելով վերցնում ու դրնում: (**Դեմքը դարձնում է դեպի Էլիսոնի զարդասեղանը**): Ես ամեն օր հետևում եմ այդ արարողությանը: Երբ տեսնում ես կրճողը ննջարանի հայելու առաջ, սկսում ես հասկանալ, թե ինչ նրբագիտակ դահիճ է նա: (**Շրջվելով Քլիֆի կողմը**): Դու երբևէ տեսե՛լ ես, թե ինչպես է կեղտակոլով, զառամյալ բեղվիճը մատները ճխտում ոչխարի ճարպոտ մսեղիքի մեջ: Իմացած եղիր, որ կինը նրանից ոչնչով չի տարբերվում: Փառք ասածու, որ կին վիրաբույժներ քիչ կան: Թե չէ աչքդ չթարթած՝ նրանց վայրագ չանչերը աղիքների դուրս կթափեին: Հո՛ւյ, կճանկեին աղիքների, ինչպես աղվափնջիկը դիմափոշու տուփից: Շոր՛մի, կշապացնեին սեղանին նույն աղվափնջիկի պես:

**ՔԼԻՖ (զվարճալի ծամածռությամբ)**.— Թո՛ւհ, ձայնդ կտրի՛ր:

**ՋԻՄԻ (հեռանալով բեմի խորքը)**.— Նրանք փորոտիքդ հերակալների նման շաղ կտային հատակով մեկ: Մարդ պիտի տախտակի պես անզգա լինի այդքան աղմկարար ու անշնորհք լինելու համար: (**Քայիս է բեմի կենտրոն և կործնում սեղանին**): Ժամանակին ես սեռյակ էի վարձել երկու աղջիկների բնակարանի ներքևի հարկում: Այդ շնից ծնվածներն ինչ անեին-չանեին, ինձ մոտ պարզ

լսվում էր: Նրանք կարողանում էին ամենահասարակ, առօրյա գործողությունները կտտանքի վերածել: Սկզբում ես նրանց հետ լեզու էի թափում: Բայց հետո բերանիս կապն արձակեցի. կանգնում էի սանդուղքին և բերանս եկած ամենաթունոտ հիշոցները կոկորդով մեկ գոռում: Բայց նրանց վրա ոչինչ, ոչի՛նչ չէր ազդում: Եթե նրանցից մեկնումեկը զուգարան էր մտնում, ապա միջնադարյան ճակատամարտի դրոշմունք էր լսվում: Վերջիվերջո նրանք ինձ հոգեհամ արին. ստիպված տեղափոխվեցի: Երևի մինչև հիմա էլ դեռ այնտեղ եմ ապրում: Կամ երևի արդեն ամուսնացել եմ և իրենց թշվառ ամուսիններին եմ խելագարեցնում. դրոշներն եմ շրխկացնում, կրունկների կոկտոցով ուղեղ սղոցում, արդուկներն ու կաթասները դմբդմբացնում: Կինը աղմուկների անսպառ աղբյուր է:

**Մոտակա եկեղեցու կոչնակներն սկսում եմ զարկել:**

Գրո՛ղը տանի: Հիմա էլ այս զանգե՛րն սկսեցին: **(Նետվում է դեպի լուսամուտը):** Վե՛րջ տվեք, լսո՛ւմ եք: Կտրե՛ք դրանց ձայնը: Մարդ կխելագարվի՛: Ես չե՛մ ուզում լսել այդ զրնգոցը:

**ԷԼԻՍՈՆ.—** Հերի՛ք է բղավես: **(Իսկույն սթափվելով՝ փորձում է նրան խելքի բերել):** Ուզում ես միսս Դրուրի՞ն վե՛րև բարձրանա:

**ՋԻՄԻ.—** Թքա՛ծ ունեմ միսս Դրուրի՛ի վրա. այդ ազնվարյուն, բարեկիրթ բրածոն ինձ չի ֆոռացնի: Ես ձեզ նման միամիտ չեմ: Քալթառ թալանչի՛: Սրա պես քոսոտ սենյակի համար խելքից դուրս փող է մեզնից պլոկում: Համ էլ նա հիմա երևի եկեղեցում է: **(Մատնացույց է անում լուսամուտը):** Այդ գրողի տարած կոչնակներն է զարկում:

**Քլիֆը մոտենում է լուսամուտին և փակում:**

**ՔԼԻՖ.—** Եղբոր նման վերջ տուր: Եկեք գնանք խմելու:

**ՋԻՄԻ.—** Ամեն տեղ փակ է: Այսօր կիրակի է: Մոռացել ես, ի՞նչ է: Բացի այդ դրսում անձրև է գալիս:

**ՔԼԻՖ.—** Դե որ այդպես է, արի պարենք:

**Նա Ջիմիին ստիպում է իր հետ պարապտույտներ անել, մի բան, որ Ջիմիի սրտով չէ:**

Դուք հաճա՛խ եք այստեղ լինում:

**ՋԻՄԻ.—** Միայն կտղանքի շրջանում: Դե լավ, լավ, հերիք է, շատ զվարճալի էր:

**Նա փորձում է դուրս արձնել, բայց Քլիֆն արցանի պես սեղմել է նրան:**

Թո՛ղ ինձ:



**ՔԼԻՖ.**— Չեմ թողնի, մինչև որ Աերողություն չխնդրես բոլորին զգվաց-  
նելու համար: Ի՞նչ եք կարծում, այս տարի զգեստների լանջա-  
բացվածքները մինչ պորտատեղ կհասնե՞ն:

**ՋԻՄԻ.**— Քեզ ասում են՝ բա՛ց թող, թե չէ ատամների կջարդե՛մ:

**Նա մի եռանդագին փորձ է անում ազատվելու, բայց Քլիֆը կախ-  
վում է նրանից: Երկուսն էլ գլորվում են հատակին և սեղանի տակ  
կոժշտում իրար հետ: Էլիսոնը շարունակում է արդուկ անել: Թեև նը-  
ման տեսարանները նրա համար սովորական են, բայց ուր որ է նրա  
համբերության բաժակն էլ կլցվի: Քլիֆին հաջողվում է դուրս պրծնել,  
նա վեր է կենում և կանգնում արդուկի կանգնակի առաջ: Ջիմին էլ է  
ոտքի էլնում: Նրանք նորից են կռվի բռնվում:**

**ԷԼԻՍՈՆ.**— Ի սե՛ր աստծո, ուշքի՛ եկեք: Ամեն օր նույն գազանանո՛ցն  
է:

**Ջիմին կատաղի ճիգ է թափում և Քլիֆին դիտմամբ հրում ար-  
դուկի կանգնակի վրա: Կանգնակը շուռ է գալիս: Քլիֆը դիպչում է  
Էլիսոնին, և նրանք հաչտնվում են հատակին: Էլիսոնը ցավից ճչում է:  
Ջիմին ապշահար, շնչակտուր նրանց է նայում:**

**ՔԼԻՖ (վեր կենալով).**— Նա վնասվել է: Որտե՞ղդ է ցավում:

**ԷԼԻՍՈՆ.**— Ի՞նչ է, չի՞ երևում:

**ՔԼԻՖ.**— Նա թևն այրել է արդուկով:

**ՋԻՄԻ.**— Ներիր ինձ, սիրելի՛ս:

**ԷԼԻՍՈՆ.**— Հեռացի՛ր:

**ՋԻՄԻ.**— Խնդրում եմ, ներիր: Կարծում ես դիտմա՛մբ...

**ԷԼԻՍՈՆ (գլուխն անգոր թափահարելով).**— Չե՛մ ուզում երեսդ տես-  
նել:

**Ջիմին անվճառականորեն նայում է նրան: Քլիֆը գլխով նշան է  
անում, Ջիմին շրջվում է և սենյակից դուրս գնում:**

**ՔԼԻՖ.**— Եկ նստիր: (Նրան տանում է դեպի աջակողմյան բազկա-  
թոռը): Գույնդ թոցրել ես: Ինչպե՛ս ես զգում:

**ԷԼԻՍՈՆ.**— Արդեն լավ եմ:

**ՔԼԻՖ.**— Հիմա կնայենք թեղ: (Զննում է այրվածքը): Կարմրել է: Դեռ  
շատ կցավի: Ի՞նչ անենք:

**ԷԼԻՍՈՆ.**— Ա՛հ, առանձնապես ոչինչ: Պետք է օճառ քսել: Ուրիշ ոչ  
մի բան միտքս չի գալիս այրվածքների մասին:

**ՔԼԻՖ.**— Ես հիմա կվազեմ ներքև ու լոգարանից մի քիչ օճառ կքե-  
րեմ: Քեզ լա՛վ ես զգում, ուրիշ տեղ չի՞ ցավում:

**ԷԼԻՍՈՆ.**— Ոչ:

**ՔԼԻՖ** (դռան կողմը գնալով).— Մի վայրկյանից կգամ: (**Դուրս է գր-  
նում**):

**ԷԼԻՍՈՆ** (հեճկում է բազկաթոռի թիկնակին և հայացքը հառում ա-  
ռաստաղին: Խոր հոգոց է հանում և ձեռքերով ծածկում դեմքը:  
Թևի ցավն զգալով՝ ցնցվում է և ձեռքը իջեցնում: Մյուս ձեռքը  
տանում է մազերի վրայով: Խոլ շշուկով).— Ա՛յս, աստվա՛ծ իմ:

**ՔԼԻՖ** (ներս է մտնում մի կտոր օճառ ձեռքին).— Բերեցի այդ հոտա-  
վետ զիբիլը: Կարծում ես կօգնի՞:

**ԷԼԻՍՈՆ**.— Պիտի որ օգնի:

**ՔԼԻՖ**.— Դե ուրեմն բեր քսենք: Տուր տեսնեմ ձեռքդ:

Նա ծունկի է իջնում Էլիսոնի առաջ, Էլիսոնը մեկնում է ձեռքը:

Ծորակի տակ պահեցի: Լրիվ փափկել է: Ծատ կամաց կքսեմ:  
(Զգուշորէն օճառ է քսում աչքվածքին): Տալի՞ն է:

**Էլիսոնը տարուբերում է գլուխը:**

Դու քաջ աղջիկ ես:

**ԷԼԻՍՈՆ**.— Ի՞նչ քաջ: (**Արտասովախեղդ ձայնով**): Ընդհակառակը,  
Քլի՛ֆ: Ես այլևս չեմ դիմանում: (**Երջում է դեմքը**): Հոգնել եմ:

**ՔԼԻՖ**.— Վերջ: (**Օճառը մի կողմ է դնում**): Ուրիշ բան չե՞ս ուզում, բե-  
րեմ:

**Էլիսոնը տարուբերում է գլուխը: Քլիֆը նստում է բազկաթոռի  
արմնկակալին և գրկում նրա ուտերը: Էլիսոնը գլուխը հեճում է նրա  
կրծքին:**

Մի տխրիր, սիրելի՛ս:

Նա շոյում է Էլիսոնի ծոծրակը, Էլիսոնը կախում է գլուխը:

**ԷԼԻՍՈՆ**.— Որտե՞ղ է նա:

**ՔԼԻՖ**.— Իմ սենյակում:

**ԷԼԻՍՈՆ**.— Ի՞նչ է անում:

**ՔԼԻՖ**.— Փուլել է մահճակալին: Կարդում է երևի: (**Նրա պարանոցը  
շոյելով**): Արդե՞ն լա՛վ ես:

**ԷԼԻՍՈՆ** (ետ է ընկնում և նորից փակում աչքերը).— Քո շնորհիվ:

**ՔԼԻՖ** (համբուրում է նրա գլուխը).— Ձե՛մ կարծում, թե նորից ինքնու-  
րոյն ապրելու քաջություն կունենամ՝ անկախ ամեն ինչից: Ես  
իրոք որ բռի եմ ու ոչնչով աչքի չընկնող, մե՛նակ ես ի վերջո,  
վայրենի կդառնամ: Բացի այդ, կապվում ես մարդկանց, սկսում  
սիրել. ցավն էլ հեճց այդ է:

**ԷԼԻՍՈՆ**.— Ի՞նչ ոչ մի սեր այլևս հարկավոր չէ: Բավական է: Ես էլ  
չեմ կարող:

**ՔԼԻՖ**.— Դու դեռ շատ ջանել ես հուսահատվելու համար: Ջանել ու

գեղեցիկ: Միգուցե թևիդ վիրակա՞յ դնենք. ի՞նչ կարծիքի ես:  
ԷԼԻՍՈՆ.— Չարդաստեղանի դարակում բիճո կա:

**ՔԼԻՓՔ զնում է դեպի աջ՝ զարդաստեղանի կողմը:**

Նայում եմ ետ ու ինչքան ինձ հիշում եմ, երբեք չեմ իմացել, թե ինչ է նշանակում իրեն երիտասարդ զգալ, իսկապես երիտասարդ: Վերջերս Ջիմին էլ նույն բանն ասաց: Ես ձևացրի, թե չեմ լսում, թեև գիտեի, որ նրան ցավ եմ պատճառում: Նա իհարկե, կրակ կտրեց այսօրվա պես: Ես հասկանում էի, թե նա ինչ էր ուզում ասել: Այնքան հեշտ էր պատասխանել. «Այո, սիրելիս, ես քեզ հասկանում եմ: Հասկանում եմ քո զգացումները»: **(Ուտերն է թոթվում):** Հենց այդպիսի հեշտ ու հասարակ բաներն են, որ մեզ անհնարին են թվում:

**ՔԼԻՖ (բիճուր ձեռքին կանգնել է աջում՝ մեջքով դեպի Էլիսոնը).—**

Տեսնես մինչև ե՞րբ եք իրար կոկորդ կրծելու: Մեկ-մեկ ուղղակի զգվելի է նայել:

ԷԼԻՍՈՆ.— Դու հո չե՞ս ուզում մեզնից հեռանալ, չես ուզում, չե՞:

**ՔԼԻՖ.—** Կարծում եմ, որ չէ: **(Մոտենում է նրան):**

ԷԼԻՍՈՆ.— Ես վախենում եմ: Երանի իմանալի, թե ինչ է լինելու այս ամենի վերջը:

**ՔԼԻՖ (ծուկը հեճելով բազկաթոռի արմնկակալին).—** Տուր տեսնեմ:

**Էլիսոնը՝ մեկնում է ձեռքը:**

Եթե ցավեցնեմ, գոռա: **(Վիրակապում է նրա թևը):**

ԷԼԻՍՈՆ (իր առաջ պարզած ձեռքին նայելով).— Քլի՛ֆ...

**ՔԼԻՖ.—** Հը՞մ: **(Կարճ դադար):** Ի՞նչ է, սիրելի՛ս:

ԷԼԻՍՈՆ.— Ոչինչ:

**ՔԼԻՖ.—** Ասա, ի՞նչ է եղել:

ԷԼԻՍՈՆ.— Գիտես... **(Վարանում է):** Ես հղի եմ:

**ՔԼԻՖ (մի քանի վայրկյան հետո).—** Մկրատը որտե՞ղ է:

ԷԼԻՍՈՆ.— Նույն տեղում:

**ՔԼԻՖ (ուղղվում է զարդաստեղանի կողմը).—** Դրուխյունը լուրջ է: Ե՞րբ ես իմացել:

ԷԼԻՍՈՆ.— Մի քանի օր առաջ: Գլուխս բոլորովին կորցրել էի:

**ՔԼԻՖ.—** Դե պարզ է:

ԷԼԻՍՈՆ.— Հենց հիմա՞ պիտի լինեք, երեք տարուց ավելի է, ամուսնացած ենք:

**ՔԼԻՖ.—** Դե՛, դրանից ոչ ոք ապահովված չէ: **(Մոտենում է նրան):**

Բայց և այնպես, ես զարմացած եմ:

ԷԼԻՍՈՆ.— Ախր այդ մասին նույնիսկ խոսք չի եղել: Ինչպե՞ս կարե-

լի է... այսպիսի բնակարանում... անփող... է՛հ, որ մեկն ասեմ:  
Նա միշտ դեմ է եղել: Ինչ եմ անելու՝ չգիտեմ:

**ՔԼԻՖ.**— Նրան չե՛ս ասել:

**ԷԼԻՍՈՆ.**— Դեռ ոչ:

**ՔԼԻՖ.**— Իսկ ի՞նչ ես մտադիր անել:

**ԷԼԻՍՈՆ.**— Պատկերացում չունեմ:

**ՔԼԻՖ (քիմոսը կտրելով, սկսում է կապել).**— Ձիգ չե՛:

**ԷԼԻՍՈՆ.**— Ձե, լավ է, շնորհակալ եմ: (Վեր է կենում, մոտենում արդուկի կանգնակին, բարձրացնում այն և հեռում բուֆետին):

**ՔԼԻՖ.**— Իսկ չի՞ կարելի...

**ԷԼԻՍՈՆ.**— Դրությունը շտկե՛լ: (Արդուկը դնում է գազօջախին): Դեռ չգիտեմ: Գուցե և կարելի է: Այդ դեպքում, իհարկե, բոլոր պրոբլեմները միանգամից կվերանան:

**ՔԼԻՖ.**— Բայց եթե արդեն ո՛րչ է:

Էլիսոնը միայն գլուխն է օրորում, նրա դեմքը Քլիֆը չի տեսնում:  
Ինչո՞ւ չես ուզում նրան ասել:

Էլիսոնը ծնկում է, հատակից հավաքում շորերը և մեկ առ մեկ դարսում:

Վերջիվերջո նա քեզ սիրում է: Ձեմ կարծում, թե հիշեցնելու կարիք կա:

**ԷԼԻՍՈՆ.**— Մի՞թե չես հասկանում: Նա իսկույն նեթ կսկսի կասկածել, թե ես ինչ-որ դավ եմ նշույթում: Նա անընդհատ համոզում է իրեն, թե ես օգտվում եմ այն հանգամանքից, որ ինքը դյուրաբեկ մարդ է: Այս գիշեր ամեն ինչ լավ կլինի. մենք կսիրենք իրար: Բայց հետո երկուսս էլ կպատկենք առանց աչք փակելու և ահուդողով կսպասենք լուսաբացին: Առավոտյան նա իրեն խաբված կզգա, ասես ես փորձել եմ ամենամեծն ձևով սպանել իրեն: Նա կսկսի հետևել, թե ես ինչպես եմ օրեցօր ուռչում, իսկ ես չեմ համարձակվի նրա աչքերին նայել:

**ՔԼԻՖ.**— Միրելի՛ս, դու ստիպված կլինես դրան դիմանալ:

**ԷԼԻՍՈՆ.**— Ինքդ էլ գիտես, Ջիմին իր սեփական բարոյախոսությունն ունի: Մայրիկը դա «սանձարձակություն» բառով է հորջորջում: Ծիշտ է, այդ բարոյախոսությունն ազատ ու անկախ է, բայց միևնույն ժամանակ շատ խստապահանջ: Դու չես հավատա, բայց ամուսնությունից առաջ մենք ոչ մի անգամ չենք քնել իրար հետ:

**ՔԼԻՖ.**— Իրո՞ք որ տարօրինակ է, եթե նկատի ունենանք նրա սկզբունքները:

**ԷԼԻՍՈՆ.**— Մեր ծանոթությունից հետո ամեն ինչ այնպես արագ կա-

տարվեց, որ հարմար առիթ չեղավ: Բայց հետո նա անընդհատ երեսովս էր տալիս, որ կույս եմ եղել: Կատաղությունից իրեն ուտում էր, ասես ինչ-որ աներևակայելի ձևով խաբված լիներ: Կարելի է կարծել, թե անարատ կինը կաղծի իրեն:

**ՔԼԻՖ.**— Երբեք չեմ լսել, որ դու այդպես խոսես նրա մասին: Դա նրան շատ դուր կգար:

**ԷԼԻՍՈՆ.**— Չեմ էլ կասկածում: (**Շորերը գրկին վեր է կենում**): Քո կարծիքով նա իրավացի՞ է:

**ՔԼԻՖ.**— Ի՞նչ տեսակետից:

**ԷԼԻՍՈՆ.**— Դե՛... ընդհանրապես:

**ՔԼԻՖ.**— Ինչ ասեմ, ես ու նա շատ բաների մասին նույն ձևով ենք մտածում, որովհետև որոշ իմաստով իրար նման ենք: Երկուսս էլ աշխատավորի ընտանիքից ենք, եթե բանը դրան է հասել: Ես գիտեմ, նրա մորական կողմի ազգականները բավականին ունևոր մարդիկ են, բայց Ջիմին նրանց նույնքան է ստում, ինչքան որ ձերոնց: Չեմ կարող բացատրել, թե ինչու: Համեմայն դեպս, նա ինձ հետ լեզու է գտնում, որովհետև ես հասարակ մարդ եմ: (**Քսծիծաղ է տալիս**): Այսպես ասած՝ ոամիկ:

**ԷԼԻՍՈՆ** (**ձեռքը դնում է նրա գլխին և մտազբաղ շոյում**).— Քո կարծիքով ես պետք է նրան ասե՞մ երեխայի մասին:

**ՔԼԻՖ** (**վեր է կենում և գրկում նրան**).— Ամեն ինչ լավ կլինի... այ կտեսնես: Ասա՛ նրան: (**Համբուրում է**):

**Մտնում է Ջիմին:** Ուշադիր, բայց առանց զարմանքի նայում է նրանց: Երկուսն էլ ձևացնում են, թե չեն նկատում նրա ներկայությունը: Ջիմին մոտենում է ձախակողմյան բազկաթոռին և նստում նրանց կողքին: Մի լրագիր է վերցնում և սկսում աչքի անցկացնել: **Քլիֆն** այսը Էլիսոնի գլխին հպած՝ մի հայացք է գցում նրա վրա:

Հայտնվեցի՞ր, ծերուկ: Այդ ո՞ր էիր կորել:

**ՋԻՄԻ.**— Դու շատ լավ գիտես, թե որտեղ էի: (**Առանց Էլիսոնին նայելու**): Ինչպե՞ս է թև:

**ԷԼԻՍՈՆ.**— Ամեն ինչ լավ է: Դատարկ բան էր:

**ՔԼԻՖ.**— Նա գեղեցիկ է, չէ՞:

**ՋԻՄԻ.**— Ծուռ-շուտ ասա՛ չմոռանաս:

**Քլիֆն ու Էլիսոնը շարունակում են գրկախառնված մնալ:**

**ՔԼԻՖ.**— Ոչ մի կերպ չեմ հասկանում, թե ինչ սատանա է մտել նրա մեջ, որ ամուսնացել է քեզ հետ:

**ՋԻՄԻ.**— Կարծում ես քեզ հետ նա ավելի երջանի՞կ կլիներ:

**ՔԼԻՖ.**— Ես նրա ճաշակով չեմ: Ծիշտ չէ՞, սիրելի՛ս:

**ԷԼԻՍՈՆ.**— Ես դեռ չեմ որոշել իմ ճաշակը:

**ՋԻՄԻ.**— Ինչո՞ւ չեք անկողի՞ն մտնում և ձեր ճաշակ-մաշակների հար-  
ցերը փակում:

**ԷԼԻՍՈՆ.**— Գիտե՞ս, ինձ թվում է նա լուրջ է ասում:

**ՋԻՄԻ.**— Իհարկե, լուրջ եմ ասում: Դժվար է կենտրոնանալ, երբ դուք  
այդպես գիրկընդխառն ցցվում եք կողքիս:

**ՔԼԻՖ.**— Հոգու խորքում նա ուղղակի հին պորփրան<sup>10</sup> է:

**ՋԻՄԻ.**— Այդ հարցում՝ գուցե: Համենայն դեպս երկուսդ էլ բավակա-  
նին տխմար տեսք ունեք, երբ այդպես լայտում եք իրար:

**ՔԼԻՖ.**— Իմ կարծիքով Էլիսոնը գեղեցկուհի է: Դու էլ ես նույն կար-  
ծիքին, բայց խոզությունից չես խոստովանում:

**ՋԻՄԻ.**— Վավաշոտ վալլիազի՞: Նրա հայրիկն ու մայրիկը սիրթնում են  
ու խաչակնքում, հենց որ մտաբերում են, որ նա իմ կինն է: Եթե  
նրանք տեսնեին, թե ինչ է կատարվում այստեղ, տեղնուտեղը  
կաթված կատանային: Իմիջիպայոց, հետաքրքիր է, թե ինչ կա-  
նեին: Երևի ոստիկանություն կանչեին: (Բարեկամաբար): Ծխե-  
լիք չունե՞ք:

**ԷԼԻՍՈՆ (անվստահորեն).**— Հիմա կնայեմ: (Մոտենում է սեղանին  
դրված իր պաշուսակին):

**ՋԻՄԻ (Քլիֆին մատնացույց անելով).**— Նա օրեցօր ավելի ու ավելի  
է նմանվում մկան: (Փորձում է նախկին դերի մեջ մտնել): Ծիշո  
եմ ասում, շատ է մկան նման: Ականջները, մոուրը, կարճիկ թա-  
թերը:

**ԷԼԻՍՈՆ (պաշուսակը պրպտելով).**— Պատիկ մկնիկ է:

**ՔԼԻՖ.**— Ծի՛կ-ճի՛կ-ճի՛կ: Ես մուկ եմ:

**ՋԻՄԻ.**— Ծստճստան մկնիկ:

**ՔԼԻՖ (ոստոստալով սեղանի շուրջը և մկան նման ճստճստալով).**—

Ես մո՛ւկ եմ, մո՛ւկ եմ, մո՛ւկ եմ, ճստճստան մկնի՛կ: Այս պարի  
անունը մկնապար է:

**ՋԻՄԻ.**— Ի՞նչ է:

**ՔԼԻՖ.**— Մկնապար: Այսինքն՝ մկնային ժողովրդական պար:

**ՋԻՄԻ.**— Վրայիցդ տհաճ հոտ է գալիս, գիտե՞ս:

**ՔԼԻՖ.**— Իսկ քո վրայից գարշահոտ է փչում, փրչոտ արջի մե՛կը:  
(Վրա է հասնում, բռնում նրա ոտքը): Հոտա՛ծ արջո:

**ՋԻՄԻ.**— Բա՛ց թող ոտքս, ցանցառ ծալապակա՛ս: Աղիքների ոլորում  
կատանամ: Ես հանգստանում եմ: Բա՛ց թող, թե չէ այդ գարշեղի,  
երկար, լայրծուն պոչդ քոքից կկտրե՛մ:

**Քլիֆը ձիգ է տալիս նրա ոտքը, Ջիմին վայր է ընկնում: Էլիսոնը**

թերևսցած հոգով նրանց է նայում, նրա դեմքին փաղաքուշ ժպիտ է հայտնվում:

ԷԼԻՍՈՆ.— Սիգարետները վերջացել են:

Քլիֆը Ջիմիի ոտքից բռնած՝ նրան քարշ է տալիս հատակին:

ՋԻՄԻ (բղավում է).— Գնա սիգարետ առ ինձ համար, հերի՛ք է հիմարություններ անես:

ՔԼԻՖ.— Դե լավ:

Անսպասելիորեն բաց է թողնում Ջիմիի ոտքը, Ջիմին աղաղակում է՝ գլուխը հատակին է դիպել:

ԷԼԻՍՈՆ.— Ահա՛. կես կրոն<sup>11</sup> է: (Տալիս է Քլիֆին): Անկյունի կրպակը բաց կլինի:

ՔԼԻՖ.— Գիտեմ: (Հապճեպ համբուրում է նրա ճակատը): Տես, չմոռանաս: (Գնում է դռան կողմը):

ՋԻՄԻ.— Կորիք գրողի ծո՛ցը:

ՔԼԻՖ (դռան մոտ).— Է՛յ, տիզիվալա՛:

ՋԻՄԻ.— Ի՞նչ ես ուզում:

ՔԼԻՖ.— Թե՛յ կդնես:

ՋԻՄԻ (վեր ցատկելով).— Ախր ես քեզ շանսատա՛կ կանեմ:

ՔԼԻՖ (քսձիծաղ տալով).— Բա ո՞նց, բախ՛կ ջան, ախորժակիդ քացախ: (Դուրս է գնում):

Ջիմին հիմա կանգնած է Էլիսոնի կողքին, Էլիսոնը դեռ պրպտում է պայուսակը: Ջգալով, որ նա իր կողքին է, Էլիսոնը մի քանի վայրկյան հապաղում է, ապա փակում պայուսակը:

ՋԻՄԻ (բռնում է նրա վիրակապված ձեռքը).— Չի՞ ցավում:

ԷԼԻՍՈՆ.— Չէ, առանձնապես բան չկա:

ՋԻՄԻ.— Բոլոր այս հիմարությունները վատ են վերջանում: (Նրա ձեռքը բռնած՝ նստում է սեղանի ծայրին): Ես շատ եմ զղջում արածիս համար:

ԷԼԻՍՈՆ.— Գիտեմ:

ՋԻՄԻ.— Չէ, իսկապես: Ներիր:

ԷԼԻՍՈՆ.— Դե ի՞նչ կարիք կա:

ՋԻՄԻ.— Ես դիտմամբ արեցի:

ԷԼԻՍՈՆ.— Գիտեմ:

ՋԻՄԻ.— Դու անընդհատ աչքիս առաջ ես, և ես անընդհատ ուզում եմ քեզ: Ես ինչոր ձևով լիցքաթափվելու պահանջ ունեմ: Համարյա չորս տարի է, ինչ մենք նույն հարկի տակ ենք ապրում, գիշեր-ցերեկ միասին ենք, բայց ամեն անգամ սառը քրտինքը վրաս է տալիս, հենց որ քեզ տեսնում եմ որևէ սովորական գործ

անելիս, օրինակ, ասենք, երբ արդուկ ես անում:

**Էլիսոնը անվատահորեն շոյում է նրա գլուխը:**

(Հոգոց է հանում): Վատն այն է... Վատն այն է, որ մարդկանց ընտելանում ես: Նույնիսկ ամենադատարկ, մանր-մունր բաները, որոնցով նրանք զբաղվում են, քեզ համար անհրաժեշտ են դառնում: Անհրաժեշտ ու մի տեսակ խորհրդավոր: (Գլուխը թեքում է նրա կողմը, փորձում ի մի բերել մտքերը): Ինձ թվում է... Աերսս... հին տիղմ է կիտված... Ոչ ոք դրա կարիքը չունի... (Դեմքը սեղմում է նրա կրծքին):

**Էլիսոնը դեռևս փոքր-ինչ վեհերոտ շարունակում է շոյել նրա գլուխը: Ջիմին բարձրացնում է գլուխը, նրանք տարփագին համբուրվում են:**

Ի՞նչ ենք անելու երեկոյան:

ԷԼԻՍՈՆ.— Դու ի՞նչ կուզենայիր: Խմե՛լ:

ՋԻՄԻ.— Ես գիտեմ, թե ինչ եմ ուզում հիմա:

ԷԼԻՍՈՆ (նրա գլուխը ձեռքերի մեջ է առնում և համբուրում).— Համբերիր, հիմա չի կարելի:

ՋԻՄԻ.— Միշտ էլ կարելի է:

ԷԼԻՍՈՆ.— Քի՞ֆը հիմա կգա:

ՋԻՄԻ.— Նա ի՞նչ նկատի ունեք, երբ ասաց՝ տես չմոռանա:

ԷԼԻՍՈՆ.— Ես բան ունեմ քեզ ասելու:

ՋԻՄԻ (համբուրում է նրան).— Դու նրան շա՛տ ես սիրում:

ԷԼԻՍՈՆ.— Այո, շատ:

ՋԻՄԻ.— Նա իմ միակ ընկերն է: Ուրիշ ոչ մեկը կարծես չի մնացել: Մարդիկ հեռանում են: Նրանց անվերադարձ կորցնում ես: Հիշողությանդ մեջ միայն տղամարդկանց ու կանանց անունների մի երկար շարան է մնում: Դպրոցում՝ Ուոթսոնը, Ռոբերտսը, Դեյվիսը: Հետո՝ Ջեյմս, Մադլենը, Հյուն... (Դադար): Եվ իհարկե, Հյունի մայրիկը: Քիչ էր մնում մոռանալի նրան: Իսկ նա, եթե կուզես միշտ էլ մեր իսկական բարեկամն է եղել: Նա նույնիսկ համաձայնեց, որ հրուշակեղենի կրպակի հաշիվը փակեմ միայն այն ժամանակ, երբ ինձ հարմար կլինի: Փատորեն այդ կրպակը մեզ նվիրեց: Նա քեզ շատ է սիրում: Ոչ մի կերպ չեմ հասկանում, թե ինչու ես նրանից խուսափում:

ԷԼԻՍՈՆ (նրա ձայնի մեջ սպառնալից շեշտեր որսալով).— Ջիմի՛, խնդրում եմ, պետք չէ՛:

ՋԻՄԻ (ուշադիր նայելով նրա մտահույզ դեմքին).— Դու շատ գեղեցիկ ես: Գեղեցիկ, խոշորաչյա սկյուռ:



**Էլիսնը պայծառանում է, թեթևացած գլխով անում:**

Չմտան պաշարը հավաքած սկյուռ, որն իր փչակում նստած՝ ընկույզ է կրծում:

**Էլիսնը հրճվանքից փայլելով՝ ձևացնում է, թե ընկույզ է կրծում:**

Շողշողո՞ւն, թավշափայլ մորթով ու փափիի՞կ պոչով:

ԷԼԻՍՈՆ.— Ուիիիի՛, ուիիիի՛:

ՋԻՄԻ.— Ինչպե՛ս եմ քեզ նախանձում: (Կանգնում է):

ԷԼԻՍՈՆ (գրկում է նրա պարանոցը).— Իսկ դու մեծ ու խնդերես արջ ես: Մեեեեե՛ծ, հիասքանչ արջ:

ՋԻՄԻ.— Արջերն ու սկյուռները մի՛շտ հիասքանչ են:

ԷԼԻՍՈՆ.— Հիասքա՛նչ ու չքնաղ: (Ոգևորված ցատկոտում է տեղում՝ ձեռքերը թաթերի պես թափահարելով): Ուուուուո՛ւ: Ուուուուուո՛ւ:

ՋԻՄԻ.— Դա՞ ինչ նորություն է:

ԷԼԻՍՈՆ.— Այսպես են պարում սկյուռները, երբ երջանիկ են:

**Նորից են գրկախառնվում:**

ՋԻՄԻ.— Ինչո՞ւ է քեզ թվում, թե երջանիկ ես:

ԷԼԻՍՈՆ.— Ամեն ինչ այնքան լավ է: Ջիմի...

ՋԻՄԻ.— Այո՞:

ԷԼԻՍՈՆ.— Մի բան եմ ուզում քեզ ասել:

ՋԻՄԻ.— Է՞:

**Դռան շենքին հայտնվում է Քլիֆը:**

ՔԼԻՖ.— Չթողեցին թե ոտքս շքամուտքից դուրս դնեմ: Պարզվում է միսս Դրուրին եկեղեցի չի գնացել: Մեկ էլ տեսնես՝ ուղիղ դիմացս ծլեց: (Էլիսնին): Քեզ հեռախոսի մոտ են կանչում:

ԷԼԻՍՈՆ.— Ի՞նչ: Տեսնես ո՞վ է:

ՔԼԻՖ.— Ինչ-որ Հելենա:

**Ջիմին և Էլիսնը թոռուցիկ հայացքներ են փոխանակում:**

ՋԻՄԻ (Քլիֆին).— Հելենա Չա՛րլզը:

ՔԼԻՖ.— Այո, այո, Հելենա Չարլզը:

ԷԼԻՍՈՆ.— Շնորհակալություն, Քլի՛ֆ: (Գնում է դռան կողմը): Հիմա կգամ:

ՔԼԻՖ.— Չես գա: Քավթառ Դրուրին կրոնի ու էլ բաց չի թողնի: Նրա կարծիքով սենյակները լավ չենք հավաքում: (Գնում է նստում աջակողմյան բազկաթոռին): Ինչ թվում էր թեյ կդնես, տականքի մեկը:

**Ջիմին չի պատասխանում:**

Ի՞նչ եղավ քեզ, ա՛յ տղա:

ՋԻՄԻ (ծոր տալով).— Քա՛ծ:

ՔԼԻՖ.— Ո՞վ:

ՋԻՄԻ (ինքն իրեն).— Հելենա Չա՛րլզ:

ՔԼԻՖ.— Ո՞վ է այդ Հելենան:

ՋԻՄԻ.— Նրա հին ընկերուհին է: Եվ իմ ռիսերիս թշնամին: Դու իմ բազկաթոռին ես նստել:

ՔԼԻՖ.— Ե՞րբ ենք գնում խմելու:

ՋԻՄԻ.— Չգիտեմ:

ՔԼԻՖ.— Բայց դու ինքդ էիր ուզում:

ՋԻՄԻ.— Տեսնես ի՞նչ է դրա ուզածը: Ի՞նչ փորացավ ունի, որ զանգահարել է: Լավ նշան չէ: Ատենք, դե լավ, շուտով կիմանանք: (Նստում է սեղանին): Մի քանի րոպե առաջ ամեն ինչ այնքան էլ վատ չէր թվում: Այսպես ասած՝ «հոգեկան գեղումներով» էի տարվել, բայց հերիք է ինչքան գլուխ դրեցի, համենայն դեպս կանանց հետ: Ծիշոն ասած, այսքանն էլ էր լիուրի բավարար բոյսկառույցների<sup>12</sup> շոկատապետ կամ նման մի բան դառնալու համար: Մեկ-մեկ ես գրեթե նախանձում եմ Անդրե Ժիդին<sup>13</sup> և հունական երգչախմբի տղաներին: Չեմ կասկածում, որ շատ հաճախ կյանքը նրանց աչքին իսկական դժոխք է երևացել: Սակայն ի վերջո, նրանք ինչ-որ նպատակ ունեին, որը ճիշտ է, այնքան էլ գովաբանության արժանի չէր, բայց այնուամենայնիվ, գոյություն ուներ: Նրանց սրտերում յուրատեսակ հեղափոխական հուր էր բոցկլտում, մի բան, որ մեր մասին ոչ մի կերպ չես ասի: Օրինակ՝ Ուեբսթերի: (Ջիմին շաղակրատում է պարզապես լուռ չմընայու համար): Նա էլ շատերի պես ինձ չի սիրում: Իմ կարծիքով, նա ինձ կասկածանքով է վերաբերվում, որովհետև ես հրաժարվում եմ հանձին նրա ծաղրածուի կամ էլ ողբերգական հերոսի տեսնել: Նա պիսակավոր մարդու նման է. անընդհատ իր պիսակն աչքդ է խոթում, որովհետև չի հավատում, որ այդ չարաբաստիկ պիսակը քեզ վրա ոչ մի առանձնահատուկ տպավորություն չի գործում: (Վերցնում է Էլիսոնի պայուսակն ու սկսում քրքրել): Ի՞նչ ցավս է: Ես իմ սեփական պիսակն ունեմ, միայն թե իմն ուրիշ տեղում է: Ես ավելի շուտ աչ թեքման կողմնակից եմ: Եթե հեղափոխություն սկսվի, ինձ Միքելանջելոյի նման աշխարհագորի սպա չեմ նշանակի<sup>14</sup>, այլ առաջինը դեմ կտան պատին բոլոր այդ ծերուկ լիբերալների հետ մեկտեղ:

ՔԼԻՖ (Էլիսոնի պայուսակը մատնացույց անելով).— Քեզ չի՞ թվում, որ ոտնձգություն ես անում մասնավոր սեփականության դեմ:

ՋԻՄԻ.— Միանգամայն իրավացի ես: Բայց գիտե՞ս, ինչ կա: Մի ուրիշ

մարդ արարածի հետ կողք-կողքի ապրելն ինձ նեղո՞ւ կասկածամիտ է դարձրել: Եթե ուզում ես պարզել, թե քթիդ տակ ինչ է կատարվում, ապա միակ ձևը հանկարծակիի բերելն է: Հենց որ նա տնից դուրս է գալիս, ես ամեն ինչ տակնուվրա եմ անում. ճամպրուկները, տուփերը, դարակները, գրքերը. ամե՛ն, ամե՛ն ինչ: Ինչո՞ւ: Որպեսզի իմանամ, թե որևէ բան չկա՞ իմ մասին: Ես ուզում եմ իմանալ՝ ինձ չե՞ն դավաճանում:

**ՔԼԻՖ.**— Դու ինքդ ես դրա համար առիթներ ստեղծում:

**ՋԻՄԻ.**— Որովհետև լիովին համոզված եմ, որ կգտնեմ այն, ինչ որ փնտրում եմ: (**Պայուսակից մի ցամակ է հանում**): Խնդրեմ, հիացի՛ր: Չէ՛, ես կատարյալ ապուշի մեկն եմ: Ինձ հինգ րոպե՞ն մեկ դավաճանում են: Նա ցամակներ է ստանում մորից: (**Թափահարում է ցամակը**): Նամակներ, որտեղ իմ մասին ո՛չ մի խոսք չկա, որովհետև իմ անունն այդ վիճակի համար թունդ հայհոյանք է: Իսկ նա ի՞նչ է անում ի պատասխան այս խզբզանքի:

**Մեծում է նիստեր:**

(**Երջվում է նրա կողմը**): Նա իր մայրիկին երկար-բարակ անձակներ է օրում, և եթե կարդաս, իմ մասին էլի ոչի՛նչ չես գտնի, որովհետև սրա համար էլ է իմ անունը կեղտոտ հայհոյանք: (**Եպրտում է ցամակը նրա ոտքերի առաջ**): Դե՛, ասա տեսնենք, ընկերուհուդ ուզածն ի՞նչ է:

**ԷԼԻՍՈՆ.**— Նա կայարանում է: Գալիս է... այստեղ:

**ՋԻՄԻ.**— Պարզ է: Նա հարցրել է. «Կարելի՞ է գալ»: Իսկ դու ասել ես. «Ամուսինս՝ Ջիմին, — ներիր, որ անպատշաճ բառ եմ գործածում, — երջանկությունից կհավի, հենց որ քեզ տեսնի: Զգույշ մոտոթղ չջարդի՛»): (**Զայրույթը հագիվ զսպելով՝ վեր է կենում տեղից և կոթնում սեղանին**):

**ԷԼԻՍՈՆ (հանգիստ).**— Նա իրենց խմբի հետ մի շաբաթ ելույթ է ունենալու մյուզիք-հոլում: Մնալու տեղ չունի...

**ՋԻՄԻ.**— Ո՞նց չէ, հավատացի:

**ԷԼԻՍՈՆ.**— Դե, ես էլ ասացի, որ կարող է մեզ մոտ իջևանել, մինչև որ որևէ հարմար բան գտնի: Միսս Դրուրին ներքևում ազատ սենյակ ունի:

**ՋԻՄԻ.**— Իսկ ինչո՞ւ նա ուղղակի այստեղ չի գալիս: Չմոռանաս ասել, որ գրահ հագնի: Նա իսկո՛ւյն կզգա դրա կարիքը:

**ԷԼԻՍՈՆ (բորբոքված).**— Ի՞նչ կլինի, ձայնդ կտրի՛ր:

**ՋԻՄԻ.**— Է՛հ, սիրելի կողակի՛ցս, դու դեռ այնքա՛ն բան չգիտես: Միակ հույսս այն է. որ երբևէ կիմանաս: Երանի... երանի մի բան

քեզ այնպէս թափ տար, որ դու արթնանայիր քո քաղցր քնից: (Կիպ մոտենալով նրան): Երանի երեխա ունենայիր, ու նա մեռնէր: Թող մեծանար, թող այդ փոքրիկ, խորշոմած զանգվածից մարդանման դեմք ձևավորվէր:

**Էլիսոնն ընկրկում է:**

Ախ, երանի տեսնէի, թե ինչ ապրումներ պիտի ունենաս: Հետաքրքիր է, գոնէ այդքանից հետո դու է՛լ սեփական դեմքդ կգըտնէիր: Հազիվ թե:

**Էլիսոնը շանթահար ետ-ետ է գնում, հենվում գազօջախին:**

(Զիսին ինքն էլ է կանգնած բավականին անճարակ տեսքով): Գիտե՞ս, ես երբէք չեմ զգացել սեր անելու գերագույն հաճույքը, եթե դրան ձգտողը ինքս չեմ եղել: Չէ, ես չեմ ասում, թե նա անկիրք է: Ընդհակառակը՝ նա այնուհետ պէս ազահատենչ է: Միանգամից ինձ կուլ է տալիս, ասես ճագար լինեմ: Գիտե՞ս, ես որտեղ եմ. այ այնտեղ՝ նրա որովայնում: Ողջ-ողջ թաղված եմ այդ գերեզմանում և խելագարվո՞ւմ եմ՝ նրա օձակուտակ մարմնի գալարների մէջ հեղձամահ լինելով: Ոչ շշուկ, ոչ շրշուն. նա ծըպտուն չի հանում: Դե իհարկե, ինձ նման դժվարամարս քեռը նրա փքված, լեփլեցուն ստամոքսին նեղություն կտա, բայց նա անկասկած դրան էլ կդիմանա: (Մոտենում է դռանը): Նա հանգիստ խղճով կգնա քնելու և կշարունակի քնի մէջ մարսել ինձ, մինչև որ ինձանից ոչի՛նչ չմնա: (Դուրս է գնում):

**Էլիսոնը ետ է գցում գլուխը, ասես ուզում է ճչալ: Անձայն բերանը բաց է, շուրթերը դողում են: Քլիֆը նայում է նրան:**

Վ ա ր ա գ ու յ ր

ԱՐԱՐՎԱԾ ԵՐԿՐՈՐԴ

ԱՌԱՋԻՆ ՊԱՏԿԵՐ

Երկու շաբաթ անց: Երեկո:

Էլիսոնը կանգնած է գազօջախի մոտ, մետաղյա թէյնիկից թէյը լցնում է հախճապակյա թէյամանի մէջ: Նա միայն ներքնազգեստով

Է, ուրեքը բոքիկ են: Դիմացի սենյակում Ջիմին շեփոր է նվագում, դռան ետևից լսվում է նրա մեջընդմեջ նվագը: Էլիսոնը թեյամանը դնում է սեղանին, որը սպասքավորված է չորս հոգու համար: Բազկաթոռների չորս կողմը առաջվա պես լրագրերի կույտեր են դիզված: Իրիկնամուտ է՝ շոգ օրվա մայրամուտը: Էլիսոնը տրորում է ճակատը: Մոտենում է զարդասեղանին, դարակից հանում գուլպաները և նրստում զարդասեղանի կողքի աթոռին՝ գուլպաները հագնելու: Մինչև նա զբաղված է սրանով, դուռը բացվում է, մտնում է Հելենան: Նա Էլիսոնի տարիքին է, միջահասակ է, նրբաճաշակ ու թանկարժեք զգեստով: Մերթ ընդ մերթ, երբ նրա դեմքի չոր ու աչալուրջ արտահայտությունը փափկում է, նա խիստ հրապուրիչ է դառնում: Կանացի գերազանցության գիտակցությունը, որ ճառագում է նրանից, շատ տղամարդկանց ստիպում է ոչ միայն հաճոյանալ նրան, այլև ամեն կերպ արժանանալ նրա ուշադրությանը, այնպես, ինչպես ողորմած թագուհու բարեհաճությանն են ձգտում արժանանալ: Միջնախավից սերած այս կինը այնքան լիավստահ է սեփական բացառիկության և անսուարկելի իրավասության վրա, որ շնորհ է անում հանդուրժել պառլամենտական քննարկումներն իր ներկայությամբ և չափավոր ազատություն պարզել արական սեռի ընտրյալ հպատակներին: Անգամ նրա հասակակից կանայք, ինչպես, օրինակ՝ Էլիսոնը, նրան հարգանքի ու հիացմունքի տուրք են մատուցում: Ջիմիի մեջ, ինչպես և պետք էր ակնկալել, նա արթնացնում է սրա հոգու բոլոր մութ բնազդները: Հելենան սովոր չէ ծաղրուծանակից իրեն պաշտպանելու: Բայց նա իր պարտքն է համարում իրեն ինքնավստահ ու արժանապատվությամբ պահել, մի բան, որ նրան ստիպում է շարունակ լարված վիճակում լինել, իսկ դա արդեն որոշակիորեն նյարդայնացնում է: Նրա ձեռքին մի մեծ սալաթաման է:

ԷԼԻՍՈՆ.— Դե՛, մի բան ստացվե՞ց:

ՀԵԼԵՆԱ.— Իհարկե: Ես դեռ անցյալ շաբաթ եմ ամեն ինչ պատրաստել, եթե չես մոռացել:

ԷԼԻՍՈՆ.— Ձե, չեմ մոռացել: Հրաշալի բան է օգնական ունենալը:

Ավելի ճիշտ՝ օգնականուհի:

ՀԵԼԵՆԱ (զնում է դեպի ձախ).— Ես դրանից հաճույք եմ ստանում:

Չնայած երևի երբեք էլ չվարժվեմ ջուր բերելու համար առաջին հարկ իջնել:

ԷԼԻՍՈՆ.— Ահավոր բան է, չէ՞:

ՀԵԼԵՆԱ.— Այո, լավ չէ: (Բուֆետից ափսեներ է հանում և բաժանում սալաթը): Մի տղամարդու հոգսը քաշելն արդեն գլխացավանք է,

ինչ մնաց թե երկուսինը:

ԷԼԻՍՈՆ.— Քլիֆը բավականին ինքնուրույն մարդ է: Նա իրոք որ շատ է օգնում ինձ:

ՀԵԼԵՆԱ.— Չէի ասի, թե երևում է:

ԷԼԻՍՈՆ.— Որովհետև դու նրան փոխարինել ես:

ՀԵԼԵՆԱ.— Պարզ է:

ԷԼԻՍՈՆ.— Բայց դու շատ շուտ ընտելացար, չէ՞:

ՀԵԼԵՆԱ.— Դե ի՞նչ կա որ:

ԷԼԻՍՈՆ.— Այնպես ես ասում, կարծես ամբողջ կյանքդ դրանով ես զբաղված եղել:

ՀԵԼԵՆԱ.— Իսկ դո՞ւ:

ԷԼԻՍՈՆ.— Քո գալուց ի վեր այստեղ շատ բան է փոխվել:

ՀԵԼԵՆԱ.— Իսկապե՞ս:

ԷԼԻՍՈՆ.— Այո: Առաջ ես ինքս իմ հույսին էի...

ՀԵԼԵՆԱ.— Իսկ հիմա մենք երկուսով ենք: Դու չե՞ս փոշմանել, որ ինձ համոզել ես ձեզ մոտ մնալ:

ԷԼԻՍՈՆ.— Իհարկե, ոչ: Դու նրան ասացի՞ր, որ թեյը պատրաստ է:

ՀԵԼԵՆԱ.— Ես ծեծեցի Քլիֆի դուռը, նույնիսկ ձայն տվեցի: Նա չպատասխանեց, թեև, իհարկե, լսում էր: Իսկ Քլիֆի տեղը չգիտեմ:

ԷԼԻՍՈՆ (հեկվելով աթոռի թիկնակին).— Ինձ թվում էր լոգանքից հետո կգոյանամ, բայց էլի շոգում եմ: Տե՛ր աստված, երանի այդ անհիծյալ շեփորը գետնի տա՛կն անցներ:

ՀԵԼԵՆԱ.— Ըստ երևույթին, այս համերգն իմ պատվին է տալիս:

ԷԼԻՍՈՆ.— Միսս Դրուրին շուտով մեզ կվճռի, հատատ համոզված եմ: Փառք ասածու, որ հիմա տանը չէ: Չէ՛, դու լսիր, թե ինչ է անում:

ՀԵԼԵՆԱ.— Նա խմո՞ւմ է:

ԷԼԻՍՈՆ.— Խմո՞ւմ: (**Տարակուսանքով**): Ոչ, նա հարբեցող չէ, եթե այդ նկատի ունես...

**Երկուսն էլ լռում են՝ ականջ դնելով շեփորի ձայնին:**

Վերջն այնպես է անելու, որ բոլոր հարևանները ներս թափվեն այստեղ:

ՀԵԼԵՆԱ (**բարձրաձայն մտորում է**).— Այնպես է նվագում, կարծես ինչ-որ մեկին ուզում է սպանել: Իհարկե, նախ և առաջ՝ ինձ: Ես ոչ մեկի աչքերում այդպիսի ատելություն չեմ տեսել: Մարդ վախենում է: (**Մոտենում է բուֆետին պոմիդորներ, ճակնդեղ, վարունգ հանելու համար**): Վախենում ու մի տեսակ ալեկոծվում:

ԷԼԻՍՈՆ (**սկսում է սանրվել զարդասեղանի հայելու առաջ**).— Փամա-

անկին նա նույնիսկ ջազ-նվագախումբ է կազմել: Դեռ ուսանողա-  
կան տարիներին, մեր ծանոթությունից առաջ: Ըստ երևույթին, ո-  
րոշել է անցնել նույն գործին, իսկ կրպակից ձեռք քաշել:

**ՀԵԼԵՆԱ.**— Քլիֆը սիրահարվա՞ծ է քեզ:

**ԷԼԻՍՈՆ** (մի պահ դադարում է սանրվել).— Ոչ... չեմ կարծում:

**ՀԵԼԵՆԱ.**— Իսկ դո՞ւ: Այնպես ես նայում, կարծես շատ տարօրինակ  
հարց եմ տվել: Քո վիճակում դու կարող ես ինձ հետ միանգա-  
մայն անկեղծ լինել: Ես ուղղակի ուզում եմ քեզ օգնած լինել:  
Վերջ ի վերջո, սովորական պատկերացումներով, դուք մեղմ ա-  
սած, ձեզ բավականին տարօրինակ եք պահում մեկդ մյուսի հետ:

**ԷԼԻՍՈՆ.**— Ուզում ես ասել, որ տեսե՞լ ես, թե ինչպես ենք գրկվում:

**ՀԵԼԵՆԱ.**— Դե՛, հիմա կարծես թե ավելի հազվադեպ եք գրկախառնը-  
վում: Երևի նա ինձից ավելի շատ է քաշվում, քան նույնիսկ Ջի-  
միից:

**ԷԼԻՍՈՆ.**— Մենք ուղղակի շատ ենք կապված իրար, ուրիշ ոչինչ:

**ՀԵԼԵՆԱ.**— Իսկապե՞ս, սիրելի՛ս: Դա հենց այնպես չի լինում:

**ԷԼԻՍՈՆ.**— Դու նկատի ունես, որ անպայման ինչ-որ ֆիզիկական  
բա՞ն է լինում: Միգուցե և կա, բայց դա բոլորովին էլ կիրք չէ:  
Ավելի շուտ հանգստություն է, բերկրանք, ասես տաքուկ անկող-  
նում պառկած լինես: Այնքան հարմար ու լավ ես տեղավորվել,  
որ ծուլանում ես ուրիշ հաճույքի համար տեղիցդ շարժվել:

**ՀԵԼԵՆԱ.**— Դժվար է հավատալ, թե մարդ կարող է այդքան ծուլ լի-  
նել:

**ԷԼԻՍՈՆ.**— Մենք հենց այդպես ենք:

**ՀԵԼԵՆԱ.**— Իսկ Ջիմի՞ն: Վերջիվերջո, նա քո ամուսինն է: Հո չե՞ս  
ասի, թե նա հավանություն է տալիս:

**ԷԼԻՍՈՆ.**— Դժվար է բացատրել: Ջիմին դա անձնվիրության սկզբունք  
է կոչում և պահանջում, որ խստիվ պահպանես: Անձնվիրություն  
ոչ միայն իր նկատմամբ, իր համոզմունքների, ճերկայի ու ապա-  
գայի, այլև մինչև իսկ իր անցյալի նկատմամբ: Այն մարդկանց նը-  
կատմամբ, որոնց ինքը հարգում ու սիրում է. որոնց երբևէ սիրել  
է: Իր մերձավոր բարեկամների նկատմամբ, որոնց երեսն էլ չեմ  
տեսել և եթե տեսնեի, հնարավոր է, ինձ դուր չգաի: Իր հոդ  
նկատմամբ, որը մահացել է տարիներ առաջ: Անգամ այն կանանց  
նկատմամբ, որոնց ժամանակին սիրել է: Հասկանո՞ւմ ես:

**ՀԵԼԵՆԱ.**— Իսկ դու ինքդ հասկանո՞ւմ ես:

**ԷԼԻՍՈՆ.**— Փորձում եմ հասկանալ: Բայց ես չեմ կարողանում ինձ

ատիպել, որ իրերին նրա աչքերով նայեմ: Իմ կարծիքով, նա ինչ-  
որ բանում իրավացի չէ:

ՀԵԼԵՆԱ.— Դե լավ է, ուրեմն դեռ անհույս կորած չես:

ԷԼԻՍՈՆ.— Մենք Քլիֆի հետ լեզու ենք գտնում, որովհետև նա շատ  
բարի է ու սիրալիր և ինձ անչափ դուր է գալիս: Բայց դա եր-  
ջանիկ պատահականություն է: Մենք հաշտ ու համերաշխ ենք,  
որովհետև նա իրոք որ հիանալի մարդ է: Իսկ օրինակ՝ Հյուն,  
բուրբուրովին ուրիշ էր:

ՀԵԼԵՆԱ.— Հյուն ո՞վ է:

ԷԼԻՍՈՆ.— Հյու Թեները: Ջիմիի մանկության ընկերն է: Միսին Թե-  
ները նրա մայրն է...

ՀԵԼԵՆԱ.— Ա՛, այն կի՞նը, որ Ջիմիին հրուշակագործ է կարգել:

ԷԼԻՍՈՆ.— Այո: Երբ ես ու Ջիմին ամուսնացանք, ոչ տուն ունեինք,  
ոչ փող, եղած-չեղածը ութ ֆունտ<sup>15</sup> էր, ինչ էր: Նա նույնիսկ աշ-  
խատանք չուներ: Մի տարի կլիներ, որ համալսարանը վերջաց-  
րել էր: **(Հեզնական ժպիտով)**: Իսկ ավելի ճիշտ, համալսարանն  
էր նրան վերջացրել: Նա ասում է, որ իրենց համալսարանը մինչև  
անգամ կարմիր աղյուսից չի եղել, այլ հենց այնպես, իմիջիայլոց՝  
սպիտակ սալաքարից: Կարճ ասած, մենք տեղավորվեցինք Հյուի  
մոտ: Նա Փոփլարում<sup>16</sup> էր ապրում, ինչ-որ պահեստի վերևում:

ՀԵԼԵՆԱ.— Այո, ես հիշում եմ քո նամակների վրայի կնիքը:

ԷԼԻՍՈՆ.— Ահա թե որտեղ հայտնվեցի իմ առաջին ամուսնական գի-  
շերը: Ես ու Հյուն հենց առաջին հայացքից չսիրեցինք իրար, և  
Ջիմին հասկացավ այդ: Նա անչափ հպարտանում էր մեզնով,  
շատ էր ուզում, որ մտերմանանք: Այնպես էր իրեն պահում, ասես  
իր խաղաղիքներով պարծեցող երեխա լիներ: Մենք հարսանի-  
քանման մի բան արեցինք: Նստել էինք երեքով, խմում էինք  
նրանց բերած էժանագին պորտվեյնն ու ջանում հարբել: Հյուի  
պահվածքը քանի գնում, այնքան ավելի նենգ ու վիրավորական  
էր դառնում: Այդ կողմից մա բացառիկ տաղանդ ունի: Ջիմին  
մթազնեց, իսկ ես տխմարավարի նստել էի այնտեղ, ականջ էի  
դնում նրանց խոսակցությանն ու անընդհատ մտածում, թե ինչ  
անհեթեթ վիճակի մեջ եմ ընկել: Կյանքումս առաջին անգամ հայտ-  
նըվել էի իմ շրջապատից դուրս, մե՜ն-մե՜նակ՝ ընտանիքից, ըն-  
կերներից կտրված: Դեռ ավելին. ես այրել էի ետդարձի կամուրջ-  
ները: Գիտեի, որ Ջիմիի հետ կապված այդ երկար-բարակ վեճե-  
րից հետո ես հայրիկի ու մայրիկի աչքին հիմար ու ողորմելի  
կերևամ, եթե սկսեմ գանգատվել նրանց: Հիշում եմ, դա հենց համ-



ընդհանուր ընտրությունների նախօրյակին էր, Նայջելն իր թեկնածությունն էր առաջադրել պատլամենտում: Նրա ամբողջ ժամանակը կորչում էր ընտրողների վրա: Ես գիտեմ, նա ինձ կփայփայեր ու սիրտ կտար:

**ՀԵԼԵՆԱ.** (գալիս է սենյակի կենտրոն).— Թանկագի՛նս, ինչո՞ւ չէիր գալիս ինձ մոտ:

**ԷԼԻՍՈՆ.**— Դու ինչ-որ տեղ հյուրախաղերի էիր մեկնել:

**ՀԵԼԵՆԱ.**— Այո, ճիշտ որ:

**ԷԼԻՍՈՆ.**— Այդ մի քանի ամիսը, որ մենք ապրեցինք Փոփլարում, իսկական մղձավանջ էր: Թող որ ես փափկասուն լինեմ, չմահավան ու մեծամիտ, բայց ինձ թվում էր, թե ջունգլիներ եմ ընկել: Աչքերիս չէի հավատում, որ երկու մարդ, երկու կրթված մարդ կարող են այդքան վայրագ լինել, այդքան... այդքան ոխերիմ: Մայրիկը միշտ ասում էր, որ Ջիմին սուկալի անողոք է, բայց նա Հյուին չէր տեսել: Սա իր անողոքությամբ արժանի էր չեմպիոնի տիտղոսի: Երկուսը միասին նրանք ուղղակի սարսափելի էին: Ասես ինձ պատանդ էին վերցրել այն հասարակական խավից, որին պատերազմ էին հայտարարել:

**ՀԵԼԵՆԱ.**— Իսկ ինչո՞վ էիք ապրում այդ ամբողջ ժամանակ:

**ԷԼԻՍՈՆ.**— Ես մի քանի բաժնետոմս ունեի, որոնք չնչին տոկոսներ էին բերում, բայց դրանով դժվար էր գոյություն պահպանել: Երբ մայրիկն իմացավ, որ ես իսկապես ամուսնանում եմ Ջիմիի հետ, ստիպեց, որ ունեցած-չունեցածս իր խնամակալության տակ փոխանցեմ:

**ՀԵԼԵՆԱ.**— Իմ կարծիքով, նա շատ ճիշտ է վարվել:

**ԷԼԻՍՈՆ.**— Բայց Ջիմին և Հյուն իսկույն ևեթ գտան վիճակից դուրս գալու ելքը: Նրանք առաջնակարգ ռազմագետներ են: Իմ միջոցով նրանք անկոչ հյուրերի պես խցկվում էին Նայջելի և իմ ծանոթների, հայրիկի բարեկամների տները. ամեն, ամեն տեղ. Արկադենների մոտ, Թարնաթների, Ուելչների...

**ՀԵԼԵՆԱ.**— Նույնիսկ Ուելչների՞:

**ԷԼԻՍՈՆ.**— Բոլոր այն տները, որտեղ ես ելումուտ ունեի: Քո բարեկամներն այն քչերից էին, որոնց պատահմամբ աչքաթող ենք արել: Այդ ամենը նրանց համար թշնամական գոտի էր, իսկ ես, ինչպես ասացի՝ պատանդ: Փոփլարի մեր շտաբից մենք հարձակումներ էինք գործում հակառակորդի վրա՝ ասպատակելով պերճաշուք թաղամասերը: Իմ անվան տակ մենք որտեղ ասես չէինք սողոսկում. հրավերքների, տոնախնջույքների, մեկ-երկու անգամ

նույնիսկ ընտանեկան հանդիսությունների մասնակցեցինք: Ես հուսով էի, որ օրերից մի օր որևէ մեկը համբերությունից դուրս կգա և դուռը երեսներին կշրիկացնի, բայց ոչ ոք սիրտ չէր անում: Բոլորն էլ չափազանց բարեկիրթ մարդիկ էին կամ միգուցե պարզապես խղճում էին ինձ: Հյուն և Ջիմին հենց դրա համար էին նրանց արհամարհում: Եվ մենք շարունակում էինք մեր ավարտությունը՝ վայելելով նրանց կերակուրներն ու ըմպելիքները, կողոպտիչների պես ծխելով նրանց սիգարները: Ջիմին և Հյուն յոթերորդ երկնքում էին:

**ՀԵԼԵՆԱ.**— Պատկերացնում եմ:

**ԷԼԻՍՈՆ.**— Հյուն ուղղակի վայելում էր բարբարոս զավթիչի իր դերը: Երբեմն ինձ թվում էր, թե նա դեմ չի լինի նույնիսկ համապատասխան կերպարանք առնել. հասկանո՞ւմ ես, գազանի մորթիներ հագնել, սրածայր սաղավարտ դնել, ձեռքը թուր վերցնել: Մի անգամ նա ծերուկ Ուելսից հինգ ֆունտ էր կորզել: Պարզ բան է. շանտաժի էր ենթարկել: Մարդիկ պատրաստ էին ամեն ինչ անել, միայն թե մեզից գլուխներն ազատեին: Հյուն նրան ասել էր, թե մեզ վճարում են բնակարանից, որովհետև վարձը չենք վճարել: Իմիջիայլոց, դա հեռու չէր ճշմարտությունից:

**ՀԵԼԵՆԱ.**— Չեմ հասկանում քեզ: Խելքդ թոցրել էիր, ի՞նչ է:

**ԷԼԻՍՈՆ.**— Ավելի շուտ վախենում էի:

**ՀԵԼԵՆԱ.**— Բայց ինչպե՞ս էիր թույլ տալիս նրանց այդպիսի բաներ անել, այդպես կապը կտրե՞լ: Հուսով եմ, որ գոնե արգելո՞ւմ էիր արժաթե գդալներ գողանալ:

**ԷԼԻՍՈՆ.**— Պարտիզանական պատերազմի կանոններով դա բացառված էր, նրանք ջանում էին այդ կանոնները շխախտել: Ա՛յ, երբ Հյուն փորձել էր Արկադեաների տանը մի անմեղ աղջկա գայթակղել, հենց այդ ժամանակ էլ մեզ առաջին անգամ կարծես թե դուռը ցույց տվին:

**ՀԵԼԵՆԱ.**— Ուղղակի անհավատալի է: Ոչ մի կերպ չեմ հասկանում քո խաղացած դերը այդ ամենի մեջ: Եվ հանուն ինչի՞: Այ սա է, որ գլխումս չի տեղավորվում: Դու ինչո՞ւ ես ընդհանրապես...

**ԷԼԻՍՈՆ.**— Նրա հետ ամուսնացե՞լ: Այնքան էլ հեշտ չէ պատասխանել: Երբ մեր ընտանիքը վերադարձավ Հնդկաստանից, ամեն ինչ մի տեսակ, ինչպես ասեմ... փշրված էր թվում: Համենայն դեպս, հայրիկը կարծես օտարացած լիներ, ամեն չնչին առիթով նյարդայնանում էր: Իսկ մայրիկը... դե՛, ի՛նչ ասեմ, դու մայրիկին լավ ես ճանաչում: Ինչ վերաբերում է ինձ, գլխումս լիակատար դա-

տարկություն էր: Չգիտեի, թե ինչի համար եմ ծնվել, ինչպես Ջիմին է ասում: Ես հյուր էի գնացել, երբ նրան հանդիպեցի: Այնպես լավ եմ հիշում այդ օրը: Քսան տարիս արդեն լրացել էր: Տղամարդիկ նրան տարակուսանքով ընդունեցին, իսկ կանայք ջանում էին ցուցադրել իրենց արհամարհանքը մի այդպիսի տարօրինակ արարածի նկատմամբ, թեև բոլորն էլ իրենց անվստահորեն էին պահում նրա հետ: Նա հեծանիվով էր եկել՝ հետո ինձ ասաց, պիջակը ծայրից ծայր մեքենայի յուղի բծերով էր ծածկրված: Սքանչելի եղանակ էր, նա ամբողջ օրը արևի տակ էր անցկացրել: Ասես ուրից գլուխ բոցավառված լինեիր, դեմքին ու մազերին ոսկեգույն ցուլքեր էին վետվետում, աչքերն այնպես կապույտ էին ու արևաշող: Նա փխրուն պատանու տեսք ուներ, չնայած բերանի մոտի հոգնած ծայքերին: Ես գիտեի, որ գլխիցս վեր բան եմ անում, բայց ուրիշ ելք չունեի: Մի տեսնեիր, թե ինչ սարսափի ու ապշանքի վայնասուն բարձրացավ տանը: Բայց դա միայն արագացրեց ամեն ինչ: Արդեն կարևոր չէր՝ սիրո՞ւմ է նա ինձ, թե՞ չէ: Ջիմին որոշել էր ինչ գնով էլ լինի, ամուսնանալ ինձ հետ: Մերոնք ձեռքներից եկածն արեցին, որ խանգարեն մեզ:

**ՀԵԼԵՆԱ.**— Այո, պատկերացնում եմ, թե ինչ անախորժ վիճակ է եղել: Բայց նրանց կարելի է հասկանալ:

**ԷԼԻՍՈՆ.**— Ջիմին մարտի նետվեց՝ կացինը գլխից վեր թափահարելով. այնպես փխրուն էր ու բոցաշունչ: Ես երբեք նման բան չէի տեսել: Նա ասես հեքիաթի կայծկլտուն զրահով ասպետը լինեիր: Միայն թե իրականում նրա զրահն այդպես չէր փայլատակում:

**ՀԵԼԵՆԱ.**— Իսկ Հյո՞ւն:

**ԷԼԻՍՈՆ.**— Մեր հարաբերությունները վերջնականապես փչացան: Նա և Ջիմին նույնիսկ Նաչչելի քաղաքական միտինգներին էին գրնում: Փոփլարի իրենց ընկերներին հավաքած՝ ծեծկոտուքներ էին սարքում միտինգները տապալելու համար:

**ՀԵԼԵՆԱ.**— Ձե, նա ուղղակի վայրենու մեկն է:

**ԷԼԻՍՈՆ.**— Հյուն ինչ-որ վեպ, թե նման մի բան էր գրում, գլուխն էր օգել, որ պետք է արտասահման գնալ՝ Չինաստան կամ ինչ իմանամ աշխարհի որ ծայրը: Նա ասում էր, որ Անգլիայում մենք անելիք չունենք: Պահպանողականները նորից իշխանության գլուխ են անցել. Հյուն նրանց տիկնանց-տիկին Էլիսանի հրոսախոսք էր կոչում: Միակ ելքն այն է, որ հեռանանք Անգլիայից և բախտներս ուրիշ երկրում փորձենք: Նա ուզում էր, որ մենք էլ իր հետ գրնանք, բայց Ջիմին հրաժարվեց: Մի շտեմնված, կատաղի վեճ

բոնկվեց: Ջիմին մեղադրում էր Հյուին ուխտադրության մեջ, նա գտնում էր, որ խայտառակություն է մեկընդմիջտ հեռանալն ու հարազատ մորը բախտի քմահաճույքին թողնելը: Այդ գաղափարն ընդհանրապես նրա սրտով չէր: Մի քանի օր անընդհատ նրանք վիճում էին: Ես արդեն երանի էի տալիս, որ երկուսն էլ գնան և ինձ հանգիստ թողնեն: Վերջիվերջո, նրանք իրարից նեղացան: Մի քանի ամիս անց մենք տեղափոխվեցինք այստեղ, իսկ Հյուն գնաց ավետյաց երկիրը որոնելու: Մեկ-մեկ մտքովս անցնում է, թե Հյուի մայրն ամեն ինչի համար ինձ է մեղադրում: Ջիմին նույնպես, թեև երբեք այդ մասին չի խոսում: Նույնիսկ չի ակնարկում: Բայց երբ այդ կինը աչքերն ինձ է հառում, զգում եմ, որ մտածում է... «Եթե դու չլինեիր, ամեն ինչ լավ կլիներ: Մենք երջանիկ կլինեինք»: Չեմ ասում, թե ես չեմ սիրում նրան, ո՛չ: Նա ընդհանուր առմամբ շատ սիրալիր կին է: Ջիմին պաշտում է նրան գլխավորապես այն քանի համար, որ նա ամբողջ կյանքում չքավոր է եղել: Ի հավելումն նա բացահայտորեն տգետ է: Ես շատ լավ հասկանում եմ, որ իմ կողմից մեծամտություն է այսպես արտահայտվելը, բայց դա ցավոք սրտի, ճիշտ է:

**ՀԵԼԵՆԱ.**— Լսիր, Էլիս'ն: Դու պետք է որոշես, թե ինչ ես անելու: Դու երեխա ես ունենալու, քեզ վրա նոր պատասխանատվություն է ընկնելու: Առաջ բոլորովին ուրիշ է եղել, դու միայն քեզ ես վտանգի ենթարկել: Սրանից հետո դու այլևս չես կարող նույն ձևով ապրել:

**ԷԼԻՍՈՆ.**— Ես ուժասպառ եմ եղել: Վախից ցնցվում եմ, հենց որ նա սենյակ է մտնում:

**ՀԵԼԵՆԱ.**— Ինչո՞ւ չես նրան ասել, որ երեխա ես ունենալու:

**ԷԼԻՍՈՆ.**— Չգիտեմ: (Հանկարծ կռահելով Հելենայի միտքը): Դե ո՛չ, իհարկե նրա երեխան է: Դրանում ոչ մի կասկած չի կարող լինել: Հասկանո՞ւմ ես... (Ժպտում է): Նրանից բացի, ուրիշ ոչ ոք ինձ երբեք չի ձգել:

**ՀԵԼԵՆԱ.**— Լսիր, սիրելի՛ս, դու պետք է ասես նրան: Կամ թող սովորի իրեն մարդավարի պահել ու հոգ տանել քեզ...

**ԷԼԻՍՈՆ.**— Կա՞մ էլ:

**ՀԵԼԵՆԱ.**— Կամ էլ դու պետք է փախչես այս գծանցից:

**Ծեփորի սուր ելևէջ:**

Իսկական գազանանոց է: Էլ ի՞նչ խոսենք սիրո մասին. նա ընդհանրապես անընդունակ է մարդկային ապրումներ ունենալու:

**ԷԼԻՍՈՆ (Կոմոդը մատնացույց անելով).—** Տեսնո՞ւմ ես այնտեղ դըր-  
ված արջն ու սկյուռը: Այդ մենք ենք՝ ես ու նա:

**ՀԵԼԵՆԱ.—** Այսի՞նքն:

**ԷԼԻՍՈՆ.—** Մենք այդպիսի խաղ ենք խաղում. արջ և սկյուռ, սկյուռ  
և արջ:

**Հելենան շվարած տեսք ունի:**

Այո, ցնդաբանություն է, գիտեմ: Կատարյալ ցնդաբանություն:  
**(Վերցնում է խաղալիքները):** Սա նա է... իսկ այս մեկը՝ ես...

**ՀԵԼԵՆԱ.—** Ձեմ հասկանում. իբր եղածը քիչ է, նա դեռ հոգեկան  
խանգարո՞ւմ էլ ունի:

**ԷԼԻՍՈՆ.—** Ձէ, ի՞նչ խանգարում: Պարզապես սրանից բացի մեզ ուրիշ  
ոչինչ չի մնացել: Կամ գուցե սա էլ չի մնացել: Հիմա նույնիսկ  
արջն ու սկյուռն են ուրիշ դարձել:

**ՀԵԼԵՆԱ.—** Իմ գալուց ի վե՛ր:

**ԷԼԻՍՈՆ.—** Այս խաղը հորինեցինք, երբ Հյուի արտասահման մեկնե-  
լուց հետո մնացինք երկուսով: Մեզ համար դա մի սողանք էր,  
որով կարելի էր փախչել աշխարհում ամեն ինչից, մի տեսակ  
գաղտնի պաշտամունք: Մենք վերածվում էինք թավշե ուղեղնե-  
րով թավշե գազանիկների: Նրանք լի էին մեկը մյուսի նկատ-  
մամբ համր, պարզ սիրով: Չարաճճի, անհոգ արարածներ իրենց  
հարմարավետ, երկտեղանոց գազանանոցում: Մի տխմար օրո-  
րոցային այն մարդկանց համար, ովքեր էլ ուժ չունեն մարդ էա՞լ  
մնալու: Իսկ հիմա նույնիսկ այս պատլիկ, հիմար գազանիկներն  
են սատկել: Նրանք համակ սեր էին, առանց մտքերի: **(Խաղա-  
լիքներն իրենց տեղն է դնում):**

**ՀԵԼԵՆԱ (սեղմելով նրա թևը).—** Ի՛նձ լսիր: Դու պետք է պայքարես  
նրա դեմ: Պայքարես կամ հեռանաս նրանից: Հակառակ դեպքում  
նա քեզ կկործանի:

**Մտնում է Քլիֆը:**

**ՔԼԻՖ.—** Այստե՛ղ ես, սիրելի՛ս: Ողջույն, Հելենա՛: Թեչը պատրա՛ստ է:

**ԷԼԻՍՈՆ.—** Այո, թանկագի՛նս, պատրաստ է: Խնդրում եմ, կանչիր  
Ջիմիին:

**ՔԼԻՖ.—** Լավ: **(Շրջվում է և դռան շեմից բղավում):** Է՛յ, դո՛ւ, այլան-  
դա՛կ: Վե՛րջ տուր այդ կատվի համերգին և արի թեյելու: **(Քալիս  
է սենյակի կենտրոն):** Դո՛ւրս եք գալու:

**ՀԵԼԵՆԱ (ձախ կողմն անցնելով).—** Այո:

**ՔԼԻՖ.—** Կինո՞ եք գնում:

**ՀԵԼԵՆԱ.—** Ոչ: **(Դադար):** Եկեղեցի:

**ՔԼԻՖ** (անկեղծորեն զարմացած).— Օհո՛: Պարզ է: Երկուստ՛ով եք գը-  
նում:

**ՀԵԼԵՆԱ.**— Այո: Գալի՛ս եք:

**ՔԼԻՖ.**— Գիտե՛ք... ես... ես դեռ բոլոր թերթերը չեմ կարդացել: Թե՛յ,  
թե՛յ, թե՛յ: Դե՛, եկեք թեյ խմենք: (Նստում է սեղանի հեռավոր  
ծայրում):

Հելենան սալաթով լի ափսեները շարում է սեղանին, նստում ձախ  
կողմում: Նրանք սկսում են ուտել: Էլիսենը զարդասեղանի առջև  
կանգնած՝ դիմափոշի է քսում և շուրթերը ներկում: Մտնում է Ջիմին:  
**Նա շեփորը դնում է գրադարակին և մոտենում սեղանին:**

Ողջույն, ծերո՛ւկ: Նստիր թեյ խմիր: Ինչո՞ւ չես այդ խարիչակո  
մի այնպիսի անկյուն խոթում, որ էլ ձայնը չլսենք:

**ՋԻՄԻ.**— Նրա ձայնը պիտի որ քեզ դուր գա: Ով իսկական ջազ չի  
սիրում, ոչ երաժշտություն է հասկանում, ոչ էլ մարդկանց: (Նըս-  
տում է սեղանի աջ ծայրում):

**ՀԵԼԵՆԱ.**— Ինչպիսի բարբաջանք:

**ՋԻՄԻ (ՔԼԻՖին).**— Սա էլ քեզ ասածս հաստատող փաստարկ: Դու  
գիտե՛ս, որ Ուեբսթերը բանջո է նվագում:

**ՔԼԻՖ.**— Իսկապե՛ս:

**ՋԻՄԻ.**— Խոստացել է հաջորդ անգամ հետը բերել:

**ԷԼԻՍՈՆ (քրթմնջալով).**— Միայն այդ էր պակաս:

**ՋԻՄԻ.**— Տեսնես ինչի՛ց է, որ այս տանը ոչ ոք լրագրերի հետ վար-  
վելու ձևը չգիտի: Մի այստե՛ղ նայեք: Ախր ես չեմ էլ հասցրել  
սրանք աչքի անցկացնել, գոնե վստահության արժանիները կար-  
դացած լինեի:

**ՔԼԻՖ.**— Ի դեպ, կարելի՞ է կարդալ քո «Նյու...

**ՋԻՄԻ.**— Ո՛չ, չի՛ կարելի: (Խրատական եղանակով): Եթե քեզ որևէ  
բան է հարկավոր, գնիր: Ինչպես ես: Գինը...

**ՔԼԻՖ.**— Ինը փե՛նս է, վաճառվում է ուզա՛ծդ կրպակում: Ոնց որ  
կծծի պառավ լինես:

**ՋԻՄԻ.**— Ախր քո ի՞նչ բանն է կարդալը: Ոչ խելք ունես, ոչ էլ հետա-  
քըրքրություններ: Էշն ինչ գիտի՝ նուշն ինչ է: Ծիշտ չէ՛:

**ՔԼԻՖ.**— Ծիշտ է:

**ՋԻՄԻ.**— Դու քեզանից ի՞նչ ես ներկայացնում, խղճուկ գալստացի՛:

**ՔԼԻՖ.**— Ոչինչ: Ոչինչ էլ չեմ ներկայացնում:

**ՋԻՄԻ.**— Ոչի՞նչ: Ուրեմն դու արժանի ես պրեմիեր մինիստր դառնա-  
լու: Ոնց էլ լինի, կնոջս ընկերների հետ շփված կլինես: Խիստ  
ինտելեկտուալ մարդիկ են, չէ՛: Ես ինքս էլ եմ անձամբ համոզվել:

**Քլիֆը և Հելենան շարունակում են ունել:**

Հոգեկան մեծ պահանջմունքներ ունեն: Նստում են, իրենց հոգեվոր շոշափուկներով մտովի մածմծում մեկմեկու ծնկները և այնպես են քննարկում սեքսի հարցերը, ասես դա Բախի<sup>17</sup> «ֆուգայի արվեստն» է: Եթե դու չես ուզում պատասխան օրիորդ մնալ, իհարկե, միայն հոգևոր իմաստով, ուրեմն լսիր, թե հայրիկդ քեզ ինչ է ասում: (Սկսում է ունել: Երկու կանանց լուռ անբարյացակամությունը նրան հունից հանում է, ու թեև նա իրեն ուրախ-զվարթ է պահում, բայց ձայնը մերթընդմերթ մատնում է նրա անհանգըստությունը): Գիտե՞ս, ո՞րն է քո դժբախտությունը, տղա՛ս: Դու շատ ես ջանում հաճոյանալ:

**ՀԵԼԵՆԱ.**— Փառք ասածո, որ գոնե այդպիսի մեկը գտնվեց:

**ՋԻՄԻ.**— Վերջիվերջո, դու շոկոլադե կեքս կդառնաս, այն կեքսերից, որոնց համար կինս խելքահան է լինում: Իմ կինը այն մեկն է՝ ետևինս, նա հարվածային գործիքների վրա է նվազում: Արտաքուստ նա քաղցր է ու կաշուն, բայց եթե համտեսես (ընթացիկներով ամեն մի բառը), հում է, լարծուն ու գարշահամ: (Ընդգծված սիրալիրությամբ թեյամանը մոտեցնում է Հելենային): Ձեզ թեյ լըցնե՞մ:

**ՀԵԼԵՆԱ.**— Այո, շնորհակալ եմ:

**ՋԻՄԻ (ժպիտը դեմքին լցնում է նրա գավաթը).**— Գիտե՞ս, թե ինչ կլինի քո վերջը, տղա՛ս. կդառնաս սևսիրտ, մաղձոտ ցավագար:

**ՀԵԼԵՆԱ (գավաթը վերցնելով).**— Ծնորհակալ եմ:

**ՋԻՄԻ.**— Իսկ այդ բախտի ընտրյալները՝ մեր ընկերները, բոլորն էլ մի մարդու պես հացկատակներ են, դատարկապորտներ և որ ամենագլխավորն է, արուլիայի զոհեր:

**ՀԵԼԵՆԱ (Էլիսոնին).**— Դու թեյ չե՞ս խմում:

**ԷԼԻՍՈՆ.**— Հիմա գալիս եմ:

**ՋԻՄԻ.**— Այսօր նոր երգի համար վերնագիր եմ հորինել: Այսպես է. «Հերիք է վզովս փաթաթվես, Միլդրեդ, մեկ է, հաշիվներս մաքրել եմ քեզ հետ»: (Հանկարծ շուռ է գալիս Էլիսոնի կողմը): Լա՞վ է:

**ԷԼԻՍՈՆ.**— Ծատ լավ է:

**ՋԻՄԻ.**— Գիտեի, որ քեզ դուր կգա: Եթե հաջողվի այս երգին կրոնական աստառ տալ, ուղղակի հոյակապ բան կստացվի: (Հելենային): Ի՞նչ կարծիքի եք: Ես մտածում էի, որ դուք կարող եք օգնել ինձ:

**Հելենան չի պատասխանում:**

Ձեր գործը թեթևացնելու համար հիմա կարտասանեմ տեքստը:

Ուշադիր լսեք, մոտավորապես այսպես է.

Ես հոգնել եմ զգովանքներից անալի,  
Վե՛ն ու կովից, զգովոտութից անողկալի,  
Թափուր մահիճն է ողբածոր տրտնջում,  
Գիճի բերեք, արբեմ գինով պառպաջուն:  
Էլ չեմ ուզում հեշտանքի մեջ տաակլտվել,  
Կնախընտրեի կարուսելով պտտվել,  
Գիճի բերեք, արբեմ գինով ոսկեռ:  
Իմ սիրածի վավաւշանքը անհատնում,  
Ախ, անփարատ տաղտուկի է ինձ մատնում,  
Յոփ պլուրոնի գրկից թող գեթ ազատվեմ,  
Հուր հավիտյան կուսակրոն կկարգվեմ,  
Գիճի բերեք, արբեմ գինով փրփրուն...

Եվ այլն: Դե՛, ինչպե՛ս է:

ՔԼԻՖ.— Ապրես, ծերո՛ւկ:

ՋԻՄԻ.— Հա՛, հիշեցի, թե ինչ էի ուզում ասել. երեկ անկտոր անելիս ոտանավոր եմ հորիճել: Լսեք, եթե ձեզ հետաքրքրում է, պիտի որ անպայման հետաքրքրի: (Հեղեհային): Ոտանավորս հատկապես ձեզ կհուզի: Այն ներծծված է Դանտեի<sup>18</sup> աստվածաբանությանը և թունդ համեմված Էլիոթի<sup>19</sup> դատարկաբանությանը: Սկսվում է այսպես. «Թեև Կամբոջայում քիմնաքրում չկա...»:

ՔԼԻՖ.— Իսկ վերնագի՞րն ինչ է:

ՋԻՄԻ.— «Նեխահոտ ջրափոսը»: Ես ինքս այդ ջրափոսը նետված մի քար եմ: Ուրեմն...

ՔԼԻՖ.— Վատ չէր լինի քեզ այնտեղ նետել:

ՀԵԼԵՆԱ. (Ջիմիին).— Ինչո՞ւ եք այդպես ճգնում տհաճ երևալ:

Ջիմին դանդաղորեն շրջվում է նրա կողմը, նա շատ գոհ է, որ Հեղեհան այդքան հեշտությամբ ծուղակն ընկավ. նա դեռ ինչպես հարկըն է, չի էլ բացվել:

ՋԻՄԻ.— Ինչ ասացի՞ք:

ՀԵԼԵՆԱ.— Պարտադի՞ր է անպայման մարդկանց վիրավորել:

ՋԻՄԻ.— Ձեր կարծիքով սա նշանակում է վիրավորե՛լ: Ձեզ թվում է ես ինչ-որ մեկին վիրավորո՞ւմ եմ: Դուք դեռ լավ չեք ճանաչում ինձ: (Էլիտոնին դիմելով): Չի ճանաչում, չէ՛:

ՀԵԼԵՆԱ.— Իմ կարծիքով, դուք խիստ ձանձրալի երիտասարդ եք:

Կարճ դադար: Ջիմիին արտասովոր զվարճություն է համակում:

Ջայնը գուլար զգած՝ քահ-քահ ծիծաղում է:

ՋԻՄԻ.— Վա՛յ, տե՛ր աստված, տե՛ր աստված: Ահա՛, սրանք են կնոջս



ընկերները: Խնդրում եմ այս վարունգով սենդվիչը փոխանցեք այդ լեդի Բրեքնելին: (Ծարունակում է ուտել, բայց Էլիսնի պատրաստություններն այլևս անկարող է անուշադրության մատնել: Ջիմին շուռումուռ է գալիս, անցողակի հայացքներ նետում նրա կողմը, ապա դիմում նրան): Դո՛ւրս ես գալու:

**ԷԼԻՍՈՆ.**— Այո:

**ՋԻՄԻ.**— Կիրակի օրո՞վ, երեկոյա՞ն: Ո՞ր կարելի է գնալ կիրակի երեկոյան:

**ԷԼԻՍՈՆ (վեր կենալով).**— Ես Հելենայի հետ եմ գնում:

**ՋԻՄԻ.**— Դա գնալու տեղ չէ, այլ վշտանալու առիթ:

**Էլիսնը մոտենում է սեղանին և նստում Քլիֆի դիմաց:**

(Թեքվում է առաջ և նորից դիմում նրան): Ես չեմ հարցնում՝ ում հետ և ինչու, ես հարցնում եմ, թե ուր ես գնում:

**ՀԵԼԵՆԱ (հաստատակամորեն).**— Նա եկեղեցի է գնում:

**Ջիմին դավադրություն կամ նման մի բան էր ակնկալում, բայց հիմա զարմացած է նույնքան անկեղծորեն, որքան Քլիֆը քիչ առաջ:**

**ՋԻՄԻ.**— Ո՞ր:

**Լռություն:**

Խելքդ ե՛տ ես տվել, ի՛նչ ես արել: (Հելենային): Դուք որոշել եք նրան ձեր հպատակը սարքել, հա՞: Ա՛յ թե բանը որտեղ է հասել: Դու էլ այդպես հեշտությամբ ենթարկվո՞ւմ ես: (Ալեխոով): Հենց որ մտածում եմ, թե ինչքան ջանքեր թափեցի, ինչեր արեցի, որ քեզ դուրս քաշեմ...

**ԷԼԻՍՈՆ (վերահաս հարձակման վտանգն առնելով՝ դիմում է հուսակաուր պաշտպանության).**— Այո՛, այո՛, բոլորս էլ գիտենք, թե ինչե՛ր ես արել ինձ համար: Դու ինձ դո՛ւրս քաշեցիր հարազատներիս ու ընկերներիս զարշելի ճանկերից: Ես մինչև հիմա էլ տանը փտելի՛ս կլինեի, եթե դու չհայտնվեիր ճերմակ գծույգով և չփախցնեի՛ր ինձ:

**Էլիսնի ձայնի ջղագրգիռ երանգը Ջիմիին վերադարձնում է նախկին ինքնավստահությունը: Ջայրութի պոռթկումը մարում է և փոխվում հանդարտ անողորմության: Խոսելիս նրա ձայնը հանգիստ է ու խաղաղ:**

**ՋԻՄԻ.**— Գիտե՞ք, ծիծաղելին այն է, որ ես իսկապես հայտնվեցի եթե ոչ ճերմակ, ապա ճերմակին տվող մարտածի հեծած: Մայրիկն ինը սենյականոց ապարանքում աղջկան փակի տակ էր պահում: Ինչե՛ր, ինչե՛ր չէր անի մեծարգո մայրիկը ինձ նման ավազակի դեմ սրբազան պատերազմ մղելիս: Բավական էր, որ ես ու գինավառ մայրիկը թեթևակի նայենք մեկմեկու, և ասպետության

դարաշրջանի հետքն էլ չմնաց: Ես գիտեի, որ հանուն իր սաստծո՞ւ  
 գառան փրկության, նա կդիմի ամեն միջոցի. սոի, խաբեության,  
 ահաբեկման, շանտաժի: Ինձնից սարսափահար, ինձ նման մի  
 տղայից, որը ոչ փող ուներ, ոչ ոտքերի տակ ամուր հեճարան,  
 ոչ էլ նույնիսկ մի հատուկ արտաքին, նա ծննդկան ռեզեղջյուրի  
 պես սկսեց ոռնալ: Նրա ոռնոցն ուզածդ արուին կստիպեր ահից  
 սիրթնել ու ամուրի մնալու ուխտ անել: Բայց նույնիսկ ես թերա-  
 գնահատեցի մայրիկի գորությունը: Մեծարգո մայրիկը տոգած  
 տեսք ունի և առաջին հայացքից փոքր-ինչ ծանրաշարժ է թվում,  
 բայց աստված չանի, որ այդ կոտրատվող շատակերը ձեզ մոլո-  
 րեցնի: Ծարպի պատյանի տակ նա գրահ է հագնում... **(Տեճոս-  
 գին պրայտումների մեջ է, թե ինչպես ցնցի Հելենային):** Նա Բոմ-  
 բեյի<sup>20</sup> պոռնկատանն անցկացրած գիշերվա պես գոեհիկ է ու նա-  
 վաստու բռունցքի պես բիրտ: Հիմա նա երևի նստած է այս ջրի  
 բաքում և որսում է իմ ամեն մի բառը: **(Ուրքով թխկթխկացնում  
 է ջրի բաքը):** Դու ինձ լսո՞ւմ ես, մարի կ: **(Նստում է բաքի վրա  
 և սկսում թմբկահարել):** Վե՛րջ, էլ չի կարող այստեղից դուրս  
 պրծնել: Ահավասիկ մի օրինակ, որը բացահայտում է այս հար-  
 գարժան տիկնոջ տակտիկան: Երևի նկատել էք, որ մազերս բա-  
 վականին երկար են: Եթե իմ կինը ազնիվ մարդ է, եթե ճշմար-  
 տության կողմն է, կհաստատի, որ երկար մազերս ոչ մի կույ  
 չքանեն կեղտոտ, անբնական հակումների հետ: Ես երկար մազեր  
 եմ պահում, որովհետև նախ՝ երկու շիլինգը կարելի է ավելի օգ-  
 տակար բանի վրա ծախսել, քան մազ կտրելն է, և հետո՝ ինձ  
 այսպես ավելի է դուր գալիս: Բայց այս պարզ ու անմեղ բացատ-  
 րությունը չբավարարեց մայրիկին: Նա խուզարկումներ էր վարձել  
 ինձ հետևելու համար, ուզում էր «Համաշխարհային Աորույթների»  
 արժանի վարկաբեկիչ նյութեր հավաքել: Եվ այդ ամենը հանուն  
 այն բանի, որ ես չփախցնեմ իր դատրիկին պասկազերծ գաղա-  
 փարների տապճակով զարդարված իմ քնձո՞տ յարբույ: Մողո-  
 շիկ զամբիկս, որին մի ժամանակ հեծած՝ գրոհի էի նետվում, էլ  
 առաջվանը չէր: Ինձ հազիվ էր տանում, իսկ քո քաշն արդեն  
**(Էլիսոնին)** նրա ուժերից վեր էր: Եվ նա ընկավ ու սասկեց կես  
 ճանապարհին:

**ՔԼԻՖ (հաշտարար եղանակով).—** Բեր կոիվ չսարքենք, բարեկա՛մս:

Դրա վերջը լավ չէ:

**ՋԻՄԻ.—** Իսկ ինչո՞ւ չսարքենք, եթե դա միակ բանն է, որին ես ըն-  
 դունակ եմ:

**ՔԼԻՖ.**— Ջիմի՛, մանչո՛ւկա...

**ՋԻՄԻ (Էլիսոնին).**— Եվ դու թույլ ես տվել, որ այս սուտ բարեպաշտը, այս մեղքի տոպրակը գլխիդ տե՛ր դառնա: Նա քեզ արդեն հին հավատի՞դ է վերադարձրել, հա՛:

**ՀԵԼԵՆԱ.**— Ի սե՛ր ասածո, դե բավակա՛ն է լուտանքներ թափեք: Դուք նրա մոր մասին այդպես խոսելու իրավունք չունե՛ք:

**ՋԻՄԻ (արդեն ամեն ինչի ընդունակ).**— Բոլոր իրավունքներն էլ ունե՛մ: Չի էլ սատկո՛ւմ այդ պատվարոզը: **(Էլիսոնին):** Ի՞նչ է, ճիշտ չե՞մ ասում:

**Քլիֆը և Հելենան լարված հայացքները հառել են Էլիսոնին, բայց սա աչքերը սկետել է իր ափսեին:**

Ես ասում եմ, որ նա պատվարոզի մե՛կն է, և վաղուց ժամանակն է, որ սատկի՛: Քեզ ի՞նչ է եղել: Ինչո՞ւ չես նետվում նրան պաշտպանելու:

**Քլիֆն ընդոստ վեր է կենում և բռնում նրա թևից:**

**ՔԼԻՖ.**— Ջիմի՛, վերջացրո՛ւ:

**Ջիմին կոպտորեն մի կողմ է հրում նրան, Քլիֆը ճարահատյալ նստում է տեղը, ձեռքն այտին դիմհար դնում:**

**ՋԻՄԻ.**— Եթե իմ մասին էլ նման բան ասեին, նա այսպես կնստեր՝ իր մշտական թմբիրը գլխին ու ձայն չէր հանի: Կրկնում եմ՝ վաղուց ժամանակն է, որ նա սատկի՛: **(Պատրաստվում է նոր գրոհի: Հավաքում է ուժերը վճռական հարվածի համար):** Աստվա՛ծ իմ, ինչքա՛ն-ինչքա՛ն լուծողականի կարիք կունենան այն որդերը, որոնք ստիպված են լինելու նրա վերջը տալ: Վա՛խ-վա՛խ, իմ փոքրի՛կ ճիճուներ, գիտե՛ք, ինչ զարհուրելի փորացավ է ձեզ բռնելու: Էլիսոնի մայրիկը ձեր գիրկն է գալիս: **(Ջանում է զավեշտական-ճարտասանական եղանակով խոսել):** Նա կանհետանա, բարեկամներս, իր ետևից թողնելով մարտդական տենչացող որդերի մի թափոր, որը երազում է քավարան ընկնել և ստամոքսը մաքրելով՝ մաքրագործվել: **(Ժպտում է՝ նայելով Էլիսոնին):**

**Էլիսոնը դեռևս իրեն զայում է: Քլիֆն առաջվա պես նրանց չի նայում: Միայն Հելենան է, որ հայացքը Ջիմիին է հառել:**

**(Հելենային):** Բա՛ն է պատահել:

**ՀԵԼԵՆԱ.**— Սիրտս խառնում է, ուրիշ ոչինչ: Սիրտս խառնում է արհամարհանքից ու նողկանքից:

**Ջիմին համոզվում է, որ Հելենային իսկապես ծուղակն է զցել, անտարբեր հայացքով նայում է նրան:**

**ՋԻՄԻ.**— Օրերից մի օր կթքեմ կրպակի առևտրի վրա ու բոլորիս մա-

սին մի գիրք կգրես: Այ այստեղ է (մատով տկտկացնում է նա-  
կատը)՝ ծայրից ծայր պատրաստ: Մի մետրանոց հրե տառերով  
է գրված: Իմ տողերը քթի տակ չեն մրմնջա՝ մորաքույր Ռորդ-  
ստորթի<sup>21</sup> հետ նարգիզներ փնջելով: Իմ գիրքը կբոցավառի՝ միտ-  
քըն ու արյունը: Իմ արյան նմա՛ն:

**ՀԵԼԵՆԱ (փորձելով հանդարտ ողջախոհությամբ խելքի բերել նրան).—**

Նա ընդամենն ասաց, որ ուզում է ինձ հետ եկեղեցի գալ: Ձեմ  
հասկանում, թե ինչու հանկարծ այդպես բռնկվեցիք:

**ՋԻՄԻ.—** Ձե՛ք հասկանում: Ըստ երևույթին, դուք այնքան էլ խելոք չեք,  
ինչքան ինձ էր թվում:

**ՀԵԼԵՆԱ.—** Ի՞նչ է, կարծում եք ամբողջ աշխարհը ելել է ձեր դե՛մ:

**ԷԼԻՍՈՆ (նրանց չնայելով).—** Օ՛, մի խլիր նրանից իր տատապանք-  
ները, առանց դրանց նա կկործանվի:

**Ջիմին զարմացած նայում է նրան, ապա նորից դառնում Հելենա-  
յին: Էլիսոնի հերթը դեռ չի եկել:**

**ՋԻՄԻ.—** Կարծես ձեր խումբը վերջին ներկայացումը շաբաթ օրն է  
տվել, չէ՞:

**ՀԵԼԵՆԱ.—** Այո, ճիշտ է:

**ՋԻՄԻ.—** Այսինքն՝ ութ օր առաջ:

**ՀԵԼԵՆԱ.—** Էլիսոնը խնդրեց, որ ես մնամ:

**ՋԻՄԻ.—** Հիմա՞ ինչ եք մտքներիդ դրել:

**ՀԵԼԵՆԱ.—** Լսե՛ք, ձեզ չի՞ թվում, որ բացասական հերոսի ձեր ամպ-  
լուայից մենք կշտացել ենք:

**ՋԻՄԻ (Էլիսոնին).—** Ախր դու չես հավատում սրա զառանցանքին:  
Ասե՛նք, դու ընդհանրապես ոչ մի բանի չես հավատում: Դու պար-  
զապես ուզում ես ինձնից վրեժ լուծել, չէ՞: Ինչո՞ւ, ինչո՞ւ ես այդ-  
պես ենթարկվում նրա ազդեցությանը:

**ԷԼԻՍՈՆ (չդիմանալով՝ պոռթկում է).—** Ինչո՞ւ, ինչո՞ւ, ինչո՞ւ: (Ձեռ-  
քերով փակում է ականջները): Գլուխս պայթո՛ւմ է այդ բառից:

**ՋԻՄԻ.—** Քանի դեռ դու այստեղ ես, ես ստիպված եմ այդ բառն օգ-  
տագործել: (Մոտենում է բազկաթոռին և նստում թիկնակին: Դի-  
մում է մեջքով դեպի իրեն նստած Հելենային): Վերջին անգամ  
նա եկեղեցում եղել է ինձ հետ ամուսնանալիս: Ձեզ համար դա  
խիստ զարմանալի է, չէ՞: Այն էլ ասեմ, որ պարզապես անհրա-  
ժեշտության բերումով: Հասկանո՞ւմ եք, մենք շտապում էինք: (Իր  
ասածի մեջ զավեշտական իմաստ գտնելով՝ հանկարծ քրքջում է):  
Հա՛, այնպե՛ս էինք շտապում: Արյան ծարավի՞ էինք. շա՛տ էինք  
ուզում մեկս մյուսի արյունը քամել... Ամուսնությունները գրանցող

տեղական պաշտոնյան հայրիկի ծանոթն էր. մենք գիտեինք, որ  
 նա կայծակի արագությամբ ամեն ինչ գնդապետի ականջին կը-  
 հասցնի: Դրա համար էլ ստիպված էինք այնպիսի քահանա գըտ-  
 նել, որը հայրիկին գոնե անձամբ ճանաչելիս չլիներ: Բայց մենք  
 իզուր էինք այդպես շարչարվում: Երբ փեսեղբոր հետ տեղ հա-  
 սանք,— այդ տղայի հետ առավոտյան գարեջրատանն էի ծանո-  
 թացել,— մայրիկն ու հայրիկն արդեն եկեղեցում էին: Վերջին  
 բոպեին լուրն իմացել էին ու եկել մահապատիժն աչք ածելու: Դե՛,  
 ես էլ աչքերս չորս արած՝ նրանց էի նայում: Նախաճաշին խել-  
 քիցս դուրս գարեջուր էի կոնծել, գուլաս դժժում էր: Մայրիկը  
 մսագնդի պես փովել էր նստարանին. ազնվացեղ ոնգեղջյուրին  
 ասես տապարով զարկա՛ծ լինեին: Հայրիկը զգաստ ու անտարբեր  
 բազմել էր նրա կողքին, մտաբերում էր հնդիկ արքայազների հետ  
 անցկացրած իր ոսկի օրերը և աչքին չէր հավատում, որ մտրակը  
 տանն է մոռացել: Եկեղեցին դատարկ էր, նրանցից բացի ուրիշ  
 ոչ ոք չկար. նրանք էին ու մենք: **(Հանկարծ պափվելով հիշո-  
 դություններից):** Լավ չեմ հիշում, թե հետո ինչ եղավ: Ըստ երե-  
 վույթին, մեզ պսակեցին: Կարծեմ ես փսխեցի խորանում: **(Էլի-  
 սոնհին):** Դու չե՛ս հիշում:

**ՀԵԼԵՆԱ.**— Վերջացրի՛ք:

**Նորից արյան հոտ առնելով՝ Ջիմին շարունակում է անպատկառ,  
 ուրախ-զվարթ եղանակով:**

**ՋԻՄԻ (Էլիսոնին).**— Եվ դու թույլ ես տալիս, որ Դիորի զգեստով այս  
 սուրբ աստվածածինը գլխիդ տիրություն՝ն անի: Ուզո՞ւմ ես երկու  
 բառով բացեմ ճշմարտությունը: **(Բառերը հատ-հատ արտասու-  
 նելով):** Սա կովի մեկն է: Ես դրա մեջ առանձնահատուկ դժբախ-  
 տություն չեմ տեսնում, բայց սա կարծես թե պահանջում է, որ  
 իրեն երկրպագենք, ինչպես սրբազան կովին:

**ՔԼԻՖ.**— Չափդ մի անցկացրու, Ջիմի՛: Վե՛րջ տուր:

**ՀԵԼԵՆԱ.**— Ա՛հ, թող շարունակի:

**ՋԻՄԻ (Քլիֆին).**— Տեսնում եմ, դու էլ ես որոշել նրա կողմն անցնել:  
 Է՛հ. ինչո՞ւ չէ: Հելենան հուսալի մարդ է, հաշիվներիդ մեջ չես  
 սխալվի. նա նոր Էկոնոմիկայի մասնագետ է՝ գերբնական Էկո-  
 նոմիկայի: Դրա էությունը լույսի պես պարզ է. վճարներ և տու-  
 գանքներ: **(Վեր է կենում):** Հելենան այն մարգարեներից է, որոնք  
 լուրեր են տարածում իշխանության վերաբաժանման մասին: **(Նրա  
 երևակայությունը բորբոքվում է, բառերը հեղեղի պես թափվում՝  
 են բերանից):** Բանականություն և Առաջընթաց. հին ֆիրման ա--

ճուրդի՝ է հանվել: Պոչներդ քաշե՛ք, քանի դեռ ուշ չէ՛: Դրա փոխարեն իր դարն ապրած ամեն ինչի վարկն աճո՞ւմ է, աճո՞ւմ, աճո՞ւմ ու աճո՞ւմ: **(Գնում է դեպի ձախ):** Նախատեսվում են արմատական փոփոխություններ: Դիրեկցիայի նոր կազմ, որը լավատեղյակ լինի, թե շահաբաժիններն ինչքան օգտավետ են և հոգ տանի, որ դրանք ընկնեն խելոք մարդկանց ձեռքը: **(Հայացքը դարձնում է նրանց):** Ամեն ինչ ծախժխե՛ք, ինչ ունեք-չունեք: Ամեն ինչի պահանջարկ էլ կա: **(Քայլում է սեղանի կողմը):** Մոտենում է մեծ սնանկացումը, ձեզ փրկություն չկա՛. դե ուրեմն Հելենայի ու նրա բարեկամների նման ոտքերդ պնդացրե՛ք, քանի դեռ ուշ չէ՛: Ախր շատ քիչ ժամանակ է մնացել: Օ՛, գալիք աշխարհը ոսկեգօ՞ծ կլինի: Դուք հրաշալի հաղթանակ կտանեք և դրա պտուղներն ամբողջովին դո՛ւք կվայելեք: **(Սեղանի շուրջը պտույտ գործելով՝ ետ է դառնում դեպի աջակողմյան բազկաթոռը):** Ես հինգ մատի պես գիտեմ Հելենային և ընդհանրապես այս բնույթի մարդկանց: Փաստորեն նրանք ամենուր են, չես կարող նրանց ճեղքել ու անցնել: Սա ոռմանտիկ ցեղ է: Մրանց հայացքը մեկընդմիջտ գամված է անցյալին: Մրանք լույս են տեսնում միայն Մութ դարերի խորքում: Օրինակ՝ Հելենան, վաղուց ի վեր փակվել է իր հարմարավետ հոգեկան աշխարհում և թքած ունի քսաներորդ դարի բոլոր այլանդակությունների վրա: Նա մինչև իսկ նախընտրում է զրկվել բոլոր արտոնություններից, որոնց համար մենք դարերով պայքարել ենք: Նա երազում է պատասպարվել պարտեզի խորքում թաքնված արտացունց քողտիկում, որպեսզի հոգին ազատի մեղքի զգացումից: Մեր Հելենան դողո՞ւմ է տենդահույզ մոլուցքից... **(Սեղանի վրայով թեքվում է դեպի նա):** Ծիշտ չէ՞: **(Սպասում է նրա պատասխանին):**

**ՀԵԼԵՆԱ (միանգամայն հանգիստ).**— Ափսոս, որ հեռու եք ինձնից: Թե չէ մի փառահեղ ապտակ կուտեիք:

**Սեղանի վրայով ակնդետ նայում են մեկմեկու: Ջիմին դանդաղ քայլերով անցնում է Քլիֆի կողքից և մոտենում նրան:**

Գալուցս ի վեր դուք զբաղված եք սրան-նրան անպատվելով:

**ՋԻՄԻ.**— Հելենա՛, դուք տեսե՛լ եք, թե ինչպես են մարդիկ մեռնում:

**Հելենան վեր կենալու շարժում է անում:**

Ոչ, չշարժվեք:

**Հելենան մնում է նստած՝ աչքերը նրան հառած:**

Կտրուկ շարժումները ձեզ չեն սազում:

**ՀԵԼԵՆԱ (սացե ձայնով).**— Եթե համարձակվեք ավելի մոտենալ, ես ձեզ կապտակեմ:

**ՋԻՄԻ (հայացքը սևեռել է Հելենայի դեմքին, շուրթերին քմծիծաղ է խաղում).**— Հույս ունեմ, որ սխալմամբ չեք կարծում, թե ես ջեթըլմեմ եմ:

**ՀԵԼԵՆԱ.**— Ես ոչ մի հիմք չունեմ այդպես կարծելու:

**ՋԻՄԻ (դեմքն ընդհուպ մոտեցնելով նրա դեմքին).**— Ես դեռ դպրոցում թքած ունեի, որ աղջիկներին չի կարելի խփել: (**Մեղմորեմ**): Եթե դուք ինձ ապտակ հասցնեք, ասովա՛ծ վկա, ես ձեզ գետի՛ն կփռեմ:

**ՀԵԼԵՆԱ.**— Դժվար չէ ենթադրել: Դա ձեր ոգով է:

**ՋԻՄԻ.**— Վստահ եղեք: Բռնությանն նկատմամբ զզվանքն է իմ ոգով: Հենց դրա համար էլ եթե կհնը կարծում է, որ վեհանձնությունն ինձ անպաշտպան է դարձնում և իր քնքուշ թաթիկը բարձրացնում է վրաս, ես նրան պատասխանում եմ միևնույն ձևով:

**ՀԵԼԵՆԱ.**— Դա ինչ-որ նրբիմաստ բա՛ն է նշանակում, թե դուք իսկապես դրան ընդունակ եք:

**ՋԻՄԻ (լայն ժայտով).**— Ինձ թվում է մենք հիանալի հասկանում ենք իրար: Բայց դուք չպատասխանեցիք իմ հարցին: Ես հարցրի՛ տեսե՛՛լ եք, թե ինչպես եմ մարդիկ մեռնում:

**ՀԵԼԵՆԱ.**— Ոչ, չեմ տեսել:

**ՋԻՄԻ.**— Ով որ չի տեսել, թե ինչպես եմ մարդիկ մեռնում, տատապում է մանկամտության ծանր տեսակով: (**Լավ տրամադրությունն անհետ կորչում է, հենց որ նա նորից տարվում է հուշերով**): Տասներկու ամիս շարունակ ես հետևում էի, թե ինչպես է հայրս մեռնում: Տասը տարեկան էի: Նա իսպանական պատերազմից էր վերադարձել: Որոշ աստվածավախ ջեթըլմեմներ նրան այն օրն էին գցել, որ շատ քիչ էր մնում նրան ապրելու: Բոլորն էլ գիտեին այդ, նույնիսկ ես: (**Գնում է դեպի աջ**): Բայց հասկանո՞ւմ եք, ստացվել էր այնպես, որ բացի ինձնից, ոչ ոք նրանով չէր հետաքրքրվում: (**Շրջվում է լուսամտի կողմը**): Մեր ազգականներն այդ ամբողջ պատմությունից շփոթահար էին: Ծփոթահար ու վրդովված: (**Դուրս է գալիս լուսամտից**): Ինչ վերաբերում է մորս, նրա միակ մտածմունքն այն էր, թե ինչու է բախտն իրեն կապել մի մարդու հետ, որն ամբողջ կյանքում ձախորդ գործեր է բռնել: Մայրս միշտ երազել էր փոքրամասնության մեջ լինել, նրանց հետ, ովքեր հաջողակ են, ձեռներեց ու աչքի ընկնող: (**Նորից գալիս է սենյակի կենտրոն**): Մի խոսքով, բոլորս էլ սպասում

Էինք հորս մահվանը: Մեր ազգականներն ամեն ամիս չեկ էին ուղարկում և մտահոգված էին միայն նրանով, որ հայրս մեռնի հավոր պատշաճի՝ անաղմուկ, առանց գոեհիկ իրարանցման: Մայրըս անտրտունջ խնամում էր նրան: Միգուցե խղճում էր: Ինձ թվում է նա ընդունակ չէր խղճին դեմ գնալ: **(Զայնի մեջ պաթետիկ շեշտեր են հայտնվում):** Բայց միայն ես, միայն ե՛ս էի զգում, թե ինչ է կատարվում: **(Բազկաթոռի ետևով զնում է դեպի ձախ):** Ամեն անգամ, երբ նստում էի հորս մահճակալի ծայրին, զրուցում նրա հետ կամ ականջ դնում, թե ինչպես է կարդում, Բազիվ էի ինձ զսպում, որ հանկարծ չփղձկամ: Տասներկու ամիս հետո ես մեծացել էի ոչ թե մեկ, այլ տասներկու տարով: **(Կոթնում է բազկաթոռին):** Տենդից հայումաշ այդ ձախորդ մարդու միակ ունկընդիրը մի վախվորած տղեկ էր: Ես ժամերով նստում էի նրա նեղիկ անջարանում: Այն ամենը, ինչ նրա մեջ մնացել էր կյանքից, նա փոխանցում էր ինձ՝ միայնակ, գլուխը կորցրած մանչուկիս, որը նրա ասածի կեսը հազիվ էր հասկանում: Իսկ ի՞նչ էր նրան մնացել. միայն իր հուսահատությունն ու կսկիծը. մեռնող մարդու քաղցրավուն գարշահոտը: **(Գալիս է, կանգնում բազկաթոռի առջև):** Ես շատ վաղ հասկացա, թե ինչ է զայրույթը: Զայրույթն ու անզորությունը: Եվ երբեք չեմ մոռանա: **(Նստում է):** Տասը տարեկանում ես ավելի շատ բան իմացա սիրո... դավաճանության և... մահվան մասին, քան դուք կիմանաք երևի ձեր ամբողջ կյանքում:

**Բոլորը լուռ են: Քիչ անց Հելենան վեր է կենում:**

**ՀԵԼԵՆԱ.**— Մեր գնալու ժամանակն է:

Էլիսոնն ի պատասխան գլխով է անում:

Գնամ պատրաստվեմ: **(Ուղղվում է դռան կողմը):** Քեզ ներքևում

կսպասեմ: **(Դուրս է գնում):**

**Կարճ դադար:**

**ՋԻՄԻ (առանց Էլիսոնին նայելու, համարյա շշուկով).**— Ուրեմն քեզ համար միևնու՞յն է, թե ինձ հետ ինչպես են վարվում: Միևնու՞յն է, թե դու ինչպես ես հետո վերաբերվում: Ես ամեն ինչ քեզ տվեցի: Մի՞թե քեզ համար դա ոչի՞նչ, ոչի՞նչ չի նշանակում:

**Էլիսոնը լարվում է:**

**(Մուրը գլխավերևում թափահարող ռազմիկի հոխորտանքը հօդս է ցնդել, Ջիմիի ձայնը դողում է անզոր կատաղությունից):** Հուդա՛: Փայա՛ս: Նա քեզ քարշ է տալիս իր ետևից, իսկ դու այն աստի-



ճան զո՛րկ ես կամքի Աշույից, որ թույլ ես տալիս նրան գլխի՛դ  
նստել:

**Էլիսոնը վերցնում է իր գավաթն ու զարկում հատակին: Ջիմին  
վերջապես հասավ իր նպատակին: Էլիսոնը նայում է գավաթի փշուր-  
ներին, ապա աչքերը բարձրացնում նրա վրա: Գնում է դեպի աջ, հան-  
դերձապահարանի կախիչից հանում է զգեստը և հագնում: Մարմանդ-  
ները կոճկելիս նրա գլուխը պտտվում է, վայր չընկնելու համար հեն-  
վում է հանդերձապահարանին: Փակում է աչքերը:**

**ԷԼԻՍՈՆ (կամացուկ).—** Մի քիչ հանգստություն եմ ուզում, ուրիշ ո-  
չինչ:

**ՋԻՄԻ.—** Հանգստություն՞ն: Տե՛ր ասոված: Նրան հանգստություն՞ն է  
պետք: (**Դժվարությամբ բռնեք գտնելով**): Սրտիցս արյուն է  
կաթում, ես տառապո՛ւմ եմ, իսկ նրան հանգստություն՞ն է պետք: \*

**Էլիսոնը գնում է մահճակալի կողմը՝ կոշիկները հագնելու: Քլիֆը  
սեղանից վեր է կենում և նստում աջակողմյան բազկաթոռին: Մի լրա-  
գիր է վերցնում և սկսում աչքի անցկացնել: Ջիմին փոքր-ինչ խաղաղ-  
վում է և փորձում հանգիստ խոսել:**

**ՋԻՄԻ.—** Կատաղությունից ինձ ուտում եմ, գլուխս պատեպատ տա-  
լիս, բոլորն ասում են՝ «Խե՛ղճ տղա» կամ «Ի՛նչ տհաճ երիտա-  
սարդ է», իսկ այս կին կոչեցյալն իր լուռությամբ մարդու սիրտ է  
մաշում: Ես ժամերով, մթության մեջ նստել եմ այս բազկաթոռին,  
ու թեև նա հիանալի իմացել է, թե հոգուս խորքում ինչ է կատար-  
վում, բայց հանգիստ շրջվել է ու գնացել քնելու: (**Վեր է կենում,  
դառնում Քլիֆին**):

**Քլիֆը հայացքը չի կտրում լրագրից:**

Մեզանից մեկը խելքը թոցրել է: Մեզանից մեկը չարալլուկ, ան-  
զգա խելագար է: Բայց ո՞ր մեկս: Ե՛ս, որ ցգվել եմ այստեղ լաշառ  
կնկա պես ու կատաղություննս թափելու համար էլ բառ չեմ գրո-  
նում: Թե՞ նա, որ բազմել է այնտեղ՝ զուգված-զարդարված, կո-  
շիկներն է հագնում, ինչ է՝ գնալու է այդ... այդ... (**Բայց ոգեշրճ-  
չումն այս անգամ լքել է նրան**): Ո՞ր մեկս:

**Քլիֆը շարունակում է լրագրին նայել:**

Ասոված տա, սրա սիրո համը տեսնես, էլ բան չեմ ուզում: (**Գա-  
լիս է սենյակի կենտրոն՝ հետևելով, թե ինչպես է Էլիսոնը փրճա-  
րում իր ձեռնոցները**): Միգուցե մի օր բարեհաճես ուշքի գալ: Ես  
կապատեմ այդ օրվան: Ուզում եմ մինչև գոտկատեղս թաղվել ար-  
ցունքներիդ մեջ, ճողփալ արտասուքներիդ աղի ջրերում ու հա-  
ճույքից երգել: Ուզում եմ տեսնել քեզ գետնին քարշ գալիս: Շատ

եմ ուզում տեսնել, շատ եմ ուզում առաջին կարգում տեղ բռնել:

**Մտնում է Հելենան երկու աղոթագիրք ձեռքին:**

Ուզում եմ տեսնել կեղտակոլոլ դեմքդ. դա է միակ հույսս: Ուրիշ ոչ մի բան ինձ հարկավոր չէ:

**ՀԵԼԵՆԱ (մի պահ հապաղելով).—** Ձեզ հեռախոսի մոտ եմ կանչում:

**ՋԻՄԻ (շուռ գալով).—** Է՛հ, դա ոչ մի լավ բան չի հուշում: **(Դուրս է գնում):**

**ՀԵԼԵՆԱ.—** Արդեն պատրաստ ես:

**ԷԼԻՍՈՆ.—** Կարծես թե այո:

**ՀԵԼԵՆԱ.—** Քեզ լա՛վ ես զգում:

**Էլիսոնը գլխով է անում:**

Հիմա՛ ինչի համար էր այդպես գազազած: Ա՛հ, ասե՛նք, դա ինչ նշանակություն ունի: Պատկերացնո՞ւմ ես, թե ինչ է սպասվում քեզ մի բանի ամիս հետո, և այդ ամենը նրա երեսից: Այնինչ նա իրեն այնպես է պահում, կարծես դեռ մի բան էլ դու ես մեղավոր: Ա՛խ, տղամարդի՛կ, տղամարդի՛կ: **(Քլիֆին):** Իսկ դուք ամեն ինչ տեսնում եք ու ձեռքներդ ծալած նստո՞ւմ:

**ՔԼԻՖ (գլուխը դանդաղ բարձրացնելով).—** Այո, նստում եմ:

**ՀԵԼԵՆԱ.—** Ինչպե՛ս կարելի է: Այդքանից հետո դուք էլ ի՞նչ մարդ եք:

**ՔԼԻՖ.—** Ի գիտություն ձեզ, ես ուստիկանության տեսուչ չեմ: Լսեք, Հելենա՛, ես չեմ բաժանում Ջիմիի վերաբերմունքը ձեր նկատմամբ, բայց և ձեր կողմնակիցը չեմ: Ձեր գալուց ի վեր ամեն ինչ վատացել է առաջվա համեմատ: Ընդհարումներն այստեղ անխուսափելի են, բայց ես լավ գիտեմ, որ առանց ինձ այս երկուսը վաղուց բաժանված կլինեին: Ես նրանց միջև չեզոք գոտու պես մի բան եմ եղել: Երբեմն ամեն ինչ անցնում էր հանգիստ ու խաղաղ, առանց վեճ ու կռվի, և մենք գրեթե երջանիկ էինք: Բայց ավելի հաճախ այստեղ իսկական դժոխք է լինում: Միայն թե այնտեղ, որտեղ ես մեծացել եմ, սովոր էինք կռիվների ու աղմուկաղաղակի: Միգուցե ինձ նույնիսկ դուր է գալիս նորից խառնարանի կենտրոնում լինել: Ես շատ եմ սիրում այս մարդկանց: **(Հանդարտ հայացքը հառում է նրան և պարզաբարոտեն ավելացնում):** Եվ խղճում եմ մեզ բոլորիս:

**ՀԵԼԵՆԱ.—** Ներառյալ և ի՞նձ: **(Չսպասելով նրա պատասխանին՝ շարունակում է):** Ձե՛, ես չեմ հասկանում ո՛չ նրան, ո՛չ ձեզ, ո՛չ էլ այն ամենը, ինչ այստեղ կատարվում է: Ինձ համար պարզ է մի բան. ձեզնից ոչ մեկը պատկերացում չունի, թե ինչպես են իրենց պահում վայելուչ, բարեկիրթ մարդիկ: **(Տիրականորեն):** Լսիր,

Էլիսո՛ւ, ես հեռագիր եմ ուղարկել հորդ:

**ԷԼԻՍՈՆ (քարացած).— Ի՞նչ:**

**ՀԵԼԵՆԱ (նրան նայելով՝ իսկույն հասկանում է, որ հիմա ամեն ինչ իրենից է կախված: Սկսում է համբերությամբ բացատրել).— Ի՛նչ լսիր, սիրելի՛ս: Նա հեռագիրը կստանա վաղ առավոտյան: Ես որոշեցի, որ այդպես ավելի լավ է, քան թե ամեն ինչ հեռախոսով բացատրելը: Ես խնդրել եմ նրան, որ վաղը գա և քեզ տուն տանի:**

**ԷԼԻՍՈՆ.— Իսկ ի՞նչ ես գրել:**

**ՀԵԼԵՆԱ.— Ուղղակի, որ դու ուզում ես տուն վերադառնալ, և ես խնդրում եմ, որ նա գա ետևիցդ:**

**ԷԼԻՍՈՆ.— Պարզ է:**

**ՀԵԼԵՆԱ.— Ես գիտեի, որ այդքանն էլ է բավական: Գրել եմ, որ անհանգստանալու կարիք չկա, այնպես որ նրանք չեն հուզվի՝ մտածելով, թե քեզ ինչ-որ բան է պատահել: Ես ստիպված էի միջամտել, սիրելի՛ս: (Խիստ փաղաքուշ ձայնով): Դու դեմ չե՛ս:**

**ԷԼԻՍՈՆ.— Ոչ, դեմ չեմ: Ծնորհակալ եմ:**

**ՀԵԼԵՆԱ.— Կգնա՞ս, երբ նա գա ետևիցդ:**

**ԷԼԻՍՈՆ (դադարից հետո).— Կգնամ:**

**ՀԵԼԵՆԱ (թեթևացած).— Ես համոզված եմ, որ նա անմիջապես ճանապարհ կընկնի: Օրվա երկրորդ կեսին այստեղ կլինի: Դու անագին ժամանակ ունես իրերդ հավաքելու համար: Միգուցե քո գնալուց հետո... Ջիմին (նրա անունն արտասանում է իր վրա նկատելի ճիգ գործադրելով) խելքի գա, աչքերը բացվեն...**

**ԷԼԻՍՈՆ.— Ո՞վ էր նրան զանգահարողը:**

**ՀԵԼԵՆԱ.— Լավ չհասկացա: Հենց որ հեռագիրը թելադրեցի վերջացրի, հեռախոսը զանգեց, նոր էի լսափողը դրել: Ստիպված նորից ցած իջա: Ինչ-որ քույր էր:**

**ԷԼԻՍՈՆ.— Երևի հիվանդանոցից է: Հո չի՞ կարող միանձնուհի լինել. նա որտեղի՞ց պիտի այդպիսի ծանոթ ունենա: Դե՛, շտապենք, թե չէ կուշանանք: (Աղոթագրքերից մեկը դնում է սեղանին):**

**Մտնում է Ջիմին: Գալիս է սենյակի կենտրոն, կանգնում երկու կանանց միջև:**

**ՔԼԻՖ.— Ա՛յ տղա, չլինի՞ վատ բան է պատահել:**

**ՋԻՄԻ (Էլիսոնին).— Հյուսի մոր կողմից էին զանգում: Նրան կաթված է խփել:**

**Կարճ դադար:**

**ԷԼԻՍՈՆ.— Ինչ ցավալի է:**

**Ջիմին նստում է մահճակալի վրա:**

ՔԼԻՖ.— Ծա՛տ ծանր է վիճակը:

ՋԻՄԻ.— Ոչինչ չե՛ն ասում: Բայց ես կարծում եմ, որ մահամերձ է:

ՔԼԻՖ.— Է՛, ասածու ինչն եմ ասել...

ՋԻՄԻ (բռունցքով տրորում է դեմքը).— Ինչ անհերթեթ թան է: Չէ՛:

ԷԼԻՍՈՆ.— Ցավալի է: Ազնիվ խոսք, այնպես եմ ցավում նրա համար:

ՔԼԻՖ.— Ես ինչո՞վ կարող եմ օգտակար լինել:

ՋԻՄԻ.— Լոճոճնի գնացքը կես ժամից շարժվելու է: Լավ կլիներ ինձ համար տաքսի պատվիրելիք:

ՔԼԻՖ.— Հիմա՛: (Գնում է դեպի դուռը և կանգ առնում): Ուզո՞ւմ ես հետո գամ, ծերո՛ւկ:

ՋԻՄԻ.— Չէ, շնորհակալ եմ: Վերջին հաշվով, դու նրա հետ գրեթե անձանոթ ես: Քո գալն անիմաստ է:

**Հելենան մի փութկոտ հայացք է գցում Էլիսոնի վրա:**

Հնարավոր է, որ նա նույնիսկ ինձ շճանաչի:

ՔԼԻՖ.— Դե լավ: (Դուրս է գնում):

ՋԻՄԻ.— Հիշում եմ, թե ինչպես առաջին անգամ ցույց տվեցի նրանք լուսանկարը: Նոր-նոր էինք ամուսնացել: Նա նայեց, նայեց, աչքերն արցունքոտվեցին, ասաց. «Ի՞նչ գեղեցիկ է, ի՞նչ գեղեցիկ է»: Նա անընդհատ կրկնում էր այդ բառերը, ասես չէր կարողանում տեսածին հավատալ: Հիմա միամիտ ու սենտիմենտալ է հնչում, բայց նա այդ պահին այնպես լավ ասաց: (Նայում է Էլիսոնին):

**Էլիսոնը կանգնած է զարդասեղանի մոտ՝ մեջքով դեպի Ջիմին:**

Նա ուրախանում էր լուսանկարիդ նայելով, որովհետև կարողանում էր ամեն ինչի մեջ ուրախություն գտնել... Կոշիկներս կտա՞ս:

**Էլիսոնը ծունկի է իջնում և կոշիկները նրան տալիս:**

(Գլխահակ): Դու կգաս ինձ հետ, չէ՞: Հիմա նա (ցնցվում է) ուրիշ ոչ ոք չունի: Ես... քո կարիքն ունեմ... ուզում եմ, որ օսա ինձ հետ... (Նայում է նրա աչքերի մեջ):

Էլիսոնը շրջվում է և վեր կենում: Դրսում եկեղեցու կոչնակներն սկսում են զարկել: Հելենան գնում է դռան կողմը, ոտքը կախ գցում՝ հայացքը նրանցից չհեռացնելով: Էլիսոնն անշարժ կանգնել է, Ջիմին աչքերով ուտում է նրան: Էլիսոնը մոտենում է սեղանին և վերցնում աղոթագիրքը՝ առաջվա պես մեջքը Ջիմիին դարձրած: Մի պահ վարանում է, կարծես ինչ-որ բան է ուզում ասել, ապա արագ-արագ գրնում է դեպի դուռը:

ԷԼԻՍՈՆ (հագիվ լսելի).— Գնացի՛նք: (Դուրս է գնում):

Հելենան հետևում է նրան: Ջիմին վեր է կենում, աչքերին չհա-

վառապով՝ նայում շուրջը և կործնում կոմոդին: Հաչացքն ընկնում է թավ-  
շե արջի վրա, նա գգուշորեն վերցնում է խաղալիքը, գննում ու գետ-  
նով տալիս: Արջը խուլ թրմփոցով զարկվում է հատակին և գլորվում՝  
խուպոտ մռնչոց հանելով: Ջիժին նեավում է անկողնու վրա և դեմքը  
թաղում ծածկոցի մեջ:

Վարագույրն աքաղորեն իջնում է:

### ՊԱՏԿԵՐ ԵՐԿՐՈՐԴ

Հաջորդ օրվա երեկոյան: Վարագույրը բարձրանալուն պես՝ Էլի-  
սոնը զարդասեղանի մոտից գնում է մահճակալի կողմը: Նա զբաղ-  
ված է իրերը ճամպրուկի մեջ տեղավորելով: Չախ կողմում նստած է  
նրա հայրը՝ գնդապետ Ռեդֆերնը, մոտ վաթսուն տարեկան, պարթև  
ու գեղեցիկ մի տղամարդ: Նույնիսկ քառասնամյա զինվորական ծա-  
ռայությունը երբեմն անգոր է կոտրելու մեղմ ու բարեսիրտ բնավորու-  
թյունը: Հրամայելու սովոր գնդապետը վերջին ժամանակներս ավելի  
ու ավելի հաճախ է նեղվում՝ հայտնվելով այնպիսի իրադրության մեջ,  
որտեղ իր հեղինակությունը քիչ բան է վճռում: Նրա կինն, օրինակ,  
հաճույքից կշողար նման իրավիճակում, բայց նա անհանգիստ է ու  
շփոթահար: Ջգուշավոր հաչացքով գննում է շուրջը:

ԳՆԴԱՊԵՏ (մասամբ ինքն իրեն).— Վախենամ, որ այս ամենը վեր է  
իմ հասկացողությունից: Ինձ թվում է երբեք չեմ հասկանա: Ինչ  
վերաբերում է Ջիմիին, ապա մենք բոլորս նրա հետ տարբեր լե-  
զուներով ենք խոսում: Ասում ես՝ ո՞ր է գնացել:

ԷԼԻՍՈՆ.— Գնացել է միսիս Թեներին տեսնելու:

ԳՆԴԱՊԵՏ.— Ո՞ւմ:

ԷԼԻՍՈՆ.— Հյու Թեների մորը:

ԳՆԴԱՊԵՏ.— Հա՛, հասկանալի է:

ԷԼԻՍՈՆ.— Նա հիվանդացել է. կաթված է ստացել: Ինչպես գիտես,  
Հյուն հիմա արտասահմանում է, դե՛, Ջիմին էլ գնացել է Լոնդոն՝  
հիվանդատեսի:

Գնդապետը գլխով է անում:

Ուզում էր, որ ես էլ գնամ հետը:

ԳՆԴԱՊԵՏ.— Դա այն կի՞նն է, որը նրան օգնեց կրպակը գնել:

ԷԼԻՍՈՆ.— Այո:

**ԳՆԴԱՊԵՏ.**— Ի՞նչ է իրենից ներկայացնում: Հույս ունեմ, որ նմա՞ն չէ իր որդուն:

**ԷԼԻՍՈՆ.**— Ոչ մի մազաչափ: Դե՛, ինչպե՞ս նկարագրեմ: Ծատ հասարակ կի՞ն է, այն մարդկանցից, որոնց Ջիմին պահանջում է բանվոր դասակարգ կոչել: Օրավարձու աղախին է եղել, ամուսնացել է դերասանի հետ, ամբողջ կյանքն աշխատել է, ամեն տեսակ զրկանքներ տարել ամուսնուն և Հյուին պահելու համար: Ջիմին և նա շատ են սիրում իրար:

**ԳՆԴԱՊԵՏ.**— Ուրեմն ասում ես՝ չգնացի՞ր հետը:

**ԷԼԻՍՈՆ.**— Ոչ:

**ԳՆԴԱՊԵՏ.**— Իսկ կրպակում ո՞վ է աշխատում:

**ԷԼԻՍՈՆ.**— Քլիֆը: Նա շուտով կգա:

**ԳՆԴԱՊԵՏ.**— Հա՛, իսկապես որ, Քլիֆը: Նա է՛լ է այստեղ ապրում:

**ԷԼԻՍՈՆ.**— Այո, դիմացի սենյակում:

**ԳՆԴԱՊԵՏ.**— Կրպակ: Տարօրինակ զբաղմունք է կրթված երիտասարդի համար: Ի վերջո ի՞նչն է նրան հրապուրում: Ինձ միշտ թվացել է, թե նա յուրովի շատ խելացի է:

**ԷԼԻՍՈՆ** (այս թեմայի նկատմամբ կատարյալ անտարբերությամբ).— Ա՛հ, նա հազար ու մի բան փորձեց. լրագրող էր, ռեկլամային գործակալ, մի ժամանակ նույնիսկ փոշեծծիչներ էր վերանորոգում: Նրա համար կարես թե միևնույն է, թե ինչով է զբաղվում:

**ԳՆԴԱՊԵՏ.**— Ես հաճախ էի փորձում պատկերացնել, թե դուք ինչպես եք... այսինքն՝ ուզում եմ ասել, ինչպես եք ապրում: Նամակներումդ ոչինչ չէիր գրում:

**ԷԼԻՍՈՆ.**— Առանձնապես գրելու բան չկար: Մենք միշտ տանն ենք, ոչ մի տեղ չենք գնում:

**ԳՆԴԱՊԵՏ.**— Հասկանում եմ: Դու ուզում ես ամուսնուդ նկատմամբ լոյսալ լինել:

**ԷԼԻՍՈՆ.**— Լոյս՞լ: (Ծիծաղում է): Նա գտնում է, որ ձեզ նամակ գրելով՝ ես ուղղակի դավաճանությո՞ւն եմ գործում: Ստիպված եմ լինում հարյուր տեսակ հնարքներ բանեցնել փոստը գաղտագողի հանելու համար, ինչ է՛ չտեսնի, թե տանից նամակներ եմ ստանում: Հետո էլ ստիպված թաքցնում եմ դրանք:

**ԳՆԴԱՊԵՏ.**— Նա իսկապես ատո՞ւմ է մեզ:

**ԷԼԻՍՈՆ.**— Օ՛, այո, կարող ես չկասկածել: Նա բոլորիս է ատում:

**ԳՆԴԱՊԵՏ** (հառաչելով).— Ծատ ափսոս: Առհասարակ ամեն ինչ մի տեսակ անհաջող ստացվեց. անհաջող և անիմաստ: Ծիշոն ասած,

ես վաղուց եմ ինքս ինձ խոստովանել, որ որոշ իմաստով Ջիմին յուրովի իրավացի էր:

**ԷԼԻՍՈՆ** (այս խոստովանությունից շվարած).— Իրավացի՞:

**ԳՆԴԱՊԵՏ**.— Ես գիտեմ, որ նահանջելու համար հիմա արդեն ուշ է, բայց պետք է ասեմ, որ մայրդ ու ես այնքան էլ արդարացի չէինք: Ես ոչ մի բան չէի ասում, իսկ հետո արդեն իմաստ չունեք այդ մասին խոսել, բայց ես միշտ էլ համոզված եմ եղել, որ Ջիմիի նկատմամբ մայրդ շատ հեռուն գնաց: Իհարկե, նա սուսկալի վըշտացած էր, երկուսս էլ վշտացած էինք, և հիմնականում սրանով պիտի բացատրել տեղի ունեցածը: Ես ձեռքիցս եկածն արեցի, որպեսզի կանգնեցնեմ նրան, բայց նա այնպիսի վիճակում էր, որ ամեն ինչ ասարդյուն անցավ: Նա պարզապես ներշնչել էր իրեն, որ Ջիմին առնվազն հանցագործ է, քանի որ որոշել է ամուսնանալ քեզ հետ: Հարցաքննություններ, մասնավոր խուզարկումներ, մեղադրանքներ. այս ամենը սկզբից նեթ իմ սրտով չէր:

**ԷԼԻՍՈՆ**.— Դե՛, նա փորձում էր պաշտպան կանգնել ինձ, թեև բավականին անճարակ ձևով:

**ԳՆԴԱՊԵՏ**.— Խոստովանանք լինի, այդ ամենն ուղղակի սարսափելի էր: Ամեն կերպ փորձում եմ մոռացության տալ: Ես բոլորովին էլ չեմ արդարացնում Ջիմիին և չեմ էլ կարծում, թե երբևէ կարդարացնեմ, բայց մի հայացք գցելով անցած-դարձածին, գալիս եմ այն եզրակացության, որ այնուամենայնիվ, ավելի լավ կլինեք, եթե մենք ընդհանրապես չմիջամտեինք: Համենայն դեպս, ամեն ինչ շատ ավելի պատշաճ տեսք կունենար:

**ԷԼԻՍՈՆ**.— Դա ձեր մեղքով չէր:

**ԳՆԴԱՊԵՏ**.— Ով գիտե: Բոլորս էլ յուրովի մեղավոր ենք: Ջիմին անկասկած, ազնվորեն էր գործում: Նա անկեղծ մարդ է, ինչ էլ որ իրենից ներկայացնելիս լինի: Եվ մայրդ էլ, թեև ինչպես ասացիր, անճարակ ձևով, բայց նույնպես գործում էր անկեղծորեն: Իսկ այ, ես ու դու, թերևս ամենից շատ մենք էինք մեղավոր:

**ԷԼԻՍՈՆ**.— Մե՞նք:

**ԳՆԴԱՊԵՏ**.— Դու մի բանով ինձ ես քաշել, սիրելի՛ս: Դու էլ ես սիրում թիկունքում նստել, որովհետև սպասողական դիրքը միշտ էլ ապահով է ու հարմարավետ:

**ԷԼԻՍՈՆ**.— Թիկունքում նստե՞լ: Բայց չէ որ ես ամուսնացա նրա հետ:

**ԳՆԴԱՊԵՏ**.— Այո, ամուսնացար, միայն թե խոսքն այդ մասին չէ:

**ԷԼԻՍՈՆ**.— Ամուսնացա, չնայած բոլոր այդ նվաստացուցիչ տեսարաններին և սպառնալիքներին: Հիշիր, թե այն ժամանակ ինձ ինչ

Էիր ասում. որ ես կկործանե՞մ ձեզ, ձեր կամքին հակառակ եմ գնում, ինչպե՞ս եմ համարձակվում ձեզ հետ այդպես վարվել և այլև, և այլն:

**ԳՆԴԱՊԵՏ.**— Հավանաբար ավելի լավ կլիներ, եթե դու մեզ նամակներ չգրեիր, իմանալով, թե մենք ինչպես ենք վերաբերվում քո ամուսնուն և ընդհանրապես այն ամենից հետո, ինչ որ տեղի ունեցավ: (**Այլապես հաշագքով նայում է նրան**): Ներիր, ես մի փոքրը շփոթված եմ. այս ամենն այնպես անսպասելի էր. հեռագիրը, հապճեպ ուղևորությունս...

**Գնդապետն անօգնական վիճակում է: Հոգնած տեսք ունի: Խոնվահույզ և փոքր-ինչ հանդիմանական հաշագքով հետևում է Էլիսնին, կարծես սպասում է, որ նա պաշտպանվի: Էլիսնն զգում է այդ և խիստ շփոթված է:**

**ԷԼԻՍՈՆ.**— Դու գիտե՞ս, թե նա ինչ է ասում մայրիկի մասին: Ասում է՝ «տոգած, հղիացած պտվաբոզ է»: «Յուդալի պատառ որդերի համար», եթե չեմ սխալվում:

**ԳՆԴԱՊԵՏ.**— Հասնանալի է: Իսկ իմ մասին ի՞նչ է ասում:

**ԷԼԻՍՈՆ.** — Պատկերացրու, որ դու նրան ավելի քիչ ես հետաքրքրում: Ինձ թվում է դու նույնիսկ դուր ես գալիս նրան: Դուր ես գալիս, որովհետև նա կարող է խղճալ քեզ: (**Գիտակցելով, որ իր ասածից նա կվիրավորվի**): «Խեղճ հայրիկ. Էդվարդյան ամառի դարաշրջանից հրաշքով պահպանված մի բեկոր, որի գլուխը ոչ մի կերպ չի մտնում, թե ինչու է իր աստղը խավարել»: (**Անվստահորեն**): Կարծեմ այսպես է ասում:

**ԳՆԴԱՊԵՏ.**— Սուր լեզու ունի, խոսք չկա: (**Պարզամտորեն և առանց շարադրանքի**): Չեմ հասկանում, թե ինչու ծանոթացար այդ երիտասարդի հետ:

**ԷԼԻՍՈՆ.** — Հարի՛կ, խեղրում եմ, մի տանջիր ինձ: Առանց այդ էլ չորս տարի շարունակ ինձ գիշեր-ցերեկ տանջահար են արել:

**ԳՆԴԱՊԵՏ.**— Բայց ինչո՞ւ նա ամուսնացավ քեզ հետ, եթե այդպիսի տեսակետներ ուներ:

**ԷԼԻՍՈՆ.**— Այնպիսի հա՛րց ես տալիս: Ես ինչ իմանամ: Երևի վրեժ-խընդրությունից որդված:

**Գնդապետը տարակուսանքով նայում է նրան:**

Այո՛, այո՛: Ոմանք ամուսնանում են վրեժխնդրությունից որդված: Համենայն դեպս Ջիմիի նմանները: Կամ գուցե նա իրեն Ծելլիի<sup>22</sup> տեղն է դրել և չի հասկանում, թե ինչու ես Մերին<sup>23</sup> չեմ, իսկ դու՝ Ուիլյամ Գոդոմեր<sup>24</sup>: Նա գտնում է, որ ինքն օժտված է սիրելու



և ընկերությունն անելու բացառիկ ձիրքով, միայն թե և՛ սերը, և՛ ընկերությունը նա հասկանում է յուրովի: Քսան տարի շարունակ ես ապրում էի երջանիկ ու անխոռվ կյանքով, և հանկարծ այդ... այդ հոգևոր բարբարոսը ձեռնոց է նետում ինձ: Երևի միայն կինն է ընդունակ հասկանալու, թե ինչ է նշանակում այդպիսի մարտահրավեր ստանալ, թեև օրինակ՝ Հելենան, քեզ նման տարակուսանքի մեջ է:

**ԳՆԴԱՊԵՏ.**— Այո, ես տարակուսանքի մեջ եմ: **(Վեր է կենում, քայլում դեպի աջակողմյան լուսամուտը):** Ամուսինդ քեզ շատ բան է սովորեցրել, անկախ նրանից, գիտակցում ես դու այդ, թե ոչ: Ասածներիդ մեծ մասն ինձ համար անհասկանալի են: Ես միշտ համոզված եմ եղել, որ մարդիկ ամուսնանում են, որովհետև սիրում են միմյանց: Ինձ միշտ թվացել է, թե դա միանգամայն հիմնավոր պատճառ է: Բայց պարզվում է, որ մեր ժամանակի երիտասարդության համար այդպես չափից դուրս պարզունակ է: Նրանք մարտահրավեր են կարդում, ամուսնանում վրեժխնդրությունից դրդված: Ուղղակի անհնար է հավատալ, որ հենց դրա մեջ է տղամարդու և կնոջ սիրո իմաստը:

**ԷԼԻՍՆԵ.**— Միայն որոշ տղամարդկանց և կանանց:

**ԳՆԴԱՊԵՏ.**— Բայց դո՞ւ ինչպես ես նրանց մեջ հայտնվել: Իմ աղջիկը և... Ասենք, միգուցե Ջիմին իրավացի է: Միգուցե ես իսկապես... ինչպե՞ս էր ասել... Լոկարդյան ամայի դարաշրջանից հրաշքով պահպանված քեկոր եմ: Եվ իրոք ոչ մի կերպ գլուխս չի մտնում, թե ինչու է աստղս խավարել: Դու գոնե հասկանում ես, թե նա ինչ է ուզեցել դրանով ասել: Ես Անգլիայից մեկնեցի 1914 թվականի մարտին և չհաշված տասը տարին մեկ ձեռնարկած կարճատև այցելություններս, հայրենիքս չէի տեսել ընդհուպ մինչև վերադառնալս 47 թվականին: Դե՛, ի՛նչ խոսք, լսել էի, որ շատ բան է փոխվել: Պատմում էին, որ ամեն ինչ... շան բաժին է դարձել, ինչպես գնդապետ Բլիմփը կասեր: Հեովից հետո ես այդ ասելոսեներին հավատ չէի ընծալում: Իմ հիշողության մեջ Անգլիան դրոշմվել էր այնպես, ինչպես թողել էի 1914 թվականին, և ես երկյուղածորեն փայփայում էի հուշերս: Ի վերջո, իմ ձեռքին էր մահարաջայի<sup>25</sup> բանակի հրամանատարությունը: Դա իմ աշխարհն էր, և ես սիրում էի այդ աշխարհը: Թվում էր, թե այդպես շարունակվելու է ընդմիշտ: Հիմա, երբ այդ ամենը մտաբերում եմ, ինձ թվում է, թե երազ եմ տեսել: Ո՛ր էր թե այդպես շարունակվեր ընդմիշտ: Այն երկա՛ր, գովաշո՛ունչ երեկոները բլուրների վր-

րա, երբ ամեն ինչ թաղված էր ոսկու և ծիրանու մեջ: Ես ու մայրդ այնպես երջանիկ էինք: Թվում էր, թե ունենք այն ամենը, ինչ երազել ենք: Երևի վերջին օրը, երբ իմ աստղը դեռ չէր խավարել, այն օրն էր, երբ մեր փոքրիկ, կեղտակուր գնացքը հեռանում էր հեղձուկ, մարդաշատ հնդկական կայսրանից, և ամբողջ ուժով թնդում էր գնդի նվագախումբը: Սրտիս խորքում ես զգում էի, որ ամեն ինչ վերջացած է: Ամե՛ն, ամե՛ն ինչ:

**ԷԼԻՍՈՆ.**— Դու տառապում ես, որ ամեն ինչ փոխվել է: Ջիմին տառապում է, որ ամեն ինչ նույնն է մնացել: Եվ երկուսդ էլ անընդունակ եք ճշմարտության երեսին նայել: Ինչ-որ տեղ մի բան սխալ է, այնպես չէ՞:

**ԳՆԴԱՊԵՏ.**— Միանգամայն հնարավոր է, սիրելի՛ս:

Էլիսոնը կոճողի վրայից վերցնում է սկյուռը, ուզում է ճամպրուկի մեջ դնել, բայց տատանվում է և դարձյալ իր տեղը դնում: Գնդապետը շրջվել, նրան է նայում: Էլիսոնն առանց հորը նայելու մոտենում է նրան: Մի պահ կանգ է առնում ասես վարանած: Հետո հաղթահարելով վարանքը, անսպասելիորեն շուռ է գալիս և ընկնում հոր գիրկը: Կամացուկ արտասովում է: Դադար:

Սա լուրջ քայլ է: Դու հաստատ վճռել ես գա՛լ ինձ հետ: Համոզվա՞ծ ես, որ իսկապես այդ է ուզածդ:

**Մտնում է Հելենան:**

**ՀԵԼԵՆԱ.**— Ներեցեք: Էլիսո՛ն, ես եկա իմանալու, թե ինչով կարող եմ քեզ օգնել: Օ՛, երևում է ամեն ինչ վերջացրել ես:

**ԷԼԻՍՈՆ** (թողնում է հորը և մոտենալով մահճակալին՝ փակում ճամպրուկի կափարիչը).— Արդեն պատրաստ եմ:

**ՀԵԼԵՆԱ.**— Ամեն ինչ վերցրե՛լ ես, ոչինչ չե՛ս մոռացել:

**ԷԼԻՍՈՆ.**— Որոշ բաներ թողել եմ: Քլիֆը կամաց-կամաց կուղարկի մնացածը: Նա պիտի որ արդեն վերադարձած լիներ: Ա՛հ, մոռացել էի, որ նա այսօր կրպակում մեճակ է:

**ԳՆԴԱՊԵՏ** (մոտենալով մահճակալին՝ վերցնում է ճամպրուկը).— Տանեմ տեղավորեմ մեքենայում: Գնալու ժամանակն է: Այլապես մայրդ կսկսի անհամբարտանալ: Ես նրան խոստացել եմ տեղ հասնելուն պես զանգահարել: Նա լավ չի զգում:

**ՀԵԼԵՆԱ.**— Հուսով եմ, որ իմ հեռագիրը շատ չի անհամբարտացրել նրան: Միգուցե ես չսխալեմ է...

**ԳՆԴԱՊԵՏ.**— Ոչ, ոչ, ընդհակառակը: Մենք ի սրտե երախտապարտ ենք ձեզ: Դուք շատ սիրալիր եք գտնվել: Կինս ուզում էր գալ ինձ հետ, բայց ինձ հաջողվեց նրան համոզել, որ տանը մնա: Մտա-

ծեցի, որ բոլորի համար էլ այդպես լավ կլինի: Իսկ ձեր իրերը որտե՞ղ են, Հելենա՛, ես միանգամից հետո կիջեցնեմ:  
ՀԵԼԵՆԱ.— Վախենում եմ, որ ես այսօր չկարողանամ գալ:  
ԷԼԻՍՈՆ (խիստ զարմացած).— Դու չե՞ս գալիս մեզ հետ:

**Մտնում է Քլիֆը:**

ՀԵԼԵՆԱ.— Ծատ կուզենայի գալ, բայց պարզվեց, որ վաղը պետք է Բիրմինգհեմ<sup>26</sup> գնամ, գործ ունեմ: Հենց նոր մի սցենար ստացա: Սա արտակարգ կարևոր է, չէի ուզենա նման հնարավորությունը ձեռքից բաց թողնել: Այնպես որ, ըստ երևույթին. ստիպված եմ լինելու այստեղ գիշերել:

ԷԼԻՍՈՆ.— Հասկանալի է: Ողջույն, Քլիֆ:

ՔԼԻՖ.— Ողջույն:

ԷԼԻՍՈՆ.— Հայրիկ, սա Քլիֆն է:

ԳՆԴԱՊԵՏ.— Բարև ձեզ, Քլիֆ:

ՔԼԻՖ.— Բարև ձեզ, սը՛ր:

**Կարճ դադար:**

ԳՆԴԱՊԵՏ.— Դե՛, ես գնամ ճամպրուկը տեղավորեմ: Չուշանաս, Էլիսոն՛ն: Ցտեսություն, Հելենա՛: Հուսով եմ, որ շուտով կտեսնվենք, եթե զբաղված չլինեք:

ՀԵԼԵՆԱ.— Օ՛, իհարկե: Ես մեկ-երկու օրից կվերադառնամ:

**Քլիֆը հանում է պիջակը:**

ԳՆԴԱՊԵՏ.— Դե՛, մնաք բարով, Քլիֆ:

ՔԼԻՖ.— Գնաք բարով, սը՛ր:

**Գնդապետը դուրս է գնում: Քլիֆը շարժվում է դեպի ձախ: Հեղե-  
նան գալիս է սենյակի կենտրոն:**

Դու իսկապես գնո՞ւմ ես, ի՛նչ է:

ԷԼԻՍՈՆ.— Գնում եմ:

ՔԼԻՖ.— Որտեղ որ է Ջիմին կգա: Նրան չե՞ս սպասելու:

ԷԼԻՍՈՆ.— Ոչ, Քլիֆ:

ՔԼԻՖ.— Իսկ ո՞վ է նրան սսելու:

ՀԵԼԵՆԱ.— Ե՛ս կասեմ: Եթե իհարկե, այստեղ լինեմ:

ՔԼԻՖ (հանգիստ).— Կլինեք: (Էլիսոնին): Չե՞ս կարծում, որ դու ինքդ պիտի սսես:

**Էլիսոնը մի ծրար է հանում պաշտասակից և տալիս նրան:**

Չափից դուրս պաշտոնական չէ՞:

ԷԼԻՍՈՆ.— Ես այդպես եմ դաստիարակված:

**Քլիֆը մոտենում է նրան և գրկում:**

ՔԼԻՖ (ուսի վրայով, Հելենային).— Երևի դուք իրավացի եք:

ՀԵԼԵՆԱ.— Ի՞նչ եք ուզում ասել: Ինչո՞ւմ եմ իրավացի:

ՔԼԻՖ (Էլիստենին).— Հիմա այստեղ ամեն ինչ այնպես տակնուվրա կլինի, որ շունը տիրոջը չի ճանաչի: Գիտես, չէ՞:

ԷԼԻՍՏԵՆ.— Գետք չէ, Քլիֆ...

**Քլիֆը համաձայնությամբ գլխով է անում:**

(Համբուրում է նրան): Ես քեզ հետո նամակ կգրեմ:

ՔԼԻՖ.— Տոնատություն, սիրելիս:

ԷԼԻՍՏԵՆ.— Աչքդ նրա վրա պահիր:

ՔԼԻՖ.— Մի սևահանգատանա, նազուտուզի տակից մի կերպ դուրս կգանք:

Էլիստենը գալիս է սենյակի կենտրոն, կանգնում Քլիֆի և Հելենայի միջև: Մի հպանցիկ հաշուցք է գցում բազկաթոռներից, երեկվանից դրանց շուրջը թափթփված լրագրերին:

ՀԵԼԵՆԱ (համբուրում է նրա այտը և ձեռքը սեղմում).— Առայժմ:

Էլիստենը գլխով է անում և անապարանքով դուրս գնում: Մնում են Քլիֆը և Հելենան: Նրանք միմյանց են նայում:

Ուզո՞ւմ եք թեյ տաքացնեմ:

ՔԼԻՖ.— Չէ, շնորհակալ եմ:

ՀԵԼԵՆԱ.— Դե, ես խմեմ, եթե չեք անարկում:

ՔԼԻՖ.— Ուրեմն մնո՞ւմ եք:

ՀԵԼԵՆԱ.— Միայն այս գիշեր: Դեմ չե՞ք:

ՔԼԻՖ.— Ինձ ինչ: (Սեղանի կողմը գալով): Դե, իհարկե, շատ հնարավոր է, որ նա ուշ վերադառնա:

ՀԵԼԵՆԱ (գնում է դեպի ձախ՝ լուսամուտի մոտ և մի սիգարետ վառում).— Ի՞նչ եք կարծում, նա ինչպե՞ս կվարվի: Գուցե կգնա իր նախկին ընկերուհիներից փնտրելո՞ւ: Օրինակ՝ այդ Մադլենին...

ՔԼԻՖ.— Մադլենն ի՞նչ կապ ունի:

ՀԵԼԵՆԱ.— Դե, Մադլենն այնքան բան է արել նրա համար: Ի՞նչ է, նա չի՞ կարող վերադառնալ Մադլենի մոտ:

ՔԼԻՖ.— Չեմ կարծում:

ՀԵԼԵՆԱ.— Ինչո՞ւ:

ՔԼԻՖ.— Մադլենը համարյա նրա մոր տարիքին է: Ինձ թվում է դա էլ ինչ-որ նշանակություն ունի: Ասենք, գրո՞ղը տանի, ես ինչ իմանամ: (Այս ամբողջ ժամանակամիջոցում առաջին անգամ նրա լավ տրամադրությունն իսպառ չքանում է):

ՀԵԼԵՆԱ (կարծես զարմացած).— Բայց նա ձեր ընկերն է, չէ՞: Եվ բընավ չես ասի, թե ծածկամիտ է: Ես երբեք չեմ տեսել, որ այդպես՝ ամենքի առաջ սիրտը բաց անեն:

**Քիֆը շրջվում է, որ գնա:**

Դուք չե՞ք մնում:

**ՔԼԻՖ.**— Ոչ, չեմ մնում: Լոնդոնից եկող գնացքը հիւսիս քայտ անաչ տեղ է հասել: Եթե նա եկել է այս գնացքով, ավելի լավ է, քան գնամ:

**ՀԵԼԵՆԱ.**— Չե՞ք կարծում, որ դուք պետք է այստեղ լինեք, և որ նա գա:

**ՔԼԻՖ.**— Ես շատ ծանր օր եմ անցկացրել և բոլորովին ցանկություն չունեմ տեսնելու որևէ մեկի տառապանքները անտխի փորով և մանավանդ անուց մի բան խմելու: Տեսնեմ կհասչողացնե՞մ սրբաբանում մի սիրունիկ թոշնակ բռնել ու պատասխանել Դրոյրիի քթի տակից մի կերպ անցկացնելով՝ սենյակս բերել: Վերցրե՛ք: (**Նամակը նետում է նրան**): Կտաք իրև՛ն: (**Ուղղվում է դեպի դուռը**): Հիմա նա ոտով-գլխով ձերն է: (**Դառն մտա**): Հուսով եմ, որ հիմա կկշտանա՛ք նրանից: (**Դուրս է գնում**):

**Հելենան** գալիս է սեղանի մոտ և հանգցնում սիգարեթը: Լսվում է, թե ինչպես է շքամուտքի դուռը շրխկոցով փակվում: Նա մոտենում է հանդերձապահարանին և ինքնաբերաբար բացում դուռը: Հանդերձապահարանը դատարկ է, միայն մի զգեստ է կախիչից բարձր ընկած տարուբերվում: Հելենան գնում է զարդասեղանի կողմը, որի վրա բացի Ջիմիի լուսանկարից, ուրիշ ոչինչ չկա: Ծուլորեն բացուխուփ է առնում դատարկ դարակները: Մոտենում է կոմոդին, վերցնում խաղալիք սաքը և նստում մահճակալին՝ աչքերը խաղալիքին հառած: Թեք է ընկնում, գլուխը դնում բարձին՝ շարունակելով արջը ձեռքին պահել: Բոցվող դռան աղմուկից անակնկալի եկած՝ ուղղվում է: Մտնում է Ջիմի: Նա մի պահ կանգ է առնում, նայում Հելենային, ապա գալիս է սենյակի կենտրոն, հանում անձրևանոցը և նստում սեղանին: Զայրույթից իրեն կորցրած՝ փլվում է բազկաթոռին:

**ՋԻՄԻ (աչքերը բարձրացնելով).**— Այդ քալթառ վիժվա՛ծքը քիչ էր մնում ինձ մեքենայի տակ գցի: Իսկ և իսկ ճակատագրի դաժան խաղ կլինե՛ր: Նամանավանդ որ կողքին էլ նստած էր սեփական կինս: Առոք-իստոք բազմե՛ր էր: (**Գնում է Հելենայի կողմը**): Ի՞նչ է կատարվում բոլորի հետ: Քիֆն այնպես դուրս թռավ շքամուտքից, որ քիչ էր մնում ինձ ոտնատակ տա: Քիթ քթի հանդիպեցինք, բայց ձևացրեց, թե չի նկատում: Դուք միակ մա՛րդն եք, որ չի վախեցել ա ստեղ մնալ:

**Հելենան** Էլիսոնի նամակը հանձնում է նրան:

Սա ի՞նչ է: (**Պատրում է ծրարք: Կարդում է մի բանի տող և գրե-**

թե մոնչում՝ աչքերին չհավատալով): Երևի դո՛ւք եք գրել նրա փոխարեն: Հապա մի լսե՛ք: **(Կարդում է):** «Սիրելի՛ս, ես պետք է ընդմիջտ հեռանամ: Հույս չունեմ, թե դու կհասկանաս ինձ, բայց խնդրում եմ փորձիր: Ես հանգստանալու այնպիսի կարիք ունեմ, որ հիմա պատրաստ եմ հանուն դրա ամեն ինչ զոհաբերել: Զգիտեմ, թե մեր վերջն ինչ է լինելու: Դու երևի կտանջվես ու քեզ լքված կզգաս, բայց դիմացիր մի կերպ: Ինձ համար միշտ էլ թանկ կլինի քո սերը: Էլիսոն»: Աստվա՛ճ իմ, առանց լաց ու կոծ բարձրացնելու յուր չի՛ գնում: «Ինձ համար միշտ էլ թա՛նկ կլինի քո սերը»: Մարդու սի՛րտ է խառնում: **(Գնում է դեպի աջ):** Չի կարող ասել. «Գարշելի տակա՛նք, ինձ զգվացրե՛լ եմ քո օյննե՛րը: Ես ցանկում եմ: Երևեկ եմ տալիս, որ շանաստա՛կ լինես»: Զէ՛, նա անսպասան պիտի վայելո՞ւն, լացախա՛ռն շիլափլավ սարքի: **(Հանդերձապահարանում կախված զգեստը տեսնելով՝ քաշում հանում է կախիչի վրայից և շարժում մի անկյուն):** «Ինձ համար միշտ էլ թա՛նկ կլինի քո սերը»: Երբեք մտքովս չի՛ անցել, թե նա ընդունակ է այդպե՛ս կեղծելու: Սա ի՞նչ է, ռեպլի՛կ ձեր խաղացած պիեսից: Հա՛: Եվ ընդհանրապես, դուք ի՞նչ գործ ունեք այստեղ: Ավելի լավ է աչքիս չերևաք, եթե չեք ուզում, որ ձեր գլուխը երկու կես անեմ:

**ՀԵԼԵՆԱ (հանգիստ).**— Եթե դուք մի վայրկյան դադարեք միայն ձեր մասին մտածելուց, ես մի բան կասեմ, որը սարտավոր էիք իմանալ: Ձեր կինը երեխա է ունենալու:

**Ջիմին հալացքը հառում է նրան:**

Դե՛: Սա ձեզ համար ոչինչ չի՛ նշանակում: Իհարկե՛ նշանակում է, նույնիսկ ձե՛զ նմանի համար:

**ՋԻՄԻ (հանկարծակիի է եկել, բայց ոչ այնքան նորությունից, որքան Հելենայի վարմունքից).**— Այո... ինչպես չէ: Խոստովանում եմ, որ զարմացած եմ: Բայց ինձ մի բան ասացեք. դուք ի՞նչ է, անկեղծորեն հավատացած եք, թե ես հոնգուր-հոնգուր լաց լինելով ծունկի կգամ և շունչս կփչե՞մ խղճի խայթերից **(Մոտ գալով):** Լսե՛ք, դո՛ւք: Եթե վերջ տաք ձեր կնկա խելքով քարոզ կարդալուն, ես էլ ձեզ մի բան կասեմ: Ես թքա՛ճ ունեմ: **(Հանգիստ սկսում է):** Թքած ունեմ, նա երեխա է ունենալու, թե չէ: Թքած ունեմ, եթե նույնիսկ այդ երեխան երկգլխանի ծնվի: **(Վստահ, որ Հելենայի ձեռքերը հիմա քոր են գալիս իրեն ապտակելու ցանկությունից):** Զզվո՞ւմ եք ինձնից: Դե՛, ի՞նչ եք սպասում, ապտակ հասցրեք: Միայն թե չմոռանաք, թե ես ինչ եմ ձեզ նախազգուշացրել: Տաս-

Արմէկ ժամ շարունակ ես հետևում էի, թե ինչպէս է աչքիս առաջ մեռնում մեկը, որին սիրում եմ, ինչպէս մորս կսիրեի: Նա մեռնական էր, միայն ես էի նրա կողքին: Եվ երբ հինգշաբթի օրը գնամ նրա դագաղի ետևից, նորից միայն ես կլինեմ, հասկանում եմ, ինքս իմ հույսին: Որովհետև գիտեմ. այդ շան աղջիկը մի քոտտ ծաղկեփունջն ի՞նչ է, չի ուղարկի: Նա իր ամբողջ ազգութակի: Աման մի բանում շարաշար սխալվում է: Նրա կարծիքով, քանի որ Հյուի մաշրը աղքատ ու անուսում կին էր, որը միշտ խոսում էր քանից անտեղյակ, պատեհ-անպատեհ, ուրեմն հարկ չկար նրան լուրջ ընկալել: Եվ դուք կարծում եք, թե ես պետք է սրտի դողով երկրպագություն տամ, ինչ է՝ այդ անգութ, տխմար աղջիկը երեխա՞ է ունենալու: **(Տառապալից ձայնով):** Ես չե՞մ կարող հավատալ դրան: Չե՞մ կարող: **(Նրա ուսից բռնելով):** Դե՛, ներկայացումն ավարտված է: Հիմա ինձ մեռակ թողեք: Կորեք գրողի ծո՛ցս, սուաքինի վհուկ:

**Հելենան մի շառաշուն ապտակ է հասցնում նրան: Ջիմիի դեմքին սարսափի և ապշանքի արտահայտություն է հայտնվում: Բայց այդ արտահայտությունը չբանում է՝ վերածվելով համատարած ցավի: Նա ձեռքը դեմքի վրաշով տառնում է դեպի գլուխը, բերանից մի խուլ, հուսահատ ճիչ է դուրս պրծնում: Հելենան նրա ձեռքը ետ է քաշում, կրքքոտորեն համբուրում նրան և իր կողմը ձգում:**

## Վ ա ր ա գ ո յ թ

## ԱՐԴՐՎԱԾ ԵՐՐՈՐԴ

### ՊԱՏԿԵՐ ԱՌԱՋԻՆ

**Մի քանի ամիս անց: Կիրակնօրյա երեկո: Էլիսոնի իրերին, ինչպէս, օրինակ՝ զարդասեղանի վրայի դիմահարդարման պիտույքներին, փոխարինել է Հելենայի ունեցվածքը:**

**Վարագույրը բարձրանալիս, Ջիմին և Քլիֆն իրենց բազկաթոռներին նստած՝ խորասուզվել են կիրակնօրյա լրագրերի ընթերցանության մեջ: Հելենան կանգնած է ձախ կողմում՝ արդուկի կանգնակի**

վրա խոնարհված: Նրա կողքին շորերի փոքրիկ կույտ կա: Նա նախ-  
կինից ավելի հրապուրիչ է, որովհետև դեմքի արտահայտությունն ավելի բնական է դարձել: Հելենան առաջվա պես նրբաշուք, բայց և մի տեսակ անհավակնոտ, անփույթ տեսք ունի: Նրա հագին Ջիմիի հին վերնաշապիկն է:

ՔԼԻՖ.— Ո՛րք, այդ գարշահոտ ծխամորճո՞ւ է՛լ:

**Գաղար:**

ՋԻՄԻ.— Լեզուդ քեզ քաշիր:

ՔԼԻՖ.— Գո՞նե մի բան անեիր, հո՛ւտը կտրվեր:

ՋԻՄԻ.— Մի հարցնող լինի, թե ինչու եմ ամեն կիրակի թերթ կարդալով անցկացնում:

ՔԼԻՖ (ստանց լրագիրն իջեցնելու, արացի է տալիս նրան).— Ախր սարսափելի գարշահո՛ւտ է փչում:

ՋԻՄԻ.— Քեզանից էլ է գարշահոտ փչում, բայց ես անընդհատ գլուխ չեմ արդուկում: (Շրջում է էջը): Սուտ ու փուչ թերթերը վայրահաչ են տալիս, լուրջ լրագրերն էլ շուք ու շոհնդով են նույն բանը անում: (Լրագիրն իջեցնելով և ծխամորճո՞ւ Հելենայի կողմը թափահարելով): Սա քեզ խանգարո՞ւմ է:

ՀԵԼԵՆԱ.— Ոչ: Ծուխն ինձ դուր է գալիս:

ՋԻՄԻ (Քլիֆին).— Լսեցի՛ր, նրան դուր է գալիս: (Շարունակում է կարդալ):

**Քլիֆը փնթփնթում է:**

Կարդացի՛ր Միջին Անգլիայում կատարվող այլանդակ ու չարս-դետ դեպքերի մասին:

ՔԼԻՖ.— Ինչի մասի՞ն:

ՋԻՄԻ.— Միջին Անգլիայում կատարվող այլանդակ ու չարսդետ դեպքերի:

ՔԼԻՖ.— Ձե, ի՞նչ կա որ:

ՋԻՄԻ.— Պարզվում է, մենք լավ չենք ճանաչում մեր հայրենակիցներին: Իսկ այստեղ ամեն ինչ գրված է: Ցնցո՛ղ մերկացումներ այս շաբաթ: Լուսանկարներով հանդերձ: Լիովին վերականգնված է պողաբերության դպտիական աստվածուհու գիշերային պաշտամունքը:

ՀԵԼԵՆԱ.— Հրեշավոր ապականություն:

ՋԻՄԻ.— Թե չէ հեռու մեր սուրբ փեշերից: Գրողը տանի, մի սրանց նայեք: Ապուշի նման սեպերն են բացել: Հաջորդ շաբաթ նորահարձներից մեկը՝ ինչոր նշանավոր կին, պատմելու է, թե ինչպես է Մարքեթ Հարբորդում<sup>27</sup> տեղի ունեցած սև օրգիայի ժամանակ



ոլորել գերմակ աքաղաղի վիզն ու արյունը խմել: Է՛, գրագ կգամ, որ ֆիրմաները հիմա գոհացու աքաղաղների աշխույժ առևտուր կբացեն: **(Մտախոհ):** Ըստ երևույթին, ահա թե ինչով է գբաղվում միսս Դրուրին կիրակի երեկոները: Երիտասարդ կանանց քրիտոնեական միությունում նա համատեղության կարգով գերագույն քրմուհու պաշտոնն է վարում: Բացառված չէ, որ հենց այս պահին նա պատրաստվում է հերթական գոհը մատուցել: **(Հելենային):** Դու նման բաներով չե՞ս հրապուրվել:

**ՀԵԼԵՆԱ (քրքջում է).—** Վերջին ժամանակներս՝ ոչ:

**ԶԻՄԻ.—** Իսկը քո գործն է, ես կասեի: Մի բաժակ արյունն ի՞նչ է քեզ համար, թեյի տեղ կիսելիր: **(Տեղացիների խոսվածքը նմանակելով):** Ի՞նչ վատ է որ, համ անելու բան կլիներ, համ էլ ժամանակը իզուր չէր կորչի: Ամեն մարդ իր ուզած ձևով է շարժվում. չէ՛, ճաշակին ընկեր չկա, ի՞նչ է, ճիշտ չի՞: Ես ասել եմ ու միշտ կասեմ. աշխարհը ծիծաղատե՛ղ կդառնար, եթե բոլորս իրար նման լինեինք: **(Իր ձայնով):** Ես մի բան գիտեմ, որ տարիներ շարունակ ինչ-որ մեկը զվարճացել է իմ կարե խրտվիլակը գոհ մատուցելով: **(Ասես հայտնագործություն արած):** Դե իհարկե՛, Էլիսոնի մա՛շրը, ուրիշ էլ ո՞վ: Ամեն ուրբաթ նա Հերոդսի խանութից բերել է տալիս իմ մոմե արձանը և հանգստյան օրերն անցկացնում քորոցը ձեռքին ինձ ծակոտելով: Հանուն դրա նա երևի իրեն գրկում է նույնիսկ բրիջ<sup>28</sup> խաղալուց:

**ՀԵԼԵՆԱ.—** Իսկ ինչո՞ւ չես դու էլ փորձում:

**ԶԻՄԻ.—** Լավ միտք է: **(Քլիֆին մատնացույց անելով):** Սկզբում մենք սրան կտապակենք գազօջախի վրա: Տեսնես փողներս կհերիքի՞ գազի վարձը վճարելու համար: Ըհր՛, կարծես թե գտանք աշնանային այս ձամձրայի երեկոները սպանելու ձևը: Վերջիվերջո, զոհաբերության ամբողջ իմաստն այն է, որ հրաժարվում ես մի բանից, ինչը երբեք էլ թանկ չես գնահատել: Հասկանո՞ւմ ես, թե ինչ եմ ուզում ասել: Մարդիկ ամեն քայլափոխի այդպես են վարվում: Հրաժարվում են կարիերայից կամ ասե՛նք... համոզմունքներից... սիրուց... Մենք էլ միամտորեն մտածում ենք. «Ինչ ազնիվ բա՛ն է այդպես ամեն ինչ զոհաբերելը: Երանի՛ թե ես էլ ընդունակ լինեի»: Բայց ճշմարտությունն այն է, որ նրանք խաբում են իրենց, խաբում են մեզ բոլորիս: Դժվար չէ հրաժարվել այն ամենից, ինչն ընդունակ չես իսկապես թանկ գնահատել: Չարժե հիանալ այդ մարդկանցով: Ավելի լավ է, խղճանք նրանց: **(Այս անսպասելի մտաշեղումն ընդհատելով՝ անդրադառնում է Քլիֆին):**

Դու հոյակապ գոհ կլինես:

**ՔԼԻՖ (քրթմնջալով).**— Ձեռք քաշիր գլխիցս: Թող կարդաս:

**ՋԻՄԻ.**— Մենք նրա արչամբ կլցնենք մեր սիրո թասը: Թեև չէի ասի, թե դա ինձ առանձնապես ոգևորում է: Ես տեսել եմ սրա արյունը. սովորական կարմիր գույնի է: (**Հեղեճային**): Քոնը երևի շատ ավելի լավը կլինի՝ իսկական կապույտ, ազնվագուն տեսակի: Ձէ՛: Իսկ հետո պողաբերության աստվածուհու պատվին սերմնահեղությանը կգբաղվենք: Գիտե՛ս, թե դա ինչպես է արվում: (**Քլիֆին**): Իսկ դո՞ւ:

**ՔԼԻՖ.**— Ով-ով, բայց դու չէ, որ պիտի սերմնահեղությանը զբաղվես չգիտեմ թե որ աստվածուհու պատվին:

**ՋԻՄԻ.**— Հա, հասկանում եմ, թե ինչ էս ուզում ասել: (**Հեղեճային**): Դե լա՛վ, անախորժությունների առիթ չստեղծենք: Ծիշտ չէ՛: Բայց առաջարկս երևի դուր գար այն տիկնոջը, որը մի երկար նամակ է գրել խմբագրությանը արհեստական բեղմնավորման մասին: Վերնագիրն էլ այսպես է կնքել. «Ինչքա՛ն կարելի է շարաշահել երկնային տիրոջ համբերությունը»: (**Շարտում է լրագիրը**): Տեսնենք մյուսի մեջ ինչ կա-չկա:

**ՔԼԻՖ.**— Ես դեռ չեմ վերջացրել:

**ՋԻՄԻ.**— Դե ուրեմն շուտ սրա: Երևում է, սի նամակ էլ էս պիտի գրեմ, որ հատուկ քեզ համար բառերը վանկ առ վանկ տպեն: Այդտեղ կատարի բանավեճ է տվում. ոմանք ապացուցում են, թե Միլթոնը<sup>29</sup> տարատակալներ է կրելիս եղել, մյուսները փրփրած ֆակաճատում են: Շատ եմ ուզու իմանալ, թե այս շարաշարում են ջախջախել:

**ՔԼԻՖ.**— Այ սա՛ կարդա: Գլխի չընկա, թե ինչի շուրջն է վեճը, բայց Օքսֆորդի համալսարանի պրոֆեսորներից մեկի բուրջը քամուն են տվել, «Աթենեումը» շանթ ու կրակ է թափում, իսկ խմբագիրն էլ հայտարարում է, թե սրանով կարծիքների փոխանակությունն ավարտվում է:

**ՋԻՄԻ.**— Իսկ դու գնալով ավելի հետաքրքրասեր ես դառնում, տղա՛ս: Խոսքը մի ամերիկացի պրոֆեսորի մասին է, կարծեմ՝ Յեյի համալսարանից, որը հավատացած է, թե Շեքսպիրը «Փոթորիկը» գրելիս սեռափոխվել է: Նա ստիպված է եղել վերադառնալ իր ծննդավայրը՝ Սթրեթֆորդ, որովհետև թատերախմբի մյուս դերասաններն այլևս անկարող են եղել նրան լուրջ վերաբերվել: Այս պրոֆեսոր ախպերացուն շուտով ժամանելու է Անգլիա, որպեսզի փնտրի այն փաստաթղթերը, որոնք հաստատում են, թե խեղճ

Շեքսն իր կյանքն ավարտել է իբրև ուորիքշիրցի մի ագարակա-  
պանի օրինական կողակիցը՝ այդ մարդու հետ ամուսնանալով նը-  
րանից երեք երեխա ունենալուց հետո:

**Հելենան ծիծաղում է:**

(Հեզնոտ հայացքով նայում է նրան): Ի՞նչ է պատահել:

ՀԵԼԵՆԱ.— Ոչինչ: Ես միայն նոր եմ սկսում ընտելանալ: Ոչ մի կերպ  
(սա Քլիֆին է ասվում) չեմ հասկանում, թե երբ է նա լուրջ, երբ՝  
չէ:

ՔԼԻՖ.— Երևի նա ինքն էլ գլուխ չի հանում: Կասկածելի դեպքերը  
համարեք վիրավորանք:

ՋԻՄԻ.— Ծո՛ւտ արա կարդա և բերանդ էլ փակիր: Երեկոյան ի՞նչ  
ենք անելու: Գոնե մի կարգին համերգ էլ չկա: (Հելենային): Դու  
եկեղեցի՞ ես գնալու:

ՀԵԼԵՆԱ (բավականին զարմացած).— Ոչ: Չեմ կարծում: Այսինքն՝  
ինչպես կուզենաս:

ՋԻՄԻ.— Չգիտեմ, ի՞նչ է թվում, թե իրոք այդպես է, բայց վերջերս  
նրա աչքերի դիվային փայլն ավելի է պայծառացել: Միգուցե դա  
մեղսավոր կենակցությունի՞ց է: Դու հոգուդ մե՞ծ մեղք ես անում,  
սիրելի՛ս: Հը՞: Մեղքդ մե՞ծ է:

Հելենան չի հավատում, որ սա իր դեմ ուղղված գրոհ է: Նա ան-  
վստահորեն նայում է Ջիմիին:

Քեզ չի՞ թվում, թե մեղքը ծլում է ծակոտիներիցդ, ինչպես ա-  
սենք, մոմն է հալվելով կաթում: Դու ուզում ես իմանալ, թե երբ  
եմ կատակում, երբ՝ չէ՞: Գուցե կատակելիս կարմիր քի՞թ կայցնեմ  
ու սրույնովոր թասակ դնեմ, հը՞: Ուղղակի հետաքրքիր է, ուրիշ  
ոչինչ:

Հելենան ցնցված է Ջիմիի հայացքի անսպասելի սառնությունից,  
բայց մինչ կհասցնի վիրավորվել, Ջիմին ժպտում է նրան և ուրախ-  
զվարթ գոռում է Քլիֆի վրա:

Տո՛ւր թերթը, դմբո՛:

ՔԼԻՖ.— Երանի սատկեիր, պրծնեի՞նք քեզանից:

ՋԻՄԻ (Հելենային).— Դեռ երկա՞ր ես արդուկելու:

ՀԵԼԵՆԱ.— Համարյա վերջացնում եմ:

ՋԻՄԻ.— Ի դեպ, մեղքի մասին, երեկ ո՞ւմ հետ էիր այդպես գրույցով  
ընկել: Միսս Դրուրի բարեկամը չէ՞ր՝ հայր սուրբը: Հելենա՛, սի-  
րելիս, ասում եմ՝ միսս Դրուրիի բարեկամը չէ՞ր...

ՀԵԼԵՆԱ.— Այո, նրա հետ էի խոսում:

ՋԻՄԻ.— Ինչո՞ւ ես պաշտպանական դիրք գրավում, սիրելի՛ս:

**ՀԵԼԵՆԱ.**— Ես չեմ պաշտպանվում:

**ՋԻՄԻ.**— Վերջիվերջո, մենք կարող ենք այդ քահանային թելի հրավիրել: Ի՞նչ կա որ: Դու շա՛տ ընդհանուր բան գուար նրա հետ:

**ՀԵԼԵՆԱ.**— Ոչ, չէի ասի:

**ՋԻՄԻ.**— Կարծում ես, թե հոգևոր որոճն ինձ մա՛րդ կդարձնի: Թե ես պետք է հոգևոր ծանրություններ բարձրացնելով՝ մկաններս մարզեմ. Առաջ ես մի թրջված հավ էի լիբերալների ցեղից: Վախենում էի սեփական հոգուս խորքը նայել: Բայց հիմա ով ասես նախանձով կնայի իմ հրաշալի, ջլապիկո մարմնին: Ես կարող եմ ցանկացած ուժային հնարքը բանեցնել առանց խղճահարության ու կարեկցանքի ամենաչնչին նշույլ ցույց տալու:

**ՀԵԼԵՆԱ.**— Դե լավ, Ջիմի՛:

**ՋԻՄԻ.**— Երկու տարի առաջ ես չէի հաճոգանում գլուխս էլ բարձրացնել, բայց հիմա շատ ավելի ինքնավստահ եմ, քան ուզածդ կհնուստողը:

**ՀԵԼԵՆԱ.**— Ջիմի՛, հնարավոր չէ՞ մի օր, գոնե մեճ մի օր յուր գնալ առանց կրոնի և քաղաքավարության մասին վեճեր բացելու:

**ՔԼԻՖ.**— Ծիշտ է, ծերուկ, հերիք է նույն երգը երգես, իսկ ավելի լավ է, ընդհանրապես բերանդ կողպես:

**ՋԻՄԻ (վեր կենալով).**— Իմիջիպացոց, ասօր նոր երգի համար վերնագիր եմ հորհինել: Այսպես է. «Տեսա՛ր, մայրիկին տարան գժատուն, հիմա էլ չե՛ս, ասա՛, սիրուս հավատում»: Բառերն էլ եճ շատ հաջող: Կարելի է անգիր անել ու դերերգերով կատարել:

**ՀԵԼԵՆԱ.**— Հիանալի միտք է:

**ՋԻՄԻ.**— Ժամանակն է, որ Ռոմեո-Ջուլիետին մնաք բարով ասենք և մտածենք նոր հերոսներ գտնելու մասին:

«Գիշերվա ջահերն արդեն հանգչում են, և զվարթ օրը ոտքի էլնելով, Իր բթամատի վրա է կանգնում այն մտախլապատ լեռների ծայրին»\*: Ծա՛տ է վերամբարձ: Համենայն դեպս, հանդիսականներին հագիլ թե դուր գա այդ տարօրինակ մարդու հիշատակությունն այն բանից հետո, երբ ամերիկացի պրոֆեսորները նրա դիմակը պատռել են: Պետք է մի ավելի վառ ու զգայացունց բան գտնել: Բայց ի՞նչ... Ի՞նչ կարելի է մտածել... Գոտա՛. մեկնումեկս կլինի Թ. Ս. Էլիոթը, իսկ մյուսը՝ Փամելա՛ն:

**ՔԼԻՖ (փորձառու բանիմացությամբ ազդարարելով զավեշտախաղի սկիզբը).**— Ծիծա՛ղ և արցո՛ւնք, ծիծա՛ղ և արցո՛ւնք:

\* Շեֆապի, «Ռոմեո և Ջուլիետ», թարգմ. և Դաշտենցի, Երևան, 1974, էջ 158

**ՋԻՄԻ** (նստում է սեղանին և սկսում թմբկահարել).— Լսեցե՛ք, լսեցե՛ք, լսեցե՛ք. սրամիտ խոսքեր ու տափակ մտքեր, սրամիտ մտքեր ու տափակ խոսքեր:

**Երկուսով երգում են:**

Միգուցե և մեղք գործեցինք, սիրելի՛ս,

Գլուխներս կորցրել էինք մեկս մյուսին շոյելիս:

(**Ջիմին վեր է թռչում և սկսում այնպիսի արագությամբ բլբլացնել, որ ասածը գրեթե չի հասկացվում**): Տիկնա՛յք և պարոնա՛յք, ուրեմն երեկոյան գալիս եմ թատրոն, հանկարծ դիմացս մի մարդ է ելնում և այսպես ասում.

**ՔԼԻՖ.**— Լսի՛ր, ոչ մեկին ոչ մի տեղ չտեսա՛ր:

**ՋԻՄԻ.**— Ոչ մեկին ոչ մի տեղ ինչ չարի՛:

**ՔԼԻՖ.**— Ոչ մեկին ոչ մի տեղ չտեսա՛ր:

**ՋԻՄԻ.**— Դե իհարկե՛, ոչ մեկին ոչ մի տեղ չտեսա: Բարի եղեք գլխիցըս ցանվե՛լ: Տիկնայք և պարոնայք, մի փոքրիկ բանաստեղծություն հետևյալ վերնագրով՝ «Նա ասաց, որ իրեն անվանեմ Սիբիլ, բայց թե ինձ մնար, անունը կկնքեի Ջիբի՛լ»: Ընորհակալություն ուշադրության համար: «Նա ասաց, որ իրեն անվանեմ Սիբիլ...»:

**ՔԼԻՖ.**— Դու համոզվա՞ծ ես, որ Ոչ մեկը ոչ մի տեղ աչքովդ չընկալ:

**ՋԻՄԻ.**— Լսի՛ր, ի՞նչ ես տգի պես կպել:

**ՔԼԻՖ.**— Ես պետք է այնպես անեմ, որ Ոչ մեկին ոչ մի տեղ չտեսնեմ:

**ՋԻՄԻ.**— Վա՛գ անցիր գլխիցս: «Նա ասաց, որ իրեն անվանեմ Սիբիլ...»:

**ՔԼԻՖ.**— Ախր ինչպե՛ս անեմ, որ Ոչ մեկին ոչ մի տեղ չտեսնեմ և այս կապոցը Ոչ մեկին չհանձնեմ:

**ՋԻՄԻ.**— Լսի՛ր, հերի՛ք է ինձ զբաղեցնես: Չե՛ս տեսնում, ևս զբաղված եմ այս տիկնանց և պարոններից զբաղեցնելով: Ասացի, որ ոչ մեկին ոչ մի տեղ չտեսա՛:

**ՔԼԻՖ.**— Ինձ ասել եմ, որ գամ այստեղ, բայց ոչ մի դեպքում այս կապոցը չհանձնեմ Ոչ մեկին:

**ՋԻՄԻ.**— Ուրեմն քեզ ասել եմ, որ գաս այստեղ, բայց ոչ մի դեպքում աչդ կապոցը չհանձնես ոչ մեկին:

**ՔԼԻՖ.**— Այո՛, այո՛: Ասացին՝ ոչ մի դեպքում կապոցը չհանձնես Ոչ մեկին, որովհետև միևնույն է, Ոչ մեկը քեզ ոչ մի քոռ գրոշ չի տա:

**ՋԻՄԻ.**— Ուրեմն ասացին՝ ոչ մի դեպքում կապոցը չհանձնես ոչ մեկին, որովհետև միևնույն է, ոչ մեկը քեզ ոչ մի քոռ գրոշ չի տա:

**ՔԼԻՖ.**— Այո՛:

ՋԻՄԻ.— Է՛, հետո՞:

ՔԼԻՖ.— Ախր ոչ միայն Ոչ մեկը ոչ մի տեղ չկա, այլև ոչ մի տեղ, ոչ մի շունչ չկա:

ՋԻՄԻ.— Սպասիր հասկանամ. «ոչ մեկը ոչ մի տեղ չկա» ասելով, դու նկատի չունե՞ս, որ ոչ մեկը ոչ մի տեղ չկա, այսինքն՝ ոչ մի տեղ ոչ մի շունչ չկա:

ՔԼԻՖ.— Ո՛չ:

ՋԻՄԻ.— Դու նկատի ունես, որ Ոչ մեկը ոչ մի տեղ չկա՞, այսինքն՝ Ոչ մեկը ոչ թե ոչ մեկն է, այլ ինչ-որ մե՞կը:

ՔԼԻՖ.— Այո՛, այո՛:

ՋԻՄԻ.— Է՛հ, միանգամից այդպես էլ կասեիր:

ՀԵԼԵՆԱ (այնքան էլ համոզված չէ, թե իր հերթն է).— Է՛յ, դո՛ւք:

ՋԻՄԻ.— Օ՛հ, մեր ծրագիրը մի բանի ժամանոց է, բայց վնաս չունի, ընդմիջում անենք: Ի՞նչ է պատահել, սը՛ր:

ՀԵԼԵՆԱ (բղավելով).— Ձեր ծրագիրը բանի նմա՛ն չէ: Ասում եմ՝ ձեր ծրագիրը բանի նմա՛ն չէ:

ՋԻՄԻ.— Բանի նման չէ՞: Ներեցե՛ք, սը՛ր, բայց դա ո՛ւմ կարծիքն է:

ՀԵԼԵՆԱ.— Ո՛ւմ կարծիքն է: Օ՛հ... (Շինծու համեստությամբ): Ոչ մեկի:

ՋԻՄԻ.— Դե, բանի որ ոչ մեկը ոչ մի տեղ չկա, ստիպված ենք կապոցը հանձնել Ոչ մեկին: Ա՛ն, ստացի՛ր քո ոչուփուչ կապոցը: (Մի բարձ է շարտում Հելենայի վրա: Բարձը դիպչում է արդուկի կանգնակին):

ՀԵԼԵՆԱ.— Ձգո՛ւյշ, շո՛ւտ կտաս:

Տղամարդիկ պարում են ու երգում:

Ո՞վ չի արդյոք ճանաչում  
Իմ հոգյակին աննման,  
Բարձր խավից է սերում,  
Բայց պաշտում եմ ես նրան:

Հենց որ բախտը կամենա,  
Կամուսնանամ նրա հետ,  
Թեկուզ մայրը զայրանա,  
Հայրը համարի աղետ:

Մենք մի տնակ կշինենք,  
Համեստ տուն-տեղ կդառնանք,  
Մանկանց դպրոց կուղարկենք,  
Չոր հացով կկշտանանք:

Սիրածի հետ իմ շեկիկ  
Ես անկողին կմտնեմ,  
Նրա ծագումը տոհմիկ  
Ձէ մի բանի տեղ դնեմ:

Քաղքենիները փքված  
Թող նախանձից տրաքվեն,  
Իմ հոգյակը անկասկած  
Կդառնա ինձ ապավեն:

Հրեշտակներն երկնքում  
Իմ սերը կգովերգեն,  
Ով ինձ հիմար էր կարծում,  
Ծիոթաբար է արդեն:

Սիրածի հետ իմ շեկիկ  
Ես անկողին կմտնեմ,  
Նրա ծագումը տոհմիկ  
Ձէ մի բանի տեղ դնեմ...

**ՋԻՄԻ (ձանձրանալով՝ մի կողմ է հրում Քլիֆին).**— Դե՛ն քաշվիր, ա՛յ  
ամբակավոր: Արդեն երկու անգամ ոտքս տրորեցի՛ր: Քեզնից բան  
դուրս չի գա: Ես Հելենայի հետ կայարեմ: Գնա, գնա թեյ դիր,  
հետո կորոշենք, թե ինչ ենք անելու:

**ՔԼԻՖ.**— Ի՛նքդ դիր:

Նա այնպես է հրում **Ջիմիին**, որ սա հավասարակշռությունը կորց-  
նելով՝ վայր է ընկնում:

**ՋԻՄԻ.**— Բո՛ի այլանդա՛կ:

**Ջիմին** ոտքի է թռչում, և նրանք կովի են բռնվում: Թրմփում են  
հատակին և թավալվոր գալիս՝ փնջալով ու շնչասպառ հեալով: **Քլի-**  
**ֆին** հաջողվում է ծնկել **Ջիմիի** կրծքին:

**ՔԼԻՖ (ծանր շնչելով).**— Ես ուզում եմ թե՛րթ կարդալ:

**ՋԻՄԻ.**— Վայրենի՛, գազա՛ն: Քո տեղն անտա՛նն է: Հասկացա՞ր: Դու  
արժանի չե՛ս օրինավոր, խելահաս մարդկանց կողքին ապրելու:

**ՔԼԻՖ.**— Լեզուդ քեզ արա, թե չէ ստիպված կլինեմ այսպես թերթ կար-  
դալ:

**Ջիմին** մի վերջին անգամ լարում է ուժերը, մազ է մնում, որ **Քլի-**  
**ֆին** ցած գլորի:

**ՋԻՄԻ.**— Աղիքներս բերանովս հանեցի՛ր: (**Հրում-զցում է Քլիֆին, որը: դիմադրում է**):

**ՔԼԻՖ.**— Տես ի՛նչ արեցիր: Վերնաշապիկս պատռեցիր: Իջի՛ր վրա-  
յիցս:

**ՋԻՄԻ.**— Է՛, վերնաշապիկն ի՛նչ ես անում: (**Վեր կենալով**): Վերնա-  
շապիկը քեզ անան անտաշի ինչի՛ն է: Դե հիմա գնա ու թեյ դիր:

**ՔԼԻՖ.**— Սա միակ մաքուր վերնաշապիկն էր, լողլո՛ղ ծալլակաա:  
(**Վեր է կենում հատակից, դիմում Հելենային**): Տեսեք ի՛նչ արեց.  
կեղտի մեջ կորցրեց:

**ՀԵԼԵՆԱ.**— Այո, իսկապես: Նա ավելի ուժեղ է, քան թվում է: Հանեք  
ի՛նձ տվեք, ես կլվանամ: Մինչև տնից դուրս գալը կչորանա:

**Քլիֆը վարանում է:**

Ձեզ հետ եմ, Քլի՛ֆ:

**ՔԼԻՖ.**— Չարժե, մի կերպ յուր կգնամ:

**ՋԻՄԻ.**— Վերնաշապիկդ տուր նրան և նվնվոցդ կտրի՛ր:

**ՔԼԻՖ.**— Դե լավ: (**Հանում է վերնաշապիկը և տալիս Հելենային**):  
Ծնորհակալություն, Հելենա:

**ՀԵԼԵՆԱ (վերնաշապիկը վերցնելով).**— Այ այսպես: Մի րոպեում կլր-  
վանամ: (**Դուրս է գնում**):

**ՋԻՄԻ (փլվում է իր բազկաթոռիձև, գվարթագին).**— Կանայք քեզ Մար-  
լոն Բրանդոյի<sup>30</sup> տեղն են դնում: (**Կարճ դադար**): Դու չես սիրում  
Հելենային, չէ՞:

**ՔԼԻՖ.**— Մի ժամանակ կարծեմ դու էլ առանձնապես ոգևորված չէիր  
նրանով: (**Տատանվում է, ապա փութկոտ վրա բերում**): Բայց հի-  
մա ուրիշ է, ճիշտ չէ՞:

**ՋԻՄԻ (գրգռված).**— Իհարկե ուրիշ է, ապուշի կտո՛ր: Ինչպե՛ս կա-  
րող է ուրիշ չլինել: Թարմ միսը տարբերվում է երեկվա մսից,  
իսկ վերջին կինը՝ նախորդից: Եթե համաձայն չես ի՛նձ հետ, ու-  
րեմն շատ անբախտ կլինես, տղա՛ս:

**ՔԼԻՖ (նստում է բազկաթոռի արմնկակալին և ձեռքը դիպցնում Ջի-  
միի ծնկին).**— Ջիմի՛... երևի ես այլևս չմնամ այստեղ:

**ՋԻՄԻ (գրեթե անտարբեր).**— Ինչո՛ւ:

**ՔԼԻՖ (անփույթ եղանակով).**— Չգիտեմ: Ուզում եմ բախտս ուրիշ տեղ  
փորձել: Կրպակն էլ վատ չէ, բայց ես կաշխատեմ ավելի հարմար  
բան գտնել: Դու բարձրագույն կրթություն ունես, և կրպակը քեզ  
ձեռք է տալիս, բայց ի՛նձ ավելի լավ բան է պետք:

**ՋԻՄԻ.**— Ինչպես կուզես, պատի՛կս: Քո գործն է, ի՛նձ ինչ:

**ՔԼԻՖ.**— Մի բան էլ կա. իմ կարծիքով, Հելենայի համար դժվար է



միանգամից երկու տղամարդու հոգսը քաշել, չարչարանքը շատ է: Նրա գործը կթեթևանա, եթե դուք երկուսով մնաք: Իսկ ինձ ելևի հարկավոր է մի աղջիկ գտնել, որ հոգա իմ մասին:

**ՋԻՄԻ.**— Վատ չես մտածել: Չնայած հազիվ թե այնպիսի խելքից կաղ աղջիկ ճարվի, որ քեզ իր գլխին դարդ ու բալա շինի: Միգուցե Հելենան ինչ-որ մեկին գտնի իր շենք ու շնորհքով ընկերուհիներից, այնպիսի աղջիկ, որ շատ փող ունենա ու անուղեղ լինի: Դա հենց այն է, ինչ քեզ հարկավոր է:

**ՔԼԻՖ.**— Դրա նման մի բան:

**ՋԻՄԻ.**— Բայց դու գաղափար ունե՞ս, թե ինչ ես անելու:

**ՔԼԻՖ.**— Ոչ այնքան:

**ՋԻՄԻ.**— Դա քեզ նման է: Իմ կարծիքով, դու հինգ րոպե էլ չես դիմանա սոսակց ինձ:

**ՔԼԻՖ (ժպտալով).**— Իզուր ես այդպես կարծում:

**ՋԻՄԻ.**— Դու շատ ձեռնասուն գազանիկ ես. գրագ կգամ, որ օջախի աղջիկը կես տարում հախիցդ կգա: Կամուսնացնի իր հետ, կըստիպի աշխատել, այնպես կկոկի, որ կդառնաս յուղամանից հենց նոր դուրս եկած:

**ՔԼԻՖ (քսծիծաղ տալով).**— Դե՛, ինձ նման հիմարի հետ ինչ ասես որ չի պատահի:

**ՋԻՄԻ (ինքն իրեն).**— Ինձ թվում է ամբողջ կյանքս զբաղված եմ հրածեշտ տալով:

**Կարճ դադար:**

**ՔԼԻՖ.**— Ոտքս մրմռում է:

**ՋԻՄԻ.**— Գուլպաներդ լվա: **(Ընդհատ-ընդհատ խոսելով):** Տարօրինակ է. դու հավատարիմ, մեծահոգի ու լավ ընկեր ես եղել, իսկ ես չեմ էլ ափսոսում, որ հեռանում ես նոր ապաստան գտնելու ու քո ճանապարհով գնալու: Եվ այս ամենն այն պատճառով, որ ես ինչ-որ բան եմ ուզում հիմա քո վերնաշապիկը լվացող այդ աղջկանից, մի բան, որ ինքս էլ գիտեմ, նա անկարող է ինձ տալ: Դու հի՞՞՞գ հատ Հելենա արժես ինձ համար: Բայց եթե դու լինեիր իմ տեղը, նույն ձևով կվարվեիր: Ծիշտ չէ՞:

**ՔԼԻՖ.**— Ծիշտ է:

**ՋԻՄԻ.**— Ախր ինչո՞ւ, ինչո՞ւ, ինչո՞ւ ենք թողնում կանանց, որ մեր առջունը ծծեն: Դու երբևէ ստացե՞լ ես այն նամակներից, որտեղ բացեիրաց ասված է. «Խնդրում ենք մեծահոգաբար զոհեք ձեր արյունը»: Ըստ երևույթին. փոստային գերատեսչություններն այդ ծանուցագրերն ողարկում են աշխարհի բոլոր կանանց անունից:



**ՋԻՄԻ.**— Իսկապէ՛ս: Նորությունների հերթում ես կարծես թե միշտ ամենավերջինն եմ:

**ՀԵԼԵՆԱ.**— Ափսոս, որ նա գնում է:

**ՋԻՄԻ.**— Այո, ես էլ եմ ափսոսում: Այդ փայլօրոտ տակաճառ մարդու ջղեր է քայքայում, բայց մեծ սիրտ ունի: Հանուն դրա կարելի է ամեն ինչ ներել: Միայն թե նա սովորել է իր բարեկամությունը ետ վերցնել, իսկ առաջ լոկ նվիրում էր: Արի մոտս:

**Նա նստած է բազկաթոռի արմնկակալին: Հելենան մոտենում է նրան: Նայում են մեկմեկու: Հետո Հելենան մեկնում է ձեռքը, փաղաքշում նրա գլուխը, շոյում ականջներն ու ծոծրակը:**

Հենց ամենասկզբից դու միշտ առաջինն ես ձեռքդ մեկնում: Ասես ոչ մի սպասելիք չունես կամ ավելի վատ՝ ասես քեզ համար միևնույն է: Դու լավ էիր խաղում թշնամու դերը: Ինչպես ասում են՝ արժանի հակառակորդի: Բայց երբ մարդիկ զենքերը ցած են դրնում, բոլորովին էլ չի նշանակում, թե պայքարն ավարտված է:

**ՀԵԼԵՆԱ (հաստատակամորեն).**— Ես քեզ սիրում եմ:

**ՋԻՄԻ.**— Միգուցե: Երևի սիրում ես: Հաղթություն արած գեներալի գրկում քնելը, ըստ երևույթին, մի բան նշանակում է: Նամանավանդ, եթե նա տանջահար է եղել պատերազմից, հյուծվել, քաղցած է ու ծարավ: (Համբուրում է Հելենայի մատները):

**Հելենան նրա գլուխը սեղմում է կրծքին:**

Դու վեր կացար ու եկար ինձ ընդառաջ: Ա՛խ, Հելենա՛...

**Ջիմին բարձրացնում է դեմքը, նրանք կրքավառ համբուրվում են:**

Արի այնպես անենք, որ ամեն ինչ լավ լինի:

**ՀԵԼԵՆԱ (քնքշորեն).**— Սիրելի՛ս...

**ՋԻՄԻ.**— Կարևոր չէ՛ դու ինձ հետ կլինես, թե իմ դեմ:

**ՀԵԼԵՆԱ.**— Ես միշտ ուզեցել եմ քեզ, մի՛շտ:

**Նորից են համբուրվում:**

**ՋԻՄԻ.**— Թ. Ա. Էլիոթ և Փամելա. հիանալի համար կատացվի: Եթե ինձ օգնես: Կրպակը գրողի ծոցը կուղարկեմ, և մենք ամեն ինչ կսկսենք սկզբից: Ի՞նչ կասես: Կգնանք այստեղից:

**ՀԵԼԵՆԱ (երջանկացած գլխով է անում).**— Կասեմ, որ հրաշալի է:

**ՋԻՄԻ (նրան համբույր տալով).**— Գնա այս քուրջը հանիր, դուրս գանք: Մի բան կխմենք, կզվարճանանք, քնքշանքով ու տարփանքով կնայենք իրար, հետո կվերադառնանք, և ես քեզ այնպե՛ս կսիրեմ, որ աշխարհում ամեն ինչ կմոռացաս:

**ՀԵԼԵՆԱ (համբուրում է նրա ձեռքը և գնում դեպի ձախ).**— Հիմա՛: Վերնաշապիկդ հանեմ ու վե՛րջ: (Ծայրում է արդուկի կանգնակը):

**ՋԻՄԻ (գնում է դռան կողմը).—** Լալ: Իսկ ես գնամ պատիկին շուսպեցնեմ:

**Բայց մինչ նա կհասցնի դուրս գնալ, դուռը բացվում է, և ներս է մտնում Էլիսնը: Նրա հագին անձրևանոց է, մազերը խոնված են, հիվանդագին տեսք ունի: Մի պահ քար լռություն է տիրում:**

**ԷԼԻՍՈՆ (կամացուկ).—** Ողջույն:

**ՋԻՄԻ (փոքր-ինչ հապաղելով, Հելենային).—** Ընկերուհիդ է եկել:  
(Հապճեպ դուրս է գնում):

**Կանայք մնում են երես առ երես:**

**Վ ա ր ա գ ու յ ը ր ն ա ր ա գ ո ր ե ն ի ջ ն ու մ է:**

### **ՊԱՏԿԵՐ ԵՐԿՐՈՐԴ**

**Մի քանի րոպե անց: Քլիֆի սենյակից լսվում է Ջիմիի շեփոթի ձայնը: Վարագույրը բարձրանալիս, Հելենան կանգնած է սեղանի ձախ կողմում, թեյ է լցնում գավաթի մեջ: Էլիսնը նստած է աջակողմյան բազկաթոռին: Նա կռանում է և վերցնում Ջիմիի ծխամորճը: Հետո մի պտղունց մոխիր է հավաքում հատակից և լցնում բազկաթոռի արմընկակալին դրված մոխրամանի մեջ:**

**ԷԼԻՍՈՆ.—** Նա դեռ ծխում է այս ահավոր ծխախոտը: Ես միշտ ասել եմ քրա հոտը, իսկ դու ահա վարժվել ես:

**ՀԵԼԵՆԱ.—** Այո:

**ԷԼԻՍՈՆ.—** Անցյալ շաբաթ գնացել էի կինո, առջևի շարքերից մեկում մի ծերուկ ճիշտ այսպիսի ծխախոտ էր ծխում: Ես գնացի ու նրատեցի նրա կողքին:

**ՀԵԼԵՆԱ (թեչի գավաթը ձեռքին մոտենում է նրան).—** Վերցրու խմիր: Օգնում է:

**ԷԼԻՍՈՆ (գավաթը վերցնելով).—** Ծնորհակալ եմ:

**ՀԵԼԵՆԱ —** Դու համոզված ես, որ լրիվ առողջացել ես:

**ԷԼԻՍՈՆ (զլխով է անում).—** Այո, համարյա... լրիվ: Ես ինքս եմ մեռավոր... միայն ես: Խելագարություն էր իմ այստեղ գալը: Ներիր ինձ, Հելենա՛:

**ՀԵԼԵՆԱ.—** Ինչպե՞ս կարող ես ներողություն խնդրել, այն էլ ինձանից:

**ԷԼԻՍՈՆ.—** Որովհետև ես ամբան անազնիվ ու դաժան եմ գտնվել, որ ևկել եմ այստեղ: Երևի պատեհության զգացումը այն բաճերից է,

որոնք Ջիմին է ինձ սովորեցրել: Բայց մեկ-մեկ կորցնում եմ այդ գգացումը և ընկնում խայտառակ դրության մեջ: (**Մի կում է ա-  
նում թելից**): Քանի՛-քանի՛ անգամ, ուղղակի վերջին բույեին ինձ հազիվհազ զսպել եմ, որ չգամ այստեղ: Նույնիսկ այսօր, երբ կայարանում մոտեցա տոմսարկղին, ինձ թվում էր, թե սա խաղ է, չէի հավատում, թե սիրտ կանեմ գնացք նստել: Իսկ երբ հայտնը-վեցի վագոնում, խուճապի մատնվեցի: Ասես հանցագործ լինեի: Ինքս ինձ խոստացա, որ կգամ, հեռվից կնայեմ մեր տանը, հետո նորից գնացք կնստեմ ու կվերադառնամ: Չէի հավատում, թե մեր տունը դեռևս գոյություն ունի: Բայց հենց որ հայտնվեցի այստեղ, այլևս ոչինչ չկարողացա անել: Ես ուզում էի համոզվել, որ իմ բոլոր հուշերը մի ժամանակ իրականություն են եղել: (**Պավարը  
ցած է դնում և ոտքով խոնջտում հատակի վրայի լրագրերը**): Ինչ-քա՛ն եմ մտաբերել այս սենյակում անցկացրած մեր երեկոները: Ամեն ինչ այնքան հեռու-հեռավոր էր թվում, բայց և այնպես պար-զորոշ էի հիշում: Դու լավ թել ես պատրաստում:

**ՀԵԼԵՆԱ (սեղանի ձախ կողմում նստելով).**— Ջիմին ինձ էլ է որոշ քան սովորեցրել:

**ԷԼԻՍՈՆ (դեմքը ծածկելով).**— Ախր ինչո՞ւ եմ այստեղ: Չեր բոլորի ցանկությունն այն պիտի լինի, որ ես ինչքան հնարավոր է, հեռու լինեմ այստեղից:

**ՀԵԼԵՆԱ.**— Ես ոչ մի նման ցանկություն չունեմ: Դու ավելի շատ իրա-վունք ունես այստեղ լինելու, քան թե ես:

**ԷԼԻՍՈՆ.**— Այս, Հելենա՛, ո՞ւմ էն պետք այդ ծեծված ճշմարտություն-ները...

**ՀԵԼԵՆԱ.**— Ախր դու ես նրա կի՞նը, չէ՞: Ինչ էլ որ ես անելու լինեմ, չեմ կարող մոռացության տալ այդ փաստը: Դու բոլոր իրավունք-ներն ունես...

**ԷԼԻՍՈՆ.**— Հելենա՛, նույնիսկ ես, վաղուց ի վեր դադարել եմ ամու-նական սրբազան կապին հավատալուց: Դեռ Ջիմին հանդիպե-լուց էլ առաջ: Հիմա կարգը փոխվել է. ամեն ինչ հիմնված է անձ-նական նախաձեռնության վրա: Ապրում ես, քանի դեռ համաձայն ես քո հոժար Նամքով: Իսկ եթե սրտովդ չէ, թողնում ես, հեռու-նում: Ես էլ թողել, հեռացել եմ:

**ՀԵԼԵՆԱ.**— Դա է՞լ ես նրանից սովորել:

**ԷԼԻՍՈՆ.**— Ինձ խառնակչի կամ քանաարկուի տեղ մի՛ դիր, խնդրում եմ: Ես ճիմսր ու գոեճիկ քան արեցի այստեղ գալով: Ես զոջում եմ դրա համար և արհամարհում ինքս ինձ: Բայց ես եկել եմ ւ-

նանց որևէ դիտավորության: Ինչ էլ որ լինի սա՛ հիստերիկա, թե հիվանդագին հետաքրքրասիրությունն էս Ջիմիի և քո արանքը խառնելու ոչ մի մտադրություն չունեն: Հավատա ինձ:

**ՀԵԼԵՆԱ.**— Ես անկեղծորեն հավատում եմ: Դրա համար էլ ամեն ինչ շատ ավելի արտառոց ու սարսափելի է թվում: Դու նույնիսկ չես կշտամբում ինձ: Դու պետք է մինչև հոգուդ խորքը վիրավորված լինեիր, բայց հանգիստ խոսում ես հետո: (Ետ է ընկնում այտուռի թիկնակին, ասես ուզում է ընկրկել ինքն իրենից): Ես ամոթից գետիճն եմ մտնում:

**ԷԼԻՍՈՆ.**— Այնպես ես խոսում, կարծես թե նա իր է, որը խլել ես ինձնից...

**ՀԵԼԵՆԱ (բորբոքված).**— Իսկ դու այնպես ես խոսում, կարծես թե նա գիրք է, որը պատրաստ ես ամեն մարդու տալ, ով որ ուզենա մի քանի թույլտված աչքի սնցկացնել: Ի՞նչ է կատարվում քեզ հետ: Ասես անընդհատ նրա խոսքերը կրկնելիս լինես: Դու չէի՞ր ասում, թե չես կարողանում ինքդ քեզ համոզել, որ համաձայնես նրա հետ:

**ԷԼԻՍՈՆ.**— Ես քեզ հետ էլ չեմ կարող համաձայնել:

**ՀԵԼԵՆԱ.**— Այսպես թե այնպես, բայց ես հավատո՞ւմ եմ բարուն ու չարին: Նույնիսկ այս գծանցում ամիսներ շարունակ ապրելուց հետո հավատս չեմ կորցրել: Թող իմ արածը վատ բան լինի, բայց ես գոնե հասկանում եմ, որ վատ եմ արել:

**ԷԼԻՍՈՆ.**— Դու սիրո՞ւմ ես նրան: Գրել էիր նամակումդ, այն սնգամ էլ ասացիր:

**ՀԵԼԵՆԱ.**— Եվ դա ճիշտ էր:

**ԷԼԻՍՈՆ.**— Այն ժամանակ դժվար էր դրան հավատալ: Ես չէի կարողանում հասկանալ:

**ՀԵԼԵՆԱ.**— Են՝ ինքս էլ դժվարությամբ հավատացի:

**ԷԼԻՍՈՆ.**— Ի վերջո, պարզվեց, որ դա այնքան էլ բարդ չէր չհասկանալու համար: Դու սովորաբար շատ թունդ բաներ էիր ստում նրա հասցեին: Չէի ասի, թե ինձ համար վիրավորական էր նրան խոսքեր լսելը, քո ասածներն ինձ նույնիսկ մխիթարում էին: Բայց երբեմն էլ հոգիս պղտորվում էր:

**ՀԵԼԵՆԱ.**— Ըստ երևույթին, ես փոքր-ինչ չարին անց էի կացնում: Բայց ի՞նչ կարիք կա հիմա բացատրությունների ետևից ընկնել:

**ԷԼԻՍՈՆ.**— Ծիշտ է, կարիք չկա:

**ՀԵԼԵՆԱ.**— Գիտե՞ս, ես հասկացել եմ, թե որն է Ջիմիի դժբախտությունը: Ամեն ինչ շատ պարզ է: Նա ուշացած է ծնվել:

**ԷԼԻՍՈՆ.—** Գիտեմ:

**ՀԵԼԵՆԱ.—** Նման մարդիկ հիմա տեղ չունեն. ոչ սիրո մեջ, ոչ քաղաքականության, ոչ էլ որևէ ուրիշ ասպարեզում: Ահա թե ինչու նա չի կարողանում ինքն իրեն գտնել: Երբեմն ես լսում եմ նրան ու մտածում. «Ախր նրան թվում է, թե ինքը ֆրանսիական հեղափոխության բռնիք է ապրում: Նա հենց այդ ժամանակներում էլ պիտի ծնված լիներ: Նա չգիտի, թե որտեղ է գտնվում և ուր է գնում: Նա երբեք ոչինչ չի անի և ոչնչի չի հասնի:

**ԷԼԻՍՈՆ.—** Ինձ թվում է նա այն մարդկանցից է, որոնց «ականավոր փկտորիականներ» են կոչում: Դրա համար էլ ինչ-որ տեղ նա ծիծաղելի է: Կարծեմ առաջ էլ ենք խոսել այս մասին:

**ՀԵԼԵՆԱ.—** Այո, ես հիշում եմ այն ամենը, ինչ որ պատմել ես նրա մասին: Ես վախեցած էի: Չէի հավատում, թե կամուրճանաւս նրան մարդու հետ... Էլիսոն՝, իմ և Ջիմիի միջև ամեն ինչ վերջացած է: Հիմա ես դա լիովին հասկանում եմ: Այդ ես պետք է հեռանամ այստեղից: Չէ՛, դու լսիր, թե ինչ եմ ասում: Երբ տեսա քեզ դռան շեմքին, հասկացա, որ այս ամենը ծայրեծայր սխալ է: Հասկացա, որ ես այս ամենին չեմ հավատացել, և ոչ Ջիմին, ոչ էլ մեկ ուրիշը չեն կարող ինձ ստիպել, որ հակառակը մտածեմ: **(Վեր կենալով):** Եվ ինչպե՞ս եմ կարողացել ինքս ինձ խաբել: Նրան մի աշխարհ է պետք, ինձ՝ բոլորովին ուրիշը, և ընդհանուր անկողինն ի գործ՝ չէ որևէ բան փոխել: Ես հավատում եմ բարուն ու չարին և չեմ ամաչում դրա համար: Ասում են, այս հավատը միանգամայն ժամանակակից, գիտականորեն հիմնավորված բան է: Որեմն այսպես. ելնելով այն ամենից, ինչին ես հավատում եմ և ինչ որ ուզում եմ, իմ արածը սխալ է ու չարիք:

**ԷԼԻՍՈՆ.—** Հելենա՛, դու մտադիր ես լքե՞լ նրան:

**ՀԵԼԵՆԱ.—** Այո, մտադիր եմ: **(Նախքան Էլիսոնը կհասցնի ընդհատել նրան, շարունակում է):** Ես իմ տեղը չեմ գիշում քեզ: Դու կարող ես սրտիդ ուզածն անել: Անկեղծորեն ասած, իմ կարծիքով հիմարություն կանես, եթե... բայց քո մեղքը քո փոքր: Բավական է քեզ խորհուրդներ տամ:

**ԷԼԻՍՈՆ.—** Ախր նա... նա ոչ ոք չունի:

**ՀԵԼԵՆԱ.—** Ախ, սիրելի՛ս: Մի՛ վախենա, կգտնի: Ծատ հնարավոր է, որ պապական արքունիք բացի: Ես գիտեմ, որ նորից ծեծված ճշմարտություններ եմ մեջտեղ քերում, բայց հավատա՛ ինձ, առանց այդ ճշմարտությունների երջանիկ չես լինի: Ես անընդհատ փորձում էի այնպես հասնել ուս միտքը, բայց հիմա գիտեմ, որ դա

անհնար է: Երբ դու հայտնվեցիր դուան շեմքին՝ հիվանդ, հոգնած ու տանջահար, ես հասկացա, որ ինձ համար ամեն ինչ վերջացած է: Հասկանո՞ւմ ես... ես չգիտեի, թե ինչ է եղել երեխային: Դա այնպիսի հարված էր, ասես անեղ դատաստան մեր գլխին:

**ԷԼԻՍՈՆ.**— Երբ հանդիպեցինք, ես պետք է ասեի քեզ պատահածի մասին: Ես կորցրի երեխային: Ողղակի այդպես սուսցվեց: Ո՞ւմ մեղադրեա ու դատապարտեա դրա համար...

**ՀԵԼԵՆԱ.**— Գուցե և այդպես է: Բայց միևնույն է, ես ինձ մեղավոր եմ զգում:

**ԷԼԻՍՈՆ.**— Ինչպե՞ս չես հասկանում: Ախր դա անորամաքանակա՞ն է:

**ՀԵԼԵՆԱ.**— Թող անորամաքանական լինի: **(Հանգիստ):** Բայց ես մտ գիտեմ, որ ասածս ճիշտ է:

**Շեփորի ձայնն ուժգնանում է:**

**ԷԼԻՍՈՆ.**— Հելենա՛ (գնում է նրա կողմը), դու չսլետք է նրան լքես: Նա զգում է քո կարիքը, գիտեմ, զգում է...

**ՀԵԼԵՆԱ.** — Այդ կարծիքի՞ն ես:

**ԷԼԻՍՈՆ.**— Միգուցե դու հենց նրա ուզածը չես... երկուսս էլ նրա ուզածը չենք...

**ՀԵԼԵՆԱ (հեռանում է քեմի խորքը).**— Օ՛ֆ, ե՞րբ է այս զոզոնը կրորեղու:

**ԷԼԻՍՈՆ.**— Նրա ուզածը բոլորովին ուրիշ բան է: Թե ինչ, ինքս էլ հաստատ չգիտեմ. մոր և կուրտիզանուհու խառնուրդ, զինակիր, Կլեոպատրայի<sup>31</sup> և Բեռուելի<sup>32</sup> հիբրիդը: Բայց ժամանակ տուր նրան...

**ՀԵԼԵՆԱ (թափով բացում է դուռը).**— Լսի՛ր, վե՛րջ տուր, խնդրո՛ւ՛ եմ: Գլուխս պայթո՞ւմ է:

**Կարճ դադար: Հետո նորից լսվում է շեփորի ձայնը:**

**(Գլուխը բռնելով):** Վե՛րջ տուր, Ջիմի՛, ի սե՛ր աստժո:

**Շեփորի ձայնն ընդհատվում է:**

Ջիմի՛, ես ուզում եմ խոսել քեզ հետ:

**ՋԻՄԻ (քեմի ետևից).**— Ընկերուհիդ դեռ այդտե՞ղ է:

**ՀԵԼԵՆԱ.**— Քեզ խելագարի տեղ մի՛ դիր, եկ այստե՛ղ: **(Գնում է դեպի ձախ):**

**ԷԼԻՍՈՆ (վեր կենալով).**— Նա չի ուզում ինձ տեսնել:

**ՀԵԼԵՆԱ.**— Նստիր տեղդ, ապուշություն չանես: Ներիր: Անքան էլ հաճելի արարողություն չի լինի, բայց ես որոշել եմ հեռանալ այստեղից և պետք է հենց հայտնեմ նրան:

**Մտնում է Ջիմին:**



ՋԻՄԻ.— Ի՞նչ հերթական դավ եք լարել: (Նայում է Էլիսանին): Մի-  
գուցե նա նստի՞: Ուրվականի տեսք ունի:

ՀԵԼԵՆԱ.— Կներես, սիրելի՛ս, էլի՛ թեյ լցնեն, թե ասպիրին տամ կամ  
նման մի բան:

Էլիսանը տարուբերում է գլուխը և նստում: Նա Հելենային և Ջի-  
մին նայելու ուժ չունի:

(Դառնում է Ջիմին նախկինից ծանոթ անկոտորում ինքնատիրա-  
պետմամբ): Ջարմանալի ոչինչ չկա: Նա հիվանդ է եղել, նա...

ՋԻՄԻ (հանգիստ).— Հուշարարի կարիք չունեն... Տեսնում եմ, թե նր-  
բան ինչ է պատահել:

ՀԵԼԵՆԱ.— Եվ դա քեզ համար ոչինչ չի՞ նշանակում:

ՋԻՄԻ.— Ես հաճույքից չեմ նվաղում ցավ կամ տառապանք տեսնելիս:  
Դու գիտես, որ դա նաև իմ երեխան էր: Բայց (ուտերն է թորվում)  
սա իմ առաջին կորուստը չէ:

ԷԼԻՍԱՆ (հոգոց հանելով).— Իսկ իմն առաջինն է:

Ջիմին մի հաչացք է գցում նրա վրա, ապա կտրուկ շուռ գալիս  
դեպի Հելենան:

ՋԻՄԻ.— Ինչի՞ համար ես այդպիսի հանդիսավոր տեսք ընդունել: Նա  
ի՞նչ ունի այստեղ:

ԷԼԻՍԱՆ.— Ներեցեք... նե... (Ձեռքը սեղմում է քերանին):

ՀԵԼԵՆԱ (մոտենում է Ջիմին և բռնում նրա ձեռքը).— Վերջ տուր,  
խնդրում եմ: Ձե՛ս տեսնում, թե նա ինչ վիճակում է: Ոչինչ չի  
անում, ոչ մի բառ չի ասում, նա մեղք չունի: (Բաց է թողնում նրա  
ձեռքը և մի կողմ քաշվում):

ՋԻՄԻ.— Ինչո՞ւմ մեղք չունի:

ՀԵԼԵՆԱ.— Ջիմի՛, ես վեճ ու կույի տրամադրություն չունեն, այնպես  
որ խնդրում եմ...

ՋԻՄԻ.— Չէ՛, արի պարզե՛ք:

ՀԵԼԵՆԱ.— Ծա՛տ լավ: Ես գնում եմ իրերս հավաքելու: Եթե շտապեմ,  
յոթն անց տասնհինգի լոնդոնյան գնացքին կհասնեմ:

Երկու կանայք էլ հաչացքները հառում են Ջիմին, բայց նա կրոթ-  
նել է սեղանին, նրանց չի նայում:

Հասկացիր, Էլիսանն անմասն է այս ամենի մեջ: Ես ինքս եմ որո-  
շել: Նա նույնիսկ փորձում էր ինձ ետ պահել: Բայց ես այսօր  
հանկարծ ամեն ինչ միանգամից հասկացա: Մարդ չի կարող եր-  
ջանիկ լինել, եթե նրա արածը սխալ է կամ ցավ է պատճառում  
ուրիշին: Հիմա արդեն ոչ մի նշանակություն չունի, բայց ես սի-  
րում եմ քեզ, Ջիմի՛: Ես երբեք ոչ մեկին այնպես չեմ սիրի, ինչ-

պես քեզ եւ սիրել: **(Շուք է գալիս):** Միայն թե այլևս չես կարող այսպես շարունակել: **(Մրտաբորբոք և անկեղծորեն):** Ես չես կարող մասնակցել այս տառապանքների: Չե՛մ կարող:

Թե ևաթափ սպասում է, թե **Ջիմին** գեթ մի բանով կարձագանքի, բայց նա առաջվա պես սկեռվել է սեղանին և միան գլուխն է թափահարում: **Հելենան** սթափվում է, ինքն իրեն հավաքում:

**(Էլիսանին):** Դու երևի ի վիճակի չես լինի վերադառնալու համար նորից այդքան ճանապարհ կտրել: Ես կհասցնեմ օգնել քեզ, որ հյուրանոցում տեղավորվես: Դեռ կես ժամ ունես: Ես ամեն ինչ կկարգավորեմ: **(Շրջվում է, գնում դեպի դուռը, բայց Ջիմիի ձայնը կանգնեցնում է նրան):**

**Ջիմի (ցածր, անմոռուն ձայնով).**— Բոլորը փախչում են կյանքի տանջալի ծանրությունից: Եվ մանավանդ սիրուց: **(Մոտենում է զարդասեղանին):** Ես գիտեի, որ վերջն այսպես կլինի. լույս կընկնի, հիվանդ կինս կամ որևէ այդ կարգի խնդիր կծագի, և քո սրտի նրբագույն լարերը դրան չեն դիմանա: **(Հավաքում է Հելենայի իրերը զարդասեղանի վրայից և ուղղվում հանդերձապահարանի կողմը):**

**Դրսում եկեղեցու կոչնակներն սկսում են զարկել:**

Իմաստ չունի սիրո մեջ ինքն իրեն խաբել: Չես կարող սիրել առանց ձեռքերդ կեղտոտելու, սերը ծանր աշխատանք է: **(Չարդասեղանի վրայից հավաքած իրերը տալիս է Հելենային: Բացում է հանդերձապահարանի դուռը):** Սերը ջղեր ու հոգու արհույումն է պահանջում: Եվ եթե ուժ չունես դիմանալու **(հանդերձապահարանից հանում է նրա զգեստը)**, որ չքնաղ, անբիծ հոգիդ տակնուվրա լինի **(վերադառնում է Հելենայի մոտ)**, ուրեմն ավելի լավ է ընդհանրապես հրաժարվես մարդկանց նման ապրելուց և սուրբ ձեռնադրվես: **(Չզգեստը նրա ձեռքն է խոթում):** Դու երբեք չես կարողանա մարդ արարածի պես ապրել: Ոչ այս աշխարհում, ոչ էլ մանավանդ սուրբ դառնալուց հետո:

**Հելենան մի պահ նայում է նրան, ապա հապշտապ դուրս գնում:**

**Ջիմին** հուզված է, խուսափում է Էլիսանի աչքերին նայել: **Մոտենում է լուսամուտին: Կանգնում է լուսամուտի առաջ ու հանկարծ բռունցքով հարվածում շրջանակին:**

Ա՛խ, այս գրողի տարած զանգե՛րը...

**Մթնում է, սեղակը թաղվում է ստվերների մեջ: Լուսամուտի ֆոնին** գծագրվել է **Ջիմիի** կերպարանքը: **Էլիսանը** կծկվել է աջակողմյան բազկաթոռին: **Քիչ անց, լուսությունն** բնդհատելով, նա վեր է կենում:

**ԷԼԻՍՈՆ.—** Ներիր... Ես գնամ: (Ուղղվում է բեմի խորքը, բայց Ջիմիի ձայնը նրան ետ է պահում):

**ՋԻՄԻ.—** Ծաղկի եղածն ի՞նչ է, որ չուղարկեցիր թաղմանը: Գոնե մե՞ն մի հատիկ: Նույնիսկ դրանից ինձ գրկեցիր:

**Էլիսոնն ուզում է գնալ, բայց Ջիմին նորից է սկսում խոսել:**

Անարդարությունն էլ ինչպե՞ս է լինում. քաղցում եմ նրանք, ովքեր չպե՛տք է քաղցեն, սիրում եմ նրանց, ովքեր սիրո արժանի՝ չեն, մեռնում եմ նրանք, ովքեր չպե՛տք է մեռնեն:

**Էլիսոնը գնում է գազօջախի կողմը: Ջիմին շքջվում է նրա ետևից:**

Մի՞թե ես սխալվել եմ, կարծելով, թե գոյություն ունի... մտքի և ոգու... մի տեսակ հրավառ խիզախություն, որը փնտրում է իր կորովի մմանակին: Ամենագորեղ, հուժկու արարածները կարծես թե ամենից ավելի միայնակ են այս աշխարհում: Ինչպես ծեր արջը, որ մթին անտառում միայն սեփական հոտառությամբ է ճանապարհը գտնում: Նա մե՞ն-մե՞նակ է, անապահով, առանց ոհմակի: Ախր աղաղակողը մի՞շտ չէ, որ վախկոտ է: (Փոքր-ի՞նչ առաջ է գալիս): Հիշո՞ւմ ես այն օրը, երբ հանդիպեցինք այդ գարշելի երեկույթում: Դու ինձ ասես չէիր էլ նկատում, իսկ ես անընդհատ քեզ էի Ըայում: Քեզանից այնպիսի անդորր էր բուրում, մի այնպիսի հոգևոր հանգստություն, որ ես մտածեցի. ահա թե ինչ է ինձ հարկավոր: Մարդ պետք է իսկապես ուժեղ լինի, որպեսզի հոգուն այդպիսի անխոռվ հանգստություն իջնի: Միայն մեր ամուսնությունից հետո ես հասկացա, որ դա բոլորովին էլ բոգու այն հանգստությունը չէ՝ ուժի գրավականը: Հանուն այդ հանգստության մարդ արյուն-քրտինք է մտնում, իսկ դու նույնիսկ մի կաթիլ քրտինք չէիր թափում, քո սանրվածքի մի մազն էլ չէր ծովում:

**Էլիսոնի շուրթերից ճիչ է դուրս պրծնում: Նա բռունցքը սեղմում է բերանին: Մոտենում է սեղանին ու հեճվում:**

Միգուցե ես կորած մարդ եմ, մտածում էի ես, բայց եթե նա սիրում է ինձ, դա ինչ կատևոր է:

**Էլիսոնը կամացուկ հեծկլառում է: Ջիմին կանգնում է ուղիղ նրա դիմաց:**

**ԷԼԻՍՈՆ.—** Դա կարևոր չէ. Ես սխալվե՛լ եմ, սխալվե՛լ... Ես չեմ ուզում հեռու մնալ, չեմ ուզում սուրբ լինել... Ձե՛մ ուզում, թեկուզ ամե՛ն ինչ կորցնեմ, թեկուզ մեղքի մեջ խեղդվելի՞ս լինեմ, թեկուզ հողին հավասար դառնամ...

**Ջիմին աննարակորեն նայում է նրան:**

**(Էլիսունի ձայնը փոքր-րնչ ուժ է առնում):** Չե՞ս հասկանում: Նա չկա՛, չկա՛... Այդ... այդ անգոր էակը, որն ապրում էր իմ մեջ, իմ մարմնում: Ես կարծում էի, թե նա այնտեղ անվտանգ ու ապահով կլիցի: Ոչ մի բան չի կարող նրան խել ինձանից: Նա ի՞նչ էր, իմ բեռը, իմ հոգսը: Բայց ես ամեն ինչ կորցրի... **(Փլվում է հատակին և կծկվում սեղանի ոտքի մոտ):** Ես միայն մի բան էի ուզում՝ մեռնել: Չէի պատկերացնում, թե ամեն ինչ այսպես կլիցի: Չէի սպասում, թե կարող է այսպես վերջանալ: Մորմոքում էի ցավից ու մտածում միայն քո և կորցրածիս մասին: **(Ճիգ թափելով):** Մտածում էի. միայն թե նա տեսներ ինձ հիմա, այսպես հիմար, այլանդակ, անհեթեթ վիճակում: Ահա թե ինչպես էր նա երազում տեսնել ինձ: Ահա թե ինչո՞ւ էր ուզում արթնալ... Ես կրակի պես վառվո՞ւմ եմ, ներսս այրվո՞ւմ է, այնպե՛ս եմ ուզում մեռնել... Ահա՛ նրա երեխայի գինը և բոլոր այն երեխաների, որոնք ես կարող էի ունենալ... Բայց դա ի՞նչ նշանակություն ունի. նա պարզապես ուզում էր այս ամենը տեսնել... **(Աչքերը բարձրացնում է նրա վրա):** Հիմա տեսնո՞ւմ ես... Ես թավալվո՞ւմ եմ կեղտի մեջ... Սողո՞ւմ եմ, գետնին քա՛րշ գալիս... Ա՛խ, աստվա՞ծ իմ... **(Ընկնում է նրա ոտքերի առաջ):**

**Ջիմին մի պահ քարացած կանգնած է: Հետո խոնարհվում է և նրա դողահար մարմինը գիրկն առնում:**

**ՋԻՄԻ (տարուբերում է գլուխն ու շնչում).**— Պետք չէ: Խնդրում եմ, պետք չէ... Ես չեմ կարող...

**Էլիսունը շնչահեղձ է լինում:**

Ամեն ինչ լավ կլիցի: Հիմա ամեն ինչ լավ կլիցի: Խնդրում եմ, ես... ես... Մի լա...

**Էլիսունը հանկարծ խաղաղվում է:**

**(Հոգնությունից ուժասպառ նայում է նրան և խոսում կատակախառն, քնքշաթով հեգնանքով):** Մենք կապրենք արջի որջում ու սկյուռի փշակում, մեղր ու ընկույզ կուտենք. ամպի՞ չափ ընկույզներ կուտենանք: Մենք կապուկենք արևի տակ ու քաղցրալուր երգեր կերգենք երկուսիս մասին, փաղաքուշ ծառերի ու մեր տաքուկ կացարանի մասին: Եվ դու քո խոշո՞ր-խոշո՞ր աչքերով կհետևես, որ իմ մուշտակը միշտ թավամազ մնա և թաթերս միշտ սրանանկ լինեն, որովհետև ես ծուլ ու ցնդած արջ եմ: Իսկ ես կհետևեմ, որ քո փափիկ պոչը՝ մետաքսի պես քնքո՞ւշ լինի ու ցուցլա, որովհետև դու թեև աշխարհի ամենագեղեցիկ սկյուռն ես, բայց այնքան էլ աչքաբաց չես: Դրա համար էլ մենք պետք է ուշիմ ու

զգույշ լինենք: Չորս կողմը դավադիր թակարդներ են դրված, որոնք դարանամուտ սպասում են մեզ մեզնից խեղճութեամբ, չարանճի, վախվոր գազանիկներին: Ծիշտ չէ՞:

**Էլիսոնը գլխով է անում:**

**(Կիսակատակ խանդաղատանքով):** Խեղճ սկյուռներ:

**ԷԼԻՍՈՆ (նույն եղանակով).—** Խեղճ արջեր: **(Կամացուկ ծիծաղում է, ապա անսահման քնքշանքով նայում նրան և մեղմաձայն ավելացնում):** Խեղճ, խեղճ արջեր: **(Գրկում է նրան):**

Վ ա ր ա զ ու լ ը

# ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ



ԺԱՆ ԺԻՐՈՂՈՒ  
1882—1944

Ծնվել է հոկտեմբերի 29-ին Բելլակ փոքրիկ բաղաքում, չինովնիկի ընտանիքում:

1905 թ. փայտյան հաջողությամբ ավարտելով Փարիզի Բարձրագույն նորմալ դըպրոցը (այստեղ ուսանել է նաև Ժան-Պոլ Սարտրը), շրջագայում է եվրոպական մի շարք երկրներում, որոշ ժամանակ ապրում է նաև Ամերիկայում՝ ֆրանսերեն դասավանդելով Հարվարդի համալսարանում: Վերադառնալուց հետո, չնայած գիտական ակներև հաջողություններին, նախընտրում է դիվանագիտական աշխատանքը: 1910 թ. ծառայության է անցնում արտաքին գործերի մինիստրությունում:

Առաջին համաշխարհային պատերազմի հենց սկզբից զորակոչվում է բանակ: Վիրավորվելուց հետո որպես հրահանգիչ աշխատում է Պորտուգալիայում, ապա՝ Միացյալ Նահանգներում: Պատերազմից հետո անցնում է իր նախկին աշխատանքին:

Ժան Ժիրոզուն արդեն ձևավորված ու ճանաչված արձակագիր էր, որ դիմեց դրամատուրգիային: Նրա «Սիմոն զգայացունց» (1918), «Սյուզաննան և Խաղաղ օվկիանոսը» (1921), «Բելլա» (1926) և «Էզրանտինա» (1927) վեպերը բավական լայն ճանաչում ունեին:

1928 թ. Ժիրոդուն ծանոթանում է երիտասարդ ռեժիսոր Լուի Ժուվեի հետ, որով և սկզբնավորվում է երկրի թատերական կյանքին մեծապես նպաստող նրանց ստեղծագործական համագործակցությունը: Անդրանիկ պիեսը՝ «Զիգֆրիդը», Ժիրոդուն ըստեղծեց իր վեպերից մեկի («Զիգֆրիդը և Լիմուզենը») հիման վրա: «Կոմեդի Ֆրանսեզ» թատրոնը հրաժարվեց բեմադրել այն. Ժուվեի խորհուրդներով այն մի քանի անգամ վերափոխվեց և նրա իսկ ղեկավարությամբ 1928 թ. մայիսի 3-ին ներկայացվեց Ելիսեյան դաշտերի թատրոնում:

Իրաման հակապատերազմական բարձր հնչեղություն ուներ. անդրադառնալով անցած աշխարհամարտին, աներկյուղա Ըշելով ֆինանսական մագնատների անցանկալի, բայց վճռական դերը ժողովուրդների նակատագրում՝ Ժիրոդուն հոգևոր միասնության ու ինտերնացիոնալ համագործակցության կոչ էր անում եվրոպական ժողովուրդներին:

Զիգֆրիդի ողբերգական պատմությունը կենտրոնականն է պիեսում: Պատերազմը դիմագրկել է նրան, հերքել անցյալը, և նրա բոլոր որոնումներն ըստ Լուիսյան նպատակամղված են ինքնահաշտնաբերմանը: Սակայն դժվար է ասել, գտնում է ինքն իրեն, թե՛ ոչ: Իրամատուրզն իր հերոսին թողնում է սահմանամերձ կայարանում. մի կողմում Գերմանիան է, մյուսում՝ Ֆրանսիան: Ի դեպ, Ժիրոդուն երկու Ֆրանսիա և Գերմանիա է տարբերակում՝ նկատի ունենալով ռազմատենչ շրջաններին և պատերազմի սկզբունքային հակառակորդներին: Սակայն գլխավոր հերոսի դիրքորոշումը չի հստակվում:

Երկու տարի անց Ժիրոդուն կրկին անդրադառնում է իր հերոսին՝ ստեղծելով «Զիգֆրիդի վախճանը» մեկ գործողությամբ դրաման: Այս անգամ հեքիաթս ին դրդյալում Զիգֆրիդը շրջապատված է բարեկամներով: Սակայն իշխանության կողմից ուղարկված մարդապանները մահացու վիրավորում են նրան հենց նույն տեղից, որտեղից վիրավորվել էր նա պատերազմի ժամանակ: Պատահական դիպվածն արթնացնում է նրա հիշողությունը, օգնում վերջապես հասնել ինքնահաշտնաբերման ու ինքնահաստատման, բայց ողբերգական կործանման գնով:

Ժիրոդու-դրամատուրգի հասուն վարպետության վկայությունն էր «Ամփիտրիոն 38» (1929) կատակերգությունը՝ «Ինտելեկտուալ դրամատուրգիայի» առաջին ու լավագույն նմուշներից մեկը:

30—40-ական թվականներին «Ինտելեկտուալ» (կամ՝ «բանաստեղծական»), «սյրոբլենային») դրամատուրգիան լայն տարածում ու մեծ ճանաչում ուներ Ֆրանսիայում: Ուղղությանը հարում էին գրական խոշոր անհատականություններ՝ Ժան Կոկտոն, Ժան-Պոլ Սարտրը, Ժան Անույը, Պոլ Կլոդելը, Անրի դը Մոնտերլանը, որոնք, խորապես մտահոգվելով կյանքի հակասություններով, հասարակական զարգացման որոշ հեռանկարներ նկատում էին, սակայն մնում արստրակտ հումանիզմի դիլքերում: Այստեղից էլ նրանց փիլիսոփայական-բարոյական գաղափարների վերացականությունը, որոնց արտահայտման համար դիմում էին անտիկ և բիբլիական միֆերին ու լեգենդներին:

«Ինտելեկտուալ դրամատուրգիայի» հիմնադրումը կապվում է Ժան Ժիրոդուի անվան հետ: «Ժիրոդուի թատրոնը» ամբողջության մեջ նոր երևույթ էր ազգային դրամատուրգիայում, որն ակնհայտորեն առանձնանում էր «զավ սարքված» կենցաղային պարզունակ պիեսների մթնոլորտում: Թատերական քննադատներից շատերը նկատում էին, որ Ժիրոդուի հետ միասին ֆրանսիական բեմ է վերադարձել պոեզիան: Լուի Ժուվեն՝ ժամանակի ամենանշանավոր ու առաջադեմ ռեժիսորներից մեկը, գտնում

էր, որ Ժիրոդոսին հաջողվել է տիրապետել «բեմական արվեստի գաղտնիքին», գրտնել հուզող «դրամատիկ թեմաներ», ստեղծել դրամատիկ ուրույն լեզու<sup>1</sup>:

Միֆոլոգիական ու բիբլիական սյուժեները դրամատուրգն օգտագործում էր ժամանակակից ու հրատապ պրոբլեմների առաջադրման համար: Ալքմենեի (Հերակլեսի մոր) մասին պատմող ստեղծագործությունը («Ամփիտրիոն ՅՑ») սուկ արտամքուստ կարող է զավեշտական թվալ: Ամփիտրիոնի փխրուն ու քնքուշ կինը, իր հետևողական սկզբունքայնությամբ ու աներեր հավատարմությամբ, մարմնավորում է մարդկայինն ու գեղեցիկը, որին հաղորդակցվելով, ասես, հոգևոր դարձի է գալիս նույնիսկ աստվածների արքան՝ անհողորդ Յուպիտերը (Ջևսը):

Արդարացիորեն բանաստեղծականացնելով հումանիզմը՝ դրամատուրգը միաժամանակ անողորքաբար մերկացնում էր քաղբենիական անհոգի հաշվեհաշտությունը և պետական իշխանությունների դաժանությունը: Ինչպես Ժիրոդոսի ողջ ստեղծագործության մեջ, այնպես էլ պիեսում առանցքային նշանակություն ունի հակապատերազմական թեման

«Հուդիթ» ողբերգության (1931) սյուժետային հենքը հրեական հերոսուհու մասին բիբլիական պատմությունն է: Սակայն դրամատուրգը բոլորովին այլ կերպ է ներկայացրել ու մեկնաբանել հայտնի լեգենդը:

Գերագույն քրմի պահանջով Հուդիթը գնում է Հողոփեռնեսի ճամբարը: Հրեուհուն դիմավորում է բիրտ ու դաժան ամբոխը, որը ոչ միայն վախ, այլև հաչրենակիցների նկատմամբ չարություն է առաջացնում աղջկա հոգում: Վայրենի ամբոխից Հուդիթին փրկում է Հողոփեռնեսը՝ հատուկ հանձնարարությամբ եկած հրեուհուն ներկայանալով որպես ազնվության ու գեղեցկության մարմնացում: Հողոփեռնեսը չի ճանաչում աստվածների իշխանությունը, հավատում է լոկ բնության օրենքներին ու բնական ըզզացմունքներին: Հուդիթն անկեղծորեն սիրում է նրան, սակայն կատարում է իր «պարտքը»: Նա սպանում է Հողոփեռնեսին:

Քրմերը փառաբանում են Հուդիթին որպես ժողովրդական հերոսուհու: Եվ հանկարծ նա սկսում է գիտակցել, որ չարաչար սխալվել է. սպանելով Հողոփեռնեսին՝ նա ինքն իր մեջ սպանել է մարդուն:

Դրամատուրգի ճպատակը լեգենդի ապահերոսականացումը չէր. Ժիրոդոսն թանձրացնում էր իրեն տանջող այն միտքը, որ ֆանատիկ հավատն ու կույր հնազանդությունը, ի վերջո, սպանում են մարդկայինը, մարդուն դարձնում պարզապես գործիք:

Ժիրոդոսի դրամատուրգիական գործունեության առաջին շրջանին, որն ավարտվում է «Ինտերմեցցո» կատակերգությամբ (1932), ընդհանուր առմամբ բնորոշ է միֆոլոգիական նյութի և մոտիվների ազատ մեկնաբանությունը: Անտիկ միֆերն ու աստվածաշնչյան լեգենդները նրան օգնում են մնայուն ու հրատապ պրոբլեմները քննել առօրեականից դուրս՝ ընդհանրացված ձևով: Այս առումով նա, իսկապես, մոտ է Ժան Կոկտոյին: Սակայն, ի տարբերություն Կոկտոյի, որը թանձրացնում է ճակատագրականի անհաղթահարելիությունը, Ժիրոդոսի ստեղծագործություններում դրամատիկական կոնֆլիկտները հիմնավորված են կենսական ռեալ ուժերի, աշխարհայացքների բախումով:

Նման մի բախում է 1934 թ. «Աթենել» թատրոնում բեմադրված «Տեսուս» պիեսի

<sup>1</sup> *Տե՛ս* Якимович Т. К. Драматургия и театр современной Франции, Киев, 1968, стр. 155



հիմքում: Դրամատուրգն այս անգամ դիմել էր անգլիացի արձակագրուհի Մարգրեթ Քեննեդիի «Հավատարիմ հավերժահարսը» վեպին՝ նրա սյուժետային հենքի վրա բարձրացնելով բուրժուական բարոյականության և բոլոր տեսակի նախապաշարմունքներից ազատ, մարդկային անխառն երազանքի կոնֆլիկտը: Ողբերգական հանգուցալուծումը (տասնյոթամյա Տեսասն մեռնում է կոմպոզիտորի ձեռքերի վրա) հաստատում է դրամատուրգի այն միտքը, որ կեղծիքի ու երեսպաշտության աշխարհում բացառված է անաղարտ տեսասների երջանկությունը, թեև անպայմանորեն նրանցն է բարոյական հաղթանակը:

Տեսական մի շարք աշխատություններում և «Փառիզյան էքսպրոմտ» (1937) կատակերգությունում Ժիրոդուն ձևակերպել է «գաղափարների դրամայի» մասին իր տեսակետները: Շեշտելով բանականության, ճշմարտացիության և բարձր գաղափարայնության անհրաժեշտությունը՝ դրամատուրգը միաժամանակ նկատում էր «Թատրոնը թեորեն չէ, այլ ներկայացում, դաս չէ, այլ ֆիլտր»: Բնականը պետք է արթնացներ երևակայությունը, զգացմունքները:

1935 թ. Ժան Ժիրոդուն հանդես է գալիս իր ամենանշանավոր՝ «Տրոյական պատերազմը չի լինի» պիեսով: Առաջադրվում էր ժամանակի ամենահրատապ ու կենսական հարցը՝ պատերազմի ու խաղաղության հարցը:

Ստեղծագործությունն սկսվում է Տրոյայի արքայորդի Հեկտորի կնոջ՝ Անդրոմաքեի բառերով. «Տրոյական պատերազմը չի լինի...»: «...Տրոյական պատերազմը կլինի»,— աներկմտանք պնդում է Հեկտորի բույրը՝ Կասանդրան, ասես, հավատարիմ մնալով իր գուշակությանը: Եվ այդպես ամբողջ պիեսը ներկայացնում է պատերազմի հակառակորդների ու ջատագովների ներքին անձայն ու բացահայտ պայքարը: Ստեղծագործական հատուկ մտահղացմամբ Ժիրոդուն ի վերուստ ժխտում է Օլիմպոսի դիցերի միջամտության հնարավորությունը՝ պատասխանատվությունն ամբողջովին թողնելով մարդկանց: Հեկտորն ուղղակի այդպես էլ ասում է. «Բոլոր մարդիկ պատասխանատու են»:

Հեկտորի ջանքերն ուղղված են պատերազմի կանխմանը: Մարտի դաշտից հենց նոր վերադարձած՝ նա «հանդիսավոր կերպով փակում է պատերազմի դարպասները»: Սակայն հակառակ էության ձայնին ու ջանքերին, նա համոզված է, որ անհնարին է կանխել պատերազմները, և այստեղ նրա անունից անհուն ցավով խոսում է հեղինակը. «Եթե բոլոր մայրերն իրենց որդիների աջ ձեռքի ցուցամատը կտրեն, ամբողջ աշխարհի բանակները կպատերազմեն առանց ցուցամատի... Եթե աջ ոտքը կտրեն, բանակները կլինեն միտամախ... Եթե աջքերը հանեն, բանակները ետք կլինեն, բայց բանակներ կլինեն, և նրանք, խառնաշփոթի մեջ շոշափելով, իրար կոկորդ կկրծեն»:

Սակայն անգամ այս գիտակցմամբ Հեկտորը չի համակերպվում սպագա սպատերազմի մտքի հետ և ամեն ինչ անում է այն կանխելու համար: Նրա հետ են Անդրոմաքեն և Հեկուբեն՝ մայրը, որոնց, սակայն, հակադրվում են մարտականորեն տրամադրված Պրիամոսը՝ Տրոյայի արքան, բանաստեղծ Իեմոկոսը և ուրիշներ: Անասելի ճիգերով Հեկտորին, ասես, հաջողվում է մեղմել հույն պատվիրակների՝ Ուլիսի (Ոդիսևս) և Այաքսի զայրույթը, նախապայմաններ ստեղծել հարցի խաղաղ լուծման համար: Բայց Այաքսի սպանությունը բացում է պատերազմի դարպասները: Իրականում է Կասանդրայի գուշակությունը:

Երկրորդ աշխարհամարտի նախօրեին, երբ գերմանական ֆաշիզմն ասվելի ու ավելի հեռուն էր տարածում իր ոճրագործ ձեռքերը, Ժիրոդուի պիեսը հնչում էր որ-

պէս նախազգուշացում ու կոչ ողջ մարդկությանը՝ ամեն կերպ կանխելու մոտայուտ արհավիրքը, սանձահարելու պատերազմի շատագովներին: Դրամատուրգը պարզորոշ գիտակցում էր, թե ուր կարող են հասցնել հասարակական հակասությունները, աշխարհի ժողովուրդներին ինչ ողբերգական ճակատագրի կարող էն դատապարտել դրանց գլոբալ դրսևորումները:

Երկու տարի անց Լ. Ժուլեն բեմադրում է Ժիրոդուի «Էլեկտրա» պիեսը: Ասենք, որ միֆոլոգիական գրեթե Լույն պոեմն ընդամենը երեք տարի հետո օգտագործելու էր նաև Ժան-Պոլ Սարտրը, սակայն բոլորովին այլ նպատակադրմամբ:

Պիեսի պրեմիերայից առաջ Ժիրոդուն, կարծես, կողմնորոշում էր հանդիսատեսին, մասնավորապես նկատելով, թե «չուրաքանչյուր դարաշրջանում հանդես են գալիս ահադարտ կերտվածքներ, որոնք չեն կարող հանդուրժել, որպեսզի սարսափելի հանցագործությունները մոռացվեն»: Պիեսի գլխավոր հերոսուհին հենց սոլյախի կերտվածք է, և նրա անհատական դիրքորոշման արդարացիությունը հաստատելու համար դրամատուրգը որոշակիորեն վերափոխում է միֆոլոգիական հայտնի պոեմն: Արգոս քաղաքին կործանման վտանգ է սպառնում. միայն Էգիսթոսը կարող է դիմագրավել օտար զորքերին: Սակայն նա համաձայն է արգոսցիների դիմադրությունը գլխավորել լոկ այն պաշտանով, եթե Էլեկտրան համաձայնի իր մոր Կլիթեմնեստրայի և հորն սպանող Էգիսթոսի ամուսնությանը: Ինչպես և «Հուդիթ» ողբերգության մեջ, այստեղ ևս հերոսուհին կանգնում է վճռական ընտրության առաջ: Բայց եթե Հուդիթը ֆանատիկ ամբոխի ճնշման տակ զոհաբերում է իր սերը, ապա Էլեկտրան չի դավաճանում իր բարոյական սկզբունքաչնությանը՝ արդարացիորեն մահվան դատապարտելով մարդասպան Էգիսթոսին:

Նախապատերազմյան տարիները թեև ոչ մի լավ բան չէին խոստանում, այնուամենայնիվ դրամատուրգին չէր լքում հումանիստական իդեալների նկատմամբ հավատը: Այդ հավատով կյանքի կոչվեցին «Երգ երգոց» (1938) և «Ունդինա» (1939) պիեսները

1940 թ. Ժիրոդուն թողնում է դիվանագիտական աշխատանքը և ակտիվորեն մասնակցում Դիմադրության շարժմանը, կատարում նրա դեկավարության հանձնարարությունները: 2ի դաշարեցնում նաև դրամատուրգիական գործունեությունը: Սակայն պատերազմի տարիներին ստեղծված նրա պիեսները («Ապոլոն դը Բելլակ», «Լուկրեցիոսի համար») Ֆրանսիայում բեմ չէին բարձրանում: Որպես բացառություն կարելի է հիշատակել «Սողոմ և Գոմեր» (1943) ստեղծագործությունը, որ բեմադրվեց «Էբերտո» թատրոնում՝ դեռևս պատանի Ժերար Ֆիլիպի մասնակցությամբ:

1942 թ. Ժիրոդուն հանդես է գալիս «Ելակորույսը Շալոյից» սոցիալական պիեսով: Շահույթի համար քաղաքը կործանելու պատրաստ ֆինանսական մագնատների դեմ դրամատուրգն արդարացի պայքարի է հանում շարքաչին ֆրանսիացիների, որոնք ոչ միայն դիմակալեթոմ են հղիացած վերնախավին, ուղղակիորեն հերքում նրանց հակամարդկային գործունեության իրավունքը, այլև ահհավասար պայքարում հաղթանակ են տանում:

Պիեսն առաջին անգամ Փարիզում բեմ բարձրացավ 1945 թ. դեկտեմբերի 19-ին՝ դրամատուրգի մահից հետո:

Ժիրոդուն վախճանվեց 1944 թ. հունվարի 31-ին, փարիզյան «Կաստիլ» հյուրանոցում: Ենթադրվում է, որ նրան սպանել են գերմանական զաղտնի ոստիկանության ծառայողները:

Ժան Ժիրոդուն խոր հետք է թողել Ֆրանսիայի գրական կյանքում, մասնավորապես դրամատուրգիայում: Պատահական չէ, որ երկրի ամենահեղինակավոր թատե-

բազետները 30—40-ական թվականները համարում են «Ժիրողուի ժամանակաշրջան»։ Նրա հումանիտական բարձր արվեստն այսօր էլ արդիական հնչեղություն ունի։

## ՏՐՈՅԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԶԻ ԼԻՆԻ

Առաջին անգամ բեմադրվել է 1985 թ. նոյեմբերի 22-ին, Փարիզի «Աթենայ» թատրոնում՝ ռեժիսոր Լուի Ժուվեի ղեկավարությամբ։

1 Կասանդրա— տրոյական Պրիամոս արքայի դուստրը, գուշակուհի, որին դրժբախտ ճակատագրի էր դատապարտել Ապոլոնը։ Կասանդրան վաղօրոք գուշակում է Տրոյայի կործանումը։

2 Անդրոմաքե— Հեկտորի կինը, փոքրասիական Թերե քաղաքի արքա Էթիոնի դուստրը։

3 Հեղինե— անպրոպային Չուսի և Լեդայի դուստրը, Սպարտայի արքա Մենելայուսի կինը։

4 Հեկտոր— Տրոյայի արքայորդին, որին սպանում է Աքիլեսը։

5 Պարիս— Գան՝ Ալեքսանդր (ուժեղ, անհաղթ)։ Հեկտորի եղբայրը։

6 Տրոյա— կամ՝ Իլիոն. հնագույն քաղաք Փոքր Ասիայի հյուսիս-արևելքում։ XIX դարի 70-ական թվականներին պեղումներով հայտնաբերել է գերմանացի հնագետ Հենրիխ Շլիմանը (1822—1890)։ Ըստ ավանդության, քաղաքը հիմնադրել է Իլոսը։

7 Պրիամոս— Գան՝ Պոդարկոս. Լաոմեդոնի կրտսեր որդին, որը փրկագնվել է հունական հերոս Հերակլեսից (այստեղից էլ՝ Պրիամոս, գնված)։ Տրոյայի տիրակալը։

8 «Չնչպես Վեներան, նրա սատնությունը ծնվել է փրփուրից»— սիրո, գեղեցկության աստվածուհի Վեներան (հուն. Աֆրոդիտե), մի ավանդության համաձայն, ծնվել է ծովի փրփուրից։

9 Մենելայոս— Սպարտայի թագավորը, Հեղինեի ամուսինը։

10 Սքամանդրյան դարպասներ— կոչվում են տրոյական երկրի Սիքամանդեր, գետի անունով։

11 Սքեսկան դարպասներ— կամ՝ Սիքլյան դարպասներ. քաղաքի սրևնուղան դարպասները։

12 «Նրանք կարծում են, թե Վեներան է Հեղինեին պարգևել մեզ, որպես փոխհատուցում Պարիսին, բանի որ Պարիսն առաջին հայացքից խնձորը շնորհեց գեղեցկության աստվածուհուն»— խոսքը «ամենագեղեցիկին» մակագրությամբ այն ոսկե կովախնձորի Վասին է, որ Պելևսի և Թետիսի հարսանյաց հանդեսի ժամանակ անկատ զցեց երկաստակության աստվածուհի Էրիսը։ Չուսի կամքով Հերակլի, Ալեքսանի և Վեներայի (Աֆրոդիտեի) վևը, որոնցից յուրաքանչյուրն էլ հավակնում էր սմենագեղեցիկը լինել, պետք է լուծեր Պարիսը։ Վեներան վերջինիս խոստանում է գեղեցկուհի Հեղինեին, և Պարիսն անվարան խնձորը շնորհում է նրան՝ հետագաում աստվածուհու օգնությամբ սունանգելով Հեղինեին։

13 Հեկուբա— (Գան Հեկուբե) Հեկտորի և Պարիսի մայրը, Պրիամոսի կինը։

14 Ուլիս— տրոյական պատերազմի հույն նշանավոր հերոս Ուլիսեսն է, որ փայտաշեն ձիու մեջ թաքնված թափանցեց Տրոյա՝ երկարատև պաշարումից հետո ապահովելով քաղաքի գրավումը։ Իթակեի թագավորն է, Հոմերոսի «Ոդիսական» պոեմի գլխավոր հերոսը։

15 **Տրոխիուս**— Պրիամոսի որդին, Հեկտորի եղբայրը:

16 **Գորգոն**— հունական առասպելաբանության մեջ կանացի կերպարանքով հրեշ-  
ներ, որոնց սագերի փոխարեն օձեր էին, հալացքով քարացնում էին ամեն բան:

17 **Մեդուսա**— այստեղ՝ երեք գորգոններից մեկը, որին սպանեց Դանաուսի և  
Ջևսի որդի Պերսևսը:

18 **Մագնեզիա**— թեսալական երկրամաս:

19 **Ալաբա**— ըստ Հոմերոսի «Իլիականի» հունական կողմում տրոյացիների դեմ  
կռվում էին կրկու Ալաբաներ: Դրամատուրգը նկատի ունի դրանցից մեկին:

20 **Սիրակուզ**— հին հունական քաղաք Սիցիլիա կղզում: Հիմնադրվել է մ. թ. ա.  
734 թ.: Մ. թ. ա. 211 թ. գրավել են հռոմեացիները: Ներկայումս նույն վայրում  
գտնվում է ժամանակակից Սիրակուզ քաղաքը:

21 **Հելեպոննես**— Դարդանելի նեղուցի հին հունական անվանումը:

22 **Փոչուգիա**— հնագույն երկիր Փոքր Ասիայի հյուսիս-արևմուտքում. մ. թ. ա.  
X—VIII դդ.՝ թագավորություն:

23 **Անքիս**— ամենայն հավանականությամբ նկատի ունի դարդանական երկիրը,  
որը կոչվում է նրա տիրակալի՝ Անքիսի (Էնևասի հոր) անունով:

24 **Թրակիա**— պատմական երկրամաս Բալկանյան թերակղզում՝ Էգեյան, Սև և  
Մարմարյա ծովերի միջև:

25 **Պոնտոս**— կամ՝ Պոնտոսի թագավորություն. հելլենական պետություն Փոքր  
Ասիայում, Սև ծովի հարավային ափին մ. թ. ա. 302—64 թթ., որը ծաղկման է հա-  
սել Միհրդատ VI-ի թագավորության օրոք: Մ. թ. ա. 64 թ. միացվել է հռոմեական  
կայսրությանը:

26 **Տավրիդ**— Դրիևի թերակղզու հին անվանումը:

27 **Աֆրոդիտե**— սիրո և գեղեցկության աստվածուհին հունական դիցաբանու-  
թյան մեջ (Վեներա). առասպելական մի տարբերակի համաձայն Ջևսի և օվկիանու-  
հի Դիոնեի դուստրը:

28 **Պենելոպե**— տրոյական պատերազմի հերոս Ոդիսևսի (Ուլիս) կինը:

29 **Իրիս**— ծիածանի աստվածուհի հունական դիցաբանության մեջ: Համարվել է  
միջևորդ մարդկանց ու աստվածների միջև՝ հաղորդելով վերջինների կամքը:

30 **Աթենաս Պալլաս**— Ջևսի դուստրը, որն, ըստ առասպելի, ծնվել է աստված-  
ների արքայի գլխից: Համարվել է քաղաքների պաշտպանը, իմաստության ու գի-  
տելիքների. աստվածուհին և Հունաստանի հերոսների հովանավորը:

31 **Ջևս**— Հռեայի և Բրոնոսի որդին, հույների գերագույն աստվածը, աստ-  
վածների և մարդկանց թագավորն ու հայրը: Հռոմեական դիցաբանության  
մեջ՝ Յուպիտեր:

32 **Ինդիգո**— կապույտ գույնի ներկանյութ, որ հնագույն ժամանակներում  
ստացվում էր բույսերից:

33 **Սպարտա** — քաղաք-պետություն Հին Հունաստանում: Մ. թ. ա. 146 թ. են-  
թարկվել է Հռոմին:

34 **Թերե**— հին հունական քաղաք, որ մ. թ. ա. VI—IV դդ. համարվում էր հու-  
նական քաղաքների Բեոլիսիական միության կենտրոնը:

35 «Տրոյական պոեռը մեռած է... Խոսքը տրվում է հունական պոետին»—նկա-  
տի ուժի Հոմերոսին, որն «Իլիական»-ում ներկայացնում է Տրոյական պատերազմը:



Ծնվել է ապրիլի 13-ին Դուբլինում, բողոքականների ընտանիքում: Կրթությունն ըստացել է ծննդավայրում: Երկու տարի (1928—

1929) դասախոսել է Փարիզում: Հենց այստեղ էլ սերտ կապեր է հաստատում Ջ. Ջոյսի և նրա գրական խմբակի հետ: 1931 թ. թողնում է աշխատանքը Դուբլինի Թրինիթի քոլեջում, շրջագայում եվրոպական մի շարք երկրներում և 1937 թ. վերջնականապես հաստատվում Փարիզում:

1938 թ. անգլերենով լույս է տեսնում հեքթի «Մերֆի» վեպը: Լայնակտալ առաջին իսկ նրկով հեքթի թացահայտում էր ստեղծագործողի իր մոդեռնիստական «ավանգարդիստական» ընդգծված հակումները: Սակայն գրականություն մտնելով, իր հայրենակցի՝ Ջ. Ջոյսի փորձի անմիջական ազդեցությամբ՝ նա շատ ավելի հեռուն զնաց մոդեռնիստական իր փորձարարություններով:

Նույնիսկ ավանդական ձևի մեջ «Մերֆին», որի տարօրինակ գլխավոր հերոսին անգլիացի բննադատներից մեկը բնորոշում էր որպես «աշխարհի քաղաքացի», լուրջ մտավախության ու տարակուսանքների տուաշ կանգնեցրեց հրատարակիչներին: Սակայն հրատարակումից հետո վեպն անարձագանք չմնաց: Ուշագրավ էր հատկապես անգլիացի բանաստեղծ Դիլն Թոմասի գրախոսությունը:

Գրողի հոգևոր ու ստեղծագործական Լվույուցիայի համար կարևոր շրջան էին երկրորդ համաշխարհային պատերազմի տարիները: հեքթին ակտիվորեն մասնակցում է Դիմադրության շարժմանը՝ հանդես գալով «Սեն» և «Իռլանդացի» կեղծանուններով: Շուտով նրա խումբը թացահայտվում է. հեքթը ստիպված թողնում է Փարիզը և ապաստանում Ռուսիլիոնում: Այստեղ էլ սկսում է «Ուոթ» վեպը, ուր պարզորոշ արտահայտված են թացահայտ անգործության մատնված, անօգնական ու անհույս անհատի հոգեկան ծանր դեգերումները: Այրածի ու զգացածի գեղարվեստական թացահայտումն օրինաչափորեն նպաստում է օտար ազդեցությունների (հատկապես Ջ. Ջոյսի) հաղթանարմանը: Մյուս կողմից ավելի ու ավելի են թանձրանում-որոշակիանում գուտ բեքթյան գեղագիտական սկզբունքները:

«Ուրթ»-ին վիճակվեց ճիշտ «Մերֆի»-ի ճակատագիրը: Ըստ էության ոչինչ չփոխեց նաև «Մոլլոյ» վեպը (1951):

Միանգամայն իրավացի են այն բննադատները, որոնք գտնում են, որ «Սամյունել Բեքեթի ստեղծագործությունը գրականագետներին մշտապես դժվարություն է պարբերում էր առաջադրում»: Ամենադիպուկ բնորոշմամբ, գեղարվեստական արձակի բնագավառում Բեքեթը փորձում էր հաստատել «անտիվեպի» իր սկզբունքները, ըստ այդմ, ինչպես Ֆրանսիացի հետազոտողներից մեկն է նկատում, իրենից հետ թողնելով Ջոյսին, Կաֆկային, Ռոբ-Գրիյեին, Բյուսթրին և Սարրոթին:

Թեև գրական շրջանների վերաբերմունքը միանշանակ չէր, և «Մելունը մեռնում է» (1951) վեպը որոշակի բեկում էր նախանշում, այնուամենայնիվ, Ս. Բեքեթի գրական «բումը» սկսվեց «Գողոթին սպասելիս» պիեսով:

Փարիզի թատերական հասարակայնությունը ցնցված էր ու շփոթված: Հայազգի Արթուր Ադամովի «Պարոդիա» (1947) և ծագումով ռուսինացի Էժեն Իոնեսկոյի «Աթոռներ» (1952) պիեսներով ֆրանսիական «աբսուրդ» դրամատուրգիան (կամ՝ անտիդրաման) արդեն հաստատել էր իր գոյությունը\*: Սակայն Բեքեթի սյուրռեալիստական դրաման այդ շարքում ընդամենը հաջորդը չէր: «Գողոթին սպասելիս» պիեսը շատ ավելի հատկանշական էր որպես դրամատուրգիական տվյալ ուղղության «էտալոն»: Անհատի օտարման մոտիվն այստեղ բացառիկ շեշտված է, և ստեղծագործական ակներև միտումով, գեղարվեստական տարաբնույթ պայմանականությունների օգտագործմամբ անվերապահ հաստատվում է գոյության անմտությունը (աբսուրդը):

Բեքեթյան հերոսների՝ Վլադիմիրի ու Էստրադոնի սպասման անմտությունը սկզբից ևեթ կասկածի տեղիք չի տալիս: «Սպասում ենք Գողոթին» արտահայտությունը յուրօրինակ նշանաբանի ճշգրտությամբ հաճախակի կրկնում է հերոսներից յուրաքանչյուրը: Գողոն կգա և վերջ կտա իրենց թշվառությանը. հույսի այս միակ թելն է երկու թշվառներին կապում կյանքի և աշխարհի հետ: Սակայն նրանք համոզված չեն, որ սպասում են պայմանավորված վայրում, չգիտեն, թե շաբաթվա որ օրն է խոստացել գալ Գողոն: Ավելին, նրանք նույնիսկ չգիտեն, թե ով է Գողոն: Այս և նման իրողությունները հաստատում են նրանց սպասումի աբսուրդը:

Այնուամենայնիվ, ո՞վ է Գողոն: Այս հարցը զբաղեցրել ու զբաղեցնում է ոչ միայն շարքային թատերասերներին ու ընթերցողներին, այլև բննադատ-գրականագետներին: Վերջիններիցս ոմանք, նկատի ունենալով գուտ բառային ասոցիացիան՝ *Godot-god* (անգլ. աստված), հակված են տեսնելու ասածուն՝ այդ կերպ կրոնական երանգավորում «հալտաբերելով» դրամատուրգի ամենալակական հարցադրումներում: Ի հակակշիռ դրանց, Բեքեթի կենսագիրներից մեկը՝ Գ. Բեռը, նկատելով որ դրամատուրգը շատ վաղ է հեռացել կրոնից և քրիստոնեությունը նրա համար գոյություն է ունեցել սոսկ որպես առասպելաբանություն (միֆոլոգիա), վկայակոչում է հենց իր՝ Բեքեթի խոսքերը. «Ես քաջատեղյակ եմ քրիստոնեական միֆոլոգիային... Մանուկ հասակում ինձ համար կարդացել են Աստվածաշունչը, և ես ինքս էլ կարդացել եմ ուրիշների ստեղծագործությունները, որոնց վրա նա ազդել է, և որոնք այս կամ այն ձևով օգտագործել են այն: Ինչպես գրական բոլոր հնարաններից, ես նրանից օգտ-

<sup>1</sup> *SL* PЖ. Общественные науки за рубежом Литературоведение, 1981, № 1, стр 183.

\* Աբսուրդ դրամատուրգիայի մասին ավելի հանգամանակից տե՛ս «XX դարի արտասահմանյան դրամատուրգիա», հ. 1, Երևան, 1988, էջ 529—533:

վում են այն դեպքում, երբ անհրաժեշտ է: Բայց ասել, թե իբր այն ինձ վրա խոր ազդեցություն է թողել, կամ՝ որ ես ամեն օր կարդում եմ այն և նման բաներ, բացարձակ անմտություն է»<sup>2</sup>:

Մյուս կողմից, հենց պիեսում անուղղակիորեն հերքվում են Նոր կտակարանով վավերացված մի շարք կրոնական ճշմարտություններ: Այնպես որ հեղինակի կրոնական մոլորությունների մասին խոսք լինել չի կարող: Եթե նույնիսկ Գողոն, իբրք, աստված է, ապա բացառելով նրա գալուստը և իմաստագրկելով Վլադիմիրի ու Էստրազոնի սպասումը, Բեքեթը դրանով իսկ հերքում է ոչ միայն նրա նկատմամբ հավատը, այլև նրա գոյությունն ընդհանրապես:

Հարցի պատասխանը, թերևս, պետք է փնտրել դրամատուրգիական այն կոնցեպցիայի առանձնահատկություններում, որոնք ամբողջության մեջ նպատակաուղղված են հիմնական գաղափարի, այն է՝ մարդկային գոյության անմտության, մարդու անհաղթահարելի դատապարտվածության հաստատմանը:

Պիեսի առաջին գրախոսներից մեկը ընդհանրացնող բովանդակություն էր տեսնում Բեքեթի երկում՝ նկատելով, թե «երկու թափառաշրջիկները ներկայացնում են ողջ մարդկությունը»: Մինչդեռ անգլիացի թատերագետ Ք. Թայնենը այն բնորոշում էր որպես «դրամատուրգիական վակուում»<sup>3</sup>:

Դեռ 30-ական թվականների սկզբին, Մարսել Պրուստի ստեղծագործությանը նվիրված ուսումնասիրության մեջ բացահայտելով արվեստի իր ըմբռնումը՝ Ս. Բեքեթը այն բնութագրում էր որպես մեկության մեծարում, բացառելով մարդկանց փոխըմբռնման հնարավորությունը: «Գողոյին սպասելիս» պիեսում մարդագիտական այդ կոնցեպցիան, որ անմասն չէ Էկզիստենցիալիզմի թանձր նստվածքներից, դրսևորվում է Լաբրի Էպիզոդիկ կերպարի մտահղացմամբ:

Այնուամենայնիվ, անհնարին է հավատալ բեքեթյան հերոսների անգործության հասնող պասսիվությանը: Անհատի օտարման մոտիվը, պայմանավորված հեղինակի թանձր, անհաղթահարելի հոռետեսությամբ, բարձրացված է բացարձակ ճակատագրականի աստիճանի:

Այդ ամենով հանդերձ «Գողոյին սպասելիս» պիեսը առանձնանում է Ս. Բեքեթի դրամատուրգիական ժառանգության մեջ, և առաջին հերթին անհերքելիորեն մարդկային մտահոգություններով, մարդու երկրային ճակատագրին առնչվող մնալուն հարցադրումներով:

Դրամատուրգի հետագա ստեղծագործություններում արտորդի մոտիվն ավելի է թանձրանում, մոդեռնիստական պայմանականությունների ընտրության մեջ խտրություն չի դրվում: 1957 թ. Բեքեթը հանդես է գալիս «Ժաղափարտը» պիեսով շեշտը դնելով հոռետեսության ու արտորդի բացարձակացման վրա: Իսկական իմաստով գործողություններ պիեսում չկան: Չորս գործող անձինք, որոնք ներկայացնում են նույն ընտանիքի երեք տարբեր սերունդները, միայն անկապ ու անիմաստ ռեպլիկներ են փոխանակում: «Դանդաղ մահվան» դատապարտված այդ մարդկանց միակ զգացումը փոխադարձ անզուսպ առեկությունն է: Ի դեպ, Բեքեթը այս պարագային մահը մեկնաբանում է ոչ թե որպես կյանքն ընդհատող երևույթ, այլ իբրև մարդու ծննդյան պահից սկսված ու շարունակվող պրոցես:

Հետագա տարիներին բեմի և ռադիոյի համար Բեքեթը անգերեհով գրում է մի

<sup>2</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 178:

<sup>3</sup> Тайнен К. На сцене и в кино, М., 1969, стр. 62

շարք փոքրիկ պիեսներ («Կրասի վերջին ժապավենը», «Լսիր, Ջո՛» և այլն): Իսկ 1961 թ. Նյու Յորքում բեմադրվում է նրա «Երջանիկ օրեր» ստեղծագործությունը:

Պիեսից ստացված առաջին տպավորությունն այն է, թե հանդիսատեսին շլացնելու համար հեղինակը պատրաստ է մինչև վերջ խորանալ գեղարվեստական պայմանականության հավանական բոլոր սահմաններն անգոսնող արտասովորի աշխարհում: Մասամբ այլ էֆեկտների առկայությամբ պետք է բացատրել տարբեր թատրոնների ու ռեժիսորների հետաքրքրությունը Ս. Բեքեթի ստեղծագործության նկատմամբ:

Սակայն այդ ամենը, թերևս, պիեսի արտաքին կողմն էր, որը կոչված էր շեշտելու հեղինակի առանցքային հարցադրումը: Փրեցօր ավագի մեջ ավելի խորացող կնոջ կերպարը, որը հակառակ մոտալուտ մահվան, չի տրվում բեքեթյան մեկնաբանությանը դաժան ու անշրջելի ճակատագրին, ասես վավերացնում է մարդու հոգևոր ուժի անպարտելիության գաղափարը: Եթե նույնիսկ ընդունելու լինենք դրամատուրգի ստեղծագործությանը բնորոշ դատապարտվածության մոտիվի և գոյության անմտության շեշտադրումը, պիեսի հերոսի մարդկային լավատեսությունը չի դադարում որպես այդպիսին գիտակցվելուց: Այդ նկատառմամբ, իսկապես, դիպուկ է պիեսին էլզա Տրիոլեի տված բնորոշումը՝ «Մահվանից ուժեղ»<sup>4</sup>:

«Խաղ» պիեսով (1963) Ս. Բեքեթը գերազանցում է «աբսուրդ» թատրոնի երկրպագուների ակնկալիքները՝ գրեթե սպառելով մոդեռնիստական պայմանականությունների զինանոցի բոլոր հնարավորությունները: Ֆրանսիական բեմին բաջածանոթ «եռանկյունին» (կին, ամուսին, սիրուհի) այստեղ ներկայացվում է կավն փիթխարի սափորներում: Երկխոսություններին փոխարինում են «իմաստալից» գունախաղերը և անկապ փնթփնթոցները: Եվ այդպես ամբողջ պիեսի ընթացքում: Բեքեթն ակնհայտորեն առարկայացնում է անհատի օտարման, մարդկանց փոխբնթման բացարձակ անհնարինության մասին այն գաղափարը, որը նրա ստեղծագործական որոնումների ուղեմիջն է եղել:

Այնուհանդերձ պետք է նշել, որ Ս. Բեքեթի հոռետեսությունը, նրա դրամատուրգիական ողջ ժառանգությունը երանգավորող անկումային տրամադրությունները գլխավորապես արդյունք են դեպի փակուղի տանող, որոշ առումով մակերեսային որոնումների, մարդկայնորեն հասկանալի ու գնահատելի, բայց ըստ էության ծայրահեղացված ու հանախ անելանելի մտահոգությունների: Եվ բոլորովին տարօրինակ պիտի չթվա, որ ֆրանսիական Դիմադրության մասնակից Բեքեթը 60-ականների կեսերին հանդես էր գալիս ռասիզմի դեմ, ստորագրում հակառասիստական դեկլարացիաներ:

1969 թ. դրամատուրգին շնորհվում է Նոբելյան մրցանակ: Եվեղական ակադեմիայի հաղորդագրության մեջ այդ առթիվ մասնավորապես նշվում էր. «Բեքեթը դրամատիկական և գրական նոր ձևերի օգնությամբ ցույց տվեց ժամանակակից մարդու թշվառությունը: Նրա ստեղծագործությունը հառնում է մեր անպտուղ երկրի վրա որպես գթության թախանձանք հանուն ողջ մարդկության, իսկ նրա ձայնի խուլ, մեղամաղձիկ հնչյունը ազատություն է շնորհում նեղյալներին և մխիթարություն՝ հուսահատներին»<sup>5</sup>:

<sup>4</sup> *SL*՝ *Якимович Т. К.* Драматургия и театр современной Франции, Киев, 1968, стр. 58:

<sup>5</sup> *SL*՝ *Якимович Т. К.* Французская драматургия на рубеже 1960—1970-х годов, Киев, 1973, стр. 65:



Ակներև չափազանցությունները չեն բացառում որոշ ճշմարտություններ:

«...Աբսուրդիզմը դարձավ օրթոդոքսալ բուրժուական արվեստի մի մասը և իրեն սպառեց 60-ական թվականների ավարտին»<sup>6</sup>,— նկատում է սովետական հետազոտողներից մեկը: Եվ, իսկապես, տասնամյակի վերջերից Ս. Բեքեթի և Է. Իոնեսկոյի ստեղծագործություններն արդեն սկսում են հրատարակել «ֆրանսիական գրականության դասականներ» մատենաշարով, իրողություն, որն, անշուշտ, վավերացնում էր նաև նրանց շուրջ եղած էրբեմնի մեծ հետաքրքրության բացահայտ տեղատվությունը:

Սա ամենն, իհարկե, չի բացառում աբսուրդիստների ժառանգության նշանակությունը: Չանտեսելով նրանց գաղափարական վրիպումները և թյուրըմբռնումները, որոնք բնություն չբռնեցին դեռ իրենց ժամանակին, պետք է ըստ արժանվույն գնահատել դարի դրամատուրգիական ավանդույթներն հարստացնող հաջողված ստեղծագործությունները: Ս. Բեքեթի «Գողոյին սպասելիս» պիեսը դրանց թվում է:

### ԳՈՂՈՅԻՆ ՍՊԱՍԵԼԻՍ

Գրել է 1952 թվականին՝ ֆրանսերեն, հետագայում անձամբ թարգմանելով նաև անգլերեն: Առաջին անգամ բեմադրվել է 1953 թ., Փարիզում: Ներկա թարգմանությունը կատարված է անգլերեն տարբերակից:

1 «Ուշացած հույսը կհիվանդացնե...»— «Ուշացած հույսը կհիվանդացնե, բայց կատարված փափազը կենաց ծառ 1» (տե՛ս «Գիրք սոսկաց», գլ. ԺԳ):

2 «Ես հիշում եմ Ավետյաց երկրի քարտեզները»— ամենայն հավանականությամբ սկնարկում է Աստվածաշնչին կցվող քարտեզները:

3 «Դրանք երկու ավազակ էին, որ խաչվեցին նույն ժամանակ, ինչ որ մեր Փրկիչը»— Նոր կուսկարանի բոլոր ավետարաններում հիշատակություն կա այն մասին, որ Քրիստոսի հետ միասին խաչվում են նաև երկու չարագործներ:

4 «...ինչպե՛ս է, որ չորս ավետարանիչներից միայն մեկն է խոսում փրկված ավազակի մասին»— ըստ Լուկասի ավետարանի, խաչված ավազակներից մեկին մեղքերը գիտակցելու համար Քրիստոսը դրախտ է խոստանում (տե՛ս Լուկաս, գլ. ԻԳ): Մյուս երեք ավետարանիչների մոտ նման հիշատակություն չկա:

5 «Ատլաս, Յուպիտերի որդի»— սկնարկում է երկնակամարը պահող Ատլասին՝ Պրոմեթեոսի եղբորը, նրան համեմատելով ճամպրուկների ծանրությունը կրող Լաքիի հետ:

6 Կատուլլոս— Գայոս Վալերիոս Կատուլլոս (մ. թ. ա. 87—54 թթ.), հռոմեացի բանաստեղծ, սիրերգակ:

7 Ծիլլինգ— անգլիական մետաղադրամ և դրամական միավոր (մինչև 1971 թ.):

8 Միրանդա— Ակադի ունի Ուերա՛ մոլորակի արբանյակը, որ 1948 թ. բացահայտել է ամերիկացի գիտնական Զ. Քոլլիերը:

9 Սեմյուել Ջոնսոն— անգլիացի գրող և բառարանագիր (1709—1784): Հեղինակ է մի շարք բարոյական-դիդակտիկ աշխատությունների և անգլիացի նշանավոր բանաստեղծների կենսագրական ուսումնասիրության:

10 Ունցիա— զանգվածի չափման միավոր: 1 ունցիան հավասար է 28,35 գ:

11 Ռոնա— գետ Ծվեյցարիայում և Ֆրանսիայում. Սկիզբ է առնում Ալպերից:

12 Կյուրե— կաթուղի քահանա:

13 Պիրենեյներ— լեռնաշխարհ համակարգ, որն անցնում է Իսպանիայով, Ֆրանսիայով և Անդորայով:

<sup>6</sup> Տե՛ս «История зарубежного театра», ч. III, М., 1977 стр 28



Ծնվել է հունիսի 23-ին, Բորդո քաղաքում: Տասնինը տարեկանում տեղափոխվում է Փարիզ և ընդունվում Սորբոնի համալսարանի իրավաբանական ֆակուլտետը: Ուսանողական տարիներին էլ հետաքրքրվում է թատրոնով, կատարում դրամատուրգիական առաջին փորձերը: Պատանին հատկապես տարված էր Պոլ Կլոդելի և Լուիջի Պիրանդելլոյի երկերով, Լուի ժուլեի ռեժիսորական աշխատանքով:

Շուտով նյութական դժվարությունները Անույին ստիպում են թողնել ուսումը: Ծն-րջ երկու տարի նա աշխատում է մայրաքաղաքի ռեկլամային հրատարակչություններից մեկում: 1931 թ. ծանոթանում է Լուի ժուլեի հետ և որոշ ժամանակ կատարում նրա քարտուղարի պարտականությունները:

1932 թ. Փարիզի թատրոններից մեկում բեմադրվում է երիտասարդ դրամատուրգի «Կնգում» պիեսը, որն անմիջապես զրավում է թատերական բննադատների ուշաբրությունը: Հիճգ տարի անց Ժորժ Պիտոկը բեմադրում է Անույի «Մանապարհորդն առանց ուղեբեռի» և «Վայրենին» պիեսները, որոնք լայն ճանաչում են բերում հեղինակին:

Անույը թատերական աշխարհ մտավ ոչ միայն վաստակաշատ նախորդների, այլև ավագ ժամանակակիցների դրամատուրգիական փորձը խորապես յուրացրած: Բավական մեծ էր հատկապես Ժան Ժիրոդոյի «ինտելեկտուալ թատրոնի» ազդեցությունը: Իտալացի դրամատուրգ Լ. Պիրանդելլոյից նա սովորեց հմտորեն օգտագործել զուտ թատերական խաղը:

Մյուս կողմից, աշխատելով Փարիզի Բուլվարների թատրոնների համար, դրամատուրգը կամա թե՛ ակամա ստիպված էր հաշվի առնել հանդիսատեսի պահանջարկը և ըստ այդմ որոշակիորեն հավատարիմ մնալ «լավ սարքված պիեսների» ազգային ավանդույթներին: «Իրամատուրգի պատվի գործն է լինել պիեսների ֆարսիկանո: Մենք ամենից առաջ պետք է բավարարենք դերասանների պահանջմունքը՝ ասենք երեկո խաղալ հանդիսատեսի համար, որը գալիս է թատրոն, որպեսզի մոռանա մտածել իր անախորժությունների և մահվան մասին: Իսկ եթե երբեմն նաև գլուխգործոց է ստացվում, ավելի լավ»<sup>1</sup>,— նկատում էր ինքը՝ Անույը:

<sup>1</sup> «История западноевропейского театра» т. 7, М., 1985, стр 102

Այնուամենայնիվ, խոստովանությունը չի կարելի բացարձակ նշանակությամբ ընկալել, որովհետև նրա ստեղծագործական փորձն ամբողջության մեջ մեկ այլ՝ առավել տրամաբանական ու համոզիչ իրողություն է բացահայտում. դրամատուրգի ուղին սերտորեն կապված է հասարակական կյանքի զարգացման հետ և նախորդված պատմության ընթացքով: Անույր խորապես հաղորդակից է բուրժուական իրականության հակասություններին, կեցության պրոբլեմներին: Այդ ամենն ակնհայտ էր դեռևս «Կնգում» պիեսում, որի գլխավոր հերոսը՝ Ֆրանցն ընդվզում էր սոցիալական շերտավորման դեմ:

Հակաբուրժուական մոտիվները կենտրոնականն են «Վայրենին» պիեսում: Չքավոր երաժիշտների դուստր Թերեզան չի համակերպվում պերճանքի ու փայլի, անհոգ բարեկեցության իր նոր միջավայրին: «Կարելի է մտածել, թե աշխարհում, որ կողմը ուզում էս նայիր, ամենուրեք միայն երջանկություն է: Ուրեմն, լսեցն՝ք: Այո՛, էս ուզում եմ փրկվել այդ երջանկությունից: Այո, էս չե՛մ ուզում, որ այն ինձ ողջ-ողջ խժռի: Ես ուզում եմ առաջվա պես տանջվել, տառապել, ոռնալ ցավից»<sup>2</sup>,— նետում է Անույի հերոսուհին: Բարեկեցության վարդագույն, բայց անհոգի աշխարհին հակադրվում է հույսերի ու հույզերի, անկեղծ ապրումների ու զգացմունքների, թեև հոգսաշատ, բայց իսկապես մարդկային աշխարհը: Թերեզան ընտրում է վերջինը, ուր մարդիկ «ապրում են, պայքարում և մեռնում»:

Ի տարբերություն Թերեզայի, Գաստոնը («Ճանապարհորդն առանց ուղեբեռի») հրաժարվում է իր անցյալից, չզգուշանալով բարոյական անկումից՝ անվարան ընտրում նյութական բարեկեցությունը: Նման հանգուցաուծմամբ, սակայն, հակառակ որոշ պնդումների, հեղինակը բոլորովին էլ մտադիր չէ սքողել կյանքի հակասությունները: Պարզապես պետք է խոսել հեղինակի թաքուն հեզմանքի մասին:

Ժամ Անույի ստեղծագործությունն աչքի է ընկնում ժանրային բազմազանությամբ. հեղինակ է ֆարսերի, սալոնային կատակերգությունների, հոգեբանական դրամաների և միֆոլոգիական ու պատմական սյուժեներով ողբերգությունների: Չհերքելով ժանրային ավանդական տարբերակումները՝ դրամատուրգն իր ստեղծագործությունները բաժանում է «վարդագույնների» և «սևերի»: Թեև դրանց բացարձակ հակադրումը քննություն չի բռնում, այնուամենայնիվ պետք է նկատել, որ «վարդագույն» պիեսներում Անույը առավելապես թատերական զվարճանքների վարպետ է, որը կյանքի հակասությունները հմտորեն սքողում է ուրախ հանգուցալուծումներով: «Սև» պիեսներում դրամատուրգը կենսական լուրջ հարցեր է արձարծում:

1941 թ. նա գրում է «Եվրիդիկե» դրաման՝ դրանով իսկ հարելով իր ուսուցչի՝ Ժան Ժիրոդոյի հիմնադրած «իևտելեկտուալ դրամատուրգիային»: Պիեսի ստեղծման ժամանակաշրջանի (գերմանական ֆաշիստները զավթել էին Ֆրանսիան) նկատառմամբ միանգամայն հասկանալի է դառնում դրամատուրգի հոռետեսությունը: Անույը դիմում է հունական առասպելին, որի ողբերգական սվաբոսը նախապես հայտնի է, որպեսզի ընդգծի մարդու դատապարտվածությունը: Հիշենք Օրեստեսի մասին առասպելի մոտիվներով նույն ժամանակ ստեղծված Մարտի «Ճանները» ողբերգությունը:

Ապարդյուն են անցնում ժամ Անույի պիեսի ... ընթացակարգը թրփե-

<sup>2</sup> Жан Ануї, Пьесы, в 2-х томах, т. 1, М., 1963, стр. 51

<sup>3</sup> Տե՛ս «XX դարի արտասահմանյան դրամատուրգիա», հ. 1, Երևան, 1983, էջ 537:

սի և զավառական դերասանուհի Եվրիդիկեի՝ գորշ իրականությունից փախչելու բու-  
յր փորձերը: Ոչնչով չի օգնում նաև փոխադարձ սերը: Օրփեոսից հանգիստ չի տա-  
լիս Եվրիդիկեի անցյալը, նա կորցնում է հավատն իր սիրեցյալի մկատմամբ: Հուսա-  
հատված հերոսուհին զոհվում է ավտորուսի անիվների տակ:

**Անամոք է Օրփեոսի կարոտը:** Գործակալ Անրին՝ Մահվան սուրհանդակը, խոս-  
տանում է վերադարձնել Եվրիդիկեին, եթե Օրփեոսը խոստանա մոռանալ նրա անց-  
յալը: Սակայն երբ հայտնվում է նրա սովերը, ջութակահարը դրժում է իր խոստու-  
մը և այս անգամ ընդմիջտ կորցնում նրան:

«Մահը գեղեցիկ է: Միայն այնտեղ կարող է սերը ապրել,— նկատում է Անրին:—  
Խեղկատակություն, անհեթեթ մեղողբամա է, որ կա կյանքը:.... Փորձիր կյանքում  
անցնել քո փոքրիկ Եվրիդիկեի հետ, և ելքի մոտ կնկատես, որ նրա զգեստից օտար  
ձեռքեր են կառչած...»: Երկընտրանքը բացառված է. Օրփեոսը հնազանդ է իր դա-  
տապարտվածությանը և ընտրում է մահը:

Սակայն Դիմադրության շարժումը, որն ավելի ու ավելի էր մեծացնում իր ընդ-  
գրկումը, ակնհայտորեն նոր լիցքեր հաղորդեց Անույի ստեղծագործական որոնումնե-  
րին: 1943 թ. օկուպացված Փարիզում բեմադրվում է «Անտիգոնե» պիեսը:

Հարազատ մնալով առասպելական պոմեին՝ դրամատուրգը բրդիական հնչե-  
ղություն էր տվել դեռատի խոսվարարուհու մասին միֆին: Անհատական ընտրու-  
թյունն ու վնիոր, որոնք էկզիստենցիալիստ Փ.—Պ. Մարտրե ըմբռնում և մեկնաբա-  
նում էր որպես անհատի ազատության դրսևորումներ, Անույի պիեսում ևս պրոբ-  
լեմային մեծ տարողություն ունեն և շեշտված են: «Ես ստեղծված եմ նրա համար,  
որ ձեզ պատասխանեմ «ոչ» և մեռնեմ»,—Կրեոնի հորդորներին անհողջող պատաս-  
խանում է Անտիգոնեն:

Հեղինակային մտահղացմամբ՝ իր խոսվության մեջ Էդիպի դստերն առաջնոր-  
դում է ոչ թե ազգակցական պարտքի գիտակցումը, այլ անարդարությանն ու բռնա-  
կալությանն ընդդիմանալու հստակ սկզբունքը: Եվ անհատական այդ դիրքորո-  
շումը հասարակականի տարողությունն ու խորհուրդ է ստանում:

Անտիգոնեի ընդվզումը ապառնում է փլուզել Կրեոնի իշխանության ողջ համա-  
կարգը: Դա խորապես գիտակցում է Կրեոնը՝ ջանալով կոմպրոմիսների գնով կան-  
խել ոչ միայն Անտիգոնեին: Սակայն իր խոսվքում անկասկի՝ Անույի հերոսուհին:  
Ծակասագրական պահին նրան իր աջակցությունն է բերում նաև քույրը՝ Իսմենեն:  
Լսո՞ւմ ես, Կրեոն: Ես նույնպես: Ով գիտի, արդյոք իմ օրինակին չեն նետի նաև  
ուրիշները, երբ լսեն իմ բառերը»,— իր գործի արդարացիության մասին համոզմուն-  
քով նկատում է Անտիգոնեն:

Հակասություններով հանդերձ, «Անտիգոնեն» ստեղծագործական նվաճում էր,  
որն ի մի էր բերում և որոշակիորեն ամբողջացնում Անույի նախորդ կրկերից հաչա-  
նի շատ մոտիվներ ու պրոբլեմներ, թանձրացնում 30—40-ականների նրա դրամատուր-  
գիայի մի շարք առանձնահատկություններ:

Ընդհանրապես բեղուն էր Անույ-դրամատուրգի գրիչը. տարաբանչույ տարի  
նշանավորվում էր մի նոր պիեսով. 40—50-ական թվականներին են ստեղծվում «Ռո-  
մեո և Փաննետա» (1945), «Մեդեա» (1946), «Հրավերը դոչակ» (1947), «Խաղա-  
փորձ կամ Պատժված սեր» (1949), «Կոլոմբա» (1950), «Տորեսադորների վաչար»  
(1952) և այլ պիեսներ, որոնք հաջողությամբ բեմադրվում են Փարիզի տարրեր  
թատրոններում: Սրանցում հմտորեն օգտագործվում են «վարդագույն» ու «սև» պիես-  
ների հաչտնի մոտիվները, կոմպոզիչիոն ու զուտ բեմական նոր էֆեկտներ ևն մշակ-  
վում, սրոնք եթե անգամ կարող էին գոհացնել շարքային հանդիսատեսին, ապա բնավ

չէին բավարարում խառապահանջ ու սկզբունքային մասնագետներին, որոնք շատ ավելին էին ակնկալում տաղանդավոր դրամատուրգից: Եվ ժան Անուշը, իսկապես, արդարացրեց նրանց հույսերը:

1953 թ. հրապարակի վրա էր «Արտույտը» ողբերգությունը: Դիմումը պատմական վավերացված իրադարձություններին, որոնց էլքը վառուց ի վեր հաշտնի է, կարող է այն տպավորությունն ստեղծել, թե դրամատուրգը վերադառնում է դեպի «Անտիգոնեն», մտնալանդ որ այստեղ ես ռոմանտիկ-խոովարարը անհատական իր դիրքորոշմամբ ժխտում է համընդհանուր հնազանդությունը, բացահայտորեն հակադրում անարդարացի կոմպրոմիսների աշխարհին: Ճշմարտությունը պահանջում է ասել, որ ժաննա դ'Արկի կերպարն ամբողջացնող շատ գծեր, իսկապես, հիշեցնում են Անտիգոնեին: Սակայն ողբերգության հերոսն ուշագրավ էր առավելապես իր նոր, անկրկնելի գծերով:

Եթե նկատի ունենանք պիեսի ստեղծման ժամանակաշրջանի առանձնահատկությունները, միանգամայն պարզ կդառնան ռեդիկալի ընտրության շարժառիթները: Ետպատերազմյան առաջին տասնամյակը ֆրանսիական իրականության մեջ նշանավորվել էր ամերիկյան կապիտալի, ինչպես նաև հետադիմական դեկադար շրջանների ազդեցության աննախադեպ ուժեղացմամբ: Ֆրանսիական մտավորականությունն ակտիվորեն մասնակցում էր դեմոկրատիայի և երկրի անկախության համար մղվող պայքարին: Օրլենսի կույսի կերպարը պատիշ պատասխան էր տալիս օրակարգի ամենահրատապ ու կենսական հարցերին, ֆրանսիական ժողովրդին ցույց տալիս միակ ճշմարիտ ուղին:

Հավատարիմ մնալով պատմական իրողություններին, ժաննայի անհատական էվոլյուցիան վավերացնող որչա մանրամասների՝ դրամատուրգն այնուամենայնիվ, հեռացել է ժամանակագրական հաջորդականությունից, հեռապնդելով ոչ թե պատմական պիեսի, այլ փիլիսոփայական-հրապարակախոսական ողբերգության ստեղծման նպատակ: Ժաննայի դասը ներկայացվում է դրան նախորդած, հիրավի, պատմական դեպքերի հետ միաժամանակ, որը պարզորոշ ու ամբողջական պատկերացում է տալիս հերոսի ձևավորման բարդ ու դժվարին ուղու մասին:

Անտիգոնեի նման ժաննան էլ Ինկվիզիտորին կարող էր ասել. «Ես ստեղծված եմ նրա համար, որ ձեզ պատասխանեմ «ոչ» և «ե՛նչե՛ն»»: Ի վերջո նա հեկեց այդպես էլ վարվում է: Այնպես որ հետույ գիտակցում է իր գործի արդարացիությունը և մինչև վերջ հավատարիմ է իր խաչի ծանրությանը իր առաքելո թյանը:

Սակայն, նույնիսկ ծրագրային որոշակի նպատակադրմամբ հանդերձ, Անուշը չի անտեսում մարդկայինը, և այս առումով ժաննա դ'Արկի կերպարը զգալիորեն տարբերվում է Անտիգոնեից: Ժաննան հերոս է: Բայց ժաննան նաև մարդ է՝ հոգևոր-բարոյական մեծ ուժով և անմեղ թուլություններով: Ինկվիզիտորի նկատմամբ պատահականորեն չի մտահոլացված. «Ինկվիզիցիայի թշնամին, նրա սիակ թշնամին մարդն է»: Ուրիշ խոսքով, թեև Օրլենսի կույսը անպայմանորեն կոռեքսի հերոս է, մարդու, ընդհանրապես մարդկային պրոբլեմը ևս մեծ տարողություն ունի:

Մյուս կողմից, չնայած ժաննան ևս մեռակ է իր նախատագրով, բուրրի կողմից անգոսնված, ի տարբերություն Անտիգոնեի, նա ավելի լավատեսորեն ու հավատով է տոգորված մարդու նկատմամբ և նույնիսկ մտովի չի եղծում ժողովրդի հետ հոգևոր իր կապերը: «Ես երբեք չեմ հարթելու մարդուն»,-- հայացքը խարույկում այրվող ժաննային՝ ցավով խոստովանում է Ինկվիզիտորը՝ մեկ անգամ ևս վավերացնելով հերոսի հավատի արդարացիությունը:

Պիեսն ավարտվում է լավատեսական այն համոզմունքով, որ «Ժաննայի պատմությունը վերջ չի ունենալու»: Հեղինակն անուղղակիորեն վկայակոչում էր Դիմադրության շարժումը, փորձում հայրենակիցներին ոգեշնչել նրանց օրինակով:

«Արտույտը» դրամատուրգի վերջին ու ամենամեծ նվաճումն էր: Հետագա պիեսները ուշագրավ ոչինչ չեն հավելում նրա ժառանգությանը: Անհետևողականությունը դառնում է նրա գեղարվեստական որոնումների գլխավոր հայտանշանը, մի հանգամանք, որը ստեղծագործական ճգնաժամերի պատճառ է դառնում: Դեմոկրատիզմի ակնհայտ տեղատվությունը Անույին տանում է դեպի ծայրահեղ կոմպրոմիսները: «Օրնիֆլ կամ Օդի շիր» (1955), «Ժևը կամ Սիրահարված եղջյուրակիրը» (1959), «Բեքեթ կամ Աստծո պատիվը» (1959), «Նկուղ» (1961), «Իմ թանկագին Անտուան» (1969), «Կարմիր ձկնիկներ» (1970) և այլ պիեսներ, որոնք ներկայացվում են հիմնականում Փարիզի հեղինակավոր թատրոններում, տարակարծությունների և օբյեկտիվ դժգոհության տեղիք են տալիս:

«Անույի պիեսները... 40-ական թվականների սկզբին մեզ թվում էին մեր անհանգստության, մեր վրդովմունքի արտահայտությունը: Նրա «Անտիգոնեն» այն ժամանակ հնչեց որպես ժողովրդի անհնազանդության հանդիսավոր մեծարում: Բայց այն բանից հետո, երբ գրողը սպառեց Դիմադրության հերոսական թեման, նրա քստեղծագործությունը դառնում է միօրինակ, «մոմիացվում» է: Ու թեև Անույի տաղանդը երբեմն դեռ բռնկվում է տաք փայլով..., բայց այդ հեղինակը՝ իր ստեղծագործությունների ձևի հարցում ըստ էության ավանդապահ, աշխարհայացքով՝ հակառակն ու անկաշուն, արդեն չի կարող հավակնել հասարակական-գեղագիտական ազդեցության»<sup>3</sup>, — նկատում է ֆրանսիացի թատերագետներից մեկը:

Այդուամենայնիվ Ժան Անույի լավագույն ստեղծագործություններն արդարացիորեն իրավունք են տալիս նրան համարելու XX դարի խոշորագույն դրամատուրգներից մեկը:

## ԱՐՏՈՒՅՏԸ

Առաջին անգամ բեմադրվել է Փարիզի «Մոնպարնաս» թատրոնում 1953 թ.:

1 Վոկույտը — քաղաք Ֆրանսիայի արևելյան սահմանի մոտ

2 Ծիկոն — բնակավայր Ֆրանսիայում. թագավոր Կարլ VII-ի ժամանակավոր նստավայրը՝ նախքան Ռեյմսում պաշտոնապես թագադրվելը:

3 Ռուան — քաղաք Նորմանդիայում (Ֆրանսիա), Սենա գետի ափին, որ հայտնի է եղել դեռ միջնադարում: Այստեղ 1431 թ. մայիսի 30-ին խարույկ են բարձրացրել Ժաննա դ'Արկին:

4 Շրլեան, Պատեյ, Բոժանսի — Լուարա գետի հովտում գտնվող այս բնակավայրերում Ժաննա դ'Արկը պարտության է մատնել հակառակորդին:

5 Գոլոններ — անգլերեն «gon damon» (սատանան տանի) բառակապակցությունից. Անգլիացի զինվորներին այդպես էին անվանում ֆրանսիական զյուդացիները:

<sup>3</sup> *Տե՛ս* Якимович Т. К. Драматургия и театр современной Франции. Киев, 1968, стр 167:

6 «...արժեգրկել այդ ոչլուտ թագավորիկ Շարլին»— խոսքը ֆրանսիական թագավոր Կարլ VII-ի (1403—1461) մասին է, որին Ռեյմս քաղաքում 1429 թ. հուլիսի 17-ին պաշտոնապես թագադրեց Փաննա դ'Արկը:

7 Ռեյմս— քաղաք Ֆրանսիայում.

8 «...Աստված անգլիական իրավունքի հետ է: Նա այդ ապացուցեց Ազենկուրում»— 1415 թ. Ֆլանդրիայի Ազենկուր քաղաքի մոտ վճռական ճակատամարտում անգլիական զորքերը պարտության մատնեցին ֆրանսիական ասպետներին և գրավեցին Ֆրանսիայի ամբողջ հյուսիսը. Ակնարկվում է այդ հաղթանակը:

9 Սու— ֆրանսիական մետաղադրամ, սկզբում՝ ոսկե, հետագայում արծաթե և պղնձե: Հատվել է մինչև 1793 թ.:

10 Բուրժ— քաղաք կենտրոնական Ֆրանսիայում:

11 Բրետան— պատմական գավառ Ֆրանսիայի արևմուտքում՝ համանուն թերակղզում:

12 Անժու— Ֆրանսիայի պատմական գավառներից Լուարա գետի ավազանում:

13 Դյունուա— ասե՝ Բասուր (ապօրինածին). Լյուդովիկ Օրլեանցու ապօրինի որդին, Օրլեանի կուսակալը:

14 Յոլանդա թագուհի— կամ Յոլանդա Սիցիլիացի:

15 Վալուա— ֆրանսիական արքաների դինաստիա (1328—1589):

16 Լիվր— զանգվածի չափման միավոր. 1 լիվրը հավասար է 489,5 գ:

17 «...կարծես դուրս եկած լինի Յուպիտերի ազդրից»— խոսքը զորավարի մասին է, որին ամենայն հավանականությամբ համեմատում է ռազմուհի Աթենսա-Պալլասի հետ, որն, ըստ հունական դիցաբանության, դուրս է եկել Յուպիտերի (Չևսի) գլխից:

18 Զին—թունդ խմիչք, որ պատրաստվում է գինու պտուղներից ստացված սպիրտի թորումից:

19 Արմանյակ— կոմս Բեռնար Արմանյակ՝ Օրլեանցան խմբավորման ղեկավարը Ֆրանսիայի գահի համար մղվող միջֆեոդալական պայքարում: Նրա անունով խըմբավորման անդամներն ու կողմնակիցները կոչվում էին արմանյակներ:

20 Զոն Տայբուո— զրավար, անգլիական զորքերի ղեկավարը Օրլեանի ճակատամարտում (1429):

21 Կոմպիեն— քաղաք հյուսիս-արևելյան Ֆրանսիայում:

22 Հենրի VI Լանկաստր— անգլիական թագավոր (1422—1461), Լանկաստրների հարստությունից. սպանվել է 1471 թ.:

23 «...այն ինչ արեց մեր Տեր Հիսուսը Կանայի հարսանիքին: Դու ժխտու՞մ ես, որ նա հարություն տվեց Ղազարոսին»— ըստ Նոր կտակարանի, Գալիլեայի Կանայ քաղաքում Քրիստոսը մասնակցում է մի հարսանիքի, և երբ գինին վերջանում է, քայե վեց կարասների ջուրը գինի է կարձնում (տե՛ս Հովհան, գլ. Բ). հարություն է տալիս չորս օր առաջ մահացած Ղազարոսին (տե՛ս Հովհան, գլ. ԺԱ):

24 Լուարա— Ֆրանսիայի ամենաերկար գետը թավովում է Բիսկայան ծոցը.



Ծնվել է նոյեմբերի 26-ին, Ռուսիայի Սլա-  
տինա քաղաքում: Մանկությունը հիմնականում  
անցել է Ֆրանսիայում (մայրը ֆրանսուհի էր),  
պատանեկությունը՝ Ռուսիայում, որտեղ էլ սո-  
վորել է կարգալ ու գրել ֆրանսերեն: 1939 թվա-  
կանից վերջնականապես հաստատվել է Փարի-  
զում:

1948 թ. գրում է իր առաջին անտիպիեսը՝  
«Մաղառ երգչուհին», որը երկու տարի անց բե-  
մադրվում է մայրաքաղաքի թատրոններից մե-  
կում՝ ըստ էության հաջողություն չբերելով հե-  
ղինակին:

Է. Իոնեսկոն «աբսուրդ» դրամատուրգիայի իր կոնցեպցիային հասավ՝ բացեիքաց  
հերքելով համաշխարհային թատերական մշակույթը: Հետագայում նա գրելու էր.  
«Ռեալիզմը, սոցիալիստական է այն, թե՛ ոչ, մնում է իրականությունից դուրս: Այն  
նեղացնում, գունազրկում, խեղաբյուրում է իրականությունը: Հեռանկարում այն մար-  
դուն պատկերում է փոքրացված և օտարված: Ծմարտությունը մեր երազանքներում  
է, մեր երևակայության մեջ... Իսկականը գոյություն ունի միայն միֆում...»: Հիմնա-  
վորման համար վկայակոչում էր հնագույն տիկնիկային թատրոնը՝ միակ հնարա-  
վոր ճանապարհը համարելով պարզունակ գրոտեսկների օգտագործումը, ճաշա-  
հեղ պայմանականությունների, դաժան ու անտանելի ձևերի չարաշահումը: Հենց այդ  
դիրքորոշմամբ էլ նա մեկնաբանում էր իր անդրանիկ պիեսի մտահղացումը՝ «ստեղ-  
ծել արստրակա թատրոն, մաքուր դրամա, հակաթճամախի, հակազաղափարական,  
հակասոցոեալիստական, հակափիլիսոփայական, հակահողերանական, հակաբովա-  
րային, հակաբուրժուական: Գտնել նոր, ազատ թատրոն»:

Նշված «սկզբունքների» կոնկրետ արտահայտությունները աբսուրդ երկխոսու-

Մեջբերումը կատարվում է Якимович Т. К. Драматургия и театр современной  
Франции, Киев 1968, էջ 13



թյուններն ու մեկնախոսություններն էին, պուժեից, դրամատիկ կոնֆլիկտներից զերծ անմտությունը, որ խաղացվում էր ժամացույցի անընդմեջ զարկերի ներքո:

Իոնեսկոն հակված էր մինչև վերջ շվարեցնել հանդիսատեսին, թերևս, այդ կերպ պարտադրելով «նոր թատրոնի» իր տարբերակը: Այդ տեսակետից «Դասը» (1950) պիեսը ոչնչով չէր զիջում իր նախորդին:

Ոմն ուսուցիչ իր անհերթելի հարց ու պատասխաններով բացարձակ անկարողության է հասցնում իր աշակերտուհուն և ապա տարփաշից ու սադիստական մոլագարության մեջ սպանում նրան: Այդ ամենից հետո նա իր աղախնուն փորձում է համոզել, որ ինքը չէ մարդասպանը: Աղախինը անխոռով պատասխանում է, որ նույն տան մեջ դա արդեն քառասուններորդ դեպքն է օրվա ընթացքում: Դիակը տանում են: Պիեսն ավարտվում է նոր աշակերտուհու մուտքով:

Իոնեսկոյի հակաբանական թատրոնը մարդկային կյանքը ներկայացնում է որպես մղձավանջային երազ, իրերը՝ որպես լսողական խորհրդանշաններ: Այդ առումով նա, իսկապես, շատ է տարբերվում Ս. Բեքթոից «աբսուրդ» դրամատուրգիայի մյուս խոշոր ներկայացուցչից, որի ստեղծագործություններում նույնիսկ ամենածայրահեղ պայմանականությունները նպատակամղված են թեկուզև անհամոզիչ, բայց որոշակի գաղափարի՝ գոյության անմտության հաստատմանը:

«Աթոռներ» (1951) «ողբերգական ֆարսով» Իոնեսկոն, թերևս, առաջին անգամ դիմում է «աբսուրդի» գլխավոր մոտիվին՝ հետևյալ կերպ մեկնաբանելով պիեսի մասնհղացումը. «Երբեմն աշխարհն ինձ թվում է իմաստագուրկ, իրականությունը՝ անիրական: Հենց անիրականի այդ զգացումն էլ ցանկացել եմ արտահայտել իմ գործող անձանց օգնությամբ, որոնք դեզերում են քառսում՝ հոգում չունենալով ոչինչ, բացի վախից, խղճի խայթից... և իրենց կյանքի բացարձակ դատարկության օյտակցումից»<sup>2</sup>:

Պիեսի գործող անձինք երեքն են՝ Ծերունին, նրա կինը, Հռետորը: Ծերունի ամուսինները հիշում են անցյալը, գուրգուրում միմյանց, և հանկարծ կինը մտաբերում է, որ ամուսինը պետք է ինչ-որ բան բացատրի մարդկանց, ինչ-որ բան հաղորդի բոլոր երկրներին, համայն աշխարհին: Որոշում են, որ ողերձը պետք է հրապարակի Հռետորը: Հավաքվում են մարդիկ. այդ մասին հուշում են սենյակում հեռագրերն ավելացող աթոռները և տան տերերի մնջախաղային շարժումները, անհասցե ողջույններն ու դիմումները: Վերջապես, երբ հավաքված են բոլորը, հանդիսավոր քայքայված և քարձրանում Հռետորը: Ծերունի ամուսինների առաքելությունն ավարտված է, նրանք իզուր չեն ապրել իրենց կյանքը: Հրածեշտ են տալիս միմյանց և նետվում պատուհանից: Հռետորը փորձում է խոսել..., բայց պարզվում է, որ նա խուլ ու համր է: Այնպես որ անկատար է մնում Ծերունու առաքելությունը:

Արտառոց պայմանականություններով հանդերձ դրամատուրգը ներկայացնում էր երկրային գոյության անմտությունը, ջանում հիմնավորել մարդկանց հաղորդակցման անհնարինության մասին իր պնդումը: Դիպուկ է Ք. Թայնենի բնորոշումը. «Նա (Իոնեսկոն— Ս. Փ.) տապալում և ժխտում է տրամաբանությունը, նա համոզված է, որ ամբողջ բառարանում ոչ մի հասկացություն չունի իր ճշգրիտ, ապացուցելի իմաստը: Նրա պիեսներում մարած է բանավոր հաղորդակցման ջանքը: Մարդիկ բախվում են խավարում. և եթե հպանցիկ դարձվածը ջերմացնում է սրտերը, ապա թվում է, թե ինչ-որ մեկը լուցկի վառեց և մի ակնթարթ լուսավորվեց մարդկային դեմքը՝

<sup>2</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 24:

միայնակ ու վախեցած»<sup>3</sup>: Թատերագետն առաջին հերթին նկատի ունի «Աթոռներ» պիեսը:

Ամբողջության մեջ Իոնեսկոյի վաղ շրջանի գործերը հակադրվելու և հերքելու ինքնամոռաց ձգտումի դրսևորումներ էին, որոնք, բնականաբար, ուշագրավ ոչինչ չէին բերում ֆրանսիական, առավել ևս համաշխարհային դրամատուրգիային:

50-ականների երկրորդ կեսի ստեղծագործությունները զգալիորեն տարբերվում են փորձարարական շրջանի երկերից, այնքան, որ իրավունք են տալիս խոսելու դրամատուրգիական նոր որակի մասին: Ասվածը վերաբերում է «Անվարձ մարդասպանը» (1957) և «Ռեգեդջյուր» (1958) պիեսներին:

Առաջինը պատմություն է մի երիտասարդի (Բերանժե) մասին, որն ուզում է հաստատվել նորակառույց, իդեալական քաղաքում: Պարզվում է, որ քաղաքն այդ իրարանցման մեջ է անհայտ մարդասպանի պատճառով: Նրա ձեռքով զոհվում է նաև Բերանժեի սիրեցյալը: Պիեսի հերոսը որոշում է վրեժխնդիր լինել և մեծ չարչարանքներից հետո գտնում է նրան:

Իհարկե, Իոնեսկոն իսպառ չէր հրաժարվել հակաբանական իր թատրոնի առանձնահատկություններից: Բայց տրամաբանական որոշակի թեմայի ու պրոբլեմի, ինչպես նաև նպատակադիր ու գործուն հերոսի առկայությունը արդեն իսկ դրական լուրջ տեղաշարժ էր: Թեև կարող է այնպիսի տպավորություն ստեղծվել, թե հեղինակային մտահղացմամբ հանգուցալուծումը կոչված է վերստին բացատելու այդ բոլորի նշանակությունը:

Բերանժեն չի սպանում չարագործին, այլ զանազան փաստարկներ ու օրինակներ է վկայակոչում՝ փորձելով նրա մեջ արթնացնել սոցիալական պատասխանատվության զգացումը, դարձի բերել նրան: Անտեղի ջանքերից հետո նա ինքն է սկսում կասկածել իր արդարացիությանը: Բերանժեն վայր է գցում զենքը, որով պետք է սպաներ չարագործին, և ինքն էլ ընկնում է գետնին: Զգուշորեն մարդասպանը մոտենում է նրան: Վարագույրն իջնում է: Այս անգամ դրամատուրգն առաջադրում է մարդկային գոյության, ջանքերի անմտության, ուրիշ խոսքով՝ արքայի իր նոր տարբերակը:

Իոնեսկոյի դրամատուրգիական ժառանգության մեջ առանձնանում է «Ռեգեդջյուր» պիեսը: Այդ մասին խոսում է նրա բեմեյի աննախադեպ հաջողությունը. 1959—61 թթ. միայն հազարից ավելի ներկայացում Գերմանիայում, հարյուրավոր ներկայացումներ Ֆրանսիայում և Ամերիկայում, բեմադրումներ Անգլիայում, Հոլանդիայում, Իտալիայում, սկանդինավյան երկրներում, Հարավսլավիայում, Լեհաստանում, Չեխոսլովակիայում և այլուր:

«Սառը պատերազմի», նացիստական հոր տենդի ծավալման տարիներին Իոնեսկոյի պիեսը, որ այլաբանորեն հիշեցնում էր ֆաշիստական համաճարակի տարածման կործանարար հետևանքների մասին, շատերին հոգեհարազատ գտնվեց: Իսկ այլաբանության իմաստի մասին հարցապնդումը սուսկ գուշակություն չէ, որովհետև ինքը՝ հեղինակն է քանիցս նշել, որ պիեսի մտահղացումը ծնվել է դեռևս Ռուսիայի ֆաշիստականացման տարիներին:

«Ռեգեդջյուրի» հաջողության մյուս կարևոր նախապայմանը նրա մատչելիությունն էր: Համաշխարհային դրամատուրգիայի դարավոր փորձի նշանակությունն անվերապան հերքող է. Իոնեսկոն այս անգամ հիմնականում հավատարիմ էր մնացել ավան-

<sup>3</sup> Таиней К. На сцене и в кино, М., 1969, стр. 77

դական օրինաչափություններին: Վերջիններից միակ շեղումը ոնգեղջյուրների թեման էր, որն, այդուամենայնիվ, որոշակիորեն մեկնաբանվում էր: Հեղինակն ինքն էր վկայում, որ ոնգեղջյուրներն, իսկապես, ներկայացնում են նացիստներին:

Սակայն որքան էլ տարօրինակ թվա, Իոնեսկոն հակված չէր կոնկրետացնելու իր քննադատությունը: Կրկին գործում էր դրամատուրգի իդեալիստական «ունիվերսալիզմը», որով ժխտվում էին մարդկային զանգվածներին համախմբող ընդհանրապես բոլոր տեսակի ուսմունքները՝ անկախ իրենց բնույթից: Հեղինակի խոստովանությունն է. «Ես պարզապես բացառիկ կերպով պատկերել եմ կոլեկտիվ փոխակերպության պրոցեսը»<sup>4</sup>: Իր ժխտողական դիրքորոշումը այսպես էր փորձում հիմնավորել Իոնեսկոն. «...Մարդիկ կազմակերպում են գործադուլ, խռովություն, հեղափոխություն, որպեսզի հասնեն շատ որոշակի արդյունքների: Կրքերի պոռթկման մեջ նրանք կարող են շրջանցել այդ նպատակները և հասնել բռնակալության, դոգմատիկ հիմարության հաստատման, կոլեկտիվ կազմակերպված սպանությունների: Տպավորություն է ստեղծվում, թե ինչ-որ որոշակի պահի նրանք կորցնում են ինքնատիրապետումը, դառնում խելագարներ... Հեղափոխությունը դառնում է հետադիմություն, ազատագրումը՝ օտարում, արդարադատությունը՝ սադիզմ և այլն»<sup>5</sup>:

Դժվար չէ նկատել, որ դրամատուրգն իր տեսական հարցադրումներում (հետևյալնաբ նաև դրանց գեղարվեստական վավերացումներում) ելնում է ոչ թե պատմական օբյեկտիվ փորձից (պատմությունը համապատասխան փաստեր չի հիշում), այլ զուտ անհատական-սուբյեկտիվ ենթադրություններից: Ի դեպ, բոլորովին նեմացվում են հասարակական գիտակցության, ընդհանրապես բանականի և բացարձականացվում են կրքերի, ամբողջության մեջ բնականի դերն ու նշանակությունը: Մյուս կողմից, Իոնեսկոն ըստ էության բացարձակ ընդհանրակիսի նշանակություն է վերագրում անհատական անառողջ սկզբին, նաև էնթազիստակցականին՝ դրան հակադրվող գիտակցականի դրսևորումները գնահատելով որպես եզակի շեղումներ: Մինչդեռ մարդկության պատմությունը միանգամայն հակառակ է հաստատում:

Դրամատուրգի մտահղացմամբ հերանժեն՝ պիեսի գլխավոր հերոսը, այդ եզակիներից մեկն է: Նրա կորափակիչ խոսքերը («Ես պաշտպանելու եմ ինքս ինձ: Ես վերջին մարդն եմ: Ես մնալու եմ այդպիսին մինչև վերջ: Ես չեմ զիջելու իմ դիրքերը»), որ նետվում են որպես մարտահրավեր «ոնգեղջյուրացված» միջավայրին, անհատական կայուն դիրքորոշման դրսևորում են: Սակայն այդ դիրքորոշմամբ միայն ֆաշիզմը չէ, որ հերքվում է: Բերանժեն ծրագրային հերոս է. նրա պրոբլեմն անհատական ազատությունն է, բոլոր տեսակի կոլեկտիվ, հասարակական գաղափարներին, անկախ նրանց բնույթից ու հետապնդած նպատակներից, անտարբեր ու անհատորդ մնալը: Հենց այդքանով էլ նրա կերպարը դրական է հեղինակի համար, և բոլորովին էլ պատահական չէ, որ նա նախորդ պիեսի («Անվարձ մարդասպանը») գլխավոր հերոսի անունն է կրում:

Սակայն նույնիսկ այդ դեպքում Իոնեսկոն չի հավատում իր հերոսի հաջողությանն ու հաղթանակին՝ դրանով իսկ ի վերուստ արքայորդ համարելով նրա ջանքերը:

Այս և այլ նկատումներն, անշուշտ, չեն բացառում «Ռեգեղջյուր» պիեսի նշանակությունը: Ֆաշիզմի քննադատությունը (անգամ հեղինակային «ունիվերսալիզմի»

<sup>4</sup> Куликова И. С. Философия и искусство модернизма, М., 1980, стр. 192.

<sup>5</sup> Նույն տեղը, էջ 193—194.

կոնտեքստում) արդեն դուսկան երևույթ էր, ստեղծագործական որոշակի նվաճում, որն իր հաջորդը չէր ունենալու Խոնեսկոյի դրամատուրգիական գործունեության հետագա նուսաարհին:

«Ռեզիդյուրի» անմիջական տպավորությունը ժամանակավորապես մոռացության մատնեց Խոնեսկո-դրամատուրգի նախկին «մեղանշումները»՝ նոր պիեսների համար կանաչ ճանապարհ հարթելով դեպի ֆրանսիական և արտասահմանյան բեմերը: 1966 թ. դրամատուրգի «Ծարավ և քաղց» պիեսը բեմադրվեց «Կոմեդի Ֆրանսեզ» թատրոնում, ուր սովորաբար ներկայացվում էին հանրահայտ դասականների ըստեղծագործությունները:

Խոնեսկոյի դրամատուրգիան հռետեսական նոր, առավել թանձր ճառվածքներ էր ներառում: Պիեսի գլխավոր հերոսը՝ Ժանը, հակառակ նշանակալից կյանքի իր որոնումների, դատապարտվում է եկեղեցական ցմահ ծառայության՝ խորհրդանշելով մարդկային ցեղի կանխորոշված դատապարտվածությունը: «Ծարավ և քաղց» պիեսում իշխում են մահվան, ավերի ու կործանման տեսարանները, որոնք կոչված են նյութականացնելու հեղինակային միտումը:

Մահվան թեման կենտրոնականն էր «Արքան մեռնում է» (1962) պիեսում: Գործողությունները տեղափոխելով միջնադար, Բերանժեին «օձեղով» թագավոր՝ Խոնեսկոն բնավ չէր մեղմացրել իր իսկ հայտնագործած թատերական «միֆերին» բնորոշ անհույս մոալությունը: Սկզբից նեթ հանդիսատեսին էր ներկայացվում իր դատապարտվածությունը գիտակցող անհատի հոգևոր ու ֆիզիկական հոգեվարքը: Լուսավոր կամ գեթ փարատող ոչինչ չկար նաև «Թշալին հետիոտն» պիեսում:

Դրամատուրգի նոթերը հուշում են, որ այդ տրամադրությունները որոշակիորեն ապրված են: Այսպես, 1968 թ. նա նկատում էր. «Ո՛չ աստվածաբանությունը, ո՛չ փիլիսոփայությունը չկարողացան ինձ բացատրել, թե ես իրականում ինչու գոյություն ունեմ: Չհամոզեցին ինձ, որ ես ինչ-որ տեղ պետք է օգտագործեմ իմ գոյությունը»<sup>6</sup>:

Եթե հավատանք Խոնեսկոյի անկեղծությանը, ապա նա իր աշխարհընկալմամբ շատ է մերձեցնում Ֆ. Կաֆկային: Սակայն այդ մերձեցման օրյեկտիվ հնարավորությունները բացառվում են Խոնեսկոյի վերջին երկերի («Մակբեթ», «Մարդասպանության խաղ» և այլն) հակաժողովրդական ու հակահեղափոխական ուղղվածությամբ: Իհարկե, Ֆ. Կաֆկան ևս հասարակության վերափոխման ուղիներ չէր նշում, բայց և իր անլուր հուսախաբության ու սարսափների մեջ չէր տարվում բացարձակ բացամամբ:

«Սովորաբար մասնագիտությունը կնիք է թողնում մարդու վրա: Խոնեսկոյի ըստեղծած արքայորդի աշխարհը ակնհայտ կնիք է թողել նրա վրա. իրականությունը նա պարկեքացնում է ինչ-որ «առեղ.աշարժված» տեսքով»<sup>7</sup>,— ապառիչ ու դիպոկ է ասված: Էժեն Խոնեսկոյի դրամատուրգիական ժառանգությունը վկայությունն է անհերքելի այն նշմարտության, որ նրան այդպես էլ չհաջողվեց դուրս գալ հոգևոր ճգնաժամի փակուղուց, հաղթահարել ինտելեկտուալ մոլորությունները: Բայց և այնպես այդ ճանապարհին եղան լուսի բռնկումներ, որոնք անպայմանորեն հետսրբորություն են ներկայացնում XX դարի արտասահմանյան դրամատուրգիայի գաղափարաթեմատիկ ու ոճական առանցքային ուղղությունների ճանաչման ու զնահառման տեսակետից:

<sup>6</sup> Մեջբերումը կատարվում է Տ. Կ. Յակիմովիչի նշվ. աշխ., էջ 44:

<sup>7</sup> Куликкова М. С. Философия и искусство модернизма, стр 194

## ՌԵՓԵՂՋՅՈՒՐ

**Գրել է 1958 թ.: Առաջին անգամ բեմադրվել է Փարիզի «Օդևոն» թատրոնում, 1960 թ.:**

**1 Ֆրանկ**— այստեղ՝ դրամական միավոր Ֆրանսիայում (1 ֆրանկը հավասար է 100 սանտիմի): Շրջանառության մեջ է դրվել 1799 թվականից՝ լիվրի փոխարեն:

**2 Կաստիլիա**—XI—XV դդ. թագավորություն Պիրենեյան թերակղզու կենտրոնական մասում:

**3 «Ձեզ ծանոթ է ավանգարդային թատրոնը, որի մասին այնքան խոսում են: Դուք նայե՛լ էք Իոնեսկոյի պիեսները»**— ակնարկվում է Ս. Բեքեթի և Է. Իոնեսկոյի հիմնադրած «աբսուրդ» թատրոնը: Նախքան «Ռեգեդջուրը», բեմադրվել էին Իոնեսկոյի «Ճաղատ ել գշուհին», «Աթոռներ», «Դասը», «Պարտքի զոհերը», «Անվարձ ստրդապանը» և մի քանի այլ պիեսներ:

**4 «Այդ նման է կրոնին, որ օպիում է ժողովուրդների համար»**— ակնարկելով Կ. Մարքսի հայտնի բնորոշումը՝ դրամատուրգը թաքուն հեղանակով ներքուստ անհիմն բանավիճում է նրա հետ:

**5 Բորդո**— նավահանգստային քաղաք Ֆրանսիայում:

**6 Ամազոնուհի**— ամազոնուհիները՝ կին ռազմիկների առասպելական այդ ժողովուրդը, ըստ հույական դիցաբանության բնակվում էին Արկտիս Ազովի ծովի ափերին կամ Փոքր Ասիայում: Սեռի պահպանման համար ամուսնական կապեր էին հաստատում հարևան ցեղերի տղամարդկանց հետ, որից հետո ամուսիններին էտ էին ուղարկում իրենց հայրենիքը: Տղաներին վերադարձնում էին հայրերից, իսկ սղջիկներին դարձնում ռազմիկ:

**7 Մազոխիստ**— մազոխիզմ է կոչվում ավստրիացի գրող Լ. Ջախեր-Մազոխի (1836—1895) նկարագրած սեռական այլանդակությունը:

**8 «...Գալիլեյի նման ինքներդ ձեզ ասում եք. «Eppur, si muove»**— ավանդությունը պատմում է, որ ինկվիզիցիայի ճնշման տակ հրաժարվելով աստղագիտական իր տեսությունից՝ վերջին պահին Գալիլեո Գալիլեյը (1564—1642) բացականչել է. «Այնուամենայնիվ պտտվում է»: Հիշատակվում են միջնադարյան գիտնականի այդ բառերը:

**9 Մազարինի**— Ջուլիո Մազարինի (1602—1661), ծագումով իտալացի. Ֆրանսիայի կարդինալը՝ 1641 թվականից և առաջին մինիստրը՝ 1643 թվականից: Նպաստել է Ֆրանսիայի քաղաքական հեգեմոնիային Եվրոպայում:

**10 Սենա**— գետ Ֆրանսիայում. հոսում է հիմնականում փարիզյան ավազանով և թափվում Լա-Մանշ նեղուցը:

**11 Լյուքսեմբուրգ**— Փարիզի թաղամասերից:

**12 Modus vivendi**— կենսաձև, գոյության սրայմաններ (լատ.):



Ծնվել է նոյեմբերի 7-ին, Ալժիրի հյուսիս-ստամ գտնվող Մոնդովի քաղաքի արվարձանում, «Սուրբ Պողոս» ազարակում: Երկու տա-

րեկան դեռ չկար ապագա գրողը, երբ առաջին աշխարհամարտում զոհվեց հայրը, որի նախնիները Բորդոյից (Ֆրանսիա) Ալժիր էին տեղափոխվել XIX դարի 30-ական թվականներին: Հոր մահից հետո մայրը, որ ծագումով իսպանուհի էր, երկու որդիների հետ տեղափոխվում է Ալժիր քաղաքը և հաստատվում չքավորների Բելկուր թաղամասում: Այստեղ էլ անցնում է Ա. Կամյուի գրկանքներով ու դառնությամբ լի մանկությունը: Հետագայում էսսեներից մեկում այդ տարիների մասին Կամյուն գրելու էր. «...Տղայի սայրը միշտ լուռ էր: Նրա առողջությունը վատ էր, միտքը դժվարությամբ ու դանդաղ էր աշխատում: Նրա մայրը՝ կոսպիտ, իշխանասեր մի կին, ամեն ինչ զոհում էր իր անզուսպ ինքնասիրությանը և մանկությունից կոտրել էր դասեր թույլ կամքը: Ամուսնանալով՝ դուստրը ազատվել էր նրա իշխանությունից, բայց երբ ամուսինը մահացել էր, հնազանդորեն վերադարձել էր մոր մոտ: Ամուսինը վախճանվել էր, ինչպես ասում էն, պատվի դաշտում: Ոսկեզօծ շրջանակում բուլդոզիս ի տես կախված են նրա պարզները՝ «Մարտական ծառայությունների համար» խաչը և մեդալը: Եվ բացի այդ, ազգական հոսպիտալից այրում էին ուղարկվել ամուսնու մարմնից հանած նոնակի բեկորը: Այրին պահել էր բեկորը: Նա վաղուց արդեն դադարել էր սգալ: Ամուսնուն նա մոռացել է, բայց երբեմն հոր մասին խոսում է երեխաների մոտ: Որպեսզի նրանց մեծացնի, նա աշխատում է և դրանք տալիս մորը: Իսկ վերջինս ծեծով է դաստիարակում թոռներին»:

1918 թվականից Կամյուն բաճախում է թաղամասի տարրական դպրոցը և ավարտելուց հետո ուսուցիչներից մեկի ջանքերով ուսումը շարունակում մայրաքաղաքի հայտնի լիցեյում, որը կոչվում էր Ալժիրը նվաճող ֆրանսիական զենեռայ Բյուժոյի

1 Камю А. Межд, да и нет, «Вопросы литературы», 1 80, № 2, стр 68

անուհով: Հակառակ նվաստացումներին (լիցեյը վերնախաւի երեխաների համար էր). ներքին ընդվզումով, բայց նաև անհագորդ ծաւալով Կամյուն աչստեյ Եվիւ-վում է ընթերցանությամբ: Թորախտի պատճառով սրոջ ժամանակ թողնում է ուսումը, սակայն 1931 թ. շարունակում է այն՝ զբաղվելով փիլիսոփայությամբ:

Ծանոթությունը փիլիսոփայության ու գրականության երիտասարդ դասախոս, կրոնական էկզիստենցիալիզմի ներկայացուցիչ Փան Գրենիեի հետ վճռորոշ նշանակություն է ունենում Կամյուի հայացքների ձևավորման գործում: Ուսուցչի «Կոզիներ» գրքի ազդեցությամբ ապագա գրողն սկսում է կարդալ Նիցշեի, Ա. Ֆրանսի, Պ. Վեռլեի, Ա. Ժիդի, Մ. Գրոսսի, անտիկ հեղինակների և հնդկ միստիկների ստեղծագործությունները:

1932 թ. աշնանը Կամյուն արդեն Ալժիրի համալսարանի ուսանող էր: Ուսումնառության հինգ տարիներին նա հիմնականում զբաղվում է փիլիսոփայությամբ և, չնայած վատառողջ վիճակին, մեծ հաջողությունների հասնում՝ միաժամանակ ջանքերի գերազույց լարումով հաղթահարելով նյութական դժվարությունները: Այս ամենն էլ պայմանավորում են նրա առաջին ստեղծագործությունների՝ բնարափիլիսոփայական էսսեների գաղափարաթեմատիկ ուղղվածությունը և տրամադրությունը:

1934 թ. բարեկամներից մեկին հասցեագրած նամակում Կամյուն ակնհայտ դառնությամբ նկատում էր. «Բանաձևերով և հուսահատ որոնումներով մենք ձգտում ենք ինքներս մեզնից թաքցնել չափազանց պարզ ու մերկ ճշմարտություն՝ մեր բախտաբաժինը հուսահատություն է բերում»<sup>2</sup>:

Գրողի վաղ շրջանի ստեղծագործության մեջ ակնհայտ են էկզիստենցիալիզմի կրանգները: Թեև գոյության փիլիսոփայության առանցքային շատ հարցադրումներ դեռևս չէին «ճշտվել» անձնական կենսափորձով, այնուամենայնիվ, արդեն իսկ այս շրջանում Կամյուն հակվում է դեպի կեցության արմատական հարցերի պատասխանների որոնումները՝ փորձելով հաղթահարել անկումային տրամադրությունները:

1935 թ. աշնանը իր ուսուցչի՝ Գրենիեի խորհրդով Կամյուն անցնում է Ֆրանսիայի կոնկուսի ալժիրյան սեկցիայի շարքերը և պրոպագանդիստական գործունեություն ծավալում մուսուլմանների շրջանում: Սակայն ընդամենը երկու տարի անց, երբ տարածայնություններ են առաջանում հյուսիս-աֆրիկյան նացիոնալիստական շարժման ղեկավարների և ՖԿԿ-ի միջև, նա դուրս է գալիս կուսակցությունից:

Կամյուին սկզբից ևեթ զբաղեցնում են մարդկային գոյության պրոբլեմները: Իրականությունը, ինչպես նաև անհատական կենսափորձն ու աշխարհընկալումը անընդհատ ճոր հարցեր են առաջադրում, որոնց պատասխանների որոնումներում նա հակվում է դեպի Ա. Ժիդի, Ա. Մոնտեռլյանի և Ա. Մալրոյի փարաբանական կոնցեպցիաների որոշ հիմնադրույթների պաշտպանությունը: Հակասություններից ու ծայրահեղություններից բնավ չապահովագրված այդ որոնումներում առանձնապես թանձրանում են «ազատ անհատի» պրոբլեմի շուրջ խորհրդածությունները:

Նախաէկզիստենցիալիստ Մալրոյի ազդեցությամբ 1938 թ. իր նոթատետրում Կամյուն նշում է. «Հեղափոխական ոգին ամբողջովին ամփոփված է իր բախտաբաժնի դեմ մարդու բողոքի մեջ: Տարբեր ձևեր ընդունելով՝ այն մնում է միակ հավերժական թեման արվեստում և կրոնում: Յուրաքանչյուր հեղափոխություն միշտ ուղղված է աստվածների դեմ՝ սկսած Գրոմեթեոսի հեղափոխությունից: Ռա մարդու բո-

<sup>2</sup> *SL*՝ Кушкин Е. П. У истоков творчества А Камю, «Зарубежная литература. Проблемы метода», вып 1, Ленинград, 1979, стр 123.

դոքն է իր ճակատագրի դեմ, իսկ տիրակալները և բուրժուական մարիոնետները լուրջ պատրվակ են: Այդ ոգին կարելի է, իհարկե, զգալ և պատմական վարքագրություններում»<sup>3</sup>:

Փնտրվում է երկրային կեցության վերին իմաստը. օրինաչափորեն երջանկությունը մեծ խորհուրդ է ստանում, որն անմիջապես կապվում է անհատի ազատության հետ: Եվ ահա 1938 թ. Ալբեր Կամյուն ավարտում է իր առաջին լայնակտավ ստեղծագործությունը՝ «Երջանիկ մահ» վեպը՝ հրատարակելով, սակայն, այն տարագրության հանձնելուց: Գրողի մահից տարիներ անց՝ 1971-ին վեպը հրատարակիչներին տրամադրեց Կամյունի այրին:

Հեղինակը հետևյալ կերպ է բացատրել վեպի մտահղացումը. «...մարդը հասկացավ, որ ապրելու համար հարկավոր է հարուստ լինել, և նա ամբողջովին նվիրվում է փողի որոնմանը, հաջողությունների հասնում, ապրում և մեռնում երջանիկ»: Դրժվար չէ նկատել, որ հարցապնդման հիմքում հեղինակի ապրածն ու կենսափորձն են, զրկանքներով լի մանկության ու պատանեկության ծանր տարիները: Հետագայում գրողը հերքելու էր երջանկության նման ըմբռնումը՝ Էկզիստենցիալիստներից շատերի նման (Ֆ.—Պ. Սարտր) աներկիմաստ կարևորելով ու արժեքավորելով ամենից առաջ մարդու ազատությունը:

Փառափարակյան այդ անցումն ակնհայտ է արդեն իսկ «Կալիգուլա» (1938) պիեսում՝ Կամյուն-դրամատուրգի ջլուխգործոցում:

Մվեստոնիսը հռոմեական միապետ (մ. թ. 37—41 թթ.) Կալիգուլայի (Գայոս Կեսար Գերմանիկոս) մասին գրում է, որ նա «անհագ հետաքրքրասիրությամբ ներպա էր գտնվում կտտանքների և մահապատիժների»<sup>4</sup>: Գլխավոր հերոս ընտրելով հռոմեական երիտասարդ միապետին՝ Կամյուն ընդհանուր առմամբ հավատարիմ է մնացել պատմական շատ իրողությունների՝ այդ կերպ փորձելով գտնել և բացահայտել իր իսկ բեռոշած «ոգու» դրսևորումները:

Տարիներ անց նա հետևյալ կերպ էր մեկնարանելու ողբերգությունը. «Կալիգուլան» գերագույն ինքնասպանության պատմությունն է: Պատմություն, որը վերին աստիճանի ողբերգական է և մարդկային: Հավատարիմ մնալով ինքն իրեն, չվստահելով մերձավորներին՝ Կալիգուլան համաձայնվում է մեռնել, հասկանալով, որ ոչ ոք չի կարող միայնակ փրկվել և որ չի կարելի ազատ լինել ուրիշ մարդկանց ընդդեմ»<sup>5</sup>:

Ինչո՞վ է հիմնավորում հեղինակը իր իսկ բնորոշած ողբերգականությունը: «Եթե Կալիգուլայի ճշմարտությունը սեփական խոսվարարությունն է, ապա սխալը մարդկանց հերքումն է»,— 50-ականների ավարտին նկատում էր Ա. Կամյուն: Աշխարհն ու նշանքը, լեռնաքարն ու կան, անտանելի են Կալիգուլայի համար: Եվ այնուամենայնիվ, անմահությունը չէ նրա իդեալը, թեև այդ մասին նա բարձրաձայն ասում է: Երս բրոնածը մարդկային երջանկությունն է, որն անհասանելի ու անհնարին է թվում: Վերջինիս գիտակցմամբ նա հակվում է դեպի արժեքների նիցշեական վերաարժեքավորումը՝ «գերմարդու» իր անսահմանափակ իրավունքների չարաշահումը, թեև մինչ այդ մոլորություն էր համարում ուրիշներին տառապանք պատճառելը:

<sup>3</sup> Մեջբերումը կատարվում է Кушкин Е. П. Альбер Камю Ранние годы գրքից, Ленинград, 1982, էջ 43.

<sup>4</sup> Хафнер Г. Выдающиеся портреты античности, М., 1984, стр 140

<sup>5</sup> Մեջբերումը կատարվում է Кушкин Е. П. Альбер Камю գրքից, էջ 140.



Մարդկանց դեմ ուղղված ազատությունը հանգեցնում է հոռետեսության և ավերածությունների, հուշում է դրամատուրգը: Եվ պատահական չէ, որ փարիզյան հանդիսատեսը 1945 թ. բեմադրված պիեսում հանձին հռոմեական միապետի տեսավ Հիտլերին:

1940 թ. փետրվարին, հարմար աշխատանք չգտնելով Ալժիրում, Կամյուն մեկնում է Օրան, որտեղ իր ապագա կնոջ՝ Ֆրանսինա Ֆորի հետ մասնավոր դասեր է տալիս: Մարտի վերջերին նա արդեն Փարիզում էր: Տեխնիկական խմբագրի աշխատանքը նա համատեղում էր գրական բուն գործունեության հետ. ավարտում էր «Փոստականք» վեպը:

Այդ ստեղծագործության մեջ Կամյուն ձգտում է իր հերոսի՝ Մերսոյի պատմությանը համընդհանուր նշանակություն տալ՝ թանձրացնելով գոյության արքայի գաղափարը: Իրականությունն իմաստավորված ու կոնկրետացված է այնքան, որքան անհրաժեշտ է ստեղծագործական նշված մտահղացումն իրականացնելու համար: Աշխարհն, ինչպես կա, Մերսոյին նույնպես չի բավարարում: Նա հակված է ստեղծելու իր միկրոաշխարհը՝ որոշակիորեն գիտակցելով, որ դա ևս անհնարին է, որովհետև նրա համոզմամբ գոյություն ունի լոկ մի ճշմարտություն, և դա մահվան ճշմարտությունն է:

1942 թ. Ա. Կամյուն հրատարակում է «Սիզիֆի առասպելը»: Աստվածներին արհամարհած և նրանց իսկ կողմից դատապարտված առասպելական Սիզիֆը գրողի համար ամենաընդհանուր բնորոշմամբ «արքայի հերոս» է: Ողբերգականն այն է, որ Սիզիֆն ինքը գիտակցում է իր գոյության անմտությունը, բացարձակապես ազատ է պատրանքներից ու անիրականալի հույսերից:

Բայց Կամյուն գտնում է, որ Սիզիֆին պետք է նաև երջանիկ պատկերացնել. «...Սիզիֆը բարձրագույն հավատարմություն է սովորեցնում, որը հերքում է աստվածներին և բարձրացնում ժաշուրեկորները: Այսուհետև այն մոլորակը, ուր տիրակալ չկա, նրան անպտուղ, անպետք չի թվում: Բարձունքի ամեն մի հաղթահարում բավական է, որպեսզի մարդու սիրտը ափեսսի լցնի: Սիզիֆին պետք է երջանիկ պատկերացնել»: Ո՞րն է այդ երջանկության «գաղտնիքը». «Նա ինքն է տնօրինում իր ճակատագիրը: Ժաշուրեկորը նրա սեփական մտահոգությունն է: Հայելով իր մաքառումները՝ արքայի մարդը ստիպում է լռել բոլոր կուռքերին»<sup>6</sup>:

Դժվար է գուշակել, թե գերմանական օկուպացիայի տարիներին Սիզիֆի ողբերգական լավատեսությունը կամ «ապարդյուն սխրանքը» ինչ օրինակ պիտի տալին ֆրանսիացուն:

1948 թ. Կամյուն ավարտում է «Մոլորություն» պիեսը: Ստեղծագործության գլխավոր հերոսը՝ Մարթան փաստորեն ընտրում է Պատրիս Մերսոյի («Երջանիկ մահ») ճանապարհը: Հանցագործությամբ ձեռք բերվող դրամով նա երազում է անձնական երջանկություն գտնել Եվրոպայի թախճոտ քաղաքներից հեռու՝ ծովի ափին, ուր անհոգությունն սպառում է կեցության բոլոր հարցերը: Հերոսուհու «խռովքի» գիշատչային բովանդակությունը կասկածի տեղիք չի տալիս: Մարթան սպանում է հարազատ եղբորը և բացարձակ մեկության մեջ դիմում ինքնասպանության:

Ուշագրավ էր Մարթայի եղբոր՝ Յանի կերպարը. որը խորապես հաղորդակից է հումանիստական պարտքի բարոյական բովանդակությանը: «Տարագրության ու մոռա-

<sup>6</sup> Камю А. Между да и нет, «Вопросы литературы», 1980, № 2, стр. 177—178.

ցության մեջ հնարավոր չէ երջանիկ լինել,— նկատում է նա:— Չի կարելի միշտ օտարական մնալ: Ես ուզում եմ վերադառնալ իմ երկիրը, երջանկացնել նրանց, ում սիրում եմ»:

Յանի անունից նկատելով, թե «մարդը երբեք մե՞նակ չէ», Կամյուն բնավ մտադիր չէ հաստատելու մարդկանց փոխընթացման հնարավորությունը: Ներկայացնելով իր հերոսի վախճանը՝ նա ընդգծում էր անհատի դատապարտվածությունը՝ դրանով իսկ հերքելով փոխընթացման ամեն մի հնարավորություն: Այնպես որ, դժվար է որոշակիորեն ասել, թե հերոսներից որի մոլորությունը հատկապես նկատի ունի գրողը:

Ֆրանսիայում Կամյուն անդամագրվեց Դիմադրության շարժմանը: Ընդհատակում էլ սկսեց տպագրել «Նամակներ գերմանացի բարեկամի» գործը: «Աբսուրդի» անվերապահ հաստատումից դեպի համամարդկային մեծ մտահոգությունները, դեպի մարդու և մարդկային պաշտպանությունը, այսպիսին էր փիլիսոփա-գրողի գաղափարական անցումը, որը վավերացվեց «Ժանտախտ» (1947) վեպով:

Մահվան պրորբեմն աչտեղ ևս զբաղեցնում է Կամյունին, բայց այն արդեն չի ընկալվում որպես «միակ ճշմարտություն»: «Մի սպանաներ»՝ ահա Կամյունի առաջին և գլխավոր պատվիրանը<sup>7</sup>, և հումանիստական այդ դիրքորոշումը դրսևորվում էր պատմական կոնկրետ իրողության՝ ֆաշիստական ժանտախտի նկատումամբ:

Ընդհանրապես բարդ էր ու հակասական Կամյունի ստեղծագործական ուղին: Եվ որպես արվեստագետ, և որպես փիլիսոփա նա երբևէ բացարձակապես չազատվեց ակնհայտ երկիմաստության բացասական անդրադարձումներից: Դրանք զգալի էին նաև «Ըմբոստացող մարդը» (1951), «Անկում» (1956) ստեղծագործություններում: Եվ այնուամենայնիվ դրանք չեն նսեմացնում նրա հումանիզմի նշանակությունը:

1957 թ. Ալբեր Կամյունն շնորհվեց Նոբելյան մրցանակ: Իրեն միայնակների ու մոլորյալների հոգաբանները համարող Կամյուն ստեղծագործական մեծ ծրագրեր ուներ, որոնք, սակայն, իրականություն չդարձան: 1960 թ. հունվարի 4-ին ճա զոհվեց ավտոփթարից՝ Փարիզի ճանապարհին: Պաշտակի մեջ «Առաջին մարդը» անավարտ վեպի ձեռագիրն էր, որը, գրողի խոստովանությամբ, պիտի դառնար իր «Պատերազմ և խաղաղությունը»:

Մեծ չէ Կամյունի դրամատուրգիական ժառանգությունը: Սակայն նրա «Կալիգուլա» պիեսը մնայուն տեղ է գրավել XX դարի ֆրանսիական գրականության մեջ:

## ԿԱԼԻԳՈՒԼԱ

Գրել է 1938 թ.: Առաջին անգամ բեմադրվել է 1945 թ., Փարիզի «Էբերտո» թատրոնում:

<sup>7</sup> «Արտասահմանյան գրականության պատմություն. Ետհոկտեմբերյան շրջան, II մաս, 1945—1970», Ե., 1985, էջ 101:



Ծնվել է մարտի 12-ին, Վաշինգտոնում: Մանկուց նրան որդեգրում են Օլբի ամուսինները

և ի պատիվ հոգեպապի, որը տնօրինում էր վոդեիլային մի շարք փոքրիկ թատրոնների, անվանակոչում Էդուարդ Ֆրեմկլին Օլբի: Ապագա դրամատուրգի մանկությունն անցնում է դաշակների, ուսուցիչների և թատերական գործիչների շրջապատում: «Երջանիկ որբուկ», հետագայում, նկատի ունենալով այդ տարիները, ինքն իրեն այդպես էր բնորոշելու Օլբին:

1950 թ., բախվելով հոգեմոր հետ, նա հեռանում է տնից՝ զբաղվելու գրական գործունեությամբ: Հաստատվում է Գրինիչ Վիլիջում, սկսում գրել, ռադիոյի համար պատրաստում երաժշտական ծրագրեր, զբաղվում գրքերի և ձայնասկավառակների վաճառքով, աշխատում ռեկլամային գործակալություններում, հյուրանոցում:

Գրական գործունեությունն սկսում է բանաստեղծություններով, բայց շատ շուտով հոչակավոր Թորթոն Ուայլդերի խորհրդով անցնում դրամատուրգիային: Առաջին անհաջողությունները հուսախաբություն են բերում, և անկումային այդ տրամադրություններով էլ համակված՝ երիտասարդ դրամատուրգը ձեռնամուխ է լինում «Ինչ էր պատահել գազանանոցում» պիեսի ստեղծմանը: Դա 1958 թվականին էր:

50-ական թվականների Միացյալ Նահանգները շատ բան էր ժառանգել ետպատերազմյան առաջին տարիներից: «Ամերիկյան երազանքը», որի նենգափոխման ու կորստի մասին անկեղծ սրտացավությամբ ու տագնապով նշում էր Ու. Ֆոլկները, վերջնականապես բացահայտել էր իր բուն էությունը: Մրրկաշումջ ու սոցիալական մեծ տեղաշարժերի հույսեր ներշնչող 30-ականներին հաջորդել էին պատերազմի, ապա մակարտիզմի տարիները՝ սլարարտ հող ստեղծելով մի կողմից անհույս ինքնամոտիվածության, մյուս կողմից՝ կոնֆորմիզմի համար: Ժամանակի մամուլի վկայությամբ կորստյան էր մատնվել «ազգային նպատակը»՝ իր տեղը գիշերով սպառողական ծուլ կրքերին:

Սոցիալական կյանքի առանձնահատկությունները, ընդգծված կոնֆորմիզմն ու սարսափը մակարտիզմի առաջ օրինակափորեն անդրադառնում էին նաև գրական կյանքում: Համատարած հաշտվողականությանը մարտահրավեր նետելու համար անհրաժեշտ էր Ու. Սարոյանի անսպառ ու երբեք տեղի չտվող հումանիզմը («Կոտորածն մանկանց» պիեսը): «Համեստ ռեալիստներին», որոնք անտեսում էին ժամանակի ամենաէական պրոբլեմները, Բրոդվեյի կատարածու դրամատուրգներին հասցեագրված այդպիսի մի մարտահրավեր էր 30-ամյա Օլբիի «Ինչ էր պատահել գա-

զահանոցում» պիեսը, որը տվյալ մթնոլորտում, բնականաբար, չէր կարող առանց դիմադրության ընդունվել:

Ստեղծագործությունը նախ մերժվեց Նյու Յորքի մի շարք թատրոնների կողմից, ուղարկվեց Իտալիա, ապա՝ Եվեցարիա և երկար ճանապարհորդությունից հետո հանգրվանեց Արևմտյան Բեռլինում:

Ամերիկյան գրականագետներից մեկը, փորձելով ամենաընդհանուր գծերով բնորոշել Է. Օլբրիի և Ջ. Գելբերի դրամատուրգիայի առաջնահատկությունները, մասնավորապես նկատում է, որ նրանք «ջանում էին ընդարձակել մարդու ներաշխարհը թափանցելու սահմանները և նայել նրա ենթագիտակցության մութ խորքերը: Որպես հետևանք, բեմում ստեղծվեց միայնակ մարդու կերպարը, որը փորձում է դուրս պրծնել իր մենության բանտից»<sup>1</sup>:

Ասվածն առաջին հերթին վերաբերում է Է. Օլբրիի վերոհիշյալ պիեսին, սակայն ենթագիտակցականի թանձրացման մասին իրականում ոչ մի հարցադրում չի նկատվում չի կարող: Անկախ էկզիստենցիալիստական որոշ երանգավորումից և ֆրանսիական «արսուրդ» դրամատուրգիայի հեռավոր արձագանքներից, ստեղծագործությունը առաջին հերթին և գլխավորապես բերում էր այն տրամադրություններն ու դրանցից բխող մտահոգությունները, որոնք բնորոշ էին ժամանակի ամերիկյան իրականությանը:

Պիեսի գործող անձինք ընդամենը երկուսն են՝ Փիթերը և Ջերին, որոնք ներկայացնում են երկու դիրքորոշում, երկու տարբեր, փոխբացառող հարաբերություն հասարակության հետ: Արդեն իսկ մուտքի հեղինակային ռեմարկներն ընդգծում են այդ տարբերությունները. Փիթերը՝ «քառասունն անց...», բայց հազնվածքն ու շարժումներ ավելի շատ պատանու», իսկ Ջերին՝ «քառասունին մոտ», բայց «անասմանորեն հոգնած...»:

Առաջինը, այսպես կոչված, «միջին դասի» ներկայացուցիչ է, անհրաժեշտ ամեն ինչով ապահովված, բարեկեցիկ կյանքով ապրող:

Ջերին հասարակությունից վերջնականապես օտարված անհատ է, անհուսալիորեն մենության ու անհաջողության դատապարտված «լյումպեն-ինտելեկտուալ», որը երազել անգամ չի կարող միջին բարեկեցության և ապահովվածության մասին: Փիթերը նույնիսկ պատկերացնել չի կարող Ջերիի վիճակը: «Դա ուղղակի...աներևակայելի է: Պարզապես անհնար է հավատալ, որ այդպիսի մարդիկ էլ կան»,— նկատում է նա: Այստեղից էլ կոնֆլիկտը, որը, հակառակ Ջերիի անդուլ ջանքերի, այնուամենայնիվ իրականություն է դառնում:

«...Երբեմն ուզում ես որևէ մեկի հետ խոսքի բռնվել, ի սրտե գրուցել, ուզում ես ճանաչել այդ մարդուն, աճեն ինչ իմանալ նրա մասին»,— անկեղծորեն ասում է Ջերին: Եվ իսկապես Օլբրիի հերոսը հոտակ նպատակադրմամբ, ցավագին ու թերևս վերջին ճիգերով փորձում է հաջողակ Փիթերին դուրս բերել «սեփական կաշվի մենախցից», դրսի աշխարհից սառն անտարբերության պարսպով անջրպետված ինքնաբավ, բայց հեղձուկ «միկրոաշխարհից», որը բնակեցված է զույգ դուստրերով, հեռուտացուցեցերով, կատուներով և թութակներով:

Ջերիի համար սկզբից նեթ ասես պարզ է հանգուցալուծումը, սեփական փորձերի անհաջողությունը, թեև անընդհատ հետաձգում է զազանաճոցում կատարվածի

<sup>1</sup> «Литературная история Соединенных Штатов Америки», т. III, М., 1979, стр. 578.

մասին պատմությունը՝ կառչելով միջավայրի հետ խզված կապերը վերականգնելու հուշի թույլ սակայծումից. «Հետո... հետո պատմելու եմ, թե ինչ պատահեց գազանանցում»:

Տրոհված կապերի վերականգնման մի փորձ է Ջերիի և շան պատմությունը: «Եթե անհնար է մարդկանց հետ հաղորդակցվել, ուրեմն հարկավոր է ինչ-որ բանից սկսել: Կենդանիներից: Ախր հասկանում եք, մարդ անպաղտան պետք է ինչ-որ կերպ հաղորդակցվի որևէ մեկի հետ: ...Բայց ո՞ւմ: Ու՞մ գտնել... փորձել հասկանալ նրան և այնպես անել, որ բեզ էլ հասկանան... Բայց եթե մենք անգոր ենք մեկմեկու հասկանալ, էլ ինչու՞ ենք ընդհանրապես «սեր» բառը հնարել», — ասում է Ջերին:

Փիթերն ընդունակ չէ հասկանալու «մշտական կենվոր» Ջերիին, և դրա ամենապերճախոս ապացույցը նրա ավելի քան սառն ու անտարբեր պատասխանն է. «Ինչու՞ եք այդ ամենն ինձ պատմում: Ես ոչինչ չհասկացա: Այլևս ոչինչ չեմ ուզում լսել: Ես չեմ հասկանում ո՛չ ձեզ, ո՛չ ձեր տանտիրուհուն, ո՛չ նրա շանը...»:

Վերջին փորձի ձախողումից հետո անդառնալիորեն հուսալքված Ջերին սխում է պատմությունը գազանանցի մասին. «Ես գնացի գազանանց, որպեսզի տեսնեմ, թե ինչպես են մարդիկ վերաբերվում գազաններին, իսկ գազանները՝ միմյանց ու նաև մարդկանց: Իհարկե, դրա մասին միայն մոտավորապես կարելի է պատկերացում կազմել, չէ որ կենդանիները վանդակների մեջ են, մեծամասնությունը մեկուսացված են մեկը մյուսից...»:

Դրամատուրգի հերոսն ակնհայտ ու անհերքելի ընդհանրություններ է տեսնում իրականության և գազանանցի միջև, և պատահական չէ մեկուսացվածության շեշտումը: Հասարակության մեջ ճիշտ այդպես հաջողակ ու կոնֆորմիստ փիթերներից մեկուսացված են «մշտական կենվոր» ջերիները: Եվ անձնական բարեկեցության մոլուցքով համակված փիթերների հասարակությունից իր վերջնական օտարումն է վաճարեցնում Ջերին՝ նետվելով Փիթերի ձեռքի դանակի վրա:

Պիեսի համար այնքան հատկանշական գեղարվեստական պայմանականությունը և սիմվոլիկան, անշուշտ, նորություն չէին ամերիկյան դրամատուրգիայում: Բավական է հիշել Յու. Օ՛Նիլի «Բրդոտ կապիկը» և Թ. Ուիլյամսի «Ապակե գազանաց» ըստեղծագործությունները: Այդ առումով Է. Օլբին, անկասկած, իր ուսուցիչների ժառանգորդն էր: Անհրաժեշտ հետևողականության դեպքում կարելի է նաև այլ ազդեցություններ գտնել պիեսում (ելրոպական ավանգարդիստական դրամատուրգիայի որոշ «նորամուծություններ»): Սակայն ամենահատկանշականը ստեղծագործության սոցիալական հնչեղությունն էր, որը նոր ուժով դրսևորվեց «Բեսսի Սմիթի մահը» (1959) պիեսում:

Ավտոպիթարից մարմնական ծանր վնասվածքներ է ստանում սևամորթ հանրահայտ երգչուհի Բեսսի Սմիթը: Սակայն և՛ «Գթության հիվանդանոցում» (դրամատուրգը հենց այդպես էլ անվանում է այն), և՛ մյուսում սպիտակամորթ աշխատակիցները դաժան անտարբերությամբ հրաժարվում են շտապ օգնություն ցույց տալ, և երգչուհին վախճանվում է երկրորդ հիվանդանոցի ընդունարանում: Ակներն է, որ Օլբին հիմնական շեշտը դնում է ամերիկյան ուսիզմի մերկացման վրա, սակայն դրանով չի սպառվում ստեղծագործության գաղափարական բովանդակությունը: Պիեսի այն տեսարաններում, որոնք նախապատրաստում են հանգուցալուծումը, զանազան երկխոսությունների միջոցով դրամատուրգը հասնում է երկրի հարավին բնորոշ հոգևոր-բարոյական մթնոլորտի բացահայտմանը, անողորմ մերկությանը ներկայաց-

նում միջանձնային հարաբերությունները, որոնցում ամենաակնհայտը բարոյական անկումն է ու հոգևոր սնանկությունը:

«Ավագատուփը» (1959) և «Ամերիկյան երազանքը» (1960) ստեղծագործություններում գեղարվեստական պայմանականությունների օգտագործմամբ Է. Օլբին պատում է ամերիկյան բարեկեցության կեղծ դիմակը, բացահայտում հասարակության հոգևոր-բարոյական քայքայումը:

«Ամերիկյան երազանքը» ամբողջության մեջ տուրք է ֆրանսիական «աբսուրդ» դրամատուրգիային, և այս դեպքում հարկ է խոսել ոչ թե առանձին նրբերանգների առկայության, այլ հիմնարար սկզբունքների որդեգրման մասին: Դժվար չէ այստեղ ցույց տալ մի կողմից Բեքեթի «Գոդոյին սպասելիս» պիեսին հատուկ միտումնավոր անկապակցվածությունն ու աբսուրդի թանձրացումը, մյուս կողմից բացառապես Է. Իոնեսկոյի «Աթոռներ» պիեսից հայտնի որոշ հնարանքներ: Սակայն աբսուրդի մոտիվներն ու անհատի օտարման պրոբլեմներն իրենց հերթին, բայց իրականում ո՞րն է «ամերիկյան երազանքը». պիեսի գործող անձանցից մեկը հենց «ամերիկյան երազանք» է անվանակոչում Երիտասարդ Մարդուն, որն իր մասին ասում է. «Ես ընդունակ չեմ ոչինչ զգալու: Ես հույզեր չունեմ: Ինձանից քամել են բոլոր հյութերը, ինձ պատառոտել են մասերի... փորս թափել: Եվ հիմա լուկ իմ արտաքինն է մնացել... մարմինս, դեմքս»:

Առավելագույնը այդ «երազանքը» նաև նյութականի, ապրանքի կույր պաշտամունքն է, որ դրամատուրգը ներկայացնում է անընդհատ ավելացող տուփերի աչլաբանությամբ: Ինքը՝ Օլբին ստեղծագործության մասին գրել է. «Պիեսը հետազոտում է Ամերիկյան Կյանքը, գրոհում մեր հասարակության իրական արժեքները արհեստականով նենգափոխելու դեմ, խարազանում ինքնագոհությունը, դաժանությունը, անգործությունը, դատարկությունը, հակադրվում այն հնարանքին, ըստ որի, ինչ որ կա մեր գեղեցիկ երկրում, իբր, անպայմանորեն առաջին կարգի է»<sup>2</sup>:

1962 թ. դրամատուրգը հանդես է գալիս «Ո՛վ է վախենում Վիրջինիա Վուլֆից» պիեսով, որը դառնում է ազգային դրամատուրգիայի ամենանշանակալից երեվույթներից: Այն բեմադրվում է Բրոդվեյում, արժանանում էյու Յորքի թատերական բննադատների մրցանակին, ճանաչվում 1962—63 թթ. լավագույն դրամատուրգիական երկը, «շրջում» Բեռլինում, Լոնդոնում, Տոկիոյում, Բուենոս Այրեսում, Ստամբուլում, Սաոկիոյում, Դուբլինում և այլուր:

Ստեղծագործությունը խորապես հոգեբանական է, սակայն, թեև ենթատեքստում, բայց զգալի են նաև սոցիալական հիմնավորումները: Օլբին մասնակի ու ներփակ ընտանեկան դրամա չի ներկայացնում, այլ ակնհայտորեն ահագանգում է մասշտաբային երևույթի, անընդհատ նոր սահմաններ նվաճող հոգևոր-բարոյական սնանկացման համար:

Պիեսի երեք արարվածներից յուրաքանչյուրին դրամատուրգն առանձին վերնագիր է տվել՝ «Ժաղեր և զվարճանք», «Վապուրոզան գիշեր» և «Չարքերի արտաբսուրդ», որոնք անմնացորդ բնորոշում են դաժանորեն մերկ ու ճշմարիտ դրաման: Ստեղծագործության մուտքի «խաղերն ու զվարճանքը» արդեն իսկ նախաճշում են «վհուկների խառնածողովի» անխուսափելիությունը, որտեղ, ամենաընդհանուր բնորոշմամբ, բոլորը հանդես են գալիս բոլորի դեմ: Հեղինակը ետ է տանում նյութական բարեկեցության վարագույրը՝ ասպարեզը տրամադրելով բարոյական բոլոր չափանիշ-

<sup>2</sup> Олби Э. «Смерть Бесси Смит» и другие пьесы, М., 1976, стр. 290

ներն ու նորմերը ոտնահարող մոլեգին կրքերի դրսևորմանը: Նյարդերի ահագնացած պրկումը, որին այլևս ոչ մի ուժ ընդդիմադիր չէ, միանգամայն արդարացիորեն դադարում է որպես արտասովոր ու եզակի իրադրության դրսևորում գնահատվելուց: Դաժան ու անզիջում կոնֆլիկտներում, փոխադարձ անողորմ մերկացումներում բացահայտվում է ամուսնական կապերի բուն էությունը: «Դատարկության հետ չես մերձեցնա: Իսկ դու ահա դատարկ տեղ ես»,— ամուսնու երեսին նետում է Մարթան: «Դու քմահաճ, երեսառած, փշացած, կեղտոտ հարբեցող ես»,— կնոջից ետ չի մնում ամուսինը՝ Ջորջը: Սկզբունքների բախման մասին խոսք լինել չի կարող: Ինչպես Մարթան, այնպես էլ Ջորջը անհաղորդ են սկզբունքայնությանը: Պարզապես վաղուց ի վեր սպառվել է նրանց համատեղ կեցության իմաստը, որովհետև հոգեպես սպառվել են իրենք՝ ամուսինները: Մտացածին, երևակայական որդին կոչված է իբր արդարացնելու և իմաստավորելու նրանց արքայի գոյությունը: Սակայն անսանձ կրքերի մոլեգին գոտեմարտում, տևական ու անզիջում «պատերազմում» նրանք չեն խնայում նաև իրենց իսկ փաշփայած պատրանքը: «Մարթա՛... մեր որդին... այլևս չկա: Նա... զոհվեց... երեկ՝ երեկոյան մոտ»,— դաժանորեն նետում է Ջորջը:

Հանգուցալուծումն անդորրում է կրքերը: Ասես, իրոք, արտաքսվում են չարքերը, որ մինչ այդ սպաստանել էին անզավակ ամուսինների հարմարավետ ու շքեղ բնակարանում: Ստեղծագործության ավարտից հետո, գաղափարական բովանդակությամբ առհչյվող խորհրդածություններից զատ, մնում է լքված, սպառված ու սնամեջ մարդկանց թողած տպավորությունը և, իհարկե, այն համոզմունքը, որ բացառված չէ «չարքերի վերադարձը»:

Թատերական քննադատներից ոմանք հակված են ընդհանրացնող այլաբանություն տեսնելու «Ո՛վ է վախենում Վիրջինիա Վուլֆից» պիեսում: Սակայն նույնիսկ այլաբանությունից դուրս Օլբիի դրամայի ընդհանրացնող բովանդակությունը կասկածի տեղիք չի տալիս, ինչպես որ այլաբանություն գտնելու ոչ մի փորձ չի բացառում նրա ռեալիստական տարողությունը:

Գրեթե նույն մոտիվներով է գրված «Երերուն հավասարակշռություն» (1966) պիեսը, որի համար դրամատուրգին շնորհվեց ԱՄՆ-ի գրական ամենաբարձր՝ Փուլիթցերյան մրցանակը:

Էդուարդ Օլբին նաև զուտ փորձարարական («Արկղը», «Նախագահ Մառ Յզեդունի ցիտատները», 1968) և սարբեր գրողների երկերի մոտիվներով գրված պիեսների («Բալլադ մուսլ պանդոկի մասին», 1963, «Փոքրիկ Ալիսը», 1964, «Մալքոլմ», 1966, «Բոլորը պարտեզում են», 1967) հեղինակ է: 70-ականների ստեղծագործություններից ուշագրավ են «Ամեն ինչ ավարտված է» (1970) և «Ծովային տեսարան» (1975) դրամաները:

Օլբիի ստեղծագործական փորձը ներառում է մի կողմից մոդեռնիստական-ավանգարդիստական թատրոնի որոշ սկզբունքային առանձնահատկություններ, մյուս կողմից՝ ազգային սոցիալ-հոգեբանական դրամատուրգիայի լավագույն ավանդույթները: Այստեղից էլ՝ հոգեբանական կերպարների կերտման մնայուն դիրքորոշումը, որը նաև ապահովում է նրա դրամատուրգիայի ինքնատիպությունը:

Էդուարդ Օլբին ԱՄՆ-ի արվեստների և գրականության Ազգային Ակադեմիայի անդամ է (1966):

## ԻՆՉ ԷՐ ՊԱՏԱՀԵԼ ՊԱՉԱՆԱՆՈՅՈՒՄ

Գրել է 1958 թ.: Առաջին անգամ ներկայացվել է 1959 թ. Արևմտյան Բեռլինում:

1 **Սենթրալ պարկ**— Նյու Յորքի կենտրոնական զբոսայգին (Central Park). զտնվում է քաղաքի կենտրոնական՝ Մանհեթեն շրջանում: Զբոսայգին ունի կենդանաբանական անկյուն, լիճ, կարուսելներ: Ամռանն այստեղ կազմակերպվում են փողային նվագախմբերի համերգներ: Յերեկը Սենթրալ պարկը Նյու Յորքի բնակիչների սիրած հանգստավայրն է, իսկ գիշերը այն վերածվում է ավազակաորջի:

2 **«Ժայռ» հանդես**— հասարակական-քաղաքական ամսագիր (անգլ. «Time»— «Ժամանակ»): Լույս է տեսնում Նյու Յորքում, 1923 թվականից: Ունի շուրջ չորս տասնյակ արտասահմանյան հրատարակություններ: Տպաքանակը 4 միլիոնից ավելի է:

3 **Շառլ Բոդլեր**— ֆրանսիացի բանաստեղծ (1821—1867), սիմվոլիզմի նախակարապետը:

4 **Ջոն Ֆիլիպս Մարքենդ**— ամերիկացի գրող (1893—1960): Հեղինակն է, ի թիվս այլոց, «Հանգուցյալ Ջորջ Էլիին», «Վերադարձ չկա» «Անկեղծորեն ձեր՝ Ուիլիս Ուեյդ» վեպերի, բրոնց հերոսները կոնֆորմիզմի ուղին են բռնում հանուն գործարար կարիերայի և քաղքենական բարեկեցության:

5 **Վաշինգթոնի հրապարակ**— կրչվում է Միացյալ Նահանգների առաջին պրեզիդենտ Ջորջ Վաշինգթոնի անունով: Ամռանն այստեղ բաց երկնքի տակ կազմակերպվում են նկարչական ցուցահանդեսներ: Հրապարակում կանգնեցված է հաղթականար՝ ի պատիվ Վաշինգթոնի:

6 **Գրինիչ Վիլիջ**— համարվում է Նյու Յորքի բոհեմական թաղամասը (անգլ. Greenwich Village), ուր ապրում են երիտասարդ արվեստագետներ, գրողներ:

7 **Ուեսթ Սայդ**— բնակելի թաղամաս Նյու Յորքում (West Side). թշվառության ու պերճանքի անմիջական հարևանությամբ:

8 **Կոլոմբոսի պողոտա**— կրում է հայտնի ծովագնաց Ք. Կոլոմբոսի անունը: Սկսվում է համանուն հրապարակից:

9 **Ալաբամա**— նահանգ ԱՄՆ-ի հարավում: Բնակչության մեծամասնությունը սեփամորթներ են:

10 **Ջին**— տե՛ս Ժ. Անույի պիեսի 18-րդ ծանոթագրությունը:

11 **Սուրբ Ֆրանցիսկոս**— Ֆրանցիսկոս Ասսիզցի (1181 կամ 1182—1226), իտալացի քարոզիչ, ֆրանցիսկյանների օրդենի հիմնադիրը: Կաթոլիկ եկեղեցու սրբերի շարքն է դասվել՝ վերածվելով ավանդազրույցների լեգենդար հերոսի:

12 **Քեթչուփ**— տոմատի կծու սոուս:

13 **«Երևի նա այն շան սերունդն է, որը հսկում էր դժոխքի, թե դրա պես մի ուրիշ ջհաննամի դուռը»**— ակնարկում է առասպելական Յերբեր (Կերբեր) երեքգլխյան, օձի պոչով շանը, որն, իբր, հսկում է ստորգետնյա թագավորության մուտքը:





Ծնվել է դեկտեմբերի 12-ին, Լոնդոնում: Եղել է դերասան: 1949 թ. հանդես է եկել «Նրամեջ ևստած հրեջր» անդրանիկ պիեսով, որը

#### հաջողություն չի ունեցել:

Դրամատուրգ Օսբորնին համընդհանուր ճանաչում բերեց 1956 թ. բեմադրված «Ետ ևայիլ զայրացած» պիեսը: «Ինչպես փոթորիկ՝ Ջիմի Փորթերը (պիեսի գլխավոր հերոսն է—Ս. Փ.) ներխուժեց բեմերը՝ շնչահեղձ լինելով իրեն խեղդող զայրությանից: Նա անարգեց ամենքին և ամեն բան՝ սկսած իր կնոջ՝ Էլիսանի արխատկրատ ծնողներից, ավարտած քաղցրավենիքների կրպակով, որտեղ նա ստիպված էր նրստել՝ չնայած համալսարանական դիպլոմին»<sup>1</sup>:

Ինչ-որ մեկը ստեղծագործության հեղինակին անվանել էր «զայրացած երիտասարդ», և պատահական այդ բնորոշումը շատ շուտով տարածվեց 50-ականներին՝ ձևավորված գրական մի ամբողջ սերնդի վրա:

Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտից հետո Անգլիայում իշխանության գլուխ անցան լեյբորիստները՝ իրենց մուտքը նշանավորելով մեծամեծ խոստումներով: Ժողովուրդին, իսկապես, լուրջ ակնկալիքներ ուներ, այնպես որ նույնիսկ ճանաչված գրողներից ոմանք աննախադեպ ոգևորությամբ շտապեցին գովերգել հեռանկարային վերափոխումներն ու խոստացված դրական տեղաշարժերը: Սակայն անցած տասը տարիները ոչինչ չփոխեցին: Հուսախաբությունը մեծ էր հատկապես երիտասարդ մտավորականության շրջանում, որը համալսարանական դիպլոմներով նոր կյանք էր մտնում: Եվ առաջինը հենց նրանք էլ անսքող զայրությանով խոսեցին կոռուպյալ երազանքների ու իրենց խաբվածության մասին:

Միևնույն սերնդում («զայրացած երիտասարդություն») տարբեր գրույներին միավորողը գրական հերոսի տիպն էր: Որպես «կանոն» վերջինս միջին մտավորականության երիտասարդ ներկայացուցիչ է՝ սերտորեն կապված քաղքենիական այն միջավայրին, որտեղից դուրս է եկել և որը նրա համար այլևս անտանելի է:

<sup>1</sup> Образова А. Г. Современная английская сцена, М., 1977, стр. 31

Զինի Փորթերը՝ «Ետ ևայիր զայրացած» պիեսից, իր մեջ անմնացորդ ամփոփում է այդ հերոսի ամենաբնորոշ գծերը:

«Իմ կարծիքով մեր սերնդի մարդիկ չեն կարող մեռնել հանուն ազնիվ նպատակների: Հնարավոր ամեն ինչ արդեն արվել է երեսնական և բառասնական թվերին, երբ մենք դեռ երեխա էինք,— նկատում է Օսթրոնի հերոսը: —Ազնիվ, խիզախ նպատակներ էլ չեն մնացել: Եթե վիթխարի ավերածն սկսվի, բոլորս կկործանվենք, բայց ոչ թե հանուն մեծագործությունների՝ հնաոճ ձևով, այլ հենց այնպես, հանուն ինչ-որ սքանչելի նոր աշխարհի բանդագուշանքի»:

Եվ այնուամենայնիվ, դա Գ. Սթյանի բնորոշած «կորուսյալ սերունդը» չէ, որը հոգեկան խոր ճգնաժամի մեջ հակվում էր դեպի «սեպարատ» հաշտությունները, դեպի անհեռանկար ինքնամեկուսացումը: Անգորությամբ տառապում են նաև «զայրացած երիտասարդները»: Փորթերի խոստովանությունն է. «Ես շատ վաղ հասկացա, թե ինչ է զայրույթը: Զայրույթը և անգործությունը»: Բայց դա նրանց բոլորովին չի խանգարում ծանր, բայց արդարացի մեղադրական կարդալ իրականությանը: Պատշաճ ուշադրության դեպքում դժվար չէ նկատել, որ պոռթկումների պահերին Զինի Փորթերը իսպառ մերկացնում է իր ժամանակների Անգլիան՝ հերքելով մտացածին արժեքները, ռեկլամվող «վերելքները» և «հաջողությունները», բարեկեցության ու մարդասիրության մասին կեղծ պնդումները. «Ոչ ոք ոչնչի մասին չի մտածում, բոլորի համար ամեն ինչ մեկ է: Ո՛չ հավատ կա, ո՛չ համոզմունքներ, ո՛չ էլ ոգևորություն»:

Օսթրոնի հերոսը տենդագին նոր, իսկական արժեքներ է որոնում, ջանալով այդ կերպ գտնել և հաստատել իր ճշմարտությունը: Այդ որոնումներում նա, իրոք, միայնակ է: Ինչպես կնոջը՝ Էլիսնին, այնպես էլ բարեկամին՝ Քլիֆին, խորթ ու անհասկանալի են նրա զայրույթն ու բողոքը: Մյուս կողմից, ինքը՝ Փորթերն անգոր է ավելին անել: Նրա խռովության կուլմինացիան ընդամենը էմոցիոնալ ու տարերային բողոքն է:

Դրամայի հաջողությունն ակնհայտ էր: Ծուրջ երկու թատերաշրջան այն չէր իջնում ամենատարբեր բեմերից: Սակայն միանշանակ չէր թատերական քննադատների վերաբերմունքը: Ք. Թայնենը հետևյալ կերպ էր մեկնաբանում պիեսի հաջողությունը. «Այն (պիեսը—Ս. Փ.) ետպատերազմյան երիտասարդությանը ներկայացնում է ճիշտ այնպիսին, որպիսին նա կար իրականում: Օսթրոնը բեմում արտահայտեց շուրջ յոթ միլիոն երիտասարդ անգլիացիների շահերը...»<sup>2</sup>:

50-ականների ավարտին «զայրացած երիտասարդությունը», որպես գեղագիտական որոշակի ծրագրով սերունդ, դադարեց գոյություն ունենալուց: Տարբեր նակատագրեր վիճակվեցին նրա ներկայացուցիչներին: Բնականաբար նոր թեմաների գեղարվեստական յուրացմանը նպատակամղվեցին նաև Ջ. Օսթրոնի դրամատուրգիական որոնումները: Սակայն գրական ճանապարհի սկզբին ձևավորված գաղափարական դիրքորոշումը զգալի էր նաև հետագա ստեղծագործություններում:

30-ամյա դրամատուրգն իր հերոսի՝ Փորթերի զայրույթով մեղադրական էր կարդալու երկրի դեկավարության գլուխ Լանգհամ քաղաքական գործիչներին: «...Դուք իմ մեջ ահագնացրիք իմ ատելությունը: Ես հուսով եմ, որ այդ ատելությունն ինձ կօգնի ոտքի վրա մնալ... Իսկ այժմ անեծք քեզ, Անգլիա՛: Դու արդեն փտում ես և

<sup>2</sup> Մեքլերումը կատարվում է *Ивашева В. В. Литература Великобритании XX* գրքից, *М.*, 1984, էջ 376—377

շատ շուտով բոլորովին կանհետանա: Իմ ատելությունը քեզից շատ ավելի կապրի՝ թեկուզ ընդամենը մի վայրկյան: Իսկ ես կուզեի, որ իմ ատելությունը հավերժ գոյություն ունենար...»<sup>3</sup>: Այդ ատելությունն էր գործի կոչել դրամատուրգին՝ Էնթոնի Քրեյթոնի հետ միասին ստեղծելու «Տապանագիր Ջորջ Դիլոնին» (1957) պիեսը, որտեղ անողորքաբար քննադատվում է իր տաղանդը բուրժուական չափանիշներին հարմարեցրած դրամատուրգը:

1957 թ. Լոնդոնի «Ռոյալ Քոբթ» թատրոնում բեմադրվում է Օսթրոնի «Կոմեդիանտ» պիեսը:

Դրամատուրգն ըստ էության հավատարիմ էր մնում քաղաքացիական իր դիրքորոշմանը՝ այս անգամ հարցադրումները սրելով փափկակենցաղ, հաշտվողական, անտարբեր ու հոգեպես սնամեջ քաղքենու կերպարի ներկայացմամբ: Պիեսի գլխավոր հերոսը՝ դերասան Արչի Ռայսը Փորթերի հակապատկերն է: Նրա երգի տողերն են.

Ես՝ ինձ համար, և դու՝ քեզ համար—

Աշխարհում ավելի լավ ինչ կարող է լինել...

Չնայած ակներև հեռանակին, հենց այդպիսին է կոմեդիանտ Ռայսի ապրելու սկզբունքը, նրա կենսական դիրքորոշումն անմնացորդ համապատասխանում է իր իսկ բանաձևումին:

Արչի Ռայսը շարքային պարզամիտներից չէ. նա խորապես հաղորդակից է հասարակության արարտներին, նրան անձանոթ չեն բարձր իդեալները: Պարզապես, ինչպես ինքը կասեր.

Թ՛քել եմ ամեն ինչի վրա,

Ինձ ոչինչ չի դիպչի:

Ավելի լավ չէ՞ սպասել,

Մինչև մեզ կթաղեն:

Ընդգծված մտթապաշտությունը նրան անջրպետել է մարդկային հոգւերից, հասարակական պրոբլեմներից, դարձրել իներտ ու հաշտվողական: Եվ ամենազարեղին այն է, որ նա խաղում է ոչ միայն հանդիսատեսների, այլ նաև ինքն իր առաջ: «Արչիի ողբերգությունն այն է, որ քաղքենու դիմակը նրա համար ոչ թե քաղենիության դեմ պայքարելու միջոց է, այլ թաքստոց»<sup>4</sup>:

Արտաբուստ կարող է այն տպավորությունն ստեղծվել, թե Օսթրոնը չի դատապարտում փափկակենցաղ կոմեդիանտին, մանավանդ որ նա ապրում և գործում է իր հասարակության օրենքներով: Ինչպես էլ գնահատելու լինենք դրամատուրգի ստեղծագործական կողմնորոշումը, մի բան անհերքելի է. մարդկային-քարոչական անաղարտ չափանիշների նկատմամբ Արչիի և նրա նմանների կենսաձևը դավաճանություն է, և հենց այդ ուղղությամբ է տարվում բուրժուական մորալին հավատարմագրված քաղքենիության քննադատությունը:

Ամբողջության մեջ մոռալ հոռետեսություն ամփոփող պիեսի վերջին տեսարանները որոշ հույսեր են ներշնչում, հաստատելով հեղինակային այն համոզմունքը, որ էգոիզմն ու հաշվենկատ հաշտվողականությունն անհաղթահարելի չեն: Վկայակոչելով դրախտի արժանիքները հերքող շարքային մահկանացուի մասին այլաբանությու-

<sup>3</sup> *St' "Образова А Г Современная английская сцена, էջ 31*

<sup>4</sup> *Осборн Дж. Пьесы, М, 1978, стр 278*

նր՝ Արշին այդ կերպ, թերևս, հրաժարվում է իր իսկ հերմետիկ «միկրոպլաստից», հոգևոր դարձի հույսեր ներշնչելով:

Այնուամենայնիվ, պիեսը մեծ հաջողություն չունեցավ: Թերևս, հիմնական պատճառն այն էր, որ դեռ թարմ էին նախորդ ստեղծագործության տպավորությունները, և հանդիսատեսը կրքոտ բողոք ու զայրույթ էր ակնկալում դրամատուրգից:

Թատերագետ-գրականագետները տարբեր ազդեցություններ (Ա. Չեխով, Բ. Բրեխթ) եւն նշում Ջ. Օսթրոնի դրամատուրգիական բացահայտումներում: Մշմարտությունն այն է, որ ձևի որոնումներում (իսկ դրանք ակնհայտ են հաջորդ ստեղծագործություններում) դրամատուրգը չէր կարող բացարձակապես «օտարվել» վաստակաշատ նախորդների ստեղծագործական փորձով վավերացված որոշ ավանդույթներից՝ բնավ չկորցնելով ձեռագրի ինքնատիպությունը:

Որոնումների այդ ճանապարհին կյանքի կոշվեց «Փոլ Սլաքիի աշխարհը» (1959) պիեսը, որը հեղինակը բնորոշել է որպես «բարբերի կատակերգություն երաժշտությամբ»: Հաղաքական այդ սատիրան դրամատուրգը հագեցրել է ուրմիկ քառյակներով ու պարերգերով, որոնք պիեսը է նպաստելին առանցքային գաղափարի թանձրացմանը: Վերջինիս մասին Օսթրոնը գրում է. «Պիեսն ուղղված է նրանց դեմ, ովքեր ստում են մյուսներին և խաբում իրենք իրենց, նրանց դեմ, ովքեր զբաղվում են դավաճանության առ ու ծախով, իրենց մասնագիտությունը դարձնում ինքնավաստացման միջոց, նրանց դեմ, ովքեր համուն դրամակտրոնի, իսկ երբեմն էլ համուն չնշին վարձի ծախում են իրենց երկիրը, և վերջապես նրանց դեմ, ովքեր այդ անում են անվարձահատույց»:

Շուրջ մեկ ամիս պիեսը բեմադրվեց զրեթե դատարկ դահլիճում: Թատերագետներից ոմանք հակված էին անհաջողությունը բացատրել նրա նոր, դեռևս «չյուրացված» ձևով, այդ կերպ անտեսելով բուն պատճառը՝ այն, որ դրամատուրգի անողորմերկացումները բուրրովին չէին համապատասխանում «պատկառելի» հանդիսատեսի ճաշակին:

Այդ տարիներին Օսթրոնը միաժամանակ հրապարակախոսական լայն գործունեություն է ծախալում, մասնակցում միջուկային զինութափման համար մղվող կամպանիային, հանդես գալիս Հնդհանուր շուկայի և Անգլիայի արտաքին ու ներքին քաղաքականության դեմ:

Հիշատակված պիեսների գաղափարական հենքի ըմբռնումը հուշում է, որ Օսթրոնին մշտապես զբաղեցրել է անհատի նակատագիրը, հասարակության մեջ նրա տեղի ու դերի հարցը: «Լյութեր» (1961) պիեսում, որը նոր փուլ է նշանավորում դրամատուրգի գործունեության մեջ, Օսթրոնը առաջադրում է իր համար ամենակարևոր՝ անհատի պատասխանատվության ու դերի պրոբլեմները, դրանք բնկելով պատմության բարդ ու ճգնաժամային հանգամանքների ոլորտում: Գերմանական Ռեֆորմացիայի դեկավարի՝ Մարտին Լյութերի պատմական կերպարն այդ տեսակետից անպայառ հնարավորություններ էր ընձեռում:

Ստեղծագործության հիմնական՝ անհատի և հասարակության կոնֆլիկտը նորություն չէր Օսթրոնի դրամատուրգիայում, սակայն տվյալ դեպքում այն ներկայացվում է իր ողջ ողբերգականությամբ:

Բարդ ու հակասական է Լյութերի կերպարը: Առաջին երկու արարվածներում նա ուժեղ է պաշտոնական եկեղեցուն հայտարարած իր պատերազմով. հանդես է գալիս մարդու անհատականությունը եղծող դրսևորումների, կեղծ արժեքների աշխարհի դեմ:

Պիեաի ավարտին երբեմնի «հերետիկոսը», որ շուրջ քառորդ դար պայքարել էր կաթոլիկական դոգմաների դեմ, առաջնորդել բազմահազար մարդկանց, դրժում է իր ուխտը, դավանանում իր իդեալներին: Ինքնարդարացման փորձերը ոչինչ չեն փոխում («Նրանք վաստակել էին իրենց մահը՝ գեղջկական այդ ամբոխները: Նրանք ապստամբել էին հեղինակությունների դեմ, նրանք թալանել էին...»): Լյութերը, չկարողանալով մինչև վերջ տանել իր վրա վերցրած պատասխանատվությունը, ակրնհայտորեն հակվում է դեպի անհատապաշտությունը. «Ոչ մի մարդ չի կարող մեռնել ուրիշի համար կամ հավատալ ուրիշի համար, կամ պատասխան տալ նրա համար: Հենց որ նա փորձում է այդ անել, ձուլվում է ամբոխին... Առավելագույնը, ինչ մենք բոլորս կարող ենք հուսալ, դա այն է, որ յուրաքանչյուրս մեռնի իր համար»: Դժվար չէ նկատել, որ այստեղ արդեն խոսում է ոչ թե Ռեֆորմացիայի առաջնորդը, այլ մեր դարի 50—60-ականների անգլիացի մտավորականը: Հիշենք կոմեդիանա Արչի Ռայսի «բանաձևումը»՝ «Ես ինձ համար, և դու՝ քեզ համար...»:

Բայց և այնպես Օսթրերը ողբերգականություն է տեսնում Լյութերի կերպարում, որն ընդգծվում է վերջին մենախոսությունում. «Գիտես, իմ հայրը որդի ուներ, և նրան վիճակված էր մի դժվարին դաս յուրացնել. որ մարչկային էակը անօգնական գազանիկ է, և որ նրան ստեղծել է ոչ թե հայրը, այլ աստված»:

Մոայլ անհուսություն վավերացնող հանգուցալուծումը Էկզիստենցիալիստական որոշ երանգավորում ունի, որին ակամա տուրք էր տվել դրամատուրգը:

1962 թ. «Ռոյալ Քորթ» թատրոնում բեմադրվում են Օսթրերի «Բամբերգների արյունը» և «Հասարակ ծանրոց» պիեսները: Ստեղծագործությունները, որոնք միավորված էին «Պիեսներ Անգլիայի համար» ընդհանուր խորագրով, ուշագրավ ոչինչ չէին հավելում դրամատուրգի նախորդ ձեռքբերումներին: Մանրաթեմայնությունը դրանց ամենաակնհայտ թերությունն էր, որ չէր սքողվում նույնիսկ հասարակության ընտրյալների ու քաղքենիության համարձակ քննադատությամբ ու անխնա ծաղրով:

Նույնը պետք է ասել նաև «Անընդունելի վկայություն» (1964) և «Հայրենասեր իմ ճաշակով» (1965) պիեսների մասին:

70-ական թվականների ստեղծագործություններում («Սուեզից արևմուտք», 1971, «Բարեկամության ընձան», 1972) Օսթրերը կրկին անդրադառնում է անհատի և հասարակության փոխհարաբերությունների խնդրին, շոշափում արվեստի դերի հարցերը: Մտահոգություններն ու պրոբլեմները բավական շատ են, բայց դրանց լուծման ուղիների որոնումները, ինչպես միշտ, փակուղու առաջ են կանգնեցնում՝ խտացնելով հիասթափությունն ու հռետեսությունը: Կեցության ողբերգականությունն է բացահայտվում «Նայեցեք, ամեն ինչ խորտակվում է» (1975) պիեսում:

Ամբողջության մեջ Ջոն Օսթրերի ստեղծագործական փորձը օրինաչափորեն ներառում է XX դարի երկրորդ կեսի գրական խայտաբղետ շարժման մի շարք առանձնահատկություններ, որոնք, սակայն, չեն հերքում նրա դրամատուրգիական գործունեության առաջադիմական միտումները: Օսթրերը կոնկրետ լուծումներ չի առաջարկում: Սակայն արդեն իսկ իրականության ստվերոտ կողմերի մերկացումը, բուրժուական բարեկեցության և, ընդհանրապես, բարքերի քննադատությունը լուրջ հարցադրումներ են բերում, որոնք չեն կարող անուշադրության մատնվել:

## ԵՏ ՆԱՅԻՐ ԶԱՅՐԱՅԱԾ

Առաջին անգամ բեմադրվել է 1956 թ. Լոնդոնի «Ռոյալ Քոլթ» թատրոնում:

1 Միջին Անգլիա— ընդգրկում է Անգլիայի կենտրոնական կոմսությունները:

2 Վիկտորիական ոճ— XIX դ. անգլիական ոճ: Պայմանականորեն անգլիական թագուհի Վիկտորիայի (1837—1901) անունով էին կոչվում դարաշրջանի շատ երեվույթներ:

3 Բրոնչի— Մեծ Լոնդոնի հարավային ծայրամասերից մեկը:

4 Էռլս Քոլթ— Լոնդոնին հարող շրջաններից:

5 Փրիսթլի— Ջոն Բոյթոն Փրիսթլի (1894—1984), անգլիացի վիպասան և դրամատուրգ, որի ստեղծագործություններում ներկայացվում են բուրժուական հասարակության հակասությունները, ներկացվում քաղքենիության բարքերը:

6 Փենս— անգլիական դրամական միավոր:

7 Պորտ Սաիդ— քաղաք Եգիպտոսի հյուսիս-արևելքում, Միջերկրական ծովի ափին՝ Սուեզի ջրանցքի մուտքի մոտ: Հիմնադրվել է 1859 թ.՝ ջրանցքի կառուցման ժամանակ:

8 Էմիլի Բրոնթե— Բրոնթե երեք քույրերից մեկը (1818—1848), անգլիացի արձակագիր. հեղինակն է «Ամպրոպային լեռնանցք» վեպի:

9 Սենդհերսթ— փոքրիկ քաղաք Լոնդոնից արևմուտք:

10 Պուրիտան— XVI—XVII դդ. Անգլիայում պուրիտաններ էին անվանում ռեֆորմացիայի կողմնակիցներին: Այստեղ օգտագործված է ավանդապահի նշանակությամբ:

11 Կրոն— այստեղ՝ անգլիական արձաթե մետաղադրամ. 1 կրոնը հավասար է 5 շիլինգի:

12 Բոյսկատտ— անգլ. boy (տղա) և scout (հետախույզ) բառերից. արտադարձական դաստիարակության սկսուղյան կազմակերպության (միավորում է 8—18 տարեկան տղաների) անդամ: Կազմակերպությունները հիմնադրվել են XIX դ. վերջերին XX դ. սկզբներին Մեծ Բրիտանիայում՝ գնդապետ Ռ. Բադեն-Փոուելի (1857—1941) կողմից:

13 Անդրե Փիդ— ֆրանսիացի վիպասան (1869—1951), Էպտեիզմի ներկայացուցիչ:

14 «... ինձ Միքելանջելոյի նման աշխարհագորի սպա չեն նշանակի»— Հոմերի պայի կողմից Ֆլորենցիայի պաշարման ժամանակ (1529—1530) Վերածննդի խոշորագույն գործիչ, քանդակագործ ու նկարիչ Միքելանջելո Բուոնարոտին նշանակվել էր քաղաքների ամրությունների գերագույն վարիչ: Ակնարկվում է այդ իրողությունը:

15 Ֆունտ— կամ՝ ֆունտ-ստեղինգ. դրամական միավոր Մեծ Բրիտանիայում. 1 ֆունտը հավասար է 100 փենսի:

16 Փոփլար— Մեծ Լոնդոնի հյուսիսային արվարձաններից:

17 Բախ— Յոհան Սեբաստիան Բախ (1685—1750), գերմանացի կոմպոզիտոր, կրգեհոնահար:

18 Դանտե— Դանտե Ալիգիերի (1265—1321), իտալացի մեծ բանաստեղծ, «Նոր կյանք»-ի և «Աստվածային կատակերգության» հեղինակը:

19 **Էլիոթ**— Թոմաս Ս. Էլիոթ (1888—1965), անգլիացի բանաստեղծ, մոդեռնիզմի հիմնադիրներից մեկը:

20 **Բոմբեյ**— Հնդկաստանի խոշորագույն քաղաքներից, Մահասաշտրա նահանգի վարչական կենտրոնը:

21 **Ուորդսուորթ**— Ուիլյամ Ուորդսուորթ (1770—1850), անգլիացի ռոմանտիկ բանաստեղծ, «լնային դարոցի» ներկայացուցիչ:

22 **Շելլի**— Պերսի Բիշօ Շելլի (1792—1822), անգլիացի ռոմանտիկ բանաստեղծ, Ջ. Գ. Բայրոնի ժամանակակիցը:

23 **Մերի**— Մերի Ուոլսթոնքրաֆթ Գոդուին, Ուիլյամ Գոդուինի դուստրը, Պ. Բ. Շելլիի երկրորդ կինը:

24 **Ուիլյամ Գոդուին**— անգլիացի գրող (1756—1836), որի ստեղծագործությունը նախանշում էր անցում լուսավորչականությունից սոցիալական ռոմանտիզմին:

25 **Մահարաջա**— բառացի՝ մեծ տիրակալ. իշխանական կոչում Հնդկաստանում:

26 **Բիրմինգհեմ**— քաղաք Մեծ Բրիտանիայում, Ուեսթ-Միդլենդս կոմսության կենտրոնը:

27 **Մարքեթ Հարբորու**— փոքրիկ քաղաք Միջին Անգլիայում:

28 **Բրիջ**— թղթախաղ:

29 **Միլթոն**— Ջոն Միլթոն (1608—1674), անգլիացի բանաստեղծ, քաղաքական գործիչ, ֆեոդալական հետադիմության հակառակորդ:

30 **Մարլոն Բրանդո**— ամերիկացի հայտնի կինոդերասան (ծնվ. 1924 թ.):

31 **Կլեոպատրա**— եգիպտական թագուհի, Պտղոմեոսների հարստության վերջին ներկայացուցիչը (մ. թ. ա. 69—30 թթ.), Հուլիոս Կեսարի, ապա Մարկոս Անտոնիոսի սիրուհին: Ինքնասպանություն է գործել այն բանից հետո, երբ հռոմեական զորքերը Օկտավիանոսի գլխավորությամբ Եգիպտոս են մտել:

33 **Բոստել**— Ջեյմս Բոստել (1740—1795), անգլիացի գրող. «Սեպուել Ջոնսոնի կյանքը» կենսագրական վեպի հեղինակը:

**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

Կազմողի կողմից . . . . .	5
Ժան Բիրողու. Տրոյական պատերազմը չի լինի (թարգմանիչ՝ Ալեքսանդր Թոփչյան) . . . . .	7
Սամյուել Բեքեր. Գողոշին սպասելիս (թարգմանիչ՝ Աշոտ Զրբաշյան) . . . . .	82
Ժան Անույ. Արտույտը (թարգմանիչ՝ Վարուժան Նալբանդյան) . . . . .	163
Էժեն Իռնեսկո. Ռեգեդշյուր (թարգմանիչ՝ Վարուժան Նալբանդյան) . . . . .	261
Ալբեր Կամյու. Կալիգուլա (թարգմանիչ՝ Սյուզան Հայրապետյան) . . . . .	370
Էդուարդ Չլբի. Ինչ էր պատահել գազանանոցում (թարգմանիչ՝ Զավեն Բոյաշյան) . . . . .	435
Ջոն Օսթրոն. Ես նայիր գայրացած (թարգմանիչ՝ Զավեն Բոյաշյան) . . . . .	463
Մեկնություններ և ծանոթագրություններ . . . . .	550

**XX ԴԱՐԻ ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ԴՐԱՄԱՏՈՒՐԳԻԱ**

**ՀԱՏՈՐ 2**

Հրատարակության է ներկայացրել համալսարանի արտասահմանյան գրականության և գրականության տեսության ամբիոնը

Հրատարակչության խմբագիր՝ Զ. Հր. Թամրազյան  
 Նկարիչ՝ Լ. Ա. Սաղոյան  
 Գեղարվեստական խմբագիր՝ Ն. Ա. Թովմասյան  
 Տեխնիկական խմբագիր՝ Հ. Ս Ալվրցյան  
 Վերստուգող սրբագրիչ՝ Գ. Խ. Խաչատրյան

ԻԲ 647  
 Հանձնված է շարվածքի 09. 01. 1986 թ.: Ստորագրված է տպագրության 25. 04. 1986 թ.:  
 ՎՅ 03049: Չափսը 60X84<sup>1</sup>/<sub>16</sub>: Թուղթ տպագրական № 1: Տառատեսակը «Նորք»: Տպագրության եղանակը «Բարձր»: Հրատարակչական 27,6 մամուլ: Տպագրական 37 մամուլ = 34,4 պայմանական մամուլի: Տպաքանակ 15000: Պատվեր 192: Գինը՝ 2 ո. 60 կ.:

Երևանի համալսարանի հրատարակչություն, Երևան, Մոսկվյան փ. № 1:  
 Издательство Ереванского университета, Ереван, ул. Мравяна, № 1.  
 Երևանի համալսարանի տպարան, Երևան, Արուլյան փ. № 52  
 Типография Ереванского университета, Ереван, у Абовяна, № 52.



